ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ
Չ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ա 134

Վերատպության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Մանուկ Աբեղյան
Մ 134 Երկեր Ձ/ Մ. Աբեղյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2016, 852 էջ:


Երկերի այս հատորում զետեղված են Մանուկ Աբեղյանի քերականագիտական-լեզվաբանական աշխատությունները՝ «Աշխարհաբարի շարահյուսություն», «Աշխարհաբարի հոլովները», «Հայոց լեզվի տեսություն» և այլն:

Այս աշխատանքը կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների, ուսանողների, այնպես էլ դպրոցականների համար:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2078-6

© ԵՊՀ հրատ., 2016



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

2

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1974

8 Ար
Ա 13

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱՅԱՆ Է. Բ., ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Հ., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ս. Բ., ՂԱՆԱԼԱՆՅԱՆ Ա. Տ.,
ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ Կ. Ա., ՆԱԶԱՐՅԱՆ Վ. Ս.,
ՊԻՎԱԶՅԱՆ Է. Ա., ՍԱՐԳՍՅԱՆ Խ. Ս.

Հատորի խմբագիր
Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց
Գ. ՇԱՐԱԲԽԱՆՅԱՆ

Ա. 0723-003
703 (02)-74 © Հայկական ԱՍՀ ԳԱ հրատարակչություն. 1974.

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս աշխատանքը վաղուց պատրաստված էր և 1922—23 թթ. միայն վերամշակված է Հայաստանի ՍԽՀ Համալսարանի համար։ Վերնագիրը «Հայոց լեզվի տեսություն» ավելի ընդարձակ է, քան ընթերցողը կգտնի այս գրքի մեջ. պակասում է սրա վեցերորդ մասը, «Կապակցության ձևերը» կամ «Շարահյուսությունը», որ դեռ 1912 թ. տպագրված է առանձին՝ «Աշխարհաբարի շարահյուսություն» վերնագրով, որ և, թեպետ սպառված, հնարավոր չեղավ վերամշակելով սրա հետ նորից հրատարակել։ Մյուս կողմից՝ «Հայոց լեզվի տեսության» մեջ բավական տեղ է տրված ընդհանուր լեզվաբանական գիտելիքներին, որոնք իմ կարծիքով անհրաժեշտ են հայերենի գիտական ուսումնասիրության համար։ Բացի այդ՝ առանձնապես ընդարձակ և բազմաթիվ օրինակներով է բառակազմության մասը այն նկատմամբ, որ վերջերս նորանոր բառեր են կազմվում։ Չպետք է մոռանալ և այն, որ այս աշխատանքը կատարված է նաև ուսանողների համար, ինչպես և իմ «Աշխարհաբարի շարահյուսությունը» իր ժամանակին կազմված է եղել դպրոցի համար։

Մ. Ա.

1929 թ. հունվար 10

Այս Առաջարանը կարդալ «Հայոց լեզվի տեսություն» տիտղոսաթերթից հետո։

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա

ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բառերի հնչյուններն ու նշանակությունները:— *Մեր հոգեկան վիճակները՝ զգացումներն ու գլխավորապես մտքերը հաղորդում ենք ուրիշներին և նրանցն ընդունում ենք զանազան միջոցներով, ինչպես՝ ժեստերով, միմիկայով և այլն։ Մտքերի փոխանակության ամենակատարյալ միջոցն է լեզուն կամ խոսվածքը, որի համար իրրև նշանակներ ծառայում են բառերը։ Մենք խոսում ենք բառերով։*

Բառն է նշանակություն ունեցող մեկ հնչյունը կամ մի քանի հընչյունների կապակցությունը։ Ըստայսմ լեզվի մեջ ամենից առաջ պիտի նկատի առնել երկու կողմ. 1) բառերի հնչյունները և 2) բառերի նշանակությունները։

2. Բառերի նյութական ու ձևական նշանակությունները: Բուն և ձևական մաս: Բառակազմության ձևական մասեր և ածանցական բառեր:— *Բառերը, օրինակ՝* **սե–ղան,** *կարող են վերածվել լոկ հնչյունական մասերի, որ է՝ վանկերի՝* **սեղան** *կամ հնչյունների՝* **ս–ե–ղ–ա–ն**: *Բայց շատ բառեր կարող են վերածվել նաև այնպիսի հնչյունական մասերի, որոնցից յուրաքանչյուրն առանձին նշանակություն ունի։*

Առնենք, օրինակ, հետևյալ երեք բառերը՝ **քաղաքացի, քաղաքային, քաղաքիկ**։ *Այս բառերի մեջ գտնում ենք մի ընդհանուր հնչյունական մաս՝* **քաղաք,** *որ և մեր գիտակցության մեջ ոչ միայն հնչյուններով, այլև նշանակությամբ նույն է երեք բառերի մեջ ևս. ուստի և այդ բառերը բաժանվում են երկերկու մասի՝* **քաղաք-ացի, քաղաք-ային, քաղաք-իկ,** *որոնց երկրորդ մասերը՝* **ացի, ային, իկ,** *ո՛չ հնչյուններով և ո՛չ նշանակությամբ չեն նույնանում։ Առնենք ուրիշ երեք բառ ևս՝* **քաղաքացի,**

գյուղացի, գավառացի։ Այս բառերի մեջ ևս գտնում ենք հնչյուններով և նշանակությամբ մի ընդհանուր մաս՝ ացի, որով այդ բառերն ևս բաժանվում են երկերկու մասի՝ քաղաք-ացի, գյուղ-ացի, գավառ-ացի։ Այս բառերի էլ առաջին մասերը՝ **քաղաք, գյուղ, գավառ** ո՛չ հնչյուններով և ո՛չ էլ նշանակությամբ չեն նույնանում։ Միմյանց հետ համեմատելով առաջին երեք բառերի ընդհանուր մասի (**քաղաք**) և երկրորդ երեք բառերի ընդհանուր մասի (**-ացի**) նշանակությունները՝ տեսնում ենք, որ առաջին երեք բառերի ընդհանուր մասն իր հնչյուններով ու նշանակությամբ նույնանալով **քաղաք** բառի հետ, ցույց է տալիս մի որոշ առարկա, ունի իրական կամ նյութական նշանակություն, համապատասխան իրական աշխարհի պատկերացումներին. իսկ երկրորդ երեք բառերի ընդհանուր մասը՝ **ացի** չունի նյութական, իրական նշանակություն, որոշ առարկա չի ցույց տալիս, այլ միանալով բառերի առաջին մասի հետ, նրանց նշանակության մեջ փոփոխություն է մտցնում՝ ցույց տալով մի տեղում ապրող կամ մի տեղից ծագում ունեցող անձ։

Բառերի նյութական նշանակությունը ձևափոխող այսպիսի ընդհանուր հնչյունական մասերի նշանակությունը կոչվում է **ձևական նշանակություն**. ձևական նշանակություն ունեցող բառամասն ինքը կոչվում է **ձևական մաս**, իսկ իրական կամ նյութական նշանակություն **ունեցող** բառամասը՝ **բառի բուն**։

Այսպիսի ձևական մասերով կազմվում են բառերի բներից նոր բառեր, որոնք այլևս նույն նշանակությունը չունեն, ինչ որ բները, այլ ցույց են տալիս մի ուրիշ գաղափար, մտքի մի ուրիշ առարկա։ Օրինակ՝ **քաղաք** բառի նշանակությունն **ացի**, ային, իկ ձևական մասերով այնպես է փոխվում, որ **քաղաքացի** բառն այլևս քաղաք չի ցույց տալիս, այլ քաղաքում ապրող կամ քաղաքից ծագում ունեցող մի անձ, **քաղաքային**՝ քաղաքում եղած կամ քաղաքի վերաբերյալ (մի բան), իսկ **քաղաքիկ** նշանակում է ո՛չ թե քաղաք, այլ փոքր քաղաք։ Դրանք բոլորովին տարբեր բառեր են տարբեր նշանակությամբ, դրա համար և այնպիսի ձևական մասերը, որոնցով կազմվում են տարբեր նշանակությամբ նոր բառեր, կոչվում են **բառակազմության ձևական մասեր (մասնիկներ) կամ ածանցներ (ածանցական մասնիկներ)**, իսկ նրանցով կազմված **բառերը կամ ձևերը՝ բառակազմության ձևեր կամ ածանցական բառեր**։

8. Բառափոխության ձևական մասեր և բառաձևեր։— Առնենք մի ուրիշ շարք բառեր՝ **քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում**։ Այստեղ էլ այս բառերի բունն է **քաղաք**, որի մեջ է նրանց նյութական նշանակությունը, իսկ ձևական մասերն են՝ **ի, ից, ով, ում**, որոնք ավելանալով **քաղաք** բնի վրա՝ ձևափոխում են նրա նշանակությունը և կազմում նոր բառեր։ Բայց այս ձևափոխությունն իր բնավորությամբ տարբեր է նախորդից։ Մինչդեռ բառակազմության ձևական մասերով կազմված ածանցական բառերը տարբեր նշանակություն ունեն, քան իրենց բները,—

քաղաքացին այլևս քաղաք չէ, այլ տարբեր առարկա,— այս երկրորդ տեսակի ձևական մասերով կազմված բառերի նշանակությունը չի փոխվում, և նոր բառերը նոր գաղափարներ կամ մտքի նոր առարկաներ չեն ցույց տալիս, այլ նույն գաղափարը, ինչ որ այդ բառերի բունը՝ **ֆաղաֆ**: *Օրինակ՝ երբ ասում ենք՝ ես (Երևան)* **ֆաղաֆում** *եմ կենում, (Երևան)* **ֆաղաֆի** *տները, նա (Երևան)* **ֆաղաֆից** *հեռացավ, այս* **ֆաղաֆից, ֆաղաֆի, ֆաղաֆում** *բառերը նշանակում են նույն առարկան, նույն գաղափարը, ինչ որ* **ֆաղաֆ** *բառն է ցույց տալիս։*

Այս երկրորդ տեսակի ձևական մասերը՝ **ի, ից, ով, ում**, *միանալով մի առարկայի անվան՝ ո՛չ թե նոր նշանակությամբ բառեր են կազմում, այլ ցույց են տալիս միևնույն առարկայի որևէ հարաբերությունը մտքի մի ուրիշ առարկայի վերաբերմամբ՝ խոսքի կամ խոսքի մասերի կապակցության մեջ։ Ուստի և այս* **ֆաղաֆի, ֆաղաֆից...** *բառերի* **ի, ից, ով, ում** *ձևական մասերի ձևական նշանակությունը, նրանց ցույց տված հարաբերությունը պարզ կերպով երևան է գալիս, երբ դրանք ասվում են ո՛չ թե առանձին, այլ խոսքի մեջ ուրիշ բառերի հետ կապակցված։*

Առնենք մի ուրիշ շարք բառեր ևս՝ **տեսա, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան**։ *Այս բառերի ընդհանուր մասն է* **տես**, *որ բոլորի մեջ էլ ցույց է տալիս միևնույն նյութական նշանակությունը— տեսնելու գործողությունը։ Ձևական մասերը՝* **ա, ար, ավ, անք, աք, ան**, *ավելանալով «տես» բնին՝ սրա նշանակությունն այնպես չեն ձևափոխում, որ մի նոր գործողություն ցույց տան. այլ «ա» ձևական մասն ավելանալով «տես» բնին՝ ցույց է տալիս, որ տեսնելու գործողությունը մի անցած ժամանակակետում վերագրվում է առաջին դեմքին (խոսող անձին), «ար» ձևական մասն ավելանալով նույն «տես» բնին՝ ցույց է տալիս, որ նույն տեսնելու գործողությունը մի անցած ժամանակակետում վերագրվում է երկրորդ դեմքին (խոսակից անձին)։ Այսպես և մյուս ձևական մասերը. դրանցով կազմված նոր բառերի համար ևս հասկանում ենք նույն տեսնելու գործողությունը։*

Մի անգամ որ այս երկրորդ տեսակի ձևական մասերով կազմված նոր բառերը նույն գաղափարն են նշանակում, ինչ որ դրանց բունը, այդ պատճառով դրանք սովորաբար նոր բառեր չեն համարվում, այլ բառի փոփոխված ձևեր։ Ուստի և այս երկրորդ տեսակի ձևական մասերը կոչվում են **բառափոխության ձևական մասեր** *(մասնիկներ) կամ* **վերջավորություններ**, *իսկ նրանցով կազմված ձևերը՝* **բառափոխության ձևեր** *կամ* **բառաձևեր**: *«Բառափոխություն» բառի փոխանակ գործածվում է նաև* **բառերի թեքում**, *իսկ բառափոխության ձևերը կոչվում են նաև* **թեքման ձևեր**, *երբեմն նաև՝* **շարահյուսական ձևեր**, *որովհետև, ինչպես ասվեց. դրանց նշանակությունը որոշ կերպով երևում է բառերի կապակցության կամ խոսքի շարահյուսության մեջ։*

4. Աճացական և արմատական բներ։ Արմատական բառեր և բառերի արմատներ։— *Որպեսզի մեր գիտակցության մեջ բառը բաժանվի*

բնի և ձևական մասի, պետք է նույն բունը նույն նշանակությամբ կա՛մ մենակ գործածվելիս լինի իբրև անկախ բառ, կա՛մ երևան գա նաև ուրիշ ձևական մասեր ունեցող ուրիշ բառերի մեջ։ Օրինակ՝ **Գեղեցիկ** *բառն ածանցական է, բաժանվում է* **գեղ** *բնի և* **եցիկ** *ձևական մասի, որովհետև կա* **գեղ** *բառը, որից՝ իբրև բնից՝ ածանցվում է ոչ միայն* **գեղեցիկ**, *այլև* **գեղաճի**, **գեղավոր**, **գեղուհի**։ *Ածանցական է նաև* **նավակ**, *որի բունն է* **նավ**. *որից՝* **նավակ**, **նավական**, **նավել**, **նավորդ**։ *Ածանցական է նույնպես* **սմանչելի** *բառը. որովհետև թեպետ չկա առանձին «սքանչ» բառ, բայց կան նաև* **սմանչական**, **սմանչամբ**, **սմանչացում**, **սմանչանալ** *և այլն։ Իսկ, ընդհակառակն, դանակ բառը չենք կարող բաժանել բնի և ձևական մասի, որովհետև թեպետ և* **ակ** *մասը գտնում ենք «նավակ», «տնակ» և բազմաթիվ ուրիշ բառերի մեջ, բայց արդի լեզվի մեջ չկա* **դան** *բառ «դանակ» նշանակությամբ, և ոչ էլ այդ «դան» մասից՝ իբրև բնից՝ ուրիշ բառեր կան կազմված ուրիշ ածանցներով։ «Դանակ» բառն ուրեմն այժմ մեր լեզվական զգացումով չենք կարող համարել ածանցված, այսինքն՝ «ակ» ձևական մասով կազմված բառ։ Նույնպես* **ավանակ** *բառը կարելի չէ բաժանել «ավան» բնի և «ակ» ձևական մասի, որովհետև թեպետ լեզվի մեջ կա* **ավան** *(գյուղ) բառը, բայց դա իր նշանակությամբ ոչ մի կապ չունի* **ավանակ** *(էշ) բառի նշանակության հետ։*

Առնենք հետևյալ բառերը՝ **մեծություն**, **բախտավորություն**, **գյուղացիություն**. *սրանց ծանոթ «ություն» ածանցն անջատելուց հետո՝ ստանում ենք* **մեծ**, **բախտավոր**, **գյուղացի** *բները։ Արդ, այս բներն իրար հետ համեմատելով, տեսնում ենք, որ «մեծ» բունն այնպիսի է, որ այլևս չի կարող բաժանվել մի բնի և մի ծանոթ ածանցական մասի. իսկ «բախտավոր», «գյուղացի» բները կարող են իրենց կողմից վերածվել ծանոթ «ավոր», «ացի» ածանցներին, որ գտնում ենք բազմաթիվ ուրիշ բառերի մեջ ևս, և* **բախտ**, **գյուղ** *բներին։ Իսկ այդ վերջին երկու բներն այլևս չեն կարող բաժանվել մի բնի և մի ձևական մասի։ Այստեղից տեսնում ենք, որ բառաբները լինում են երկու տեսակ՝ 1.* **ածանցական բներ**, *որոնք իրենց կողմից կազմված են մի բնից և մի ձևական մասից (լինի ածանց թե վերջավորություն), և 2.* **նախատիպ կամ արմատական բներ**, *որոնք այլևս չեն վերածվում բնի և ձևական մասի։ Այս երկրորդ տեսակի բները կոչվում են նաև* **բառերի արմատներ**, *որոնց մեջ է պարունակվում նույն խմբին պատկանող բառերի գլխավոր նյութական նշանակությունը։*

Արմատներ կան, որ լեզվի մեջ գործածվում են իբրև առանձին անկախ բառեր, որոնք կոչվում են պարզ կամ արմատական բառեր, ինչպես օրինակ՝ **բախտ**, **նավ**, **մեծ** *և այլն։ Արմատներ էլ կան, որ չեն գործածվում իբրև առանձին բառեր, այլ միայն միացած ուրիշ բառերի կամ ձևական մասերի հետ, ինչպես օրինակ՝ չկա մենակ գործածվող «հի» բառ, բայց սրանից, իբրև մի արմատական բնից, ունենք ձևական մասերով կապմըված՝* **հիանալ**, **հիացում**, *և ուրիշ բառերի հետ բաղադրված՝* **հիասթափվել**, **հիասքանչ**։

Բառերի արմատները որոշելիս պետք է միշտ նկատի ունենալ լեզվի զարգացման շրջանները, որովհետև լեզուն միշտ փոփոխվում է, ուստի ինչ որ արդի լեզվի մեջ արմատ է, լեզվի մի անցյալ շրջանում կարող է մի ածանցված բառ լինել. ինչպես օրինակ՝ «դանակ» բառը, ինչպես տեսանք, այժմ այլևս մեզ համար ածանցական բառ չէ, այլ մի արմատական բառ, քանի որ մեր լեզվի մեջ այժմ «դան» բառ չկա «դանակ» նշանակությամբ, և «դանակ» չի նշանակում՝ փոքր դանակ, ինչպես որ եղել է հին լեզվի մեջ, երբ անկախ գործածվելիս է եղել «դան», որից «դանակ» նվազականը։

Բացի մեր լեզվի զանազան շրջանները նկատի ունենալուց՝ պետք է տարբերել նաև հայերենի արմատները լեզվաբանական կամ սկզբնական արմատներից, որոնք ստացվում են հնդեվրոպական լեզուների համեմատությամբ և մեր լեզվի ու սրան ցեղակից լեզուների հնագույն բաղադրիչ մասերն են։ Ինչպես որ մի բառ կարող է այժմ զգացվել իբրև պարզ բառ, բայց հին լեզվի մեջ կարող է պարզ չլինել,— նույնպես և ինչ որ հայերենում կարող է պարզ լինել, լեզվաբանորեն կարող է ածանցված լինել։ Հայերենի տեսակետով արմատ և պարզ կամ արմատական բառ է ամեն բառամաս կամ բառ, որ ստացվում է բոլոր ձևական մասերը դուրս ձգելուց հետո և որի ինչ մասերից կազմված լինելն այլևս հայերենով միայն չի իմացվում և որ ըստ երևույթին ոչ մի ուրիշ բառից կամ մասից չի կազմված։

Լեզվի մեջ նոր արմատներ այլևս չեն ստեղծվում, բացի նմանաձայնության կամ բնաձայնության արմատներից, ինչպես՝ գլլալ, դռռալ և այլն, որոնց կազմությունը դեռևս կենդանի է՝ բնության ծողած անմիջական տպավորության տակ. այլ եղած արմատներից և բառերից, որ հայերենին անցել են հնդեվրոպական նախալեզվից կամ առնվել են ուրիշ լեզուներից, կազմվել են և կազմվում են նոր բառեր։

5. Բառերի կապակցության ձևեր։— *Բառաձևեր կան մարդկային լեզուների մեծ մասի մեջ։ Կան լեզուներ, որոնք ոչ մի բառաձև չունեն («արմատական» կոչված լեզուները). կան լեզուներ ևս, որոնց մեջ բառաձևերը համեմատաբար պակաս են, քան ուրիշների մեջ։ Բառափոխության ձևերով արտահայտված հարաբերություններն այսպիսի լեզուների մեջ արտահայտվում են ուրիշ միջոցներով— բառերի կապակցության ձևերով, ինչպես են՝ բառերի շարադասություն, բառերի համաձայնություն, գլխավոր և երկրորդական շեշտերի դրություն, բառաշեշտերի տարբերություն և այլն։ Որքան հարուստ է մի լեզու բառաձևերով, այնքան պակաս կարիք ունի այսպիսի կապակցության ձևերի, և, ընդհակառակն, որքան քիչ են մի լեզվի բառաձևերը, այնքան ավելի նշանակություն ունեն կապակցության այս ուրիշ եղանակները։ Առնենք մի օրինակ։*

Ֆրանսերենում չկան գոյական անվան բառաձևեր կամ հոլովներ. դրանց պաշտոնն արտահայտվում է կա՛մ նախդիրներով, կա՛մ բառերի

որոշ և անփոփոխ դասավորությամբ. օրինակ՝ ենթակայի և կրող խնդրի հարաբերություններն իմացվում են միայն նրանով, որ ենթական դրվում է բայից առաջ, իսկ խնդիրը հետո. Pierre aime Paul «Պետրոսը սիրում է Պողոսը», այսինքն՝ «Պետրոսը սիրում է Պողոսին». Paul aime Pierre «Պողոսը սիրում է Պետրոսը», այսինքն՝ «Պողոսը սիրում է Պետրոսին»։ Մեր լեզվի մեջ ենթակայի և կրողի խնդրի համար այսպիսի հաստատուն դասավորության կարիք չկա, որովհետև ենթակայի և կրողի խնդրի հարաբերություններն արտահայտվում են որոշ բառաձևերով։ Ուստի հայերենում ենթակայի և խնդրի դասավորությունն ազատ է և հնարավոր է ոչ միայն «Պետրոսը սիրում է Պողոսին» ձևը, այլև՝ «Պողոսին սիրում է Պետրոսը», «Պողոսին Պետրոսը սիրում է», «Պետրոսը Պողոսին սիրում է», «Սիրում է Պետրոսը Պողոսին», որոնց բոլորի մեջ Պետրոսը ենթակա է, իսկ Պողոսը՝ կրող խնդիր։ Ֆրանսերենում, քանի որ չկա բառաձև, բառերի դասավորության կարգն ունի ձևական նշանակություն. ուստի անհնարին են ենթակայի և խնդրի դասավորության տեղի այսպիսի փոփոխություններ։

Հայերենում էլ, սակայն, կան դեպքեր, որոնց մեջ ենթական և խնդիրն առանձին բառաձևերով չեն արտահայտվում, և որովհետև ենթակայի և խնդրի համար հատուկ բառադասություն չկա, ուստի այդպիսի դեպքերում թյուրիմացություն է առաջ գալիս. ինչպես՝ «քարը կոտրեց փայտը», «նպատակն արդարացնում է միջոցը»։ Այս խոսքերի մեջ կապակցության ձևերից չի հասկացվում, թե ինչն է ինչով կոտրվել, ինչն է ինչով արդարացվում։ Այսպիսի դեպքերում կա՛մ մտքից զորությամբ իմանում ենք, թե որն է ենթական և որը կրող խնդիրը, կա՛մ թե խոսքն ուրիշ ձևերով ենք կազմում։ Արևմտյան գրական լեզվի մեջ, քանի որ ավելի հաճախ են առաջ գալիս այսպիսի երկդիմի կազմություններ, արդեն ձգտում կա ենթական խոսքի սկզբում դնելու, ինչպես ֆրանսերենում է։

6. Լեզվական իրակությունների փոփոխությունը։— Ամեն լեզվի մեջ լեզվական բոլոր իրակությունները (ֆակտերը), այսինքն հնչյունները, բառերի նշանակությունները և բառերի կապակցության, բառակազմության ու բառափոխության ձևերը որոշ օրենքներով միշտ և անընդհատ փոփոխվում են խոսողների բերանին խոսողների կամքից բոլորովին անկախ։ Այդ փոփոխությունը, սակայն, այնքան դանդաղ է կատարվում, որ խոսողների համար անզգալի է մնում. միայն առանձին անհատներ, որ սուր դիտողություն ունին և հետաքրքրվում են լեզվով, նույնպես և մասնագետ գիտնականները, նկատում են լեզվի մեջ իրենց կարճ կյանքի ընթացքում մտած փոփոխությունները։ Մարդկանց մեծ մասն ուշադրություն չի դարձնում իրենց խոսած լեզվի փոփոխությանը։ Երկար ժամանակ և նույնիսկ դարեր անցնելուց հետո միայն՝ փոփոխությունն այնքան մեծ է լինում, որ լեզվի հին և նոր վիճակները խիստ տարբերվում են իրարուց։

Այսպիսի փոփոխության հետևանքով՝ այժմ առանց առանձնապես սովորելու՝ այլևս չենք հասկանում մեր հին լեզվով գրված գրաբար գրքերը, չնայելով, որ գրաբարը կարդում ենք ոչ թե հին արտասանության համեմատ, այլ մեր արդի արտասանությամբ. օրինակ՝ հին լեզվի «եկեալ է նա ի տուն» խոսքն այժմ ասում ենք՝ «նա եկել է տուն». «եկեալ է» բայի հնչյուններն, ուրեմն, փոխվել են, և «ի» նախդիրը նոր լեզվից դուրս է ընկել։ Նույնպես մեծ փոփոխության է ենթարկված երեք բառից կազմված այս կապակցությունը՝ «բանք հարցն մերոց», որ աշխարհաբար լինում է՝ «մեր հայրերի խոսքերը»։ Նախ՝ բան բառի տեղ անցել է խոսք բառը, իսկ բան բառն աշխարհաբարում նշանակում է գործ և միայն որոշ կապակցությունների մեջ պահում է իր հին խոսք նշանակությունը, ինչպես՝ «բան եմ ասում» և բարդությունների մեջ, ինչպես՝ «հոգեբանություն» և նմանները։ Ապա հոգնակին կազմվում է ոչ թե «ք», այլ «եր» վերջավորությամբ, նույնպես հայր բառի հոգնակի սեռականը ոչ թե հարց ձևով է լինում, այլ հայրերի. «ն» հոդն էլ դրվում է ոչ թե սեռականի վրա, ինչպես գրաբարում է, այլ սեռականի խնդրառու գոյականի վրա, այն էլ ոչ թե «ն» է, այլ՝ «ը» (խոսքերը)։ Եվ վերջապես սեռականն ընկնում է իր խնդրառուից առաջ, ինչպես և մեր ստացական ածականն իր գոյականից առաջ է դրվում, այն էլ անփոփոխ ձևով, մինչդեռ գրաբարում թվով և հոլովով համաձայնում է իր գոյականին։

7. Ինչից է առաջանում լեզվի փոփոխությունը։— Կարելի չէ մերժել անհատների գիտակցաբար մտցրած փոփոխությունները. քերականությունն ու բառարանները շարունակ աշխատում են գրական լեզվի ճշտման ու կանոնավորման համար։ Բայց դա շատ փոքր նշանակություն ունի, և նրանք իսկապես ոչ թե ստեղծագործում են, այլ գլխավորապես ճշտում ու կանոնավորում են որևէ լեզվական իրակություն, որի մեջ կիրառությունը տատանվում է։ Նույնպես և գիտությունների և արվեստների տերմինաբանությունն ու դարձվածները ստեղծվում, կանոնավորվում և հարստանում են մասնագետների ձեռով, ինչպես և առանձին անհատներ ստեղծում են ուրիշ նոր բառեր ու դարձվածներ, որ ընդհանրանում են լեզվի մեջ։ Բացի այդ՝ լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն է նաև օտար լեզուների ազդեցությունը, որի մասին ներքևում կխոսվի։ Բայց այդ ամենը շատ չնչին է լեզվի այն դանդաղ, ակամա և անգիտակից փոփոխության դիմաց, որին շարունակ ենթակա են լեզվի բոլոր իրակությունները։

Այս փոփոխության իսկական պատճառն ուրիշ բան չէ, բայց եթե լեզվի սովորական գործունեությունը, որով սովորում և գործածում ենք լեզուն։ Այստեղ արդեն չկա որևէ դիտավորված ներգործություն լեզվի վրա, որևէ ուրիշ նպատակ, բացի վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել ուրիշին։ Լեզվի այս սովորական կիրառության, սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա

ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության զարգացման մեջ, նույնպես և լեզվի զարգացման մեջ ծագած նոր լեզվական իրակությունների ավելի կամ պակաս նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանությունը լեզվի մեջ կամ կորուստը։ Ուստի լեզվի զարգացումն, այսինքն նրա կրած փոփոխություններն ըմբռնելու համար՝ պետք է ամենից առաջ տեսնել, թե ինչպես ենք սովորում խոսել, և ինչպես է ընթանում խոսվածքի գործունեությունն ընդհանրապես։

Բ

ԽՈՍՎԱԾՔԻ ԴԻՄԱԽՆԵՈՒԹՅՈՒՆԸ

8. Պատկերացումներ և իրենց զուգորդությունը։— *Ուրիշի խոսքը հասկանալու և խոսելու հոգեկան գործունեությունն ամբողջ հիմնված է մտապատկերների կամ պատկերացումների զուգորդության վրա, որի ուսումնասիրությունը հոգեբանության խնդիրն է։*

Մեզ շրջապատող արտաքին առարկաները մեր զգայարանների վրա թողնում են տպավորություններ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին։ Այս բնախոսական երևույթին— գրգիռներին իբրև հետևանք մեր մեջ տեղի է ունենում ամենապարզ հոգեկան երևույթը կամ գործողությունը, այն է՝ զգայելը, այսինքն ունենում ենք զանազան զգայություններ (գույնի, ձևի, տաքության և այլն). ուշադրություն դարձնելով դրան՝ մենք դատում ենք, թե այդ զգայությունները ծագում են այս կամ այն առարկայից, որին և վերագրում ենք այնքան հատկանիշներ, քանի տեսակի զգայություններ որ ունենում ենք մեր մեջ։ Դրա հետևանքը լինում է այն, որ մենք իմանում կամ ճանաչում ենք արտաքին առարկան կամ նրա գոյությունը։ Այս իմացման կամ ճանաչման գործողությունը կոչվում է ըմբռնում։ Օրինակ՝ լուսնից եկած լույսը լուսնին նայողի տեսողության զգայարանի մեջ հարուցանում է որոշ գրգիռներ, որ նյարդերը հաղորդում են ուղեղին. դրան իբրև հետևանք՝ նայողն ունենում է զանազան զգայություններ գույնի, ձևի, մութ կետերի և այլի մասին, և նա ուշադրություն դարձնելով դրան՝ ճանաչում կամ ըմբռնում է այդ զգայությունների աղբյուրը— լուսինը։

Այսպես և խոսողի խոսքի օրգանների շարժումներն առաջացնում են. օդի որոշ տատանումներ— ձայնի տատանումներ։ Սրանք լսողի լսողության զգայարանի մեջ հարուցանում են որոշ գրգիռներ, որ նյարդերի միջոցով հաղորդվում են ուղեղին և առաջ բերում լսողի մեջ լսելիի զգայություններ խոսողի արտասանած ձնշյունների մասին, ապա և լսողն ուշադրություն դարձնելով դրան՝ ունենում է լսած ձնշյունների ըմբռնումը, որ կարևոր նշանակություն ունի լեզվի տեսակետից։

Արտաքին առարկաներից ստացած զգայությունները երբեք մի-

մյանցից ջոկ և առանձին-առանձին չենք ունենում, այլ մի շարք զգայություններ միասին, և այսպես ոչ միայն միևնույն զգայարանի զգայությունները, այլ սովորաբար նաև մի քանի զգայարանների. օրինակ՝ խնձորից կարող ենք ունենալ զգայություններ՝ տեսողության (գույն, ձև), հոտառության (հոտ), ճաշակելիքի (համ), շոշափելիքի (կոշտություն, կոկուլություն), որոնց բոլորի հետևանքը միասին լինում է այդ առարկայի ըմբռնումը։

Բացի մեր հինգ զգայարանների միջոցով ունեցած զգայություններից, ունինք նաև ներքին օրգանական զգայություններ ու ըմբռնումներ, ինչպես են՝ մարսողության, արյան շրջանառության, մկանների կծկման և այլն։ Այսպես օրինակ՝ խոսելիս շարժվում են խոսողի խոսքի գործարանները (լեզու, շրթունքներ և այլն). խոսողն այս շարժումներին իբրև հետևանք ունենում է որոշ զգայություններ, ապա և **ըմբռնումներ խոսքի գործարանի որոշ մկանային շարժումների մասին:** *Դա ևս կարևոր նշանակություն ունի լեզվի տեսակետից։*

Մի անգամ ունեցած զգայությունը կամ ըմբռնումը երբեք անհետ չի կորչում, այլ պահվում է մեր մտքի մեջ և կարող է վերարտադրվել այն ժամանակ, երբ չկա այն առարկան, որից ստացել ենք զգայությունը։ Զգայության կամ ըմբռնումի այսպիսի նորոգումը մեր մեջ կոչվում է **մտապատկեր** *կամ* **պատկերացում** *(կամ գաղափար)։ Օրինակ՝ մենք կարող ենք վերարտադրել կամ պատկերացնել մի որևէ ձայն, հնչյուն, որ առաջ լսել ենք, այսպես և մեր տեսած մի առարկա, մի ծանոթ անձ, մեր տեսած մի վերջալույս, մեր կերած մի բանի հոտը, համը և այլն։ Իվ վերջապես կարող ենք պատկերացնել նաև մեր ներսում տեղի ունեցած զգայությունները, օրինակ՝ աչքերի կայծը, որ մենք ունեցել ենք մի օր մեր աչքերի մի բանի դիպչելուց, ականջի դոռոցը, նույնիսկ մեր մարմնի մի մասում ունեցած ցավը։*

Առարկայի մտապատկերը (գաղափարը) չպիտի շփոթել առարկայի իրեն հետ. առարկան մեզնից դուրս է, իսկ մտապատկերը կամ պատկերացումը գիտակցում ենք միայն մեր մեջ՝ հիշելով մեր առաջուց դիտած առարկան։ Նույնպես չպիտի իրար հետ շփոթել առարկայի ըմբռնումն ու պատկերացումը. ըմբռնումը տեղի է ունենում մեր մեջ անմիջապես, երբ դիտում ենք որևէ բան, մինչդեռ պատկերացումը ծնվում է մեր մեջ այն ժամանակ, երբ առարկան այլևս մեր աչքի առջև չէ, այլ առաջ, նույնիսկ տարիներ առաջ ենք տեսել, լսել, շոշափել և այլն։ Օրինակ՝ երբ նայում և տեսնում ենք Մասիս սարը, մենք ունենք նրա զգայությունն, ապա և ըմբռնումը. իսկ երբ Մասիսը մեր աչքի առաջ չէ, քանի որ տեսել ենք այն, մեր մտքում պատկերացնում ենք կամ, ինչպես ասում են, մտքով տեսնում ենք այդ լեռը։ Այդ ժամանակ մենք ունենք դրա մտապատկերը կամ պատկերացումը։

Ապա դարձյալ առարկան և առարկայի ըմբռնումն ու պատկերացումը չպիտի շփոթել բառերի, այսինքն առարկայի անվան հետ։ **Սեղան ա-**

առարկան, օրինակ, արտաքին աշխարհի մի կարասիք է, որ կարող ենք տեսնել, շոշափել և նրա ըմբռնումն ունենալ։ Ապա կարող ենք սեղան առարկան հիշելով՝ ունենալ նրա պատկերացումը, որ ո՛չ տեսնել և ո՛չ շոշափել կարող ենք և ո՛չ էլ լսել։ Իսկ «սեղան» բառը հինգ հնչյուններից կազմված մի կապակցություն է միայն, որ ո՛չ տեսնել կարող ենք և ո՛չ շոշափել, բայց մենք լսում և արտասանում ենք և ունենում նրա ըմբռնումը և ապա կարող ենք այդ հնչյունները հիշելով՝ ունենալ նրանց պատկերացումը, որ անկախ է սեղան առարկայի պատկերացումից։ Թե առարկայի անվան և առարկայի իրեն պատկերացումները տարբեր և անկախ են, այդ շատ պարզ երևում է նրանից, որ մենք հաճախ կենդանի կերպով պատկերացնում ենք մի առարկա, մի մարդ, նույնիսկ նկարագրում ենք առարկան, պատմում ենք նրա մասին, բայց անունը չենք հիշում և ասում ենք՝ «էս իքը», կամ ասում ենք՝ «անունը լեզվիս ծայրին է, բայց միտս չի գալիս»։ Կան և շատ առարկաներ, որ մենք տեսնում ենք և ունենում ենք նրանց մտապատկերները, բայց նրանց անունները չգիտենք կամ նույնիսկ լեզվի մեջ նրանց համար անուն չկա։

Պատկերացումները կարող են պարզ և բարդ լինել, օրինակ՝ մեկ գույնի պատկերացումը պարզ է, բայց մի որևէ առարկայի պատկերացումը բարդ է, կազմված լինելով մի շարք պատկերացումներից, ինչպես՝ մի ծառի պատկերացումը բարդ է, կազմված լինելով բնի, ճյուղերի, տերևների և այլ պատկերացումներից։ Նույնիսկ ծառի ամենափոքր մի մասի, օրինակ՝ մի տերևի պատկերացումը նույնպես բարդ է, քանի որ մենք միաժամանակ ունենում ենք այդ մի տերևի մեծության, ձևի, գույնի, կոթի և այլ պատկերացումները։

Երբ մի ըմբռնում ենք ունենում, կամ մեր պատկերացումներից մեկը որևէ պատճառով վերարտադրվում է, այսինքն երևան է գալիս մեր մտքի մեջ, դա իր հետ, այսպես ասած, քաշում առաջ է բերում մի ուրիշ պատկերացում։ Ուրիշ խոսքով, ամեն պատկերացում վերարտադրվում է՝ կապվելով մի ուրիշ պատկերացման հետ։ Պատկերացումների այս միացումը հոգեբանության մեջ կոչվում է **պատկերացումների** *(մտապատկերների)* **զուգորդություն, հաճախ նաև գաղափարների զուգորդություն**։

Պատկերացումների զուգորդությունը պատահաբար չի լինում, այլ կատարվում է կա՛մ նմանությամբ, կա՛մ կցորդությամբ։ Նմանական զուգորդությամբ մի ըմբռնումին կամ պատկերացումին հետևում է մի ուրիշ պատկերացում, որ որևէ նմանություն ունի առաջինի հետ. օրինակ՝ մի կարմիր գնդակի տեսքը կամ պատկերացումը կարող է մեր մեջ վերարտադրել մի կարմիր խնձորի պատկերացում, որ իր գույնով ու ձևով նման է կարմիր գնդակին։ Լուսնին նայելով կարող ենք հիշել մի բոլորակ մակերևույթ, մի ափսե (սկավառակ)։ Կցորդական զուգորդությամբ առաջին պատկերացման կամ ըմբռնումի հետ միացած վերարտադրվում է այնպիսի մի պատկերացում, որ առաջ ունեցել ենք առաջինի հետ միաժամանակ, կամ անմիջապես նրանից հետո, կամ միևնույն պարագաների

ու շրջապատի մեջ։ Այսպիսի ըմբռնումները մեր մտքում պահվում են իրար հետ սերտ կապված, և երբ նրանցից մեկը կրկնվում կամ վերարտադրվում է, հետևից վերարտադրվում է նաև իր հետ կցված պատկերացումը։ Օրինակ՝ մի ծանոթ տան պատկերացումը, կամ ըմբռնումի կըրկնությունը մեզ հիշեցնում է այդ տան մեջ մի ժամանակ բնակվողին, վերջինիս հետ զուգորդված վերարտադրվում է մեր մտքի մեջ մի ուրախ երեկոյի պատկերացում, որ մի ժամանակ միասին ունեցել ենք այդտեղ. դա հիշեցնում է մեզ մեր ընկերներից մեկին, որ մասնակից է եղել այդ երեկոյին և այլն։

Համախ այս երկու տեսակի՝ նմանական և կցորդական զուգորդությունները տեղի են ունենում միմյանց հետևից փոխեփոխ, այսինքն պատկերացումների զուգորդությունը կատարվում է մերթ նմանությամբ, մերթ կցորդությամբ. օրինակ՝ կարմիր խնձորը կարող է հիշեցնել մեզ կարմիր գնդակ, գնդակը հիշեցնել մի մանկական խաղ, իսկ վերջինս՝ մեր մանկական խաղընկերներից մեկին և այլն։ Նույնպես մեր տեսած վառ վերջալույսը կարող է մեր մեջ վերարտադրել մեր մի ժամանակ տեսած մի հրդեհ. վերջինս կարող է հիշեցնել մի մոր ճիչ, այս ճիչը՝ այն երեխային, որ հրդեհի վտանգի մեջ էր. այս երեխայի պատկերացումը հիշեցնել մի ուրիշ երեխայի, այս երեխան էլ՝ իր հորը, սա էլ՝ իր հեղինակած գիրքը, այս գիրքն էլ՝ մեր մի ընկերին, որի հետ մի ժամանակ միասին կարդացել ենք, այս կարդալու գործողությունն էլ՝ այն քաղաքը, ուր կարդացել ենք։ Եվ այսպես երկար շարքով մի պատկերացման հետ զուգորդվում է մի ուրիշը, և մենք սովորաբար չենք էլ գիտակցում, թե ինչու մեր մտքի մեջ մի պատկերացումով վերարտադրվում է մի ուրիշը։

Երբ երկու պատկերացում հաճախ կրկնվում են իրար հետ կապված, այդ ժամանակ դրանց զուգորդությունը սերտ է լինում, և հեշտությամբ է մի պատկերացման հետ միացած երևան գալիս մյուսը։ Նույնպես հեշտությամբ է վերարտադրվում և այն պատկերացումը, որից մարդ սաստիկ ազդվում է. օրինակ՝ մահվան առաջ միշտ հիշում ենք մեր սիրելիների մահը։ Իսկ, ընդհակառակն, կյանքի մեջ մեկ անգամ միայն պատահած մի աննշան դեպք, մի առարկա, որ մեր ուշադրությունը չի գրավել առանձնապես, թույլ կերպով է զուգորդվում ուրիշ պատկերացումների հետ և թույլ կերպով է երևան գալիս մեր հիշողության մեջ, կամ նույնիսկ երևան չի գալիս. ինչպես օրինակ՝ մենք սովորաբար չենք հիշում այն անձերին, որոնց պատահաբար հանդիպել ենք կարճատև ժամանակով։

9. Լեզվական պատկերացումների զուգորդությունները։— *Լեզվի տեսակետից, ինչպես տեսանք, կարևոր նշանակություն ունեն լսելիքի ղղայություններն ու ըմբռնումները խոսքի հնչյունների վերաբերյալ, ինչպես և խոսքի գործարանների մկանային շարժման զգայություններն ու ըմբռնումները, որ ունենում ենք այդ հնչյուններն արտասանելիս. հետե-*

վաբար կարևորություն ունեն նաև հնչյունների ու խոսքի գործարանի մկանային շարժման պատկերացումներն ու նրանց զուգորդությունը։

Լեզու սովորելիս, երեխա ժամանակ, մենք լսում ենք մեր շրջապատողների խոսվածքը և մեր գիտակցության մեջ ունենում ենք իրար հաջորդող հնչյունների կապակցությունների պատկերացումներ, ինչպես՝ սեղան հինգ հնչյունների միմյանց հետ կցորդությամբ զուգորդված պատկերացումը։ Հաճախակի կրկնության պատճառով այս հնչյունների զուգորդությունը սերտ է լինում և հեշտությամբ կարող է վերարտադրվել մեր հիշողության մեջ։ Այսպիսով մենք ունենում ենք բառերի՝ իբրև հնչյունների՝ պատկերացումներ։ Բայց դրա հետ միաժամանակ մենք ունենում ենք նաև առարկաների, ինչպես օրինակ՝ սեղան կարասիքի ըմբռնումըն ու պատկերացումը։ Եվ երբ հաճախ սեղան հնչյունների կապակցությունը լսելիս մեզ ցույց է տրվում, և մենք տեսնում ենք այդ կարասիքը, որի համար այդ հնչյունների կապակցությունն իբրև նշանակ է ծառայում, այն ժամանակ մենք սեղան հնչյունների պատկերացումը զուգորդում ենք սեղան կարասիքի պատկերացման հետ և ամեն անգամ երբ նորից տեսնում ենք սեղան առարկան և կամ մեր գիտակցության մեջ ծնվում է դրա պատկերացումը, միաժամանակ ծնվում է զուգորդությամբ նաև սեղան հնչյունների պատկերացումը։ Եվ ընդհակառակն, ամեն անգամ երբ մեր մտքի մեջ ծնվում է սեղան հնչյունների պատկերացումը և կամ ուրիշներից լսում ենք սեղան հնչյունների կապակցությունը, դրա հետ զուգորդված վերարտադրվում է նաև այդ կարասիքի պատկերացումը։ Այսպիսով սեղան հնչյունները կապվելով սեղան առարկայի պատկերացման հետ՝ բովանդակություն կամ նշանակություն են ստանում, և մենք հասկանում ենք ուրիշների արտասանած այդ բառը, ինչպես և նրման եղանակով նաև ուրիշ բառեր, որոնք մեր մտքի մեջ երևան են բերում համապատասխան առարկաների, գործողությունների և այլ պատկերացումներ։ Բայց այսպես մենք դեռ միայն ուրիշներին հասկանում ենք, իսկ մենք ինքներս դեռ չենք խոսում և մեր մտքերն ուրիշներին հասկանալի դարձնում։ Այս վերջինիս համար անհրաժեշտ են ուրիշ զուգորդություններ։

Մանկության առաջին տարիներում արդեն փորձում ենք մեծերին նմանվելով՝ արտասանել հնչյուններ ու բառեր։ Երկար ժամանակ երեխայի այս փորձերն անհաջող են անցնում, մինչև որ նա կարողանում է մեծերի նման ճիշտ արտասանել, որի հավաստիացումն երեխան ունենում է իր լսելիքով։ Բառերի արտասանության հետ միաժամանակ առաջ են գալիս և խոսքի գործարանների շարժումներ, որոնք անհրաժեշտ են արտասանության համար, ապա և այդ շարժումների մկանային զգայություններ ու պատկերացումներ, որոնք իրար հետ զուգորդվում են կցորդությամբ։ Այս շարժումների մկանային պատկերացումները զուգորդվում են նաև համապատասխան հնչյունների լսողական պատկերացման հետ, քանի որ մենք, օրինակ՝ սեղան արտասանելիս՝ դրա համար անհրա-

ժեշտ մկանային շարժումների հետ լսում ենք մեր իսկ արտասանած ա-ձ-ղան հնչյունների կապակցությունը։ Ուրիշ խոսքով, մենք ունենում ենք բառի հնչյունական կողմի պատկերացումը, այսինքն՝ բառի հնչյունների թե՛ լսողական և թե՛ մկանային պատկերացումները, որոնք զուգորդված են միմյանց հետ, և մեկի հետ կապված վերարտադրվել կարող է մյուսը։ Նոր խոսել սկսող երեխայի մեջ, հասկանալի է, ամեն մի բառի լսողական պատկերացման հետ հաճախ դեռ կապված չէ համապատասխան մկանային պատկերացումը, ինչպես է չափահասների մեջ։ Արդ, երբ մենք տեսնում ենք մի առարկա, օրինակ՝ սեղան կարասիքը, կամ մեր մեջ վերարտադրվում է այդ կարասիքի պատկերացումը, դրա հետ զուգորդված, ինչպես տեսանք, վերարտադրվում է և **սեղան** հնչյունների լսողական պատկերացումը. իսկ այս վերջինի հետ, ինչպես տեսանք, զուգորդված է խոսքի գործարանի համապատասխան շարժումների մկանային պատկերացումը, որ և վերարտադրվում է մեր մեջ։ Եվ երբ այդ ժամանակ գիտակցաբար, մտադրված կերպով, նորից կատարում ենք մեր հիշած համապատասխան մկանային շարժումները, մենք արտասանում ենք **սեղան** բառը, որի հետ կապված է այդ առարկայի պատկերացումը։ Ուրիշները լսելով մեր արտասանած այդ բառը՝ հասկանում են մեզ, որովհետև նրանց համար էլ այդ հնչյունների հետ կապված է միևնույն բովանդակությունը, նույն առարկայի պատկերացումը, որ և նրանց մեջ վերարտադրվում է այդ հնչյունները լսելով։ Այսպես ուրեմն մենք խոսում ենք, այսինքն՝ ուրիշներին մեր միտքը հայտնում ենք բառերով։ Այս եղանակով միմյանց հետ զուգորդվում են նաև շարահյուսական կապակցությունների և ամբողջ խոսքերի, ուրեմն մի շարք բառերի հնչյունների պատկերացումները և նրանց արտասանության համար հարկավոր մի շարք իրար հետ կապված մկանային պատկերացումներ, ինչպես և այն մտածության բովանդակությունը, որ դրվում է նրանց մեջ։*

*Լեզվի այս հիմնական զուգորդությունները, որոնցով մենք սովորում ենք հասկանալ ուրիշներին և խոսել, լինում են միայն կցորդության ձևով, թե չէ՝ ոչ մի նմանություն չկա արտասանած հնչյունների և արտասանության համար հարկավոր շարժումների մեջ, ոչ էլ առարկայի պատկերացման և նրա անվան, այսինքն՝ այն հնչյունների մեջ, որ զուգորդվում են առարկայի պատկերացման հետ։ Մենք լեզուն սովորում ենք մեծերից, ընդունելով պատրաստի բառեր և բառերի կապակցության ձևեր. ինչպես օրինակ՝ **սեղան** հնչյունների հետ որոշ կարասիքի պատկերացում ենք կապում, որովհետև մանկությունից սովորել ենք մեր շրջա-*

---

* *Գրագետները, բացի բառերի հնչյունների լսողական և խոսքի գործարանի մկանային շարժման պատկերացումներից, դրանց հետ զուգորդված ունեն նաև ամեն մի բառի տառերի գրության զորեղ տեսողական պատկերացումներ, այլև մկանային պատկերացումներ ձեռքի շարժումների, որ անհրաժեշտ են գրելիս։ Ի միջի այլոց նաև այս է պատճառը, որ գրագետներն առհասարակ դժվարությամբ են տանում ուղղագրության մեջ մտցրած փոփոխությունը։*

պատողներից՝ այդ հնչյունների հետ այդ նշանակությունը զուգորդել. մինչդեռ, օրինակ, ռուսը նույն պատկերացումը զուգորդում է «ստոյ» հնչյունների հետ, գերմանացին՝ «թիշ» և այլն, որոնք հայի համար անշանակ հնչյուններ են։ Լեզվի մեջ կան, իհարկե, որոշ թվով բառեր, որոնց հնչյունները նման են իրենց նշանակած բնական հնչյուններին, դրանք բնաձայնություններ են, ինչպես՝ խշշալ, գոռալ և այլն։ Միայն պետք է նկատի ունենալ, որ կան բառեր էլ, որոնք ըստ երևույթին միայն բնաձայնություն են, որովհետև բոլորովին ուրիշ ծագում ունին և սկզբնապես կապ չեն ունեցել բնաձայնության հետ։ Թե ինչպես այս կամ այն հնչյունների կապակցության հետ զուգորդված է այս ու այն առարկայի կամ գործողության մտապատկերը, դա լեզվի ծագման մութ խնդրին է վերաբերում։

10. Ընդհանուր պատկերացում։ Բառերի ընդհանուր և հատուկ նշանակությունները։— Բնության մեջ գոյություն ունին միայն անհատ առարկաներ, առանձին գործողություններ ու հատկություններ, որոնք և մեր դիտողության են ենթարկվում. ուստի լեզու սովորելիս սկզբում բառի հնչյունների հետ զուգորդվում են անհատ առարկաների և առանձին գործողությունների պատկերացումները։ Ուրիշ խոսքով՝ բառերն ունին ըստ կրզբում անհատական կամ հատուկ նշանակություն։ Բնության մեջ գոյություն ունեցող հատ-հատ առարկաները, առանձին հատկություններն և այլն թվով այնքան շատ են, որ անհնարին է նրանց ամեն մեկին ջոկ-ջոկ անուններ տալ. ուստի և մեր խոսքը պիտի լիներ շատ աղքատ, սահմանափակ թվով անհատ առարկաների և անհատ գործողությունների կամ հատկանիշների մասին, եթե խոսքն այդ դրության մեջ մնացած լիներ։ Բայց մենք կարողանում ենք համեմատաբար սակավաթիվ բառերով գրեթե ամեն բանի մասին խոսել, որովհետև ամեն բառ նշանակում է ոչ միայն բնության մեջ եղած մի հատ եզակի առարկա, եզակի գործողություն և այլն, այլև միանման առարկաների կամ գործողությունների մի ամբողջ տեսակ։ Օրինակ՝ երբ ասում ենք ծառ, այդ բառով հասկանում ենք ոչ թե այսինչ կամ այնինչ անհատ ծառը, այլ նույնանման առարկաների մի ամբողջ մեծ խումբ, որոնցից յուրաքանչյուրն էլ կարող է կոչվել ծառ։ Այսպես, ուրեմն, միևնույն բառով անվանում ենք ոչ միայն բնության մեջ անհատ, թանձրացական (կոնկրետ) մեկ առարկա, այլև նույն առարկաների ընդհանուր պատկերացումը կամ ընդհանուր գաղափարը։ Առաջին դեպքում բառն ունի հատուկ, թանձրացական նշանակություն, իսկ երկրորդ դեպքում՝ ընդհանուր, վերացական։

Առարկայի ընդհանուր պատկերացումն ունենում ենք այն ժամանակ, երբ բազմաթիվ միատեսակ ըմբռնումները նույնացնում ենք միմյանց հետ՝ նրանց աննման մասերը դուրս ձգելով, իսկ նմաններն ընդհանրացնելով, կամ մեր ուշադրությունը կենտրոնացնելով բազմաթիվ առարկաների այն հատկանիշների վրա, որոնք անհատական չեն, այլ

ընդհանուր են։ Հասկանալի է, որ ընդհանուր պատկերացումը հետևանք է հոգեկան բարդ գործունեության. մենք պետք է առաջուց մի շարք միանման ըմբռնումներ ունենանք, մինչև որ կարողանանք վարժվել ամեն մի նոր ըմբռնումի մեջ գտնել, ինչ որ ընդհանուր է առաջվա բոլոր նույնանման ըմբռնումներին, օրինակ՝ այսինչ անհատ ծառի մեջ տեսնել, ինչ որ ընդհանուր է մեր առաջուց տեսած բոլոր ծառերի մեջ։ Այսպիսով, ուրեմն, ամբողջ աշխարհի բոլոր առարկաները, հատկանիշները և այլն ամեն մարդու համար որ խոսում է՝ որոշ չափով արդեն վերլուծված են լինում և վերածված միատեսակ մեծ կամ փոքր խմբերի, որ և անդրադառնում են բառերի մեջ։ Բառերն ուրեմն նշանակություն են ստանում, երբ նրանց արտաքին հնչյունական կողմը կապվում է ոչ միայն անհատ, մեկ թանձրացական առարկայի պատկերացման հետ, այլև համազգի առարկաների ընդհանուր պատկերացման հետ, կամ որ միևնույն է՝ բառերն ունենում են թե՛ հատուկ, թանձրացական նշանակություն և թե՛ ընդհանուր, վերացական։

Բառերի այս ընդհանուր, վերացական բնավորությունն ահա՛ մեզ հնարավորություն է տալիս համեմատաբար սակավաթիվ բառերով խոսել գրեթե ամեն բանի մասին։ Բայց բառերի նշանակության այս բնավորությունն էլ դեռ բավական չէ. մենք չէինք կարող խոսել, այսինքն՝ մեր մտածությունը հայտնել բառերով, եթե չլիներ հոգեկան գործունեության մի ավելի բարձր աստիճանը— հոգեբանական դատողությունը։

11. Հոգեբանական դատողություն և խոսք։— *Մեր մտածությունը հիմնված է պատկերացումների զուգորդության վրա։ Մենք մտածում ենք, երբ իրար հետ զուգորդվող պատկերացումների շարքից անջատելով երկու պատկերացում՝ միացնում ենք միմյանց հետ, միաժամանակ և գիտակցում ենք նրանց մեջ եղած հարաբերությունը։ Պատկերացումների այսպիսի միացումը հոգեբանության մեջ կոչվում է հոգեբանական դատողություն։ Այն պատկերացումը, որ առաջ է ծնվում մեր մեջ և որից սկսվում է դատողության գործողությունը, կոչվում է* **հոգեբանական (դատողության) ենթակա.** *իսկ այն պատկերացումը, որ գիտակցում ենք, թե միանում է ենթակայի հետ, կամ, ինչպես ասում են, ստորոգվում է ենթակայի վրա, կոչվում է* **հոգեբանական ստորոգյալ:** *Ստորոգյալի միացումը ենթակայի հետ, կամ ստորոգումը լինում է, երբ մենք գիտակցում ենք այդ երկուսի մեջ եղած հարաբերությունը։ Այս հարաբերության գիտակցությամբ է միայն առաջ գալիս մտածությունը, և սովորական զուգորդության երկու անդամները դառնում են դատողության անդամներ— ենթակա ու ստորոգյալ, և մտածությունը տարբերվում է սովորական զուգորդությունից։ Առանց այդ հարաբերության գիտակցության՝ ոչ թե հոգեբանական ստորոգյալ և ենթակա կլինեն, այլ միայն իրար հետ սովորական եղանակով զուգորդված երկու պատկերացում։ Այսպես ուրեմն՝ մտածության ամենակարևոր տարրն է հոգեբանական ենթակայի ու ստորոգյալի հարաբերության գիտակցությունը։*

Առարկաների պատկերացումների հետ զուգորդված են բառերի պատկերացումները. մենք կարող ենք հոգեբանական դատողության անդամներից մեկը կամ երկու անդամն էլ արտահայտել բառերով, լինին բառերը բարձր արտասանված, թե միայն մտքի մեջ ասված։ Այդ ժամանակ բառերը կամ թե բառերի պատկերացումները փոխանակում են մտքի առարկաների պատկերացումներին, մենք մտածում ենք բառերով կամ մեր մտածությունն արտահայտում ենք բառերով, կամ խոսք ենք կազմում գիտակցելով, որ դատողության անդամների իրար հետ ունեցած հարաբերությունը ոչ թե նրանց փոխարինող բառերինն է, այլ մեր մտքի այն առարկաներին, որոնց փոխարինում են բառերը։ Օրինակ՝ երբ դիտում ենք առավոտյան արեգակի ծագման հետ կապված փոփոխությունը բնության մեջ և ասում ենք «լուսացավ», մենք այդ բառով արտահայտում ենք դատողության անդամներից մեկը, հոգեբանական ստորոգյալը, իսկ հոգեբանական ենթական մնում է առանց արտահայտվելու. դա բնության մեջ տեղի ունեցած փոփոխության ըմբռնումն ու պատկերացումն է, որ մեր մտքի մեջ առաջ է եղևան եկել և որից սկսվում է դատողությունը։ Երբ հեռվից տեսնում ենք, որ մեկը գալիս է, բայց չենք որոշում, թե ով է եկողը. ապա՝ երբ ջոկում ենք և ասում՝ «Տիգրանն է», այս դեպքում դարձյալ արտահայտում ենք դատողության մեկ անդամը միայն, դարձյալ հոգեբանական ստորոգյալը, իսկ հոգեբանական ենթական մնում է առանց արտահայտվելու. դա գալու գործողությունը կատարող անձի պատկերացումն է, որից սկսվում է դատողությունը, ինչպես եթե ասելու լինենք՝ «եկողը Տիգրանն է»։— Աղմուկ ենք լսում դրսից և ուզում ենք իմանալ, թե ինչ է կատարվում դրսում, և իմանալով այդ՝ ասում ենք՝ «երեխաները խաղում են»,— այս խոսքն ամբողջ հոգեբանական ստորոգյալ է, իսկ հոգեբանական ենթական, որից սկսվում է դատողության գործողությունը, մնում է առանց արտահայտվելու. դա մեր առաջուց լսած աղմուկի պատկերացումն է։ Նայում ենք լուսնին. մի քիչ հետո նա մտնում է ամպերի ետև, և մեր գիտակցության մեջ ծնվում է՝ «լուսինն ամպերով ծածկվեց» դատողությունը բառերով, որ և կարող ենք բարձր արտասանել։ Այս դատողության երկու անդամներն էլ արտահայտված են բառերով. հոգեբանական ենթական է «լուսինը», որի պատկերացումն առաջ կար մեր մտքի մեջ, իսկ հոգեբանական ստորոգյալն է «ամպերով ծածկվեց», որ մենք գիտակցելով միացնում ենք լուսնին։ Առնենք մի օրինակ էլ։ Լսում ենք ներս մտնելու ոտնաձայն և իմանում ենք, որ մեկը գալիս է, և երբ իմանում ենք, թե եկողն ով է, այն ժամանակ մեր մեջ արդեն առաջ ծագած «գալու» պատկերացման հետ գիտակցելով միացնում ենք եկող անձի այս նոր պատկերացումը, և մեր մեջ ծնվում է դատողություն, և երբ ասում ենք՝ «Տիգրանը եկավ», այդ դատողությունն արտահայտում ենք բառերով, կամ խոսք ենք կազմում։ Այստեղ դատողության հոգեբանական ենթական է «եկավ», որի պատկերացումն առաջ է ծնվել մեր մեջ, որից և սկսվում է դատողության

գործողությունը. իսկ հոգեբանական ստորոգյալն է «Տիգրանը», որի պատկերացումն հետո է ծնվել մեր մեջ և որ գիտակցելով միացնում ենք «գալու» պատկերացման հետ։

Այսպես ուրեմն, երկու պատկերացման այսպիսի գիտակցական միացումով միայն մենք մտածում ենք, և երբ հոգեբանական դատողության անդամներից մեկը կամ երկուսն էլ արտահայտվում են բառերով, այն ժամանակ մենք խոսում ենք։ **Խոսքը** կամ **նախադասությունն**, ուրեմն, հոգեբանական դատողության (մտածության) արտահայտությունն է բառերով։

12. Բառերի զուգորդություններ։— Ինչպես վերևում տեսանք, մենք լեզուն սովորում ենք՝ ուրիշներից լսելով բառեր և բառերի ամբողջ կապակցություններ ու խոսքեր և ապա հիշողությամբ վերարտադրելով մեր առաջուց մի անգամ լսածը։ Սակայն անհնարին է, որ մարդ կարողանա այն բոլոր բառերը և նրանց բոլոր կապակցություններն ու խոսքերը, որ գործածում է՝ լսել ուրիշներից և հիշողությամբ միայն վերարտադրելով խոսել։ Նույնիսկ 3—4 տարեկան երեխան խոսելիս գործադրում է շատ ու շատ ավելի բառեր ու խոսքեր, քան թե նա լսել է կամ կարող էր լսել ուրիշներից։ Մենք խոսելիս ոչ միայն վերարտադրում ենք, այլև արտադրում ենք, այսինքն՝ մենք ինքներս ստեղծում ենք բառեր ու բառերի կապակցություններ և ամբողջ խոսքեր, որ առաջ երբեք չենք լսել ուրիշներից։ Իսկ որ մենք կարողանում ենք այդ անել, պատճառն այն է, որ ինչպես մեր պատկերացումներն արտաքին աշխարհի մասին, նույնպես և մեր լսած բառերն ու խոսքերը մեր մտքի մեջ առանձնացած չեն մնում, այլ զուգորդվում են միշտ իրար հետ և կազմում մեծ կամ փոքր խմբեր, որոնց նմանությամբ և խոսելիս ստեղծում ենք նոր բառեր ու խոսքեր։

Բառերի զուգորդությունները հիմնվում են կամ լոկ հնչյունների, կամ լոկ նշանակության, կամ թե միաժամանակ թե՛ հնչյունների և թե՛ նշանակության մասնակի նույնության կամ նմանության վրա։ Լոկ հնչյունների նմանության վրա հիմնված զուգորդություններով կազմվում են հնչյունների հանգիստություն և հանգ ասածը (կերթան-գութան-թան), որ գործադրվում է բանաստեղծության մեջ իբրև դաշնակավոր զարդարանք. դա կարևորություն չունի խոսելու գործունեության համար։ Կարևոր են բառերի մյուս երկու տեսակի զուգորդությունները, որոնցով միանում և խմբեր են կազմում բառերը և բառերի կապակցություններն իրենց նշանակության և հնչյունների նմանությամբ կամ նույնությամբ։

18. Նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր—գոյական, ածական և բայ։— Մեր բոլոր պատկերացումներն արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների և մեր իսկ հոգեկան վիճակների մասին՝ իրար հետ զուգորդվելով կազմում են ամենից առաջ երկու մեծ խմբեր, առանց որոնց չենք կարող մտածել։ Այդ

պատկերացումների մի մասը ներկայանում են մեզ իբրև ինքնակա, անկախ գոյություն ունեցող առարկաներ, մյուս մասը՝ իբրև ոչ-ինքնակա հատկանիշներ— հատկություն, գործողություն, դրություն և այլն, որ մենք դիտում ենք առարկայի վրա, որոնք և անբաժան են կամ առարկայից և կամ նույնիսկ առարկայի հատկանիշից։ Օրինակ՝ «սպիտակ ձյունը սաստիկ փայլում է» խոսքի մեջ «ձյունը» պատկերացնում ենք իբրև ինքնակա, ինքնուրույն գոյություն ունեցող մի բան— առարկա, իսկ «սպիտակ», «փայլում է» բառերի բովանդակությունը՝ իբրև ձյունի հատկանիշները, որ ձյունից անկախ չեն, այլ գտնվում են ձյունի մեջ և նրանից անբաժան են. նույնպես և «սաստիկ» բառը նշանակում է մի հատկանիշ, որ անբաժան է ձյունի «փայլում է» հատկանիշից և որ նույնպես իբրև ինքնակա գոյություն ունեցող չի մտածվում, ինչպես և «փայլում է», «սպիտակ» հատկանիշները։

Ամեն ինչ, որ ինքնակա առարկաների կատեգորիայի մեջ ենք դնում, հարկավ, բնության մեջ անպատճառ իրոք գոյություն չունին իբրև թանձրացական, ֆիզիկական, իրական առարկաներ, այլ հաճախ մենք ենք միայն մտածում այդպես իբրև ինքնակա գոյություն ունեցող բաներ, ինչպես են՝ ուժ, քաջություն, փառք։ Դա առաջանում է մեր մտածության պահանջից. մենք այլ կերպ չենք կարող մտածել, քան ամեն ինչ դնել կամ ինքնակա առարկաների կամ ոչ-ինքնակա հատկանիշների խմբերի մեջ։ Այսպես օրինակ՝ բնության երևույթները մտածում ենք կամ իբրև ինքնակա գոյություն ունեցող առարկաներ, կամ իբրև ոչ-ինքնակա հատկանիշներ, ինչպես օրինակ՝ ամպրոպի ժամանակ օդի մեջ երևացող լուսեղեն գիծը պատկերացնում ենք կամ իբրև առարկա՝ «կայծակ», կամ իբրև առարկայի հատկանիշ գործողություն՝ «փայլատակում է»։ Այդ ժամանակ լսված գոռոցն էլ պատկերացնում ենք դարձյալ կամ իբրև առարկա՝ «որոտ», կամ իբրև առարկայի հատկանիշ գործողություն՝ «որոտում է»։

Առարկան և իր հատկանիշը մեր դիտողության համար կազմում են մի անբաժան միություն, որովհետև հատկանիշն առարկայի մեջ գտնվում է իբրև նրա բաղադրիչ մասը։ Բայց և այնպես մենք մեր մտածողությամբ հաճախ հատկանիշն անջատում, վերացնում ենք առարկայից և պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող բան։ Օրինակ՝ «սպիտակ» և «սպիտակություն» երկու բառն էլ ցույց են տալիս առարկայի նույն հատկությունը, նույն գույնը. այս երկու բառի նյութական նշանակությունն, ուրեմն, նույն է։ Բայց մինչ «սպիտակ» բառի նշանակությունը պատկերացնում ենք իբրև ոչ-ինքնակա հատկանիշ, որ պատկանում է մի առարկայի և նրանից անկախ գոյություն չունի, ինչպես՝ սպիտակ ձյուն, սպիտակ թուղթ,— «սպիտակություն» բառով, ընդհակառակն, մենք նույն հատկանիշը պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող մի առարկա։ Այսպես օրինակ՝ երբ ասում ենք՝ «ինձ դյուր է գալիս ձյան սպիտակությունը միայն», այդ ժամանակ մենք մտքով «սպի-

տակ» հատկությունը ձյունից բաժանում, վերացնում ենք և պատկերացնում իբրև մի ինքնակա բան և ձյունից միայն այդ հատկությունն ենք առնում իբրև դյուրեկան. մինչդեռ, ընդհակառակն, երբ ասում ենք՝ «ինձ դյուր է գալիս սպիտակ ձյունը», այդ հատկությունը ձյունից անբաժան ենք մտածում, և դյուրեկան է ոչ թե «սպիտակ» հատկությունը, այլ ձյունը, որի մեջ կա սպիտակությունը։ Նույնպես, երբ ասում ենք՝ «բարձր պատ», «պատը բարձր է», «բարձր» հատկությունը մտածում ենք իբրև «պատ» առարկայից անբաժան. բայց երբ ասում ենք՝ «պատի բարձրությունը հինգ կանգուն է», նույն հատկությունն այս դեպքում մտածում ենք իբրև պատից անկախ մի ինքնակա առարկա։ Դարձյալ՝ երբ ասում ենք՝ «ձին վազում է», «վազող ձի», վազելու հատկանիշը, գործողություն պատկերացնում ենք ձիուց անբաժան, բայց երբ ասում ենք՝ «ձիու վազելը (վազքը) երկար չտևեց», այժմ նույն գործողությունն անջատում, վերացնում ենք ձիուց և պատկերացնում ենք իբրև ինքնակա գոյություն ունեցող առարկա։ Այսպիսի առարկաներն, անշուշտ, ինքնակա գոյություն ունեն միայն մեր մտածությամբ. դրանք վերացական առարկաներ են և դրանց անուններն էլ կոչվում են **վերացական անուն**։

Բոլոր առարկաները խոսողի գիտակցության մեջ բաժանվում են երեք խմբի կամ դեմքի,— ինքը խոսող անձը— առաջին դեմք, իր խոսակիցը, որին նա ուղղում է խոսքը— երկրորդ դեմք, և մի ուրիշ երրորդ առարկա կամ մյուս բոլոր առարկաները— երրորդ դեմք։ Ասա՝ նա կարող է իր խոսքն ուղղել ոչ թե միայն մեկ երկրորդ անձի, այլ նրա հետ և ուրիշներին, և խոսել ոչ միայն իր կողմից, այլ իր հետ նաև ուրիշների, որով առաջանում է առարկաների բաժանումը երեք խմբի կամ **երեք դեմքի**, և ամեն մի դեմքն էլ առնվում է եզակի և հոգնակի թվով։ Համապատասխան ձևով հատկանիշների պատկերացումներն էլ խոսողը մտածում է որոշ ժամանակի մեջ միացած այդ երեք թե՛ եզակի և թե՛ հոգնակի դեմքերից մեկի հետ։ Օրինակ՝ «կարմրություն», «կարմիր», «կարմրեցի», այս երեք բառն ևս արտահայտում են նույն հատկանիշը, նույն գույնը, բայց մինչ առաջին բառով այդ հատկանիշը պատկերացվում է իբրև ինքնակա գոյություն ունեցող (վերացական) առարկա, «կարմիր» բառով նույն գույնն առնվում է իբրև առարկայից անբաժան ոչ-ինքնակա հատկանիշ, ինչպես՝ «կարմիր խնձոր». իսկ «կարմրեցի» բառով նույնպես նույն հատկությունն առնվում է դարձյալ իբրև առարկայի ոչ-ինքնակա հատկանիշ, միայն խոսողն այդ հատկանիշը որոշ ժամանակում (անցյալում) գիտակցելով վերագրում է իրեն՝ առաջին դեմքին։ Այսպես և «կարմրեցիր» բառով նույն հատկանիշը նա վերագրում է երկրորդ դեմքին, իսկ «կարմրեց» բառով՝ երրորդ դեմքին, «կարմրեցինք» բառով՝ հոգնակի առաջին դեմքին և այլն։

Այսպիսով, մեր բոլոր պատկերացումները, որ կազմում են մեր մտածության նյութը, ինչպես և նրանց համապատասխան բոլոր բառերն իրենց նշանակությամբ բաժանվում են երեք խմբի.

1) **Գոյականներ**, *որոնք նշանակում են ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկաներ։*

2) **Ածականներ**, *որոնք նշանակում են ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են իբրև առարկաներից անբաժան, նրանց մեջ գտնված մի հատկություն, գործողություն, դրություն և այլն, կամ իբրև առարկայի հատկանիշի հատկանիշ, ինչպես՝ բարի (մարդ), ծաղկած (ծառ), սաստիկ պինդ (քամի). այդ պատճառով և այդ բառերը խոսքի մեջ իբրև վերադիր դրվում են գոյականի կամ ուրիշ հատկանիշ ցույց տվող բառի վրա և կոչվում են «ածական», այսինքն՝ «վերադրական» («ածիլ» բառից, որ հին լեզվի մեջ նշանակում է նաև «վրան առնել», «վրան դնել»)։*

3) **Բայեր**, *որոնք նույնպես նշանակում են ոչ-ինքնակա հատկանիշներ, բայց այնպիսի հատկանիշներ, որ խոսողը մի որոշ ժամանակում վերագրում է կա՛մ իրեն առաջին դեմքին, կա՛մ երկրորդ դեմքին, կա՛մ երրորդ դեմքին,— լինեն այդ դեմքերը եզակի թե հոգնակի,— միաժամանակ և գիտակցում է այդ վերագրումը. ուրեմն նա բայերով դատում, մտածում է և իր դատողությունն արտահայտելով՝ կազմում է խոսք։ «Բայ» բառը հենց նշանակում է «խոսք», այսպես կոչվել են այդ խմբի բառերը, որովհետև դրանցով ենք միայն արտահայտում մեր մտածությունը։ Բայերը, ուրեմն, լոկ ոչ-ինքնակա հատկանիշ չեն ցույց տալիս, ինչպես ածականները, այլ նշանակում են նաև մի դեմքի, ուրեմն մի առարկայի պատկերացում, որ առաջուց ծանոթ է խոսողին, որին և իբրև հոգեբանական ենթակայի միացվում է հոգեբանական ստորոգյալը, որ է բայի ցույց տված հատկանիշը (բայիմաստը). ուրիշ խոսքով՝ բայերը միաժամանակ ցույց են տալիս նաև ստորոգում, այն է՝ խոսողը գիտակցում է հոգեբանական ենթակայի (բայի դեմքի) և հոգեբանական ստորոգյալի (բայիմաստի) հարաբերությունը։*

Մեր մտածության նյութ կազմող բոլոր պատկերացումների և նրանց արտահայտիչ բառերի այս երեք խմբերը բռնում են լեզվի մեջ ամենակարևոր տեղը. մենք ամենավաղ հասակից վարժվում ենք մեր պատկերացումները դնել այդ երեք խմբերից մեկի մեջ, և այդ հնարավորություն է տալիս մեզ, ինչպես կտեսնենք, խոսել սովորելու և խոսելու։

14. Գոյականների նյութական և ձևական խմբերը։— *Գոյականներն իրենց նյութական ու ձևական նշանակությամբ, ինչպես և հնչյունների մասնակի նույնությամբ կամ նմանությամբ միմյանց հետ զուգորդվելով՝ կազմում են բազմազան մեծ ու փոքր խմբեր։ Օրինակ՝ առնենք հետևյալ բառախումբը.*

քար	*քարեր*
պատ	*պատեր*
փայտ	*փայտեր*
ծառ	*ծառեր*

Այս բառերը մեր մտքի մեջ իրար հետ զուգորդվելով՝ կազմում են մի խումբ նրանով, որ բոլորը նշանակում են առարկա, բայց առաջին ուղղաձիգ շարքի բառերը կազմում են մի առանձին խումբ և ավելի սերտ են միանում միմյանց հետ, ինչպես և երկրորդ ուղղաձիգ շարքի բառերը միմյանց հետ. դրանց առանձնապես զուգորդման հիմք կազմում է եզակի և հոգնակի թվի ձևական նշանակությունը, երկրորդ շարքի մեջ նաև հոգնակիության նշանակությունը ցույց տվող «եր» հնչյունների նույնությունը։

Առնենք հետևյալ բառախումբը.

քաղաքներ	*քարեր*	*գյուղացիք*
փողոցներ	*պատեր*	*որդիք*
պարտեզներ	*փայտեր*	*քաղաքացիք*
աշակերտներ	*ծառեր*	*գավառացիք*

Այս բառերը ևս կազմում են մի խումբ ոչ միայն իբրև գոյականներ, այլև նրանով, որ բոլորի հետ էլ միացած է նաև հոգնակի թվի ձևական նշանակությունը։ Բայց ուղղաձիգ շարքերը կազմում են մի-մի առանձին խումբ. որովհետև դրանց առաջինի մեջ կա հոգնակիություն նշանակող ձևական մասի համար «ներ» հնչյունների նույնությունը, երկրորդի մեջ՝ «եր», իսկ երրորդի մեջ՝ նույն ձևական նշանակության համար՝ «ք» հնչյունի նույնությունը։ Այսպես ուրեմն, բոլոր գոյականների եզակի ձևերը զուգորդվելով՝ կազմում են մի ձևական խումբ, ինչպես և հոգնակի ձևերը՝ մի ուրիշ ձևական խումբ. բայց և հոգնակի ձևերն էլ իրենց կողմից, հոգնակիության ձևական նշանակությունը ցույց տվող հնչյունների նույնությամբ բաժանվում են երկու և ավելի թվով փոքր խմբերի։

Առնենք հետևյալ բառախումբը.

քար	*քարեր*
քարի	*քարերի*
քարից	*քարերից*
քարով	*քարերով*
քարում	*քարերում*

Այս բառերը մեր մտքի մեջ փոխադարձաբար ձգում են իրար և կապում են միմյանց հետ զուգորդված մի առանձին նյութական խումբ բոլոր գոյականների մեջ. որովհետև դրանք նախ՝ նշանակությամբ նույն են, ամեն մեկի համար էլ հասկանում ենք նույն նյութը. ապա՝ բացի նշանակության նույնությունից՝ ունեն նաև հնչյունների մասնակի նույնություն, այն է՝ ամենի մեջ էլ կա «քար» բունը։ Բայց այդ մեկ խումբը բաժանվում է երկու երկրորդական փոքր ձևական խմբերի, այն է՝ թվի նկատմամբ մի խումբ կազմում են առաջին ուղղաձիգ շարքի բառերը, մի ուրիշ խումբ՝ երկրորդ ուղղաձիգ շարքի բառերը։ Այս երկու խմբերի

յուրաքանչյուր բառն ավելի սերտ է զուգորդված իր խմբի բառերի հետ, քան մյուսների հետ, որովհետև այդ զուգորդությունը հիմնված է ոչ միայն նյութական նշանակության, այլև ձևական նշանակության— եզակիության և հոգնակիության վրա. բացի այդ, երկրորդ ուղղաձիգ խմբի մեջ ձևական նշանակությունը կապված է նաև «եր» հնչյունական նույնության հետ։ Կնշանակե՝ այդ երկրորդ խմբի բառերը միմյանց հետ զուգորդվում են թե՛ նյութական և թե՛ ձևական նշանակություններով, և այդ նշանակություններից յուրաքանչյուրի համար նաև առանձին հընչյունական նույնությամբ։

Դարձյալ նույն նյութական խումբը բաժանվում է հինգ ուրիշ երկրորդական ձևական խմբերի, այն է՝ հոլովական ձևերի նկատմամբ մի-մի փոքր խմբեր են կազմում հորիզոնական շարքերը՝ քար, քարեր. քարի, քարերի, քարից, քարերից և այլն։ Այստեղ էլ զուգորդությունը հիմնվում է թե՛ նյութական և թե՛ ձևական նշանակությունների վրա. բացի այդ՝ կա նաև ձևական նշանակությունը ցույց տվող ի, ից, ով, ում հնչյունական մասերի նույնությունը։ Առաջին խումբը միայն՝ «քար», «քարեր»՝ չունի ձևական նշանակություն ցույց տվող հնչյունական մասի նույնություն, բայց և այնպես այս երկուսը մեր գիտակցության մեջ զուգորդվում են իրենց ձևական նշանակությամբ, որ երևան է գալիս խոսքի կապակցության մեջ, ինչպես՝ քար բերել, քարեր բերել։ Բացի այդ՝ ձևական մաս չլինելը հենց, մյուս խմբերի մեջ եղած ի, ից, ով, ում ձևական մասերի հարաբերությամբ, ծառայում է այդ երկուսը մեր գիտակցության մեջ անջատելու մյուսներից իբրև մի առանձին խումբ։ Այսպիսի դեպքերում բառի բունն ինքը, առանց որևէ վերջավորության, ցույց է տալիս նյութական նշանակության հետ նաև ձևական նշանակություն և առնվում է իբրև մի բառաձև, որ կոչում են սովորաբար **բացասական բառաձև**։ Այսպես և հոգնակի խմբի՝ **fարեր, fարերի, fարերից, fարերով, fարերում** բառաձևերի դիմաց, որոնք ունեն «եր» ձևական մասը, եզակի խմբի՝ **fար, fարի, fարից, fարով, fարում** բառաձևերի եզակիության ձևական նշանակությունը որոշվում է որևէ ձևական մասի չլինելով։

Այս երկու՝ եզակի և հոգնակի ձևական խմբերը չոկ-չոկ չեն ընթանում, այլ փոխադարձաբար տրամախաչում են իրար, այսինքն, օրինակ՝ **fարից** ձևը մի կողմից մտնում է եզակի շարքի մեջ՝ զուգորդվելով այդ շարքի մյուս **fար, fարի, fարով, fարում** ձևերի հետ, մյուս կողմից՝ զուգորդվում է հոգնակի **fարերից** ձևի հետ։ Այսպես իրար հետ տրամախաչվող ձևական խմբեր են կազմում բոլոր գոյականների հոլովները, ինչպես՝

քար	հաց	փայտ
քարի	հացի	փայտի
քարից	հացից	փայտից
քարով	հացով	փայտով
քարում	հացում	փայտում

քարեր	հացեր	փայտեր
քարերի	հացերի	փայտերի
քարերից	հացերից	փայտերից
քարերով	հացերով	փայտերով
քարերում	հացերում	փայտերում

Այս բառերի ուղղաձիգ շարքերը կազմում են մի-մի առանձին նյութական խմբեր, իսկ հորիզոնական շարքերը՝ մի-մի ձևական խմբեր, որոնք զուգորդվում են թե՛ ձևական նշանակությամբ և թե՛ հնչյունների մասնակի նույնությամբ, բացի առաջին հորիզոնական շարքի բառերից, որոնք միայն ձևական նշանակությամբ են զուգորդվում։ Մյուս կողմից՝ բոլոր ուղղական ձևերը, եզակի ու հոգնակի, բոլոր սեռական-տրական ձևերը և այլն, մի-մի առանձին խմբեր են կազմում, այսպես՝

քար	հաց	փայտ	քարեր	հացեր	փայտեր
քարի	հացի	փայտի	քարերի	հացերի	փայտերի
քարից	հացից	փայտից	քարերից	հացերից	փայտերից
քարով	հացով	փայտով	քարերով	հացերով	փայտերով

Միաժամանակ և այս շարքերից առաջին երեք ուղղաձիգ շարքերը կազմում են ըստ թվի մի առանձին խումբ, իսկ երկրորդ երեքը՝ մի ուրիշ առանձին խումբ, որով և մեր գիտակցության մեջ մի խումբ կազմում են բոլոր գոյականների եզակի ձևերը, մի ուրիշ խումբ՝ բոլոր հոգնակի ձևերը. ապա՝ մի խումբ կազմում են բոլոր գոյականների ուղղական ձևերը, մի ուրիշ խումբ՝ սեռական-տրական ձևերը, մի երրորդ խումբ՝ գործիական ձևերը և այլն։

Առնենք մի ուրիշ շարք ևս.

քար	փայտ	այգի	դինի
քարի	փայտի	այգու	գինու
քարից	փայտից	այգուց	գինուց

Այստեղ ևս հորիզոնական շարքերը կազմում են մի-մի ձևական խմբեր, բայց յուրաքանչյուր հորիզոնական շարքի մեջ մտնող առաջին երկու բառը կազմում են մի խումբ, իսկ երկրորդ երկու բառը՝ մի ուրիշ խումբ. որովհետև առաջին երկուսը, օրինակ՝ քարի, փայտի, զուգորդվում են ոչ միայն ձևական նշանակության նույնությամբ, այլև այդ ձևական նշանակությունն արտահայտող «ի» հնչյունի նույնությամբ, մինչդեռ մյուս երկուսը՝ այգու, գինու, ունեն ձևական նշանակությունն արտահայտող «ու» հնչյունի նույնություն։ Այսպես և մյուսները։ Եվ վերջապես առանձին խմբեր են կազմում նաև ձայնափոխությամբ կամ ձայնավորների կորուստով կազմված ձևերը, ինչպես՝ ջուր, ջրի, ջրով. կեռակուր, կերակրի, կերակրից, կերակրով։ Այսպես և բազմաթիվ ուրիշ խմբեր, որոնք մեր գիտակցության մեջ զուգորդվում են իրար հետ կա՛մ նյութական, կա՛մ ձևական նշանակությամբ, կա՛մ հնչյունների նույնու-

թյամբ։ Ամեն մի գոյական, որ մենք լսում, սովորում ենք ուրիշներից, բավական է միայն, որ մենք գիտակցում ենք, թե դա գոյական է, այսինքն՝ առարկա է ցույց տալիս,— մեր մտքի մեջ առանձնացած չի մնում, այլ մտնում է այդ խմբերից մեկի մեջ։

15. Բայերի ցյութական և ձևական խմբեր։ *— Նույնպիսի ցյութական և ձևական խմբեր, միայն ավելի բազմազան և հաճախ տրամախաչվող կերպով, առաջ են գալիս նաև բայերի ձևերի մեջ, ինչպես օրինակ՝ գնամ. գնաս, գնա, գնանք, գնաք, գնան. գնայի, գնայիր, գնար և այլն կազմում են մի ցյութական խումբ՝ գնալու գործողության ցյութական նշանակությամբ և հնչյունների մասնակի նույնությամբ։ Այստեղ էլ կազմվում են երկրորդական տրամախաչվող խմբեր՝ դեմքի, թվի, ժամանակի և եղանակի ձևական նշանակություններով, ինչպես և ձևական նշանակությունները արտահայտող հնչյունների նույնությամբ. օրինակ՝*

գնամ	*գնանք*
գնաս	*գնաք*
գնա	*գնան*

Այստեղ առաջին ուղղաձիգ շարքի բառերը, եզակի ձևերը, մի խումբ են, իսկ երկրորդ ուղղաձիգ հոգնակի ձևերը՝ մի ուրիշ խումբ։ Դարձյալ առաջին դեմքերը, եզակի և հոգնակի՝ գնամ, գնանք՝ մի խումբ, երկրորդ դեմքերը՝ մի ուրիշ խումբ և այլն։ Նույնպես ներկա ժամանակները մի խումբ են կազմում, անցյալները՝ մի ուրիշ խումբ և այլն։ Բայց և տարբեր ժամանակները թվով, դեմքով ու եղանակով տրամախաչվում են, ինչպես՝

գնամ	*գնայի*	*գնացի*
գնաս	*գնայիր*	*գնացիր*
գնա	*գնար*	*գնաց*
գնանք	*գնայինք*	*գնացինք*
գնաք	*գնայիք*	*գնացիք*
գնան	*գնային*	*գնացին*

Այստեղ մի ընդհանուր ցյութական խմբի մեջ ամեն մի ուղղաձիգ շարքը մի խումբ է կազմում. բայց և ամեն մի հորիզոնական շարքը դեմքի ու թվի սկզբունքով մի ուրիշ խումբ է կազմում և այլն։ Նույնպես իրար հետ զուգորդվում են իրենց դեմքով, ժամանակով ու եղանակով բոլոր բայերը, ինչպես՝

գնամ	*գրեմ*	*հեռանամ*
գնաս	*գրես*	*հեռանաս*
գնա	*գրե*	*հեռանա*
գնանք	*գրենք*	*հեռանանք*
գնաք	*գրեք*	*հեռանաք*
գնան	*գրեն*	*հեռանան*

Այստեղ ուղղաձիգ շարքերը մի-մի նյութական խումբ են կազմում, բայց և հորիզոնական շարքերը մի-մի ձևական խումբ են դեմքի ու թվի ձևական նշանակությամբ, ինչպես և ձևական նշանակությունը ցույց տվող հնչյունների նույնությամբ։ Կան, սակայն, խմբեր, որոնք զուգորդվում են միայն ձևական նշանակությամբ, ինչպես՝ տեսա-գնացի, կամ միայն նյութական նշանակությամբ, ինչպես՝ ուտեմ-կերար, կամ միաժամանակ թե՛ նյութական և թե՛ ձևական նշանակությամբ, ինչպես՝ ուտեմ-կերա, լինեմ-եղա, կամ ձևական նշանակությամբ և մասնակի հնչյունական նույնությամբ, ինչպես՝ գնացի-խաղացի, զարմացա-հեռացա և այլն։

Այսպես նյութական ու ձևական խմբեր են կազմում ոչ միայն գոյականի և բայի բառաձևերը, այլև բառակազմության ձևերը, օրինակ՝ բոլոր կրավորականները՝ գրվել, խոսվել, քանդվել և այլն կազմում են մի խումբ. բոլոր պատճառականները՝ զարմացնել, հեռացնել, նստեցնել և այլն՝ մի ուրիշ խումբ։ Նույնպես բոլոր նույն ածանցով կազմված բառերը, ինչպես՝ քաղաքացի, գյուղացի, գավառացի և այլն՝ մի խումբ։ Ով այսպես բառերի շատ ուրիշ բազմազան խմբեր, որոնք կազմվում են մեր մտքի մեջ նմանական զուգորդությամբ։

16. Բառերի կապակցության ձևերի խմբեր։— Ինչպես որ բառերն իրար հետ զուգորդվելով կազմում են զանազան խմբեր, նույնպես և շարահյուսական կապակցության ձևերը, արտահայտված լինեն դրանց նշանակած հարաբերությունները միաժամանակ և բառաձևերով, թե լոկ շարահյուսական ձևերով, շարադասությամբ և համաձայնությամբ։ Օրինակ՝ «բարձր պատ», «գեղեցիկ տուն», «սև թանաք» և նման կապակցությունները կազմում են մի խումբ իրենց միևնույն ձևական նշանակությամբ, այն է՝ «բարձր» ածականը նույն հարաբերությունն ունի «պատի» վերաբերմամբ, ինչ որ «գեղեցիկ» ածականը՝ «տուն» գոյականի վերաբերմամբ և «սև» ածականը՝ «թանաքի». երեքն էլ առարկայի հատկանիշը որոշող բառեր են, բայց դրանք զուգորդվում են ոչ միայն ֆունկցիայի նույնությամբ, այլև կապակցության ձևով— շարադասությամբ, այն է դրվում են իրենց գոյականից անմիջապես առաջ։ Իսկ «ծառի ճյուղ», «դպրոցի դուռ» և նման կապակցությունները զուգորդվում են ի մի խումբ ոչ միայն նույն ձևական նշանակությամբ և նույն շարադասությամբ, այլև նույն թեքման ձևերով, որոնք ունեն նաև հնչյունների մասնակի նույնություն։ Սակայն հնչունական նույնություն չունեցող թեքման ձևերն ևս համախմբվում են մեր գիտակցության մեջ ոչ միայն իրենց ցույց տված ձևական նշանակությամբ, այսինքն՝ հարաբերության նույնությամբ, այլև կապակցության ձևով, օրինակ՝ տղայի գիրք, ճոր գիրք, աղջկա գիրք, ուղու գիրք, hroջ գիրք կապակցությունների «տղա-ի», «հոր», «աղջկա», «որդու», «քրոջ» բառերը մի խումբ են կազմում ոչ միայն իրենց ֆունկցիայով, որ է պատկանելության հարաբերություն,

այլև շարադասության նույնությամբ։ Այսպես և «գրչով գրեցի», «դանակով կտրեցի» և նման խոսքերի մեջ բայերի և իրենց խնդիրների հարաբերությունը նույն է, այն է՝ «գրչով» և «դանակով» ցույց են տալիս այն գործիքը, որով կատարվում է գործողությունը, բայց այս ձևական նշանակության հետ կա նաև արտաքին հնչյունական նույնությունը և նույն շարադասությունը։ Այսպես և «Տիգրանը գնաց», «Աշոտը գրեց» և նման խոսքերի մեջ «Տիգրան» և «գնաց» բառերի հարաբերությունը նույն է, ինչ որ «Աշոտ» և «գրեց» բառերի. երկուսի մեջ էլ «Տիգրանը», «Աշոտը» ենթակա են և նույն ձևով են. դրանք ի մի խումբ միանում են, ուրևմն, ենթակայի հարաբերությամբ և նույն բացառական բառաձևով. բացի այդ, կա նաև նույն շարադասությունը և ենթակայի ու բայի նույն համաձայնություն։ Եվ այսպես նաև շարահյուսական կապակցության ձևերի ուրիշ խմբեր, որոնք բազմազան եղանակներով առաջ են գալիս և միմյանց տրամախաչում են, ինչպես բառերի խմբերը։

Այսպիսով, ուրեմն, լեզուն դառնում է ամբողջապես բազմաթիվ և բազմազան պատկերացումների զուգորդությունների մի ցանց. այս պատճառով դժվար թե լինի լեզվի մեջ որևէ բառ կամ շարահյուսական կապակցության ձև, որ չզուգորդվի ուրիշների հետ և չմտնի որևէ խմբի մեջ։

17. Անալոգիական կազմություններ։— *Լեզվական պատկերացումների զուգորդության խմբերը, որ մենք լեզու սովորելիս ստանում ենք դրսից, որոնք և արդյունք են այն ամենի, ինչ որ մեր գիտակցության մեջ մտել է ուրիշների խոսվածքը լսելով, մեր իսկ խոսելով և լեզվական ձևերով մտածելով, կարևոր դեր են կատարում խոսվածքի գործունեության մեջ։ Դրանց օգնությամբ է, որ մենք կարողանում ենք խոսել սովորել և խոսել։ Խոսելիս մեր գործածած բառերի ու կապակցությունների միայն մի մասն է մեր մտքի մեջ ծնվում լոկ հիշողությամբ կամ վերարտադրվում իբրև հին սովորած բան. մնացած մասը մեր մտքի մեջ նոր ստեղծվում է կամ արտադրվում է լեզվական զուգորդության խմբերի անալոգիայով։ Այս արտադրության գործունեությունը, որով մենք անալոգիական կազմություններ ենք անում, ընթանում է երկու ուղղությամբ։*

1. Մենք դրսից ընդունում և սովորում ենք շատ բան, բայց հաճախ այնքան թույլ, որ չենք կարող հիշողությամբ միայն վերարտադրել, եթե օգնության չգան այն հարաբերության խմբերը, որոնց հարել են զուգորդությամբ մեր դրսից լսածները։ Օրինակ՝ դիցուք մեկն իր ամբողջ կյանքի ընթացքում պատահաբար մի անգամ լսել է «դաշտավայրում» ու «սքանչացավ» բառաձևերը և «քացախ դնալ» կապակցությունը, որ նշանակում է՝ գնալ քացախ բերելու։ Ուրիշից լսելով այդ՝ նա անշուշտ մոռացել է, որովհետև առիթ չի ունեցել այդ բառերը և այդ կապակցությունը ոչ ուրիշներից նորից լսելու և ոչ էլ ինքը գործածելու։ Բայց և այնպես հարկավոր դեպքում նա հեշտությամբ հիշում է և գործածում

«դաշտավայրում» և «սքանչացավ» բառաձևերը, որովհետև դրանք միևնակ չեն մնացել նրա գիտակցության մեջ, այլ զուգորդվելով մտել են մեկը գոյականների նման հարաբերություն ցույց տվող ձևական խմբի մեջ. ինչպես են՝ քաղաքում, դաշտում, երկրում և այլն, իսկ մյուսը՝ նման տիպի բայերի ձևական խմբի մեջ, ինչպես են՝ զարմացավ, հեռացավ, լրացավ և այլն։ Նույնպես նա հեշտությամբ հիշում և գործածում է իր մի անգամ միայն լսած կապակցությունը «քացախի գնալ», որովհետև դա ևս զուգորդությամբ մտել է նման հարաբերություն ցույց տվող կապակցությունների խմբի մեջ, ինչպես են՝ ջրի գնալ, հացի գնալ, փայտի գնալ, ցախի գնալ և այլն, որոնց բոլորի մեջ նույն ձևական նշանակությունը կա և նույն ձևը։ Ուստի, եթե հնարավոր է լինում մեկ անգամ միայն լսած և մոռացած «դաշտավայրում», «սքանչացավ» բառաձևերը և «քացախի գնալ» կապակցությունը հիշել և խոսելիս գործածել հեշտությամբ, այդ միայն այն պատճառով, որ այդ դեպքում գործում է ոչ միայն վերարտադրությունը, այլև արտադրությունը. այն է՝ մենք հենվելով նույն հարաբերությունների ձևական խմբերի վրա՝ նմանությամբ նաև ստեղծում ենք «դաշտավայրում», «սքանչացավ» ձևերը և «քացախի գնալ» կապակցությունը։

2. Բայց գիցուք, մի մարդ իր կյանքում երբեք չի լսել ուրիշից «դաշտավայրում», «սքանչացավ» բառաձևերը և «քացախի գնալ» կապակցությունը. սակայն, նա հաճախ լսել և գործածել է նման ձևերը՝ դաշտում, դպրոցում, երկրում և այլն, ինչպես և հեռացավ, զարմացավ, լրացավ և նմաններդը, այլև նման կապակցությունները՝ ցախի գնալ, հացի գնալ, ջրի գնալ և այլն։ Խոսելու ժամանակ նա, երբ հարկավոր է, հեշտությամբ ստեղծում է «դաշտավայրում», «սքանչացավ» բառաձևերը և «քացախի գնալ» կապակցությունը, հենվելով նույն հարաբերությունները ցույց տվող բառաձևերի և կապակցության ձևի վրա։ Այս դեպքում նա ոչ թե վերարտադրում է հիշելով, ինչ որ ուրիշներից առաջ լսել ու սովորել է, այլ միայն արտադրում է կամ, ինչպես ասում են, անալոգիական կազմություն է անում, այսինքն՝ իր իմացած ձևերի նմանությամբ նա ինքն ստեղծում է նույնանման ձևեր։

Անալոգիական կազմությունը խոսվածքի գործունեության համար ամենամեծ գործոններից մեկն է։ Եթե դա մի կողմից՝ օգնում է մեզ մեր լսած ու մոռացածը վերհիշելու, մյուս կողմից՝ դրանով մենք սովորում ենք խոսել՝ առանց դրսից շատ բան լսած և ընդունած լինելու։ Եվ իսկապես, շատ ու շատ բայերի ու գոյականների ձևեր, ինչպես և շատ շարահյուսական կապակցության ձևեր, կարելի է ասել՝ մեր արտասանած խոսքերի ամենամեծ մասն առաջ չենք լսել ուրիշներից, ուրեմն և դրսից ընդունելով չենք յուրացրել և չենք վերարտադրում, այլ միայն խոսելու վայրկյանին կազմում ենք հենվելով նման խմբերի վրա։ Այսպես օրինակ՝ մի նոր սովորած բայ կանոնավոր կերպով խոնարհում ենք և խոսրի մեջ ճիշտ գործադրում, կարծես թե առաջուց այդ բայի բոլոր ձևե-

րը շատ անգամ լսած ու գործածած լինեինք. կամ մի նոր սովորած գոյական, թեկուզ մի օտարազգի հատուկ անուն, որ առաջին անգամն ենք լսում, կանոնավորապես հոլովում և կիրառում ենք խոսքի մեջ։ Բավական է միայն, որ այդպիսի բառի մեկ ձևը դրսից ընդունում ենք և այդ մեկ ձևը մտնում է մեր գիտակցության մեջ եղած գոյականների կամ բայերի այս կամ այն ձևական խմբի մեջ,— մյուս ձևերը և նրանց կապակցություններն արդեն ինքնաբերաբար ծնվում են մեր մտքի մեջ։ Բավական է միայն, որ մի նոր սովորած բառ, ինչպես «լուրթ» (բաց կապույտ), մեր գիտակցության մեջ մտնում է իբրև առարկայից անբաժան հատկանիշի անուն, և մենք այդ նոր սովորած բառը գործադրում ենք նույն կապակցության ձևերով, ինչ որ մեր իմացածները, և ազատ կերպով ասում ենք՝ լուրթ երկինք, երկինքը լուրթ է և այլն։

Այս անալոգիական կազմության օգնությամբ է, որ երեխան 3—7 տարիկան հասակում արդեն կարողանում է իր իմացած գոյականները կանոնավոր կերպով հոլովել և՛ բայերը խոնարհել, և՛ կանոնավոր պարզ խոսքեր կազմել՝ առանց դրսից լսած լինելու իր բանեցրած բառաձևերի և կապակցության ձևերի մեծ մասը։

Գ

ԼԵԶՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

18. Անհատական լեզուներ։— *Նույնիսկ միևնույն լեզվական շրջանին պատկանող անհատները միմյանց բոլորովին նման չեն խոսում, այլ յուրաքանչյուրն ունի իր ուրույն անհատական լեզուն։ Դա բնական հետևանք է խոսվածքի սովորական գործունեության։*

1. Ըստինքյան հասկանալի է, որ ամեն անհատ դրսից չի ստանում և չի էլ կարող ստանալ լեզվական վուգորդությունների բոլոր խմբերն իրենց բոլոր բազմազան տրամախաչումներով, այլ ամեն անհատ ինչպես շատ բառեր, նույնպես կապակցության շատ ձևեր իր կյանքի ընթացքում նույնիսկ չի լսում ուրիշներից, ուրեմն չի սովորում և չգիտե։ Բացի այդ՝ մի մարդ կարող է տես ու լսել բառերն ու կապակցության ձևերը լսած չլինել ու չիմանալ, մի ուրիշ մարդ՝ ուրիշները։ Հետևաբար և ամեն առանձին անհատի լեզու, քանի որ կերպավորվում ու զարգանում է նայելով իր կրած ազդեցություններին, ավելի կամ պակաս չափով տարբերվում է ուրիշների լեզվից։

2. Ամեն մարդ միշտ ավելի բառեր ու լեզվական ձևեր է հասկանում, քան ինքը գործածում է խոսելիս։ Դրա պատճառն այն է, որ հաճախ, ինչպես մարդուս ուրիշ պատկերացումները, նույնպես և լեզվական վուգորդություններն այնքան թույլ են լինում, որ բոլորովին առանձին պարագաներ են հարկավոր, որ նորից մեր գիտակցության մեջ գան, և մենք

խոսելիս գործածենք դրանք։ Կարող են և այնպիսիները լինել, որ երբեք չվերարտադրվեն։ Մենք այդպիսի լեզվական ձևերը հասկանում ենք ուրիշների խոսելիս, բայց չենք գործածում մեր խոսելիս։ Որքան ավելի մեծ թվով բառերի ու կապակցությունների մեջ է երևան գալիս զուգորդությունը և կամ ավելի հաճախ կրկնվում է, և կամ նշանակության ու հնչյունների ավելի մեծ նույնություն կա ի մի խումբ զուգորդված բառերի ու կապակցության ձևերի մեջ,— այնքան ավելի սերտ է լինում զուգորդությունը, և խոսելիս ավելի հեշտությամբ է վերարտադրվում մի հարաբերության խմբի մեջ մտած այս կամ այն բառաձևը կամ կապակցության ձևը։ Եվ ընդհակառակն, եթե մի զուգորդության խմբի մեջ մտնող բառերի կամ կապակցությունների թիվը փոքր է, կամ քիչ են գործածվում դրանք, կամ նմանությունը փոքր է,— այն ժամանակ դրսից մեր գիտակցության մեջ մտած զուգորդությունը թույլ է լինում և խոսելիս դժվարությամբ է վերարտադրվում, և կամ բնավ չի վերարտադրվում այս կամ այն բառը, բառաձևը կամ կապակցության ձևը։ Ամեն առանձին անհատի գիտակցության մեջ էլ կան շատ այսպիսի թույլ կամ սերտ զուգորդություններ. բայց ինչ որ մի անհատի մեջ սերտ է զուգորդված, մի ուրիշի մեջ կարող է թույլ լինել, և ընդհակառակն։ Եվ քանի որ ամեն առանձին անհատ խոսելիս գործածում է այն լեզվական պատկերացումները, որոնք որևէ պատճառով ավելի սերտ են զուգորդված իր մտքի մեջ, դրանից առաջանում է այն, որ մեկ անհատ ավելի այս ու այն բառերն ու կապակցության ձևերն է գործածում խոսելիս ու գրելիս, իսկ մի ուրիշ անհատ՝ ուրիշները։ Հետևաբար և անհատների լեզուները լեզվական զուգորդությունների սերտ կամ թույլ լինելու պատճառով ևս տարբերվում են միմյանցից, երբեմն նույնիսկ խիստ կերպով, այնպես որ կարելի է ասել, թե կան միայն անհատական լեզուներ։ Ամեն մարդ, ուրեմն, մի ազգի լեզվի բառերի ու կապակցության ձևերի ամբողջությունից այն է միայն գործածում խոսելիս ու գրելիս, ինչ որ ինքն ստացել է դրսից և ինչ որ իր մեջ սերտ զուգորդված է լեզվական նման ձևերի հետ։

Բայց այսքանով միայն չի սահմանափակվում անհատական լեզուների տարբերության հիմունքը։

3. Ինչպես լեզվական բոլոր իրականությունները, նույնպես և հնչյունները մենք ուրիշներից լսելով ենք սովորում. լեզուն յուրացնելիս աշխատում ենք լսած հնչյունները վերարտադրել՝ ընտրելով այս կամ այն արտաբերությունը, մինչև որ կարծում ենք, թե ուրիշների նման ենք արտասանում։ Այդ որոշողը մեր լսելիքն է։ Բայց ինչքան էլ մեծ լինի մեր լսողության ընդունակությունը, դարձյալ դա սահմանափակ է և չի կարող նկատել աննշան տարբերությունները։ Ամեն հնչյունի արտաբերություն, ինչպես կտեսնենք, կապված է խոսքի գործարանների որոշ տեղի հետ. բավական է միայն, որ մի հնչյունի արտաբերության տեղը թեկուզ շատ փոքր չափով փոխվի, հնչյունն էլ փոխված ձևով կարտասանվի։ Եվ ամեն անհատ էլ այս կամ այն հնչյունը, ինչքան էլ աշխատի ուրիշից լսածը

ճշտությամբ վերարտադրել, տարբեր կերպով է արտասանում, քան ուրիշները, թեպետ և այդ տարբերությունները երբեմն անզգալի են մնում սովորական լսողի համար։

4. Ավելի զգալի է բառերի նշանակության տարբերությունը, որ առանձին անհատներ կապում են միևնույն բառի հետ։ Ամեն պատկերացում, թեկուզ մի հատ առարկայի, դիցուք՝ այսինչ հատուկ սեղանի, ինչպես տեսանք, բարդ է՝ կազմված լինելով բազմաթիվ տարրերից։ Այդ պատճառով առանձին անհատների պատկերացումները նույնիսկ մի հատուկ առարկայի մասին՝ տարբեր են լինում, նայելով թե այդ առարկայի պատկերացման ո՛ր կողմն ավելի ուժեղ է տպավորված անհատի մտքի մեջ։ Հետևաբար և բառերի նշանակությունն առանձին անհատների համար նույնիսկ մի եզական առարկայի վերաբերմամբ՝ կատարելապես նույնը չէ, քանի որ երկու տարբեր անհատներ միևնույն առարկայի կատարելապես նույն պատկերացումը չեն կապում բառի արտաքին կողմի— հնչյունների հետ։

Միևնույնը լինում է նաև այն ժամանակ, երբ մենք բառով արտահայտում ենք ոչ թե անհատ առարկաների, առանձին գործողությունների ու հատկությունների պատկերացումները, այլև նրանց ընդհանուր պատկերացումները, ինչպես օրինակ՝ երբ «ձի» բառը գործածում ենք ոչ թե այսինչ կամ այնինչ ձիու համար, այլ ընդհանրապես «ձիու»։ Արդարև, ճիշտ մտածողության համար առարկայի ընդհանուր գաղափարը պետք է իր մեջ ամփոփի առարկայի ընդհանուր էական հատկանիշների ամբողջությունը, որ պետք է նույնը լինի բոլոր մարդկանց համար, բայց այսպիսի գիտական ճշտություն չկա սովորական լեզվի մեջ։ Այստեղ միևնույն տեսակին պատկանող բոլոր առարկաների ընդհանուր պատկերացումը կազմվում է ոչ թե կատարյալ ճշտությամբ նրանց ընդհանուր էական հատկանիշների ընդհանրացումով, այլ նույն տեսակի մի քանի առարկաների, երբեմն նույնիսկ մի հատ առարկայի մի քանի այնպիսի հատկանիշներն առնելով, որոնք որևէ պատճառով ավելի սերտ են զուգորդված մեր մտքի մեջ կա՛մ այն պատճառով, որ ավելի ուժեղ են ազդած մեր վրա, կա՛մ ավելի հաճախ են հրկնվել մեր մեջ մեր պարապմունքի պատճառով, կա՛մ մենք ավելի ուշ ենք ըմբռնել այդ հատկանիշները։ Ուստի և երբ մենք խոսում ենք մի տեսակի առարկայի մասին ընդհանապես, թեպետ նույն բառն ենք գործածում, ինչ որ ուրիշները, բայց դրա հետ կատարելապես նույն ընդհանուր պատկերացումը չենք կապում, ինչ որ ուրիշները։ Առնենք, օրինակ, «ուղտ» բառը։ Ինչպես ուրիշ բառերի, նույնպես և այս բառի նշանակությունը կազմված է բազմաթիվ հատկություններից, որոնցից մեկը կամ մյուսը կարող է զորեղ լինել մի անհատի մեջ, իսկ մի ուրիշ անհատի մեջ թույլ լինել կամ բնավ չլինել։ Նույն ուղտն ա՛յն մարդկանց համար, որոնք ուղտի հետ առանձին գործ չեն ունեցել, կամ նույնիսկ չեն տեսել այդ կենդանին, կամ մի անգամ միայն մի հատ ուղտ են տեսել,— նույն չէ, ինչ որ այդ կենդանին ուսում-

նասիրող մի բնագետի համար, կամ մի ուղտապանի համար։ Դրանցից յուրաքանչյուրն առանձին ձևով է պատկերացնում այդ կենդանին և ավելի կամ պակաս հարուստ բովանդակություն է կապում այդ նույն «ուղտ» բառի հետ։ Այսպես և ուրիշ բառերի մեջ առանձին անհատներն առանձին էլ նշանակություն են դնում, մանավանդ զգացմունք և բարոյական հատկություններ ցույց տվող բառերի, ինչպես են՝ բարոյական ու անբարոյական, գեղեցիկ ու տգեղ, լավ ու վատ, առաքինություն ու մոլություն և այլն։ Ինչ որ մեկի համար լավ, գեղեցիկ, դուրեկան է, նույնը մեկ ուրիշի համար երբեմն նույնիսկ վատ, տգեղ, անդուր է. ինչ որ մեկի համար մոլություն է, երբեմն մեկ ուրիշի համար առաքինություն է։

Ինչպես առանձին բառերի նյութական նշանակությունները տարբեր են զանազան անհատների համար, նույնպես տարբեր են նաև բառերի ձևական նշանակությունները, հաճախ և բառերի կապակցության ձևերի նշանակությունները։

19. Անհատական լեզվի փոփոխությունը։— Ամեն անհատի լեզու միշտ ենթակա է փոփոխության, որովհետև մարդ իր ամբողջ կյանքի ընթացքում շարունակ նոր բառեր ու լեզվական կապակցության նոր ձևեր է լսում և սովորում ուրիշներից։ Արդարև մանկության ժամանակ այս ուսումն ավելի արագ և մեծ չափով է տեղի ունենում, քան չափահասության ժամանակ, բայց մինչև մահն էլ մարդ երբեք չի դադարում լեզու սովորելուց, այլ միշտ ընդունում է կա՛մ նոր բառեր, կա՛մ բառերի նոր նշանակություններ և նոր դարձվածքներ, որ առաջ գործածական չեն եղել լեզվի մեջ, կամ թե սովորում է լեզվի մեջ եղած հին բառեր ու կապակցության ձևեր, որ առաջ առիթ չի ունեցել սովորելու։ Ինչքան էլ հարուստ լինի անհատի լեզուն, երբեք չի կարելի ասել, թե նա ամեն բան գիտե լեզվից. և եթե շատ բան գիտե, իր գիտցածի մի մասն անպայման թույլ է և կրկնվելով զորանում ու ավելի գործոն է դառնում, քան առաջ։ Եվ ընդհակառակն, շատ բան էլ, որ կրկնվելով չի նորոգվում մտքի մեջ, հետզհետե թուլանում է և դժվարությամբ է վերարտադրվում, կամ բոլորովին մոռացվում է։ Եվ վերջապես միևնույն անհատի համար բառական պատկերացումները նույն չեն մնում, որովհետև մարդուս ծանոթությունները, նույնիսկ միևնույն առարկայի մասին, կա՛մ ընդարձակվում են նոր բան սովորելով, կա՛մ նեղանում են իմացածը մոռանալով։ Ուստի, թեպետ բառը նույնն է մնում, բայց նույն բառի հետ տարբեր պատկերացումներ են կապվում ապագայում, քան անցյալում։ Եվ այսպես շարունակ փոփոխվում է ամեն անհատի լեզու, և այս փոփոխությունն առանձին անհատների համար տարբեր ուղղություններով է լինում, որով և նորանոր տարբերություններ են երևան գալիս անհատական լեզուների մեջ։

20. Անցողիական նոր կազմություններ։— Անհատական լեզուները փոխվում են ոչ միայն ուրիշների ազդեցությամբ և նոր բան սովորելով

կամ հին իմացածը մոռանալով, այլև ինքնաբերաբար, խոսվածքի սովորական գործունեության ընթացքում լեզվական ձևերով խոսելիս ու մտածելիս։ Այդ ժամանակ մարդս, ինչպես տեսանք, վերարտադրում է իր սովորած լեզվական իրակությունները և ապա անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան։ Սակայն խոսելիս երբեմն էլ նա ճշտությամբ չի վերարտադրում իր սովորածը և անալոգիայով ստեղծում է նաև այնպիսի բառեր, բառերի այնպիսի նոր նշանակություններ ու բառաձևեր կամ կապակցության ձևեր, որոնք ոչ միայն դրսից չեն մտել իր գիտակցության մեջ, այլև երբեք գոյություն չեն ունեցել լեզվի մեջ։

Այս անալոգիական ստեղծագործությունն ընթանում է երկու ուղղությամբ։

1. Առնում են լեզվի մեջ եղած բառերը, ինչպես «պաստառ» կամ նույնիսկ լեզվի մեջ նոր մտած մի օտարազգի բառ, ինչպես՝ «վաքս», «մազութ», և դրանցից կազմում են՝ «պաստառել», «վաքսել», «մազութել» և կանոնավորապես խոնարհում բոլոր ձևերով՝ լեզվի մեջ գոյություն ունեցող «թղթել», «եղել», «ձիթել» և նման բառերի անալոգիայով։ Մեզնից, անշուշտ, շատերն արդեն լսած են «պաստառել», «վաքսել» և «մազութել» բառերը, և մենք այդ բառերը գործածելիս՝ վերարտադրություն ենք անում։ Բայց այդ բառերն առաջին անգամ գործածողը, գուցե և գործածողները,— որովհետև հաճախ նույն բանը միաժամանակ ծնվում է շատ մարդկանց մեջ իրարուց անկախ,— անալոգիական նոր կազմություններ է արել. նա ստեղծել է այնպիսի նոր բառեր ու ձևեր, որոնք լեզվի մեջ մինչ այդ գոյություն չեն ունեցել։

2. Հաճախ առաջ են գալիս և այնպիսի նոր անալոգիական կազմություններ, որոնց համապատասխան նշանակությամբ սովորական ձևեր կան լեզվի մեջ։ Այսպես, օրինակ՝ երեխաները և լեզուն նոր սովորողները, որոնց գիտակցության մեջ դեռ թույլ է «ուտեմ-կերա» բառերի զուգորդությունը (որ միայն նշանակության վրա է հիմնված), նոր կազմում են «ուտեցի» ձևը։ Գործածողն իհարկե չի նկատում, որ այս ձևը սովորական կիրառությանը համապատասխան չէ, քանի որ նա «ուտեմ-ուտեցի» ձևը կազմում է «կտրեմ-կտրեցի» մեծ խմբի անալոգիայով։ Այս սխալն, անշուշտ, երկար չի տևում, որովհետև «ուտեմ-կերա» ձևը շատ գործածական լինելով՝ ուրիշներից շարունակ լսելով՝ յուրացնում են երեխաները։ Ամեն մարդ էլ, սակայն, նույնիսկ հասուն տարիքում, երբ բավական լավ տիրապետում է լեզվին, շարունակ այսպիսի սխալներ է անում, կա՛մ ճշտությամբ չի արտաբերում հնչյունները սովորական արտասանության համեմատ, կա՛մ մի նոր ձևով հոլովում ու խոնարհում է, կա՛մ մի նոր ձևով շարահյուսական կապակցություն է անում։ Շատ անգամ մենք ինքներս իսկույն ուղղում ենք այդպիսի նոր կազմությունները, նկատելով, որ դրանք համապատասխան չեն արդեն գոյություն ունեցող և մեր սովորած հին ձևերին, որոնք սխալն անելուց անմիջա-

պես հետո ծնվում են մեր մտքի մեջ։ Պատահում է, որ մենք չենք նկատում այդպիսի սխալը, այլ ուրիշներն են դիտում այդ, և մենք նոր գլխի ենք ընկնում, որ սովորական ձևով չենք խոսել. պատահում է, որ ուրիշներն էլ չեն նկատում այդ,՝ և այդպիսի նոր ձևերն արտասանվելուց հետո՝ անցնում գնում են։ Բայց պատահում է նաև, որ այսպիսի նոր կազմության ձևերը, սխալ կամ թերի արտաբերությունները, աննկատելի մնալով թե՛ խոսողի և թե՛ լսողների համար, հարատևում են իբրև մի անհատի լեզվական սխալներ, որոնք կա՛մ անհատի հետ մեռնում են, կա՛մ երբեմն նաև անհատից անցնում են իր շրջապատողներին, նրանց մեջ էլ մնում են և նույնիսկ նրանցից անցնում հաջորդ սերնդին։

Այսպիսի նոր կազմություններով սկիզբն է դրվում լեզվի փոփոխությանը։

21. Լեզվի փոփոխությունը անհատական լեզուների փոփոխության ազդեցությամբ։— Նոր կազմությունը մի անհատից անցնելով ուրիշներին՝ ընդհանրանում է, երբ անզգալի է մնում թե՛ այդ կազմությունը գործածողի և թե՛ լսողների համար։ Եվ միշտ էլ անզգալի է մնում այդ և առանց արգելքի ընդունվում լսողներից, երբ խոսողը և լսողները չեն սովորել, չգիտեն նոր կազմության համապատասխան հին ձևը, և երբ ստեղծվում է մի այնպիսի բառ, բառաձև կամ կապակցության ձև, որի համապատասխան արտահայտություն չկա լեզվի մեջ։ Այդպիսի դեպքերում նոր կազմությունները, լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող ձևական մեծ խմբերի վրա հիմնված, սխալ չեն համարվում և մնալով խոսողի ու լսողների մտքի մեջ՝ կարող են նույնիսկ, եթե կարիք կա այդ արտահայտության համար, կրկնվել իբրև մի անգամ արդեն գործածածի կամ լսածի վերարտադրություն և մինչև անգամ ընդհանրանալ։

Նոր կազմության ձևերը, անհատից սկսվելով, կարող են ընդհանրանալ նաև այն ժամանակ, երբ լեզվի մեջ կան համապատասխան նշանակությամբ հին ձևեր, որոնք, սակայն, զուգորդության մեծ խմբերի մեջ չմտնելով և կամ հաճախ չկրկնվելով, սերտ չեն կապված ուրիշ ձևերի հետ։ Օրինակ՝ մինչդեռ միայն նշանակությամբ զուգորդվող «ուտեմ-կերա» ձևի փոխանակ չի տարածվել կանոնավոր «ուտեցի» ձևը, նույնպես միայն նշանակությամբ զուգորդված հին «ճանաչեմ-ծանեայ» «ընդունեմ-ընկալայ» ձևերի փոխանակ լեզվի մեջ արդեն սովորական են «ճանաչեցի», «ընդունեցի» ձևերը, որոնք «ճանաչեմ» և «ընդունեմ» բայերի հետ ոչ միայն նշանակությամբ, այլև հնչյուններով են զուգորդվում և մտնում են բայական ձևերի զուգորդության մեծ խմբի մեջ։

Պատահում է, որ նոր կազմությունն ընդհանրանում է՝ պահելով հին ձևի նշանակության մի կողմը միայն. օրինակ՝ հին լեզվի «ունիմ-կալայ» բառը նշանակում է՝ ունենալ, բռնել, տիրել և այլն։ Այդ բայի համար անալոգիական նոր կազմությամբ առաջ է եկել «ունեցա» ձևը, որ և գործածվում է «ունենալ» նշանակությամբ, իսկ հին կատարյալը՝ «կալայ» մնում է բարբառների մեջ «բռնեցի» նշանակությամբ։

Նոր ձևերը, երբ նրանց համապատասխան հին ձևեր չկան լեզվի մեջ, հեշտությամբ ընդունվում և տարածվում են. բայց երբ նոր ձևի համապատասխան հին ձև կա, նոր ձևը, ինչպես և նոր արտասանությունը (որի համապատասխան հին արտասանություն միշտ կա), մի անգամից չի ընդունվում և տարածվում։ Սկզբում հինը և նորը սովորաբար խառն գործածվում են նույնիսկ միևնույն անհատի բերանին, կամ ոմանք պահում են հին ձևը, ուրիշները նորն են ընդունում. օրինակ՝ այժմ հաճախ կարելի է լսել մեր գրական լեզվի մեջ նույնիսկ միևնույն անհատից թե՛ «բերան, բերել, պատի» և թե՛ «պերան, պերել, պադի», թե՛ «բերավ, տվավ» և թե՛ «բերեց, տվեց» և այլն։ Բայց երբ այդպես տարբեր ձևերով խոսող մարդիկ անընդհատ հարաբերության մեջ են լինում, վերջիվերջո մի հարթում է տեղի ունենում, և հին ու նոր ձևերից մեկն ու մեկը, երկար մրցությունից հետո, իշխում է, իսկ մյուսը մեռնում է։

Ջպետք է կարծել, թե այսպիսի կրկին ձևերից նորը միշտ կիշխի. այլ ընդհակառակն, սովորաբար հինն է իշխում, իսկ նորը միաժամանակ մի փոքր շրջանում տարածվելուց հետո՝ մեռնում է, տեղի տալով հինին։ Բայց եթե մենք ավելի նոր կազմությունների իշխումն ենք տեսնում, այդ նրանից է, որ նոր կազմություններով փոխվում է լեզվի կիրառությունը, և փուիոխությունը զգալի է լինում մեզ համար. մինչդեռ երբ նոր ձևերը մի առժամանակ մի փոքր շրջանում մնալուց հետո մեռնում են, այդ զգալի չի լինում ընդհանրապես։ Այսպես օրինակ՝ մեր գրական լեզվի և արևելյան բարբառների մեջ արդեն մոռացության է տրված հին «զարմացուցի» ձևը, և իշխում է նոր «զարմացրի» ձևը։ Բայց մեր խոսակցական լեզվի մեջ կա մի համեմատաբար ավելի ևս նոր կազմություն՝ «զարմացրեցի», որ հաճախ անխտիր գործ են ածում «զարմացրի» ձևի հետ միասին. չպետք է կարծել, թե անպատճառ այս նորագույն ձևը կիշխի. հավանորեն գրական լեզվի մեջ կշարունակի մնալ հին «զարմացրի» ձևը, որ ավելի կարճ է։ Այսպես և կրավորական բայերի կազմությունը «վ» հնչյունով, որ գրաբարում չկա և նոր առաջ է եկել հին «հերձուած», «հատուած», «զանգուած» և նման բառերի անալոգիայով, հետզհետե ընդհանրանալով, արդեն անցել է պատճառական բայերին և սրանցից էլ առաջ են եկել կրավորական բայեր, այն էլ կրկին ձևով՝ մտցնվել, հեռացնվել, մտցրվեց, հեռացրվեց. այլև մտցվել, հեռացվել. մտցվեց, հեռացվեց. մի քսան տարի առաջ գործածվում էին ավելի դրանց առաջին ձևերը, իսկ այժմ՝ ավելի երկրորդ ձևերը, որոնք և հավանորեն պիտի իշխեն։

Նոր կազմության ձևը մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում. բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանավանդ երբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ։ Նոր սերունդը, որի համար հին ու նոր չկա,— քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում,— միակերպ ընդունում է թե՛ հինը և թե՛ նորը և երկուսն էլ անխտիր գործածում։ Երբ նոր սերնդից բազմաթիվ անհատ-

ների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթանում, որ ավելի նոր ձևն են գործածում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տրվելով։ Այսպիսով նոր կազմությունը, որ սկսվելով մի անհատից՝ սկզբում անսովոր և նույնիսկ սխալ է համարվում, դառնում է կիրառության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է։ Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի։

Մեր նոր լեզվի մեջ կապակցության ձևերի ու բառաձևերի տարբերությունները հնից՝ մեծ մասամբ այսպիսի անալոգիական նոր կազմություններով են առաջ եկած։

Անհատներից են ծագում և ընդհանրանում նաև հնչյունների ու բառերի նշանակության փոփոխությունները։ Վերևում արդեն տեսանք, թե ինչպես անհատական արտասանությունները, թեպետ հաճախ անզգալի չափով, տարբերվում են միմյանցից, և թե ինչպես զանազան անհատների համար տարբեր նշանակություններ ունեն միևնույն բառերը և բառերի նույն ձևական մասերը, որոնք, նայելով անհատին, պատկերացումների ավելի կամ պակաս հարուստ բովանդակության հետ են կապվում։ Բայց բառերի նշանակությունը փոխվում է նաև բառերի պատահական նշանակությամբ գործածվելուց։ Այդ նրանից է առաջանում, որ ամեն մարդ ավելի շատ պատկերացումներ ունի, քան բառեր գիտե, կամ մարդ չի կարողանում խոսելիս հիշել իր իմացած բառերը, կամ թե շատ պատկերացումների համար նույնիսկ առանձին բառեր չկան լեզվի մեջ։ Այդպիսի դեպքերում խոսողն իր պատկերացումները հաղորդում է ուրիշներին իր իմացած կամ նույն րոպեին իր հիշած ըստ կարելույն հարմար բառով, որ արտահայտում է իր գաղափարի բովանդակության մի մասը, աչքի ընկնող մի հատկանիշը, էական կողմը, կամ թե իր արտահայտելի գաղափարի հետ որևէ մոտիկ առնչություն ունի։ Այսպիսով բառը գործածվում է ոչ թե իր սովորական նշանակությամբ, այլ մի նորիմաստ պատահական նշանակությամբ։

Խոսելիս ամենքս էլ հաճախ բառերն անգիտակցաբար գործածում ենք պատահական նշանակություններով։ Այսպիսի կիրառություններն ամենամեծ մասով վայրկենաբար գործածվելով՝ անցնում մոռացվում են։ Բայց լինում է նաև, որ միևնույն բառը միևնույն պատահական նշանակությամբ գործածում ենք և երկրորդ ու երրորդ անգամ. այսպիսի դեպքերում պատահական նշանակությունը կրկնվելով զուգորդվում է բառի հնչյունական կողմի հետ, և այնուհետև ներգործում է նաև նախորդ գործածության հիշողությունը, և մենք շարունակում ենք բառը պատահական նշանակությամբ գործածել ոչ թե արտադրելով, այլ հինը վերարտադրելով։ Եվ որովհետև անհատն ազդում է իր շրջապատողների լեզվական դուգորդությունների վրա, նրանք էլ, երբ հասկանում են մեկ-ուրիշի

պատահական նշանակությամբ գործածությունը, ընդունում են այդ, մանավանդ եթե իրենք էլ նույն վիճակի մեջ են գտնվում, այսինքն կարիք են զգում իրենց պատկերացումն արտահայտելու և ուրիշ հարմար բառ չեն գտնում, քան իրենց լսածը։ Բառերի այսպիսի նորիմաստ պատահական գործածությունները սկզբում սովորաբար խորթ են թվում և շատ անգամ դրանք էլ կարճատև ապրելով մի փոքր շրջանում՝ մոռացվում են. բայց երբեմն էլ հետզհետե տարածվելով՝ ընդհանրանում են և նույնիսկ սովորական դառնում։

Որքան ավելի մեծ է անհատի լեզվական ազդեցության շրջանը, այնքան ավելի արագ են ընդհանրանում նրա գործածած պատահական նշանակությունները։ Այս նկատմամբ մեծ է առանձնապես բանաստեղծների դերը, քանի որ նրանց երկերն ավելի ընդարձակ շրջաններում են կարդացվում և ավելի շատ են ազդում. ուստի և նրանց գործածած պատահական նշանակություններն ավելի են տարածվում ու սովորական դառնում։ Մյուս կողմից՝ որքան ավելի աղքատ է մեկը բառերի պաշարով, այնքան ավելի տրամադիր է նա բառերը պատահական նշանակություններով գործածելու և ուրիշների գործածած պատահական նշանակությունները յուրացնելու։ Այս պատճառով բառերի նոր նշանակությունները սկսվում են հաճախ երեխաներից և անգրագետ ու անուս մարդկանցից, որոնք ավելի աղքատ են բառերով, ինչպես օրինակ՝ մի գյուղական խնդրագրի մեջ «ձանձրալի» բառի հետևյալ կիրառությունը՝ «Մեզ համար շատ ձանձրալի է պարենտուրքը վճարել, որովհետև մենք բերք չենք ունեցել»— ուզում է ասել «ծանր է»։ Մանուկները, որոնք ոչ միայն շատ բառեր չգիտեն, այլև բառերի ընդհանուր նշանակությունները չգիտեն, շատ անգամ երկու բոլորովին տարբեր պատկերացում, որևէ մասնակի նմանության պատճառով, նույն բառով են արտահայտում, և այդ խորթ չի թվում նրանց. օրինակ՝ երբ շատ բաց թեյի համար պատահական նշանակությամբ ասում են՝ «այս թեյը ցերեկ է», կամ երբ «ծիտ» բառն ընդհանրացնելով արդեն գործածում են «թռչուն» բառի նշանակությամբ, և նման։ Երեխան ոչ միայն ինքն ստեղծում է բառերի պատահական նշանակությունները, այլև, որ գլխավորն է, քանի որ նա դեռ չգիտե տարբերություն դնել բառերի պատահական ու սովորական ընդհանուր նշանակությունների մեջ, հեշտությամբ ընդունում և յուրացնում է մեծերից լսած պատահական նշանակությունները, որով և ինչ որ հին սերնդի մեջ մի պատահական ու անսովոր գործածություն է լինում, նույնը նոր սերնդի մեջ անսովոր չի համարվում և հեշտությամբ ընդհանրանում է։

Բայց նույնը լինում է նաև չափահասության ժամանակ, որովհետև մարդ շարունակ ոչ միայն բառեր, այլև բառերի նորանոր նշանակություններ է սովորում, այն էլ հաճախ պատահաբար, անճիշտ կերպով, երբեմն բառի հետ կապելով բոլորովին տարբեր մի նշանակություն։ Այսպես օրինակ՝ «հուն» բառը, որ նշանակում է՝ գետի անցք, այն ծանծաղ տեղը, որտեղից կարելի է ոտով անցնել գետը, մեր աշխարհագրության դա-

տագրքերի մեջ գործածվում է գետի «տաշտի», «փոսի» նշանակությամբ, իբրև այն տեղը, փոսը, որով հոսում է գետը։ Որևէ մի անհատ հին «հուն» բառն այսպիսի պատահական սխալ նշանակությամբ գործածել է, ուրիշներն ընդունել են այդ, և այժմ «հուն» բառի այս նոր նշանակությունն աշխարհագրական դասերի միջոցով արդեն ընդհանրացած ու շատ գործածական է նոր սերնդի մեջ, նույնիսկ շատ փոխաբերական նշանակություններով։

22. Լեզվի փոփոխությունն ուրիշ լեզուների ազդեցությամբ։— *Լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն է նաև ուրիշ լեզուների ազդեցությունը, որին ենթակա է ամեն լեզու, քանի որ ազգերը միմյանցից կտրված չեն ապրում։ Այս փոփոխությունը միևնույն եղանակով է առաջ գալիս, ինչ որ ընդհանրապես ամեն փոփոխություն լեզվի մեջ։ Դրա սկզբնական աղբյուրն այնպիսի անհատներն են, որոնք խոսում են թե՛ իրենց ազգային լեզվով և թե՛ մի ուրիշ լեզվով, կամ թե հասկանում են մի ուրիշ լեզու և լսում են այն լեզվով խոսողների։*

Ուրիշ լեզուների ազդեցությունը երբեմն լինում է գիտակցաբար։ Խոսողը բարձր գնահատելով օտար լեզուն, կամ կրթվածի մի հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը՝ իր համար պարծանք է կարծում այլ լեզվով խոսելը կամ իր ազգային լեզվի մեջ օտար բառեր, դարձվածներ և նույնիսկ ամբողջ ասացվածքներ խառնելը։ Ուրիշ լեզվի ազդեցությունը, սակայն, սովորաբար լինում է անգիտակցաբար։ Ազգային լեզվով խոսողը օտար բառեր ու կապակցության ձևեր գործածում է հաճախ րոպեի կարիքին բավարարություն տալու համար և այդ անում է նա այն պատճառով, որ կամ չգիտե ազգային լեզվի բառերն ու կապակցության ձևերը, կամ այնքան թույլ է որոշ բառերի ու կապակցության ձևերի պատկերացումը նրա մեջ, որ խոսելու վայրկյանին միտը չեն գալիս, կա՛մ նույնիսկ գաղափարներ կան, որոնց համապատասխան բառեր չկան իր ազգային լեզվի մեջ, ինչպես են՝ դրսից մտած նոր գաղափարները, նոր մշակույթի ձևերը, նոր արվեստներ, ապրանքներ և այլն, կա՛մ եթե կան համապատասխան բառեր ու կապակցության ձևեր, բայց խոսողին թվում է, թե այն չեն արտահայտում, ինչ որ օտար լեզվինը։

Սովորաբար բառեր և կապակցության ձևեր են առնվում ուրիշ լեզուներից և ոչ առանձին ձևական մասեր։ Բայց երբ մի որևէ լեզվից մտնում են նույն ածանցով կազմված բազմաթիվ բառեր, որոնց բներն ևս մենակ գործածվում են, և այդ բառերն այլևս չեն ջոկվում բնիկ բառերից, այն ժամանակ դրանց ածանցական մասերն արդեն գործոն են դառնում և ուրիշ բառերի հետ դրվելով՝ նոր բառեր են կազմում։ Այսպես են, օրինակ, պարսկերենից հայերենի մեջ մտած «ստան», «ական» և այլ ածանցները, որոնցից մի քանիսը, ինչպես «ական», շատ սովորական են դարձած հայերենում, և շարունակ նորանոր բառեր ենք կազմում դրանցով։

Օտար լեզվի ազդեցության մի տեսակն էլ այն է, որ խոսողն իր

բնիկ բառը գործածում է մի նոր նշանակությամբ. դրանով ընդարձակվում, ապա և փոխվում է բնիկ բառի նշանակությունը։ Այս միևնույնը հաճախ գիտակցաբար կատարվում է գիտության, արվեստների և այլ տերմինների նկատմամբ. փոխանակ օտար բառեր ընդունելու՝ դրանց համապատասխան նշանակությունները տրվում են բնիկ բառերին, և կամ այլ լեզուների բառերի օրինակով նոր բառեր են կազմվում։ Ամեն լեզու էլ այս եղանակով հարստանում ու ճկուն է դառնում նորանոր գաղափարներ արտահայտելու համար, բայց միաժամանակ և փոխվում է և երբեմն աղճատվում, երբ առանց կարիքի մի նոր նշանակությամբ է գործ ածվում բնիկ բառը։ Օրինակ՝ ռուսերենի горный բառը նշանակում է թե՛ լեռնային և թե՛ հանքային. դրա ազդեցությամբ այժմ մեր լրագրության մեջ լեռնային բառը գործածում են հանքային բառի տեղ և «հանքագործ» դրելու փոխանակ՝ գրում են «լեռնագործ»։

Սկզբում բառերի այսպիսի նոր նշանակություններն ու նոր կազմված բառերը խորթ են թվում. բայց խուսելի են միայն ավելորդ օտարաբանությունները, ինչպես՝ «լեռնային» փոխանակ «հանքային» բառի, թե չէ՝ քանի որ նոր գաղափարներն արտահայտելու կարիքը կա, անհրաժեշտ են այսպիսի նոր կազմությունները, որոնք նոր գաղափարների հետ հեշտությամբ ընդհանրանում են։ Մեր լեզուն, ինչպես և ամեն լեզու, այս ճանապարհով հարստացել է հին դարերում, երբ հունարենի ձևով կազմված են շատ բառեր, որոնց մեծ մասն այժմ սովորական բառեր են, ինչպես՝ տրամադրություն, տարբերվել, արտասանել, արտադրել, առոգանել, տրամաբանություն և այլն։

Լեզվի զարգացումն այս ճանապարհով երբեք չի դադարել։ Առանձնապես շատ նոր բառեր կազմված են, կամ հին բառերին նոր նշանակություններ տրված են 19-րդ դարում, ինչպես՝ երկաթուղի, շոգենավ, սավառնակ և այլն, կամ ինչպես՝ լուցկի, որ այժմ գործածում ենք նոր նշանակությամբ։ Վերջին տարիներս մանավանդ, քաղաքական ինքնուրույն կյանքի պատճառով, ոչ միայն ավելի մեծ թվով օտար բառեր են մտնում մեր լեզվի մեջ, այլև ավելի ևս մեծ թվով նոր բառեր են կազմվում, կամ հին բառերը նոր նշանակություններով են գործածվում, ինչպես՝ հարկաթերթ, գործուղել, գործարք, առդիր և այլն։

Սկսվելով առանձին անհատներից՝ այլ լեզուների ազդեցությունն անցնում է նաև այնպիսիներին, որոնք ուրիշ լեզու չգիտեն, և վերջը նույնիսկ ընդհանրանալով պատճառ է դառնում լեզվի փոփոխության։ Այսպիսի դեպքում օտար բառերն ու կապակցության ձևերն արդեն ազգայնանում են, և օտար բառերը նույնիսկ ենթարկվում են նույն հնչափոխության, ինչ որ բնիկ բառերը։ Սակայն երբ չափազանց մեծ է լինում մի լեզվի ազդեցությունը մի ուրիշ լեզվի վրա, վերջինս նույնիսկ կորստի է մատնվում։ Այդ լինում է, երբ երկու լեզվի ժողովուրդները խառն ապրում են սահմանակից վայրերում և երկու լեզուն էլ անխտիր բանեցնում են, և ապա մեկն իշխում է մյուսին, կամ երբ մի ազգ նվա-

ձում է մյուսին և ենթարկում է նրան իր քաղաքական ազդեցությանը։ Այսպիսի դեպքերում, երբ լինում է նաև տնտեսական ու կուլտուրական ազդեցություն, մանավանդ երբ տիրող ազգից գաղթականներ են տեղավորվում նվաճածի երկրում և դպրոցների ու վարչական հիմնարկությունների մեջ մտցվում է իշխողի լեզուն, այդ ժամանակ նվաճված ազգի լեզուն կարող է նույնիսկ ոչնչանալ։ Սկզբում անհատներ թողնում են իրենց լեզուն և այլ լեզվով խոսում, ապա՝ ամբողջ խմբեր. հետզհետե մեծանում է օտար լեզվով խոսողների թիվը, մինչև որ այդ լեզուն գերակշռելով իշխում է և անցնում տեղական բնիկ լեզվի տեղ։

Հայերենը թե՛ հին և թե՛ նոր ժամանակներում մեծ ազդեցություններ է կրել ուրիշ լեզուներից, և այս եղել է հօդուտ մեր լեզվի զարգացման։ Այսպես հայերենը հնագույն շրջանում շատ ազդվել է պարսկերենից ու ասորերենից, ապա և հունարենից ու արաբերենից, իսկ սելջուկյան թուրքերի տիրապետության շրջանից սկսած՝ թուրքերենից, վերջին դարում նաև ռուսերենից և այլն։ Հին և նոր պարսկերենից, հունարենից, ասորերենից, արաբերենից հայերենի մեջ մտած բառերի, ինչպես և բնիկ հայերեն բառերի ուսումնասիրությունն ի մի հավաքած ունի 1897 թվին Հ. Հյուբշմանը գերմաներեն լեզվով (Հայերենի քերականություն, 1-ին մաս, Հայերենի ստուգաբանությունը, Լայպցիգ, 1897). բայց այն ժամանակից ի վեր այդ ուսումնասիրությունն ավելի ընդարձակված է ուրիշների կողմից։ Թուրքերենի համար կա Հր. Աճառյանի «Թուրքերենե փոխառյալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզվին մեջ, համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներուն», Մոսկվա—Վաղարշապատ, 1902 թ.։

28. Բարբառներ:— Ինչպես տեսանք, խոսվածքի սովորական գոյության հետևանքով կան միայն անհատական լեզուներ, որ կարելի է համարել առանձին-առանձին բարբառներ տարրական ձևով։ Բայց անհատական լեզուները բարբառ չեն կոչվում, այլ բարբառ կոչվում է նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածքը, որ ուրիշ տեղական խոսվածքներից տարբերվում է որոշ չափով։

Բարբառները ծագում են, երբ լեզվի մեջ առաջ եկած փոփոխությունները սահմանափակվում են որոշ տեղում և չեն անցնում ուրիշ կողմեր, ուր կա՛մ հին լեզվական ձևերն են պահվում, կա՛մ առաջ են գալիս տարբեր փոփոխություններ։ Օրինակ՝ մի քանի կողմերում առաջ է եկել և ընդհանրացել նոր «զարմացրի» ձևը, մինչդեռ ուրիշ կողմերում պահվել է հին «զարմացուցի» ձևը. այսպես և հին «գնացեալ է» ձևը զանազան կողմերում տարբեր ուղղություններով փոփոխության ենթարկվելով՝ մի կողմում դարձել է՝ գնացել է, մի ուրիշ կողմում՝ գնա՛ցել ա, գնա՛ցիլ է, գացե՛ր ա, կնացե՛ր է, քացե՛ր է, քե՛ցալ ա և այլն։

Շատ անգամ նույնիսկ հարևան տեղերի ու գյուղերի խոսվածքները տարբերվում են իրարուց թե՛ բառերի հնչյուններով ու նշանակությամբ

և թե՛ ձևերով։ Դրսից թեթև դիտողի համար այդպիսի խոսվածքները նույն բարբառն են կազմում, բայց իրենք տեղացիները շատ լավ են զանազանում իրենց լեզուները, և մասնագիտական ուսումնասիրությունը պարզում է դրանց տարբերությունները։ Մեծ քաղաքներում նույնիսկ մի քանի բարբառներ են լինում զանազան թաղամասերում։

Որքան նույն ազգին պատկանող մարդկանց հարաբերությունն ավելի հաճախ ու սերտ է տեղի ունենում, այնքան նրանց լեզուն միատեսակ կերպարանք է ստանում, ինչպես օրինակ՝ մի գյուղի բնակիչներն ավելի են շփվում միմյանց հետ ու մոտիկ հարևան գյուղերի բնակիչների հետ և իրարուց յուրացնում են նույն լեզվական պատկերացումները։ Իսկ ընդհակառակն, որքան հաղորդակցությունը պակաս է լինում զանազան արգելքների պատճառով, ինչպես են՝ դժվարանցանելի լեռներ, գետեր, քաղաքական սահմաններ և այլն, այնքան ավելի մեծանում են բարբառային տարբերությունները, որովհետև ժողովրդի մի մասը կտրված է լինում մյուսից, և մի կողմում առաջացած լեզվական տարբերությունները դժվարությամբ են անցնում կամ չեն անցնում ուրիշ կողմեր։

Լեզվական փոփոխություններից ուրիշ կողմեր հեշտությամբ անցնում են նոր բառերը, հին բառերի նոր նշանակությունները և բառերի ձևերը. որովհետև այդպիսի փոփոխություններն ընդունելու համար անմիջական սերտ հաղորդակցություն չի հարկավոր, այլ յուրացումը կարող է լինել և միջնորդաբար, մեկից մյուսին անցնելով։ Օրինակ՝ Երևանում ծագած նոր բառը «գործուղել», կամ հին «հայց» բառի նոր նշանակությունը իբրև դատական պահանջ, կարող է մեկից մյուսին անցնելով տարածվել ամեն մի կողմ և հասնել մինչև Արցախ, և ընդհակառակն։ Այսպես չէ, սակայն, հնչյունների փոփոխության անցումը մի տեղից մյուս տեղը. դրա համար հարկավոր է անմիջական անձնական հարաբերություն և ազդեցություն։ Որպեսզի Արցախում առաջ եկած հնչյունական փոփոխությունն անցնի ուրիշ կողմեր, պետք է անմիջաբար արցախեցուն լսել և նրանից ազդվել։ Տարբեր հնչյունը կարելի չէ ընդունել և յուրացնել ուրիշների միջնորդությամբ, ինչպես օրինակ, արցախեցու տարբեր արտասանությունը բնիկ Երևանցու միջնորդությամբ Շիրակ անցնի։ Այս պատճառով և բարբառների իրարուց տարբերող գլխավոր հատկանիշն է հնչյունների տարբերությունը, և վերևում դրած «գնացել է», «գնա՛ցել ա» և այլ ձևերն իբրև բառաձև՝ իսկապես նույնն են, միայն տարբեր հընչյուններով։ Տարբեր բարբառներով խոսողներն այդպես էլ գիտակցում են իրենց բարբառների տարբերությունը։ Եվ իսկապես՝ ինչքան էլ խորթ է մեզ համար Երևանում, դիցուք, Արցախի բարբառի արտասանությունը, որ երբեմն դժվարություն է պատճառում այդ բարբառով խոսողներին հասկանալու, բայց երբ այդ բարբառով հորինված մի բան արտասանվում է Երևանի բարբառի հնչյուններով, մենք առանձին դժվարություն չենք կրում այդ բարբառը հասկանալու։

Այստեղից, սակայն, չպետք է եզրակացնել, թե բարբառները մի-

մյանցից չեն տարբերվում ուրիշ լեզվական իրակութիւններով, ինչպես են՝ բառերը, սրանց նշանակութիւնները, բառաձևերը և այլն։ Սրանց տարբերութիւնն էլ կարող է այնքան մեծ լինել, որ նույնիսկ կազմի բարբառների որոշման մի էական կողմը։ Այսպես օրինակ՝ հայերենի աղի բարբառները՝ բայերի ապառնական ներկա ժամանակի կազմութեան նկատմամբ՝ բաժանվում են «ում», «կը», «ելե՛մ», կամ «ե՛ս եմ» ձյուղերի, ինչպես՝ բերում եմ, կը բերեմ, բերելե՛մ, բերե՛ս եմ։ Այս տարբերութիւնն առաջ է եկել բնական և քաղաքական սահմանների ազդեցութեամբ. «ում» ձևը սահմանափակվել է Արևելքում, «կը» ձևը իբրև սահմանական ներկա մնացել է Արևմուտքում, իսկ «ելե՛մ», «ե՛ս եմ» ձևերը տարածվել են Հարավում։ Մեր բարբառների այս մեծ ձյուղերն էլ իրենց կողմից բաժանվում են ենթաբարբառների, վերջիններս էլ ունեն իրենց ստորաբաժանումները, մինչև մի որևէ գյուղի տեղական խոսվածք, որ ունի իր առանձնահատկութիւնները։

Եթե հայ ժողովուրդը դարեր շարունակ իր բնակութեան վայրում հաստատ մնացած լիներ, նրա բնակած երկրի մի ծայրից մյուս ծայրն անցնելով կարող կլինեինք դիտել բարբառների աստիճանական փոփոխութիւնը. կտեսնեինք, որ Արցախի բարբառին ավելի մոտ է Ծյունիքի բարբառը, սրան՝ Նախիջևանի բարբառը, վերջինիս ավելի մոտ է Այրարատյան բարբառը և այլն, այսինքն հարևան տեղերի լեզուները միշտ ավելի մոտ կլինեին միմյանց։ Բայց այս կարող ենք ասել Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան հյուսիսային և արևելյան եզերային բնակիչների համար միայն, որոնք հաստատ են մնացել իրենց բնակավայրում։ Դրանց մեջ էլ, սակայն, արևելյան բարբառի հետ խառն գտնում ենք հարավային և արևմտյան բարբառները. նույնպես նաև Այրարատում և ուրիշ կողմերում։ Բարբառների այս խառն տեղավորութիւնը հետևանք է ժողովրդի տեղափոխութեան. հարյուր տարի առաջ և վերջերս Հարավից և Արևմուտքից եկած շատ գաղթականներ բնիկների հետ խառն նստած են Խորհրդային Հայաստանի զանազան կողմերում, որով և մեր բարբառների տեղավորութիւնը չի մնացած տարածման բնական դրութեամբ։

24. Ընդհանուր և գրական լեզու։— Երբ մի ազգի կուլտուրական կյանքի զարգացումն այն աստիճանին է հասնում, որ իրարուց բավական տարբերվող բարբառներով խոսողների համար առաջ են գալիս այնպիսի ընդհանուր պահանջներ, որոնցով նրանք ավելի սերտ հարաբերութեան մեջ են մտնում միմյանց հետ,— այդ ժամանակ նրանք կարիք են զգում մի ընդհանուր խոսակցական լեզվի։ Այսպիսի ընդհանուր լեզու դառնում է բարբառներից մեկը, որ որևէ պատճառով գերակշռութիւն է ստանում մյուսների վրա, ինչպես օրինակ՝ ընդհանուր քաղաքական կամ կրոնական կենտրոնի բարբառը, որ հետագայում դործածվելով գրականութեան համար՝ դառնում է նաև ընդհանուր գրական լեզու, կամ թե պատահում է, որ բարբառներից մեկն ավելի վաղ գործածվելով գրականութեան հա-

մար՝ ընդունելի է լինում նաև ուրիշ բարբառներով խոսողների համար իբրև գրական լեզու, միաժամանակ և իբրև ընդհանուր խոսակցական լեզու։ Այսպես 5-րդ դարում մեր քաղաքական, միաժամանակ և կրոնական կենտրոնի՝ Այրարատի բարբառը, որ հին վիպասաններն էլ գործածել են, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի և նրանց աշակերտների ձեռքով դառնում է գրական լեզու, որ հետագայում բանեցնում են ամենքը, և որ մնում է իբրև ընդհանուր գրական լեզու մինչև 19-րդ դարի կեսերը։

Սկզբում գրական լեզուն շատ չի տարբերվում իր մայր բարբառից, որ օրինակելի է համարվում ուրիշ բարբառներով խոսողների համար, երբ վերջիններս ուզում են ընդհանուր լեզուն բանեցնել։ Բայց ժամանակի ընթացքում, երբ դպրոցների ու գրականության միջոցով առաջ է գալիս ամբողջ ժողովրդի մեջ զանազան կողմերում կրթված ու զարգացած մարդկանց մի առանձին դաս, գրական լեզուն դառնում է նրանց ընդհանուր խոսակցական լեզուն և իր ուրույն ձանապարհով է զարգանում, բավարարություն տալով այդ դասի մարդկանց պահանջներին. իսկ նրա մայր բարբառը՝ մնալով տեղի հասարակ ժողովրդի մեջ և ծառայելով միայն տեղական բնակիչների կարիքներին իրենց տեղական հարաբերությունների մեջ՝ իր առանձին ընթացքն է ունենում։ Այդ երկուսի մեջ երևան են գալիս տարբեր փոփոխություններ, բայց և այնպես երկար ժամանակ դեռ դրանք մնում են որոշ չափով իրար ավելի մոտիկ, քան ուրիշ բարբառների։

Գրական լեզուն նույնպես ենթակա է փոփոխությունների, բայց ոչ այնքան, որքան բարբառները։ Դա պակաս ազատություն ունի փոխվելու։ Հնչյունական այբբենարանի միջոցով գրական արտասանությունը համեմատաբար ավելի կայուն է դառնում, քան բարբառներինը, քանի որ հընչյունական գրությունը, բացի այն, որ ազդում է արտասանության վրա, այլև գրական լեզուն մասամբ ազատ է պահում անհատների ու բարբառների հնչյունական ազդեցությունից։ Ապա՝ գրական լեզվի ձևերն ու բառամթերքը գրականության միջոցով սևեռվում և մնայուն կերպարանք են ստանում. որոշ մատենագրությունների լեզուն դառնում է ամենքի համար ընդունելի, ընտիր և օրինակելի, դպրոցներում սովորում են այդ գրվածքները. ուստի հին շարահյուսական ձևերը, հին բառաձևերը, մասամբ և բառերի հին նշանակությունները, որ հաճախ արդեն մեռած են լինում գրական լեզվի մայր բարբառի մեջ, համարվում են մի նորմա, որ ձգտում են պահել խոսելիս և ավելի ևս գրելիս։ Երևան են գալիս նաև բառարաններ և գրական լեզվի քերականություններ, որոնցով ավելի ևս ճշտվում ու կանոնավորվում է գրական լեզուն և ձգտում միակերպ դառնալու։ Եվ այսպես, քանի որ գրական լեզվով խոսողն ու գրողը հետևում են ավանդության, ուստի և այդ լեզվի փոփոխությունը համեմատաբար ավելի դանդաղ է կատարվում։

Բարբառներն ազդում են ոչ միայն միմյանց վրա, այլև գրական

լեզվի վրա և ազդվում են նրանից, նույնիսկ ավելի մեծ չափով։ Ամեն բարբառի մարդիկ բանեցնելով գրական լեզուն իբրև ընդհանուր լեզու՝ նրա մեջ մտցնում են միշտ իրենց բարբառից բառեր և դարձվածներ, բառերի նոր նշանակություններ, շարահյուսական ձևեր և այլն, որոնք գրական լեզվի միջոցով հնշտությամբ ընդհանրանում են։

Գրական լեզուն ազդվում է նաև հին գրական լեզվից, եթե կա այդպիսին, ինչպես և օտար լեզուներից՝ սրանց գրականության միջոցով։ Այսպես՝ մեր նոր գրական լեզուն ևս զորեղ ազդեցություն է կրել մեր հին գրական լեզվից, մեր զանազան բարբառներից և օտար լեզուներից, և չնայելով որ դա մի դարի կյանք հազիվ ունի, բայց արդեն բավական տարբերվում է իր մայր՝ Այրարատյան բարբառից։

Բացի այդ՝ քանի որ գրական լեզուն կենդանի խոսակցական լեզու է, անխուսափելի կերպով պիտի ենթակա լինի նաև այն անգիտակցական փոփոխություններին, որ բնականորեն առաջ են գալիս խոսելու գործունեությունից։ Ամեն անհատ խոսելով և գրելով այդ լեզվով, ինչքան էլ դպրոցում և հին մատենագրություններից սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի դարձյալ որոշ չափի ազատություն իր ձևով վերաստեղծելու լեզուն և իր կողմից ազդելու ուրիշ խոսողների ու գրողների վրա։ Այս ազատությունն ու ազդեցությունն, անշուշտ, ավելի մեծ է խոսելիս, քան գրելիս, բայց ընդհանուր խոսակցական լեզվից անցնում է հետզհետե նաև գրավորին։ Նույնը պետք է ասել և բարբառների թողած ազդեցության մասին։

Գրական լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն է նաև ժողովրդի ընդհանուր մշակույթի զարգացումը։ Ժամանակի ընթացքում առաջ են գալիս միշտ նորանոր գաղափարներ, որ կարելի չի գտնել հին հեղինակների մեջ. դրանց համար ծնվում են նոր բառեր, բառերի նոր նշանակություններ և արտահայտության ձևեր, որով և գրական լեզուն շարունակ հարմարվելով նոր մշակույթին՝ հարստանում և ընդունակ է դառնում ամեն ինչ արտահայտելու, թե՛ հին մշակույթի և թե՛ նորի երևույթները։ Ժամանակի հետ այսպես կերպարանափոխվող գրական լեզուն է միայն կենսունակ և ընդունակ բավարարելու այն նպատակին, որին ծառայում է, այսինքն՝ դառնալ մի ընդհանուր հարմարավոր գործնական միջոց նույն լեզվով խոսող և գրող մարդկանց մտավոր հաղորդակցության համար։

Գրական լեզուն ավելի է ազդում բարբառների վրա, քան որևէ բարբառ։ Մինչդեռ ժողովրդական բարբառները հարմարություն ունեն ավելի իրենց հարևան բարբառների վրա ազդելու, այն էլ ուղղակի հարաբերությամբ,— գրական լեզուն գրի ու դպրոցի միջոցով հնարավորություն ունի իր ազդեցությունը միակերպ թողնելու ամեն տեղ, բոլոր բարբառների վրա և նույնիսկ ապրող սերնդից հետո եկող հաջորդների վրա։ Նրա տարածման գլխավոր միջոցն է դպրոցը, որ կոչված լինելով մարդկանց հաղորդակից անելու ընդհանուր մշակույթին՝ ամեն տեղ սովորեցնում է գրա-

կան լեզվով միատեսակ մտածել, խոսել ու գրել։ Իսկ ով որ դպրոցում չի սովորել, նա էլ իր գավառից դուրս՝ աշխատում է խոսելիս հարմարվել ընդհանուր լեզվին։ Բացի այդ՝ որքան կրթությունը տարածվում է դպրոցի ու գրականության միջոցով, այնքան ավելի մեծանում է այնպիսի մարդկանց թիվը, որոնք մանկությունից արդեն խոսում են միայն գրական լեզվով, և երբ հետզհետե կրթությունն ընդհանրանում է ամբողջ ազգի մեջ, և նրա բոլոր մասերը հաղորդակից են լինում ընդհանուր մշակույթին, այն ժամանակ բարբառները մոտենում են գրական լեզվին և մեկմեկու, մինչև վերջիվերջո գրական լեզուն իշխում է ամեն տեղ, և բարբառները մեռնում են։ Դրան են ձգտում դպրոցն ու գրականությունն իրենց ընդհանուր կրթությունով։ Եթե հաղորդակցության պակասությունը, ինչպես տեսանք, պատճառ է դառնում բարբառների առաջ գալուն և իրարուց ավելի ու ավելի տարբերվելուն, նույն հաղորդակցության սերտությունն ու մտավոր վորեղ հաղորդակցությունը դպրոցի ու գրական լեզվի միջոցով՝ առաջ է բերում բարբառների միացում։ Այսպես՝ հին հունական ազգի միմյանցից բաժանված մասերը, որոնք ունեին իրենց առանձին բարբառները, ժամանակի ընթացքում միանում են ի մի ազգություն ընդհանուր մշակույթով. նրանց միացման հետ միանում են և նրանց բարբառները. Ատտիկյան բարբառը, որ հույների ամենից կուլտուրական մասի՝ Աթենացոց լեզուն էր, իշխում է ամեն տեղ, և 3-րդ դարում Ք. ա. առաջ է գալիս մի ընդհանուր հունական բարբառ, որ կոչվում է «կոյնե»։

Սակայն ամեն գրական լեզու չի կատարում այս դերը, որ կապված է ընդհանուր կրթության հետ, եթե մի ազգի մեջ ընդհանուր կրթությունը չի ծավալվում ամեն տեղ, և ուսումը մնում է միայն իբրև առանձնաշնորհ մի որոշ դասի, այն ժամանակ համեմատաբար փոքր է լինում գրական լեզվի աղդեցությունը բարբառների վրա, որոնք ավելի մեծ ազատությամբ են թաքնակա լինելով փոփոխության՝ նույնիսկ ավելի հեռանում են նրանից։ Այսպիսի դեպքում մինչև անգամ այն բարբառը, որի վրա հիմնված է գրական լեզուն, ժամանակի ընթացքում այնպիսի ձևափոխության է ենթարկվում, որ նրանով խոսող մարդիկ ևս առանձին ուսման կարիք են զգում՝ գրական լեզուն ազատ բանեցնելու համար։ Այսպիսով գրական լեզուն մնում է սակավաթիվ ուսած մարդկանց մեջ, և հետզհետե որքան դժվարանում է այդ ձեռք բերելը, այնքան պակասում է այդ լեզվով խոսողների թիվը։ Եվ վերջապես հեղինակները գրում են այդ լեզվով ոչ թե այն պատճառով, որ իրենք կամ ուրիշներն այդպես են խոսում իրենց սովորական խոսակցության ժամանակ, այլ որովհետև իրենցից առաջ այդպես են գրել նշանավոր հեղինակները։ Գրական լեզուն այս դեպքում գրեթե կտրվում է կենդանի լեզվից և դառնում է մի արվեստական լեզու, որ գրության մեջ պահվում է գլխավորապես հների նմանողությամբ։

Այս վիճակին ենթարկվել է մեր հին **գրական լեզուն— գրաբարը** (հին հայերեն)։ Փակված լինելով միայն վանական դպրոցներում՝ այս լեզուն

շատ չի ազդում աշխարհականների կենդանի բարբառների վրա, որոնք զարգացման բոլորովին տարբեր ուղի են բռնում և դարերի ընթացքում այնպես են կերպարանափոխվում, որ հին լեզվական ձևերն ու նորերը բոլորովին հեռանում են իրարուց։ Գալիս է ժամանակ, որ մեր հին գրական լեզուն այլևս հեչտ հասկանալի չի լինում ամենքին և բնականաբար կարիք է զգացվում մի նոր ընդհանուր լեզվի։ 12—13-րդ դարերում ահա, կյանքի գործնական կարիքներին բավարարություն տալու համար, առաջ է գալիս մեջ միջին գրական լեզուն (միջին հայերեն), ժամանակի խոսակցական լեզվին մոտիկ։ Հին գրական լեզուն, սակայն, չի մեռնում, այլ դեռ շարունակում է միջին գրական լեզվի հետ զուգընթաց ապրել. իբրև «գրաբար», այսինքն՝ գրքի, գրության լեզու, գլխավորապես կրոնական և պատմական գրվածքների համար։ Միայն 15 և 16-րդ դարերում, երբ քաղաքական մեծ ցնցումների պատճառով մեռնում է վանական կյանքն ու փակվում են դպրոցները, մեռնում է և գրաբարի ավանդությունը և մեր այդ գրական լեզուն դադարում է իբրև կենդանի լեզու ապրելուց։ 17—19-րդ դարերում, սակայն, վերածնության փորձն առաջ է բերում նմանողություն հին գրաբարի և նոր գրաբար գրականություն արվեստական գրական լեզվով. ձգտում է առաջ գալիս հին գրական լեզուն արվեստական կերպով կենդանացնելու նույնիսկ խոսակցության մեջ, բայց աջողություն չի լինում, որովհետև ժողովրդական բարբառները շատ էին տարբերվում հին գրաբարից։ Այս փորձերն ու նոր գրաբար գրականությունն իրենց կողմից պատճառ են դառնում միջին գրական լեզվի անկման, թեպետ և դա շատ հեռու չէր ժողովրդական, ավելի արևմտյան բարբառներից։ Այս պատճառով 19-րդ դարում առաջ է գալիս ընդհանուր լեզվի պահանջից նոր գրական լեզու, այն էլ, քաղաքական հանգամանքների շնորհիվ, երկու կողմից։ Արևմուտքում Կ. Պոլսի բարբառի հիման վրա ծագում է արևմտյան գրական լեզուն կամ արևմտյան աշխարհաբարը, իսկ արևելքում՝ Այրարատյան բարբառի հիման վրա՝ արևելյան գրական լեզուն կամ արևելյան աշխարհաբարը. մեկը տարածված է արևմտյան հայության մեջ, մյուսը՝ արևելյան։ Դրանցից արևելյան գրական լեզուն,— քանի որ արևմտյան հայությունը մեծ մասամբ ոչընչացավ վերջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում, իսկ արևելյան հայությունն, ընդհակառակն, սկսել է առանձին պետական կյանքով ապրել,— կոչված է առանձին դեր կատարելու։

Մեր արևելյան գրական լեզուն դպրոցների և գրականության միջոցով այժմ բավական տարածված է ոչ միայն արևելյան բարբառներով խոսողների մեջ, այլև Խորհրդային Հայաստանի Հանրապետության սահմաններում արևմտյան բարբառներով խոսողների մեջ, ինչպես և Վրաստանում, Ադրբեջանում, Ռուսաստանում ու Պարսկաստանում։ Որ այս գրական լեզուն համեմատաբար կարճ ժամանակում կարողացել է բավական ընդհանրանալ, դրա գլխավոր պատճառն այն է, որ հնչյունների կողմից, գրաբարի նկատմամբ, մեր բարբառների մեջ ամենից քիչ է փոփո-

խոսքյան ենթարկվել գրական լեզվի մայր՝ Այրարատյան բարբառը։ Այստեղ բառերը մեծ մասամբ պահում են հին գրական լեզվի կերպարանքը, ինչպես օրինակ՝ հին «հարսանիք» մնում է նույն ձևով, մինչդեռ ուրիշ բարբառների մեջ այդ բառը դարձել է՝ հրսա՛նիք, հարսնի՛ք, հարսի՛նք, խարսնի՛ս և այլն։ Բայց որ գլխավորն է՝ Այրարատյան բարբառի մեջ հնչյունները թվով ավելի փոքր են. ձայնավորներն, օրինակ, միայն վեց են՝ ա, օ(ո), ու, է(ե), ի, ը, որոնք բոլորն էլ կան բոլոր բարբառների ու հին գրական լեզվի մեջ, մինչդեռ ուրիշ բարբառների մեջ կան այնպիսի ձայնավոր և բաղաձայն հնչյուններ ևս, որ չունին Այրարատյան բարբառը և հին գրական լեզուն։ Ուստի և ուրիշ ամեն մի բարբառի մարդիկ ավելի հեշտությամբ յուրացնում են Այրարատյան կամ գրական արտասանությունը, որ միաժամանակ և գրաբարի արտասանությունն է եղել 19-րդ դարում, քան ուրիշ բարբառների հնչյունները, որոնք հաճախ գրաբարից և միմյանցից բավական հեռու են իրենց արտաբերությամբ։

25. Ցեղակից լեզուներ։— *Երբ բարբառների տարբերությունները միմյանցից այնքան մեծանում են, որ մի բարբառով խոսող մարդն այլևս չի հասկանում մյուս բարբառով խոսողին, հետևաբար և այսպիսի երկու բարբառն այլևս չազդելով իրար վրա՝ մի ընդհանուր կյանքով չեն ապրում,— այն ժամանակ առաջ են գալիս նոր լեզուներ միևնույն մայր լեզվից։ Այս տեղի է ունենում այն ժամանակ, երբ մի ժողովրդի զանազան բարբառներով խոսող մասերը գաղթելով ուրիշ երկրներ, կամ ընդարձակ հողամասերի վրա տարածվելով՝ երկար դարերով կտրվում են միմյանցից որևէ բնական կամ քաղաքական արգելառիթ սահմաններով և այլևս միմյանց հետ հարաբերության մեջ չեն լինում։ Այս դեպքում նրանք ըստ կրսում են ապրել ինքնուրույն կյանքով, և լեզվի մեջ մի տեղում առաջ եկած փոփոխությունները չեն անցնում ուրիշ կողմեր և բարբառների խառնուրդ առաջ չի գալիս։ Մի բարբառի մեջ պահվում է հին լեզվական իրակությունը, մյուսի մեջ հինը կորչում է՝ տեղի տալով նորի առաջ, կամ երկուսի մեջ էլ նոր իրակներ են առաջ գալիս, բայց բոլորովին տարբեր ուղիներով։ Մի խոսքով՝ երկու բարբառները բոլորովին տարբեր փոփոխություններ են կրում։ Որքան ավելի կուլտուրական է մի ժողովուրդ, այնքան ավելի ուժեղ է հարաբերությունն ու կապը նրա մասերի մեջ. ուստի և նույնիսկ գաղթը դեպի հեռավոր երկրներ չի կարող ազդել, որ նրանց բարբառները բոլորովին ուրույն ղարգացում ունենան և բնավ չազդեն միմյանց վրա։ Եվ քանի դեռ երկու այսպիսի, իրարուց նույնիսկ հեռու ընկած բարբառներ ազդում են միմյանց վրա և շարունակում են ավելի կամ պակաս չափով ընդհանուր փոփոխություններ կրել բառաձևվերի ու կապակցության ձևերի նկատմամբ, նրանք դեռ միևնույն լեզվի բարբառներ են միայն։ Բայց հենց որ նրանք դադարում են այսպիսի ընդհանուր կյանքով ապրելուց, և մեկի կրած փոփոխությունն այլևս չի անցնում մյուսին, այն ժամանակ արդեն նրանք կազմում են երկու տար-*

քեր, բայց ցեղակից լեզուներ։ Բոլոր ցեղակից լեզուներն, ուրեմն, միևնույն ընդհանուր մայր լեզվի երբեմնի բարբառների շարունակությունն են միայն։ Նրանց մեջ կան նման լեզվական իրակութիւններ, որոնք նման են, որովհետև մի ընդհանուր ծագում ունեն. բայց կան և ավելի շատ տարբեր իրակներ, որոնք միմյանցից անկախ՝ նո՛ր են առաջ եկել յուրաքանչյուր լեզվի մեջ։ Հասկանալի է, որ ցեղակից լեզուներն ևս, իբրև բոլորովին անկախ լեզու կազմակերպվելուց հետո, կարող են միմյանց վրա ազդել. բայց դա կլինի արդեն ոչ թե միևնույն լեզվի բարբառների փոխադարձ ազդեցություն, այլ մի օտար լեզվի ազդեցություն մի ուրիշի վրա։

Ցեղակից լեզուների մայր լեզուն, որից ծագել են նրանք, կոչվում է նախալեզու, իսկ սրանից առաջացած լեզուների խումբն՝ **ընտանիք**։ Լեզվաբանությունը միմյանց հետ բաղդատելով մարդկային լեզուները՝ որոշել է արդեն շատ լեզուների ցեղակցությունը և լեզուները բաժանել է մի քանի ընտանիքների։ Դրանց մեջ ամենից շատ ուսումնասիրված է **ճնդեվրոպական լեզուների ընտանիքը**, որին պատկանում են եվրոպական լեզուների մեծ մասը, և գիտական լեզվաբանությունը հիմնվել է այս ընտանիքի լեզուների համեմատությամբ։ Լեզուների ընտանիքը բաժանվում է **ճյուղերի**. այսինքն այնպիսի խմբերի, որոնց մեջ մտնող լեզուներն ավելի մոտիկ ցեղակցություն ունեն միմյանց հետ. յուրաքանչյուր ճյուղ, սակայն, կարող է կազմված լինել և մեկ լեզվից։ Հնդեվրոպական լեզուների ընտանիքին պատկանում են Ասիայում՝ 1) Արիական կամ Հնդիրանական լեզվաճյուղը, որ իր կողմից բաժանվում է երկու մեծ լեզվախմբերի. ա) Հնդկական,— Հնդկաստանի հին և նոր լեզուները, որոնցից մեռած լեզուներ են՝ Վեդայի լեզուն և Սանսկրիտ, բ) Իրանական, որին պատկանում են՝ հին պարսկերեն (Դարեհի, Կամբիսի և այլ սեպագրությունների լեզուն), մարերեն, զենդերեն (Զրադաշտի կրոնի սուրբ գրքի՝ Զենդ-Ավեստայի լեզուն), պահլավերեն (Արշակունյան և Սասանյան ժամանակի լեզուն), նոր պարսկերեն, քրդերեն, ավղաներեն, օսերեն, 2) Թոխարական ճյուղ, որին պատկանում են Թոխարերեն և քուչերեն (մեռած), 3) Հայերեն, որ ինքը մենակ մի առանձին ճյուղ է կազմում. Հայերենի ճյուղին են պատկանելիս եղել, ինչպես կարծում են մի քանի հնչին մնացորդներից, նաև փռիգերեն և թրակերեն լեզուները. Եվրոպայում՝ 4) Ալբաներեն, 5) Հունարեն, 6) Իտալական լեզուներ, որոնց պատկանում են՝ օսկերեն, ումբրերեն, լատիներեն (հին Հռոմայեցիների լեզուն). Հռոմեական ժողովրդական բարբառներից ծագում են ռոմանական լեզուները, որ են՝ իտալերեն, ֆրանսերեն, պրովանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, ռումիներեն, 7) Կելտերեն, 8) Գերմանական ճյուղ, որի մեջ մտնում են բազմաթիվ լեզուներ, որոնցից են՝ գերմաներեն, անգլերեն, շվեդերեն և այլն, 9) Բալթիկ-Սլավական ճյուղ, որ իր կողմից բաժանվում է երկու խմբի՝ ա) Բալթիկյան՝ լիթվաներեն և լատիշն, և բ) Սլավոնական, որի մեջ մտնում են բազմաթիվ լեզուներ՝ ռուսերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն, լեհերեն, բուլղարերեն, չեխերեն, սերբերեն։

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

26. Լեզվաբանության գյուտը և ուսումնասիրության եղանակը:— *Լեզվաբանությունը (լինգվիստիկա) լեզվի գիտությունն է, որի ուսումնասիրության առարկան է մարդկային լեզուն կամ խոսվածքը: Վերևում բացատրված լեզվական իրակությունների համեմատ՝ լեզվաբանության մեջ մտնում են հետևյալ բաժինները. 1. Հնչյաբանություն (ֆոնետիկա), բառերի արտաքին, ֆիզիկական կողմի, հնչյունների ուսումը, որին իբրև օժանդակ գիտություն ծառայում են անատոմիան և բնախոսությունը, 2. Իմաստաբանություն (սեմասիոլոգիա կամ սեմանտիկա), բառերի ներքին, հոգեկան կողմի, բառերի նշանակության կամ իմաստի ուսումը, որին իբրև օժանդակ գիտություն ծառայում է հոգեբանությունը. 3. Ստուգաբանություն (էտիմոլոգիա), բառերի կազմության ուսումն ըստ ծագման, 4. Ձևաբանություն (մորֆոլոգիա), առանձին բառաձևերի ուսումը, առանց նկատի ունենալու նրանց պաշտոնը խոսքի մեջ, 5. Շարահյուսություն (սինտաքսիս), բառերի, իբրև խոսքի մասերի, կապակցության ձևերի ուսումը,— լինի կապակցությունը բառաձևերով, թե ձևական բառերով և ուրիշ եղանակներով, —ինչպես և խոսքերի միմյանց հետ կապակցության ուսումը: Բացի այս բաժիններից կա նաև՝ 6. Բառարանություն (լեկսիկոլոգիա), լեզվի բառարանական կողմի, բառամբարձրի, բառերի ուսումը, առանց նկատի ունենալու նրանց ձևերը:*

Լեզվաբանության հիշված բաժիններից ձևաբանությունն ու շարահյուսությունը միասին սովորաբար կոչվում են **Բերականություն**: *Այս տերմինը, սակայն, գործածում են նաև ավելի լայն իմաստով՝ մեջն առնելով նաև առաջին երեք բաժինները, որովհետև անհնարին է լեզվի հնչյուններն ուսումնասիրել բառաձևերից, բառերի նշանակությունից և բառակազմությունից անկախ, ինչպես և ձևաբանությունն ու շարահյուսությունը կարելի չէ ուսումնասիրել մյուսներից անկախ: Ըստ այսմ, ուրեմն, քերականությունն իր մեջ ամփոփում է լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր բաժինները:*

Ինչպես տեսանք, լեզվաբանության կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ ամեն լեզու միշտ և անընդհատ փոփոխվում է: Այս փոփոխության մեջ է լեզվի կյանքը կամ պատմությունը: Այս պատճառով և լեզուն, ինչպես մարդկային մշակույթի ամեն արտադրություն, պատմական ուսումնասիրության առարկա է: Լեզվի բոլոր երևույթները, լեզվական բոլոր իրակությունները, ուրեմն, ուսումնասիրվում են ոչ միայն նրանց ժամանակակից վիճակն առնելով, այլև նրանց պատմական զարգացումը: Ըստ այսմ լեզվաբանությունը, իր վերևում դրված բաժիններով, պատմական գիտություն է: Մի առանձին լեզվի պատմական ուսումնասիրությունը նույնն է նույն լեզվի պատմական Բերականության, որ հետևում է լեզվի

զարգացմանը, սկսած ավանդությամբ տրված մի ելակետից, և կազմում է նրա ամբողջ զարգացման տեսությունը։

Այսպիսի պատմական ուսումնասիրությունը հնարավոր է, սակայն, այն ժամանակ միայն, երբ հայտնի են լեզվի վիճակները նրա զարգացման զանազան շրջաններում։ Ուստի մի լեզվի պատմական քերականությունից առաջ՝ անհրաժեշտ է ունենալ նույն լեզվի մի շարք նկարագրական քերականություններ, որոնցով ցույց է տրվում, թե ինչպիսի բառական ու կապակցության ձևեր են գործածական եղել մի լեզվի մեջ իրար հաջորդող զանազան շրջաններում։ Մեր ժամանակակից շրջանից, մեր խոսած լեզվի վիճակը կարող ենք նկարագրել նկատի ունենալով ոչ միայն ժամանակակից հեղինակների գրվածքները, այլև մեր կենդանի խոսած լեզուն իր բոլոր բարբառներով, որոնց նկարագրությունն ու դասավորությունը կազմում է մի առանձին բաժին— բարբառագիտություն (դիալեկտոլոգիա), իսկ նախորդ դարաշրջանների լեզվի նկարագրությունը կարող ենք հանել միայն հնությունից մնացած գրավոր հիշատակարաններից։ Երբ միևնույն լեզվի տարբեր ժամանակների համար կազմվում են նկարագրական քերականություններ, դրանց մեջ տարբեր կերպով են երևան գալիս լեզվական իրակությունները. մի շարք այսպիսի քերականությունների համեմատությունից արդեն տեսնում ենք, թե ինչպես յուրաքանչյուր դարաշրջանի լեզու իր նախորդ դարաշրջանի լեզվի մի ձևափոխությունն է որոշ կանոնավորությամբ և օրենքով։ Բայց կատարված փոփոխության իսկական էության մասին այս համեմատական եղանակով միայն դեռ կարելի չէ պարզ գաղափար կազմել և ձեռք բերել լեզվի կյանքի գիտական ըմբռնումը։ Ուստի ինչպես պատմության և պատմական գիտության յուրաքանչյուր ճյուղի համար, նույնպես և լեզվի պատմության համար կա լեզվի ընդհանուր տեսություն կամ ընդհանուր լեզվաբանություն, որ առանձին լեզուների պատմությունից ձեռք բերված իրողությունների հիման վրա ուսումնասիրում է ընդհանրապես մարդկային լեզվի զարգացման ընդհանուր պայմանները և օրենքները, լեզվի պատմության սկզբունքներն ու հիմնական խնդիրները և հետազոտում է ամեն փոփոխությունների մեջ նույն մնացող գործոնների բնությունն ու ներգործությունը։

Մարդկային լեզուների ուսումնասիրությունից, ինչպես տեսանք, երևան է եկել, որ լեզուները կազմում են առանձին-առանձին խմբեր կամ ընտանիքներ։ Մի լեզվական ընտանիքի մեջ մտնող առանձին լեզվական ճյուղերի մասնավոր ուսումնասիրությամբ կազմվում է համազգի լեզուների համեմատական ուսումնասիրությունը— համեմատական բնականությունը, որ զբաղվում է նույն ընտանիքի մեջ մտնող լեզուների հարաբերությունները որոշելով։ Պատմական քերականություն և համեմատական քերականություն իսկապես նույն գիտությունն են, նույն խնդրով և նույն համեմատական մեթոդով, երկուսն էլ կազմում են լեզվի պատմությունը, միայն առաջինը հետևում է լեզվի զարդացմանն ավան-

դությամբ տրվածից մինչև ներկան, իսկ երկրորդն՝ ավանդությամբ տրված ցեղակից լեզուներից բարձրանում է դեպի մայր լեզվի կորած նախնական վիճակը, ուրիշ խոսքով՝ համեմատական-պատմական ուսումնասիրությամբ աշխատում են վերաստեղծել իրրև նպատակ՝ լեզվի նախնական դրությունը, որոշել քերականական և բառարանական կազմն այն դարաշրջանում, երբ դեռ մեկ ընդհանուր լեզու է եղել, այլև թե ինչպիսի ձևափոխություն է կրել այդ մեկ լեզուն իր ամեն առանձին ճյուղերի մեջ։ Այսպես՝ կա հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն, որով վերաստեղծվում է հնդեվրոպական նախալեզուն։ Ապա՝ նույն կերպ վերաստեղծվում է նաև մեկ ճյուղի պատկանող լեզուների նախնական դրությունը, որից չեն մնացել հիշատակարաններ, ինչպես օրինակ՝ համեմատական ուսումնասիրությամբ վերականգնում են գերմանական լեզուների մայր լեզուն, ինչպես և ռոմանական ու սլավոնական լեզուների։ Եվ վերջապես, երբ մի լեզվից չեն մնացել գրավոր հիշատակարաններ, կամ եթե մնացել են՝ միայն մեկ բարբառից, կարելի է միևնույն համեմատական հղանակով ուսումնասիրել մեր ժամանակի բարբառները և վերականգնել այդ լեզվի նախնական վիճակը։

27. Լեզվաբանության կիրարկական նշանակությունը։— *Լեզվաբանությունը, բացի իր մաքուր տեսական նշանակությունից, իրրև լեզվի գիտություն, ունի նաև կիրարկական նշանակություն։ Մի լեզվի պատմությունը սերտ կապված է նույն լեզվով խոսող ազգի պատմության հետ. ուստի ինչպես ազգի պատմությամբ շատ բան բացատրվում է լեզվի մեջ, նույնպես և ինքը լեզվաբանությունը բացատրում է շատ պատմական իրողություններ, օրինակ՝ երբ իմանում ենք, թե ինչպիսի բառեր պարսկերենից փոխառություն են հայերենի մեջ, դրանից եզրակացնում ենք, թե ինչպիսի կուլտուրական ազդեցություն են ունեցել պարսիկները հայերի վրա։ Լեզվաբանության օգնությամբ լուծվում են և ուրիշ շատ պատմական հարցեր, առանձնապես նախապատմական շրջանների վերաբերյալ, որոնցից չեն մնացել ոչ մի ուրիշ հիշատակարաններ, բացի լեզվից։ Այսպես, օրինակ՝ այս դիտությունը հայտաբերելով հնդեվրոպական նախալեզուն՝ դրա հետ միասին որոշ չափով երևան է բերում նաև այդ լեզվով խոսող ժողովրդի նախնական մշակույթը։ Ապա՝ քանի որ լեզուն մի ազգի հոգևոր գործունեության գլխավոր տեսակներից մեկն է, նրա ուսումնասիրությունը սերտ կապված է նաև ազգագրության (էթնոգրաֆիա) հետ, որ չափով վերջինս էլ սովորեցնում է այս կամ այն ազգի հոգևոր կենցաղը։ Եվ վերջապես թե՛ մայրենի և թե՛ օտար լեզուներն ուսման վերաբերյալ շատ եղանակներ և մանկավարժական հարցեր պարզվում և որոշվում են լեզվաբանության օգնությամբ։*

Այս վերջին նկատառումով՝ ամենահին ժամանակներից ի վեր լեզուն դարձել է ուսումնասիրության նյութ և քերականությունը մտել է դպրոցական առարկաների շարքը։ Բայց մինչ ամենայն դպրոցական առարկա հարմարվել է իր գիտության ժամանակակից վիճակին, քերականու-

թյան ուսումը դպրոցներում մնացել է մեծ մասամբ իր հին դրության մեջ, չնայելով, որ լեզվաբանությունը 19-րդ դարում բոլորովին փոխվել է՝ դառնալով իսկական գիտություն։ Նկատի ունենալով քերականության նշանակությունը հին ու օտար լեզուներ սովորելու համար՝ այդ առարկան դպրոցներում համարվել է մի արվեստ կամ միջոց ուղիղ խոսելու և գրելու։ Այս հայացքը քերականության մասին՝ մնում է մինչև այժմ էլ. ուստի քերականության դասերը կցվում են լեզվական վարժություններ անելու և լեզվական հմտություն ձեռք բերելու դասերին։ Բացի այդ՝ քերականության վրա այս գործնական տեսակետն ունենալով՝ դպրոցներում նրա մեջ մտցրել են տրամաբանությունից շատ տարբեր աշակերտների մտավոր ընդունակությունները սրելու համար։

Արդարև, մի լեզվի քերականության ուսումն իր կողմից շատ նպաստում է լեզվին հմտանալու, բայց այդ գործնական նպատակը չունի քերականությունն իբրև գիտություն։ Այս ելնելը բանը՝ լեզվի գործնական վարժություններ լեզվին հմտանալու համար, տրամաբանություն և լեզվաբանություն՝ չպիտի շփոթել իրար հետ։ Ջանազան հայեցակետերի ու նպատակների այսպիսի խառնուրդի պատճառով՝ աշակերտները երկար տարիներ դպրոցում քերականություն սովորելուց հետո անգամ՝ չեն հասկանում քերականության նպատակը, ուստի և մանկավարժները հաճախ նույնիսկ ավելորդ են համարում քերականությունը դնել իբրև դպրոցական ուսման առարկա, կամ իբրև անկախ առարկա։

Քերականությունն իբրև գիտություն մեկ նպատակ միայն ունի, այն է՝ ուսումնասիրել լեզվի կազմությունը, այն միջոցները, որոնցով լեզուն արտահայտում է մտքի առարկաների հարաբերությունները։ Ուստի դրպրոցական քերականությունը պետք է հետևի այս նպատակին. նրա միջից պետք է դուրս ձգել այն ամենը, ինչ որ ավելորդ է այս նպատակին հասնելու համար, և այն ժամանակ քերականության ուսումը ոչ միայն հեշտ կլինի, այլև կդառնա հետաքրքիր ու կարևոր առարկաներից մեկը։ Եթե պատանեն ընդհանուր զարգացման համար անհրաժեշտ են ճիշտ գիտելիքներ զանազան գիտություններից, ինչպես՝ բուսաբանությունից ու կենդանաբանությունից, անատոմիայից ու բնախոսությունից և այլն, այս գիտությունների այժմյան վիճակի համեմատ,— նա պետք է ճիշտ գիտելիքներ ունենա նաև մարդու հոգևոր գործունեության,— իր ամենօրյա խոսած լեզվի և նրա կազմության մասին լեզվաբանական գիտության արդի վիճակի համեմատ։

28. Լեզվաբանության պատմություն։— Լեզվով հետաքրքրվել են ամենահին ժամանակներից սկսած, բայց լեզվաբանությունն իսկական գիտություն դարձել է միայն 19-րդ դարում։ Առաջին անգամ գերմանացի Ֆրանց Բոպ (1791—1867) համեմատական ուսումնասիրությամբ ապացուցել է հնդեվրոպական լեզուների ցեղակցությունը, որով և հանդիսացել է նա իբրև հիմնադիր լեզվաբանական դիտության։ Միաժամանակ և գերմանացի Վիլհելմ Հումբոլդ (1767—1835), Յակոբ Գրիմ (1785—

1863) աշխատել են լեզվաբանության համար, և այնուհետև շատ ուրիշները թե՛ Գերմանիայում և թե՛ ուրիշ երկրներում ուսումնասիրել են լեզվաբանությունը։

Հայոց լեզուն, իբրև հնդեվրոպական լեզուներից մեկը, հենց սկզբից դարձել է համեմատական ուսումնասիրության նյութ։ Մինչև 1880-ական թվականները մեր լեզուն դրվում էր իբրև իրանական լեզուներից մեկը. բայց Հ. Հյուբշմանն նախ 1875 թվին իր մի հոդվածով, ապա 1883 թ. Լայպցիգում հրատարակած իր «Հայկական ուսումնասիրություններ» մեջ ապացուցեց, որ հայերենը մի առանձին ճյուղ է հնդեվրոպական լեզուների ընտանիքի մեջ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԵՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

(Հնչաբանություն)

Ա

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

29. Խոսքի գործարանները:— *Խոսքի հնչյուններն արտաբերվում են արտաշնչելու ժամանակ թոքերից դուրս մղվող օդի հոսանքով, որ անցնում է կոկորդի միջով, այդտեղից մտնում է երախը և հետո բերանի ու քթափողի միջով դուրս է գալիս: Կոկորդը, բերանը և քթափողը իրենց մեջ գտնված շարժուն և անշարժ մասերով միասին՝ կազմում են խոսքի հնչյունների գործարանները:*

Կոկորդի մեջ խոսքի շարժուն գործարաններից գլխավոր տեղը բռնում են ձայնալարերը, որոնք կոկորդի լայնքով՝ հորիզոնական ձևով ձգված երկու առածիգ մկաններ են, և նրանց մեջ գտնված ճեղքը, որ կոչվում է ձայնաճեղք: Երբ ձայնաճեղքը ավելի կամ պակաս չափով նեղանում է, և ձայնալարերը ձգվում լարվում են, այդ ժամանակ շնչափողից դուրս մղվող օդի ճնշումից ձայնալարերը դողում կամ տատանվում են, մերթ բացվելով և մերթ իրար կպչելով, և նրանց տատանումից, ինչպես և ամեն մի հնչող մարմնի տատանումից, առաջանում է հրաժշտական հնչյուն, որ կոչվում է ձայն:

Ձայնալարերը մասնակից են, սակայն, ոչ բոլոր հնչյունների արտաբերությանը: Շատ հնչյունների արտաբերության ժամանակ ձայնաճեղքը լայն բացված է մնում, օդի հոսանքն ազատ անցնում է նրա բացվածքի միջով, ձայնալարերը մնում են առանց լարվելու ու տատանվելու և ձայն չեն տալիս: Հնչյուններն այդ ժամանակ արտաբերվում են առանց ձայնալարերի մասնակցության գլխավորապես բերանի խոռոչի մեջ, այն է՝ օդի հոսանքը բերանում մի արգելքի հանդիպելով՝ տատանվում է և առաջ է բերում աներաժշտական հնչյուն կամ աղմուկ, ինչպես՝ Ֆ, Ս, Շ. և:

Խոսվածքի լսելիությունն ու երաժշտականությունը հիմնված է կոկորդալարերի ձայնի վրա, որ Լրաժշտական հնչյուն է և, ինչպես ամեն երաժշտական հնչյուն, առաջանում է ձայնալարերի պարբերական (պերիոդիկ) ու ռիթմիկ տատանումներից, այսինքն այնպիսի տատանումներից, որոնք միակերպ կրկնվում են որոշ ժամանակամիջոցում. մինչդեռ աղմուկները, իբրև աներաժշտական հնչյուններ, հետևանք են ոչ-պարբերական տատանումների: Ուստի և այնպիսի հնչյունները, որոնց արտաբերությունը լինում է առանց կոկորդալարերի ձայնի, բարձր ու պարզ լսելի չեն ու աներաժշտական են, ինչպես լինում է շշունջի, այսինքն անձայն և «փսփսալով», շշնջալով խոսելու ժամանակ: Ձայնալարերն էլ, սակայն, կարող են տատանվել իրենց ամբողջ երկայնությամբ և ուժեղ և այդ ժամանակ ձայնը լինում է լիքը և ուժեղ, ինչպես է սովորական բարձրաձայն և լիաձայն խոսվածքի ժամանակ. բայց կարող են տատանվել նաև ոչ իրենց ամբողջ երկայնությամբ, այլ միայն մի որոշ մասով և թուլլ. այդ ժամանակ ձայնը լիքը չի լինում, ինչպես է՛ մրմունջի, «մրմրմրալով» կամ մրմռաձայն, մրմնջաձայն խոսվածքի ժամանակ:

Բերանը մասնակից է բոլոր հնչյունների արտաբերությանը կա՛մ իր խոռոչով իբրև ռեզոնատոր, կա՛մ իր մեջ գտնված մասերով, որ են՝ լեզուն, ատամներն ու քիմքը: Վերջինս բաժանվում է երկու մասի՝ կոշտ քիմք, որ սովորաբար ասում ենք քիմք կամ առաջաքիմք (պալատում), և փափուկ կամ շարժուն քիմք, որ կոչում ենք կատիկ (վելում) կամ վերջաքիմք: Մատով կարելի է շոշափել այս երկու քիմքն էլ և իմանալ, թե որտեղ է վերջանում կոշտ քիմքը և սկսվում կատիկը: Կոշտ քիմքն, ինչպես և ատամները, ամբողջապես անշարժ են մնում հնչյունների արտաբերության ժամանակ: Շրթունքները, սակայն, մերթ հանգիստ դրության մեջ են մնում, մերթ առաջ ձգվելով՝ երկայնացնում են բերանի խոռոչը, ինչպես լինում է O(Ո), Ու արտասանելիս: Բերանի խոռոչի տարածությունը փոխվում է նաև, երբ բերանը նեղ կամ լայն է բացվում, որ կախված է ներքին ծնոտի դրությունից: Այս նկատմամբ, սակայն, ամենից կարևոր դերը կատարում է լեզուն, որ իր շարժունությամբ չափազանց բազմազան ձևեր և դրություններ է ընդունում: Նայելով թե լեզուն ինչ դրության մեջ է և իր ո՛ր մասով և ո՛րքան է բարձրանում դեպի քիմքի այս կամ այն կողմը, ըստ այնմ էլ բերանի խոռոչը մերթ լայնանում է, մերթ նեղանում և նույնիսկ երկու մասի բաժանվում: Բերանի խոռոչը ծառայում է իբրև ռեզոնատոր, որի միջոցով փոխվում է հնչյունի երանգը կամ ռեակը, որ է՝ հիմնական հնչյունն և իր հետ միացած կողմնակի հնչյունների բաղադրությունը: Հիմնական հնչյունի հետ միացած բաղադրիչ հնչյուններից մի քանիսն այդ ռեզոնատորով ուժեղանում են և ուրիշները խեղդվում են: Բայց որովհետև բերանի խոռոչը զանազան ձևեր է ընդունում, որով և զանազան տեսակի ռեզոնատորներ է դառնում, հետևաբար և ձայնալարերի տատանումից առաջացած ձայնը բերանի մեջ՝ նայելով ռեզոնատորին՝ ճշակվելով դառնում է տարբեր ռեակի կամ տարբեր երանգի հնչյուն-

ներ, ինչպես՝ Ա, Օ(Ո), Ու, Է(Ե), Ի, Ը։ Բացի այդ՝ բերանի խոռոչի մեջ արտաշնչության ժամանակ օդի տատանումից, ինչպես տեսանք, առաջանում են աղմուկներ, որոնք նույնպես, մենակ կամ ձայնի հետ միացած, կազմում են խոսքի հնչյուններ, ինչպես՝ Ս, Ֆ, Շ, Խ, Զ, Վ, Ժ, Ղ։ Այս հնչյուններն ևս զանազան են կամ տարբեր որակ (երանգ) ունեն, քանի որ առաջանում են բերանի խոռոչի տարբեր ձևերում ու տեղերում և տարբեր եղանակներով։

Քթափողը միշտ անփոփոխ է մնում և դրսից բաց է, բայց ներսից կարող է փակվել և բաժանվել բերանից։ Փափուկ քիմքը կամ քիմքի առագաստը, որ վերջանում է լեզվակով, բարձրանալով սեղմվում է երախի պատին և փակում քթափողի անցքը։ Այդ ժամանակ օդն անցնում է միայն բերանով։ Իսկ երբ քթափողի անցքը բաց է, և օդն ազատ կարող է անցնել նրա միջով, այդ ժամանակ քթափողն էլ հանդիսանում է իբրև մի ռեզոնատոր և խոսքի հնչյուններին տալիս է իր ունգային երանգը, ինչպես՝ Ն, Մ։

Այսպես ուրեմն, նայելով թե արտաշնչած օդի դուրս մղվելու ժամանակ ինչ դրության մեջ են լինում խոսքի այս շարժուն գործարանները կոկորդի և բերանի մեջ, ըստ այնմ էլ արտաբերվում են տարբեր հնչյուններ։

30. Հնչյունների տեսակները ըստ ձայնի ու աղմուկի հարաբերության։ — Ինչպես տեսանք, կոկորդալարերի ձայնը մասնակից է հնչյունների մի մասի արտաբերությանը միայն, որոնք և կոչվում են ձայնեղ (թրթռուն) հնչյուններ, իսկ այն հնչյունները, որ միմիայն աղմուկից են կազմված և որոնց արտաբերության ժամանակ ձայնալարերը մնում են առանց տատանվելու (թրթռալու) և ձայն չեն հանում, կոչվում են անձայն (խուլ) հնչյուններ։

Ձայնալարերի հնչումն առանձին կերպով ձայն է տալիս գլխի մեջ. եթե մատներով ականջներս փակենք և բարձրաձայն արտասանենք ձայնեղ հնչյունները, ինչպես՝ Զ, Ժ, Վ, Բ, Գ, Դ, Ր, Մ, նույնպես և ձայնավորները, ձայնը մեզ համար զգալի կլինի գլխի մեջ. մինչդեռ այդ չի լինիլ համապատասխան անձայն հնչյունների արտաբերության ժամանակ, ինչպես են՝ Ս, Շ, Ֆ, Պ, Կ, Տ։ Ձայնալարերի թրթռոցն զգացվում է և խռչակի վրա դրսի կողմից, երբ ձայնեղ հնչյունների արտասանության ժամանակ մատներս թեթև կերպով դնում ենք խռչակի վերին մասի վրա։

Բոլոր հնչյունների մեջ ևս կա աղմուկ, բայց տարբեր չափով։ Նախ՝ անձայն աղմկավոր հնչյուններն, ինչպես տեսանք, միմիայն աղմուկից են կազմված։ Ապա՝ ձայնեղ հնչյուններն ևս իրենց ձայնաբանական (ակուստիկ) արժիքով, իրենց գործած լսողական տպավորությամբ մեկակերպ չեն, ինչպես միակերպ չեն նաև ձայնի և աղմուկի փոխադարձ հարաբերությամբ։ Որքան ավելի լայն է բացված օդի անցքը բերանի մեջ, այնքան ավելի զգալի է ձայնը. և ընդհակառակն, որքան ավելի նեղ է այդ անցքը, այնքան ավելի ուժեղ է աղմուկը։ Այս նկատմամբ՝ ձայնեղ

հնչյունները բաժանվում են երեք տեսակի՝ ձայնավորներ, ձայնորդ բաղաձայններ և ձայնեղ աղմկավոր բաղաձայններ։

Ձայնավորների՝ Ա, Օ(Ո), Ու, Է(Ե), Ի, Ը՝ արտաբերության ժամանակ բերանի բացվածքն ընդհանրապես ավելի լայն է, խոսքի գործարանները չեն կպչում միմյանց և ոչ էլ այնքան մոտենում միմյանց, որ արտաշընչվող օդը մի արգելքի հանդիպի և օդի մեծ շփում, ուրեմն և մեծ աղմուկ առաջ գա բերանի մեջ։ Լիաձայն խոսելիս,— և մենք սովորաբար լիաձայն ենք խոսում,— ձայնալարերը լի հնչում են, և նրանց ձայնը լավ լսելի է լինում, իսկ թեթև աղմուկը, որ բերանում առաջանում է ձայնավորների արտաբերության ժամանակ, բոլորովին խեղդվում է ձայնից և անզգալի է մնում, այնպես որ մեզ թվում է, թե դրանք ձայնալարերի մաքուր հնչյուններ են, և բերանը միայն ռեզոնատորի դեր է կատարում։ Բայց թե ձայնավորների հետ էլ խառն կա բերանի աղմուկ, այդ լավ երեվում է շշունջի, «փսփսալով» խոսելու ժամանակ, երբ ձայնալարերը բոլորովին չեն հնչում, ուրեմն և ինչպես բոլոր հնչյունները, նույնպես և շշնջական ձայնավորները բոլորովին անձայն են մնում և կազմված են լինում միայն աղմուկից, որ առաջանում է օդի շփումից։ Այդ ժամանակ բերանի խոռոչն ու քթափողն ստանում են այնպիսի դրություն, որ հարկավոր է այս կամ այն հնչյունի արտաբերության համար, և օդի շփումից առաջացած աղմուկն այդ տարբեր դրությունների պատճառով դառնում է այս կամ այն շշնջական հնչյունը, որ և մենք լսում ենք։ Լիաձայն խոսելիս՝ ձայնավորների արտաբերության ժամանակ այդ աղմուկը բոլորովին անլսելի է մնում, և ձայնավորները թողնում են հստակաձայն հնչյունների տպավորություն։

Նույնպես հստակաձայն հնչյունների տպավորություն են թողնում և **ձայնորդ բաղաձայնները՝** Լ, Ր, Ռ, Ն, Մ, որոնցից Լ, Ր, Ռ կոչվում են նայ *(թաց, կակուղ)* իբրև ձայնավորներին ավելի մոտիկ հնչյուններ. բայց կան քերականներ, որոնք նայ կոչում են նաև ռնգային Ն, Մ, հնչյունները։ Դրանց մեջ աղմուկ ավելի կա, քան ձայնավորների մեջ, բայց և այնպես դրանց արտաբերության ժամանակ էլ իշխում է ձայնը, և աղմուկը խեղդվում է ձայնից, թեպետ ոչ այնպես, ինչպես ձայնավորների. որովհետև մինչ վերջիններիս մեջ աղմուկը բոլորովին անլսելի է մնում, նայ բաղաձայնների հետ միացած աղմուկը սուր ուշադրությամբ լսելի է լինում, սովորական խոսելիս ավելի, քան երգելիս։ Այս բաղաձայնների համեմատաբար ավելի հստակաձայն և ձայնավորներին մոտիկ լինելը աղմուկի լսելիության տեսակետից՝ շատ լավ երևում է, երբ միմյանց հետ համեմատում ենք այդ Մ, Ն, Լ, Ր, Ռ հնչյունները և **ձայնեղ աղմկավոր հնչյուններ՝** Զ, Ժ, Ղ, Վ, Բ, Գ, Դ, Ջ, Ձ։ Այս վերջինների մեջ ևս աղմուկի հետ միացած է ձայնը, բայց արդեն ոչ թե ձայնն է իշխում աղմուկի վրա, այլ աղումկն է իշխում ձայնի վրա. դրա համար և դրանք դրվում են իբրև աղմկավոր հնչյուններ։

Այսպես ուրեմն խոսքի հնչյուններն ըստ իրենց մեջ միացած ձայնի և աղմուկի հարաբերության լինում են.

1. Ձայնավորներ, որոնց մեջ գերիշխում է ձայնը, և թեթև աղմուկը բոլորովին անլսելի է մնում։

2. Ձայնորդ կամ նայ բաղաձայններ, որոնց մեջ իշխում է դարձյալ ձայնը, բայց աղմուկն ավելի է, քան ձայնավորների մեջ և նույնիսկ կարող է լսելի լինել. բայց դրանք աղմուկի հարաբերության տեսակետից ավելի մոտ են ձայնավորներին, քան մյուս բաղաձայններին. ուստի և հաճախ դրվում են իբրև հատակաձայն հնչյուններ, ինչպես և ձայնավորները։

3. Ձայնեղ աղմկավոր բաղաձայններ, որոնց մեջ իշխում է աղմուկը։

4. Անձայն աղմկավոր բաղաձայններ, որոնք կազմված են միայն աղմուկից, ինչպես՝ Ս, Շ, Խ, Ֆ, Պ, Կ, Տ, Փ, Ք, Թ, Ծ, Ձ, Ց։

31. Հայոց լեզվի ձայնավորները և նրանց արտաբերությունը։— *Մեր նոր գրական լեզվի մեջ ձայնավորները թվով վեց են՝ Ա, Է(ե), Ը, Ի, Օ(Ո), Ու։ Բարբառների մեջ կան նաև ուրիշ ձայնավորներ, որոնք այստեղ նկատի չեն առնվում իբրև բարբառային հնչյուններ, որոնց համար նույնիսկ տառեր չունենք, ինչպես են մի քանի բարբառների մեջ ֆրանսերենի u, գերմաներենի ü հնչյունը, ֆրանսերենի eu, գերմաներենի ö հնչյուններ և ուրիշները։ Դրանք գրական լեզվի մեջ ընդունված չեն, և եթե մի քանի անհատներ գրական լեզվով խոսելիս այս կամ այն բառի արտասանության մեջ մտցնում են այդ և ուրիշ ձայնավոր հնչյուններ, այդ միայն բարբառային ազդեցություններ են։*

Հայերենի բոլոր վեց ձայնավորներն էլ բերանի մաքուր հնչյուններ են, որոնց արտաբերության ժամանակ քթափողը փակված է մնում փափուկ քիմքի առագաստով, և իբրև ռեզոնատոր հանդիսանում է միայն բերանի խոռոչը։ Մեր գրական լեզվի մեջ չկան ռնգային կամ ռնգայնացած ձայնավորներ, ինչպես ուրիշ լեզուների մեջ, օրինակ՝ ֆրանսերենում, որոնց ձայնավորների արտասանության ժամանակ քթափողը կարող է ներսից նաև բաց մնալ, որով իբրև ռեզոնատոր հանդիսանում է նաև քթափողը, և Ա, Է(ե), Օ(Ո) և այլ ձայնավորները ստանում են ռնգային բնավորություն։

Հայերենի բոլոր ձայնավորները, բացի Ը ձայնավորից, արտասանվում են լիաձայն և արտաբերվում են ձայնալարերի զորեղ տատանումով. Ը ձայնավորի արտաբերության ժամանակ միայն ձայնալարերը թույլ են թրթռում, ուստի և Ը ձայնավորը, նույնիսկ լիաձայն խոսելիս, սովորաբար թույլ է մնում։ Այդ պատճառով և մեր այս ձայնավորը խոսքի մեջ շեշտ չի կրում և ընկնում է բառերի անշեշտ վանկերի մեջ, ինչպես՝ գըտնե՛լ, մըտա՛լ, պա՛տը, թեպետ և հարկավոր դեպքերում միշտ կարող ենք նաև ուժեղ և լիքն արտասանել։ Ձայնափոխությամբ էլ այս Ը ձայնավորը ծագում է լիաձայն Ի, Ու, երբեմն և ուրիշ ձայնավորներից, երբ վերջիններս անշեշտ մնալով՝ թույլ են արտաբերվում, ինչպես՝ սի՛րտ, սըրտի՛, գի՛ր, գըրե՛լ։ Այսպես և ուրիշ բառերի մեջ այս Ը ձայնավորը պատմականորեն ծագում է անշեշտ վանկերի Ի, Ու, Ա, Ե, Ո ձայնավոր-

ներից՝ իբրև հետևանք սրանց թույլ արտաբերության, ինչպես՝ փախուցանել, նորա դարձել են՝ փախցրնել, ընրա:

Ձայնավորների երանգը կախված է, ինչպես տեսանք, բերանի խոռոչի բացվածքից, այսինքն նրա տարածությունից ու դրությունից, իսկ վերջիններս՝ ներքին ծնոտի, շրթունքների ու լեզվի դրությունից: Ա ձայնավորի արտաբերության ժամանակ բերանը բացված է լինում ավելի, քան է(ե), Օ(Ո), Ը ձայնավորների, և ավելի ևս, քան Ու ձայնավորի արտաբերության ժամանակ: Ի ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքը ամենից փոքր է: Ներքին ծնոտի իջնելն ու բարձրանալը, ուրեմն և բերանի բացվածքի նեղանալն ու լայնանալն զգալի կլինի, երբ բութ մատով թեթև սեղմենք կզակի տակը և իրար հետևից՝ մի փոքր երկարելով մի քանի անգամ արտասանենք երկու ձայնավոր, ինչպես՝ Ի-Ա, Ա-Ի: Միայն պետք է նկատի ունենալ, որ կան նաև անհատական տարբերություններ ևս:

Շրթունքների դրությունը կարևորություն ունի Օ(Ո) և Ու ձայնավորների համար. Օ(Ո) ձայնավորի արտաբերության ժամանակ շրթունքներն առաջ ձգված կազմում են մի բոլորակ ձև, իսկ Ու-ի արտաբերության ժամանակ ավելի ևս առաջ են ձգվում և ամփոփվում՝ օդի համար ավելի նեղ բոլորակ անցք թողնելով: Մեր ձայնավորներից այս երկուսը միայն ունեն շրթնայնացում, այսինքն արտաբերվում են առաջ ձգված և կլորված շրթունքներով: Ուրիշ լեզուների մեջ կան նաև ուրիշ շրթնայնացած ձայնավորներ:

Լեզվի դրությունը կարևորություն ունի բոլոր ձայնավորների արտաբերության համար. նրա առաջի, միջին և ետևի մասերը, նայելով ձայնավորներին, բարձրանում են դեպի կոշտ քիմքը կամ առաջաքիմքը (քիմքի առաջի կողմը), դեպի երկու քիմքի մեջտեղը— քամամեջը և դեպի փափուկ քիմքը կամ վերջաքիմքը (քիմքի ետևի կողմը): Ապա՝ այս բարձրացումը միակերպ չէ. Ի և Ու ձայնավորների համար լեզուն ավելի շատ է վեր բարձրանում. է(ե), Ը, Օ(Ո) ձայնավորների համար միջակ չափով, իսկ Ա ձայնավորի համար՝ ավելի ևս քիչ: Նույնը կարելի է ավելի որոշ կերպով պատկերացնել հետևյալ ցուցակով:

Առաջաքիմք	Քամամեջ	Վերջաքիմք	
Ի		Ու	Վերին բարձրություն
է (ե)	Ը	Օ (Ո)	Միջին բարձրություն
		Ա	Ստորին բարձրություն

Ի ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն դեպի առաջ է ձգվում, ծայրը լավ հենված է լինում ներքին կտրիչ ատամների վերին

մասին. առաջի մասը վերին բարձրությամբ քաշվելով դեպի վեր, քիմքի առաջի կողմը՝ կազմում է մի կամար. կոկորդն ևս ավելի բարձր է: է(ե) ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն նույնպես դեպի առաջ է ձգվում և առաջի մասով ուղղվում է դեպի քիմքի առաջի կողմը, միայն միջին բարձրությամբ. բացի այդ՝ լեզվի ծայրը թույլ կերպով դրված է լինում ներքին կտրիչ ատամների ետևը, բերանը մի քիչ ավելի լայն է բացվում, և կոկորդն ավելի ցածանում է: Մի քանի անգամ իրար ետևից երկարաձիգ արտասանելով Ի-է(ե), է(ե)-Ի, կնկատենք բերանի բացվածքի, լեզվի և կոկորդի դրության տարբերությունը Ի և է(ե) ձայնավորների արտաբերության ժամանակ. միայն կոկորդի իջնելը նկատելու համար՝ պետք է մատը դնել խռչակի վերին կողմի վրա:

Կան լեզուներ, որոնք (ինչպես և մեր մի քանի բարբառները) ունին «բաց» և «փակ» է(ե) ձայնավորներ: Սրանցից երկրորդի, այսինքն փակ է(ե) ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքն ավելի նեղ է լինում, ավելի մոտիկ Ի ձայնավորի արտաբերության բացվածքին. բացի այդ՝ որ գլխավորն է՝ լեզուն ավելի ձգված լարված է լինում: Իսկ բաց է(ե) ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն ավելի քիչ լարված է լինում. ավելի ազատ դրության մեջ է լինում, և բերանի բացվածքն՝ ավելի լայն: Մեր է(ե) ձայնավորը բաց է:

Ա ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն հանգիստ դրությունից վեր է քաշվում, ծայրը քիչ իջնում է դեպի ներքին կտրիչ ատամները, բայց առանց կպչելու, իսկ ետևի մասը քիչ բարձրանում է դեպի քիմքի ետևի մասը. բերանը չափավոր բացված, իսկ կոկորդն իջնում է դեպի ցած: Օ(ո) ձայնավորի արտաբերության ժամանակ լեզուն ավելի ետ է քաշվում և ծայրն ավելի հեռանում ներքին կտրիչներից. ետևի մասը միջին բարձրությամբ ուղղվում է դեպի քիմքի ետևի մասը, բերանի բացվածքը քիչ նեղանում է, իսկ կոկորդը քիչ ավելի է բարձրանում, քան Ա ձայնավորի արտաբերության ժամանակ: Նույնը լինում է և Ու ձայնավորի արտաբերության ժամանակ, միայն ավելի մեծ չափով, քան Օ(ո) ձայնավորի արտաբերության ժամանակ, այն է՝ լեզուն իր ամբողջությամբ ետ է քաշվում և իր ետևի մասով վերին բարձրությամբ մոտենում է քիմքի ետևի մասին, բերանի բացվածքն ավելի ևս նեղանում է, և կոկորդն ավելի բարձրանում, քան Օ(ո)-ի արտաբերության ժամանակ: Բացի այդ, ինչպես տեսանք, Օ(ո) և Ու ձայնավորները շրթնայնացած են:

Լեզվի վերին, միջին և ստորին բարձրացումները ետևի մասում, ինչպես և բերանի բացվածքը և կոկորդի դրությունը Ու, Օ(ո), Ա ձայնավորների արտաբերության ժամանակ, նույնպես կարելի է նկատել, եթե մի քանի անգամ իրար ետևից արտասանենք Ու-Օ(ո)-Ա: Մի փոքր ավելի դժվար է նկատել լեզվի առաջի կողմում և ետևի կողմում ունեցած բարձրացումների տարբերությունը միմյանցից, բայց մի քանի անգամ ետևեետև արտասանելով Ու-Օ(ո)-Ա և Ի-է(ե), սրան էլ կարելի է վարժվել:

Ը ձայնավորի արտաբերության ժամանակ բերանի բացվածքը մի

փոքր պակաս է, իսկ կոկորդի դրությունը մի քիչ ավելի բարձր է, քան է(ե) ձայնավորի արտաբերության ժամանակ. լեզվի առաջի մասը մի փոքր իջնում է, իսկ միջին մասը միջին բարձրությամբ ուղղվում է դեպի երկու քիմքի մեջտեղը։ Դա միջին կարգի միջին բարձրության ձայնավոր է. մինչդեռ առաջի կարգի ձայնավորներ են՝ է(ե) միջին բարձրության, Ի վերին բարձրության, իսկ ետևի կարգի ձայնավորներ են՝ Ա ստորին բարձրության, Օ(Ո) միջին բարձրության և Ու վերին բարձրության։

Պետք է նկատի ունենալ, որ այս առաջի, միջին և ետևի կարգերը, ինչպես և վերին, միջին, ստորին բարձրության աստիճանները, միայն ընդհանուր ձևով են որոշում ձայնավորների արտաբերության տեղը։ Առանձին անհատների մեջ, թե անհատական տարբերությամբ և թե բարբառային ազդեցությամբ, միևնույն ձայնավորի արտաբերությունը միշտ կարող է լինել մի քիչ ավելի առաջի կամ մի քիչ ավելի ետևի կողմում, և լեզուն էլ կարող է մի քիչ ավելի կամ պակաս աստիճանով բարձրանալ դեպի քիմքը։ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Խոսելիս ձայնավորները, ինչպես և բաղաձայնները, հատ-հատ չենք արտաբերում, այլ իրար հետ կապված, ուստի միևնույն ձայնավորը տարբեր-տարբեր կերպով է արտաբերվում, նայելով թե առաջից կամ ետևից ինչ հնչյուն է գալիս, ինչպես՝ մա, նա, լա, յա, ամ, ան, ալ, այ և այլն։ Ա ձայնավորի հնչյունն ու արտաբերությունն այս դեպքերում տարբերվում է. որովհետև, որպեսզի երկու հնչյուն իրար հետ կապվեն, պետք է երկրորդ հնչյունի սկիզբը համապատասխան լինի առաջին հնչյունի վերջին, բացի այդ՝ պետք է երկրորդ հնչյունի արտաբերությունը կարողանա պատրաստվել առաջինի արտաբերության հետ միաժամանակ. ուրիշ խոսքով իրար հետ կապված երկու հնչյունի արտաբերության շարժումները պետք է հարմարվեն միմյանց, որպեսզի կարելի լինի մի անգամից արտաբերել։ Իսկ այդպիսի հարմարեցման ժամանակ լեզվի, կոկորդի և այլ շարժուն մասերի դրությունը միշտ փոփոխության է ենթարկվում, որից և ամեն անգամ տարբերվում է հնչյունների երանգը։ Բայց մենք սովորական կյանքում ուշադրություն չենք դարձնում այդպիսի նուրբ տարբերություններին վրա և առնում ենք, դիցուք Ա ձայնավորը, մի ընդհանուր որակով ամեն դեպքում իբրև միևնույն հնչյունը։

32. Բաղաձայնների տեսակները ըստ արտաբերության եղանակի և տեղի։— Բաղաձայններն առաջանում են, երբ օդի արտամղման ժամանակ բերանի մեջ կազմվում է մի փակվածք կամ նեղվածք։ Փակվածքն օդի ճնշումից վայրկենապես պայթելով բացվում է աղմուկով, իսկ նեղվածքի պատճառով օդը շփվում է բերանի նեղվածք կազմող մասերին և աղմուկ է հանում։ Երկու դեպքում էլ առաջացած աղմուկները բաղաձայն հնչյուններ են։ Բաղաձայններն, ուրեմն, ըստ այսմ երկու տեսակ են՝ 1) **փակվածքի բաղաձայններ**, որոնք կոչվում են նաև **պայթական** կամ **վայրկենական**, որովհետև պայթյունի աղմուկը վայրկենական տևողություն ունի, ինչպես՝ Պ, Բ, Տ, Դ, Կ, Գ. և 2) **նեղվածքի բաղաձայններ**,

որոնք կոչվում են նաև շփական կամ տևական, որովհետև շփումից առաջացած աղմուկը, որ է բաղաձայնը, կարելի է ուզածի չափ երկար տևողությամբ արտասանել, ինչպես՝ Ս, Զ, Շ, Ժ, Խ, Ղ, Ֆ, Վ։

Բաղաձայնները՝ նայելով թե աղմուկի հետ միասին հնչում են ձայնալարերը, թե չէ՝ լինում են ձայնեղ և անձայն։ Անձայն բաղաձայնները, ինչպես՝ պ, կ, տ, ս, շ, խ, ֆ, ավելի մեծ ուժով ու ճնշումով են արտաբերվում, իսկ ձայնեղները, ինչպես՝ բ, գ, դ, զ, ժ, ղ, վ, ավելի թույլ ուժով, որովհետև այս երկրորդ դեպքում արտաշնչության ուժի մի մասը գնում է ձայնալարերը տատանելուն։ Այս պատճառով անձայն բաղաձայնները կոչվում են նաև ուժեղ կամ կոշտ, իսկ ձայնեղները՝ թույլ կամ փափուկ։ Պայթական ձայնեղ բաղաձայնների արտաբերության ժամանակ՝ ձայնալարերի տատանումը կարող է սկսվել, նայելով բարբառներին, բաղաձայներին հատուկ աղմուկից թե՛ առաջ և թե՛ պայթյունի հետ միաժամանակ։ Հայոց լեզվի արևելյան բարբառներին հատուկ է առհասարակ առաջին տեսակի արտասանությունը, այսինքն՝ ձայնալարերը հնչում են պայթյունից ավելի կամ պակաս տևողությամբ առաջ։

Բաղաձայնների մի ավելի կարևոր դասավորություն լինում է նայելով այն տեղերին, ուր առաջանում է բաղաձայնի բնորոշ աղմուկը։ Բաղաձայնների մեծ մասի արտաբերության ժամանակ քթափողի անցքը փակված է լինում քիմքի առագաստով, և օդը միայն բերանով է անցնում և առաջ բերում մաքուր բերանային բաղաձայններ. Մ, Ն բաղաձայնների արտաբերության ժամանակ միայն՝ քթափողի անցքը բաց է մնում, և օդը միաժամանակ նաև քթափողով է դուրս գալիս, առանձին երանգ տալով այդ բաղաձայններին, որոնք և կոչվում են ռնգային բաղաձայններ։

Բերանի մեջ փակվածքը և նեղվածքը կազմվում են շրթունքների իրար կպչելով կամ մոտենալով, լեզվի մոտենալով կամ կպչելով վերին կտրիչ ատամներին և կոշտ կամ փափուկ քիմքին։ Նայելով բերանի այս զանազան դրություններին՝ բաղաձայնների բնորոշ աղմուկն առաջանում է զանազան տեղերում, և բաղաձայններն ըստ այնմ էլ բաժանվում են զանազան տեսակների և կոչվում են՝ շրթնային, ատամնային, քմային և այլն։ Միայն պետք է նկատի ունենալ, որ զանազան հեղինակներ այս կամ այն բաղաձայնը տարբեր ձևով են կոչում, նայելով թե այդ բաղաձայնի արտաբերությանը մասնակցող գործարաններից ո՛րին ավելի մեծ նշանակություն են տալիս։

33. Հայոց լեզվի բաղաձայններն ու նրանց արտաբերությունը։— 1. Շրթնային բաղաձայններից՝ պայթականներ՝ Պ, Բ, առաջանում են երկու շրթունքի իրար կպչելով. դրանք երկշրթնային բաղաձայններ են։ Անձայն Պ բաղաձայնի արտաբերության համար շրթունքներն ավելի պինդ են իրար սեղմված լինում և ավելի մեծ ուժով պայթելով բացվում են արտաբերության վայրկյանին, քան ձայնեղ Բ բաղաձայնի։ Շփական Ֆ, Վ բաղաձայնների արտաբերության համար վերին կտրիչ ատամները

հենվում են ներքին շրթունքին, բայց այնպես որ օդի համար անցք է մնում. օդի հոսանքը շփվում է շրթունքներին և առաջացնում անձայն Ֆ բաղաձայնը և ձայնեղ՝ Վ։ Դրանք ատամնաշրթնային բաղաձայններ են։ Ուրիշ լեզուների մեջ կա նաև երկշրթնային Վ, որ առաջանում է երկու շրթունքի իրար մոտենալով։

2. Ատամնային բաղաձայններից՝ պայթական Տ, Դ բաղաձայնների արտաբերության ժամանակ շրթունքները թեթև զատված են լինում միմյանցից. լեզուն, որի ծայրը հենված է լինում վերին կտրիչների տակի եզրին, փակում է օդի անցքն ատամների միջև. արտաբերության ժամանակ պայթելով բացվում է այս փակվածքը, և առաջանում անձայն Տ և ձայնեղ Դ։ Շփական Ս, Զ բաղաձայնների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը քիչ խոնարհած է լինում և ներքին կտրիչներին կպած, որով օդի համար նեղ անցք է մնում ատամների միջև, որոնց հետ և օդի շփումից առաջանում է անձայն Ս և ձայնեղ Զ։

3. Ինգային բաղաձայններից Մ՝ շրթունքների փակվածքի ձայնեղ հնչյուն է, բայց ոչ պայթական։ Այս հնչյունի արտաբերության համար շրթունքները ճիշտ նույն ձևով փակվում են, ինչպես Բ բաղաձայնի համար, բայց չեն բացվում, օդի համար ազատ անցք է մնում քթափողի միջով, և հնչյունը կարելի է երկարել։ Իսկ ինգային Ն բաղաձայնն ատամնային փակվածքի ձայնեղ հնչյուն է, դարձյալ ոչ պայթական. առաջանում է ինչպես Դ բաղաձայնը, միայն փակավածքը չի բացվում, օդն անցնում է քթափողով, և կարելի է հնչյունն երկարել։ Սակայն այս Ն հնչյունը Գ, Կ, Ք կատկային բաղաձայններից առաջ դառնում է ֆմայինի. փակվածքը կազմվում է լեզվի ետևի երեսով և կոշտ ու փափուկ քիմքերի մեջտեղի մասով, ինչպես «անգամ», «ընկեր» բառերի մեջ։

4. Լեզվային բաղաձայններ են՝ Լ, Ր, Ռ նայ հնչյունները։ Դրանցից Ռ բաղաձայնի արտաբերության ժամանակ բերանը չափավոր բացված է լինում. վերին կտրիչ ատամների լինդին մոտեցած լեզվի ծայրը, ձայնալարերի հնչելիս, թեթև ձգված բարձրանում է դեպի առաջքիմքը և օդի շփումից դողդողում է։ Ր բաղաձայնը նույն Ռ հնչյունն է, միայն լեզվածայրի դողդողոցը շատ քույլ է։ Այս երկուսի արտաբերության ժամանակ աղմուկը գրեթե անլսելի է մնում, բայց և այնպես դրանց հետ միացած աղմուկի աստիճանը տարբեր է՝ նայելով բարբառներին։ Երբ լեզվի առաջի մասը սեղմվում է ատամներին, և բացվածքը նեղանում է, իսկ արտաբերության ուժը սաստիկ է, այդ ժամանակ լեզվի առաջ ընկած մասը դողում է մի նեղ անցքի մեջ, և Ր բաղաձայնի հետ լսելի է լինում Ս, Շ, Ժ հնչյունների մի աղմուկ։ Մի քանի բարբառների մեջ իշխում է այս աղմուկը, և նույնիսկ Ր բաղաձայնին փոխարինում են Ժ, Շ. ինչպես՝ երեք, մարդիկ, Մարթա, Վարդան արտասանում են՝ ժեք, մաշտիկ, Մաշտա, Վաշտան։ Գրական լեզվի մեջ, սակայն, դրանք (Ր, Ռ) հստակաձայն նայ հնչյուններ են։

Լ՝ բաղաձայնի արտաբերության ժամանակ նույնպես բերանը չափա-

վոր բացված է լինում. ձայնալարերի հնչելիս լեզվի ծայրը սեղմվում է վերին կտրիչներին, լեզվի երկու կողմերում և բերանի անկյուններում կազմվում են նեղ անցքեր, որոնցով անցնում է օդը. l հնչյունն էլ, ուրեմն, առաջանում է առանց փակվածքի և պայթական չէ։ Մեր l բաղաձայնը երկկողմանի է, որովհետև օդի անցքը կազմվում է լեզվի երկու կողմում. բայց կա նաև միկողմանի l, որի արտաբերության համար անցք կազմվում է միայն բերանի մի կողմում։ Այդ անցքերը կարող են լայն կամ նեղ լինել, և l հնչյունը կարող է լինել ըստ այնմ բաց կամ փակ։ Հայերենում, օրինակ, «լա» վանկի մեջ l հնչյունը բաց է, ֆրանսերեն la վանկի մեջ՝ l հնչյունը փակ է, մեր բարբառների մեջ էլ կա «լա» փակ l-ով արտասանություն. ռուսերենում ля ավելի ևս փակ է, բացի այդ՝ l հնչյունը նաև փափկացրած է։

5. **Քմային** բաղաձայններ են՝ շ, ժ, որոնք երկուսն էլ նեղվածքի շփական հնչյուններ են։ Դրանց արտաբերության ժամանակ շրթունքներն ատամներից զատվում և առաջ են ընկնում. ատամներն իրար մոտեցած են լինում առանց կպչելու միմյանց. լեզվի ծայրը դեպի կոշտ քիմքն է բարձրանում առանց կպչելու նրան. այս երկուսի մեջ կազմվում է մի նեղվածք, որի մեջ առաջանում են անձայն շ, ձայնեղ ժ հնչյունները։

6. **Կատակային** կամ վերջաքմային բաղաձայններից **պայթական** կ, գ հնչյունների արտաբերության ժամանակ լեզվի ծայրը խոնարհած՝ թեթև սեղմվում է ներքին կտրիչների արմատներին ընդի մոտ. լեզվի ետևի երեսը կպչում է փափուկ քիմքին (վերջաքիմք, կատիկ), որից պայթելով բաժանվում է շնչի արտամղումով, և առաջանում են անձայն կ, ձայնեղ գ։ **Շփական** խ, ղ բաղաձայնների արտաբերությունը նման է կ, գ բաղաձայնների արտաբերությանը, բայց լեզվի ետևի երեսը չի կպչում փափուկ քիմքին, այլ միայն մոտենում է նրան և նեղվածք կազմում, ուր և օդի շփումից առաջանում են անձայն խ, ձայնեղ ղ բաղաձայնները։ Այս չորս հնչյունները՝ կ, գ, խ, ղ սովորաբար կոչում են **կոկորդային**. այսպես կոչվել են ոչ թե կոկորդում, այլ բերանի ետևի մասում, կոկորդին մոտիկ արտասանվելու համար։ Դրանք կատակային կամ վերջաքմային հնչյուններ են։

Կատակային կ, գ, ք բաղաձայնները գրական լեզվի մեջ ի, ե ձայնավորներից առաջ արտաբերվում են իբրև **ճմային** կամ **առաջաճմային** բաղաձայններ, ինչպես՝ կիր, գիր, ֆիր բառերի մեջ։ Դրանց արտաբերության ժամանակ լեզվի առաջի մասը բարձրանում է դեպի կոշտ քիմքը կամ առաջաքիմքը, կպչում է նրան և ապա բացվում պայթելով։ Արտաբերության այս փոփոխությունը, որ կոչվում է **ճմայնացում** (պալատալիզացիա, լատ. պալատում «քիմք», «կոշտ քիմք» բառից), առաջ է գալիս ի, ե ձայնավորների արտաբերության տեղի ազդեցությամբ. կ, գ, ք արտաբերելիս միաժամանակ պատրաստվում ենք և ի, ե արտասանելու, ուստի և լեզվի առաջի մասն է բարձրանում դեպի քիմքը։ կի, գի, քի կապակցությունների մեջ քմայնացած կ, գ, ք բաղաձայններից հետո ի ձայ-

նավորն էլ արտասանվում է, իսկ կե, գե, քե կապակցությունների մեջ քմային կ, գ, ք արտասանելիս, կարծես, ձգտում ենք միաժամանակ ի արտասանելու, բայց չենք արտասանում, այլ ե ձայնավորն ենք արտաբերում։ կ, գ, ք բաղաձայնների այս բարդացումը կամ քմայնացումը, ինչպես ասվեց, գրական լեզվի մեջ երևում է միայն կի, գի, ֆի, կե, գե, ֆե կապակցությունների մեջ. իսկ կա, գա, ֆա, կո, գո, ֆո, կու, գու, ֆու, կը, գը, ֆը կապակցությունների մեջ, ինչպես և ուրիշ դեպքերում, կ, գ, ք բաղաձայնները կատկային կամ վերջաքմային են։ Բարբառների մեջ. սակայն, այս վերջին կապակցությունների համար ևս կա կ, գ, ք հնչյունների քմայնացած արտաբերություն, և մինչև անգամ ուրիշ բաղաձայնների համար էլ, ինչպես՝ լ, մ, ն, երևում է երբեմն քմայնացումը կամ փափկացումը ե ձայնավորից առաջ, երբեմն և հետո։

7. Հագագային շփական հնչյուն է հ, որի արտաբերության ժամանակ բերանի խոռոչն ընդունում է նախորդ կամ հաջորդ ձայնավորների արտաբերության համար հարկավոր դրությունը. օդի հոսանքն անցնելով բերանի խոռոչով՝ առաջ է բերում շնչի (հագագի) թեթև աղմուկ, որ բնախոսորեն հաջորդ կամ նախորդ ձայնավորի անձայն, այսինքն շշընջական ձայնավոր հնչյունն է, բայց ձայնաբանորեն թողնում է հագագային հ հնչյունի տպավորությունը։ Դա անձայն ճագագ է։ Բարբառների մեջ կա նաև սրա համապատասխան ձայնեղ ճագագ, որի արտաբերությանը մասնակից է ձայնը, բայց աղմուկն իշխում է ձայնի վրա և լսելի է լինում։

84. Բարդ բաղաձայններ։— Բարդ բաղաձայնները կազմվում են երկու կամ երեք հնչյունի այնպիսի բաղադրությունից, որի մեջ երկու հընչյունը մեկ արտաբերությամբ են առաջանում և ձայնաբանորեն իբրև մեկ հնչյուն են ըմբռնվում։ Դրանք երկու տեսակ են՝ հագագավոր և կըրկնակ բաղաձայններ։

1. Հագագավոր անձայն բաղաձայնները՝ փ, թ, ք կազմվում են պայթական պ, տ, կ բաղաձայններից և հետևից եկող հագագից— հ հնչյունից իբրև պհ, տհ, կհ, որոնք երկուսը միանում են ի մի նոր հնչյուն։ Այս նկատմամբ պ, տ, կ բաղաձայնները, որ անհագագ են, կոչվում են լերկ կամ նուրբ. բ, դ, գ ձայնեղները, որ նույնպես անհագագ են, կոչվում են միջակ, իսկ փ, թ, ք հագագավորները՝ թավ։ Լերկ բաղաձայնների արտաբերության պայթումից անմիջապես հետո գալիս է ձայնալարերի տատանումը կամ հաջորդ ձայնավորի արտաբերությունը, ինչպես՝ պայտ բառի մեջ պա=պ+ա. մինչդեռ թավ հնչյունների արտաբերության ժամանակ պայթումին անմիջապես չի հետևում ձայնավորը, այլ այդ երկու հնչյունի մեջ պայթումից հետո մտնում է հ հագագը, ինչպես՝ փայտ բառի մեջ փա=պհա, փայտ իբրև պհայտ, միայն պհ մեկ արտաբերությամբ արտասանած։ Մեր փ, թ, ք հագագավորներն անձայն են. բայց բարբառների մեջ կան նաև ձայնեղ հագագավոր բաղաձայններ, որոնց մեջ բհ, դհ, գհ կապակցությունները միանում և մի հնչյուն են կազմում։

2. Կրկնակ կամ կես–պայթական (կես–շփական) *բաղաձայններ են՝ Մ, Ջ, Յ, Ճ, Ձ, Ջ, որոնք բաղադրվում են մի պայթական Տ կամ Դ կամ Թ բաղաձայնից և շփական Ս, Զ, Շ, Ժ բաղաձայնների մեկից։ Այս կըրկնահնչյուն բաղաձայններն էլ առաջանում են մեկ արտաբերությամբ և այնպես, որ բաղադրված հնչյունի մեջ բաղադրության երկու բաղաձայնները միասին իբրև մեկ հնչյուն են զգացվում։ Օրինակ՝ Յ բաղաձայնի մեջ կան ՏՍ կամ ԹՍ բաղաձայնների տարրերը, այդ պատճառով և, օրինակ՝ հին* արտասուք *բառը դարձել է նախ* արտսուք, *և ապա՝ Տ հընչյունի հագագավորումով՝* արցունք. *կրտսեր բառը կա և կրցեր ձևով. պատասխան դարձել է նախ պատսխան, ապա նույնպես Տ հնչյունի հագագավորումով՝ բարբառների մեջ՝ պացխուն. բայց Յ բաղաձայնը ձայնաբանորեն տարբերվում է տս կամ թս կապակցությունից, և կրտսեր բառի մեջ տս նույն չէ զգացվում, ինչ որ կրցեր բառի մեջ Յ։ Ինչպես որ պայթական Տ, Դ, Թ բաղաձայնները երեք տեսակ են, նույնպես և համապատասխան ձևով երեք տեսակ են* ատամնային կրկնակները՝ *անձայն լերկ Մ (ՏՍ), ձայնեղ միջակ Ջ (ԴՋ), անձայն թավ Յ (ԹՍ), նույնպես* ատամնա–ֆմային կրկնակները՝ *անձայն լերկ Ճ (ՏՇ), ձայնեղ միջակ Ջ (ԴԺ), անձայն թավ Չ (ԹՇ)։ Առաջինները կազմվում են ատամնային Տ, Դ և Ս, Զ հնչյունների բաղադրությունից իբրև ՏՍ, ԴՋ. թավի հետ միանում է և հագագը իբրև ԹՍ. իսկ երկրորդները կազմվում են ատամնային Տ, Դ և քմային Շ, Ժ հնչյուններից, իբրև ՏՇ, ԴԺ. թավի հետ միանում է և հագագն իբրև ԹՇ։*

85. Հայոց լեզվի բաղաձայնները

	Ձայնորդ		Ա ղ մ կ ա վ ո ր							
			Պ ա ր զ				Բ ա ր դ			
			Շփական		Պայթական		Պայթ. հագա-ղավոր	Կրկնակ (կես-պայթ.)		
					Միջակ	Լերկ	Թավ	Միջակ	Լերկ	Թավ
	Ռնդային	Նայ	Ձայնեղ	Անձայն	Ձայնեղ	Անձայն	Անձայն	Ձայնեղ	Անձայն	Անձայն
Շրթնային	Մ		Վ	Ֆ	Բ	Պ	Փ			
Ատամնային	Ն		Զ	Ս	Դ	Տ	Թ	Ջ	Մ	Ց
Լեզվային		Ռ, Ր Լ								
Քմային			Ժ	Շ						
Ատամնա-քմային								Ջ	Ճ	Ջ
Կոկորդային			Ղ	Խ	Գ	Կ	Ք			
Հագագային				Հ						

36. Վանկային և անվանկային հնչյուններ և երկբարբառներ:— *Ինչպես բոլոր հնչյունները, նույնպես և խոսքի հնչյունները տարբերվում են իրենց ավելի կամ պակաս ուժով, որ կախված է հնչող մարմնի տատանումների լայնությունից[1]: Խոսքի մեջ հնչյունները սովորաբար ջոկ ջոկ չեն արտասանվում, այլ իրար հետ միացած կամ կապակցված: Հնչյունների ամենապարզ կապակցությունն է մի վանկը, որի մեջ մի ուժեղ հնչյունին առաջից կամ ետևից միանում են թույլ հնչյունները և միասին առանց ընդհատվելու արտասանվում են իբրև մի միություն: Մեր լսելիքը վանկի մեջ տարբերում է ամենամեծ ուժով արտաբերվող մի հնչյունը, որ վանկի կենտրոնն է և որի ուժեղ արտաբերության շնորհիվ կազմվում է վանկը, այսինքն առաջ է գալիս թույլ հնչյունների միացումը ուժեղին. օրինակ՝* **ան, ալ, ապ, ատ, ակ** *կապակցությունների մեջ հայտնապես առաջինը* **Ա** *հնչյունն է ականջի զարնում իր ուժով, իսկ* **նա, լա, պա, տա, կա** *վանկերի մեջ՝ երկրորդը,* **Ա** *հնչյունը. երկու դեպքում էլ վանկ կազմելու ուժն ունի* **Ա** *հնչյունը: Ըստ այսմ խոսքի հնչյունները նայելով իրենց կատարած դերին (ֆունկցիային) վանկի մեջ՝ լինում են՝ 1)* **Վանկային** *կամ վանկ կազմող հնչյուններ, որոնք վանկի մեջ արտաբերվում են ամենամեծ ուժով և որոնց միանում են նախորդ կամ հաջորդ թույլ հնչյունները, և 2)* **Անվանկային** *կամ վանկ չկազմող հնչյուններ, որոնք թույլ արտաբերվելով միանում են նախորդ կամ հաջորդ ուժեղ հնչյունին:*

Հայոց լեզվի մեջ վանկային են միայն ձայնավորները, որոնք մենակ ևս կազմում են առանձին վանկ, ինչպես՝ **ա, օ (ո), է (ե), ի, ու, ը.** *իսկ բոլոր բաղաձայնները միշտ անվանկային են: Հայերենում, լիաձայն խոսելիս, չկան վանկեր, որ կազմված լինեն միայն մեկ կամ մի քանի բաղաձայնից առանց ձայնավորի. նույնիսկ այսպիսի ձայնարկություններ՝* **կռռ, կլլբ, հմ, ֆշշ, փստ՝** *լիաձայն խոսելիս ունին իրենց մեջ* **Ը** *ձայնավորը՝* **կըռռ, կըլլբ, հըմ, ֆըշշ, փըստ:** *Կան լեզուներ, սակայն, ինչպես հին հնդկերեն, հին սլավերեն, չեխերեն, գերմաներեն, որոնց մեջ բաղաձայնները, ավելի ձայնորդները, կատարում են նաև վանկային հնչյունի դեր, այսինքն կարող են լինել վանկի մեջ ամենից ուժեղ հնչյունը: Հնդեվրոպական նախալեզվի մեջ ևս եղել են վանկային* **ո, լ, ն, մ** *հնչյուններ:*

Հայերենում ամեն մի ձայնավոր սովորաբար մեկ վանկ է կազմում, բայց ոչ միշտ. որովհետև ինչպես որ բաղաձայններն էլ կարող են վանկային հնչյունի դեր կատարել վանկի մեջ, նույնպես և ձայնավորները կարող են անվանկային հնչյունի դեր կատարել վանկի մեջ: Այսպիսի դեպքերում երկու կից ձայնավորներից մեկն արտասանվում է ուժեղ և կազմում է վանկը, իսկ մյուսը թույլ արտաբերվելով՝ առանձին վանկ չի կազմում, այլ ինչպես մի բաղաձայն միանում է նախորդ կամ հաջորդ վանկային ուժեղ ձայնավորին և միասին կազմում են մեկ վանկ: Առանձին վանկ չկազմող այսպիսի ձայնավորները կոչվում են **բաղաձայնա-**

կան ձայնավոր կամ կիսաձայն. ավելի ճիշտ կլիներ կոչել թույլ ձայնավոր։ Երկու ձայնավորների այսպիսի կապակցությունն ի մի վանկ, որի մեջ ձայնավորներից մեկը վանկային է, իսկ մյուսն անվանկային է և թույլ արտասանվելով միանում է վանկային ձայնավորին, կոչվում է երկբարբառ այս բառի ընդարձակ մտքով, ինչպես՝ այ, ոյ, ույ։

Կիսաձայն կամ բաղաձայնական (բաղաձայնի ֆունկցիա կատարող) ձայնավորները նշանակում են սովորաբար՝ ձայնավորի տակին մի կիսաբոլորակով, ինչպես՝ i̯, u̯։

87. Հայերենի երկբարբառները. կիսաձայն յ (ի) և բաղաձայն j (յոտ) հնչյունները։— Հայոց լեզվի մեջ, աշխարհաբարում, անվանկային կամ բաղաձայնական ձայնավորի դեր կատարում է միայն ի ձայնավորը, որ այս դեպքում նշանագրվում է յ տառով։ Նույնը եղել է նաև հին հայերենում, որի մեջ նույնիսկ ի նախդիրը ձայնավորից առաջ դարձել է անվանկային ի, օրինակ՝ ի տուն, բայց յաշխարհ։ Մեր նոր լեզվի մեջ այս բաղաձայնական ի ձայնավորը կամ յ-ն միանում է թե նախորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են ընկնող երկբարբառներ՝ այ, ոյ, ույ, եյ, և թե հաջորդ վանկային ձայնավորի հետ, որով կազմվում են բարձրացող երկբարբառներ՝ յա, յո, յուի, յե, յի։

Մեր վանկային ի ձայնավորը և անվանկային կամ բաղաձայնական (կիսաձայն) յ ձայնավորը իսկապես միևնույն հնչյունն են. երկուսի արտաբերության տեղը միևնույնն է և երկուսն էլ միևնույն որակն ունեն և իրարուց տարբերվում են միայն իրենց ուժով. յ հնչյունը թույլ ի ձայնավոր է։ Չպիտի շփոթել մեր այս յ հնչյունը, որ որակով ձայնավոր է, լեզուների մեջ շատ տարածված յոտ կոչված (j տառը) հնչյունի հետ, որ միջաքմային կամ առաջաքմային շփական ձայնեղ բաղաձայն է, ինչպես գերմաներեն ja, jener բառերի մեջ, կամ ռուսերեն я, своя, свое, свою, шью բառերի մեջ (я, ё, ю, շեշտված=ja, jo, ju)։ «ի» ձայնավորի և այս j (յոտ) հնչյունի արտաբերության տեղն ևս միևնույնն է և այս երկուսը միմյանցից տարբերվում են միայն արտաբերության տեղի նեղվածքի մեծությամբ, այն է՝ յոտի (j) արտաբերության ժամանակ լեզվի և առաջաքիմքի միջոցը (միջի տարածությունը) ավելի նեղ է, ուստի օդի շփումն ավելի մեծ է, և աղմուկն է իշխում ձայնի վրա. մինչդեռ ի ձայնավորի արտաբերության ժամանակ այդ նեղվածքը մի քիչ լայնանում է, ուստի օդի շփումը պակասում է, աղմուկը թուլանում է, և ձայնն է իշխում աղմուկի վրա։ Բաղաձայնական ի ձայնավորը, որ է՝ յ տառի հնչյունը, ունի ի ձայնավորի այս հատկությունը. նրա արտաբերության ժամանակ ևս աղմուկն անզգալի է, թեպետ և նրա արտաբերության տեղը մի փոքր ավելի նեղ է, քան վանկային ի ձայնավորի, և մեր յ հնչյունն իսկապես փակ ի ձայնավոր է։ Բայց հենց որ մեր այս յ հնչյունի արտաբերության տեղը, լեզվի և առաջաքիմքի միջոցը (արանքը) մի փոքր ավելի ևս նեղանում է, մեր յ հնչյունն էլ հեշտությամբ դառնում է j (յոտ), և մեր մի քանի, ավելի արևմտյան բարբառների մեջ, երբեմն նաև գրական լեզվի

մեջ, այդպես էլ իբրև բաղաձայն արտասանում են մեր կիսաձայն յ հընչյունը։ Այդ պատճառով և մենք օտար լեզուների բաղաձայն j հնչյունը առանց դժվարության տառադարձում ենք մեր կիսաձայն յ գրով, ինչպես ռուսերենի своя, свою=սվայա՛, սվայո՛ւ, և մեր յ հնչյունն էլ տառադարձում ենք կամ i ձայնավորով, կամ, ինչպես գերմաներենում, j բաղաձայնով, ինչպես օրինակ՝ մեր ազգանունների վերջավորությունները գրում են թե՛ ian և թե՛ jan—Terterian, Terterjan։

Պետք է նկատել, որ կան քերականներ, որոնք վանկ չկազմող ձայնավորները, ինչպես և մեր յ հնչյունը երկբարբառների մեջ, դնում են իբրև բաղաձայն։ Այս դեպքում հնչյունների բաժանման համար իբրև ձայնավոր ու բաղաձայն նկատի է առնվում ոչ թե նրանց արտաբերությունն ու երանգը (որակը), այլ նրանց պաշտոնը (ֆունկցիան) վանկի մեջ։ Ըստ այսմ, ուրեմն, ձայնավոր կոչվում են այն հնչյունները, որոնք վանկային են, այսինքն վանկ են կազմում, ինչպես են մեր վեց ձայնավորները. իսկ բաղաձայն կոչվում են այն հնչյունները, որոնք անվանկային են, այսինքն չեն կարող վանկ կազմել, այլ վանկի մեջ միանում են նախորդ կամ հաջորդ ձայնավորի հետ։ Այս բաժանումով մեր յ հնչյունը, թեպետ որակով ձայնավոր է, բայց մտնում է բաղաձայնների մեջ։ Մեր քերականներն էլ ընդհանրապես մեր այդ տառը, դրա ֆունկցիան նկատի ունենալով, դնում են բաղաձայնների մեջ։

Ապա, պետք է նկատի ունենալ և այն, որ կան բանասերներ էլ, որոնք ԱՅ, ՈՅ, ՈՒՅ, ԵՅ կապակցությունները համարում են երկբարբառ, այսինքն երկու ձայնավորի միացում իբրև մեկ վանկ, որ արտաբերվում է արտաշնչության միևնույն արտամղումով, իսկ շուռ տված ՅԱ, ՅՈ, ՅՈՒ, ՅԵ, ՅԻ կապակցությունները համարում են բաղաձայնի և ձայնավորի միացում, կամ կոչում են դրանք կեղծ (անիսկական) երկաբարբառներ։

Այս տարբեր ըմբռնումներն առաջանում են արտասանության նուրբ տարբերություններից. որովհետև, ինչպես տեսանք, հեշտությամբ փոխանցում է լինում անվանկային ի ձայնավորից, մեր յ տառի հնչյունից դեպի շփական j բաղաձայնը, որոնք երկուսն էլ վանկի մեջ նույն բաղաձայնական ֆունկցիան ունին. ուստի և կարող են շփոթվել միմյանց հետ և հաճախ շփոթվում էլ են, և շատ մարդ դժվարանում է տարբերել անվանկային յ (ի) ձայնավորը շփական j-ից։ Այդ է պատճառը, որ լեզուների այբբենարանների մեջ չկան երբեմն այդ երկուսի համար առանձին տառեր, և մենք էլ միևնույն յ տառով արտահայտում ենք թե՛ բաղաձայնական յ(ի) ձայնավորը և թե՛ շփական j բաղաձայնը։

88. Բառերի արտաբերությունն և հեգում ու վանկեր։— Մեկ բառի մեջ կարող են լինել և՛ մեկ, և՛ մի քանի վանկային հնչյուններ. ուստի և բառը կարող է կազմված լինել կամ մեկ վանկից, կամ երկու և ավելի վանկերից։ Միավանկ բառերն արտաբերվում են շնչի մի արտամղումով, մի անգամից իբրև մի միություն, իսկ բազմավանկ բառերն արտաբերվում են շնչի երկու և ավելի արտամղումներով և արտաբերության ժամանակ բաժանվում են մասերի, որոնք և բառի վանկերն են։

Բազմավանկ բառերի այս բաժանումը վանկերի կամ հեգումն առաջ է գալիս արտաշնչության կա՛մ ընդհատումով, կա՛մ թուլացումով։ Ընդհատումը կարելի է երկար և կարճ անել, իսկ թուլացումը վերածել ընդհատումի։ Ընդհատումն առաջ է գալիս այն ժամանակ, երբ օդի արտամղումի միջոցին բերանի մեջ կազմվում է մի փակվածք պայթական և ռնգային բաղաձայններն արտաբերելու համար. իսկ թուլացումն այն ժամանակ, երբ կազմվում է մի նեղվածք շփական և նայ բաղաձայնների համար։ Այսպես օրինակ՝ կապել բառի մեջ արտաբերության ժամանակ Ա ձայնավորից հետո շրթունքները կպչում են իրար, արտաշնչվող օդի անցքը փակվում է, հետևաբար և արտաշնչությունն ընդհատվում է, մինչև որ առաջ է գալիս Պ հնչյունի արտաբերության համար հարկավոր պայթյունը, որ անցնում է հաջորդ վանկին, ուստի և այդ բառը բաժանվում է կա–պել վանկերի։ Իսկ դավել բառի արտաբերության ժամանակ Ա ձայնավորից հետո առաջ է գալիս շփական Վ բաղաձայնի համար հարկավոր նեղվածքը ներքին շրթունքի և վերին կտրիչ ատամների միջև։ Այդ ժամանակ օդի արտամղումը չի դադարում, այլ թուլանում է, քանի որ անցում է լինում Ա հնչյունի արտաբերության համար հարկավոր խոսքի գործարանների դրությունից դեպի Վ-ի համար հարկավոր դրությունը։ Բայց հենց որ նեղվածքը կազմվում է, անմիջապես զորանում է օդի արտամղումը, որով առաջ է գալիս շփում և Վ հնչյունը, որ անցնում է հաջորդ վանկին. ուստի և այս բառը բաժանվում է դա–վել վանկերի։ Մենք կարող ենք այս երկու վանկի մեջ եղած թուլացումը վերածել ընդհատման, այսինքն Ա ձայնավորն արտաբերելուց հետո մի փոքր դադար անել և ապա նոր կազմել շրթունքների մեջ Վ-ի համար հարկավոր նեղվածքն ու արտասանել Վ հնչյունը. բայց սովորական խոսվածքի ժամանակ այսպես չենք հեգում։

Վերևի բացատրությունից երևում է, որ հեգումի ժամանակ երկու ձայնավորի մեջ եղած մի բաղաձայնը, լինի ձայնորդ, պայթական թե շփական, անցնում է երկրորդ ձայնավորին, ինչպես՝ ժա-մա-նակ, դա-սա-տու։ Այս միևնույն տրոհման ենթարկվում է և յ հնչյունը, որի արտաբերության համար ևս,— արտասանվելիս լինի իբրև անվանկային ի, թե բաղաձայն j,— նեղվածք է առաջ գալիս, և օդի արտամղումը թուլանում է. ուստի և հետևյալ բառերն արտասանվում և վանկերի բաժանվում են այսպես՝ նա-յել, ծա-ռա-յա-կան, գո-յակ, շո-յել, կա-յուն։

Երբ երկու ձայնավորի մեջ իրար հանդիպում են նույն կարգի երկու տևական հնչյուններ, որ նա նույն կարգի ձայնորդ և շփական հնչյուններ, ինչպես՝ թշշալ, տաrrական, տապաններ բառերի մեջ շշ, րր, նն, այդպիսի կրկնություններն առանց ընդհատումի ավելի երկար են արտասանվում, միայն այդ հնչյունների արտաբերության մեջտեղում օդի արտամղումի ուժը թուլանում է, և այս թուլացումը կազմում է երկու վանկի սահմանը՝ թշշ-շալ, տար-րական, տապան-ներ։ Մենք կարող ենք այդ վանկերը նաև ընդհատումով արտաբերել, բայց սովորական խոսվածքի

ժամանակ միայն երկարում ենք այդ կրկնված հնչյունները։ Բավական է, որ մի փոքր կարճ արտասանվի, այդ ժամանակ կրկնությունը վերանում է, և լսվում է՝ թշալ, տարական, տապաններ։ Վերջին երկուսը և նմանները, հարկավ, թերի արտաբերություններ են, բայց արդեն հաճախ լսվում է ն հնչյունով վերջացած բազմավանկ բառերի հոգնակին այդպիսի կարճ արտաբերությամբ։ Իսկ երբ իրար հանդիպում են երկու նույն կարգի պայթական հնչյուններ, ինչպես՝ աբբա, Փիլիպպոս, խրատտու բառերի մեջ, այդ ժամանակ առաջին հնչյունի համար կպվում է հարկավոր փակվածքը, բայց պայթում չի առաջ գալիս, քանի որ երկրորդի համար ևս նույն փակվածքն է հարկավոր. այլ առաջին հնչյունի փակվածքի պատճառով ընդհատվում է արտաշնչությունը, և ապա նոր երկրորդ հնչյունի պայթումն է լինում, որով և այդպիսի բառերը բաժանվում են Փիլիպ-պոս, աբ-բա։ Հայերենում, սակայն, նույն կարգի պայթական բաղաձայնների այսպիսի կրկնություններ շատ քիչ կան. բառերի վերջում նույնիսկ անհնարին է այդպիսի կապակցությունը. Շմիդտ մենք կարող ենք արտասանել միայն Շմիդրտ, ինչպես գրաբարի կարգ, fաղաff և նմանները արտասանում ենք այժմ՝ կարգր, fաղաfր։ Իսկ տևական հնչյունները բառերի վերջում թեպետ կարող ենք երկարել, ինչպես՝ Մաննն, պրոգրամմ, կոլոսս, բայց այդ արտասանությունը հատուկ չէ հայերենին. մենք այդպիսի բառերը կարտասանենք՝ Մաննն, պրոգրամմ, կոլոսս, ուստի և այդպիսի օտարազգի բառերի վերջում մենք միայն մեկ բաղաձայն ենք գրում՝ Շմիդ, պրոգրամ, կոլոս։ Նույնիսկ միջին վանկերի մեջ մենք սովորաբար արտասանում ենք և գրում մի բաղաձայնով՝ պրոֆեսոր, Թեսալիա, Ապոլոն և այլն, բայց մասսա, Աննա։

Երբ իրար հանդիպում են երկու տարբեր կարգի տևական բաղաձայններ, դարձյալ սովորական խոսվածքի ժամանակ դրանց արտաբերության մեջ ընդհատում չի լինում, այլ միայն թուլացում, և բաժանում ենք՝ թըշ-վառ, տար-վել, աս-վել, բարեկամ-ներ։ Բայց երբ իրար հանդիպում են երկու տարբեր կարգի պայթական հնչյուններ, ինչպես՝ պատկեր, ապտակ բառերի մեջ ՏԿ, ՊՏ, այն ժամանակ օդի մի արտամղումով արտաբերում ենք իբրև մի վանկ մինչև առաջին պայթականի փակվածքը՝ պատ, ապ. հետո՝ առանց պայթումի՝ արտաշնչության մեջ ընդհատում է լինում հաջորդ պայթականի համար հարկավոր փակվածքի պատճառով, և այս ընդհատումը կազմում է երկու վանկի սահմանը։ Այդպիսի բառերը ,ուրեմն, մենք արտաբերում ենք հեգելով իբրև՝ պատ-կեր, ապտակ։ Նույն ձևով հեգում ենք նաև, երբ երկու բաղաձայնից առաջինը տևական է, իսկ երկրորդը փակվածքի. ինչպես՝ գրն-դակ, ամ-պի, արդար, աս-տառ, առ-նել, կազ-մել, եղ-բայր։

Այսպես ուրեմն, բառերի բաժանումը վանկերի՝ պատահաբար չի առաջ գալիս, այլ մի բնախոսական երևույթ է և հիմնված է արտաշնչության ընդհատումի կամ թուլացումի վրա, իսկ վերջինս կախված է իրարուց տրոհվող հնչյունների տեսակից։ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ նաև հետևյալը։

Ամեն լեզու ունի վանկերի և բառերի մեջ ձայնավորների և բաղաձայնների հաջորդության ու բարեխառնության իրեն հատուկ որոշ դրությունը, որից առաջանում է մի լեզվի դաշնակավորությունը։ Արդ, մեր լեզվի ընդհանուր հատկությունն է, որ բառերի սկզբում ձայնավորից առաջ՝ միայն մեկ բաղաձայն կարող է լինել։ Ուստի երկավանկ են սկիզբ, զգեստ, շռայլ, հրաշք, բրուտ, քնար, տված և այլն. դրանց հոգնակին լինում է բազմավանկերի ընդհանուր օրենքով ևեր մասնիկով՝ սկիզբներ, զգեստներ, շռայլներ, հրաշքներ, բրուտներ և այլն, և ոչ թե միավանկերի պես՝ զգեստեր, հրաշքեր, բրուտեր։ Գրությունը, հարկավ, չպիտի շփոթել արտասանության հետ. այդ բառերի սկզբում և մեջը արտասանում ենք Ը ձայնավորը, բայց սովորաբար չենք գրում. արտասանում ենք՝ ըսկիզբ, ըզգաստ, շըռայլ, հըրաշք, քընար, տըված, բայց գրում ենք՝ սկիզբ, զգաստ, բրուտ։ Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ նաև այն, որ բառասկզբի ԸՍ, ԸՋ, ԸՇ վանկերի Ը ձայնավորը սովորաբար դուրս է ընկնում նախորդ ձայնավորի ազդեցության տակ. արտասանում ենք՝ «այն մարդն—ըսպասում է», բայց «նա—սպասում է»։

Ինչպես որ բառերի սկզբում, նույնպես և բառերի մեջ վանկերի ըսկըզբում, մեր լեզվի հատկությամբ, ձայնավորից առաջ կարող է միայն մեկ բաղաձայն ընկնել, և այդ մեկ բաղաձայնի արտաբերության փակվածքից կամ նեղվածքից առաջացած ընդհատումը կամ թուլացումը արտաշնչության մեջ՝ կազմում է երկու վանկի սահմանը։ Այս պատճառով և մենք բառերը հեգելիս՝ երկու ձայնավորի մեջ եղած երկու բաղաձայններից մեկը միացնում ենք նախորդ ձայնավորին, մյուսը՝ հաջորդ. երեք բաղաձայններից երկուսը միացնում ենք նախորդ ձայնավորին, երրորդը՝ հաջորդին. նույնիսկ չորս բաղաձայններից վերջինն ենք միայն միացնում հաջորդ ձայնավորին։ Այս վերջին տեսակի բառերը սակավաթիվ են, այն էլ հոգնակի ևեր մասնիկով, ինչպես՝ առանցք-ներ, քղանցք-ներ։ Համեմատաբար ավելի, բայց դարձյալ սակավաթիվ են երեք բաղաձայններով բառերը, ինչպես՝ վարձ-կան, թարգ-ման, դարթ-նել, պարտ-քով, երկրորդ, երկ-նային, գաղտ-նի, ընկ-նել, ամպ-րոպ, վաշտ-կան և այլն։ Իսկ երկու բաղաձայնով բառեր շատ կան. ինչպես՝ պար-տիզ-պան, կարմիր, տախ-տակ։ Հենց որ այսպիսի բառերի տրոհման ժամանակ բաղաձայններից երկուսը միացնենք հաջորդ ձայնավորին և արտաշնչության թուլացումը կամ ընդհատումն աննենք երկու բաղաձայնից առաջ, ինչպես՝ կա-պտել, պա-տվեր, ըն-կնել, վար-ձկան, առանց-քներ և այլն, այն ժամանակ բառի վանկերի թիվը մեկով կավելանա, որովհետև հնչյունների «պտել», «տվեր», «կնել», «ձկան», «քներ» կապակցություններն արտաշընչության թուլացումից կամ ընդհատումից հետո, մեր լեզվի վերևում հիշված օրենքով, մենք չենք կարող միավանկ արտասանել, այլ պտել, կնել, ձկան, fներ վանկերի սկզբի երկու բաղաձայնի մեջ կմտնի Ը ձայնավորը, ինչպես՝ պտեղ, պտուղ, գնել, տվել, ձկան, fնել, fնար և նման բառերի մեջ, որոնք երկավանկ են։ Եվ իսկապես, նայելով անհատական

և բարբառային արտաբերություններին, այսպիսի բառերը երբեմն արտասանում են և՛ մի վանկ ավելի, և՛ մի վանկ պակաս. օրինակ՝ Ա. Խահակյանը գրում է երկավանկ՝ «վարդը փրթթեց ու բուրեց», իսկ Հ. Հովհաննիսյանը եռավանկ՝ «որ արյան դաշտում փրթրթեն վարդեր»: Նույնպես սովորաբար բաժանում ենք երկու վանկի՝ սրս-կել, fրտ-նել, ար-ծվի, բայց Խահակյանը արտասանում է նաև եռավանկ՝ «գոհար ցողեր սըրըսկում». (կան նաև «սըրսըկել» արտասանողներ). «քար ու քարափ fրտրներ են», «Ար-ծըվի թևին զարնեմ ու երթամ»: Նույնպես Հովհաննիսյանը, Խահակյանը, Թումանյանը և ուրիշները և՛ երկավանկ, և՛ եռավանկ են արտասանում այսպիսի բառերը՝ հըրճ-վանք, հըր-ճը-վանք, աստ-ված, աս-տը-ված, ջարդ-ված, ջար-դը-ված, հաղթ-ված, հաղ-թըված, ծածկ-վել, ծած-կը-վել, տանջ-վել, տան-ջը-վել և այլն: Օրինակ՝ «Ջարդված սրտերի, դառն հառաչանաց»..., «Հաղթված ոսկեզօծ, երկաթի բազկից», «Թավշյա կանաչով ծածկված են դաշտեր», «Տանջված հոգուս մեջ կենդանի մընար», «և ուժասպառ հանապարհից ջարդրված»..., «Է՞ր ես դու էլ մեզ բոլորիս մաշող քընից հաղթրվում» (Հովհ.). «Ծածկրվում էր նա աչքես անգուման» (Թումանյան). «Տանջրվիր, հուսա» (Խահակյան): Այսպիսի ավելի վանկերով արտաբերությունը տեղի է ունենում ավելի այն ժամանակ, երբ երկու ձայնավորի մեջ մտնում են երեք բաղաձայններ, որոնցից երրորդը ձայնորդ կամ շփական է, իսկ երկրորդը՝ պայթական: Բայց պատահում է, որ մի վանկ ավելի են արտասանում և այն դեպքում, երբ երկու ձայնավորի մեջ մտնում են երկու բաղաձայններ, որոնցից երկրորդը տևական է, օրինակ՝ պատժել, հեռացնել արտասանում են նաև պատրժել, հեռացրնել:

Ինչպես վերևում տեսանք, յ հնչյունը, երբ երկու ձայնավորի մեջ է,— լինի բաղաձայնական (թույլ) ի ձայնավոր, թե բաղաձայն j,— բառերի տրոհության ընդհանուր օրենքով իբրև մի նեղվածքի հնչյուն միանում է հաջորդ ձայնավորին: Երբ այս յ հնչյունից առաջ ընկնում են երկու բաղաձայն, այն ժամանակ այս հնչյունը պահում է իր հստակաձայն ձայնավորի հատկությունը. ուստի և երկու բաղաձայնից մեկը միշտ միանում է հաջորդ յ-ին, ինչպես մի ձայնավորի, օրինակ՝ ար-դյոք, ան-կյուն, աղ-բյուր, հըն-չյուն, քըն-դյուն, որ-դյակ, տաս-նյակ, ծովափ-նյա, դարձյալ, երկամ-սյա: Այս հեգումը հենց ցույց է տալիս, որ մեր յ հնչյունն այս դեպքում անվանկային ի ձայնավոր է և ոչ բաղաձայն j: Նույնպես միշտ հեգում և տրոհում ենք, երբ յ հնչյունից առաջ ընկնում է մի փակվածքի պայթական կամ ռնգային բաղաձայն, որ միանում է հաջորդ յ-ին, ինչպես մի ձայնավորի, օրինակ՝ մեծու-թյուն, մեծու-թյան, պատյան, արևմը-տյան, սեա-չյա, սե-նյակ, տասնա-մյա, շառա-չյուն, տրոփյուն: Դարձյալ՝ ընդհանրապես հաջորդ յ-ի հետ է միանում նաև նախորդ մի շփական կամ նայ լ բաղաձայնը, օրինակ՝ վերոհի-շյալ, սոսյուն, աղյուր, արևե-լյան: Բայց այս դեպքում կան նաև այսպես հեգողներ՝ հետև-յալ, աղ-յուս, սոսավ-յուն: Առանձնապես զգալի է այս հե-

գումը Ր, Ռ բաղաձայնների նկատմամբ՝ ամենաօր-յա, կա-տար-յալ, մեռ-յալ, ար-յուն։ Այս հեգումը, որով 3 հնչյունն ինչպես մի բաղաձայն տրոհվում է նախորդ բաղաձայնից, հատուկ է ավելի արևմտյան բարբառներին. դա ցույց է տալիս, որ j բաղաձայնը, փոխանակ բաղաձայնական ի ձայնավորի, մեր լեզվի մեջ երևան է գալիս ըստ երևույթին բառերի մեջ ավելի նեղվածքի նայ (ր, ռ) հնչյուններից հետո, ապա մասամբ նաև նեղվածքի շփական հնչյուններից հետո։ Կան, սակայն, նաև ընգային մեկ հնչյունը հաջորդ 3-ից բաժանողներ, ինչպես՝ սեն-յակ, Համբար-ձում-յան։ Դրանք բոլորը բարբառային արտաբերություններ են, որ և երբեմն մտնում են նաև գրական լեզվի մեջ։ Բայց և այնպես վերջինիս մեջ, գոնե գրության ժամանակ, սովորական է նախորդ մեկ բաղաձայնը, նույնիսկ նախորդ ձայնորդ բաղաձայնները, չբաժանել հաջորդ 3-ից և տրոհել՝ ա-վյուր, կատա-րյալ, մե-ռյալ, սե-նյակ, տասնա-մյակ։

89. Բառի և խոսքի շեշտեր և ամանակ։— Բազմավանկ բառերի վանկերից մեկն արտաբերվում է արտաշնչության ավելի մեծ ուժով, քան մյուսները։ Վանկերից մեկի այսպիսի արտաբերումն ուժով՝ կոչվում է բառի շեշտ։ Ինչպես որ մի վանկի մեջ վանկային ուժեղ հնչյունին միանում են մյուս անվանկային թույլ հնչյունները և կազմում են հնչյունների կապակցության մի միություն, նույնպես և բազմավանկ բառերի շեշտված վանկին միանում են մյուս վանկերը և կազմում մի նույնպիսի, բայց ավելի մեծ միություն, ինչպես՝ քա՛ղցրր, քաղա՛ք, պատե՛ր։

Բացի բառի շեշտից կա նաև խոսքի շեշտ, որով առանձնապես ուժեղ է արտաբերվում խոսքի մեջ այն բառը, որի վրա առանձին ուշադրություն է դարձվում, կամ որը հոգեբանական ստորոգյալն է։ Այս շեշտով էլ խոսքի բառերն են կազմում արտաբերությամբ կապակցված հնչյունների մի ավելի մեծ միություն։ Խոսքի շեշտն ընկնում է միշտ բառի շեշտված վանկի վրա, օրինակ՝ «Մենք այսօ՛ր ենք գնալու»։ Վանկի մեջ վանկային հնչյունի ավելի ուժեղ արտաբերություն, բառի շեշտ և խոսքի շեշտ, այս երեքն էլ արտաշնչության ուժի տարբեր աստիճաններ են միայն, որոնք մեկը մյուսից տարբերվում են ավելի մեծ ուժով։ Վանկի մեջ ձայնավորն ավելի ուժեղ է արտաբերվում, քան բաղաձայնները. բազմավանկ բառի շեշտված վանկի ձայնավորն՝ ավելի ուժեղ, քան մյուս վանկերինը, իսկ խոսքի շեշտ կրող վանկի ձայնավորն՝ ամենից ուժեղ։

Խոսքի հնչյունների, ինչպես և բոլոր հնչյունների համար նկատի են առնվում նաև երանգը կամ որակը և երաժշտականությունը, որոնց մասին բացատրված է վերևում։ Բայց կա նաև հնչյունների քանակը կամ ամանակը, որ է այն ժամանակի տևողությունը, որ պահանջվում է այս և այն հնչյունի արտաբերության համար։ Կան լեզուներ, որոնք ունին երկար և կարճ ձայնավորներ և նույնիսկ առանձին տառեր դրանց համար։ Մեր լեզվի մեջ չկան բնությամբ երկար ձայնավորներ, այսինքն և՛ երկար է(ե), և՛ կարճ է(ե), երկար օ(ո) և կարճ օ(ո) և այլն, մեր ձայ-

նավորները, նայելով վանկերի կազմությանը, շեշտին և արտասանության եղանակին, երբեմն ավելի երկար են արտասանվում, կամ մի քիչ կարճ։ Մեր Ը ձայնավորը միայն ընդհանրապես համեմատաբար ավելի կարճ է*։

Բառերը խոսքի մեջ արտասանվում են նաև ձայնի տարբեր **բարձրությամբ**, որ կախված է հնչող մարմնի տատանումների արագությունից, այսինքն՝ թվից մի վայրկյանի մեջ։ Ամեն լեզվի մեջ յուրաքանչյուր հընչյուն ունի իր նորմալ բարձրությունը, որ տեղին նայելով կարող է և փոփոխվել։ Ձայնի ուժի (արտաշնչության շեշտի), ամանակի (տևողության) և բարձրության վրա է հիմնված խոսքի եղանակավորումը, որ տարբեր ձևով է երևան գալիս յուրաքանչյուր լեզվի մեջ, որ և հայոց լեզվի համար դեռ ուսումնասիրված չէ։

Բ

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

40. Հնչափոխություն։— *Հնչյունների, վանկերի ու շեշտերի ավանդական արտաբերությունը, ինչպես և ամեն լեզվական իրակությունները, ժամանակի ընթացքում ընդհանրապես փոխվում են։ Այս փոփոխության ուսումնասիրությունը վերաբերում է գլխավորապես պատմական քերականությանը. ուստի այստեղ դրվում են հնչափոխության մի քանի էական կետեր միայն, որ հարկավոր է իմանալ մեր գրական լեզվի կազմությունը, արտասանությունը և ուղղագրությունը լավ ըմբռնելու համար։*

Հնչափոխությունն առաջ է գալիս զանազան եղանակներով, որոնցից կարևոր են՝

1. Բառի մեջ հնչյունների տեղի փոփոխությունը կամ հնչյունների հետևառաջություն, 2. Հնչյունների արտաբերության տեղի աստիճանական փոփոխությունը կամ հնչյունների շրջումը, որով ժամանակի ընթացքում մի հնչյունի հետզհետե փոխանակում է մի ուրիշ հնչյուն։

41. Հնչյունների հետևառաջությունը։— *Այս փոփոխությունը կատարվում է, ըստ երևույթին, առանց հաստատուն օրենքի, մի տեսակ պատահաբար։ Սակավաթիվ փոփոխությունների համար միայն որոշ պայմաններ կան դիտված։ Բառի մեջ իրարու կից կամ միմյանցից հեռու գտնված հնչյունները մի տեսակ հանկարծական ոստյունով մեկմեկու հետ փոխում են իրենց տեղը, կամ մի հնչյուն հաջորդ վանկից տեղափոխվում է նախորդ վանկի մեջ։ Այս փոփոխությանը ամենից շատ ենթարկ-*

---

* Տանոթ.— *Բառի և խոսքի շեշտերի, վանկերի ամանակի և խոսվածքի տակտերի մասին մանրամասն բացատրված է սրա հեղինակի «Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատանքի մեջ։*

վում են ձայնորդ հնչյունները։ Օրինակ՝ դատարկ-դարդակ, ականջ-անկաջ, կամուրջ-կարմունջ. հին խստոր, կապերտ դարձել են՝ սխտոր, կարպետ. հին տարգալ դարձել է՝ տրգալ, տգալ, դգալ և ապա գդալ, որ այժմ արտասանում ենք ֆթալ. հին գճել դարձել է ճկել. հին ձգել դարձել է ձգել, գցել, որ այժմ արտասանում ենք ֆցել:

Այս փոփոխությունը, որ շատ հաճախված է բարբառների մեջ, առանձին արժեք չունի նոր գրական լեզվի համար. որովհետև այդպիսի եռահառաջությունները, սակավ բացառությամբ, իբրև սխալ ձևեր մերժված են գրական լեզվից, որի մեջ ընդունված են հին ձևերը՝ դատարկ, կամուրջ, ականջ, կնճիռ, լվացք և այլն, և ոչ դարտակ, կարմունջ, անկաջ, կռինձ, վլացք։ Այսպես և բարբառների մեջ շատ ուրիշ եռահառաջություններ կան, ինչպես՝ կճեպ—կպեճ, անձրև—անձվեր, սովորել—սորվել, մեղր—մերղ, Մարիամ—Մարյամ—Մայրամ և այլն։

Պատճառական բայերի հրամայականը՝ մեծացո՛ւր, մոտեցո՛ւր, բուցո՛ւր և նմանները դարձել են՝ մեծացրո՛ւ, մոտեցրո՛ւ, բուցրո՛ւ, որ և ընդունված է արևելյան աշխարհաբարում։

42. Հնչյունների շրջում։— Մեր նոր գրական լեզվի կազմության տեսակետից կարևոր տեղ է բռնում հնչյունների աստիճանական փոփոխությունը. դրանով լեզվի մեջ առաջ են գալիս հնչյունների նուրբ տարբերություններ, աստիճանական անցումներ մի հնչյունից դեպի մյուսը, որոնք հաճախ այս կամ այն բարբառի մեջ ապրում են հին հնչյունի հետ։ Օրինակ՝ բարբառներ կան, որոնց մեջ հնագույն հարեւր, հին հարիւր. դարձել է խարիր, բայց այս վերջինիս հետ խառն արտաբերում են նաև խայիր, իսկ գրական լեզվի մեջ՝ հարյուր: Այսպես և մի քանի բարբառների մեջ մնում է «որ» բառի հին արտասանությունը, ուրիշների մեջ այդ բառն արտասանվում է «ուր», սկզբի անվանկային Ո՛ ձայնավորով, իսկ գրական լեզվի, ինչպես և շատ բարբառների մեջ, այդ սկզբի անվանկային Ո՛-ն դարձել է արդեն Վ բաղաձայն, այդ բառն արտասանում ենք «վոր»։

Հնչյունների շրջումը, որ հետևանք է արտաբերության տեղի փոփոխության, առաջ է գալիս կամ բոլոր դեպքերում առանց բացառության, կամ միայն որոշ դեպքերում որոշ պայմանների մեջ, ինչպես օրինակ՝ միայն բառերի սկզբում, կամ վերջում, կամ շեշտի ազդեցության տակ և այլն։ Եթե հնչյունների շրջումի համար պահանջված պայմանները կան, միշտ կանոնավոր և հաստատուն կերպով կատարվում է նույն շրջումը։ Այս պատճառով է ասում են, թե հնչյունների շրջումը լինում է «հնչյունական օրենքներով», այսինքն՝ եթե չկա որևէ ուրիշ պայման, որ սահմանափակի հնչյունների շրջումն առաջ բերող պայմանի ազդեցությունը, ապա բոլոր նույն պայմանի մեջ եղած դեպքերում նույն լեզվի նույն բարբառի մեջ նույն հնչյունը նույն ժամանակաշրջանում նույն շրջումը պիտի կրի։ Օրինակ՝ հին Դ հնչյունը նոր հայերենի մեջ Թ է դարձել Ր-ից հետո բոլոր բառերի մեջ, ինչպես՝ մարդ, լերդ, ցարդ, որդի բառերի մեջ,

որ արտասանում ենք՝ մարթ, լերթ, որթի. հին լեզվի յ հնչյունը բոլոր բազմավանկ բառերի վերջից դուրս է ընկել, ինչպես՝ ծառա (յ), զարմանա (յ) և այլն. հին ԵԱ երկբարբառը դարձել է ե պարզ ձայնավոր, ինչպես՝ լեարդ—լերդ, լեառն—լեռ, սեալ—սեվ, գնացեալ—գնացել, տեսեալ—տեսել և այլն։

Պատահում է երբեմն, որ մի քանի բառեր ըստ երևույթին բացառություն կազմելով՝ հակասում են հնչյունների շրջման օրենքին։ Այդպիսի բացառությունները, սակայն, ցույց են տալիս, որ շրջումը կատարվելու ժամանակ եղել են այնպիսի պայմաններ, որոնցով սահմանափակվել է շրջումի ազդեցությունը։ Օրինակ՝ բառերի սկզբում գրական լեզվի մեջ, ինչպես և շատ բարբառների մեջ, միավանկ բառերի սկզբում ե ձայնավորից առաջ ավելացել է անվանկային յ հնչյունը, ինչպես՝ յեզ, յեկ, փոխանակ հին եզն, եկ ձևերի, բայց միավանկ «եմ» բայը բաղաձայնով վերջացած բառերից հետո— գնում եմ— անփոփոխ է մնում։ Դրա պատճառն այն է, որ այդ բայն իբրև վերջահար բառ արտաբերությամբ միանում է նախորդ բառի վերջին, որի հետ և մեկ շեշտով մեկ բառական միություն է կազմում, ինչպես մեկ բառ՝ գնո՛ւմեմ, գնո՛ւմես, գնո՛ւմէ։ Կնշանակի՝ «եմ» բայի սկզբի ե հնչյունն անփոփոխ է մնում բառական միության մեջ իբրև բառամիջի ե հնչյուն, քանի որ հիշված շրջումը գրական լեզվի և շատ բարբառների մեջ չի ազդել բառամիջի ե հնչյունի վրա։ Բայց երբ նույն «եմ» բայը դարձյալ իբրև վերջահար բառ միանում է ձայնավորով վերջացած մի բառի հետ—գնալուեմ— և առնվում է վերջինիս հետ իբրև մեկ բառական միություն, այդ ժամանակ այդ երկու բառի մեջ մտնում է «յ» հնչյունը. որովհետև հնչյունների մի ուրիշ շրջումով մեկ բառի երկու վանկային ձայնավորների մեջ մտնում է յ հընչյունը, ուստի հին գնալու-եմ, գնալու-ես, այժմ արտասանում ենք՝ գնալու յեմ, գնալու յես։

Բացառությունները կարող են շրջումին ենթարկված չլինել և այն պատճառով, որ կարող են շրջումը կատարվելուց վերջանալուց հետո լեզվի մեջ մտած լինել հին լեզվից, օտար լեզուներից, կամ նույն լեզվի մի այնպիսի բարբառից, որ չի ունեցել նույն հնչափոխությունը։ Օրինակ՝ ինչպես տեսանք, հին լեզվի ԵԱ երկբարբառը դարձել է պարզ ե ձայնավոր որոշ բարբառների մեջ, որոնցից և անցել է նոր գրական լեզվին։ Բայց գրական լեզվի մեջ ունենք ԵԱ>ՅԱ երկբարբառով բառեր, ինչպես՝ սենյակ, մատյան, դղյակ և ոչ սենեկ, մատեն, դղեկ, այլև կրկնակ ձևով՝ անցյալ-անցել, մեռյալ-մեռել, հետևյալ-հետևել և այլն. այդ բառերը յա<եա երկբարբառով—անցյալ, մեռյալ—մեր նոր գրական լեզվի մեջ պարզապես փոխառություն են հին լեզվից և այն էլ այն շրջանում, երբ կենդանի լեզվի մեջ վաղուց կատարված վերջացած է եղել ԵԱ երկբարբառի ե շրջման գործոնությունը։

Չպիտի մոռանալ և այն, որ բոլոր բարբառները միակերպ ենթակա չեն նույն հնչափոխությանը, այլ հաճախ իրենց առանձին փոփոխություն-

ներն են ունենում. այսպես և գրական լեզուն, ինչպես տեսանք, հաճախ իր առանձին եղանակով է փոխվում։ Հին լեզվի ՕԱ երկբարբառն, օրինակ, մինչդեռ բարբառների մի մասի մեջ դարձել է պարզ օ, հին գրական լեզվի մեջ դարձել է յա. «սենեակ», «անցեալ» բառերը, օրինակ, 19-րդ դարի գրաբարում չեն արտասանվել այնպես, ինչպես արտասանվել և գրվել են հնագույն գրաբարում, այլ արտասանվել են՝ «սենյակ», «անցյալ» և այս արտասանությամբ էլ անցել են նոր գրական լեզվին։ Կնշանակե՝ նոր գրական լեզվի մեջ պիտի տարբերել երեք տեսակ հնչափոխություններ հին լեզվի նկատմամբ. մեկ՝ այնպիսի փոփոխություններ, որ առաջ են եկել միայն հին գրական լեզվի մեջ և վերջինից իբրև փոխառություն մտել են նոր գրական լեզվի մեջ. մեկ էլ՝ այնպիսիները, որ առաջ են եկել նոր գրական լեզվի մայր բարբառի մեջ, որից և անցել են նոր գրական լեզվին, և մեկն էլ՝ այնպիսի փոփոխություններ, որ առաջ են եկել ուրիշ բարբառների մեջ, որոնցից և անցել են նոր գրական լեզվին։ Կան նաև հնչյունների այնպիսի շրջումներ, որոնք միաժամանակ հատուկ են թե՛ հին գրական լեզվին, թե՛ նոր գրական լեզվի մայր բարբառին և թե՛ ուրիշ բարբառների։

48. Հնչյունների կորուստ որոշ բառերի մեջ։— Հնչյունների աստիճանական շրջումի հետևանքը եղել է այն, որ նոր լեզվի հնչյունական կազմը բազմազան կերպով փոխվել է հին լեզվի հետ համեմատած։ Այսպես՝ դուրս են ընկել հնչյուններ և նույնիսկ ամբողջ վանկեր որոշ բառերի և ձևերի մեջ, օրինակ՝ քարշել—քաշել. տարժանելի—տաժանելի. խարշել—խաշել. տրգալ—դգալ (դգալ). թմբրել—թմրել. թամբք—թամբ. սկեսուր—կեսուր. պահս—պաս. դուռն—դուռ. մուկն—մուկ. վարդապետ—վարպետ. աշխարհահայեցողություն—աշխարհայեցողություն. աշակերտ—աշկերտ. հրամայեցեք—համեցեք։

Այսպես և պատճառական բայերը՝ զարմացուցանել—զարմացնել. աշխատեցուցանել—աշխատեցնել և այլն։ Բայերի խոնարհման ձևերի մեջ՝ չեմ կարդալ, չես կարդալ, չի կարդալ, չենք կարդալ, չեք կարդալ, չեն կարդալ. չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ, չենք գրիլ, չեք գրիլ, չեն գրիլ ձևերի վերջի «լ» հնչյունը դուրս է ընկել. այժմ արտասանում և հաճախ գրում են՝ չեմ կարդա, չես կարդա, չի կարդա և այլն. չեմ գրի, չես գրի, չի գրի և այլն։

44. Հնչյունների ավելացում որոշ բառերի մեջ։— Ավելացել են հնչյուններ որոշ բառերի մեջ, ինչպես՝ ագանել—հագնել. արբել—հարբել. ալեվոր—հալիվոր. ապա—հապա. ունդ—հունդ. անդ—հանդ. որթ—հորթ. ոսկր—ոսկոր. մեք—մենք. զարմացաք—զարմացանք. ի սրտաց—սրտանց և այլն։

Հնչյունների այս ավելացումը հաճախ հնչյունների շրջումով չի առաջ գալիս, այլ հետևանք է հոգեբանական դուգորդության անալոգիայի, այն է՝ որոշ բառերի և բառաձևերի մեջ ավելանում է մի հնչյուն ուրիշ բառերի և բառաձևերի նմանությամբ և նույնիսկ միևնույն բառի մեջ եղած

մի հնչյունի ազդեցությամբ օրինակ՝ սեպտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր *բառերի անալոգիայով* հոկտոբեր *դարձել է* հոկտեմբեր. *իսկ այս վերջինս, ինչպես և* սեպտեմբեր *բառի անալոգիայով* դնկեմբեր *դարձել է* դեկտեմբեր *(§ 46)։*

Բաղաձայնների ավելացումը, որ հաճախված է բարբառների մեջ, մեծ մասամբ չի ընդունված գրական լեզվի մեջ, որ սովորաբար պահում է բառի հին ձևը, ինչպես են՝ մենծ (մեծ), քինթ (քիթ), համբարել (համարել), մանտր (մանր), ծանդր (ծանր), ճանանչ (ճանաչ), ամանչել (ամաչել), կանանչ (կանաչ)։

Բայական ձևերի *համար պետք է նկատի ունենալ հետևյալները.*

1) Սահմ. անցյալ անկատարի և անցյալ կատարյալի հոգնակի 1-ին դեմքերի Ա ձայնավորը մյուս դեմքերի նմանությամբ դարձել է «Ի» և վերջի «Ք» հնչյունից առաջ սահմ. ներկա ժամանակի հոգն. 1-ին դեմքի նմանությամբ ավելացել է Ն. հին՝ գնայի, գնայիր, գնայաք, գնայիք, գնային. *նոր՝* գնայի, գնայիր, գնայիճք, գնայիք, գնային. *հին՝* գնացի, գնացեր. գնացաք, գնացէք *կամ* գնացիք, գնացին. *նոր՝* գնացի,գնացիր, գնացիճք, գնացիք, գնացին։— *Ինչպես կարելի է տեսնել, նոր լեզվի մեջ այս ձևերը միակերպության են վերածվել անալոգիայով։*

*2) Պատճառական բայերի «զարմացուցի» ձևի անալոգիայով «թռուցի», «փախուցի» և նման ձևերի մեջ արևմտյան բարբառներում ավելացել է «յ»—*թռյուցի, փախյուցի։

3) Պատճառական բայերի հրամայականի վերջից ավելանում է «ր». օրինակ՝ հին մեծացո *դարձել է* մեծացու, մեծացուր. *արևելյան՝ մեծացրու, հին* սիրեա՛, *դարձել է սիրե՛, սիրի՛, ապա սիրի՛ր (տե՛ս § 263)։*

45. Ձայնեղ հնչյունների անձայն դառնալը և ընդհակառակն։— *1) Փակվածքի ձայնեղ Բ, Գ, Դ, Ձ, Ջ հնչյունները բառերի մեջ և վերջում ձայնավորներից և Ր ու Ռ բաղաձայններից հետո, երբեմն բառերի միջ նաև Ն բաղաձայնից հետո, դառնում են ընդհանրապես Փ, Ք, Թ, Ց, Չ անձայն հնչյուններ, օրինակ՝* խաբել, հոգի, օդ, օձ, աջ, դադարել, երբ, երգ, դարձ, դաղձ, աղբ, անգամ, անդամ— *արտասանվում են՝* խափել, հոքի, օթ, օց, աչ, դաթարել, երփ, երք, դարց, դախց *կամ* դախծ, անքամ, անթամ։ *Ձայնեղ հնչյունների այս շրջումը մի քանի բարբառների, ինչպես և արևմտյան գրական լեզվի մեջ, ընդհանրացած է բոլոր բառերի համար բոլոր դեպքերում։ Արևելյան բարբառների մեջ ևս կան բառեր, որոնց սկզբի ձայնեղ պայթականները դարձել են թավ, օրինակ՝* գտնել, բրդել, գդալ— *արտասանվում են՝* քթնել *կամ* քտնել, փրթել, քթալ։

2) Փակվածքի անձայն Պ, Կ, Տ, Ծ, Ճ հնչյունները ձայնորդ Ն, Մ, Ր հնչյուններից հետո արտաբերվում են ընդհանրապես ինչպես ձայնեղ Բ, Գ, Դ, Ձ, Ջ. օրինակ՝ ամպ, բանտ, վանկ, պանկ, ընկեր, ընկնել, երկար, երկիր, ընտիր, ճնճուղ, ճանճ— *արտասանվում են սովորաբար ինչպես՝* ամբ, բանդ, վանգ, գանգ, ընգեր, ընգնել, երգար, երգիր, ընդիր, ճնջուղ, ճանջ։ *Անձայն հնչյունների այս շրջումն ևս մի քանի բարբառների, ինչ-*

պես և արևմտյան գրական լեզվի մեջ, ընդհանրանալով առաջ է եկել բոլոր բառերի համար բոլոր դեպքերում, այնպես որ այդ բարբառներն ու արևմտյան գրական լեզուն ունին միայն երկու տեսակի պայթական հնչյուններ՝ ձայնեղ Բ, Գ, Դ, Ջ, Ջ և անձայն հագագավոր Փ, Ք, Թ, Ց, Ջ։ Արևելյան բարբառների մեջ ևս երբեմն ուրիշ դեպքերում էլ անձայն պայթական Պ, Կ, Տ, Ծ, Ճ հնչյուններին փոխանակում են համապատասխան ձայնեղ հնչյունները. օրինակ՝ բնիկ երևանցիների արտասանությամբ այդ անձայն պայթականները երկու ձայնավորի մեջ փոխվում են համապատասխան ձայնեղ հնչյունների, ինչպես՝ զատիկ, ածել, ապրել—զադիկ, աձել, աբրել. նույնպես արտասանում են՝ կնիկ, պատ, բայց՝ կնիգը, պադի։ Այսպես և «սկիզբ», «ազգ» և նմաններն արտաբերվում են անձայն՝ սկիսք, ասկ։ Առհասարակ պետք է նկատել, որ ձայնեղ և անձայն պայթական հնչյունների այս շրջման գործունեությունը լեզվի մեջ դեռ վերջացած չէ, այդ պատճառով գրական լեզվի մեջ, եթե վերջնականապես հաստատված կարելի է համարել որոշ թվով բառերի համար փոխված արտասանությունը, ինչպես են՝ մարդ–մարթ, օձ–օց և նմանները, ուրիշ բառերի համար չկա միակերպ արտասանություն, այլ հաճախ, երբեմն նույնիսկ միևնույն մարդիկը, նույն բառերն արտաբերում են թե՛ ձայնեղ և թե՛ անձայն, ինչպես՝ թե՛ ընկեր, ընկնել, սկիզբ և թե՛ ընգեր, ընգնել, սկիսք։

3) Ձայնեղ Ղ հնչյունը բառերի մեջ պայթական բաղաձայններից առաջ դառնում է ընդհանրապես անձայն Խ, օրինակ՝ աղբ, ողբ, եղբայր, աղչիկ և նմաններն արտասանվում են՝ ախպ, ոխպ, եխպայր, ախճիկ։

46. Կից կամ մոտիկ հնչյունների առնմանում։ Տարնմանում։— Ատամնային Ն հնչյունը շրթնային Բ-ից առաջ դառնում է շրթնային Մ, ինչպես՝ անբիծ—ամբիծ, անբավ—ամբավ, «ձանապարհ» դարձել է «ճանապա», ապա՝ ճամբա, ճամփա. «ընդբռնել», «ընդբերանել», Դ հընչյունի դուրս ընկնելուց հետո, դարձել են՝ ըմբռնել, ըմբերանել։ Իսկ շրթնային Մ հնչյունը կատակային (վերջաքմային) Ք հնչյունից առաջ դառնում է քմային Ն (Տե՛ս § 33. 3). այսպես օրինակ, բայերի ներկա ժամանակի հոգնակի առաջին դեմքը հին լեզվի մեջ է՝ գնամք, գրեմք. նոր լեզվի մեջ դարձել է՝ գնանք, գրենք։

Երկու կից կամ մոտիկ հնչյունների այս շրջումը, որով մի հնչյուն մի ուրիշի ազդեցության տակ նույնանում է նրա հետ կամ նույն կարգին է փոխվում, կոչվում է հնչյունների առնմանում (ասիմիլացիա). օրինակ՝ բարբառների մեջ՝ ոտներ, մատներ և նմանները դառնում են՝ «ոններ», «մաններ». բանալիք դառնում է «բանլիք», «բալլիք», ելնել-ելլել։ Նույնպես հին «բոկիկ» դարձել է «բոբիկ»։ Սրանք ամբողջական առնմանում կլոր նույնացում են, մինչդեռ «անբիծ» բառի «ամբիծ» ձևով թերի առնըմանում է լինում. այս դեպքում ռնգային-ատամնային Ն հնչյունը հաջորդ շրթնային Բ հնչյունի ազդեցության տակ փոխվում է ռնգային-շրթնային Մ հնչյունի, այսինքն՝ Ն հնչյունը փոխվում դառնում է Բ հնչյունի

կարգի մի հնչյուն։ Առնմանումը նրանից է առաջ գալիս, որ հաջորդ հնչյունի պատկերացումն ավելի վաղ է ծնվում մեր մեջ, ուստի և բերանի մեջ ավելի վաղ է կազմվում նրա արտաբերության համար պահանջված դրությունը. օրինակ՝ «անբիծ» բառի արտասանության ժամանակ դեռ Ն հնչյունի համար հարկավոր դրությունը չկազմված՝ առաջ է գալիս Բ հնչյունի համար պահանջված փակվածքը, որ և Մ հնչյունի համար է. ուստի և «անբիծ» բառն արտասանվում է «ամբիծ»։ Իսկ «բոկիկ» ձևից «բոբիկ» ձևի առաջանալը նրանով է բացատրվում, որ Բ հնչյունի պատկերացումն ավելի երկար է տևում և ազդում է Կ հնչյունի Բ փոխվելուն։

Առնմանումով են բացատրվում հնչյունների շրջման շատ դեպքեր և այն, որ լեզվի մեջ անձայն բաղաձայններին հաջորդում են ընդհանրապես անձայնները, իսկ ձայնեղներին՝ ձայնեղները, ինչպես՝ ազգ, ազդ, վաշտ, լաստ։ Նույնպես առնմանում է տեղի ունենում, երբ անձայն բաղաձայնները ձայնեղ են դառնում ձայնեղներից հետո, ինչպես՝ ամպ, ընկեր, բանտ և նմաններն արտասանվում են ամբ, ընգեր, բանդ. այս դեպքում ձայնալարերի տատանումն ավելի երկար է տևում, քան հարկավոր է։ Նույնպես մի անգամ որ աղբ, ողբ, եղբայր, աղջիկ և նման բառերի մեջ ձայնեղ Ղ հնչյունը դառնում է անձայն Խ, հաջորդ ձայնեղ հնչյուններն ևս դառնում են անձայն, և այդ բառերն արտասանում ենք՝ ախպ, ոխպ, եխպայր կամ եխփայր, ախճիկ կամ ախչիկ։ Այսպես և «ծաղիկ» բառի մեջ Ղ հնչյունը պահում է իր ձայնեղ արտաբերությունը, բայց նույն հնչյունը «ծաղկել» բառի մեջ դառնում է Խ՝ հաջորդ անձայն Կ հնչյունի ազդեցությամբ, և այդ բառն արտասանում ենք «ծախկել»։

Առնմանումին հակառակ երևույթ է տարնմանումը (դիսիմիլացիա), որով փոխվում են իրար ոչ-կից և ոչ էլ մոտիկ եղած հնչյունները մի բոլորովին ուրիշ բառի ուրիշ հնչյունի ազդեցության տակ. օրինակ՝ հին «փեբրուար» տարնմանությամբ դարձել է «փետրուար», այժմ՝ փետրվար, մինչդեռ հին «յանուար» առնմանությամբ դարձել է «յունուար», այսինքն առաջին վանկի Ա ձայնավորը դարձել է Ու, երկրորդ վանկի Ու ձայնավորի ազդեցությամբ. ապա այժմ՝ հունվար։ Այս բառը որոշ մարդկանց բերանին «փետրվար» բառի տարնմանությամբ արտասանվում է «հունըրվար»։ Նույնպես «սեպտեմբեր» բառը «հոկտեմբեր» և «դեկտեմբեր» բառի տարնմանությամբ արտասանում են «սեկտեմբեր»։

47. Նայ Ր հնչյունի Լ դառնալը, և ընդհակառակն։— Այսպես փոխվում են արգելականները, հին՝ մի՛ զարմանար, մի՛ ասեր, նոր՝ մի՛ զարմանալ, մի՛ ասիլ։ Ուրիշ բարբառների մեջ, ընդհակառակն, հին՝ չեմ զարմանալ, չեմ ուտել, նոր՝ չեմ զարմանար, չեմ ուտեր. հին՝ տեսել եմ, չեմ տեսել, նոր՝ տեսեր եմ, չեմ տեսեր։

Բացի վերևում (§§ 40—47) հիշվածներից, բարբառների մեջ կան ուրիշ փոփոխություններ էլ բաղաձայնների նկատմամբ, ինչպես՝ հաց—խաց և ուրիշները։ Ձայնավորների կրած փոփոխությունները ներքևում առանձին են բերված։

48. Հնչյունների կորուստ և նոր հնչյունների ծագում լեզվի մեջ։— *Հնչյունների շրջման հետևանքով, երբեմն լեզվի միջից դուրս են ընկնում հնչյուններ, և կամ, ընդհակառակն, լեզվի մեջ առաջ են գալիս այնպիսի հնչյուններ, որ առաջ չեն եղել։ Այսպես մեր լեզվի մեջ չկան այլևս հին է, ѳ տառերի համապատասխան հնչյունները. իսկ, ընդհակառակն, ֆ հնչյունը, որ առաջ չի եղել մեր լեզվի մեջ, այժմ երևան է եկել մեր մի քանի բարբառների մեջ. օրինակ՝ հոգի, հոտ, հող— արտասանում են՝ ֆոգի, ֆոտ, ֆող։*

Մեր Ղ հնչյունի կրած շրջումի մեջ միաժամանակ տեսնում ենք այս երկու երևույթն էլ։ Դա եղել է սկզբնապես ձայնորդ կատկային լ, որ արտասանվել է լեզվի ետևի մասի և կատկի միջև. լեզվի ետևի մասը բարձրանալով դեպի կատիկը՝ նեղացնում է բերանի անցքը, ուր և արտասանվելով լ հնչյունը՝ ստանում է կատկային բնավորություն։ Դա Ղ տառի հին հնչյունն է, որ հին ժամանակ անշուշտ ավելի լ է ըմբռնվել, քանի որ օտարազգի, ավելի հունարենի, լ հնչյունը տառադարձել են դրանով, ինչպես՝ Ղազար, Ղուկաս և այլն։ Բայց հետագայում այս հնչյունի արտաբերության ժամանակ լեզվի ետևի մասն ավելի ևս բարձրանալով դեպի կատիկը, լեզվի և կատիկի միջի անցքն ավելի ևս նեղացնում է, ուստի և հին հստակաձայն Ղ հնչյունը, որ լ-ի մոտ է եղել, փոխվել է նեղվածքի շփական ձայնեղ Ղ հնչյունի, ինչպես լսվում է այժմ, օրինակ, «աղաղակել» բառի մեջ, որով լեզվից դուրս է ընկել Ղ տառի հին հընչյունը, բայց միաժամանակ լեզվի մեջ առաջ է եկել մի նոր հնչյուն— այժմյան ձայնեղ Ղ, համապատասխան անձայն խ հնչյունին։ Այս ձայնեղ Ղ հնչյունն այնուհետև, ինչպես տեսանք, որոշ դեպքերում դարձել է անձայն խ։ Կան սակավաթիվ բառեր, որոնց մեջ հին Ղ հնչյունը դարձել է պարզապես լ, ինչպես՝ այղ, աճաղի, մառախղուտ— *դարձել են՝* այլ, աճալի *(անլի, ալանի),* մառախլուտ։

Ֆրանսերենի u, *գերմաներենի* ü *հնչյունի մասին մեր բարբառների մեջ տե՛ս § 51. 4։*

49. Բառաշեշտի տեղափոխություն։— *Նախագրաբարյան շրջանում հայերենի շեշտը եղել է բառերի նախավերջին վանկի վրա. շեշտի ազդեցությամբ բառերի վերջը դուրս է ընկել, որով շեշտը մնացել է վերջին վանկերի վրա, բացի «ըն», «ըր», «ըղ» վերջացած սակավաթիվ բառերից, ինչպես՝ դո՛ւըն, մո՛ւկըն, դո՛ւստըր, քա՛ղցըր, ա՛ստըղ։ Բառերի վերջի ձայնավորի դուրս ընկնելու հետևանքով շեշտի ուժը թուլացել է։ Բարբառների մեծ մասը, ինչպես և նոր գրական լեզուն, պահում են հին լեզվի այդ թույլ շեշտադրությունը վերջին վանկի վրա։*

Ակեցյան բարբառների մեծ մասի մեջ, սակայն, շեշտը վերջին վանկից տեղափոխվել է վերջընթեր վանկի վրա. շեշտում են ոչ թե դանա՛կ, հարսանի՛ք, կատարե՛լ, գնացի՛, այլ դա՛նակ, հարսա՛նիք, կատա՛րել, գնա՛ցի։ Շեշտի այս դրության վրա չեն ազդում բնավ բառի վերջից ավելացած հոդերը, ուստի շեշտվում են դարձյալ դա՛նակըս, դա՛նակըդ, հար-

սա՛նիքը։ Բայց երբ վերջընթեր վանկի ձայնավորն ը հնչյունն է, շեշտը մնում է վերջին վանկի վրա. ինչպես՝ կըտրե՛լ, պատըռտե՛լ, երկընքի՛։ Որոշ դեպքերում այս կամ այն գավառաբարբառի մեջ շեշտադրության այս ընդհանուր կանոնը սահմանափակվում է առանձին պայմաններով. օրինակ՝ կան ենթաբարբառներ, որոնց մեջ հոդնականի «ներ» վանկն է շեշտվում՝ քաղաքնե՛ր, փողոցնե՛ր, մինչդեռ ուրիշների մեջ այս դեպքում ևս շեշտն անցել է վերջին վանկին՝ fաղա՛fներ, փողո՛ցներ։ Բացի այդ՝ տեղափոխված շեշտադրություն ունեցող բարբառների մեջ կան բառեր, որոնք փոխառություն են գրաբարից և դեռ պահում են հին շեշտադրությունը վերջին վանկի վրա։ Շեշտի ուժի նկատմամբ պետք է դիտել, որ բարբառները տարբերվում են միմյանցից. Այրարատյան բարբառը (Երևան, Էջմիածին և այլն) համեմատաբար ավելի թույլ շեշտ ունի, քան Արցախի, Լոռու և առհասարակ եզերային բարբառները։ Բայց վերջընթեր վանկի վրա տեղափոխված այս շեշտն ընդհանրապես ավելի ուժեղ է, քան հին շեշտը վերջին վանկի վրա։

Առօրյա կենդանի խոսակցության ժամանակ, նույնիսկ մաքուր գրական լեզվով խոսելիս, սովորաբար պահվում է փոխված շեշտադրությունը, եթե խոսողի մայրենի բարբառն ունի այդ շեշտադրությունը. իսկ գիտական ու գրական և այլ նյութերի մասին խոսելիս և մա՛նավանդ կարդալիս՝ դեռ պահվում է հին շեշտադրությունը վերջին վանկի վրա։ Բայց եթե գրվածքն ունի ժողովրդական բնավորություն և լեզվով մոտիկ է բարբառին, այսպիսի դեպքում կարդալիս էլ այժմ սովորաբար պահվում է վերջընթեր վանկի շեշտադրությունը։ Վերջերս նույնիսկ դասախոսություններն ու ճառերը լսվում են փոխված շեշտադրությամբ, առանձնապես այնպիսի անձերից, որոնք հայ դպրոցներում չեն սովորել և գրական լեզվին վարժվել են դպրոցից դուրս։

50. Սղումներ շեշտի ազդեցությամբ։— *Շեշտված վանկը, ինչպես տեսանք, ավելի մեծ ուժով է արտաբերվում, քան մյուսները։ Շեշտված վանկից առաջ և հետո ընկած վանկերի ձայնավորներն անուժության պատճառով փոփոխության են ենթարկվում։ Դրանք շեշտի ազդեցության տակ ժամանակի ընթացքում հետզհետե ավելի թույլ արտաբերվելով՝ ստանում են մրմնջաձայն հնչյունների բնավորություն։ Երբ արտաբերության թուլությունը մեծանում է, այդ ժամանակ մեր ականջն այլևս տարբերություն չի դնում այդպիսի ձայնավորների երանգի մեջ, և նրանց տեղ անցնում է թույլ Ը ձայնավորը, և կամ նրանք բոլորովին դուրս են ընկնում բառի միջից։ Օրինակ՝ հարսանի՛ք բառի միջին Ա ձայնավորը թույլ արտաբերվելով մի քանի բարբառների մեջ դարձել է մրմնջաձայն, ապա՝ Ը ձայնավոր՝ հարսընի՛ք, և նույնիսկ դուրս է ընկել, որով այդ եռավանկ բառը դարձել է երկավանկ՝ հարսնի՛ք։ Ձայնավորների այս փոփոխությունը կոչում ենք սովորաբար* սղում։

Սղված Ը ձայնավորի մնալը կամ դուրս ընկնելը կախված է հաճախ հայերենի բաղաձայնների կապակցության ընդհանուր բնավորությունից։

Երբ սղումից հետո այնպիսի բաղաձայններ են հաջորդում իրար, որ կարող են միանալ առանց Ը ձայնավորի, այն ժամանակ վերջինս կորչում է։ Օրինակ՝ երբ հին կոտորատել բառը երկրորդ վանկի Ո ձայնավորի սղումով դառնում է կոտրատել, այդ ձայնավորը դուրս է ընկնում, և քառավանկ բառը դառնում է եռավանկ, որովհետև մեր լեզվի հնչյունների կապակցության օրենքով հեշտ արտասանում ենք կոտ–րա–տել։ Բայց երբ այս վերջին բառի միջին Ա ձայնավորն էլ սղվում է, և բառը դառնում է կոտրտել, մենք այս բառն արտասանում ենք կոտրրտել. որովհետև մեր լեզվի մեջ չենք կարող երկավանկ արտասանել «կոտր-տել» և ոչ էլ «կոտ-րտել», քանի որ վանկի սկզբում երկու բաղաձայն «րտ» չեն կարող ընկնել, իսկ վանկի վերջում մի բաղաձայնից հետո Ր չի կարող գալ առանց մի ձայնավոր ունենալու միջին. կոտր— մենք կարող ենք արտասանել միայն կոտըր, ինչպես արտասանում ենք՝ **խաղըր, բարձր,** ծանըր։ Դարձյալ երբ նույն կոտրատել բառի առաջին վանկի Ո ձայնավորն է սղվում, մենք բառն արտասանում ենք կրտրատել, որովհետև մեր լեզվի մեջ բառի սկզբում երկու և ավելի բաղաձայններ չեն կարող ընկնել մեկ վանկի մեջ։ Նույնպես երբ հին մտուցանել բառը սղվելով դարձել է մտցնել, մենք արտասանում ենք մրտցրնել, և ոչ երկվանկ «մրտցնել», որովհետև մեր լեզվի մեջ վանկի վերջում չեն կարող գալ «տց», մենք չունենք «մրտց», «մատց», «մուտց» և նման վանկեր։ Ը ձայնավորը միշտ անպատճառ սղված ձայնավորի տեղ չի մտնում, այլ երբեմն ավելանում է այնպիսի բաղաձայնների մեջ, ուր ոչ մի ձայնավոր չկա բառի չսղված ձևով. օրինակ՝ պառավներ բառի երկրորդ վանկի Ա ձայնավորը մի քանի բարբառների մեջ սղվում է՝ պառվներ. բայց այս սղված ձևը չի արտասանվում ոչ երկավանկ «պառվ-ներ», որ անհնարին է, որովհետև «պառվ» վանկ չկա մեր լեզվի մեջ, և ոչ էլ «պառրվներ», ինչպես պիտի սպասեինք, այլ՝ պառվրներ։

Սղումը շեշտից առաջ միակերպ չի առաջ եկել բոլոր բարբառների մեջ։ Տարբերությունն առաջանում է շեշտի դրության և ուժի տարբերությունից։ Վերջշեշտ բարբառների մեջ սղվում է երկուսից ավելի վանկեր ունեցող բառերի վերջընթեր վանկի ձայնավորը. մինչդեռ հարաշեշտ բարբառների մեջ, այսինքն այն բարբառների, որոնց վերջընթեր վանկը զորեղ շեշտ ունի, սղվում են վերջընթեր վանկից առաջ ընկած վանկերը։ Օրինակ՝ հարսանի՛ք, դադարե՛լ, տապակե՛լ, փաթաթե՛լ, շալակե՛լ, տովորե՛լ, խորովե՛լ, իրիկո՛ւն բառերը վերջշեշտ բարբառների մեջ դառնում են՝ հարսնի՛ք, դադրե՛լ, տապկե՛լ, փաթթե՛լ, շալկե՛լ, սովրե՛լ (սորվել), իրկո՛ւն։ Այսպես և շատ բառեր՝ վախնալ, մոտնալ, գողնալ. մոռնալ, մեծնալ, լսել, ընել, շիտկել (շտկել փոխ. շիտակել), համբել, պարպել և այլն։ Մինչդեռ հարաշեշտ բարբառների մեջ նույն բառերը դարձել են հրսա՛նիք, դդա՛րել, տպա՛կել, փթա՛թել, շլա՛կել, սվո՛րել, րի՛կուն և ուրիշ շատ բառեր՝ րե՛վալ (—երևալ), հվա՛տալ, հմբա՛րել, բժա՛նել և այլն։

Այս սղումներից առաջին տեսակը, որ ծագում է շեշտի հին դրությունից վերջին վանկի վրա, գործել է նաև արևելյան բարբառների մեջ, որոնց թվում և նոր գրական լեզվի մայր Այրարատյան բարբառի մեջ. ուստի և գրական լեզվի մեջ ընդունված են այսպիսի սղումներ՝ մտնել, ելնել, տեսնել, գտնել, ընկնել, թռցնել, մեծացնել և նմանները, փոխանակ հին լեզվի՝ մտանել, ելանել, տեսանել, անկանել, թռուցանել, մեծացուցանել և նման ձևերի. նույնպես կրկնավոր բառերն ու բայերը՝ վառվռուն, թափթափել, վազվզել և նմանները գործածվում են ավելի սղված ձևով՝ վառվռուն, թափթփել, վազվզել և ուրիշ շատ բառեր՝ կոտրատել—կոտրտել, կտրատել—կտրտել, պատառել—պատռել, պատառոտել—պատռտել, պակասել—պակսել, հովհարել—հովհարել-հովհարել, ավելացնել—ավելցնել, կճեպել—կճպել, սատկել (հին՝ սատակել), երկուշաբթի, երեքշաբթի և այլն (հին՝ երկուշաբաթի, երեքշաբաթի), լալկան (հին՝ լալական), բանվոր, շատվոր, կոճկել, կտոր (հին՝ կոտոր), վրա (հին՝ վերա), սրա, դրա, նրա (հին՝ սորա, դորա, նորա) և այլն: Այս և նման բառերի չսղված ձևերից մի քանիսի գործածությունը գրական լեզվի մեջ, անշուշտ, փոխառություն է գրաբարից: Նույնպես սղված ձևերից մի քանիսը թե՛ Այրարատյան բարբառի և թե՛ մեր նոր գրական լեզվի մեջ անպայման փոխառություն են ուրիշ բարբառներից. իսկ ուրիշները, ինչպես են՝ մտնել, թռցնել, կտոր և այլն, արևելյան հարաշեշտ բարբառների, որոնց թվում և Այրարատյան բարբառի մեջ առաջացել են նախքան շեշտի տեղափոխվելը վերջընթեր վանկի վրա. ուրեմն նախ, օրինակ, տեսանե՛լ, սատակե՛լ դարձել են՝ տեսնե՛լ, սատկե՛լ և ապա նոր շեշտն անցել է վերջընթեր վանկի վրա՝ տե՛սնել, սա՛տկել:

Շեշտի այս տեղափոխությունը վերջընթեր վանկի վրա (հարսա՛նիք, մեծա՛նալ) իր կողմից արգելք է հանդիսացել Այրարատյան բարբառի մեջ շատ եռավանկ և քառավանկ բառերի վերջընթեր վանկի սղվելուն: Ուստի մինչդեռ վերջաշեշտ բարբառների մեջ բառավերջի շեշտը շարունակել է գործել, և առաջ են եկել սղված ձևեր՝ հարսնի՛ք, մեծնա՛լ, մոտնա՛լ, վախնա՛լ, խորվե՛լ, շատնա՛լ և այլն,— Այրարատյան բարբառի մեջ այդպիսի բառեր նոր շեշտադրության պատճառով մնացել են անփոփոխ՝ հարսա՛նիք, մեծա՛նալ, մոտե՛նալ, վախե՛նալ, խորո՛վել, շատա՛նալ: Մյուս կողմից՝ մինչդեռ հարաշեշտ եզերային բարբառների (օրինակ՝ Արցախի) շեշտն ավելի ուժեղ լինելով, արդեն ավերում է գործել իրենից առաջ ընկած վանկերի մեջ, և առաջ են եկել սղումներով՝ հրսա՛նիք, կտա՛րել, խրո՛վել և այլն,— Այրարատյան բարբառի շեշտը համեմատաբար թույլ լինելով՝ ընդհանրապես այսպիսի սղումներ առաջ չի բերել: Այսպես ուրեմն, Այրարատյան բարբառը վերջընթեր վանկի շեշտվելու և այդ շեշտի թույլ լինելու պատճառով՝ համեմատաբար ավելի դիշ է ենթարկվել սղման շեշտից առաջ, և իր բառերի կերպարանքով, ինչ որ հնչյուններին է վերաբերում, ավելի մոտիկ է հին լեզվին—գրաբարին և ավելի լիահընչյուն և լիաձայն է, քան ուրիշ բարբառներ:

Սղումներ շեշտից ճետո շատ չկան, որովհետև շեշտը եղել է մեծ մասամբ վերջին վանկի վրա։ Սակավաթիվ հարաշեշտ բառերից Ըն վերջացածները միայն ենթարկվել են շեշտի ազդեցությանը։ Այսպես թվականներից՝ յոթն (ևօթն), իննն, տասն դարձել են յոթը, յոթ, ինը, տասը, տաս. բայց ձայնավորներից առաջ դեռ պահում են վերջին Ն հնչյունը, օրինակ՝ յոթն օր, բայց յոթ գիշեր կամ յոթը գիշեր, տասն ամիս, բայց տասը տարի կամ տաս տարի, ինն օր, իննն ամիս, ինը շաբաթ։ Նույնպես՝ խառն, սառն, դառն բառերը արտասանում են՝ խառը, սառը, դառը. բայց ձայնավորից առաջ այդ բառերն ևս դեռ պահում են վերջին Ն հնչյունը, ինչպես՝ սառը ջուր, սառն աղբյուր։ Այս միևնույն փոփոխության ենթարկվել է նաև Ն հոդը երկու բաղաձայնների մեջ, ինչպես՝ այն մարդը գնաց, օրը մթնեց, բայց՝ մարդն ասաց, այն մարդն ուրախ է, այն մարդն է, օրն անցավ։ Կան բարբառներ (ինչպես Վանի բարբառը), որոնց մեջ այս սղումն ավելի զարգացած է Ն հոդի վերաբերմամբ. այն է՝ Ն հոդը պահվում է միայն ձայնավորով վերջացած բառերի վերջում (իգին, եկեղեցին), մնացած դեպքերում դուրս է ընկնում, ինչպես՝ այն մարդ գնաց, օր մթնեց։

Կան որոշ թվով բառեր ևս, որոնք հին լեզվի մեջ վերջանում են Ն հնչյունով, իսկ նոր լեզվի մեջ այդ վերջին Ն հնչյունն արդեն դուրս է ընկել և միայն հոգնակիում է երևան գալիս,այն էլ ոչ բոլորի մեջ. այսպես հին՝ ակն, արեգակն, ձուկն, դուռն, ամառն, ձմեռն, մատն, ոտն, անձն, մասն և այլն նոր լեզվի մեջ դարձել են՝ ակ, արեգակ, ձուկ, դուռ, ամառ, ձմեռ, մատ, ոտ, անձ, մաս։ Նույնպես «ումն» ածանցով բառերը՝ շարժումն, ուսումն, հանումն, այժմ դարձել են՝ շարժում, ուսում, հանում (տե՛ս § 94. 3)։

Շեշտի տեղափոխությունը վերջընթեր վանկի վրա դեռ նոր է ազդում վերջին վանկի վրա. այսպես արդեն հաճախ արտասանում են՝ ա՛սըմ եմ, իմա՛նըմ եմ, բա՛կըմը և նույնիսկ՝ ա՛մեմ, իմա՛նեմ։ Բայց դա արժեք չունի գրական լեզվի նկատմամբ։

51. Երկբարբառների պարզումը։— Հին լեզվի երկբարբառները՝ Ա3, Ո3, Աի, Եի, Իի, ԵԱ, ԵԱ3, ԵԱի, շրջումով վերածվել են նոր լեզվի մեջ պարզ ձայնավորների։ Այդ երկբարբառների գրությունն աշխարհաբարի մեջ՝ փոխառություն է գրաբարից։

Երկբարբառների վերածումը պարզ ձայնավորների՝ հետևանք է բաղադրիչ ձայնավորների արտաբերության տեղերի տարբերության վերացման։ Իսկ այս նրանից է առաջ գալիս, որ, օրինակ, Ա3 երկբարբառը մի՛ անգամից արտաբերելու համար՝ պետք է, որ բաղադրիչ Ա և անվանկային 3(ի) ձայնավորների արտաբերության տեղերը մոտենան իրար, որպեսզի, որքան կարելի է, հեշտ լինի Ա-ից անցումը 3-ի։ Դրա համար Ա3 երկբարբառի երկու հնչյունները փոխադարձաբար ազդելով միմյանց վրա՝ մոտենում են միջին է(ե) ձայնավորի արտասանությանը, որ իր արտաբերության տեղով մի կողմից՝ մոտ է Ա-ին իբրև միջին բարձրության ձայ-

նավոր, մյուս կողմից՝ Յ-ին (անվանկային Ի-ին) իբրև առաջաքմային ձայնավոր, և այսպիսով Ա3 երկբարբառը ժամանակի ընթացքում դառնում է պարզ է(ե) ձայնավոր (այծ—էծ, սայլ—սել)։ Այս շրջումը, հարկավ, մի անգամից չի կատարվում։ Սկզբում ստորին բարձրության վերջաքմային Ա ձայնավորը, որ մեր սովորական Ա-ն է, դառնում է ստորին բարձրության առաջաքմային Ա ձայնավոր (ä),— որ մեր գրական լեզվի մեջ չկա, բայց կա բարբառների մեջ և ձայնաբանորեն նման է թե՛ Ա-ին և թե՛ է(ե)-ին, իսկապես այս երկուսի միջին մի հնչյուն է,— այնպես որ առաջ է գալիս նախ՝ äj երկբարբառ, և ապա՝ այս երկու առաջաքմային հնչյունների միջինը՝ է(ե) ձայնավորը։

Նույն եղանակով նաև հին Ա՛ (aը) երկբարբառը, որ կազմված է վանկային Ա և անվանկային Ի, որ է՝ անվանկային Ո՛Ի, ձայնավորներից, վերածվում է հեշտությամբ Օ(Ո) ձայնավորին (հին՝ մաւտ, նոր՝ մոտ), քանի որ այս վերջինս իր արտաբերությամբ, իբրև վերջաքմային միջին բարձրության ձայնավոր, միջին տեղն է բռնում վերջաքմային ստորին բարձրության Ա ձայնավորի և վերջաքմային վերին բարձրության Ո՛Ի ձայնավորի միջև։ Այսպես և հին Ո՛Յ երկբարբառը դարձել է Ո՛Յ (հին՝ լոյս, նոր՝ լույս), այսինքն վանկային Ո ձայնավորը, որ վերջաքմային միջին բարձրության ձայնավոր է, դարձել է վերջաքմային վերին բարձրության մի հնչյուն, որ է Ո՛Ի ձայնավորը, և դրանով դրա արտաբերության տեղը մոտեցել է վերին բարձրության անվանկային Ի (Յ) հնչյունի տեղին։

Երկբարբառները, սակայն, վերածվում են նաև իրենց բաղադրիչ ձայնավորներին։ Այս ևս հետևանք է կից ձայնավորների արտաբերության տեղերի տարբերությունը վերացնելու ձգտման, միայն այս դեպքում ոչ թե կից ձայնավորների փոխադարձ ազդեցությամբ մի նոր միջին հնչյուն է առաջ գալիս, այլ վերացվում է երկբարբառ կազմող ձայնավորներից մեկի արտաբերությունը. օրինակ՝ Ա3 երկբարբառը դառնում է Ա կամ Ի, ինչպես՝ այլ–ալ, այծ–ած, այգի–փգի, յաւնք–յունք, ուխ։

1. Ա3 երկբարբառը գրական լեզվի մեջ փոխառություն է գրաբարից, ինչպես են՝ այս, երկայն, գայլ, այծ։ Բարբառների մեջ այս երկբարբառ բաղաձայններից առաջ դարձել է կամ պարզ է (ե) կամ Ա ձայնավոր, ինչպես՝ էլ (այլ), երկեն, գել, էծ, կամ ալ, էրկան, գալ, ած։ Սակավաթիվ բառերի մեջ միայն ընդունված չէ Ա3 երկբարբառը, ինչպես՝ «էլ» (հին՝ ես այլ, նոր՝ ես էլ), մեկել (մեկալ, մեկայլ), ցատկել (ցայտկել), տեգր (տագր, տայգր), վար (վայր, վար ընկնել, վեր ընկնել), վաթել (վայթել. ոթել, վիթել)։ Այսպես և բարբառային ձևով՝ էրիկ (այրիկ, այր—տղամարդ բառից), ցուցականները՝ էս, էդ, էն (աս, ադ, ան) փոխանակ՝ այս, այդ, այն ձևերի և մի քանի ուրիշները։

Այս երկբարբառը բառերի վերջում, բացի սակավաթիվ միավանկ բառերից (հայ, բայ, վայ, նայ, ճայ), գրական լեզվի մեջ դարձել է Ա, ինչպես՝ ծառա, փեսա։ Այսպես նաև բայերի վերջում, օրինակ՝ (նա)

գնայ-գնա, զարմանայ-զարմանա, գայ-գա, տայ-տա, զարմացայ-զարմացա, վախեցայ-վախեցա։ Նույն փոփոխությունը կրել է նաև բայերի վերջին վանկի մեջ, ինչպես՝ գնայր, կարդայր-գնար, կարդար. գնայք, կարդայք-գնաք, կարդաք. զարմացայք, դարձայք-զարմացաք, դարձաք. մի՛ գնայք-մի՛ գնաք։

Բարբառային ձևով հին հոգնակին՝ փեսայ՛ք, տղայ՛ք և նմանները դառնում են փեսեք, տղեք, որոնց նման և «ճամբա» բառից կազմվում է «ճամբեք». նույնպես հոդով՝ ծառայն, փեսայն, տղայն և նմանները լինում են՝ ծառեն, փեսեն, տղեն. այլև եղբայր—աղբեր, աղբար։ Գրաբարում արդեն երևում է այս երկբարբառի պարզումը, ինչպես՝ հայր—հարբ. եղբայր—եղբարբ. մայր—մարբ. այր—արբ. աստի, անտի, բայց՝ այտիւ

2. ՈՅ երկբարբառը, որ նույնպես փոխառություն է հին լեզվից, գրաբարում արդեն բաղաձայնից առաջ արտասանվել է ՈՒ, և այս նոր արտասանությամբ ՈՅ գրությունն ընդունվել է նոր գրական լեզվի մեջ, ինչպես՝ լոյս, քոյր, որ այժմ գրում ենք լուս, քուր։ Բարբառների մեջ ՈՅ դարձել է ՈՒ, Ի, Ո պարզ ձայնավորներից մեկը՝ լուս, լիս, լոս. քուր, քիր, քոր։ Գրաբարում արդեն երևում է այս վերջին բառի շրջումը հոգնակի «քորք» ձևի մեջ։ Կան բառեր, որոնք գրական լեզվի մեջ ևս արտասանվում են պարզապես ՈՒ ձայնավորով և մի քանիսը գրվում են միայն ՈՒ-ով. ինչպես՝ անուշ, ուժ, ճկուք, բուն, բուք (մատ), սառուց, պուտ (ծաղիկը), շուտ, խուլ (ուռուցքը) և այլն։

Այս երկբարբառը բառերի վերջում իր հին արտաբերությունը պահել է միայն մի-երկու բառի մեջ՝ նոյ, խոյ. մնացած դեպքերում հին գրական լեզվի մեջ արդեն դարձել է պարզ ձայնավոր Ո և այսպես ընդունվել նոր գրական լեզվի մեջ, ինչպես՝ ներքոյ, ձուլածոյ և նմաններն արտասանում և գրում ենք՝ ներքո, ձուլածո, քո։ Բարբառների մեջ դարձել է ՈՒ, ինչպես հին՝ «մարդոյ», «գնալոյ», «պահածոյ», «շինածոյ» բառերը նոր լեզվի մեջ ունին՝ մարդու, գնալու, պահծու, շինծու ձևերը։ Նույնպես հին «քոյ» դարձել է «քու» կամ «քո». այժմ, սակայն, գրական լեզվի մեջ մնում է միայն «քո» ձևը, «քու» համարվում է բարբառային։

3. ԱՒ (ձՒ) երկբարբառը, որի մեջ Ւ-ը բաղաձայնական ՈՒ ձայնավոր է, բաղաձայնից առաջ գրաբարում արդեն դարձել է պարզ «Օ» ձայնավոր, որ սկզբում անշուշտ տարբեր արտաբերություն է ունեցել և նույնացած չի եղել Ո տառին հատուկ արտասանության հետ. ուստի միջնադարում հարկավոր են համարել այս հնչյունի համար նոր «Օ» տառը մտցնել մեր այբբենարանի մեջ։ Բայց այժմ գրական լեզվի մեջ այլևս չեն տարբերվում հին ԱՒ երկբարբառից ծագած Օ-ն և հին Ո ձայնավորը։ Հին՝ ծնաւղ, ճաւճել, մաւտ. միջին՝ ծնօղ, ճօճել, մօտ, իսկ այժմ՝ ծնող, ճոճել, մոտ։— «նաւթ», «աղաւնի» բառերի մեջ ԱՒ երկբարբառը դարձել է Ավ՝ «նավթ», «աղավնի», բայց մի քանի բարբառների մեջ այդ բառերն էլ դարձել են՝ նոթ, աղոնիկ կամ աղունիկ։

4. ԻՒ երկբարբառը բաղաձայնից առաջ սկզբնապես արտասանվել

է ընկնող (iu), այսինքն վանկային ձայնավորն եղել է ի, իսկ անվանկայինը՝ ՈՒ, որի տառն է «ի»։ Բայց գրաբարում արդեն արտաբերության ուժն անցել է ՈՒ ձայնավորի վրա, ինչպես հաճախ լինում է, և ընկնող ՒՒ (iu) երկբարբառը դարձել է բարձրացող ՅՈՒ (ju) երկբարբառ, որի մեջ վանկային ձայնավորի պաշտոն կատարում է ՈՒ ձայնավորը, իսկ անվանկային է ի ձայնավորը։ Այս արտաբերությամբ էլ այս երկբարբառը գրաբարից մտել է նոր գրական լեզվի մեջ, ինչպես՝ «ալիւր», «իւր», «դիւր», «շիւղ», «ձիւն», «սիւն», որոնք արտասանվում են՝ ալյուր, յուր, դյուր, շյուղ, ձյուն, սյուն։ Բարբառների մեջ այս երկբարբառն էլ վերածվել է իր բաղադրիչ «ի» կամ «ՈՒ» մասերին՝ ալիր, իր, դիր (դիր գալ), շիղ, ձին, սին կամ ալուր, ուր, շուղ, ձուն, դուր (գալ), սուն։

Մի քանի բարբառների մեջ, սակայն, այս շրջումը կատարվել է ուրիշ եղանակով։ Այս երկբարբառի բաղադրիչ մասերի արտաբերության տեղերի տարբերությունը վերացել է ոչ թե նրանով, որ երկբարբառը վերածվել է իր բաղադրիչ մասերին, այլ երկու կից ձայնավորների փոխադարձ ազդեցությամբ մի նոր միջին հնչյուն է առաջ եկել։ Դա շրթնայնացած ի կամ առաջաքմային ՈՒ հնչյունն է (ֆրանսերեն u, lune բառի մեջ. գերմաներեն ü, über բառի մեջ), որ միևնույն ՈՒ հնչյունն է, միայն արտաբերության տեղը, առաջաքմային ի ձայնավորի ազդեցությամբ, փոխվել է քիմքի առաջի կողմը, կամ թե միևնույն առաջաքմային ի ձայնավորն է, միայն արտաբերության համար, շրթնային ՈՒ ձայնավորի ազդեցությամբ, մասնակցում են նաև շրթունքներն իրենց կլորումով։ Այսպես՝ «սիւն», «հիւր» արտասանում են sün, hür։

5. ՅԻ (eu) երկբարբառը բաղաձայնից առաջ եղել է ընկնող, այսինքն վանկային ձայնավորն եղել է ե, իսկ անվանկայինը ի, որ է բաղաձայնական ՈՒ։ Այս երկուսի արտաբերության տեղերի տարբերությունը նրանով է վերացել, որ վերին բարձրության ՈՒ-ի ազդեցությամբ միջին բարձրության առաջաքմային ե-ն ևս դարձել է վերին բարձրության առաջաքմային հնչյուն, որ է ի ձայնավորը. ուստի այս ՅԻ (eu) երկբարբառը բաղաձայնից առաջ գրաբարում արդեն շրջվել է ՒՒ (iu) երկբարբառի, ինչպես՝ հնագույն «բեւր» (beur), «գեւղ», «արեւն», «մեծութեւն» և այլն դարձել են՝ բիւր (biur), գիւղ, արիւն, մեծութիւն, և ապա ՅԻ (eu) երկբարբառից ծագած այս ՒՒ (iu) երկբարբառն էլ նույն փոփոխություններն է կրել, ինչ որ հին ՒՒ երկբարբառը. այսինքն՝ վանկային Ի-ն դարձել է անվանկային, իսկ անվանկային Ի-ը դարձել վանկային ՈՒ, որով ընկնող ՒՒ (iu) դարձել է բարձրացող ՅՈՒ (ju). արեւն, արիւն, արյուն (areun, ariun, arjun)։ Նման շրջում կա և ուրիշ լեզուների մեջ։ Բարբառների մեջ դա ևս վերածվում է ի կամ ՈՒ ձայնավորներին և նույնիսկ երևան է գալիս իբրև առաջաքմային ՈՒ (գերմաներեն ü), ինչպես՝ ալիր, արին, ճիղ կամ ալուր, արուն, ճուղ։ Բայց կան բառեր, որոնց համար այս կամ այն բարբառի մեջ պահվում է հին ՅԻ (eu) երկբարբառի ե ձայնավորը, ինչպես՝ գեւղ-գեղ, ճեղ, մեծութեն։

6. ՅԱ երկբարբառը դրաբարում արդեն շուտ է սկսել «ՅԱ» (ia) երկբարբառի, որի մեջ անվանկային ձայնավորն է Ի, և այս արտաբերությամբ այդ երկբարբառը գրաբարից մտել է նոր գրական լեզվի մեջ, ինչպես՝ սենեակ—սենյակ, արուսեակ—արուսյակ և այլն, որոնք բոլորը փոխառություն են հին լեզվից։ Բարբառների մեջ այս երկբարբառը դարձել է պարզ Ե կամ Ա ձայնավոր, օրինակ՝ «լեարդ», «սարեակ», «ցորեան» դառնում են՝ լերդ, սարեկ, ցորեն. «իւրեանք»—իրենք կամ իրանք, «իրեար»—իրար։ Բայական ձևերը՝ «գրեաց», «տեսեալ» դառնում են՝ գրեց, տեսել, իսկ «փախեայ», «փախեար», «փախեաւ», «փախեաք», «փախեայք», «փախեան» դարձել են՝ փախա, փախար, փախավ, փախանք, փախաք, փախան. հրամայականը՝ «գրեա՛», դառնում է՝ գրե՛, որ ապա դարձել է՝ գրի՛, գրի՛ր։ Բարբառների մեջ կա նաև «գրա՛» ձևը։

7. ՅԱՒ եռաբարբառը դարձել է ՅՕ, որ գրաբարում արդեն արտասանվել է ՅՕ, իսկ այժմ արտասանում ենք ՅՈ, օրինակ՝ արդեաւք—արդեօք—արդյոք։

8. ՅԱՅ եռաբարբառը դարձել է նախ՝ ՅԱ և ապա՝ Ե. ինչպես՝ ոսկեայ—ոսկեա—ոսկե. արծաթեայ—արծաթեա—արծաթե. փախեայք—փախեք, աւետչեայք—ավետչեք, աւուրչեայք—ավուրչեք։ Գրաբարում այս եռաբարբառը դարձել է ՅԱ և այս արտասանությամբ անցել է նոր գրական լեզվին. պաշտօնեայ—պաշտոնյա, գործունեայ—գործունյա։

52. «Ի» հնչյունի և «ՈՒ» ձայնավորի փոխվելը «Վ» հնչյունի։— Թե ԱԻ, ԵԻ, ԻՒ կապակցություններն ինչպես են հին ժամանակ արտասանվել բառերի վերջում և բառերի մեջ ձայնավորներից առաջ, այդ ճիշտ հայտնի չէ։ Ամենայն հավանականությամբ այդ դեպքերում ևս այդ կապակցություններն եղել են երկբարբառ. «քաղաքաւ», «բանիւ» արտասանվել են նույնպես, ինչպես հոգնակին՝ «քաղաքաւք», «բանիւք»։ Բայց մինչ վերջիններս պահել են իրենց երկբարբառային բնավորությունը, և «քաղաքաւք» դարձել է «քաղաքօք», իսկ «բանիւք» մինչև այժմ էլ արտասանվում է «բանյուք»,— առաջիններդ դարձել են «քաղաքավ», «բանիվ», ինչպես արտասանվում են նույնիսկ նոր գրաբարում։ Ինչպես էլ լինի, գրաբարում արդեն, ինչպես և բարբառների մեծ մասի մեջ, «աւ», «եւ», «իւ» կապակցությունների «Ի» հնչյունը բառերի վերջում և միջում ձայնավորներից առաջ արտասանվում է ինչպես բաղաձայն Վ. օրինակ՝ թիւ, հիւանդ, հաւ, աւելի, տերեւ, երեւել, զարմացաւ և այլն արտասանվում են՝ թիվ, հիվանդ, հավ, ավելի, տերև, երևել, զարմացավ։

Այս կապակցություններն այժմյան լեզվի մեջ բնավ կարելի չէ իբրև երկբարբառ դնել և իբրև այդպիսին արտաբերությամբ անբաժան համարել նախորդ ձայնավորից,— ինչպես կարծում են մի քանի քերականներ, —և աշխարհաբարում տողադարձի ժամանակ բաժանել այս ձևով՝ ցաւ-ալից, զորաւ-որ, երեւ-ակ, արեւ-ի և նույնիսկ բով-անդակ և այլն։ Այդ նեղվածքի Ի=Վ բաղաձայնը այժմ անցնում է հաջորդ վանկին՝ ցա-ւալից—ցա-վալից, արե-ւի—արե-վի։

Ինչպես Ի հնչյունը, նույնպես և ՈՒ ձայնավորը բառերի մեջ հաջորդ ձայնավորից առաջ դարձել է վ, օրինակ՝ զուարթ—զվարթ, պատուէր—պատվեր, լեզուի—լեզվի։

53. Պարզ Ե, Ո ձայնավորների երկբարբառում։ *Եթե մի կողմից երկբարբառները ժամանակի ընթացքում պարզ ձայնավորների են փոխվում, մյուս կողմից՝ վերջիններս էլ երկբարբառ են դառնում։ Այսպես՝ մեր լեզվի մեջ բառասկզբի Ե ձայնավորից առաջ ավելացել է անվանկային կամ բաղաձայնական Ի (Յ) ձայնավորը, և առաջ է եկել Յե (je) երկբարբառը, օրինակ՝ ես, եկ, եզն դարձել են յես (jes), յեկ, յեզն. նույնպես բառասկզբի Ո ձայնավորից առաջ ավելացել է անվանկային ՈՒ (Ւ) ձայնավորը և առաջ է եկել «ուո» (ւo) երկբարբառը, որ ապա փոխվել է ՎՈ վանկի, այսինքն ՈՒ ձայնավորը հաջորդ ձայնավորից առաջ, ինչպես ուրիշ դեպքերում, դարձել է վ, օրինակ, «ոտն», «որ» դարձել են՝ վոտ, վոր։*

Կան բարբառներ, որոնց մեջ Ո-ից առաջ ավելացած այս անվանկային ՈՒ-ն այդպես էլ իբրև անվանկային ՈՒ ձայնավոր արտասանվում է և նույնիսկ երևան է գալիս բառամիջի Ո-երից առաջ, ինչպես և Յ հնչյունը բառամիջի Ե-երից առաջ. այսպես՝ «մեզ», «ձոր» բառերն արտասանում են մյեզ, ձուոր։ Այս շրջումը, որ հավանորեն կապված է շեշտի հետ, երևան է գալիս նաև ուրիշ լեզուների մեջ. ինչպես՝ լատիներեն petrum, bonum, *իտալերեն դարձել են՝* pietro, buono։

Այս նոր երկբարբառները, որ հետո են զարգացած պարզ ձայնավորներից, կոչում են **անիսկական երկբարբառներ** *ոչ միայն իրենց պատմական ծագման պատճառով, այլ ավելի նաև այն պատճառով, որ դրանց սկզբի անվանկային Յ-ն և ՈՒ-ն, որոնցից երկրորդը վ է դարձած գրական լեզվի և որոշ թվով բարբառների մեջ, շատ կարճ ու թույլ են արտաբերվում, ուստի հաճախ անկայուն են, և այդ երկբարբառները կամ ՎՈ վանկը հեշտությամբ վերածվում են պարզ Ե, Ո ձայնավորների։ Այսպես օրինակ՝ գրական լեզվի մեջ արտասանում ենք՝ յերգել, վողջունել, վորոշել, բայց «կը» և «չը» մասնիկներից հետո առանց Յ և վ հնչյունների՝ կողջունեն, կորոշվի, չողջունել, չորոշել, կերգի, չերգել. նա յեկավ, նա չեկավ. յեղավ, չեղավ. պիտի վոգևորվի, կոգևորվի, չոգևորվի։ Բայց կան նաև արտասանողներ ու նույնիսկ գրողներ՝ կը վողջունեն, կը յերգի, չը վողջունի (հին ուղղագրությամբ կը ողջունեն, կը երգի, չը ողջունի)։ Գրական լեզվի մեջ, սակայն, այս արտասանությունն ու գրությունն ընդունված չէ։*

Ապա՝ պետք է նկատի ունենալ, որ սկզբից Յ և վ ընդունում են ավելի հաստատուն ձևով գլխավորապես միավանկներն ու նրանցից կազմված բառերը, այլև գրաբարից մտած բառերը, ինչպես՝ յեզ, յես (դերանուն), յել, յեկ, յեզր, յերթե, յեղբայր, յեղեգն, յեղերական, յեղծել, յենթադրել, յեղանակ, յելուզակ, յերբ, յերբեմն և այլն. վոտ, վոր, վողջ, վողբ, վոգի, վոճ, վոչ, վոստ, վոստոնել, վոսոխ, վորթ, վորոնել և այլն[2]։ Իսկ այն բազ-

մավանակ բառերը, որոնք կենդանի և անփոփոխ մնացել են շատ բարբառների մեջ, սովորական խոտակցության ժամանակ, հետևելով բարբառներին, արտասանում ենք նաև առանց սկզբի յ և վ հնչյունների. ինչպես՝ էրևալ, էրե, էրես, էրնեկ, էրկու, էկա, էրդում, օղորմել, օղողել, օրոճալ, օլորել, օսկոր և այլն։

54. Է և Ե ձայնավորների նույնացումն և փոխվելը Ի ձայնավորի։— է և ե ձայնավորների հին արտաբերության տարբերությունը դեռ ամենևին որոշ չէ. հավանորեն է-ն, ըստ իր ծագման հնդեվրոպական ei կամ oi կապակցություններից, եղել է երկար, ուստի և հաճախ փոխանակել է ե+յ միությանը. այսպես օրինակ՝ գրաբարում բայերի՝ «ասէ», «ասէք», (մի՛ ասէք), «ասէր» ձևերի վերջավորությունների մեջ է տառը բռնում է ե+յ միության տեղը իբրև՝ ասեյ, ասեյք, ասեյր (ինչպես՝ զարմանայ, զարմանայք, զարմանայր ձևերի մեջ յ տառը)։ Դրանց որակի տարբերությունն ևս հին ժամանակի համար որոշ չէ. հավանորեն է-ն եղել է փակ, իսկ ե-ն՝ բաց։

Գրաբարում արդեն 12-րդ դարից ի վեր, գուցե և ավելի վաղ, վերացած է է և ե ձայնավորների տարբերությունը, է-ն դարձել է ե, և նոր գրական լեզվի մեջ ևս ունինք միայն մեկ բաց ե ձայնավոր, որ նայելով բարբառներին, երբեմն ավելի կամ պակաս չափով բաց է արտասանվում։ Այսպես օրինակ՝ ինչպես «զարմանայ», «զարմանայք», «զարմանայր» ձևերն այժմ արտասանում ենք՝ զարմանա, զարմանաք, զարմանար, նույնպես՝ «գրէ=գրեյ», «գրէք=գրեյք», «գրէր=գրեյր» ձևերն այժմ արտասանում ենք՝ գրե, գրեք, գրեր, այսինքն՝ է=եյ հնչյունը դարձել է պարզ ե։

Բայաձևերի և մի քանի բառերի մեջ ե ձայնավորը փոխվել է ի ձայնավորի՝ գրէ=գրեյ—գրե՛—գրի՛, գրեա՛—գրե՛—գրի՛, չեմ գրել—չեմ գրիլ, մի՛ գրեր—մի՛ գրել—մի՛ գրիլ, գրեցեր—գրեցիր. երեկոյ—իրիկուն, երեք—իրեք։

55. Անվանկային յ ձայնավորի ավելացում երկու ձայնավորների մեջ։— Գրաբարում արդեն Ա և Ո ձայնավորներից հետո բառի մեջ չեն կարող գալ անմիջապես ուրիշ ձայնավորներ. երկու ձայնավորների մեջ այդ դեպքում մտնում է յ կիսաձայնը, ինչպես՝ վայելք, գնայի, գնայիր, գնայաք, գնայիք, գնային։ Բայց ե, ի, ՈՒ ձայնավորների հանդիպումը հաջորդ ձայնավորների հետ միևնույն բառի մեջ կամ, ինչպես ասում են, հորանջով (հիատուսով) արտաբերությունը, դեռ հնարավոր է. այսպես հին գրաբարում «եմ» բայի անցյալն եղել է՝ եի, եիր, եաք, եիք, եին. նույնպես գրեի, գրեիր, գրեաք, գրեիք, գրեին. նույնպես՝ զուարթ, միանալ, միութիւն և այլն։ Նոր լեզվին, սակայն, այլևս հատուկ չէ երկու ձայնավորների այսպիսի անմիջական հանդիպումը միմյանց հետ. երկու ձայնավորների մեջ մտնում է յ հնչյունը, որ կոչում են «ձայնակապ» յ. օրինակ՝ «եմ» բայի անցյալն այժմ արտասանում ենք՝ էյի, էյիր, էյինք, էյիք, էյին. նույնպես՝ գրեյի, գրեյիր, գրեյինք, գրեյիք, գրեյին։ Այսպես

հավանորեն արտասանել են և միջնադարում, քանի որ ե տառին փոխանակել է է=ե3 տառը, և այդ բայը գրել են՝ էի, էիր, էաք, էիք, էին, նույնպես՝ գրէի, գրէիր, գրէաք, գրէիք, գրէին[3]։ Նույնպես՝ էակ, էութիւն, քրիստոնէական, րոպէով, րոպէում և այլն այժմ արտասանում ենք՝ էյակ, էյություն, քրիստոնեյական, րոպեյով, րոպեյում, մարգարեյություն և այլն։

Ու ձայնավորի հանդիպումը հաջորդ ձայնավորի հետ վերացել է կամ Ո-ի փոխվելով Վ բաղաձայնի, ինչպես՝ զուարթ—զվարթ, լեզուի—լեզվի, հեռուից—հեռվից, կամ ՓԸ, ավելի արևմտյան բարբառներում, երկու կից ձայնավորների մեջ մտնում է դարձյալ Յ կիսաձայնը, ինչպես՝ լեզույիդ, հեռույեն, դասատույի, դասատույով։ Նույնը լինում է նաև Ի ձայնավորի նկատմամբ. դա ևս հաջորդ ձայնավորի հետ միանում է կամ Յ կիսաձայնով, կամ ինքն Ի ձայնավորը թույլ արտասանվելով՝ դառնում է՝ Յ, որ հաջորդ ձայնավորի հետ կազմում է մի երկբարբառ. օրինակ՝ «միանալ», «ձիով» բառերն արտասանվում են կամ իբրև միյանալ, ձիյով, կամ իբրև մյանալ, ձյով։ Նույնպես օտարազգի բառերն ու անունները՝ միլիցիա, լաբորատորիա, Իտալիա, Գերմանիա և նմաններն արտասանվում են՝ միլիցյա, լաբորատորյա, Գերմանյա, Իտալյա։ «Ի» ձայնավորի այս վերջին շրջումն ունի և հին լեզուն, որի մեջ Իև կապակցությունը տալիս է ՅԱ, ՅԱ երկբարբառը, օրինակ՝ «որդիակ», «պատանիակ» դառնում են՝ որդեակ, պատանեակ, որ այժմ արտասանում ենք՝ որդյակ, պատանյակ։

Երկու ձայնավորի մեջ մտած այս նոր Յ հնչյունը երևան է գալիս նաև երկու տարբեր բառերի մեջ, երբ նրանցից երկրորդը իբրև միավանկ վերջահար բառ նախորդ շեշտի ազդեցության տակ միանում է նախորդ բառի վերջից և երկուսը միասին արտասանվում են իբրև մեկ բառ. այսպես առանձնապես վերջահար են «եմ» բայի միավանկ ձևերը՝ դու—յես, նա—յէ, գնալու—յեմ, գնալու—յես, գնալու—յէ. ինչո՞ւ—յէ ասում[4] և այլն։

56. Յ հնչյունի փոխվելը Հ հագագի։— Բառերի սկզբում գրական լեզվի, ինչպես և շատ բարբառների մեջ, Յ հնչյունը կամ դուրս է ընկել, կամ մեծ մասամբ նույնացել է, ինչպես և գրաբարում, Հ հագագի հետ, օրինակ՝ հին «յատակ», «յարմար» այժմ արտասանվում են՝ հատակ, հարմար։

Կան բարբառներ, որոնց մեջ մի քանի բառերի սկզբում հին Յ-երը, ըստ երևույթին, երևան են գալիս իբրև ձայնեղ հագագ, որ մի նոր հնչյուն է մեր լեզվի մեջ։ Բայց այդ բարբառների մեջ ձայնեղ հագագն ավելանում է նաև շատ այնպիսի բառերի սկզբում, որոնք հին լեզվի մեջ չունին սկզբում Յ անվանկային ձայնավորը, ինչպես՝ արտ, ամոթ, ընկնել, իմանալ, ելնել, ընկեր և այլն արտասանում են ձայնեղ հագագով. մինչ ուրիշ բարբառների մեջ անձայն հագագ է ավելանում որոշ թվով բառերի սկզբում, օրինակ՝ «ամոթ», «ընկեր» արտասանում են՝ համոթ, հընկեր։

57. Ուղղագրություն:— *Ինչպես վերևի բացատրություններից կարելի է տեսնել, մեր հին գրական լեզուն—գրաբարն ևս, ապրելով գրագետների մեջ, ենթարկվել է հնչյունների շրջումին։ 19-րդ դարի սկիզբներում, երբ առաջ է եկել մեր նոր գրական լեզուն, գրաբարն ուներ բառերի արտասանության նկատմամբ մի որոշ հաստատուն եղանակ, որ գրեթե միակերպ պահպանվում էր և մինչև այսօր էլ պահվում է ամեն տեղ, բացի գլխավորապես պայթականների (բ, գ, դ, պ, կ, տ) և նույն տեսակի կըրկնականների (ձ, ծ, ճ, ջ) արտաբերությունից, որ տարբեր է արևելյան և արևմտյան դպրոցներում։ Գրաբարում գրությունը, սակայն, սակավ բացառությամբ, պահվում էր հինը, այսինքն 5-րդ դարինը, թեպետ կարդալիս արտասանում էին փոխված ձևով, մեծ մասամբ կենդանի արտասանության համեմատ։*

Այս գրաբարյան նոր արտասանությունը, որ արևելքում գրեթե նույնանում է Այրարատյան բարբառի արտասանության հետ, հին դպրոցական-գրական լեզվից անցնում է նոր գրական լեզվին։ Նույնը լինում է մասամբ նաև ուղղագրության վերաբերմամբ։ Ինչ բան որ գրաբարում գրում էին հին ձևով և կարդում էին նոր, որ է՝ աշխարհաբարի արտասանությամբ, նույնը նույնպես գրում ու կարդում են աշխարհաբարում. օրինակ՝ հին գրություններ՝ մարդ, անցեալ, ամօթ, արիւն, յատակ, լոյս, եկ, որդի, զուարթ, քրիստոնեայ և այլն գրաբարում կարդում էին՝ մարթ, անցյալ, ամոթ, արյուն, հատակ, լուս, յեկ, վորթի, զվարթ, քրիստոնյա. նոր գրական լեզվի մեջ ևս այդ և նման բառերն այդպես գրում ու կարդում էին։ Նոր գրական լեզվի մեջ խորթ չէր թվում այդպիսի բառերի հին գրությունը, քանի որ աշխարհաբար գրել սկսողները վարժված էին գրաբարում այդպես հին ձևով գրելուն և նոր արտասանության համեմատ կարդալուն, և նրանք միաժամանակ ավելի հաճախ գրաբար էին գրում ու կարդում, քան աշխարհաբար։

Բայց ինչ բան որ կարելի չէր աշխարհաբարում հին ձևով գրել և գրաբարի կարդալու եղանակով կարդալ՝ առանց սովորական կենդանի արտասանությանը հակասելու, այդ գրում էին փոխված ուղղագրությամբ։ Օրինակ՝ աշխարհաբարում գրում էին՝ անցեալ օրն *և արտասանում էին* անցյալ օրն, *որովհետև գրաբարում էլ այդպես էր թե՛ արտասանությունը և թե՛ գրությունը. բայց բայական ձևը՝* անցել եմ *աշխարհաբարում չէին գրում հին ուղղագրությամբ՝* անցեալ եմ, *որովհետև եթե այդպես գրեին, գրաբարի կարդալու եղանակով պիտի արտասանեին՝* անցյալ եմ, *որ և համեմատ չէր լինիլ աշխարհաբարի սովորական կենդանի արտասանությանը։ Դարձյալ՝ քանի որ գրաբարում գրում էին* ծառայ *և կարդում* ծառա, *նույնպես գրում ու կարդում էին աշխարհաբարում. բայց եթե այդ բառը՝ հոդերով և դրա հոգնակին գրեին* ծառայս, ծառայդ, ծառայներ, *նույնպես և բայական ձևերը գրեին՝* գնայր, գնայք,— *կկարդային «այ» երկբարբառով, որ և կհակասեր սովորական արտասանությանը. ուստի և դրանք գրում էին առանց յ-ի՝* ծառաս, ծառադ, ծառան, ծառաներ, գնար, գնաք։

Այսպես ուրեմն, գրաբարի կարդալու եղանակը վճռական նշանակություն է ունեցել աշխարհաբարի ուղղագրության համար։ Հնչյունների այն շրջումները, որոնք հատուկ են եղել միայն աշխարհաբարին, աշխարհաբարի գրության մեջ արտահայտվել են փոխված արտասանության համեմատ, իսկ այն շրջումները, որոնք հատուկ են եղել թե՛ աշխարհաբարին և թե՛ գրաբարին, դրանց համար պահվել է հին գրությունը։ Եվ որովհետև գրաբարի գրության և արտասանության մեջ մեծ տարբերություն կար 19-րդ դարում, ուստի և մեր նոր գրական լեզվի ուղղագրությունը, որ մասամբ ժառանգել էինք գրաբարից, բավական մեծ դժվարություններ ուներ և ունի։

Բնականաբար, այն ժամանակից, երբ կազմվում է նոր գրական լեզուն, ծնվում է նաև գրությունը արտասանությանը մոտեցնելու խնդիրը։ Դա ծագում է նույն պահանջից, որից առաջ է գալիս և նոր գրական լեզուն։ Ինչպես որ մյուս լեզվական իրակությունների, ինչպես են՝ բառաձևերի ու կապակցության ձևերի փոփոխությունները, նույնպես և հնչյունական մեծ փոփոխությունները չէին կարող գրության մեջ համապատասխան փոփոխություններ չմտցնել։ Դա կհակասեր մեր նոր գրական լեզվի նպատակին։ Հարկավոր էր հեշտացնել գրությունը, գրելով այնպես, ինչպես խոսում և արտասանում են։ Ուստի 1922 թ. մարտի 4-ի գեկրետով ձայնավորների, յ կիսաձայնի և վ բաղաձայնի գրության նկատմամբ մտցված բարեփոխությունով մեր ուղղագրությունն այդ մասին վերածվեց հնչյունական պարզ գրության՝ համապատասխան գրական-դպրոցական արտասանությանը։ Այդ բարեփոխությունով դեռ չի սպառված ուղղագրության խնդիրը, որ գրաբարի և աշխարհաբարի հին վեճի խնդիրն է, որովհետև դեռ մնում է բաղաձայններն արտասանության համեմատ գրելու պահանջը։

Բարեփոխությունը կատարված է այն սկզբունքով, որ ամեն մի հնչյուն միայն մեկ առանձին նշանագիր պիտի ունենա, և ամեն մի տառ միայն այդ մեկ հնչյունի նշանագիրը պետք է լինի. ուստի՝

Ա. Փոխված հնչյունները գրվում են արտասանության համեմատ՝ այն տառերով, որ մեր այբբենարանում ընդունված են այդ հնչյունների համար. ինչպես՝ 1) ակօս, 2) հանդէս, 3) կաւ, 4) նուաստ, 5) լոյս, 6) յատակ, 7) սենեակ, ամսօրեայ, եօթն, արիւն և նման բառերը գրվում են արտասանության համեմատ՝ 1) ակոս, 2) հանդես, 3) կավ, 4) նվաստ, 5) լույս, 6) հատակ, 7) սենյակ, ամսորյա, յոթն.

Բ. Չեն գրվում այն տառերը, որ այլևս չեն արտասանվում, ինչպես՝ 8) ծառայ, կը գայ, ներքոյ և նման բառերը գրվում են՝ ծառա, կը գա, ներքո.

Գ. Երբ բառերի մեջը կամ սկզբում ավելացել են նոր հնչյուններ, գրության մեջ ևս ավելացվում են դրանց համապատասխան տառերը, ինչպես՝ 9) րոպէական, րոպէով, րոպէի, 10) ոտ, 11) եկ, 12) դու ես,

գնալու եմ և այլն գրվում են արտասանության համեմատ՝ 9) րոպեյական, րոպեյով, րոպեյի, 10) վոտ, 11) յեկ, 12) դու յես, գնալու յեմ։

Այս բարեփոխությունը հիմնված է գրական-դպրոցական արտասանության վրա, որ ունին ընդհանրապես մաքուր գրական լեզվով խոսողները։ Անշուշտ, այս վերջիններիս արտասանության մեջ երբեմն երեվան են գալիս տարբերություններ բարբառների ազդեցությամբ. բայց դա՝ վերևում դրված փոփոխությունների նկատմամբ՝ լսվում է գրեթե միայն խոսելիս և շատ քիչ անգամ նաև կարդալիս։ Բացի այդ՝ հնչյունական գրության նպատակը չի կարող այն լինել, որ բավարարություն տա բարբառային տարբերություններին, այլ ա՛յն միայն, որ գրությունը համապատասխան լինի մի որոշ բարբառի, այս դեպքում մեր ընդհանրապես ընդունված գրական-դպրոցական արտասանությանը։ Եվ վերջապես՝ ոչ միայն բարբառային տարբերությունները, այլ նույնիսկ մի բարբառի, մի ընդհանուր գրական լեզվի արտասանության բոլոր նրբությունները չեն կարող արտահայտվել և չեն արտահայտվում գրության մեջ։ Չպիտի մոռանալ, որ գրությունը, ինչքան էլ հնչյունական լինի, երբեք համեմատ չէ ո՛չ ընդհանրապես լեզվին և ո՛չ էլ այս կամ այն անհատական լեզուներին, որովհետև խոսքը բազմազան կերպով փոփոխվող հնչյունների մի շարք է, և տառերով այդ հնչյունների էական բնորոշող կողմերն են միայն ցույց տրվում։ Բազմաթիվ նման տեսակի հնչյունների համար, ուրեմն, գործածվում է մի տառ, և խոսողն ինքը, մի տառով իմանալով հիմնական հնչյունը, կարդալիս որոշում է նույն կարգի հնչյունների նուրբ տարբերությունները, իսկ գրելիս այս վերջինները վերածելով նույն կարգի հիմնական հնչյունին՝ նրա նշանագրով էլ արտահայտում է։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(Իմաստաբանություն)

Ա

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

38. Բառերի երկու խումբ:— *Բառերի ամենամեծ մասը նշանակում են գաղափարներ, և միայն մի փոքր խումբ բառեր ցույց են տալիս խոսողի զգացմունքը, երբեմն և կամքը: Ըստ այսմ բառերն իրենց նշանակությամբ բաժանվում են երկու խմբի. 1) գաղափար նշանակող բառեր, որոնցով մենք խոսում ենք. 2) զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում. սրանք կարող են խոսքն ամեն կերպ ընդհատելով՝ ընկնել խոսքի մեջ, ուստի կոչվել են* միջարկություն:

39. Միջարկությունները *վայրկենական տպավորության տակ առաջացած բացագանչություններ են, որոնք ակամա կերպով արտաբերվում են խոսքի գործարանների անդրադարձ շարժումներով, ուստի կոչվում են նաև* ձայնարկություն. *օրինակ՝ երբ մեկի մատը հանկարծ ծակում են, նա ինչպես անգիտակցական շարժումով ձեռքը մի կողմն է քաշում, նույնպես և միաժամանակ խոսքի գործարանների ակամա շարժումներով ճչում կամ բացագանչում է առանց որևէ մտադրության: Այսպիսի բացագանչություններն այն սահմանի վրա են, ուր լեզուները միմյանցից չեն տարբերվում, և լեզուն դառնում է մի բնական հնչյուն:*

Թեպետ և տարբեր լեզուների ձայնարկությունները հասկանալի են օտար լեզվով խոսողներին, բայց և այնպես ամեն լեզու ունի իրեն հատուկ ձայնարկությունները. որովհետև ուրիշներից լսելով նրանց ակամա բացագանչությունները՝ մենք յուրացնում ենք այդ հնչյունները, ինչպես և մյուս բառերը, և ապա հիշողությամբ վերարտադրում ենք դիտավորյալ կերպով՝ մեր սեփական զգացումներն ուրիշներին հաղորդելու

համար։ Այսպիսով լեզվի մեջ առաջ են գալիս մի խումբ սովորական ձայնարկություններ, որոնցից մի քանիսը կատարում են նույնիսկ գաղափար ցույց տվող բառերի դեր, ինչպես օրինակ՝ վայ տալ, վայ ասել, ախուվախով կյանք անցկացնել, որոնց մեջ «վայ», «ախուվախ» առնվում են իբրև գոյական. մի քանիսից նույնիսկ ուրիշ բառեր են կազմվում, ինչպես՝ վայել, ավաղել։ Մյուս կողմից՝ գաղափար ցույց տվող բառերն ևս, երբեմն նաև այդպիսի բառերի կապակցությունները, կարող են զգացմունքի ազդեցության տակ ակամա բացագանչվել և առնվել իբրև ձայնարկություն, ինչպես՝ ա՛խ աստված, փա՛ռք աստծու, մեղա՛յ-աստծու, կեցցե՛ս, կեցցե՛ք։

Բացագանչական ձայնարկություններ ցույց են տալիս զանազան զգացմունքներ՝ ուրախություն, տրտմություն, վախ, զարմանք, զզվանք, ցանկություն, արհամարհանք, զայրույթ, սքանչացում և այլն. ինչպես՝ օխա՛յ, ո՛ւհ, վա՛շ, վի՛շ, օ՛խ, օ՛հ, ավա՛ղ, ա՛հ, վա՛յ, ա՛խ, ափսո՛ս, եղո՛ւկ, բաբե՛, ամա՛ն, վա՛հ, է՛հ, պա՛հո՛, օհո՛, ըհը՛, վա՛հ, թյո՛ւհ, երանի՛, էրնե՛կ, վայ-վո՛ւյ, հայ-հո՛ւյ, հե՛յ և այլն։

Կոչական ձայնարկություններով ուզում ենք ուրիշի ուշադրությունը գրավել, ուրիշին կանչել, մի բան հրամայել, խրախուսել կամ կենդանիներին կանչել, քշել և այլն, օրինակ՝ է՛յ, տո՛, ծո՛, քա՛, ո՛ւլ, ա՛յ, սո՛ւս, հը՛, աղե՛, դե՛, դե՛հ, հա՛պա, օ՛ն, հո-հո՛, քը՛շ, քշա՛, փը՛շտ, ջո՛ւ-ջո՛ւ և այլն։ Կոչական ձայնարկությունները հաճախ դրվում են կոչական անուններից առաջ՝ ո՛վ մարդ, ա՛յ տղա, հա՛յ անպիտան. ուրիշները հրամայական բայերից առաջ, ինչպես՝ դե՛հ քաշեցեք, դե՛ ասա տեսնեմ։

Ձայնարկությունների մեջ դրվում է նաև նմանաձայնություն կամ բնաձայնություն ասածը, որ արտասանում ենք բնության որևէ երևույթի, կենդանիների կամ անշունչ առարկաների հնչումների նմանողությամբ նրանց մեզ վրա թողած առաջին հանկարծական տպավորության տակ, ինչպես՝ ճը՛ռռ, տրը՛խկ, շրը՛խկ, զը՛նգ, դա՛ռ, հա՛ֆ-հա՛ֆ և այլն։ Այս կարգին պատկանում են նաև ձայնախաղերը, ինչպես՝ լա-լա-լա՛, տրա՛-լա-լա, վա՛յ-լե-վե-լե՛—վա՛յ-լո-լո-լո՛։

60. Գաղափար ցույց տվող բառերով մենք խոսում ենք, այսինքն մեր մտածություններն ենք հայտնում ուրիշներին, իսկ մտածելիս մենք առարկաններն ու նրանց հատկանիշները, ինչպես և մեր մտքերը, գիտակցելով դնում ենք որոշ հարաբերությունների մեջ, որոնք և արտահայտվում են կա՛մ նյութական նշանակություն ունեցող բառերի ձևերով, կա՛մ առանձին ձևական նշանակություն ունեցող բառերով։ Այսպես ուրեմն գաղափար կամ պատկերացում ցույց տվող բառերն իրենց նշանակությամբ բաժանվում են երկու խմբի. 1) բառեր, որոնք ունին նյութական նշանակություն, մեծ մասամբ միաժամանակ նաև ձևական նշանակություն. դրանցից կազմվում է խոսքը, ուստի և կոչվում են խոսքի մասեր (բայ, գոյական, ածական, մակբայ), 2) բառեր, որոնք ունին միայն

ձևական նշանակություն և խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (կապ, շաղկապ)։

61. Խոսքի մասերն իրենց նշանակության համեմատ, ինչպես տեսել ենք (§ 13), լինում են՝

1) Բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ և դեմք, միաժամանակ և ստորոգում, այսինքն հատկանիշի վերագրումը դեմքին։ Այս բառերը մենակ կազմում են մի խոսք և կոչվում են ԲԱՅ։

2) Բառեր, որոնք ցույց են տալիս ինքնակա գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկաներ և կոչվում են ԳՈՅԱԿԱՆ, ինչպես՝ մարդ, ձի, ծառ։

3) Բառեր, որոնք ցույց են տալիս ոչ-ինքնակա հատկանիշներ, որ մտածվում են՝

ա) իբրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ մշտապես կամ ժամանակավորապես գտնված մի որպիսություն, գործողություն, դրություն և այլն և կոչվում են ԱՆԱԿԱՆ, օրինակ՝ բարի (մարդ), վազող (ձի), ծաղկած (ծառ).

բ) իբրև առարկայի հատկանիշից անբաժան մի հատկանիշ կամ իբրև հատկանիշի հատկանիշ (պարագա) և կոչվում են ՄԱԿԲԱՅ, օրինակ՝ խիստ բարի (մարդ), արագ վազող (ձի), ձին արագ վազեց։

Ածականն ու մակբայն իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր տեսակ իբրև մակադրական (վերադրական) բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ. միայն ածականն առարկայի հատկանիշ է նշանակում, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ։ Հայերենում բուն մակբայները սակավաթիվ են, այսինքն քիչ բառեր կան, որոնք միայն իբրև մակբայ գործածվեն։ Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են։ Երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ, կամ թե երբ ածականը խոսքի մեջ դրվում է ոչ թե մի գոյական անվան վրա, այլ մի ածականի ու բայի վրա, այն ժամանակ ածականը կիրառվում է իբրև մակբայ. օրինակ՝ «սաստիկ քամի», «սաստիկ կարմրություն» կապակցությունների մեջ «սաստիկ» բառն ածական է. իսկ «սաստիկ կարմիր», «սաստիկ կարմրեց» կապակցությունների մեջ նույն բառն առնվում է իբրև մակբայ։ Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառությունն է շարահյուսական կապակցության մեջ։

Գոյականները, ածականներն ու մակբայները իրենց կողմից ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն: Անուններն ունին անփոփոխ, հաստատուն նշանակություն, իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անվան են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են։ Անուններն էլ իրենց կողմից լինում են՝ անուն նեղ մտքով, թվական և դերբայ: Թվականն

ունի թվի և համարքի գաղափար, դերբայը ցույց է տալիս բայիմաստ առանց դեմքի, իսկ անուն նեղ մտքով այն բառերն են, որոնք ոչ թվի և ոչ էլ բայիմաստի գաղափար են ցույց տալիս։ Արդ, բառերն (գոյական, ածական և մակբայ), ուրեմն, լինում են չորս տեսակ՝ անուն (նեղ մտքով), թվական, դերբայ և դերանուն։ Այսպես՝

ա. Գոյականները *լինում են՝ 1. Անուն գոյական կամ* **գոյական անուն**. *Համախ լոկ՝ անուն (տուն, փայտ, լավություն), 2. Թվական գոյական կամ* **գոյական թվական** *(տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ), 3. Դերբայ գոյական կամ* **գոյական դերբայ**, *կամ բայանուն, սովորաբար՝* **անորոշ դերբայ** *(գնալ, ասել, գրել), 4. Դերանուն գոյական կամ* **գոյական դերանուն** *(ես, դու, նա, ինքը, սա, դա)։*

բ. Ածականները *լինում են՝ 1. Անուն ածական կամ* **ածական անուն** *(լավ, վատ, սև), 2. Թվական ածական կամ* **ածական թվական** *(մի, երկու, երեք, առաջին, երկրորդ, երրորդ), 3. Դերբայ ածական կամ* **ածական դերբայ** *կամ* **բայածական** *(գրած, գրելու, գրող), 4. Դերանուն ածական կամ* **ածական դերանուն** *(այս, այդ, այն, սույն, դույն, նույն, իմ, քո, իր, մեր, ձեր)։*

գ. Մակբայները *լինում են՝ 1.* **Անվանական մակբայ** *(ազատորեն, քաջաբար), 2.* **Թվական մակբայ** *(երկիցս, երիցս), 3.* **Դերբայական մակբայ կամ բայական մակբայ** *(գալիս, գրելիս), 4.* **Դերանվանական մակբայ** *(աստ, անդ, ուր)։*

62. Խոսքի մասնիկների *նշանակությունը, ինչպես սովորաբար բառերի ձևական մասերի նշանակությունը, պարզ է լինում, երբ դրվում են խոսքի մեջ նյութական նշանակություն ունեցող բառերի կամ խոսքերի հետ։ Դրանք իրենց նշանակությամբ լինում են՝*

Ա. **Կապակցական բառեր,** *որոնք ծառայում են խոսքի մասերն ու խոսքերը միմյանց հետ կապելու զանազան հարաբերություններով և իրենց կողմից բաժանվում են՝ 1.* **Կապեր** *(նախադրություն և հետադրություն՝ դեպի, առանց, հետ և այլն), որոնք խոսքի մեջ ստորադաս գոյականն իբրև լրացում (խնդիր) կապում են գերադաս բառի հետ, որ է լրացյալը կամ խնդրառուն. 2.* **Ստորադասական շաղկապներ,** *որոնցով կապվում են ստորադաս խոսքերը գերադաս խոսքի հետ (թե, որ, եթե, որպեսզի և այլն). 3. Համադասական շաղկապներ, որոնցով միմյանց հետ կապվում են համադաս բառեր և համադաս խոսքեր (և, ու, այլև, բայց)։*

Բ. **Եղանակական բառեր կամ մասնիկներ՝** *թերևս, գուցե, հո, ապաքեն, արդյոք, գոնե, գեթ, իբր թե, միթե, գրեթե, կարծես, կարծյոք, անշուշտ, հազիվ թե, հավանորեն և այլն, որոնք որևէ կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով համախ բայերի կամ ուրիշ բառերի վրա (§ 250)։*

Գ. **Բացասական մասնիկներ՝** *«ոչ», «չը», որոնցով կազմվում են բացասական խոսքեր։*

Դ. **Պատասխանական բառերը՝** *այո՛, ո՛չ։*

Այս վերջին երեք տեսակի բառերը շատ քերականներ դնում են մակ-

բայների մեջ. բայց դրանք իսկապես ձևական նշանակություն ունեցող բառեր են, ինչպես և կապակցական բառերը, որոնց բոլորի նշանակությունն ու ֆունկցիան բացատրվում է բառերի ու խոսքերի կապակցության—շարահյուսության մեջ։

68. Բառերի ընդհանուր և հատուկ նշանակությունները։— Բառերը խոսքի մեջ, ինչպես տեսանք (§ 10), գործածվում են մերթ ընդհանուր, վերացական նշանակությամբ, մերթ հատուկ, թանձրացական (կոնկրետ) նշանակությամբ։ Սակավաթիվ բառեր միայն ունին կա՛մ մեկ, կա՛մ մյուս նշանակությունը։

Գոյականներից մերթ մեկ, մերթ մյուս նշանակությունն ունին հատուկ անուններ, որոնցով անվանվում կամ կոչվում են առարկաները։ Այդ բառերը, առանց որևէ որոշող հանգամանքի, սովորաբար հասկացվում են ընդհանուր վերացական նշանակությամբ իբրև սեռի անուն ամենամեծ ծավալով և ամենափոքր բովանդակությամբ։ Բայց երբ այդպիսի մի անվան վրա դրվում է մի որակական ածական, այն ժամանակ բառի նշանակության ծավալը փոքրանում է, իսկ բովանդակությունն, ընդհակառակն, մեծանում է, և բառի ընդհանուր կամ սեռի նշանակությունը փոխվում է տեսակի նշանակության։ Օրինակ՝ «ծառ» բառով հասկանում ենք բոլոր ծառերի ամբողջությունը (որ է այդ բառի նշանակության ծավալը) իր նույն ընդհանուր էական հատկություններով (որ է այդ բառի նշանակության բովանդակությունը)։ Բայց երբ ասում ենք «ծիրանի ծառ», այլևս աշխարհի բոլոր ծառերը չենք հասկանում, այլ ծառերի մի առանձին տեսակը։ Անվան վրա դրված ածականով՝ անվան ցույց տված գաղափարի վրա ավելանում է սրա մեջ չնշանակված մի նոր գաղափար, որով ընդլայնվում, ընդարձակվում է անվան նշանակությունը բովանդակության կողմից. ծավալի կողմից, ընդհակառակն, նեղանում է։ Ամեն «ծիրանի ծառ» ծառ է, այսինքն ունի այն բոլոր ընդհանուր հատկությունները, որ ունին բոլոր ծառերը, այլև ծիրանի ծառի առանձնահատկությունները. բայց ամեն ծառ ծիրանի ծառ չէ, որովհետև ամեն ծառ չունի ծիրանի ծառի առանձնահատկությունները։ «Ծիրանի ծառ» կապակցությունն էլ, սակայն, իբրև տեսակի անուն, ունի ընդհանուր, վերացական նշանակություն։

Բոլոր ածականներով և նույնիսկ ամեն անգամ որակական ածականներով այսպես չի փոխվում անվան նշանակությունը։ Երբեմն որակական ածականները դրվելով անվան վրա՝ ոչ թե մի նոր տեսակ են կազմում, այլ միայն զգալապես պարզում, բացահայտ են դարձնում անվան նշանակության բովանդակությունը, ցույց տալով առարկայի այնպիսի էական հատկությունը, որ առարկան ունի իր մեջ իբրև իր էական հատկանիշ։ Օրինակ՝ «սպիտակ ձյուն», «փայլուն արեգակ» կապակցությունների մեջ «սպիտակ», «փայլուն» բառերը ոչ մի նոր հատկություն չեն ավելացնում ձյան կամ արեգակի նշանակության վրա. առանց դրոնք էլ մենք ձյունից անբաժան մտածում ենք սպիտակությունը, ինչ-

պես և արեգակից՝ փայլը։ Այդ ածականները գործածված են իբրև լոկ քանաստեղծական «զարդարուն մակդիրներ»՝ առարկայի պատկերացումն ավելի կենդանի ու վառ դարձնելու համար։

Հասարակ անվան նշանակությունը փոփոխություն չի կրում նաև «ամեն», «բոլոր» ածականներով, որոնք ունին ընդհանրացական նշանակություն և դրվելով մի անվան վրա՝ միայն պարզորոշ կերպով վերցնել են տալիս անվան նշանակությունը իր ընդհանուր էական բովանդակությամբ, «բոլոր» բառով նաև ամբողջ ծավալով։

Հասարակ անվան նշանակությունը կարող է սահմանափակվել միայն ծավալի կողմից, երբ վրան դրվում է մի թվական կամ հանական ածական, ինչպես են՝ հիմնական թվականները՝ մեկ, երկու, երեք և այլն, ու անորոշ քանակություն ցույց տվող ածականները՝ մի քանի, շատ, սակավաթիվ, յուրաքանչյուր, քանի, որքան և այլն։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ «երկու սեղան», այդ ժամանակ «սեղան» բառի նշանակությունը «երկու» բառով միայն ծավալի կողմից սահմանափակվում է առանց բովանդակության կողմից հարստանալու։

Անվան նշանակության ծավալը կարող է այնքան փոքրանալ, մինչև որ մի հատի, մի որոշ անհատ առարկայի վերածվի. այս դեպքում նշանակության բովանդակությունն ամենից հարուստ է լինում։ Օրինակ՝ երբ մի հատուկ ծառ ցույց տալով ասում ենք՝ «այս ծառը», հասկանում ենք միայն մի հատ որոշ ծառ, մի հատուկ ծառ, որը իրոք գոյություն ունի. բայց այդ ծառն ունի ոչ միայն ծառի սեռի բոլոր ընդհանուր հատկությունները, այլև իր այնպիսի սեփական առանձնահատկությունները, որ ոչ մի ուրիշ ծառ չունի աշխարհում։

Գրեթե ամեն հասարակ անուն էլ կարող է խոսքի մեջ գործածվել կա՛մ ընդհանուր, վերացական նշանակությամբ իբրև սեռի կամ տեսակի անուն, ցույց տալով առարկայի ընդհանուր պատկերացման բովանդակությունը տեղից ու ժամանակից դուրս, կա՛մ գործածվել անհատական. թանձրացական կամ հատուկ նշանակությամբ, ցույց տալով մի հատ եզական առարկա, որ առանձին գոյություն ունի որոշ տեղում ու ժամանակում։ Այսպես այս երկու նշանակությամբ գործածվում են ոչ միայն անջատական անունները, որոնք ցույց են տալիս մի հատ անբաժանելի առարկա, այլև հավաքական անունները, որոնք նշանակում են միատեսակ անձերի, կենդանիների կամ իրերի բազմություն, համախմբություն, ինչպես՝ զորք, հոտ, երամ, նախիր։ Արդարև այս անունները հատուկ նշանակությամբ գործածված ժամանակ ևս մեր մտքի մեջ զարթեցնում են ի մի խմբված շատ համանման առարկաներ, բայց այդ համախմբությունն ինքն առնվում է իբրև մի առանձին առարկա. օրինակ՝ երբ ասում ենք՝ «այս նախիրը», չենք հասկանում «նախիր» ընդհանուր վերացական պատկերացումը, այլ մի որոշ տեղում ու ժամանակում սահմանափակված մի հատուկ նախիր։

Հասարակ անունների ընդհանուր նշանակությունը հատուկ նշանա-

կության փոխվում է՝ 1) Յուցական ածականներով՝ այս, այդ, այն, տույն, դույն, նույն, որոնք ցույց են տալիս առաջին կամ երկրորդ դեմքի մոտ, կամ նրանցից հեռու գտնված մի առարկա, ինչպես՝ այս գիրքը, այդ գիրքը, այն գիրքը. 2) Դասական թվականներով, առաջին, երկրոդ, երրորդ և այլն. 3) Հոդերով՝ ԸՍ, ԸԴ, Ը կամ Ս, Դ, Ն, որոնց պաշտոնն է թանձրացականն արտահայտել, ինչպես՝ գիրքս, գիրքդ, գիրքը։ Աշխարհաբարում, սակայն, Ն (Ը) հոդը գործածվում է նաև սեռի գաղափար ցույց տալու համար, ինչպես՝ «ձին արագավազ կենդանի է» խոսքի մեջ «ձին» բառը։ Ուրիշ պայմաններ էլ կարող են մտածողությանը որոշ ուղղություն տալ՝ բառը հատուկ նշանակությամբ հասկացնելու կամ հասկանալու համար. օրինակ՝ առարկան, որի մասին խոսվում է, կարող է աչքի առաջ լինել և աչքով կամ ձեռքով ցույց տրվել, կամ թե կարող ենք մտքով ակնարկել նրան, կամ առաջուց կարող է խոսքի մեջ հիշված լինել, կամ որևէ ուրիշ անհատական թանձրացական նշանակություն ունեցող բառով, միաժամանակ նաև հոդով որոշվել, ինչպես՝ իմ գիրքը, մեր բնակարանը, մյուս գրիչը և այլն։ Նույն նպատակին կարող է ծառայել նաև խոսողի ու խոսակցի կենալու տեղի ու ժամանակի դրությունը, նրանց ընդհանուր պարապմունքը, շահերի ընդհանրությունը և այլն. կա՛մ խոսողին ու խոսակցին կարող է առաջուց որևէ կերպ ծանոթ լինել առարկան, որի մասին խոսվում է և այլն։ Օրինակ՝ որևէ քաղաքի մերձակա գյուղացիների խոսակցության մեջ «քաղաքը» բառով կարող է հասկացվել մի հատուկ, թանձրացական քաղաք։ Նույնպես միևնույն քաղաքի բնակիչների բերանին հատուկ նշանակություն ունին՝ քաղաքային խորհուրդը, ջրմուղը, թատրոնը (եթե մեկ թատրոն կա քաղաքում), միևնույն տան բնակիչների համար՝ խոհանոցը, ննջարանը. նույն դպրոցի աշակերտների համար՝ դպրոցը, համալսարանը, տեսուչը։ Դարձյալ՝ քույր ու եղբայրների համար իրենց խոսքի մեջ հատուկ նշանակություն ունին՝ հայրիկը, մայրիկը և այլն։ Այսպես և որոշ ժամանակի համար երբ ասում ենք՝ լուսավորության կոմիսարը և նմաններըը, հասկացվում է մի հատուկ, անհատ կոմիսար։ Նույնպես երբ ասում ենք՝ «կիրակի օրը» կարող է հասկացվել կա՛մ մոտիկ անցյալ, կա՛մ մոտիկ ապագա կիրակին, բայց երբ ասում ենք՝ «նա կիրակի օրը եկավ», բայի ժամանակից հասկանում ենք հատկապես մոտիկ անցյալ կիրակի օրը. իսկ «նա կիրակի օրը կգա» խոսքի մեջ բայի ապառնի ժամանակից հասկացվում է մոտիկ եկող կիրակին։

Հատուկ անուններ նույնպես ունին թանձրացական, կոնկրետ նշանակություն. դրանք էլ առարկաների (գլխավորապես մարդկանց և աշխարհագրական տեղերի, երբեմն նաև կենդանիների) կոչումներ են, ինչպես և հասարակ անունները։ Բայց մինչ վերջիններս կարող են գործածվել թե իբրև սեռի կամ տեսակի անուն և թե իբրև անհատի անուն, իսկ երբ անունը նյութ է ցույց տալիս՝ թե իբրև նյութի ամբողջության և թե իբրև նրա մի մասի անուն, —հատուկ անուններըը ցույց են տալիս մի որոշ

անհատ առարկա միայն՝ նման տեսակի առարկաների մեջ և չեն կարող գործածվել իբրև սեռի անուն։ Օրինակ՝ «ձի» բառով կարելի է կոչել և՛ «ձի» տեսակն ընդհանրապես, և՛ ամեն մի եզական ձի, այս կամ այն ձին. նույնպես «փայտ», «ջուր» կոչվում է և՛ ընդհանրապես ամեն փայտ կամ ջուր նյութը, և՛ նրանց մի մասը, մի կտոր փայտ, մի կաթիլ ջուր։ «Գետ» կոչվում են և՛ բոլոր նման տեսակի հոսող ջրերը, և՛ նրանցից ամեն մեկը. բայց «Երասխ» կոչվում է հատկապես գետերից մեկը միայն, և այդ անունով մի գետ որոշվում է բոլոր գետերի միջից. Երասխը գետ է. բայց ամեն գետ Երասխ չէ։ Միևնույն հատուկ անունը, սակայն, կարող են ունենալ նաև զանազան մարդիկ կամ տեղեր. ուստի նույնիսկ հատուկ անունները դարձյալ երբեմն իրենց թանձրացական նշանակությունն ստանում են այն ժամանակ, երբ որևէ կերպ որոշվում են, սովորաբար ազգանունով, իսկ պատմականները նաև մականունով, ինչպես՝ Աշոտ Ողորմած, Վարդան Մամիկոնյան, Աշոտ Երկրորդ, Հին Նախիջևան, Նոր Նախիջևան։

Թանձրացական հատուկ նշանակություն ունին դերանունները՝ անձնական՝ ես, ինքս, դու, ինքդ, նա, ինքը. ցուցական՝ սա, դա, նա, այս, այդ, այն. փոխադարձ՝ միմյանց, իրար, մեկմեկու. հարաբերական կամ շաղկապական՝ «որ», նույնպես և ցուցական մակբայները՝ աստ, անդ, այսօր, վաղը, երեկ, այստեղ, այդտեղ, այնտեղ և այլն։ Այս բառերը, սակայն, որոշ հաստատուն նշանակություն, ուրեմն և ըստ ինքյան թանձրացական որոշ բովանդակություն չունին, այլ իրենց հատուկ նշանակությունն ստանում են միայն խոսքի մեջ ունեցած դրությունից, երբ գործածվում են որոշ անհատ առարկայի անվան, կամ ժամանակի ու տեղի մի որոշ մասի անվան տեղ։ Սակայն դերանուններն էլ, բացի առաջին ու երկրորդ դեմքերից, կարող են գործածվել նաև ընդհանուր վերացական նշանակություն ունեցող անունների տեղ. օրինակ՝ «Կետ ձուկը պատկանում է կաթնասուններին. նա կենդանի ձագեր է բերում» խոսքի մեջ «նա» դերանունը դրված է «Կետ ձուկ» սեռի անվան փոխանակ, ուստի և ունի այս դեպքում ընդհանուր վերացական նշանակություն։

Իրենց բովանդակությամբ ընդհանուր վերացական նշանակություն ունին անորոշ անուն (անորոշ դերանուն) կոչված բառերը և մի քանի անորոշ ածականներ ու մակբայներ, որոնք ցույց են տալիս անորոշ, անծանոթ իրեր կամ անձեր, բան կամ մարդ, շատ տարտամ և ընդհանուր ձևով հայտնելով միայն առարկայի էությունը, սեռը կամ տեսակն ընդհանրապես առած, երբեմն առանց որոշելու նույնիսկ տեսակի անունը. այսպես են՝ բան, իք, իքմին, ինչ, ինչոր, ինչինչ, ոչինչ, ամեն ինչ, ամեն բան, ինչևէ, մարդ (մարդ իմանա թե... մարդ ուտում է ուտում, չի կըշտանում), ոմն, ոք, օքմին, ոչոք, ոչով, ով, ովոր, ովևէ, մի քանիսը, քանիսը, յուրաքանչյուրը, շատը, մեկը, քչերը, ամեն, ամենայն, ուրիշ, որևէ, բոլոր, այսինչ, այնինչ, երբեմն, երբեք, երբևէ, ուրևէ (ուրեք) և մի քանի ուրիշներ։ Այս բառերից մի քանիսը գրաբարից կամ ժողովրդա-

կան լեզվից են առնված և քիչ են գործածվում, բայց և այնպես պատահում են նոր գրական լեզվի մեջ. ինչպես օրինակ՝ լրագիրներից բերված հետևյալ կտորների մեջ.— Միևնույն րոպեին խանութից դուրս գալով՝ մի ոմն կրակում է ատրճանակը. բարեմիտ ոմն. մեծ ոմն է կարծում իրեն. Մի ոմն Ստեփանոս անունով... Նա դատարկաձեռն վերադառնալով՝ միայն քսանհինգ ռուբլի է ստացել ոմնից։ Եթե ոք փող տված լինի՝ թող հայտնի... Ովոր գալիս է։ Էլի ինչի համար էլ (մի բանի համար) զրկեց նրան... Եթե ասե՝ այսինչը գիտեմ, իրոք էլ գիտե, եթե ասե՝ այսինչը կանեմ, անպատճառ կանե։ Նա իմ ովն է որ (սովորաբար՝ նա իմ ինչն է). ովս մնաց. բարոյական տեսակետից անարժեք ինչ է։

Այս բառերի մեծ մասի նշանակությունը պատկանում է լեզվի բարձրագույն ընդհանրացումներին. դրանց բովանդակությունն այնքան աղքատ է, որ դրանցով կարելի է ամեն բան ասել և իսկապես ոչինչ որոշ չասել։ Օրինակ, երբ մի անզարգացած մարդ կամ երբ մեկը իսկական բառը չմտաբերելով ասում է՝ «իքը իքին իք արեց», «էս իքը», մենք իսկապես ոչինչ չենք հասկանում, որովհետև առարկայի, գոյակի ու գործողության վերացական գաղափարներ են միայն հայտնում այդ «իք», «իք անել» բառերը. այնպես որ վերևում գրված խոսքը որոշ տիպի խոսքի լոկ ձևն է միայն գրեթե առանց բովանդակության։

Բայերից այսպիսի վերացական բնավորություն ունին սովորաբար «եմ», «լինեմ», «անեմ» բայերը, առանձնապես երրորդ դեմքով. օրինակ՝ «էչ» միևնույն է թե՝ «իքը իք է», «անել» միևնույն է թե՝ «իք անել»։ Ուստի խոսքի մեջ այդ բայի հետ սովորաբար դրվում է մի որոշ նշանակությամբ բառ, որով լրացվում է դրանց իմաստի թերին, ինչպես՝ բաց անել, լաց լինել, շոգ է։

Բ

ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

64. Բառերի նշանակության փոփոխությունը։— *Բառերի հնչյուններ ու նշանակության փոփոխությունները միմյանցից անկախ են առաջ գալիս. ուստի կարող են մի բառի հնչյունները փոխվել, իսկ նշանակությունը՝ անփոփոխ հինը մնալ, օրինակ՝* տեսանել, որդի *դարձել են* տեսնել, որթի, *բայց դրանց նշանակությունը չի փոխվել. իսկ* մորթել *բառի հնչյուններն անփոփոխ են մնացել, բայց նշանակությունը փոխվել է. այս բառը հին լեզվի մեջ նշանակում է՝ քերթել, մորթը հանել, իսկ նորի մեջ՝ վիզը կտրել, փողոտել։ Կարող են բառի թե՛ հնչյունները և թե՛ նշանակությունն էլ փոխվել. օրինակ՝ հին յուզել, որ գրաբարում արդեն արտասանությամբ դարձել է ճուզել. հին լեզվի մեջ նշանակում է՝ որոնել, փնտրել, խառնել, տակն ու վրա անել—գրգռել, շարժել։ Այս վերջին նշանակությամբ նաև նոր գրական լեզվի մեջ գրաբարից փոխառու-*

թյամբ, ինչպես՝ ծովը հուզված էր—ալեկոծված էր. հուզում—խրարանգում, խռովություն, նաև՝ սրտի հուզում, սրտահույզ- սրտաշարժ: Նույն բառը, սակայն, փոխված ուզել ձևով նշանակում է՝ խնդրել, ցանկալ, պահանջել. ինչպես և հին լեզվի մեջ խնայրել նշանակում է՝ որոնել, փընտրել, և ապա՝ ուզել, խնդրել:

Երբեմն բառերի նշանակությունն այնպես փոխվում է, որ նոր նշանակությունը հնից խիստ հեռանում է, և պատահում է նույնիսկ, որ բառը սկզբնականի հակառակ նշանակություն է ստանում: Օրինակ՝ **պարապ** *նշանակում է դատարկ, անգործ, առանց զբաղմունքի. դրանից՝ պարապարդ, պարապ մնալ—դատարկ մնալ, տեղը բռնած չլինել, անգործ լինել. պարապ ժամանակ—գործից ազատ ժամանակ, պարապություն—դատարկություն. դատարկ, չբռնած տարածություն երկու առարկայի միջև. անգործություն, գործից ազատ, հարմար ժամանակ, «ժամ պարապոյ».* **պարապել—դատարկել, պարպել.** *ազատ ժամանակ ունենալ, բան ու գործ, զբաղմունք չունենալ: Այս նշանակությունների մեկից մյուսին անցումը հասկանալի է. բայց նույն* **պարապել** *բառը թե՛ հին և թե՛ նոր լեզվի մեջ նշանակում է նաև մի բանով զբաղվել, գործ կատարել. նա իր գործով է պարապում—նա զբաղված է, գործ է անում.* **պարապմունք-զբաղմունք:** *Կնշանակե՝ այս բառը ստացել է սկզբնականի հակառակ նշանակություն: Դա առաջ է եկել հին լեզվի տրական խնդրով գործածությունից՝ «պարապել իմիք», որ նշանակում է՝ ազատ ժամանակ ունենալ մի բանի համար. իսկ «մի բանի համար ազատ ժամանակ ունենալ» նշանակում է՝ ազատ ժամանակ ունենալ այդ բանն անելու համար, ինչպես և նոր (ավելի ժողովրդական) լեզվի մեջ ասվում է՝ «մինչև այժմ չեմ պարապել, որ քո ուզածն անեմ», այսինքն ազատ ժամանակ չեմ ունեցել, որ այդ անեմ: Այս գործածությունից հեշտությամբ կարող է «պարապել իմիք» նշանակել «զբաղվել», ինչպես և սովորական է գրաբարում, մինչդեռ բացառական խնդրով «պարապել յիմեքէ» նշանակում է՝ մի բանից ազատ լինել, դատարկանալ: Հետագայում արդեն նոր լեզվի մեջ «պարապել» բառը, երբ ստացել է «զբաղվել» բառի նշանակություն, այս բառի պահանջած գործիական հոլովով է առնում խնդիրը՝ «պարապել մի բանով», բայց աշխարհաբարի հին գրվածքների մեջ դեռ պատահում են տրական խնդրով գործածություններ՝ «պարապել մի բանի»:*

65. Բառերի առումները կամ զանազան նշանակությունները:— *Պատահում է երբեմն, որ բառերի սկզբնական նշանակությունը ետ մղվելով՝ մթնում և նույնիսկ մոռացվում է, և նոր նշանակությունը դառնում է սովորական: Օրինակ՝ «մորթել» բառի «քերթել» նշանակությունը մոռացվել է: Նույնպես՝ «ծառայ» հին լեզվի մեջ նշանակում է ավելի՝ «ստրուկ», իսկ նորի մեջ «սպասավոր»: «Ապրել» հին՝ ազատվել, պրծնել մի փորձանքից. նոր՝ կեալ, կյանք ունենալ. ապա՝ կենալ մի տեղ, բնակվել: «Ապրանք» հին՝ ազատում. նոր՝ վաճառքի իրեր, ստացվածք: «Ապ-*

րուստ» հին՝ ազատում. նոր՝ ապրելու միջոց, ուտելիք, հագնելիք և այլն։ Բազմաթիվ այսպիսի բառեր կան, որոնց սովորական նշանակությունները հին ու նոր լեզուների մեջ տարբեր են։ Բայց բառերի հին նշանակությունները սովորաբար չեն մոռացվում, այլ պահվում են նորերի հետ, և այսպես ոչ միայն տարբեր բարբառների մեջ, այլ հաճախ նաև միևնույն բարբառի և գրական լեզվի մեջ։ Այսպիսով, միևնույն բառը միաժամանակ երկու, երեք և ավելի նշանակություններ է ունենում, ինչպես ասում են, տարբեր առումներով գործածվում։ Օրինակ՝ գրաբարում «քաջ» բառը նշանակում է՝ 1. ուժեղ, կտրիճ, անվեհեր, ինչպես և աշխարհաբարում. դրանից՝ քաջարանց, հականիշը՝ վատ վատարանց, 2. լավ, ինչպես՝ քաջ գիտեմ, քաջ բժիշկ, քաջ խոսել. վերջինս նաև ճարտար խոսել, քաջաբան—ճարտարաբան, լեզվանի, 3. խիստ շատ. վաղ քաջ ընդ առաւօտն—առավոտյան շատ վաղ. քաջ ի բաց—խիստ հեռու, քաջախոր, քաջաժիր—շատ խոր, խիստ ժիր և այլն։ Նոր լեզվի մեջ «ծանր»՝ 1. կշռով ծանր (քար), 2. լուրջ, ծանր մարդ, 3. դանդաղ, հականիշ՝ արագ, ծանր շարժվել, ծանր քայլել, 4. հղի, ոտը ծանր, ծանրել—հղիանալ (անասունների համար), 5. ծանր լսել—դժվար լսել. ականջը ծանր, ծանրալուր, 6. ծանր խոսք—վիրավորական խոսք, 7. ծանր հանցանք—մեծ հանցանք, 8. ծանր գինի, ծանր ջուր, ծանր յուղ—դժվարախում, դժվար ուտելի, 9. ծանր համ, ծանր հոտ—անախորժ, 10. ծանր ձեռք ունենալ—պինդ, ուժեղ, 11. ծանր միտք, ծանրամիտ—բթամիտ, 12. ծանր ապրանք—թանկ և այլն։ Նույնպես՝ «ջուր»՝ 1. ջուր հեղուկը, 2. թաց, շորերը ջուր դարձան—թրջվեցին, 3. երեսի ջուր, երեսաջուր—ամոթ, պատկառանք. երեսի ջուրը գնալ, թափել—ամոթ չունենալ, 4. աշխատանքը ջուր դառնալ—փչանալ, 5. դասերը ջուր անել, ջրի պես սերտել—լավ սովորել, 6. ջրի գին—շատ աժան, 7. ջուր ընկնել—պտղի հասնել սկսելը, 8. ադամանդի ջուր—փայլը, 9. երկաթի մխումը, մուխ. ջուր տալ—մխել. այս դանակը լավ ջուր տված է, ջուր ունի և այլն։

Բառի զանազան նշանակություններից մեկը սկզբնական *կամ* հիմնական *նշանակությունն է, որ և հաճախ ընդհանուր սովորականն է, իսկ մյուսը կամ մյուսները պատահական կամ անսովոր և քիչ գործածական։ Շատ անգամ, իհարկե, դժվար է բառերի սկզբնական նշանակությունն իմանալ, որովհետև այդ նշանակությունը կարող է գործածությունից դուրս ընկնել և բոլորովին մոռացվել։ Ինչպես որ առանց որևէ որոշող հանգամանքի բառերը հասկանում ենք ընդհանուր վերացական նշանակությամբ, նույնպես և այս դեպքում, երբ մարդ լսում է մի բառ, առանց որևէ որոշող հանգամանքի, նա ամենից առաջ կմտածի բառի* սովորական նշանակության *մասին, որ և ընդհանրապես հիմնական նշանակությունն է։ Օրինակ՝ «քար» բառը լսելով՝ մենք ամենից առաջ մտածում ենք քարի մասին ընդհանրապես, իբրև մի ապար, այսինքն՝ հանքային մի պինդ տեսակ. «ծաղիկ» բառը մեզ ամենից առաջ հիշեցնում է ծառի ծաղիկը կամ մանիշակը, վարդը և այլն։ Բայց երբ կա մի որոշ պայման, այն*

ժամանակ մենք հասկանում ենք նաև բառերի անսովոր և նույնիսկ հազվադեպ նշանակությունները. օրինակ՝ երբ նարդի խաղացողներն ասում են՝ «քարերը պակաս են», «քարերը շարիր», այդ դեպքում արդեն «քար» բառով հասկանում ենք նարդու խաղաքարը, որ նույնիսկ քարից չի շինված, այլ փայտից կամ ոսկորից։ Նույնպես երբ մի բան կշռելիս ասվում է՝ «քարը պակաս է», «ո՞ւր են մեր քարերը», հասկացվում է կշռաքար, որ դարձյալ կարող է նույնիսկ քարից չլինել, այլ երկաթից։ Դարձյալ՝ երբ պարտեզում կամ դաշտում զբոսնելիս ասում ենք՝ «տես այն ծաղիկն ինչ լավն է», անշուշտ, այս բառը հասկանում ենք սովորական նշանակությամբ։ Բայց երբ հիվանդությունների մասին խոսելիս լսում ենք՝ «քաղաքում շատ ծաղիկ կա, մեր երեխայի ծաղիկը պետք է կտրել», այս դեպքերում շատ որոշ հասկանում ենք «ծաղիկ» կոչված հիվանդությունը։ Նույնպես բոլորովին ուրիշ բան ենք հասկանում, երբ լսում ենք՝ «հացի ծաղիկ», «գինու ծաղիկ» և կամ նույնիսկ «Ծաղիկ» հատուկ անունը։

Իբրև որոշող հանգամանք կարող են ծառայել խոսքն ասելու ժամանակ ասողի ու լսողի դրությունը, շրջապատը, խոսքի ընդհանուր բովանդակությունը, խոսողի ու իր խոսակցի արվեստակցությունը, նրանց ընդհանուր պարապմունքը և այլն։ Եվ վերջապես բառերի զանազան նշանակություններից մեկը միայն հասկանում ենք առհասարակ խոսքի կապակցությունից, նայելով թե բառն ուրիշ ինչպիսի բառերի հետ է դրված, ինչպես կարելի է այդ տեսնել վերևում բերված «քաջ», «ծանր», «ջուր» բառերի առումների նկատմամբ։ Նույնպես երբ ասվում է՝ «քար ու կշեռք», հասկանում ենք կշռաքար։ Այսպես և «խաղ», «խաղալ» բառերի զանազան նշանակությունները որոշվում են բառերի կապակցությամբ. 1. Երեխաները խաղ են անում, 2. նրանք թուղթ, նարդի, շահմատ են խաղում 3. քանի՞ խաղ խաղացին—մեկ անգամ խաղալ-պրծնելը, 4. մեկի գլխին մի խաղ խաղալ, 5. խաղ ասել, խաղ կանչել—երգել, խաղ ու տաղ, 6. խաղով հասկացնել—կողմնակի կերպով հիշեցնել, 7. նրա հարսանիքին աղջկերքը շատ խաղացին—պարեցին, խաղ ու պար, 8. այսօր թատրոնում ի՞նչ են խաղում—ներկայացում, 9. մատի խաղերը—հոդերը, 10. աչքս խաղաց, մարդ պիտի գա—շարժվել։ Այս ինչ խուփ տեղ է, քամի չի խաղում. զորքերն առաջ խաղացին—շարժվեցին. 11. խաղք ու խայտառակ լինել, խաղք լինել։ Ես քո խաղատե՞ղն եմ—ծաղրի առարկա. խաղատեղ՝ նաև խաղալու տեղ, 12. գետի խաղերը, և այլն։ Այսպես և «քաշել» բայը՝ 1. քաշել, ձգել, ձիգ տալ. պարանի ծայրը քաշիր, 2. ոտներդ քեզ քաշիր—ամփոփել, ետ քաշել, 3. նրա ձեռից ինչեր չեմ քաշել—կրել. կարոտը քաշել, 4. քաշիր, տես քանի՞ ֆունտ է կշռել, 5. պատից քաշել մի բան, քաշ անել—կախել, կախ տալ, 6. պատկեր քաշել—նկարել, 7. գիծ քաշել, գծել, 8. սեղան քաշել, հաց քաշել—սեղանի վրա դնել մի ուտելիք, 9. կերակրի, կաթի երեսը քաշել—վերցնել, 10. նա հորն է քաշել—նմանել, 11. հինգ րոպե չքաշեց—չտևեց, 12. ախ քաշել—հոգոց հանել, 13. լվացքը ջուրը քաշել, 14. ատամ քաշել—հա-

նել, 15. գինու կուժը գլխին քաշել—խմել, 16. տախտակ քաշել—տախտակ շինել սղոցով, 17. ջուրը քաշվել է—վերացել, գոլորշիացել է։ Ամպը քաշվել է, 18. մարդիկ քաշվեցին իրենց տները. նա քաշվեց լեռները—հեռացավ, առանձնացավ, 19. լվերը քաշվեցին ձոները—բարձրացան, 20. նա ոչ ոքից չի քաշվում—չի ամաչում, չի ակնածում, 21. այս կտորը լվանալուց շատ է քաշվել—մտել, կարճացել և այլն։

Բառերի զանազան առումների մեջ առանձնապես պետք է նկատի ունենալ փոխանցումը գոյականի և ածականի միջև, այն է՝ գոյականների գործածությունն իբրև ածական, և ընդհակառակն. օրինակ՝ տոն օր, ոսկի բաժակ, քար սիրտ, ձմեռ ժամանակ, լույս սենյակ—իբրև տոնական օր, ոսկեղեն բաժակ, քարեղեն սիրտ, ձմեռային ժամանակ, լուսավոր սենյակ։ Նույնպես՝ մութ, խավար, սուտ, ծակ, հանգիստ և շատ ուրիշ բառեր գործածվում են նաև իբրև ածական՝ ծաղիկ հասակ, հանգիստ տեղ, ցից ժայռ, ապառաժ քար, հրեշ մարդ։ Իսկ ածականները՝ աղքատ, մուրացկան, անասուն, թռչուն, կենդանի, սուր, ցուրտ, տաք. շոգ և այլն նաև գոյական են։ Կան ածականներ ևս, որոնք գոյականաբար գործածվելով առանձին նշանակություն են ստանում. ինչպես ժողովրդական լեզվի մեջ «ես հիմա դրա կարմիրը կկապեմ» (կսպանեմ). «բարով կարմիրդ կապենք» (պսակենք քեզ)։ Ածականների գործածությունն իբրև մակբայ տե՛ս § 61, 3։

66. Բառերի նշանակության փոփոխությունն իբրև հետևանք մշակույթի փոփոխության։— Ինչպես տեսանք, բառերի նոր նշանակությունները ծագում են պատահական նշանակությամբ գործածվելուց. իսկ այս լինում է այն պատճառով, որ խոսողն ավելի շատ գաղափարներ ունի արտահայտելու, քան դրա համար բառեր կան, կամ ինքը գիտե, կամ թե ժամանակի ընթացքում փոխվում է նրա պատկերացումը մի առարկայի մասին, որով այդ առարկայի անվան նշանակությունն էլ է փոխվում։ Արդ, ինչպես անհատների, նույնպես և ամբողջ ժողովրդի մեջ դարերի ընթացքում ոչ միայն պատկերացումներն են փոխվում, այլև նայելով նրա կուլտուրական առաջադիմությանը՝ առաջ են գալիս նորանոր գաղափարներ, կյանքի նոր պայմաններ ու հարաբերություններ, նորանոր իրեր և այլն, որոնց բոլորի արտահայտության համար կա՛մ նոր բառեր են ստեղծվում, կա՛մ գործածվում են հին բառերը։ Հետևաբար և բառերի նշանակությունը փոխվում է հարմարվելով ժամանակի մշակութական պահանջներին, այնպես որ կարելի է ասել, թե բառերի նշանակության փոփոխությունը զուգընթաց է միշտ պատկերացումների բազմացման և փոփոխության հետ։ Օրինակ՝ «նավ» բառը սկզբնապես գործածվել է մի նախնական պարզ անոթի համար, որ է՝ ծառի հաստ բունը՝ մեջը փորած, փայտի մի կոպիտ միակտուր տաշտ, որ բանեցրել են ջրերի վրա լողալու համար։ Հետագայում ինչքան կատարելագործվել է դա, մինչև այժմյան մեծ նավերը, դարձյալ նույն անունով է կոչվել։ Նույն «նավ» անունով, սակայն,— մեր մի քանի բարբառների մեջ «վակ»

ձևով, որ «նավակ» բառի սղումն է,— կոչվում է նաև ջրաղացի փայտե կիսախողովակը, որ իսկապես գրեթե նախնական նավի կազմություն ունի, մեջը փորած հաստ գերան, որի միջով ջուրը սրընթաց իջնում է ցած։ Բայց միաժամանակ նույն «նավ» անունով կոչվում է նաև այն փայտե տաշտակը, որով բանվորները ցեխ են կրում շինության համար։ Եթե «նավ» բառը գործածվում է ջրով ճանապարհորդելու շինվածքի զանազան տեսակների համար, սկսած ամենապարզ տեսակից մինչև ամենաբարդ ռազմանավերը,— այդ հասկանալի է, որովհետև դրանք նույն նպատակին են ծառայում, թեպետ այդ բառի հետ կապված պատկերացումները շատ տարբեր են միմյանցից։ Բայց ջրաղացի «նավը» և ցեխի «նավն» այժմ ծովային մեծ նավերի հետ կապվում են միայն հընչյուններով, և ով որ չգիտե, թե ինչպես են եղել նախնական նավերը, նա մինչև անգամ չի կարող հասկանալ, թե ինչպես ջրաղացի նավը և ցեխ կրելու տաշտակը նույն անունով են կոչվել, ինչ որ ռազմական մեծ նավերը։

Այսպես փոխվել են կամ տարբեր նշանակություններ են ստացել բազմաթիվ ուրիշ մշակութական առարկաների ու արդյունքների անունները, երբեմն նույնիսկ անսպասելի կերպով. օրինակ՝ «քար» կամ «կշռաքար» կոչում ենք ծանրության չափերը նաև այն ժամանակ, երբ երկաթից են շինված, որովհետև դրանք սկզբնապես քարից են եղել, ինչպես երբեմն այժմ էլ քարերից ենք բռնում այդ չափերը։ Շատ բառերի առումները հիշեցնում են մեզ նախնական կուլտուրական վիճակը, որով միայն բացատրվում է դրանց նշանակությունը. օրինակ՝ «կրակի գին է» նշանակում է՝ չափազանց թանկ է. որովհետև նախնական մարդու համար չափազանց դժվար ձեռք բերելի, ուրեմն և թանկ է եղել կրակը. իսկ ջուրն, ընդհակառակն, իբրև ապրուստի միջոց, հեշտ կերպով է ճարվել, ուստի և «ջրի գին է» նշանակում է՝ շատ էժան է։

67. Սեռի անվան գործածությունն իբրև տեսակի ու անհատի անուն, և ընդհակառակն։— Վերևում բերված օրինակներից երևում է արդեն, թե ինչպես ընդհանուր նշանակություն ունեցող բառերը գործածվում են նաև մասնավոր նշանակությամբ իբրև տեսակի անուն։ Ամեն հասարակ անուն էլ կարող է, ինչպես տեսանք, մի որոշող վերադրով գործածվել իբրև տեսակի անուն, օրինակ՝ առագաստավոր նավ կամ առագաստանավ, առևտրական նավ, ռազմական նավ կամ ռազմանավ, հածանավ և այլն։ Բայց կարող է բառի նշանակությունն այնպես փոխվել, որ սեռի անունից տեսակի և նույնիսկ անհատի անվան նշանակություն ստանա՝ առանց որևէ որոշող բառի և երբեմն այնպես, որ սկզբնական նշանակությունը մոռացվի։ Օրինակ՝ հին լեզվի մեջ «հավ» նշանակում է թռչուն. դրանից՝ հավահմա, հավորս (թռչնորս). այս նշանակությամբ նոր լեզվի մեջ կա, ավելի ժողովրդական, միայն «հավք» ձևով։ Ապա այդ «հավ» բառով կոչվել է նաև թռչունների մի տեսակը—հայտնի ընտանի թռչունը, թե՛ արուն և թե՛ էգը. ուստի ունինք «հավախոս» բառը «աքլո-

րականչ» նշանակությամբ. բայց այժմ «հավ» նշանակում է միայն այդ ընտանի թռչունի մարին, էգը։ «Հավկիթ» բառի մեջ հակառակ երևույթն ենք տեսնում. սկզբնապես՝ հավի ձու, բայց շատ բարբառների մեջ նշանակում է՝ ընդհանրապես ձու, այնպես որ ասում են նույնիսկ «ձկան հավկիթ», փոխանակ «ձկնկիթ» կամ «ձկան ձու» ասելու։ «Որձ» բառը նշանակում է ընդհանրապես արու, նաև մարդկանց համար. որից կա հին լեզվի մեջ «որձակոտոր առնել»—արուները կոտորել. մի քանի բարբառների մեջ «որձ» նշանակում է երկու տարեկան արու ոչխար (ոչ խոյ). այլև «որձակ» նշանակում է՝ աքլոր։ «Ճետ» նշանակում է արու զավակ, հաջորդ. Վանի բարբառով՝ վառեկ. ուրիշ բարբառների մեջ՝ աքլոր. որից՝ ճետխոսոց—աքլորականչ։ «Զագ» բառը մի քանի բարբառների մեջ ստացել է հատկապես «գոմշի ձագ» նշանակությունը։ «Պտուղ» Այրարատյան բարբառի մեջ ստացել է նաև այգեկութի ժամանակ աչքաթող արած պտուղը, լինի ծառապտուղ, թե այլ պտուղ. դրանից «պտուղ անել» նշանակում է «ճռաքաղ անել»։ «Գրող» ընդհանրապես մի բան գրող. մասնավորապես՝ հեղինակ, մատենագիր։ «Կծոտող» ընդհանրապես ով որ կծոտում է. մասնավորապես՝ շուն։ Այսպես «մոխրաթավալ» ստացել է էշ բառի նշանակությունը, և ուրիշ շատ նմանները։

Նույնպես առանց որևէ որոշող բառի, սեռի կամ տեսակի հասարակ անուններից ծագում են նաև հատուկ անունները, ինչպես՝ Ծաղիկ, Աստղիկ, Գոհար, Մանուշակ, Վարդ, Հասմիկ, Համբարձում, Հարություն, Մանուկ, Կարապետ, Մկրտիչ, Հայրապետ, Գալուստ, Սրբուհի, Տիրուհի, Թագուհի և այլն. Նորք, Ծաղկաձոր, Ջրաբերդ, Նորաշեն, Նորագավիթ, Քարահունչ և այլն։ Սրա հակառակն է հատուկ անվան կիրառությունը հասարակ անվան նշանակությամբ, ինչպես՝ մեկենաս։ Այս կարգին պատկանում է նաև նյութի անվան գործածությունը նույն նյութից շինված առարկայի կամ անոթի անվան նշանակությամբ, օրինակ՝ «պղինձ» ընդհանուր նշանակությամբ այդ անունով մետաղը, ապա՝ մասնավորապես՝ կաթսա. «ոսկի»՝ մետաղը և ոսկի դրամ. պողովատիկ—պողովատե թուր։

Պետք է նկատի ունենալ, որ ոչ ամեն նեղ նշանակությամբ գործածվող բառ սկզբում ավելի լայն նշանակությամբ է գործածվել իբրև սեռի (կամ տեսակի) անուն և հետո իբրև տեսակի (կամ հատուկ) անուն։ Մի անգամ որ լեզվի մեջ կան այդպիսի բառեր, որոնք լայն նշանակություններից անցել են նեղ նշանակության, դրանց նմանությամբ կարող են ուրիշ բառեր հենց սկզբից նեղ նշանակությամբ գործածվել. օրինակ՝ հատուկ անունները՝ Տիգրանակերտ, Վաղարշապատ, Ստեփանավան և այլն, հենց սկզբից հատուկ նշանակություն են ունեցել և ոչ ընդհանուր նշանակություն, ինչպես այդ բառերի ստուգաբանություններից պիտի տեսնենք։ Նույնպես «ձիաքարշ» բառն իր ստուգաբանությամբ պիտի նշանակի՝ ինչ որ ձիով է քարշվում, բայց այդ բառը կազմված է հատկապես ձիով քարշվող երկաթուղու համար։

68. Բառերի փոխաբերական նշանակությունը նմանական զուգորդությամբ:— *Բառերի նշանակության փոփոխության մի առանձին տեսակն է բառի գործածությունը մասնական նշանակությամբ, այն է՝ բառի բովանդակության բազմաթիվ տարրերից մեկն անջատվելով մյուսներից՝ առնվում է իբրև տվյալ բառի նշանակություն: Բառերի այդպիսի գործածությունը, որով բառի նշանակությունը սահմանափակվում է իսկական կամ սովորական նշանակության մեկ կողմի համար միայն, հիմնվում է նմանական բաղդատության վրա. մի առարկայի որևէ հատկությունը զուգորդությամբ հիշեցնում է մեզ մի ուրիշ առարկայի ծանոթ որևէ հատկանիշը, և այս երկրորդ առարկայի անունով կոչվում է առաջին առարկան, կամ նրա հատկանիշը: Բաղդատությունը լինում է սովորաբար «նման», «պես», «ինչպես» բառերով: Երբ մեկի համար ասվում է՝ «այսինչ մարդը կեղտոտ է ինչպես խոզ», կամ «նա խոզի պես կեղտոտ է», այդ երկուսի, խոզի և մարդու, նման հատկությունները բաղդատում ենք իրար հետ: Բաղդատություն ենք անում դարձյալ, երբ ասում ենք՝ «այսինչը խոզի պես է». այս դեպքում էլ հասկանում ենք խոզի ոչ բոլոր հատկությունները, այլ նրա բնորոշ հատկություններից մեկը: Նույնն ավելի կարճ ասում ենք՝ «այսինչը խոզ է»: Այս վերջին դեպքում այլևս բաղդատություն չենք անում, բայց և այդ խոսքով այդ մարդուն երբեք չենք նույնացնում խոզի հետ և ոչ էլ խոզ տեսակի մեջ դնում նրան ու խոզի բոլոր հատկությունները վերագրում նրան,— ինչպես՝ երբ ասում ենք՝ «ծիծեռնակը թռչուն է», թռչուն սեռի ընդհանուր հատկությունները վերագրում ենք ծիծեռնակ տեսակին,— այլ միայն մեր մտքում կատարված բաղդատության հետևանքն ենք հայտնում առանց բաղդատական ձևի, այդ մարդուն վերագրելով խոզի հատկություններից մեկը, սովորաբար աղտեղությունը: «Խոզ» բառն, ուրեմն, գործածում ենք այդ բառի բովանդակության մի մասի համար, որով այդ բառն ստանում է նոր նշանակություն: Բառի այսպիսի մասնական նշանակությամբ կիրառությունը կոչվում է բառի փոխաբերական նշանակություն: Այսպես նաև, օրինակ, երբ ասում ենք «առյուծանման Մհերը», բաղդատություն ենք անում. բայց երբ ասում ենք՝ «առյուծ Մհերը», այլևս բաղդատություն չենք անում, այլ բառը գործածում ենք փոխաբերական իմաստով: Երկու դեպքում էլ չեն առնվում «առյուծ» կենդանու բոլոր հատկությունները, այլ նրանցից մեկը միայն— ուժը կամ անվեհերությունը:*

Փոխաբերությունը հաճախ լինում է գաղափարը պատկերավոր, ցայտուն արտահայտելու համար, և բանաստեղծները սովորաբար դիմում են այս ձևին: Բայց շատ անգամ էլ փոխաբերությունը գործածվում է արտահայտելու համար մի գաղափար, որի համար առանձին բառ չկա. օրինակ՝ անտառը քնած է. վառ երևակայություն. հույսերը խորտակվեցին. հարբել եմ սիրով և այլն: Անտառի մի դրությունը, որի համար առանձին բառ չկա, արտահայտվում է մարդուս հատուկ «քնել» բառով. նույնպես սիրուց ունեցած հոգեկան վիճակն՝ ուրիշ բառ չգնելով՝ ար-

տահայտվում է գինուց ունեցած վիճակին հատուկ «հարբել» բառով։ Այսպես և մյուսները։

Երկու դեպքում էլ փոխաբերությունը,— լինի բանաստեղծական պատկերավորության համար թե հատուկ բառ չլինելուց գործածված,— կարող է պատահական մնալ, կարող է նաև գործածվելով ընդհանրանալ և մտնել սովորական լեզվի մեջ, ինչպես օրինակ՝ վերևում դրվածներն այնքան սովորական են, որ ամենքս էլ գործ ենք ածում։ Բայց ինչքան էլ սովորական դառնան բառերի այսպիսի կիրառությունները, քանի դեռ խոսողը գիտակցում է, որ ինքն իր մտքի առարկայի համար գործածում է մի ուրիշ առարկայի հատուկ բառը,— այսպիսի կիրառությունները, ինչպես են վերևում դրվածները, մնում են դեռ փոխաբերական, այսինքն բառը մնում է նույն բառը, միայն տարբեր առումով գործածված։ Իսկ երբ բառի իսկական նշանակությունը, որ առիթ է տվել բաղդատության, ետ մղվելով մոռացվում է, և կամ փոխաբերությունն այնքան մաշվում է, որ խոսելու ժամանակ այլևս չենք գիտակցում, թե գործածված նշանակությունը փոխաբերական է,— այն ժամանակ առաջ է գալիս բառի բոլորովին տարբեր նշանակություն և նույնիսկ տարբեր բառ։ Օրինակ՝ «լույսը բացվել», «մութն ընկնել», «սիրտը նեղանալ», «մեկին նեղություն տալ» կապակցությունների մեջ այլևս անզգալի են փոխաբերությունները։ Արդարև, մենք դեռ զգում ենք, որ այս «նեղանալ», «նեղություն» բառերը նույնն են, ինչ որ «տեղի նեղություն», «նեղ դուռ» կապակցությունների մեջ. բայց «տեղի նեղություն», «դռան նեղություն» և «սրտնեղություն» ու «մեկին նեղություն տալ» կապակցությունների մեջ այդ միևնույն բառը տարբեր նշանակություններ ունի։ Իսկ «լույսը բացվել», «մութն ընկնել» կապակցությունների մեջ փոխաբերությունն այնքան մաշված է որ նույնիսկ մոռացված է. մենք այլևս չենք մտածում ոչ «բացվելու» և ոչ «ընկնելու» մասին. այլ այդ բայերն ստացել են ընդհանուր վերացական բնավորություն, ինչպես եթե ասեինք «լույս դարձավ», «մութ դարձավ», կամ մի բառով՝ «լուսացավ», «մթնեց»։ Առնենք մի ուրիշ օրինակ։ Երբ ասում ենք «էշ մարդ», «նա էշ է, բան չի հասկանում», ամենքս էլ զգում ենք, որ «էշ» բառն այստեղ իսկական իմաստով չի գործածվում, այլ մասնական կամ փոխաբերական նշանակությամբ իբրև հիմար։ Բայց ահա նույն «էշ» բառով կոչվում է նաև գութանի մասերից մեկը, որ մի երկու բարբառի մեջ կոչվում է նաև «խարզան». դա գութանի այն հաստ ու երկայն կորնթարդ փայտն է, որի վրա հաստատված են գութանի մյուս մասերը, որի վրա և ամրացնում են լուծը. «էշն ասավ. ես որ ըլեմ ոչ, գութանը վարիլ չի» (առած)։ Այս գործածությամբ այնքան մթնած է փոխաբերությունը, որ նույնիսկ նոր բառ է առաջ եկել։ «Էշ» կոչվում է նաև ջութակի այն փոքրիկ մասը, որի վրա հենվում են լարերը։

Բառերի նշանակության այսպիսի փոփոխությունն առաջ է գալիս բազմազան կերպով. որովհետև առանձին անհատների բառական պատկերացումներն, ինչպես տեսել ենք, մեկմեկուց տարբեր են. մեկ անձի

համար շնշտված է լինում պատկերացման մի կողմը, մյուսի համար՝ մի ուրիշ կողմը։ Ուստի, օրինակ, նույն «խոզ» բառի համար մի քանի տարբեր մասնական նշանակություններ կարող են առնվել. ինչպես՝ «Այս տուն չէ, խողաբուն է», այսինքն կեղտոտ է։ «Խոզ երեխա է, այնքան ասում եմ՝ մոտս արի, չի գալիս», այս խոսքի մեջ «խոզ» նշանակում է՝ անհամբույր, մարդու չմոտեցող։ «Այնքան կերել է, որ խոզ է դարձել», այսինքն շատ է գիրացել։

Բառերի այսպիսի կիրառությունն առաջ է գալիս սովորաբար առարկաների արտաքին կերպարանքի, ձևի, դրության կամ որևէ ուրիշ հատկության նմանությամբ. ինչպես՝ աչք, իսկական նշանակությամբ մարդու և կենդանիների համար, իսկ փոխաբերական իմաստով ասում ենք՝ պահարանի աչք, ջրաղացի աչք և այլն։ Նույնպես՝ գլուխ, մարդու գլուխ, սարի գլուխ, շաբարի գլուխ, սոխի գլուխ, կաղամբի գլուխ, ամանի գլուխ (ամանի գլուխը դատարկվել է), գրվածքի գլուխ, սյան գլուխ և այլն. գլուխ—նաև սկիզբ (էն գլխեն, գլխից սկսել)։ Պոչ՝ շան պոչ, հագուստի պոչ. թիկունք՝ մարդու, աթոռի, լեռան և այլն։ Թերք՝ վարդի, թղթի և այլն. նաև՝ լրագիր. և շատ նմաններ։ Նույնպես և տարբեր զգայարանների ըմբռնումները նույն բառով են արտահայտվում, ինչպես՝ քաղցր համ, քաղցր (անուշ) հոտ, քաղցր հայացք, քաղցր ձայն և նմանները. տեղի, տարածության և ժամանակի համար նույն բառերն ենք գործածում՝ մի տարի առաջ, երկու քայլ առաջ. կարճ տարածություն, կարճ ժամանակ. երկար (ավելի երկային) ճանապարհ, երկար ժամանակ։ Այսպես և ֆիզիկական ըմբռնումների բառերը հոգևոր և բարոյական նշանակությամբ, ինչպես՝ լույս ֆիզիկական և լույս մտավոր. խավար ֆիզիկական և խավար անգիտության. էլեկտրական լուսավորություն, լուսավորության կոմիսար. փայտն այրվում է, սիրտս այրվում է. գեղեցիկ տուն, գեղեցիկ միտք. մաքուր սենյակ, մաքուր զգացմունք. կծու տաքդեղ, կծու խոսք. այս մարդը սրտի թրթռոց ունի, այս մարդը սիրտ չունի, սիրտ չարեց, սիրտը կոտրվեց. համարիր, տես քանիսն է, լավ եմ համարում գնալ, քան...։ Երբեմն այսպիսի գործածություններից, երբ փոխաբերությունն զգալի չէ, առաջ են գալիս բոլորովին տարբեր բառեր, օրինակ՝ Քուլա՝ 1. բամբակի քուլա, գզած բամբակի ձվաձև հաստ փաթաթ, 2. ձյան քուլա—փաթիլ. քուլա-քուլա ձյուն է գալիս, 3. ամպի կամ ծխի հորդ դեզ. քուլա-քուլա ծուխ էր բարձրանում, 4. սպունգի խոշոր կտոր. Համմտ. Երևանում՝ «ամպ» բառը «սպունգ» նշանակությամբ։ 5. Ջրի հորդ հորձանք։

69. Բառերի նշանակության փոփոխությունը կցորդական զուգորդությամբ։— Այս զուգորդությամբ բառի նշանակությունը մի առարկայի գաղափարից անցնում է մի այնպիսի առարկայի գաղափարի, որ տեղով, ժամանակով, պատճառով կամ որևէ ուրիշ առնչությամբ կապվում է առաջինի հետ։ Բառի նշանակության այս փոփոխությունը ճարտասանության մեջ կոչվում է փոխանունություն (մետոնիմիա), որով, ինչպես

բացատրում են, պատճառի անունը դրվում է հետևանքի անվան փոխանակ, հետևանքը՝ պատճառի, հեղինակի անունը՝ հեղինակության, գրքի. պարունակողը՝ պարունակվածի կամ ընդհակառակն և այլն։ Օրինակ՝ Խորենացի կարդալ, Խորենացու մեջ գրված է, փոխանակ՝ Խորենացու գրած հայոց պատմության։ Նույնպես ասում ենք՝ «մի բաժակ խմել», այստեղ պարունակող «բաժակ» բառը դրվում է իր պարունակած նյութի անվան տեղ։ Այսպիսի պատահական կիրառություններն առհասարակ մնում են իբրև մտածողության ձևեր. որովհետև դրանք մի նոր առանձին նշանակություն չեն ստանում,— ինչպես բաժակ բառը վերևի գործածության մեջ, որ կարող է լինել՝ մի բաժակ ջուր, մի բաժակ թեյ և այլն,— բայց կարող են երբեմն նաև սովորական դառնալ որոշ գաղափարներ արտահայտելու համար և առնվել իսկապես մի նոր նշանակությամբ։ Բերենք մի քանի այդպիսի կիրառություններ։

Ա) Տեղը և տեղում եղողները նույն անունով. օրինակ՝ Տուն նշանակում է բնակարան իր մասերով, այլև մի տան մեջ բնակվողները, ընտանիք։ Շրջապատ— մի բանի շուրջ եղած տեղվանքը, այլև նույն տեղում եղողները։

Բ) Առարկայի մասի անունը ամբողջի անվան տեղ և ընդհակառակն. օրինակ՝ Տուն նշանակում է ընդհանրապես ամբողջ բնակարանն իր մասերով մարդկանց և անասունների համար, բայց մեր գյուղերում այդ բառով կոչվում է մասնավորապես այն սենյակը, ուր կենում են տանեցիք։ Տուն՝ նաև ոտանավորների մասերը։ Այսպես և հին լեզվի մեջ երդ, որ նշանակում է տան առաստաղից բացված լուսամուտ, գործածվում է նաև «երդիկ» ձևով «կտուր» նշանակությամբ, ապա՝ նաև ամբողջ տան, այլև ընտանիք բառի նշանակությամբ։ Սույն նշանակությունը նոր լեզվի մեջ ստացել է ծուխ բառը. որովհետև ամեն տան մի երդիկից ծուխ է դուրս գալիս։ Այսպես և «գլուխդ ողջ լինի», փոխանակ «դու ողջ լինես»։ Հինգ գլուխ տավար, չորս թև հավ, վեց բերան երեխա և նմանները։

Գ) Հատկության վերացական անունները հատկություն ունեցող առարկաների անվան տեղ. օրինակ՝ Նորություն—նոր լինելը, նորի հատկություն, այլև նոր բան, նորույթ։ Հարթություն—հարթ լինելը, այլև հարթավայր։ Այսպես և՝ բարձրություն, խորություն, մեծություն և այլն։ Հաճախ այսպիսի վերացական անունները, ինչպես և ուրիշ անունները, գործածվում են իբրև հավաքական անուն, օրինակ՝ բանվորություն, ուսանողություն, աշակերտություն, գյուղացիություն, ազնվականություն, հասարակություն, բազմություն, դեսպանություն, գերություն և այլն։

Դ) Գործողության անունները գործող անձերի համար հավաքական նշանակությամբ. օրինակ՝ խորհուրդ—խորհրդակցություն, խորհուրդ անելը, այլև խորհրդին մասնակցող անձերի համախմբություն, ինչպես՝ մանկավարժական խորհուրդը վճռեց։ Այս բառը նշանակում է նաև դիտավորություն, գաղտնիք։ Այսպես և ժողով՝ ժողովվելու, ժողով անելու գործողություն, այլև ժողովականների համախմբություն, ժողովը որո-

շեց. կառավարություն մի տան, մի երկրի, այլև Հայաստանի կառավարությունը վճռեց— իբրև կառավարության անդամները։

բ) Գործողության անունն իբրև առարկա, լինի գործողության արգասիք թե կրող առարկա, միջոց և այլն. օրինակ՝ հունձ՝ հնձելու գործողություն, հունձը սկսվել է, հնձի ժամանակ, այլև հնձի արգասիր, այս տարի լավ հունձ ունեցանք։ Այսպես և բերք, ապրուստ, աճ և այլն։ Վերջին բառը նշանակում է՝ աճելու գործողություն, աճելություն, այլև աճածը, ծառի ճար, ճյուղը. ճմերկենու, դդմենու, վարունգենու աճած թփերը, թաղերը։ Մուտ, անցք, ելք, էջք—մտնելու, անցնելու, ելնելու, իջնելու գործողություն, այլև այդ գործողությունների ճանապարհը։ Գնացք—գնալը, այլև ճանապարհ, հետք. հին լեզվի մեջ նաև վարք, կյանք. նոր լեզվի մեջ նաև՝ երկաթուղու մի անգամից գնացող կառախումբ։

գ) Գործողի անունը այն միջոցի կամ գործիքի անվան փոխանակ, որով կատարվում է գործողությունը. օրինակ՝ գրիչ նշանակում է ընդհանրապես գրող, ապա՝ գրելու գործիքը, երկաթե գրիչ, իսկ «նա լավ գրիչ ունի», «սուր գրիչ ունի», նա լավ ոճ ունի։ Քարհատ—քար կտրող մարդը և կտրելու գործիք և այլն։

դ) Պատճառի անունը հետևանքի անվան փոխանակ՝ օրինակ՝ վաստակ նշանակում է՝ գործ, ծառայություն, շահ. վաստակել—գործել, ծառայել, շահել, հոգնել. որովհետև գործողը և՛ ծառայում, և՛ շահում է, և՛ գործելուց հոգնում։ Շատանալ—բազմանալ, բավականանալ, գոհանալ. որովհետև շատը բավականանում է, իսկ բավականացումը գոհություն է պատճառում։ Սուղ—կարճ, փոքր, բարակ, նուրբ, քիչ, թանկ. որովհետև ինչ որ կարճ է՝ և՛ փոքր է, և՛ քիչ. ինչ որ քիչ է՝ թանկ է։

Շատ անգամ դժվար է որոշել, թե բառի սկզբնական կամ իսկական նշանակությունը որն է, և թե ինչպիսի զուգորդություններով բառը նորանոր նշանակություններ է ստանում. որովհետև միևնույն բառը կարող է բազմազան կերպերով անցնել մի նշանակությունից մյուսին, մերթ նշանակության լայնացումով, մերթ նեղացումով, մերթ նմանական, մերթ որևէ կցորդական զուգորդություններով։ Բերենք մի քանի օրինակներ ևս։ Ճաշ՝ 1. ճաշելու գործողությունը, 2. կեսօր, որովհետև ճաշը սովորաբար կեսօրին ենք անում. օրը ճաշ դառավ, այսինքն՝ կեսօր։ Բարբառների մեջ նաև՝ 3. կերակուր ընդհանրապես և կամ հատկապես մի առանձին տեսակի կերակուր. ճաշ ուտել—կերակուր ուտել. թանով ճաշ, մսով ճաշ, կաթնով ճաշ և այլն։ Հաց՝ 1. սովորական նշանակությունից զատ նաև՝ 2. ճաշ, հացկերույթ. հաց ուտել—ճաշել, ընթրել, որովհետև ուտելիքների մեջ հացն ամենամեծ տեղն է բռնում։ Ապա նաև՝ 3. կերակուր, հացի գդալ—կերակրի գդալ, 4. ապրուստ, ապրելու միջոց, նա հացի տեր դարձավ, 5. խնչույք, ուրախություն, 6. մեղրի պան, մեղրահաց, 7. հացով մարդ—հյուրասեր, առատաձեռն։ Սեղան՝ 1. սովորական նշանակությամբ, 2. հացի սեղան, սեղանի նստել, գավառական՝ «սեղան-տախտակ», 3. կերակուր, հաց ուտելը, որից սեղանատուն—ճաշարան, 4. զո-

հի սեղան, բեմ։ **Գիր՝** *1. տառ, 2. նամակ, 3. որևէ գրություն, 4. կախարդական հմայք, գիր անել։* **Թուղթ՝** *1. թուղթ, սովորական նշանակությամբ, 2. նամակ, գիրք թղթոց, 3. վկայաթուղթ և նմանները։* **Ձեռ՝** *1. ջուր տալ մի անասունի, 2. ոռոգել, 3. հերքել։* **Ձեռ՝** *1. մարդու ձեռք, 2. իշխանություն, իրավունք. նրա ձեռքից պրծա. նրա ձեռին է, ձեռքի տակ է. իմ ձեռքիս չի—չեմ կարող, 3. գիր. նրա ձեռքը պարզ չէ. այս ում ձեռքն է, 4. համալիր, կոմպլեկտ. մի ձեռք հագուստ։* **Ճուտ՝** *1. ձագ կենդանիների, նաև մարդու, 2. ճուտեր կամ ճուլտիկ—շապկի և այլի կողերին, քղանցքին ձգած ու կարած քառանկյունի փոքր կտորը, որ ուրիշ բարբառներում ասվում է «զուզակ». ճուտ է ուզում, ճուտ գցել։* **Ձագ՝** *1. ընդհանրապես կենդանիների ձագ, նաև մարդու համար, որից՝ աներձագ, 2. մասնավորապես գոմշի ձագ, որից «ձագատել» բայը միայն գոմշի համար, 3. մեղվի ձագ, ձագուց մեղր, ձագի մեղր, ձագ տալ—ձագ հանել (միայն մեղուների համար), 4. վառեկ, 5. մանր թռչուններ և ապա ընդհանրապես թռչուններ, 6. ճնճղուկ, ձագի լեզու կամ ճնճղկան լեզու, ծտապաշար (բույս), 7. սարեկ, նաև արեղաձագ, 8. վարտիքի և անդրավարտիքի ձագը, աղվեսուկը—եռանկյունի կտոր՝ լայնացնելու համար։ Հմմտ. ճուտը շապկի, 9. վարակիչ վերքի շուրջն եղած երկրորդական պզուկները, 10. ձագով սյուն, ձագ սյուն—կիսասյուն, փոքր սյուներ, որ առշեղ դնում են գլխավոր սյան երկու կողմից՝ իբրև նեցուկներ, 11. ձագ մաճ կամ մաճաղբեր—գութանի մաճի հետ առշեղ դրած փայտը և այլն. նաև «Ձագ» հատուկ անուն գյուղի (ծագած է «Ձագավան» բառից)։* **Օրան***—1. հնձած ցորեն, գարի, որ թափված կամ դիզած է առանց ծեծելու, քուլաշ, 2. օրան բարձած սայլը, 3. ցորենի. գարու խուրձ, հին լեզվի մեջ «որայ», 4. հունձք։*

70. Դարձվածներ։— *Ոչ միայն առանձին բառերի նշանակությունն է փոխվում, այլ նաև բառերի կապակցությունների։ Դրանք նույնպես սկզբում միայն պատահաբար են առնվում նոր նշանակությամբ, բայց այս վերջինը կրկնվելով՝ դառնում է սովորական։ Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել։ Օրինակ՝ երբ մեկը ձեռքը մի բանի, դիցուք, սեղանի վրա դրած է լինում, ասում ենք՝ «ձեռդ քաշիր սեղանից», հասկանում ենք իսկական նշանակությամբ. նա, որին ուղղված է խոսքը, ձեռքը հեռացնում կամ բարձրացնում է սեղանից։ Բայց նույն խոսքն առանց «ձեռք» բառի վրա հոդ դնելու, «ձեռք քաշիր սեղանից», չենք մտածում իսկական նշանակությամբ, թե ձեռքը սեղանի վրա դրված է և լսողը պետք է ձեռքը ետ տանի. այլ այդ նշանակում է՝ թողնել, լքել մեկ բան, դադարել մի բան անելուց, հրաժարվել, ետ կանգնել մի բանից, մի բան անելուց։ Այս նոր նշանակությունն ստացել է ոչ «ձեռք» բառն առանձին, ոչ էլ «քաշել» բառը, այլ երկուսը միասին՝ «ձեռք քաշել» այն էլ բացառական խնդրով. որովհետև սույն այս բառերի կապակցու-*

թյունը մի տրական խնդրով՝ «ձեռք քաշել մի բանի, մի թղթի» բոլորովին ուրիշ նշանակություն ունի, այն է՝ ստորագրել։ Այսպես բազմաթիվ բառական կապակցություններ ունեն մի նոր ոչ-ֆիզիկական նշանակություն, ինչպես՝ «ձեռքը բաց», այլև բարդ ձևով՝ «ձեռնաբաց» նշանակում է՝ առատ, առատաձեռն. ձեռքը թեթև, ոտը թեթև—բարեհաջող, ոտը ծանր—անբարեհաջող. օրինակ՝ բժշկի ոտը թեթև էր, հիվանդը շուտ լավացավ։ Երեսից ընկնել—երեսից զրկվել, ապա՝ հարգը, պատիվը կորցնել մեկի մոտ, ատելի դառնալ։ Երես ունենալ—վարկ, համարում ունենալ. նա ոչ ոքի մոտ երես չունի, կամ երեսատեղ չունի—պատիվ, համարձակություն չունի։ Երես տալ—շատ սիրելով համարձակություն տալ, ապա՝ շփացնել. անամոթացնել. երես առնել—շատ սիրվելուց համարձակ դառնալ, ապա՝ շփանալ. լպրշանալ։ Մի ուրիշ կողմից՝ «երես» բառն ստացել է «ամոթ» բառի նշանակություն, ինչպես՝ աներես—անամոթ։ Երես դարձնել (թեքել, շուռ տալ) մեկից—այլևս չսիրել, տեսնել չուզել, արհամարհել մեկին։ Ձեռ(ք) առնել մեկին—ծաղրել. գլուխ տալ մեկին—գլխով բարևել։ Ձեռք տալ մեկին—ձեռքը ձեռքի մեջ դնելով բարևել և այլն։ Միևնույն դարձվածը, նույնիսկ միևնույն հոլովով խնդրի հետ կարող է մի քանի նշանակություն ունենալ. ինչպես՝ «ձեռք տալ մեկին, մի բանի» նշանակում է նաև՝ ձեռքով դիպչել մեկին, մի բանի, օրինակ՝ նրան ձեռք մի տա, հիմա կընկնի, այլև՝ ձեռնատուր, ձեռնտու, շահավետ լինել, ինչպես՝ պարապ ման գալը ձեռք չի տալ։ Առևտրի ժամանակ սովորական էր լսել հետևյալ խոսքերը.—«Տասը պակաս, տալի՞ս ես. դէ՛ ձեռքդ տուր (իսկական նշանակությամբ. առևտրի ժամանակ ձեռքը գնողի ձեռքի մեջ դնելը համաձայնության նշան է)։— Չէ՛, եղբայր, այդ գնովը ձեռք չի տալ» (ձեռնտու չէ)։ «Այսչափը ձեռք կտա» նշանակում է նաև՝ կօգտի, կբավե, բավական է։

Վերջին առումների մեջ «ձեռք տալ» կապակցության նշանակությունն այնպես է փոխվել, որ այլևս չենք մտածում «ձեռք» բառի վրա և մինչև անգամ, երբ առանձին ուշադրություն ենք դարձնում այդ դարձվածի վրա, դժվարանում ենք բացատրել, թե ինչ զուգորդություններով «ձեռք տալ» ստացել է՝ շահավետ, օգտակար և բավական լինելու նշանակություն։ Դրաբարում «ձեռն տալ ումեք» (ձեռք տալ մեկին) նշանակում է օգնել, ձեռնտու—օգնող, ձեռնտուություն—օգնություն։ «Ձեռք տալ» կապակցության անցումն այս նշանակությանը՝ հասկանալի է, որովհետև մեկին ընկած տեղից հանելիս՝ օգնելու համար՝ իսկապես ձեռքներս տալիս ենք նրան և բռնում բարձրացնում։ Այսպես և նոր լեզվի մեջ՝ «ձեռք մեկնել մեկին» նշանակում է՝ օգնել մեկին։ Ապա «օգնել» նշանակությունից այդ «ձեռն տալ» կապակցությունը բնականաբար անցել է «օգտել», «օգուտ լինել» նշանակությանը. որովհետև մեկին օգնելը և օգտել, օգուտ տալ է, ինչպես և գրաբարում «օգնել» բայը ստացել է «օգուտ տալու» նշանակություն, «օգնէ» նշանակում է՝ օգուտ է, կօգտե։ Այսպես ուրեմն «ձեռն տալ» ստացել է նախ՝ «օգնել» բառի նշանակությունը, և ապա՝

սրանից անցել է «օգուտ լինելու» նշանակությանը. բայց որովհետև նոր լեզվի մեջ «ձեռն տալ» կապակցության համար չի մնացել «օգնելու» նշանակությունը, ուստի առանց գրաբարի այդ նշանակության՝ աշխարհաբարով միայն մութն է մնում, թե ինչպես ձեռք տալ կապակցությունն ստացել է «օգտակար, շահավետ» լինելու իմաստը (§ 80. 3)։

71. Համանուն բառեր։— Բառերի նոր նշանակությունները երբեմն այնքան հեռանում են սկզբնականից, որ մեր գիտակցության մեջ այլևս չեն կապվում իրար հետ իբրև նույն բառի մի հիմնական ընդհանուր նշանակության փոփոխություններ. այլ համարվում են հնչյուններով նույն, բայց միմյանցից անկախ և տարբեր բառեր—համանուններ։ Առանձին ուսումնասիրությունը միայն կարող է ցույց տալ, որ համանուն բառերը հաճախ նույն ծագումն ունին, ինչպես են, օրինակ հետևյալները. փուղ նշանակում է՝ 1. խողովակ (եղեգնի և նման բաների), 2. հովվական սրինգ, 3. զուռնա, 4. կոկորդ, 5. վիզ (որից՝ փողկապ, փողոտել—վիզը կտրել), 6. քթի խոռոչ (քթափող), 7. վարտիքի փողք, 8. նեղ անցք, փողոց (փողան),—բոլորը ծագել են հիմնական խողովակ նշանակությունից։ Բարձ նշանակում է՝ 1. գլխատակի բարձ, 2. նստարան (հնումն նստում էին բարձերի վրա), 3. պատիվ, իշխանություն (ծագած է թագավորի մոտ նստելու բարձ ունենալուց, որից և բարձակից—աթոռակից, պատվակից), 4. ազդր, նստատեղ (որովհետև ծալապատիկ նստում են ազդրերի վրա), 5. սյան գլուխ—գլխափայտը, որ գերանը կրում է իր վրա, 6. սայլի բարձ—առեղների տակ դրված մասերը, 7. եռանկյունու և ուրիշ ձևերի խարիսխը,— բոլորը ծագած են մի հիմնական նշանակությունից՝ բառնալ բայի բարձ բնից, որ է՝ կրել, վրան ունենալ։

Կան համանուններ էլ, որոնք ծագում են տարբեր բառաձևերի պատահական նույնացումից, ինչպես՝ անցավ—առանց ցավի և անցավ—անց կացավ, կամ բոլորովին տարբեր բառեր են, տարբեր արմատներից, օրինակ՝ փող (խողովակ) բառի հետ համանուն է փող բառը դրամ նշանակությամբ, որ բոլորովին ուրիշ ծագում ունի։ Այսպիսի համանուններ են նաև՝ այր—1. տղամարդ և 2. քարայր. մայր—1. ծնող մայր և 2. մայր ծառ. մոր—1. ճահիճ և 2. մայր բառի սեռական-տրական հոլով. կույս—1. աղջիկ և 2. կողմ (որից կուսակալ). քեր—1. կանաչեղեն (քարմ և չրացած) «քերթ» բառից և 2. կողմ (քեր և դեմ լինել). հար (գրաբար՝ յար)—1. կից, 2. միշտ։ Կան մի քանի այնպիսի համանուններ էլ, որոնք հին գրական լեզվի մեջ ստուգաբանորեն և նշանակությամբ իրարուց անկախ բառեր են և տարբեր կերպով էլ արտասանվել և գրվել են. բայց հնչափոխությամբ ոչնչացել է դրանց արտասանության տարբերությունը, դրանք դարձել են համահնչյուն, նոր ուղղագրությամբ նաև համագիր համանուններ։ Դրանք են՝ սեր—1. սիրել (հին ուղղ. սէր), 2. սերվել, սերունդ. հարկ—1. տան հարկ (հին ուղղ. յարկ), 2. տուրք. մեզ—1. միզելը (հին ուղղ. մէզ), 2. մենք բառի տրական հոլովը. հոտ—1. ոչխարի հոտ (հին ուղղ. հօտ, հաւտ), 2. վարդի հոտ. պետ(f)— 1. պիտույք (հին ուղղ.

պէտ(ք), 2. մեծ. գեր—1. չաղ (հին ուղղ. գէր). 2. բարձր, վեր (գերազանց)։

72. Նույնանիշ բառեր։— *Լեզվի զարգացումը առաջ է բերում մի կողմից՝ բառերի տարբեր նշանակություններ և նույնիսկ համանուններ, մյուս կողմից՝ նաև նույնանիշ բառեր, որոնք նույն նշանակությունն ունեն, բայց հնչյուններով տարբեր են և տարբեր էլ բառեր են։ Նույնանիշները առաջ են գալիս զանազան ճանապարհներով։ Լեզվի մեջ արդեն լինում է մի բառ, բայց նույն նշանակության համար մի ուրիշ նոր բառ է մտնում կա՛մ օտար լեզուներից, կա՛մ ուրիշ բարբառներից, կամ թե խոսողը,— այն պատճառով որ չգիտե եղած բառը, կամ խոսելիս չի հիշում և կամ որևէ ուրիշ պատճառով,— կազմում է մի նոր բառ, որ և երբեմն ընդհանրանում է։ Օրինակ՝ հին լեզվից ունինք արդեն՝* **բնականաբար, բնականապես,** *բայց վերջին տասնամյակներում նույն նշանակությամբ կազմված է մի երրորդը՝* **բնականորեն**: *Հին լեզվի մեջ ունենք* **անեզր,** *բայց Ա. Խահակյանը, անշուշտ հանգի համար, կազմել է նույն նշանակությամբ* **անափ** *բառը. «Եվ ուղիս անհատնում և անափ», թեպետ «եզր» և «ափ» նույնանիշ չեն։ Տարբեր ածանցներով կազմված համանիշներ են՝* **երկրավոր, երկրային. անեղ, անավոր. ֆարյա (ֆարեհ), ֆարեղեն** *և այլն։ Ունեինք արդեն՝* **ևահանգական, տեղական** *բառերը. բայց դրանց նշանակությամբ վերջերս նոր կազմված են՝* **ևահանգային, տեղային.** *Հին* **մատենադարան** *բառի համապատասխան նոր կազմված է* **գրադարան.** *Ժողովրդական լեզվից ունենք* **քուշ** *բառը, բայց հին լեզվից առած գործածում ենք ավելի այտ. ունինք սովորական* **մոտ** *բառը, բայց մի քանի հեղինակներ արևմտյան գրական լեզվից փոխ առած գործածում են նաև* **ով** *բառը (սեղանի քով), այլև գրաբարի* **մերձ** *բառը։*

Նույնանիշ բառերն առաջ են գալիս նաև տարբեր բառերի համամետ զարգացումով, այսինքն՝ տարբեր բառերի նշանակությունները միևնույն ուղղությամբ փոխվելով՝ նույն կամ տարբեր բարբառների մեջ մխտում, հակում են նույն նշանակությանը։ Օրինակ՝ **նետ** *և* **ոռնակ** *բառերը նշանակության փոփոխությամբ ստացել են* **աֆաղալ** *բառի նշանակությունը, որի համար ունենք նաև* **աֆլոր**: *Այսպես և* **քոշուն** *բառը, որ նշանակում է* **քոշող,** *նշանակության նեղացումով ստացել է* **հավի** *բառի նշանակությունը։ Այսպես և միևնույն նշանակության համար տարբեր բառերից կազմված են բարբառների մեջ՝* **գլորան, գլորս, թավալուկ, լողքար, կտրաքար**— *դա այն կլոր քարն է, որ կտուրների վրա գլորում են հողն ամրացնելու համար, որպեսզի տունը չկաթի։*

Նոր գրական լեզվի մեջ նույնանիշները ծագում են հաճախ բարբառներից. նայելով թե գրողը որ բարբառի ազդեցության տակ է, գործածում է այս կամ այն բառը. օրինակ՝ մեկը գործածում է **ֆալա,** *մի ուրիշը՝* **փաթիլ,** *մի երրորդը՝* **գլուխ** *(այսպես՝ Րաֆֆին)։ Բայց ավելի հաճախ նույնանիշ բառերը ծագում են մի կողմից՝ ժողովրդական կենդանի լեզվից, մյուս կողմից՝ հին լեզվից. բացի այդ՝ գրաբարում էլ արդեն կան*

նույնանիշ բառեր, որոնք բոլորն էլ գրեթե մտնում են նոր գրական լեզվի մեջ, որով վերջինս շատ հարստանում է այդպիսի բառերով։ Բերենք մի քանի բառեր մարդու մարմնի մասերի անուններից. գագաթ, կատար. մազ, հեր, վարս, գես. գլուխ, կառափն. վիզ, պարանոց, ուլն, փող, ճիտ, շլինք. երես, դեմք. (անձն, դեմք). ականջ, ունկն. աչք, ակն. (քար, ակ. անիվ, ակ). ոտք, (գրաբարում և բարբառներում) աք, որից՝ աքացի, ճուռ (ամբողջ ոտքը—թաթ, սրունք և ազդր միասին), կա նաև՝ աքուր. ոռունդ, քիթ, ունչ. բերան, երախ (ռեխ). այտ, թուշ. շրթունք, պռոշ, պռունկ. ծնոտ, կզակ (կուզ), կլափ. ատամ, ակռա, կեռիք. կուրծք, լանջ. որովայն, փոր. թիկունք, կռնակ. բազուկ, կուռ, ծղիք, թև. ազդր, զիստ, բարձք. ծունկ, գուճ. սրունք, ոլոր և այլն։ Այս բառերից մի քանիսն անգործածական են, բայց դրանցից կազմվածները սովորական բառեր են։ Բերենք մի քանի ուրիշ նույնանիշներ ևս. Գնալ, երթալ. մեկ, մի. սառն, պաղ, ցուրտ. բազմություն, շատություն. զորություն, ուժ. վատ, գեշ. վաճառել, ծախել. առոգել, ջրել. գեղեցիկ, սիրուն, աղվոր. լավ, աղեկ. գործել, բանել. շինեցնել, մարել, հանգցնել. միասին, միատեղ, մեկտեղ. ահ, երկյուղ, վախ. որոնել, փնտրել. հողմ, քամի. հեղձուցիչ, խեղդող. դյուրին, հեշտ. գաղտնի, ծածուկ. անձրև, թոն, թաթավ. անձրևային, թոնային, եկայինն. արեգակ, արև, արփի. վահան, ասպար. ձի, երիվար, նժույգ. վախճան, վերջ. բացի (քեզնից), (քեզնից) զատ և շատ նմանները։

Ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնություն են. որովհետև այդ ժամանակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես ուրիշներին հաղորդելու և ուրիշներինը հասկանալու համար, ուստի նույնանիշ բառերի կարիք չկա, քանի որ մեկ բառն էլ բավական է միտքն արտահայտելու համար։ Այդ պատճառով, եթե մի կողմից նույնանիշ բառեր են առաջ գալիս, մյուս կողմից էլ բարբառները ձգտում են այդ անօգուտ առատությունը թոթափելու։

Այսպես չէ, սակայն, գրական լեզվի մեջ։ Այստեղ պահվում են այդպիսի բառերը. որովհետև գրական լեզվի մեջ մտքերը լոկ արտահայտել չի պահանջվում, այլ, որքան կարելի է, նաև գեղեցիկ, ներդաշնակ և ընտիր ձևով գրել և խոսել։ Նույնիսկ պրոզայիկ գրվածքների մեջ պահանջվում է որոշ չափով գեղեցիկ ոճ. իսկ դրա համար պետք է բառերի կրկնությունից խուսափել և եթե հարկ է նույն միտքը երկրորդել, այդ պետք է տարբեր բառերով կատարվի, ինչպես վարվում են մի քանի կլասիկ հեղինակներ, որոնք հայտնի են իրենց ոճի պեսպիսությամբ։ Նույնանիշ բառերը շատ ավելի պիտանի են ճարտասանական և բանաստեղծական լեզվի մեջ, բառերի ընտրության և ներդաշնակության տեսակետից, մանավանդ չափածո գրվածքների մեջ։ Շատ անգամ ոտանավորների չափի, հանգի ու հանգիստության նկատմամբ մի բառ հարմար չի գալիս իր վանկերի թվով ու հնչյունների տեսակով, մինչդեռ մի ուրիշը պատշաճում է. ուստի և բանաստեղծն ազատությամբ փոխեփոխ բանեցնում է նույնանիշ բառերը։ Նույնը պետք է ասել և նույնանիշ բառաձևե-

րի ու կապակցության ձևերի մասին։ Օրինակ՝ փոխանակ գրելու՝ «Հուշի պես բարակ մի թել կապում է իմ սիրտը քեզ.— ի՛մ երկիր, սիրտդ արդյոք զգո՞ւմ է հոգուս տենդը», բանաստեղծը (Զարենց) շեշտերի ռիթմական դասավորության համար, օգտվելով լեզվի մեջ եղած նույնանիշ շարադասական ձևերից, գրում է. «Հուշի պես թել մի բարակ՝ կապում է սիրտը իմ քեզ.—երկի՛ր իմ, սիրտդ արդյոք զգո՞ւմ է տենդը հոգուս»։ Սրանով է հենց մեր բանաստեղծական լեզուն տարբերվում մեր արձակ լեզվից, այնպես որ մենք ունինք թե՛ պրոզայիկ լեզու, առանց նույնանիշ բառերի և միակերպ պարզ շարահյուսությամբ, և թե՛ բանաստեղծական լեզու, նույնանիշ բառերի և նույնանիշ շարահյուսական ձևերի ազատ գործածությամբ։ Այս է պատճառը, որ մեր հասարակ ժողովուրդը մեր գրական լեզուն «գրաբար» է համարում։ Եվ իսկապես, մեր նոր գրական լեզուն մասամբ նաև գրաբար է. որովհետև նախ՝ շատ բառեր գրաբարից են առնված, հաճախ գրաբարից ենք օգտվում նույնանիշ շարահյուսական ձևերի գործածության նկատմամբ, մանավանդ բանաստեղծական լեզվի մեջ. և ապա՝ նույնիսկ արձակ գրվածքների մեջ շատ անգամ գերադասություն է տրվում հին բառերին, քան նույնանիշ ժողովրդական բառերին. օրինակ՝ ավելի շուտ այտ, կառուցել են գրում այժմ, քան թուշ, շինել. վերջերս կազմել են և գործածում են նույնիսկ «լընթերցել», փոխանակ «կարդալ» բառի։

78. Բառերի կորուստ։— *Խոսակցական լեզուն, ինչպես տեսանք, սիրում է պարզություն, այսինքն՝ մի գաղափարի համար բավականանում է մի բառով. ուստի նույնանիշ բառերի ավելորդ բեռը դեն է ձգում։ Դա լինում է բնական ճանապարհով. նույնանիշներից մեկը որևէ պատճառով ավելի գործածական է դառնում, քան մյուսները. այս վերջինները հետզհետե քիչ գործածվելով՝ վերջիվերջո մոռացության են տրվում։ Օրինակ՝ հին լեզվի բազում բառը, որին նույնանիշ է շատ, խոսակցական և նույնիսկ նոր գրական լեզվից արդեն դուրս է մղվել. բայց ունինք դեռ դրանից կազմված* **բազմանալ, բազմություն** *գրական բառերը։*

Բառերի կորուստը կապված է նաև նրանց արտահայտած գաղափարների կորստի հետ, իսկ այս վերջինը սովորաբար հետևանք է լինում մշակութական մեծ հեղաշրջումների և ազդեցությունների։ Օրինակ՝ քրիստոնեության մուտքի հետ եթե մի կողմից՝ նոր բառեր են մտել հայերենի մեջ, ինչպես՝ եկեղեցի, քահանա և այլն. մյուս կողմից՝ հեթանոսական կրոնի հետ մոռացության են տրված և շատ հին բառեր։ Մեր ժողովուրդն այլևս չգիտե՝ քուրմ, մեհյան, բագին, դիք, դիցազն և այլն, որոնք գրական լեզվի մեջ պահվում են միայն գրաբարից։ Այս կարգի սակավաթիվ հին բառերը՝ քաջք, վիշապ, դև, եթե մնում են ժողովրդական լեզվի մեջ, որովհետև դրանց, այդ ոգիների հավատն էլ դեռ մնում է։ Կան այնպիսի հին կրոնական բառեր էլ, որոնք ապրում են քրիստոնեական կերպարանքի տակ, ինչպես՝ դրախտ, դժոխք և այլն։ Նույնպես հին քաղաքական կարգերի փոփոխության հետ մոռացության են տրված և նրանց արտա-

հայտող բառերը, ինչպես են՝ նախարար, սեպուհ, պայազատ և այլն, որոնք դարձյալ գրական ճանապարհով մտել են կամ մտնում են նոր գրական լեզվի մեջ։ Այսպես և ռուսաց տիրապետության ժամանակ 19-րդ դարում եթե մի կողմից՝ երևան են եկել նոր բառեր՝ հաշտարար դատավոր, նահանգապետ, փոխարքա և այլն, մյուս կողմից՝ ժողովրդի մեջ մոռացված են բազմաթիվ բառեր, ավելի թուրքերեն կամ պարսկերեն։ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» գրքի մեջ եղած շատ բառեր այժմ ոչ միայն ընդհանուր գործածական չեն, այլև երբեմն, մանավանդ օտար բառերը, անհասկանալի են նույնիսկ բնիկ երևանցիների համար։

Օտար բառերի կորստի համար պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Մինչդեռ լեզվի նախագրաբարյան շրջանում այլ լեզուներից փոխ առած բառերն արդեն հայացած են, գրաբարյան շրջանի սկզբից դեսը մեր լեզվի մեջ արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից մտած բազմաթիվ բառերը մեծ մասամբ հարազատ չեն համարվում և 19-րդ դարում, վերածնության հետ միաժամանակ, գրական լեզվից մերժված են. որով առաջ է եկել լեզվի գիտակցաբար մաքրում այդպիսի բառերից, որոնց փոխանակ գործածվում են կա՛մ հին հայերեն (գրաբարի), կա՛մ բարբառային հայերեն բառերը, կա՛մ նոր հայերեն բառեր են կազմվում։ Գրական լեզվի այս հստակումը հիմնովին է եղել և շարունակվում է մինչև այժմ էլ, և այդ լեզուն իր կողմից, դպրոցի և լրագրության միջոցով, աղդել է նաև սովորական խոսակցական լեզվի, որոշ չափով նաև բարբառների վրա։ Այս վերջիններից էլ հետզհետե պակասում են օտար բառերը։ Այս հոսանքն ազդում է նաև եվրոպական լեզուներից նոր բառեր ընդունելու վրա. մենք այժմ էլ ընդհանրապես խուսափում ենք առանց անհրաժեշտության որևէ նոր օտար բառ ընդունելուց։

74. Նույնանիշ բառերի տարբերակումը։— *Լեզուն մի ուրիշ ճանապարհով էլ ձգտում է պարզության նույնանիշների նկատմամբ. նույնանիշները պահվում են, բայց կապվելով որոշ կիրառությունների հետ՝ նշանակության նուրբ տարբերություններ են ստանում, որով և վերանում է նույնանիշների ավելորդ բեռը։ Նշանակությամբ նուրբ կերպով իրարուց տարբերվող բառերը սովորաբար կոչում ենք* **համանիշ բառեր**, *ինչպես՝ զարմանալ, հիանալ, սքանչանալ. բարկություն, սրտմտություն, ցասում։ Այսպիսի բառերն իսկապես դեռ նույնանիշ են. բայց տարբերակումով (դիֆերենցիացիա) երբեմն առաջ են գալիս նաև բոլորովին տարբեր բառեր տարբեր նշանակություններով։ Միայն, որովհետև այս տարբերակումն ընթանում է աստիճանաբար, ուստի և հաճախ դժվարանում ենք ըմբռնել դրանց նշանակության նուրբ տարբերությունները և որոշել, թե արդյոք երկու բառը համանի՞շ են, թե՞ արդեն տարբեր նշանակություններ ունին։*

Նույնանիշ բառերի տարբերակումն առաջ է գալիս բնականորեն. դա էլ սկսվում է անհատներից։ Նույնանիշների արտահայտած պատկերացումներն էլ, ինչպես ամեն պատկերացում, բարդ են. ուստի և դրանց

պատկերացումներն էլ տարբեր են զանազան անհատների մեջ. մեկի մեջ զորեղ է պատկերացման մի կողմը, մի ուրիշի մեջ՝ մի ուրիշ կողմը։ Բացի այդ՝ ինչպես ուրիշ բառեր, նույնպես և նույնանիշները հաճախ ունին զանազան նշանակություններ և կիրառություններ։ Այդ պատճառով լինում են անհատներ, որոնք նույնանիշներից մեկը կապում են պատկերացման ավելի մի կողմի հետ, կամ զանազան նշանակություններից ավելի մեկի հետ, իսկ ուրիշ անհատներ՝ միևնույն պատկերացման մի ուրիշ կողմի հետ, կամ զանազան նշանակություններից մի ուրիշի հետ։ Այսպիսով անհատական լեզվի մեջ առաջ է գալիս նույնանիշների նշանակության նուրբ տարբերություն, որ առանձին անհատներից անցնում է ուրիշներին, մինչև գալիս է ժամանակ, երբ նույնանիշ բառերը բոլորովին տարբեր նշանակություն են ստանում։ Բերենք մի քանի օրինակներ։ Հին լեզվի **բարի** և **լավ**, **չար** և **վատ** բառերի նշանակություններն արդեն տարբերակման են ենթարկված։ Հին լեզվի մեջ ասվում է՝ բարի մարդ, բարի ծառ, բարի պտուղ և չար մարդ, չար ծառ, չար պտուղ։ «Ծառ բարի՝ պտուղ բարի առնէ և ծառ չար՝ պտուղ չար առնէ». բայց նոր լեզվի մեջ այլևս չենք ասում՝ «բարի ծառը բարի պտուղ է անում, իսկ չար ծառը՝ չար պտուղ», այլ ասում ենք՝ «լավ ծառը լավ պտուղ է տալիս, վատ ծառը՝ վատ պտուղ»։ Նոր լեզվի մեջ **բարի** և **չար** բառերը սահմանափակվել են միայն մարդկանց որոշ բարոյական կողմի համար. ուստի **բարի պտուղ** նշանակում է ոչ թե «լավ պտուղ» (ծառի), այլ բարի զավակ (մարդու)։ Նույնպես **չար** բառն առել է հին ընդարձակ նշանակության բարոյական կողմը միայն— չար մարդ, չար ոգի, իբրև չարիք գործող։ Բայց այս բառն ունի արդեն մի ուրիշ գործածություն ևս՝ «չար երեխա», երեխայական չարություն անող, իբրև անհանգիստ երեխա։

Այսպես նշանակության տարբերակման ենթարկված են նաև հետևյալները. վերջանալ, վախճանվել (մեռնել). ականջ, ունկ (ամանի կանթ). աչք, ակ (ջրի, աղբյուրի և այլն). քար, ակ (թանկագին քար, այլև՝ ասիվ). շրթունք, պռոշ, պռունկ (պռունկ ամանի, այլև մարդու՝ «քիթ ու պռունկ» կապակցության մեջ, իսկ «շուրթ» թոնրի). ծունկ, ծունր (դնել). ուժ, զորություն (ազդեցություն). արեգակ, արև (արևոտ տեղ, արև ժամանակ)։ Գրական լեզվի մեջ ևս շատ բառեր ձգտում են տարբերակվելու, օրինակ՝ աշխատանք, երկ, երկասիրություն (գրական). շինել, կառուցել, կերտել (արվեստով). վերջ, վախճան (ելք, մահ, նպատակ). գիրք, մատյան (հաշվի և այլն)։ Մտցնել, մուծել (մատյանի, ցուցակի մեջ). շատություն, բազմություն (մարդկանց մեծ խումբ). կոտրել, բեկել (վճիռ, ընտրություն). սայթաքել (սոթ տալ), գայթակղվել (բարոյական). բարձր, վսեմ (բարոյական և արվեստի վերաբերյալ). ջարդել, խորտակել (հույս և այլն, նաև երկաթուղու). վիզ, ճիտ, պարանոց (աշխարհագրական). շարժել, հուզել (բարոյական). մութ, խավար (այլև մտավոր)։ Այս և սրանց նման նույնանիշներից բուն աշխարհաբար բառերն ունին ավելի ընդարձակ

նշանակություն, մինչդեռ գրաբարից առնվածները գործածվում են սահմանափակ, ավելի բարոյական իմաստով։

Նշանակության տարբերակման ենթարկվում են նաև նույն բնից նույնանիշ ածանցներով կազմված բառերը, ապա և իրենց ածանցական մասնիկները։ Այսպես օրինակ՝ հին լեզվից ունինք երկու համանիշ ածանցներ՝ «ական» և «ային»։ Գրաբարում «ական» ածանցը շատ ավելի գործածական և գործուն է եղել, քան «ային», ուստի հին լեզվի մեջ ունինք հազարից ավելի բառեր «ական» ածանցով կազմված, մինչդեռ «ային» մասնիկով կազմվածների թիվը վաթսունի չափ է. մոտ հարյուր բառ էլ կան թե՛ «ական» և թե՛ «ային» ածանցով կազմված։ Նոր գրական լեզվի մեջ, սակայն, վերջին ժամանակներս ավելի «ային» ածանցով են բառեր կազմվում, քան «ական»։ Բացի այդ՝ այս երկու ածանցները հին լեզվի մեջ տվորաբար անխտիր նույն նշանակությամբ են գործածվում. Եզնիկ Կողբացու «Եղծի» մեջ, օրինակ, միայն մի բառ կա «ային» ածանցով՝ «ցամաքային օձ», բայց նա ունի «ջրական կենդանիք, ծովական գազան, ծովական ձուկն, անապատական կապիկք, ցամաքական բնութիւն, երկրական անասունք»։ Նույնպես Մ. Խորենացին անխտիր գործածում է նույն նշանակությամբ՝ «Հիւսիսական ազգք, հիւսիսական կողմանք, հիւսիսականք» և «հիւսիսային կողմն, հիւսիսային զօրք, հիւսիսային գունդ, հիւսիսայինքն» (ազգեր). «ազգական, ազգականք» և բոլորովին նույն նշանակությամբ՝ «ազգային, ազգայինքն, տոհմային»։ Այսպես և ուրիշները. «երկիր լեռնային և դաշտական ծաղիկք. օդական թեւաւորք (թռչունք)»։ Այժմ, սակայն, այլևս չենք ասում՝ լեռնական երկիր, լեռնական ծաղիկ, դաշտական ծաղիկ, ջրական կենդանի, ցամաքական բնություն, ծովական գազան և այլն, այլ միայն՝ լեռնային երկիր, լեռնային ծաղիկ, դաշտային ծաղիկ, օդային թռչուններ, ջրային կենդանի, ծովային գազան, հյուսիսային ազգեր, ցամաքային բնություն և այլն։ Նույնպես այժմ տարբեր նշանակություններ ունեն՝ ազգական (ցեղակից, արենակից մարդ) և ազգային (ազգի վերաբերյալ). լեռնական լեռնաբնակ, լեռնցի) և լեռնային (լեռան վերաբերյալ)։ Լեզվի պատմական զարգացումն այս երկու ածանցների մեջ հաճախ նշանակության տարբերություն է առաջ բերել, ինչպես՝ քաղաքական (պոլիտիկ), քաղաքային (քաղաքի վերաբերյալ). անապատական (ճգնավոր), անապատային (անապատում կամ անապատից եղած). սիրական՝ (սիրող), սիրային (սիրո վերաբերյալ). տնական (տանեցի), տնային (գործեր)։ Առաջիններդ, «ական» ածանցով կազմվածները, ստացել են հաճախ ավելի գոյականի բնավորություն, ավելի նեղ նշանակությամբ, մինչդեռ «ային» ածանցով կազմվածներն ունեն ավելի ածականի բնավորություն (տե՛ս §§ 140, 142)։

75. Նույն բառի կրկնակներ և նրանց տարբերակումը։— Գրական լեզվի մեջ կան որոշ թվով բառեր կրկնակ ձևերով, հաճախ նաև տարբեր նշանակություններով։ Այսպիսի բառերից մեկը սովորաբար աշխարհա-

բար է, բարբառից է անցել գրական լեզվին. իսկ մյուսը, որ դարձյալ նույն բառն է հին ձևով, գրական փոխառություն է գրաբարից. օրինակ՝ կանչ, կոչ. հատցնել, հատուցանել. ճմռել, ճմլել. վովել, բևեռվել. ոտնավոր, ոտանավոր. պահածու, պահածո։ Այս բառերի մեջ, ինչպես կարելի է տեսնել, ոչ միայն նշանակության, այլև հնչյունական տարբերություն կա, և նշանակությամբ ու ձևով տարբեր բառեր են առաջ եկել նույն բառից։ Կան և այնպիսի կրկնակներ, որոնք երկուսն էլ գրաբարից են կամ գրաբարում կան, կամ երկուսն էլ միայն աշխարհաբարում կան. ինչպես՝ համբարձում, ամբարձում. հոգի, ոգի. հրաշք, հրեշ(ք). հատնել (գրաբ. հատանել), հատել (գերեզման). արհեստ, արվեստ. ծախել, ծախսել. կոտորել, կոտրել. կտրիճ, կտրիչ. քարահատ (մարդ), քարհատ (մուրճ). փայտահատ (մարդ), փայտատ, փետատ (քլոմնգ). դռնափակ (դռան փակ), դռնփակ (փակ դռնով). խրել, խցել. պարապել, պարպել. դասել, դարսել. բանավոր, բանվոր. վերացնել, վերցնել. ճղել, ճեղքել. կոթ, կանթ և այլն, և այլն։

Նույն բառի կրկնակներ կազմվում են հաճախ գրաբարի հոգնականի «f» մասնիկով, որ աշխարհաբարում կորցրել է իր թվական նշանակությունը. բայց այսպիսի բառերն այդ մասնիկով և առանց այդ մասնիկի շատ անգամ ունեն տարբեր նշանակություններ, ինչպես՝ գիր, գիրք. հավ, հավք. փող, փողք. կաթիլ, կաթիլք. կուրծ (կովի), կուրծք (մարդու). սեղան, սեղանք (սեղանատամներ). սահման, սահմանք (սովորություն, օրենք). սանդր, սանդերք (բուրդ գզելու) և այլն։ Այս կարգի մեջ պետք է դնել նաև գրաբարի «ումf», «մումf» վերջացած հոգնականով կազմվածների հետ նրանց եզակի ձևերը. ինչպես՝ շուրթ, շրթներ (թոնրի), շրթունք (մարդու). պաշտոն, պաշտամունք. բերում, բերմունք. բաժանում, բաժանմունք. մտածում, մտածմունք. համարում, համարմունք. ուսում, ուսմունք և այլն։ Սրանցից՝ «ումն» ածանցով կազմվածները ցույց են տալիս ավելի գործողություն, իսկ «մունք» վերջացածներն ունեն ավելի վերացական դրության կամ որևէ ուրիշ կողմնակի նշանակություն ևս։

Նշանակության տարբերակումով կրկնակներ են առաջ եկել նաև դերբայական ձևերից. օրինակ՝ գրաբարի անցյալ դերբայի ձևերը գործածվելով նոր գրական լեզվի մեջ, առանձնացած են մնում և առնվում են իբրև մի ածական. այս ձևերն այլևս չենք կապում նույն ձևերի հետ, որ հնչափոխությամբ մնում են նոր լեզվի մեջ. ինչպես՝ անցյալ (գրաբարում՝ անցեալ) և անցել նույն բառն են, բայց մեկն արդեն ածական, իսկ մյուսը դերբայ։ Նույնպես մեկուսացած իբրև ածականներ գրաբարից մտել են գրական լեզվի մեջ՝ հետևյալ, ննջեցյալ, սառուցյալ, մեռյալ, հեծյալ և այլն։

76. Իմաստաբանությունը, որ ուսումնասիրում է բառերի նշանակության պատմությունը, ընդհանրապես դեռ զարգացած չէ։ Իսկ ինչ վերաբերում է հայոց լեզվի բառերի զանազան նշանակություններին, այդ

մասին գրեթե բան չկա արված։ Դրա համար, անշուշտ, նախ պիտի հավաքվեն բոլոր բառերը թե՛ գրավոր աղբյուրներից և թե՛ բարբառներից, ճշտվեն նրանց նշանակություններն ու կիրառությունները. ապա նոր առանձնապես ուսումնասիրվեն, թե մեր լեզվի բառերի զանազան առումներից ո՛րը հիմնական, ընդհանուր նշանակություն է, ո՛րը պատահական, բայց սովորական դարձած. թե ո՛ր բառը, կամ բառի ո՛ր նշանակությունը գրաբարից է, միջին գրական լեզվից կամ բարբառներից։ Այսպիսի հետազոտության ժամանակ չպիտի մոռացվեն, հարկավ, նաև օտար լեզուների ազդեցությունները։

Այժմ հայոց լեզվի բառերի նշանակությունը սովորելու համար կարևոր աշխատանքներ են՝ գրաբարի համար «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկու հատոր, Վենետիկ 1836—1837. բարբառների համար՝ Ս. Վ. Ամատունու «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912. և Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարան», Թիֆլիս, 1913։ Բացի սրանցից՝ նաև Աճառյանի Արմատական բառարանը, որի տպագրությունը դեռ վերջացած չէ[5]։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

Ա

ԲԱՒԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

77. Բաղադրութիւն:—*Հնչյունական տարբերակումին, ինչպես տեսանք, հաճախ հետևում է նշանակության տարբերակումը, որով իսկապես նոր բառեր են առաջ գալիս լեզվի մեջ (քորել—քերել. արհեստ—արվեստ): Բառակազմության սովորական եղանակը, սակայն, է՛ բաղադրությունը, որով լեզվի մեջ եղած բառերից և արմատներից կազմվել են ու կազմվում են նոր բառեր—բարդ և ածանցական բառերը:*

Հայերենը շատ մեծ չափերով ընդունակ է բաղադրության: Հին լեզվից ունենք բազմաթիվ բաղադրված բառեր, որոնց անալոգիայով այժմ էլ կազմում ենք նոր բառեր: Այս հատկությունը նպաստում է մեր լեզվի բառամթերքը հարստացնելու և օտար, մանավանդ գիտական ու տեխնիկական բառերի փոխանակ՝ հայերեն նոր բառեր կազմելու: Այստ է պատճառը, որ թե՛ հնումն և թե՛ այժմ մեր լեզուն օտար գիտական բարդ բառերի նշանակությունն է միայն առնում և իր սեփական բառերով դրանց համապատասխան բաղադրություններ է կազմում: Այսպիսի նոր բառերը հեշտությամբ գործածվում և ընդհանրանում են. բավական է միայն, որ օտար բառի համապատասխան նոր բառը ճշտությամբ արտահայտի այլազգի բառի նշանակությունը, կազմված լինի հայերենի բառակազմության օրենքներով և, որքան կարելի է, կարճ ու ներդաշնակ լինի: Դրա համար հաճախ առնվում են այնպիսի հին բառեր և արմատներ, որ թեպետ աշխարհաբարում գործածական չեն, բայց հասկանալի են:

78. Հին և նոր բաղադրություններ:— *Պետք է տարբերել երկու տեսակի բաղադրություններ. մեկը՝ հին, մեռած բաղադրություններ, որոնք ծագում են ուղղակի հնդեվրոպական նախալեզվից և կամ նախագրաբարյան շրջանում կազմված են նախալեզվյան օրինակի համեմատ, և*

մյուսը՝ նոր, կենդանի բաղադրություններ, որոնք կազմված են գրաբարյան և եռգրաբարյան շրջաններում կա՛մ դարձյալ նախալեզվյան օրինակի համեմատ և կա՛մ սրանից անկախ, մեր լեզվի մեջ զարգացած եղանակով։

Առաջին տեսակի հին բաղադրություններն այժմ հաճախ այլևս մեկ համար ըմբռնելի չեն հայոց լեզվի արդի վիճակի տեսակետով։ Այսպես օրինակ՝ գրաբարից ունենք՝ հլու, հմուտ, հզօր, որոնք բարդ բառեր են. կազմված են հր<հու բառից և լու (լուր, լու ի լու), մուտ, զօր բառերից։ Այդ «հու» բառը, սակայն, նույնիսկ գրաբարում անկախ գոյություն չունի, և բաղադրությունների մեջ դրա նշանակությունն զգալի չէ. համեմատական քերականության օգնությամբ միայն իմանում ենք, որ «հու» նշանակում է լավ, և որ վերևի երեք բառերը բարդ են. հլու—լավ լսող, հզոր—լավ զորեղ, շատ զորեղ, հմուտ—լավ թափանցած մի բանի մեջ, ներհուն, խելամուտ։ Դրանք քարացած, մեռած բաղադրություններ են։ Կան և այնպիսի հին բաղադրություններ, որոնց ցեղակցությունն զգալի են մեզ համար, ինչպես՝ ջերմ, ջերմն, ջեր (որից գրաբարի՝ ջերանիմ, ջերին, ջեռանիմ, ջեռնում). զգենում, զգեստ (բարբառային գենալ, գեստ). սերմն, սեռ, սեր (որից սերունդ)։ Բայց դրանց կազմությունը շատ հին է, դրանք նույնպես քարացած են, և դրանց բաղադրիչ մասերի (մ, մն, ստ) նշանակությունը համեմատական քերականությամբ անգամ հեշտ չէ բացատրել։ Դրանց անալոգիայով մեր լեզվի պատմական շրջանում նոր բառեր չեն կազմվել և այժմ էլ չեն կազմվում։

Այսպես չեն նոր, կենդանի բաղադրությունները. մենք այժմ մեր լեզվական զգացումով ոչ միայն ըմբռնում ենք նրանց բաղադրիչ մասերն ու նրանց նշանակությունները, այլև նրանց անալոգիայով նոր բառեր ենք կազմում։ Բարդ բառերի մեջ գտնում ենք մեզ համար հասկանալի երկու բառի կամ արմատի միացում, ինչպես՝ սեղանատուն, հիասթափվել. իսկ ածանցական բառերի մեջ՝ մի բառ կամ արմատ և մի ձևավորական մաս, որի նշանակությունը նույնպես մեզ համար զգալի ու հասկանալի է, և որով մենք նոր բառեր ենք կազմում ուրիշ բառերից, ինչպես՝ քաղաք-ային, տնա-յին, շրջան-ային։

79. Բարդության տեսակները։— Հայերենի բարդ բառերը, ինչպես ընդհանրապես բոլոր բաղադրված բառերը, ծագում են երկու տկզբնապես ինքնուրույն բառերի այնպիսի շարահյուսական կապակցությունից, որ ըմբռնվում է իբրև մի առանձին բառական միություն, մեկ բառ մեկ նշանակությամբ։ Ամեն տեսակի շարահյուսական կապակցություններից կարող են բարդ բառեր առաջ գալ. բավական է միայն, որ շարահյուսական կապակցությունը որևէ պատճառով այլևս զգալի չի լինում իբրև կենդանի շարահյուսական ձև։ Սակայն հաճախ դժվար է լինում որոշել, թե երկու բառի կապակցությունը սովորական շարահյուսական է, թե արդեն բարդ բառ է դարձած։ Ուստի հաճախ բարդ չեն համար-

վում և իբրև այնպիսին միացած իբրև մեկ բառ չեն գրվում մի քանի շարահյուսական կապակցություններ, որոնք արդեն մեկ բառի նշանակություն ունին. որովհետև կան աստիճանավորումներ, մինչև որ երկու բառի շարահյուսական կապակցությունը զարգանա և իբրև մեկ բառ ըգացվի։ Օրինակ՝ մի ժամանակ աշխարհաբարում գրում էին ջոկ ջոկ «այս օր» (ինչպես այժմ գրում ենք նման կապակցությունները՝ այս շաբաթ, այս ամիս, այս տարի), իսկ այժմ գրում են միացած «այսօր»։ Այս աստիճանավորումները նկատի ունենալով՝ հայերենում պետք է որոշել երեք տեսակի բարդություններ.

1. Հարադրություններ։— *Այսպես կոչում ենք բառերի այնպիսի կապակցությունները, որոնք թեպետ մեկ բառի նշանակություն ունին, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իբրև մեկ բառ չեն գրվում, օրինակ՝ բաց անել, պար գալ, ցույց տալ։ Հարադրությունը բարդության հիմնական տեսակն է, որի մեջ շարահյուսական կապակցության զգացումը թեպետ մթնած է, բայց հաճախ դեռ բոլորովին անդգալի չէ։ Այսպիսի կապակցությունները երբ միացած իբրև մեկ բառ են գրվում, դառնում են արդեն՝*

2) Կցական բարդություններ, *որոնք թե՛ նշանակությամբ և թե՛ գրության ձևով մեկ բառ են, առաջացած լեզվի սովորական շարահյուսական ձևերից, օրինակ՝ այսպես, կեսօր, տանտիկին։*

3) Իսկական բարդություններ, *որոնց երկու բաղադրիչ մասերը միշտ միացած իբրև մեկ բառ են գրվում, և երկուսը միասին մեկ նշանակություն ունին, ինչպես՝ զորավար, լուսաբեր, մեծատուն. բայց նրանց շարահյուսական կապակցության ձևը իբրև այնպիսին բոլորովին մեռած է լեզվի մեջ և պահվում է միայն բարդության մեջ և բարդության համար։ Դա բաղադրության հնագույն եղանակն է, որ այժմ էլ կենդանի գործոն է, և այս եղանակով միշտ նորանոր բառեր ենք կազմում։*

Բ

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԿՑԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

80. Հարադրական բայերն *առանձնապես հատուկ են հայոց լեզվին. կազմվում են մի բայից և մի հարադիր բառից, որ լինում է բայի լրացումը. բայն ու հարադիրը միասին ստանում են մեկ բառի նշանակություն և կարող են հաճախ մեկ բառով փոխանակվել. ինչպես՝ բաց անել—բանալ, լաց լինել—լալ, զրույց անել—զրուցել, ցույց տալ—ցուցանել, եռ գալ—եռալ, ձայն տալ—ձայնել, խաղ անել—խաղալ, թույլ տալ—թույլատրել, դուրս անել—արտաքսել, ներս անել—մտցնել։ Կան այնպիսի հարադրական բայեր, որոնք թեպետ մեկ բառի նշանակու-*

թյուն ունին և ուրիշ լեզուների մեջ մեկ բառով են արտահայտվում, բայց հայերենում չունին համապատասխան նշանակությամբ նույնանիշ բայեր մի բառով, ինչպես՝ երես տալ, երես առնել։ Կան և այնպիսինները, որոնց հարադրից կազմված բայերն արդեն տարբեր նշանակություն ունին, ինչպես՝ թափ տալ—թափել, կանգ առնել—կանգնել, քաշ տալ—քաշել, ման տալ—մանել, հուպ տալ—հպել։

Հարադրական բայերի մի քանի տեսակներ պիտի տարբերել։

1) Հարադրական բայեր կազմվում են հաճախ ընդհանուր վերացական նշանակություն ունեցող անել կամ լինել բայերով և մի հարադրով, որ որոշում է բայի բովանդակությունը՝ ինչ անելը, կամ ինչ լինելը, օրինակ՝ ջանք անել (ջանալ), բան անել (բանել), իմաց անել (իմացնել), սիրտ անել, միտք անել, ոտնակոխ անել, ոտնակոխ լինել, լաց լինել, քուն լինել։

2) Շատ գործածական են այնպիսի հարադրությունները, որոնց մեջ բայը պահում է իր նշանակությունը, և հարադիր մասը, տվորաբար մի տեղական անուն կամ մակբայ, միայն ձևափոխում է, զորացնում կամ պարզում է բայի նշանակությունը, ինչպես՝ դուրս գալ, ներս գալ, մեջ գալ, վեր գալ, վայր գալ (ցած գալ), ետ գալ, մոտ գալ, շուրջ գալ, շուռ գալ և այլն։ Այս բաղադրություններն համապատասխան են օտար լեզուների նախաբայերով կազմված կամ նախդրավոր բայերին. բայց մինչ ուրիշ լեզուների մեջ հարադիրը հաճախ բայից անբաժան մաս է դարձած, ինչպես ռուսերենում, կամ երբեմն բայի հետ միանում է, երբեմն բաժանվում, ինչպես գերմաներենում է, մեր լեզվի մեջ այս կարգի բայերի հարադիր մասերն ավելի անկախություն ունին և միշտ անջատ են գրվում, ու խոնարհման ժամանակ հարադիրն ու բայը մեկմեկուց բաժանվում են օժանդակ «եմ» բայով, ինչպես՝ ներս գնալ, ներս գնաց, ներս է գնացել։ Հարադիր մասը նույնիսկ իբրև մի մակբայ՝ բայից հետո էլ է դրվում՝ գնաց ներս։ Բայց և այնպես այս բայերը մեր լեզվական զգացողով ըմբռնում ենք արդեն իբրև մի միություն և մեկ բառ. ուստի և սովորական, ավելի ժողովրդական լեզվի մեջ, հաճախ «կը» և «չը» ձևական մասնիկները դրվում են ոչ՛թե բայի, այլ հարադրի վրա, ինչպես կը վեր ունի, կը վեր ընկնի, կը վեր տա, չը վեր ընկնի, կը դուրս գա, չը դուրս գա։ Այսպես և ուրիշ կարգի հարադրությունները՝ կը ցույց տա, կը դեմ առնի, չ՛անցկացավ, կը ման գամ, չը ման դամ։

Ապագա բառարանի գործ է հավաքել մակբայներով կազմված և մյուս տեսակների հարադրական բայերը, որոնց վրա մինչև այժմ հարկավոր ուշադրությունը չի դարձրած։ Այստեղ կդնենք տեղական մակբայներով կազմված մի քանի այդպիսի բայեր միայն իբրև օրինակ։

Ներս գալ, ներս ընկնել, ներս ձգել, ներս քաշել, ներս ածել, ներս բերել, ներս տանել, ներս անել, ներս առնել, ներս տալ, ներս մտնել։

Դուրս գալ, դուրս ընկնել, դուրս ցցվել, դուրս ձգել, դուրս քաշել, դուրս ածել, դուրս բերել, դուրս տանել, դուրս տալ, դուրս ելնել։

Մեջ գալ, մեջ ընկնել, մեջ քաշել, մեջ բերել, մեջ առնել, մեջ տալ, մեջ մտնել։

Վեր (վերև) գնալ, վեր առնել, վեր կենալ, վեր քաշել, վեր ունել, վեր ձգել։

Վայր, վեր (վար, ներքև, ցած) ընկնել, վայր ձգել, վայր բերել, վեր տալ (ցիցը), վեր գալ (մի տեղ), վայր դնել։

Ետ գալ, ետ ընկնել, ետ ձգել, ետ քաշել, ետ ածել, ետ բերել, ետ տանել, ետ դարձնել, ետ տալ, ետ նայել։

Առաջ գալ, առաջ ընկնել, առաջ քաշել, առաջ բերել, առաջ տանել, առաջ տալ, առաջ անցնել, առաջ դիմել, առաջ խաղալ, առաջ նայել։

Վրա գալ, վրա ձգել, վրա վազել, վրա բերել, վրա տալ, վրա հասնել, վրա սլրծնել։

Դեմ ընկնել, դեմ տալ, դեմ առնել, դեմ գնալ, դեմ բերել։

Մոտ գալ, մոտ ձգել, մոտ քաշել, մոտ բերել, մոտ տանել։

Շուրջ (շուռ). շուրջ գալ, շուռ գալ, շուրջ անցնել, շուռ անցնել, շուռ տալ, շուրջ բերել, շուռ բերել։

Դես (դեպի խոսողը) գալ, դես բերել, դես ձգել, դես քաշել։

Դեն (խոսողից հեռու) գնալ, դեն տանել, դեն ձգել, դես ձգել, դեն քաշել, դեն ընկնել, դեն ածել, դեն թափել, դեն դնել։

Այս բոլոր մակբայների հետ կարող է դրվել նաև «անել» բայը, ինչպես՝ ներս անել, դուրս անել, մեջ անել, ետ անել, դեն անել, դեմ անել, վրա անել, առաջ անել, վեր անել (միրուքը) և այլն։

Տեղ, տակ, հետ բառերը բայերի հետ դրվում են հոդով, օրինակ՝ տեղըն ընկնել, տեղը ձգել, տեղը գալ, տեղը բերել. տակը գծել (ընդգծել), տակը ձգել. հետը գալ, հետը բերել, հետը տանել, հետս եկան, հետս կբերեմ, հետդ կգամ։ Հոդով ասվում են նաև՝ առաջն առնել, դեմն առնել։ Այսպես նաև մեջ, վրա, դեմ, առաջ, մոտ բառերը կարող են Ս, Դ, Ն հոդերով ևս գործածվել, կամ բայից բաժանվելով, իբրև ետադրություն դրվել գոյականի հետ, ինչպես՝ եկավ մոտս—եկավ ինձ մոտ։ Այսպիսի կապակցությունները, սակայն, լոկ շարահյուսական են (տե՛ս § 90, Նախդրավոր բայեր և § 101, Առաջադիրներով բաղադրություններ։

3) Կան բազմաթիվ հարադրական բայեր, որոնք իրենց հարադիր մասի հետ սկզբնապես եղել են մտածողության առանձին շուռ տված ձևեր, շրջաբանական ասություններ. բայց հետզհետե սրանց պատկերավոր կամ ձևավոր նշանակությունը և շարահյուսական կապակցությունը մթնել են, և այդպիսի կապակցություններն ստացել են վերացական բայերի իմաստ։ Օրինակ, պար գալ, պար ածել, սկզբնապես մըտածվել և ասվել են «ի պար գալ», «ի պար ածել», այսինքն՝ պարի մեջ գալ, պարի մեջ բերել («ածել» հին լեզվի մեջ նշանակում է «բերել»). ապա հետագայում ստացել են «պարել», «պարել տալ» նշանակությունը։ Այսպես և ցույց տալ սկզբնապես գործածվել է սեռական խնդրով, օրինակ՝ ասվել է՝ «յարգանաց—հառոանքի ցույց տալ», որի մեջ «ցույց»

բառը պահում էր գոյականի և հայցական հոլովի նշանակությունը. բայց այժմ «ցույց տալ» իբրև մի ներգործական բայ՝ հայցական է առնում՝ «հարգանք ցույց տալ»։

Երբեմն դժվար է որոշել, թե երբ բառերի այսպիսի կապակցությունները պահում են իրենց սկզբնական նշանակությունը և երբ մի բայի ընդհանուր վերացական նշանակություն են ստացել. միևնույն կապակցությունը մերթ այսպես է հասկացվում, մերթ այնպես, նայելով առանձին անհատների մտածության եղանակին։ Ուստի լեզվի մեջ եղած բոլոր շրջաբանական կապակցությունները կարելի չէ հարադրական բայ համարել, այլ միայն այնպիսիները, որոնց շարահյուսական կապակցության եղանակը այլևս պարզ զգալի չէ խոսողի համար, և կամ հարադիրը մենակ անկախ չի գործածվում։ Այսպես՝ հարադրական բայեր են նաև հետևյալները. գործ ածել (գրվում է նաև միացած՝ գործածել, բայց խոնարհվելիս երկու մասերն անջատվում են՝ գործ եմ ածում. ծագում է հին « ի գործ ածել», «գործի մեջ բերել» կապակցությունից), գործ դնել, ման տալ, ման ածել, ման բերել, ման գալ. քարշ տալ, քարշ գալ. գլուխ գալ, գլուխ բերել, գլուխ ելնել. եփ գալ, եռ գալ, եփ տալ, եռ տալ. լույս ընկնել. հուպ տալ. հուպ գալ. թափ տալ և այլն։

Այս կարգի հարադրական բայերի մեջ պետք է դնել և այնպիսի դարձվածները, որոնց շարահյուսական կապակցությունը թեպետ հասկանալի է, բայց բայն ու հարադիրը միասին, իմաստի փոփոխությամբ, ստանում են մի նոր, ընդհանուր նշանակություն։ Այսպիսի բայերի հարադիրը հոդ չի առնում, ինչպես՝ վրեժ առնել, վրեժ խնդրել, երես տալ, երես առնել, ծափ տալ, ձայն տալ։ Այսպիսի կապակցությունները, երբ հարադիրը հոդ է առնում, դառնում են դարձյալ սովորական շարահյուսական. ինչպես՝ նա վրեժ առավ թշնամիներից. նա իր վրեժն առավ թշնամիներից։ Ես նրան ձայն տվի. ես իմ ձայնը տվի նրան։ Այսպես և՝ ձեռ մեկնել մեկին, ձեռ հասցնել մեկին նշանակում են իբրև մի բայ՝ օգնել մեկին, իսկ ձեռը մեկնել մեկին, ձեռը հասցնել մեկին կապակցության մեջ պահվում է իսկական նշանակությունը, այն է՝ ձեռքը երկարացնել և հասցնել մինչև մեկը։ Ձեռ զարնել մի բանի նշանակում է՝ սկսել, ձեռնարկել. իսկ ձեռը զարնել մի բանի նշանակում է՝ ձեռքը խփել, դիպցնել մի բանի։ Ձեռ բերել նշանակում է՝ բաստանալ, աջողել. այլև վերացական խնդրով՝ «գիտություն ձեռք բերել», որի մեջ «ձեռք» բառի մասին այլևս չենք մտածում։ Այսպես առանձին բառերի նշանակություն ունին հետևյալները՝ իրար անցնել, գլխի ընկնել, ուշքի գալ, խելքի գալ, ուշից գնալ և բազմաթիվ ուրիշ դարձվածներ (տե՛ս § 70)։

4. Միացած մի ընդհանուր նշանակություն են ստանում հաճախ երկու բայի հարադրություններ։ Այս դեպքում էլ երկու կից բայերն առնվում են իբրև մեկ բայ, և գրության ժամանակ երկուսի մեջ ստորակետ դնելն ավելորդ է, օրինակ՝ պոկվել ընկնել, մեռնել պրծնել, սո-

վորել պրծնել, թողնել գնալ, թողնել փախչել, գալ մոտենալ, գնալ հեռանալ, կտրել դեն ձգել, կրել բերել, կրել տանել, վազել գալ, վազել գնալ, թռչել գալ, թռչել գնալ, քշել տանել, կոտրել թափել, այրվել գընալ, մեռնել գնալ, խփել ջարդել, ծակել հանել, ծակել դուրս գալ, կտրել հանել (թռավ եկավ, թռան գնացին), գալ հասնել, գնալ հասնել։

81. Կցական բարդություն հարադրական բայերից։— *Հարադրական բայերը միանում են իբրև մի բառ, օրինակ՝* «աչք ածել» *անջատ ենք գրում, իսկ* «ակն ածել» *գրաբարում արդեն «պատկառել» նշանակությամբ գրվում է միացած* ակնածել, *որից* ակնածու։ *Գրաբարի ի գործ ածել այժմ գրում ենք սովորաբար «գործածել», թեպետ ասում ենք նաև «գործ եմ ածում». դրանից կազմված է* գործածություն։

Երբ հարադրական բայերի բներից նոր բառեր են կազմվում, վերջիններիս մեջ հարադիրն ու իր բայի բունը միացած իբրև մի բառ են գրվում, որովհետև բարդության երկրորդ անդամը չի գործածվում այն ձևով կամ նշանակությամբ, որ ունի բարդության մեջ։ Այս կարգի բարդության մեջ հարադրի ձայնավորներն անփոփոխ են մնում։ Օրինակ՝ ճանճն առնել *(գրաբար՝ յանձն առնուլ), բայց* հանճնառու, հանճնառություն *(գրաբար՝ յանձնառու, յանձնառութիւն).* վրեժ խնդրել, *բայց* վրեժխնդիր, վրեժխնդրություն. վրեժ առնել *(գրաբար՝ վրէժ առնուլ),* վրեժառու, վրեժառություն, *կա նաև իսկական բարդությամբ՝* վրիժառու, վրիժառություն։ *Այսպես նաև՝* «ծուն դնել», *բայց* ծունդրություն, *կա նաև իսկական բարդությամբ՝* ծնրադրություն։

Գրաբարից ունենք՝ հանճնարար, հանճնարարել *(գրաբարի՝ «յանձն առնել» բայից, որի կատարյալն է՝ յանձն արարի),* հուշարար, հուշարարություն *(գրաբարի՝ «յուշ առնել», «յուշ արարի» ձևից)։ Գրաբարի «ի կիր առնուլ», «ի կիր արկանել» բայերից՝* կիրարկություն, կիրառություն. «ակն կալել» *բայից՝* ակնկալություն։ *Նույնպես գրաբարի «բանս արկանել» բայից՝* բանսարկու. օրէնս դնել—օրէնսդիր, *այժմ՝* օրենսդիր *(օրենք դնող), նույնպես* օրէնս գիտել— օրէնսգետ, *այժմ՝* օրենսգետ *(օրենք գիտցող)։ Սրանց անալոգիայով, բայց թույլ ըմբռնումով, վերջերս կազմված են «գիծ» և «գիրք» անունների հետ՝ «օրենսգիծ», «օրենսգիրք», փոխառնակ իսկական բարդության—«օրինագիծ», «օրինագիրք»=օրենքի նախագիծ, օրենքի գիրք (տե՛ս § 94. 4)։*

Ժողովրդական լեզվի մեջ հաճախ կազմվում են կցական բարդություններ ոչ միայն հարադրական բայերից, այլև ամեն բայից ու իր լրացումից։ Այսպիսի բարդությունները վերջից սովորաբար ունին մի ածանցական մասնիկ։ Օրինակ՝ իրար անցնել—իրարանցում, սիրտ կոտրել—սիրտկոտրում, խոսք առնել—խոսքառում, երես բանալ—երեսբացում, գիր կարդալ—գիրկարդում, հոգի քակտել—հոգիքակտում, ճրագ անցնել—ճրագանցում. երես ծեծել—երեսծեծանք, գլուխ ծեծել—գլուխծեծանք, ծառ կոտրել—ծառկոտրանք. ճրագ վառել—ճրագվառոց. ճրագ կպցնել—ճրագկպոց, արև մտնել—արևմտոց, արևածագ, հավ-

խոսոց. տերև թափել—տերևաթափոց, աչք խփել—աչքխփոց. միս մորթել—միսմորթեք. դուռբռնեք, ճոթկտրեք, ականջկալեք, բերանբացեք, բերանփակեք.—նշան տալ—նշանտուք, բարև տալ—բարևտուք.—տղա բերել—տղաբերք. ձունհալք, վրա դնել—վրադիր (ք).—սուտ ասել—սուտասան. քար քաշել—քարքաշան. դուր դալ—դուրեկան. օրործածկան (օրորոցի ծածկոց), պատծական (պատ ծակող). կուժ կոտրել—կուժկոտրուկ, ամանկոտրուկ (կակաչ). սիրտկտրուկ, սիրտմաշուկ (իսկական բարդությամբ՝ սրտմաշուկ)։ **Առուքբերիկ,** *հողփորիկ, մարդխաբեկ (թըռչուն է), ալուրմաղիկ (թիթեռ), բանջարբուսիկ, բանջարբուսուկ, աղվեսխրտուկ (բույս է), փշխրտուկ, արունլվիկ (արունլվա), ամանլվիկ (ամանլվա).—սիրտխաոնուկ, երեստեսուկ, բերանբացուկ, խոսքլսուկ.—առաջը կտրել—առաջկտրուկ (խաղ, առաջկտրուկի տալ), կուրբռնուկ, ականջբռնուկ, ականջքաշուկ, աչքխփուկ (ի խաղ).* **Երեսսրբիչ,** *երեսսրբիկ, բուրդ ձաղկել—բուրդձաղկիչ, կրակթափիչ, այլև կրակթափ.—վրեն ածել—վրենածովի (առանց հագնելու, վրան գցած հագուստ), բանուզովի (բանեցնելու ուզած).—գլուխկոնծի (տալ, իսկական բարդությամբ՝ գլխակոնծի),* **գլուխկանգնուկի, գդալփոխի:**—*Առանց ածանցական մասնիկի՝ գիրկապ, աղջիկտես, խոսքկապ, կրակքաշ։*

Գրական լեզվի մեջ ևս վերջին ժամանակներս կազմվում են այսպիսի կցական բարդություններ. օրինակ՝ մաս հանել—մասհանում, մեջ բերել—մեջբերում, մեջ խաղալ—մեջխաղացում, առաջ քաշել—առաջքաշում, առաջքաշուկ, առաջ անցնել—առաջանցում, վրա խաղալ—վրախաղացում, ետ դառնալ—ետդարձում, ետխաղացում, շուրջը կալնել—շուրջկալ, առաջ շարժվել—առաջշարժում, ետ շարժվել—ետշարժում (հմմտ. § 103 «առաջ», § 118 «ետ»)։

82. Բաղհյուսական հարադրություններ:—*Հաճախ նույնանիշ և համանիշ (մոտիկ նշանակություն ունեցող) բառերը «ու» (և) շաղկապով, կամ առանց շաղկապի, հարադրվելով՝ առնվում են իբրև մի բառական միություն։ Այսպիսի բառերը, երբ առանց «ու» (և) շաղկապի են, ոչ մի կետադրությամբ չեն բաժանվում, այլ, ընդհակառակն, կարող են միանալ գծիկով։ Այս հարադրությամբ սաստկանում կամ զորանում է բառի իմաստը։ Այսպիսի բառերով կազմվում են նաև հարադրական բայեր. օրինակ՝ չարդ ու բուրդ անել, ցիր ու ցան անել, հալ ու մաշ լինել, գունդ ու կծիկ, լուռ ու մունջ, ձախ ու ծուռ, ահ ու սարսափ, սխ ու վախ, հատ ու կտոր, թև ու թիկունք, ահ ու դող, ծեծ ու փետ, ձայն ու ծպտուն.—լուկ-մնջիկ, ցիր-ցան, գոռում-գոչում, ճար-ճարակ, թև-թիկունք, հագած-կապած, կորած-մոլորած, զուգված-զարդարված, այրել-մրկել։*

Այս կարգին պատկանում է նաև այնպիսի բառերի հարադրությունը, որոնք իրենց նշանակությամբ որևէ առնչություն ունին միմյանց հետ, բայց հարադրվելով չեն պահում յուրաքանչյուրն իր առանձին նշանակությունը, այլ միասին մի նոր ընդհանուր, երբեմն հավաքական

իմաստով են առնվում իբրև մի բառական միություն։ Սրանք էլ սովորաբար միանում են «ու» (և) շաղկապով կամ թե չէ՝ գրվում են առանց որևէ կետադրության, երբեմն միանում են գծիկով. օրինակ՝ աս ու լիս (սկզբնապես՝ ասել ու լսել, ապա՝ զրույց, խոսակցություն, ուրիշի վրա վայրիվերո զրույց), եփ ու թուխ, տուն ու տեղ, կեր ու խում, վար ու ցանք, անց ու դարձ, շենք ու շնորհք, օր ու գիշեր, ծառ ու ճյուղ, հավ ու ճիվ, թուք ու մուր, տես ու ճանաչ, մին ու ճար, կալ ու կապ անել, տուր և առ, վեր ու վայր, դես ու դեն, քար ու քանդ անել, բաց ու խուփ անել, տակն ու վրա անել.—կանաչ-կարմիր (ծիածան), գիշեր-ցերեկ, բարձի-թողի անել, ասել-խոսել, գրել-կարդալ, գնալ-գալ, ձյուն-ձմեռ, ծափ-ծիծաղ։

Այս հարադրության մի առանձին տեսակն են կազմում և իրար հաջորդող թվականների (միավորների ու տասնավորների) միացումները, որոնց մեջ թվականները չեն պահում իրենց նշանակությունը, այլ երկուսը միասին մի մերձավոր անորոշ թիվ են ցույց տալիս։ Սրանք էլ կարող են գծիկով միացած գրվել, ինչպես՝ մեկ-երկու, մի-երկու, երեք-չորս, չորս-հինգ և այլն. տաս-քսան, քսան-երեսուն, երեսուն-քառասուն, հիսուն-վաթսուն և այլն։

Այս բառերի միացմանն իբրև մի բառական միություն՝ ծառայում է այն, որ դրանք հոդ առնում և հոլովվում են ինչպես մեկ բառ, օրինակ՝ անց ու դարձը, անց ու դարձի, անց ու դարձից, անց ու դարձով. լաց ու կոծը, լաց ու կոծի, լաց ու կոծից, լաց ու կոծով. գրել-կարդալը, գրել-կարդալու, գրել-կարդալուց, գրել-կարդալով. գնալ-գալ, գնալ-գալու, գրնալ-գալով և այլն։ Հաճախ իբրև մի բառ հոլովվում են և հոդ են առնում նաև ուրիշ բառերի հարադրությունները, որոնք սովորաբար դարձյալ մի ընդհանուր նշանակություն են ստանում. ինչպես՝ մարդ ու կնիկ (ամուսիններ), մարդ ու կնկա. հայրն ու մայրը (ծնողներ), հորն ու մոր, հորն ու մորից, հորն ու մորով։ Այսպես նաև՝ մեր ու մանուկ, մեր ու տղա, մեր ու աղչիկ, հարսն ու սկեսուր, հարս ու փեսա, շուն ու գել և այլն, որոնք հոլովվում են իբրև մեկ բառ։

88. Կցական բարդություններ բաղհյուսական հարադրություններից։—*Մի անգամ, որ մեր լեզվական զգացումով հոդի և հոլովվելու նկատմամբ՝ բաղհյուսական հարադրություններն իբրև մի բառական միություն են ըմբռնվում, վերջիվերջո դրանք ձգտում են կցվելու իբրև մեկ բառ և մեկ դառնալու։ Կան նույնիսկ բառեր, որ շատերն արդեն միացած են գրում իբրև մեկ բառ, ինչպես՝ կերուխում, անցուդարձ, երուզեռ, ասուլիս, մինուճար։ Կան և այնպիսիները, որ արդեն միշտ միացած են գրվում՝ այրուձի, առուտուր, տարուբեր, երթևեկ, ելևէջ և այլն։*

Այսպիսի բառերի կցմանն իբրև հիմք ծառայում է ոչ միայն այն, որ դրանց նշանակությունը բոլորովին փոխվում է, և դրանք իբրև մեկ բառ են հոլովվում ու հոդ առնում, այլև այն, որ հարադրության անդամներից մեկը կամ երկուսն էլ մենակ ու անկախ չեն գործածվում,

կամ թե դրանցից նոր բառեր են կազմում, որոնք միացած են գրվում, և այս նոր բառերի անալոգիայով նաև դրանց բունը միացած է գրվում։ Այս պայմաններից մեկը միայն բավական է այդ բառերը միացած գրելու համար. բայց երբեմն ազդում են բոլոր պայմաններն էլ միասին։ Օրինակ՝ առուտուր, առևտուր, *որ նշանակում է՝ առնել ու տալ, միացած է գրվում, որովհետև ստացել է «վաճառականության» նշանակությունն, և դրանից էլ կազմվում է* առևտրական *բառը։ Բայց երբ այդ բառերը սկզբնական նշանակությամբ են առնվում, գրվում են անջատ, ինչպես հետևյալ առածի մեջ՝ «Ասել են՝ առ ու տուր և ոչ առ ու կուլ»։* Ելևմուտ, *ելումուտ—սկզբնապես՝ ելնել ու մտնել, ապա գրաբարում՝ «ելևմուտք» նշանակում է՝ ելնող-մտնողներ. ճանապարհներ. հոլովվում է՝ «ելևմտից». «ելումուտք» այժմ նշանակում է ֆինանս. դրանից «ելևմտական»։ Բայց երբ այդ բառերը պահում են իրենց սկզբնական նշանակությունը, հոլովվում և հոդ առնում են երկու անդամներն ևս, ինչպես՝ նա հետևում է իմ ելին ու մտին (իմ ներս ու դուրս անելուն)։* Երթևեկ—*սկզբնապես՝ գնալ ու գալ, օրինակ՝ մարդկանց երթևեկը կտրրվեց. ապա՝ գնացող-եկող, օրինակ՝ երթևեկ աշակերտ, երթևեկ դպրոց. դրանից՝* երթևեկել, երթևեկություն։ *Գրաբարում՝ «երթևեկ ծովու»—տեղատվություն և մակընթացություն։ Այս բառը գրաբարում արդեն հոլովվում է իբրև մեկ բառ՝ երթևեկի։* Այրուձի—*սկզբնապես՝ տղամարդ ու ձի, գրաբարում հոլովվում է՝ առն և ձիոյ, բայց և իբրև մեկ բառ՝ այրուձիոյ. ստացել է «հեծելազոր» նշանակությունը։* Ելևէջ—*սկզբնապես՝ ելնել և իջնել, ապա՝ աստիճան և ձայնի ելևէջները։* Աղուճաց *ստացել է զանազան նշանակություններ՝ հյուրասիրություն, մտերիմ բարեկամություն, երախտիք, մեկին արած լավություն, օրինակ՝ աղ ու հացս աչքդ բռնի։ Աղուհացը մոռանալ—երախտիքը մոռանալ. աղուհացը շատ ուժով է եղել—շատ բարիք է արած եղել։ Աղուհացկեր (մտերիմ) մարդկանց կարոտ մնացի։ Աղուհացով մարդ է (հյուրասեր է)։ Այսպես և կերուխում—խնջույք, ուրախություն.* միևուճար, *մեկուճար—միամոր. կալուկապ անել, կալուկապվել—պապանձվել, շշկլվել, շփոթվել. կալուկապ ընկնել, կալուկապ գցել, շփոթեցնել։* Անցուդարձ—*սկզբնապես՝ անցնել ու դառնալը. ապա՝ երթևեկություն, գնալ-գալ, անցուդարձ անել. ապա՝ նաև տեղի ունեցած դեպքեր, օրվան անցուդարձը։* Բացուխուփ անել, բացուխուփիկ, բացխփիկ խաղ։ Կալումեջ անել, կալմեջ անել։ Տարուբեր, *տարուբերել—սկզբնապես՝ տանել ու բերել. ապա՝ շարժել, ծփալ, տատանել, ալեկոծել։* Ջարդուբուրդ անել, ջախուբուրդ անել, *կազմված է այնպիսի բառերից, որոնք մենակ անկախ չեն գործածվում կամ սակավ են պատահում. ջախել (ջարդել) և բրդել (մանրել, կոտորել) բայերի արմատները. «բուրդ» նաև «բանը բուրդ է» թարձվածի մեջ։*

84. Կցական բարդություններ վերադրի և իր գոյականի այլև ուրիշ շարահյուսական կապակցություններ։—*Ա) միացած գրվում են սեռական վերադիրն ու իր գոյականը, ինչպես՝ հորեղբայր, մորեղբայր, եղ-*

բորորդի, հորքույր, մորքույր, որոնք իբրև մի բառ առնվելով՝ հոդը քս-տանում են վերջից՝ հորեղբայրս, մորքույրդ, եղբորորդիս, մինչդեռ երբ իբրև առանձին բառեր են առնվում, հոդը դրվում է սեռականի վրա՝ հորս եղբայրը, եղբորդ որդին, մորս քույրը։ Գրաբարից ունենք՝ «քեռայր», «քեռորդի», որոնց մեջ սեռականները (քեռ) հնացած են, ուստի և այդ բառերը կորցրած են իրենց շարահյուսական նշանակություննե-րը։ Այսպես նաև՝ շանսատակ, շնջրի (ջրշուն), արենտեր (արյունտեր), արենպարտ, արենխում, տանտիկին, որից տանտիկնություն, տանու-տեր, տանտեր (իսկական բարդությամբ՝ տնատեր)։ Այսպես կան բար-բառների մեջ հնացած սեռականներով՝ օտացաման (տոնամարդ), ա-չիցուլնիկ և նմանները։ Այս բարդություններն, ազդվելով իսկական բարդություններից, կազմվում են նաև «ա» հոդակապով՝ հորաքույր, մորաքույր, մորատատ, հորապապ, շանաճանճ, ձեռացաջուր, ձեռա-ցուգիր, ձեռացափող։

բ) Ավելի հաճախ միանում են իբրև մի բառ ածական վերադիրն ու իր գոյականը, երբ առաջինը կամ ավելի երկրորդը իբրև անկախ բառ չի գործածվում, կամ երկուսից մի նոր նշանակությամբ բառ է կազմվում. ինչպես՝ հարյուր ամ, հազար ամ, բայց հարյուրամյա, հա-զարամյա. հիսուն ամ, տասն ամ, բայց՝ հիսնամյակ, տասնամյակ, եր-կու ամիս—երկամսյա, երկամսյակ. երկսայրի, երկդիմի, չորեքկուսի.—չորսդին, տաքդեղ (պղպեղ). կեսօր (ցերեկվա ժամի 12-ը. կես օր—օրվա կեսը, 12 ժամ), կեսգիշեր. կեսգիշերային։ Այսպես և ուրիշ բար-դություններ՝ ամպհովանի, հինավուրց, կինարմատ, կախօրոցան (ճոճ), կերցավ, ոչոք, ոչինչ, օչով, օքմին, իքմին. զորօրինակ.—մեկել, մեկ-տեղ, մեջտեղ, այսինչ, այնինչ.—Նույնհետայն, նույնժամյան, ձերբա-պատ (ձերբ—ձեռքով՝ հնացած գործիական հոլով). նույնպես «ա» հո-դակապով՝ ձերբակալ, ձերբասուն.—Այսպես, այդպես, այնպես, նույն-պես, որպես, որպիսություն, ինչպես.—Ապսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի.—Այսքան, այդքան, այնքան, նույնքան, որքան, որքանու-թյուն.—Այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ, ինչչափ.—Այս-տեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ, ինչտեղ, մեջտեղ։

գ) Միացած գրվում են և ուրիշ բառեր, որոնց քերականական ձև-վերը հնացած են, կամ շարահյուսական կապակցությունները, մանա-վանդ երբ նախդիրներով են, անհասկանալի են, և կամ առնվում են իբրև մի բառ մի նոր նշանակությամբ. օրինակ՝ այսուհետև, այնու-հետև, որովհետև. վաղեվաղ, մեջեմեջ, մոտեմոտ, քովեքով, տակե-տակ, հասվեհաս, փոխեփոխ, օրեցօր, որդեցորդի, տարեցտարի, ժա-մեժամ, տեղնուտեղը, օրընդմեջ, բերանքսխվար, բերանքսխվեր, պատ-նիվեր, պատնիդուրս, դարիդուս, դարիվեր, գլխիվեր, գլխիվար, զառի-վեր, զառիվայր, տեղեցտեղ անել, տերեցտեր անել, գերիվերո, վերի-վերո, վայրիվերո, վերջիվերջո, վերիվայրում.—ակնհայտնի, ակներև, դեմհանդիման։

դ) Կան մի քանի բաղադրություններ էլ, որոնք կազմված են ամ-

բողջ խոսքերից, ինչպես՝ որևէ, ովևէ, ինչևէ, ովևիցե, ուրևիցե, երբևիցե, որևիցե, տերողորմյա (համրիչ, հարմեղիկ), մնասբարև (անել, ասել), քաջալերել («քաջ լե՛ր» խոսքից)։ Այսպես և ուրիշ բառեր՝ հաճախ իրար հետ դրվելով վերջիվերջո ձգտում են միանալու, ինչպես՝ նաև (նա և), այլև (այլ և), նա՛մանավանդ։

բ) Թվականները՝ տասնումեկ, տասնևմեկ, տասներկու, տասներեք, տասնուչորս, տասնևչորս, տասնուհինգ, տասնևհինգ, տասնուվեց, տասնևվեց, տասնյոթը, տասնութը, տասնինը։ «Քսանից» սկսած «և» շաղկապով սովորաբար անջատ են գրվում՝ քսան և մեկ, քսաներկու, քսաներեք, քսանչորս, քսան և չորս, քսանհինգ, քսան և հինգ և այլն. երկու հարյուր, երեք հարյուր, չորս հարյուր, երկու հազար, երեք հազար և այլն։

Հետևյալ տեսակի բարդությունները սովորաբար գրում են անջատ կամ գծիկով են միացնում. երկու-գլխանի, երեք-աչքանի, մեծ-քթանի, կարմիր-քամի, կանաչ-կարմիր (ծիածան), իր-աստծի, բայց՝ իրաստծություն։ Գծիկով են միանում նաև ոչ-գեղեցիկ, ոչ հեռու, ոչ-մեծ և նրմաններրը։

85. Կրկնավորներ։—*Հարադրության մի առանձին տեսակն է նույն բառերի կրկնությունը, որով կազմվում են կրկնավոր բառերը։ Կրկրնվում են սովորաբար կարճ՝ միավանկ, երբեմն և երկավանկ բառերը, որոնք գրվում են անջատ, երբեմն միանում են «ու» (և) շաղկապով կամ գծիկով։*

Գոյականների կրկնություններով *կազմվում են որակական ածականներ, որոնք կարող են և իբրև մակբայ գործածվել, ինչպես՝ կերպ կերպ, փունջ փունջ, տեսակ տեսակ, թել թել, բուռը բուռը, խումբ խումբ, տեղ տեղ։ Այս կրկնությունները՝ նայելով կիրառության՝ ստանում են զանազանության, բազմակիության նշանակություն, կամ ցույց են տալիս համազգի բաների հաջորդություն, ուստի սովորաբար դրվում են հոգնակի գոյականի հետ. ինչպես՝ տեսակ տեսակ հացեր—զանազան տեսակի, շատ տեսակների հացեր. փունջ փունջ ծաղիկներ—զանազան կամ շատ փնջերով ծաղիկներ. գունդ գունդ զորքեր—զանազան կամ շատ գնդերով զորքեր. բուռը բուռը արտասուք թափեց—բռներով արտասուք։ Զորքերը գնացին գունդ գունդ—գնդերով, գունդ գնդի ետևից, գունդ առ գունդ։ Նրանք խումբ խումբ հեռացան—խմբերով, խումբ խմբի ետևից։ Տեղ տեղ երևում էր արդեն կանաչը—այստեղ այնտեղ, զանազան տեղերում։*

Այսպիսի կրկնությունների մեջ երբեմն մտնում է «առ» նախդիրը, ինչպես՝ արտագրել տող առ տող, բառ առ բառ. ժամանակ առ ժամանակ երևում էին. մեկ մեկ թվել, մի առ մի թվել։ Թուփ առ թուփ (թփե-թուփ) որոնել։

Դերանունների կրկնությունները, *սովորաբար «ու» շաղկապով, ըստանում են բազմակիության նշանակություն, երբեմն ցույց են տալիս*

մենակ, առանձին մի բան անելը, օրինակ՝ ո՞վ ո՞վ, ո՞վ ու ո՞վ են գնացել։ Ի՞նչ և (ու) ինչ տամ քեզ. ես ու ես նստած մտածում էի. ինձ ու ինձ այրվում եմ. նա իրան իրան միտք է անում։

Ածականների ու մակբայների կրկնությունները *սաստկացնում են ածականների իմաստը՝ միացնելով նաև բազմակիության նշանակությունը, ուստի գործ են ածվում սովորաբար հոգնակի գոյականների հետ. ինչպես՝ ծանր ծանր խոսքեր (խիստ ծանր), սուր սուր (փշեր), լավ լավ (ջրեր), դառը դառը, կլոր կլոր, սև սև (աչքեր), մութը մութը, կամաց կամաց, քիչ քիչ, արագ արագ, շուտ շուտ (խոսել). մերթ մերթ, երբեմն երբեմն, հազիվհազ, ավելի ու ավելի (սաստկացավ). դեմ ու դեմ (դեմ առ դեմ) կանգնած էին (ուղղակի իրար դիմաց). ինչ ինչ բաներ, շատ շատ, ո՞ր ու ո՞ր բաները. այս ու այն բաները։ Այսպիսի կրկնություննեը՝ իբրև մակբայ գործածվելով բայի հետ՝ ցույց են տալիս նաև գործողության կրկնություն, երբեմն նաև մի առարկայի վիճակը կամ դրությունը, ինչպես՝ մանր մանր փրթել. ուշ ուշ գալ. նրանք շուտ շուտ (հաճախ) գալիս են մեզ մոտ. քիչ քիչ խմել, մեկիկ մեկիկ բացատրել. թեյը տաք տաք խմել. սառը սառը ուտել մի բան. երկաթը տաք տաք կըծծեն. հիվանդ հիվանդ՝ տեղից վեր կացավ (հիվանդ դրությամբ). ամանը լիքը լիքը տարավ։*

Թվականների կրկնությունները *բացի բազմակիությունից՝ ստանում են նաև բաշխական նշանակություն. «մեկ մեկ», «մի մի» նշանակում է՝ մարդագլուխ մի, յուրաքանչյուրին մեկ, մեկական, օրինակ՝ նրանք մի մի գիրք առան ու գնացին. երկու երկու, երկերկու, երկուական. երեք երեք, երեքական և այլն։ Երկու-երկու, երկերկու գնալ, երեք-երեք կանգնել, չորս-չորս կանգնել (յուրաքանչյուր շարքում երկու կանգնել)։ Քանի՞ քանի՞ անգամ (խիստ շատ անգամ)։*

86. Հնչյունների փոփոխությամբ կրկնավորներ:—*Բառերի կըրկնության ժամանակ՝ բառերից մեկի ձայնավորը կամ բաղաձայնը երբեմն փոխվում է ուրիշ հնչյունի, կամ դուրս է ընկնում։ Այսպիսի կրկնություններով ընդարձակվում է բառի նշանակությունը. առնվում է մի առարկա իր նմաններով, իր պարագաներով, կամ մի հատկություն իր նման կամ մոտիկ հատկություններով։ Միանում են «ու» շաղկապով կամ գծիկով, այսպես՝*

1. Երկրորդ մասի մեջ ձայնավորը փոխվում է «ու» ձայնավորի՝ ծակ ու ծուկ (ծակծուկ), մարդ-մուրդ, աղքատ-ուղքատ, փալաս-փուլաս, մանր-մունր, ձեն-ձուն։ «Մեր մարդ-մուրդը չորացել է» (Պռոշ.), հարայ-հուրայ, փասա-փուսա, հայ-հույ, սպառ-սպուռ (գրաբարից)։

2. Երկրորդ մասի սկզբում բաղաձայնը փոխվում է ուրիշ բաղաձայնի, սովորաբար «մ», ինչպես՝ հաց ու մաց, սուտ-մուտ, սուտ ու մուտ, ժուռ ու մուռ, սևիկ-մևիկ, ճանճ ու մանճ, ցախ ու մախ, կլոր-մլոր, պարապ-ուսպարապ։

3. Երկրորդ մասի սկզբում ավելանում է մի բաղաձայն, սովո-

բաբար «Մ». ինչպես՝ ոլոր-մոլոր, ավել-մավիլ, աման-չաման, աղ ու մաղ, առակ—չառակ, առակ-պառակ (խայտառակ)։

4. Առաջին մասի սկզբում դուրս է ընկնում բառասկզբի բաղաձայնը. ինչպես՝ այլուն-փայլուն, ավալ-թավալ գալ, առոք-փառոք, առք ու փառք, արան-շարան. «Ունդ-բունդ չես ճանչնար» (Դամառ-Քաթիպա), ապաղ-ճապաղի գալ (հանկարծամահ լինել. ճապաղել—փովել բառից)։

5. Փոփոխությամբ կրկնավորների մեջ պետք է դնել նաև ածականների (ավելի գույն ցույց տվող) առաջին վանկի փոփոխությամբ կրկնությունը բառի սկզբում, որով սաստկանում է բառի նշանակությունը. ինչպես՝ կափ-կանաչ, ճեփ-ճերմակ, ճիփ-ճերմակ, սիպ-սիպտակ, սեփ-սև, սիփ-սև, կաս-կարմիր, կուպ-կարմիր, միս-մենակ, լեփ-լեցուն, լեփ-լիքը և նմանները։

87. Կցական բարդություններ կրկնավորներից։—Բառերի կրկնությունները հաճախ միացվում են գծիկով, բայց ունենք բավական թվով կրկնավոր բառեր, որոնք միացած իբրև մի բառ են գրվում, առանձնապես այնպիսիները, որոնց քերականական կապակցությունը մթնած է կամ նախդիրներով միանալու, կամ հնչյունների փոփոխության պատճառով, կամ թե նրա համար, որ դրանցից նոր բառեր են կազմվում, ինչպես են՝ գույնզգույն (գույնգույն), պատիպատ, փայլփայլ, կաղիկաղ, գայթիգայթ, փոխփոխ, փոխառփոխ, խառնիխուռն, շարիշար, մերթընդմերթ, մեջընդմեջ, դեմառդեմ.—բեկբեկ, բեկբեկուն. գեղգեղ, գեղգեղել. վառվառ, վառվառուն, վառվռուն. պեսպես, պեսպիսություն. վազվզուկ, թրթիռ, թրթռալ, թրթռուն. կսկիծ, կսկծալ. սարսուռ, սարսռալ, սրսռալ. շողշող, շողշողալ. մեկմեկու, չորչրուկ, ջրջրուկ, խլխլուկ։

Հին լեզվից ևս ունենք բազմաթիվ այսպիսի կրկնավորներ. օրինակ՝ բարբառ, հեղեղ, խորխորատ, աղտաղտուկ («աղտոտ» բառից), միմյանց («մի մի» բառից, ինչպես «մեկմեկու»), քարքարոտ և այլն։ Այսպես և բարբառներից՝ չեմուշում անել («չեմ» բայի փոփոխությամբ կրկնությունից), կացուկամ, կացուկում անել (կազմված «կաց» և «կամ» բառերից)։

Գրաբարից ունենք կրկնավորներ նաև իսկական բարդության ձևով, ինչպես՝ գունդագունդ, դէզադէզ (առանց Ու, է ձայնավորների փոփոխության), շեղջաշեղջ, կերպակերպ, զանազան, միծամեծ, ջերմաջերմ, նորանոր, չարաչար, աղջամուղջ, ժանտաժուտ, արհամարհել, խառնամառն, հաստամեստ, խաժամուժ։

88. Կրկնավոր կամ կրկնական բայերը ցույց են տալիս գործողության կրկնություն կամ բազմապատկություն. կազմվում են արմատի կրկնությամբ, իսկ հարադրական բայերի համար հարադիրն է կրկնվում. օրինակ՝ թավալ թավալ անել, փոնթ փոնթ գալ, վեր վեր ընկնել, վեր վեր թռչել, ետ ետ գնալ, պատառ պատառ անել, օղիկ օ-

ղիկ գալ և այլն։ Այսպես և մյուս բայերից՝ չափել-չափչփել. վազել-վազվզել. թափել-թափթափել, թափթփել. ծակել-ծակծկել. խազել-խազխազել. վառել-վառվառել, վառվռել, վռվռալ.—բեկել, բեկբեկել. կցել, կցկցել, կցմցել. ջախել, ջախջախել, ջախջխել (ջնջխել). ձգել, ձգձգել. խլել, խլխլել. շրջել, շրջշրջել. ջրել, ջրջրել (ջրջնել). փայլել, փայլփայլել, փայլփլալ, փլփլալ. ծփալ, ծփծփալ. դողալ, դողդողալ. շողալ, շողշողալ. այլայլել.—թրթռալ. մտմտալ. փոխել, փոխփոխել, փոփոխել. հեծել, հեծեծել. բախել, բաբախել. դարել, դադարել։

Այսպիսի կրկնավորներ կազմվում են հաճախ բնաձայնություն ցույց տալու համար, ինչպես՝ ճվալ, ճվճվալ. ծվալ, ծվծվալ. գվալ, գրվգվալ. սվսվալ, խշխշալ, թշթշալ, վշվշալ, խզխզալ, ճրճռալ, մրմռալ, կրկռալ, գոռգոռալ, կլկլալ, կղկղալ, դնդնալ, փսփսալ և այլն։ Նույնպես բաղաձայնների փոփոխությամբ՝ թռվռալ, գոմռալ, ղժվժալ, ճրրթվրրթալ, ծլվլալ, ղռվռալ, շրմփալ, շրրմփշրրմփալ, շրրմշրրմփալ. բրխկալ, բխբխկալ. դրբխկալ, դրբխդրբխկալ։

89. Նախդրավոր կազմություններ:—Նախդիրները՝ ԱՌ, ԸՆԴ, ԸՍՏ. Զ, Ի, (Յ), Յ, որոնք հին հայերենի մեջ շատ կարևոր տեղ են բռնում, նոր լեզվի մեջ բոլորովին կորել են՝ փոխանակվելով ուրիշ բառերով կամ հոլովներով։ Բայց հին լեզվից բավական թվով նախդրավոր բառեր մտել են նոր գրական լեզվի մեջ, և նրանց անալոգիայով մեկ մեկ նոր բառեր էլ են կազմվում։ Նախդիրների հարաբերությունը գոյականների հետ կից է գրվում, քանի որ նախդիրներն այժմ այլևս անկախ գործածություն չունին։ Այսպես կցական բարդությամբ կազմված են ԱՌ նախդրով՝ առայժմ, առժամանակ, առժամանակյա. առմիշտ, առժամյա (առժամ, առժամայն), առօրյա (առօր), առամսյա (առամիս, առայսօր, առապագա).—առհասարակ, առնչություն («առ ինչ» հարաբերությունից), առձեռն, առտնին, առանձին, առընթեր, առաչոք.—առողջ, առկա, առկախ, առշեղ, առիշեղ, առկող, առլեփ, զառիվայր.—առավել, առառավելն, առնվազն, առափ (ափի մոտ տարածություն), առափնյա և այլն։ «Առդանուբյան», «առբալթիկյան» և նման կազմություններ փոխանակ այժմ ավելի գործ են ածվում «մերձդանուբյան, մերձբալթյան»։ ԸՆԴ նախդրով՝ ընդհանուր, ընդունայն, ընդդեմ, ընդարձակ, ընդերկար, ընդառաջ, ընդմիշտ, ընդամենն։

90. Նախդրավոր բայեր:—Բայերի վրա դրվող նախդիրները կամ, ինչպես ասում են, «նախաբայերը»,—որ մեծ տեղ են բռնում հնդեվրոպական հին լեզուների մեջ, ինչպես՝ հունարենում ու լատիներենում, իսկ նոր լեզուներից՝ ռուսերենում ու գերմաներենում,—հայերենում նախագրաբարյան շրջանում արդեն դործածությունից դուրս են եկել։ Նախդիրներին փոխանակել են սովորաբար մակբայները, ինչպես օրինակ, գրաբարում՝ ի բաց գնալ, փակել ի ներքս, առնուլ անդրէն, հայել շուրջ, արկանել ի վերայ, առնուլ փոխարէն և այլն. կամ նախդրով դերանուն խնդիրները, օրինակ՝ կոչել առ ինքն, առնուլ ընդ իւր և

այլն։ Արտահայտության այս միևնույն եղանակները մնում են նաև մեր նոր լեզվի մեջ՝ ներսում փակել, չորս կողմը կամ շուրջը նայել, փոխարեն առնել, մոտ կանչել, կամ նայելով դրության Ս, Դ, Ը հոդերով, ինչպես՝ մեջը մտցնել, մոտս կանչեցի, հետս տարա, հետդ տալար, հետը տարավ և այլն։ Բացի այդ, ինչպես տեսանք, մեր նոր լեզվի մեջ կան արդեն բազմաթիվ հարադրական բայեր, որոնք առնվում են իբրև մի բառական միություն և համապատասխան են ուրիշ լեզուների նախադրավոր բայերին։ (Տե՛ս § 80. 2, Հարադրական բայեր, և § 101. Առաջադիրներով բարդություններ)։

Գրաբարում կան նաև սակավաթիվ բայեր, որոնց սկզբից միացած կա մի նախդիր։ Այսպիսի բայերի մի մասը, սակայն, իսկական նախդրավոր բայեր չեն, այսինքն՝ նախաբայի և բայի հարադրությամբ չեն կազմված, այլ նախդիրները նախ դրված են անունների վրա, և ապա նոր կազմվել են բայեր այդ նախդիր ունեցող անուններից։ Տեսնենք նախ այս վերջին տեսակի բայերը, որոնք ոչ բոլորը գործածական են նոր գրական լեզվի մեջ։

Ջ նախդրով՝ **զգետնել** *(գետնին խփել)* «**զգետնի զարկանել**» *ձևից։ Ար նախդրով՝* **առչեղել** *(դեպի մի կողմ շեղել)* **առչեղ բառից, առանձնել** *(վրան ունենալ, վրան առնել, ապա՝ սեփականել)* «**առ անձին ունել**» *ձևից.* **առձեռնալ, առձեռել** *(տալ ձեռքը, ձեռք ձգել)* «**առ ձեռն ունել, տալ**» *ձևից.* **առոտնել** *(ոտքի տակ տալ)* «**առ ոտն կոխել, առ ոտն հարկանել**» *ձևից.* **առկայծել** *(կայծի մոտենալ, մարելու մոտ լինել)* «**առ կայծ մերձիլ**» *ձևից։ ԸՍՏ նախդրով՝* **բստաձնել**, *ստանձնել (վրան առնել)* «**բստ ձնին ունել**» *ձևից։ ԸՆԴ նախդրով՝* **ընդբեռանել**, *հնչափոխությամբ՝* **ըմբեռանել** *(բերնին գալ, բերանը կապել. լռեցնել)* «**ընդ բեռան հարկանել**» *ձևից.* **ընդբռնել**, *հնչափոխությամբ՝* **ըմբռնել** *(բռան մեջ առնել, բռնել. ապա՝ մտքով բռնել, հասկանալ)* «**ընդ բռուն առնուլ**» *ձևից.* **ընդգրկել** *(գրկի մեջ առնել)* «**ընդ գիրկ առնուլ**» *ձևից.* **ընդգոգել** *(գոգի մեջ առնել)* «**ընդ գոգն առնուլ**» *ձևից.* **ընձեռել, ընձեռել** *(ձեռքի մեջ դնել. տալ, ընծայել. հանձնել)* «**ընդ ձեռն տալ**» *ձևից.* **ընկողմանել, ընկողմնել** *(մի կողմի վրա պառկել, թեք ընկնել)* **ընդկողմն անկանել**» *ձևից.* **ընդդղնել** *(կռնակի վրա ընկնել)* «**ընդ դղն նստել**» *ձևից.* **ընդկրկել, ընկրկել** *(կրունկի վրա ետ, ետև դառնալ. կրունկի տակ կոխել, կրնկակոխ անել)* «**ընդ կրուկ դառնուլ**» և «**ընդկրուկն կոխել, հարկանել**» *ձևերից.* **ընդվզել** *(գլխիվայր ընկնել. հոխորտալ, բարձրավզություն անել, գլուխ բարձրացնել, ապստամբել)* «**ընդ վիզն երթալ, անկանել**» և **ընդ վիզ հարկանել**» *ձևերից.* **ընդգճել, ընգճել, ընկճել** *(ծունկի գալ, ծունկ չոքել. ծնկի տակ առնել, ճնշել)* «**ընդ գուճս հարկանել, իջանել, կալ**» և «**ընդ գճօք առնել**» *ձևերից.* **ընդոտնել** *(ոտքի տակ տալ)* **ընդ ոտն առնել**» և «**ընդ ոտիւք կոխան առնել**» *ձևերից.* **ընդավազել** *(ավազի տակ ծածկել, թաղել)* «**ընդ աւազուլ առնել**» *ձևից.* **ընդհարկել** *(հարկի տակ դնել)* «**ընդհարկաւ առնել, դր-**

նել» ձևից. ընդառաջել «ընդ առաջ ելանել» ձևից. ընդերկարել «ընդ հրկար առնել» ձևից: Սրա նմանությամբ նոր կազմված է ընդլայնել: Այսպես կան նաև ընդօրինակել. ընդերկայնիլ, ընկապճել (կապկպվել) «ընդ կապիճս դնել» ձևից. ընդունել (վրի տակ առնել) «ընդ ուլամբ առնուլ» ձևից (ուլն-վիզ):

Իսկական նախդրավոր բայերի *սկզբի նախդիրները նախաբայեր են, այսինքն դրված են անմիջապես բայերի վրա: Այսպիսի նախդիրները բայերի խնդիրների նախդիրներն են, որոնք կրկնվում են նաև բայրեի վրա, օրինակ՝ ընդհարկանիլ ընդ ինչ, ընդ ումեք. առանցանել առ իւիք, առ ոմամբ. զանցանել զիւիք, զոմամբ: Այսպես աշխարհաբարում էլ մեկ մեկ ասում ենք՝ վրա վազել մեկի վրա, մի բանի վրա, վրա. մոտ գալ մեկի մոտ, առաջ քաշել սեղանի առաջ և նմանները:*

Գրաբարում կան Ա՛Ռ նախդրով հետևյալ բայերը, որոնք աշխարհաբարում գործածական չեն. Առանցանեմ—առաջ անցնել. դուրս ցցվել. տարիքն անցնել: Առածանիմ, առածիմ—շրջաբերել. պտտվել, դառնալ իր վրա: Առաւելում—վրան ավելացնել. գերազանցել. սրանից՝ առավել, առավելություն: Առեղծանեմ—մեկնել, հանելուկը լուծել. սրանից՝ առեղծուած:

«Առ» նախդրով բայերը փիլիսոփայական գրվածքների մեջ մեծ մասամբ կազմված են հունարենի «պրոս», եբրեմն «պրո», «էպի» նախաբայերով կազմություններին նմանությամբ: «Առ» նախդիրն այս հարադրություններ մեջ պահում է իր նշանակությունները, որ են՝ 1) գործողության ուղղում դեպի որևէ մեկի մոտ, 2) գործողության կատարումը մեկի մոտ, 3) վրա, վրան, *4)* առաջ, առաջը, դիմացը, *5)* դեմ, ընդդեմ: *Այսպիսի բայերից մի քանիսն են միայն աշխարհաբարում գործածական դարձած, ինչպես՝* առոգանել, *որից՝ առոգանություն—իբրև՝ ոգել (երգել, ասել) առ այլս:* Առարկել, *առարկանել—արկանել առ այլս—առաջը ձգել. սրանից՝ առարկու—դեմ ձգող, դիմախոս, դիմամարտ. առարկություն—առաջարկություն. նախադասություն. ճառ. ընդդիմություն, դիմախոսություն. առարկ, առարկված—պրոբլեմա, առեղծված. առարկ, առարկա—առաջ ձգած բան:* Առասել—*ասել առ այլս—խոսքն ուղղել դեպի մեկը. ապա՝ անվանել, կոչել. սրանից՝ առատություն, առասացություն—աստություն առ այլս. ապա՝ ճառ, խոսք. անվանում, կոչում. առասական անուն—հասարակ անուն:* Առկոչել—*կոչել առ... կոչ անել դեպի մեկը. մոտ կանչել. ապա՝ անվանել:* Առձայնել—*ձայնել առ... ձայնել դեպի մեկը. ապա՝ անվանել. վերագրել, ընծայել:* Առակնարկել—*ակնարկել առ... ակնարկել մեկին, նայել դեպի մեկը. ապա՝ նշանակել:* Առբերել—*բերել առ... մոտ բերել, առաջ բերել—ապա՝ վրա բերել, վրան կրել, վրան ունենալ:* Առանկսնել—*առաջը, դեմն ընկնել. ապա՝ հանդիպել, պատահել:* Առգալ, առընթանալ, առմտանել—*գալ, ընթանալ, մտնել մեկի մոտ, մեկի առաջ:* Առխթել—*առաջ խթել:* Առստանալ, *առընդունել—իրեն առնել, իր*

մոտ ընդունել։ **Առգրել.** *որից՝ առագրություն՝—մոտ գրել, հավելված գրություն, մոտի գրված. ապա՝ գրել առ ինչ—մի բան համարել, վերագրել։* **Աղսել**—*մոտը կանգնած՝ լսել. հասկանալ։* **Առկայել, առկայանալ**—*մոտին կանգնել, առաջը լինել. մոտը կանգնեցնել, հաստատել։* **Առդատել**—*իրար մոտ դնելով դատել, բաղդատել։* **Առդնել, առադրել,** *որից՝ առադրություն—դնել առընթեր, մոտը դնել, վրան դնել. ավելացնել վրան, կցել. ապա՝ վերագրել, ընծայել. նոր կազմված է՝ առդիր իբրև՝ մոտը դրված, հետը դրված, կցված, հավելված։* **Առնստել**—*մոտը նստել, առաջը նստել, վրան նստել։* **Աղնուլ**—*վրան լցնել. լիքը լցնել. աղլի—լեփլեցուն. աղլցումն—լիքը լցվել կշտանալը։* **Առցուցանել**—*առաջը դնել ցույց տալ։* **Առճակատել**—*դեմը ճակատել։ «Առագրել» բայի ձևով նոր կազմված է* **առածգել,** *որից՝ առածիգ, առածգական, առածգություն—ձգել առ ինքն, դեպի իրեն ձգել, ձգվել։—Բուն փիլիսոփայական բառեր են՝ առեմ, առգոմ, աղլինիմ, առգտանիմ—առընթեր լինել. մոտը, կողքին լինել. «առէ»—ինչ որ առընթեր կա։ Սրանցից՝ առգոյանալ, առգոյք և այլն։*

ԸՆԴ նախդիրն իբրև նախաբայ գործածված ժամանակ պահում է իր նշանակությունները. 1) *մեջ, ներս, միջից, միջով,* 2) *հետ,* 3) *տակը, տակից,* 4) *վրա։ Դրանով հարադրված բայերը մեծ մասամբ գործածական են աշխարհաբարում։ Ընդունել, կատարյալ՝ ընկալայ—ներս ընդունել, ներս առնել, ապա՝ յինքն առնուլ—վրան առնել, իրեն առնել։* **Ընդարձակել**—*արձակել ընդ ամենայն, տարածել. սրանից՝ ընդարձակ։* **Ընդոստել,** *գրաբար՝ ընդոստնել, ընդոստչել—ոստնուլ ընդ վեր, ընդ ինչ, օրինակ՝ ընդոստեաւ մանուկն ընդ բանն—վեր ցատկել, վեր թռչել մի բանի վրա, մի բանից, մի խոսքից։* **Ընդարմանալ**—*արմանալ ընդ... զարմանալ մի բանի վրա. ապշել, թմրել։* **Ընդհատել**—*հատանել ընդ մէջ... մի բանի միջից կտրել. ընդմիջել։* **Ընդհարվել,** *դրաբար՝ ընդհարկանել ընդ ինչ, ընդ ումեք—զարնվել մեկի հետ։* **Ընդելանալ,** *«ընդել» բառից, գրաբար՝ ընդելանալ, ընդելնուլ ընդ... վարժվել մի բանի։* **Ընդելուզել,** *գրաբար՝ ընդելուզանել ընդ...իրար հետ ելցնել, հագցնել, հեռել։* **Ընդխառնել**—*խառնել մի բանի հետ։* **Ընդլծել**—*լծել մեկի հետ, իրար հետ։* **Ընծիւղել, ընծիղել, ընդծիւղել** *ձևից—հետը ծլել. սրանից՝ ընծիւղ, ընծիղ։ Այսպես նաև՝* **ընկեր, ընդկեր** *ձևից—հետըն ուտող։* **Ընկլել, ընկլուզել,** *գրաբար՝ ընկլնուլ, ընկլուզանել, «ընդկըլնուլ», «ընդկլուզանել» ձևերից—կուլ տալ ներս, ներս քաշել, սուզել։* **Ընդմտանել,** *ա) մտանել ընդ ինչ, մտանել ընդ գետինն—ներս մտնել, միջամուխ լինել. բ) ընդմտանել ընդ իւիք—մի բանի տակ մըտնել։* **Ընդշարել** *ընդ ...մեկի վրա չարանալ։* **Ընդկուտակել**—*մի բանի վրա, իրար վրա կուտակել։—Նոր կազմված են՝* **ընդգծել,** *իբրև՝ գծել ընդ բառիս, ընդ բանիս—տակը գծել, տակը գիծ քաշել։* **Ընդերևել.** *իբրև երեւել ընդ ինչ, ընդ քող—տակից երևալ, միջից երևալ։*

«Զ» ՆԱԽԴԻՐԸ դրվելով բայերի վրա՝ նրանց նշանակությունը

աստկացնում է, կամ ֆիզիկական նշանակությունը փոխում է բարոյականի, օրինակ՝ իջանել—իջնել, զիջանել—խիստ իջնել, ապա՝ բարկությունից, հպարտությունից իջնել, աշխարհաբար՝ զիջանել, վիջել—տեղի տալ։ Զանցանել—առաջ անցնել մի բանից, դենն անցնել, ապա՝ զանց անել, ուշադրություն չդարձնել. գրաբար՝ զանցանել նաև՝ գերազանցել։ Զեղծանել, զեղծել—սաստիկ եղծել, փչացնել, ջնջել, ապա՝ բարոյապես փչացնել, ապականել. դրանից՝ զեղծում։ Սթափել (փոխ. զթափել)—թափել, դատարկել, ապա՝ թմրությունից ուշքի գալ, սթափվել։ Սքողել (փոխ. զքողել)—քող քաշել, թաքցնել։ Այսպես կան նաև՝ Արմանալ, Զարմանալ. Եռալ, Զեռալ, որից՝ եռ ու զեռ. Ջարանալ, Զլտրանալ, Զլարիլ. Մայլել, Զմայլել. Ականել, Զականել. Ամպել, Զամպել, որից՝ ամպ ու զամպ, ամպ ու զումպ. Հովանալ, Զովանալ (փոխանակ՝ զհովանալ), որից՝ հով ու զով. Հարկանել, Զարկանել (փոխ. զհարկանել). Յարդարել, Զարդարել, որից՝ արդ ու զարդ. Օդել, Յօդել, Զօդել, որից՝ յօդուած (հոդված), զօդուած։ Գրաբարում նաև՝ Զնստել—շատ ցածանալ, ապա՝ բարկությունը, հպարտությունը նստել. Զգնալ—մանգալ, պտտվել. Առանցանել, Զառանցանել—շատ առաջ անցնել, աշխարհաբար՝ զառանցել—ցնորվել, ցնդել, դուրս տալ։ Այսպես նաև՝ Կծել, Զկծել—զայրացնել, սիրտը կսկծացնել։ Առածել, Զառածել—ուժգնությամբ ետ դարձնել, պտտեցնել, ապա՝ ուղիղ ճանապարհից դարձնել, մոլորեցնել. զառածանք—մոլորություն, վատ բանի մեջ ընկնել, Արտուղիլ, Զարտուղիլ. Արթուն, Զարթուն. Հեղուլ, Զեղուլ (փոխ. զհեղուլ), աշխարհաբար՝ հեղել, զեղել և այլն։

«Յ» նախդրի նշանակությունը բոլորովին մեռած է. ուստի հաճախ դուրս է ընկնում, այսպես՝ Աչողել, Յաչողել. Աղել, Յաղել. Երկարել, Յերկարել. աշխ. Ավելացնել. գրաբ. Յավելուլ։—Մի քանի բայերի մեջ նշանակությունը փոխվում է, օրինակ՝ Անցանել—անցնել, Յանցանել—հանցանք գործել. Արձակել—արձակել, Յարձակել—հարձակվել։

Եղել է հնում նաև մի նախաբայ «համ», որով կազմված են մի քանի բառ.Բերել—կրել, տանել (ֆիզիկական իմաստով). Համբերել—կրել, տանել (բարոյական իմաստով). Համբառնալ, ամբառնալ—վեր բարձրացնել. վեր բարձրանալ, համբարձվել, «բառնալ» բայից, որ նշանակում է՝ բարձել, վերցնել։ Արձակել, Համարձակել—համարձակ, բաց դարձնել, սրանից՝ արձակ—համարձակ։

Գ

ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

91. Ընդհանուր կանոն:—*Իսկական բարդ բառերը կազմվում են այս ընդհանուր կանոնով. 1) Բարդության երկու մասերի մեջ մտնում*

է Ա ձայնավորը, որ կոչվում է հոդակապ. բայց երբ բաղադրիչ մասերից երկրորդը սկսվում է ձայնավորով (ա, օ(ո), ու, է(ե), ի, ը), այն ժամանակ երկու բառի մեջ հոդակապ չի մտնում. ինչպես՝ զորագունդ, բայց՝ թանաքաման։ Բառասկզբի «յե» և «վո» կապակցությունների «յ» և «վ» հնչյուններն այս դեպքում դուրս են ընկնում. ինչպես՝ «յեկ», բայց «նորեկ», «վորակ», բայց «վատորակ»։

2) Բարդության առաջին մասի համար առնվում է եզակի ուղղական հոլովը, օրինակ՝ մարդ-ա-սեր։

3) Բարդության առաջին անդամի վերջի փակ վանկի ձայնավորները մնարով անշեշտ՝ կրում են ձայնափոխություն. օրինակ՝ երկիր-երկրագունդ, թռչուն—թռչնորս, մատյան-մատենավար։

92. Հոդակապ։— Ինչպես ամեն բաղադրություն, նույնպես և իսկական բարդությունը ծագում է շարահյուսական կապակցությունից։ Սկզբնապես այսպիսի բարդ բառերի առաջին բաղադրիչ մասը եղել է բառի բունն առանց որևէ վերջավորության. այսպես օրինակ, դիցուք, «մեծատուն» բառի առաջին անդամը եղել է ոչ թե «մեծ», այլ «մեծա», որի վերջի «Ա» ձայնավորն եղել է բառաբնի ձայնավորը. ուստի մեծատուն բառն իսկապես առաջ է եկել ածականի և գոյականի շարահյուսական կապակցությամբ, այսինքն վերադիր ածականի և իր գոյականի միացումով իբրև մեկ բառ։ Սկզբնապես, ուրեմն, այդ կապակցությունը նշանակել է «մեծ տուն» և ապա՝ նշանակության փոփոխությամբ՝ «մեծ տուն ունեցող», ինչպես որ նոր լեզվի մեջ ծուրբեռան, ծուռիթ բարդություններն սկզբնապես նշանակել են՝ ծուռ բեռան, ծուռ իթ, ապա՝ ծուռ իթ ունեցող, ծուռ բեռան ունեցող։

Սակայն 5-րդ դարում արդեն բառերի ուղղականը կորցրած է ոչ միայն իր վերջավորությունը, այլև բնի ձայնավորը, և առաջ է եկած «մեծ» ձևը։ Թեպետ բնի «Ա» ձայնավորը պահվում է դեռևս «մեծա-ւ», «մեծա-ք», «մեծա-ց» հոլովների մեջ «Ի», «Յ» վերջավորություններից առաջ, բայց և այնպես բառերի բնի զգացումն այլևս չի եղել մեծաւ, մեծաց ձևերի մեջ, և դրանց «Ա» ձայնավորը չի զգացվել իբրև բառաբնի ձայնավոր, այլ իբրև «աւ», «աց» վերջավորությունների մի մաս։ Ուստի «մեծատուն» բարդության առաջին մասը համարվում է ո՛չ թե «մեծա», այլ ուղղական հոլովը՝ «մեծ», իսկ «ա» ձայնավորը զգացվում է իբրև բարդություն կազմելու մի հոդ, կապ, որ միացնում է բարդության երկու մասերը և առաջ բերում մի նոր բառ։

Ինչքան էլ բարդության այս եղանակը ծագած է շարահյուսական կապակցությունից, չպիտի կարծել, թե այդ եղանակով բարդված բառերը բոլորը երբևէ շարահյուսական կապակցություն են կազմել. որովհետև նույնիսկ հնդեվրոպական մայր լեզվի այն շրջանում, երբ առանձին լեզուներ են առաջ եկել, գոյություն չի ունեցել մաքուր բուն առանց վերջավորության։ Ուստի այդ եղանակով բարդված բառերն ամենամեծ մասով անալոգիական կազմություններ են այնպիսի

նախնական բաղադրությունների նմանությամբ, որոնք շարահյուսական կապակցությունից են ծագած եղել։ Բացի այդ՝ բառարնի «ա» ձայնավորն անալոգիայով անցել է և այնպիսի բառերի բարդության, որոնք «ա» ձայնավորով բուն չունին, և ապա ընդհանրացել է ամեն տեսակի բաղադրությունների համար իբրև հոդակապ. մինչդեռ ուրիշ հնդեվրոպական լեզուների մեջ նույն դերը կատարում է «n» բնի «n» ձայնավորը։ Այսպես՝ «ա» ձայնավորով բաղադրվում են նաև Ո, ՈՒ, Ի բներն ունեցող բառերը՝ զարդասէր, բանասէր, գետավէժ (բները՝ զարդու, բանի, գետո), ինչպես և «Ն», «Ր», «Ղ» բաղաձայն ունեցող բները, ինչպես՝ ականատես, դատերագիր, աստեղազարդ (ակն—ական, դուստր—դստեր, աստղ—աստեղ)։ Ապա «ա» ձայնավորն անցել է նաև եզակի ու հոգնակի սեռականով կազմված հարադրություններին, օրինակ՝ հորաքույր, մորաքույր, ձեռացագիր, ձեռացափող, շանաճանճ, ձեռացաշուր, արենազանգ, արենապարտ, կանանցածին. նույնպես նաև եզակի գործիականով և հոգնակի հայցականով բաղադրություններին, օրինակ՝ ձերբակալ, ձերբատուն (ձեռնակալ, ձեռնատուն), կենսաբեր, կենսատեր, կենսաբուխ և այլն։

Սակավաթիվ բաղադրություններ կան հին լեզվի մեջ, որոնց մեջ պահվում են բնի ուրիշ ձայնավորներ, ինչպես հին քվականներից՝ էրկոտասան ձևի մեջ երևում է «երկու» բառի «երկո» բունը, իսկ ուրիշ բաղադրությունների մեջ է «երկու», «երկ», «երեք» և «չորս» բառերի համար կա «երկի», «երի», «չորի». ինչպես՝ «երկեամ», «երեամ»=երկի+ամ, երի+ամ. այլև հին «երկի-ր», «երի-ր», «չորի-ր» բառերի մեջ, որոնց վրա կրկնվելով «որդ» ածանցը՝ առաջ են եկել կրկնածանց էրկ-ր-որդ, եր-ր-որդ, չոր-ր-որդ բառերը։ «Հնգետասան» բառի մեջ երևում է «հինգ» բառի համար «հնգե» բունը, որից պետք է ենթադրել «հնգե-ր» կազմությունը, որից «որդ» ածանցով՝ «հինգեր-որդ», և ապա «երորդ» մասն ըմբռնվել է իբրև մի ածանց և անցել է մյուս քվականներին՝ վեցերորդ, եօթներորդ, և այլն, որով և առաջ է եկել դասականների «երորդ» ածանցը։ «Ա» հոդակապի փոխանակ «ե» երևում է երբեմն մի քանի բառերի մեջ, այսպես օրինակ՝ կարնեցի, մշեցի, վանեցի, բայց գյուղացի, քաղաքացի. խաբեպատիր, շահեկան. հաշվեմատյան, հաշվետոմս։ Սակայն կենդանի է միայն «ա» հոդակապը, որով շարունակ նորանոր բառեր են կազմվում լեզվի մեջ։

Երբ բաղադրության երկրորդ անդամը ձայնավորով է սկսվում. «ա» հոդակապը չի դրվում։ Այս կանոնն աշխարհաբարում առանց բացառության չի պահվում. «ա» հոդակապը մտնում է երկու բաղադրիչ մասերի մեջ նաև ձայնավորից առաջ, երբ առաջին մասն է «ամեն», իսկ երկրորդը մի որակական ածական, որ «ամեն» բառի հետ բարդվելով՝ ստանում է գերադրական աստիճանի նշանակություն, ինչպես՝ ամենա-ընտիր, ամենա-օգտակար, ամենա-ուժեղ, ամենա-ազդու, ամենա-ազնիվ, ամենա-անվնաս, որ նշանակում են՝ ամենից ընտիր, ամենից օգտակար և այլն։ Այսպիսի կազմությամբ «ամենա» ձևը ձրգտում է առանձնանալու և ստանալու գերադրական աստիճան կազմող մի հատուկ բառի նշանակություն։

Ձևի և նշանակության այս շրջմանն իբրև հիմք ծառայել է նախ այն, որ հին լեզվի մեջ սակավաթիվ են ամեն բառով բաղադրությունները ձայնավորով սկսվող բառերի հետ և ավելի ևս սակավաթիվ՝ այնպիսիները, որ գերադրական աստիճանի նշանակություն ունենան, ինչպես են՝ ամենամբարիշտ, ամենանարատ, ամենաոատ, ամենարդար, ամեներջանիկ, ամենրնդարձակ, ամենընտել, ամենիմաստուն և մի երկու ուրիշները,— մինչդեռ բաղաձայնից առաջ «ա» հոդակապով կազմվածները գերադրական նշանակությամբ՝ շատ ավելի բազմաթիվ են, ինչպես՝ ամենաբարի, ամենաբարձր և այլն և այլն։ Բնականաբար այս կարգի բազմաթիվ բառերի անալոգիայով նաև ձայնավորով սկսվող բառերից առաջ ավելացել է «ա» ձայնավորը, որով առաջ է եկել միակերպություն կազմության մեջ. ինչպես՝ ամենա-բարի, նույնպես և ամենա-օգտակար։ Մյուս կողմից այս անալոգիական միակերպությունը նպաստել է և այն, որ երբ բաղադրության երկրորդ անդամը բայական իմաստ ունի, այդ ժամանակ առանց հոդակապի բարդությունը երկդիմի է. օրինակ՝ «ամենընտիր», «ամենընդունակ», «ամենընտել» կարող են նշանակել ոչ միայն ամենա-ընտիր, ամենա-ընդունակ, ամենա-ընտել, այլև ամեն բան ընտրող, կամ ամենքից ընտրված, ամեն բանի ընդունակ, ամեն բանի ընտելացած։ Բացի այդ՝ նույնիսկ եթե երկրորդ անդամը բայական իմաստ չունի, դարձյալ միշտ անորոշություն է առաջ գալիս. որովհետև «ամենազնիվ», «ամենընտիր», «ամենազդեցիկ» սովորաբար հասկացվում է ոչ թե՝ ամենա-ազնիվ, ամենա-ընտիր և այլն, այլ սովորական համադասական շարահյուսությամբ իբրև «ամեն ազնիվ» (ընկեր), «ամեն ընտիր» (բան), «ամեն ազդեցիկ» (մարդ), իբրև ամեն մի ընտիր բան, յուրաքանչյուր ազնիվ ընկեր։ Այս երկդիմությունն էլ իր կողմից, անշուշտ, ազդել է, որ ձևի և նշանակության տարբերակումով «ամեն ազնիվ», «ամեն օգտակար» կապակցությունը մնում է սովորական շարահյուսության համար, գերադրական աստիճանի նշանակությամբ գործածվում է «ամենա» ձևը, իսկ բայական իմաստ ունեցող և ձայնավորով սկսվող բառերից առաջ պահվում է հին բարդության ձևը՝ առանց «ա» հոդակապի ոչ գերադրական նշանակությամբ. այսպես՝ ամեն ընտիր (անջատ գրությամբ) նշանակում է՝ յուրաքանչյուր ընտիր, ամեն տեսակի ընտիր, իսկ բարդ բառերը՝ ամենա-ընտիր նշանակում է՝ ամենից ընտիր (գերադրական աստիճան), ամենընտիր՝ ամեն բան ընտրող, ամենքից ընտրված։

Ձայնավորից առաջ հոդակապ երևում է նաև «կիսա» բառի մեջ՝ կիսա-եփ, փոխանակ «կիսեփ» ձևի, կիսա-ուսումնական, կիսա-ինտելիգենտ. նույնպես և «հակա», «նախա» ձևերը ձայնավորից առաջ, օրինակ՝ հակա-ազգային, նախա-Արմենյան, փոխանակ՝ «հակազգային», «նախարմենյան» ձևերի։ Ժողովրդական լեզվի մեջ պատահում են և ուրիշ բառեր, ինչպես՝ «գիշերա-եփ», «գլխա-ողջանք», «սրտա-ուզելիք», փոխանակ ուրիշ բարբառների «սրտուզելիք», «գիշերեփ» ձևերի։

98. Բարդություններ առանց հոդակապի:—*Հին լեզվից ունենք բավական թվով բառեր, որոնք կազմված են հոդակապով, բայց երբ բառը մեծանում է նոր ածանցներով, հոդակապը դուրս է ընկնում. օրինակ՝ արծաթասեր—արծաթսիրություն. ընկերասեր—ընկերսիրություն. երկայնամիտ—երկայնմտություն. արյունահեղ—արյունհեղություն. սակավաժամանակ—սակավժամանակյա. եղբայրասեր—եղբայրսիրություն. ողջամիտ—ողջմտություն. լրջամիտ, լրջամտություն—լրջմտություն. շատախոս, շատախոսություն—շատխոսություն. պահապան—պահպանություն և այլն: Այսպիսի բառերի անալոգիայով առաջ են եկել նոր բառեր առանց հոդակապի, օրինակ՝ ընկերվարություն, ընկերվարական:*

Թե՛ հին և թե՛ նոր լեզվի մեջ կան բազմաթիվ բառեր, որոնք կազմված են բաղաձայնից առաջ առանց «ա» հոդակապի: Այդ բառերի մի մասն ունին նաև հոդակապով ձևեր և հաճախ դժվար է որոշել, թե այդպիսի բառերը սկզբնապես առանց հոդակապի են կազմված եղել և հետագայում երկրորդաբար հոդակապով ձևեր են առաջ եկել, թե՞ ընդհակառակն, առանց հոդակապի ձևերը հոդակապով ձևերի տղումն են: Այսպես օրինակ՝ խրատտու, բանբեր (որոնց համար կան նաև խրատատու, բանաբեր) համարվում են հին բաղադրություններ, որոնց առաջին բաղադրիչները՝ մեկն «ու», մյուսն «ի» բներին են պատկանում՝ իբրև նախնական ձևով «խրատու-տու», «բանի-բեր», որոնց բ-ների «ու», «ի» ձայնավորները ձայնափոխության ընդհանուր օրենքով դուրս են ընկել: Այսպես ունենք կրկին ձևերով՝ զինվոր—զինավոր, հացթուխ—հացաթուխ, ջրկիր—ջրակիր, ջրհեղեղ—ջրահեղեղ և բազմաթիվ բառեր թե՛ «ջրա», թե՛ «ջր» ձևերով. բայց կան նաև միայն վերջին ձևով՝ ջրվեժ, ջրկոտեմ, ջրհան, ջրհոր, ջրմուղ, ջրբաժան, ջրպետ, ջրգլխի, ջրշոր, ջրկալ, ջրփոխվել և ուրիշ շատերը թե՛ հին և թե՛ նոր լեզվից: Նույնպես՝ հրձիգ—հրաձիգ. քարտաշ—քարատաշ, քարկուի—քարակուի, քարվազ—քարավազ, քարկուռ—քարակուռ և այլն. կան և «քար» ձևով միայն՝ քարկած, քարկոխ, քարհանգույց, քարհալած, քարմաղ և այլն: Նույնպես՝ տնկալուչ—տնակալուչ, տնկից—տնակից, տնպան—տնապան. միայն «տն» ձևով՝ տնկեց, տնպահ, տնտես: Այսպես նաև օրհաս—օրահաս, չարկամ—չարակամ, կաթնկեր—կաթնակեր, դռնաբաց—դռնբաց, դռնափակ—դռնփակ, դռնբացեք—դռնաբացեք, ծովիլ—ծովավիզ, ոտնքայլ—ոտնաքայլ, ոտնհար—ոտնահար, ոտնփոխ—ոտնափոխ, ոտնկա—ոտնակա, ոտնբեկ և այլն: Լուսնկա—լուսնակա, ձեռնափոխ—ձեռնփոխ, ձեռնթափ—ձեռնաթափ, ձեռնթուխ—ձեռնաթուխ, ձեռնտու—ձեռնատու, ձեռնհաս—ձեռնահաս, ձեռնպահ և այլն. մատնշունչ—մատնաշունչ, մատնցույց—մատնացույց, մատնտու, մատնկար, ակնկատույց—ակնակատույց, ակնկույր—ակնակույր, ակնամոմ—ակնմոմ, ակնտես—ականատես, ակնհարել—ակնահարել, ակնկոր: Այսպես և լրտես, քաղցկեղ, բուրվառ, արևմուտք, հացկատակ, հացկերույթ, հավքաշ, ձկնկիթ, թերխորով, թերխաշ, թերմաշ, մոմպատ,

մոմլաթ, մոմշոր, ծծմայր, գայլկապ, գայլխեղդ, քմծաղրել, քմծիծաղ, շնխաղող (շան խաղող), սոլկար, մազման, ձնծաղիկ, չարխափան, հացփոխ և բազմաթիվ ուրիշ բառեր ժողովրդական լեզվից, որոնց մեջ չկա «ա» հոդակապ։ Կրկին ձևերից «ա» հոդակապով ձևերը հատուկ են արևվելյան բարբառներին, իսկ առանց հոդակապի ձևերն ավելի արևմտյան բարբառներին, որոնց հատուկ է բառամիջի «ա» ձայնավորի սղումը (հարսանիք-հարսնիք)։

Մի անգամ, որ կան առանց հոդակապի բազմաթիվ բառեր, ինչպիսի ծագում էլ դրանք ունենան, դրանց անալոգիայով են կազմվել, անշուշտ, վերևի բառերի մի մասը, և կազմվում են ուրիշ նոր բառեր։ Այսպիսով իսկական բարդությունը նույնանում է կցական բարդության հետ (տե՛ս § 81)։

1. Գոյականի և ածականի միացումով՝ ծալպակաս, երնսրայ, հրեսպարզ, հավկուր, պատկից, ականջթեթև ։

2. Ածականի և գոյականի միացումով՝ բացբերան, բացգլուխ, սևսիրտ, նեղսիրտ, մեծսիրտ, նեղհոգի, չարլեզու, չորթան և այլ բառերի անալոգիայով առանց ձայնափոխության՝ ծուռբերան, ծուռքիթ, ծուռվիզ, կուշտփոր, պինդգլուխ, կեսբերան։ Կան նաև ձայնափոխությամբ՝ ծռաբերան-ծռբերան, ծռաքիթ-ծռքիթ, կշտափոր, կիսաբերան։ Բայց որ «ծուռքիթ», «պինդգլուխ» և այլ բաղադրություններն առանց ձայնափոխության են, այդ ցույց է տալիս, որ վերադիր ածականը և իր գոյականը միացել, մեկ բառ են կազմել ստացական նշանակությամբ՝ ծուռքիթ, այսինքն ծուռ քիթ ունեցող։ Այսպես կազմվել են և ուրիշ բառեր՝ անուշբերան, գեշբերան, ճերմակաթաթիկ, երկայնթաթիկ, տաքշունչ, բոլորպար, նախշոնմաչք, թթխմոր (թթու խմոր), կաժպանիր, թելպանիր, կերցավ, սալքար, կեռպոչ, պաղսիրտ, լուսաստղ։

3. Երկու գոյականի միացումով՝ ջրհոր, արևմուտք և այլ բառերի անալոգիայով նաև՝ մեջկապ, ճրագթաթ, ճրագլույս, արևլույս, արևշող, արևկող, ամպշող, արյունբերան, ակռաժաժիկ, բակդուռ, աներձագ, ճաշքուն։

4. Անվան և բայարմատի միացումով, որ շատ սովորական է ժողովրդական լեզվի մեջ, մանավանդ երբ բայարմատի ետևից որևէ մասնիկ է լինում՝ ի, իկ, ուկ, ում, ան, իչ, ուն, ոց, իթ։ Այսպես՝ ծամկալ (ծամակալ), ուշկալ (ուշակալ), դեղդիր (դեղադիր), դեղթափ (դեղաթափ), քարհատ (քարահատ), բանգետ (բանագետ) և այլ բառերի անալոգիայով՝ ճրագկալ, գետկալ, գետքաշ, կախկալ, կրծկալ, անթեղկալ, ակնկալ ակնկապ, մթնշաղ, բրինձքամիկ, փլավքամիկ (փլավքամիչ), ականջփորիկ, կրակքաշ, կրակթափ, կրակթափիկ, հավքաշ, ատամփորիկ, ատամփորիչ, կերկոխ, կալմուխ, փորսող, սալջարդ, բաղարջնախշիկ, ականջմտիկ, սուտմեռուկ, մազթափ, փայտփորիկ, արյունլվա, բանթող, բանջարբուսիկ, ալուրմաղիկ և այլն (տե՛ս § 81)։

94. Բարդության առաջին անդամը, *ինչպես տեսանք, է՛ եղակի ուղղական հոլովը։*

1. Գրաբարում կան բառեր, որոնք գործ են ածվում միշտ, կամ սովորաբար, հոգնակի Ք-ով իբրև անեզական բառեր, օրինակ՝ կառք, փառք, խելք, կյանք, քիմք, միտք (միտ), մեղք (մեղ), աչք (աչ)։ Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ առնվում է այսպիսի բառերի եզակին՝ առանց վերջին Ք բաղաձայնի, օրինակ՝ կառավար, փառապանծ, փառահեղ, սնափառ, խելառ, կենսագործել, քմահաճո, մտավոր, անմիտ, մեղավոր, անմեղ, աչեղ, շնորհալի և այլն։ Աշխարհաբարում, գրական լեզվի մեջ, ընդհանրապես պահվում է բառակազմության այս կանոնը, և հին բառերի անալոգիայով կազմվում են նոր բառեր վերջի Ք-ն դուրս ձգելով։

Սակայն այդպիսի բառերի համար մենք այլևս չունենք վերջի Ք հնչյունի հոգնական նշանակության զգացումը. մեզ համար այժմ «աչք», «միտք», «մեղք», «կառք» այլևս հոգնակի չեն, այլ եզակի. դրանց հոգնակին լինում է՝ աչքեր, մտքեր, մեղքեր, կառքեր։ Ուստի եթե մի կողմից հին բառերի անալոգիայով այդպիսի բառերի վերջի Ք-ն դուրս ենք ձգում կազմություններ մեջ, մյուս կողմից՝ եզակի ուղղական հոլովից կազմելու անալոգիայով՝ ժողովրդական լեզվի մեջ կան ու դեռևս շատ բաղադրություններ, որոնց մեջ պահվում է վերջի Ք-ն, այսպես, հին՝ խելացի, անխել, անխելություն. նոր՝ անխելք, անխելքություն, խելքապակաս. հին՝ անշնորհ, նոր՝ անշնորհք. հին՝ աչացավ, աչագեղ, բազմաչյա, նոր՝ աչքացավ, աչքաբաց, ծակաչք, չորսաչքանի հին՝ պիտանի, անպետ, նոր՝ պետքական, անպետք. հին՝ պարտատեր, նոր՝ պարտքատեր. պարտքակոխ, պարտքովի. հին՝ գրակալ, նոր՝ գրքակալ։ Այսպես և կրծքաբաց, վորձանքավոր, մեղքանալ, խաղքություն, ցուցանքավոր, խոսքակոխ (անել), քաջքաքամի, քաջքաճայն, աշունքանալ, աշունքենի, աշունքատանձ և այլն։ Գրական լեզվի մեջ կազմված են՝ վարքագրություն, հանքատեր, բերքատու, հանքային և այլն։

2. Այս միևնույն զարգացումն առաջ է եկել նաև Ն, Ր, Ղ բներն ունեցող բառերի նկատմամբ, որոնց համար հին լեզվի մեջ առնվում են սեռականի ձևերը՝ «ան», «եր», «եղ»։ Բայց քանի որ բառերի մեծ մասի համար բառակազմության ժամանակ առնվում է եզակի ուղղականի ձևը, ուստի նույնիսկ հին կազմությունները գրաբարում արդեն մասամբ վերածվել են ուղղականի ձևին. այսպես ունենք սեռականից՝ ականատես, ականակապ, ականակուռ, ականազարդ, ականավոր, ականել. բայց՝ ակնախտիդ, ակնակալություն, այժմ՝ ակնկալություն, ակնակապիճ, ակնագործ, ակնածել. հին լեզվի մեջ՝ սերմանահան, սերմանացան, սերմանացու, սերմանել. բայց և սերմնահանք, սերմնացան, սերմնացու, այժմ նույնիսկ սերմացու, սերմել, իսկ հնն լեզվից՝ սերմաբույս, սերմակեր։ Հին՝ ոտանավոր (ոտքով ման եկող), նոր՝ ոտնավոր, նույնիսկ՝ ոտավոր, ոտնակապ, հին՝ ձկանակեր, այլև ձկնակեր։ «Ամառն», սեռական՝ «ամարան», որից «ամարանոց», գարուն, սեռ. գարնան, որից՝ գարնանային. աշուն, աշնան, որից՝ աշնանային. անուն, ան-

վան, որից՝ անվանական, անվանակոչ։ Այսպես հին լեզվի մեջ կան նաև՝ աստեղագետ, աստեղաբաշխ, աստեղազարդ և այլն, բայց նաև՝ աստղագետ, աստղաբաշխ, աստղազարդ, որոնք այժմ գործածական են։ Նույնպես և՝ տարերական, այժմ միայն՝ տարրական, տարրապաշտ և այլն. բայց և նոր կազմված է՝ տարերային. հին՝ ծովեզերեայ, այժմ՝ ծովեզրյա. կայսերական, բայց՝ կայսրության. եզերել, եզերական, բայց եղրակացություն և նոր կազմված՝ եզերային։ Նույնպես «արիւն» բառի և «ութիւն» վերջացածների սեռականներից («արևան», «ութեան») կազմված են՝ արենագին, արենագույն, արենաթաթավ, արենապարտ, արենհեղություն, բայց և՝ արիւնագին, արիւնաթաթաւ, արիւնահեղութիւն և բազմաթիվ ուրիշները «արիւն» ձևով, որ ընդունված է նոր լեզվի մեջ. ժողովրդական լեզվի մեջ նույնիսկ արնագին, արնագույն, արնաթաթախ և այլն. բայց կան նաև՝ արենխում, արենպարտ, արենտեր։ Սակավաթիվ բառեր կան հին «ութեան» սեռականից, ինչպես՝ փրկութենաբեր, փրկութենական, բայց և փրկութիւնաբեր։ Նոր լեզվի մեջ ևս հարկ եղած դեպքում երկու ձևով էլ կազմում ենք, ինչպես՝ միութենական, միությունական։

3. Հին լեզվի մեջ «ըն» վերջացած բառերի վերջի «ըն» մասը նոր լեզվի մեջ դուրս է ընկել, օրինակ՝ ուտումն-ուտում, մատն-մատ, ձեռն-ձեռ, մասն-մաս։ Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ, ինչպես և հոգնակի թվի մեջ, սակավ բացառությամբ, այսպիսի բառերի վերջի «ն» տառը վերականգնվում է, ինչպես՝ ուսումնասեր, մատնացույց, ձեռնասուն, մասնակից. այսպես և ածանցման ժամանակ՝ մատն-ոց, ձեռն-ոց, ակն-ոց, մասն-ավոր։ Այդ բառերի մի մասի եզ. սեռականը գրաբարում, մի քանի բառերինը նաև աշխարհաբարում, լինում է «ան» ձևով, օրինակ՝ դուռն-դուռ, սեռ. գրաբար՝ դռան, աշխ. դրռան. նուռն-նուռ, սեռ. նռան։ Այսպիսի բառեր են՝ կողմն-կողմ (կողմնացույց, բայց՝ կողմեր), ակն—ակ, արեգակն—արեգակ, փայլակն—փայլակ, կայծակն—կայծակ, հիմն—հիմ, հիմք, որդն—որդ (որդնել, բայց՝ որդեր), շուրթն—շուրթ, հիւսն—հյուս, դիակն—դիակ, սկիզբն—սկիզբ, ձուկն—ձուկ, մուկն—մուկ, այծեամն—այծյամ, եղեամն—եղյամ, եղէգն—եղեգ, ծիծեռն—ծիծեռ, ասեղն—ասեղ, դուռն—դուռ, ունկն—ունկ, սերմն—սերմ (սերմնացան, բայց՝ սերմեր), ողն—ող, մասն—մաս (մասնակից, բայց՝ մասեր), ափն—ափ (ձեռքի. իսկ գետի ափը միայն «ափ» ձևով). սրանից՝ ափնածիր, բայց՝ ափեր. բուռն—բուռ, թոռն—թոռ, անձն—անձ (անձնասպան, բայց՝ անձեր), հարսն—հարս, գառն—գառ, բեռն—բեռ, եզն—եզ, ձեռն—ձեռ, ոտն—ոտ, կաթն—կաթ (կաթնատու, բայց՝ կաթեր), լեառն—լեռ և մի քանի ուրիշները։ Թվականներից եօթն—յոթը, յոթ, իննն—ինը, տասն, տասը, տաս։—Այսպես նաև «ումն» ածանցով կազմվածները՝ ուսումն—ուսում, շարժումն—շարժում և այլն։

4. Հարադրական բառերի կցումից, ինչպես տեսանք (§ 81), կազմ-

վում են կցական բարդություններ. դրանցից «կենսուսոյց» բառը, ենթարկվելով ձայնափոխության, դառնում է՝ «կենսուսոյց». սրա նման կան կազմված ուրիշ բառեր ևս՝ կենսածին, կենսաբուխ, կենսասեր, կենսատու, կենսունակ, կենսախրախուս (ի կեանս խրախուսող) և այլն։ Ապա սրանց անալոգիայով գրաբարի հայցականն անցել է և այնպիսի բառերի համար, որոնց մեջ հայցական չպիտի լինի, ինչպես՝ կենսածաղիկ, կենսատունկ, կենսական և այլն, այլև նոր կազմված՝ կենսուրախ։ Այսպիսով «կեանք» բառից բարդությունների համար առաջ է եկել կեանս, կենս ձևը, փոխանակ կեան, կեն ձևի, ինչպես են՝ կենարար, կենագործ, կենակից և այլն։ Սույն անալոգիայով կազմած ունենք՝ մեղսաբեր (մեղս բերող), մեղսածու, մեղսունակ, մեղսասեր, մեղսամած և նույնիսկ՝ մեղսային, մեղսորեն, որով առաջ է եկել բաղադրությունների համար «մեղս» ձևը, փոխանակ «մեղ» ձևի, ինչպես է՝ մեղադրել, մեղավոր, մեղապարտ բառերի մեջ։ Նույնպես «օրէնք» բառի «օրէնս» հայցականից կազմված են՝ օրենսդիր, օրենսգետ, վերջերս նաև գոյականների հետ՝ օրենսգիծ, օրենսգիրք փոխանակ իսկական բարդության ձևերի, որ են՝ օրինագիծ, օրինագիրք (§ 81)։

95. Ձայնափոխություն։—*Երբ բառակազմության ժամանակ բառն աճում է, այսինքն բառի վերջից նոր վանկ կամ վանկեր են ավելանում, շեշտը տեղափոխվում է վերջին վանկի վրա, այդ ժամանակ վերջին փակ (բաղաձայնով վերջացած) վանկի ձայնավորները, շեշտի տեղափոխության պատճառով, փոփոխության են ենթարկվում։ Նոր գրական լեզվի մեջ պահվում է գրաբարի ձայնափոխությունը, չնայելով, որ հին լեզվի ԵԱ(ՅԱ), ԵԱՅ(ՅԱ), ՈՅ(ՈՒՅ) երկբարբառներն իրենք և իրենց ձայնափոխությունն այլևս կենդանի չեն աշխարհաբարում։*

1) Ի, ՈՒ ձայնավորները բառավերջի փակ վանկերի և փակ միավանկերի մեջ կա՛մ դուրս են ընկնում, կա՛մ դառնում Ը ձայնավոր, որ չի գրվում. օրինակ՝ ջուր—ջրային, ջրկիր. քուն—քընկոտ, քընասեր. ունչք—ընչացք. ունդ—ընդակեր. տրտում—տրտմել. անասուն—անասնաբուժ. գիծ—գրծել, գրծագիր. թիվ—թրվական. ճշմարիտ—ճրշմարտասեր։

Մի քանի միավանկ բառերի սկզբում կամ մեջ ի, ու ձայնավորները ևս անփոփոխ են մնում. դրանք են՝ հինգ—հինգերորդ, հինգական, բայց՝ հնգամատյան. հիմն—հիմնադիր. իր—իրական. իժ—իժական. իմ—իմոնք. ինչ—ինչացու, բայց՝ ընչեղ. ինն—իննսուն, իննամյա. ինքն—ինքնավար. իսկ—իսկություն. ութ—ութերորդ. ուղտ—ուղտապան. ուխտ—ուխտել. ուշ—ուշադիր. ուլ—ուլիկ. ուխ—ուխաջուր. ունկն—ունկնդիր. ուռ—ուռենի ուս—ուսնոց. շուրջ—շուրջանակի, բայց՝ շրջան, շրջապատ. ռուս—ռուսական. թուրք—թուրքական, այլև՝ թրքական։

2) Որոշ թվով բառերի մեջ հին է>ե ձայնավորը դառնում է Ի. օրինակ՝ հին՝ նուէր—նուիրել. նվեր—նվիրել. հին՝ պատուէր—պատուիրել. պատվեր—պատվիրել. հին՝ սէր—սիրել. սեր—սիրել և այլն։ Լեզվի մեջ

գոյություն ունեցող այս հին կազմությունների անալոգիայով կազմվում են նաև նոր բառերը, ինչպես, օրինակ՝ սիրավեպ, սիրերգ։

Հին է>ե ձայնավորը ի ձայնավորի փոխվում է հետևյալ բառերի մեջ՝ անեծք—անիծել. անօրեն—անօրինել, բայց՝ անօրենություն. ապավեն—ապավինել. ասպարեզ—ասպարիզական. գեշ—գիշատիչ. գեջ—գիջություն. գես—գիսավոր. գետ—տգետ, գրագետ—գիտություն, տգիտություն, գրագիտություն, գիտուն. գեր—գիրանալ. դեզ—դիզել. դեպք—դիպչել. դետ—դիտել. զենք—զինվել. ժապավեն—ժապավինել. լեզ, պրնակալեզ—լիզել. խեթ—խիթալ. ծես—ծիսական. կեզ, սրտակեզ—կիզել. կես—կիսել. հանդեպ—հանդիպել. հանդես—հանդիսավոր. հեզ—հիգություն. հեն, ծովահեն—հինահար. հրավեր—հրավիրել. ձեթ—ձիթել. մեղ—միգամած, մեպ—միզել, մեջ—միջին. երեց—երիցյան. նվեր—նվիրական. շեկ—շիկանալ, այլև՝ շեկություն. շեջ, անշեջ—շիջեցնել. օրենք—օրինական. պատվեր—պատվիրել. պարտեզ—պարտիզպան. պես—պեսպիսություն, այսպիսի. պետք—պիտանի, բայց՝ պետքական. սեգ—սիգաճեմ. սեղ—սիզավետ. սեր—սիրական. ստեպ—ստիպել. վեր—վիրավոր. վրեժ—վրիժառու. վրեպ—վրիպել. տեգ—տիգաբուն. տեր—տիրանալ, տիրություն, բայց և տերություն, տերունի. տնօրեն—տնօրինել, բայց՝ տնօրենություն. փոխարեն—փոխարինել. քեն—քինախնդիր։ Հատուկ անուններ՝ Ներսես—Ներսիսյան, Արիստակես—Արիստակեսյան և մի քանի ուրիշներ։

3) Հին եա, նոր յա երկբարբառը դառնում է ե. օրինակ՝ մատիան, մատյան—մատենագիր. սենեակ, սենյակ—սենեկապետ։ Լեզվի մեջ եղած հին կազմությունների անալոգիայով կազմվում են և նոր բառերը, ինչպես են՝ մատենավար, գրասենեկային. գրեան, գրյան—գրենական։

Այս ձայնափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէ. ուստի և դրպրոցական հայերեն չսովորած մարդիկ սխալ կազմություններ են անում, ինչպես են՝ «գրասենյակային», «հոբելյանական», փոխանակ «գրասենեկային», «հոբելենական» ձևերի։

4) Հին եաՅ, նոր յա բառավերջում դառնում է «եՅ», հին ուղղագրությամբ՝ «է», օրինակ՝ քրիստոնեայ, քրիստոնյա—քրիստոնեական, քրիստոնեություն. հրեայ, հրյա—հրեական, հրեություն. միջօրեայ, միջօրյա—միջօրեական։ Այսպիսի բառերի անալոգիայով նաև նոր կազմությունները, ինչպես են՝ գործունեայ, գործունյա—գործունեություն. պաշտօնեայ, պաշտոնյա—պաշտոնեություն[5]։

5) Հին ՈՅ, նոր ՈՒՅ դառնում է «ՈՒ», օրինակ՝ ծոյլ, ծույլ—ծուլություն. ողջույն—ողջունել. գույն—գունավոր. բույս—բուսական։ Սրանց անալոգիայով նաև նոր կազմությունները, ինչպես՝ բուսակեր, բուսաբանություն։ Բացառություն կազմում են՝ նույն—նույնություն, քույրաթիվ, գույնզգույն և նոր կազմված «քույրիկ», փոխանակ հին և ժողովրդական՝ «քուրիկ» ձևի։

6) Երբ բառավերջի «Ի» ձայնավորի հետ միանում է «Ա» մասնի-

կը, այդ ժամանակ «իա» կապակցությունը դառնում է հին եա, նոր յա, օրինակ՝ որդի—ակ, հին՝ որդեակ, նոր՝ որդյակ. պատանի—ակ, հին՝ պատանեակ, նոր՝ պատանյակ։ Բացառություն են միավանկերից կազմվածները՝ միակ, թիակ, դիակ, ձիակ։

7) Բազմավանկ բառերի վերջի «ի» ձայնավորը հաջորդ ա ձայնավորի հետ կազմում է հին եա, նոր յա երկբարբառը, որ և դառնում է ե. օրինակ՝ բարի + արար—բարերար. այգի + ա + գործ—այգեգործ. գինի + ա + սեր—գինեսեր, հոգի + ա + կան—հոգեկան։ Հին բառերի անալոգիայով կազմվում են նորերը, օրինակ՝ հոգեբանություն։ Սակայն այս ձայնափոխությունը նույնիսկ հին լեզվի մեջ հաստատուն չէ. օրինակ՝ հնուց ունենք «որդի» բառից՝ որդեգիր, որդեկորույս, որդեսպան և այլն, բայց և որդիատյաց, որդիական և ոչ՝ որդեկան, ինչպես է՝ հոգի—հոգեկան։ Այսպես և՝ խնամի—խնամիանալ (հին՝ խնամենալ), բարի—բարիանալ. կղզի—կղզիաբնակ և այլն։ Միավանկ բառերից՝ միանալ, ձիավոր։

Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ բազմավանկ բառերի վերջի «ի» ձայնավորը հաճախ դուրս է ընկնում, դարձյալ ոչ հաստատուն կերպով. օրինակ՝ բարի—բարություն, բայց՝ «բարեկամ», բարիանալ. արի—արություն, բայց նաև՝ արիություն, արիանալ, արիական. եկեղեցի—եկեղեցական. կատաղի—կատաղություն. խնամի—խնամություն, բայց՝ խնամիական. թշնամի—թշնամանալ, թշնամություն, թշնամական. հայրենի—հայրենական, հայրենազուրկ, հայրենակից. վայրենի—վայրենանալ. վրացի—վրացական և շատ նմանները։ Այսպես պետք է կազմել նաև՝ գյուղացի—գյուղացական, գյուղացություն։

96. Բաղաձայնների փոփոխություն բառակազմության ժամանակ առաջ է գալիս միայն Ր և Ռ բաղաձայնների նկատմամբ, այն էլ հին լեզվի մի քանի բառի մեջ, այն է՝ արմատական Ն հնչյունից առաջ ընկնում է Ր հնչյունը, բայց վերջինս, երբ հեռանում է Ն հնչյունից, դառնում է Ռ. օրինակ՝ հին լեզվի մեջ «ամառն», «ձմեռն», «գարն», «լեառն» բառերը սեռական ունին՝ ամարան, ձմերան, դրան, վերին, լերանց։ Այսպես և՝ ամարային, ամարանոց, ձմերային, ձմերոց։ Բայց այս փոփոխությունը հատուկ չէ աշխարհաբարին, որ ունի՝ գուռ—գռան, լեռ—լեռան, ձմեռ—ձմռան կամ ձմեռվա. ամառ—ամռան կամ ամառվա։ Այսպես և՝ ամառային կամ ավելի՝ ամառնային, ձմեռային կամ ձմեռնային, ամառանոց, բայց՝ հին լեզվից մնում են՝ ձմերել, ձմերոց, դրանիկ։

97. Բաղադրիչ անդամների շարահյուսական հարաբերությունը։— Ինչքան էլ իսկական բարդության մեջ շարահյուսական կապակցության ձևն իբրև այնպիսին անհետացած է, բայց և այնպես երկու բաղադրիչ մասերի շարահյուսական հարաբերության զգացումը մնում է։ Սակավաթիվ են այնպիսի բարդությունները, որոնց երկու մասերը ունեն հավասարական հարաբերություն, այսինքն մեկը մյուսի լրացումը չի դառնում, այլ երկու մասերը միանում են իբրև համազոր բառեր, ինչպես բաղհյուսական հարադրություններում, կամ ինչպես կրկնավորները,

օրինակ՝ տեղատարափ, իբրև՝ տեղ ու տարափ, ազգատոհմ—ազգ ու տոհմ, շեղջակույտ—շեղջ ու կույտ, եղջերվաքաղ—եղջերու և քաղ, ընձառյուծ—ինձ և առյուծ, ցլամարտ—ցուլ և մարտ, խուլակոպր—խուլ և կույր, գունդագունդ—գունդ գունդ, դեզադեզ—դեզ դեզ, շեղջաշեղջ—շեղջ շեղջ։

Սովորաբար բարդության բաղադրիչ մասերի հարաբերությունը ստորադասական *է. մասերից առաջինը ըստ իմաստի լինում է լրացում երկրորդի, այսինքն՝ բարդ բառի գլխավոր կամ հիմնական նշանակությունը երկրորդ մասի մեջ է, առաջինը միայն որևէ կողմից որոշում, լրացնում է երկրորդի իմաստը. օրինակ՝* ճացառուն, սևահող, մեծասիրտ, բացագլուխ, գլխաբաց, մեծապայծառ *վերածվում են՝ հացի տուն, սև հող, մեծ սիրտ ունեցող կամ մեծ սրտով, բաց գլխով, գլուխը բաց, մեծապես պայծառ (շատ պայծառ)։ Նույնպես* մարդասեր, արագավազ *բառերի հիմնական մասերն են՝ «սեր», «վազ», որ ունին սիրող, վազող բայածականների նշանակություն, իսկ* մարդ *և* արագ *նրանց լրացումներն են, իբր՝ մարդ սիրող, արագ վազող։ Այսպես և* մայրաքաղաք *մտածում ենք իբրև «մայր քաղաք» (ինչպես՝ մայր հող, մայր երկիր, մայր լեզու), իսկ* fաղաքամայր, *իբրև «քաղաքների մայր»։ Նույնպես* գյուղաքաղաք՝ *իբրև գյուղանման քաղաք, իսկ* fաղաքագյուղ—*գյուղ, որ քաղաքի նման է.* fաղաքաբերդ—*քաղաքի բերդ, իսկ* բերդաքաղաք—*բերդ ունեցող, բերդավոր, բերդի նման, կամ բերդի դեր կատարող քաղաք։ Նույնիսկ համանիշների բաղադրությունը մտածվում է երբեմն իբրև ստորադասական բաղադրություն, ինչպես՝ կերակուր (կեր ու կուր) մտածվում է իբրև ուտելու կուր. եկամուտ՝ իբրև եկած մուտ(ք), ազգատոհմ՝ իբրև «տոհմ ազգի», ինչպես սովորական է գրաբարում համանիշների գործածումը։*

Ամեն բարդ բառի նշանակություն կարելի է արտահայտել այսպես որևէ շարահյուսական կապակցությամբ։ Այդ դեպքում եթե առաջին բաղադրիչը դառնում է լրացում երկրորդի, կնշանակե բաղադրությունը կազմված է հայերենի բարդության կանոնով. հակառակ դեպքում՝ բառը կազմված է օտար լեզուների նմանողությամբ։ Օրինակ՝ ունինք հայերեն կազմությամբ սիրարժան, պատվարժան, *որ նշանակում են՝ սիրու արժանի, պատվի արժանի. բայց ունենք նաև հունաբան կազմությամբ՝* արժանահավատ, արժանապատիվ՝ *իբրև հավատքի արժանի, պատվի արժանի. սրանք օտարաբան կազմություններ են, փոխանակ հայկական «հավատարժան», «պատվարժան» կազմությունների։ Այսպես՝ օտարաբան կազմությամբ են նաև* ստեղծաբան, սիրաբան, *փոխանակ հայերեն* բանաստեղծ *(բանը ստեղծող),* բանասեր *(բան սիրող) բառերի. հայերենում* ստեղծաբան, սիրաբան *պետք է նշանակեին ստեղծական բան (խոսք), սիրու բան, սիրելու բան։*

Անվանական բաղադրությունների ներքևում դրված տեսակները պետք է տարբերել ըստ շարահյուսական հարաբերության։

98. Ա. Գոյականների, ածականների ու բայարմատների բարդություն գոյականների հետ:— *Կազմվում են գոյականներ. երկրորդ բաղադրիչը, որ գոյական է, պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչը,— լինի գոյական, ածական, թե բայարմատ,— ունի սեռականի կամ ածական վերադրի նշանակություն. օրինակ՝ 1) զորագունդ, անձրևաջուր, երկնակամար, ծովեզր—զորքի գունդ, անձրևի ջուր, երկնքի կամար, ծովի եզր. 2) սևահող, մեծամարդ, մթնագիշեր, չորաթան, վերնատուն, նորահարս—սև հող, մեծ մարդ, մութ գիշեր, չոր թան, վերին տուն, նոր հարս. 3) զբոսավայր, ածաման, պահաման—զբոսնելու վայր, ածելու աման, պահելու աման:*

Այս կազմությունները սկզբնապես գոյական են, բայց հետագայում նշանակության փոփոխությամբ գործածվում են նաև իբրև ածական, ստացական բաղադրության նշանակությամբ. օրինակ՝ առյուծասիրտ սկզբնապես ըստ կազմության նշանակում է՝ առյուծի սիրտ, բայց այժմ՝ առյուծի սիրտ ունեցող, առյուծի սրտով: Քաղցրածայն, սևահող և նմանները նշանակում են՝ 1) քաղցր ձայն, քաղցր եղանակ. սև հող. 2) քաղցր ձայն ունեցող, քաղցր ձայնով. սև հող ունեցող: Այսպես և՝ մեծամիտ, քարասիրտ, ողջանդամ, բազմամարդ, եռանկյուն, ծանրաբեռն և այլն: Չպիտի կարծել, թե ամեն այսպիսի բաղադրություն, որ ածականի նշանակություն ունի, սկզբնապես անպատճառ կազմվել և գործածվել է իբրև գոյական և հետո նոր իբրև ածական. մի անգամ որ լեզվի մեջ առաջ է եկել այդպիսի գոյականների կիրառությունն իբրև ածական, կարող են անալոգիայով նոր բառեր կազմվել հենց սկզբից ածականի կամ ստացական բաղադրության նշանակությամբ, և, ընդհակառակն, այս վերջին տեսակի բաղադրությունները կարող են հետագայում իբրև գոյական ևս գործածվել:

Ածականի նշանակություն ունեցող այսպիսի բաղադրությունները հաճախ վերջից մի ածանցական մասնիկ են ստանում, օրինակ՝ հարյուրամյա, հնգամյա, հրաշյա, երեքօրյա, այլազգի, երկսայրի, երկդիմի:

99. Բ. Գոյականների ու ածականների բաղադրություն ածականների հետ:— *Կազմվում են ածականներ. երկրորդ բաղադրիչը, որ ածական է, պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ առաջին բաղադրիչը երկրորդի լրացումն է, որ շարահյուսական կապակցությամբ արտահայտվում է հոլովներով և նախադրություններով ու հետադրություններով. օրինակ՝ լուսապայծառ—լույսի պես պայծառ, կամ լույսով պայծառ. մեծապայծառ—մեծապես պայծառ. ոտնաթեթև—ոտից թեթև. սրտաբաց—սիրտը բաց. այսպես և՝ դռնաբաց, մարդաշատ, հողաշատ, լուսամոտ, ջրամոտ (լույսի, ջրի մոտ), եռամեծ—երիցս մեծ, ջրառատ, մտամոլոր, ակնակուռ, հողախառն—հողի հետ խառն, երկնաբարձր—երկնքի պես, երկնքի չափ բարձր. մարդավայել, երկրամերձ, մտավարժ:*

100. Գ. Գոյականների և ածականների բաղադրությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ:— *Կազմվում են գոյականներ և ածական-*

ներ. վերջիններս կարող են նաև գոյականաբար գործածվել։ Բաղադրության երկրորդ մասն ունի առաջին դեպքում անորոշ դերբայի, ուրեմն մի վերացական անվան կամ **գործողության** անվան նշանակություն, իսկ երկրորդ դեպքում կամ մի ենթակայական դերբայի, ուրեմն **գործող անձի** անվան, կամ մի անցյալ դերբայի նշանակություն։ Բաղադրության առաջին մասը դառնում է լրացում երկրորդի՝ ամեն տեսակ հարաբերություններով, որ բաղադրության մեջ մտնող բայը կարող է ունենալ իր լրացումի նկատմամբ. ուրիշ խոսքով, բայի և իր լրացման ամեն տեսակի շարահյուսական կապակցություններ, որ արտահայտվում են հոլովներով և նախադրություններով ուետադրություններով, կարող են այսպիսի բարդություններով արտահայտվել։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել, որ բաղադրության առաջին մասի համար «ություն» վերջացած անունների փոխանակ առնվում են նրանց բնները, օրինակ՝ փոխանակ կազմելու սրբութենասեր կամ սրբություն-ասեր, մաքրութենասեր կամ մաքրություն-ասեր, մեծություն-ամոլ, իշխանություն-ասեր, փրկութենարար, կազմվում են՝ սրբասեր, մաքրասեր, մեծամոլ, իշխանասեր, փրկարար, որ կարող են նշանակել նաև՝ սուրբ սիրող, իշխան սիրող։

1) Վերացական անվան կամ **գործողության** անվան իմաստուվ բարդությունները համեմատաբար սակավ են, ինչպես գերեդարձ—գերիների դառնալը, զորաժողով—զորք ժողովելը (զորաժողով անել), զորակոչ—զորքի մեջ կանչելը, զինակոչ—զենքի կանչելը, մեռելաթաղ—մեռել թաղելը, այգեքաղ, այգեքաղ, այգեկութ—այգին քաղելը. այսպես և՝ բամբակաքաղ, խաղողաքաղ, ծաղկաքաղ. խոտհունձ—խոտ հնձելը. նախրաթող, հորթաթող, բանթող, գործադուլ—բանը, գործը թողնելը, դադարեցնելը. ջրհեղեղ—ջրի հեղեղ. ոտնալող—ոտով լողալը. գորտալող—գորտի պես լողալը. փորսող (անել, տալ)—փորի վրա սողալը. երկրաշարժ—երկրի շարժվելը. արևագալ, արևածագ, արևացայտ, արևամուտ—արեգակի ծագելը, մտնելը. լուսաբաց—լույսը բացվելը. աքլորականչ, հավախոս—աքլորի կանչելը առավոտյան դեմ. տերևաքափ, ծաղկաքափ—տերևները, ծաղիկները թափելը. ոտնափոխ, քայլափոխ—ոտը, քայլը փոխելը. ժամանց, մթնաշաղ, համտես, ձյունահալ(ք), լուսնահաչ և այլն։

Այս բառերից մի քանիսն ունեն և երկրորդական նշանակություններ, օրինակ՝ «արևածագ», «հավախոս» նշանակում են նաև այն ժամանակը, երբ արևը ծագում է, աքլորը կանչում է. ջրթող կամ ջրհատ—ջուր թողնելը, ջուրը կտրելը, այլև ջրաղացի ջուրը կտրելու այն տեղը, որով ջուրը ուրիշ կողմ են թողնում, երբ ուզում են որ ջրաղացը չբանի։

2) Շատ ընդարձակ տեղ ունին հայերենում **գործողի** անվան, կամ ածականի նշանակությամբ բարդությունները։ Առաջին բաղադրիչը, երբ ածական է, մակբայի նշանակություն է ստանում, ինչպես՝ բազմաշարշար—շատ չարչարված, արագագնաց—արագ գնացող, մշտաշարժ, հազ-

վագյուտ, մեծախոս։ Իսկ երբ առաջին մասը գոյական է, ստանում է գանազան հոլովների և նախադրությունների ու ետադրությունների նշանակություն։

Ուղղականի *նշանակությամբ, օրինակ՝ սրտամեռ—սիրտը մեռած, տիրամեռ, լեղապատառ—լեղին պատռած, ճյուղակոտոր—ճյուղերը կոտորած, տնաքանդ—տունը քանդված (տնաքանդ եղանք), տնաշեն—տունը շեն, այլև՝ տուն շինող, տունը շեն պահող. ալեկոծ, ձեռնհաս, միջաբեկ, ձեռնաբեկ—մեջքը, ձեռքը կոտրած.. անդամալույծ, տնանկ, հուսահատ, թևաթափ, ինքնաբույս, ինքնակոչ, խելքամաղ լինել (խելքը մաղվել) և այլն։—Բուն աշխարհաբար բայերի համար, որոնց արմատը կամ բունը չի գործածվում, վերջից ավելանում են «իկ կամ «ուկ» ածանցները, ինչպես՝ թևակոտրիկ, ճուղակոտրիկ (ծառ), թևախուզիկ (թեվերը խուզած)։*

Հայցականի և գանալան նախդիրների *նշանակությամբ, օրինակ՝ մարդատեր—մարդ տիրող. ձկնորս, մատենագիր, բարեգործ և այլն. գիշերագնաց—գիշերը, գիշեր ժամանակ գնացող. գիշերաշրջիկ, խավարամուտ. գետնմուտ—գետին մտնող. երկնընթաց—դեպի երկինք գնացող. ծովասույզ—ծովի մեջ սուզված. տարագնաց, տարադեմ—օտարության դիմող. երկնապիշ—դեպի երկինք նայող. երկնահաս—մինչև երկինք հասնող. բախտակոծ—բախտի վրա կոծող, լացող։*

Սեռականի *նշանակությամբ, սակավաթիվ բառեր, օրինակ՝ ջրատար, գետնատար—ջրի տարած, գայլակեր—գայլի կերած։*

Տրականի *նշանակությամբ, օրինակ՝ գրավարժ—գրի վարժված, խավարասովոր, երկնահոտ, երկրամած, գետնամած—գետնին կպած. մտահաճ, ինքնահաճ—ինքն իրեն, իր խելքին հավանող, ինքնահավան. ուշաբերել—ուշքի բերել. չափահաս—չափի հասած։*

Բացառականի *նշանակությամբ, օրինակ՝ երկրաբույս—գետնից բուսած, երկրաբուխ—գետնից բխած, հողածին—հողից ծնած, երկնահոս—երկնքից հոսած, երկնատեղաց. ուշագնաց—ուշքից գնացած. մտահան անել, խելքահան անել. պաշտոնանկ—պաշտոնից ընկած։*

Գործիականի *նշանակությամբ, օրինակ՝ ալեզարդ—ալիքով զարդարված, ձյունապատ—ձյունով պատած, հուսալից—հուսով լցված. ձեռագործ, ջրաղաց—ջրով աղացող, հողմաղաց, ջրարույժ—ջրով բժշկող։*

Ներգոյականի *նշանակությամբ, օրինակ՝ խավարաբնակ—խավարում բնակող. խավարաշրջիկ—խավարում շրջող. բարձրագնա—բարձրում գնացող. տնասուն—տանը սնված, մոխրաթավալ, գետնասող—գետնի վրա սողացող. գետնաքարշ—գետնի վրա քարշ եկող։*

Հաճախ միևնույն բարդությունը կարող է տարբեր նշանակություններով հասկացվել. օրինակ՝ լավատես՝ 1. լավը, լավ բանը տեսնող, 2) լավ տեսնող. ծովածուփ՝ 1. ծովում ծփացող, 2. ծովի պես ծփացող. ջրասուն՝ 1. ջրով սնվող, սնված, ինչպես կաթնասուն, 2. ջրի մեջ սրնվող ինչպես անասուն. ջրածին՝ 1. ջուր ծնող, բխող, 2. ջրի մեջ ծրնված, 3. ջրի ծնած, ջրից ծնված. երկնաթռիչ՝ 1. դեպի երկինք թռչող,

2. երկնքում թռչող. երկրաշարժ՝ 1. շարժ, 2. երկիր շարժող. երկնաչու՝ 1. դեպի երկինք չվող. 2. երկնքում չվող։ Այսպես «երկրալիր» նշանակում է՝ երկիրը լցնող, «հուսալիր» նշանակում է՝ հուսով լցված, իսկ «բերանալիր»—բերանը լցված, լիքը բերանով. երկնատարած—երկնքի պես տարածված, իսկ բազկատարած—բազուկները տարածած. երկնապիշ, երկրապիշ—դեպի երկինք, դեպի երկիր նայող. ակնապիշ—աչքերը պշած։

Պետք է նկատի ունենալ նաև նշանակության փոփոխությունը. օրինակ՝ դեղադիր՝ 1. դեղ դնող, 2. դեղադիր, ավելի՝ դեղդիր—այն գործիքը, շուղը՝ որով աչքերին դեղ են դնում. ջրմուղ՝ 1. ջուր մղող, 2. ջրի ճանապարհ խողովակներով. կովկիթ՝ 1. կով կթող, 2. այն ամանը, որի մեջ կովը կթում են, նույն և՝ կթիչ։ Սերեկ՝ 1. սեր գալը, երևսը սեր բռնելը, որից՝ սերեկել—երեսին բարակ խավ բռնել, ինչպես և ջրի երեսին բարակ սառույց բռնելը, 2. այն կաշին, որով խնոցու բերանը կապում են հարելիս և որի վրա սեր է գալիս։

Ինչպես ամեն մի շարահյուսական կապակցությունից, նույնպես և հարադրյալ բայերից ու դարձվածներից կազմվում են իսկական բարդություններ, հաճախ վերջից մի ածանցով. բայց երբ բայը ձայնավորով է սկսվում, և հարադիր մասն այնպիսի բառ է, որ ձայնափոխություն չի կարող կրել, այդ ժամանակ կցական և իսկական բաղադրությունները նույնանում են, և դժվար է ասել, թե ինչպես են առաջ եկել դրանք։ Այսպես են, օրինակ՝ ավելածու, ավելածում (ավել ածել). առաջարկ, առաջարկել. ակնարկ, ակնարկել. ձեռնարկ, ձեռնարկու (ձեռն արկել). ձայնարկու, ձայնարկել. սակարկություն, ակնառու, ակնառություն. թևանցուկ, նկատառում, առաջառում (առաջն առնել), փոխառու, փոխառություն (փոխ առնել) և այլն։ (Տե՛ս § 81 Կցական բարդություն հարադրական բայերից)։ Իսկական բարդություններ են հետևյալները, որոնք ձայնափոխությամբ են. գրանցում, գրանցել—գիր անցնել, գրի անցնել. գրարկել, գրարկում. հաշվառում, հաշվառու—հաշվի առնել. մտառու, մտառել, մտառություն (ի միտ առնուլ), մտածել (զմտավ ածել), մտաբերել—միտը բերել, ցուցադրել (ի ցույց դնել), մտադրել—մտքում դրնել. գլխահան անել—գլխից հանել և նմաններըւ

Գ

ԱՒԱՋԱԴԻՐՆԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

101. Առաջադիրներ:— Առանձին տեղ են բռնում մի քանի մակբայներով կամ նրանց արմատներով և մի քանի բայարմատներով ու մասնիկներով բաղադրությունները, որոնք մասամբ կազմված են ուրիշ լեզուների «նախաբայավոր» կամ նախդրավոր բաղադրությունների նմանությամբ և նույնիսկ երբեմն այնպես, որ, հակառակ մեր սովո-

րական բաղադրության եղանակին, երկրորդ բաղադրիչն է դառնում լրացում առաջինին։ Օրինակ՝ Միջագետք, արտակարգ, գերբնական, ստորերկրյա, *մակբայ նշանակում են գետերի մեջ (գետամեջ), արտաքո կարգի կամ կարգից դուրս, բնականից վեր (գեր քան բնական), գետնի տակի (գետնատակի), բայի վրա (դրվող). Միևնույն սովորական բաղադրության եղանակով դրանք պիտի նշանակեին՝ միջի գետեր (ինչպես՝ միջաբաղ—միջի բաղ), դրսի կարգ, գերապես բնական (ինչպես՝ գերամաքուր—չափազանց մաքուր), ստորին կամ տակի երկրի, վրայի բայ (ինչպես՝ մակերևույթ—վրայի երևույթ)։*

Այդ ձևական նշանակությամբ բառերի մի մասը՝ մեջ, վեր, վայր, առաջ, ետ, դեմ, շուրջ, *թե՛ գրաբարի և թե՛ աշխարհաբարի մեջ սովորական բառեր են, ետադրություններ կամ մակբայներ, որոնցով կազմվում են, ինչպես տեսանք, հարադրյալ բայեր և կցական բարդություններ (§§ 80. 2, 81). սովորական բառեր են նաև՝* փոխ, շար, նախ, ստոր, զույգ, *միայն բարդությունների մեջ սովորական նշանակությամբ չեն առնվում, ուրիշները՝* անդր, այսր, բաց *(ի բաց),* պար, գեր, թափ, տար, հար *(յար) գրաբարից են մտած նոր գրական լեզվի մեջ, բայց մենակ իբրև անկախ բառ չեն գործածվում, այլ միայն բաղադրությունների մեջ. գրաբարից են նաև մնացածները՝* առ, ներ, մակ, դեր, ենթ, հակ, համ *(համայն),* ճամ *(զույգ),* վեր *(վերստին),* տրամ, հեղ *(յեղ),* բաղ, *որոնք գրաբարում արդեն անկախ գործածություն չունեին. սրանք կամ կիրառությունից դուրս ընկած հին բառեր են, կամ մակբայների ու բայերի արմատներ։ Այս առաջադիր բառերի մի մասը դարձած են արդեն առաջադիր մասնիկներ կամ նախամասնիկներ (տե՛ս §§ 132, 133). այսպես են՝ ենթ, համ, տրամ և այլն։*

Այս ձևական բառերով ու մասնիկներով հունարենի հետևողությամբ բառեր են կազմած հունական դպրոցի թարգմանիչները՝ փիլիսոփայական լեզվի բառերը ճշտությամբ արտահայտելու համար։ Այդ բաղադրությունները մեծ մասամբ արվեստական են, բայց շատերն արդեն ընդհանրացված են և սովորական բառեր են դարձած, ինչպես՝ տարբերել, շարունակ, արտոնություն, արտագրել *և նմանները, և այժմ էլ դրանց անալոգիայով, մանավանդ գիտական և տեխնիկական լեզվի համար, նոր բառեր են կազմվում հետևողությամբ գերմաներենի ու ռուսերենի և հունարենի ու լատիներենի։ Այս լեզուների «նախաբայաւոր» կամ նախդրավոր կազմություններին, ուրեմն, հայերենում համապատասխան են՝ 1) հարադրական բայերը և նրանցից կազմված կցական բարդությունները (§§ 80. 2, 81). 2) նախդրավոր կազմությունները (§§ 89, 90) և 3) առաջադիրներով բարդությունները։ Օրինակ՝ ռուսերենի* под *նախդրն արտահայտում ենք՝ «տակ», «ընդ», «ստոր» բառերով և «ենթ» մասնիկով, ինչպես՝* տակը գծել, ընդգծել—подчеркивать, *հատակատակի, ընդհատակյա—*подпольный, *ստորագրել—*подписать, *ենթարկել—*подвергать։

102. Անդր,— գրաբարում նշանակում է՝ դեպի այնտեղ, այն կողմ. անդր քանզ—մի բանից այն կողմը, դենը։ «Անդրէն» նշանակում է նորից, եւս։ «Այսր» նշանակում է դեպի այս կողմը, դեսը—«Անդր» բառով կան հետեւյալ կազմութիւնները՝ Անդրավարտիք—այն կողմի, դենի, այսինքն՝ տակի վարտիք. Անդրաքայլել—քայլել՝ մի բանից, մի բանի վրայով դենն անցնել. Անդրաձգութիւն, անդրաձիգ, անդրաձգել—մի բանից, մի բանի վրայով դենը ձգել. Անդրափոխել—մի բանից, մի տեղից դենը, անդին փոխել. Անդրահանում—1. այն կողմ հանել. 2. վերահանում, մի նկար մի ուրիշ բանի վրա հանել նման ձեւով. Անդրանցում—այն կողմը, դենն անցնել. Անդրաձայնել—եւս ձայնել, արձագանքել. Անդրադառնալ, անդրադարձնել, եւս դառնալ, եւս դարձնել.—անդրադարձ, անդրադարձութիւն. Անդրաթռիչք—մի բանի վրայով դենը թռչելը։

Օտարաբան կազմութեամբ՝ առանց հոդակապի՝ Անդրկովկաս—անդրը քան զԿովկաս, Կովկասից այն կողմը, դենը, Ռուսաստանի նկատմամբ. մեզ համար՝ Այսրկովկաս, իսկ Անդրկովկաս պիտի հասկացվելի Հյուսիսային Կովկասը։ Անդրկովկասյան, անդրկասպյան, անդրալպյան, անդրհենյան, անդրատլանտիկ, անդրօվկիանյան, անդրխաղաղական, անդրվոլգական, անդրջրհեղեղյան (նախաջրհեղեղյան), անդրգերեզմանյան, անդրգերեզմանական (եւգերեզմանական)։ Կան նաեւ՝ այսրկովկասյան, ալպրալպյան, այսրդանուբյան եւ նմանները։ Այս բառերը գծիկով էլ են միացնում՝ անդր-ատլանտիկ, անդր-գերեզմանական։

103. Առաջ,— նշանակում է՝ 1. սկիզբ, 2. առաջ, առջև, առջեւի կողմ, 3. դեպի առաջ՝ տեղական նշանակութեամբ։ Հականիշ են՝ ԵՏ. ՎԵՐՋ։ Գրվում է գրաբարում «առաջ» և «յառաջ», աշխարհաբարում՝ «առաջ»։ Տե՛ս համանիշ ՆԱԽ *(§ 119)*։

1) Առաջաբան— սկզբի խոսք. հականիշ՝ վերջաբան. համանիշ՝ նախաբան—առաջին խոսք։ 2) Առաջակողմ—առջևի կողմ. հականիշ՝ վերջակողմ. առաջանիստ, առաջապահ, հականիշ՝ վերջապահ. առաջամարտիկ, առաջասուն, առաջակաց։ 3) Առաջագայել—առաջ գալ, առաջաբերել—առաջ բերել, առաջադասել—առաջ դասել, առաջադաս, հականիշ՝ ետադաս. առաջադիմել, առաջադեմ, հականիշ՝ ետադիմել. առաջադրել, առաջադիր. առաջխաղացութիւն, հականիշ՝ ետխաղացում. առաջահայաց, հականիշ՝ ետահայաց. առաջածիգ, առաջամատույց, առաջամուխ, առաջատարութիւն, առաջարկել, առաջընթաց։ (Համմտ. § 81. Կցական բարդութիւն հարադրական բայերից—առաջքաշում, առաջշարժում, առաջխաղացում)։

104. Արտ,— արմատ «արտաքս» բառի, նշանակում է՝ դուրս, դրսում։ Հականիշ՝ ՆԵՐ։ Այսպես կազմված են՝ արտածել, արտահանել, արտաբերել, արտաբխել, արտաբնակ, արտագոչել, արտագրել, արտագաղթել, արտադրել, արտազեղել, արտաթորել, արտահոսել, արտակարգել, արտաթափել, արտահայտել, արտանկարել, արտաշնչել, արտա-

ություն, արտասանել, արտասփռել, արտավիժել, արտատպել, արտացոլել, արտագծել, արտաքնաց, արտամերժել, արտահալածել և այլն։

Օտարաբան կազմություններ՝ արտուղի, արտասահման, արտակենտրոն, արտակարգ, արտասովոր, արտաժամյա, արտերկրյա, արտակուսակցական, արտադպրոցական։

105. Բաղ,— *նշանակում է՝ միասին, իրար հետ. արմատ «բաղել», «բաղբաղել» բայի, որ նշանակում է՝ կցել, կցկցել։ Համանիշ՝ ԿԻՑ, ՀԱՄ (§§ 112, 183)։ Օրինակ՝ բաղադրել, բաղաձայն, բաղդասել, բաղդատել. բաղկանալ (բաղկացություն), բաղհյուսել, բաղկապել։ Համմտ. ՇԱՒ (§ 121)։*

106. Բաց,— *գրաբարի «ի բաց» մակբայից, որ նշանակում է՝ հեռու, մի կողմ։ Համանիշ՝ ՏԱՐ, Դեն, ԵՏ, ԴՈՒՐՍ (§ 80). հականիշ՝ ՄՈՏ (§ 80) և ԱՌ նախադրն իբրև նախաբայ (§ 90)։ Գրաբարում հաճախ իբրև հարադիր զանազան բայերի, ինչպես՝ ի բաց գնալ, ի բաց մերժել, ի բաց անջատել, ի բաց դնել, ի բաց արկանել, փ բաց թողուլ (բաց թողնել), ի բաց փախչել, ի բաց մերկանալ, ի բաց հանել։ Բարդ ձևով՝ բացականչել, բացակայել, բացասել, բացառություն, բացագնալ, բացադրնաց լինել, բացագնացություն, բացադրել, բացալքել, բացահալածել, բացահանել, բացահոսել, բացածիգ, բացամերժել, բացանավել (բացը նավել), բացաքայլել, բացընկեցիկ։*

107. Գեր,— *նշանակում է՝ 1. վեր, ավելի քան. 2. գերագույն, բարձր աստիճանի։ Հականիշ՝ ԹԵՐ, ԹԵՐԱ, ՍՏՈՐ։ Օրինակ՝ գերակատար, հականիշ՝ թերակատար. գերադասել, հականիշ՝ ստորադասել. գերագնահատել, հականիշ՝ թերագնահատել. գերադրական, գերազանց (ել), գերազարդ, գերազոր, գերալիր, հականիշ՝ թերալիր. գերալույս, հականիշ՝ թերալույս. գերածավալ, գերակա, գերաճում, հականիշ՝ թերաճում. գերաշնորհ, գերաքանակ, գերմարդ, գերակարգել, գերահռչակ, գերահրաշ, գերաձգել, գերամաքուր, գերամեծար, գերահաղթ, գերասքանչելի, գերատարած, գերածավալ, գերարժանի, գերափայլել, գերապայծառ, գերապանծ, գերապատիվ, գերաստիճան, գերիշխանություն, գերիմաստ, գերարտադրություն, հականիշ՝ թերարտադրություն. գերակըշռություն, գերածախք։ Օտարաբան կազմությամբ՝ գերմարդկային, գերբնական։*

108. Դեմ,— *նշանակում է՝ «ընդդեմ», օրինակ՝ դիմադրել, դիմախոսել, դիմաբանել, դիմահարել, դիմաբախում, դիմագրավել, դիմամարտ, դիմակաց և այլն։ Կան նաև՝ ընդդիմադրել, ընդդիմաբանել և այլն։*

109. Դեր,— *նշանակում է՝ փոխանակ, համանիշ՝ ՓՈԽ. ինչպես՝ օտարաբան կազմությամբ՝ դերանուն, դերբայ, դեր-գնդապետ, դեր-նահանգապետ, դեր-ծովակալ, դեր-հիպատոս, դեր-նախագահ։ Սովորականն են՝ փոխ-գնդապետ, փոխ-նախագահ, փոխ-ծովակալ և այլն։*

ՁՈՒՅԳ,— տե՛ս ՀԱՄ (§ 112)։

ԹԱՓ, ԹԱՓԱ,— տե՛ս § 133.1։

109. բ. Թեր, թերա,— *«թերի» բառը, այժմ իբրև մասնիկ, հակառնիշ «ԳՆՐ»առաջադրին, օրինակ՝ թերասություն, թերատեսություն, թերալսել, թերակատարել և այլն. Տե՛ս նաև § 107 «ԳՆՐ» մասնիկի մեջ։*

ԿԱՆՈՒԽ,— տե՛ս ՆԱԽ (§ 119.3)։

110. Հակ,— *նշանակում է հակառակ, հականիշ ՀԱՄ (§ 112). օրինակ՝ հակաբանել, հակադարձ, հակադրել, հակակա, հակակրել, հակակշիռ, հակաճառել, հակամարտել, հակասել, հակազդել, հակաշրջել, հակագրոհ, հակահարված։*

Ստուարաթև կազմությամբ՝ հակազգային, հակաթոքախտային, հակապետական, հակահեղափոխական, հակամարդկային, հակօրեն և այլն։

111. Համ, համայն,— *նշանակում է՝ ամեն, բոլոր, ՀԱՆՐԱ. օրինակ՝ համահայաստանյան, համայն հայաստանյան. համաշխարհային, համամարդկային—հանրամարդկային, համահայկական, համալսարան, համաջինջ, համասիրտ, համատարած, համայնատարած, համազգեստ, համապարփակ, համադարման, համախոսական, համազգային։*

112. Համ,— *նշանակում է՝ 1. նույն, մի. հականիշ՝ ԱՅԼ, ՏԱՐ, ՀԱԿ. 2. միասին, համանիշ՝ ՋՈՒԳԻ։ 1) Համազոր, համազգի, հականիշ՝ այլազգի. համալեզու, համահայր, համակամ, համահասակ, համամիտ, համանուն, համապատիվ, համաշխարհիկ, համաձև, համաչափ, համակերպել, համագործ, համակարծիք, համակրել, հականիշ՝ հակակրել. համադասել, համադրել, համախոհ, համաձայնել։ 2) Համագումար, համաժողով, համընթաց, համախմբել, համաթվել, համադրել, համերաշխ։*

Այս 2-րդ իմաստով բարդվում են նաև «զույգ» բառով, օրինակ՝ զուգադրել, զուգակշիռ, զուգահեռական, զուգընթաց, զուգադասել և այլն։

113. Հար,— *(գրաբարում՝ յար) արմատ «հարել» (գրաբար՝ ყարել) բայի, որ նշանակում է՝ կցել, միացնել, կպցնել. բարդության ժամանակ՝ մոտ, հետը, կիպ, կից. օրինակ՝ հարադրել, հարակարգել, հարակից, հարակցել, հարաբերել, հարաբերություն, հարախառնել, հարահյուսել, հարանոն (հարակից անուն), հարախմբում, հարաշար, հարասել և այլն։*

Ձպիտի շփոթել «հար» (գրաբար՝ յար) բառի հետ, որ նշանակում է «միշտ», օրինակ՝ հարատև, հարաժամ, հարակա և այլն։

114. Հեղ,— *արմատ «հեղել» (գրաբար)՝ յեղուլ) բայի, որ նշանակում է՝ փոխել, շուռ տալ. իբրև մասնիկ՝ ցույց է տալիս շուռ տված ձեվով մի բան անել. օրինակ՝ հեղաշրջել, հեղափոխել, հեղադարձել, հեղաշարժել, հեղակարգել, հեղաստեղծել, հեղակերտել, հեղակազմել։*

ՀԵՏ,— տե՛ս ԵՏ (§ 118)։

115. Մակ,— *նշանակում է՝ ՎՐԱ, ՎԵՐԱ, որով երբեմն էլ փոխա-*

նակվում է. օրինակ՝ մակաբնակ—վերաբնակ, վերաբնակիչ. մակակոչել —վերակոչել, մակատեսուչ—վերատեսուչ. տրանցից գործ են ածվում «վերա» բառով կազմվածները։ Սովորական են հետևյալները՝ մակաբերել, մակագիծ, մակագծել, մակագիր, մակագրել, մակդիր, մակադրել, մակածել, մակածություն, մակերևույթ, մակերես, մակընթացություն, մակաբույծ և այլն։

Օտարաբան կազմությամբ՝ մականուն, մակբայ։

116. Մեջ,— *1. մի բանի մեջ, 2. երկու բանի մեջ, միջև, մեջտեղը։ Բայերի հետ՝ միջածել—մեջ բերել. միջադասել—մեջը դասել. միջակըտուր անել—միջից կտրել. միջամուխ լինել, միջամխել—մեջը մխվել. միջամուտ լինել, միջամտել—մեջ մտնել. միջարկել, միջարկություն—մեջը ձգել. միջանկյալ—մեջ ընկած, միջանցք, միջանցիկ. միջադրել—մեջը դնել. միջախառնում—մեջը խառնվել (մի բանի), միջընթացիկ—մեջը մտնող, միջառում—մեջ առնելը, մեջառում. միջակա—մեջը եղածը, ներկա։*

Օտարաբան կազմությամբ, *օրինակ՝ Միջագետք—գետամեջ, միջակողք—կողամեջ. միջակուրծք—կրծամեջ, միջածով—ծովամեջ. միջերկրյա—երկրամեջ, միջաթիկունք—թիկնամեջ, միջանիվ—անվամեջ. միջօրյա, միջօրեական, միջկուսակցական, միջֆակուլտետային, միջակողային—կողամիջյան, միջազգային—զանազան ազգերի մեջ («ազգամիջյան»—միևնույն ազգի մեջ)։ Այժմ կցական բարդություն է կազմվում նաև առանց ձայնափոխության, օրինակ՝ մեջֆակուլտետային, մեջկուսակցական։*

Անունների հետ առնվում է թե՛ «մեջ» և թե՛ «միջին» բառը, օրինակ՝ միջակետ, միջավայր, միջադեպ, միջահասակ, միջնաբերդ, միջնատուն և այլն։

ՄԻՆՉ,— տե՛ս Նախ (§ 119.2)։

117. Ենթ,— *նշանակում է՝ «տակը». համանիշ՝ ՍՏՈՐ (2-րդ նշանակությամբ), օրինակ՝ ենթագրել (տակին գրել), ենթադատություն, ենթադրել, ենթածել, ենթակա, ենթակարգել, ենթակացություն, ենթաձգել (տակը ձգել), ենթարկել, ենթագծել, ենթասպա, ենթա-բաժանմունք, ենթա-կոմիտե և այլն։*

118. Ետ, հետ,— *նշանակում է դեպի ետ (հետ), ետև, այլև՝ հետո. հականիշ՝ ԱՌԱՋ. Նախ։ Այսպես կազմված են՝ 1) ետադարձ, ետադիմել, հականիշ՝ առաջադիմել. ետադասել, հականիշ՝ նախադասել. ետամնաց, ետաշարժ, ետաշրջել, ետանկում—ետ ընկնելը. ետարկել—ետ ձգել, ետաձգել (հետաձգել), ետադրել, ետադրություն—ետ դնել, հականիշ՝ նախադրություն։*

Օտարաբան կազմությամբ՝ *ետ-հեղափոխական, ետ-ճաշյա, ետ-մահյա, ետ-կեսօրյա, ետ-պատերազմյա, ետ-պատերազմական։*

Չպիտի շփոթել **հետ, հետո** *(զհետ) բառի հետ, որով կազմված են՝ հետագա, հետազոտել, հետախույզ, հետահաս լինել, հետամտել, հե-*

տապնդել (զհետ պնդել), հետավար լինել, հետավարել, հետահարձակում (զհետ հարձակում)։

119. Նախ,— *նշանակում է՝ առաջին, սկզբի, ժամանակով ամենից առաջ։ Համանիշ՝ ԱՌԱՋ, հականիշ՝ ԵՏ, ՎԵՐՋ։ 1) Նախաբան—առաջին խոսք. հմմշ. առաջաբան. նախաբժիշկ—առաջին բժիշկ. նախադուռն, նախամուտք, նախաճաշ(իկ). նախապատճառ—սկզբնապատճառ, առաջին պատճառ։ Նախատիպ—սկզբնատիպ, առաջին տիպ. նախալեզու—սկզբնական, առաջին լեզու. նախաշավիղ, նախապարիսպ, նախասկիզբն, նախընթրիք (նախընթրակ), նախատոն (նախատոնակ), նախօր, նախօրեք, նախանկար, նախարդակ և այլն։*

«Նախ» *բառն իր նշանակությունը պահում է նաև բայաբների կամ արմատների և ածականների հետ բարդված ժամանակ, ինչպես՝ նախագիծ—առաջին, սկզբնական գծագրություն. նախագյուտ—առաջին գրտնող, նախագյուտ լինել—առաջին գտնող, այլև՝ ամենից առաջ գտնված լինել. նախամեծար և այլն։*

2) Ստացական նշանակությամբ (տե՛ս § 98), օրինակ՝ նախագահ—առաջին գահն ունեցող. նախապատիվ—առաջին պատիվն ունեցող. նախաստիճան, նախաձեռն, որից՝ նախաձեռնել, նախաձեռնություն—առաջին ձեռք ունեցող, այսինքն՝ առաջին ձեռք զարնողը, ձեռնարկողը լինել։

Օտարաբան *բաղադրություններ են՝ նախապատմական, նախաջրհեղեղյան, նախահայկական (հայերից առաջ), նախապատերազմյան, նախապատերազմական, նախկեսօրյա, նախադպրոցական։ Հականիշ՝ ետպատերազմյան, ետ-կեսօրյա։*

Ծանոթ.— *Ռուսերենի ազդեցությամբ վերջերս գործածվում են՝ մինչ-պատերազմյան, մինչ-դպրոցական և նմաններըւ*

3) Գրաբարում ԱՌԱՋ բառն էլ նշանակում է նաև՝ ժամանակով առաջ, առաջուց, համանիշ՝ ԿԱՆՈՒԽ, ԿԱՆԽԱՎ։ Այս նշանակությամբ բազմաթիվ բառեր կան մեր հին լեզվի մեջ «առաջ» բառով կազմված։ Նոր լեզվի մեջ, սակայն, «առաջ» և «նախ» ենթարկված են նշանակության տարբերակման. «առաջ» բառը պահվում է գլխավորապես տեղի իմաստի համար, իսկ «նախ՝» բացի ժամանակով առաջին, սկզբնական նշանակությունից, ունի նաև առաջուց, կանխավ նշանակությունը, դարձյալ ժամանակի իմաստով։ Այսպես՝ հին լեզվի մի քանի նույնանիշներ «առաջ» և «նախ» բառերով՝ այժմ տարբեր նշանակություն ունին. օրինակ՝ առաջամարտիկ, նախամարտիկ. առաջակարգել, նախակարգել. առաջանիստ, նախանիստ, առաջակառույց, նախակառույց. առաջագնաց լինել, նախագնաց լինել. առաջածիգ, նախածիգ. առաջընթաց, նախընթաց. առաջահայաց, նախահայաց. առաջահրավեր, նախահրավեր. առաջացում, նախանցում և այլն։ Մինչդեռ առաջինները «առաջ» բառով՝ նշանակում են՝ առաջի կողմում կռվել, կարգել, նստել. առաջ գնալ,

ձգել, ընթանալ, նայել, հրավիրել, անցնել—երկրորդները «նախ» բառով՝ նշանակում են ժամանակով առաջինը կամ առաջուց կուվել, կարգել, նայել, ձգել և այլն, ինչպես և՝ «նախահարձակ լինել» նշանակում է առաջին հարձակվողը լինել։

«Առաջ» բառով կազմված շատ բառեր այլևս չեն գործածվում, այլ միայն «նախ» բառով կազմվածները՝ «առաջուց», «կանխավ» նշանակությամբ, օրինակ՝ նախագուշակել—կանխագուշակել, նախագետ—կանխագետ, նախածանոթ—կանխածանոթ, նախապատրաստել, նախազգուշացնել, նախահոգալ, նախատեսել, նախիմաց, նախապաշարմունք և այլն։ Այսպես և ԿԱՆՈՒԽ բառով՝ կանխակալ, կանխամուտ, կանխահավան, կանխավճար, կանխադրամ և ուրիշները։

120. Ներ,— արմատ «ներս», «ներքս» բառի, ներ և ներա ձևով։ Նշանակում է՝ ներս, ներսում, ինչպես՝ ներածել (ներս բերել), ներարկել, ներգործել, ներդաշնակ, ներգրավել, ներբերում, ներխուժել, ներշնչել, ներմուծել, ներաոյալ, ներփակել, ներհոսել, ներունակ, ներհյուսել, ներսուզվել, ներգաղթ, ներանկում, ներաբնակ, ներագրել, ներակերտել, ներակրթել, ներածիգ, ներդրում։

Օտարաբան կազմությամբ՝ ներծովային, ներկուսակցական (միևնույն կուսակցության ներսում, մինչդեռ «միջկուսակցական»—զանազան կուսակցությունների միջև)։

121. Շար, շաղ,— առաջինը «շարել» բայի արմատն է, ունի «միասին», «կից» բառի նշանակությունը. այժմ ըմբռնում ենք ավելի իբրև «շարքով»։ Համանիշն է «շաղ», արմատ «շաղել» (կապել, միացնել, կպցնել) բայի. անգործածական է. սովորական է միայն «շաղկապ» բառը։ «Շար» բառով կազմված են՝ շարագրել, շարադրել, շարադասել, շարակցել, շարակարգել, շարահյուսել, շարահարել, շարապատմել, շարունակել, շարածգել, շարաբանել։ Համանիշ՝ ԲԱՂ (§ 105)։

122. Շուրջ,— նշանակում է՝ 1. շուրջանակի, չորս կողմ, համանիշ՝ ՊԱՐ, 2. շուռ տալով. օրինակ՝ շրջաբանել—խոսքը շուռ տալով ասել. շրջաբնակ— շուրջը, չորս կողմը բնակվող. շրջագայել, շրջագրել, շրջադարձել, շրջահայաց, շրջահոսել, շրջապահ, շրջապատել, շրջանցել, շրջառել, շրջապատնիշել, շրջապնդել, շրջարկել, շրջազգեստ, շրջադարձ, շրջակտուր, շրջաշափուքյուն, շրջապարիսպ։

123. Պար,— նշանակում է՝ շուրջը, չորս կողմը։ Համանիշ՝ ՇՈՒՐՋ։ Գործածվում են միայն մի քանի հին բարդություններ, օրինակ՝ պարբերել, պարբերություն, պարագա, պարունակել, պարագիծ, պարագծել (շրջագիծ, շրջագծել), պարագրել, պարածածկել, պարադիտել (շրջադիտել), պարահայաց (շրջահայաց), պարակտրել (շուրջ կտրել, շրջակտրել), պարահատում (շրջահատում), պարապնդել (շրջապնդել), պարապտուտկել (շրջապտուտկել), պարառել (շրջառել), պարազարդել (շրջազարդել), պարագոտի, պարապատել—շուրջը պատել։

124. Ստոր,— նշանակում է՝ ցած, տակը. համանիշ՝ ՆՆԹ, ՎԱՅՐ,

հականիշ՝ ՎԵՐ։ Օրինակ՝ 1. ստորաբնակ (վայրաբնակ), ստորաքարշ, ստորաթորել, ստորակետ, ստորանկում, ստորարկել. 2. ստորաբաժանել (ենթաբաժանել), ստորագրել, ստորադրել, ստորակա, ստորոգել, ստորակաց։

Ստարաբան կազմությամբ՝ *ստորերկրյա (գետնատակի), ստորլուսնյա (ընդլուսնյա), ստորջրյա։*

125. Վայր,— նշանակում է՝ *վար, ցած։ Համանիշ՝ ԵՆԹ, ՍՏՈՐ հականիշ՝ ՎԵՐ։ Օրինակ՝ վայրաբերել, վայրաբերում, վայրադասել, վայրահայաց, վայրաձիգ, վայրաքարշ, վայրէջք, վայրանկում։*

126. Վեր,— նշանակում է՝ *1. դեպի վեր, վերևում, վերևից, հականիշ՝ ՍՏՈՐ, 2. վրա, 3. վերստին, նորից։ Միևնույն բառը երբեմն այս երեք տարբեր նշանակություններն էլ ունենում է. աշխարհաբարում սովորական է ավելի վերստին նշանակությունը։ Օրինակ՝* **վերաբազմել, վերաճստել**—*1. վերը, վերևում նստել, 2. վրան բազմել, նստել, 3. նորից բազմել, նստել.* **վերաբերել**—*1. վեր բերել, վեր հանել, 2. գրաբարում՝ վրան կրել, ունենալ, ապա՝ մեկին պատկանել, 3. վրա բերել.* **վերաբնակել**—*1. վերը, վերևում բնակվել, 2. վերստին բնակվել.* **վերադիտել**—*1. դեպի վեր դիտել, 2. վրան դիտել, 3. վերստին դիտել.* **վերադրել**—*1. վերը դնել, վեր դնել, 2. վրան դնել.* **վերաքոչել**—*դեպի վեր քոչել. վերևում քոչել.* **վերածագել**—*վերևում, վերևից ծագել.* **վերակա**—*1. վերևում եղած, 2. վրան եղող։*

1) «Վեր», դեպի վեր իմաստով են նաև հետևյալները, որոնք կարող են նաև «վերստին» նշանակություն ունենալ. վերագնաց, վերադաս(ել), հականիշ՝ ստորադաս(ել). վերակոչել, վերածխել, վերականգնել, վերահայաց, վերահնչել, վերամփոփել, վերաշնչել, վերասլանալ։

2) «Վրա» նշանակությամբ են, ժողովրդական է ՎՐԱ ձևով. օրինակ՝ **վերագրել**—*վրան գրել, մակագրել, ապա՝ ընծայել մեկին մի բան.* **վերածել** *(մի բան մի բանի).* **վերապահել** *(մեկին մի բան).* **վերակարգել, վերակացու, վերահասու, վերատեսուչ, վերագիր, վերադիր, վերարկել** *(որից՝* **վերարկ, վերարկու***),* **վերահսկել**։

3) «Վերստին» նշանակությամբ, երբեմն ՎԵՐ ձևով. օրինակ՝ **վերաբորբոքել, վերադառնալ, վերածնել, վերպատմել, վերաստեղծել, վերանորոգել, վերագնահատել, վերակազմել, վերակենդանանալ, վերահաստատել, վերամշակել, վերաշինել, վերանվանել, վերարտադրել, վերհիշել, վերլուծել, վերստուգել**։

Նշ.— *Գրեթե բոլոր բայերի հետ «վեր» առաջադիրը կարող է «վերստին» նշանակությունն ունենալ։*

127. Տար,— նշանակում է՝ *«օտար». բաղադրության մեջ նշանակում է՝ 1. տարբեր, օտարոտի, 2. հեռու, դեն, դուրս, Համանիշ՝ ԱՅԼ, ԲԱՅ. հականիշ՝ ԲԱՂ, ՀԱՄ (§ 112.2-րդ նշանակությամբ)։*

1) «Տարբեր», «օտարոտի» նշանակությամբ՝ **տարաձայն(ություն)**, *համանիշ՝* **այլաձայն**, *հականիշ՝* **համաձայն, բաղաձայն. Տարախոհ** (ու-

թյուն), համանիշ՝ այլախոհ, հականիշ՝ համախոհ. Տարախոս(ություն), հականիշ՝ համախոս. Տարակենտրոն, հականիշ՝ համակենտրոն. Տարաբան, հականիշ՝ համաբան. Տարամիտ, տարամտություն, համանիշ՝ այլամիտ—1. տարբեր մտածություն, հականիշ՝ համամիտ, 2. տարօրինակ, օտարոտի մտածություն. Տարադատել—1. տարբեր կերպով դատել. հականիշ՝ համադատ, 2. օտարոտի կերպով դատել. Տարազարդ—1. տարբեր զարդ(ով), հականիշ՝ համազարդ, 2. օտարոտի զարդ. Տարազգեստ—1. տարբեր զգեստ(ով), հականիշ՝ համազգեստ, 2. օտարոտի զգեստ, 3. ապազգեստ. Տարագործ, համանիշ՝ այլագործ—1. տարբեր գործող. հկնշ՝. համագործ, 2. տարօրինակ, օտարոտի գործ. Տարաձև, համանիշ՝ այլաձև—1. տարբեր ձևով, հկնշ.՝ համաձև, 2. օտարոտի ձև(ով), տձև(ություն). Տարաշնորհ—օտարոտի շնորհքով, անշնորհ, տձև. Տարակարծ. տարակարծիք—1. այլակարծիք. հականիշ՝ համակարծիք, 2. կարծիքից դուրս, անկարծելի բան. օտարոտի, անհավանական կարծիք (պարադոքս)։

2) «Օտար», «հեռու». «դես ու դեն», «զանազան կողմեր» նշանակությամբ, օրինակ՝ տարաշխարհ—օտար աշխարհ. տարաբնակ(ություն)—օտար, հեռու տեղ բնակել. տարագրել—գրել օտար տեղ քշելու, աքսորել. տարագնաց լինել—օտար տեղ գնալ. տարափոխիկ—օտար տեղ տեղափոխվող. տարադեմ գնալ, տարադիմություն—օտարություն դիմելը. տարափախչել—հեռու փախչել. տարահնչել, տարափողել—հեռու հնչել, զանազան կողմեր փողել. տարաձիգ, տարաձգել—հեռու ձգել, բացաձգել. դես ու դեն ձգել, տարամերժել—բացամերժել. տարակաց, տարակաց—հեռու եղող, բացակաց. տարորոշել—բացորոշել։ Այսպես կազմված են նաև տարածել, տարբերել, տարակուսել և այլն։ Նոր կազմված են՝ տարկետում, տարանցում, տարանկում—զանազան մասերի բաժանում, քայքայում. տարարկել, տարատեղել—այս ու այն կողմերում տեղավորել. տարալուծել—բացալուծել, զանազան մասերի լուծել, բաժանել։

Օտարաբան կազմությամբ՝ *ունի «դուրս» բառի և բացասական մասնիկի նշանակություն. օրինակ՝ 1. տարահասակ—տարբեր հասակ(ով), հկնշ.՝ համահասակ, 2. հասակից դուրս, տհաս (հասակով). տարակասկած—կասկածից դուրս, ապակասկած, տարակարծ. տարադեպ—անդեպ, անպատշաճ. տարագիծ—գծից դուրս. տարաբուն—բնությունից դուրս. տարաժամ—ժամանակից դուրս, անհարմար ժամանակ. տարատողել—տողից, կարգից դուրս հանել. տարասահման(ել)—սահմանից դուրս (հանել). տարապայման—պայմանից, չափից դուրս. տարապարտ—պարտքից դուրս, զուր տեղը. տարօրեն—օրենքից դուրս. տարօրինակ—օրինակից դուրս, անօրինակ։*

128. Տրամ,— *նշանակում է՝ սերտ, պինդ, իբրև բաղադրության մասնիկ՝ այս և այն կողմ(ից). մի կողմից, մի ծայրից մինչև մյուսը։ Այսպես կազմված են՝ տրամաբան(ություն), տրամագիծ, տրամադիր*

դիագրամմա), տրամաչափ (դիամետր), տրամանկյուն (դիագոնալ), տրամախոսություն (դիալոգ), տրամալար, տրամադատել, տրամադրություն—այս ու այն կողմ դնել, ապա հոգեկան տրամադրություն. տրամմամիտ, տրամալուծել, տրամազարդություն, տրամախոհել, տրամաշերջել, տրամորոշել, տրամատապավորել. տրամատել—մի կողմից մինչև մյուսը կտրել, տրամատ (պրոֆիլ, կտրվածք), տրամանցիկ—մի կողմից մյուսն անցնող։

129. Փոխ,— *արմատ «փոխել» բայի. նշանակում է՝ փոխ, փոխարեն, որից փոխ տալ, փոխ առնել. փոխատու, փոխառու, փոխապարտ (փոխ պարտ եղող), փոխադարձ—փոխարենը ետ դարձնող, փոխարկել—փոխ ձգել. փոխազգեստ—փոխելու զգեստ։ Իբրև բաղադրության մասնիկ բայերի հետ նշանակում է՝ 1) փոխելով կամ փոխած ձևով անել, 2) մեկից կամ մի տեղից առնելով ուրիշին տալ, ուրիշ տեղ դնել, կարգել և այլն. օրինակ՝ փոխավաճառություն—փոխելով, փոխանակելով վաճառել, ապրանքների փոխանակություն. փոխադրել—մի տեղից մի ուրիշ տեղ դնել, ապա՝ մի տեղից մի ուրիշ տեղ կրել, տանել. փոխակրել—մի տեղից կրել ուրիշ տեղ. փոխատրել—մեկից առնել ուրիշին տալ. փոխաբերություն—մի տեղից մի ուրիշ տեղ բերել, ապա՝ մի նշանակությունից մի ուրիշին անցնել. փոխագրել—1. մի տեղից մի ուրիշ տեղ գրել, օրինակել, 2. մի ուրիշ կերպ, փոխած ձևով գրել. փոխանցել—մի տեղից ուրիշ տեղ անցնել, անց կացնել. փոխաբնակվել—մի տեղից ուրիշ տեղ բնակվել, բնակափոխություն. փոխատնկել—մի տեղից ուրիշ տեղ փոխելով տնկել։*

Այսպես կազմված են նաև փոխատեղել, փոխակարգել, փոխադասել, փոխակերտել, փոխաստեղծել, փոխաձուլել, փոխակազմել, փոխակերպել, փոխաձևել—որ նշանակում են մի տեղից մի ուրիշ տեղ փոխելով, կամ փոխած ձևով՝ զետեղել, կարգել, դասել, կերտել, ստեղծել, ձուլել, կազմել, կերպարանել, ձևել։ Դրանց փոխանակ գործ են ածվում, սակայն, ավելի տեղափոխել, կարգափոխել, դասափոխել, կազմափոխել, կերպարանափոխել (կամ՝ այլակերպել), ձևափոխել կամ այլաձեվել, այսպես և՝ այլագունվել—գունափոխվել. փոխամանել—ամանափոխել, այլամանել. նստափոխ(ություն)։

«Փոխված ձևով», «մի նոր ձևով» նշանակությամբ՝ սովորաբար գործածվում են «վեր» առաջադրով—վերակերտել, վերաստեղծել, վերաձուլել, վերաշինել,—որովհետև մի բան նորից շինելու ժամանակ՝ սովորաբար փոխված, նոր ձևով է շինվում։ Բայց երբ երկու նշանակության տարբերությունը սրտի շեշտվի, այն ժամանակ ասվում է փոխաստեղծել, փոխաձուլել, օրինակ՝ աշխարհը ոչ միայն պետք է վերաստեղծել (նորից ստեղծել), այլև փոխաստեղծել (փոխած ձևով ստեղծել) և նույնիսկ հեղաստեղծել (շուռ տված ձևով ստեղծել)։

Ստարաբան կազմությամբ՝ *փոխարքա, փոխանուն, փոխնախագահ, փոխգնդապետ։ Համմտ. «դեր» (§ 109)։*

180. Բացասական մասնիկներ:—*Առաջադիր մասնիկների կամ նախամասնիկների մեջ առանձին տեղ են բռնում ԱՆ, ԱՊ, ԴԺ, Տ, Ջ, որոնցով կա՛մ բացասվում է բառի հիմնական նշանակությունը, կա՛մ ցույց է տրվում մի հատկություն, մի բան չունենալը։ Դրանք, բացի «ապ» մասնիկից, միանում են առանց հոդակապի։*

1. ԱՆ,—ա) Դրվելով գոյականների վրա՝ կազմում է ածականներ բացասական ստացական նշանակությամբ այսինքն ցույց է տալիս մի բան չունենալը. նշանակությամբ նույնանում է ԱՌԱՆՑ նախադրության հետ, ինչպես՝ անամոթ—ամոթ չունեցող, առանց ամոթի. անհայր, անտուն, աներկյուղ, անանուն, անզարդ, անգույն։

բ) Դրվելով ածականների վրա՝ բացասում է նրանց նշանակությունը, համապատասխան ՈՉ բառի. ինչպես՝ անարի—ոչ-արի, անարդար. անխառն, անաղոտ, անսուրբ, անզգալի, անմտածելի, անազնիվ, անհավասար, անբարի, անհաստատ, անթերի, անխարդախ, աներաժշտական, անրնական, անհավանական։

գ) Դրվելով բայարմատների կամ բայարների վրա՝ կազմում է ածականներ բացասական դերբայների նշանակությամբ, ինչպես՝ անշարժ—չշարժվող. անվարժ—չվարժված. անզգա—չզգացող. անհրևույթ—չհրևացող. անբժշկելի—չբժշկվող, որ կարելի չէ բժշկել. անբաժանելի, անմիանալի, անասելի, անտանելի և նմաններըե։

Պետք է նկատի ունենալ, որ գոյականներից ու բայարներից կազմված ածականների վերջածանցները սովորաբար դուրս են ընկնում, երբ սկզբից ավելանում է «ան» բացասականը, ինչպես՝ զգայուն—անզգա (և ոչ՝ անզգայուն), շարժուն—անշարժ, զորեղ—անզոր, մտավոր—անմիտ, ուժեղ—անուժ, հարգելի, հարգո—անարգ, արվեստավոր—անարվեստ, արժանի—անարժան։

2. ԱՊ,—բաղաձայնից առաջ ապա, դրվելով գոյականների վրա՝ կազմում է ածականներ բացասական նշանակությամբ, ինչպես՝ ապահարկ—հարկ չտվող, հարկից ազատ. ապաշնորհ—շնորհք, վարպետություն չճանաչող, այլև՝ անշնորհք. ապերախտ—երախտիք չճանաչող. ապիրասան—երասան, սանձ չունեցող, անսանձ. ապուշ—ուշը գնացած. ապագործ—անգործ. ապազեն—անզեն. ապազոր—անզոր. ապաշուք—անշուք. ապաջան—անջան, իզուր ջանացող. ապօրինի—ոչ-օրինավոր. ապերջանիկ, ապարդյուն, ապիկար—անկար. ապաբախտ։

Ստարաբան ձևով՝ նոր կազմված են ապակենտրոն, ապադասակարգային, ապաշար (զինվոր, շարքից դուրս եղող զինվոր), ապաղգային և այլն։

Այս ածականներից կազմվում են բայեր, ինչպես՝ ապախուրել (խույրը հանել, գլուխը բանալ). ապաբանել—անխոս դարձնել, լռեցնել. ապագովել—պախարակել. ապազինել—անզեն դարձնել. ապահարկել—հարկից ազատել։ Այսպես նոր կազմված են՝ ապառազմել—ռազմական դրությունից հանել զորքը, ոչ ռազմական դարձնել. ապակենտրոնացնել։

ապակենտրոնացում. ապաստիճանել—աստիճանից զրկել, աստիճանն իջեցնել. ապազգայնացում, ապախցել (խցածը բանալ), ապանեխել—ախտահանել և ուրիշները (Տե՛ս § 133. 3, «ԹԱՓ» վերջամասնիկ)։

Հունարենի «ԱՊՈ» նախամասնիկի ձևով արվեստական կազմություններ են՝ ապաբնություն, ապաթարց, ապացույց և ուրիշները։

3. Տ,—սակավաթիվ բառերի հետ, ինչպես՝ տգեղ, տգետ, տգույն (դժգույն, գունաթափ), տկար (վատուժ), տհաճ, տհաս (լավ չհասած), տձև, տմարդի (վատամարդի), տմույն (դժգույն), տքնել (տքնություն—անքուն մնալ)։

4. Դժ, Տժ,— որոշ թվով բառերի հետ, ինչպես՝ դժգույն, դժկամակ, դժկերպություն, դժբախտ (վատաբախտ), դժգոհ, դժմիտ, դժպատեհ. դժգին։

5. Չ,— որոշ թվով բառերի հետ, ինչպես՝ չբեր (ամուլ), չկամ, չբախոսկան, չտես, չլուր, չհաս. նաև անարգական իմաստով, ինչպես՝ չազգ, չզարդ, չաստված, չմարդ—չմարդահավան։

Ածականների հետ դրվում է սովորաբար «ոչ», ինչպես՝ ոչ-մոտիկ, ոչ-հեռու, բայց կան և «չ»-ով բաղադրվածներ, ինչպես՝ չազնվական, չախորժելի (անախորժ), չհավոր (ոչ-հավոր), չամբարտավանություն, չանարգական, չգո, չգոյություն, չհավատալի, չհուսալի, չբաժանելի և նմանները, փոխանակ՝ անհավատալի, անհուսալի, անբաժանելի։

Ե

Ա Ծ Ա Ն Ց Ո Ւ Մ

181. Բարդության մթնացումը և պարզ բառեր:—*Լեզվի հնագույն շրջանի բաղադրյալ բառերը լեզվի նորագույն շրջանում երբեմն այլևս բաղադրյալ բառի տպավորություն չեն թողնում։ Սովորաբար բարդ բառերի այնպիսի փոփոխությունը, որով բարդ բառի զգացումը ոչնչանում է, առաջ է գալիս հնչյունների փոխելով կամ դուրս ընկնելով, երբեմն նաև երբ բաղադրիչ անդամները երկուսն էլ, կա՛մ նրանցից մեկը, գործածությունից դուրս են ընկնում, կա՛մ նրանց բաղադրությունն ու նշանակությունն անհասկանալի է դառնում։ Այսպիսի փոփոխություններ առաջ են եկել և՛ նախագրաբարյան և՛ եռգրաբարյան շրջանում։ Օրինակ՝ «այժմ», «իբր» բառերը մեզ համար հիմա պարզ են. բայց դրանք ծագում են հին բարդ բառերից. առաջինը կազմված է՝ ա՛յս+ժամ, իսկ երկրորդը՝ ի+բար։ Այս կապակցությունները շեշտի ազդեցությամբ սրղվել են և դարձել՝ առաջինը՝ «այժըմ», ապա՝ «այժմ» որ հիմա արտասանում ենք «աժմ», իսկ երկրորդը՝ «իբըր», «իբր»։ Առնենք մի ուրիշ օրինակ։*

Գրաբարում ունինք «զհարդ» բառը, որ դարձել է նախ՝ «զեարդ»

(ինչպես՝ «որդիակ» դարձել է «որդեակ») և ապա՝ «զերդ» (ինչպես՝ լեարդ—լերդ). հետո նույնիսկ «զետ»։ Այս «զերդ» բառը, որ մեկ մեկ գործածում են մեր բանաստեղծները, մեզ համար պարզ բառ է. բայց դրա հին զիարդ=զի+արդ ձևի բարդությունը գրաբարում հասկանալի է եղել. որովհետև առաջին բաղադրիչը «զի» սովորական բառ է գրաբարում և նշանակում է «ինչ», իսկ երկրորդ բաղադրիչը՝ «արդ», նույնպես մի բառ է և նշանակում է՝ ձև, կերպ, զի+արդ նշանակում է, ուրեմն, ինչ ձև, ինչ կերպ, ինչպես։ Բայց գրաբարում ոչ միայն «իբր» բառի կազմությունը, այլև «ի+բար» բարդությունը մթնած է, որովհետև չկա անկախ «ի» բառ, այլ միայն «Ձ» նախդրով՝ «զի», «զինչ»։

Այսպես՝ պարզ բառ է մեզ համար նաև «միւս»—«մյուս» բառը, որ կազմված է՝ մի+եւս (ինչպես՝ աշխարհաբարի համանիշ մեկէլ բառը մեկ—էլ). ինչպես հարեւր, առեւծ, արեւն դարձել են հարիւր, առիւծ, արիւն, ապա՝ հարյուր, առյուծ, արյուն. նույնպես միեւս դարձել է միիւս, ապա՝ միւս, հետո՝ մյուս: Մինչև այժմ էլ այդ բառը իբրև երկավանկ ենք արտասանում՝ միուս, միյուս, և հոգնակին լինում է՝ մյուսներ և ոչ թե «մյուսեր»։ Այժմ պարզ բառեր են նաև՝ դես, դեն, դոր, դրվոր, դել տալ (զառանցել), որոնք ծագում են գրաբարի ընդ+այս, ընդ+այն, ընդ+որ, ընդ+այլ (խոսել) կապակցություններից։ Այսպես և առավոտ մեզ համար մի պարզ բառ է, որովհետև երկու բաղադրիչ մասերն էս՝ «առ+աւօտ», գործածությունից դուրս են ընկած (աւօտ—լուսաբաց)։ «Ոչինչ» բառի բաղադրությունը հասկանալի է. որովհետև ունինք ոչ և ինչ բառերը, երկրորդը՝ «բան» նշանակությամբ, ինչպես՝ սամեն ինչ—ամեն բան. ուրեմն ոչինչ—ոչ մի բան։ Բայց ունինք այդ բառից ծագած «չինչ» բառը (որից՝ չնչին), որի մեջ «ոչ» դարձել է «չ». այս բառի կազմությունն արդեն մթնած է, որովհետև երկու բաղադրիչ մասերն էլ շատ գործածական չեն։ Մի փոքր լեզվական ուսում առած մարդու համար, սակայն, հեշտ հասկանալի է «չինչ» բառի կազմությունը։ Նույնպես մթնած է «չիք» բառի կազմությունը. «իք» նշանակում է բան, ուրեմն՝ չիք—ոչ մի բան, ոչինչ։ Դրանից՝ չիք դառնալ, չքանալ։ Բայց հին լեզվի մեջ «իմ» բառը նշանակում է նաև «կա», ուրեմն՝ չիք —չկա։ Այս վերջին նշանակությամբ էլ «չիք» բառի կազմությունը մթնած է, քանի որ «իք»—«կա» նշանակությամբ հին լեզվի մեջ էլ գործածական չէ. մեզ համար այժմ «չիք» արդեն պարզ բառ է։

Բարդ բառերի զգացումն իբրև պարզ բառեր, ինչպես կարելի է տեսնել բերած օրինակներից, մի անգամից չի առաջ գալիս, այլ երկար ժամանակի ընթացքում աստիճանաբար։ Օրինակ՝ «իջևան» բառը դեռ կապում ենք «իջնել» բառի հետ և ըմբռնում ենք իբրև իջնելու տեղ, բայց դրա բաղադրությունը մեզ համար մթնած է, որովհետև նոր լեզվի մեջ երկրորդ բաղադրիչ անդամը՝ «վան» բառը չկա, իսկ «վանք» բառը կորցրած է իր ընդհանուր նշանակությունն իբրև բնակարան, կացարան և այժմ գործածվում է միայն իբրև «կրոնավորների կացարան»,

«մենաստան»։ Ավելի ևս մթնած է, բայց բոլորովին չի մեռած, հին օթևան բառի կազմությունը, որովհետև այս բառի համար ոչ միայն «վան» բառի նշանակությունն է փոխված, այլև առաջին բաղադրիչը՝ օթ, որից՝ օթարան, օթանոց, օթյակ, օթել և այլն, հնացած մի բառ է և շատերի համար անհասկանալի։ Բայց և այնպես լեզվական ուսում առած մարդու համար զգալի է այդ, ինչպես և իջևան բառի բաղադրված լինելը։ Հնուց ունենք նաև «ւ» տառով՝ իջեւան, օթեւան գրություններըր, որ ցույց են տալիս, թե այդպես գրողներն այդ բառերի մեջ այլևս «վանք» բառը չեն ըմբռնել։

Այսպես ուրեմն, ինչ որ լեզվի հին շրջանում բաղադրված բառ է, հետագա շրջանում կարող է, վերևում բացատրված ձևով, լեզվի կենդանի կիրառության մեջ այնպիսի փոփոխություն կրել, որ այլևս չըզգացվի իբրև բաղադրված բառ։ Այդպես շատ բառեր, որ այժմ մենք սարդ ենք համարում, լեզվի հնագույն շրջանում եղել են բաղադրված (§ 4)։

182. Ածանցական մասնիկների ծագումը հնչափոխությամբ։—*Երբ բաղադրիչ մասերից մեկը հնչափոխությամբ իբրև բառ կորչում է, այսինքն՝ մենակ գործ չի ածվում իբրև բառ և ոչ էլ իբրև արմատ ուրիշ բառերի, և այդ մասն այլևս չենք նույնացնում այն բառի հետ, որից ծագել է այդ փոխված բառը,—այն ժամանակ բարդ բառը թողնում է մի առաջադիր կամ վերջադիր մասնիկով (նախածանցով կամ վերջածանցով) կազմված բառի տպավորություն։ Օրինակ՝ բարբառներից մի քանիսի մեջ գտնում ենք «հնչեղ» (հնչըղ) բառը, որը նշանակում է «հնչական»։ Մեր լեզվական զգացումով այդ բառի առաջին մասը դեռ կապում ենք «հնչ» բառի հետ. բայց վերջի «եղ» (ըղ) մասն այլևս չենք նույնացնում ոչ մի բառի հետ, այլ համարում ենք մի տեսակ մասնիկ, իսկ «հնչ-եղ» բառը՝ մի ածանցական բառ. միջնադեր միջին հայերենում այդ բառը բարդ է՝ հնչ+ցեղ բառերից կազմված։ «Ցեղ» միջին հայերենում նշանակում է՝ տեսակ, կերպ, ուրեմն՝ «հնչցեղ»—հնչ տեսակ, հնչական, հնչպես, հնչ կերպ։*

Մասնիկով կազմված բառերի տպավորություն են թողնում և բարբառների մեջ եղած չմշմակեր, չմշակեր և չմակեր բառերը, քանի որ «չմշմ», «չմշ», «չմ» մասերը ոչ մի բառի հետ չենք նույնացնում։ Բերքն էլ նշանակում են՝ չնչին հաց ուտող, շատ քիչ ուտող։ Դրանցից առաջին երկուսը ծագել են ն>մ փոփոխությամբ «չնչնակեր» և «չնչակեր» բառերից. (այսպես կազմված կան նաև «չնչահավատ» և այլն)։ Այս վերջիններից առաջինը զգացվում է իբրև բարդ բառ, որովհետև «չնչին» բառը սովորական բառ է. իսկ երկրորդի կազմությունը մթնած է, որովհետև սրա առաջին բաղադրիչը «չինչ», որից «չնչին», անգործածական է, և հենց այդ «չինչ» բառի բաղադրությունն էլ, ինչպես տեսանք, մթնած է։ «Չմշմակեր» բառի առաջին մասը «չմշմ» ըմբռնվել է իբրև կրկնություն և առաջ է եկել «չմակեր» բառը նույն նշանակությամբ, որ

և ավելի գործածական է, քան մյուս երկուսը. դա էլ թողնում է «չմ» առաջադիր մասնիկով (նախածանցով) կազմված բառի տպավորություն, որովհետև չկա «չիմ» կամ «չում» բառ։ Այսպես և փողահար բարդ բառը փողհար ձևից անցնելով՝ դարձել է փողար, որի մեջ «ար» մասն արդեն թողնում է մի վերջածանցի տպավորություն։

Ինչքան էլ վերևում դրված այդ բառերի «եղ», «չմչմ», «չմչ», «ար» մասերը մասնիկի տպավորությունն են թողնում, բայց դրանք ածանցական մասնիկներ չեն։ Այդպիսի բաղադրիչ մասերը, որ կորցրել են իրենց ձևը և անկախ բառական նշանակությունը, այն ժամանակ են միայն ածանցական մասնիկ դառնում, երբ միևնույն ձևով և միևնույն ընդհանուր ձևական նշանակությամբ երևան են գալիս, սկզբից կամ վերջից ավելացած, մի շարք բառերի մեջ, որոնք մեր լեզվական զգացումով ըմբռնվում են իբրև մի առանձին խումբ մի ընդհանուր ձևական նշանակությամբ, որ այդ մասնիկներով ավելանում է այդ խմբի բառերի նյութական նշանակության վրա։ Արդ, ինչեղ և փողար բառերն առանձնացած են մնում. դրանք առանձին բառերի հատ-հատ փոխված, քարացած ձևեր են միայն։ Թեպետ երբեմն նույնիսկ մի հատ բառի անալոգիայով ուրիշ բառեր են կազմվում, բայց անալոգիայով բաղադրությունները սովորաբար հեշտությամբ առաջ են գալիս, երբ լեզվի մեջ կան արդեն որոշ թվով բառեր նույն կազմությամբ և նույն նշանակությամբ, ինչպես եթե ոչ միայն փողահար բառը դարձած լիներ փողար, այլև թմբկահար, ճնարահար դարձած լինեին «թմբկար», «քնար», բայց այդ չկա։ Ուստի մենք ավելի մեծ թվով՝ փողահար, թրմբկահար, ճնարահար, փանդռնահար, սրնգահար բառերի նմանությամբ նոր կազմել ենք ջութակահար, դաշնակահար և ոչ թե «ջութակար», «դաշնակար»։ Վերևում հիշված «չմ» մասնիկը, սակայն, արդեն կարելի է մի նախամասնիկ (առաջադիր մասնիկ) համարել, որովհետև մենք արդեն «չմակեր» բառի նմանությամբ, նույն ձևով և նույն նշանակությամբ ունինք նաև «չմախոմ»—քիչ խմող, «չմախոս»— քիչ խոսող, բերանը փակ նստող, «չմահավան»—ոչ մի բանի չհավանող, կամ շատ քիչ բանի հավանող։

Ածանցական մասնիկների մի մասն այսպիսի հնչյունական փոփոխությամբ է առաջ եկել նախագրաբարյան շրջանում։ Այսպես՝ մեր լեզվի մեջ շատ կենդանի և գործածական «վոր» (-ավոր) մասնիկը ծագել է «բեր» բառի մի երկրորդ «բոր» ձևից (ինչպես՝ քերել—քորել), որի «բ» հնչյունը երկու ձայնավորի մեջ դարձել է «վ». ուրեմն «լուսավոր»—«լուսաբոր» նույնն է, ինչ որ «լուսաբեր», միայն ոչ «լույս բերող» նշանակությամբ, այլ «վրան լույս կրող, լույս ունեցող»։ Հին լեզվի մեջ «բերել» դեռ նշանակում է նաև «կրել», «վրան կրել», «վրան ունենալ»։ Հնչյունափոխության հետ ահա այդ բառի կրկին նշանակությունն էլ տարբերակման են ենթարկվել. «վոր» (հին-ւոր) ձևի համար առնվել է միայն այս երկրորդ նշանակությունը—վրան կրել, ու-

նենալ։ Բայց այժմ, ինչպես և հնումը, այլևս «վոր» ձևը ոչ հնչյուններով և ոչ նշանակությամբ չենք նույնացնում «բեր» բառի հետ, և քանի որ «վոր» ձևն անկախ գործածություն էլ չունի, ուստի «լուսավոր» և նման կազմության բառերի մեջ «վոր» մի ածանցական մասնիկ է. մինչդեռ «լուսաբեր» և նման բառերը մեզ համար հասկանալի բարդ բառեր են։ Այսպես՝ հնչյունների և նշանակության փոփոխությամբ, «ոտ» մասնիկը համարվում է ծագած «հոտ» բառից. «հիվանդոտ», «ծբխոտ» բառերն, ուրեմն, սկզբնապես եղել են՝ «հիվանդահոտ», «ծխահոտ», այսինքն՝ հիվանդի հոտ ունեցող, ծխի հոտ ունեցող. ապա՝ դարձել են «հիվանդոտ», «ծխոտ» և ստացել են արդի նշանակությունը։

Այս մասնիկները (վոր-ւոր, ոտ) նախագրաբարյան շրջանում են ծագած, ուստի դրանց բացատրությունը տրվում է միայն համեմատական քերականության օգնությամբ. բայց կան ածանցներ, որոնք մեր լեզվի պատմական շրջանում են առաջ եկել, և մենք կարող ենք դրանց ծագմանը հետևել։ Այսպիսի նոր ածանցներից մեկն է «ատ», որ շատ գործածական է, և որով այժմ շարունակ նորանոր բառեր ենք կազմում թե՛ անուններից և թե՛ բայերից։ Դա ծագում է «հատանել» բայի «հատ» արմատից, այսպես՝ fնահատ դարձել է fնատ (քնից կտրված). փայտահատ (փայտ կտրող մարդը և գործիքը) դարձել է փայտատ (գործիքը՝ կացին, այլև բրիչ, որ բարբառային ձևով է՝ փետատ), գլխահատել դարձել է գլխատել, որից գլխատ (գլուխը կտրած) և ուրիշ բառեր՝ կռնատ, պոչատ, քթատ. երկատել, ածվատել, մասնատել և այլն։

133. Ածանցիկների ծագումն առանց հնչափոխության։— Ածանցական մասնիկներ առաջ են գալիս նաև առանց հնչափոխության։ Երբ բաղադրիչ մասերից մեկը իբրև անկախ բառ կորչում է կամ չկա լեզվի մեջ, այլ մնալով բաղադրությունների մեջ՝ ստանում է մի նոր, ձևական նշանակություն,—այն ժամանակ այդպիսի մասն զգացվում է իբրև ածանցիկ, և երբ դրա անալոգիայով նոր բառեր են կազմվում, դա դառնում է իսկապես մի առաջադիր կամ վերջադիր մասնիկ։ Բերենք մի քանի օրինակ։

1) Առնենք շատ գործածական թափանցել, թափանցում, թափանցիկ բառերը։ Սրանց երկրորդ մասը նույնացնում ենք անցնել բառի հետ. բայց առաջին մասի՝ թափ բառի նշանակությունն աշխարհաբարում չկա, և չենք կարող նույնացնել ոչ մի բառի հետ, ո՛չ «թափել», «թափ տալ» բառերի հետ և ո՛չ էլ շարժման «թափի» հետ, որ նշանակում է՝ ուժ, սաստկություն։ «Թափ» հին լեզվի մեջ նշանակում է նաև՝ տակ, հատակ, խորք։ Գրաբարում կան այս նշանակությամբ՝ «թափ անցանել», «գթափ անցանել (անցուցանել), որ նշանակում է՝ մինչև տակը, մինչև խորքը անցնել, անց կացնել՝ ապա որովհետև մինչև տակն անցնելը մինչև մյուս ծայրն անցնել է, ուստի և «թափ անցանել» նշանակում է նաև մի կողմից մինչ մյուս կողմը, մի ծայրից մինչև մյուսն անցնել (անց կացնել) մի բանի միջով։ Այս երկու իմաստով նոր լեզ-

վի մեջ գործածվում է «թափանցել» բառը—թափանցել մինչև խորքը, թափանցել մի բանի միջով։ Եվ որովհետև «թափ» բառ չկա «տակ», «հատակ» նշանակությամբ, ուստի «թափ» մասն ըմբռնում ենք իբրև մի նախամասնիկ։ Սույն նշանակությամբ գրաբարում կան նաև՝ թափանշույլ (թափանցիկ), թափ կամ ընդ թափ հանել, թափ հասուցանել, թափ անկանել, թափ մտանել—մինչև տակը կամ մի բանի միջով մի կողմից մինչև մյուսը հանել, հասցնել, ընկնել, մտնել. և վերջապես կա կրկնավոր «թափընդթափ» կամ «թափնթափ» մակբայը, որ նշանակում է՝ «թափանցելով». նույն նշանակությամբ նաև՝ թափանց (ածել, լինել), թուփանցանց (ելանել, լինել)։ Ռուսերենի про և գերմաներենի durch նախդիրներով կազմված մի քանի բայերի դիմաց՝ բառարանների մեջ գտնում ենք՝ ընդթափ ձգել, նետել. անցնել ընդթափ, թափանցել. ընդթափ նկարել, ընդթափ կաղապարել. ընդթափ կտրել, ծակել. ընդթափ անցնել, հոսել, ծորալ. ընդթափ երևալ, տեսնվել. թափանցանց խոցել։ Այս բոլորը, սակայն, չեն ընդհանրացած նոր գրական լեզվի մեջ, և առաջ չի եկել մի կենդանի գործոն նախամասնիկ «թափա» ձևով, կամ բայի հարադիր մաս «թափ» կամ «ընդթափ», «թափանց», «թափընթափ» ձևերով։ Հին լեզվից առել ենք՝ «թափ անցանել» բայը «թափանցել» ձևով, այլև «թափանցում», բայց ոչ նաև՝ թափ ընկնել, թափ մտնել, թափ հանել, թափ հասնել, ուստի անալոգիայով չենք կազմել՝ թափ կտրել, թափ ծակել, թափ ելնել և նմաններըը, կամ թափամուտ լինել, թափահանել, թափածակել, թափակոտրել, թափահոսել, թափախոցել, թափերևալ և այլն։ Կնշանակե՝ ինչքան էլ «թափանցել» բառի «թափ» մասն ըմբռնում ենք իբրև մի նախամասնիկ, բայց դա դեռ գործոն չէ։ Միայն Հովհաննես Թումանյանի ռուսերենից մի թարգմանության մեջ գտնում ենք՝ «թափ իջավ դեպի նկուղները խոր»։ Այս ցույց է տալիս, որ լեզվի մեջ կարող է առաջ գալ մի այդպիսի նախածանց մասնիկ։

2) Հին լեզվի «զիարդ» բառի մասին խոսելիս տեսանք, որ հին լեզվի մեջ «արդ» բառը նշանակում է՝ ձև, կերպ (այլև հորինվածք, կազմություն)։ Աշխարհաբարում գործածվում է այդ բառը միայն կըրկնական ձևով՝ «արդ ու զարդ» և բոլորովին ուրիշ նշանակությամբ։ Սակայն գրաբարից ունենք՝ խոռանարդ, գմբեթարդ, պուտնարդ, կոռնթարդ բառերը, որոնք աշխարհաբարի տեսակետով կարող են ածանցական բառեր համարվել. դրանց մեջ «արդ» մասն ունի մի ընդհանուր նույն ձևական նշանակությունը և արդեն մի ածանցական մասնիկ է, քանի որ դրանց անալոգիայով կարող ենք երկրաչափական և տեղագրական ձևերի համար նոր բառեր կազմել և կազմված են՝ սեղանարդ, թամբարդ, սանարդ և այլն։

3) Ածանցական մասնիկներ առաջ են գալիս և այն ժամանակ, երբ բառի նշանակությունը բաղադրության մեջ ձևական դառնալով այնպիսի փոփոխություն է կրում, որ այլևս չենք նույնացնում նույն բա-

ռի սովորական անկախ գործածության հետ։ Առնենք թափել բայի արմատով կազմված բառերը՝ տերևաթափ, ծաղկաթափ, թևաթափ (թռչունի համար), ատևաթափ, հերաթափ, մազաթափ։ Սրանք մեզ համար հասկանալի են իբրև բարդ բառեր, որովհետև տերևը, ծաղիկները, թևը (այսինքն՝ թևի փետուրները), մազը, թափվում են։ Հասկանալի է նաև «անթափ» բառը, որովհետև կտորի խավը թափվում է. «անթափ» բառըն, ուրեմն, նշանակում է խավը չթափված։ Դուցե հասկանալի է նաև թևաթափ (մարդու համար), մսաթափ, եղջերաթափ և այլ բառերի բաղադրությունը, որովհետև դեռ գործածում են՝ թևերը թափվեցին, միսս թափվեց, մատներս (ցրտից) թափվեցին, պոզերը թափվեցին։ Նույնպես բարդ բառի զգացում ունինք նաև՝ գերեթափ, դեղաթափ (դեղթափ), հողաթափ, գրավաթափություն և այլ բառերի համար. որովհետև «թափել» բառը մեկ մեկ դեռ գործ ենք ածում «ազատելու» բյամբ՝ մուրհակը, գրավը թափել, գերին թափել. «դեղաթափ» բառն, ուրեմն, նշանակում է՝ դեղից (թույնից) ազատող, «հողաթափ»՝ հողից ազատող։ Բայց կան նաև այս բառերը՝ խելաթափ, մտաթափ, ուշաթափ, գունաթափ, սրտաթափ (սրտաբեկ, սիրտը կոտրած.—չպիտի շփոթել նոր լեզվի «սիրտ թափել»—սիրտ խառնել՝ դարձվածի հետ), ոգեթափ (ուժից ընկած), գինեթափ, տեղաթափ (տեղից կտրված), մարդաթափ (մարդկանցից կտրված, անբնակ), հայրենաթափ, բևեռաթափ (բևեռ հանած), ոսկրաթափ անել (միսը,—ոսկրահան անել) և ուրիշները։ Այս բոլորը գրաբարում բարդ բառեր են, որովհետև հին լեզվով ասվում է՝ թափել ի խելաց, ի մտաց. թափել գունոյ, թափել զոգի, զգինի, թափել զբևեռ, թափել ի բնակչաց (թափուր, դատարկ մնալ), թափիլ ի հայրենեաց (զրկվել), թափել զտուն (տունը դատարկել) և այլն։ Բայց նոր լեզվի մեջ «թափել» բայն այսպիսի կիրառություններ և նշանակություններ չունի, ուստի և այդ բառերի բարդ լինելն աշխարհաբարում արդեն մրթնած է, և երկրորդ բաղադրիչը «թափ» թողնում է մի ածանցական մասնիկի տպավորություն մի ընդհանուր ձևական նշանակությամբ՝ իբրև զերծ, հան, զուրկ և այդ բառերի անալոգիայով կազմված են նոր բառեր՝ ձիաթափ, ուժաթափ, զինաթափ, քնաթափ, որով և «թափ» բառն արդեն դարձել է մի վերջածանց մասնիկ։ Վերջերս նույնիսկ՝ «կուլակաթափ անել», որի իմաստով, սակայն, գրում են ավելի «ապակուլակացում»։ (Տե՛ս § 130.2, ԱՊ մասնիկ)։

4) Գրաբարի «Առձեռն» բառարանի մեջ գտնում ենք տեղահար կամ տեղեար բառը, որ բացատրված է՝ «երկայն (զգեստ) մինչև գետին»։ Այրարատյան բարբառի մեջ կան՝ ճտահար, ծնկնահար բառերը. ասում են՝ գետը, ջուրը կամ ձյունը ծնկնահար է. ծնկնահար նստած ձյուն, այսինքն՝ մինչև ծունկը հասնող. գարին ճտահար է, այսինքն՝ հասնում է մինչև մարդու ճիտը, ճիտը ծածկելով։ Այս բառերի կազմությունը բացատրվում է «հարկանել» բայի «հար» արմատից կազմված. ծնկնահար, ուրեմն, սկզբնապես՝ ծունկը ծեծող, ճտահար—ճիտը ծեծող, ճր-

տին խփող. ապա՝ նշանակության փոփոխությամբ՝ մինչև ծունկը, մինչև ճիտը ծեծող, զարնող, հետևաբար և մինչև ծունկը, մինչև ճիտը հասնող։ Այդ «հար» մասն այժմ ըմբռնում ենք իբրև մի ածանցիկ։ Բացի վերևի բառերից կան նաև՝ լանջահար—մինչև լանջ. պոկեհար, որ նշանակում է՝ մինչև՝ պոռունկ, պոկե-պոռունկ. (բարբառների մեջ նաև «պոտեհար»—«պոտեպոռունկ»)։

3) Այսպիսի բարդ բառերի մի անդամը ածանցական մասնիկ է դառնում ժամանակի ընթացքում հետզհետե, որովհետև նրա նշանակության փոփոխությունն էլ աստիճանաբար է առաջ գալիս, այնպես որ միևնույն բառը կարող է միաժամանակ մերթ իբրև բարդ բառ զգացվել, մերթ իբրև ածանցական, նայելով թե նոր նշանակությանն անցնելը որքան զգալի է։ Այսպիսի անցման իբրև օրինակ ունենք արևելյան բարբառների մեջ «հանել» բայի «հան» արմատից ծագած մի նոր մասնիկ՝ «հան», որ ունի «անց» ածանցի նշանակությունը և սրա ազդեցությամբ վերջից մեկ-մեկ ստանում է և «ց» հնչյունը, ինչպես՝ երեսահան կամ երեսահանց—երեսանց. տակահան կամ տակնըհան, տակնըհանց—տականց, տակից և այլն։ Տեսնենք այս մասնիկի ծագումը։

Ունինք «հան» բառով բաղադրված մի շարք բառեր, որոնց բաղադրության երկրորդ մասը պահում է «հանել» բայի նշանակությունը, ինչպես՝ տնահան, տեղահան անել, լինել—տնից, տեղից հանել, հանվել (հմմտ. հին՝ տեղաթափ). գլխահան անել, խելքահան անել—գլխից, խելքից հանել, մոլորեցնել (գլխահան անել—նաև՝ գլխից հեռացնել, այլև մի բան գլխանց, վայրիվերո անել). ճրվահան անել, կռնահան անել—ճիվը, կուռը հանել (հմմտ. հին՝ թևաթափ). ոտնահան լինել—գործածվում է փոխված նշանակությամբ իբրև՝ սաստիկ հոգնել, ոտնաթափ լինել. ոսկրահան անել (ոսկրահան, ոսկերքահան)—ոսկորները հանել, զատել մսից (հմմտ. ոսկրաթափել). փետրահան անել—փետուրները հանել. փերթահան անել—կտորը կտորից հանել, պոկել. դուռը կրնկահան անել—դռան կրունկը տեղից հանել։ Այս և նման բառերը մեզ համար հասկանալի բաղադրյալ բառեր են։

Բարդ բառերի զգացումը ունինք նաև հետևյալների մեջ, որոնք սակայն, իրենց նշանակությամբ տարբերվում են նախորդներից. ծառն արմատահան անել, տակոտահան անել—ծառն արմատից հանել, արմատով հանել, արմատն էլ հետը հանել. ծառն արմատահան կտրել, տակոտահան կտրել—ծառն արմատահան, տակոտահան կոտրվել է, ծառն արմատահան պոկել, տակոտահան պոկել—արմատը հանելով կտրել, պոկել, արմատից կտրել, կոտրվել, ապա նաև՝ արմատաքի, արմատի հետ, արմատով հանդերձ կտրել և այլն։ Այս կարգին պատկանում են նաև հետևյալները՝ մարգը տնկահան (տնկնկահան) փորել, գետինը երեսահան քանդել, հողը երեսահան վերցնել։ Այստեղ էլ դեռ կարող ենք մտածել՝ տակը, այսինքն՝ տակի մասը հանելով փորել. երեսի մասը հանելով քանդել, վերցնել, թեպետ ավելի շուտ մտածում ենք՝ տակով, տակից՝

մինչև տակը, տակից սկսած, տակն էլ հետը փորել. երեսից սկսած, երեսանց քանդել, վերցնել։ Նույնպես՝ «բարդին տակահան կտրել», «ծառը երեսահան կտրել», «մազերը տակահան խուզել». «արտը տակահան հնձել», «երեսահան հնձել»—այստեղ «տակը հանելու», «երեսը հանելու» գաղափարն արդեն բոլորովին մթնած է, և դրանք նշանակում են միայն՝ տակը, տակի մասը (ոչ արմատը) հետը, տակից կտրել, խուզել, հնձել, երեսի մասը, երեսանց, երեսից սկսած կտրել, խուզել, հնձել։ Այս կապակցությունների մեջ «հան» մասն այլևս չենք կապում հանել բայի հետ. դա բառին տալիս է բացառական հոլովի, կամ ետ. հանդերձ, մինչև բառերի նշանակություն, թեպետ և հեշտությամբ ըմբռնում ենք, որ սկզբնապես նշանակել են՝ «տակը (տակի մասը) հանելով» կտրել, խուզել, հնձել, միայն «երեսը, երեսի մասը հանելով» կտրել, խուզել, հնձել։

Այս բառերը, ֆիզիկական նշանակությունից փոխվելով բարոյական նշանակության, արդեն բոլորովին չեն կապվում հանել բառի նշանակության հետ. «մի բան տակահան մոռանալ» այլևս չի նշանակում՝ «տակի մասը հանելով» մոռանալ, այլ «տակովին», հիմնովին մոռանալ, տակն էլ հետը, տակից, հիմքից մոռանալ։ Այստեղ տակահան բառը լոկ մակբայ է դարձած։ Այսպես և հետևյալների մեջ. երեսահան հայելի, տակահան ածելի (երեսանց—արտաքուստ, տակահան—տականց, ներքուստ). երեսահան ոչխար է ձևանում, բայց սրտանց գայլ է. երեսահան խրատում էր... տակնահան ի՞նչ ասես՝ անում է. տակնահան իր բանը շինեց. տակնահանց նայել. տակնահան նա ձերտունը քանդեց (Պռոշ.)։ Տակահան—տակետակ, խորամանկ, ծածկամիտ։

Մի անգամ որ «հան» բառը կորցնելով իր բուն նշանակությունը՝ իբրև ածանցական մասնիկ է ըմբռնվել՝ բացառական հոլովի, կամ ետ, մինչև բառերի, կամ միասնության գործիական հոլովի նշանակությամբ, արմատահան, տակոտահան. տակահան, երեսահան բառերի անալոգիայով կազմված են և ուրիշ բառեր, որոնց մեջ հանելու գործողության վրա այլևս չենք մտածում։ Այսպես են՝ «ծառը գետնահան կկտրես, բարձր չես կտրիլ». «խոտը գետնահան հնձել»,—չի նշանակում արմատը գետնից հանելով կտրել, այլ գետնից սկսած, գետնի հետ հավասար կտրել, մինչև գետին։ Նույնպես՝ «պատը գետնահան դնել» չի նշանակում գետնից հանելով դնել, այլ գետնից սկսած, գետնի հետ հավասար դնել առանց հիմքի։ Այսպես և «գետնահան տուն»—գետնի վրա, գետնի հետ հավասար շինված տուն։ Բարձրահան, ցածրահան նայել—բարձրից, ցածրից։ Կողմահան մտիկ տալ—կողքից, կողքի կողմից, կողքի վրա նայել. ապա նաև՝ կողքահան գնալ, լող տալ, թեք ընկնել, գդակը կողքահան դնել—կողքի վրա։ Ծնկահան խրվել ցեխի մեջ—խրվել մինչև ծունկը, ծունկից սկսած դեպի ցած, ծունկն էլ հետը, ծնկահար խրվել։ Գիշերահան, գիշերահանց (նաև՝ բացառականի «ա» վերջավորությամբ՝

գիշերեաեաև) վեր կացավ, գնաց—գիշերով, գիշերանց, ի գիշերաց (նաև կրկնությամբ՝ գիշերով—գիշերհանա ո՞ւր ես գնում)։ Առավոտահան (նաև բացառականի «ա» վերջավորությամբ՝ առավոտհանա) ո՞ւր ես գնում—առավոտանց, առավոտնեց, առավոտուց, առավոտը շուտով, առավոտվա հետ։ Համմտ. «հետ լուսուն», «բարի լուսի հետ» վեր կացավ։ Մեգելահան—արևը ծագելու հետ, առավոտը կանուխ։ Համմտ. ծագի հետ վեր կենալ։ «Շապկահան դուրս թափվեցին» նշանակում է՝ ոչ թե շապիկը հանած, այլ շապկով, շապկանց, հալավանց, այսինքն մի՛այն շապկով. մինչդեռ «շորահան լինել» բարդ բառ է և նշանակում է՝ շորերը հանել։

Այս գործածություններից հեշտությամբ անցում է լինում և որակական մակբայի նշանակության, ինչպես են՝ մեծահան խոսել, մեծահան անց կացրու—իբրև մեծ կամ մեծաբար խոսել, իբրև մեծ կամ մեծ լինելով անցկացնել, ներել։ Փոfrահան գնա, արա իբրև փոքր։ Անոթրհանց—անոթի կերպով, դեռևս բան չկերած (Տ. Նավասարդ. Բառ.)։ Ոլլահան բոռալ—բարձր գոռալ (ծիլ—վեր, բարձր. ծիլ գնալ, ծիլ լինել—վեր բարձրանալ)։ Ոլունգհան փախավ գնաց—նստած տեղից հանկարծ վեր ցատկելով՝ փախավ. («ծլունգ լինել»—նստած տեղից հանկարծ վեր կենալ, վեր ցատկել)։

6) Նոր լեզվի շատ գործածական կենդանի ածանցիկներից մեկն է՝ «վար», «վարի», ինչպես՝ fաղաfավար կամ fաղաfավարի. մարդավար կամ մարդավարի։ Դա ծագում է հին վարել բայի արմատից, որի մի քանի նշանակություններից մեկն է՝ կյանք վարել, կենցաղավարել և ավելի՝ վարվել, որից՝ վարմունք, վարք։ Հին լեզվի մեջ հունաբան գրողները հունարենի «պոլիս»—«քաղաք» բառից կազմված «պոլիտեյա», «պոլիտեւո» բառերը թարգմանել են fաղաfավարություն, fաղաfավարել. որոնց առաջին նշանակությունն է, ըստ հունարենի, քաղաք (պետություն) վարել, կառավարել. քաղաքի գործերը վարել. ապա՝ իբրև քաղաքացի ապրել ու գործել, քաղաքի կյանք վարել, և վերջապես՝ քաղաքացուն արժանի, գովելի վարք ու կյանք ունենալ։ Ըստ այմ fաղաfավար բառի նշանակությունն է՝ քաղաքի վարիչ, ապա՝ քաղաքացու ձևով վարվող։ Այս բառի նման արդեն հունաբան հեղինակներից կազմած ունինք՝ աշխարհավար, աշխարհավարել, աշխարհավարություն, «աշխարհավար կեանք», որ նշանակում է՝ աշխարհի, աշխարհականի կյանք վարել. կենցաղավարել աշխարհի օրենքով, հակադրությամբ հոգևորականի կյանքի։

Արդ, հունաբան գրողների կազմած fաղաfավար, fաղաfավարություն բառը կենդանի գործածության մեջ պահել է երրորդ իմաստը, որ է՝ քաղաքացու ձևով վարվել, բարեկիրթ, կոկ ու հղկված. որովհետև քաղաքը կրթությամբ ավելի բարձր է, քան գյուղը։ Նույն նշանակությունն ստացել է ֆրանսերեն civil civilité «քաղաք» բառից, մինչդեռ գերմաներենում նույն նշանակությունն ունի höflich բառը, Hof «ար-

քունիք», «պալատ» բառից, ինչպես եթե հայերեն ասենք «արքունավար»։ «Քաղաքավար» բառի անալոգիայով բարբառների մեջ կազմվել է **գեղավար, գեղացեվար,** *որ նշանակում է գյուղի ձևով, գեղացնակ, դեղացու պես (ուտել, ապրել, նիստ ու կաց ունենալ). ապա նաև՝* **ճայյավար, թուրքավար, վրացավար,** *որ նշանակում են՝ հայի պես, թուրքի, վրացու պես. ապա՝ նշանակության փոփոխությամբ նաև՝ հայերեն, թուրքերեն, վրացերեն.* **գրեվար**—*գրաբար.* **մարդավար**—*մարդու պես։ Այս ածանցիկն այնուհետև ազդվելով «տմարդ—տմարդի», «վատամարդ—վատամարդի», «այլազգ—այլազգի» և այլ ածականների այսպիսի կրկին ձևերից (գուցե և պարսկերենի նույն «վար, վարի» ածանցիկից, որ նույն նշանակությունն ունի), ստացել է վերջից «ի».* **բաղաքավար.** **մարդավար** *և այլն ունին նաև* **բաղաքավարի, մարդավարի** *ձևերը։ Այս կրկնակների մեջ նույնիսկ կիրառության տարբերակում է երևում. «հայերեն», «թուրքերեն», «վրացերեն» նշանակությամբ գործածվում են՝* **հայավար, թուրքավար, վրացավար** *(խոսել), իսկ ընդհանուր նշանակությամբ և ավելի իբրև ածական՝ երկուսն էլ՝* **քաղաքավար** *կամ* **քաղաքավարի, հայավար** *կամ* **հայավարի** *(կենանիք, հայկական տարազով, հայնակ, հայի պես հագնված),* **գեղացեվար** *կամ* **գեղացավարի, գեղավարի,** *այսպես նաև* **տնավարի, տղավարի, աղջկավարի** *(խաղալ, հոլ ձրգիլ),* **կնկավարի** *(խոսել, կնոջ ձայնով ու ձևերով),* **գժավարի, մեծավարի, իշխանավարի, իշավարի, արջավարի** *և այլն։*

Այս միևնույն եղանակով, նշանակության փոփոխությամբ առաջ են եկել հին լեզվի շատ վերջածանցներ, ինչպես՝ **բար՝ օրէն, կից, գոյ՝** *և այլն, ինչպես և որոշ թվով նախածանցներ կամ առաջադիր մասնիկներ, ինչպես՝* **համ** *(համանուն, համամիտ և այլ բառերի մեջ),* **մակ, տրամ, ենթ, գեր** *և այլն։*

184. Ածանցական մասնիկների ծագումը երկու մասնիկների միացումից:— *Վերջադիր մասնիկները լեզուների մեջ առաջ են գալիս երբեմն նաև երկու մասնիկների միացումից, որոնք ըմբռնվում են իբրև մի միություն և մի նոր ընդհանուր նշանակություն են ստանում։ Այսպես օրինակ՝ մեր հին և նոր լեզվի մեջ կա բայերից ածանցող ՈՒԿ մասնիկը, ինչպես՝* **վաղվաղուկ, նախանձուկ, մոռացուկ, քնուկ, մրսուկ** *և այլն (տե՛ս § 208), որոնց վրա ավելանում է ՈՏ մասնիկը և կազմվում են՝* **վաղվաղկոտ, նախանձկոտ, մոռացկոտ, քնկոտ, մրսկոտ.** *այսպես և շատ բառերի վրա՝* **ղբաղկոտ, վախկոտ** *(նաև «վախլուկ» բառից «վախլկոտ»),* **ցասկոտ, պարծենկոտ** *և այլն (տե՛ս § 184)։ Եվ այսպիսով առաջ է եկել ԿՈՏ մասնիկը, որ իր այս ծագման պատճառով, չնայելով բաղաձայնով է սկսվում, չի պատահում «ակոտ» ձևով, այսինքն չի միանում «ա» հոդակապով։*

Նույնպես առանց հոդակապի են միանում և բարբառային ԿԱԿ, ԿԵԿ, ԿԻԿ, ԿՈՒԿ մասնիկները, որոնք ծագում են **ուկ+ակ=կակ, իկ+ակ=կակ, իկ+եակ=կեակ>կեկ** *ձևերից, այսինքն երկու նվազական*

մասնիկների միացումից։ Մենք ունինք հին լեզվից՝ պատանեակ+իկ=պատանեկիկ. տեղեակ (փոքր տեղ), որից կրկին նվազական՝ տեղեկիկ. տափակ+ուկ=տափակուկ, նավակ+իկ=նավակիկ և այլն, որոնց մեջ երկու ածանցների միացումը զգալի է. բայց ունենք նաև սևակ, մանրկեկ և այլն (տե՛ս § 180), որոնց մեջ ԿԱԿ, ԿԵԿ ըմբռնում ենք իբրև առանձին մասնիկներ։ Դրանք ևս ծագած են այսպես՝ սևուկ+ակ=սևակ, կամ սևիկ+ակ=սևակ. մանրիկ+եակ=մանրկեակ>մանրկեկ։ Այսպես երկու ածանցիկների միացումից են ծագում հին լեզվի մեջ՝ ածոյ=ած+ոյ (ինչպես՝ ներկած—ոյ), անք=ան+ք, ակի=ակ+ի, կյան, կեն=իկ+եան, անակ=ան+ակ, անի, ենի=ան+ի, եան+ի, անուտ=ան+ուտ, եք=է+ք<եայ+ք և ուրիշները։

185. Հնացած հոլովական և բայական ձևեր։— *Հին լեզվի հոլովական և բայական ձևերի մասնիկները մեռնելով՝ մեկ մեկ բառերի մեջ քարացած մնում են, այլևս չզգացվելով իբրև կենդանի բառափոխության ձևական մասեր, այլ իբրև բառակազմության ածանցական մասնիկներ։ Այսպես՝ գրաբարի հոգնակի կազմող «Ք» հնչյունը շատ բառերի վերջում արդեն այլևս գրեթե չենք ըմբռնում իր հին նշանակությամբ, այլ լոկ իբրև մի ածանցական մասնիկ, որով կազմվում են շատ բառեր, ինչպես՝ գիր—գիրք, տես—տեսք, հայրենի—հայրենիք (տե՛ս § 237)։ Նույնպես գրաբարի «ումն» վերջացած բառերի հոգնակի ուղղականի վերջը՝ «մունք» ըմբռնում ենք իբրև մի առանձին ածանց՝ բաժանում(ն)—բաժանմունք. պատահում(ն)—պատահմունք. մտածմունք և այլն (տե՛ս § 188). նույնպես գրաբարի անցյալ դերբայի ԵԱԼ>ՅԱԼ վերջավորությունը, ինչպես՝ անցյալ, մեռյալ (տե՛ս § 190)։*

Կան բավական թվով բառեր հին լեզվի գործիական հոլովով, որոնք մնում են քարացած ձևով, օրինակ՝ կանխավ, խստիվ, ճշտիվ, լրիվ, հազիվ, դարիվ-դարիվ, ազնիվ, մասամբ, իրավ, բնավ, իրավամբ, խելոք, տեսոք, կածյոք, իրոք, առոք-փառոք, արդյոք և այլն։ Ուրիշները հետզհետե այլևս շատ չեն գործածվում, ինչպես՝ անվամբ, ճշմարտիվ, ստուգիվ և այլն։

Այդ հոլովական ձևերից մեկը, սակայն, արդեն կարելի է ածանցական մասնիկ համարել։ «Բարի» բառի հին գործիական հոլովի՝ բարեաւ ձևից ունենք բարև *բառը. նույնպես հին «առաջի» բառի գործիականը՝ առաջեաւ դարձել է առաջև, առջև. հին լեզվի մեջ եղել է նաև «հետի» բառի գործիականը հետեաւ, հետեւ, որից՝ ոտովհետեւ, այսուհետեւ, աշխարհաբար՝ հետև, ետև։ Այս եաւ>եւ>և վերջն ըմբռնվել է իբրև մի ածանցիկ և ունինք արդեն դրանց անալոգիայով՝ վերև, ներքև, ներքսև, ներսև, դրսև, միջև, որով և դարձել է մի մակբայական ածանց։ Նույնպես մի մակբայական ածանց է «ՈՒ»՝ ամոթու, ահու, ծիծաղու, ուրախու (ուրախությունից), որ ծագում է հին լեզվի (առ) ամոթոյ>ամոթու ձևից։ Այսպես և հին լեզվի հոգն. բացառականի ՈՒՅ վերջը՝ առաւօտուց, վաղուց, դարձել է արդեն մի մակբայական ածանց՝ մանկուց,*

ծերուց, փոքրուց, մորուց, որ բարբառների մեջ երևում են նաև՝ «մանկութ», «մորութ» ձևով, որի մեջ վերջին 3 հնչյունը վերածվել է իր բաղադրիչ հնչյուններից (թ+ս=ց) առաջինին, որ է Թ (տե՛ս § 34. 2)։

136. Վերջածանցների բազմազան ձևական նշանակությունները։— *Վերջածանցները միանալով բառերի ետևից՝ շատ անգամ բառի հիմնական նշանակության վրա ավելացնում են այնպիսի ձևական գաղափարներ, որ միայն շրջաբանությամբ կարելի է արտահայտել։ Դրանք լեզվի բառամթերքի համար հարստության բազմազան աղբյուրներ են, մանավանդ որ միևնույն վերջածանցը, նայելով հիմնական բառերին, տարբեր իմաստներ կարող է ստանալ։ Օրինակ՝ շատ գործածական վերջածանցներից մեկը «ՈՑ» կազմում է զանազան իմաստներով անուններ. այսպես կան՝* **դպր–ոց, ծաղկ–ոց,** *որոնց մեջ* «ոց» *ածանցը ցույց է տալիս հիմնական բառի նշանակած առարկայի տեղը. բայց ունինք և* **ամառան–ոց, ձմեր–ոց,** *որոնց մեջ* «ոց» *ցույց է տալիս ոչ թե այն տեղը, ուր ձմեռն, ամառն է լինում, ինչպես պիտի սպասեինք, այլ այն տեղը, ուր մարդիկ ձմեռը, ամառը անց են կացնում։ Այս երկրորդ նշանակությունը դեռ մոտ է առաջինին. բայց ունինք նաև* **մատն–ոց, ձեռն–ոց, ակն–ոց,** *որոնց մեջ տեղի գաղափարից անցում է լինում այնպիսի հագուստի կամ անոթի գաղափարին, որ մարդիկ կրում են մարմնի որևէ մասի վրա։ Ապա ունինք՝* **յոթն–ոց, ինն–ոց, տասն–ոց,** *որոնք ցույց են տալիս որևէ յոթն, ինն, տասը բան ունեցող իրեր։ Ապա ունինք դարձյալ՝* **կար–ոց, խառտ–ոց,** *որոնց մեջ* «ոց» *ածանցը ցույց է տալիս այն գործիքը, որով կտրում, խարտում են։ Սակայն կան դեռ* **փսփսոց, խշշոց. ջարդոց,** *որոնց մեջ «ոց» ածանցը ցույց է տալիս փսփսալու, խշշալու, ջարդելու գործողությունը, իսկ* **արևմտոց, հավխոսոց**՝ *նաև արև մտնելու, աքլորի կանչելու ժամանակը։*

Որ ածանցական մասնիկները հաճախ այսպես բազմազան նշանակություններ ունին, դրա պատճառն այն է, որ ածանցիկներն ևս, ինչպես ամեն բառ, ժամանակի ընթացքում նորանոր առումներով են գործածվել, այն էլ բառերի հետ միասին։ Երբ մի խումբ նույն ածանցներով կազմված բառերի նշանակությունը նույն ուղղությամբ փոխվում է, այն ժամանակ դրանց ածանցական մասնիկն ստանում է նոր ձևական նշանակություն։ Եվ քանի որ նոր նշանակությունների հետ սովորաբար պահվում են սկզբնական և հին նշանակությունները, ուստի երբեմն միևնույն ածանցված բառը թե հին և թե նոր նշանակությամբ է գործածվում, կամ թե նույն ածանցով կազմված մի բառ հին նշանակությամբ է գործածվում, մի ուրիշը՝ նոր։ Դրա հետևանքով և հաճախ դժվար է ընդհանուր ձևով որոշել ածանցների նշանակությունները, և լեզվի առանձին հմտությամբ միայն պետք է իմանալ, թե ո՛ր վերջածանցը որ դեպքում ինչ ձևական նշանակություն ունի։ Օրինակ՝ մի քանի բառի մեջ միայն պատահող հնացած **ՆՍ** *ածանցը* **գովեստ** *բառի մեջ կազմում է գործողության անուն, իբրև՝ գովք, գովություն, գովելը.*

պահեստ բառը, սակայն, որ հին լեզվի մեջ գործածվում է սովորաբար իբրև գործողության անուն, իբրև պահումն, պահելը, կամ պահվելը, նոր լեզվի մեջ նշանակում է՝ պահած բանները, մթերք, ավելի ևս ամբարանոց, մթերանոց. իսկ ուտեստ թե՛ հին և թե՛ նոր լեզվի մեջ գործողության անուն չի նշանակում, այլ միայն ուտելիք, ուտելու բանները, նպարեղեն։ Կա և անգործածական շահեստ բառը, որ նշանակում է վաստակ, ստացած օգուտ։

Կան ածանցական մասնիկներ ևս, որոնք, ինչպես այս «եստ» մասնիկը, երևան են գալիս հին լեզվի մի քանի բառերի մեջ միայն, որոնց անալոգիայով մենք այլևս նոր բառեր չենք կազմում, կամ թե նույնիսկ նրանց նշանակությունները չենք նույնացնում. ինչպես՝ հավատարիմ, ոխերիմ, մտերիմ (հավատ, ոխ, միտ՝ բառերից). բեկոր, հատոր, մոլոր, գլոր (բեկել, հատանել, մոլի, գիլ՝ բառերից). բորբոս, փորոս (բորբել, փորել). գաղտնի, հայտնի, նախնի. լայնշի, բոլորշի. արտաքուստ, վերուստ, ներքուստ և ուրիշները։ Դրանք քարացած ածանցներ են, որոնց մի քանի նմանները դրվում են ներքևում։

Վերջածանցների մի մասը կազմում են միայն գոյականներ, ուրիշները՝ միայն ածականներ, կամ միայն մակբայներ, բայց մեծ մասամբ թե՛ գոյականներ և թե՛ ածականներ են կազմում, նայելով թե ինչ բառի հետ են միացած։ Կան ածանցիկներ, որոնցով կազմվում են բայաբներ ու դերբայներ։ Բաղաձայնով սկսվող ածանցիկներն առհասարակ միանում են և հոդակապով։ Ածանցների մի քանի աչքի ընկնող նշանակություններ ցույց են տրված ներքևում։

Զ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

187. Աճ,— կազմում է սակավաթիվ բառեր բայարմատներից, ինչպես՝ կոտորած, կատարած, հատած, վարկած, արկած, սոված, քաղցած։ Համմտ. ված (ուած) § 228։

Այս ածանցական մասնիկն աշխարհաբարում դարձել է անցյալ դերբայի վերջավորություն՝ գնացած, տեսած և այլն։

Հավանորեն տարբեր ծագում ունի՝ «ողորմած», «գթած», «երկյուղած», «քնեցած» բառերի մեջ «ած» ածանցը, որ կարող է և «ածել» (բերել, կրել, ունենալ) բայից ծագած լինել, իբրև ողորմություն, գութ, երկյուղ բերող, այսինքն՝ կրող, ունեցող։

188. Ածո, հին՝ **աճոյ,** նոր՝ **աճու, ծու,**— կազմում է բայերից ածականներ, որոնք կարող են իբրև գոյական գործածվել, օրինակ՝ պահածո, ձուլածո, քանդակածո, կոփածո, տաշածո, ծալածո, չափածո, կռածո, փորածո, բրածո, հանածո, ներկածո, թափածո—թափծու, պահածո

—պահծու, շինածո—շինծու, ժողովածո—ժողովածու, հավաքածո—հավաքածու։ Համմտ. **վածո** *§ 229.* **ովի** *§ 199։*

189. Ակ,— *ա) Գոյական անվանը տալիս է նվազական, երբեմն փաղաքշական, այլև նվաստական նշանակություն, ինչպես՝ նավակ, տրնակ, գետակ, թռչնակ, ձկնակ, առվակ, թիակ, ձիակ, գնդակ, սարակ, դռնակ, լեղվակ, կոտորակ, կուտակ, խմբակ, վիպակ, գիսակ, լուսնակ, —այգյակ, պատանյակ, որդյակ (փաղաքշ.), ժողովակ, բուսակ, իմաստակ, գրչակ (նվաստ.), արվեստակ (ություն)։ Տե՛ս § 191, ա. յակ, եկ։*

բ) Ածականների նշանակությունը սաստկացնում կամ ձևափոխում է, ինչպես՝ կլորակ, կապուտակ, խառնակ, միակ, մենակ (մեն բառից), միայնակ, անուշակ, տափակ, բոլորակ, միջակ, միջնակ, աջողակ, ձախողակ, հեծելակ։

գ) Գոյականներից և ածականներից կազմում է տարբեր նշանակությամբ գոյականներ, ինչպես՝ օրինակ (օրենք բառից), քանակ, որակ, ոլորակ, ճաշակ, ախորժակ, դաշնակ, տեսակ, հորդորակ, խոսնակ, կոչնակ, սահնակ, սողնակ (խոսուն, կոչուն, սահուն, սողուն բառերից). փոխանակ (տե՛ս § 146. **անակ**)։

դ) Բայաբներից կազմում է գործող անձի, ապա և գործիքի և այլ անուններ, «ող» ածանցի նշանակությամբ, ինչպես՝ պահակ, գրակ (գրտնող), երևակ, ունակ, ընդունակ, հրավիրակ, խնդրակ, հետևակ, էակ, գոյակ, բուժակ, մոլորակ, ազդակ, գործակ (կենսագործակ), երդակ (ողբերգակ), նախերգակ, գիտակ, պատվիրակ (պատվեր տանող), նրվիրակ (նվէր տանող), փաստակ, վրիպակ (ինչ որ վրիպում է)։

ե) Թվականներից՝ կրկնակ, երկակ, եռակ, հինակ և այլն։ Սրանց փոխարեն գործ են ածվում սովորաբար՝ երկյակ, եռյակ, քառյակ, հընգյակ և այլն։ Տե՛ս յակ § 191. Համմտ. **իկ** *§ 175.* **ուկ** *§ 208։*

140. Ական,—*կազմում է ածականներ։ ա) Անձի հատուկ անուններից կազմված ածականները գործ են ածվում նաև իբրև գոյական և ցույց են տալիս մի ուսման կամ մի անձի հետևող լինելը, օրինակ՝ մովսիսական (կրոն, նաև Մովսեսի կրոնին հետևող), մահմեդական, նեստորական, բուդդայական, պլատոնական և այլն։ Այս բաղադրությունները փոխանակվում են «յան» ածանցով, օրինակ՝ լենինյան, Թորգոմյան, հաբեթյան, պլատոնյան, արիստոտելյան (փիլիսոփայություն)։ Տե՛ս § 192։*

բ) Անձի հասարակ անուններից, ինչպես՝ հայրական, մայրական, եղբայրական, քուրական, պապական, որդիական, երեխայական, ծառայական, նախագահական, մանկական, պատանեկան, երիտասարդական, ռամկական, ժողովրդական, բանվորական, գուսանական, երաժըշտական, նկարչական, դարբնական, հյուսնական, թշնամական, բարեկամական։

գ) Կենդանիների անուններից, ինչպես՝ կենդանական, շնական, իժական, երիվարական, հավական, խոզական, խլեզական, աղավնական, ձիական, մեղվական։

դ) Երկրների, ազգերի, տեղերի անուններից, ինչպես՝ հռոմայական, հայկական, ռուսական, հրեական, հունական, պարսկական, թուրքական, տաճկական, վրացական, անգլիական, գերմանական, եվրոպական, ասիական, եգիպտական, օլիմպիական, տեղական, նահանգական, գավառական, գյուղական և այլն։ Այս բաղադրությունները, երբ բունը հատուկ անուն է, փոխանակվում են «յան» ածանցով, ինչպես ամերիկական—ամերիկյան, աֆրիկական—աֆրիկյան, օլիմպական—օլիմպյան։

ե) Ուրիշ ամեն տեսակի գոյական անուններից, լինեն թանձրացական թե վերացական նշանակությամբ, ածականներ, որոնք ցույց են տալիս սեռական հոլովի ձևական նշանակությունը, այսինքն որևէ հարաբերություն կամ վերաբերություն գոյականի նշանակած առարկայի նկատմամբ, ինչպես՝ մարմնական—մարմնի վերաբերյալ, հոգեկան, տոնական, դասական, խմբական, եռամական, մեքենական, իրական, պայմանական, արմատական և այլն։

Այս ածականներից շատերը գործ են ածվում իբրև գոյական, ցույց տալով մի անձ, երբեմն և մի բան, որ որևէ հարաբերություն ունի ածականի բուն ցույց տված առարկայի կամ տեղի նկատմամբ. ինչպես՝ ճեմարանական, համալսարանական, դպրոցական, ուսումնական, գեղական (գյուղացի, գյուղացիներ), խորհրդական, շինական, ժողովական, հանդիսական, զորական, պինվորական, տնական, ազգական, գիտնական, օտարական, աքսորական, արգելական, առևտրական, հանրապետական, ռամկավարական, ուրվական, գրավական, ծննդական, վկայական, միջօրեական։

զ) Ածականներից, ցույց տալով վերաբերմունք բուն ածականի կամ նրանից կազմված վերացական («ություն» վերջավորությամբ) անվան նկատմամբ, ինչպես՝ խաղաղական—խաղաղի կամ խաղաղության վերաբերյալ. սաստկական, ապստամբական, զգուշական, վայելչական, քնքշական, արիական, մոլեկան (մոլական), խիզախական, ուրախական, տրտմական, տխրական, զվարթական, ներհակական, մտերմական, անմահական, հիվանդական, հիմարական, հպարտական, խոնարհական, մեծամտական, արտական, իգական, նվաստական, իսկական, նմանական, հավերժական, մոլեգնական և այլն։

Ծան. «ական» մասնիկից առաջ «ություն» մասնիկը դուրս է ընկնում. օրինակ՝ իշխանություն—իշխանական և ոչ «իշխանութենական»։

է) Բայարմատներից ու բայաբներից բազմաթիվ ածականներ, ինչպես՝ բերկրական, տքնական, մերժական, զղջական, կոչական, հրամայական, զգայական, հեգնական, զմայլական, ճախրական, պատմական, կրթական, աշխատական, հնչական, պատրական, հրճվական, հայհոյական, աղաչական.—հիացական, վերացական, զարմացական, գնացական և այլն։

Այս կարգի ածականները հաճախ ունեն գործողի անվան նշանակություն և կարող են գործածվել իբրև գոյական. օրինակ՝ թափառական (թափառող), օգնական (օգնող), փախստական, հաղթական, գաղթական, մխիթարական, սիրական և այլն։

Երբեմն նույն նշանակությամբ կազմվում են «ՈՂ» ածանցից, ինչպես՝ մարսողական—մարսական պաշտպանողական—պաշտպանական, հարձակողական, քննողական—քննական, պատրողական—պատրական. համարողական, ընտրողական—ընտրական. ձգողական—ձգական։

Նաև. «Գործ» և «փորձ» բառերից կազմվում են՝ գործնական, փորձնական։

ը) Հետևյալ բառերի մեջ միայն «կան» ձևով՝ առանց «ա»՝ հոդակապի, նաև իբրև գոյական՝ վարձկան (վարձական), լծկան, բարձկան, որսկան (որսական), մուրացկան.—լալկան (լացական), լացկան, մրրսկան, խռովկան, թռչկան։ «Կան» մասնիկն այս բառերի մեջ ունի «ող» ածանցի նշանակություն, իբրև վարձվող, լծվող, որսող և այլն։ Բայց վերջին հինգ և ուրիշ բառերի մեջ ստացել է «հեշտ, շուտ-շուտ» լաց լինողի, հեշտ մրսողի և այլն նշանակություն։ Համմտ. կոտ մասնիկը՝ մրսկոտ, բարկացկոտ և այլն. § 184։

թ) Թվականներից կազմվում են ածականներ բաշխական նշանակությամբ, ինչպես՝ քանիսակա՞ն,—մեկական, երկական կամ երկուական, երեքական, չորսական և այլն, որոնք նշանակում են՝ ամեն մեկը երկու, ամեն մեկին երկու և նմանները, կամ մեկ-մեկ, երկերկու և նմանները։

Այս ածականները գործածվում են նաև տարեթիվը տասնյակներով անվանելու համար, ինչպես՝ 1800-հինսական թվականներին, այսինքն՝ 1850-ից մինչև 1859 թվականը ներառյալ։

ժ) Բացասական «ան» մասնիկով՝ ստանում է «ելի», «ալի» վերջածանցների նշանակություն. ինչպես՝ անբժշկական—անբժշկելի, անբուժական—անբուժելի, անդրդվական—անդրդվելի, անեղծական. անշարժական, անչափական, անմարսական։ Տե՛ս § § 74, 142 ական և այլն ածանցների տարբերակման մասին։

141. Ակի,—*ա) Կազմում է ածականներ, օրինակ՝ ուղղակի, շեշտակի, շեղակի, կողմնակի, թեթևակի, թուլակի, հանկարծակի, մասնակի, անցողակի, ձախողակի, կորովակի, որոշակի, սղակի, սովորակի, վայելչակի, ուժգնակի, արշավակի, վաղվաղակի, հաճախակի, առանձնակի, ինքնակի, թափառնակի, փութանակի, խոտորնակի, լայնակի, երկայնակի։*

բ) Թվականների հետ ունի բազմապատկական նշանակություն, ինչպես՝ միակի, երկակի, կրկնակի, եռակի, քառակի, հնգակի, վեցակի, յոթնակի, իննակի, հիսնակի։ Այսպես և՝ եզակի, հոգնակի, բազմակի։

142. Ային:— *Այս ածանցը հին լեզվի մեջ սահմանափակ գործածություն ունի. դրանով կազմված են ածականներ ներքևում դրված*

նախնական աշխարհագրական անուններից, որոնք ցույց են տալիս՝ տեղ, աշխարհի կողմեր, եղանակ (տարվա և օրվա), չորս տարերք և այլն, և կապված են նախնական կրոնական հավատալիքների հետ։ Այս ածականների մեծ մասը, բացի աստղանշանով (*) դրված գոյականներից կազմվածները, հին լեզվի մեջ ունին և համանիշներ ական ածանցով (տե՛ս § 74. ական և ային ածանցների տարբերակումը)։

Այդ բառերն են՝ երկին, երկիր, դրախտ (եդեմ, ադեն), դժոխք (դժոխային), սանդարամետ, անդունդ.—ծով, *ծովեզր, *խորք (խորային), ցամաք, գետին, լեառն (լեռնային), դաշտ, *հովիտ, *ծմակ, *ագարակ, անապատ.—*գետ, *վտակ, աղբյուր, *կղզի (կղզային).—արեգակն, լուսին, աստղ.—հարավ, հյուսիս, արևելք (արևելային), արևմուտ (արևմտային), աջ, ձախ, վեր, վերին (վերնային), ստոր, ստորին (ստորնային), բարձր, ներքին (ներքնային).—Ամառն, ձմեռն, գարուն, *աշուն.—գիշեր, տիվ (տունջենային), լույս, խավար, ստվեր, նըսեմ.—զով, հով, ջերմ, սառն, ցուրտ, *տոթ, ցամաք, *չոր, խոնավ, հողմ, *խորշակ, մեգ (միգային), մառախուղ, *ամպ, *ամպրոպ, *շանթ.—անձրև (հին լեզվից կա միայն «անձրևական»), *հուր, ջուր, հող, օդ (եթեր).—*քար, տիղմ, *փուշ.—քաղաք, *բերդ, գեղ, տուն (հին լեզվից միայն «տնական»).—վայր, գավառ, աշխարհ.—աստված, դիք (դիցային), վեհ, դյուցազն, հրեշտակ, դև, ուրու.—մարդ (մարդկային), ստրուկ.—ազգ, տոհմ, խուժ, գազան, անասուն, *ժժմակ, որդն։

Մի անգամ որ հին լեզվի մեջ «ային» ածանցով ածականներ կազմված են միայն վերևում դրված անուններից, լեզվի հետագա զարգացման ընթացքում այդ ածանցի նշանակությունը տարբերվել է համանիշ «ական» ածանցից (տե՛ս § 74)։ Ըստ այսմ «ային» ածանցը ցույց է տալիս՝

ա) Այն տեղը, ժամանակը, եղանակը և այլն, որի մեջ, որի վրա կա, ապրում է, լինում է մի բան իր բնությամբ. ածականն ունի իր բնի ներգոյական հոլովի նշանակություն. ինչպես՝ ջրային (ջրում, ջրի վրա ապրող) կենդանի, օձ, թռչուն. ծովային կենդանի. ցամաքային կենդանի. հյուսիսային երկիր. երկնային լուսատու. ձմեռային եղանակ. ամառնային կյանք. օդային ամրոցներ. աշխարհային կյանք, վայելչություն. երկրային փառք. գիշերային ճանապարհորդություն. սանդարամետային խավար. հարավային լեռ. լեռնային օդ. դաշտային ծաղիկ. խավարային խորհուրդ (խավարի մեջ եղած). դրախտային կյանք. ոտնային հսկում (ոտի վրա հսկում). աթոռային, միջակային (միջին տեղում եղող). մթերային (մթերքի, մթերանոցի մեջ եղած). ստվերային, աստղային, կատարածային (աշխարհի վերջի), ներքսային։

բ) Այն տեղը կամ բանը, որից ծագում է, առաջ գալիս մի բան, ապա և այն նյութը, որից կազմվում է մի բան (համմտ. «եղեն», «յա»). ածականն ունի իր բնի բացառական հոլովի նշանակություն, օրինակ՝ հյուսիսային (հյուսիսից փչող) քամի. արեգակնային ճառագայթ, տապ,

լույս. ծովային աղ, ջուր, վտակային ջուր, աղեղնային հնչմունք. ամպային, գետնային հողմեր (ամպերից, գետնից փչող). միգային խավար. ջրային կազմություն. լուսային, հյութային, մարմնային, հողային (հողանյութ), օդային (օդեղեն) տարածություն. բոցային (բոցեղեն), խոնավային, եթերային, կապուտակային և այլն։

Այս նշանակությունից փոխաբերական առումով, հեշտությամբ անցում է լինում՝ մի բանի նման լինելու նշանակությանը, ինչպես՝ օդային անկված (օդի նման թեթև կտոր). անդնդային փոս (անդընդի նման խոր). եթերային, հողմային (հողմանման). խնկային հոտ (խընկանման). դրախտային այգի (դրախտանման)։

գ) Ինչ որ իր բնությամբ կա մի տեղում, մի ժամանակում, մի բանի մեջ, կամ թե ունի մի ուրիշ բան, մոտավորապես «ոտ» ածանցի նշանակությամբ, ինչպես՝ լեռնային երկիր (երկիր, ուր լեռներ կան, լեռնոտ երկիր). դաշտային, ծմակային երկիր, աշխարհ, կողմ, տեղ (ուր դաշտ, ծմակ կա). տղմային ջուր, փշային երկիր, շանթային լեռ, քարային երկիր, խավարային գիշեր, ջերմային տեղ, տոթային, չորային, անձրևային, եկային, ամպրոպային (եղանակ). հողմային եղանակ, նսեմային երեկո, մեգային օր.—ստվերային, կանաչային, ախտային բնություն (ախտավոր), մաղձային, մեղսային։

Հին լեզվի այս երեք տեսակի ածանցական բառերի անալոգիայով կազմված են նոր լեզվի մեջ շատ ածականներ, ինչպես՝ շրջանային, եզերային, ծայրային, տնային, սահմանային, փողոցային, հիվանդանոցային, լեզվային, շրթնային, ատամնային, քմային, կոկորդային (հնչյուններ, որոնց արտաբերման տեղն է՝ կոկորդ, քիմք և այլն).— հրաբխային, կրային, հանքային, ծծմբային, յուղային, մկանային, ոսկրային, կավային, ջրային, մաղասային, արյունային, շաքարային. հրացանային (կրակ), թնդանոթային, շարքային (զինվոր), պահակային.— մթնոլորտային, անտառային, բևեռային, հասարակածային, արևադարձային, համաշխարհային. ստամոքսային (նյութ), նյարդային (համակարգություն), սաղմային, կրճռակրային (հյուսվածք), ցեղային (հատկություն) և այլն։

Մինչդեռ նոր լեզվի առաջին շրջանում «ական» և «ային» ածանցներով կազմված կրկնակներից ավելի գործածվում էին «ական» ածանցով կազմվածները, ինչպես՝ նահանգական, գավառական, տեղական, հրապարակական,—նորագույն շրջանում, ընդհակառակն, հետզհետե ավելի գործածական են դառնում «ային» ածանցով կազմվածները՝ նահանգային, գավառային, տեղային, հրապարակային, հասարակային, հանրային, և «ային» ածանցը գործածվում է մի նոր նշանակությամբ, այն է՝ ցույց է տալիս՝

դ) Այն տեղը, բանը և այլն, որի վրա կա, կարգված է, կատարվում է մի բան։ Այս 4-րդ նշանակությունը ծագում է առաջինից ու երկրորդից և նոր լեզվի մեջ գործածվում է ավելի ու ավելի, ինչպես՝ բնակարանա-

յին հարկ—բնակարանի վրա դրված կամ բնակարանից առնվող հարկ. եկամտային հարկ. ծովային իշխանություն. խճուղային, նավային, նավատորմղային վարչություն. հարկային բաժանմունք (հարկերի վրա, հարկերի համար կարգված). բանտային վարչություն և այլն։

Մի անգամ որ «ային» ածանցը ստացել է այս նշանակություններն ու կիրառությունները, դրանց համապատասխան «ական» ածանցով կազմված ածականները, որոնք իբրև կրկնակ կան հին լեզվի մեջ, մեծ մասամբ կամ գործածությունից դուրս են ընկել, կամ ստացել են և հետզհետե տարբերակվելով ստանում են ուրիշ նշանակություն, ավելի իբրև գոյական և անձի համար, ինչպես՝ § 140 ա, ե, է, ը բերվածները մասամբ. օրինակ՝ անապատական, գեղական, լեռնական և այլ բառերը, որոնք իբրև գոյական և անձ են ըմբռնվում, նույնպես՝ ազգական—ազգային, քաղաքական—քաղաքային, տնական—տնային և այլ բառերը, որոնք տարբերակման են ենթարկված (§ 74)։ Այս պատճառով և մեր արդի զգացումով, օրինակ, գիշերական բառն այլևս չի նշանակում գիշերային, ինչ իմաստով գրում է Պեշիկթաշլյանը՝ «Գիշերական մունջ ստվերներ շուրջ կային», այլ ավելի՝ գիշերի կողմնակից, գիշեր ուզող։ Ապա պետք է նկատի ունենալ և այն, որ տարբերակման ենթարկված կրկնակների անալոգիայով նոր բառեր ևս կազմվում են. ինչպես կա «ազգային» (գրադարան), «ազգային» (խնդիր), նույնպես կազմված են՝ հանրային գրադարան, հողային խնդիր. ապա՝ հողային (հարկ), պլանային (աշխատանք), քաոսային (դրություն), դեկրետային (կարգով), հարվածային (խոսք), տոկոսային (հարաբերություն), վարկային (ընկերություն), պարհակային (կարգով) և այլն։ Բացի այդ՝ պետք է առհասարակ նկատի ունենալ, որ երբ այս երկու («ական», «ային») համանիշ ածանցներից մեկով կա արդեն մի բառ և հարկավոր է տարբեր նշանակությամբ մի ուրիշ բառ, այն ժամանակ օգտվում ենք մյուս ածանցից և նոր բառ կազմում, կամ թե հին բառերից մեկը նոր նշանակությամբ ենք գործածում. օրինակ՝ ունինք խորհրդական և հարկավոր է եղել «խորհուրդ» բառից նոր ածական կազմել նոր նշանակությամբ, և բոլորովին նոր կազմվել է խորհրդային (իշխանություն), որ իր կազմությամբ համապատասխան է «ային» ածանցի 3-րդ գործածությանը։ Այսպես նոր կազմված է և մտային, որից մտայնություն—որոշ միտք, մտածողության որոշ եղանակ ունեցող հոգեկան վիճակ,—դարձյալ ուրեմն, ըստ 3-րդ կետի. իսկ մտական հին բառը, որ հին լեզվի մեջ նշանակում է միտք ունեցող, բանական, այժմ նշանակում է մտքի վերաբերյալ (կամք, միտք, զգացում—կամական, մտական, զգացական)։ Դաս բառից ունինք դասական (պիտույքներ, գրվածք) և նոր դասային (դասակարգային). գործարանական—օրգանական, իսկ գործարանային—ֆաբրիկայի վերաբերյալ և այլն։

«Ային» մասնիկով ածականներ չեն կազմվում առհասարակ, այլ «ական» ածանցով՝

1) Անձի հատուկ և հասարակ, ինչպես և տեղի հատուկ անուններից (§ 140. ա, բ, դ)։ Հին լեզվի մեջ կան միայն նեստորային, ադամային, առնային, որոնք կազմված են ոտանավորի հանգի համար, բայց և տարբեր նշանակությամբ. ադամային—ադամից ծագած. առնային—իր այրից ծագած (ըստ հին առասպելի՝ Եվան իր մարդու կողից է շինված). մինչդեռ «առնական» նշանակում է «այրական»։ Այսպա հին լեզվի մեջ ունինք մարդկական բառի հետ և մարդկային, որ ավելի գործածական է դառնում, թերևս կ հնչյունի կրկնությունից խուսափելու համար, ինչպես և նոր լեզվի մեջ կազմված է ավազակային փոխանակ ավազակական ձևի։ Այսպես և հրեշտակային ավելի գործածական է, քան հրեշտակական։ Նոր լեզվի մեջ, սակայն, վերջին տասնամյակում անձի անուններից ևս «ային» ածանցով ածականներ են կազմվում, ինչպես՝ «դահճային», «հեղինակային», փոխանակ «դահճական», «հեղինակական» ձևերի, «պրոլետարական և ուղեկցային գրականություն», փոխանակ «ուղեկցական»։

2) Բայանուններից (բայարմատներից և բայաբներից) և նրանցով կազմվածներից (§ 140. է)։ Հին լեզվի մեջ՝ «թափանցական», «ծաւալական» բառերի հետ կան և «թափանցային», «ծաւալային», այլև «յարաշարժային», որոնք հունգի համար կազմված անսովոր ձևեր են։ Կա և «որոճային» (եզնիկ, խորենացի), փոխանակ «որոճական»։ Նոր լեզվի մեջ «ային» ածանցով կազմվում են ածականներ այն ժամանակ, երբ բայաբունը կորցրել է իր բայական նշանակությունը. ինչպես՝ «ծավալական»—ծավալել բայի իմաստով իբրև «ծավալվող». իսկ «ծավալային»—«ծավալ» բառից իբրև առարկայի «ծավալին» վերաբերող։ Նույնպես «արևադարձային»—արևադարձ բառից, որ այլևս ըստ կազմության չենք մտածում, այլ իբրև մի տեղ։ Հին «եկամտական» (դրսից եկած, մտած) բառի հետ կա նոր «եկամտային», եկամուտ բառի այժմյան սովորական նշանակությունից. «կատարածական»—ի կատար ածելու. «կատարածային»—վերջի, վախճանի, «կատարած»—«վերջ» բառից։ Այսպես՝ «հեռագրական», «հեռախոսական» բառերի փոխանակ այժմ արդեն կազմված են՝ «հեռագրային», «հեռախոսային» և շատ նմանները, որոնց մեջ այլևս նկատի չենք առնում «դարձ», «մուտ», «գիր», «խոս» բայարմատները։

148. Այն,—սակավաթիվ բառերի մեջ՝ առժամայն, նույնժամայն, նույնհետայն, միանգամայն, միայն, լռելյայն, համայն, վաղորդայն, գիշերայն։

144. Ան, անք,—երկուսն էլ նույն ածանցն են, երկրորդը գրաբարի հոգնակի Ք-ով, բայց ստացել են մասամբ տարբեր ձևական նշանակություններ. «ան» ցույց է տալիս ավելի գործող և գործիք, իսկ «անք» ձևը՝ ավելի գործողություն։ Նույն բառը կարող է մի քանի նշանակություն ունենալ։

ա) Գործողի անուն, ավելի «ան» ձևով։ Գրաբարում սակավաթիվ

բառեր կան, աշխարհաբարում սովորական են այս նշանակությամբ կազմությունները, ինչպես՝ գովասան—1. գովք ասող, 2. գրաբարում նաև գովասանելու գործողություն, գովասանություն, գովասանք. վիպասան—1. վեպ ասող, 2. վիպասանք—վիպասանություն. ճարտասան (ճարտար ասող), սուտասան, իշխան, բուժան, ճոճան, արժան (արժող, ապա՝ արժանի և «էժան»), դիպան (դիպուկ),—վազան (վազուկ), կծան, խածան, կռվան, խրտան, թացան, կպչան, հարբան, ճրվճրվան, ճոճռան և այլն։ Ծորան—ծորացող, և ապա ծորանք—ծորացող ջուր. գրաբար նաև՝ ծորումն. հոսան—հոսող, ապա՝ ձյունն այս ու այն կողմ քշող քամի. հոսանք—1. հոսող ջուր. 2. հոսումը. սահանք։

բ) Կրող և արգատիք առարկան. արգատիքն ավելի «անք» ձևով։ Բայն առնվում է կրավորական նշանակությամբ. ինչպես՝ կթան—կրթվող, կթելի. խոտան—խոտվող, խոտելի. ցուցանք—ցույց տրվող, ցուցնելիք. փխրան—1. փխրվող, փխրուն, 2. փխրվածք, փխրուք, փլխրանք. փշրան, փշրանք—փշրվածք, քերանք (տե՛ս «ուք» ածանց), լվացանք (լվանալու ջուր՝ մի բան լվանալուց հետո). հանդերձան, հանդերձանք—պատրաստած բանները, կազմած, հորինվածք. նախերգան, նախերգանք—ինչ որ ամենից առաջ երգվում է. պատվիրան—պատվիրածը. բաղձանք, տենչանք—1. տենչացած, ցանկացած բանը, 2. բաղձալու, տենչալու գործողություն. հայհոյանք—1. հայհոյածը, ասած հայհոյական խոսքերը, 2. հայհոյելու գործողություն. գողանք—գողացած բան. ողողանք—1. ողողածը, ողողելու ջուրն ողողելուց հետո, 2. ողողելու գործողություն. երազանք—1. երազած բանը, 2. երազելը. աշխատանք—1. աշխատածը, վաստակ, 2. աշխատելու գործողություն. հետևանք—ինչ որ հետևում է, հետևածը. պատառանք—փաթաթած բան. փորձանք, գրաբար նաև փորձան—1. գլխին եկած պատահար, ապա՝ դժբախտ պատահարներ, փորձվելու գործողություն. կցկցանք. արտադրանք և այլն։ Տե՛ս nif § 222, 174 ծան. 2։

գ) Գործիք, միջոց, իր, նյութ, որ բանեցնում են մի գործողություն կատարելու համար, կամ ինչով որ մի բան անում են. գործիքի անունը մեծ մասամբ «ան» ձևով, օրինակ, խթան, չնջան, գլան, տուփան, տափան, օրորան, կռան, կորզան (կորզելու գործիք), փական կամ փականք, եղան (յեղել—շրջել, շուռ տալ բառից), պատան կամ պատանք, փաթաթան, փրկան (որից՝ փրկանակ) կամ փրկանք, պաճուճան կամ պաճուճանք, սեթևեթանք, զարդարանք, պչրանք—1. այն բաները, որոնցով զարդարվում պչրվում են, 2. պչրվելու գործողություն. պարծանք—1. պարծանքի նյութը, առարկան, որով պարծենում են, 2. պարծենալը. ամոթանք—1. ամաչեցնող բանը, 2. ամաչելու գործողությունը. շպարանք—1. այն բանը, որով շպարվում են, շպարվելու ներկը, 2. շպարվելու գործողություն. կապան (կապող կիրճ), կապանք (շղթա) և նմանները։

դ) Գործողության տեղի անուն, ինչպես՝ ոլորան—1. ոլորելու, պրկելու գործիք, 2. ճանապարհի կամ փողոցի ոլորվող տեղը կամ մա-

սը. արգելան— արգելարան, բանտ. պատսպարան—պատսպարվելու տեղ. կայան—կենալու, կանգնելու տեղ, կայարան։

ե) Գործողության անուն։ Այս նշանակությամբ սակավաթիվ բառեր կան Ան ձևով. սովորականն է ԱՆՔ ձևը թե՛ գրաբարում և թե՛ աշխարհաբարում։ Սակայն այս ածանցներով կազմված բառերը սովորաբար մաքուր գործողություն չեն ցույց տալիս, ինչպես «ում(ն)» ածանցը, այլ հաճախ նաև գործողության հետևանքը իբրև դրություն կամ վերևում դրված նշանակություններից մեկը, ինչպես՝ կարկատան, գրաբար՝ կարկատանք—1. այն կտորը, որով կարկատում են, 2. կարկատելու գործողությունը. որոճան—1. աշխ. որոճացող, 2. գրաբար՝ որոճում. կցան—1. ինչ որ կցվում է, 2. կցում. շրջան—1. շրջում, փոփոխություն, 2. շրջելու ճանապարհը, ապա և՝ բոլորակ. թռչան—1. աշխ. թռչող, 2. գրաբար՝ թռչում, թռիչք. երևան—երևում (երևան գալ). հրավիրանք, գրաբար՝ հրավիրան և այլն։ Բերենք բառեր էլ անք ձևով, առանց տարբեր նշանակությունները բացատրելու. այսպես՝ մեղադրանք, բամբասանք, վիրավորանք, զրկանք, գգվանք, հարգանք, սխալանք, զարմանք, զարհուրանք, զզվանք, տանջանք, դեգերանք, ծփանք, լուտանք, հանցանք և այլն։ Տե՛ս ուք, ունք, անք *(§ 222)*։

145. Ան, անք *ուրիշ ծագումից են, քան նախորդները. գրաբար՝ ԵԱՆ ձևով. բարբառային ՎԱՆՔ. ունեն հոգնակի հավաքական նշանակություն, ինչպես՝ ձիան կամ ձիանք. լվան. իշան, բարբառներում՝ իշվանք, նույնպես՝ տեղվանք. ուղտան, ձվան(ք), իծան, դիվան կամ դիվանք, կեղևանք, գեղանք, կտորտանք, ոսկրոտանք, ճոթանք. գրաբարից՝ գրյանք. գրաբար կան նաև բերդեան, տեղեան, իշեան, խոզեան և այլն։* Տականք *(տակուք, տակունք, տակուցք)—որևէ բանի տակը մնացած վատ մասը, գինու տականք—դիրտ, մրուր, կալի տականք. մաղի տականք.* գլխանք—*մաղի երեսին մնացած վատ մասը։ Տե՛ս § 166* ենք. *§ 222* ուք։

146. Անակ *(ան + ակ),—ինչպես՝ ճոճանակ, փրկանակ, գանձանակ, փոխանակ, հաղթանակ—1. հաղթող, 2. հաղթություն, 3. հաղթության նշան՝ պսակ ու վարձ. մրցանակ—1. մրցանք, մրցում, 2. պսակ և վարձ մրցանքի. վարձանակ—1. վարձ, 2. մրցանակ. ցուցանակ—իբրև ցույց տվող, նշանակ. եղանակ (յեղուլ, յեղել—փոխել, դարձնել բայարմատից)—փոփոխություն (օդի, տարվա, երգի), ապա և՝ փոփոխվելու կերպը։ Նոր բառեր են՝ զսպանակ (զսպել, զսպված լինել բառից) ուժանակ և այլն։*

147. Անակ, նակ (անկ) *նշանակում է՝ կերպ, պես, օրինակ՝ հին «այսանակ» դարձել է «այսանկ», նույնպես «ադանկ», «անանկ». քրդանակ, շեղջանակ (շեղջի նման դիզված). խոտորնակ (խոտոր, ծուռ կերպով, լայնակի), ռուսնակ, հայնակ (հայենակ), վրացնակ և այլն։ Տե՛ս § 141* ակի։ *Համմտ.* «վարի» *§§ 230, 133. 6։*

148. Անի,—«*ունեցող*». *ինչպես՝ լեզվանի (ճարտար խոսող. շա-*

տախոս), գեղանի (գեղեցիկ), մորվանի (միրուք ունեցող)։ Գործածվում է սովորաբար թվականների կամ ուրիշ ածականների հետ, ինչպես՝ մեծ-քթանի, երկու-դռնանի, հինգ-աչքանի (ջաղաց), երկու-գլխանի։ Համմտ. են § 164։

149. Ան,—*հին լեզվից հոգնակի հավաքական նշանակությամբ ունենք՝ նամականի, ազատանի, ավագանի, կանանի (բարբառ. կնանիք)։*

Նաե. Այս ածանցը մի քանի բարբառների մեջ դարձել է հոգնակի թվի վերջավորություն բազմավանկ բառերի համար՝ քաղաքնի—քաղաքներ, փողոցնի—փողոցներ։ Նույն ածանցն է նաև «սրտերնիս» (մեր սիրտը), «պարտեզնիդ» (ձեր պարտեզը), «պարտեզնին» (իրենց պարտեզը) ձևերի մեջ։

Անց, *տե՛ս նց § 195։*

150. Անուտ *(ան + ուտ),*—*սակավաթիվ բառերի մեջ, ինչպես՝ շիջանուտ (մարող, անցնող), հոսանուտ (հոսող, անցնող), վիժանուտ, հրանուտ (կրակ դարձած)։*

151. Անց, ենց,—*օրինակ՝ երեսանց, սրտանց (ի սրտից), գիշերանց (ի գիշերից), շապկանց, հալավանց. առավոտանց. առավոտենց. հեռվանց, զատանց, բարձրանց, ետևանց, ցածանց. խորանց, ներսանց, դրսանց, քովանց, տականց, եզրանց (եզերքով), նոր՝ մեկանց, երեսահանց, տակնահանց։ Մեծ մասը բարբառային են. գրական լեզվի մեջ՝ ներսից, դրսից, տակից, վերևից և այլն։ Գլխանց—1. վայրիվերո, հապճեպով և ոչ լավ կատարված. գլխանց անել, 2. սկզբից. այս գլխանց։ Բարբառային են՝ ըտենց, ընենց, հենց, ոնց, շատոնց և այլն։ Տե՛ս § 133. 5, § 192։*

Անք, *տե՛ս ան § 144. այլև՝ ենք § 166։*

152. Աշ,— *Մի քանի բառերի մեջ՝ թթվաշ (քիչ թթու), մատղաշ («մատաղ» բառից), կարմրաշ (մի քիչ կարմիր)։*

Ավետ, *տե՛ս վետ § 231։*

Ավոր, *տե՛ս վոր § 232։*

Ավուն, *տե՛ս վուն § 233։*

153. Ատ, *տե՛ս § 132, ինչպես՝ գունատ, քթատ, կռնատ, ձեռնատ, պոչատ, ընչատ, պնչատ, ականջատ, շրթնատ, լեզվատ, գլխատ, կառափնատ, ոտնատ. լուսատ, տերևատ, կրճատ (կարճատ), որից կարճատել, կիսատ.—կտավատ (կատվահատ, կտավահատ). փայտատ.—մորատ, բացատ, խորխորատ, հեղեղատ, խրամատ, ականատ, ակնատ, փլատ (փլած տեղ), ճղատ (ճեղք, ճեղքվածք), ճղատ—(ճղատ լինել, ճղատվել), փորատ, շեղատ, թեքատ, փարատ (որից՝ փարատել—փարոյման կտրել)։*

Այսպես և ուրիշ բայերի մեջ՝ երկատել, տրամատել, շնչատել, մասնատել ածվատել, տնատել, տողատել, ծրատել, և այլն։ Տե՛ս բայերի կազմության մեջ՝ խանձատ-ել, խածատել, փշրատել, կտրատել (§ 241. 1)։

154. Ար, արք,— *սակավաթիվ բառերի մեջ, ինչպես՝ զարդար-*

(«զարդ» բառից, նաև աղջկա անուն. դրանից ծառզարդար), փապալ (փապ բառից), պատահար (պատահել բառից)։ Բայերի մեջ՝ միգադրել («մեգ» բառից—մթագնել), աստվածարել. ոսկերել (որից՝ ոսկերիչ. ոսկի+ար-ել), մեծար-ել (հյուրամեծար)։ «Առնել» (անել) բայի «արար» բունն է առանց կրկնության «ար» ձևով։ Նոր կազմված՝ լուծարք, լուծարել. կեղծարք, կեղծարել, գործարք։

Արաև, *տե՛ս* **ռաև.** *§ 234։*

155 ա. Արդ,—նշանակում է՝ կերպ. ինչպես՝ խորանարդ, գմբեթարդ, կորնթարդ, սեղանարդ, թամբարդ, սանարդ և այլն։ *Տե՛ս § 133. 2։*

Արեն, *տե՛ս* **երեն** *§ 168։*

155 բ. Արենք, որայք,— *հավաքական հոգնակի նշանակությամբ, սակավաթիվ բառեր՝* **գեղարենք, գեղորայք** *(***գեղրանք***),* **տեղարենք, արտորայք, դեղորայք, վանորայք***։*

Ացի, *տե՛ս* **ցի** *§ 235։*

Ացու, *տե՛ս* **ցու** *§ 236։*

156. Բար։— *Այս, ինչպես և* **պես, որեն** *վերջածանցները գրեթե անխտիր գործածվում են իբրև համանիշներ. հին լեզվի մեջ ունենք բազմաթիվ բառեր՝ կազմված դրանցից երկուսով և նույնիսկ երեքով, ինչպես՝* **գեղեցկաբար, գեղեցկապես, գեղեցկորեն. եղբայրաբար, եղբայրապես. հայրաբար, հայրապես. հայրորեն. բնականաբար, բնականապես,** *նոր կազմված է նաև՝* **բնականորեն. տնտեսաբար, տնտեսորեն. աղքատաբար, աղքատապես, աղքատորեն. ազատաբար, ազատորեն։** *Լեզուն, սակայն, այժմ ձգտում է արդեն դրանց կիրառությունը և նույնիսկ նշանակությունը տարբերակել։* **«ԲԱՐ»** *ածանցը ծագած լինելով* **«բարՐ»** *բառից՝* **բաղադրվում** *է անձի անունների հետ և նշանակում է* **իբրև,** *օրինակ՝ հայրաբար (խրատել) նշանակում է՝ իբրև հայր, հայր լինելով խրատել. եղբայրաբար—իբրև եղբայր, այսպես և ընկերաբար, հերոսաբար, հեղինակաբար, երեխայաբար, տիրաբար, տնտեսաբար, բարեկամաբար, ավազակարար, թշնամաբար, մտերմաբար և այլն։ Այս նշանակությունը ստանում է և այնպիսի ածականների հետ, որոնք բարոյական հատկություն են ցույց տալիս և մարդուն են վերաբերում, ինչպես և կենդանիների անունների հետ՝ փոխաբերական նշանակությամբ, օրինակ՝ օտարաբար վարվել—իբրև օտար. անկեղծաբար, արիաբար, մեծաբար (իբրև մեծ), հիմարաբար, տգիտաբար, միամտաբար, ընտանեբար (իբրև ընտանի, տան մարդ), աղնվաբար, ագահաբար, հանդգնաբար, անամոթաբար, մարդատիրաբար, վայրենաբար, անարգաբար,—գազանաբար, խոզաբար, առյուծաբար, անասնաբար, գայլաբար, իշաբար։ Համմտ. «վարի» ածանցը, օրինակ՝ իշավարի, մեծավարի։— Գոյականաբար, ածականաբար—իբրև գոյական, իբրև ածական. աստիճանաբար, պարբերաբար, բնականաբար, փոխաբերաբար՝ նշանակում են՝ աստիճանական, պարբերական, բնական ընթացքով, կարգով, եղանակով, իբրև փոխաբերություն։ «Համեմատաբար» նշանա-*

կում է՝ համեմատությամբ, համեմատելով. զրպարտաբար, խոստովանաբար, վշտակցաբար, ցավակցաբար, փոխարինաբար՝ նշանակում են՝ իբրև զրպարտություն, զրպարտելով և այլն։ «Աշխարհաբար», «գրաբար»՝ նշանակում են՝ աշխարհականի, գրքի եղանակով. գրում են նաև «աշխարհաբառ», «գրաբառ», իբրև աշխարհի, գրքի բառով, բարբառով, խոսքով։ Տե՛ս պես, որեն §-ներ 204, 226։

157. Գար,— սակավաթիվ բառերի մեջ. ցույց է տալիս՝ հիվանդություն, փչացած լինելը. ինչպես են՝ ցավագար, խելագար, մտագար, աչագար, միջագար (մեջը, միջուկը փչացած), լեզվագար (փոխաբերաբար՝ շատ և դատարկ խոսող), գլխագար։

158. Գին,— կազմում է ածականներ սաստկական նշանակությամբ, ինչպես՝ ցավագին (սաստիկ ցավով, ցավելով), սրտագին (շատ սրտանց), ողբագին (սաստիկ մեծ ողբով, սաստիկ ողբալով), վշտագին, տոթագին (սաստիկ տոթ), ցրտագին, թախծագին, կսկծագին, ահագին (հին լեզվի մեջ սաստիկ ահեղ, ահավոր), ուժգին, մոլեգին, դանդաղագին, հիվանդագին, վարթագին, տխրագին, մթագին, տրտմագին, լալագին, զայրագին, ողորմագին, կողկողագին, կաթոգին։

159. Գույն,— հին լեզվի մեջ ածականներին տալիս է բաղդատական աստիճանի նշանակություն, նոր լեզվի մեջ սովորաբար սաստկական նշանակություն ունի, երբեմն և գերադրական աստիճանի. ինչպես՝ մեծագույն, փոքրագույն, լավագույն, հնագույն, նորագույն, խստագույն, գեղեցկագույն, հորդագույն, ճոխագույն, արիագույն, բարեգույն, դանդաղագույն, կանխագույն, խտագույն, նրբագույն, սրբագույն, պնդագույն, ավագագույն, առավելագույն, ընտրելագույն, սքանչելագույն, ծայրագույն, բարձրագույն, գերագույն, մանկագույն,—գազանագույն, առյուծագույն։

Նաև.—Ջպետք է շփոթել «գույն» գոյականով կազմված բարդությունների հետ՝ սեվագույն—սև գույնով, վարդագույն, մանիշակագույն, դեղնագույն։

160. Ե (հին՝ է),—գոյականներից կազմում է ածականներ, ցույց տալով այն նյութը, որից շինված, կազմված է առարկան. օրինակ՝ արծաթե (բաժակ), ոսկե (մատանիք), մորթե (գդակ), բրդե (գուլպա), գարե (հաց), եղե (մոմ), կտավե (հագուստ), կավե (աման), փայտե (դուռ), կաշվե (գոտի),—հրե, ջրե, մոմե, լուսե և այլն։ Համմտ. եղեն, յա (եայ), ի, §-ներ՝ 162, 174, 189։

Եկ, տե՛ս յակ § 191։

161. Եղ,— գոյականներից կազմում է ածականներ՝ մի բանից շատ ունենալու նշանակությամբ, ինչպես՝ զորեղ, ուժեղ, հանճարեղ, ահեղ, համեղ, հոտեղ, գունեղ, մազեղ, ասվեղ (բրդոտ), թիկնեղ, աչեղ, հոնեղ (խիտ հոնքերով), մորվեղ (մեծ, խիտ մորուսով), ընչեղ (շատ ինչք ունեցող), խավեղ, ժանեղ (ժանեվոր), ճաճանչեղ։

Համմտ. ավոր, ավետ, ոտ, եղ—հոտավոր, հոտոտ, հոտավետ, հոտեղ։

162. Եղեն,— *բարբառներում գործածվում է իբրև անկախ բառ, նշանակելով այն նյութը, որից շինված է առարկան, ինչպես՝ Ասոր եղենք փայտ է։ Նշանակում է նաև մի բանի էությունը, բուն իրողությունը՝ օրինակ՝ գործին եղենը ի՞նչ է։ 1. Գոյականներից կազմում է ածականներ, ցույց տալով նյութը, որից շինված է առարկան, ինչպես՝ հողեղեն (հողանյութ), ոսկեղեն (ոսկենյութ), լուսեղեն, հրեղեն, տարրեղեն, նյութեղեն (նյութից շինված), մազեղեն, մոմեղեն, ջրեղեն, բոցեղեն. ամպեղեն և այլն։ 2. Գոյականներից կազմված այս ածականները, ինչպես և մի քանի ածականներից նույն ձևով կազմված բառերը, սովորաբար իբրև գոյական են գործածվում, ցույց տալով մի բանից շինված, կամ մի որոշ տեսակի առարկաներ՝ հավաքական նշանակությամբ, ինչպես՝ ոսկեղեն (ոսկուց շինված բաներ), խեցեղեն, երկաթեղեն, փայտեղեն, կաշվեղեն, մորթեղեն, կտավեղեն, բրդեղեն, բեհեզեղեն, սպիտակեղեն, ճերմակեղեն, հանդերձեղեն, կտորեղեն, ճոթեղեն—ուտելեղեն, մսեղեն, գաթեղեն, կթեղեն, կաթնեղեն, քաղցրեղեն (քաղցրավենիք), խմորեղեն, կանաչեղեն, բանջարեղեն, ընդեղեն—հավեղեն, թռչնեղեն։*

163. Եղի,— *մի քանի բառերի մեջ՝ աղտեղի (աղտոտ), կթեղի (կթելու՝ քաղելու բան, բերք. հմմտ. կթեղեն), մսեղի (մսեղեն)։*

164. Են,— *ծագում է հին ԵԱՆ ձևից, ինչպես՝ նկարեն, երկու-դրոնեն, երեք-աչքեն (երկու-դռնանի, երեք-աչքանի), մի-օրեն, երկ-օրեն (գործ), երկու-շաբթեն, մի-ամսեն, մի-տարեն (բան), յոթը-տարեն, երեք-ամսեն (մի-օրվա, երկու-օրվա, երկու-շաբաթվա, այլև՝ մի-օրական, մի-ամսական, երեք-ամսական, մի-տարեկան), մի-բահեն (ջուր. մեկ բահաչափ)։ Հմմտ. յան (եան) § 192, յա (եա) § 189, անի § 148։*

165. Ենի, ենիք,— *ա) Կազմում է ածականներ գոյականներից ու ածականներից, ինչպես՝ հայրենի, մայրենի, վայրենի,—լրբենի, նրբենի, մաքրենի (մաքուր), թթվենի (թթվաշ), քաղցրենի (քաղցր), քաղցրավենի (քաղցրեղեն), շողշողենի, արփենի (արփայիև, արեգակնային), մատաղենի (մատաղաշ)։*

բ) Մի քանի բառեր «Ք» ածանցով իբրև գոյական՝ ստանում են հատուկ նշանակություն՝ հայրենիք, ծննդենիք (ծննդավայր), մահենիք (մահվան ու թաղման սգածեսը), քաղցրավենիք։

գ) Ծառատունկերի և այլ բույսերի անուններ՝ խնձորենի, տանձենի, շլորենի, նշենի, թթենի, թզենի, ձիթենի, նռենեն, ուռենի, կեռասենի, նշտարենի, մրտենի, մոշենի, սարդենի, խաղողենի, վարդենի,—մորենի, բամբակենի, դդմենի, վարունկենի, խնկենի, շաքարկենի (խնձորենու տեսակ), կանաչկենի (խաղողի տեսակ), կարմրենի (խաղողի, տանձի տեսակ)։ Տե՛ս Ի § 174։

դ) Կենդանիների մորթ կամ միս, ինչպես՝ խոզենի (միս), այծենի (մորթ), ոչխարենի (մորթ), գառնենի (մորթ), ուլենի (մորթ), գայլենի, ուղտենի, սամուրենի, առյուծենի, ընձենի, աղվեսենի, օդենի (ոչխարի մորթ)։

Ենց, *տե՛ս § 151, անց, § 192, յան։*

166. Ենք, անք, ոնք, ունք,— *անուններից և դերանուններից կազմում է անեզական գոյականներ՝ ստացական նշանակությամբ. ինչպես՝ Խաչոյենք—Խաչոյի ընտանիքի մարդիկը. Տիգրաններնք, Մելիքենք, Վարդանանք, խնամոնք, Խունոնք կամ Խունունք, քեռոնք, խմոնք, քոնոնք, մերոնք, ձերոնք։— Ծագած է հին լեզվի «եանք», «անք» հոգնականից, ինչպես՝ Ատոմեանք—Ատոմներ, Ղևոնդեանք—Ղեվոնդենք, Վարդանանք, Մարիամանք (Մարեմանք)։ Տե՛ս § 171 եք:*

167. Եստ, իստ, ուստ *(տե՛ս § 136),—սակավաթիվ բառերի մեջ՝ գովեստ, պահեստ, ուտեստ, շահեստ, հանգիստ.—փախուստ, թաքուստ, գալուստ, ելուստ, կորուստ, ապրուստ, պահուստ, հագուստ, կապուստ (հագուստ ու կապուստ)։ Կա և «ուստ» բացառականի նշանակությամբ՝ արտաքուստ, ներքուստ, վերուստ։ Տե՛ս § 218։*

168. Երեն, արեն,— *ինչպես՝ հայերեն, ռուսերեն, թուրքերեն, հունարեն, չինարեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն և այլն. բոլոր ազգերի անուններից՝ վերջի ացի մասնիկը դուրս ձգելուց հետո. բացառություն՝ վրացի-վրացերեն։*

169. Երյակ *(հին՝* **երեակ), րյակ,**— *թվականներից՝ երրյակ—երրորդ թիվը կամ երեքը միասին. այսպես և չորրյակ, հինգերյակ, յոթներյակ, ութերյակ, տասներյակ, քառասներյակ, հիսներյակ։*

170. Երորդ, րորդ,— *դասական ածականներ (թվականներ) է կազմում հիմնական թվերից՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, տասնումեկերորդ, տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնուչորսերորդ, տասնուհինգերորդ, տասնուվեցերորդ, տասնյոթներորդ, տասնութերորդ, տասնիններորդ, քսաներորդ, քսանմեկերորդ, քսաներկուերորդ, քսաներեքերորդ, քսանչորսերորդ, քսանհինգերորդ և այլն։*

Եցի, *տե՛ս* **ցի** *§ 235։*

171. Եք, *(հին՝* **էք), ենք,**— *ծագում է հին եայք ածանցից. ցույց է տալիս՝ ծես, արարողություն, հանդես, ինչպես՝ ջրօրհնեք (ջրօրհնենք), ութօրեք (հին լեզվի՝ ութօրեայք), յոթնօրեք (հին լեզվի՝ եօթնօրեայք), հիմնարկեք, դռնաբացեք (դռնբացեք), նշանդրեք, երեսբացեք և այլն։ Կան նաև՝ մատնեք, մատնենք—մատի չափ ակոս, գոգ, խորություն. մերձեք (մոտ եղածներ—«մերձեայք», ինչպես՝ «արևելեայք»)։*

172. Թափ *(տե՛ս § 133. 3),— ինչպես՝ խելաթափ, ուշաթափ, մըտաթափ, գունաթափ, սրտաթափ, գինեթափ, տեղաթափ, մարդաթափ, բևեռաթափ, ոսկրաթափ, ձիաթափ, ուժաթափ, զինաթափ, հայրենաթափ, քնաթափ և այլն։ Այսպես նոր բաղադրված են շատ բառեր, ինչպես՝ նգաթափ, սեղանաթափ անել, պախուցաթափ, համետաթափ, շղթայաթափ, պայտաթափ, դիմակաթափ (դիմակազերծ), պատրանաթափ, համայնաթափ լինել (հիասթափվել), բեռնթափ, բեռնաթափ (բեռնաթափք), բեռնթափություն), ոսկեթափ (ոսկեզօծը գնացած)։*

178. Ծեռ, ծեռն,— *սակավաթիվ բառերի մեջ, ինչպես՝ նենգաժեռ,*

ախտաժետ.— նենգաժետ, կարմրաժետ (կարմրավուն), դեղնաժետ, կապտաժետ։ Համմտ. **վուն § 233։**

174. Ի, իք. *ա) Ծառերի և ուրիշ բույսերի անուններ (տե՛ս § 165, գ), սովորաբար* **ծառ** *բառի հետ «Ի» ածանցով՝ ինչպես՝ կաղնի, սոսի, բարդի, կաղամախի, օփի, մայրի, մամխի, տոսախի, նոճի, սոճի, եղևնի, մորի, հաճարի,— ծիրանի, տանձի, խնձորի, սերկևիլի, դեղձի, կեռասի, նշի, ընկուզի և այլն։*

բ) Նյութի անուններից «Ի» ածանցով կազմվում են ածականներ, որ ցույց են տալիս, թե ինչից է շինված մի բան, ինչպես՝ պղնձի, երկաթի, արծաթի, փայտի, կավի և այլն։ «Ոսկի» բառն անփոփոխ առնվում է իբրև ածական՝ ոսկի մատանիք, ոսկի բաժակ։ Համմտ. § § 160, 162, 189։

գ) Գոյականներից և ածականներից կազմում է ածականներ, և «ԻՔ» ածանցով գոյականներ զանազան նշանակություններով, օրինակ՝ աղի, ջրի (ջրիկ),— կորովի, արժանի, արժանիք. պիտանի, հարգի, մոլի («մոլ» բառից), ձրի («ձիր» բառից), կծծի (կծուծ), վայրի («վայր» բառից), բռնի («բուռն» բառից), հետի, հավաստի, հավաստիք. կարի («կար» ուժ բառից), կարիք. ընտանի, ընտանիք. անվանի, կատաղի, հովանի, արդի, վարդի, վաղեմի, կթի։ Այսպես նաև բարդ ածականների վերջում՝ այլազգի, համազգի, գաղտագողի, կնամարդի, վատամարդի, տմարդի, քաղաքավարի, այսպիսի, այդպիսի, այնպիսի,—ջրարբի, միականի, միաղիմի, բազմադիմի, երկդիմի, միակողմանի, բազմակողմանի, միոտանի, երկոտանի, չորքոտանի, քառոտանի, եոոտանի, միասայրի, երկասայրի, եռանկյունի, երկճղի, երկթերթի, երկգլխի, վեցձեռնի, երկուղունի։ (Համմտ. են § 164, անի § 149)։

դ) Անորոշ դերբայի վերջից «Ի» դրվելով՝ կազմում է բայածականներ, նշանակում է՝ ինչ որ պետք է, կարելի է անել, օրինակ՝ ասանելի*—ինչ որ կարելի է տանել.* զարհուրելի*—ինչից որ պետք է զարհուրել,* մեռանելի*—որին կարելի է մոտենալ և այլն։ Այսպես՝ խղճալի, ղգալի, անձկալի, ցանկալի, բաղձալի, տալտփալի, հուսալի, ղարմանալի, հասկանալի, սոսկալի, փափագելի, կարելի, գրվելի, ընդունելի, փառելի, խնկելի, եղկելի, կասկածելի, ծիծաղելի, հարգելի, տոնելի, մատչելի, տեսանելի, հաճելի, ատելի, սիրելի, այրելի, շոշափելի, սլատկառելի, սքանչելի, ողորմելի, գարշելի, զզվելի, սարսափելի, նախանձելի, բուժելի, ջրելի, ցավերի, և այլն։ Այսպես և «ան» բացասականով՝ անասելի, անհաղթելի, անտանելի, անպատմելի, անծերանալի, անդառնալի, անմոռանալի, անհավատալի, անհուսալի, անգնալի (ուր որ գնալ չի կարելի), անմերձենալի, անդրդվելի, անլռելի և այլն։*

Ծան. 1.— Չպետք է սրանց հետ շփոթել՝ տրտմալի(ց), ուրախալի(ց), ցավալի(ց), ամոթալի(ց), զվարճալի(ց), բարդ բառերը—տրտմությամբ, ցավով լի, լցված և այլն։

Ծան. 2.— Հին լեզվի մեջ ներգործական բայերից կազմված այսպիսի ածանցումները կարող են թե՛ ներգործական և թե՛ կրավորական նշանակություն ունենալ, և պոծողի

և կրողի անուն լինել. օրինակ՝ կրելի նշանակում է թե՛ կրող և թե՛ ինչ որ կրվելու է, կարելի է կրել, կրվող: Նոր լեզվի մեջ այդ կազմություններն ունեն կամ կրավորական կամ չեզոք նշանակություն. ինչպես՝ բուժելի նշանակում է միայն՝ ինչ որ կարելի է բուժել, բուժվող. երևելի—երևացող. նազելի—նազ անող. ծորելի—ծորող. անչնչելի—չշընչվող: Համմտ. § 144 ա. բ. «ան», «անց» թե իբրև գործողի անուն և թե իբրև կրող և արգասիք առարկա:

ե) Անորոշ դերբայի հետ իբ ածանցը կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության ենթակա կրող ւստարկան, կամ գործողության տեղը. ինչպես՝ ուտելիք, խմելիք, ըմպելիք, հագնելիք, վառելիք, հիշելիք, օծանելիք, հավատալիք, զարմանալիք, հրաշալիք, սքանչելիք, խաղալիք (նաև խաղալիկ), գիտելիք, ճեմելիք (ճեմելու տեղ) և այլն: Ասպես և բոլոր բայերից կարող են կազմվել գոյականներ, որոնք կարող են գործածվել իբրև ածական՝ ասելիք (ասելու բան), գրելիք, անելիք, առաջարկելիք, երթալիք, գալիք (գալու բան), լինելիք—ինչ որ լինելու է. նույնիսկ կրավորական բայերից՝ հաղթվելիք, խմվելիք, գրվելիք, կառուցվելիք:

ղ) Անորոշ դերբայի հետ ի, իբ ածանցումներից մի քանի բառեր ցույց են տալիս գործիք, գործարան կամ անոթ. ինչպես՝ բանալի(ք),—սկզբնապես՝ բացող, ունելի(ք)՝ սկզբնապես՝ բռնող, ապա՝ մաշա. հայելի (նայելու անոթ), տեսանելիք (տեսնող), ճաշակելիք, հոտոտելիք, շոշափելիք, հպելիք, լսելիք, ծամելիք: Գրաբարում նաև՝ բառնալիք (ձող՝ ծանր բանը բարձրացնելու), մանելիք (մանելու գործիք, նաև մանելու բան):

է) Ի, ավելի իբ ածանցով՝ գոյականներից, ածականներից ու բայարմատներից կազմվում են գոյականներ զանազան նշանակություններով, ինչպես՝ հարսանիք, ընթրիք.— ընտանի, ընտանիք. մատանի, մատանիք. աղորի, աղորիք. գործի, գործիք. սերմանիք, տանիք, խոպոպիք. կեռիք. հավաստի, հավաստիք. արժանի, արժանիք. կարիք, չարիք, արգասիք և այլն:—Ավետիք, կարծիք, կեղծիք, շնորհակալիք, դրվատիք, ճապաղիք, պարտիք, ուտիք (ուտիս), ավանդիք, երաշխիք:

175. Իկ,— *ա) Գոյականներից կազմում է գոյականներ նվաղական և փաղաքշական նշանակությամբ՝ աստղիկ. մասնիկ, ձկնիկ, ձեռնիկ, թաթիկ, ոտիկ, բբիկ, աչիկ, քարիկ, թռչնիկ, թիթեռնիկ, ճանճիկ.— մանկիկ, եղնիկ, լուսիկ, քաղաքիկ. փլիկ,—էրիկ, կնիկ, հայրիկ, մայրիկ, պապիկ, մամիկ, տատիկ, քույրիկ և այլն: Մտեփանիկ, Հակոբիկ, Տիգրանիկ, Հուսիկ:*

Հատուկ անունների համար սովորաբար առնվում են առաջին վանկերը՝ Բենիամին—Բենիկ, Աննա—Անիկ, Խաչատուր—Խաչիկ, Հովհաննես—Օհանիկ, Օնիկ, Վանիկ. Թադեոս—Թադիկ: Բարբառային ձևով այսպիսի անունների վերջին կ տառը դուրս է ընկնում՝ Բենի, Վանի և այլն. նույնպես՝ կոչական՝ պապի, մամի, տատի, աղջի. կամ հատուկ անունները վերջանում են Ո. Հարություն—Հարո, Հայրապետ—Հայրո.

Կարապետ—Կարո, Արտավազդ—Արտո, Մանուկ—Մանո, Խաչատուր —Խաչո և այլն։

Բարբառների մեջ ԻԿ ածանցը դրվում է նաև դերանունների վերջից՝ եսիկ, դունիկ, դուքիկ, ինձի(կ), քեզի(կ), մեզի(կ).—ասիկ, անդիկ, անիկ (էտիկ, իդիկ, էնիկ)։

բ) Մի քանի գոյականներից կազմում է ածականներ՝ աշխարհիկ, անաշխարհիկ, տոհմիկ, քաջատոհմիկ։

գ) Ածականների նշանակությունը սաստկացնում կամ թուլացնում է, երբեմն նաև փաղաքշական նշանակություն տալիս դրանց, ինչպես՝ ցածրիկ, ծանրիկ, փոքրիկ, մանրիկ, կարճիկ, կարմրիկ, կոկիկ, բարձրիկ, մեղմիկ, հեզիկ, մոտիկ, մեկիկ, մի հատիկ, հանդարտիկ, աղվորիկ, քաղցրիկ, անուշիկ, կանխիկ (ստացել է առաջուց վճարելի լինելու իմաստ, նաղդ), ողորմիկ (ողորմելի), թթվիկ (մի քիչ թթու), լռիկ, մնջիկ, խաղաղիկ։

դ) Բայաբներից և բայարմատներից կազմում է ածականներ այս կամ այն դերբայի նշանակությամբ, օրինակ՝ թափանցիկ (թափանցող, թափանցելի), շրջիկ (շրջող), մուրացիկ (մուրացող), մարտիկ, պատերազմիկ, ռազմիկ (կռվող), ընթացիկ (ընթացող), շրջմոլիկ, աղացիկ (աղացած), ագուցիկ (հագցրած, հագցնովի), ուռուցիկ (ուռած), թռուցիկ (թռչող), մածուցիկ (կպցնող), ապառիկ (հետո առնելի), անառիկ (անառնելի), ընկեցիկ (դեն գցած), խաբուսիկ (խաբող), մածիկ (կպցնող, ապա «զամասկա»)։

ե) Հաճախ ավելանում է բարդ բառերի վերջից, երբ բաղադրության երկրորդ անդամը մի բայաբուն կամ բայարմատ է, մանավանդ, երբ բարդ բառը կազմված է ոչ գրաբար բայից և առանց հոդակապի, կամ թե բայի արմատը չի գործածվում, ինչպես՝ քաջամարտիկ, նախամարտիկ, վաղամեռիկ, ջրահեղձիկ, արագախաբիկ, բռնազբոսիկ, մշտաբացիկ, սրտաճմլիկ, ալուրմաղիկ, փլավքամիկ, ականջփորիկ, ականջմտիկ, ճանճաքշիկ և այլն։

զ) Ազգերի անուններ՝ հնդիկ, պարսիկ, խափշիկ, զանդիկ, գերմանիկ, խուժիկ։

է) Ժողովրդական լեզվի մեջ ԻԿ ածանցից առաջ երբեմն ավելանում է «ավ», ինչպես՝ սուտլիկ, ձախլիկ, կարճլիկ, կոկլիկ, ցածլիկ, հաստլիկ—հաստոտիկ։ Ածանցից առաջ ավելացող «ավ» տառը բառին տալիս է փաղաքշական իմաստ. այս «ավ» տառը փոխանակվում է «Ռ» տառով, որ բառին տալիս է կոպտության իմաստ։

Նշ.— Կան այլազգի բառեր «ԻԿ» ածանցով կազմված, որոնք պատրաստի առնվում են օտար լեզուներից. ինչպես՝ սիմետրիկ, սիստեմատիկ, կլասիկ, դեմոկրատիկ և այլն։ Դրանք կապ չունեն հայերենի «ԻԿ» ածանցի հետ։ Համմ. ԱԿ § 139. ՈՒԿ § 208։

176. ԻԶ,— *կազմում է ածականներ, իսկ ածականների վրա դրվելով՝ սաստկացնում է նրանց իմաստը, օրինակ՝ առաջին, վերջին, հե-*

տին, նախկին, ներքին, արտաքին, վերին, միջին, ստորին.—վերստին. տակավին, բնավին. աղջամղջին, աղտաղտին («աղտու» բառից), աղբին, ավազին (ավազուտ), ծմակին (ծմակայինն), ծփին (ծփուն), չնչին, գիշին, անհնարին, նրբին, խորին, լուին, մթին, խավարին, խավարչտին («խավարչուտ» բառից), դյուրին, հեշտին, դժվարին.—ինքնին և այլն։—Այսպես և բարբառային՝ իմին, մերին, ձերին, քուկին։

177. Ինք,— սակավաթիվ բառերի մեջ. ինչպես՝ նախատինք, հարկինք, քրտինք (իրտն բառի հոգնակին)։ Տե՛ս § 216 ուշ։

178. Իչ,— ա) Գործող անձի անուն, ինչպես՝ փրկիչ, երգիչ, նկարիչ, քննիչ, մեկնիչ, մատնիչ, նորոգիչ, խառնակիչ, խանգարիչ, խայտառակիչ, գործիչ, բնակիչ, կաքավիչ, վարիչ, հարդարիչ, կեղեքիչ, մխիթարիչ, առաքիչ, կիզիչ, կործանիչ, խորտակիչ, հալածիչ, խափանիչ, թովիչ, պահպանիչ, հայհոյիչ, խարդախիչ, պատրիչ, սնուցիչ, ուսուցիչ, զարթուցիչ։

բ) Գործիքի անուն, ինչպես՝ քերիչ, սրբիչ, շարժիչ, գրիչ, բրիչ, կոփիչ, կտրիչ, փարատիչ (փարատող) և այլն։

Իստ, տե՛ս եստ § 167։

179. Իցս,— նշանակում է՝ «անգամ», ինչպես՝ բազմիցս, երկիցս, երիցս, չորիցս, հնգիցս, յոթնիցս, ութիցս, տասնիցս։ Հնացած է. գործածվում է միայն «բազմիցս» կամ «բազմիցս անգամ», «երիցս գովելի» և նման կապակցությունների մեջ։

Իք, տե՛ս ի § 174։

Ծու, տե՛ս ածո § 138։

180. Կակ, կեկ, կիկ, կուկ,— միանում են առանց հոդակապի, ինչպես՝ տղեկիկ (փոքրիկ տղայիկ), տեղեկիկ (փոքրիկ տեղիկ), աղեկուկ (աղեկ). կարմրկակ, կարմրկեկ (կարմրիկ). մանրկակ, մեծկակ, կլորկեկ, ծանրկեկ, շուտկեկ, թուլկեկ (թուլագույն), կապուտկեկ, սևկակ, կանուխկեկ (տե՛ս § 134)։

Այս բաղադրությունները հատուկ են ավելի ժողովրդական լեզվին. իբրև կրկին նվազականներ, եթե գոյականի վրա են դրվում, ավելի ևս փոքր առարկա են ցույց տալիս, իսկ եթե ածականի վրա՝ ավելի ևս սաստկացնում են ածականի նշանակությունը, ինչպես՝ թույլ, թուլիկ, թուլկեկ. սև, սևիկ, սևկակ (փոքր ինչ ավելի սև), սափ սև (բոլորովին սև)։

Կաև, տե՛ս ական § 140։

181. Կեն,— կազմում է սակավաթիվ ածականներ, ինչպես՝ հյուսկեն (հյուսած), շրջկեն (անդադար շրջող), ճանճկեն (պուտ-պուտ), կոճկեն (լավ կոճակներով), ծակոտկեն (ծակոտիկներով)։

Կիկ, տե՛ս կակ § 180։

182. Կին,— նշանակում է ոտքի հետք. իբրև բաղադրության մաս նշանակում է՝ անգամ (հետ), ինչպես՝ կրկին (ծագած է «երկկին» ձևից, որից երկկնակի), երեքկին (երեք անգամ, երեք հետ), չորեքկին, վեցկին, յոթնեկին։

183. Կից,— նշանակում է՝ կիպ, կպած, բոլորովին մոտ, առընթեր. իսկ իբրև բաղադրության երկրորդ մաս նշանակում է՝ կցորդ, ընկեր, միասին կամ թե նույն բանն ունենալը, համանիշ՝ ՆՈՒՅՆ, ՀԱՄ. օրինակ՝ կենակից, գործակից, աշխատակից, հայրենակից, սեղանակից, անվանակից, ձայնակից, ընթացակից, լծակից, ուղիկից, աշակերտակից (աշակերտության ընկեր)։ Հմմտ. § 203, բ։

184. Կոտ,— ցույց է տալիս հեշտ տրամադիր լինել մի վիճակ ունենալու (հմմտ. կան § 140, ը). օրինակ՝ վախկոտ, զարհուրկոտ, դանդաղկոտ, ցասկոտ, ամաչկոտ, զբաղկոտ, ծիծաղկոտ, քնկոտ, նախանձկոտ, նվազկոտ, խռովկոտ (խռովկան), մրսկոտ (մրսկան), պահանջկոտ, հապաղկոտ, համառկոտ, վհհերկոտ, փութկոտ, զարդարկոտ, ծաղրավկոտ, պարծենկոտ, բարկացկոտ, ձանձրացկոտ, զայրացկոտ, ուռուցկոտ (տե՛ս § 134)։

Կուկ, տե՛ս կակ § 180։

185. Հան, հանց, հանա,— բարբառային մասնիկ. գետնահան, ծնկնահան, գիշերահան, գիշերահանա, շապկահան, կողքրհան, բարձրահան, ցածրահան և այլն։ Տե՛ս § 133. 5։

186. Հար,— բարբառային մասնիկ մինչև նշանակությամբ. ճտահար, ծնկահար, պռկևհար և այլն։ Տե՛ս § 133. 4։

187. Ման, մանց,— բարբառային մասնիկ. ծագած է հին լեզվի «ումն» ածանցի տրականից, ինչպես՝ էփման, եփման (եփվող, գրաբարի «յեփման» ձևից). էման (եռացող, եռման ջուր). էլման (գետ բարձրացած, հորդացած), վառման (վառվող կրակ), նստման (նստած, նստելով). կլորման (կլորած, գնդաձև), պահման (պահված), ղորդման, ղորդմանց (իրավ, ուղղորդ, ստույգ), սուտման, սուտմանց (սուտ կերպով, իբրև սուտ)։

188. Մունք,— ծագած է հին լեզվի «ումն» ածանցի հոգնակի ուղղականից, ինչպես՝ ուսումն—ուսմունք։ Այս ձևն այլևս գործողության անուն չէ ցույց տալիս, այլ գործածի անունը, կամ ունեցած վիճակի անունը, կամ մի այլ առանձին նշանակություն. օրինակ՝ ուսմունք ոչ թե ուսանելն է, այլ ուսածը, ուսած առարկան։ Այսպես նաև՝ ասմունք, արարմունք, բերմունք, բուրմունք, սխալմունք, պատահմունք, սլարապմունք, մտածմունք, հարցմունք, ցուցմունք, զգացմունք, կարդացմունք, վարմունք, հուզմունք բաժանմունք, շարժմունք (§ 135)։

189. Յա (հին՝ **եայ**),— ցույց է տալիս՝ ա) նյութը, որից շինված է մի բան (հմմտ. ե, ի, եղեն), օրինակ՝ երկաթյա, արծաթյա, ոսկյա, պղնձյա, փայտյա, մարգարտյա, բյուրեղյա, եղևնյա, ադամանդյա, բրդյա, հողանյությա։

բ) Մի ուսման հետևողի, մի բան ունեցողի, կամ գործողի նշանակություն (հմմտ. «յան»), օրինակ՝ անձնյա (անձնեղ), աչյա (աչեղ), գունյա (գունյան, գունեղ), որկորյա (որկորյան, որկրամոլ, բողազիկ). պաշտոնյա, գործունյա, քրիստոնյա։ Այսպես նաև՝ բարդություններից

վերջից՝ հրաչյա, սևաչյա, երկլուսնյա, երկոտնյա, եռոտնյա, վեցոտնյա. —միանձնյա, քաջազնյա, տասնաղյա, քառանյությա։

գ) Տևդի և ժամանակի անուններից կազմում է ածականներ, օրինակ՝ ծովափնյա, ծովեզրյա, անդյա (հանդի տավար), միջերկրյա, լեռնոտյա, ստորերկրյա, այլերկրյա, առժամանակյա, առօրյա, վեցօրյա, միամյա, երկամյա, եռամյա քառամյա և այլն. միամսյա, երկամսյա, միջօրյա (միջօրե)։ Տե՛ս § 192։

190. Յալ (հին՝ **եալ**),— ինչպես՝ ածանցյալ, կարծեցյալ, ննջեցյալ, այրեցյալ (գոտի), անկյալ, ստորադրյալ, հեծյալ, տառապյալ, սառուցյալ (օվկիանոս), ժապավինյալ (մատյան), վերոհիշյալ, լքյալ, հետևյալ, թանձրացյալ (թանձրացական), կատարյալ և այլն։ (Տե՛ս § 135)։

191. Յակ (հին՝ **եակ**),— բարբառային ձևով՝ եկ։

ա) Սակավաթիվ բառերի մեջ նվազական կամ այլ նշանակությամբ ինչպես՝ լուսնյակ (լուսնակ), հմայակ (հմայեկ), խոհյակ, սպասյակ (սպասավոր), վերելյակ (վերելակ), ուղղյակ (ղեկ, նավուղղակ), բոլորյակ (բոլորակ)։ Բարբառային ձևով՝ դանկեկ (դանակիկ), չախվեկ (չախուիկ), ճամբեկ (ճանապարհիկ), ակնեկ։ Այլև ի վերջացած անուններից՝ այգի-այգեակ-այգեկ, գոտի-գոտյակ-գոտեկ։

բ) Թվականներից ու թվականներով բարդվածներից կազմում է գոյականներ, օրինակ՝ երկյակ, եռյակ, հնգյակ, վեցյակ, յոթնյակ, ությակ, իննյակ, տասնյակ, տասներկյակ, երեսնյակ, քառասնյակ, հիսնյակ (հիսնակ), վաթսնյակ, յոթանասնյակ, իննսնյակ, հարյուրյակ (հարյուրակ), հազարյակ, բյուրյակ, վեցհազարյակ.—Երկամսյակ, եռամսյակ, քառամսյակ, երկամյակ, եռամյակ, քառամյակ, հնգամյակ, տասնամյակ, քսանհինգամյակ, հիսնամյակ, հարյուրամյակ, հազարամյակ։

Թվականներից կազմված բառերն ունին հավաքական նշանակություն՝ իբրև մի ամբողջական միություն, ինչպես՝ մի տասնյակ, երկու տասնյակ, երկյակ դաշնակցություն, եռյակ միություն։ Երբեմն ունին և առանձին նշանակություն, ինչպես՝ «յոթնյակ» նշանակում է՝ յոթը միասին իբրև մի ամբողջություն, այլև յոթն օր, մեկ շաբաթ. ությակ, հընգյակ—ութը միասին, հինգը միասին, այլև ութ օր, հինգ օր. միակ—մի հատիկ. քառասնյակ—քառասուն օր։

գ) Ցույց է տալիս մի նյութից շինված մի բան, համապատասխան «յա» (եա) մասնիկի (§ 189). օրինակ՝ ոսկյակ-ոսկուց շինած բան. մաշկյակ—մաշկե հագուստ. թաղյակ—թաղյա, թաղիքե գլխարկ, կաճյակ—կաճե (թաղիքե) ոտնաման։

192. Յան (հին՝ **եան**),— ցույց է տալիս՝ ա) Ազգանուններ՝ Արամյան, Հայկյան, Մամիկոնյան, Արտաշիսյան.— Այս նշանակությամբ հաճախ «յանց» (եանց), որ ծագած է գրաբարի սեռականից՝ Թորոսեանր —Թորոսեանց. աշխարհաբարում կորցրել է սեռական նշանակությունը և դարձել է ածական։ Նույնը սղված ձևով՝ լինում է «ենց», ինչպես՝ Մերենց, Տերենց և այլն։

բ) Մի ուսման կամ անձի հետևող, կամ մի անձի ուսում (Համմտ. «յա» § 189 բ. «ական» § 140 ա), օրինակ՝ լենինյան, պլատոնյան, արիստոտելյան, կանտյան և այլն։

գ) Մի բան ունեցողի նշանակություն՝ գունյան (գունեղ), որկորյան, կուզյան (կուզ, սապատող ունեցող)։ Ավելի բարդությունների վերջից. օրինակ՝ վեցթևյան, վեցիջյան, վեցոստյան, հինգտերևյան, քառակարգյան, յոթնաջահյան, քառաջահյան, չորեքգծյան, բազմաստեղնյան։ (Տե՛ս և յա § 189, բ)։

դ) Տեղի ու ժամանակի անուններից՝ աջակողմյան, ձախակողմյան, երևանյան, արևելյան, արևմտյան, մայիսյան, հոկտեմբերյան, փետրվարյան, երեկոյան և այլն։ (Տե՛ս § 189)։

198. Յուն, *(հին՝* **իւն),**— *ցույց է տալիս հնչյուն, բնաձայնություն, երբեմն և գործողություն. օրինակ՝ հնչյուն, գոչյուն, շաչյուն, շառաչյուն, խոշյուն, շրշյուն, շըշյուն, ղողանջյուն, շշնջյուն, քրթմնջյուն, խրխնջյուն, վրնջյուն, խոխոջյուն, դռնչյուն, մնչյուն, մռնչյուն, դղրդյուն, հաչյուն, հառաչյուն, ճչյուն, խանչյուն, ճղփյուն, ճարճատյուն, ճայթյուն.— սոսյուն, սոսավյուն, սոսափյուն, սարսափյուն,— բախյուն, գանգյուն, դրղրդյուն, թնդյուն, պայթյուն, դոփյուն, տրոփյուն։*

Հնչյունի հետ միասնում է և գործողության նշանակություն, ինչպես՝ ննջյուն (ննջում և ննջելու շնչի ձայն), լալյուն (լաց ու ողբ, լալում, լացի ձայն), գուժյուն (գուժում և գուժելու ձայն), կոչյուն, կանչյուն (կոչում, կանչելը և կանչելու ձայն, ճվոց),— տրտնջյուն (տրտնջալ և տրտնջալու, մրմնջալու ձայն), խիզախյուն (խիզախում և խիզախելու. մեծ-մեծ խոսելու, պարծենալու ձայն), շարժյուն (շարժում և շարժվելու ժամանակ առաջացած ձայն), պարպատյուն (պարպատում, լիքը լցվելուց, տկռելուց տրաքվել և տրաքվելու ձայն),— նետյուն, արձակյուն (նետելու, հրացան արձակելու գործողություն և ձայն), փայլյուն (փայլելու գործողություն)։ Համմտ. § 195, ե։

Նակ, *տե՛ս* **ակ, անակ.** *§§ 139, 146, 147։*

194. Նի,— *սակավաթիվ բառեր՝ գաղտնի, հայտնի, նախնի։ Տե՛ս* **անի,** *§ 149։*

195. Նոց, անոց, ոց,— *ա) Գոյականներից կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս առարկայի տեղը (տե՛ս § 136), օրինակ՝ գորանոց, հյուրանոց, խեներանոց, հիվանդանոց, աննկելանոց, փայտանոց, ավազականոց, ծաղկանոց, մեղվանոց, դպրանոց, վաճառանոց, աղբանոց։ Մի քանի բառեր նույն իմաստով կազմված են թայերի արմատներից, փոխանակ* **արան** *ածանցի. ինչպես՝ գործանոց (գործելու տեղ, գործարան), աշխատանոց, դիտանոց (դիտարան), արգելանոց (արգելարան), օթանոց (օթարան)։ Ոձ ածանցով՝ ծաղկոց, դպրոց, մոխրոց, մեղվոց, շարոց, (շար, շարան, այլև քաղցուից պատրաստած սուրճ), գերեզմանոց, թաքստոց, մարտկոց, վարժոց, ձմերոց, ամրոց, միջոց (միջի տեղը, արանք), պնդոց, նստոց։ Ամարանոց (հին՝ «ամա-*

րան» սեռականից «ոց» մասնիկով, տե՛ս § 94, 2), այժմ գրում ենք «ամառանոց»։

բ) Հագուստեղեն, անոթ,անոց, նոց, ոց ձևերով՝ գլխանոց, կրծանոց, լանջանոց, ուսանոց—ուսնոց, վզանոց—վզնոց, գոգնոց—թիկնոց (անթև վերարկու), ձեռնոց, մատնոց, ակնոց (թիկն, ձեռն, մատն, ակն բառերից). բայերից՝ կրկնոց, մեկնոց։

գ) Գործիք, անոթ և այլն, բայարմատներից միայն ոց ածանցով, խարտոց, սղոց (սուղ, սղել—կարճացնել բառից), էտոց (էտել բայից), կտրոց, քերոց, պրկոց, քշոց, չնջոց, սփռոց, ծածկոց, փաթթոց, կապոց, ծրարոց, կշռոց, դրոշմոց, կնքոց, խառնոց, կթոց, (քթոց), փակոց, հալոց, օթոց, գզրոց, բրոց,—անձրևոց, օրորոց, կկոց, խայթոց, խտրոց։

դ) Թվականներից և թվականների հետ արժեքի ու չափի անուններից անոց ածանցով, ցույց է տալիս արժեք և չափ, ինչպես՝ մի կոպեկանոց, հինգ ռուբլանոց (մի կոպեկ, հինգ ռուբլի արժող), հինգ փթանոց (քար), լտրանոց, ֆունտանոց, մեկանոց, երկսանոց, հինգանոց, հիսունանոց և այլն։ Տե՛ս § 136։

ե) Բայերից միայն ՈՑ ածանցով կազմում է բնաձայնության և գործողության անուն, ցույց է տալիս նաև գործողության ժամանակը, օրինակ՝ խշշոց, շշնկոց, խշրտոց, փսփսոց, շվշվոց, գվգվոց, թրխկոց, բզբզբոցոց և այլն.—ջարդոց, գորտոց (ծեծ), ծակոց, մխոց (մխալը), կոփոց (տալ, կոփահարել), թրջոց, հիշոց, արևմտոց, ճրագվառոց, հավախոսոց և այլն։ (Տե՛ս § 136)։ Համմտ. § 193, յուն։

196. **Ո** *(հին՝* **ոյ***),* **ու**,— *սակավաթիվ բառերի մեջ՝ մեծաբարո, գազանաբարո, հաճո, հարգո (արգո, մեծարգո), մեծարու։ ՈՅ>ՈՒ հնչափոխությամբ՝ մեծարու, խաշու, խորովու, ձախու, աջու։ (Տե՛ս §§ 138, 212, 229, 205.* **ածո, ված, ույf, ու**)։

197. **Ող**,— *կազմում է գործողի անուն, ինչպես՝ ծնող, քերթող (բանաստեղծ), սիրող, ուսանող, գրող, զիջող, տեսող, կարող և այլն։—Այս ածանցը նոր լեզվի մեջ դարձել է ենթակայական դերբայի ածանց բոլոր բայերի համար, ինչպես՝ տեսնող, զարմացող և այլն։ (Տե՛ս § 242)։*

198. **Ոն, ոնք, ուճ**,— *զանազան նշանակություններով։ Համմտ.* **ուն** *§ 213։*

ա) Գործողության արգասիքը, օրինակ՝ **կտրոն**— *1. կտրվելը, 2. կտրած կտոր. 3. կտրած ճյուղի մնացորդները ծառի վրա, 4. գետի հուն, ծանծաղուտ, որտեղից կարելի է ոտով անցնել.* **խզոն**—*խզած, կտրած, խոտի մնացորդ.* **պատռոն**—*հողի պատռվածք չորությունից.* **գողոն(f)**—*գողացած բան, գողուն(ի).* **գեղոն(f)**—*կլոր պար երգով.* **շրջոն(f)**—*շուռ տված, թարս երեսը, հականիշ՝ շիտակ.* **բրդոն(f), բրդուն, բրդուճ. բրթուճ.**—*1. հացի, մսի և այլ մանր փրթած կտորներ, 2. մածնի, թանի փրթուճ, փրթոշ,* **բրոն, բրուճ**—*բրած փոս, գերեզման։*

բ) Գործողությունը, օրինակ՝ **մոռացոնիf**—*մոռացում.* **զարթոնիf**—*զարթնելը.* **մղոն, մղոնիf**—*մղելը,* **ցրոնիf**—*ցրվելը.* **կոչոնիf**—*կոչունք,*

կանչելը, հրավերք. **բխկոն**—*բխկալը, բխկոց.* **զխկոն**—*գետին զարկելը և ձայնը, զխկոց.* **դխկոն**—*դխկալը, դխկոց։*

գ) Գործողի անուն և գործիք. օրինակ՝ **պարզոն**—*քամոց, մածուն, թան և այլ քամելու տոպրակ.* **գործոն**—*գործուն, գործող.* **որսոն**—*որսող։*

դ) Նվազական, փաղաքշական նշանակություն կամ ընդհակառակն, օրինակ՝ **մանգղոն**—*փոքր մանգաղ.* **թաթոն**—*թաթիկ.* **վեգոն**—*վեգիկ (փաղաքշական).* **շերտոն**—*մեծ շերտ.* **ծղոն**—*ծիղ։*

Ոնք, *տե՛ս* **եմ** *§ 166, § 198* **ոն**։

199. Ովի,— *բայերից կազմում է ածականներ, օրինակ՝ տվովի, ջրովի, ընտրովի, հնարովի, գտնովի, շինովի, բերովի, հկովի, ծալովի, կապովի, կծովի, քցովի (թեյ), կխսովի։ Համմտ. § 138* **ածո**։

200. Ովին, ովի,—*անուններից կազմում է մակբայներ, օրինակ՝ յուրովի—յուրովին. խմբովին, ազգովին, տարմովին, երամովին, ամբողջովին, գլխովին, կիսովին, կամովին, լիովին, բոլորովին, ամենևին, տնովի(ն), տնորդովի։*

201. Ոտ,— *ցույց է տալիս մի բան վրան, մեջը ունենալը ժամանակավորապես կամ մնայուն կերպով. օրինակ՝ ա) աղտոտ, կեղտոտ, մրոտ, յուղոտ, ժանգոտ, թեփոտ, խմորոտ, արյունոտ, տղմոտ, քարոտ, փշոտ, ցեխոտ, հողոտ։*

բ) Մսոտ, ջղոտ, կակազոտ, ոսկրոտ, ծակոտ, արցունքոտ (աչք), խռպոտ, գայթոտ։

գ) Սրտոտ, երկչոտ, հավակնոտ, եռանդոտ, մոլեգնոտ, նախանձոտ, նենգոտ, կասկածոտ, տուփոտ, սխալոտ, ցանկոտ, արհամարհոտ, պագշոտ, վավաշոտ, պատկառոտ, գայթակղոտ, վհերոտ, լքանոտ։

դ) Հիվանդոտ, բորոտ, քոսոտ, վերնոտ, լուսնոտ, դեղնոտ, ցավոտ, կթոտ։ (Տե՛ս § 139)։

202. Ոտի, տի, տիք,— *ա) Ածականներ՝ սնոտի, հնոտի, մեռելոտի, զազրոտի, չքոտի, պատառոտի, օտարոտի։*

բ) Գոյականներ հավաքական նշանակությամբ՝ ոսկրոտիք, փորոտիք, ցնցոտի(ք), հնոտիք, մանկտի. բարբառային՝ ընկերտիք, աղբերտիք, կնկտիք, քվերտիք և այլն։

Որաչք, *տե՛ս* **աբեմ** *§ 155. բ։*

208. Որդ,— *ա) Գոյականներից, ածականներից և բայերից կազմում է արվեստ, պարապմունք և այլն ունեցողի և գործողի անուն, ինչպես՝ սայլորդ (սիլվոր, սայլապան), նախորդ, անդեորդ, ցանցորդ (ցանցով ձուկ բռնող), նավորդ, ծովորդ, ճանապարհորդ (ուղևոր).— առուջնորդ, միջնորդ, փոխանորդ, փոխնորդ, պահանորդ, պահնորդ, որսորդ, խաղախորդ (կաշեգործ).— լողորդ (լողվոր), անցորդ (անցվոր). հակառակորդ, հետևորդ, հաջորդ, նախորդ, հետնորդ, նախանձորդ, ժառանգորդ, հաճախորդ, պակասորդ, ավելորդ, պարապորդ, նմանորդ, մնացորդ, սավառնորդ.— ուղղորդ, ձախորդ, կանգնորդ, կշռորդ (սկըպբ-*

նապես՝ կշռող, ապա կշիռ. այժմ՝ քաղաքային մեծ կշիռ)։ Համմտ. § 232. դ, § 224։

բ) Ցույց է տալիս մասնակցություն, ընկերակցություն. համմտ. կից. *ինչպես՝ կցորդ, հաղորդ, հավասարորդ (հավասարակից), բաժանորդ, լծորդ, սեղանորդ (սեղանակից), սահմանորդ (սահմանակից), ձայնորդ։*

դ) Թվականների հետ ցույց է տալիս մաս, ինչպես՝ կիսորդ—կես մաս, կես. քառորդ—չորրորդ մաս. տասանորդ, տասնորդ—տասներորդ մաս։ Այսպես նոր կազմված են՝ եռորդ, հինգորդ, վեցորդ, յոթնորդ, ութորդ, իննորդ—երրորդ մաս, հինգերորդ մաս և այլն։

204. Որեն,— *նշանակությամբ նույնն է, ինչ որ պես § 226 դրված գ և դ կետերում, այսինքն՝ ածականը վերածում է մակբայի «կերպով» բառի նշանակությամբ։ Այս ածանցը վերջին տասնամյակներում հետզհետե ավելի ընդհանրանում է այն պատճառով, որ հայերենը օտար լեզուների ազդեցությամբ ձգտում է ստեղծելու ածականների համապատասխան մակբայներ, և որովհետև «որեն» ածանցը մաքուր վերացական բնավորություն ունի, քանի որ դա այլևս չենք կապում «օրենք» բառի հետ, ուստի և դրանով ավելի են ածանցվում, քան համանիշ* բար. *պես բառերով. օրինակ՝* աղեատաբար, աղեատապես *և* աղեատորեն *բառերից առաջինը նշանակում է փբրև աղքատ, աղքատ լինելով, երկրորդը՝ աղքատի պես, մինչդեռ երրորդը նշանակում է՝ լոկ աղքատ կերպով, այսինքն՝ մի լոկ մակբայ է* աղեատ *ածականի։ Այս պատճառով և հին լեզվի սովորական* պես, երբեմն և բար *բառերով կազմությունների հետ միաժամանակ առաջ են գալիս նոր բառեր* որեն *ածանցով, ինչպես՝ այլաբանորեն, տրամաբանորեն, ընդարձակորեն, զգուշորեն, զգաստորեն, բնականորեն, հրապարակորեն, գեղարվեստորեն և այլ բառեր, որոնք հին լեզվի մեջ չկան։ Սակայն նկատի պետք է ունենալ, որ այս* որեն *բառով կազմությունները չափազանցության են հասցնում և տգեղ ու ավելորդ բաղադրություններ են առաջ բերում. ինչպես են՝ սարսափելիորեն, անխուսափելիորեն և նմաններըը։ Հայոց լեզվի հատկությամբ ամեն անգամ, երբ կարելի է ածականն անփոփոխ իբրև մակբայ գործածել, այսպես էլ պետք է վարվել, օրինակ՝ լավ խոսել, պարզ գրել, հիանալի խոսել, և ոչ լավորեն, պարզորեն, հիանալիորեն խոսել։ Տե՛ս* բար *§ 156,* պես *§ 226։*

Ոց, *տե՛ս* նոց *§ 195։*

205. Ու,— *բայերից կազմում է գործողի անուն, օրինակ՝ ազդու (փբրև ազդող, հին՝ ազդոյ), հատու (կտրուկ), հաղթու (հաղթուկ, որից և հաղթկու), ջարդու (քար, ջաղացքար, իբրև ջարդող), քսու, հասու (վերահասու), խաբու (խաբուկ—խաբիչ), խուսափու (խուսափուկ) և այլն։ Ավելի գործածվում է բարդությունների մեջ, ինչպես՝ աշառու, ապարատու, վաշխառու, կապալառու, վրիժառու.— խնամածու, ակնածու, խուզարկու, ձայնարկու, խնկարկու, վերարկու (ստացել է կրող ա-*

ռարկայի նշանակություն), ահարկու.—արյունարբու, գինարբու, օրհներգու, ողբերգու, կատակերգու, հոգաբարձու, այցելու, երկրպագու, վերահասու, վերակացու, վրակեցու, հայրանարգու և այլն։ Համմտ. ուկ. § 208 գ։ Համմտ. § 196։

206. Ութ,— բարբառային են՝ մանկութ, փոքրութ, մորութ, ծերութ, հնութ (մանկության, մանկությունից, փոքրության, փոքրուց և այլն)։ Տե՛ս ուց և ույթ, §§ 211, 221։

207. Ություն,— կազմում է վերացական անուններ՝ հատկություն ցույց տալով, օրինակ՝ լավություն, մեծություն, մարդություն, մարդկություն, ազգություն, իշություն, խոզություն, միություն, ինքնություն և այլն։

Հին լեզվի մեջ «ություն» ածանցը հաճախ ցույց է տալիս նաև գործողություն. շատ բայերից «ումն» ածանցով կազմություններ չկան, այլ միայն «ություն» ածանցով, որ գործածվում է նաև «ումն» ածանցի նշանակությամբ։ Նոր լեզվի մեջ ևս կա այս կիրառությունը. բայց հետզհետե իբրև գործողության անուն գործածվում է ավելի «ում» ածանցը, իսկ «ություն» ածանցը տարբերակումով ցույց է տալիս հատկություն, դրություն, կատարված գործողության մնայուն հետևանք իբրև վիճակ, կամ թե առնվում է մի այլ նշանակությամբ։ Օրինակ՝ թվաբանության չորս գործողությունների համար ասում էինք՝ գումարում, հանում, բաժանում, բազմապատկություն, սակայն այժմ ավելի գործածվում է նոր կազմված «բազմապատկում» բառը։ Այսպես հին լեզվի մեջ կարող են իբրև համանիշ գործածվել՝ խմբություն—խմբումը, գումարություն—գումարումն, խաղացություն—խաղացումն, հրդեհություն—հրդեհումն և այլն։ Դրանցից «ություն» ածանցով կազմվածները նոր լեզվի մեջ կամ ընդհանրապես չեն գործածվում, կամ եթե գործածվեն՝ չեն առնվիլ իբրև գործողության անուն, այլ մի ուրիշ նշանակությամբ, ինչպես՝ «խմբություն», «գումարություն» եթե գործածվեն, կնշանակեն՝ մեկտեղ խմբված բազմություն, կամ մի տեղ հավաքված, գումարված լինելը։ Սակայն դեռ այժմ էլ «առաջխաղացություն» նշանակում է «առաջխաղացում»։ Այսպես կան բավական թվով ուրիշ բառեր էլ, որ աշխարհաբարում ևս գործածում ենք իբրև գործողության անուն՝ նորոգություն— 1. նորոգ լինելը, 2. կատարված նորոգություն իբրև նորոգման հետևանք, 3. նորոգում. հանդիմանություն — 1. կշտամբանք, 2. հանդիմանում. հաշտություն— 1. հաշտ լինելը, 2. հաշտվելը, հաշտում (վերջինս գործածական չի). մատնություն— 1. կատարած մատնությունը, 2. մատնում. հեգնություն— 1. ինչով որ հեգնում են, 2. հեգնումն. մոլորություն— 1. մոլորվածություն, 2. մոլորում, և այլն։

Այժմ բոլորովին տարբեր նշանակություն ունին անուններից կազմվածները, որոնք գրաբարում հաճախ նույնանիշ են բայերից կազմվածների հետ. օրինակ՝ հավաստություն (հավաստի լինելը), հավաստում

(հավաստելը). հարմարություն (հարմար լինելը), հարմարում (հարմարվելը)։ Նման ձևով նաև՝ կազմություն, կազմում. հաճախություն, հաճախում. ամփոփություն, ամփոփում. հայտնություն, հայտնում. հարթություն, հարթում. հպատակություն, հպատակում. խարդախություն, խարդախում. ընդհատություն, ընդհատում. կապակցություն, կապակցում. կարկամություն, կարկամում. նվազություն, նվազում. դասավորություն, դասավորում. համակարգություն, համակարգում. հիմնարկություն, հիմնարկում և այլն։ Նույն տարբերությունը հաճախ դնում ենք նաև բայերից կազմվածների մեջ. ինչպես՝ մտածություն, մտածում. իմացություն, իմացում. հակասություն, հակասում. ընթերցանություն, ընթերցում և այլն։

208. Ուկ,— ա) Նվազական, երբեմն և նվաստական նշանակություն է տալիս գոյականներին. օրինակ՝ քարուկ, սարուկ, մարդուկ, հարսնուկ, պառվուկ, իշուկ, գոմշուկ, խոզուկ, մժղուկ, ճնճղուկ, մանչուկ, գեղջուկ, խոստուկ.— միջուկ, թզուկ, ավելուկ, թեփուկ, կանեփուկ, գրքույկ (փոխանակ «գրքուկ» ձևի)։

բ) Ածականների նշանակությունը սաստկացնում է, օրինակ՝ տաքուկ, պաղուկ, գիրուկ, մատաղուկ, խորուկ (խորունկ), ճարտարուկ, սեվուկ, ողորմուկ, խևուկ, կարմրուկ (գինի), գաղտուկ, ստրուկ, երկարուկ, երկայնուկ։

գ) Բայերից կազմում է գործողի անուն և անցյալ դերբայ, օրինակ՝ բանուկ (բանող ճանապարհ), քալուկ (ձի), կտրուկ, խաբուկ, դիպուկ, խաղացուկ, հեղուկ, պարծուկ, հեղհեղուկ, հաղթուկ, խուսափուկ, քնուկ, հարցուկ, վաղանցուկ, հեցուկ (նեցուկ), սրտահաճուկ, հեղաշրջուկ, վախլուկ.—հանելուկ, աչքակապուկ, նորելուկ, կոտրուկ, սուտամեռուկ, բախուկ, հասուկ։ Համմտ. ու § 205, ակ § 139, իկ § 175։ Տե՛ս ուիֆ § 222։

Բարբառային են՝ անցուկ, մոռցուկ, նստուկ, գրուկ, դրուկ, թափուկ և այլն, իբրև՝ անցած, մոռացած, նստած, գրած, դրած, թափած։

դ) Հիվանդություններ՝ կարմրուկ, ջրջրուկ, գորտնուկ, մրջմուկ։ Տե՛ս ուիֆ։

209. Ուհի,—կազմում է անձի անուններ իգական սեռի նշանակությամբ.

ա) Անձի հասարակ անուններից, ինչպես՝ բանվորուհի, զինվորուհի, գեղջկուհի, բժշկուհի, բանաստեղծուհի, երաժշտուհի, վկայուհի, դերասանուհի, դռնապանուհի, ձկնորսուհի, հովվուհի, իշխանուհի, կոմսուհի, դիցուհի, աստվածուհի, տիրուհի, քրմուհի, բարեկամուհի, ընկերուհի, աշակերտուհի, երիտասարդուհի, մանկաբարձուհի, տեսչուհի, նկարչուհի, ուսուցչուհի։

բ) Անձի հատուկ անուններից «անուշ» և «դուխտ» (աղջիկ) բառերի նշանակությամբ, օրինակ՝ Տիգրանուհի, Վարդուհի, Վարդանուհի, Սրմբատուհի։

գ) Ազգերի անուններից, օրինակ՝ հայուհի, թրքուհի, քրդուհի, ռուսուհի, հնդկուհի, հրեուհի։

դ) Ածականներից, օրինակ՝ գեղեցկուհի՝ իսկուհի, ավագուհի, պարկեշտուհի, համեստուհի, օտարուհի, ազնվուհի։

«ՈՒՀԻ» նշանակում է՝ «կին», «աղջիկ» և այս նշանակությամբ էլ իբրև անկախ բառ գործ են ածում այս մասնիկը հետին դարերի գրաբար գրողները. ուստի դրանցով կազմված բառերը մտածում ենք, ինչպես թե «կին» բառով բաղադրված սովորական բառեր լինեին։ Ըստ այսմ «բանվորուհի» միևնույն է, թե «բանվորակին» և կարող է նշանակել «բանվորի կին» կամ «բանվոր կին». այս երկրորդը նշանակությամբ նույնանում է, հարկավ, «կին բանվոր» կապակցության հետ։ Թե այս երկու նշանակությունից ո՛րն ունի «ուհի» մասնիկով բաղադրված այս կամ այն բառը, այդ որոշվում է ամեն տվյալ բառի համար առանձին։ Օրինակ՝ «հայուհի», «քրդուհի» նշանակում են՝ հայի կին, քրդի կին, որ միևնույն է՝ հայ կին, քուրդ կին. «գեղեցկուհի» նշանակում է գեղեցիկ կին. «Տիգրանուհի» նշանակել է սկզբնապես՝ Տիգրանի կին, կամ Տիգրանի աղջիկ, հետո դարձել է հատուկ անուն կանանց համար։

Վերջին տասնամյակներում «ուհի» մասնիկով կազմվում են նորանոր բառեր ռուսերենի և այլ եվրոպական լեզուների ազդեցությամբ։ Եվ որովհետև բաղադրության հեշտ մի ձև է անունների վերջից «ուհի» ավելացնելը, այսինքն՝ վերևում դրված ա—դ կետերի համեմատ կազմությունը, ուստի հաճախ այդպես էլ վարվում են. բայց այդպիսով առաջ են եկել և առաջ են գալիս հայերենի համար խորթ կազմություններ, ինչպես են՝ ուսանողուհի, քաղաքացիուհի, աշխատավորուհի, պատգամավորուհի, փոխանակ այսպես կազմելու՝ «ուսանուհի», «քաղաքուհի», «աշխատուհի», «պատգամուհի»։ Օտար մտածության տեր մարդկանց համար (և այդպիսիների թիվը քիչ չէ) «քաղաքուհի», «պատգամուհի», բառերը խորթ են թվում, որովհետև նրանք այդպիսի բառերը մտածում են իբրև «կին քաղաք» կամ «իգական քաղաք», «կին պատգամ» կամ «իգական պատգամ», որ անհեթեթություն է։ Բայց, ինչպես վերևում բացատրվեց, այդ բառերը նշանակում են՝ քաղաքի կին կամ քաղաքակին, որ է՝ քաղաքացի կին. պատգամի կին կամ պատգամակին, պատգամավոր կին. ինչպես օրինակ՝ «փարիզուհի», «թագուհի» և նմանները չեն նշանակում «կին Փարիզ» կամ «իգական Փարիզ», «կին թագ» կամ «իգական թագ», այլ Փարիզի կին, որ է՝ փարիզեցի կին. թագի կին կամ թագակին, թագավոր կին (լինի թագավորի կին, մայր, քույր, թե թագավորող կին)։

Հայերենի համար «աշխատավորուհի», «քաղաքացուհի» և նման բառերը խորթ են, որովհետև մի քանի մասնիկներ բառավերջից դուրս են ընկնում, և նոր ավելանում է «ուհի» մասնիկը։ Այդ մասնիկներն են՝ ի, ալի, ելի, ուճ, ացի (եցի), ավոր, իչ, ող, ական. օրինակ՝

1. Պատանի, պատանուհի. դրացի, դրացուհի. քաղքենի, քաղքենուհի։

2. Քաղաքների ու երկիրների անունների հետ ուհի մասնիկը ստանում է ացի (եցի) մասնիկի նշանակություն, ցույց տալով մի տեղի, որ

է՝ մի տեղացի կին. օրինակ՝ Գերմանիա, գերմանացի, գերմանուհի. Իտալիա, իտալացի, իտալուհի. Ֆրանսիա, ֆրանսիացի, ֆրանսուհի. Անգլիա, անգլիացի, անգլուհի. Իսպանիա, իսպանացի, իսպանուհի. Նորվեգիա, նորվեգացի, նորվեգուհի. Ամերիկա, ամերիկացի, ամերիկուհի. Եգիպտոս, եգիպտացի, եգիպտուհի. Սամարա, սամարացի, սամարուհի. Փարիզ, փարիզեցի, փարիզուհի. Վան, վանցի (վանեցի), վանուհի։— Այստ այսմ պետք է կազմել և ուրիշները երկրների, քաղաքների ու վայրերի անուններից, ինչպես՝ Հոլլանդիա, հոլլանդացի, հոլլանդուհի. Թիֆլիսեցի, թիֆլիսուհի. երևանցի, երևանուհի (և ոչ «երևանցուհի»). քաղաքացի, քաղաքուհի (և ոչ քաղաքացուհի)։— «Գյուղացի» բառի համապատասխան կազմված կա «գեղչուկ» բառից «գեղչկուհի»։ Ապա՝ բացառությամբ կազմված է «վրացի» բառից «վրացուհի», փոխանակ «վրուհի» ձևի, այն պատճառով, որ «վրացի» բառի կազմությունը մթնած է, քանի որ այժմ գործածական չէ «վիր» ձևը, որից՝ «Վրաստան»։ Նույն պատճառով «վրացի» բառից կազմվում է «վրացական», փոխանակ «վրական» ձևի, որ պահվում է «ռազմավրական» (ճանապարհ) կապակցության մեջ։

3. Ավոր մասնիկի նշանակությամբ և նրա փոխանակ, երբ այդ, ինչպես և «ուհի» մասնիկը բաղադրվում են մի գոյական անվան հետ և նշանակում են՝ «ունեցող», «վրան կրող» (§§ 139, 232. ա). օրինակ՝ թագ, թագավոր, թագուհի (թագ ունեցող, թագավոր կին). գեղ, գեղավոր (գեղանի), գեղուհի (գեղավոր կին). հավատ, հավատավոր, հավատուհի. մեծ, մեծավոր (մեծություն ունեցող), մեծուհի։ Ըստ այսմ պետք է լինի նաև՝ պատգամ, պատգամավոր, պատգամուհի։

Ծան.— Երբ այս «ավոր» մասնիկը, ինչպես և «ցի», որևէ ձևով մթնած է, ինչպես՝ «զինվոր», «բանվոր» բառերի մեջ, որոնք չունեն «ա» հոդակապը, «ուհի» մասնիկը դրվում է անմիջապես անձի անվան վրա՝ զինվորուհի, բանվորուհի, այսպես և՝ դրացուհի։

4. Ող. իչ. ավոր, ական մասնիկների նշանակությամբ և նրանց փոխանակ, երբ այդ մասնիկները, ինչպես և «ուհի», բաղադրվում են մի բայարմատի հետ և նշանակում են գործողի անուն (այս իմաստով ավոր տե՛ս § 232. բ, իսկ ական տե՛ս § 140. է) օրինակ՝ սպասել (հին նշանակությամբ՝ ծառայել), սպասավոր (սպասող, ծառայող), սպասուհի (սպասավոր կին). տարփել, տարփավոր, տարփող, տարփուհի. դատել, դատավոր, դատող, դատուհի.— սիրել, սիրական, սիրող, սիրուհի. վաճառել, վաճառական, վաճառող, վաճառուհի.— խարել, խաբիչ, խաբող, խաբուհի. պարել, պարիչ, պարող (հին՝ պարաւուր), պարուհի. վարժել, վարժիչ, վարժող (վարժապետ), վարժուհի. կարել, կարող (կար անող), կարուհի. պչրել, պչրող, պչրուհի. հարդարել, հարդարիչ, հարդարուհի. մեքենագրել, մեքենագրող, մեքենագրուհի. հեռագրել, հեռագրիչ, հեռագրուհի և այլն։— Ըստ այսմ պետք է կազմել՝ դրել, գրող, գրուհի. հեռախոսել, հեռախոսակ, հեռախոսող, հեռախո-

ւուհի. ուսանող, ուսանել, ուսանուհի (և ոչ «ուսանողուհի»). աշխատել, աշխատավոր, աշխատող, աշխատուհի (և ոչ «աշխատավորուհի»). քննել, քննիչ, քննող, քննուհի. ցրել, ցրիչ, ցրող, ցրուհի. օգնել, օգնական, օգնող, օգնուհի (և ոչ թե «օգնականուհի») և նմանները։— «Իչ» մասնիկը դուրս ձգելով պետք է կազմած լինեին և հետևյալները. երգել, երգիչ, երգող, երգուհի. նկարել, նկարիչ, նկարող, նկարուհի. ուսուցանել, ուսուցիչ, ուսուցող, ուսուցուհի և ոչ՝ «երգչուհի», «նկարչուհի», «ուսուցչուհի», որոնք սակայն, սովորական են դարձած։—Նույնպես դուրս է ձգվում և «ուն» մասնիկը «իմաստուն» (իմացող) բառի համապատասխան բառի մեջ, որ է՝ «իմաստուհի»։

5. Այլ. ելի մասնիկների նշանակությամբ և նրանց փոխանակ, երբ «ուհի» մասնիկը բաղադրվում է մի չեզոք կամ կրավորական նշանակությամբ բայարմատի հետ, օրինակ՝ զարմանալ, զարմանալի, զարմանուհի. երանել, երանելի, երանուհի. սիրել, սիրելի, սիրուհի։ Այս «սիրուհի» բառը կարող է նաև ըստ 4-րդ կետի կազմված լինել. հին լեզվի մեջ «սիրելի» նշանակում է նաև «սիրող»։

Ուն, *տե՛ս § 198* **ոն, ոնք**:

210. Ում *(հին ձևով՝* **ումն**),— *կազմում է գործողության անուն, օրինակ՝ ծագում (ծագելը), հուզում (հուզվելը), թաղում (թաղելը, այլև թաղվելը), շարժում (շարժելը, այլև շարժվելը), տապալում, բորբոքում։*

«Ալ», «անալ», «ենալ» վերջացած բայերի «աց», «եց» բայաբնի ածանցների վրա է դրվում այս «ում» մասնիկը (բայաբնի ածանցները տե՛ս § 238). օրինակ՝ լվալ, լվացում. գոհանալ, գոհացում. հեռանալ, հեռացում. զարգանալ, զարգացում. մերձենալ, մերձեցում։—Իսկ «ուցանել», «ցնել» վերջացած բայերից կազմվում են այսպես՝ հատուցանել, հատուցել, հատուցում. զեկուցանել, զեկուցել, զեկուցում. կառուցանել, կառուցել, կառուցում. մատուցանել, մատուցել, մատուցում. ուսուցանել, ուսուցել, ուսուցում։ Այսպես և՝ թաքցնել, թաքուցում. փախցնել, փախուցում. թոցնել, թռուցում և այլն։ Տե՛ս **ություն** *§ 207։*

211. Ույթ, ութ(*ք*),— *ա) Ներույթ (ներություն), բնույթ (բնություն), ձանձրույթ, սովորույթ (սովորություն), բարբառային՝ սովորութ, սովորութք։*

բ) Հացկերույթ, երեկույթ, ցերեկույթ, հավաքույթ, մեռելույթ (մահենիք), հյուրույթ (հյուրընկալություն)։

գ) Հասույթ, երևույթ, զայրույթ, պարբերույթ, առձայնույթ (աստնանս)։

դ) Հասույթ. հանույթ, հանույթ. ելույթ. ծածկույթ (ծածկոց)։

212: Ույք *(հին՝* **ուկ**),— *կազմված է հին 83 ածանցից ք մասնիկի ավելացումով. սակավաթիվ բառերի մեջ, ինչպես են՝ պիտոյ, պիտոյք, պիտույք.— հաճոյ, հաճոյք, հաճույք.— ամոթոյք—ամոթույք։ Կան նաև՝ խորովոյք—խորովույք, հասոյք—հասույք (հասույթ, հասնելիք), բաշ-*

խոյք—բաշխույք (բաշխածը), խտրոյք—խտրույք (խտրածը, խտրելիք), խաղոյք—խաղույք (խաղի բան) և այլն։ Նոր կազմված են՝ դրույք, գեղույք (գեղեցկացնելու բաներ, կոսմետիկա)։ Համմտ. **ուք § 222։**

218. Ուն,— *1. Գործողի անվան և ընդհանրապես ող մասնիկի նշանակությամբ, ինչպես՝ ասուն, խոսուն (ասող, խոսող), գիտուն, իմաստուն, շարժուն, երերուն, սահուն, հոսուն, թռչուն, կպչուն, սողուն, զեռուն, զգայուն, փայլուն, շողշողուն, պսպղուն, կայուն, մնայուն, գնայուն, դողդոջուն, հնչուն, կարկաչուն.— աճուն, աճեցուն, տոկուն, դիմացկուն, գործուն (գործոն), գալարուն, ժպտուն, փրփրուն, ծորուն, շրջշրջուն, ցայտուն։*

2. Կրավորական անցյալ դերբայի նշանակությամբ՝ լեցուն (լցված), զեղուն, մածուն, պատառուն, պատառոտուն, զարդարուն, հարդարուն, վարժուն, սաղարթուն («սաղարթել» բայից), ջախջախուն, մխուն. նկարուն (նկարեն), գողուն (գողացած, գողունի), ցողուն, շրջուն (շրջոն), կանգուն, կարկատուն, հաստատուն, սիրուն, խարխարուն (խարխլած), կոտրատուն, զվարթուն. ցածուն, լուռն, խաղաղուն, թաքուն, աղուն (աղալիք)։ Համմտ. **ոն. § 198։**

214. Ունդ,— *մի քանի բառերի մեջ՝ ծնունդ, սնունդ, սերունդ, ելունդ, կորունդ։*

215. Ունի, ունիք,— *1. Սերունի, մեծունի (մեծունք, մեծ մարդիկ), գողունի (գողուն, գողացած), պահունի (պահած), արեգունի (արևակողմ), բերունի (բերած, բերովի), տերունի, արքունի(ք), տարունի (տարևոր)։*

2. Ազգանուններ՝ Բագրատունի, Արծրունի, Արշակունի, Ռշտունի, Ամատունի։

216. Ունք,— *հին լեզվի ըն բնի հոգնակի ուղղականի վերջը, որ նոր լեզվի մեջ ըմբռնվում է իբրև ածանց, հաճախ հավաքական նշանակությամբ, օրինակ՝ համեմունք, սկզբունք, հիմունք, ակունք (գետի), բարձունք, իրավունք, մանրունք (հին՝ հոգնակ. մանունք), գետախառնունք, տակունք, պաշտամունք, ծաղկունք, փրփունք (փերթ—կտոր բառից)։ Նոր կազմված՝ տեսակունք (աստրտիմենտ)։ Տե՛ս* **ուք § 222, ենք § 166 և ուեք § 222։**

217. Ուչ, ուչ,— *սակավաթիվ բառեր՝ վայելուչ, արտառուչ, տեսուչ, տնակալուչ, անտերունչ։*

Ուստ, *տե՛ս* **եստ § 167։**

218. Ուստ,— *սակավաթիվ բառեր՝ արտաքուստ, ներքուստ, վերուստ։ Գրաբարում նաև՝ այլուստ, ամենուստ։ Նշանակում են՝ դրսից, ներսից, ուրիշ տեղից, ամեն տեղից։*

219. Ուտ,— *ցույց է տալիս այն տեղը, ուր մի բանից շատ կա, օրինակ՝ ա) Գոյականներից՝ ծառուտ (ծառեր եղած տեղը), թփուտ, մացառուտ, եղեգնուտ, շամբուտ, դալարուտ. սիզուտ. ծիրանուտ (ծիրանի ծառերի տեղ), տանձուտ, ծաղկուտ, քարուտ, քարքարուտ. սալուտ, վի-*

մուտ, երիզուտ (քարուտ, կոշտ տեղ), ապառաժուտ. աղուտ, ավազուտ, տղմուտ, սառնամանուտ, բալուտ (մշուշապատ տեղ), մառախլուտ, հողմուտ։

բ) Ածականներից և բայարմատներից՝ ծարավուտ (չորածարսուլ տեղ), ծանծաղուտ, թավուտ (անտառի ծառախիտ տեղը), խավարուտ (խավարչուտ, խավարչտին), դժվարուտ (դժվար գնալու տեղ), խրուտ (ուր կարելի է հեշտ խրվել), լպրծուտ։

գ) Մի քանի բառերի մեջ նույնանում է ոտ *ածանցի հետ, միայն ավելի սաստկական նշանակությամբ՝ շաղախուտ. սողոսկոտ—սողոսկուտ, սասանոտ—սասանուտ, ջղոտ—ջղուտ. մղձկոտ—մղձկուտ։*

220. Ուրդ,— *սակավաթիվ բառերի մեջ՝ ժողովուրդ, խորհուրդ, խառնուրդ, արձակուրդ, պարապուրդ, հագուրդ, համուրդ, կացուրդ, կըցուրդ, հավաքուրդ, լսուրդ, ուղեկցուրդ. աճուրդ. նվազուրդ, դաշնուրդ։*

221. Ուց,— *ա) Վաղուց, մորուց, փոքրուց, պստկուց, մանկուց, ծներուց, հնուց, շտուց, էգուց, առավոտուց. մերկուց։ Համմտ. § 206 «ՈՒԹ» ածանցիկ, որի մեջ «Թ» հնչյունը «Ց» հնչյունի առաջին բաղադրիչ հընչյունն է (տե՛ս § 34. 2)։*

բ) Դեղնուց, սպիտակուց, ճերմակուց. նեղուց։

Ուցք, *տե՛ս* ուք *§ 222։*

222. Ուք, ուկ, ուցք, ունջ, ունք, անք, *գրաբարում* **ունք**,—*ցույց է տալիս գործողությունից առաջ եկած արգասիք, օրինակ՝* ավելուք *(ավլուք),* ավելուցք, *գրաբար՝* ավելունք—*ավելաղբ, ավլելուց հավաքված աղբ, փոշի և նմանները, ավելած, ավելածք. մաղուք, մաղունջ—մաղելիս մաղի տակը թափված անպետք բանները, մաղածը.* ֆամուք, ֆամունք—*քամվածի մնացորդը, քամվածք, գրաբար* ֆամուկ, ֆամունկ. *խարտուք—խարտելուց առաջացած մանրուքը,* այրուք—*այրածի մնացորդ. ածուխ, մուր.* այրուցք. *էրուցք, էրեցք—այրված տեղը.* սանդրուք—*սանդրած խճուճ. սանդրելուց առաջացած կեղտը.* ցայտուկ, ցայտուք *(սրանից՝ ցատկել, ցատքել), գրաբար* ցայտունկ, *բարբառային՝* ցեթլուկ, ցելթուք, ցատկտուք—*ջրի ցայտուք, ցայտ. խոսելիս բերնից դուրս թռած թուք.* շթուք, շթիք *(շիթ—կաթիլ), վեր ցատկած ջուրը, ցայտ (սրանից շթքել—ջուրը ցատկեցնել).* կտրուք—*1. կտրտած բաներ. 2. կտրվածք, ճեղք, 3. կտրելը. ապա՝ ոչխար խուզելը և խուզած բուրդը. գրաբար՝ կտուրք.* կոտորուք—*կոտորած բաներ.* թափթփուկ—*դեն թափած բաներ.* խոշըրտուք—*մաղելուց հետո մնացած խոշոր կտորներ, հականիշ՝* մանրուք, մանրունք-*խեշերանք—մանր կտորներ՝ փայտի, ածուխի, դրամի. ածուխի խոշորտուք և մանրուք (բայը՝ մանրել).* ֆունք—*քսելու յուղ. դեղ (թանձր).* կերուք—*կերված, մաշված մասը, տեղը և կտորը.* մաշուք—*մաշված մաս.* ֆերուք—*քերանք,* ֆերինք, ֆերինջ—*քերվածք, քերելուց առաջացած կտորտանք. քերելով հանած բան.* տաշուք—*տաշելուց թափած կտորներ, տաշեղ.* ցողուք—*լվացանք,* ողողանք—*այն ջուրը, որով մի բան ողողում, լվանում են թեթև կերպով.* սղոցուք—*սղոցելուց*

առաջացած մանրուք. փրթուկ, փրթունք—փրթելուց առաջացած կտորտանք։ Այսպես և տակուկ, տակունք, տակուցք—տականք. փխրուկ, փխրունք։—Բարբառային ձևով ցույց է տալիս գործողություն, ինչպես **փղծուկ**, *գրաբար՝* **փղձուկք**—*փղծկելը. մտմտուկ—մտածություն (մտմտալ—մտածել), խշխշուկ, մզմզուկ—կսկիծ, մորմոք, մորմոքանք, սաստիկ ցավ սրտի. սրտմաշուկ, գինարբուք (գինեխում), Տե՛ս* **ունք** *§ 215, ան, անք § 144. բ։*

228. Ձյա, չեք,— *սակավաթիվ բառեր՝ ավետչյա, ավետչեք—աչքալուսի համար ստացած պարգև. առհավատչյա, հավատչյա, հավատչեք—հավատալու համար տրված գրավական, բեհ. ավուրչեք—օրավարձ, կրողչեք, բերողչեք, կարողչեք—կրելու, բերելու, կարելու վարձ։*

224. Պան,— *ա) Ցույց է տալիս պարապմունք և պաշտոն, պահողի նշանակությամբ, օրինակ՝ պահապան, այգեպան, պարտիզպան, դռնապան.—ուղտապան, նախրապան, ձիապան, սայլապան (սայլորդ, սեկլոր), կառապան.—կալապան (կալվոր), խանութպան, հացապան, ձվապան, ձկնապան (ձկան առուտրով պարապող)։ Համմտ. §§ 203. ա, 232։*

բ) Սռնապան (սրունք պահպանող զգեստ, զրահ), լանջապանակ (լանջ պահպանող զրահ), թղթապանակ (թղթապահ). գրապան, գրապանակ, գրպան (սկզբնապես գիրք պահող)։

225. Պատիկ,— *նշանակում է՝ անգամ, ինչպես՝ միապատիկ, երկապատիկ, կրկնապատիկ. երեքպատիկ, եռապատիկ, չորեքպատիկ, քառապատիկ, հինգպատիկ, հնգապատիկ. յոթնապատիկ, յոթնպատիկ, ութապատիկ, իննապատիկ, տասնապատիկ. հիսնապատիկ, հարյուրապատիկ, հազարապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ։*

226. Պես,— *ա) Գոյականների և իբրև գոյական առնված ածականների հետ բաղադրվելով ցույց է տալիս մի բանի նմանությունը. ինչպես՝ զինվորապես, վայրենապես, գիտնապես, մարդասիրապես, տղայապես, բժշկապես, փայլակնապես, խմաստապես, օտարապես։*

Այսպիսի բաղադրությունները աշխարհաբարում փոխարինվում են **պէս** *ետադրությամբ՝ տղայի պես, վայրենու պես, զինվորի պես, օտարի պես և այլն։*

բ) Գոյականների հետ բաղադրվելով կազմում է մակբայներ և նշանակում է կողմից. վերաբերմամբ, նկատմամբ, մասին։ Այս մակբայները համապատասխան են նույն գոյականներից **«ական»** *ածանցով կազմված ածականներին, օրինակ՝ ֆիզիկական—ֆիզիկապես (ֆիզիկական կողմից). մարմնական—մարմնապես. հոգեկան—հոգեպես. նյութական—նյութապես. տնտեսական—տնտեսապես. բարոյական—բարոյապես. անձնական—անձնապես։*

գ) Գոյականների հետ բաղադրվելով կազմում է մակբայներ կերպով բառի նշանակությամբ, **«ական»** *ածանցով ածականների համապատասխան, օրինակ՝ վայրկենական—վայրկենապես (վայրկենական կեր-*

պով), առանձնական—առանձնապես, րոպեական—րոպեապես, սկրպբնական—սկզբնապես. իրական—իրապես. օրինական—օրինապես (օրենքի պես, օրինական կերպով, ըստ օրենքի), էական—էապես, իսկական—իսկապես. հետևական—հետևապես, իրավապես (իրավական, իրավացի կերպով)։ Նոր կազմված են՝ վերջապես, վճռապես։

դ) Ածականների հետ մակբայներ է կազմում կերպով նշանակությամբ. օրինակ՝ մոտավորապես—մոտավոր կերպով, փառավորապես, գլխավորապես, մասնավորապես, հավասարապես, հատկապես, այլապես, ամբողջապես, զգաստապես. զգուշապես, թեթևապես, քաջապես (քաջ կերպով, քաջի պես), մեծապես, արիապես, վատթարապես (վատթար կերպով, վատթարի պես)։

Այս «պես» բառով հին կազմություններին այժմ փոխանակում են մեծ մասամբ «որեն» բառով կազմություններր՝ զգաստորեն, զգուշորեն, կամ թե «ություն» ածանցով կազմված անունների գործիական հոլովր՝ զգաստությամբ, զգուշությամբ։ Տե՛ս բար § 156, որեն § 204։

227. Ստան,— ցույց է տալիս՝ երկիր, մի բանի տեղ.

ա) Հայաստան, Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Մարաստան, Հնդկաստան, Տաճկաստան, Հունաստան, Չինաստան, Ասորեստան, Թաթարստան, ժողովրդական ձևով—Արաբստան, Ֆրանգստան, Հայաստուն, Վրաստուն։

բ) Ծառաստան, ձիթաստան (ձիթենիք եղած տեղ), սեխաստան, այգեստան, անդաստան (շատ անդեր, արտեր եղած տեղ).— ձիաստան, լեռնաստան (լեռնոտ երկիր)։

գ) Շահաստան (շահավաճառ քաղաք), հեռաստան (հեռու տեղ, երկիր), մենաստան, ամարաստան (ամարաստուն, ամառանոց)։

228. Ված, վածք,— միանում է առանց Ա հոդակապի. ա) ցույց է տալիս կրող կամ արգասիք առարկան իբրև հետևանք, արդյունք գործողության, երբեմն նաև գործողություն, օրինակ՝ հատված—կտրվածք, հերձված—պատռվածք (հերձել—պատռել, ճեղքել), հոդված—կցված (հոդել—կցել, կապակցել), դանդված—շաղախվածք («դանդել» բառից), քերթված (քերթել—կերտել, շինել), հարված—զարնվածք, ընթերցված, խնդրվածք, դարձված, հավելված, դիպված, հայեցված, ստացված(ք), հյուսված(ք), շինված(ք), կազմված(ք), քերվածք, խառնվածք։

«Ված» մասնիկը դարձած է կրավորական բայերի անցյալ դերբայի վերջավորություն. ուստի դերբայի հետ չշփոթելու համար՝ սովորաբար «Ք» է ավելանում վերջից, ինչպես՝ բռնվածք, այրվածք, քերվածք, խառնրվածք։

բ) Ցույց է տալիս գործողություն կամ գործողության ձևը, կերպը, օրինակ՝ «խոսվածք» նշանակում է՝ 1. խոսելը, 2. խոսելու ձևը, կերպը. կանգնվածք, կեցվածք, նստվածք, նայվածք, շարժվածք, հադնվածք, գրվածք և այլն։ Տե՛ս ած § 137։

229. Վածո,— կազմում է ածականներ, օրինակ՝ հատվածո—կտր-

ներով շինված, հողված, կցված—կցկցած, հյուսված, խառնված, շինված։ Համմտ. ած § 138։

280. Վար, վարի,— *օրինակ՝ քաղաքավար(ի), գեղավարի, մարդավարի և այլն։ Տե՛ս § 133. 6։*

281. Վետ, ավետ,— *ցույց է տալիս մի բանից շատ, լի ունենալը, կամ մի բանով հարուստ լինելը, օրինակ՝ ծաղկավետ, խոտավետ, սիզավետ, մրգավետ, պտղավետ, այգեվետ, մարդավետ, խնկավետ, ընկավետ. հացավետ.— խոզավետ, խաշնավետ, ընչավետ, ճաճանչավետ, կոհակավետ, հոտավետ. շահավետ, օգտավետ, կանաչավետ, թիկնավետ (թիկնեղ).— ուրախավետ, կենդանավետ (կենավետ), երանավետ, կենցաղավետ, հանգստավետ, խաղաղավետ։*

Համմտ. հոտավոր, հոտոտ, հոտավետ, հոտեղ։

282. Վոր, ավոր,— *ա) Նշանակում է՝ ունեցող, վրան կրող, ինչպես՝ զինվոր, զինավոր. աղեղնավոր, նիզակավոր, սակրավոր, ասպարավոր, սուսերավոր, շերտավոր, տապարավոր, մրճավոր, պարսավոր, տիգավոր, սրավոր, թրավոր, կապարճավոր. կժավոր, փայտվոր.—բեռնավոր, պսակավոր, ձիավոր, ոտավոր, տոնավոր, պոչավոր, գիսավոր, վարսավոր, թևավոր, եղջերավոր, ամբակավոր, կճղակավոր.—վիրավոր, երեսավոր (կտրիճ, երեսով մարդ).—ծոպավոր, գոգավոր, ձայնավոր, գունավոր, հոտավոր, լուսավոր, զորավոր, տաղանդավոր, հռչակավոր, շնորհավոր (շնորհալի), պակասավոր, հասակավոր, տարիքավոր, ալիքավոր, մեղավոր, պատվավոր, փառավոր, կանոնավոր, հանգավոր, վտանգավոր, բեղմնավոր, արգասավոր, բռնավոր, վաստակավոր. ահավոր, մտավոր, նշանավոր.— աղվոր, ծոցվոր (հղի)։*

բ) Գործողի անուն «ՈՂ» ածանցի նշանակությամբ, օրինակ՝ ունեվոր (ունեցող), սպասավոր (սպասող, սպասել—ծառայություն անել), ճգնավոր (ճգնող), ասպատակավոր, սգավոր, սգվոր. կեղծավոր, աշխատավոր, աղաչավոր, գանգատավոր, նենգավոր, անցավոր. եկվոր (եկավոր), արժանավոր (արժանիք ունեցող և արժանի եղող). ժառանգավոր, երաշխավոր (երաշխ, երաշխիք եղող)։

գ) «Ական», «ային» կամ մի այլ ածանցի իմաստով, օրինակ՝ մարմնավոր—1. մարմին ունեցող, 2. մարմնական. հոգևոր—1. հոգի ունեցող, 2. հոգեկան. երկրավոր—երկրային. աստեվոր—այս երկրի. կամավոր—կամական, կամա կամովի(ն). բանավոր—1. բանական, 2. բերանացի. գրավոր. մերձավոր—մոտիկ, մոտիկ մարդ. մոտավոր—մոտիկ. մենավոր—մենակ, միայնակ, մենական. հեռավոր—հեռու, հեռու եղող. պատշաճավոր—պատշաճական, պատշաճող. հարմարավոր—հարմարական, հարմարություն ունեցող, հարմարվող. զգուշավոր—զգուշություն ունեցող, զգուշական. կարևոր, հարկավոր—պիտանի, պետքական, պետք եղող. գլխավոր—գլուխ եղող. ժամանակավոր—ժամանակյա, ժամանակյան. հանդիսավոր։

զ) Մի բանով պարապող, աշխատող, «ՈՐԴ» ածանցի նշանակությամբ՝ հարսանքավոր, ուղևոր (ճանապարհորդ), գութանավոր, ջրվոր, բերվոր, սելվոր (սայլորդ), բանվոր, թոշվոր։ Հմմտ. §§ 203, 224։

ե) Թվականներից՝ քչվոր, շատվոր.— միավոր, տասնավոր, հիսնավոր, հարյուրավոր, հազարավոր, բյուրավոր, միլիոնավոր։

288. Վուն, ավուն,— ածականների նշանակությունը նվազեցնում է՝ հաստավուն, երկարավուն, մեծավուն, կարճավուն։ Այսպես ավելի գույների անունները՝ դեղնավուն (քիչ դեղին, թեթև դեղին), կարմրավուն, կապտավուն, սևավուն, կանաչավուն։ Հմմտ. ժեռ § 173, աշ § 152։ Հմմտ. սևավուն, սև, սևիկ, սևակ, սափ-սև, կարմրավուն (կարմրաշ, կարմրաժեռ), կարմիր, կարմրիկ (կարմրուկ), կարմրկեկ, կաս-կարմիր։

Տի, տիք, տե՛ս 202 ոտի։

284. Րան, արան,— 1. Տեղի նշանակությամբ, մեծ մասամբ բայերից. մի բան կատարելու տեղ, տուն, օրինակ՝ ննջարան (քնելու տեղ), քնարան, կացարան, բնակարան, արգելարան, օթարան, վարժարան, կրթարան, ուսումնարան (ուսում տալու տեղ), դատարան, մարզարան, ձուլարան, կայարան, խորհրդարան (խորհուրդ անելու տեղ), ժողովրան, խմբարան. տնկարան, կաղմարան, ընթերցարան, խաղարան, գանձարան, թանգարան, լսարան, գործարան, տեսարան, թեյարան, սրճարան (թեյատուն, սրճատուն)։

2. Տեղ, գործիք, անոթ, ինչպես՝ տանջարան (տանջելու տեղ և գործիք), պատժարան (տեղ և գործիք), զգայարան (զգալու գործարան), պահարան, նստարան, զոհարան (զոհանոց, սեղան, բագին, նաև անոթներ), ծածկարան (ապաստան, ծածկույթ, ծածկոց), ընդունարան (տեղ և աման, որի մեջ ընդունում են), կապարան (կապելու տեղ. բանտ. կապանք, չվան), մատուցարան (սեղան և անոթ մատուցանելու), լվացարան (լվալու տեղ և աման), կրակարան (կրակատուն և աման). Նվագարան, բացարան (բանալիք), ձգարան (ձգելու թոկ), կուփարան (կուփիչ)։

3. Գիրք, օրինակ՝ սաղմոսարան (գիրք սաղմոսների և քնար), երգարան (երգելու տեղ, երգերի գիրք և նվագարան), տաղարան (տաղերի գիրք), բժշկարան (բժշկանոց, բժշկվելու տեղ և բժշկության գիրք), դեղարան (դեղ պատրաստելու տեղ և գիրք՝ դեղ պատրաստելու խրատների)։

4. Անձի և պաշտոնի անուններից ցույց է տալիս պաշտոնատեղի, ինչպես՝ պաշտոնարան (պաշտոնատեղի), կաթողիկոսարան, պատրիարքարան, վեհարան, հյուպատոսարան, առաջնորդարան։

Ոյակ, տե՛ս երյակ § 169։

Որդ, տե՛ս երորդ § 170։

285. Ցի, ացի, եցի,— ա) Ցույց է տալիս մի տեղի բնակիչ լինելը. գավառացի, քաղաքացի, գյուղացի, տեղացի, դաշտեցի, լեռնեցի,—երեվանցի, աշտարակցի, փարպեցի, խորենացի, կարնեցի, վանցի (վանե-

ցի), տարոնցի.— եվրոպացի, ասիացի, աֆրիկացի, ամերիկացի.—տանեցի, տնեցի, դրսեցի։

բ) Կազմում է ազգի անուն՝ գերմանացի, իտալացի, ֆրանսիացի, անգլիացի, վրացի։

գ) Ցույց է տալիս մի աղանդի կամ ուսմունքի հետևող լինելը, տեղի կամ անձի անունով՝ օրինակ՝ մարկիոնացի, թոնդրակեցի, մանիքեցի, փարիսեցի։

դ) Կազմում է ածականներ կամ մակբայներ գործիական հոլովի նշանակությամբ՝ ատամնացի (ատամներով, ատամնացել—ատամով կծել, կտրել), բռնցի, մուրցացի (բռունցքով), ծղացի («ծղի»— թև բառից), բազկացի, թևացի, ձերբացի, մագլցի (որից՝ մագլցել), ափցի (ափով), աքացի («աք»—ոտք բառից, ստացել է ոտքով հարվածելու նշանակություն, դրանից՝ աքացել).—նշանացի (նշաններով. նշանացել—նշաններով հայտնել, ցույց տալ, հասկացնել), բերանացի, կանացի, առնացի (այրական), բառացի, փաստացի (փաստերով, նոր բառ է), իրավացի, արդարացի, խելացի, մտացի։

286. Յու,— Ցույց է տալիս մի բանի համար սահմանված, պահված լինելը, կամ ինչ որ մի բան պիտի դառնա. օրինակ՝ հարսնացու, փեսացու, սերմացու, մսացու, շապկացու, մարտացու (կռվի համար գործածելի), սիրտանացու, մահացու (մահվան համար սահմանված, ապա՝ մահաբեր), մահկանացու։

287. Ք,— գրաբարի հոգնակի կազմող ածանցը, որ ընդհանրապես կորցրել է իր նշանակությունը. ավելանում է գոյականների, ածականների և բայարմատների ու բայաբների վրա։

ա) Գոյականների նշանակությունը չի փոխվում, օրինակ՝ աչ—աչք, ձեռ—ձեռք, ոտ—ոտք, միտ—միտք. աշխարհ—աշխարհք, մեղ—մեղք. գործի—գործիք, շնորհ—շնորհք, կամ—կամք, խնդիր—խնդիրք, հիմ—հիմք, թռիչ—թռիչք։

բ) Գոյականների նշանակությունը փոխվում է, օրինակ՝ տարի—տարիք, տեղի(տեղ)—տեղիք, գիր—գիրք, հուր—հուրք, խաղ—խաղք, լուծ—լուծք. ծալ—ծալք, շար—շարք, պարտ—պարտք, հետ—հետք։

գ) Բայարմատներից և բայաբներից կազմվում է գոյականներ, օրինակ՝ տես—տեսք, էջ—էջք, անց—անցք, տուր—տուրք, ել—ելք, մուտ—մուտք, դիր—դիրք, բեր—բերք, գնաց—գնացք, լվաց—լվացք և այլն։ Տե՛ս §§ 238, 240։

դ) Ածականներից գոյականներ է կազմում, օրինակ՝ բարի—բարիք, ընտանի—ընտանիք, արժանի—արժանիք, հավաստի—հավաստիք, արդունի—արդունիք, հայրենի—հայրենիք, հին՝ հաճոյ, հաճոյք=հաճո, հաճույք. հում—հումք.—տեսանելի—տեսանելիք, ճաշակելի—ճաշակելիք և այլն. նույնպես՝ լայն—լայնք, երկայն—երկայնք. Սյունի—Սյունիք, Ապահունի—Ապահունիք, Ասորի—Ասորիք, Աղվան—Աղվանք։

ե) Կան բառեր, որոնք սովորաբար միայն Ք-ով են գործածվում՝

վառք, փառք, խելք, ծախք, աղոթք, խոսք, կիրք, դեպք, բարք, վարք, կյանք, օրենք, պետք, վերք, արարք, մուտք, նշանատուք, բարեւտուք և այլն։

Տե՛ս §§ 144, 145, 155, 165. բ, 171, 174. գ, 214, 228։

Է

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

238. Բայաբնի ածանցներ *«ա», «յաց», «ույց»։— Այս ածանցներն ավելանում են որոշ տիպի բայարմատների վերջից, որոնք սովորաբար մենակ չեն գործածվում, այլ բարդության առաջին կամ երկրորդ մասն են կազմում, կամ թե ետևից մի ուրիշ ածանցական մասնիկ են ընդունում։ Բացի այդ՝ դրանցով կազմվում են բայաբները, որոնց ետևից ավելանում են բառափոխության ձևական մասնիկները և կազմում բայերի ձևերը։*

1. **Ա,** *հին այ.— ավելանում է «ալ» վերջացած բայերի արմատների վրա, օրինակ՝* **լվալ**—*արունլվա, ամանլվա, ոտնալվա, անլվա.* **մնալ**—*սրտամնա, ենթամնա, մնայուն.* **զգալ**—*անզգա, զգայասեր, զգայուն, զգայության.* **գնալ**—*բարձրագնա, գնայուն.* **վիրալ**—*վարսավիրա։ Այսպես նաև՝ կամ բայի բունը «կա», հին «կայ», որից՝ մշտակա, ինքնակա, ենթակա, անկայուն, կայուն, հին «կայ» ձևից՝ կայք.* **գալ** *բայի բունը «գա», որից՝ ապագա, շրջագա, շրջագայիկ, շրջագայության։ Հին* **գոմ** *բայի բունը «գոյ», որից՝ անգո, գոյության, գոյական, հին «գոյ» ձևից՝ գոյք>գույք։ Սրանց անալոգիայով կազմված է անուղղա (անուղղելի), սրտակտրա (լինել, մեռնել)—«ուղղել» և «կտրել» բայերից։*

2. **Ացս,**— *ավելանում է «ալ» և «անալ» վերջացած բայերի արմատների վրա։ Այս կազմություննները, հաճախ «Ք» տառով, գործածվում են և իբրև առանձին բառեր. օրինակ՝* **լվալ, լվանալ**—*լվացք, անլվաց, լվացարան, լվացիկ.* **մնալ**—*մնացք, ետամնաց, մնացական.* **զգալ**—*նրբազգաց, զգացում, զգացական, զգացության.* **գնալ**—*գնացք, անգնաց, գնացական.* **կարդալ**—*գրակարդաց, կարդացում.* **խնդալ**—*չարախնդաց, խնդացական.* **խաղալ**—*խաղացք, առաջխաղաց, խաղացում.* **աղալ**—*ջրաղաց, աղացում, աղացիկ.* **տեղալ**—*երկնատեղաց, տեղացում.* **ճոգալ**—*հոգացողություն.* **եռալ**—*եռացում.* **ողբալ**—*ողբացիկ.* **խայտալ**—*խայտացում և այլն։* **Ընթանալ**—*ընթացք, արագընթաց, ընթացում.* **սլանալ**—*սլաց, սլացք, քաջասլաց, սլացում.* **իմանալ**—*իմաց, իմացք, իմացում.* **վերանալ**—*վերաց, վերացում.* **զարմանալ**—*զարմաց, զարմացք, զարմացում.* **մոռանալ**—*անմոռաց, մոռացում.* **գոճանալ**—*գոհացում.* **հեռանալ**—*հեռացում և այլն։ Այսպես նաև՝* **լալ**—*լաց.* **կամ**—*կաց, կացություն, կացարան. հին «կենալ» (կենալ) բայից՝ մենակյաց<մենակենաց, կեցություն։*

3. **Յաց, եց,** *հին* **եաց, եց,**— *ավելանում է «ել», «ենալ» վերջացած բայերի արմատների վրա, օրինակ՝* հայել—*հայացք (հայեաց), շրջահայաց, հայեցվածք, հայեցում, հայեցողություն.* ատել—*մարդատյաց, ատեցում.* այրել—*անձկայրյաց, այրեցում.* ազդել—*ազդեցություն, ազդեցիկ.* մերձենալ—*մերձեցում.* մոտենալ—*մոտեցում։*

4. **Ույց, ուց,** *հին* **ոյց,**— *դրաբարի «ուցանել», աշխարհաբարի «ցնել» վերջացած պատճառական բայերի արմատների վրա, ինչպես՝ դրբարբար* սառուցանել, *աշխարհաբար* սառցնել—*սառուց, սառույց, սառակասառույց, սառուցում.* թաքցնել—*քանքարաթաքույց, թաքուցում.* ուցնել—*ուռուցք, փքոցուռույց, ուռուցիկ, ուռուցում, ուռուցկոտ.* անցնել—*լուսանցույց, անցուցում.* ուսուց(ան)ել—*ուսույց, ուսուցում.* հարուց(ան)ել—*ամպահարույց, հարուցում.* մատուց(ան)ել—*մատույց, մատույցք, նավամատույց, մատուցում, մատուցարան.* զեկուց(ան)ել—*զեկույց, դեկուցում, կանխազեկույց.* սնուց(ան)ել—*սնույց, սնուցում, սրսնուցիչ.* կառուց(ան)ել—*կառույց, վիմակառույց, կառուցվածք, կառուցում.* հատուց(ան)ել—*վարձահատույց, հատուցում.*—*դրաբար* զարթուցանել, *աշխարհաբար* զարթեցնել—*զարթուցիչ, զարթուցում. դրաբար* հեղձուցանել—*հեղձուցիկ, հեղձուցիչ։ «Ացնել» վերջացած բայերից՝* զորացնել—*զորացուցիչ.* հեռացնել—*հեռացուցիչ և այլն։ Տե՛ս § 263. 2։*

289. Անորոշ դերբայի կազմությունը։ Քարացած կամ մեռած կազմություններ։— *Անորոշ դերբայի կազմության, ինչպես և ընդհանրապես բոլոր ածանցական մասնիկներով կազմությունների համար, պետք է նկատի ունենալ՝ 1) կենդանի կազմության եղանակներ, որոնց անալոգիայով նորանոր բառեր ենք կազմում, և 2) քարացած կամ մեռած կազմություններ, որոնց անալոգիայով այլևս նոր բառեր չենք կազմում, և որ սովորելով՝ հիշողությամբ միայն վերարտադրում ենք։*

Դրաբարում ներկայի կամ անկատարի բուն, որից կազմվում է անորոշ դերբայը, վերջանում է չորս ձայնավորով՝ ա, ե, ի, ու. *անորոշ դերբայն ունի կա՛մ սոսկ Ավ, ել, Իլ, ՈՒլ, կա՛մ Անել, Նել. Անիլ, ՋԻլ, ՆՋԻլ. Անավ, ԵՆավ, ՆԱվ, ՆՈՒլ և պատճառական ՈՒՑԱՆել կազմություններր։ Մեկ բայ ևս «ո» ձայնավորով «գոլ», որ չկա աշխարհաբարում։ Դրանցից աշխարհաբարում կենդանի բեղմնավոր են Ավ, ել, ԱՆավ, ՈՒՑԱՆել> ՑՆել, իսկ մնացածները մեռած ձևեր են, որոնք գրաբարում նույնիսկ, բացի իլ. անիլ կաղմություններից, սահմանափակ թվով բայերի մեջ են երևան գալիս։ Աշխարհաբարում այդ կազմության բայերը չեն գործածվում, բացի մի քանիսից, կամ վերածված են ալ, ել, անալ ձևերից մեկին։*

1. Բոլոր ՈՒլ վերջացած բայերը շուտ են եկել ել ձևին։ Այս փոխանցումը երևում է նույնիսկ գրաբարում, որի մեջ կան բայեր, որոնք կրկնակի ձևով են՝ և՛ «ուլ» և՛ «ել»։ Աշխարհաբարում այդ երկուսից մնացել է միայն երկրորդը, ինչպես՝ կասուլ—*կասել, քերծուլ—քերծել, հինուլ—հինել—* յենուլ—*յեննել—հեննել, որից՝ հեննվել. կարկառուլ—կարկառել։ Այնպես նաև՝ արգելուլ, զենուլ, ցելուլ, լեսուլ, կալուլ և այլն աշխարհա-*

բար դարձել են՝ արգելել, զննել, ցելել, լեսել, կալել (վերջինս՝ բարբառային)։

2. Բոլոր իվ վերջացած բայերը որոնք գրաբարում թվով բավական շատ են, վերածված են աշխարհաբարում ել ձևի։ Այս փոխանցումն ևս երևում է արդեն գրաբարում, որի մեջ անորոշ դերբայը «իլ» ձևի փոխանակ ունի սովորաբար «ել» ձևը. ուստի և կան բայեր կրկին ձևով, ինչպես՝ համարիլ—համարել, դատիլ—դատել, հավանիլ—հավանել, բնակիլ—բնակել, ապստամբիլ—անպստամբել, ծաղկիլ—ծաղկել, պատահիլ—պատահել, փայլիլ—փայլել, պակասիլ—պակասել, պարապիլ—պարապել, դադարիլ—դադարել, սովորիլ—սովորել, դեղնիլ—դեղնել, քրտնիլ (նաև քրտնուլ)—քրտնել և այլն։ Բացի այդ՝ գրաբարում «եմ», «անեմ» կազմութիւնները փոխվելով «իմ», «անիմ» կազմութիւններին առաջ են բերում կրավորական բայեր. աշխարհաբարում կրավորականի համար հատուկ ձև է առաջ եկել, ուստի այսպիսի «իլ» վերջացած բայերն ևս փոխվել Ւն «ել» կազմութեան. ինչպես՝ գրաբարում կրավորական «սիրիլ», աշխարհաբարում «սիրվել»։ Արևմտյան գրական լեզվի մեջ և բարբառներում, սակայն, դեռ կան «իլ» կազմութեան բայեր, որոնք մեկ մեկ գործածվում են նաև արևելյան գրական լեզվի մեջ, բայց հետզհետե այդ պակասում է։

3. Կան բայեր, որոնք գրաբարում երկու ձևով են առաջ գալիս՝ ուլ—անել, կամ ուլ—անիլ. սրանցից մի քանիսն ունին նույնիսկ երրորդ ել ձևը։ Աշխարհաբարում այդ բայերը միայն վերջին «ել» ձևով են. ինչպես՝ լիզուլ, լիզանել—լիզել. հերձուլ, հերձանել—հերձել, գերծուլ, գերծանել—գերծել. կիզուլ, կիզանել—կիզել. հարուլ, հարկանել—հարել. ստեղծուլ, ստեղծանել—ստեղծել. զատանել, զատել. զատնուլ, զատչիլ, զատիլ, աշխ. զատվել. զեղուլ, հեղուլ, գերլուլ, կրավորական՝ զեղանիլ, հեզանիլ, գելանիլ, աշխ. զեղել, հեղել, գելել։—Կան բայեր էլ, որոնք գրաբարում երևան են գալիս նուլ—անել կամ նուլ—անիլ, նուլ—ենալ կամ իլ—նուլ կամ ուլ—նուլ ձևերով. դրանցից մի քանիսը գրաբարում արդեն ունին սոսկ «ել» կամ «իլ» ձևը, որը և մնում է աշխարհաբարում, ինչպես՝ թքնուլ, թքանել—թքել (բարբառային՝ թքնել). եղծնուլ, եղծանել—եղծել. քաղցնուլ, քաղցենալ—քաղցել. սկսնուլ, սկսանիլ—սկսել. զբաղնուլ, զբաղիլ, աշխ. զբաղվել, զգածնուլ, զգածնիլ, աշխ. զգածվել. զբօսնուլ. զբօսանիլ—զբոսնել։

4. Անել, Անիլ կազմութեան բայերն աշխարհաբարում մեծ մասամբ դարձած են սոսկ «ել» կազմութիւն։ Այս փոփոխութիւնը ևս արդեն գրաբարում կա. ինչպես՝ սուզանել—սուզել. խփանել—խփել, տարածանել—տարածել. բուծանել—բուծել. ներկանել—ներկել. ոռոգանել—ոռոգել. զանգանել—զանգել. զեղծանել—զեղծել. զառանցանել—զառանցել. լուծանել—լուծել. օծանել—օծել. զատանել—զատել. բեկանել—բեկել. լքանել—լքել.— անիծանել—անիծել. ծիւրանիլ—ծիւրիլ, աշխ. ծյուրվել. մերկանել—մերկել, աշխ. մերկացնել («մերկանալ» բայից)։ Նույնպես

սպանանել, հատանել, խածանել, մուծանել, ծնանիլ, զիջանել, զարկանել, շիջանիլ, սկսանիլ՝ դարձել են՝ սպանել, հատել, խածել (նաև խածնել), մուծել, ծնել, զիջել, զարկել, շիջել (շիջվել), որից՝ շիջեցնել, ըսկըսել։

5. Անել, Անիլ կազմության բայերից աշխարհաբարում մնում են «ա» ձայնավորի սղումով հետևյալները՝ առնել վերջածանցներից՝ մտնել, ելնել, անցնել, իջնել, հասնել, տեսնել, դտնել, բարբառներում նաև՝ ցուցնել, պագնել, խածնել (նաև խածել)։ Անիլ վերջացածներից՝ հագնել (գրաբար՝ ագանիլ), բուսնել, մեռնել, պրծնել, ընկնել (անկանիլ), հատնել, փրծնել, նույնպես բարբառային «էղնել»։ Իսկ «փլանիլ» բայի համար ունինք «փլչել»։

6. Ջիլ, ՆՋիլ, ՆՈիլ վերջացած բայերից մի քանիսը մնում են աշխարհաբարում չել, նել, ել ձևով. դրանք են՝ փախչիլ, փախնուլ—փախչել. թռչիլ, թռնուլ—թռչել, թռնել. ուռչիլ, ուռնուլ—ուռչել, ուռել. հանգչիլ, հանգնուլ—հանգչել, հանգնել (ճրագի համար). կորնչիլ—կորչել, կորել. սառչիլ, սառնուլ—սառչել, սառել. թաքչիլ, թաքնուլ—թաքչել, թաքնվել. հարթչիլ, հարթնուլ—խրտնել (բարբառային՝ խրտչել). զարթչիլ, զարթնուլ, զարթիլ—զարթնել։ Այսպես և՝ առնուլ—առնել, պշնուլ—պշնել. կալնուլ—կալնել, թողուլ—թողնել՝ նույնպես՝ դիպչել, դիպնել. կայչել, կպնել, իսկ «խնուլ» դարձել է «խցել», լնուլ—լցնել («լցուցանել» բայից), երդնուլ—երդվել և այլն։ Գրական փոխառություն են գրաբարից՝ ուսանիլ (ժողովրդ. ուսնել), կլանել, մեղանչել, շիջանել, մարտնչել (որից նոր՝ մարտնչեցնել)։

Գրաբարի մի քանի բայեր աշխարհաբարում չեն գործածվում. յանցանել (որից՝ յանցումն, յանցանք)—հանցանք գործել. արկանել (արկումն). զերծանել, զերծնուլ, զերծանիլ, զերծիլ (զերծումն). հեղձանել, հեղձուլ, հեղձնուլ, հեղձանիլ, հեղձիլ (հեղձումն). զառածանել, զառածանիլ, զառածիլ (զառածումն). ջեռանիլ (ջերանիլ), ջեռնուլ, ջեռիլ, ջերիլ (ջեռումն). սփածանել, սփածնուլ, սփածանիլ (սփածումն). լուացանել (լուացումն). մածանել, մածնուլ (մածումն)։— Այս բայերը, ինչպես դրանց սոսկ «ում», «իմ» ձևերը և «ումն» ածանցով կազմվածները ցույց են տալիս, աշխարհաբարում հարկավոր դեպքում պետք է լինեն՝ հանցել, արկել, զերծել, հեղձել, զառածել, սփածել, լուցել, մածել, ջերել կամ ջեռել։

Աշխարհաբարում չեն գործածվում և հետևյալները՝ ցասնուլ, ցասչիլ (ցասումն). այտնուլ. այտչիլ (այտումն). պակնուլ (վախից ու զարմանքից սառած մնալ), պակչիլ (պակումն). պախնուլ (խիստ վախենալ), պախչիլ, պսխիլ (պսխումն). մատնուլ, մատչիլ. խափնուլ, խափչիլ. կապչիլ (կափումն—խփել, գոցել). ընկճնուլ, զգճնուլ (բարբառային՝ գճնալ), ընթեռնուլ, կառչիլ, փակչիլ։ Սրանցից աշխարհաբարում պահպահում են՝ «փակչիլ», որից «փակցնել». «կառչիլ», որից «կառչեցնել». «մատչիլ», որից գրաբարի «մատուցանել» կամ նոր ձևով «մատուցել»։

Հարկավոր դեպքում մյուս բայերն ևս պիտի լինեն ցասնել (զբոսնել, պշնել, զարթնել, խրտնել և այլ բայերի անալոգիայով), կամ ցասչել. կամ ցասել. այտնել կամ այտչել, կամ այտել, պակնել կամ պակչել, կամ պակել և այլն։ Վերջերս «ընթեռնուլ» բայի համար կազմված է «ընթերցել», հին կատարյալի «ընթերց» բնից, «ընթերցում, ընթերցված» բառերից հանելով։

240. Անվանածանց բայեր և բայածանց անուններ։— Կենդանի կազմության բայերը, *ալ, ել, անալ վերջավորություններով, մասամբ անուններից են ածանցվում, մասամբ բայերից։ Հնուց ավանդված ունինք բազմաթիվ բայեր, որոնք անուններից են ածանցված, կամ, ճիշտ ասած, լեզվի մեջ կան դրանց համապատասխան գոյական կամ ածական անուններ, բայց բայն է արդյոք անունից ածանցված, թե՞ ընդհակառակն, այդ հաճախ դժվար է իմանալ։ Օրինակ՝ խնդրել, կատարել, սիրել, հոտել, գործել, գրել, պատվել, թքել, կարգել, հավանել, կամենալ, կտրել, խոսել,— այս բայերն ունին համապատասխան անուններ՝ խնդիր, կատար, սեր, հոտ, գործ, գիր, պատիվ, թուք, կարգ, հավան, կամ (կամք), կտոր (կտուրք), խոսք։ Այսպես և՝ ողբալ սարսռալ, հավատալ, շողալ, լողալ, ցոլալ, երերալ, խաղալ—ունին՝ ողբ, սարսուռ, հավատ, շող, լող, ցոլ (ցոլք), երեր, խաղ։ Նույնպես հնուց ավանդված ունինք բազմաթիվ՝ գործողության կամ գործողի անուններ իբրև արմատական բառեր իրենց համապատասխան բայերից, հաճախ «ք» տառի հավելումով, ինչպես՝ հանել—հանք. նստել—նիստ. բերել—բեր (բերում), բերք. ածել—ած (1. ածելը, բերելը, 2. ած, ածք, ածեր—մատնարկ, նորատունկ). արկանել—արկ (ձգվածք, ձգած բան). ընկնել, անկանել—անկ (1. ընկած, 2. ընկնող, պատշաճ եղող և այլն). բեկել—բեկ (կոտրած). եղծել—եղծ (եղծումն. եղծած. եղծելի). անցնել—անց (անցած), անցք. մածել—մած (կպած. կպչուն). խփել—խուփ (1. խփած, 2. խփող, 3. կափարիչ). գիտենալ—գետ (գիտցող). գտնել—գյուտ. դիզել—դեզ. տարածել—տարած. անիծել—անեծք. լուծել—լույծ. փլչել—փուլ. հատել—հատ. թռչել—թռիչ, թիռ. փախչել—փախ և այլն։ Բայերի մեծ մասի համար կան այսպիսի արմատական անուններ, և դրանց անալոգիայով այժմ էլ հաճախ նոր անուններ են ածանցվում բայերից. այսպես նոր կազմված են՝ թրթռալ բայից՝ թրթիռ, մրմռալ բայից՝ մրմուռ, վշալ—վուշ կամ վիշ, զրնգալ—զրինգ, քաշել—քաշ, լսել—լիս, կոտրել—կոտր (կոտր ընկնել), տրամադրել—տրամադիր, արտագրել—արտագիր, ճանաչել—ճանաչ, ամաչել—ամաչ, անամաչ. խուսափել—խուսափ, շոշափել—շոշափ, կպչել—կիպ, հագնել—հագ (հագիս, հագիդ) և այլն։ Այսպես հաճախ հին և նոր բայերից, որոնց համապատասխան անուն չկա, նոր նոր անուններ են ածանցում բայերի ել, ալ, եճալ, աճալ, նել, չնել վերջերը դուրս ձգելով և երկու բաղաձայնի մեջ համապատասխան ի՛ կամ ՈՒ ձայնավորը դնելով, երբեմն նույնիսկ առանց դրան, ինչպես՝ «ածածուկ» բառից կազմված է «ածածկել», իսկ վերջինիս «ել» վերջավորությունը դուրս ձգելով՝ ածանցված է «ածածկ»։*

Եթե մի կողմից՝ բայերից այսպես նոր անուններ են ածանցվում, մյուս կողմից՝ անուններից ԵՄ, ԱՄ, ԱՆԱՄ կազմութիւններով նոր բայեր են ածանցվում հին բայերի անալոգիայով։

1. Եվ կազմութիւմբ հնուց ունինք բազմաթիվ չեզոք և ներգործական բայեր ամեն տեսակի անուններից կազմված,— լինին պարզ, բարդ թե ածանցված,—ինչպես՝ տեր—տիրել, ցավ—ցավել, սուտ—ստել, փառավոր—փառավորել, մարդասեր—մարդասիրել։ Դրանց անալոգիայով այժմ էլ ազատ կերպով ամեն տեսակի անուններից նոր բայեր ենք կազմում, ավելի ներգործական սեռի. այսպես նոր կազմված են՝ քարել, ցեխել, տախտակել, հողել, թելել, սիրահարվել և այլն։

2. Անալ (նալ) կազմութիւմբ բայերը, բացի մի քանիսից (գողանալ, ստանալ, իմանալ, ցանկանալ), չեզոք են և ցույց են տալիս մի բան դառնալ, մի վիճակից մի ուրիշ վիճակի փոխվել, ինչպես՝ հողանալ, փայտանալ, քարանալ, դառնանալ, լավանալ։ Այսպես կարելի է բայեր կազմել ամեն կարևոր դեպքում ամեն անուններից։

Միևնույն անուններից հաճախ ածանցվում են բայեր թե՛ «ել» և թե՛ «անալ» ձևով, որոնք նշանակութիւմբ տարբեր են։ Այսպես են, օրինակ, ազատել, ազատանալ. նեղել, նեղանալ. սերմել, սերմնանալ. քարել, քարանալ. բարդել, բարդանալ. պնդել, պնդանալ. կարճել, կարճանալ. հարթել, հարթանալ։ «ել» ձևով չեզոք բայերը նշանակութիւմբ մեծ մասամբ նույնանում են նույն անուններից կազմված «անալ» վերջացած բայերի հետ. բայց երբեմն դրանք էլ կիրառութիւմբ տարբերվում են, օրինակ՝ կարմրել, դեղնել (ամոթից, վախից)—կարմրանալ, դեղնանալ. ծանրել (հղանալ)—ծանրանալ. վարարել—վարարանալ. նվազել, նվազանալ. հորդել, հորդանալ. բարակել—բարականալ. կակղել—կակղանալ. քացախել—քացախանալ. մթնել—մթնանալ և այլն։

Այս «անել» կազմութիւնից ծագում է ենալ ձևը գրաբարի սովորական ենա—ե ձայնափոխութիւմբ. ինչպես՝ «լկտի» բառից լկտիանալ, «լկտեանալ», լկտենալ։ Գրաբարում բազմաթիվ այսպիսի բայեր կան «ի» վերջացած անուններից, ինչպես՝ թշնամի—թշնամենալ, խնամի—խնամենալ, ընտանի—ընտաննենալ, հոգի—հոգենալ, գոդի—գոդենալ, ծարավի—ծարավենալ, կատաղի—կատաղենալ և այլն։ Միջին հայերենում սրանց անալոգիայով առաջ են գալիս բազմաթիվ այսպիսի բայեր՝ ամաչենալ, ճանաչենալ, երևենալ և այլն (տե՛ս § 253)։ Աշխարհաբարում մնում են միայն սակավաթիվ այդպիսի բայեր արդեն մեռած «ենալ» ձևով, ինչպես են՝ մոտենալ, մերձենալ, պարծենալ, գիտենալ, կարենալ, վախենալ, հագենալ, կամենալ, ունենալ, կենալ։ Բարբառային ձևով կան նաև՝ ուզենալ, կարծենալ, պարտենալ (պարտ լինել), պիտենալ։ Իսկ արևմտյան բարբառների և արևմտյան գրական լեզվի մեջ շատ այդպիսի բայեր կան սղված ձևով՝ ճանչնալ, ամչնալ, երևնալ և այլն։

3. Ալ կազմութիւմբ բայերը մեծ մասամբ չեզոք են և նշանակում՝

են մի գործողություն կամ, ավելի, մի դրության, մի վիճակի մեջ լինել, ինչպես՝ «կաղալ» նշանակում է՝ կաղի տալ, կաղաբար գնալ, մինչդեռ «կաղանալ»—կաղ դառնալ. հոխորտալ—հոխորտաբար խոսել, շարժվել, հոխորտանալ—հոխորտ դառնալ. խրոխտալ—խրոխտաբար խոսել, շարժվել. խրոխտանալ—խրոխտ դառնալ. լողալ—լող տալ. լողանալ—լոգանալ, լոգարան մտնել մաքրվելու կամ զովանալու համար։ Հին լեզվի մեջ կան բայեր, որ «ալ» և «անալ» կազմությամբ նույն նշանակությունն ունին, ինչպես որ աշխարհաբարում «լվալ» և «լվանալ» նույն նշանակությունն ունին, նույնպես գրաբարում՝ զղջալ—զղջանալ, ցանկալ—ցանկանալ, անձկալ—անձկանալ, մուրալ—մուրանալ, տենչալ—տենչանալ և այլն։ Աշխարհաբարում գործածվում են՝ զղջալ, ցանկանալ, անձկալ, մուրալ, տենչալ։

Հին լեզվից ունենք «ալ» կազմությամբ որոշ թվով բայեր՝ աղալ, որսալ, ողբալ, հուսալ, գթալ, խաղալ, հավատալ, դողալ, հոգալ, սգալ, խնդալ, ցնծալ, խոկալ, խայտալ, եռալ, խորդալ և այլն։ Դրանց անալոգիայով կազմված են՝ թոնթորալ, թոքալ (հազալ թոքերից), մտմտալ, շաղալ (անձրևի), ճխալ, վխտալ, բլբլալ, թպրտալ, ծկլալ (ծածուկ նայել), ծղծղալ, մզմզալ, լքլքալ, ծլծլալ, պսպղալ, պլպլալ, ծլփալ, ծպտալ, կրմկրմալ, տնքալ և այլն, այլև բնաձայնություն ցույց տվող շատ բայեր՝ վշշալ, վզզալ, գոռալ, վժալ, գոռգոռալ, թովռալ, կլկլալ, խռալ, վխկալ և այլն։

Հին լեզվի մեջ չեզոք բայերից կան այնպիսիները, որոնք ունեն կրկին ձևեր՝ ել, իլ, ալ կազմություններով. աշխարհաբարում դրանցից գործածվում է սովորաբար «ալ» ձևը՝ լողալ, ծփալ, սողալ, որճալ, թընդալ, հազալ, փրփրալ, տեղալ, երերալ, ծորալ, սարսռալ և այլն։ Առհասարակ նոր լեզվի մեջ ձգտում է երևում՝ հին լեզվի ել, իլ կազմության չեզոք բայերը վեր ածել Ալ կազմության, այսպես հին՝ ճչել, ժպտիլ, թրթռել, կսկծել (կսկծիլ), երեւիլ և այլ բայերի փոխանակ այժմ սովորաբար գործածում ենք՝ ճչալ, ժպտալ, թրթռալ, կսկծալ, երևալ. նույնպես՝ ցավել, խոսել, հազել, ծիծաղել, կաթել և այլ ձևերի հետ արդեն գործածում են նաև՝ ցավալ, խոսալ, հազալ, ծիծաղալ, կաթալ։—Ժողովրդական լեզվի մեջ այս փոխանցումը մեծ ծավալ ունի, ավելի արևելյան բարբառների մեջ։ Կան, սակայն, սակավաթիվ բայեր ևս եմ և ամ կազմությամբ, մեկը ներգործական, մյուսը չեզոք նշանակությամբ. ինչպես՝ ծփել—ծփալ, թվել—թվալ, ծխել—ծխալ, ցողել (ամանը ջրով ողողել)—ցողալ (անձրև շաղալը), խլրտել (շարժել տեղից)—խլրտալ, գուժել—գուժալ։

4. Կան բայեր, որոնք կազմված են բայաբներից՝ ուրիշ բայերի և սրանց համապատասխան անուններին («ումն», «արան» և այլ ածանցներով) անալոգիայով. օրինակ՝ հին լեզվի մեջ «բառնալ», «խնուլ», «բանալ», «լնուլ», «լալ» բայերի բներն են՝ բարձ, խից, բաց, լից, լաց. սրբանցից կազմված են՝ «բարձումն», «խցումն», «բացումն» անունները.

և քանի որ «ումն» ածանցով կազմված անունների համար կան համապատասխան բայեր՝ ծագումն—ծագել, շարժումն—շարժել, թաղումն—թաղել, դրանց անալոգիայով կազմված են նաև «բարձումն», «խցումն», «բացումն» անունների համապատասխան բայեր՝ բարձումն—«բարձել» խցումն—խցել, բարբառային ձևով նաև՝ բացումն—«բացել» (բացում եմ...), լցել (լցնում եմ...), լացել (լացում եմ...)։

Նման ձևով բոլորովին նոր կազմված են «ընթերցել», «զգայել»։ Գրաբարի «ընթեռնուլ» բայի բունն է «ընթերց», որից՝ ընթերցումն, ընթերցարան, ընթերցուած, իսկ «զգալ» բայի նեղկայի բունն է «զգայ» (տե՛ս § 238. 1), որից՝ զգայումն, զգայարան, զգայութիւն։ Արդ, քանի որ «աննջարան», «դատարան», «պահարան», «գործարան» և շատ ուրիշ այսպիսի կազմութեան անունների համար կան համապատասխան բայեր՝ աննջել, դատել, պահել, գործել,— դրանց անալոգիայով նաև «ընթերցարան», «զգայարան» բառերի համար առաջ են եկել համապատասխան ձևով բայեր՝ «ընթերցել», «զգայել»։ Այսպես նաև «հատուցում», «կառուցում», «մատուցում», «զեկուցում», «ուսուցում», «հարուցում», «ծանուցում» անունների համար կազմված են նոր բայեր՝ հատուցել, կառուցել, մատուցել, զեկուցել, ուսուցել, հարուցել, ծանուցել, որոնք այժմ հետզհետե ավելի են գործածվում, քան հին բայերը՝ հարուցանել, կառուցանել, մատուցանել, զեկուցանել, ուսուցանել։

241. Բայածանց բայեր։— Բայերից ածանցվում են բազմապատկական, պատճառական և կրավորական բայերը։

1. Բազմապատկական բայերը ցույց են տալիս գործողության կրկնություն, կամ շատ գործող առարկաների միանման գործողություն։ Կազմվում են «ել» վերջացած բայերից ԱՏ, ՈՏ, Տ, ՈՐ, ԱՏԱԿ, ՏԿ և ուրիշ ածանցներով, ինչպես՝ կտրել—կտրատել, կտրտել. կոտրել—կոտրատել, կոտրտել. կոտորել—կոտորատել. փշրել—փշրատել, փշրտել. խածել—խածատել. թռչել—թռչտել. մորթել—մորթոտել. ջարդել—ջարդոտել. բռնել—բռնոտել. նստել—նստոտել. խոցել—խոցոտել. կծել—կծոտել. խեղդել—խեղդոտել. թռչել—թռչկոտալ. թովռալ—թովռտալ. թոթվել—թոթվոտել. ցատկել—ցատկոտել, ցատկտել. ժողովել—ժողվոտել, ժողվոտել. կրճել—կրճտել. կուվել—կուվրտել. պահվել—պահվրտել. պագվիլ—պագվոտել. պտռել—պտռտել. փնտրել—փնտրտել. պատառել—պատառոտել, պատռտել. ճանկռել—ճանկռտել. Այս վերջինների անալոգիայով ՈՏ մասնիկով՝ քանդել—քանդոտել. խաբել—խաբոտել. սկզբի բաղաձայնի կրկնությամբ՝ վազվոտել, քաշկռտել, կոխկռտել։ «Վազվոտել» բայի անալոգիայով՝ խածվոտել, կանչվոտել։ Կրկնականների մեջ ՈՏ, ՈՐ մասնիկով՝ խափխփել—խափխփոտել, պաչպչել—պաչպչորել, ծակծրկել—ծակծկորել. ծակծկոտել. ծամծմել—ծամծմոտել, ծամծմորել։ ԱՏԱԿ, ՏԿ մասնիկներով՝ փայլել—փայլատակել, փայլկտալ. կարմրել—կարմրատակել, կարմրտկել. գլորել—գլորտկել. ավրել—ավրշտկել և այլն։

Բազմապատկական ուժեղ վերջացած բայերը՝ մորթուտել, կծոտել և այլն չպիտի շփոթել ուժ մասնիկն ունեցող ածականներից կազմված բայերի հետ, ինչպես են՝ ժանգոտ—ժանգոտել, մրոտ—մրոտել, ալրոտ—ալրոտել և այլն։

2. Պատճառական բայերը *կազմվում են 3ն մասնիկով. ել, ենալ կազմության բայերը դառնում են եցնել, իսկ ալ, անալ, կազմության բայերը՝ ացնել, և նել, չել կազմության բայերը՝ ցնել, ինչպես՝ նստել—նստեցնել, մոտենալ—մոտեցնել, խաղալ—խաղացնել, զարմանալ—զարմացնել, թռչել—թռցնել, հասնել—հասցնել։ կենալ—կեցնել, բայց՝ վեր կենալ—վեր կացնել. դառնալ—դարձնել (փոխանակ՝ դարձցնել), անցնել—անցընել (փոխ. անցցնել)։*

Գրաբարից փոխառություն են՝ մատուցանել, ուսուցանել, հարուցանել, զեկուցանել, սնուցանել, կառուցանել, հատուցանել—որոնց փոխանակ գործ են ածում արդեն մատուցել, սնուցել, կառուցել, զեկուցել, հարուցել։

3. Կրավորական բայերը *կազմվում են «վ» (ու) մասնիկով. ել, նել կազմության բայերը դառնում են՝* վել, նվել. ալ, անալ, ացնել *կազմության բայերը դառնում են* ացվել, *իսկ* ենալ, եցնել *կազմության բայերը դառնում են* եցվել, *և* ցնել *կազմության բայերը՝* ցվել. *ինչպես՝ գրել—գրվել. տեսնել—տեսնվել. կարդալ—կարդացվել. գողանալ—գողացվել. ներկայացնել—ներկայացվել. մոտենալ, մոտեցնել—մոտեցվել. մտցնել—մտցվել։ Այսպես նաև՝ լցնել—լցվել, դարձնել—դարձվել, հարցնել—հարցվել։ Անկանոն ձևով կազմվում են դնել—դրվել, տալ—տրվել, տանել—տարվել, բանալ—բացվել, բառնալ—բարձվել, անել—արվել (անվել). գիտեմ, գիտենալ—գիտացվել, գիտցվել.—մատուց(ան)ել—մատուցվել, կառուց(ան)ել—կառուցվել և այլն։*

242. Ենթակայական դերբայը, *որ ցույց է տալիս գործողի անուն, կազմվում է բոլոր բայերի համար ՈՂ մասնիկով, որ դրվում է՝ 1) ել վերջացած անորոշ դերբայի այս «ել» վերջի տեղ, օրինակ՝ կտրել—կըտրող, տեսնել—տեսնող, թռչել—թռչող։*

2) Ալ, անալ, ենալ *վերջացած անորոշ դերբայների այս վերջերի տեղ բայաբնի «աց», «եց» ածանցների հետ, օրինակ՝ կարդալ—կարդացող, հեռանալ—հեռացող, մոտենալ—մոտեցող։ Կան նաև անցյալ կատարյալի բնից անկանոն կազմություններ, որոնք են՝ գալ—եկա—եկող. տալ—տվի—տվող. բանալ—բացի—բացող. լալ—լացի—լացող. կենալ—կացա (կեցա)—կացող (կեցող). բառնալ (բարձել)—բարձա—բարձող. դառնալ—դարձա—դարձող. լինել—եղա—եղող։ (Տե՛ս § 197)։*

248. Անկատար դերբայը *ցույց է տալիս մի կատարվող եղելություն, որ դեռ տևում է հարաձիգ. ունի երկու ձև ՈՒՄ և ԻՍ վերջավորություններով, որոնցից առաջինը դրվում է անորոշ դերբայի ալ, ել վերջերի տեղ, օրինակ՝ գնալ—գնում (եմ), գրել—գրում (եմ), իսկ երկրորդն ավելանում է անորոշ դերբայի վերջից, օրինակ՝ գնալիս, գրելիս։ Այս*

երկրորդ կազմությամբ անկատար դերբայն ունի մակբայական նշանակություն, «գնալիս» նշանակում է՝ գնալու ժամանակ։ (Տե՛ս § 257)։

244. Անցյալ դերբայը, *որ ցույց է տալիս կատարված, վերջացած եղելություն, ունի երկու տեսակ վերջավորություն, վաղակատար ել (հին՝ եալ) և հարակատար ԱԾ։ Երկու վերջավորություններն էլ դրվում են՝ 1) Պարզ ել վերջացած, ինչպես և բազմապատկական ու կրավորական բայերի անորոշ դերբայի «ել» վերջի տեղ, օրինակ՝ գրել—գրած, գրել. նըստոտել—նստոտած, նստոտել. գրվել—գրված, գրվել (ինչպես կարելի է տեսնել, անորոշ դերբայն և «ել» վերջավորությամբ անցյալ դերբայն այս տիպի բայերի համար ձևով նույնանում են). 2) Ալ, աճալ, ենալ վերջացած անորոշ դերբայների այս վերջերի տեղ դրվում են ած, ել բայաբնի ացս, եցս ածանցների հետ, օրինակ՝ գնալ—գնացած, գնացել. զարմանալ—զարմացած, զարմացել. մոտենալ—մոտեցած, մոտեցել. 3) Նել, չել վերջացած անորոշ դերբայների այս վերջերի տեղ դրվում են ած, ել, օրինակ՝ տեսնել—տեսած, տեսել. փախչել—փախած, փախել. 4) Ցնել վերջացած պատճառական բայերի անորոշ դերբայի այս վերջերի տեղ դրվում են ած, ել դրանց կատարյալի բնի ցը մասնիկի հետ, օրինակ՝ մոտեցնել—մոտեցրած, մոտեցրել։*

Կան նաև անկանոն կազմություններ, ինչպես՝ գալ—եկա—եկել, եկած. տալ—տվի—տվել, տված. կենալ—կացա—կացել, կացած. դառնալ—դարձա—դարձել, դարձած. դնել—դրի—դրել, դրած. անել—արի—արել, արած. լինել—եղա—եղել, եղած. տե՛ս § 263։

245. Ապառնի դերբայը, *որ ցույց է տալիս եղելության դեռ նոր կատարելի լինելը, կազմվում է ՈՒ, Ի, ԻՔ վերջավորություններով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վերջից, օրինակ՝ գրել—գրելու, գրելի, գրելիք։ Ի, ԻՔ ածանցներով կազմություններն առնվում են իբրև գոյական և ածական անուններ, ուստի դրված են վերևում անվանական ածանցումների մեջ (տե՛ս § 174. դ. ե. զ)։ Բայական ձևերի կազմության համար առնվում է միայն ՈՒ վերջացած ապառնի դերբայը, որին համապատասխան է գրաբարի ՈՑ վերջավորությամբ կազմությունը, օրինակ՝ գալու—գալոց, գրելու—գրելոց։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԱՁԵՎԵՐ
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա

ԲԱՌԵՐԻ ՁԵՎԵՐԸ

246. Թեքում:— *Ածանցման մեջ մտնում է նաև բառերի թեքումը, այսինքն՝ այնպիսի ձևերը, որոնք սովորական ածանցումից նրանով են տարբերվում, որ մի հաստատուն շարքով կազմվում են բոլոր գոյականներից ու բայերից և, ինչպես տեսանք, նոր բառեր չեն համարվում, այլ միևնույն բառի փոփոխությունները կամ բառափոխության ձևերը։ Այս պատճառով և թեքման ուսումը կոչվում է նաև ձևաբանություն։ (Տե՛ս § 3. Բառափոխության ձևական մասեր և բառաձևեր)։*

Բառափոխության ձևերով արտահայտվում են երկու տեսակ հարաբերություններ. 1) Ստորոգելիության հարաբերություն, որով մի առարկայի իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշ իբրև ստորոգյալ և կազմվում է խոսքը։ Այս հարաբերության ձևերն ունեն միայն բայերը (տե՛ս § 13. 3)։

2) Լրացական հարաբերություններ, որ գոյականներն ու գոյականաբար գործածված ածականներն ունին բայի նկատմամբ իբրև բայի լրացումներ և հենց իրենց լրացումների նկատմամբ իբրև լրացման լրացումներ (տե՛ս § 265)։

247. Բայերի դեմքերը:— *Բայական ձևերը մեծ մասամբ ծագել են անձնական դերանունների կցումով բայաբների հետ։ Դերանունները դրվել են բայաբների վերջից դեմքը, եզակի կամ հոգնակի, իրև ենթակա որոշելու համար։ Սկզբում, անպայման, դերանունները բայից անկախ են եղել. բայց լինելով բայից անբաժան և վերջահար (էնկլիտիկ), կցվել են նախորդ բայի վերջից և համաձուլվելով նրա հետ՝ ըզգացվել են ոչ թե իրբև անկախ բառեր, այլ իրև վերջավորություն։ Ժա-*

մանակի ընթացքում, սակայն, բայերի վերջերն այնպիսի փոփոխության են ենթարկվել, որ բայարների ու դերանունների բաղադրությունը կա՛մ ոչնչացել է, կա՛մ այլևս զգալի չէ լեզվի մեջ, և միայն համեմատական լեզվաբանության միջոցով հնարավոր է որոշել դերանունների կցումը բայարների հետ։

Այսպես ծագել են, անշուշտ, նաև հայերենի բայարների վրա ավելացած վերջածանցները, ինչպես գրաբարում՝ գնա-մ, գնա-ս, գնա-յ, գնա-մք, գնա-ցք, գնա-ն։ Բայց պիտի նկատի ունենալ, որ հայերենի խոնարհման տարրերը, ըստ Մեյեի, «մեծ մասամբ դեռևս կամ չեն բացատրված կամ բավարար չափով չեն բացատրված»։ Մեր լեզվի հնադույն շրջանում անգամ զգալի չի եղել դերանունների կցումը բայարների հետ, մանավանդ որ հայերենի մեջ ևս, ինչպես ուրիշների, բայերի վերջի մասերը փոփոխության ենթարկվելով՝ երբեմն նույնիսկ դուրս են ընկել։ Բայց չնայելով դրան, ինչպես հին հնդեվրոպական լեզուները, հայ լեզուն ևս, թե՛ հին և թե՛ նոր, «պահել է ճշտությամբ հնդեվրոպական վիճակը», այսինքն վերջածանց դարձած դերանունների գլխավոր պաշտոնը, որ եղել է արտահայտել բայերի դեմքերն իրև ենթակա։ Հայերենում բայերի երեք դեմքերը և նրանց թիվը, եզակի և հոգնակի, միշտ որոշ են. գի առանձին բառաձև կա երեք դեմքերից յուրաքանչյուրի համար թե՛ եզակի և թե՛ հոգնակի. բառաձևը միայն բավական է դեմքն ու դեմքի թիվը որոշելու համար։ Մեր նոր գրական լեզվի խոնարհման ամբողջ շարքի մեջ միայն սոսկ «ալ» կաղմությունն ունեցող բայերի համար կա մի ձև՝ **մնա**, որ թե՛ հրամայական եզ. 2-րդ դեմք է (մնա՛ դու) և թե՛ ըղձական եզակի 3-րդ դեմք (նա մնա, թող նա մնա)։ Այդ նրանից է առաջացել, որ լեզվի զարգացման ընթացքում ըղձական եզ. 3-րդ դեմքի «յ» վերջավորությունը (մնա-յ), որ կա հին լեզվի մեջ, դուրս է ընկել, և այլևս չարտասանվելու պատճառով՝ գրությունից էլ դուրս ենք ձգում։ Այս ձևերի նույնացումը, սակայն, չի խանգարում դեմքերը որոշելուն։ որովհետև մեկը հրամայական լինելով՝ միշտ շեշտ է կրում (մնա՛) և դրանով տարբերվում է 3-րդ դեմքից. իսկ վերջինս էլ կամ սովորաբար հետն ունենում է թող բառը (**թող** մնա), կամ խոսքի մեջ այնպիսի կապակցությամբ է կիրառվում (եթե մնա, որ մնա, ով որ մնա և այլն), որ միշտ զգացվում է իրրև 3-րդ դեմք։

Այսպես չէ, սակայն, այժմ ուրիշ հնդեվրոպական լեզուների մեծ մասի մեջ. այնտեղ վերջածանցները հաճախ այլևս բավական չեն դեմքերը ցույց տալու համար. ուստի բայերի հետ դրվում է ընդհանրապես մի դերանուն իբրև ենթակա, որով որոշվում է բայի դեմքը։ Այսպես է, օրինակ, ֆրանսերենում և գերմաներում, որոնց մեջ սկզբնապես տարբեր ձևերը հնչափոխության պատճառով ամենի հաճախ նույն ձևին են հանգել, և եթե դեռ տարբեր ձևով են գրում, բայց նույն հնչյունով են արտասանում, ուստի և դերանուն ենթականերն անհրաժեշտ են դեմքերը որոշելու համար։ Հայերենում էլ, հարկավ, բայից առաջ կամ հետո

դնում ենք հաճախ դեմքի համապատասխան մի անձնական դերանուն, բայց այդ լինում է ոչ թե բայի դեմքը որոշելու համար, այլ սովորաբար իբրև ավելադրություն, կամ երբ դեմքը զորեղ շեշտվում է, ինչպես՝ Ե՛ս եմ գնում։ Միշտ պետք է նկատի ունենալ, որ մեր լեզվի մեջ դերանվան իբրև ենթակա կիրառություններն առանց որևէ դիտավորության՝ ընդհանրապես ավելորդ ծանրաբեռնություն է, որ առաջ է գալիս շատ անգամ օտար լեզուների ազդեցությունից։

248. Բայերի ժամանակները:— *Բայական վերջածանցներով որոշվում են ոչ միայն բայերի դեմքերն ու նրանց թիվը, այլև ժամանակները ու եղանակները։ Բայի ժամանակ ասելով հասկանում ենք, թե երբ է տեղի ունենում եղելությունը, խոսելու վայրկյանին (ներկա ժամանակ), խոսելու վայրկյանից առաջ ընկնող ժամանակամիջոցում (անցյալ), թե խոսելու վայրկյանից հետո ընկնող ժամանակամիջոցում (ապառնի)։ Օրինակ՝* **գիտեմ, գիտես, գիտե, գիտենք, գիտեք, գիտեն** *բառաձևերով որոշ իմանում ենք ոչ միայն դեմքերը, եզակի ու հոգնակի, իբրև՝ ես գիտեմ, դու գիտես, նա գիտե և այլն, այլև այն, որ խոսողը իր կամ 2-րդ դեմքի, կամ 3-րդ դեմքի գիտնալը դնում է իր խոսելու վայրկյանին, խոսողի ներկայում։ Այսպես էլ* **գիտեի, գիտեիր, գիտեր, գիտեինք, գիտեիք, գիտեին** *ձևերով մեզ համար որոշ են ոչ միայն դեմքերը, եզակի և հոգնակի, այլև այն, որ գիտնալու եղելությունը խոսողը դնում է իր խոսելու վայրկյանից առաջ, անցյալում։*

249. Բայի կերպերը:— *Բայերի ցույց տված ամեն եղելություն կարող է երեք ժամանակի նկատմամբ էլ, այսինքն թե՛ խոսողի ներկայի և թե՛ մի անցյալ կամ մի ապառնի ժամանակակետի նկատմամբ, լինել չորս կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ։*

1) **Կատարվող կերպը** *ցույց է տալիս մի շարունակվող, այսինքն ըսկըսված և դեռ չվերջացած գործողություն. օրինակ՝* **Նա հիմա, այս րոպեիս որ խոսում եմ, դեռ գնում է** *(ներկա).* **Նա երեկ, ժամի հինգին, դեռ գնում էր** *(անցյալ).* **Նա վաղը, ժամի հինգին, դեռ գնալիս կլինի** *(ապառնի)։*

2) **Կատարված կերպը** *ցույց է տալիս մի անցած, արդեն կատարված, վերջացած գործողություն. օրինակ՝* **Նա հիմա, այս րոպեիս որ խոսում եմ, արդեն գնացել է. Նա երեկ, ժամի 5-ին, արդեն գնացել էր. Նա վաղը, ժամի 5-ին, արդեն գնացած կլինի:**

3) **Կատարելի կերպը** *ցույց է տալիս մի դեռ նոր կատարելի, ապագա գործողություն. օրինակ՝* **Նա՝ հիմա, այս րոպեիս որ խոսում եմ, գրնալու է. Նա երեկ, ժամի 5-ին, դեռ նոր գնալու էր. Նա վաղը, ժամի 5-ին, դեռ նոր գնալու կլինի:**

4) **Պարզ կերպը** *ցույց է տալիս մի որոշ ժամանակակետում ընկնող սոսկ գործողություն առանց ուշադրություն դարձնելու նախորդ երեք կերպերին— գործողության տևական, վերջացած կամ կատարելի լինելուն, ինչպես՝* **գնամ, տեսնեմ. գնացի, տեսա. կգնամ, կտեսնեմ։**

Բայի կերպերը բոլոր լեզուների մեջ միակերպ հատուկ բառաձևերով չեն արտահայտվում, այլ տարբեր միջոցներով, կամ թե կերպերից մեկը կամ մյուսը մի լեզվի մեջ արտահայտվում է նույն բառաձևերով կամ վերջածանցներով, ինչ որ բայերի ժամանակներն ու եղանակները, —ինչպես հայերենում սլարզ կերպը,—իսկ մի ուրիշ լեզվի մեջ առանձին միջոցներով կամ առանձին բառակազմության ձևերով։ Մեր կատարվող, կատարելի և կատարված կերպերն արտահայտվում են բայերի բաղադրյալ ժամանակներով, որոնք կազմվում են դերբայներով և «եմ» ու «լինիմ» բայերով (§ 264)։

250. Բայի եղանակները։— *Միևնույն վերջածանցները, որոնցով որոշվում են բայի դեմքն ու ժամանակը, ծառայում են սովորաբար նաև բայի եղանակները որոշելու, այսինքն՝ ցույց տալու խոսողի վերաբերմունքը, հոգեկան տրամադրությունը խոսքի բովանդակության նկատմամբ։ Արդ, 1) խոսողը կարող է մի եղելություն հայտնել իբրև հաստատ, ստույգ, իրական եղելություն, որ իրապես գոյություն ունի (կամ ունեցել է), ինչպես՝ Նա այժմ հասել է տուն և այժմ տանն է։ Դա իրականության եղանակն է կամ սահմանական եղանակը։ 2) Նույնը կարելի է հայտնել և ենթադրաբար, ինչպես, Նա այժմ հասած կլինի տուն և տանը կլինի. այստեղ ոչ թե եղելության իրականությունն է հայտնվում, այլ կարելիությունը, հնարավորությունը. եղելությունը լոկ մտածված, ենթադրված է, հնարավոր է համարված, այսինքն՝ այնպիսի, որ կարող է լինել, կարելի է որ լինի։ Դա կարելիության կամ ենթադրական եղանակն է։ 3) Նույնը կարելի է հայտնել և անհրաժեշտաբար, ինչպես՝ Նա այժմ հասած պիտի լինի տուն և տանը պիտի լինի. այստեղ եղելությունը մտածում ենք ոչ թե իբրև լոկ հնարավոր, այլ իբրև անհրաժեշտություն. եղելությունն անհնար ենք համարում այլ կերպ ըմբռնել, բան ինչպես որ ըմբռնում ենք մեր մտածողության հիմամբ, իբրև անհրաժեշտ հարկ ու պետք, պարտք, ստիպմունք բարոյական պարտքից, բնությունից, դրությունից և այլն, կամ թե իբրև մի տրամաբանական անհրաժեշտություն, որ հիմնված է մեր խելքի, դատողության վրա։ Դա անհրաժեշտության կամ հարկադրական եղանակն է։*

Այս երեք եղանակներով կազմում ենք **դատողության խոսքեր**, *որոնցով արտահայտվում է մեր դատողությունն իբրև իրական, հնարավոր կամ անհրաժեշտ։ Բայց խոսքը կարելի է արտահայտել նաև իբրև կամք ու հրաման կամ արգելք, որով հրամայում կամ արգելում ենք մեկին մի բան անել, ինչպես՝* **Հեռացի՛ր** *այստեղից։ Դա* **հրամայական** *եղանակն է. իսկ՝* **Մի՛ հեռանար** *այստեղից—դա* **արգելական** *է, այսինքն՝ հրամանը տրվում է արգելելով մի բան անել։ Եվ վերջապես խոսքը կարելի է արտահայտել նաև իբրև ցանկություն, հորդոր կամ դրդում, մաղթանք ու խնդիր, տենչանք, իղձ մի բան անելու. ինչպես՝* **Գնա՛մ, տեսնեմ նրան. Գիրքդ տա՛ս ինձ. Մի գնա՛ս, ասես նրան, որ գա ինձ մոտ։** *Սա էլ* **ղոձական եղանակն է։**

Բոլոր լեզուների մեջ ևս խոսքի այս եղանակները, հարկավ, գոյություն ունեն, որովհետև հիմնված են տրամաբանական անհրաժեշտության վրա. բայց դրանց արտահայտության ձևերը լեզուների մեջ միակերպ չեն։ Կան եղանակներ, որոնց արտահայտության համար այս կամ այն լեզվի մեջ հատուկ բառաձևեր չկան, կամ, ընդհակառակն, նույնիսկ միևնույն լեզվի մեջ ևս միևնույն եղանակը կարող է մի քանի բառաձևերով կամ տարբեր միջոցներով արտահայտվել, և վերջապես միևնույն բառաձևը կարող է տարբեր նշանակություններ ու կիրառություններ ունենալ։ Ով այս զարմանալի չէ. որովհետև տրամաբանական և քերականական կատեգորիաները ոչ-միշտ իրար հավասար են, քանի որ քերականական կատեգորիաները լեզվի պատմական կյանքի փոփոխության արդյունքն են։

Խոսքը, ինչպես շատ լեզուների մեջ, նույնպես և հայերենում, կարծրացած կամ հարկադրական բնավորություն է ստանում, երբ բայի սահմանական կամ ըղձական եղանակի վրա ավելանում է ձևական նշանակություն ունեցող մի բառ կամ մասնիկ (§ 62. բ), որ ցույց է տալիս հնարավորություն կամ անհրաժեշտություն, կամ թե անորոշ դերբայը դրվում է իբրև լրացում այնպիսի բայերի, որոնք նշանակում են՝ կարողանալու, կարելի, հնարավոր կամ անհրաժեշտ հարկավոր լինելու, անհրաժեշտորեն ստիպված լինելու գաղափար։ Դրանք եղանակական կամ **եղանակիչ բառեր, մասնիկներ կամ բայեր են**։

Գրաբարի սովորական եղանակիչ բայերն են կարելիական նշանակությամբ՝ կարեմ, մարթեմ, մարթի, մարթ է. աշխարհաբար՝ կարող եմ, **կարելի է, գուցե, թերևս և նման բառեր.** իսկ հարկադրական նշանակությամբ գրաբարում՝ պարտիմ, պարտ է, ճարկ է, պիտի. աշխարհաբար՝ **պարտավոր եմ, բարբառների մեջ՝ պետք եմ, պիտիմ:** Այս բայերի սահմանական եղանակի հետ անորոշ դերբայը ստանում է ենթադրական կամ հարկադրական եղանակի նշանակություն։ Երբ ասում ենք՝ «նա կարող է գալ», հաստատվում է նրա կարողանալու իրականությունը. բայց «կարող է» բայն իբրև լրացում ունի «գալ». ուստի և այդ խոսքով հաստատվում է նրա գալ կարողանալը. և որովհետև «կարող եմ» բայը ինքը կարելիություն է ցույց տալիս, ուստի և միանգամայն նրա գալը հաստատվում է իբրև կարելի, հնարավոր։ Տրամաբանորեն, ուրեմն, այսպիսի խոսքերը՝ կարող եմ գալ, կարող ես գալ, կարող է գալ և այլն կարելիական-ենթադրական խոսքեր են, իսկ քերականորեն դրանք սահմանական խոսքեր են։

Նույնպես տրամաբանորեն հարկադրական խոսք է՝ «Նա պարտավոր է գալ» (գրաբար՝ «նա պարտի գալ»), բայց քերականական ձևով այդ սահմանական է. պարտավոր լինելը նրա համար ճիշտ նույնպես իբրև իրական եղած է ասվում, ինչպես «նա գնում է» խոսքի մեջ գնալը: Ճիշտ է, հարկավ, որ երբ մեկը պարտավոր է գալ, գալն է անհրաժեշտորեն վերագրվում նրան. բայց դա քերականական ձևով չի արտահայտվում, այլ մի հետևություն է միայն։ Նա պարտավոր է գալ և նա կարող է գալ

խոսքերը նշանակությամբ իրարուց խոշոր տարբերություն ունին, ոչ առաջանում է «պարտավոր լինել» և «կարող լինել» բայերի իմաստից. բայց քերականորեն այդ երկու խոսքերը միևնույն կազմությունն ունին, սահմանական են, և ոչ մի քերականական զանազանություն կարելի չէ դնել դրանց մեջ այն պատճառով, որ բայերը՝ «պարտավոր է» և «կարող է» տարբեր են։ Նույն կերպ նաև մեր բարբառների մեջ սահմանական եղանակով հարկադրական եղանակի նշանակություն է արտահայտվում, երբ ասում են՝ ես պետք եմ գնալ, դու պետք ես գնալ, նա պետք է գնալ... կամ՝ ես պիտիմ գնալ, դու պիտիս գնալ, նա պիտի գնալ, մենք պիտինք գնալ... կամ «պիտեմ» բայի փոփոխությամբ՝ ես՝ տեմ (=պտեմ), գնալ։ դու տես գնալ, նա տի գնալ, մենք տենք գնալ, դուք տեք գնալ, նրանք տեն գնալ. կամ ետադաս՝ Ես գնալ տեմ, դու գնալ տես, նա գնալ տի և այլն։ Այս բոլոր դեպքերում բայը սահմանական եղանակով է, թեպետ և ամբողջ խոսքերն իմաստով հարկադրական են։

Հաճախ բայի եղանակավորությունը կարելի է արտահայտել նրա վրա որևէ եղանակական բառ դնելով, օրինակ՝ «Նա գալիս է», իրական խոսք է, «Նա գուցե գալիս է», «Նա թերևս գալիս է», «Նա, կարելի է, գալիս է», այս խոսքերն ըստ նշանակության կարելիությամբ ասված խոսքեր են, թեպետ և ըստ եղանակի՝ «գալիս է» ձևը սահմանական է։ Նույնպես գնա՛մ, տեսնե՛մ բայերի ձևը ըղձական է, և խոսքը ցանկության խոսք է. իսկ գուցե գնամ, տեսնեմ խոսքերի մեջ բայերի ձևը դարձյալ ըղձական է, բայց խոսքը նշանակությամբ արդեն դառնում է կարելիական, ենթադրական։

Մեր լեզվի մեջ ունինք ենթադրական և հարկադրական եղանակների համար հատուկ մասնիկ և բառ ևս՝ «Կը» և «Պիտի» (պիտ), որոնք դրվելով ըղձական եղանակի վրա՝ նրա ցանկության նշանակությունը շուռ են տալիս, առաջինը՝ կարելիության կամ ենթադրականի, երկրորդը՝ հարկադրականի, բայց բայը ձևով մնում է ըղձական. կգնամ, կգնաս. կգնա, կգնանք, կգնաք, կգնան. պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնա, պիտի գնանք, պիտի գնաք, պիտի գնան (§§ 260, 261)։

Այժմ տեսնենք, թե ինչպիսի պատմական զարգացումով են առաջ եկել աշխարհաբարի եղանակները։ Նախ հետևյալը։

251. Ըղձական եղանակը։— *Բայի եղանակները հին հնդեվրոպական լեզուների մեջ, ինչպես և հնդեվրոպական նախալեզվի մեջ, եղել են չորս՝ սահմանական, հրամայական, ստորադասական (կոնյուկտիվ) և ըղձական։*

Ըղձականը *ցույց է տվել* ցանկություն ու կարելիություն և *եղել է. 1)* Ցանկության ըղձական, *որ սովորաբար ներկայի կամ ապագայի համար է գործածվում, ինչպես նաև հայերենում, օրինակ՝* գնամ, տեսնե՛մ *նրան։ Հետը հաճախ դրվում է մի ցանկություն ցույց տվող բառ, ինչպես և հայերենում՝* երանի, գեթ. *գրաբարում՝* իցի, օշ թէ։ *2-րդ և 3-րդ դեմքերով արտահայտվում է նաև խնդիր, ինչպես և հայերենում, օրինակ՝ գիրքդ տա՛ս ինձ։ 2)* Կարելիական ըղձական *(պոտենցիալ օպտա-*

ությով), որ բնականաբար հաճախ ապագային է վերաբերում, ցույց է տալիս, թե կարելի է, հնարավոր է, կարող է մի բան լինել, կամ եղած լինել։ Հայերենում արտահայտվում է ըղձականի վրա «ԿՀ» մասնիկը դրվելով, ինչպես և հունարենում ըղձականի վրա an, նաև ke, ken, ka *մասնիկներով, օրինակ հայերենում՝ Եթե աջողություն լինի, կգնամ, կը-տեսնեմ նրան։ 3)* Պատվիրական ըղձական *(պրեսկրիպտիվ օպտատիվ), որ գործածվում է միայն 2-րդ և 3-րդ դեմքերի համար և ցույց է տալիս պատվեր. կարող է թե՛ ցանկության և թե՛ կարելիության ըղձականի փոխված տեսակը լինիլ։ Ուստի և հայերենում այս նշանակությամբ գործածվում է ըղձականը թե՛ «ԿՀ» մասնիկով և թե՛ առանց դրան, օրինակ՝* կգնա՛ս, կտեսնե՛ս *նրան։* Գնա՛ս, տեսնե՛ս *նրան, ևա՛։ Արդյո՞ք չթափես։*

Ստորադասականը *ցույց է տվել՝ կամենալ ու նախատեսում և եղել է. 1)* Կամական *(վոլիտիվ), երբ արտահայտել է խոսողի կամքը. կամեցողը խոսողն է, իսկ երկրորդական խոսքերի մեջ մասամբ խոսողն է, մասամբ երկրորդական խոսքի դեմքը, որ տարբեր է խոսողից։ Հայերենում արտահայտվում է դարձյալ ըղձականով, ինչպես՝* գնա՛ճ, ասե՛ճ. *Ասա՛, որ իմանանք։ 2-րդ և 3-րդ դեմքերը գործածվում են՝ դրդում, հորդոր ու պատվեր ցույց տալու համար. հայերենում ըղձական «ԿՀ» մասնիկով կամ առանց դրան, օրինակ՝ Թե որ այդպիսի բան պատահի, չվախենա՛ս,* կերթաս. *այնտեղ մի աղբյուր կա, էտ աղբյուրի վրա* կնստե՛ս, կսպասե՛ս... *2)* Խորհրդակցական *(դելիբերատիվ), որով հարցվում է ուրիշի կամքը այն մասին, ինչ որ պետք է լինի. հայերենում դարձյալ ըղձական, օրինակ՝ Խոսե՞նք, թե՞ լռենք։ 3)* Նախատեսական *(պրոսպեկտիվ) ասլառնի, որ դժվար է որոշ կերպով ջոկել ստորադասականի մյուս երկու կիրառություններից. որովհետև հաճախ դժվար է իմանալ, թե արդյոք ստորադասականը միայն ժամանակով է հասկացվում, թե՞ իր հետ ունի նաև որևէ կամական տարր։ Այս նշանակությամբ հայերենում գործածվում է ըղձական «ԿՀ» մասնիկով, ինչպես՝ Դուք ինձ հաճելի եք եղել և կլինիք։ Ո՞վ կտա ինձ այդ։ Օր կգա, երբ այդ* կկատարվի։ *Երկրորդական խոսքի մեջ նաև ըղձական առանց «կը»-ի, երբ կա ցանկության տարր, օրինակ՝ Ոչ ոք չկա, որ այդ քեզ* բերի *(խոսողը ցանկանում է, որ բերեն)։*

Ինչպես կարելի է տեսնել վերևում դրվածից, հին հնդեվրոպական լեզուների ըղձականի և ստորադասականի կիրառության ոլորտները շոշափում են իրար։ Այս շոշափումը, ինչպես գրում է Բրուգմանը, բնականաբար այն հետևանքը պիտի ունենար, որ լեզուների զարգացման ընթացքում ըղձական և ստորադասական եղանակները պետք է խառնվեին իրար, ինչպես որ իրոք եղել է մի քանի հնդեվրոպական լեզուների մեջ, որոնց թվում և հայերենում։ Մեր արևելյան գրական լեզվի մեջ, ինչպես վերևի օրինակներից կարելի է տեսնել, հին լեզուների երկու եղանակի՝ ըղձականի ու ստորադասականի դիմաց կա միայն մեկ եղանակ ըղձական 1) ցանկության ըղձականն և կամական ու խորհրդակցական ստորադասականը, ինչպես և նախատեսական ապառնի ստորա-

դասականը, երբ սրա մեջ կա կամական տարր, հայերենում արտահայտվում են ըղձականով առանց «կը» մասնիկի, քանի որ այդ բոլորի մեջ կա կամք ու ցանկություն. 2) Կարելիական ըղձականը և ստորադասական նախատեսական ապառնին (երբ վերջինիս մեջ չկա ցանկության տարր) արտահայտելու համար հայերենում գործածվում է ըղձականը «կը» մասնիկով. 3) Պատվիրական ըղձականը, 2-րդ և 3-րդ դեմքերը, ինչպես և կամական ստորադասականի 2-րդ և 3-րդ դեմքերը, երբ պատվեր, հորդոր, դրդում են ցույց տալիս մի բան անելու, հայերենում արտահայտվում են ըղձականով թե՛ առանց «կը» մասնիկի և թե՛ «կը» մասնիկով, նայելով թե արդյոք խոսքն իր մեջ ունի՞ ցանկության տարր, թե լոկ կարելիություն, հնարավորություն է ցույց տալիս։

Ինչպե՞ս է առաջացել հայերենի ըղձական եղանակի այս դրությունը։

252. Ըղձական եղանակի ծագումը։— Աշխարհաբարի խոնարհման ձևերը՝ 1) մասամբ նոր կազմության են, 2) մասամբ ծագում են գրաբարի ձևերից կա՛մ լոկ հնչափոխությամբ, կա՛մ հնչափոխության հետ նաև եղանակի շրջումով։ Այս երկրորդ տեսակի ծագումով առաջ է եկել մեր նոր չեզվի ըղձական եղանակը։

Գրաբարում բայի եղանակները երեք են՝ սահմանական, հրամայական (բացասական՝ արգելական) և ստորադասական. եղել է երկու բուն՝ անկատարի կամ ներկայի բուն և կատարյալի բուն, որոնց վրա ավելանում են վերջավորությունները և կազմում բայական ձևերը։

Անկատարի բուն	Կատարյալի բուն

I ՍԱՀՄԱՆԱԿԱՆ

1. Ներկա

գնամ	գրեմ
գնաս	գրես
գնայ	գրէ = գրել
գնամք	գրեմք
գնայք	գրէք = գրելք
գնան	գրեն

2. Անցյալ

գնայի	գրեի	գնացի	գրեցի
գնայիր	գրեիր	գնացեր	գրեցեր
գնայր	գրէր = գրեյր	գնաց	գրեաց
գնայաք	գրեաք	գնացաք	գրեցաք
գնայիք	գրեիք	գնացէք, գնացիք	գրեցէք, գրեցիք
գնային	գրեին	գնացին	գրեցին

II ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

գնայեմ	գրիցեմ	գնացից	գրեցից
գնայես	գրիցես	գնասցես	գրեսցես
գնայէ	գրիցէ	գնասցէ	գրեսցէ
գնայեմք	գրիցեմք	գնասցուք	գրեսցուք
գնայէք	գրիցէք	գնասջիք	գրեսջիք
գնայեն	գրիցեն	գնասցեն	գրեսցեն

III ԱՐԳԵԼԱԿԱՆ

մի՛ գնար	մի՛ գրեր
մի՛ գնայք	մի՛ գրէք

III ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

գնա՛	գրեա՛
գնացէ՛ք	գրեցէ՛ք

Գրաբարի երկու ստորադասականներն էլ, որոնք աշխարհաբարում դուրս են ընկել, հակադրվում են սահմանականին. մինչ վերջինս ցույց է տալիս իրական եղելություն, ստորադասականները ցույց են տալիս եղելության լոկ հնարավորություն կամ ցանկություն: Սկզբնապես, սակայն, դրանք անպայման տարբեր նշանակություն են ունեցել և տարբերությունը եղել է ըստ կերպի, այն է՝ անկատարի բնի ստորադասականը (գնայցեմ, գրիցեմ) ցույց է տվել կատարվող, տևական գործողություն, ինչպես որ են նույն բնից կազմված սահմանական ներկան և անկատար անցյալը (գնամ—գնում եմ, գնայի—գնում էի). իսկ կատարյալի բնից կազմված ստորադասականը (գնացից, գրեցից) եղել է պարզ կերպի, ինչպես որ է նույն բնից կազմված կատարյալ անցյալը (գնացի): Բայց 5-րդ դարում արդեն երկու ստորադասականներն իրար հետ շփոթված են ներկայանում և հաճախ անխտիր միևնույն նշանակությամբ գործ ածվում:

Սակայն և այնպես երևում է, որ հին լեզվի մեջ ձգտում կա երկու ստորադասականները մի նոր տարբերակման ենթարկելու, այն է՝ անկատար ստորադասականը գործածվում է լոկ հնարավորություն ցույց տալու համար, իսկ կատարյալ ստորադասականը՝ կամք, ցանկություն, դիտավորություն մի բան անելու. օրինակ՝ աշխարհաբարի «գնամ, տեսնեմ», «գնանք, տեսնենք» ըղձականները գրաբարում միայն կատարյալ ստորադասականով են ասվում՝ «գնացից, տեսից», «գնասցուք, տեսցուք»: Այսպիսի մի տարբերություն երևում է նաև «մի» և «ոչ» բացասականների գործածության համար. մի՛ ասվում է միշտ արգելական նշանակությամբ, ուրեմն կամք ու ցանկություն արտահայտելու համար, օրինակ՝ «մի՛ զրկեսցուք», «մի՛ զարհուրիցիք», «մի՛ ճաշակեսցեն». մինչդեռ «ոչ» բառով լոկ իրողություն է բացասվում, օրինակ՝ «ոչ տեսցես», «ոչ գնացից»: Աշխարհաբարում երկու դեպքում էլ դրվում է «չր». միայն գրաբարի «մի» բառի համապատասխան կիրառությունների մեջ բայը դրվում է ըղձական՝ չզրկե՛նք, չզարհուրե՛ք, չճաշակե՛ն, չգնա՛ն,

չգնա՛նք, գնա՞նք թէ՞ չգնանք (գնասցո՞ւք, եթէ մի՛ գնասցուք), իսկ «ոչ» բառի համապատասխան դէպքերում գործ է ածվում սովորաբար ենթադրական եղանակը՝ չես տեսնիլ, չեմ գնալ։

Մյուս կողմից տեսնում ենք նաև այն, որ հնագույն գրաբարում արդեն Սահմանականի ներկա և անկատար անցյալ ժամանակները գործածվում են նաև ստորադասականների փոխանակ։ Կիրառության այս փոփոխությունը սկսվում է **Սահմ. անկատար անցյալի գործածությունից իբրև ըղձական**: *Հնդեվրոպական լեզուներն իրենց զարգացման հետագա շրջաններում զանազան ճանապարհներով ձգտում են անցյալ ըղձականի համար ունենալու առանձին արտահայտություն, որի մեջ անցյալ ժամանակը ոչ-երկդիմի կերպով արտահայտված լինի։ Այսպես օրինակ՝ հունարենում Սահմ. անցյալն անցել է ըղձականի տեղ ցանկություն ցույց տվող* eith *(էյթ) մասնիկով, իսկ կարելիական (հնարավորության). ինչպես և անիրական նշանակությամբ* an *(ան) մասնիկով (Բրուգման, եր. 586)։ Այս միևնույն կիրառությունն իբրև ըղձական ունի նաև գրաբարի Սահմ. անկատար անցյալը ցանկություն ցույց տվող մի բառով. իսկ կարելիական և անիրական նշանակությամբ աշխարհաբարում ԿՀ (կու) մասնիկով. օրինակ՝ Երանի թէ փ դժոխս սլահէիր զիս (Յոբ. ժդ. 15)։ Երանի թէ թագաւորէիք (Ա. Կոր. Դ. 8). Օշ թէ անսայիր փոքր մի։ Այսպես և «թող» բառով՝ Թող ինքն երթայր և առնոյր զթագաւորութիւնն (Ծղնիկ)։ Ապա, ինչպես ուրիշ լեզուների մեջ, հայերենում ևս Սահմ. անկ. անցյալը գործածվում է կարելիական, ինչպես և անիրական նշանակությամբ, այլև պայմանական խոսքերի մեջ, օրինակ՝ եթէ էր հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղէի.—Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր (Ղուկ. է. 39)։ եթէ հաւատայիք դուք Մովսէսի, հաւատայիք արդեաւք և ինձ։ եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ փոխէր զկերպարանս յինչ և կամէր (Ծղնիկ)։ Բայց թէ գիտէի թէ յայսմ հետէ կայցէ յուխտի իմում, արձակէի (Փ. Բիւզ). աշխարհաբարում՝... կհավատայիք... կփոխեր... կարձակեի։*

Սահմ. անկ. անցյալի այս կիրառությունն իբրև ցանկության և կարելիական ըղձական՝ բնականաբար անցնում է նաև համապատասխան կազմության Սահմ. ներկային՝ «Երանի թէ թագաւորէիք» խոսքի անալոգիայով ասվում է նաև՝ «Երանի թէ թագաւորէք»։ Այս փոփոխությունն ևս գտնում ենք մեր լեզվի հնագույն շրջանում, երբեմն նաև «թող» բառով, օրինակ՝ Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ (Աւետ.). Թող անհիծէ (Թագ. ԺԶ . 10). Թող գրեմ և ցուցանեմ (Ծղիշէ). Թէ զգայ՝ մեծ պատերազմ առնէ (Փ. Բիւզ). եթէ ուտես ի պտղոյն՝ մեռանիս (Ծղնիկ)։ Այսպես նաև նման կազմությամբ ժամանակական և ընդհանրացական խոսքերի մեջ. Գիտասջիր, զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ... (Փ. Բիւզ.)։ Ջորոց ոգիսն գտանէ... նորոգէ (Ագաթ.)։ —Այսպես նաև երկրորդական խոսքերի, ինչպես և գլխավոր անկախ խոսքերի մեջ. օրինակ՝ Ընդէ՞ր ոչ դիտաց թէ ծակէ զորովայնն և ելանէ

(Եղնիկ). Այլ ես գիտեմ, զի նոյն աւետարան ածէ զԱրշակ (Փ. Բիւզ). Ապա գիտասցես դու, թէ կա՞յ յուխտի քում և պահէ զդաշինս քո (Փ. Բիւզ). Զայս արարէք և ապրիք. Զի եթէ վաղ, եթէ անագան՝ սակայն քակտի հնացեալ մարմինն (Ագաթ.). Պինդ կաց և այժմ տեսանես զքրիստոս (Ագաթ.). Բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր (Փ. Բիւզ.)։ Վասնզի այր քաջ էր՝ առնեզք իշանեն և յարուցանեն զդա (Փ. Բիւզ.)։ Այսպես և ապառնի նշանակութեամբ՝ Թշնամիք այսու գամագիւտ լինին. Զքո բանս աւագանին հաստատեն. Զայս տեղիս ի բաց քակեմք (Փ. Բիւզ.). Ոչ տամ քեզ զայդ պարգև (Ագաթ.). Յաճախեմ քեզ նեղութիւնս (Ագաթ.)։

Սահմանականի այս նոր կիրառութիւնն իբրև ստորադասական, անշուշտ, մի անգամից չի առաջ գալիս. ուստի շատ անգամ այս երկու եղանակը դեռ խառն փոխեփոխ գործ են ածվում, ինչպես՝ Թէ ոչ Իոանեսցի... ոչ ըմրոնէ (Ագ.)։ Եթէ ապրեսցի անօրէնն,... տամ ըմպել նմա (Եղիշէ). Յորժամ ճատուսցէ... բերէ (Ագ.). Յորժամ ասցէ Արշակ կին,... աճարգի դուստր նորա (Փ. Բիւզ.). Ոչ ոք լիցի մեր հովիւ... և ոչ ոք նստի յայնմ աթոռ (Փ. Բիւզ.)։

Սահմանական ներկայի և անկատար անցյալի այս նոր նշանակութեամբ գործածութիւնը իբրև ստորադասական, սկսվելով իբրև ըղձական կիրառութիւնից, վերջիվերջո այն հետևանքն է ունենում, որ գրաբարի ստորադասականները լեզվից դուրս ընկնելով մեռնում են, և միջին հայերենում նրանց փոխանակում են Սահմանական ներկան և անկատար անցյալը իբրև ըղձական եղանակ՝ հնդեվրոպական լեզուների երկու եղանակի, ըղձականի և ստորադասականի բոլոր կիրառութիւններով, թե իբրև ցանկութեան, կարելիական ու պատվիրական ըղձական և թե իբրև կամական, խորհրդակցութեան ու նախատեսական ստորադասական։

258. Հավելավոր բայերի ստեմ. ներկա և անկատար անցյալ ժամանակները և ստորադասականը:— *Մի անգամ որ հին Սահմանական ներկա և անկատար անցյալ ժամանակներն անցնում են մեռնող ստորադասականների տեղ, առաջ է գալիս եղանակների շփոթութիւն.* գնամ *ձևը միաժամանակ նշանակում է՝* գնում եմ, գնամ. կգնամ. *իսկ* գնայի *նշանակում է՝* գնում էի, գնայի, կգնայի: *Բնականաբար լեզուն ձգտում է այս երեք տարբեր նշանակութիւնների համար առանձին ձևեր առաջ բերելու, այն էլ մի քանի միջոցներով։*

Հին լեզվի մեջ արդեն կան բայեր միաժամանակ թե՛ «իլ» *և թե՛* «ենալ» *կազմութեամբ՝ մերձիմ—մերձենամ, մօտիմ—մօտենամ, յագիմ—յագենամ, արբիմ—արբենամ և այլն, որոնք նշանակութեամբ նույն են։ Երբ հին ստորադասականը սկսում է մեռնել, այս կրկնակները նշանակութեամբ տարբերակման են ենթարկվում. ձգտում է երևում երկրորդները ստորադասականի նշանակութեամբ գործածելու, և դրանց անալոգիայով առաջ են գալիս նոր բայեր* «ենամ» *ձևով՝ կամիմ—կամենամ,*

կարեմ—կարենամ, ուզեմ—ուզենամ, պարտիմ—պարտենամ, արժեմ—արժենամ, վախիմ—վախենամ, հաշտիմ—հաշտենամ, պարծիմ—պարծենամ, գիտեմ—գիտենամ, լինիմ—լինենամ և այլն։ Սակայն այս «ենա» բնի ձևը իբրև ստորադասական՝ ծավալ չի ստանում. դրանով կանոն չի առնում լեզվի հնուց սկսած զարգացումը, որով սահմանակիտը կիրառվում է իբրև ստորադասական։

Այս նոր «ենա» բունը միայն այն ազդեցությունն է ունենում, որ սակավաթիվ բայերի համար, այս նոր ստորադասականի պատճառով. մեր նոր լեզվի մեջ մնում են հին լեզվի Սահմ. ներկան և անկատար անցյալը իրենց հին նշանակությամբ և դրանց համապատասխան առանձին ձևով ստորադասականը։ Այդ բայերն են՝ եմ, կամ, գիտեմ, ունիմ, արժեմ։ Սահմ. ներկա՝ եմ, ես, է, ենք, եք, են. գիտեմ, գիտես, գիտե (գիտի), գիտենք, գիտեք, գիտեն. արժեմ, արժես, արժե (արժի), արժենք, արժեք, արժեն. ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին. այժմ ավելի՝ ունեմ, ունես, ունի, ունենք, ունեք, ունեն. կամ, կաս, կա, կանք, կաք, կան։ Անկատար անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին. այսպես նաև՝ գիտեի... արժեի... ունեի. կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային։ Այս բայերից եմ, կամ ունին միայն վերևում դրված ձևերը. սրանց Ստորադասականի համար առնվում է լինիմ բայը, ինչպես և «պետք է», «հարկ է» և այլ բայերի համար՝ «պետք լինել», «հարկ լինել»։ Կարող-եմ բայի ստորադասականը լրանում է կարեճալ և կարողաճալ բայերով. իսկ գիտեմ, ունեմ, արժեմ բայերի համար կան՝ գիտեճամ, ունեճամ, արժեճամ, գիտեճայի, ունեճայի, արժեճայի ձևերն իբրև ստորադասական։ Ուզել—ուզեճալ կրկին ձևերն ևս մեկ մեկ անխտիր գործ են ածում։

Ստորադասականի այս «ենալ» ձևից առաջ են եկել նոր սահմանական ներկա և անկ. անցյալ, որով և այդ բայերն այդ ժամանակների համար ավելի ձևեր ունին կամ հավելավոր են. այսպես՝ եմ, կամ բայերի համար կան՝ լինում եմ, լինում էի, իսկ ունիմ, գիտեմ, արժեմ բայերի համար՝ ունենում եմ (էի), գիտենում եմ (էի), արժենում եմ (էի)։ Հավելավոր բայերի այս երկու ձևերն էլ, թե՛ հինը և թե՛ նորը, հավասար գործածվում են. դրանց կիրառությունն ու նշանակությունը, սակայն, լեզուն արդեն տարբերակման է ենթարկել. հին ձևերը գործածվում են սահմանական եղանակի բուն նշանակությամբ, իբրև անկատար կամ տևական ներկա և անցյալ, իսկ նոր ձևերը նույն եղանակի նույն ժամանակների երկրորդական բնավորությամբ՝ իբրև պատմական, սովորության և կրկնության ներկա և անցյալ։

Բարբառների մեջ հավելավոր կամ կրկին ձևեր ունին նաև՝ պիտիմ—պիտենալ, որի ներկա եզ. 3-րդ դեմքը՝ պիտի. կա նաև գրական լեզվի մեջ։ Այսպես նաև՝ կարծել—կարծենալ, կասես—կասենաս և այլն, որոնք մեկ-մեկ բարբառային ձևով երևում են գրական լեզվի մեջ ևս։ Դրանցից կարծեմ, կարծես ձևերը գործ են ածվում կարծում եմ, կարծում ես սովորական ձևերի հետ։ Կամիմ, կամեի ձևերն արդեն մեռած են, ինչ-

պես և ընդհանրապես «կամիլ» բայը, որի փոխանակ գործածվում է նոր կազմությունը՝ կամենալ: Նույնպես կան միայն՝ պարծենալ, հագենալ, մոտենալ, վախենալ (նաև՝ վախել, վախում եմ...). արբել կամ հարբել և արբենալ երկուսն էլ ամբողջական բայեր են, նշանակության տարբերությամբ: Ունիմ բայը «վեր ունել» բաղադրությամբ խոնարհվում է՝ վեր եմ ուճում... կատարյալը վեր կալա... մինչդեռ նույն բայը ուճենալ նշանակությամբ՝ ունիմ, ունիս, ունի... կատարյալը՝ ունեցա, ունեցար, ունեցավ: Բարբառների մեջ կան նաև՝ գիտում եմ... գիտամ, գիտաս, գիտա... կարամ, կարաս, կարա... կարենում եմ... կարացի, կարացիր, կարաց և այլն:

254—255[8]**. «Կամ»—«կենամ» բայով բաղադրված սահմ. ներկա և անկ. անցյալ և ստորադասական:**— Հին ժամանակից «կամ» բայի ձևերը «և» շաղկապով, կամ առանց շաղակապի, մեկ-մեկ իբրև ավելադրություն դրվում են համանիշ բայերի առաջից, օրինակ՝ կայ մնայ, կայ և մնայ, կան և մնան, եկաց և եղև: Այս «կամ» բայը մեկ-մեկ դրվում է նաև ուրիշ բայերի հետ, ըստ երևույթին, առանց որևէ հատուկ նշանակության, այլ միայն պատկերավոր արտահայտության համար, օրինակ՝ կալ ակն ունել, կան և ունին, կայր ցուցանէր, լայինն և կայինն: Երբ սահմանականը կիրառվում է իբրև ստորադասական, «կամ» բայի այս կըրկնությունը հաջորդ բայից առաջ՝ խոսքն ազատ էր պահում որևէ երկդիմությունից. որովհետև «կամ» բայը հենց այն բայերից է, որոնց Սահմ. ներկան և անկ. անցյալը չեն գործածվել իբրև ստորադասական, ուստի այդ բայի այդ երկու ձևերից հետո եկող բայն ևս միայն սահմանական կարող էր հատկացվել: Այսպես օրինակ՝ 12-րդ դարում Մխիթար Հերացու գրքի մեջ (Ջերմանց մխիթարութիւն) գտնում ենք՝ կայ և դիպի, կայ և շարժի, կանք և տեսանեմք: Կեղծ Շապուհ Բագրատունու պատմության մեջ՝ կամ և յաղօթս առնեմ, կամ և տեսանեմ, կաս ու գաս (եր. 35. 61. 74):

Երբ այս «կամ» բայի համար առաջ է գալիս նոր ստորադասական ձև՝ «կենամ», այս վերջինն «ու» շաղկապով դրվում է հին սահմանականի հետ՝ բայի առաջից փըրև մի ավելադրություն, որով և «կենամ» բայի ստորադասական ձևի պատճառով հաջորդ բայի սահմանականն իբրև ստորադասական է ըմբռնվում, օրինակ՝ Որ յերկրէն ի դուրս կենայ ու երթայ ի վաճառ. Որ կենայ ու գանկտի. Թէ կենայ ու գայ. Որ կենայ ու ուտէ. Թէ կենան ու կուվեն (օրինակներ՝ Կարստ, Կիլ. Հայ. քեր., եր. 300): Բայց այս բարդ ստորադասականը,—որի համար համեմատաբար ավելի վկայություններ կան միջին հայերենից, քան վերոհիշյալ «կամ» բայով բարդ սահմանականի համար,—չի տարածվում և հարատևում, քանի որ հին սահմանականն ինքն էր անցնում ստորադասականի տեղ: Դա, ինչպես և բարդ սահմանականը, եղել են միայն ժամանակավոր դարձվածներ և ոչ բայի խոնարհման ձևեր:

256. Անորոշ դերբայով և «եմ» բայով սահմ. ներկա և անկ. անց-

յալ:— Սահմ. եղանակի ներկա և անցյալ ժամանակներն իրենց բնավորությամբ ցույց են տալիս կատարվող կերպի մի գործողություն, որի մեջ հարակայում է ենթական: Այս պատճառով այդ ժամանակները հեշտությամբ կարող էին փոխանակվել «ի» նախդիր ունեցող մի բայանունով կամ մի անորոշ դերբայով՝ «եմ» և «կամ» բայերի հետ իբրև առանձին դարձվածներ: Այսպես օրինակ՝ Կեղծ Շապուհ Բագրատունու մեջ եր. 36. «Մինչդեռ ի հսկման էին», որ նշանակում է՝ հսկման մեջ էին»—հսկում էին: Ագաթանգեղոսի մեջ արդեն փոխանակ «հալածէր» ձևի՝ գտնում ենք «ի հալածել կայր», որ բառացի նշանակում է՝ «հալածելու մեջ էր», «հալածելում էր»: Նույնպես Յովհան Մամիկոնյանն ունի՝ «Յոյնք են ի գալ», «հույները գալու մեջ են», «գալում են». նույնպես Գր. Նարեկացին՝ «ի համառօտն եմ ի փութալ», «ջհամառօտն եմ յախորժել»: Այս ձևերը, որ հների մեջ մեկ-մեկ երևում են, հետագա դարերում ավելի հաճախված են արդեն սահմանական ներկայի նշանակությամբ. օրինակ՝ 13-րդ դարում Վանական վարդապետից՝ «Այժմու մարդիկ խոցած են յասել». Վարդանի պատմության մեջ՝ «Թէ շատ էք ի հարցանել». «Խոսք մի են յասել». «Հաւատալ եմ». «Մեզ հետ վասն այն են ի կռվիլ». «Հայոց կանթեղն է ի վառել»: Այսպես նաև Կոստանդին Երզնկացուց՝ «Ես չեմ ի հավատալ» և այլն:

Այս դարձվածներն ընդհանրանալով՝ միջին հայերենում դառնում են Սահմանականի խոնարհման ձևեր. բայց որովհետև միաժամանակ ընդհանրանում է նաև «կու» մասնիկով ձևը դրական բայերի համար, այս անորոշ դերբայով կազմությունը հետագայում մնում է միայն բացասական ձևի համար, ինչպես՝ կու երթամ, չեմ երթալ. կու վճարէ, չէ ի վճարել. կու խօսէիր, չէիր ի խօսել: Սակայն քանի դեռ այդ կազմությունները «ի» (յ) նախդրով են եղել, և այս նախդրի կիրառությունը կենդանի է եղել լեզվի մեջ, դրանք դեռ զգացվել են իբրև լոկ դարձվածներ և արտահայտության առանձին եղանակներ. իսկ երբ «ի» նախդիրը մեռնում է՝ լեզվից դուրս ընկնելով, այն ժամանակ «ճավատալ եմ». «չեմ երթալ», «չեմ գրել» ձևերն այլևս չեն զգացվում իբրև ներգոյականից կազմված, և դրանք դառնում են բայական բաղադրյալ ձևեր, մանավանդ երբ վերջի «լ» տառն արևմտյան բարբառների մեջ դառնում է «ր» (չեմ երթար, չեմ գրեր), և արևելյան բարբառների մեջ «ել» վերջը դառնում է «փլ», իսկ «Չէ ի» կապակցությունը դառնում է «Չի», այսպես՝ չեմ գրիլ, չես գրիլ, չի գրիլ, չենք գրիլ, չեք գրիլ, չեն գրիլ. չէի գրիլ, չէիր գրիլ, չէր գրիլ և այլն: Այժմ այս ձևերի վերջի «լ» տառն էլ դուրս է ընկնում՝ չեմ գնա, չես գնա, չի գնա և այլն. չեմ գրի, չես գրի և այլն, և այդ ձևերն այլևս բնավ չենք մտածում անորոշ դերբայի ներգոյականի նշանակությամբ:

Այս անորոշ դերբայով կազմությունը դրական ձևով ևս մնում է պարսկահայ բարբառների մեջ միայն ներկա: Այստեղ էլ «եմ» բայի ձևվերը միանում են դերբային և նույնիսկ շեշտվում, որով դարձյալ ջրն-

չանում է սկզբնական ներգոյականի նշանակությունը և առաջ են գալիս խոնարհման ձևեր, օրինակ՝ ասելե՛մ, ասելե՛ս, ասելի՛, ասելե՛նք, ասելե՛ք, ասելե՛ն (հին՝ յասել եմ)։ Այսպիսի բարբառների անցյալ անկատար ժամանակը լինում է՝ ասելե՛մ էր, ասելե՛ս էր, ասե՛լ էր, ասելե՛նք էր, ասելե՛ք էր, ասելե՛ն էր։

257. «Ում», «իս» անկատար ներբայներով և «եմ» բայով սահմ. ներկա և անկատար անցյալ։— *Արևելյան բարբառների մեջ հին «ի» նախդրով ներգոյականին փոխանակել է «ՈՒՄ» վերջավորությամբ ներգոյականը։ Եվ որովհետև «ի գալ եմ» ձևն անորոշ ներբայի մի ներգոյական է միայն, ուստի և բնականորեն այդ ձևի հետ միաժամանակ գործածվել է գալում եմ, գալում ես, գալում է. գալում էի, գալում էիր, այսպես նաև՝ տալում եմ... լալում եմ, լալում ես և այլն, որ սովորական են որոշ բարբառների մեջ։ Կան նաև՝ գնալում եմ... և նմաններըը։ Սակայն այս նոր ձևի ամենավաղ շրջանից արդեն տեսնում ենք, որ անորոշ ներբայի այս ներգոյականն իբրև սահմանական ներկայի մի բաղադրիչ մաս՝ կրել է որոշ փոփոխություն, այն է՝ «ում» վերջավորությունը դրվել է անորոշ ներբայի «ալ», «ել» վերջերի փոխանակ, ուրեմն գրնալում եմ, բերելում եմ, զարմանալում եմ ձևերի փոխանակ՝ գնում եմ. բերում եմ, զարմանում եմ։ Այս կազմությունը գտնում ենք արդեն Վարդանի պատմության մեջ 13-րդ դարում. «Քեզ աղօթ են առնում» (=քեզ աղոթք են անում), փոխանակ «են առնելում» ձևի։ Դա ցույց է տալիս, որ արևելյան բարբառների մեջ 13-րդ դարից առաջ արդեն այդ ձևը հաճախված պիտի լիներ իբրև Սահմ. ներկայի մի բաղադրիչ մաս, որպեսզի «առնելում եմ» ձևը դառնար «առնում եմ»։ Թթե «յառնել եմ», «առնելում եմ» ձևերը դեռ կարող էին զգացվել իբրև մի դարձված, «առնում եմ» ձևն այլևս դարձված չէ, այլ լոկ խոնարհման մի բաղադրյալ ձև. որովհետև դա այլևս չի կարող զգացվել իբրև անորոշ ներբայի ներգոյական «եմ» բայով։

Այսպես ուրեմն առաջ է գալիս Սահմանական ներկայի բաղադրության համար մի ներբայական ձև «ՈՒՄ» վերջավորությամբ, որ «ԵՄ» բայի հետ հարմար էր ցույց տալու մի տևական, անկատար իրական եղելություն և առաջ է բերելու մեր բայերի խոնարհման մեջ կատարվող կերպի ներկա՝ գնում եմ, գնում ես, գնում է, գնում ենք, գնում եք, գրնում են, և անկատար անցյալ՝ գնում էի, գնում էիր, գնում էր, գնում էինք, գնում էիք, գնում էին։

Այս անկատար ներբայը բացի «եմ» բայի հետ միանալուց՝ ուրիշ գործածություն չունի. բարբառային ձևով միայն ասվում է՝ «գնում ժամանակը», «գնում տեղը», փոխանակ ասելու՝ «գնալու ժամանակ»։ Այս վերջին նշանակությամբ անկախ գործածության համար նույն արևելյան բարբառների մեջ կա մի երկրորդ անկատար ներբայ՝ անորոշ ներբայի վրա ավելացրած «ԻՍ» վերջավորությամբ, օրինակ՝ գնալիս, տեսնելիս։ Բարբառների մեջ սրա համանիշն է՝գնալուս, այլև՝ գնալուդ, գր-

ալուն, որոնց վերջի Ս, Դ, Ն հոդեր են, դրված անորոշ դերբայի տրականի վրա, և նշանակում են՝ իմ գնալու ժամանակ, քո գնալու ժամանակ, իր գնալու ժամանակ, ինչպես գրաբարում՝ ի գնալս, ի գնալդ, ի գընալն։ Ասում են՝ **գնալուս տեսա, գնալուդ կանես, գնալուն կտեսնի**: Բայց «գնալուս» ձևն արդեն գրեթե կորցրել է իր վերջի Ս հոդի նշանակությունը և գործ է ածվում բոլոր դեմքերի համար, ինչպես նաև միշտ «գնալիս» ձևը։ Այս երկուսն էլ, «գնալուս» և «գնալիս», տարբեր բարբառային ձեվեր են, անորոշ դերբայի «գնալու» և «գնալի» տրականից կազմված ներգոյական են «Ս» հոդով. բայց որովհետև «Ս» հոդը կորցրել է իր նշանակությունը, դրանք դարձել են «գնալ» բայի մակբայական ձևերը միայն։

Արևելյան գրական լեզվի մեջ երեք միավանկ բայերի խոնարհման համար միայն «ԵՄ» բայի հետ առնվում է այս անկատար դերբայը՝ «ԻՍ» ձևով՝ գալիս եմ, տալիս եմ, լալիս եմ. բարբառային են՝ գալում եմ, տալում եմ, լալում եմ։ Կան նաև բարբառային ձևեր բազմավանկների համար, ինչպես՝ գնալիս եմ, գնալիս ես և այլն։ Տե՛ս § 243 անկատար դերբայի կազմությունը։

258. «Կու» մասնիկով սահմ. ներկա և անկ. անցյալ։— Ներսես Շնորհալու ժամանակից արդեն (12-րդ դար) գտնում ենք Սահմ. ներկա և անկ. անցյալ ժամանակները կազմված «ԿՈՒ» նախամասնիկով, ինչպես՝ Շնորհալու «Առակներ»-ի մեջ՝ Քան զծիրանի ծով կու ծփայ. Հետ կու կանչէ գետ ըզհետ. Գարին ի փորն կու աճէ. Պարան յետևն ի քարշ կու գայ. Անդ կու ճեմի և չտայ քարտէզ. Ճորտն զպահուցն կու քաշէր. Ու կու իջնայր ի խորասան։— Այս մասնիկը հետագայում ընդհանրանում է և անցնում նոր լեզվին. դրանով առաջ են գալիս հին Սահմ. ներկա և անցյալ անկատար ժամանակներից նոր կիրառություններ, որոնք այլևս չեն շփոթվում իրրև ստորադասական գործածվող սահմանականի նույն ձևերի հետ։ Այս «կու» մասնիկով կազմված ներկան և անցյալը, ուսկայն, գործ են ածվում միայն դրական ձևով։ Դրա գործածությամբ լեզվից դուրս է ընկնում «ի» նախդրով և անորոշ դերբայով կազմված դրական ձևը, ինչպես՝ «եմ ի հաւատալ», «եմ ի գրել»։ Այս վերջինները մրնում են իրրև բացասական, և առաջ է գալիս այսպիսի խոնարհում. դրական՝ կու տամ, կու տաս, կու տայ... բացասական՝ չեմ ի տալ, չես ի տալ, չէ ի տալ։

Այս «կու» մասնիկի ծագման համար ընդհանրապես ընդունված է Ա. Այտնյանի բացատրությունը (Քննական քերակ. եր. 75 հտ.)։ Ինչպես տեսանք, «կամ» բայի ձևերը «և» շաղկապով, կամ առանց շաղկապի, դրվելով իրրև ավելադրություն հաջորդ բայից առաջ, պահում էին վերջինիս սահմանական բնավորությունը։ Արդ, ըստ Այտնյանի «կամ» բայի ևգ. 3-րդ դեմքը «ու» շաղկապով՝ «կայ ու» ձևով ընդհանրացել է Թե՛ ներկայի և Թե՛ անկ. անցյալի բոլոր դեմքերի համար. այսինքն՝ փոխանակ ասվելու, օրինակ՝ կամ ու ցուցանեմ, կաս ու ցուցանես, կայ ու ցուցանէ և այլն. կայի ու ցուցանէի, կայիր ու ցուցանէիր, կայր ու ցու-

ցանէր և այլն. ասվել է՝ կայ ու ցուցանեմ, կայ ու ցուցանես, կայ ու ցուցանեմք և այլն. կայ ու ցուցանէի, կայ ու ցուցանէիր և այլն։ Ապա «կայ ու» կապակցությունից սղումով առաջ է եկել «կու» ձևը, որ և իբրև մասնիկ ընդհանրացվել է լեզվի մեջ։

Այս բացատրությունը, սակայն, հավաստի հիմնավորված չէ։ Դա ենթադրում է լեզվի զարգացման երկար ընթացք, որ չէր կարող իր խոշոր հետքերը չթողնել հին կամ միջին հայերենում և արդի բարբառներում. բայց «կամ» բայով կազմված Սահմանական ձևերի համար սակավաթիվ օրինակներ միայն կան (տե՛ս § 254—255). ուստի իրավամբ դրում է Կարստը (եր. 309). «Այս բացատրությունը հավաստի կարող էր լինել, եթե ապացուցվեր, որ 1) կայ ու իբրև նախաձև կու ձևի՝ մի ժամանակ ընդհանրապես և կանոնավորապես, կամ գոնե հաճախ, գործածվել է Սահմանականի հիշյալ ֆունկցիայով և ոչ թե լոկ հատ-հատ դեպքերում... և 2) կայ ու ձևից հնչյունաբանորեն կարող էր կու ձևն առաջ գալ»։ Պետք է ավելացնել նաև, որ նույնիսկ մի օրինակ չկա բերված, որի մեջ «կայ ու» ձևը դրված լիներ ոչ թե ներկայի եզակի 3-րդ դեմքի հետ, այլ ներկայի մյուս դեմքերի հետ, ինչպես և անկ. անցյալի դեմքերի հետ, թե՛ եզակի և թե՛ հոգնակի, դիցուք այսպիսի ձևեր՝ կայ ու ցուցանեմ, կայ ու ցուցանես, կայ ու ցուցանեմք և այլն. կամ՝ կայ ու ցուցանէի և այլն։ Քանի որ զարգացման այս միջին ձևի համար վկայություններ չունենք, և «կամ» բայով կազմված սակավաթիվ վկայություններ միայն կան, որոնց մեջ այս բայը դեմքով ու ժամանակով համաձայն է հաջորդ բայի հետ, Այտնյանի ենթադրությունը ապացուցված չի կարելի համարել։ Պետք է կարծել, որ այդ «կամ» բայի գործածությունը Սահմ. եղանակը որոշելու համար՝ լոկ առանձնացած դարձվածներ են եղել և այդպես էլ մնացել են ու չեն վերածվել խոնարհման ձևերի։

«ԿՈՒ» մասնիկի հին ձևն է «ԿՈՑ», որ երևում է ձեռագրերների մեջ, ինչպես՝ Այդ գարշելի ձաներդ, որ դու կոյ հանես, ոչ ի սաղմոսն կայ... Թագաւորին փեսայն բժշկութիւն կոյ առնէ և դևս հանէ։ Այս քանի՞ տարի կայ որ կոյ վաւեմ և կոյ վաստակեմ—ղհատն դու կոյտես և ղարդն ինձի կոյ կերցնես. Պօղոս առաքեալն կոյ ճրամայէ. Ես Ե. (քառասուն) կին ունիմ և յիմ հումքն կոյ պահեմ զամենն.—Գիշեր ու ցերեկ կու աշխատեմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քահանաքն և ժողովուրդքն. Սիրտս կոյ թալկոի և կոյ տապի. Դու անդ մի գար, թէ չէ՝ յանմանէ կելանեմ և ի քեզ կոյ մտանեմ (Ն. Մառ, Ժողովածոյք Առակաց Վարդանայ, Մասն Բ, եր. 131, 134, 135, 151, 155, 158, 191)։

Արդ, այս «կոյ» մասնիկն, սկզբնապես եղել է մի անկախ բառ «աճառ» նշանակությամբ, ինչպես և մինչև այժմ մնում է զանազան բարբառների մեջ կո, կյո,• գո, գյո ձևերով. այսպես օրինակ՝ Աճառյանի «Հայերեն գավառական բառարանի» մեջ գտնում ենք այդ բառը «կո» ձևով դրված. դիմացը գործածության տեղեր նշանակված են՝ Հոյ, Խզան, Խլաթ, Մոկք, Սալմաստ, Վան։

Բարբառների մեջ սա՛ա բառը կա քա՛, քը՛, հա՛ ձևերով, արևելյան բարբառներում կան նաև հրես, հրեդ, հրեն կամ հրե, այլև հես, հեդ, հեն. համապատասխան հին լեզվի աւասիկ, աւադիկ, աւանիկ բառերին: Նույնպես կան երեք դեմքի համապատասխան ձևով «կո» բառից՝ սկո, րկո, ընգո: «Ահա» բառի մի ուրիշ համանիշն է «նայ» կամ «նա», որ սովորական է միջին հայերենում: Այս բառերը հաճախ գործածվում են համանիշների կրկնությամբ, այսպես՝ հին լեզվի մեջ՝ աճաւասիկ, աճաւադիկ, աճաւանիկ, աճա աւասիկ, աճա աւանիկ. նա աւանիկ. տի՛ նա աճա: Նույնպես բարբառների մեջ՝ ըը՛ հրենիկ (Տ. Նալբանդյան, Հայ. ժող. հեքյաթներ, է. 11), աճա՛ նա (Արաքսիր), որից սղումով՝ նա՛նա, նա՛ն: «Կո» բառի հետ կրկնված կան՝ կոսկո, կակո, կոհան, նանգո (Սրվանձտ. Մանանա, եր. 180, «Հանգո ձինձենոց կիգա») սկոհա, սկոհանա (սկո+ահա+նա), ըկոհա, րկոհանա, ընգոհա. ընգոհանա (Մարաղա). կոհնա կամ գյոհնա (Մալմաստ): Կա նաև՝ ահանչ, հահանչ. կոհանչ: (Այս բառերի մեծ մասը տե՛ս Աճառյանի «Հայ. Գավ. Բառարանի» մեջ):

«ԿՈՅ» բառը, որ սովորաբար արտասանում և գրում են «կո» (կօ), «կյու, Սրվանձտյանը գրում է գօ. Վանա բարբառում նաև քմայնացած գյո. Մոկաց և Խոյեցոց մեջ կօ, այլև քմայնացած կյո: Սպասելի էր Վանա բարբառում ևս կո կամ կյո, և այս բարբառի համար «կյո» ձևն ունին Ա. Վ. Տեր Սարգսենց («Գանդուխտ վանցին», եր. 15, 32, 64, 78, 80, 81), ինչպես և ուրիշները: «ԳՈ» արտասանությունն անշուշտ ծագած է հանգո, ընգո ձևերից, որոնց մեջ նախորդ «ն» հնչյունի առնմանումով «կ» դառնում է «գ»: Նման երևույթ գտնում ենք և հետևյալի մեջ. Սկո, րկո, ընգո բառերի համապատասխան ձևով կան «տեղ» բառից՝ ստեղ, ըտեղ, ընդեղ, Սալմաստցոց բարբառով՝ ստաղ, ըտաղ, ընդաղ («ա» ձայնավորն արտասանվում է բերանի առաջակողմում, ինչպես «է(ե)» ձայնավորը, միայն ստորին բարձրությամբ, մինչդեռ «է(ե)» ձայնավորը միջին բարձրությամբ է արտասանվում): «Ընդեղ», «ընդաղ» բառերի մեջ սեձայն «ա» հնչյունը «ե» հնչյունի ազդեցությամբ դառնում է ձայնեղ «դ»: Արդ, նույն Սալմաստացոց, ինչպես և Խոյեցոց բարբառում սովորաբար գործածվում են նաև՝ տաղ (այստեղ, այգտեղ), դաղ (այնտեղ: Էմինյան Ազգագր. ժողովածու, Դ. եր. 344—350): Այս վերջին «գաղ» ձևը պարզ կերպով ծագած է «ընդաղ» բառից, որի «ըն» մասը դուրս է ընկել, բայց պահվել է «դ» հնչյունը, որով և պահվում է այդ «դաղ» ձևի «այնտեղ» նշանակությունը: Այսպես և «ընգո» ձևից ծագել է «գո» ձևը: Այդ է պատճառը, որ երբեմն միևնույն բարբառի մեջ քե՛ կա և քե՛ գա ձևով է երևան գալիս այդ բառը:

259. «Ահա», «նայ», «կոյ» բառեր | սահմ. ներկա և ապես. ենթադրյալ: — *«Ահա» բառը Հայկ. լեզվի նոր բառգրքի մեջ բացատրված է «Ձայն նշանակ ցուցման առաջիկայ կամ մերձակայ իրաց և գործոց, որպէս և անցելոց իբրև ներկայ առաջի եղելոց»: Սույն տեղում 13-րդ դարու հեղինակ Գևորգ վարդապետի մի գրվածքից բերված վկայության մեջ ասված է «Ահա բառդ ստուգութեան և մատնացոյց առնելոյ է... Ահա ձայնդ առ այնտիկ պատշաճի, որք ակն ունին և սպասեն տեսանել զոր»: «Ահա» բառի, ինչպես և համանիշ բարբառային «հրես», «հրեն», «կո», «նայ» բառերի նշանակությունն, ուրեմն, այնպիսի է, որ դրվելով ներկա ժամանակի մի բայի վրա՝ ցույց է տալիս խոսելու վայրկյանին խոսողի աչքի առաջ կատարվող մի գործողություն, որին մատնացույց է լինում՝ խոսողը. օրինակ՝ «Հրեն Տիգրանը գնում է», «Կո Տիգրանն էթալի», այս խոսքն ասելիս՝ խոսողը ցույց է տալիս, և խոսակիցը նայում, տեսնում է, որ Տիգրանն իրոք գնում է: «Կյո էթասեն վարժատուներ». «Կյո տսնես ես մեշան» (Էմին. Ազգ. ժող., Դ. 345, 347): «Պա-*

պիկը իր բեռ բոնեց, գնաց ու դեռ **կո** *(դել գյո) կերթա» (Շերենց, Վանա սազ, Ա. 119)։ Դրվելով ապառնի ժամանակի բայի վրա՝ այս բառերն ակնարկում են մի գործողության, որ կատարելի է շատ շուտով, իսկույն ևեթ, ինչպես թե ներկայում աչքի առաջ օրինակ՝ «Մի քիչ կաց, հիմա կըգա». «Դե՛ դու գնա, գո ես քե կհասնեմ» (Սրվանձտ., Մանանա, եր. 205), «Մնաս բարի, կյո ես էթաս եմ» (Էմինյան Ազգ. ժող., Դ. 343)։ Այսպես և անցյալ ժամանակի մի բայի հետ՝ այս բառերը գործողությունը պատկերացնել են տալիս իբրև խոսելու վայրկյանին կատարված կամ կատարվող, կարծես, խոսողի և խոսակցի աչքի առաջ, օրինակ՝ «Ահա եկավ և նա». «Գո քե անմահութենի ջուր բերի» (Սրվանձ., Ման., 211). «Կյո քյո Ֆիլասըմ էկավ» (Գ. Հովսեփյան, Ռոստամ Զալ, Մոկաց բարբառ., եր. 22, 24)։ «Կո էկավ տարին պոլրավ». «Կո տրանք էլ պերիմ» (Տ. Ավետիքյան, Ն. Կիրակոսի հարսանիքը, Խոյեցոց բարբառով, եր. 30, 60. տե՛ս և հր. 44, 53, 61)։*

Մի անգամ որ **ահա**, **կոյ** *և նման բառերը գործողություն ցույց են տալիս խոսողի և իր խոսակցի աչքի առաջ, բնականաբար այդ բառերը նույնպես պետք է դրվեին հին լեզվի Սահմ. ներկա ժամանակի հետ, սրա հին նշանակությունը իբրև տևական ներկա հաստատ և առանց երկդիմության պահելու համար. «ահա գայ», «կոյ գայ» կապակցությամբ «գայ» ձևը կարող էր հասկացվել միայն «գալիս է»։ Բացի այդ, ինչպես աշխարհաբարում և ուրիշ լեզուների մեջ Սահմ. ներկան գործածվում է և իբրև ապառնի, երբ գործողությունը մտածվում է իբրև մի ապագա ժամանակակետում խոսողի ու խոսակցի աչքի առաջ կատարվող,—օրինակ՝ ասում ենք՝ «դու գնա, ես էլ հիմա գալիս եմ», «ես էլ* **կո** *իկյաս եմ», «ես էլ կո կիգամ»,—նույնպես և հին լեզվի մեջ «ահա գայ» կապակցությունը, ինչպես և համանիշներով՝ «նայ գայ», «կոյ դայ», կարող էր գործածվել և գործածվել է նաև իբրև ապառնի։ Բերենք մի քանի օրինակներ թե՛ ներկայի և թե՛ ապառնու համար։* **Ահա** *այժմ սկսանիմ.—***Ահա** *սկիզբն առնում բանից և խրատ տամ հասարակաց.—***Ահա** *կամիս զարթնիլ դու.—***Ահա** *գան և դիս քաշեն։* **Ահա** *մահն գայ և դոնու շատք ի քուն, չմնայ յինք ի մօտ իրք ծածուկ կամ քազուն (վերջին երկուսն ապառնի. Կոստանդին Երզնկ., եր. 68, 74, 104, 118, 130)։—Եւ* **ահա** *գամ, տեսանեմ, թէ աղթէ գիս աստուածն քո (Կեղծ Շապուհ Բագրատունի, եր. 22. ապառնի ժամանակ)։—***Ահա** *երդնում ի գլուխ քո.—Փախիր և դու. զի* **ահա** *գայ մարդն...թէ գայ տեսնու զքեզ, վայ լինի քեզ։ Եւ* **ահա** *գայ հողագործ մարդ մի (ապառնի և ներկա։—Վարիանտն «Յինչ կու փախչիք.—և ասացին, թէ մարդ կու գայ»)։* **Ահա** *երևի հետն (Ժող. Առակ. Վարդանայ, եր. 4, 113, 114, 115)։*

«Կոյ» *բառի համար հին գրականությունից օրինակ չունենք, որովհետև ընդհանրապես հին բարբառներով գրվածքներ չկան. բայց մեր ժամանակի բարբառներում շատ կգտնենք այդ բառը* **«կո»** *(կյո) կամ* **«գո»** *(գյո) ձևով դրված Սահմ. ներկայի կամ իբրև ապառնի գործածված ներկայի հետ.* **«Կո** *տու ես ասելի». «Ես կո քնես Լմ».* **«Կո** *տանց-*

մեն տըկի ըլի». «Կո ըտենց կըլի» (Տ. Ավետ., Կիրակոսի Հարսանիքը, եր. 48, 37, 78, 35, այլև՝ 40, 48, 85։ «Մարդ մի գո... ոտ մի կրթալա խիզան, ոտ մի Ստամբուլ». «Գո յոթն չաղացի քար կ'աղա, մեկ մարդ կ'ուտա, չի կշտանա». «Գո մարդ մի... բարահի մը չուր կը խմա». «Գո մարդ մարդահոտ կը գա» (Սրվանձտ., Մանանա, եր. 194, 195, 204)։ «Կը տեսնան, որ գյո էսա կամիշ կը ծալի». «Գյո սարասքյար քուր քաշե կե՛րթա վեր դիւշմնքտերաց» (Նավ., Հեք. Զ. եր. 46 հտ.)։ «Մեկ (ինձ) ինչի կը կանչես կյո քյո մոտ».—«Կյո էն մուխն ի որ չուր մկայ էլ կյո կը մխաճ». «Կյո էսա մեր գատաստան ըսկնա կը մնա».—«Տել կյո կերթա» (Ա. Տ. Սարգս., Պանդ. Վանցին, եր. 32, 64, 78, 81). «Աչքեր կյո կը պսպղան». «Կյո խարտնիս կանեն» (Էմինյան Ազգ. ժող., Բ. 434, 440)։

Անա և նայ բառերը միջին հայերենում, հաճախ կրկնված, ինչպես մի բաղհյուսական շաղկապ դրվում են պատմվածքի մեջ խոսքերի ըսկզբում ոչ միայն խոսքերն իրար հետ կապելու համար, այլև առանձնապես ստուգությամբ և ուժով արտահայտելու։ Հին Սահմ. ներկայի նշանակությունը այս դեպքում էլ բնականաբար առանց երկդիմության մնում է։ «Անա», միաժամանակ և «նայ» բառերի այս գործածության համար օրինակ բերենք Կոստանդին Երզնկացու մի քերթվածից (եր. 112. հտն.) կրճատումներով. Անայ գնաց խնդիր հօրօտ մօրօտ ձունծաղիկին, ու ղրկեն և ձէնեն զշուշան. Նա խնդալով ցնծայ այն մասրենին... Նայ լսէ զձայն բըլբուլին վարդն...Նայ ծաղկունքն թառմեցան... Նայ վարդն զարդարեց... Նայ բըլբուլն երեկ նըստալ... Նայ բըլբուլն ուրախանայ... Նայ դառնայ վարդն ի բըլբուլն... Անա կամ եւ զարդարած, 'ւ իմ տերևնիս զերդ հուր վառին...Անա գան և զիս քաղեն... Նայ գնեն զիս և տանին (ապառնի)։—Այս բոլոր դեպքերում էլ բարբառային ձևով կարող էր «կոյ» դրվել, քանի որ ամեն բարբառ, բնականաբար, իր բառն է գործածում. այսպես օրինակ՝ Այրարատյան բարբառում ասվում է՝ Տեսնում են ի՞նչ. իրանց հարսը նրեն աղաքներին մեկ-մենակ էթում ա։—Խոյեցին ասում է՝ Կըտիսնա՝ կո մեկ պառաւ Թիւնդիրը վառելի, չի կպնելի**։—Վանեցին՝ Կը տիսնան որ գյո մեկ զարդարուն ձիավոր մ'ալ կուգա***։—Մոկացին ասում է՝ Տեսավ՝ գլոխ գյո մայ աժդահարու էրկու ոտեր****։—Տեսավ կո մեկ բաղչի մեջ ի. Կո ես էլ կերթամ*****։ Խիզանցին ասում է՝ «Կառաջանա, կը տիսնա որ ի՞նչ, գո մեկ դև մը... կը ճնի, աղչիկ քարկահ կանի»։—Այս միևնույն*

---

* Ա. Նավասարդյան, Հայ. ժող. հեքիաթներ, է. 44. բազմաթիվ օրինակներ նաև ուրիշ մասերում, ինչպես՝ է. 10, 20, 39, Զ. 3, 14, Թ. 15, 23 և այլն։

** Ս. Հայկունի, Կենդանական վեպեր, եր. 17. ուրիշ օրինակներ նույն և 18 եր.։

*** Նավ., Հայ. ժող. հեք., Զ. եր. 38 բազմաթիվ օրինակներ հենց սույն հեքիաթի մեջ, եր. 35, 38, 41, 43, 45, 46 և այլն։

**** Հովսեփյան, Ռոստոմ Զալ, եր. 24։

***** Ա. Սեդրակյան, Քնար մշեցոց և վանեցոց, եր. 21. Էմին. Ազգ. ժող. Բ. 446։

հեքաթի մեջ քիչ հետո՝ «կառաջանա, տիսնա որ հա՛ (=ահա) մեկ անհավատ դև մը... քնե. էդ աղչիկ քարգահ կըբանի»*:—Արաբկիրցին ասում է՝ Ահանա կուգա**:—Միջին հայերենի մի արևմտյան բարբառ՝ «Ես տեսավ, նայ կրակ էր վառած***» (Ես տեսավ, ահա կրակ կար վառած):

Ինչպես մեր ժամանակ, նույնն եղել է հնում էլ: Անշուշտ կոյ բառն է գործածվել հին ժամանակ ևս նույն վայրերում, ինչ որ մեր օրերում ուստի և հին Սահմ. ներկայի հետ ահա և նայ բառերի փոխանակ «կոյ» պիտի կիրառվեր վերևում դրված խոսքերի և նմաններուի մեջ՝ Կոյ այժմ սկսանիմ.—կոյ սկիզբն առնում: Կոյ կամիս.—կոյ մահն գայ.—կոյ գամ.—կոյ երդնում.—կոյ գայ.—կոյ երևի.—կոյ գնաճ խնդիր.—կոյ խնդալով ցնծայ.—կոյ լսէ.—կոյ բլբուլն ուրախանա.—կոյ դառնա վարդն.—կոյ կամ ես զարդարած և իմ տերևներս զերդ հուր վառին.—կոյ գան և զիս քաղեն.—կոյ գնեն զիս և տանին:

Այսպիսի մի խոսքը՝ «Տես, հրեն գալի՛ս է նա» գրաբար՝ «Տես, ահա գա՛յ նա» բարբառային ձևով պիտի ասվեր՝ «Տես, կոյ գա՛յ նա»: Բայց բավական է միայն, որ «կոյ» բառի նշանակությունը մթնի, և այն ժամանակ այդ բառը կդառնա Սահմ. ներկա կազմող մի մասնիկ: Իսկ այդ լինում է այն պատճառով, որ անմիջապես բայի վրա դրված կոյ բառը անշեշտ մնալով իրրև նախահար՝ արտասանվում է բայի հետ իբրև՝ մի բառ՝ կոյ-գա՛յ, և ապա՝ ձայնափոխությամբ դառնում է կու-գա՛յ մինչդեռ նույն «կոյ» բառն իրրև անկախ բառ մնալով՝ ձայնաշրջությամբ դառնում է ոչ թե «կու», այլ «կո» (կյո), ճիշտ ինչպես այս «կո» բառն ունեցող բարբառների մեջ (Վան, Սալմաստ, Խոյ, Մոկք) հին «fոյ» բառը դարձել է «քո» (քյո) և ոչ թե «քու», ինչպես է ուրիշ բարբառների մեջ: Հնչյունական տարբերության պատճառով «կու» ձևն այլևս չի նույնացվում կոյ, կո=ահա բառի հետ. բայց դրվելով բայի վրա՝ դեռ շարունակում է ավելի պարզ արտահայտել հին Սահմ. ներկայի կատարվող կամ տևական նշանակությունը: Հետագայում, ինչպես նման երևույթներ հաճախ լինում են, «կու»—«կը» մասնիկով կազմված ձևի վրա կրկնվում է նույնը «կո» ձևով՝ «կո կ'երթամ»:

«Կոյ» բառն ունեցող բարբառներից ներկայի վրա դրվող այս «կոյ» բառը կամ «կու» մասնիկը, այն շրջանում, երբ կարիք կար նոր Սահմ. ներկա առաջ բերելու, անցել է նաև ուրիշ բարբառների, որոնք չունենալով «կոյ» բառ՝ բայի վրա դրվող այդ բառը հենց սկզբից իրրև մասնիկ պետք է ըմբռնեին: Թե որտեղ է սկիզբն առել դրա կիրառությունը, դժվար է որոշել: 19-րդ դարում Վանա լճի շուրջն եղած բարբառների, ինչ-

---

* Սրվանձտյանց, *Մանանա*, եր. 175, 176. բազմաթիվ օրինակներ «կո» (գօ) բառի գործածության եր. 173—211:

** Ագայան, *Հայ. գավ. բառ.* «Ահանա» բառի տակ:

*** Մառ, *Ժող. Առակ. Վարդանայ, Բ. եր. 313:*

պես և պարսկահայոց՝ Խոյի, Սալմաստի բարբառների մեջ է երևում կա —աճա բառը, այն էլ, ինչպես կարելի է տեսնել այդ բարբառներով գրված բանահյուսությունից, այդ «կա» բառը այդ տեղերում շատ ու շատ ավելի սիրված և հաճախակի գործածություն ունի, քան հրես, հրեն բառերն արևելյան բարբառների մեջ, կամ աճա բառը գրական լեզվի մեջ*։ Պետք է ենթադրել, որ Վանա լճի շուրջն եղած կամ պարսկահայոց բարբառներից էլ ծագում է «կու» մասնիկը։

Մեր այժմյան լեզվի մեջ «կու» ձևն սղված է և դարձած է կը, ձայնավորից առաջ «կ», ուստի և դա, ավելի հեռացած լինելով «կոյ» բառից, կրկնվում է իրար հաջորդող բայերի վրա։ Բայց հին ժամանակ, մինչև անգամ Նաղաշ Հովնաթանի տաղերի մեջ (այժմ էլ այս ու այն բարբառների մեջ), բավական էր համարվում մեկ անգամ միայն կոյ կամ կու դնել բայերից առաջինի վրա, ինչպես և աճա բառը, օրինակ՝ Փեսայն բժշկութիւն կոյ առնէ և դևս հանէ (Ժող. Առ. Վարդ., Ա. եր. 135). —Աճա մահն գայ և գտնու... (Կոստն. Երզն., 130)։ Ելել կուգայ վարդն ի նորու և մեզ բանայ դռվի սիրու (Կոստ. Երզն., 12)։ Արդի բարբառների մեջ ևս «կո» (գո, գյո) բառը սովորաբար չի կրկնվում. ինչպես պատմական ներկայի հետ՝ «Գո կը հանա, կըճամբխա արևմտոց թագաւորին»։ Տևական ներկայի հետ՝ «Գո հովիւ մի փող կը փչա, ու սար ու ձոր... կը խաղան (Սրվանձտ., Մանանա, եր. 193, 195)։

Կան բարբառներ, որոնց մեջ «կը» մասնիկը դրվում է բայից հետո, այն էլ երբեմն մի քանի իրար հաջորդող բայերից վերջինից հետո, կամ թե կրկնվում է մեկնույն բայի վրա առաջից և ետևից. օրինակ՝ «Կռապաշտները բռնեն Եղիային լավ մ'ծեծեն կ'ու կըսեն կը... Եղիան նոր ղղյա կը, զարկե կը հերոնը աչքը, երկու լուսն ա կըհանե, բռնի կը աշկերդին ձեռքեն... Եղիան նստի, համբառնա կը» (Երվ. Լալայանց, Ջավախքի բուրմունք, եր. 43)։ «Կը» մասնիկի այս ետադասությունն ու կրկնվելը միևնույն բայի վրա՝ ծագում է «կոյ» բառի ետադաս, ինչպես և «կը» մասնիկն ունեցող բայերից հետո ևս դրվելուց, օրինակ՝ հետևյալի մեջ. «Ծիկ (ինձ) ինչի՞ կը կանչես կյո քյո մոտ» (Տ. Սարգսեանց Ա., Պանդուխտ Վանցին, եր. 32), որ կարող է դառնալ «կը կանչես կը»։

Վերևում տեսանք, որ հին Սահմ. ներկան «աճա», «ճայ» բառերի հետ՝ կարող է թե՛ ներկա և թե՛ ապառնի ժամանակների նշանակությամբ գործածվել. ինչպես՝ «Աճա երևի հետն»։—Ահա երևում է հետքը.—«Աճա գան և ղիս քաղեն... ճայ գնեն ղիս և տանին»։— Ահա կգան և ինձ կքաղեն... կգնեն ինձ և կտանեն։ Արևմտյան բարբառներին հատուկ այս «ճայ» բառը միջին հայերենում (որ արևմտյան բարբառ է) շատ հաճախ

---

* Այսպես օրինակ՝ Էմինյան Ազգագր. ժողովածու, Բ. 371. Խլաթի բարբառով. «Մեկ օր Սայաթ կելնի, կերթա բազար, կտեսնի մեկ պստիկ տղա կո թալուկ էր էնտեղ. կըվերցնե, կո տուն կըբերե, կըսա.—կո՛, կնի՛կ, մեկ տղա իմ գտեր, բերեր իմ»։ Այսպես շատ հաճախ նաև Վանի, Խոյեցոց և այլ բարբառների մեջ։ Տե՛ս հենց նույն տեղը, եր. 434, 435, 437, 440, 441։

դրվում է քե, զինչ որ, ով որ, երբ, յորժամ, ընդի և նման բառերով ըսկըսվող պայմանական, ժամանակական և այլ երկրորդական խոսքերից հետո եկող գլխավոր խոսքի սկզբում, դարձյալ «ահա» նշանակությամբ: Օրինակ՝ Կոստ. Երզկացին (եր. 88) նման կապակցությունների մեջ մի դեպքում «նայ» է դնում և քիչ հետ մի ուրիշ խոսքի մեջ՝ «ահա». «Զինչ որ ի բանդ կային և ի խաւար ի խոր զնդան, նայ լոյս ծագեց նոցա յարեգականն ի մեծ լուսոյն... Զինչ որ կայ արարած ու անհոգի մեռած կային, ահա կենդանացան յարեգական ի մեծ լուսոյն»: «Զինչ որ» բառի տեղ, հասկանալի է, կարելի է դնել «ով որ», ինչպես և բայերի անցյալ ժամանակի փոխանակ՝ ներկա. «Զինչ որ (ով որ) ի բանդ կան, նայ (ահա, կոյ) լոյս ծագէ նոցա. զինչ որ (ով որ) կայ արարած ու անհոգի մեռած կան, ահա (նայ, կոյ) կենդանանան»: Այս նշանակում է՝ «ինչ որ (ով որ) բանդում կա, ահա (կոյ) լույս է ծագում նրանց». կամ՝ «լույս կծագե նրանց». «ինչ արարած որ կա, ով որ անհոգի մեռած կան, ահա (կոյ) կենդանանում են», կամ՝ «կկենդանանան»: Մի քանի օրինակներ ևս. Ով որ ինձ միտ դնէ ու զինչ խօսիմ՝ ինք հասկանա, նայ ես իր տամ նշան, թէ այս շնորհիս որպէս հասայ:—Թէ գիաս յանպէտ ծառայ, նայ ես զայս կինքս ունայն ուրանամ:—Երբ որ զայս մեծ պարգեւքս ի յայն լուսոյն ես ընկալայ, նա մարմինս հոգովս իր սուրբ տեսոյն գրեմ ծառայ:—Յով որ սէր կայ յիր սրտին, նայ զիս նորա կամակ տանին: Ու թէ սէրն յիսնէ զատի, նայ զիս տանի հողմ ու բամին (Կոստ. Երզնկ., եր. 98, 99, 101, 116, 117): Յորժամ մարդն հիւանդանա, նա բերեն զհան մօտ ի հավանդն. թէ ունիցի հիւանդն դարձ, որ առողջանայ, նա հան քաղցրութեամբ նայի ի հիւանդն և գիրկ առկանէ և զհով հարու բևովն (Ժող. Առ. Վարդ., եր. 81): Ով ելնէ և այրէ զբաբանն, նա տամ իւրեան շատ ոսկի և արծաթ (Սմբատ Սպար., եր. 169): Թէ գաս գիշերն ի մօտիս նա դնեմ զերեսդ երեսիս (Նահապետ Քուչակ, Դիվան, եր. 119):

Այս բոլոր, ինչպես և բազմաթիվ այսպիսի կապակցությունների մեջ՝ նայ բառից հետո եկող խոսքի բայն ունի կա՛մ Սահմ. ներկայի, կա՛մ ավելի իբրև ապառնի գործածված ներկայի նշանակություն: Այդ բոլորի մեջ ևս «նայ» բառը բարբառային ձևով կարող էր փոխանակվել համանիշ «կոյ» բառով, ինչպես, օրինակ, վերևի վերջին խոսքերը կարող էին ասվել՝ Ով ելնէ և այրէ զբաբանն, կոյ տամ (=կու տամ) իւրեան շատ ոսկի.—Թէ գաս գիշերն ի մօտիս, կոյ դնեմ (=կու դնեմ) զերեսդ երեսիս:—Այսպես՝ մեր ժամանակի բարբառներում գտնում ենք՝ «Թա չբերես գո տը մեռնեմ» (Սրվանձտ., Մանանա, 203), որ միջին հայերեն լինում է՝ Թէ չբերես, նայ մեռանիմ—«Թէ չբերես՝ կոյ մեռանիմ»: Ահա և մի ուրիշ խոսք, որի մեջ «գո» բառը դրված է ուղղակի հին Սահմ. ներկայի վրա, որ իբրև ապառնի է առնված. «Յեվարին ինչ տուն կերթան, ըմեն էլ գո մրկին» (Սրվանձտ., Մանանա, 197): Երեկոյան երբ տուն կերթան, ամենքն էլ կոյ մրկին (=կու մրկին—կայրվեն): Այս միևնույն խոսքը հինգ տող վերևում ասված է այսպես՝ «Յեվարին

ինչ կերթան ներս, չըխօ ըմենն էլ տը մրկին». ուրեմն **գո մրկին=տը մրկին**, *այսինքն* **գո—կո—կոյ=ահա** *բառը նույնպես և նույն իմաստով դրվում է հին Սահմ. ներկայի վրա, ինչպես և* **տը-տի-պիտի** *բառը, ինչպես և «նայ» բառը։ Բավական է որ «կոյ» բառի նշանակությունն այս դեպքում էլ մի փոքր մթնի, այն ժամանակ առաջ կգա խոնարհման մի ձև. ինչպես օրինակ՝ այս հայրենի տողերը՝ «Մեռնիմք ի յանդէն երթամք, նայ նստիմք քան զմեկ մ'այլ ի վեր» (Նահ. Քուչ., Դիվ., եր. 92), փոփոխակ ունի՝ «Մեռնիք ի յանդէն երթայք, կու նստիք քան մեկ այլ ի վեր» (Կոստ., Նոր. Ժող., Ա. 69), որ հին ձևով է...* **կոյ նստիք**:

Երբ «կու» մասնիկն առաջացած տարածվում է, բնականորեն բրոնում է, ինչպես այս վերջին օրինակի մեջ է, վերջադաս գլխավոր խոսքի սկզբում դրված համանիշ «նայ» բառի տեղը, այն ժամանակ սրա ֆունկցիան ավելորդ է դառնում. ուստի և այդ «նայ բառը կա՛մ դուրս է ընկնում, կա՛մ արտասանությամբ միանալով առաջադաս խոսքերի հետ՝ դառնում է մի շատ սովորական վերջահար մասնիկ պայմանական և նման խոսքերի համար և մինչև այժմ «նա», «նը», «նե» ձևերով ապրում է Նոր Նախիջևանի և այլ բարբառներում.—ինչպես՝ Սաղ մնամ նե, կը մնամ, չմնամ նե, ի՞նչ անիմ (Նավ., Հեք., է. 64)։—Ապա այս կիրառությունն անցնում է և այնպիսի կապակցությունների, որոնց վերջադաս խոսքի բայը «կու» մասնիկով չէ. օրինակ՝ Եկիք նե՝ բարով և-կիք.—Ով քուն էր նը՝ արթնցավ (Ճանիկյան, Հնութիւնք Ակնայ, եր. 494, 486), հին ձևով՝ «Ով քուն էր, նա՛ (ահա) արթնացաւ»։

Լեզվական այս փոփոխությունը տեսնում ենք համանիշ «ահա» բառի համար ևս։ Այսպիսի մի խոսքը՝ «Յորժամ նա զայս ասաց, նայ տղին աչքն բացաւ», «ահա» բառով լինում է՝ «Յորժամ նա զայս ասաց, ահա տղին աչքն բացաւ»։ Արդ, այսպիսի խոսքերի «ահա» բառը «հա» ձևով դեռ ապրում է բարբառների մեջ առաջադաս խոսքերի վերջում, օրինակ՝ Նրանք որ սրան տեսան հա՝ միմնու ասին.—Հենց որ քաղաքիցը մոտացան հա՝ մին էլ էն տեսան... Մուննաթ եմ անում, որ եփ ըրեխեն ըլի հա, թողուս՝ կնքավորը ես ըլիմ (Նավ., Հեք., Ժ., Լոռու Օձուն գյուղի բարբառով)։

Մի անգամ որ լեզվի մեջ առաջ է եկել «կուգան» ձևը թե՛ իբրև տեվական ներկա և թե՛ իբրև նախատեսական ապառնի ու կարելիական, այս ձևի անալոգիայով «կու» մասնիկը հեշտությամբ պիտի դրվեր նաև **Սահմ. անկ. անցյալ ժամանակի վրա**, *ինչպես՝ եթե գաս, կուտամ, նույնպես՝ եթե գայիր, կուտայի։ Սակայն անցյալի վրա, ներկա ժամանակից անկախ էլ, դրվում է «ահա», «կոյ» և ցույց է տալիս խոսելու վայրկյանից անմիջապես առաջ կատարվող հարաձիգ գործողություն, որ անցյալից տևում, հասնում է մինչև խոսելու ներկան. օրինակ՝* **Ահա հոտն գար գարնան** *(Կոստ. Երզնկ., 173).* **Ահա ցնծայր ծովն ու ծփայր. ահա խաղայր նաև ի ծովուն** *(Կոստ., Նոր. Ժող., Դ. 59); Այս խոսքերը համանիշ «կոյ» բառով կլինեն՝* **Կոյ հոտն գար. Կոյ ցնծայր. Կոյ խա-**

զայր: Բերենք երկու օրինակ էլ բարբառներից. «Մնում է մի երկու բան, ճրես էն էլ կասեմ... (ասում է այդ երկու բանը, ապա). Հրես էս երկու բանն էի ուզում քեզ ասել» (Նավ., Հեք. Դ. 24): «Իրիկ շատ վախկոտ կելնի. Օր մ' իրիկուն կերթա փուղոց, կը տիսնա որ փուղցի մեջ գյո ասլան մ' կայնե ոսկոռ կը կրծի. ճվալով կը փախնի կը մտնի տուն: Կընիկ կը հարցու՝ Քա՛ ի՞նչ էլավ քեզ... Կատի՝ գյո մեջ փուղցին ասլան մ'կայներ էր ոսկոռ կը կրծեր» (Նավ. Հեք. Զ. 45): «Գիտիս կյո պատվու առջինեկ լաճ մ' էլներ պսայվածծ» (Էմին. Ազգ. Ժող., Բ. 435): «Կո տայ, խմա եմ էր ասելի» (Տ. Ավետ. Կիր. Հարս. 66):

260. Ցանկության և կարելիական ըղձականներ կամ ըղձական ու ենթադրական եղանակներ արևելյան աշխարհաբարում:— *Հին լեզվի մեջ արդեն, ինչպես տեսանք (§ 252), ձգտում է երևում երկու ստորադասականներից մեկը գործածելու ցանկութուն ու կամք ցույց տալու համար, մյուսը՝ լոկ հնարավորություն: Լեզվի այս ձգտումը ցանկության ըղձականը կարելիականից տարբերելու՝ շարունակվում է և այն ժամանակ, երբ Սահմ. ներկա և անկ. անցյալ ժամանակները կատարում են նաև ստորադասականների ֆունկցիան: Սկզբում, սակայն, միևնույն ձևը՝ գնամ. գնայի գործ է ածվում երեք նշանակությամբ ևս՝ Սահմ. գնում եմ, գնում էի. ցանկության ըղձական՝ գնամ, գնայի. կարելիական՝ կգնամ, կգնայի: Այսպիսի մի խոսքը՝ «Երբ գիշնամիս բրունեն՝ չսպանեն, այլ ծառայ տանին» կարող է նշանակել՝ 1) Երբ գիշնամիներին բռնում են՝ չեն սպանում, այլ գերի են տանում. 2) երբ գիշնամիներին բռնեն՝ չսպանե՛ն (թող), այլ գերի տանեն. 3) Երբ գիշնամիներին բռնեն՝ չեն սպանիլ, այլ գերի կտանեն: Խոսքի ընդհանուր բովանդակությունից միայն պետք է իմացվեր, թե ինչպես պետք է հասկացվեին այդպիսի խոսքերը, ինչպես օրինակ՝ Մաղաքիա Աբեղայի այս խոսքը՝ «Թե գիս բռնեն՝ սպանեն ոչ, այլ տանին ծառայ» նշանակում է՝ Թէ ինձ բռնեն՝ չեն սպանիլ, այլ գերի կտանեն: Երբ առաջ են գալիս «կու» մասնիկով ձևերը, այն ժամանակ խոնարհման ձևերը բաժանվում են երկու խմբի. 1) Գնամ, գնայի—ցանկություն արտահայտող, որի մեջ մտնում են հնդեվրոպական ցանկության ըղձականը, ինչպես և պատվիրական ըղձականը, որ ցանկություն է արտահայտում, այլև ստորադասականի կիրառությունը կամական և խորհրդակցական նշանակությամբ. ուրեմն մի ձև, որի մեջ կա միշտ կամք ու ցանկության գաղափար. և, ինչպես տեսանք, Սահմ. «գնամ», «գնայի» ձևերն ըստ երևույթին հենց ըղձականի նշանակությամբ են անցել հին ստորադասականի տեղ. 2) Կգնամ, կգնայի—ցանկություն չարտահայտող, որի մեջ մտնում են՝ Սահմ. ներկան և անկատար անցյալը (=գնում եմ, գնում էի), հին ստորադասականի կիրառությունը նախատեսական ապառնու նշանակությամբ, երբ կամական տարր չունի մեջը, կարելիականը, այլև անիրական, ինչպես և մասամբ պատվիրական ըղձականն իրև կարելիություն արտահայտող (տե՛ս § 251). ուրեմն*

մի ձև, առանց որևէ ցանկության կամ կամքի մասնակցության, լինի սահմանական, թե ստորադասական կամ ըղձական, կարելիական թե անիրական եղանակավորության, ներկա, անցյալ թե ապառնի ժամանակով։ Այսպես ուրեմն ԿՈՒ (կը) մասնիկը ծառայել է ոչ-ցանկության խոսքերը ցանկության խոսքերից որոշելու. այդ է եղել դրա ֆունկցիան միջին հայերենում, ինչպես և է՛ մինչև այժմ արևմտյան բարբառների մեջ։

Արևելյան բարբառների և արևելյան գրական լեզվի մեջ, սակայն, Սահմ. ներկայի և անկ. անցյալի համար, ինչպես տեսանք, կազմվել են գնում եմ, գնում էի ձևերը. ուստի «կու» (կը) մասնիկով կգնամ, կրգնայի ձևերի կիրառությունը սահմանափակվել է իբրև կարելիական ըղձական (որ բնականաբար հաճախ ապագային է վերաբերում) և իբրև նախատեսական ապառնի, կգնայի անցյալը նաև իբրև անիրական։ Այս երեքն էլ, իրենց բնույթամբ, կազմում են ենթադրական խոսքեր, այդ պատճառով, «կգնամ», «կգնայի» ձևերը կոչում ենք ենթադրական եղանակ, իսկ «գնամ», «գնայի» ձևերը՝ ըղձական եղանակ։ Բայց կարելի է նաև պահել ընդհանուր ըղձական եղանակ կոչումը և այնուհետև այս եղանակն ստորաբաժանել՝ 1) ցանկության ըղձական—գնամ, գրնայի և 2) կարելիական ըղձական, որ արտահայտվում է ըղձականի վրա «կը» մասնիկը դրվելով՝ կգնամ, կգնայի, ճիշտ ինչպես որ հունարենում ըղձականի և Սահմ. անցյալի վրա an կամ ke, ken, ka մասնիկներից մեկը դրվելով՝ արտահայտվում է կարելիությունը և անիրականությունը։

261. Հարկադրական եղանակի «պիտի» եղանակիչը պարզապես պիտիմ բայի եզակի 3-րդ դեմքն է և մենակ իբրև անկախ բայ էլ է գործածվում, ինչպես՝ Ասողին էլ լսող պիտի. Այսօր պիտի գնալ։ Դա նշանակում է՝ հարկավոր է, պետք է, ուստի՝ պիտի գնամ, պիտի գրնաս... կապակցությունների տեղ և նրանց նշանակությամբ գործ են ածվում նաև՝ պետք է գնամ, պետք է գնաս և այլն։ «Պիտի գնամ», «պիտի գնաս»... ձևերը ծագած են «պիտի որ գնամ», «պիտի որ գրնաս»... ձևերից, ինչպես՝ «Թէ ամերուկն էր յընկուզենին, զիս պիտի որ սպանանէր» (Մատ., Ժող. Առակ. Վարդ., II. եր. 149)։ Դրանից սղումով առաջացել է բարբառային «պիտոր գնամ» ձևը, և, ինչպես սովորական է ժողովրդական լեզվի մեջ շաղկապները չգործածել, պիտի գրնամ, պիտի գնաս, պիտի գնա և այլն. պիտի գնայի, պիտի գնայիր և այլն։

Սակայն ինչքան էլ այս վերջին ձևը ծագած է «պիտի որ գնամ» կապակցությունից, այժմյան լեզվի մեջ այս երկուսը տարբեր են. «Ես այսօր երեկոյան պիտի գնամ» խոսքի և նմանների մեջ «պիտի» բառն այլևս չենք զգում իբրև մի բայ իր լրացումներով՝ նույնացնելով «Պիտի՛ որ ես այս երեկոյան գնամ» խոսքի հետ։ Մյուս կողմից՝ պիտի գրնամ ձևի մեջ «պիտի» բառը չի պահում իր նշանակությունը՝ «հարկա-

վոր է». «Ես պիտի տուն գնամ» խոսքն այլևս չենք մտածում իբրև՝ «Հարկավոր է, որ ես տուն գնամ», այլ պիտի գնամ կապակցությունը ցույց է տալիս լոկ անհրաժեշտ, հարկադրական գործողություն, այսինքն՝ «պիտի» բառը դարձել է լոկ մի եղանակիչ բառ։ Այս պատճառով և այդ բառը խոսքի մեջ ոչ միայն բայից առաջ և զանազան տեղերում է ընկնում, այլ երբեմն նաև առանձնապես շեշտված բայից հետո՝ գնա՛ս պիտի։ Բացի այդ՝«պիտի» բառը նույնիսկ սղվում և դառնում է ՊԻՏ, բարբառների մեջ նաև «ՏԻ», «ՏԸ», «Տ'», որոնք, ինչպես «կը» մասնիկը, բայից առաջ և անբաժան են մնում, օրինակ՝ տի բերեմ, տը բերեմ, տ'ասեմ։ Մարդ մի անգամ պիտ մեռնի։

Այսպես ուրեմն, այսօրվա լեզվի պիտի գնամ, պիտի գնայի կապակցությունների մեջ «պիտի» բառը մի քարացած բայական ձև է, ճիշտ ինչպես գուցե բառը, որ հին լեզվի «գոմ» բայի ստորադասական եղանակի եզակի 3-րդ դեմքն է։ Եվ ինչպես գուցե գնամ կապակցության մեջ գուցե բառով «գնամ» ըղձականը ստանում է կարիլիական նշանակություն, բայց ձևով մնում է ըղձական, նույնպես պիտի բառը նույն ըղձականին տալիս է անհրաժեշտության կամ հարկադրական նշանակություն, բայց գնամ բայն իր ձևով մնում է ըղձական (տե՛ս § 250)։

262. Ներկայի բնի ժամանակներ։— Ինչպես գրաբարում, նույնպես և աշխարհաբարում խոնարհման ձևերը կազմվում են երկու բնի վրա՝ ներկայի և կատարյալի բներ։ Ներկայի բնին պատկանում են՝ ըղձական ներկա ու անցյալ և արգելական, իսկ կատարյալի բնին՝ Սահմ. անցյալ կատարյալ և հրամայական։ Այս բոլոր ձևերը ծագում են գրաբարից հնչյունական որոշ փոփոխություններով։

1) Ըղձական ներկան, ինչպես տեսանք, ծագում է գրաբարի սահմանական ներկա ժամանակից։

Գրաբար		Աշխարհաբար	
Սահմ. ներկա		Ըղձ. ներկա	
Գնամ	Գրեմ	Գնամ	Գրեմ
Գնաս	Գրես	Գնաս	Գրես
Գնայ	Գրէ = գրեյ	Գնա	Գրե, գրի
Գնամք	Գրեմք	Գնանք	Գրենք
Գնայք	Գրէք = գրեյք	Գնաք	Գրեք
Գնան	Գրեն	Գնան	Գրեն

Հնչյունական փոփոխությունների մասին տե՛ս §§ 46, 51. 1, 54։

2) Ըղձական անցյալը ծագում է գրաբարի Սահմ. անկատար անցյալից։

Գրաբար			Աշխարհաբար	
Անկ. անցյալ			Ըղձ. անցյալ	
Հին ձև		Միջին ձև		
Գնայի	Գրեի	Գրէի	Գնայի	Գրեի
Գնայիր	Գրեիր	Գրէիր	Գնայիր	Գրեիր
Գնայր	Գրէր = գրեյր	Գրէր	Գնար	Գրեր
Գնայաք	Գրեաք	Գրէաք	Գնայինք	Գրեինք
Գնայիք	Գրեիք	Գրէիք	Գնայիք	Գրեիք
Գնային	Գրեին	Գրէին	Գնային	Գրեին

Հնչյունական փոփոխությունների մասին տե՛ս §§ 44, 51. 1, 54, 55։

3) Արգելականը *ծագում է գրաբարի արգելականից։*

Գրաբար		Աշխարհաբար	
Մի՛ գնար	Մի՛ գրեր	Մի՛ գնար	Մի՛ գրեր
Մի՛ գնայք	Մի՛ գրէք	Մի՛ գնաք	Մի՛ գրեք
		Մի՛ գնալ	Մի՛ գրել
		Մի՛ք գնալ	Մի՛ք գրել

Հնչյունների փոփոխությունների մասին տե՛ս §§ 47, 54։

Հոգնակի 2-րդ դեմքի «ԱՅՔ» վերջը դառնում է «ԱՔ» և էՔ=եՅՔ դառնում է եՔ։ Աշխարհաբարի 1-ին ձևերը (մի՛ գնար, մի՛ գրեր) արևմտյան բարբառինն են, բայց մտել են նաև արևելյան գրական լեզվի մեջ. այժմ, սակայն, հետզհետե ծավալվում է արևելյան բարբառների հատուկ ձևը, որի մեջ վերջի «Ր» հնչյունը դարձել է «լ», ինչպես և միջին հայերենում է՝ «Մի՛ գնալ», իսկ «ե» բնի այս «ե» ձայնավորը դարձել է «ի», ինչպես՝ «Մի՛ գրիլ». բացի այդ, հոգնակի «Ք» վերջավորությունը, բարբառային ձևով, դրվում է «Մի՛» արգելականի վրա, և վերջի «լ» հնչյունը այստեղ ևս, ինչպես և բացասական ենթադրականի մեջ, հաճախ դուրս է ընկնում, օրինակ՝ մի՛ գնա, մի՛ք գնա. մի՛ գրի, մի՛ք գրի (ինչպես և չեմ գնա, չես գնա, չի գնա և այլն)։

Մի նոր երևույթ է դրական հրամայականի վրա «մի՛» դնելով կազմել արգելականը, օրինակ՝ կարդացե՛ք—մի՛ կարդացեք, մոտեցի՛ր—մի՛ մոտեցիր, ասա՛—մի՛ ասա։ Այս ձևերը ծագում են կարդա՛—մի՛ կարդա, գրի՛ր—մի՛ գրիր *ձևերի նմանությամբ։ Այս վերջիններդ, որ ծագում են հին* մի՛ կարդար > մի՛ կարդա, մի՛ գրեր > մի՛ գրիր *ձևերից, հնչյունորեն նույն լինելով դրական հրամայականի* կարդա՛, գրի՛ր *ձևերի հետ, ըմբռնվել են իբրև դրականի վրա «մի՛» դրված ձևեր, և դրանց անալոգիայով առաջ են եկել նաև «մի՛ մոտեցիր», «մի՛ կարդա-*

ցեք» և նույնիսկ «մի՛ տես», «մի՛ բեր»։ Այս փոփոխությունը, սակայն, գրական լեզվի մեջ ընդունված չէ։

268. Կատարյալի բնի ժամանակները։— Գրաբարում կատարյալի բունը երկու տեսակ է՝ 1) պարզ կամ արմատական բուն, որ բայի արմատն է, որի վրա ուղղակի ավելանում են դեմքի վերջավորությունները, օրինակ՝ տես-ի, տես-եր, տես, տես-աք և այլն։

2) Ածանցական բուն, որ կազմվում է «ց»-ով, Ա ձևով՝ ամ, աճամ վերջացած բայերը՝ գնամ—գնաց, զարմանամ—զարմաց. գրաբար՝ ԵԱՑ, աշխարհաբար՝ ԵՑ ձևով՝ եմ, իմ, եճամ վերջացած բայերը՝ ատեմ—ատեաց, աշխ.՝ ատեց, հայիմ—հայեաց, մերձենամ—մերձեաց։ Կատարյալի այս երկու տեսակի բունն էլ մնում են աշխարհաբարում. բացի այդ՝ արևելյան աշխարհաբարում պատճառական բայերի համար առաջ է եկել մի նոր ածանցական բուն «ացնել», «եցնել», «ցնել» վերջերի համապատասխան՝ ԱՑՐ, ԵՑՐ, ՑՐ ձևերով։

Կատարյալի վերջավորություններն աշխարհաբարում, ինչպես գրաբարում, երկու տեսակ են՝ Ի և Ա ձայնավորներով։

1. «Ի» ՁԱՅՆԱՎՈՐՈՎ ԿԱՏԱՐՅԱԼ

Գրաբար		Աշխարհաբար	
Անցյալ կատարյալ			
Գնացի	Գրեցի	Գնացի	Գրեցի
Գնացեր	Գրեցեր	Գնացիր	Գրեցիր
Գնաց	Գրեաց	Գնաց	Գրեց
Գնացաք	Գրեցաք	Գնացինք	Գրեցինք
Գնացէք, գնացիք	Գրեցէք, գրեցիք	Գնացիք	Գրեցիք
Գնացին	Գրեցին	Գնացին	Գրեցին
Հրամայական			
Գնա՛	Գրեա՛	Գնա՛	Գրե՛, Գրի՛ Գրի՛ր
Գնացե՛ք	Գրեցէ՛ք	Գնացե՛ք	Գրեցե՛ք

Հնչյունական փոփոխությունների մասին տե՛ս §§ 44, 51. 6, 54։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել, որ «եմ» տիպի բայերի եզակի հրամայականը՝ «գրեա՛» հնչյունների փոփոխությամբ դառնում է «գրե՛», ապա «գրի՛» և վերջն ուրիշ բայերի նմանությամբ ավելանում է «ր»՝ «գրի՛ր», որ և ընդունված է գրական լեզվի մեջ։ Այսպես և պատճառական բայերի հրամայականն է կազմվել. օրինակ՝ հին մեծացո՛ հրամայականը դարձել է մեծացո՛ւ, ապա ավելացել է Ր՝ մեծացո՛ւր, ինչպես է՛ ապահայոն բարբառում, իսկ արևելյան բարբառում հետևա-

ռաջութ֊յամբ՝ մեծացրո՛ւ: Հետագայում այս նոր հրամայականը դարձել է կատարյալի և հոգնակի հրամայականի բուն և կազմվել են՝ մեծացրե՛ք, մեծացրի, մեծացրիր, մեծացրեց. մեծացրինք, մեծացրիք, մեծացրին: Եզակի 3-րդ դեմքը՝ բնի վրա ունի «ծ3» վերջավորությունը, որ «եմ» կազմութ֊յան բայերի եզ. 3-րդ դեմքի վերջն է՝ «զր–եց» և ըմբռնվելով իբրև վերջավորություն՝ ավելանում է պատճառական և մի քանի ուրիշ բայերի 3-րդ դեմքի վրա: Այս 3-րդ դեմքի անալոգիայով կազմվում են նորաձևութ֊յամբ և մյուս դեմքերը՝ զարմացրեցի, զարմացրեցիր, զարմացրինք և այլն, որոնք գրական լեզվի մեջ ընդունված չեն: Նույն ձևով հարցնել բայն ունի՝ հարցրի, հարցրիր, հարցրեց, հարցրինք, հարցրիք, հարցրին. հարցրո՛ւ, հարցրե՛ք. դարձնել՝ դարձրի, դարձրիր, դարձրեց, դարձրինք, դարձրիք, դարձրին. դարձրո՛ւ, դարձրե՛ք. անցնել (անց կացնել) անցրի, անցրիր, անցրեց, անցրո՛ւ, անցրե՛ք և այլն:

Աշխարհաբարում արմատական բնի կատարյալը չկա, և մնում են միայն մի քանի անկանոն բայեր՝ դնել՝ դրի, դրիր, դրեց (դրավ), դրինք, դրիք, դրին. բայց արդեն նաև՝ դրեցի, դրեցիր, դրեց և այլն. հրամայական՝ դի՛ր, դրե՛ք: Տալ՝ տվի, տվիր (տվեց), տվավ, տվինք, տվիք, տվին. կա նաև՝ տվեցի, տվեցիր և այլն: Հրամ. տո՛ւր, տվե՛ք: Անել՝ արի, արիր, արավ, արինք, արիք, արին և արեցի, արեցիր. հրամ. արա՛, արե՛ք: Թողնել՝ թողի, թողիր, թողեց, թողինք, թողիք, թողին. բայց արդեն ավելի՝ թողեցի, թողեցիր, թողեց և այլն. հրամ. թո՛ղ, թողե՛ք: Բերել՝ բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերին, բայց ավելի՝ բերեցի, բերեցիր, բերեց և այլն. հրամ. բե՛ր, բերե՛ք: Լալ՝ լացի, լացիր, լացեց, լացինք, լացիք, լացին. կա նաև՝ լացեցի և այլն. հրամ. լա՛ց, լացե՛ք, բայց գործածվում է ավելի լաց լինել: Բաճալ՝ բացի, բացիր, բացեց, բացինք, բացիք, բացին. բայց ավելի՝ բաց անել. հրամ. բա՛ց, բացե՛ք: Ասել՝ ասացի, ասացիր, ասաց և այլն. բարբառային՝ ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին. ասա՛, ասացե՛ք կամ ասե՛ք. կա նաև՝ ասեցի, ասեցիր, ասեց և այլն:

2. «Ա» ՁԱՅՆԱՎՈՐՈՎ ԿԱՏԱՐՅԱԼ

Անցյալ կատարյալ

Գրաբար	Աշխարհաբար
Հեռացայ	*Հեռացա*
Հեռացար	*Հեռացար*
Հեռացաւ	*Հեռացավ*
Հեռացաք	*Հեռացանք*
Հեռացայք, հեռացարուք	*Հեռացաք*
Հեռացան	*Հեռացան*

Փախեայ	*Փախա*
Փախեար	*Փախար*
Փախեաւ	*Փախավ*
Փախեաք	*Փախանք*
Փախեայք, փախերուք	*Փախաք*
Փախեան	*Փախան*

Հրամայական

Հեռացի՛ր	*Հեռացի՛ր*
Հեռացա՛յք, հեռացարո՛ւք	*Հեռացե՛ք*
Փախի՛ր	*Փախի՛ր*
Փախեա՛յք, փախերո՛ւք	*Փախե՛ք*

Հնչյունական փոփոխությունների մասին տե՛ս §§ 44, 51. 1, 52, 51. 6։

Այսպես խոնարհվում են «անալ», «ենալ», «չել», «նել» վերջացած բայերը՝ ինչպես՝ մոտենալ—մոտեցա, մոտեցար և այլն։ Դրանցից «չել», «նել» վերջածանցները արմատական բնով են խոնարհվում, այսինքն վերջավորություններն ավելանում են բայարմատի վրա. այսպես են՝ փախչել, թռչել, կպչել և այլն. գտնել, մտնել, հասնել և այլն։ Վերջին տիպի բայերը գրաբարում խոնարհվում են «ի» ձայնավորով, օրինակ՝ մտանել—մտի, մտեր, մուտ, մտաք, մտէք կամ մտիք, մտին. մո՛ւտ մտէ՛ք։ Կան և «անել» վերջացած բայեր, որոնք «ա» ձայնավորով են խոնարհվում, օրինակ՝ անկանիլ (ընկնել)—անկայ, անկար, անկաւ և այլն. աշխարհաբար՝ ընկա, ընկար, ընկավ։

Անկանոն ձևով հրամ. եզ. 2-րդ դեմք կամ կատարյալ ունեն հետևյալ բայերը՝ տեսնել, *տե՛ս.* առնել, *ա՛ռ.* ելնել, *է՛լ.* կալնել, *կալա, կա՛լ (վեր կալա, վեր ունել, վեր կալ), այլև՝ կալնեցի, կալնի՛ր.* ուտել, *կերա, կե՛ր.* գալ, *եկա, է՛կ.* տանել, *տարա, տա՛ր.* դառնալ, *դարձա, դարձի՛ր. բարբառային՝ դառա, դառի՛ր (դա՛ռ).* ետքառնալ, *համբարձա, համբարձի՛ր.* բառնալ, *բարձա, բարձի՛ր, այլև բարձել, բարձեցի, բարձի՛ր.* լինել, *եղա, եղի՛ր։*

264. Բաղադրյալ ժամանակներ։— *Հայերենում բայերի պարզ կերպերն (§ 249) արտահայտվում են բայերի պարզ ժամանակներով, որոնք են՝ Ըղձական ներկա և անցյալ (գնամ, գնայի), Սահմ. անցյալ կատարյալ (գնացի), Հրամայական և արգելական (գնա՛, մի՛ գնալ). իսկ կատարվող, կատարված և կատարելի կերպերն արտահայտվում են բաղադրյալ ժամանակներով, որոնք կազմվում են մի դերբայից և «եմ» կամ «լինեմ» բայերի ձևերից. դերբայը ցույց է տալիս կերպը, իսկ բայը՝ ժամանակը, այսպես՝*

1. *Կատարվող կերպի ներկա—գնում եմ, անկատար անցյալ—գրնում էի.*

2. Կատարված կերպի *վաղակատար ներկա*—գնացել եմ, *վաղակատար անցյալ*—գնացել էի, *հարակատար ներկա*—գնացած եմ, *հարակատար անցյալ*—գնացած էի։

3. Կատարելի կերպի *ապառնի*—գնալու եմ, *ապառնի անցյալ*—գնալու էի։

(Բայերի խոնարհման մասին տեսնել՝ Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն», եր. 224—269)։

Բ

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

265. Հոլով և թիվ։— *Գոյականի ձևերը ցույց են տալիս՝*

1) զանազան լրացական հարաբերություններ, որ գոյականը խոսքի մեջ ունի բայի, ածականի կամ ուրիշ գոյականի նկատմամբ իբրև լրացում և 2) գոյականի դաղափարի պատկերացումը իբրև մեկ կամ շատ։ Գոյականի ձևերն առաջին տեսակետով կոչվում են **հոլով** կամ **հոլովական ձև**, *իսկ երկրորդ տեսակետով՝* **գոյականի թիվ**։

Հնդեվրոպական նախալեզվի մեջ, ինչպես ընդունում են, թիվը եղել է երեք՝ եզակի, հոգնակի և երկակի, իսկ հոլովական ձևերի խմբերը եղել են ութ՝ ուղղական (անվանական), հայցական, սեռական, տրական, բացառական, ներգոյական, գործիական և կոչական։ Հոլովական կազմություններին այս կոչումները տրվում են ավանդաբար՝ ոչ թե ըստ ձևի, այլ ըստ նշանակության։ Հոլովական ձևերն ունեցել են բնից տարբերվող առանձին թեքման վերջավորություններ։

Հայոց հին լեզվի մեջ կան՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, գործիական, բացառական և ներգոյական հոլովները։

266. Հոլովական ձևերի փոփոխումը։— *Ինչպես լեզվական բոլոր իրականությունները, նույնպես և հոլովական ձևերը շարունակ փոփոխության ենթակա են. դրա հետևանքն այն է եղել, որ մեր լեզվից դուրս է ընկել երկակի թիվը, և մնացել են միայն եզակին և հոգնակին։ Միջին գրականում և մի քանի բարբառներում, սակայն, դեռ կա մարդու զույգ անդամների կամ ուրիշ զույգ իրերի միավանկ անունների համար երկակի թիվ «ոսի» կամ «վի» ձևով, ինչպես են՝ աչուի, յօնքուի (ընքուի), ոտուի, ձեռվի, դռվի կամ թե հոգնակի «ներ», «նի» մասնիկով՝ աչվներ, աչվընի. ձեռվընի, ոտվընի և այլն։*

Հոլովական ձևերի փոփոխությունը կատարվում է երկու ուղղությամբ. 1) Տարբեր կիրառություն ունեցող երկու կամ ավելի հոլովական ձևերի տեղ անցնում է մի հատ ընդհանուր ձև, կա՛մ այն պատճառով, որ հնչյունական փոփոխությամբ տարբեր հոլովական ձևերը նույնանում են, կա՛մ թե երկու (կամ երեք) ձևերից մեկը ետ է մղվում և

մեռնում է՝ տեղի տալով մյուս մեկ (կամ երկու) ձևին, որ իր վրա է առնում և այդ մեռած ձևի նշանակությունները. դրա հետևանքով երկու (կամ երեք) հոլովական ձևի տեղ մնում է միայն մեկը (կամ երկուսը), բայց ավելի ընդարձակ նշանակությամբ։ 2) Տեղի է ունենում և հակառակ երևույթ, այն է՝ տարբեր կիրառություններ կամ ֆունկցիաներ ունեցող մեկ հոլովական ձևի մոտ առաջ է գալիս մի նոր հոլովական ձև, որ այդ կիրառություններից մեկն իր վրա է առնում, և հին հոլովական ձևը գործածվում է այնուհետև միայն մեկ նշանակությամբ. հետևանքն այն է լինում, որ հին մեկ, բայց ընդարձակ նշանակություն ունեցող հոլովական ձևի տեղ բռնում են երկու հոլովական ձևեր, բայց ավելի նեղ կիրառությամբ։ Հնդեվրոպական լեզուների զարգացման ընթացքում երևում է հոլովական ձևերի այս երկու տեսակի փոփոխությունն ևս։

Հայերենում ևս առաջ են եկել նման փոփոխություններ. իրար հետ նույնացել են՝ 1) ուղղական, հայցական ու կոչական հոլովները և 2) սեռական ու տրական հոլովները, բացի այդ՝ առաջ է եկել մի նոր ներգոյական հոլով։

267. Ուղղականը իբրև կոչական և հայցական։— Գրաբարում բառի շեշտը մեծ մասամբ վերջին վանկի վրա է. նախագրաբարյան շրջանում, սակայն, բառերը շեշտվել են վերջընթեր վանկի վրա։ Շեշտի այս դրության պատճառով բառերի վերջը շեշտի ազդեցությամբ դուրս է ընկել, և հետևանքն այն է եղել, որ եզակի ուղղական, կոչական և հայցական հոլովները, որոնք սկզբնապես տարբեր ձևեր, այսինքն տարբեր վերջավորություններ են ունեցել, մնացել են առանց որևէ վերջավորության ու բնի ձայնավորի և նույնացել են իրար հետ. միևնույն ձևը՝ «քուն», «սիրտ», գործածվում է երեք հոլովի՝ ուղղական, կոչական, հայցական հոլովների նշանակությամբ։ Այս երեք հոլովից, սակայն, գրաբարում միայն կոչականը չունի առանձին գոյություն և զատ հոլով չէ, որովհետև հոգնականում ևս նույն ձևն ունի, ինչ որ ուղղականը. իսկ հայցականը հոգնականում պահել է դեռ իր հատուկ վերջավորությունը՝ «Ս» հնչյունը՝ **սիրտս**, մինչդեռ հոգնակի ուղղականի վերջավորությունն է «Ք» հնչյունը՝ **սիրտք**։

Այսպես, տեսնում ենք, գրաբարի հոլովումը ուղղականի և հայցականի նկատմամբ չունի զուգակշիռ դրություն. եզակիում ուղղականը և հայցականը նույնացել են, իսկ հոգնակիում տարբեր են։ Այսպիսի դրությունը, սակայն, կայուն չի կարող լինել. «ֆունկցիայով տարբեր ձևերի՝ հնչափոխությամբ առաջացած նույնացման հետևանքներից մեկն այն է լինում, որ մարդ այնքան վարժվում է հնչյունական նույնությանը, որ այդ հնչյունական նույնությունն անց է կացնում և այնպիսի դեպքերի վրա, որոնց մեջ հնչափոխությամբ առաջ չէ եկել նույնություն»[9]։

Այսպես՝ մեր հին լեզվի մեջ արդեն, քանի որ եզակի ուղղականն ու

հայցականը հնչափոխությամբ նույնացել են, ձգտում կա դրանց անալոգիայով հոգնակի ուղղականի ու հայցականի տարբերությունն ևս վերացնելու։ Այս հոլովները շփոթվում են իրար հետ. պատահում են ուղղականի «Ք»-ով գործածություններ իբրև հայցական և, ընդհակառակն, հայցականի «Ս»-ով գործածություններ իբրև ուղղական. «զնաւատացեալքս», «ոչ գոյր ընդ նոսա աստուածս օտարս», «եղև հարսանիս» և նմաններ։ Լեզուն ձգտելով հոգնակի ուղղականի և հայցականի մեջ ևս ձևական նույնություն առաջ բերելու, սկզբում դեռ տատանվում է երկու ձևերի մեջ ընտրություն անելու. տարբեր ձևերի նույնացումը հենց սկզբից որոշ ուղղությամբ չի կատարվում, այլ նախ երկու ձևն էլ խառն՝ մեկը մյուսի տեղ գործ են ածվում, ուղղականը՝ հայցականի տեղ, հայցականը՝ ուղղականի տեղ, մինչև որ վերջապես հայցականի ձևը ետ է մղվում և լեզվից դուրս է ձգվում՝ թողնելով միայն հետքեր, ինչպես՝ պաս (հին՝ պահս), երկու, բայց երկուսը, երկուսի (երկսի), արևմտյան բարբառում՝ երկուքի. մի քանի, բայց՝ մի քանիսը, մի քանիսի. ծախս (այլև ծախք), որոնց մեջ հին հայցականի ձևն այլևս իբրև հայցական չի ըմբռնվում և գործածվում է նաև իբրև ուղղական։ Ուղղականի ձևն, ընդհակառակն, հետզհետե գործածվում է իբրև հայցական, մինչև որ վերջապես այդ ձևն իշխող է դառնում։ Հետևանքն այն է լինում, որ հին հայցական հոլովն ըստ ձևի դուրս է ընկնում, և մնում է միայն ուղղական հոլովը, բայց ընդարձակված կիրառությամբ, այն է՝ աշխարհաբարում ուղղականն իր վրա է առել մասամբ նաև հայցականի ֆունկցիան, այնպես որ ուղղականն է՛ ուղղական-կոչական-հայցական։

268. Հոգնակի թվի «եր», «ներ» մասնիկներ։— Հոգնակի ուղղականի և հայցականի այս նույնացման ընթացքում լեզուն առաջ է մղում և հավաքական նշանակությամբ ԵՐ (հին՝ ԵԱՐ) և ՆԵՐ (հին՝ ՆԵԱՐ) մասնիկները, որոնք հին լեզվի սակավաթիվ բառերի մեջ մի ընդհանուր ձև են ուղղականի և հայցականի համար (վաննեար, իշեար, քաղաքնեար, բարձկնեար). ուստի և ավելի հեշտությամբ ընդհանրանում են նոր լեզվի մեջ հոգնակի թիվ կազմելու համար։ Այս մասնիկների առաջ հետզհետե ետ են մղվում ոչ միայն հոգնակի ուղղականի և գործիականի «Ք», հայցականի «Ս», այլև սեռականի, տրականի ու բացառականի «Յ» հնչյունը, այնպես որ նոր լեզվի մեջ հոգնակի թիվը միակերպ բոլոր հոլովների համար կազմվում է միավանկերի վրա ԵՐ ավելանալով, իսկ բազմավանկերի վրա՝ ՆԵՐ, միայն պետք է նկատի ունենալ հետևյալ երկու պայմանը. 1) Մի քանի բառեր հին լեզվի մեջ վերջանում են «ՀՆ», որ նոր լեզվի մեջ դուրս է ընկել. դրանց հոգնակի թվի մեջ այդ «Ն» հնչյունը վերականգնվում է. օրինակ՝ մատ-մատներ, ձեռ-ձեռներ (այս բառերը և սրանց հոգնակին տե՛ս §§ 94. 3, 272. 2)։ 2) Բարդ բազմավանկ բառերը, երբ երկրորդ բաղադրիչ մասը մ/ավանկ է և պահում է իր նշանակությունը, ընդունում են ԵՐ. դասագրքեր, վա-

ձեւափոխեր, անձրեւաջրեր, դասակարգեր։ Բայց երբ երկրորդ մասը բայարմատ է, կամ նոր նշանակությամբ մի բառ է կազմվում, այս դեպքում ավելանում է ՆԵՐ. մարդասերներ, մատենագիրներ, խոտակերներ, մեծասիրտներ, ձեռագիրներ։

Հոգն. ուղղականի «Ք»-ն և «Ց»-ն այժմ մնում են միայն դերանունների և որոշ տիպի բառերի համար, ինչպես՝ խնամոնք, խնամոնց, նրբանք, նրանց, այսպես և «Ի» վերջացած անուններ համար, ինչպես՝ քաղաքացիք, որդիք, բարբառային՝ փեսեք (հին՝ փեսայք), ճամբեք, սովորական «քաղաքացիներ», «որդիներ» ձևի հետ։ Ուրիշ բառերի վերջում, ինչպես՝ աչք, ձեռք, կառք, գիրք, ելք, մուտք և այլն, «Ք»-ն այլևս ոչ մի թվական նշանակություն չունի և դարձել է մի մասնիկ, որ ոչ թե թեքման ձևերին է վերաբերում, այլ բառակազմությանը։

269. Տրականն իբրև հայցական։— Ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումը մի անհարմարություն է առաջ բերում. որովհետև հայերենում որոշ հաստատուն բառադասություն չկա, ուստի խոսքը հաճախ երկդիմի է մնում. «Տիգրանը տեսավ Վարդանը» խոսքի մեջ, օրինակ, չի հասկացվում, թե ո՞րն է ենթական և որը՝ կրող խնդիրը։ Այս երկդիմությունից արևելյան բարբառները նրանով են այժմ ազատ մնում, որ մարդկանց անունների համար, երբ որոշ են, իբրև հայցական գործածում են տրականը՝ «Տիգրանը տեսավ Վարդանին» կամ «Վարդանին տեսավ Տիգրանը», «Վարդանին Տիգրանը տեսավ», «Տիգրանը Վարդանին տեսավ» և այլն։ Հայցականի փոխանակությունը տրականով, անշուշտ, սկսվել է դերանուններից, և գրաբարում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանունների մեջ՝ ղ-մեզ, ղ-քեզ, ղ-ձեզ. սրանց նմանությամբ ասվել են նաև՝ ինձ, սորան, դորան, նորան, միմյանց և այլն. ապա՝ Վարդանին, աշակերտին և այլն։ Բայց մի անգամ որ տրականն սկսել է անցնել հայցականի տեղ, այդ կիրառությունը հետզհետե ծավալվում է, և տրականը հայցականի իմաստով գործածվում է նաև անորոշ անձի անունների և նույնիսկ անշունչ առարկաների անունների համար։ Դա առաջանում է լեզվի բնական ձգտումից, այն է՝ հայցական հոլովի նշանակության գործածությունը միակերպության վերածել ըստ ձևի, և ոչ թե միևնույն բառի համար մի դեպքում ուղղականը գործածել իբրև հայցական, ուրիշ դեպքում՝ տրականը։ Այսպիսով տրականի կիրառությունն ևս ընդարձակվում է, և այս հոլովն ևս ստանում է նաև հայցականի ֆունկցիաների մի մասը։

Այսպես ուրեմն՝ հայցականի հոլովական ձևը լեզվից դուրս է ընկնում, նրա նշանակությունները մասամբ ուղղականին են անցնում, մասամբ՝ տրականին։

270. Սեռական—տրական։—Այս երկու հոլովները գրաբարում գոյական անունների համար, թե՛ եզակի և թե՛ հոգնակի, բոլորովին նույն ձևն ունեն։ Արդարև որոշ թվով ածականների և մի քանի անունների համար կա «ոյ» ձևով սեռական-տրականի հետ և մի երկրորդ

«ում» ձև՝ մերոյ—մերում, ձերոյ—ձերում և այլն. բայց այդ երկու ձևերն ևս գործ են ածվում թե՛ սեռականի և թե՛ տրականի համար, թեպետ առաջինն ավելի իբրև սեռական, իսկ երկրորդն իբրև տրական։ Դերանունների և անորոշ անունների մեջ, սակայն, կան սեռականի և տրականի համար հատուկ ձևեր՝ իմ—ինձ, քո—քեզ, մեր—մեզ, սորա—սմա, ուրումն—ումեմն, ոյր—ում և այլն։ Բայց լեզուն գրաբարի շրջանում արդեն ձգտել է սեռականի և տրականի ձևական տարբերությունը վերացնելու դերանունների մեջ ևս, և հետզհետե շփոթում և տատանում է առաջ եկել նորա և նմա և նման ձևերի կիրառության մեջ. սեռականները գործածվում են նաև իբրև տրական, և ընդհակառակն։

Այս տատանումը նոր լեզվի մեջ լուծվել է հետևյալ ձևով։ Անորոշ անունները և սույն, դույն, նույն բառերը շուտ են եկել անվանական՝ «ի» հոլովման՝ ինչի, ոչ ոքի, նույնի և այլն, որ մի ընդհանուր ձև է սեռական-տրականի համար. ով հարցականի ոյր ձևը մեռել է և մնացել է միայն ում ձևը թե՛ սեռականի և թե՛ տրականի համար. անձնական դերանուններից մնում են թե՛ սեռականի իմ, ֆո. իր (=իւր), մեր, ձեր և թե՛ տրականի ինձ, ֆեզ, մեզ, ձեզ, ձևերը։ Բայց իմ, ֆո, իր, մեր, ձեր մնում են ոչ թե իբրև անձնական դերանունների սեռականներ, այլ միայն իբրև ստացական ածականներ, որոնք միայն իբրև գոյականի վերադիր են գործածվում. և այդ ձևերը մնացել են միայն այն դեպքերում, երբ հին լեզվի մեջ դրանք գոյականներին հոլովով համաձայնող ստացական ածականներ են եղել (հայր իմ, հօր իմոյ, ի հօրէ իմմէ...)։ Յուցականների տրական ձևերը՝ «սմա», «դմա», «նմա», «այսմ», «այդրմ», «այնմ», դուրս են ընկել և պահվել են միայն սորա, դորա, նորա. այժմ ավելի՝ սրա, դրա, նրա (բարբառներում նաև՝ ասոր, ադոր, անոր, հին՝ այսորիկ, այդորիկ, այնորիկ. այսր, այդր, այնր) թե՛ սեռականի և թե՛ տրականի համար, և այսպես արդեն միջին հայերենի մեջ, օրինակ՝ «Յով որ սէր կայ յիր սրտին՝ նայ զիս նորայ (=նմա) կամակ տանին» (Կոստ. Երզնկ.)։ Նույնիսկ հայցական կրող խնդրի նշանակությամբ, օրինակ՝ «Յիմար կոչեն նորա (=զնա. Կոստ. Երզնկ.)։ Արևելյան գրական լեզվի մեջ, սակայն, կան նաև սրան, դրան, նրան ձևերը, որոնք իբրև տրական են գործածվում, մինչդեռ սրա, դրա, նրա ձևերն ունեն միայն այն կիրառությունները, ինչ որ ստացական ածականները՝ իմ, ֆո, իր, մեր, ձեր։

Սրան, դրան, նրան ձևերի վերջի «ն» տառը բացատրվում է իբրև «ն» հոդ (Մառ, Քեր., եր. 140). որովհետև այդ «ն» տառն ինչպես որ ավելանում է որոշված անունների սեռական-տրական ձևի վերջից, երբ այդ ձևն իբրև տրական է գործածվում (սեռական՝ Տիգրանի գիրքը, տրական՝ Տիգրանին տվի), նույնպես և իբրև տրական գործածված սրա, դրա, նրա ցուցականների վերջից, որոնք միշտ որոշ են (նրա գիրքը, բայց նրան տվի)։ Բայց այդ բացատրությունն անընդունելի է. այդ բառերի վերջի «ն» տառը հոդ չէ, քանի որ դա պահվում է և մյուս հո-

լովների մեջ՝ «նրանով, նրանից, նրանք, և «ան» մասը երևան է գալիս նաև ուրիշ դեպքերում՝ օրինակ՝ յայսմանէ, ի սմանէ, ի նմանէ, ինձանից, քեզանից, մեզանից, ձեզանից, ինձանով և այլն։ Հետևաբար պետք է ընդունել, որ **սրան, դրան, նրան** *ձևերի վերջի «ԱՆ» մասը մի անվանական հոլովակերտ է ավելացած հնագույն «սոր», «դոր», «նոր» սեռականների վերջից, ինչպես որ հին «իւր» սեռականի վերջից ավելացել է «եան» և կազմվել* **«իւրեան»** *ձևը որից աշխարհաբարի* **իրեն** *կամ* **իրան**։ *Բայց այդ, ինչպես և ուրիշ բառերի սեռական-տրականի վերջի «ն» տառը հոդ չլինելով հանդերձ՝ այժմ կատարում է արդեն հոդի դեր։ Այսպես օրինակ՝ «աղջկան», «կնկան», «ամուսնան», «օրվան» և նմանների վերջի «ն» տառը, որ հոդ չէ, դուրս է ընկնում ամեն անգամ (աղջկա, կնկա, ամուսնա, օրվա), երբ այդ ձևը գործածվում է ինչպես մի անհոդ տրական, կամ ինչպես մի անհոդ սեռական վերադիր. ասում ենք՝ «Այս աղջկա գիրքը», «մի որևէ աղջկա տալ», և ոչ թե՝ «Այս աղջկան գիրքը», «մի որևէ աղջկան տալ». բայց իբրև մի որոշված տրական՝ «այս աղջկան տվի», «այն աղջկան տեսա». այսինքն վերջի «ն» տառը պահվում է ինչպես մի հոդ։ Նույնպես* **իրան** *ձևից ծագած* **իրա** *ձևն իբրև գոյականի վերադիր է միայն գործածվում (***իրա գիրքը***), իսկ* **իրան***՝ իբրև տրական (***իրան տվի***)։ Նույն կերպ նաև* **սրա—սրան, դրա—դրան, նրա—նրան** *կրկին ձևերից առաջիններն իբրև վերադիր գործածվում են առանց «ն»-ի (***սրա գիրքը, նրա գիրքը***), իսկ* **սրան, դրան, նրան** *ձևերի վերջի «ն» տառը, թեպետ ծագումով հոդ չէ, բայց արդեն իբրև հոդ է ըմբռնվում, ուստի և դրանք են գործածվում իբրև տրական (***նրան տվի***)։*

Այսպես ուրեմն, սեռական և տրական հոլովների ձևական տարբերությունը, որ դեռ կա հին լեզվի մեջ որոշ թվով բառերի համար, աշխարհաբարում բոլորովին վերացել է, և առաջ է եկել մի ընդհանուր հոլով՝ սեռական-տրական, իսկապես մի տրական հոլով, որի կիրառությունն ընդարձակված է սեռականի ֆունկցիայով, այսինքն՝ գործածվում է առանց հոդի նաև իբրև սեռական վերադիր, ինչպես որ մյուս հոլովներն էլ (գործիական, բացառական) անհոդ իբրև վերադիր են գործածվում։ Սեռականի մնացորդները՝ **իմ, իս, մեր, ձեր** *իր մնում են կամ միայն իբրև ստացական ածականներ, որոնք իբրև գոյականի վերադիր են գործածվում, կամ իբրև լրացում դերբայների և մի քանի ածականների (նման, հավասար, արժանի, համանուն, ստորադրյալ, ծանոթ, ազգակից, համախոհ և այլն), որոնք գրաբարում, մասամբ և աշխարհաբարում, առնվում են իբրև գոյական, ուստի և հետները ստացական ածականներ են դրվում, կամ թե չէ աշխարհաբարում* **իմ, իս, իր, մեր, ձեր** *զգացվում են արդեն իբրև տրական հոլով, ինչպես՝* **«Ձեր նման անհոդդողդ մարդը». «Հրամիրեց ինձ իր հավասար նստել»,** *փոխանակ՝ ձեզ նման, իրեն հավասար։*

271. Հոլովների կազմությունը։— *1)* **Ուղղական** *(հայցական, կոչա-*

կան) հոլովն, ինչպես տեսանք (§ 267), կորցրել է իր վերջավորությունը. դա անվան, այսպես ասած, բացասական ձևն է առանց հատուկ վերջավորության (§ 14), կամ մեր արդի լեզվական զգացումով (և ոչ պատմական) մի բուն է, որի վրա ավելանում են մյուս հոլովների վերջավորությունները, ինչպես՝ հաց, հաց-ի, հաց-ից, հաց-ով։ Սեռականի և տրականի, ինչպես և մյուս հոլովների թեքման հիմքը գրաբարում կազմում է այն, որ շեշտն անցնելով մի վանկ ետև՝ վերականգնում է բառի բնի ձայնավորը, որ ուղղականում վերջավորության հետ միասին դուրս է ընկած, և որի վրա ավելանում են վերջավորությունները։ Այսպես՝

2) Սեռական և տրական հոլովները գրաբարի եզակիում ունին Ի, ՈՒ, ՈՅ, ԱՅ վերջավորությունները. օրինակ՝ սրտի, զարդու, մարդոյ, Տդատայ. դրանցից Ի, ՈՒ, Ո, Ա բնի ձայնավորներն են, որ ուղղականում և հայցականում դուրս են ընկել, իսկ մյուս հոլովների մեջ վերականգնվում են և «Յ» վերջավորության հետ ըմբռնվում են իբրև հոլովակերտ վերջավորություններ. Ի, ՈՒ բունն ունեցող անունների սեռականի և տրականի վերջավորության «Յ» հնչյունը դուրս է ընկել և իբրև հոլովակերտ ըմբռնվում են հենց բնի Ի, ՈՒ ձայնավորները։ Ուրեմն դարձյալ մի բազմազան դրություն կա սեռական-տրականի կազմության համար։ Վրան ավելացնելով նաև դերանունների և անորոշ անունների սեռականի և տրականի առանձնահատուկ կազմությունները,

ինչպես և հոգն. սեռականի և բացառականի «Ց»-ով կազմությունը (սրտի-ց, զարդու-ց, մարդո-ց, աշխարհա-ց), տեսնում ենք այս հոլովների կազմության մի բարդ դրություն։ Բացի այդ՝ կան նաև Ր, Ղ, Ն բունն ունեցող անունների առանձին կազմությունները, դուստր, դրստեր, դստերց. աստղ, աստեղ, աստեղց. մեծութիւն, մեծութեան, մեծութեանց. դուռն, դրան, դրանց և այլն, ինչպես և հայր, հօր, հարց, կին, կնոջ, կանանց և այլն. այլև անունների և դերանունների սեռականի ու տրականի առանձին ձևերը։

3) Գործիական հոլովի «Վ», «Ի» վերջավորությունները, որ հնդեվրոպական ծագում ունին, գրաբարում ավելանալով անունների բներին՝ կազմում են մարդով, ամաի, իժիի, զարդուի—զարդու (վերջի Ի-ն ՈՒ-ից հետո դուրս է ընկնում)։ Սակայն, որովհետև լեզվի մեջ չկան այլևս մարդո, ամա, իժի, զարդու բներ, ուստի գրաբարում արդեն իբրև գործիական հոլովի վերջավորություններ ըմբռնվել են ՈՎ, ԱԻ, ԻԻ ՈՒ, այսինքն՝ բնի Ո, Ա, Ի, ձայնավորները գործիականի Վ, Ի, վերջավորության հետ և հենց բնի ՈՒ ձայնավորը, որոնք ավելանում են իբրև բուն ըմբռնված ուղղականի վրա։ Այսպիսով գրաբարում առաջ են եկել գործիականի չորս տեսակ վերջավորություն ձայնավոր հոլովումների համար՝ ով, աւ, ի, ու։ Դրանց վրա պետք է ավելացնել և այն, որ Ր, Ղ, Ն բաղաձայններից մեկն իբրև բուն ունեցող անունների գործիականը կազմվում է սեռականի վրա Բ բաղաձայն ավելանալով՝ դստեր-բ, աս-

տեղը, մեծութեամբ, որով, ուրեմն, գրաբարի գործիականը կազմվում է բազմազան կերպով։ Բացի այդ՝ դերանունների և անորոշ անունների գործիականներն ունին ինքնահատուկ առանձնություններ։ Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականի վրա «Ք» ավելանալով՝ մարդովք, ամաւք (որ հետագայում դարձել է ամօք), իժիւք, զարդուք, դստերբք, աստեղբք, մեծութեամբք։

4) Միակերպ կազմություն չկա գրաբարում նաև բացառականի համար, որ սկզբից ստանում է միշտ մի նախդիր, ընդհանրապես «Ի» նախադիրը (ձայնավորից առաջ Յ)։ Այս հոլովը հոգնակիում միշտ, իսկ եզակիում երբ սեռական-տրականն ունի ՈՅ, ԱՅ վերջավորությունները, նման է սեռական-տրականին. իսկ ուրիշ բառերի համար եզակին ունի «է» վերջավորությունը. օրինակ՝ ի սրտէ, յաշխարէ, ի մարդոյ և այլն։

5) Ներգոյական հոլովի միայն մնացորդներ կան գրաբարում սակավաթիվ բառերի համար ՈՋ վերջավորությամբ՝ յայգոջ, ի տեղոջ. բայց այս վերջավորությունն իսկապես նաև սեռական-տրականինն է (կնոջ, միոջ և այլն), և ներգոյականի նշանակությունը պահվում է «Ի» նախդրով, որ ուրիշ անոնների համար դրվում է հայցական կամ տրական հոլովների վրա և կազմում ներգոյական (ի տան, ի գործ, ի տունս), այնպես որ այս հոլովները, հայցական և տրական, ունին նաև ներգոյականի կիրառություն։ Բայց և այնպես ներգոյականի զգացումը գրաբարում թերևս մեռած չէ եղել և ոչ միայն ՈՋ վերջավորության, այլ ավելի ևս «ի փառան իւրում», «յաթոռ իւրում» և նման կապակցությունների համար, որոնց մեջ գոյականը դրվում է հայցական, իսկ ածականը՝ տրական, և միասին կազմում են մի խառնուրդ հոլով՝ ներգոյականի նշանակությամբ։

Այս վերջին կիրառությունը, սակայն, ինչպես «ոջ» վերջավորությունը ներգոյականի համար, շուտով մեռնում է, դրա հետ նաև ներգոյական հոլովը, որի ֆունկցիան կատարում են նոր լեզվի արևմտյան բարբառների մեջ՝ ուղղական-հայցական և տրական հոլովները. իսկ արևելյան բարբառների մեջ, որոնցից և գրական լեզվի մեջ, բացի ուղղական-հայցական և տրական հոլովների այդ կիրառությունից, առաջ է եկել նաև մի նոր ձև ներգոյականի համար, «ՈՒՄ» վերջավորությամբ։ Դա ծագած է գրաբարի որոշ թվով ածականների տրականի «ում» վերջավորությունից, որ «Ի» նախդրով գործածվում է և իբրև ներգոյական. օրինակ՝ «ի տան իւրՈՒՄ», (Ի բարձրաւանդակՈՒՄն կուռ կալով ի տեղւոջ» (Մ. Խոր.)։

Այսպես տեսնում ենք, գրաբարում չկա հոլովական ձևերի պարզ դրություն. հոլովներից յուրաքանչյուրի համար, լինի սեռ.-տրական, բացառական, գործիական թե ներգոյական, հնչափոխության հետեվանքով առաջ են եկել տարբեր-տարբեր հնչյունական ձևեր՝ բանի, զարդու, մարդՈՅ, ՏրդատԱՅ և այլն, որոնց մեկը միայն բավական կրիներ։ «Ամեն լեզու, սակայն, շարունակ ձգտում է բոլոր անպետք աննշանությունները դուրս ձգելու, ֆունկցիայով նույնի համար նույն հնչ-

չյունական արտահայտությունն էլ ստեղծելու»[10]։ *Այս ձգտումը մի հակազդեցություն է հնչափոխության դեմ, որով միևնույն հոլովի համար առաջ են գալիս մի քանի տարբեր հնչյունական ձևեր։ Լեզուն նոր անալոգիական կապմություններով աշխատում է վերացնել այդ անպետք և անօգուտ հնչյունական տարբերությունները և վերականգնել մի նոր ձևական միություն։ «Այս նույնացման հետևանքն այն է լինում սովորաբար, որ մի հոլովական խումբ բառեր անցնում են ուրիշ հոլովական խմբի մեջ, այն էլ բոլորը կամ նրանց մի մասը, կամ բոլոր ձևերի մեջ կամ մի քանիսի մեջ»*[10]։ *Հոլովումների այս շփոթությունն ու փոխանցումն արդեն գրաբարում տեսնում ենք։ Կան բառեր, որոնք երկու և ավելի ձևով են հոլովվում, ինչպես՝ զարդ, զարդու կամ զարդի, զարդիւ. լեզու, լեզուի կամ լեզուոյ։ Կան բառեր ևս որոնց եզակին մի հոլովման ձևով է կազմվում, հոգնակին՝ մի ուրիշ, ինչպես՝ զօր, զօրու, բայց՝ զօրք, զօրաց, զօրաւք։*

Այս փոխանցման հետևանքն այն է լինում, որ հայերենի զարգացման ընթացքում տարբեր բնի ձևերը ձգտում են մի տիպի վերածվելու։ Այսպես՝ գրաբարում արդեն «Ա» բունն ունեցող հասարակ անուններն շուռ են եկել «Ի» հոլովման, օրինակ՝ **աշխարհ**, *սեռ.-տրակ.* **աշխարհի** *և ոչ* **«աշխարհայ»**, *մինչդեռ գործիականն է* **աշխարհաւ** *և հոգն. տրականը՝* **աշխարհաց**: *Այս զարգացումը վերջապես հանգում է այն դրության, որ արդի լեզվի մեջ անունների ամենամեծ մասի՝ ա)* **սեռական–տրականն** *ունի եզակիում «Ի» վերջավորությունը, որոշ բառեր միայն «ՈՒ» և ավելի ևս սակավաթիվ բառեր՝ «ԱՆ», «ՎԱՆ» (ՎԱ), «ՈՋ» և իբրև մնացորդ գրաբարի՝ «Ա» (Վանա լիճ, Սևանա լիճ)։ Հոգնակին միայն «Ի» վերջավորությամբ է կազմվում, բացի անեզական «ԱՆՔ», «ՈՆՔ», «ԵՆՔ» վերջավորություններից, որոնք ունին «Ց»-ով՝ մերոնք—մերոնց, Տիգրաններք—Տիգրաննենց. բ)* **Գործիականն** *ունի միշտ «ՈՎ» վերջավորությունը, որ հին լեզվի «Ո» բնինն է (ծառով) և ընդհանրացել է բոլոր բառերի համար. դ)* **Բացառականն** *ունի «ԻՑ», որ «Ի» բնի հոգնակի սեռական-տրական-բացառականի վերջավորությունն է՝ ընդհանրացած բոլոր անունների թե՛ եզակի և թե՛ հոգնակի բացառականի համար. սեռական-տրական «ՈՒ» վերջավորությունն ունեցող բառերը միայն, սեռականի ՈՒ ձայնավորի առնմանումով, ունին եզակի բացառական «ՈՒՑ» ձևով (այգու—այգուց). իսկ դ)* **Ներգոյականը**, *ինչպես տեսանք, ունի «ՈՒՄ» վերջավորությունը։ Այսպես ուրեմն, մեր նոր լեզվի մեջ հոլովումը գրաբարի հոլովման համեմատությամբ՝ շատ ավելի հաստատուն, պարզ ու միակերպ բնավորություն ունի, հետևյալ ընդհանուր հարացույցով։*

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*Քաղաք*	*Քաղաքներ*
Տր.	*Քաղաք-ի*	*Քաղաքներ-ի*

Բաց.	Քաղաք-ից	Քաղաքներ-ից
Գործ.	Քաղաք-ով	Քաղաքներ-ով
Ներգ.	Քաղաք-ում	Քաղաքներ-ում

272. Ընդումներ:— *Այժմ սովորականն է հոլովման այս ձևը, որից շեղվում են միայն սակավաթիվ բառեր.*

1) Ինչպես վերևում ասվեց, որոշ թվով բառերի եզ. սեռ.-տրականը կազմվում է ՈՒ, իսկ եզակի բացառականը ՈՒՅ վերջավորությամբ, օրինակ՝ մարդու, գնալու, ձիու. մարդուց, գնալուց, ձիուց։ Սեռական-տրականի այս ձևը ծագում է մեծ մասամբ գրաբարի «ՈՅ» հոլովումից ոյ>ու ձայնաշրջությամբ (տե՛ս 51. 2), որ երևում է դխավորապես «ի» վերջացած անունների (այգի, այգւոյ>այգու, այգուց), անորոշ դերբայի (գնալ, գնալոյ>գնալու, գնալուց) և մի քանի ուրիշ բառերի մեջ, ինչպես՝ մարդոյ>մարդու, մարդուց. իրարու, իրարուց. մեկմեկու, մեկմեկուց։ Դրանց գործիականը և նեղգոյականը լինում է միակերպ ով, ում ձևով։ Բայց կան «ի» վերջացած բառեր, որոնք «ի» հոլովման ձևով են հոլովվում՝ «սիրելիի» և ոչ «սիրելու», որ «սիրել» բառի ձևն է։ Երբեմն նաև՝ հայելիի, զվարճալիի, Անիի, այլև օտարազգի անունները՝ Գարիբալդիի, որոնք հոլովվում են նաև՝ հայելու, Անու, Գարիբալդու։

2) Գրաբարի «ն» բունն ունեցող անունները կորցնելով բնի այս բաղաձայնը՝ մասամբ արդեն շուռ են եկել «ի» հոլովման, ինչպես՝ ոտն, մատն, սերմն, մասն և այլն դարձել են՝ ոտ, մատ, սերմ, մաս. ոտի, մատի, սերմի, մասի. ձեռի, կաթի, ակի, արեգակի և այլն։ Դրանց մի քանիսի հոգնակիում վերականգնվում է բնի «ն» բաղաձայնը՝ եզներ, բեռներ, ծնկներ, մատներ, ձկներ, լեռներ, թոռներ, ոտներ, ձեռներ (այլև ոտք—ոտքի, ոտքեր. ձեռք—ձեռքի, ձեռքեր), հարսներ, գառներ, մկներ, դռներ, ակներ և այլն, բայց՝ անձեր, սերմեր, մասեր։ Այս բառերը մասամբ սեռական-տրականն ունին հին «ԱՆ» կազմությամբ, ինչպես՝ գառան, դռան, եզան, մկան, նռան։ Այսպես նաև ՈՒՄ (հին՝ ումն) ածանցով կազմվածները՝ ուսում—ուսման, խավարում—խավարման և այլն։ Ոչ միայն հոգնակիում, այլև եզակի մյուս հոլովների մեջ սրանց մի քանիսի «ն» բունը վերականգնվում է, ինչպես՝ նուռ, նռան, նռնով, նռներ. բուռ, բռան, բռնով. դուռ, դռան, դռնով, դռնից և ուրիշներ (տե՛ս §§ 94. 3, 268)։ Իբրև սեռական-տրականի վերջավորություն «ԱՆ» վերջը երևում է և ուրիշ բառերի մեջ, ինչպես և գրաբարում, օրինակ՝ աղչիկ, աղչկան (աշխ. նաև՝ աղչկա). կնիկ, կնկան (կրնկա). աշուն, աշնան. գարուն, գարնան, այլև գրաբարում՝ մանուկ, մանկան. հանգիստ, հանգստեան>հանգստյան (տե՛ս հայոորդ 3-րդ կետը, ինչպես և վերևում § 270)։

3) Սեռ.-տրականի ՎԱՆ>ՎԱ վերջավորությունը, որ ունեն ժամանակի անունները՝ օր, օրվան (օրվա), օրվանից, ծագած է հին լեզ-

վի «ԵԱՆ» վերջավորությունից, որ երևում է որոշ թվով բառերի մեջ, ինչպես՝ ամիս, ամսեան. ժամանակ, ժամանակեան. շաբաթ, շաբաթեան. վաղիւ, վաղուեան, ի վաղուենէ. դար, դարեան. երեկորեան կամ երեկորեայ. Սրանք գործածվում են սովորաբար իբրև գոյականի վերադիր, ուրեմն ածականաբար, բայց երբեմն («ամիս» բառը միշտ) ունին նաև սեռ.-տրականի և ներգոյականի նշանակությամբ կիրառություններ: Սրանց «եան» վերջավորությունը՝ «ւան», ասպ՝ «վան» ձայնաշրջությամբ, անցել է ուրիշ ժամանակի անունների. ամենից առաջ՝ առաւօտեան, դիշերեան, երեկեան և այլ բառերին, որոնք լինում են՝ առավոտվան, առավոտվա և այլն:

Նման ձայնաշրջություն տեսնում ենք նաև գրաբարի ԵԱՆ(Ք) հոգնակի կազմող ածանցի համար, որ բարբառների մեջ դառնում է ՎԱՆ(Ք), ինչպես՝ իշեան լինում է ոչ միայն իշան, այլև իշւանք, իշվանք, նույնպես՝ կտորվանք, տեղվանք և այլն: Այսպես և «Ի» վերջացած հատուկ անուններն ունին բարբառային ձևով ւա, վա. օրինակ՝ Գառնի — Գառնւա, Գառնվա. Անի, Անվա. Կարբի, Կարբվա. Քաղսի, Քաղսվա և այլն. այլև գրաբարում՝ Անի, Անւոյ, Անվոյ. եկեղեցի, եկեղեցւոյ, եկեղեցվոյ: Այսպես և «ուտիք», «ուտեաց», բարբառային ձևով՝ «ուտւաց», «ուտվաց». կաշի, սեռ.-տրական՝ կաշու, բայց և կաշվի, ածական՝ կաշվե և այլն: Այս եան>ւան, վան ձայնաշրջությունն անշուշտ որևէ բարբառում ծագած լինելով՝ տարածվել է և կիրառվել նաև ուրիշ անունների վրա: Այժմ այդ ձևով հոլովվող բառերն անցնում են «Ի» հոլովման, բայց մի քանի բառի համար գեռ սովորական է այդ ձևը՝ օրվա, տարվա, ցերեկվա, դիշերվա, վաղվա, էգուցվա,-այսպես և գրաբարից «մահվան»:

4) Հին լեզվից նորին անցած մի ձև է նաև սեռ.-տրակ. «ՈՑ» վերջավորությունը, օրինակ՝ կին, կնոջ. որի նման նաև՝ քույր, քրոջ. տեր, տիրոջ. տիկին, տիկնոջ, հորաքույր, հորաքրոջ. մորաքույր, մորաքրոջ: Հնացած են այս ձևերը՝ ընկերոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ, սովորականն է՝ ընկերի, աների, տալի, սկեսրի:

5) Հին լեզվից է անցել նորին նաև մի քանի բառերի սեռական-տրականի կազմությունն առանց վերջավորության, միայն միջի ձայնավորի փոփոխությամբ, այսպես՝ հայր, հոր. մայր, մոր. եղբայր, եղբոր, այլև բարդերը՝ հորեղբոր, նախահոր, նախամոր: Բարբառների մեջ նաև՝ կեսուր, կեսուր. աներ, անոր. քույր, քվոր. ընկեր, ընկոր. տեգր, տեգոր: Այս կարգին պատկանում են նաև տուն, տան. շուն, շան. այուն, այան. ձյուն, ձյան (ժողովրդական ձևով՝ ձուն, ձան. սուն, սան). այլև գրաբարից գրական փոխառությամբ՝ արյուն, արյան. անուն, անվան, և «ՈՒԹՅՈՒՆ» ածանցով կազմվածները՝ մեծություն, մեծության, գործիական՝ մեծությամբ:

6) Գրաբարից գրական փոխառությամբ, կամ բարբառների մնացորդներ են՝ «Ի» վերջացած անունների հոգնակին «Ք» և «Ց» տառերով՝ որդիք, որդոց. մանավանդ «ՑԻ» մասնիկով (§ 235), օրինակ՝ երեվանցիք, երևանցոց. վանեցիք, վանեցոց, այլև՝ Սևանա (լիճ), Վանա (ծով), կայսեր, խաթեր (համար), սիրո, փոխանակ՝ սիրու. այսպես

նաև՝ իբրև ածականներ մնում են՝ հայոց, ռուսաց, պարսից, հունաց. վրաց, կասպից ծով. հռոմայեցոց, Արշակունյաց, Բագրատունյաց և այլն։

7) Միայն հոգնակի ունին սեռ.-տրականի «ց» հնչյունով ենք, անք, ոնք, ոինք ածանցներով կազմված անհղականները՝ ստացական նշանակությամբ (տե՛ս վերջածանցների մեջ § 166)։ Մյուս հոլովների վերջավորություններն ավելանում են տրականի վրա, օրինակ՝ խաչոյենք, խաչոյենց, խաչոյենցից, խաչոյենցով. մերոնք, մերոնց, մերոնցից, մերոնցով, մերոնցում և այլն։ Այս միևնույն ձևով հոլովվում է և մարդ, կին բառերի հոգնակին, որոնց ուղղականն անկանոն է՝ մարդիկ, մարդկանց, մարդկանցից, մարդկանցով. կանայք, կանանց, կանանցից, կանանցով։ Այսպես նաև որ և ոմն բառերի հոգնակիները՝ որոնք, որոնց, որոնցից. ոմանք, ոմանց, ոմանցից. եզակիները՝ «ի» հոլովման ձևով՝ որի, որից, որով. ոմնի, ոմնից։ Այսպես նաև փոխադարձ դերանունները՝ միմյանց, միմյանցից, միմյանցով։ Այս ձևով հոգնակի ունին նաև սա, դա, նա, իմն դերանունները, որոնց հոգնակին լինում է՝ սրանք, դրանք, նրանք, իրանք (իրենք). սրանց, դրանց, նրանց, իրանց (իրենց). սրանցից, դրանցից, նրանցից, իրանցից. սրանցով, դրանցով և այլն. սրանցում, նրանցում և այլն։

Բարբառային ձևով պատահում են նաև՝ փեսա, հոգն. փեսեք, փեսեքան, փեսեքանցից. ճամբա, ճամբեք, ճամբեքանց. աղջիկ, աղջկերք, աղջկերանց, կամ աղջկանց. երեխա, երեխեք, երեխերք, երեխեքոնց, երեխեքանց. տղա, տղեք կամ տղերք, տղերանց և այլն։

8) Դերանուններից ստացական ածականներ են՝ իմ, քո, մեր, ձեր, իր, որոնց համապատասխան տրականները հին ձևով են՝ ինձ, քեզ, մեզ, ձեզ. ինչպես և հարցական «ով» դերանվան սեռ.-տրականն է «ումի»։ Մյուս հոլովների վերջավորությունները՝ նիՅ, նով, նոիմ (անիՅ, անով, անոիմ) ավելանում են տրականների վրա. այսպես՝ ինձնից, քեզնից, մեզնից, ձեզնից, ումնից. ինձնով, քեզնով, մեզնով, ձեզնով, ումնով. մեզնում, ձեզնում. հնացած են՝ ինձանով, քեզանով, ինձանից, քեզանից, մեզանում, ձեզանում։

278. Ձայնափոխություն։— Մինչդեռ գրաբարում ճշտությամբ պահվում է հոլովման ժամանակ նույն ձայնափոխությունը, ինչ որ ընդհանրապես բառակազմության ժամանակ, նոր լեզվի մեջ հոլովման ժամանակ ձայնափոխությունն ևս փոփոխության է ենթարկվել։

1) Յև (հին՝ եա, եայ), ոիՅ հին՝ ոյ) երկբարբառները գրաբարից փոխառություն լինելով՝ մնում են անփոփոխ՝ սենյակ—սենյակի, վայրկյան—վայրկյանի, պաշտոնյա—պաշտոնյայի, բույս—բույսի, բույսեր, կույր—կույրեր և այլն։ Սակավաթիվ բառերի գործածականի մեջ միայն «ույ» դառնում է «ու», օրինակ՝ լույս, լուսով. հույս, հուսով. փույթ, փութով (փոխառություն է գրաբարից)։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ ժողովրդական լեզվի մեջ, հակառակ գրականի, «ույ» երկբար-

բառին ուղղական հոլովի մեջ փոխանակում է «ու», որ և հոլովելիս կա՛մ պահվում է, ինչպես՝ լուս, լուսի, կա՛մ դուրս է ընկնում, ինչպես՝ սառուց, սառցի։

2) Հին «է» ձայնավորի փոփոխությունն ևս հոլովման ժամանակ մեռած է. մի քանի բառերի մեջ միայն դեռ պահվում է իբրև հին լեզվի մնացորդ է>ե հնչյունի «ի» ձայնավորի փոխվելը, այսպես են՝ սեր, սիրո կամ սիրու, սիրով, սիրուց, բայց նաև՝ սերի, սերում. պարտեզ, պարտիզի, բայց այժմ արդեն՝ պարտեզի. էշ, իշի կամ իշու, բայց այժմ՝ էշի. տեր, տիրոջ։ Հոգնակիում միշտ անփոփոխ՝ էշեր, տերեր, պարտեզներ։

Նոր լեզվի մեջ դեռ կենդանի է փակ վանկերի մեջ ի, ու ձայնավորների փոփոխությունը, այն է՝ սրանք կամ դուրս են ընկնում, կամ դառնում են ը. օրինակ՝ ջուր—ջրի, թուղթ—թղթի. գիրք—գրքի, թիվ—թվի, հաշիվ—հաշվի։ Հոգնակիում, սակայն, միավանկ բառերի մեջ է միայն լինում այս փոփոխությունը՝ ջրեր, թղթեր, գրքեր, թվեր, իսկ բազմավանկների մեջ ու, ի մնում են անփոփոխ՝ հաշիվներ, գլուխներ, պանդուխտներ, մարմիններ, պտուղներ. «ր» բաղաձայնից առաջ միայն դեռ պատահում են սղած ձևեր՝ երկրներ, կերակրներ, փոխանակ սովորական «երկիրներ», «կերակուրներ» ձևերի։ Այս ձայնափոխությունն էլ արդեն կայուն չէ. շատ բառերի մեջ ի, ու ձայնավորները մնում են, որի սկիզբն արդեն հին լեզվի մեջ է երևում, ինչպես՝ հիմն—հիման, հինգ—հինգի, ուղտ—ուղտի, ուխտ—ուխտի, իժ—իժի, այսպես և՝ հիմք—հիմքի, լուր—լուրի, լուրեր. կարծիք—կարծիքի, հայրենիք—հայրենիքի, գործիք—գործիքի, բչիջ—բչիջի, ուսում—ուսման, բայց՝ ուսումի, մտածմունք—մտածմունքի, քրտինք—քրտինքի (ժողովրդ. քրտնքի), թռչուն—թռչունի, ընդհանուր—ընդհանուրի, առաջին—առաջինի, վերջին—վերջինի, ուրիշ—ուրիշի և շատ նմաններ. այնպես որ հետզհետե պակասում է ու, ի ձայնավորի սղումը հոլովման ժամանակ, մանավանդ երբ դրանք ընկնում են մի քանի և դժվար արտասանելի բաղաձայնների մեջ։ «Ա» ձայնավորի սղումը մնում է միայն «աստված» բառի մեջ՝ աստուծու, աստուծով. նաև բարբառային ձևերի մեջ, օրինակ՝ բերան—բերնի, փոխանակ՝ բերանի։ Բարբառային են այս ձևերը՝ փեսա—փեսի, փեսից. տղա—տղի կամ տղու, գրական լեզվի մեջ՝ փեսայի, տղայի։

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

(Շարահյուսություն)

274. Խոսքի կազմությունը և շարահյուսության խնդիրը:— *Հոգեբանական դատողության մեջ, ինչպես տեսանք (§ 11), միմյանց հետ միանում են երկու պատկերացում, դատողության երկու անդամները. մեկ՝ հոգեբանական ենթական, որի պատկերացումն առաջ է ծնվում մեր մտքի մեջ, մեկ էլ հոգեբանական ստորոգյալը, որի պատկերացումը հետո է ծնվում և որ վերագրում ենք ենթակային՝ գիտակցելով այդ երկուսի հարաբերությունը: Մենք մտածում ենք հոգեբանական դատողությամբ: Երբ այսպիսի դատողության երկու անդամներից մեկը, կամ երկուսն էլ արտահայտում ենք բառերով, այն ժամանակ առաջանում է խոսքը կամ նախադասությունը: Խոսքը կամ նախադասությունն է, ուրեմն, հոգեբանական դատողության (մտածության) արտահայտությունը բառերով:*

Խոսքի այսպիսի սահմանումը, սակայն, ընդհանուր հոգեբանական է, այսինքն՝ այնպիսի, որ միակերպ հարմարվում է ամեն ժամանակի ամեն լեզվի: Դրանով դեռ չի պարզվում խոսքի կազմությունը մի առանձին լեզվի մեջ:

Ինչպես ամեն լեզվական իրակություն, նույնպես և խոսքի կազմությունը շարունակ ենթակա է փոփոխության. ուստի նույնիսկ միևնույն լեզվի տարբեր ժամանակաշրջաններում խոսքը տարբեր ձևերով է կազմվում: Մեր նոր լեզվի մեջ, օրինակ, հնարավոր չեն այնպիսի խոսքեր, որ կան հնի մեջ. «Ծու բացեալ զդուրս տանն բռնաբար՝ ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկանն. և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա», որ «զ» և «ի» նախդիրները դուրս ձգած և հին բառաձևերի տեղ նոր լեզվի բառաձևերը դրած՝ բառացի լինում է. «Նվ բացած դռներ տանը բռնաբար՝ դուրս էր ելնում, պատռած բազմություն մարդկանցը. և ոչ ոքի կարողացած հաղթահարել նրան»: Այժմ այդ կարտահայտենք այսպես՝ «Նվ տան դռները բռնաբար (զորով) բաց արեց, դուրս ելավ, պատռեց մարդկանց բազմությունը. և ոչ ոք չկարողացավ հաղթահարել նրան»:

Խոսքի ձևն, որևէն, ամեն լեզվի մեջ արդյունք է իրեն այդ լեզվի պատմական զարգացման։ Դրա հետևանքով հոգեբանական դատողության հոգեբանական ենթական ու ստորոգյալը, թեպետ և այս տերմիններն առնված են քերականությունից, հաճախ համապատասխան չեն խոսքի կամ նախադասության քերականական ենթակային և ստորոգյալին։

Հայերենում խոսքը մտածության արտահայտությունն է բայով կամ. ինչպես տեսել ենք (§§ 13. 3, 246, 247), խոսք կազմում է բայը, և խոսքի ենթական է բայի դեմքը, որ մի առարկա է ցույց տալիս և միշտ որոշ է խոսողի համար, իսկ ստորոգյալն է բայիմաստը, որ մի հատկանիշ է ցույց տալիս։ Օրինակ, դիցուք, ես հիշում եմ Տիգրանին և ապա «գնալու» գործողությունը, որ վերագրելով Տիգրանին՝ ասում եմ՝ «գնաց». ես կազմում եմ հոգեբանական դատողություն և նրա արտահայտություն «գնաց» խոսքը։ Հոգեբանական ենթական, «Տիգրանի» պատկերացումը, այս խոսքի մեջ արտահայտվել է ոչ թե առանձին բառով, այլ բայի դեմքով։ Երբ ես բարձր արտասանում եմ «գնաց», լսողի համար ևս այդ բայը մենակ կազմում է մի խոսք. նա հասկանում է, որ ես «գնալու» գործողությունը ստորոգում եմ մի առարկայի։ Բայց մինչ ինձ համար, որ խոսողն եմ, այդ առարկան որոշ է, քանի որ իմ մտքում ունիմ այդ առարկայի, որ է՝ Տիգրանի պատկերացումը,— լսողի համար այդ առարկան՝ արտահայտված լինելով միայն բայի դեմքով՝ ընդհանուր անորոշ, տարտամ ձևով է մնում։ Բայց երբ լսողը գիտե, թե խոսողն իր մտքի մեջ ինչ առարկայի պատկերացում ունի, որին իբրև ենթակայի վերագրում է «գնալու» գործողությունը, այն ժամանակ «գնաց» բայի դեմքը կբավարարի նրան ևս։ Օրինակ՝ երբ մենք մի տեղ հավաքված մարդիկ, սպասում ենք մի անձի, դիցուք, Տիգրանին, և մեկը ներս մտնելով ասում է՝ «գալիս է» կամ «եկավ», այս բայի դեմքը չի մնում մեզ համար ընդհանուր անորոշ նշանակությամբ, այլ ունի հաստատուն որոշ նշանակություն. մենք ամենքս էլ հասկանում ենք, որ դեմքն արտահայտում է «Տիգրանի» պատկերացումը։

Խոսողի համար բայի դեմքը, որ ենթական է, միշտ ունի որոշ նշանակություն. որպեսզի լսողի համար ևս պարզ լինի դեմքի նշանակած առարկան, խոսողը հաճախ 3-րդ դեմքը լրացնում է դեմքի ցույց տված առարկայի անունով. օրինակ՝ փոխանակ ասելու «գնաց», ասում է՝ «Տիգրանը գնաց»։ Այս խոսքի մեջ «Տիգրան» բառը լեզվական տեսակետով դեմքի լրացումն է. բայց որովհետև նույն առարկան է ցույց տալիս, ինչ որ դեմքը, և որոշ նշանակություն ունի, ուստի սովորաբար այդ լրացական բառը կոչում են ենթակա։

Հիմա, երբ խոսողի մեջ ծնվում է նախ «գնալու» գործողության պատկերացումը, ապա «Տիգրանին», և նա ասում է՝ «Տիգրանը գնաց», այստեղ նա նույն խոսքն է կազմում, ինչ որ առաջ. բայց հոգեբանական դատողությունը նույնը չէ այժմ. հոգեբանական ենթական է «գնալու»

պատկերացումը, ուրեմն՝ խոսքի մեջ «գնաց» բառը, իսկ հոգեբանական ստորոգյալն է «Տիգրանը»: Քերականորեն սակայն, այս երկրորդ խոսքի ենթական է դարձյալ բայի դեմքն իր լրացումով, իսկ ստորոգյալն՝ «գնաց»: Կնշանակե՝ միևնույն խոսքը՝ «Տիգրանը գնաց» արտահայտությունն է դառնում երկու տարբեր հոգեբանական դատողությունների համար: Դարձյալ, երբ իմ մտքում ծնվում է նախ՝ «էջմիածին գնալու» պատկերացումը և ապա՝ «իմ ընկեր Տիգրանի», և ես այս երկրորդ պատկերացումը ստորոգում եմ առաջինին, կազմում եմ մի հոգեբանական դատողություն և նրա արտահայտությունն մի խոսք՝ «Իմ ընկեր Տիգրանը գնաց էջմիածին»: Այստեղ հոգեբանական դատողության ենթական է «գնաց էջմիածին», իսկ ստորոգյալը՝ «իմ ընկեր Տիգրանը». բայց քերականորեն խոսքի ենթական է դարձյալ «գնաց» բայի դեմքը, իսկ ստորոգյալն է՝ «գնաց» բայի իմաստը, այսինքն՝ «գնալու» գործողությունը, մնացած բառերը լրացում են կա՛մ բայի դեմքի (Տիգրանը), կա՛մ բայիմաստի (էջմիածին), կա՛մ թե լրացման լրացումն են, ինչպես՝ «ընկեր» բառը լրացում է «Տիգրանի» (ո՞ր «Տիգրանի»), իսկ «իմ» բառը՝ «ընկեր» բառի (ո՞ւմ «ընկերը»):

Ինչպես հոգեբանական դատողության մեջ երկու անդամ կա նույնպես և խոսքը կամ նախադասությունը քերականորեն բաժանվում է երկու մասի. մեկ կողմում՝ բայի դեմք-ենթական իր լրացումով և լրացման լրացումներով, մյուս կողմում՝ բայիմաստ-ստորոգյալը իր լրացումներով և լրացման լրացումներով. օրինակ՝ «Իմ ընկեր Տիգրանը‖այսօր առավոտյան գնաց էջմիածին»: Նույն երկբաժանումը լինում է նաև այն ժամանակ, երբ խոսքն ընդարձակվում է ոչ միայն լրացական բառերով, այլև լրացական խոսքերով, օրինակ՝ «Իմ ընկեր Տիգրանը, որ երեկ եկել էր Թիֆլիսից,‖այսօր առավոտյան գնաց էջմիածին, որպեսզի այնտեղի հնություննները տեսնի»: Այսպես և ամեն խոսք, ինչքան էլ բազմաթիվ բառերից և բառախմբերից կազմված լինի կարելի է ասել, թե կազմված է երկու բարդ պատկերացումից—ենթակայի և ստորոգյալի: Բայց մինչդեռ հոգեբանական ենթական և ստորոգյալը բազմազան կերպով փոփոխվում են, և յուրաքանչյուր բառի կամ բառախմբի արտահայտած պատկերացում կարող է դառնալ հոգեբանական ենթակա կամ հոգեբանական ստորոգյալ, նայելով թե ո՛ր պատկերացումն է առաջ եղևան գալիս խոսողի մտքի մեջ և որը՝ հետո, խոսքի քերականական ենթական (բայի դեմքը) ու քերականական ստորոգյալը (բայիմաստը), խոսքի այս երկու անդամներն իրենց լրացումներով, հաստատուն կազմությամբ նույնն են մնում: Այսպիսով միևնույն խոսքը արտահայտություն է դառնում բազմաթիվ հոգեբանական դատողությունների, և խոսքի քերականական կազմությունը իր ենթակայի և ստորոգյալի նկատմամբ, այլևս կախում չունի հոգեբանական ենթակայից և՛ ստորոգյալից որ նույնիսկ հաճախ կդժվարանանք որոշել և շատ անգամ չենք էլ կարող որոշել: Եվ լեզվի ուսումնասիրության գործն է ոչ թե վերլուծել հոգեբանական դա-

տողությունը և որոշել նրա անդամները, այլ բացատրել խոսքի կազմությունը։

Ըստ այսմ շարահյուսությունը իբրև խոսքի կազմության ուսում, ելնելով խոսքի կենտրոնից—բայից, նախ՝ **ընդարձակ խոսքը** *վերլուծելով իր բաղադրիչ մասերին՝ բացատրում է, թե խոսքի մասերը—բառերն ինչպիսի հարաբերություններով և ինչպիսի կապակցության ձևերով միանալով իրար հետ՝ առաջ են բերում երկու բարդ պատկերացում, մի կողմից՝ ենթակայի պատկերացումը, մյուս կողմից՝ ստորոգյալի, որով կազմվում է մի ընդարձակ պարզ խոսք—***բառերի շարահյուսություն,** *և ապա դարձյալ՝ թե խոսքերն ինչպիսի հարաբերություններով և ինչպիսի կապակցության ձևերով միանալով իրար հետ կազմում են մի բարդ խոսք,—***խոսքերի շարահյուսություն:**

Նշանակություն.— *Հայոց լեզվի շարահյուսության համար գործածել Մ. Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսություն», Վաղարշապատ, 1912, եր. 1—363։*

ՑՈՒՑԱԿ

ԳՈՐԾԱԾԱՏ ԳՐՔԵՐԻ

1. *Adjarian H.*, Classification des dialectes arméniens, Paris, 1909.
2. Աճառյան Հր., *Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911։*
3. Այտնյան Աբաեղ, *Քննական քերականություն հայերեն լեզվի, հանգերձ ներածությամբ և հավելվածով. Վիեննա, 1866։*
4. *Богородицкий В. А.*, Очерки по языковедению и русскому языку. Казань, 1910.
5. *Նույնի*, Лекции по общему языковедению, Казань, 1913.
6. *Бороздин А. К.*, Языковедение, С. Петербург, 1903.
7. *Brugmann K.*, Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Strassburg, 1903.
8. *Karst Jos.*, Historische Grammatik des Kilikisch—armenischen, Straseburg, 1901.
9. *Кудрявский Д. Н.*, Введение в языкознание, Юрьев, 1913.
10. *Марр Н.*, Грамматика древнеармянского языка, С. Петербург, 1903.
11. *Meillet A.*, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique Vienne, 1903.
12. *Նույնի*, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913.
13. *Мейе А.*, Введение в сравнительную грамматику, 1911 *(թարգմ. ֆրանսերենից)։*
14. Տավճանեան Ղ., *Հետազոտութիւնք նախնեաց ամկօրէնի վրայ, Ա. և Բ. հատ., Վիեննա, 1897։*
15. *Ушаков Д. Н.*, Краткое введение в науку о языке, Москва, 1928.
16. *Paul Hermann*, Prinzipien der Sprachgeschichte, Halle, 1886.
17. *Поржезинский В.*, Введение в языковедение, Москва, 1916.
18. *Roudet Léonce*, Eléments de Phonétique générale, Paris, 1910.
19. *Sievers Eduard*, Grundzüge der Phonetik, Leipzig, 1893.
20. *Томсон А.*, Общее языкознание, Одесса, 1910.
21. *Finck, Franz Nicolaus*, Lehrbuch der neuostarmenischen Literatursprache Vagarschapat - Marburg, 1902.
22. Աբեղյան Մանուկ, *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*
23. *Նույնի, Գրաբարի համառոտ քերականություն, Վաղարշապատ, 1907։*
24. *Նույնի, Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908։*
25. *Նույնի, Հայկական հոլովը, Վաղարշապատ, 1909։*
26. *Նույնի, Հայերենի եղանակների մասին, «Արարատ» ամսագիր, 1912, № 2 և 3 (փետրվար և մարտ)։*
27. *Նույնի, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։*
28. *Նույնի, Մեր ուղղագրության մասին, «Արարատ» ամսագիր, 1913, № 11 և 12 (նոյեմբեր և դեկտեմբեր)։*
29. *Նույնի, Ձեկուցում հայոց լեզվի ուղղագրության ռեֆորմի մասին, Էջմիածին, 1921։*
30. *Նույնի, Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության, Երևան, 1922։*
31. *Նույնի, Ուղղագրության ռեֆորմը, Երևան, 1925։*
32. *Նույնի, Հայոց լեզի ուղղագրություն, Թիֆլիս, 1892։*

Այս ցուցակի մեջ չեն հիշված այն գրքերը, որոնցից օրինակներ են մեջ բերված։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ հեղինակի իրեն կազմած օրինակներ քիչ կան, այն էլ միայն սովորական ձևերի համար։ Օրինակները մեծ մասամբ առնված են՝ Պռոշյանից, Մուրացանից, Գամառ-Քաթիպայից (մեկ մեկ Պատկանյան նշանակած), Ջիվանուց, Րաֆֆուց, Պալասանյանից (Հայոց պատմ. և գրակ. պատմ.) և ուրիշներից, ինչպես նաև ժողովրդական առածներից ու ասացվածներից (նշանակված Ա. տառով) և լրագրությունից (Լր.)։ Օրինակներն անփոփոխ են բերված. միայն Պռոշյանից առնվածների մեջ գավառական ձևերը (գնում ա և այլն) սովորաբար վերածված են գրական ձևի, կամ թուրքերեն բառերի տեղ համապատասխան հայերեններն են դրված։ Հեղինակների անունները հաճախ չեն նշանակված՝ գրքի ծավալը շատ չմեծացնելու համար. հաճախ էլ նույն հեղինակից առած կտորները բաժանված են կետ ու գրծով (.—), և միայն վերջը մի անգամ հիշված է հեղինակի անունը. բայց այս էլ դժվար է եղել միշտ միակերպ պահել։ Մի քանի կանոնների համար գուցե օրինակները շատ երևան, բայց այդ նրա համար է, որ օրինակներին մեծ կարևորություն է տրված։ Կլինին անշուշտ նաև անհաջող, գուցե և անհարմար օրինակներ, բայց այդ անխուսափելի է տարիների ընթացքում հավաքված բյուրավոր հատվածիկների ընտրության և դասավորության ժամանակ. շատ անգամ ձեռի տակ եղած ավելի կարճ ու գեղեցիկ օրինակներն առանց բանեցնելու են մնացած։

Թե ինչքան ջանք ու ժամանակ է պահանջել այս աշխատանքը, այդ մասին խոսելն ավելորդ է. այս սակայն պետք է ասել, որ տարիներ առաջ արդեն պատրաստ է եղել այս «Աշխարհաբարի շարահյուսությունը», բայց հանգամանքներն ու նյութական սղությունը թույլ չէին տալիս նույնիսկ երկու տարուց ի վեր սկսած տպագրությունն ավարտել։ Այժմ լույս ընծայելով՝ հեղինակը գոհ կլինի, եթե սա յուրովսանն նպաստի հայոց լեզվի ուսմանը։

Սկզբնական ծրագրով սրա հետ պիտի տպագրվեր նաև շարադրության մասին. բայց ծավալի մեծության պատճառով հնարավոր չեղավ գոնե «Տաղաչափության» մասը տպագրել։

Մ. ԱՐԵՂՅԱՆ

1912 Հունիս 28
ս. Էջմիածին

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. *Շարահյուսությունը քերականության այն մասն է, որ սովորեցնում է, թե ինչպիսի բաղադրիչ մասերից և ինչպես կազմվում է խոսքը կամ նախադասությունը։*

Խոսքը լինում է՝ 1) Պարզ խոսք, մի հատ խոսքն առանձին առած, որ կազմվում է բառերից. 2) Բարդ խոսք, որ կազմվում է երկու և ավելի խոսքերի միությունից։

Ըստ այսմ շարահյուսությունը լինում է՝

Ա. Բառերի շարահյուսություն, որ սովորեցնում է՝

1. Բառերի պաշտոնը խոսքի մեջ.

2. Բառերի կապակցությունը խոսքի մեջ։

Բ. Խոսքերի շարահյուսություն, որ սովորեցնում է՝

1. Խոսքերի տեսակները, և

2. Խոսքերի կապակցությունը։

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՅԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

ԽՈՍՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

2. *Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածությունն է, որի մեջ մի ստորոգում է լինում, այսինքն՝ մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ. օրինակ՝* **Նապաստակը վախկոտ** *է մի խոսք է, որով նապաստակին վերագրվում է վախկոտ հատկությունը, կամ թե հաստատվում է, որ վախկոտ հատկությունն է՛, կա նապաստակի մեջ։*

Խոսքն ուրեմն պարունակում է ամենաքիչը երկու գաղափար.

ա. *Մի առարկայի գաղափար, որի վրա մի ստորոգում է լինում.*

բ. *Մի հատկանիշի գաղափար, որ ստորոգվում է առարկայի վրա։*

Առարկան և հատկանիշը սակայն մենակ բավական չեն խոսք կազմելու համար, այլ հարկավոր է նաև՝

գ. **Ստորոգում**, *այսինքն՝ հատկանիշի վերագրվելն առարկային։*

8. *Առարկան կամ առարկայի գաղափարը, որին վերագրվում է հատկանիշը, իբրև խոսքի բաղադրիչ մաս, կոչվում է* **ենթակա**. *իսկ հատկանիշը կամ հատկանիշի գաղափարը, որ վերագրվում է ենթակային, ասվում է* **ստորոգյալ**։

Ենթական և ստորոգյալը կազմում են խոսքի նյութը, իսկ ստորոգո մն այդ նյութին տալիս է խոսքի ձևը։ Օրինակ՝ **մարդը** *բանական է խոսքի մեջ* **մարդը** *ենթակա է,* **բանական**՝ *ստորոգյալ. իսկ* **է** *բառը ցույց է տալիս ստորոգում։*

Խոսքի էությունն է ստորոգումը։ Առանց ստորոգման խոսք չկա։

Նշ. *Ինքնուրույն առարկան կամ գոյակը և իր ոչ-ինքնուրույն հատկանիշը կամ ստորոգելին կազմում են մեր մտածության նյութը։ Գոյակն և իր ստորոգելին՝ սպիտակ ձյուն, վազող ձի, ծաղկած ծառ՝ մեր դիտողության համար մի անբաժան միություն և միպարզ գաղափար են կազմում. որովհետև հատկանիշը՝ հատկություն, գործողություն կամ*

գրություն՝ առարկայի մեջ գտնվում է իբրև նրա բաղադրիչ մասը։ Երբ մենք ոչ-ինքնուրույն հատկանիշը՝ սպիտակ, վազող, ծաղկած՝ մտքով անջատում ենք իր ինքնուրույն առարկայից (ձյուն, ձի, ծառ) և մեր մտածողությամբ նորից վերագրում ենք առարկային կամ ստորոգում ենք, այն ժամանակ առաջ է գալիս խոսքը կամ նախադասությունը. ինչպես՝ ձյունը սպիտակ է, ձին վազող է կամ ձին վազում է, վազեց. ծառը ծաղկած է կամ ծառը ծաղկեց։

ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

4. *Մենք խոսում ենք բառերով։ Ամեն բառ ունի մի նշանակություն և ըստ այնմ մի պաշտոն է կատարում խոսքի նկատմամբ։ Ուստի բառերի պաշտոնը խոսքի մեջ ուսանելուց առաջ՝ պետք է տեսնել, թե ինչպիսի նշանակություն ունին բառերը և ինչպիսի տեսակների են բաժանվում ըստ իրենց նշանակության։*

Բառերը նայելով իրենց նշանակության և խոսքի նկատմամբ կատարած պաշտոնին՝ ամենից առաջ բաժանվում են երկու մեծ խմբի՝

ա. Բառեր, որոնք ցույց են տալիս զգացմունք (ու կամք) և խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում։ Դրանք են ձայնարկություն կամ միջարկություն կոչված բառերը, որոնք կարող են խոսքն ամեն կերպ ընդհատելով ընկնել խոսքի մեջ, ինչպես՝ ա՛խ, ո՛հ, ավա՛ղ.

բ. Բառեր, որոնք ցույց են տալիս գաղափար կամ պատկերացում և որոնցով մենք խոսում ենք, այսինքն մեր մտքերն ենք հայտնում ուրիշներին։

5. *Գաղափար ցույց տվող բառերը խոսքի նկատմամբ լինում են՝*

ա. Խոսք կազմող բառեր կամ բայ.

բ. Լրացական բառեր, որոնք որևէ կողմից պարզում, ամբողջացնում են խոսքը՝ դառնալով լրացում բայի կամ լրացական բառերի.

գ. Կապակցական բառեր, որոնք ոչ խոսք են կազմում և ոչ լրացում դառնում, այլ կապում են կա՛մ բառ բառի հետ, կա՛մ խոսք խոսքի հետ։

1. ԲԱՅ

6. *Տեսանք՝ խոսքի էությունն է ստորոգումը, և առանց ստորոգման խոսք չկա։*

Ստորոգումն արտահայտվում է միայն մի առանձին խմբի կամ տեսակի բառերով, որոնք կոչվում են բայ։ Խոսք կազմում են ուրեմն միայն բայերը։

Բայերը սակայն միայն ստորոգում չեն ցույց տալիս, այլև ենթակայի և ստորոգյալի գաղափարներ։

Բայի դեմքը *ցույց է տալիս այն առարկայի գաղափարը, որին իբրև ենթակայի վերագրվում է մի հատկանիշ. բայիմաստը ցույց է տալիս այն հատկանիշը՝ գոյություն, գործողություն կամ դրություն, որ իբրև*

ստորոգյալ վերագրվում է ենթակային (բայի դեմքին). իսկ ստորոգումը նրանով է արտահայտվում, որ ամեն բայ ունի բայիմաստ և դեմք՝ միացած մի բառի մեջ։ Օրինակ՝ գնացի բայն երբ լսում ենք մեկից, իմանում ենք, որ խոսողն ինքն իրեն (առաջին դեմքին) վերագրում է գրնալու գործողությունը։

Խոսքն ուրեմն իր ամենապարզ ձևով կազմվում է մի բայից։

7. Առանց բայի խոսք չկա. որովհետև մյուս տեսակի բառերը ըստորոգում չեն ցույց տալիս, այլ նշանակում են կա՛մ մի առարկա (տուն, ծառ), կա՛մ մի հատկանիշ (բարձր, լավ)։

Ամեն բայ, ընդհակառակն, մենակ կազմում է մի խոսք, որովհետև ցույց է տալիս թե՛ ստորոգում և թե՛ խոսքի համար անհրաժեշտ՝ ենթակայի և ստորոգյալի (առարկայի և հատկանիշի) գաղափարները։

Խոսքն, ուրեմն, մտածության արտահայտությունն է բայով։ Իսկ

Բայ ասվում են այն բառերը, որոնք մենակ խոսք են կազմում՝ ցույց տալով թե՛ խոսքի ձևը (ստորոգումը) և թե՛ խոսքի նյութը՝ ենթական և ստորոգյալը, առաջինն արտահայտված բայի դեմքով, իսկ երկրորդը՝ բայիմաստով։

Նշ. 1. Ամեն բայ մենակ մի խոսք է կազմում, եթե իհարկե մարդ մտածելով, ուրիշին իր միտքը հայտնելու համար է ասում. թե չէ մեքենայաբար, առանց մտածելու արտասանած բայերը կամ բայերի շարքը (ինչպես խոնարհման ժամանակ՝ գնամ, գնաս, գնա և այլն), ինչքան էլ խոսքի ձև ունեն, առանձին խոսքեր չեն կազմում, որովհետև այդ բայերն արտասանելիս մենք մեր մտածությունը չենք ուզում հայտնել ուրիշին, այլ միայն բառեր ենք ասում։

Նշ. 2. Բայ ասելով պետք է հասկանալ միշտ դիմավոր բայերը և ոչ դերբայները, որոնք բայի անդեմ ձևեր են, ուստի և մենակ խոսք չեն կազմում։

Նշ. 3. Խոսքն իմացվում է բայից. ուստի քանի բայ կա մի ասացվածի մեջ, այնքան էլ խոսք կա։ Բայց պետք է նկատի ունենալ, որ բայը կարող է զեղչված լինել, այսինքն դրված չլինել և զորությամբ հասկացվել։ Ամեն զեղչված բայ կազմում է մի առանձին զեղչական խոսք. օրինակ՝ «Գայլն ամպ օր կուզե, գողը՝ մութ գիշեր» ասացվածի մեջ երկու խոսք կա. որովհետև հասկացվում է՝ գողը մութ գիշեր կուզե։ Նույնպես՝ «Ուռած ակռը մեծ եղնիջ» առածի մեջ զեղչված է կլինի, առած կգա բայը։

8. Բայի դեմքն և բայիմաստը բայի գլխավոր գաղափարներն են. բայց բայերը բացի դրանցից նշանակում են ուրիշ երկրորդական գաղափարներ ևս.

1. Բացի դեմքից՝ մի ուրիշ առարկայի գաղափար ևս, առանց որի չի կարող շատ բայերի ցույց տված գործողությունը կատարվել. օրինակ՝ պատռեց բայի գործողության համար հարկավոր է ոչ միայն ենթական՝ պատռողը՝ ինչպես՝ Երեխան պատռեց, այլև մի ուրիշ առարկա, այն՝ որ Երեխան պատռում է. Երեխան պատռեց գիրքը։

2. Ժամանակ, եղանակ, կերպ և այլն։

Նշ. Պարագա ասելով հասկացվում է առարկայի հատկանիշի հատկանիշը. օրինակ՝ Ձի առարկա է. նրա հատկանիշն է սպիտակ, վազող. իսկ երբ ասում ենք՝ շատ սպիտակ,

ձի, քիչ սպիտակ, բոլորովին սպիտակ ձի.—արագ վազող ձի, առաջ վազող ձի, ետ վազող ձի,—շատ, քիչ, բոլորովին, արագ, առաջ, ետ ոչ թե առարկայի՝ ձիու հատկանիշներն են, այլ նրա հատկանիշների հատկանիշը։

2. ԼՐԱՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ

ԳՈՅԱԿԱՆ, ԱԾԱԿԱՆ, ՄԱԿԲԱՅ

9. Ամեն բայ մենակ կազմում է մի խոսք. բայց մի բայը մենակ սովորաբար բավականություն չէ տալիս մեզ, որովհետև մեր միտքը հայտնում է միայն համառոտ և ընդհանուր կերպով։ Այս պատճառով բայի վերա սովորաբար ավելանում են լրացական բառերը, որոնք պարզում, որոշում են բայի նշանակած գաղափարները։ Օրինակ՝ երբ մեկը մեզ ասում է՝ տեսավ, այս բայը միայն անորոշ կերպով ակնարկում է, թե մեկը մեկին, կամ մի բան, մի տեղ տեսել է, բայց այդ բայով միայն դեռ պարզ չի իմացվում, թե ով տեսավ, ո՛ւմ կամ ի՛նչ տեսավ, ո՛ւր տեսավ, ե՛րբ տեսավ և այլն։ Իսկ երբ ասվում է Տիգրանն այսօր դպրոցում տեսավ Արտաշեսին,— Տիգրանն, այսօր, դպրոցում, Արտաշեսին բառերը դրվելով տեսավ բայի վրա՝ լրացնում, պարզում են նրա ակնարկած նշանակությունները, և մենք իմանում ենք, թե ո՛վ տեսավ, ո՛ւր տեսավ և այլն։ Դրանք տեսավ բայի լրացումներն են։

Խոսքն ուրեմն կազմվում է կա՛մ մի բայից, կա՛մ մի բայից և իր լրացումներից։

10. Ամեն բայ, ինչպես տեսանք, արտահայտում է՝ (1) մի առարկայի գաղափար (դեմք), որին իբրև ենթակայի վերագրվում է բայիմաստը. շատ բայեր ակնարկում են և մի ուրիշ առարկայի գաղափար, որի վերաբերմամբ կատարվում է գործողությունը. 2) մի հատկանիշ (բայիմաստ), որ իբրև ստորոգյալ վերագրվում է բայի դեմքին. 3) զանազան պարագաներ՝ ժամանակ, եղանակ և այլն, որոնց մեջ տեղի ունի գործողությունը։ Ըստ այսմ՝ լրացական բառերը խոսքի բաղադրիչ մաս, այսինքն բայի լրացում լինելու համար՝ պետք է նշանակեն կա՛մ առարկա, կա՛մ հատկանիշ, կա՛մ պարագա։ Այստեղից առաջանում են լրացական բառերի երեք տեսակներն ըստ նշանակության՝ գոյական, ածական և մակբայ։

1. Գ ո յ ա կ ա ն ը ցույց է տալիս ինքնուրույն գոյություն ունեցող կամ իբրև այնպիսին մտածված առարկա, ինչպես՝ մարդ, ձի, ծառ։

2. Ա ծ ա կ ա ն ը ցույց է տալիս առարկայի հատկանիշը, որ չի մտածվում իբրև ինքնուրույն գոյություն ունեցող, այլ իբրև առարկայից անբաժան, առարկայի բնության մեջ մշտապես կամ ժամանակավոր գտնված մի որպիսություն, գործողություն, դրություն և այլն. օրինակ՝ բարի (մարդ), վազող (ձի), ծաղկած (ծառ)։

3. Մ ա կ բ ա յ ը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշը կամ պարագա, ինչպես՝ խիստ բարի (մարդ), արագ վազող (ձի), ձին արագ վազեց։

Ծան. Ածականն ու մակբայն իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր տեսակ իբրև մակադրական բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ. միայն ածականն առարկայի հատկանիշ է նշանակում, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ։ Հայերենում բուն մակբայները սակավաթիվ են, այսինքն քիչ բառեր կան, որոնք միայն իբրև մակբայ գործածվեն։ Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են. երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այդ ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ։ Հայերենում ուրեմն, սակավաթիվ բառերի բացառությամբ, մակբայն ածականների գործածությունն է պարագայական նշանակությամբ. այնպես որ կարելի է լրացական բառերն երկու տեսակի միայն բաժանել՝ գոյական և ածական, որոնք երկուսն էլ իրենց կողմից կարող են պարագայական նշանակությամբ գործածվել։ Սակայն մինչ պարագայական նշանակությամբ գործածված գոյականները չեն համարվում մակբայ, ածականներն ընդհակառակն, երբ պարագա են ցույց տալիս, առնվում են իբրև առանձին տեսակի բառեր՝ մակբայ։

11. Լրացական բառերի երեք տեսակներն էս՝ գոյական, ածական և մակբայ՝ իրենց կողմից ըստ իրենց նշանակության բաժանվում են երկու երկրորդական տեսակների՝ անուն և դերանուն։ Անուններն ունին անփոփոխ, հաստատուն նշանակություն. իսկ դերանունները հաստատուն նշանակություն չունին, այլ ամեն անգամ նայելով թե ինչ անվան տեղ են դրված կամ ինչ անուն են ակնարկում՝ նրա նշանակությունն էլ ստանում են։ Անուններն էլ իրենց կողմից լինում են՝ անուն նեղ մտքով, թվական և դերբայ։ Թվականն ունի թվի և համարքի գաղափար, դերբայը ցույց է տալիս բայիմաստ առանց դեմքի. իսկ անուն նեղ մտքով այն բառերն են, որոնք ոչ թվի և ոչ բայիմաստի գաղափար են ցույց տալիս։ Լրացական բառերն ուրեմն լինում են չորս տեսակ՝ անուն (նեղ մրտքով), թվական, դերբայ և դերանուն։ Այսպես՝

Ա. Գոյականները լինում են՝ 1. Անուն գոյական կամ գոյական անուն, հաճախ լոկ՝ անուն (տուն, փայտ, լավություն). 2. Թվական գոյական (տասնյակ, հիսնյակ, հարյուրյակ). 3. Դերբայ գոյական կամ բայանուն, սովորաբար՝ անորոշ դերբայ (գնալ, ասել, գրել). 4. Դերանուն գոյական կամ գոյական դերանուն (ես, դու, նա)։

Բ. Ածականները լինում են՝ 1. Անուն ածական կամ ածական անուն (լավ, վատ, սև). 2. Թվական ածական (մի, երկու, երեք, առաջին, երկրորդ). 3. Դերբայ ածական կամ բայածական (գրած, գրող). 4. Դերանուն ածական կամ ածական դերանուն (այս, այդ այն)։

Գ. Մակբայները լինում են՝ 1. Անվանական մակբայ (ազատորեն, քաջաբար). 2. Թվական մակբայ (երկիցս, երիցս). 3. Դերբայական մակբայ կամ բայական մակբայ (գալիս, գրելիս). 4. Դերանվանական մակբայ (աստ, անդ, ուր)։

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

12. Բայն և լրացական բառերը, որոնցից կազմվում է խոսքը, կոչվում են խոսքի մասեր կամ նախադասության անդամներ։ Բայը բուն

խոսքն է կամ խոսքի էական մասը, իսկ լրացումները բայի նկատմամբ խոսքի ստորադաս մասերն են։

Բայի լրացումներն ևս իրենց կողմից կարող են լրացումներ ունենալ, որոնք կոչվում են խոսքի կողմնակի մասեր կամ կողմնակի լրացումներ։

Խոսքի մասերը նայելով խոսքի մեջ իրենց կատարած պաշտոնին լինում են՝ բայ, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, ենթակա, խընդիր, պարագա և վերադիր։ Բայն ու ստորոգյալը կամ ստորոգելիական վերադիրը սովորաբար միասին են առնվում իբրև խոսքի մի մաս և կոչվում են բայ-ստորոգյալ։

1. Բայ-ստորոգյալը *խոսքի այն մասն է, որ ցույց է տալիս ենթակային վերագրված հատկանիշը (ստորոգյալ) և հատկանիշի վերագրվելն ենթակային (ստորոգում). ուրեմն թե՛ խոսքի նյութը և թե՛ ձևը. օրինակ՝* Տիգրանը գնաց *խոսքի մեջ* գնաց *բայ-ստորոգյալ է. իսկ* երկինքը պայծառ է *խոսքի մեջ բայ-ստորոգյալն է* պայծառ է։

2. Ենթակա *խոսքի այն մասն է, որով բացահայտվում է բայի դեմքի ցույց տված առարկան, որին վերագրվում է ստորոգյալը. օրինակ՝* երկինքը *պայծառ է։*

3. Խնդիրը *խոսքի այն մասն է, որ ցույց է տալիս այն առարկան, որի վերաբերմամբ կատարվում է մի գործողություն. օրինակ՝* Երեխան պատռեց գիրքը։

4. Պարագա *խոսքի այն մասն է, որ ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ. օրինակ՝* Ձին արագ վազեց *(վազելը ձիու հատկանիշն է, իսկ արագ նրա հատկանիշի՝ վազելու՝ հատկանիշը)։*

5. Վերադիրը *խոսքի այն մասն է, որ դրվելով գոյականի վրա՝ որևէ կողմից որոշում է նրա նշանակությունը. օրինակ՝* Պայծառ *արեգակը ծագեց։*

3. ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ կամ ԽՈՍՔԻ ՄԱՍՆԻԿՆԵՐ

18. *Կապակցական բառերը (կապ և շաղկապ), որոնք ցույց են տալիս զանազան հարաբերություններ, խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում. այլ ծառայում են խոսքի մասերն և խոսքերն իրար հետ կապելու և կոչվում են* **խոսքի մասնիկներ**։ *Այսպես օրինակ՝ կապերը (նախադրություն և ետադրություն) կապում են խնդիրները խոսքի ուրիշ մասերի հետ. ինչպես՝* Գնացի դեպի Տիգրանը *խոսքի մեջ դեպի նախադրությունը կապում է* Տիգրանը *խնդիրը* գնացի *բայի հետ և ցույց է տալիս ուղղության հարաբերություն։ Կապն և խնդիրն առնվում են միասին իբրև խոսքի մի մաս։*

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐՆ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ

1. ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼ

ԲԱՅ, ՍՏՈՐՈԳՅԱԼ ԵՎ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

14. *Բայ-ստորոգյալը լինում է պարզ և բաղադրյալ։*

1. ՊԱՐԶ ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼ

Բայերն, ինչպես տեսանք (§ 6), ցույց են տալիս ստորոգում և ունեին բայիմաստ, որ կատարում է ստորոգյալի դեր՝ նշանակելով այն հատկանիշը, որ վերագրվում է ենթակային։ Այս պատճառով ամեն բայ՝ իբրև խոսքի մաս՝ մի պարզ բայ-ստորոգյալ է։ Օրինակ՝ Աստված կա *խոսքի մեջ կա բայի բայիմաստը, որ է գոյության գաղափար, իբրև ստորոգյալ վերագրվում է* Աստված *ենթակային։ Կա բայն ուրեմն իբրև խոսքի մաս՝ մի պարզ բայ-ստորոգյալ է, այսինքն ցույց է տալիս թե՛ ստորոգում և թե՛ ստորոգված հատկանիշը կամ ստորոգյալը։*

Պարզ բայ-ստորոգյալն արտահայտվում է ուրեմն միայն մի բայով, լինի բայը պարզ թե բաղադրյալ ժամանակով, ինչպես՝ ծառերը ծաղկեցին.—*ծառերը ծաղկում են.—* ջուրը եփ է գալիս:

Ծան. *Հարադրյալ բայերը՝* եռ գալ, պար գալ, ցույց տալ *և այլն մի բայ են և կազմում են մի պարզ բայ-ստորոգյալ։*

2. ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼՆ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ Է՝

ա) Եմ, լինիմ *բայով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է ստորոգյալ. օրինակ՝* Ջյունը սպիտակ է.—Գայլը գազան է։

բ) Դառնալ, կոչվել, նամարվել, թվալ *և այլն բայերով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է ստորոգելիական վերադիր. օրինակ՝* Ջուրը գոլորշի դարձավ։

Ա. ՍՏՈՐՈԳՅԱԼ

15. Եմ, լինիմ *բայը սովորաբար որոշ բայիմաստ չունի, այլ ցույց է տալիս ստորոգում՝ հատկանիշի վերագրվելն ենթակային և միայն ընդհանուր անորոշ նշանակությամբ ակնարկում է ենթակային վերագրված հատկանիշը, օրինակ՝ երբ ասվում է՝* Է կամ մի ենթակայով՝ Տիգրանը է, *մենք իմանում ենք, որ մի երրորդ դեմքի առարկայի, կամ Տիգրանին, վերագրվում է մի որևէ հատկանիշ, բայց թե ի՛նչ է այդ հատկանիշը՝ բայիմաստից չի իմացվում։ Հարկավոր է, որ այդ բայի հետ դրվի մի գոյական կամ ածական իբրև լրացում, որ բացահայտվի, թե ի՛նչ հատկանիշ է ստորոգվում. ինչպես՝* Տիգրանը բարի է, Տիգրանն աշակերտ է։ *Գոյականը կամ ածականը* եմ, լինիմ *բայի հետ միասին կազմում են մի բաղադրյալ բայ-ստորոգյալ՝* բարի է, աշակերտ է։

Այսպիսի բաղադրյալ բայ-ստորոգյալի մեջ ստորոգյալն արտահայտվում է միայն իբրև լրացում դրված գոյականով կամ ածականով, որ կոչվում է ստորոգյալ. իսկ բայը միայն ցույց է տալիս ստորոգում և կոչվում է էական բայ կամ հանգույց:

Ստորոգյալն *ուրեմն իբրև խոսքի մաս՝ եմ, լինիմ բայի այն գոյական կամ ածական լրացումներն են, որոնք պարզում են այդ բայի ընդհանուր անորոշ բայիմաստը և ցույց են տալիս, թե ինչ հատկանիշ է վերագրվում ենթակային: Օրինակ՝* Աստված բարի է *խոսքի մեջ* բարի *ստորոգյալ է,* Աստված՝ *ենթակա, իսկ է՝ էական բայ:*

Խոսք կազմող զորություն ունի ոչ թե ստորոգյալը, այլ է բայը, որովհետև նա է ցույց տալիս ստորոգում:

Բ. ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

16. *Կան բայեր, ինչպես՝ դառնալ, կոչվել, համարվել և այլն, որոնք մենակ հաճախ բավարար չափով որոշ բայիմաստ չունին. դրանց հետ սովորաբար դրվում է իբրև բայիմաստի լրացում մի գոյական կամ ածական, որ բայերին տալիս է ավելի որոշ բովանդակություն և կոչվում է ստորոգելիական վերադիր: Գոյականը կամ ածականը բայի հետ միասին կազմում են մի բաղադրյալ բայ-ստորոգյալ. օրինակ՝* Ներսես Դ-ը կոչվեց Շնորհալի *խոսքի մեջ կոչվեց Շնորհալի բայ-ստորոգյալ է, իսկ* Շնորհալի *մենակ առած՝ ստորոգելիական վերադիր:*

Այսպիսի բաղադրյալ բայ-ստորոգյալի մեջ ստորոգյալն արտահայտվում է ոչ բայիմաստով միայն և ոչ ստորոգելիական վերադրով միայն, այլ երկուսով միասին. ինչպես՝ վերևի օրինակի մեջ ստորոգյալը ոչ բայի ցույց տված հատկանիշը՝ կոչվելն *է մենակ, և ոչ* շնորհալի *գաղափարը, այլ երկուսը միասին՝* շնորհալի կոչվելը, *ինչպես թե մի բարդ բայով ասվեր՝* Ներսես Դ-ը շնորհալիակոչվեց:

Ստորոգելիական վերադիրն *ուրեմն իբրև խոսքի մաս՝ դառնալ, կոչվել և այլն բայերի այն գոյական կամ ածական լրացումներն են, որոնք այդ բայերի հետ միասին կազմում են մի բայ-ստորոգյալ:*

Բայն ու իր լրացումը միասին ստանում են մի բայի նշանակություն և երբեմն կարող են մի բայով ևս փոխանակվել, օրինակ՝ հող դառնալ—հողանալ. գոլորշի դառնալ—գոլորշիանալ. թագավոր դառնալ—թագավորել. ծաղիկները փունջ կապել—փնջել:

*Ստորոգյալն արտահայտվում է ուրեմն՝ կա՛մ միայն բայիմաստով (*Տիգրանը գնաց*), կա՛մ բայիմաստի հետ և ստորոգելիական վերադրով (*Հողը փոշի դարձավ*) և կամ միայն մի գոյականով կամ ածականով (*Ջայլամը թռչուն է*):*

17. *Բայերն իրենց բայիմաստի նկատմամբ հաճախ բաժանում են երկու խմբի՝ ստորոգելիական կամ ածական բայեր և վերացական կամ էական բայ:*

1. Ստորոգելիական կամ ածական բայերի բայիմաստը ցույց է տալիս որոշ հատկանիշ և կազմում է ստորոգյալ կա՛մ մենակ, կա՛մ մի ստորոգելիական վերադրի հետ։ Այդպես են բոլոր բայերը, նույնիսկ եմ, լինիմ բայը, որ նշանակում է՝ գոյություն ունենալ, գտնվել (մի տեղ) և կարող է մենակ բայ-ստորոգյալ կազմել, ինչպես՝ Նա այստեղ է, որ նշանակում է՝ Նա այստեղ է գտնվում, կա։ լինում է, չի լինում մի թագավոր, որ նշանակում է՝ գոյություն է ունենում, կար չկար մի թագավոր։

2. Էական կամ վերացական բայն է եմ, լինիմ բայը միայն, երբ ցույց է տալիս լոկ ստորոգում, առանց որոշելու ստորոգյալը կամ խոսքի նյութը և ծառայում է միայն իբրև հանգույց՝ ենթակայի և ստորոգյալի մեջ կապակցություն առաջ բերելու։ Այս գործածությամբ այս բայը այնքան ընդհանուր մի դրություն է նշանակում, որ, կարելի է ասել, կազմում է լոկ խոսքի ձևը՝ առանց բովանդակության. ուստի պետք է այս կամ այն հատկանիշով լրացվի՝ հասկանալի ու պիտանի խոսք կազմելու համար։

Նաև. Կան բացատրություններ, որոնցով մեր բայերը բաղադրված են համարվում բայի հիմքից կամ բնից՝ իբրև մի բայածականից, որի մեջ է բայիմաստը՝ հատկանիշ նշանակող մասը, և եմ բայից, որ ստորոգումն է ցույց տալիս։ Այսպես ասած՝ մեր բայերը կազմված են ուրեմն մի ստորոգյալից և մի վերացական բայից։ Բաղադրյալ ժամանակների մեջ այս կազմությունը շատ որոշ է. գրում եմ, գրել եմ, գրելու եմ և այլն. բայց պարզ ժամանակներն ևս,— գրեմ, գրես, գրե. գրենք, գրեք, գրեն. գրեի, գրեիր, գրեր. գրեինք, գրեիք, գրեին,— բացատրում են իբրև գր-եմ, գր-ես և այլն մասերից կազմված, իբր գրող եմ, գրող ես և այլն։ Նույնպես և անցյալ կատարյալի՝ գրեցի, գրեցիր, գրեցինք, գրեցիք, գրեցին ձևերի վերջի մասերը համարում են եմ բայի անցյալի ձևերը՝ միայն փոփոխված՝ ի, իր, ինք, իք, ին, ինչպես որ բարբառների մեջ ասվում են՝ ես ի, դու իր, մենք ինք, դուք իք, նրանք ին իբրև ես էի, դու էիր և այլն։ Ուրիշ բայերի մեջ՝ խաղամ, խաղաս, խաղա, խաղանք, խաղան՝ երևան է գալիս նույն եմ բայի մի ուրիշ ձևը ա ձայնավորով, ինչպես բարբառների մեջ ասում են՝ ես ամ, դու աս, նա ա. մենք անք, դուք աք, նրանք ան՝ փոխանակ ես եմ, դու ես և այլն։

2. ԵՆԹԱԿԱ*

18. Ենթական արտահայտվում է.

1. *Միայն բայի դեմքով. օրինակ՝ Տեսա նրան. հասկանալի է՝ ես տեսա։*

2. *Բայի դեմքի հետ միաժամանակ և մի առանձին բառով, որով բացահայտվում է բայի դեմքը, որ և կոչվում է ենթակա. օրինակ՝ ես տեսա նրան (§§ 3, 12. 2)։*

Նաև. Բայերի դեմքը միշտ կատարում է ենթակայի պաշտոն (§ 6). բայց հաճախ բայի դեմքով միայն բավարար չափով որոշ չի լինում այն առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ ստորոգյալը. օրինակ՝ երբ գնաց բայը լսում ենք մեկից, իմանում ենք, որ խոսողը գնալու գործողությունը վերագրում է երրորդ դեմքի մի առարկայի.

---

* *Ենթական կոչվում է նաև անուն բայի կամ տեր բայի։*

բայց այդ առարկան շատ անորոշ է մնում, չի իմացվում, թե ո՛վ է կամ ի՞նչ է։ Հարկավոր է, որ բայի հետ դրվի մի գոյական, որով որոշվի գնացողը. ինչպես՝ երբ ասվում է Տիգրանը գնաց, Տիգրան բառը լրացնում է բայի դեմքը, և մենք իմանում ենք, թե ով է գնացողը։ Այս դեպքում ենթակա կոչվում է միայն բայի դեմքը բացահայտող գոյականը, իսկ բայը գլխավորապես միայն իր բայիմաստով է նկատի առնվում, թեպետ բայի դեմքն ևս միաժամանակ ցույց է տալիս այն առարկան, որին վերագրվում է բայիմաստը։

Ենթակա ասվում են, ուրեմն, այն լրացումները, որոնք բացահայտում են բայի դեմքը, որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ մի հատկանիշ։

Ենթական պատասխանում է ո՞վ, ի՞նչ (է անողը կամ եղողը) հարցերին։ Օրինակ՝ Ձյունը ծածկեց գետինը,— ծածկողն ի՞նչն է,— ձյունը։

19. Ենթակա կարող են լինել միայն գոյականները, որովհետև ենթական ցույց է տալիս առարկա, իսկ առարկա ցույց տվող բառերը գոյական են։ Ուրիշ տեսակի բառերը ենթակա կարող են լինել միայն այն ժամանակ, երբ գոյականաբար են գործ ածվում։ Այսպես ենթակա լինում են՝

1. Մի գոյական (անուն, բայանուն, գոյական թվական կամ դերանուն § 11 Ա.). օրինակ՝ Քամին փչեց։ Ժամանակը ոսկի է։ Ես հեռացել եմ։ Նա շատ լավ է երգում։ Գրել կարդալ սովորելն անհրաժեշտ է ամեն մարդու։ Հարկավոր է օգնել ուրիշներին։

2. Մի գոյականաբար գործածված ուրիշ բառ. օրինակ՝ Թացն էլ չորի հետ կայրվի։ Կուշտը քաղցածին մանր կբրդի։ Երեքն էլ գնացին։

20. Հայոց լեզվի մեջ բայերի դեմքերը միշտ որոշ են. ուստի և դերանուն ենթականերն իսկապես ավելադրություն են, քանի որ ոչնչով չեն բացահայտում բայի դեմքը. ես գնացի և գնացի. դու գնացիր և գնացիր իմաստով բոլորովին նույն են։

Դերանուն ենթական դրվում է սովորաբար.

1. Երբ հատկապես շեշտվում է բայի դեմքը, ինչպես՝ Թող նա՛ խոսի։ Մե՛նք պիտի գնանք։ Ով ե՛ս երբեմն երգում էի։

2. Երբ դեմքերի փոխանակություն է լինում. ինչպես՝ Դու գնում ես, իսկ նա գալիս է։

Նշ. Ավելադրությունը զեղչման (§ 7. ծ. 3) հակառակ մի ձև է, որով խոսքի մեջ իմաստի համար ավելի բառեր են դրվում, բայց միշտ այնպես, որ խոսքին ավելի բացահայտություն, ուժ ու կենդանություն են տալիս. օրինակ՝ ավելադրություն է առանձնապես շեշտելով ասել՝ իմ աչքով տեսա և իմ ականջով լսեցի, փոխանակ ասելու պարզապես՝ տեսա և լսեցի. որովհետև ամեն տեսնող և լսող անշուշտ իր աչքով է տեսնում և իր ականջով լսում։

ԱՆԵՆԹԱԿԱ ԽՈՍՔԵՐ

21. Խոսքն անենթակա է կոչվում, երբ բայի դեմքը ոչ մի գոյականով չի բացահայտվում և չի կարող բացահայտվել. օրինակ՝ լուսացավ. մթնեց։

Նշ. Անեղբակա խոսքերը կոչվում են նաև անդեմ խոսքեր. իսկ անեղբակա խոսքեր կազմող բայերը՝ անդեմ կամ դիմազուրկ կամ միադիմի բայեր։ Անդեմ կամ դիմազուրկ կոչումը սխալ է, որովհետև առանց դեմքի բայ չկա։— Հայերենի միադիմի բայերը միայն չեզոք բայերից կազմված կրավորականներն են, որոնք ունին միայն եզակի 3-րդ դեմք (§ 22. 3)։

Հայոց լեզվի մեջ շատ գործածական չեն անեղբակա խոսքերը. սրանց փոխանակում են հաճախ համապատասխան նշանակությամբ ենթակայով խոսքեր, որոնք սակայն երբեմն իմաստով նուրբ տարբերություն ունին անեղբակա խոսքերից։

22. Անեղբակա խոսքեր կազմվում են՝

1. Եզակի 3-րդ դեմքով, երբ բայերը ցույց են տալիս օդի, եղանակի և առհասարակ բնության երևույթներ. ինչպես՝ ամպեց.— ցրտեց.— մթնեց.— լուսացավ.—որոտում է.— անձրևում է։

Ենթակայով ձևերն են՝ երկինքը ամպեց. ցուրտն ընկավ, օդը կամ եղանակը ցրտեց. մուքն ընկավ, օրը մթնեց. լույսը բացվեց. ամպը գոռում է. անձրև է գալիս և այլն։

2. Սահմանական եղանակի ապառնի (ներկա) և ապառնի անցյալ ժամանակների եզակի 3-րդ դեմքով. օրինակ՝

Չախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան. վճատելու չէ, վերջ կոմնենան. կուգան ու կերթան (Չիվանի)։ Ի՞նչ անելու է։ Մի՞թե՞ ադոր համար լալու է (Պար.)։ Այդ տղային ի՞նչ անարգելու է. խորամանկությունն այս մեր փչացածիցն է (Պռ.)։

Համապատասխան ենթակայով ձևերն են՝ Պետք չէ վհատիլ, չպիտի վհատվիլ։ Ի՞նչ պիտի (պետք է) անել։ Մի՞թե՞ դրա համար պետք է լալ։— (Անորոշ դերբայն այս դեպքում ենթակա է պետք է, պիտի բայի)։

3. Չեզոք բայերից, կամ իբրև չեզոք գործածված ներգործականներից կազմված կրավորական բայերի եզակի 3-րդ դեմքով. օրինակ՝

Այդ ոտքի ամաններով վեր կելնվի՞ (Պար.)։— Այստեղ լավ նստվում է։— Նա չար մարդ է. հետը չի խոսվում։— Երբ թարգմանության վրա բեթև աչքով չի նայվիլ, այն ժամանակ կունենաք լավ թարգմանություններ (Լր.)։— Եթե չարիքն առաջանալիս լիներ պատրաստված մարդիկ չոմնենալուց, կաշխատվեր վերքն ուրիշ դարմաններով բուժել (Լր.)։— Այս խնդրի մասին շատ է գրվել (Լր.)։

Համապատասխան ենթակայով ձևեր են՝ Այդ ոտքի ամաններով վեր ելնել կլինի՞,— կամ՝ կարելի՞ է վեր ելնել։— Հետը խոսել չի լինում,— կամ՝ հետը չի կարելի խոսել։— Կարելի կլիներ աշխատել։ Նա խիստ տրխուր էր, հետը խոսել չէր լինում (Պռ.)։

Այս անեղբակա խոսքերը կարելի է երբեմն ասել նաև հայոցորդ ձևով։

4. Հոգնակի երրորդ դեմքով. օրինակ՝

Այս խնդրի մասին շատ են խոսել, շատ են գրել։— Կաղ էշով քարվան չեն մտնիլ (Ա.)։— Այդպիսի բան կասե՞ն, որ դու ասում ես։— Այս տունը ծախում են։— Ճտերն աշնանը կհամարեն (Ա.)։— Ուղտը գդա-

լով չեն ջրիլ (Ա.)։ Ասում են, թե ամեն մարդ մի աստղ ունի երկնքումը։— Այսպես նաև՝ գրում են, թե... պատմում են, թե... հաղորդում են, թե...

Այս խոսքերի ենթակայով ձևերն են՝ Կաղ էշով քարվան չի կարելի մտնել։— Այդպիսի բան կասվի՞, կամ կարելի՞ է ասել։— Այս տունը ծախվում է։— Ճտերն աշնանը կհամարվեն,— կամ կարելի է համարել։— Ուղտը գդալով չի ջրվիլ,— կամ՝ չի կարելի ջրել։ Ասվում է, թե...։

Նաև. Օտարաբանություն է անորոշ դերբայով աննախադաս խոսքեր կազմելը. ինչպես՝ եթե նրան հարցնել, նա կպատասխանի։— Որպեսզի հաջողություն ունենալ, պետք է շատ աշխատել։ Այս խոսքերը հայերեն լինում են՝ եթե նրան հարցնեն, նա կպատասխանի։— Հաջողություն ունենալու համար պետք է շատ աշխատել,— կամ՝ Որպեսզի մարդ հաջողություն ունենա, պետք է աշխատի։

5. Զրույցի 2-րդ դեմքով, օրինակ՝

Կե՛ր փորձած թանը, մի ուտիլ անփորձ մածունը (Ա.)։— Շանը մինչև չծեծես, հետդ չի բարեկամանալ (Ա.)։Ուտում ես, ուտում, չես կըշտանում։— Մինչև չտաս մին, չես առնիլ տասնումին (Ա.)։— Տուն չես շինել. գիտես՝ սյունը մե՞ջն է բուսել (Ա.)։— Ծույլ մարդուն բան ասես՝ հորդ պես խրատներ կլսես (Ա.)։

Ենթակայով ձևերն են՝ Մարդ ուտի փորձած թանը, չուտի անփորձ մածունը։— Մարդ ուտում է ուտում, չի կշտանում։— Մարդ մինչև չտա մին, չի առնիլ տասնումին։— Ով որ տուն չի շինել, գիտե՝ սյունը մեջն է բուսել։— Մարդ որ (կամ ով որ) ծույլ մարդուն բան ասի, իր հոր պես խրատներ կլսի։

Նաև. Աննախադաս իմաստ ունի և քող հրամայականը, որ դրվում է ըղձական եղանակի վրա. օրինակ՝ Քող մի տեսնեմ նրան, տես՝ ինչե՛ր եմ ասում։

3. ԽՆԴԻՐ

(Բայերի սեռը)

28. *Խնդիրը ցույց է տալիս առարկան, որի վերաբերմամբ կատարվում է գործողությունը։ Խնդրի կամ առարկայի նկատմամբ բայերը բաժանվում են երկու տեսակի՝ ենթակայական և առարկայական։*

1. Ե ն թ ա կ ա յ ա կ ա ն բ ա յ ե ր ը *ցույց են տալիս գոյություն, դրություն և կամ այնպիսի գործողություն, որը կատարելու համար ենթական միայն բավական է. օրինակ՝* Տանը մարդ կա.— Երեխան ննաւ է.— Երեխան լալիս է.— Քամին դադարեց։

2. Ա ռ ա ր կ ա յ ա կ ա ն բ ա յ ե ր ը *ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը կատարելու համար բացի ենթակայից՝ հարկավոր է մի կամ երկու ուրիշ առարկա ևս։ Օրինակ՝ տվավ՝ բայի գործողություններ կատարելու համար հարկավոր է ոչ միայն ենթական՝ տվողը, ինչպես՝ Տիգրանը տվավ, այլև երկու ուրիշ առարկա ևս, անձն կամ իր. մեկ այն՝*

որ Տիգրանը տալիս է. մեկ էլ այն՝ որին Տիգրանը տալիս է,— Տիգրանը գիրը *տվավ* Արտաշեսին:

Առարկայական բայերն ուրեմն իրենց նշանակության համեմատ պահանջում են իբրև լրացում մի կամ երկու խնդիր, առանց որի խոսքը թերի կմնա:

24. *Խնդիր կարող են լինել միայն գոյականները, որովհետև խնդիրը ցույց է տալիս առարկա: Ուրիշ տեսակի բառերը խնդիր կարող են լինել միայն այն ժամանակ, երբ գոյականաբար են գործածվում: Այսպես խնդիր լինում են՝*

1. Մի գոյական (անուն, բայանուն, դերանուն), որևէ հոլովով մենակ, կամ մի կապով. օրինակ՝ Անձրևից *փախան,* կարկտի *հանդիպեցան (Ա.): Նա շարունակ իր* զավակների *համար է հոգում:—* Ես տեսա *նրան: Ուզում եմ* գնալ:

2. Մի գոյականաբար գործածված ուրիշ բառ. օրինակ՝ Կուշտը *ճաղցածին մանր կբրդի: Ես երեխին էլ տեսա: Եթե մենք եղած* ճիները *քանդելով կարողանայինք նրա տեղը նորը, բայց լավագույնը հաստատել, այն ժամանակ այդ հինը աներկյուղ կքանդեինք (Մուր.):*

25. *Խնդիրները նայելով բայիմաստի հետ ունեցած հարաբերության լինում են՝ կրող խնդիր, ներգործող խնդիր, բնության խնդիր և պարագայական խնդիր:*

1. Կ ր ո ղ խ ն դ ի ր ը* *կամ կրող առարկան ցույց է տալիս մի առարկա, որ իր վրա կրում է ենթակայի գործողությունը, այսինքն՝*

ա) Ներգործվում, ազդվում, փոփոխություն է կրում կամ մի դրության մեջ է մտնում ենթակայի գործողությունից. օրինակ՝ Երեխան պատռեց գիրը: *Նա* նրագը *վառեց: Նա բուրդ է մանում: Դու* ինձ *վախեցրիր: Նա* ցորենն *աղաց:*

բ) Իբրև արդյունք առաջ է գալիս գործողությունից. օրինակ՝ Նա փոս փորեց: Դու նամակ *գրեցիր: Մենք* ալյուր *աղացինք: Աղչիկը* գուլբա *է գործում:*

2. Ն ե ր գ ո ր ծ ո ղ խ ն դ ի ր ը *կամ* ներգործող առարկան** *ցույց է տալիս մի առարկա, որի գործողությունը ենթական կրում է իր վրա, այսինքն ենթական ազդվում, ներգործվում է, կամ իբրև արդյունք առաջ է գալիս գործողությունից: Օրինակ՝ Աբելը սպանվեց* Կայենից:

3. Բ ն ու թ յ ա ն խ ն դ ի ր ը *ցույց է տալիս մի առարկա, որ ո՛չ կրող է և ո՛չ ներգործող: Օրինակ՝ Ես գիրքը տվի* Տիգրանին: *Նա նամակ ստացավ իր* հորից:

4. Պ ա ր ա գ ա յ ա կ ա ն խ ն դ ի ր *ասվում են այն գոյական խընդիրները, որոնք չեն մտածվում իբրև* բան, *ինչ կամ առարկայական խըն-*

---

* *Կրող խնդիրը կոչվում է նաև ներգործական սեռի խնդիր, այլև ուղիղ խնդիր. գլխավոր լրացում:*

** *Ներգործող խնդիրը կոչվում է նաև կրավորական սեռի խնդիր:*

դիր, ինչպես են մյուս երեք տեսակի խնդիրները. այլ իբրև տեղի, ժամանակի և այլ պարագա։ Օրինակ՝ «Նա սիրում է դպրոցը» խոսքի մեջ դպրոցը առարկայական խնդիր է (ի՞նչ, ի՞նչ բան,— կրող խնդիր). իսկ «Նա գնաց դպրոցը) խոսքի մեջ դպրոցը պարագայական խնդիր է (ո՞ւր, ո՞րտեղ,—տեղի պարագա)։

Պարագայական խնդիրները դրվում են պարագաների մեջ։

26. Կրող խնդրի նկատմամբ բոլոր բայերը բաժանվում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական։

1. **Անցողական** ասվում են այն բայերը, որոնք ունին կամ կարող են ունենալ կրող խնդիր, որի վրա անցնում է ներգործող ենթակայի գործողությունը, ինչպես են՝ ասել, գրել, մոտեցնել, նստեցնել։

2. **Անանցողական** ասվում են այն բայերը, որոնք չեն կարող ունենալ կրող խնդիր, ինչպես՝ ասվել, գրվել, մոտենալ, նստել։

Ենթակայական բայերն ուրեմն, որոնք չեն կարող ունենալ առարկայական, ուրեմն և կրող խնդիր, մտնում են անանցողական բայերի մեջ։

Ծան. Անանցողական բայերը ցույց են տալիս միայն ենթակայի գործողությունը կամ դրությունը. իսկ անցողական բայերը երբ մի կողմից նշանակում են ենթակայի գործողությունը, մյուս կողմից արտահայտում են նաև կրող առարկայի մի դրություն, որ նա կրում, ստանում է ենթակայի գործողությունից։ Օրինակ՝ «Երեխան պատռեց գիրքը» խոսքի մեջ պատռեց բայը ցույց է տալիս ոչ միայն «երեխան» ենթակայի գործողությունը, այլև միաժամանակ որոշում է գիրքը կրող խնդրի դրությունը, որի մեջ սա մտնում է երեխա ենթակայի ներգործությամբ. երբ երեխան պատռողն է, գիրքն ևս իր կողմից՝ պատռվողը, պատռվածն է։ Այսպես և երբ ասվում է՝ «Տիգրանը չուրը գոլորշիացրեց», ենթական՝ Տիգրանը, գոլորշիացնողն է, իսկ չուրը՝ գոլորշիացող, գոլորշի դարձողը։

27. Անցողական բայերը նայելով ենթակայի հարաբերությանը բայիմաստի հետ՝ երկու տեսակ են.

1. **Ներգործական բայեր**, որոնց ենթական ինքը կատարում է գործողությունը, օրինակ՝ Տիգրանը նամակ գրեց.

2. **Պատճառական բայեր**, որոնց ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ միայն պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու. օրինակ՝ Վարժապետն աշակերտին ուրիշ տեղ նստեցրեց (այսինքն՝ ոչ թե ինքը նստեց, այլ պատճառ եղավ, արեց, որ աշակերտը նստի)։

28. Անանցողական բայերն ևս նայելով ենթակայի հարաբերությանը բայիմաստի հետ՝ երկու տեսակ են.

1. **Կրավորական բայեր**, որոնք ունին կամ կարող են ունենալ ներգործող խնդիր, որի գործողությունը ենթական կրում է իր վրա (կրող ենթակա). օրինակ՝ Տիգրանը ճաղրվեց Արտաշեսից.

2. **Չեզոք բայեր**, որոնք չեն կարող ունենալ ներգործող խնդիր և ենթական ուրիշի գործողություն չի կրում։ Օրինակ՝ Տիգրանը ճեռացավ։

Ենթակայական բայերն ուրեմն, որոնք չեն կարող ունենալ առարկայական, ուրեմն և ներգործող խնդիր, մտնում են չեզոք բայերի մեջ։

Ծան. 1. Պատճառական և կրավորական բայերն ունին իրենց հատուկ կազմությունը՝ մոտեցնել, զարմացնել,— գրվել, կոտորվել. բայց ներգործական և չեզոք բայերը կազմությամբ չեն տարբերվում իրարուց։ Միևնույն կազմության բայերը երբ անցողական են, ներգործական են, ինչպես՝ առնել, գտնել, թողնել, տեսնել. իսկ երբ անանցողական են, չեզոք են, ինչպես՝ իջնել, մտնել, ելնել, հասնել։

Ծան. 2. Դրաբարում առանձին կրավորական բայեր չկան, և բայերը բաժանվում են երկու տեսակի՝ անցողական և անանցողական կամ չեզոք։ Անցողական բայերի ցույց տված գործողությունը կարող է կա՛մ իբրև ներգործական, կա՛մ իբրև կրավորական առնվել, և ըստ այնմ էլ միևնույն բայերը կարող են թե՛ ներգործակերպ և թե՛ կրավորակերպ խոնարհվել. տեսանեմ—տեսանիմ. տեսի—տեսայ։ Շատ բայեր, ինչպես և շատ ժամանակներ, հասարակ են մնում, այսինքն միևնույն ձևով կարող են և՛ իբրև ներգործական. և՛ իբրև կրավորական գործածվել։ Դրաբարում ներգործական և կրավորական ուրեմն ոչ թե բայերի տարբեր տեսակներ են, այլ միևնույն անցողական բայերի (որոնց մեջ մտնում են և պատճառական բայերը) տարբեր գործածության ձևեր, ինչպես որ է շատ լեզուների՝ ռուսերենի, ֆրանսերենի, գերմաներենի մեջ։ Աշխարհաբարում սակայն կրավորականի համար առանձին բայեր են կազմվել կրավորականի հատուկ «վ» (ու) ածանցով։ և ինչպես կարդալ բայի դիմաց պատճառականը՝ կարդացնել գոտ բայ է, նույնպես և կրավորականը՝ կարդացվել մի առանձին բայ է։ Այս պատճառով և կրավորականներն իբրև առանձին բայեր՝ դրել ենք անանցողական բայերի մեջ։

29. *Անցողական բայերն ունին իրենց համապատասխան իմաստով անանցողական բայեր, և ընդհակառակն։ Այսպես՝*

ա. Ներգործական բայերին համապատասխան են կրավորականները և ընդհակառակն. օրինակ՝ գրել, գրվել.— բանալ, բացվել.— կարդալ, կարդացվել։

բ. Պատճառական բայերին համապատասխան են չեզոքներն և ընդհակառակն. օրինակ՝ հատկանալ, հատկացնել.— հասնել, հասցնել.— մոտենալ, մոտեցնել։

Բացի այս՝ պիտի նկատի ունենալ.

1. Շատ ներգործական բայերի համար կան համապատասխան իմաստով պատճառական բայեր. ինչպես՝ հագնել, հագցնել. իմանալ, իմացնել. լսել, լսեցնել. խմել, խմեցնել. ուտել, ուտեցնել կամ կերցնել. կարդալ, կարդացնել. հասկանալ, հասկացնել. ճանաչել, ճանաչեցնել. մոռանալ, մոռացնել. հիշել, հիշեցնել. սովորել, սովորեցնել. ուրանալ. ուրացնել և այլն և այլն։

Ծան. Երբ ներգործական բայերի համապատասխան առանձին պատճառական բայեր չկան, այդ ժամանակ պատճառական իմաստն արտահայտվում է բաղադրյալ կազմությամբ՝ անորոշ դերբայի հետ տալ բայով. օրինակ՝ գրել տալ, բերել տալ, ասել տալ և այլն։ Հաճախ պատճառական բայերից ևս տալ բայով կազմվում են կրկին պատճառական բայեր. օրինակ՝ նստեցնել տալ, հասկացնել տալ։

2. Պատճառական բայերն ևս կարող են ունենալ համապատասխան իմաստով կրավորական բայեր. ինչպես՝ հատկացնել, հատկացվել. ներկայացնել, ներկայացվել. վերացնել, վերացվել. մոցնել, մոցվել։

3. Չեզոք բայերն ևս, բացի չնչ (չիլ) վերջացածներից, երբեմն ունին համապատասխան իմաստով կրավորական բայեր եզակի երրորդ դեմքով, որով կազմվում են անենթակա խոսքեր (տե՛ս § 22. 3)։

4. Որոշ թվով ներգործական բայեր, ինչպես բնակել, ճնազանդել, հաշտել, պապանձել, հրաժարել *և այլն, այլևս գործածական չեն լեզվի մեջ. ուստի դրանց կրավորականները՝* բնակվել, ճնազանդվել, հաշտվել, պապանձվել, հրաժարվել, *ստացել են չեզոք բայի նշանակություն։ Այս կարգի բայերն ունին և պարզ իլ լծորդով ձևեր՝* բնակիլ, ճնազանդիլ, հաշտիլ, պապանձիլ, հրաժարիլ, *որոնք իմաստով նույն են, ինչ որ բնակվել, հնազանդվել, հաշտվել և այլն. և գործ են ածվում ավելի արևմտյան աշխարհաբարում։ Դրանց համապատասխան անցողական կազմվում է պատճառական ձևով՝* բնակեցնել, ճնազանդեցնել, հաշտեցնել, պապանձեցնել, հրաժարեցնել։

Ծան. *Սակավաթիվ չեզոք բայերի համար, ինչպես՝* գալ, ընկնել, երթալ *և այլն, չկան պատճառական ձևով կազմություններ։ Դրանց համապատասխան անցողական իմաստով գործ են ածվում առանձին ներգործական բայեր, ինչպես՝* բերել, ձգել, տանել *և այլն։ Այսպես և լինիլ բայի համար գործ է ածվում* անել *բայը։ Ժողովրդական լեզվի մեջ* լլնել *(=լինել) ունի* լցնել։

30. *Անցողական բայերով ասած խոսքերը կարելի է շուռ տալ և համապատասխան իմաստով անանցողական բայերով ասել. այդ ժամանակ*

1. Ներգործական բայի կրող խնդիրը դառնում է կրավորական բայի կրող ենթակա, իսկ ներգործող ենթական՝ ներգործող խնդիր. օրինակ՝ Կայենը (ներգործ. ենթակա) սպանեց *Աբելին (կրող խնդ.).— Աբելը (կրող ենթ.),* սպանվեց *Կայենից (ներգ. խնդ.)։*

2. Պատճառական բայերի կրող խնդիրը դառնում է չեզոք բայի ենթակա, իսկ ենթական՝ պատճառական խնդիր. օրինակ՝ Տիգրանը վախեցրեց *Արտաշեսին՝ խոսքը շուռ է գալիս՝ Արտաշեսը* վախեցավ *Տիգրանից։*

31. *Ներգործական սեռին համապատասխան կրավորական բայերը գործ են ածվում.*

1. Բուն կրավորական *իմաստով (§ 28. 1), մանավանդ երբ ներգործական բայը հոգն. երրորդ դեմքով անենթակա գործածությամբ է (§ 22. 4), ուստի և կրավորական սեռի մեջ չունի ներգործող խնդիր. օրինակ՝ Արյունն արյունով չեն լվանալ.— Արյունն արյունով չի լվացվիլ (Ա.)։*

2. Անդրադարձ *իմաստով, երբ ենթական ոչ թե մի ուրիշ առարկայի, այլ յուր իսկ գործողության ազդեցությունն է կրում յուր վրա. օրինակ՝ Նա լվացվեցավ, սրբվեցավ (այսինքն՝ լվաց, սրբեց իմքն իրեն): Մենք պաշտպանվում էինք թշնամիների դեմ (այսինքն՝ մենք մեզ պաշտպանում էինք)։*

3. **Փոխադարձ** *իմաստով. օրինակ՝ Նրանք* **համբուրվեցան** *(այսինքն՝ համբուրեցին միմյանց)։*

Ձեզոք *իմաստով, երբ ենթական իրան իրան լինում է մի վիճակի մեջ։ Այս դեպքում կրավորական բայը չեզոք բայի նշանակություն ունի, այսինքն կրողություն չի ցույց տալիս. ուստի և խոսքը կարելի չէ ներգործական սեռի վերածել։ Կրավորական բայերի այս գործածությունը շատ սովորական է հայերենում։ Օրինակ՝ Լույսը բացվեց, աստղերը գունաթափվում են. ոսկեգույն ամպերն արդեն գլորվում են օդի բարձրության մեջ. քամին շարժվում է մեղմիկ (Տե՛ս և § 29. 4)։*

32. *Պատճառական սեռին համապատասխան կրավորական բայերը գործ են ածվում հատկապես այն ժամանակ, երբ ներգործող խնդիր չկա, բայց ենթական կրում է բայի գործողությունը, որ մի ուրիշ առարկայից է ծագում և ոչ ենթակայից։ Օրինակ՝ Ժողովուրդը խնդիրք է տվել տեղական իշխանությանը, որ եկվորներն իսպառ* **հեռացվեն** *այն տեղից. այդ խնդիրը դեռ չի* **մտցված** *քննության առնելիք գործերի շարքը։— Երկնային Վարդապետի խոսքը* **հավասարեցված** *է այսօր հողի։— Այդ առարկայի դասավանդությունն անմիջապես* **դադարեցվում** *է։— Նրանք* **վարժեցվում** *են այդ արհեստին։— Այն պայմանով ընդունեցին, որ մսի գինն էլ* **բարձրացվի** *(Ր.)։— Ժամը մի անգամ փոքրիկ ունելիքով կրակը շարվում էր ղայլոնի գլխին և* **բազմեցվում** *Պատվելու առաջին (Պռ.)։*

Սան. *Այս կրավորականի գործածությունը լրագիրներում հետզհետե ավելի գործածական է դառնում. ժողովրդական լեզվի մեջ դրա տեղ, բացի սակավաթիվ բայերից, գործ են ածվում կա՞մ անցողական կա՞մ չեզոք ձևերը։ Վերոհիշյալ խոսքերն, օրինակ, լինում են՝... եկվորներին հեռացնեն, կամ եկվորները հեռանան։ Այդ խնդիրը չեն մտցրել կամ չի մտած, կամ չի մտցրած։— Հավասարեցրած է և այլն։*

4. ՊԱՐԱԳԱ

33. *Ամեն հատկանիշ կարող է ունենալ իր զանազան հատկանիշները կամ պարագաները։ Այսպես՝ ամեն գործողություն կատարվում է մի որևէ տեղում, ժամանակում, այսպես կամ այնպես, մի կամ մի քանի անգամ, այս կամ այն պատճառով, այս կամ այն նպատակով և այլն. ուստի բայերը ըստ դեմքի, բայիմաստի ու սեռի լրացվելուց զատ՝ կարող են լրացվել նաև ըստ տեղի, ժամանակի, որակի, քանակի, հիմունքի և եղանակի։ Բայերի վրա դրված այսպիսի լրացումները, որոնք ցույց են տալիս բայիմաստի հատկանիշները, կոչվում են պարագա։ Օրինակ՝* **Տիգրանը երեկ երկու անգամ գնաց պարտեզ՝ զբոսնելու** *խոսքի մեջ* **երեկ** *բառը որոշ ցույց է տալիս գնալու գործողության ժամանակամիջոցը.* **երկու անգամ** *ցույց է տալիս գործողության կրկնությունը.* **պարտեզ՝** *այն տեղը, դեպի ուր ուղղվել է գործողությունը.* **զբոսնելու՝** *այն նպատակը, որի համար կատարվել է գնալու գործողությունը։*

34. *Պարագաները, նայելով իրենց նշանակության, սովորաբար բա-*

ժանում են հետևյալ տեսակներին՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի, հիմունքի և եղանակի պարագաներ։

1. **Տեղի պարագան** *պատասխանում է՝ ո՞ւր, ո՞րտեղ, դեպի ո՞ւր, մինչև ո՞ւր, ո՞րտեղից, ո՞րտեղով, ո՞րքան տեղ հարցերին։ Օրինակ՝* **Նա** *Երևանից եկավ* **Վաղարշապատ**։— **Ճանապարհն անցնում էր անտառով**։— **Անտառի խորհում մի ճգնավոր էր կենում։ Նա ինձ վերստ հեռացավ։**

2. **Ժամանակի պարագան** *պատասխանում է՝ ե՞րբ, ո՞ր ժամանակից (երբվա՞նից), մինչև ե՞րբ, ո՞րքան ժամանակ հարցերին։ Օրինակ՝* **Ամառն ես գյուղումն էի ապրում։— Անձրևն երկու օր տևեց։— Գարնանն անձրև չեկավ։— Մինչ երեկո տեղ կհասնենք։— Նրանք երեկվանից պատրաստվել են գնալու։**

3. **Ձևի և միասնության պարագան*** *պատասխանում է՝ ի՞նչպես, ի՞նչ կերպով, (ո՞նց) հարցերին։ Օրինակ՝* **Նա գիշերը բաց աչքով լուսացրեց։— Սիրով կկատարեմ ձեր պատվերը։ Շնորհիվով շարժվիր։— Նա արագ է խոսում։ Արեգակը փայլում է պայծառ։** *Սոսն ու Գարեգինը միասին եկան տուն։*

4. **Չափ ու քանակի պարագան** *պատասխանում է՝ ո՞րքան, ո՞րչափ, ի՞նչքան, ի՞նչչափ, քանի՞, քանի՞ անգամ հարցերին։ Օրինակ՝* **Նա շատ բարկացավ։ Այս պատը ինձ կանգուն բարձրացրին։ Տանը նստիր, լիտր գաս (Ա.)։ Տասը (տասն անգամ) չափիր, մին (մի անգամ) կտրիր (Ա.)։ Նա ինձ անգամ գնաց, եկավ։**

Տառ. *1.* **Անգամ** *բառը ցույց է տալիս գործողության կրկնությունը։*

Տառ. *2.* **Չափ ու քանակի պարագայի մեջ մտնում է և աստիճանի պարագան, օրինակ՝ Քամին ավելի սաստկացավ։ Այս պատկերը շատ գեղեցիկ է (ո՞րքան գեղեցիկ, ո՞ր աստիճանի գեղեցիկ)։**

5. **Հիմունքի պարագաները** *լինում են.*

ա. **Պատճառի պարագա,** *որ ցույց է տալիս սկզբնական հիմունքը, որին իբրև հետևանք լինում է գործողությունը։ Պատասխանում է ինչո՞ւ, ինչո՞ւ համար, ինչի՞ց, ի՞նչ պատճառով հարցերին։ Օրինակ՝* **Նա հիվանդության պատճառով տանը մնաց։— Նա գողության համար արձակվեց ծառայությունից։—Հոգնած լինելով չկարողացա այլևս պարապել (=որովհետև հոգնած էի)։ — Նա ամոթից գլուխը կախ ձգեց։**

Տառ. **Պատճառի պարագա են դնում հաճախ կրավորական բայերի ներգործող խնդիրը և չեզոք բայերի պատճառական խնդիրը (§ 30). օրինակ՝** *Ինչ որ մարդուս կգա, ամենն իր խելքից (=իր խելքի պատճառով)։ Ամեն չնչին բանից բարկանում է (=բանի համար, բանի պատճառով)։* **Նա հաղցից մեռավ։**

բ. **Նպատակի պարագա,** *որ ցույց է տալիս վախճանական հիմունքը, որին հասնելու համար կատարվում է մի բան։ Պատասխանում*

---

* **Ձևի պարագան կոչվում է նաև որակի, որպիսության կամ կերպի պարագա։**

է ինչո՞ւ, ինչի՞, ինչո՞ համար, ի՞նչ նպատակով հարցերին։ Օրինակ՝ Նա գնաց զբոսնելու։— Թագավորը նստեց դատաստանի։— Այս ամենը հայտարարեցին ի գիտություն հասարակության։

գ. Պայմանի պարագա, որ ցույց է տալիս հավանական կամ ենթադրական պատճառ։ Օրինակ՝ Այդպես անելովդ ամենքի աչքից էլ կընկնես (=եթե այդպես անես)։— Հարատև աշխատանքով միայն նպատակիդ կհասնես (=եթե հարատև աշխատես)։

դ. Զիջման կամ ճակատակ հիմունքի պարագա, որ ցույց է տալիս այնպիսի հիմունք, որից ուրիշ հետևանք առաջ պիտի գար, քան ինչ որ իրոք կատարվում է։ Օրինակ՝ Նրա բոլոր պահանջները կատարելով ճանդիրձ՝ ես չկարողացա նրան ինձ հետ հաշտեցնել։— Հակառակ (կամ չնայելով) քո բոլոր ջանքերին՝ դու քո նպատակիդ չհասար։

ե. Եղանակի պարագան ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը դեպի խոսքի բովանդակությունը։ Օրինակ՝ Մենք անպատճառ պետք է գնանք, նրան տեսնենք։— Նա գուցե վաղը կգա մեզ մոտ։— Դու իսկապես խելոք վարվեցիր։

Ծան. Եղանակի և չափ ու քանակի պարագաները դնում են նաև ձևի պարագաների մեջ իբրև առանձին երկրորդական տեսակներ։

85. Պարագաները նայելով թե ինչ տեսակի բառերով են արտահայտվում՝ բաժանվում են երկու խմբի՝ բուն պարագաներ և պարագայական խնդիրներ։

1. Բուն պարագաները արտահայտվում են մակբայներով (§ 10. 3) և իբրև մակբայ գործածված ածականներով. օրինակ՝ Կամաց խոսեցեք։— Երբեք մեկին չեմ նախանձում ես աշխարհում։ Տասը չափ՛ր, մին կտրի՛ր (Ա.)։ Ես գնալիս տեսա նրան։

2. Պարագայական խնդիրները արտահայտվում են մի գոյականով՝ մենակ կամ որևէ կապով (§ 13). օրինակ՝ Նա ֆաղաֆից վերադարձավ գյուղը։ Նա գիշերս առանց ճնելու լուսացրեց։ Մարդ պետք է խղճմտանքով խոսի (Ա.)։

86. Պարագայական խնդիրները միշտ տեղ են բռնում բուն պարագաների, որ է մակբայների, և առարկայական խնդիրների մեջ։ Մի կողմից այս լրացումները խնդիր են, որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովներին հատուկ նշանակությունները։ Մյուս կողմից սակայն դրանք պարագա են, որովհետև խոսքի մեջ դրվելով բայի վրա՝ կորցնում են իրենց առարկայական իմաստը, այսինքն չեն մտածվում իբրև բան, ինչ կամ առարկայական խնդիր, ինչպես են կրող, ներգործող և բնության խնդիրները. այլ առնվում են մի տեսակ իբրև մակբայ՝ մտածվելով իբրև տեղ (ուր, որտեղ), ժամանակ (երբ), ձև կամ որակ (ինչպես) և քանակ (որքան)։ Խոսքի մեջ ունեցած իրենց նշանակությամբ ուրեմն այս լրացումները պարագաների կարգին են պատկանում. բայց իսկական պարագա կամ մակբայ չեն, որովհետև, ինչպես ասացինք,

պահում են իրենց հոլովական նշանակությունը։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ Նա քաղաքից վերադարձավ գյուղը, ինչքան էլ **քաղաքից** (*ո՞րտեղից, և ոչ՝ ինչի՞ց*) և **գյուղը** (*ո՞րտեղ, ո՞ւր, և ոչ՝ ի՞նչը*) լրացումները խոսքի մեջ տեղի պարագա են նշանակում, բայց և այսպես **քաղաքից** բացառական հոլովն ու **գյուղը** հայցական հոլովը կատարելապես պահում են իրենց կենդանի հոլովական նշանակությունը։ Այս պատճառով **քաղաքից** և **գյուղը** լրացումները կարելի չէ իսկական պարագաների, այսինքն մակբայների մեջ դնել։ Դրանք պարագայական խնդիր են։ Բուն պարագաների կամ մակբայների մեջ կարելի էր դնել այս լրացումները, եթե դրանց մեջ զգալի չլիներ հոլովական ձևը, ինչպես՝ արդյոք, հավաստյավ, հազիվ, այսուհետև, այնուհետև, արդեն և այլն բառերի մեջ, որոնք հոլովված բառեր են, բայց հնացած, քարացած ձևերով, և մենք այլևս չենք գիտակցում դրանց մեջ ո՛չ առարկայի գաղափարը և ո՛չ գործիական կամ բացառական հոլովի նշանակությունը։ Հաճախ նույնիսկ դժվար է որոշել, թե մի խնդիր առարկայակա՞ն թե պարագայական նշանակություն ունի. որովհետև նայելով մտածության եղանակին՝ միևնույն խնդիրը կարող է և այսպես, և այնպես ըմբռնվել. օրինակ՝ **կառքով գալ, սղոցով կտրել** և այլն կարող է մտածվել և ինչպես **գալ, կտրել**. և իբրև միջոցի գործիական՝ **ինչով գալ, կտրել**։

37. Բուն պարագաներին մոտենում են ժամանակի անուններից՝ **այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ**, որոնք իբրև ժամանակ ցույց տվող բառեր՝ խոսքի մեջ սովորաբար պարագայական նշանակություն ունին և համարվում են մակբայ։ Բայց այդ բառերը մակբայ համարելու հիմք չկա. մակբայներն անփոփոխ մնացող բառեր են, մինչդեռ դրանք հոլովվող բառեր են և խոսքի մեջ կատարելապես պահում են իրենց հոլովական նշանակությունները, ինչպես ամեն տարիք ժամանակի անուն՝ **շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն** և այլն։ Եվ ինչպես որ վերջինները ժամանակի պարագայի նշանակությամբ գործ են ածվում իբրև ժամանակի հայցական՝ փոխանակ ներգոյականի,— **Նա առավոտը եկավ, Նա իրիկունը կգա, Նա ամառն եկավ** և այլն,—նույն ձևով բանում են և՝ **Նա երեկ եկավ, Նա վաղը կգա, Նա էգուց կգա** և այլն։ **Այսօր** բառն ևս նույն ձևի պարագայական խնդիր է և ոչ մակբայ, ինչպես որ պարագայական խնդիր են՝ **Նա այս շաբաթ գնաց, Նա այս ամիս գնաց, Նա այս տարի գնաց, այս ամառ ես գյուղումն էի, այս ձմեռ ձյուն չեկավ** և այլն խոսքերի մեջ **այս շաբաթ, այս ամիս, այս տարի, այս ամառ, այս ձմեռ**։ Կատարելապես նույն ձևով և նույն պարագայական նշանակությամբ մենք **շաբաթ, ամիս, տարի, գիշեր** և այլն բառերի տեղ դնում ենք **օր** բառը և ասում՝ **Նա այսօր գնաց, այսօր ես գյուղումն էի, այսօր ձյուն չեկավ**։ Մի անգամ որ **այսօր** նման տեսակի պարագայական խնդիր է՝ ինչ որ **այս շաբաթ, այս ամիս, այս տարի** և այլն, հասկանալի է, որ այդ բառն ևս պետք է գրել իբրև երկու բառ՝ **այս օր**, ինչպես որ գրում էին **առաջ**, և ինչպես որ գրում ենք նույն կարգի՝ **այս շաբաթ, այս ամիս,**

այս տարի, այս ամառ, այս իրիկուն, այս դիշեր և այլն, որոնք երբեք մի բառ և մակբայ չեն համարվում։

Այսօր, վաղը, էգուց, երեկ բառերը ոչ միայն հոլովվում են, այլև կարող են իբրև ենթակա և խնդիր գործածվել խոսքի մեջ՝ այսօրվան օր, երեկվան օր, վաղվան օր նշանակությամբ։ Օրինակ՝ Մեր այսօրը *միայն* այսօր *է, ոչ մի կապ չունի անցյալի և ոչ էլ ապագայի հետ (Մշակ, 1909. № 152, եր. 4)։ Նրանց* այսօրվա *պարապմունքի առարկան նշանավոր էր շատ կողմերից (Մուր.)։ Չէ՛, քաղցրիկս, չէ՛.* այսօրից *(կարող էր գրել նաև՝* այսօրվանից*) քո մոր բերանը թխվածքներ ու անուշներ մտնելու չեն մինչև քո վերադարձդ (Պռ. Սկ. երկ.)։ Այսօր բառի տեղ նաև* օրս՝ *(ինչպես նաև՝ առավոտս, իրիկունս, գիշերս), օրինակ՝ Մինչև* օրս *լրսված չի (նույն է թե՝ մինչև այսօր). Օրես հետո մենք այստեղ անուշներով ճաշելու, պատռելու ենք. Օրես ետ մինչև Ղունկիիս գալուստը (Պռ. Սկ. երկ.)։* Այսօրվա *ես գոհ էի շատ ու շատ, վաղվա համար էլ ունեի մեծ հավատ (Գամ.-Քաթ.)։ Հետու անցյալն ու ապագան նա չգիտե. նրան հետաքրքրում է միայն* այսօրը և վաղը: Երեկը *նա մոռանում է. վաղվա համար նա չէր հոգում, այլ նրան հարկավոր է միայն* այսօր:— *Ինձ երեկը կրկնվում է միշտ* այսօր *(Գամ.-Քաթ.)։ Զարմանալի է, որ մեր մեջ ինչպես ալ շուտ կմոռնան երեկը, մինչև իսկ այս առավոտը (Մշակ, 1908. № 273)։ Դպրոցական սեղաններու վրա հուշատետր չի պահվիր.* Երեկը *այսօր կկրկնվի. ոչ հուզում, ոչ կյանք (Շանթ, երազ. օրեր. սեպտ. 30)։* Այսօր *երեկվա ժամանակից ուշ էին ճաշում (Մուր.)։ Ես երեկվանից պահքս բռնել եմ (Պռ.)։ Կիրակոսն անխոս հանեց երեկվանից կրկնապատիկ մեծ քսակ (Պռ. Սկ. երկ.)։—Երեկը երեկ էր,* այսօրը այսօր *(Շիրվ. Պատ. հմր.). Կային և կասկածոտներ, որոնք լավատես չէին տրամադրված դեպի վաղվան օրը. սակայն վաղը մեր ձեռքին է. մենք պիտի հավատանք մեզ, մեր ստեղծագործական ուժերին, մենք պիտի կազմենք վաղը (Գործ, 1909. № 391)։ Ու հիմա, ի՞նչ կվերապահե մեզի վաղը (Անահիտ, 1907 թ. 1—2. եր. 45)։ Մարիամ Խաթունը նախընթաց երեկոյին վաղվան պաշարի պատրաստության հոգսերով էր զբաղված։—Այս գիշեր բավական է այս չափը. մնացածը վաղվան թողնենք (Պռ.)։ Մենք վաղիեն ենք, վաղը մերն է (Ա.)։ Էգուցները միշտ միանման չեն ետ գալիս (Գամ.—Քաթ.)։*

Ժամանակի անուններից մակբայներին մոտենում են ավելի առաջ, այժմ (հիմի, հիմա), հետո, որոնք գործ են ածվում իբրև պարագա. իսկ իբրև ենթակա և խնդիր բանում են՝ այժմյան ժամանակը, առաջվան ժամանակը և այլն։ Սակայն դրանք էլ հոլովվող բառեր են,—առաջվան, առաջվանից, առաջվանով, առաջները. այժմյան (այժմվան), այժմյանից, այժմյանով, հիմիկվան, հիմիկվանից. հոգով՝ հիմիկս,— և խոսքի մեջ պահում են իրենց հոլովական նշանակությունը. օրինակ՝ Դեռ հառաջ ու հառաջ (սովորաբար՝ առաջ ու առաջ=սկիզբը, սկզբում) մեկը կտրից, մյուսը բակից նշանացի ակնարկներով սկսեցին շարունակել

յուրյանց սիրաքանութիւնները, վերջը Ղունկիանոսի հանդգնութիւնն այն տեղը հասավ, որ... պատն անցկացավ (Պռ.)։ **Առաջի** տարինները, օրերը. *(հմմտ. սկզբի տարինները)։ Ես կմեռնեի ...եթե* **առաջվա** *պես կարդալ գրել չիմանայի (Պռ.)։ Այսօր էլ Աշտարակցին խմիչքի առուտուրը ձեռքից բաց չի թողել, բայց ոչ* **առաջվան** *պես (կարող էր գրել նաև՝ ոչ ինչպես առաջ). այժմ այդ առուտուրն ընդհանուրից անցել է մասնավորներին (Պռ.)։ Այդ հետվա բան է։ Դրած ուխտն* **այժմվանից** *արդեն ծանրը էր թվում իրեն (Մուր.)։ Հիմիկվանից պատրաստ եղիր (Պռ.)։*

Առաջ, ետեռ *գործ են ածվում և իբրև ետադրութիւն։*

38. *Բուն պարագաներին մոտենում են ավելի* **տեղի անունները**: *Այսպես կոչում ենք այն գոյականները, որոնք ցույց են տալիս՝ 1) Մարդու և կենդանիների մարմնի, նմանութեամբ նաև իրերի, զանազան մասերը կամ կողմերը, որոնք մտածվում են իբրև* **տեղ** *և վերցվում են հարաբերութեամբ նույն առարկայի ուրիշ մասերի. ինչպես՝* **տան առաջը**, **տան ետևը**, *որ նույն է թե* **տան առաջի** *մասը, առաջի կողմը.* **տան ետևի** *մասը, ետևի կողմը .2) Տեղի տարածութեան մի մաս, որ բռնում է մի առարկա, կամ ընկնում է երկու առարկայի մեջ, կամ թե վերցվում է նույն առարկայի զանազան մասերի կամ տարբեր առարկաների իրար հետ ունեցած դրութեան նկատմամբ։ Այս երկրորդ նշանակութեամբ՝ տեղի անուններն առնվում են իբրև ետադրական բառեր և ցույց են տալիս տարածական հարաբերութիւն երկու առարկայի կամ նույն առարկայի տարբեր մասերի նկատմամբ։ Օրինակ՝ ժողովեց իսկույն Պետրոսի իրեղեններ և կառքի* **ետիքն** *ու* **առաջինն** *դարսելով՝ սկսավ ամրացնել (Մուր.)։*

Տեղի անուններն իբրև տեղ նշանակող բառեր՝ սովորաբար պատասխանում են ո՞րտեղ հարցին և խոսքի մեջ գործածվելով իբրև տեղի պարագա՝ հաճախ առնվում են իբրև մակբայ։ Բայց դրանք մակբայ չեն, այլ գոյական, քանի որ կարող են նաև իբրև առարկայական խնդիր գործածել և հոդեր, երբեմն նույնիսկ ածական վերադիր առնել և հոլովվել եզակի ու հոգնակի։ Պարագայական նշանակութեամբ գործ ածված ժամանակն ևս այս բառերն իսկական պարագա, այսինքն մակբայ չեն կարող համարվել, այլ միայն պարագայական խնդիր, երբ հոդ են առնում կամ հոլովվում են՝ պահելով իրենց հոլովական նշանակութիւնները։ Ինչպես՝ **վարդիթերը վազեց դռան առաջը**, *որ դուռն* **առաջին** *բաց անի։—Եկավ, առաջին կանգնեց։—Եկավ* **առաջովս** *անց կացավ։ Գնա՛,* **առաջիցս** *հեռացիր։— Այս բառերը շատ մոտ են մակբայներին և կարող են գրեթե մակբայ համարվել միայն այն ժամանակ, երբ առանց հոդի*

---

* *Առաջ, որ իբրև ժամանակի անուն նշանակում է սկիզբ, հականիշ վերջ բառի, գրաբարում գործածվում է և առարկայական իմաստով. ինչպես՝* **զառաջ նորա եւ զվերջ նորա.— Այն առաջն է... այն վերջն է. Ամենայն ուրեք սկիզբն եւ առաջին դժուարիճ են: Ի վերջէ յառաջսն տանելի է մեզ պատմութիւնս: Մարկիոն եդեալ երիս առաջս՝ ուսուցանէ զպարտոյ եւ զարդարոյ եւ զչարէ** *(տե՛ս Նոր բառգիրք հայկ. լեզուի)։*

և հայցական հոլովով դրվում են բայերի վրա՝ եղանակավորելով բայերի նշանակությունը կամ մի նոր նշանակություն տալով նրանց։ Այս դեպքում սակայն բայն ու իր հարադիրը միասին առնվում են իբրև մի բարդ բառ, մի հարադրյալ բայ, ինչպես՝ դուրս անել (արտաքսել), դուրս գալ (ելնել), ներս անել, մեջ ընկնել, մեջ տալ, առաջ ընկնել, առաջ դալ, դեմ անել, դեմ տալ, ետ անել, վեր ելնել, վրա տալ, վրա բերել, վրա գալ, շուրջ ածել, շուրջ (շուռ) դալ, մոտ անել, մոտ բերել և այլն։

Նույն ձևով միևնույն բառերի հայցական հոլովը, երբ առանց հոդի գործ է ածվում մի սեռական խնդրով, համարվում է գրեթե ետադրություն. ինչպես՝ Մեծի մոտ խոսքս կտրուկ է։ Նրանք անուշ քնի մեջ են.— Ձիու առաջ խոտ ձգիր։— Քարերի վրա փռած էր լոշը (Պռ.)։ Բայց երբ նույն բառերը հոդով են և կամ մյուս հոլովական ձևերով, այլևս չեն կարող ետադրություն համարվել, այլ պարագայական խնդիր մի սեռական վերադրով. որովհետև այս դեպքում այս անունները պահում են կատարելապես իրենց հոլովական նշանակությունները. օրինակ՝ Բազումքը հասել էր Շամփուր-Կշեռքի մոտը. մոտիս գիրքը. գնա՛, մոտիցս հեռացիր. եկավ մոտովս անց կացավ. Հողի տակիցը դուրս եկավ.—Հիմի տըղես իմ առաջիս խոսում է (Պռ.)։

89. *Տեղի անունները հետևյալներն են.*

1. **Տեղ**. նշանակում է՝ ա) Մարդու և կենդանիների մարմնի զանազան մասեր (գլուխ, վիզ, մեջք և այլն) ընդհանրապես առած։ Օրինակ՝ Ուղտին ասին վիզդ ինչո՞ւ է ծուռ։ Ասաց՝ ո՞ր տեղս (=ի՞նչս) է ուղիղ, որ վիզս ծուռ չլինի (Ա.)։— Կեսրակը հարցմունք արեր՝ Հարսնո՛ւկ, քու ո՞ր տեղդ է ցավցեր։— Մարի՛կ, քու որդուդ սիրուն իմ ամեն տեղիկս է ցավցեր (Ժող. երգ)։ Հանեցին անուշ խորովուն թունդրիցը... որ տեղը ձեռն էիր տալիս՝ թել թել էր լինում։ Լավ տեղերիցն էլ կտրեցին, վեր կալան, որ ժամը ղրկեն ճաշին (Պռ.)։ Իմ այս տեղս ցավում է։

բ) Տարածության մի մաս, որ բռնում է մի առարկա, կամ ուր կա, լինում է մի բան, կամ թե բացարձակ կերպով՝ առանց տեղ բռնող առարկան նկատի ունենալու՝ իբրև վայր։ Օրինակ՝ այս անտառը մեծ տեղ է բռնում։ Քանդեցին և այն տան տեղը պարտեզ տնկեցին։ Նստիր տեղդ, ես այստեղ կնստեմ (Մուր.)։ Ա՛խ, թոռիր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ։ Փոխաբերական նշանակությամբ՝ Առողջությունը տեղը չէ (Գամ.-Քաթ.)։ Պետք էր կամսարյանի տեղը լինել՝ հասկանալ կարենալու համար թե... (Մուր.)։

Տեղ բառը գործ է ածվում և իբրև ետադրություն՝ ինձ տեղ, քեզ տեղ։ Տե՛ս ետադրությունների մեջ։

Տեղ բառից կազմվում են՝ մի տեղ, մի քանի տեղ, շատ տեղ, ուրիշ տեղ, այլ տեղ,—Մի տեղ ժողովուրդը հոգևորականին վարձատրում է բնական բերքերով. մի այլ տեղ՝ «սուրբ սեղանով», երրորդ տեղ՝ դրամով (Եղ. Գեղամ.),— ջոկ տեղ, հեռու տեղ, մոտ տեղ, դուրս տեղ.—

տեղ տեղ,— Տեղ տեղ այդ հանդիպակաց սարերն այնպես էին միմյանց մոտենում... (Մուր.).— Մեջտեղ, այստեղ, այդտեղ, այնտեղ, որտեղ։

Վերջին հինգն այժմ՝ համարելով մակբայ՝ սովորաբար իբրև մի բառ են գրում. բայց պետք էր գրել անջատ, ինչպես առաջ գրում էին. որովհետև դրանք իսկապես պարագայական խնդիր են, նույնպես գոյական, ինչպես տեղ բառը, և կարող են հոլովվել, հոդ առնել և նույնիսկ իբրև ենթական և խնդիր գործածվել. օրինակ՝ Ջեռքս առի, դարձրի դեպի արեգակ ու ակի մեջ տեղը ուշադրությամբ նայեցա (Գամ.-Քաթ.)։ Այնպես տվեց, որ մեջտեղիցն երկու կտոր եղավ (Պռ.), Մարդու այստեղը (խփելով կրծքին) հանգիստ լինի... այստեղը (Շիրվ. Բվգ.)։ Այնտեղ՝ ուր առաջին անգամ Հայկ յուր տնով տեղով ոտք կոխեց, կոչեց Հայք, կամենալով ցույց տալ թե այդ տեղում բնակեցան այս ազգի հայրերը (Պալ. Հյց. պտմ.)։ Հենց որ եկավ այն տեղը, որ ասում է «յայնժամ նմանեսցի»... թղթերը բերեց (Պռ.)։—Ո՞վ ես դու, որ համարձակեր ես գալ այս տեղերը (Սրվանձտ. Հ. Հ.), Ցերեկով այս տեղերում վտանգը մեծ է։— Նույնպես և մյուս հոլովներով՝ այստեղի, այստեղից, այստեղով և այլն։

2. Կողմ. նշանակում է առարկայի մի մաս կամ նրա վերաբերմամբ մի տեղ, որ առնվում է նկատմամբ նույն առարկայի ուրիշ մասերի, որոնք հակառակ դրության մեջ, դեմ ու դեմ են գտնվում։ Համանիշ են ժողովրդական՝ դին, դի, երես բառերը. օրինակ՝ վաղուցվան խոյեցիք, որ հիմի Արազի այս երեսումն (=այս կողմումն) են կենում (Պռ.)։

Կողմ, դին, դի բառերից կազմվում են՝ այս կողմ, այդ կողմ, այն կողմ, ուրիշ կողմ, ներսի կողմ, դրսի կողմ, աջ կողմ, ձախ կողմ, չորս կողմ, չորս դի, չորս դին,— չորս դինդ ես մտիկ տալի (Պռ.),— այս դին, այն դին և այլն։

Այս կողմ, այն կողմ կազմության համանիշ են ժողովրդական դես, դեն բառերը, որոնք արդեն մտած են գրական լեզվի մեջ։ Դրանք ծագած են ընդ այս. ընդ այն ձևերից հնչափոխությամբ (ընդ էս, ընդ էն=դես, դեն), բայց ազդվելով այս կողմ, այն կողմ ձևերից՝ արդեն դարձել են գոյական և հոդ ընդունելով հոլովվում են։ Օրինակ՝ Կեսը դեսը ձգեցի, կեսը դենը (Պռ.)։ Հարսանիքից դեսը մոր երես չեն տեսած.—Մի քիչ դեսից դենից զրույց տվին (Պռ.)։ Դիլիջանից դենը (=այն կողմը) հայ գեղ կա, ընդեղի վարժապետն եմ (Մուր.)։ Ըստեղ հլա շատ փայը դուզ ա... ամա դենի ճամպեն չիմ մեջալդով ա անց կենում (Մուր.— Այստեղ դեռ շատ մասը դաշտ է... բայց այն կողմի ճանապարհն ամբողջ անտառով է անց կենում)։ Մի՞տդ ա, որ ասում ի թե Դիլիջանա դեսի ճամպեն էվելի սիրուն ա քանդ դենինը (Մուր.)։*

3. Առաջ, առջև, դեմ, դիմաց, հանդեպ. նշանակում են՝ մարդու երեսի, դեմքի կողմի ամբողջ մասը, առաջի մասը. կամ իբրև տեղ՝ առար-

---

* *Այսպես և գրաբարի ընդ որ կազմությունից ծագած է բարբառային դոր, դվոր մակբայը՝ դո՞ր ես գնում. դվո՞րն եկավ,— ընդ ո՞ր երթաս. ընդ ո՞ր եկին։*

կայի բռնած տարածության ճակատի կողմը, առաջի կողմ։ Իրերի համար նշանակում են այն մասը, որ դարձած է գեպի մարդու կողմը։ Իբրև ետադրություն ցույց են տալիս տարածական հարաբերություն մի առարկայի՝ նկատմամբ մի ուրիշ առարկայի, որ առաջինին դարձած է իր առաջի կողմով։— Հականիշ են՝

Ետև, ետ, ֆամակ, *որ նշանակում են թիկունքի կողմի ամբողջ մասը, ետևի կողմ. իբրև ետադրություն տարածական հարաբերություն մի առարկայի՝ նկատմամբ մի ուրիշ առարկայի, որ առաջինին դարձած է իր ետևի կողմով։*

Դեմ ու դեմ. *Նույնանիշն է նույնպես կրկնված դեմ ճանդիման. ցույց է տալիս փոխադարձ տեղական հարաբերություն, որով մի առարկայի առաջի կողմը դարձած է մի ուրիշ առարկայի առաջի կողմին։*

Օրինակներ՝ Մենք ի՞նչ ենք, որ մեր ասած գոհությունը Աստուծու սուրբ առաջին ի՞նչ լինի (Աբով. Վ. Հ.—առաջ՝ իբրև գոյական՝ ունի սուրբ ածականը)։ Նա ուզում էր առաջս կտրի.—Նախրչի մանուկը կովերի առաջը պահում էր.— Մեր վրանի առաջը հարթ էր.— Առաջը բաց մինթանա.—Մի բանի առաջն առնել.—Առաջները մի քիչ լափ ածեմ (Պռ.)։ —Հարուստը դեմդ դառնում է հեգ, խղճալի աղքատ (Ջիվ.)։ Թերթևանուկի տակովը մտիկ էր տալիս դեմի կանգնածին (Պռ.)։ Դու Վարդիթերին տար, նրա դեմը կանգնացրու, յոթը մարդու բան կանի (Պռ.), Սարեկները ծառերի ճղքներին կանգնած՝ կարմիր արեգակի դեմը, հազար ու մին տեսակ պեծերը հենց սիրունացնում էին նրանց (Պռ.)։ Ինձ մնաց միայն մի ճանապարհ ընդունել— որ դեմս կանգնած է ձրի զրպարտություններ անող մեկը (Լեո)։ Երեկոյան դեմերն ընդունում էր տիկինը յուր բարեկամուհիներին (Նոր-Դար, 1903. № 211)։—Թթե անցնես քո և դիմացի սարի մեջտեղը գտնվող տարածությունը (Մուր.)։ Նա ականջի ետեվը քորեց։ Այսպես և ետևի, ետևից, ետևով, ետևները և այլն։ Նա նըստած էր իմ դեմ ու դեմը։ Մեր տունը նրանց տան դեմ ու դեմն է։

4. **Տակ** *(ներքո),* **ներքև, վար, ցած, ստորև.** *նշանակում են դեպի գետին կամ ոտքն ուղղված մասը, տակի մաս, ցածի մաս. իբրև տեղ՝ առարկայի բռնած տարածության ներքևի, տակի կողմ։* **Տակ** *իբրև ետադրություն ցույց է տալիս տարածական հարաբերություն մի առարկայի՝ նկատմամբ մի ուրիշ առարկայի, որի ցածում, խորքում գտնվում է և որից մեծ մասամբ ծածկվում է առաջին առարկան (ծառի տակ, մի հարկի տակ, բաց երկնքի տակ ապրել, քնել). փոխաբերական նշանակությամբ նաև մոտը լինելը. ենթարկվելը, կախում ունենալը (նստած էին պատի տակ. մեկի իշխանության, հսկողության, հովանու տակ ապրել)։— Հականիշ են՝*

Վեր, վերև. *նշանակում են դեպի գլուխը կամ երկինքն ուղղված մասը. վերի, վերևի մաս. իբրև տեղ՝ վերի կողմ, վերևի կողմ։ Իբրև ետադրություն նշանակում են տարածական ուղղություն դեպի բարձրը՝ ներքևում գտնված մի առարկայի նկատմամբ։*

Օրինակներ՝ Այդպես կլիզացնեմ ոտիս տակը.— Հենց ուզում էր տակն (տակի մասը) վրա բերի.— Բանի տակը չիմացած՝ խոսում ես.— Քուրսու տակերում պարծեցող.— Այս էր պատճառը, որ Հերերի տակեր մի կենդանություն էր առացել (Պռ.).— Ես սիրտ ունիմ քարայրի պես՝ անչափ, անծեր—տակ չկա (Ավ. Իսահ.)։— Ծառից ծառի տակը հով կերևա (Ա.)։ Ծառից ծառատակը միշտ մոտ է երևում (Մուր.)։ (Նույն ձևով՝ կոնատակ, գլխատակ)։ Ուզում ես՝ սաղմոսը գլխից մինչև տակը անգիր ասեմ (Մուր.)։ Այսպես՝ տակի, տակից, տակով և այլն։ Ներքևը, ներքևից, ներքևները և այլն։ Երևակայությունս շատ հեռու, շատ վերերը կսավառներ (Շանթ)։ Անցնենք այդ լանջի վերը և հանգստանանք այդ սիրուն ծառերի տակ (Մուր.)։

5. Դուրս (ժողովրդ. դրսև.) նշանակում է առարկայի այն մասը, որ ուղղված է դեպի ուրիշ առարկաներ,—դրսի մաս. իբրև տեղ՝ առարկայի բռնած տարածությունից դուրս տեղ. դրսի կողմ։ Հականիշ են՝

Ներս, մեջ *(ժողովրդ. ներքսև), որ նշանակում են ներսի մաս. իբրև տեղ՝ առարկայի բռնած տարածությունը, ներսի կողմը։*

Մեջ իբրև ետադրություն նշանակում է՝ ա) Տարածական հարաբերություն մի առարկայի՝ նկատմամբ մի ուրիշի, որի սահմանների ներսում է առաջին առարկան, օրինակ՝ բանալին արկղի մեջ էր. փոխաբերությամբ նաև դրություն, որի մեջ, ինչպես մի առարկայի ներսում, գտնվում է մի բան, օրինակ՝ նեղության մեջ. քնի մեջ լինել. բ) Սահմանները մի ժամանակամիջոցի, որի ներսում լինում է մի բան, օրինակ՝ ժամի մեջ, մի տարվա մեջ. գ) Սահմանափակում, այսինքն մի առարկա, որի վերաբերությամբ մի ուրիշ առարկա ունի մի հատկություն. ինչպես՝ հմուտ, ճարտար լինել մի բանի մեջ (=մի բանի նկատմամբ)։

Օրինակներ՝ Տների ներսը չէր գրավում մարդկանց. ուստի ժողովուրդը լցված էր դուրսը.— Կինը ձեռքի շարժումով ցույց տվավ դյուղի դուրսը։ Էս ա, ձմեռը որ գա, ձյունը դուրսը կոխի, մեր կնանոնց ներսի գործը ըտենց բաներ ա ըլնելու (Մուր.)։ Շատ գիշեր անցավ. դուրսը լուռ էր. խավար ներսում պլպլում էր ճրագը (այստեղ ներս բառն իբրև գոյական ունի նույնիսկ խավար ածականը)։—Որտեղից (վարագույրի տակից) պարզ երևում է տան տիրոջ սենեկի ներսը (Պռ. Սկ. ե.)։ Աստվածային անբավ բարիքներով տուն ու դուրսը լի է (Պռ.)։ Գնաց... սենյակի դուռը բաց արավ ու ներսը դատարկ գտավ (Պռ.)։ Ես բնավ ինձ թույլ չեմ տա մտնելու մեկի հոգու ներսը. բայց երբ նա ինքը, թեկուզ անհարկի, հրապարակով հանդես է հանել իր հոգու ներսը, ի՞նչպես ներում, ի՞նչպես է թույլ տալի, այդ իր կողմից պարզորեն ցուցադրած հոգով, ներս մտնել ներհակ հոգիների ընկերության մեջ... (Մշակ, 1900, № 121)։ Նրանք ամեն օր տեսակցություն ունին դրսերում (Շիրվ. Պտ. Համր.)։ Ինձ չկպիր որսի երթալ, դուրսեր շուռ գալ (Սրվանձտ. Հ. Հ.)։ Հասարակությունը իր շահերով, իր լավ ու վատ կողմերով դրսի օբյեկ-

տիվ աշխարհ է... իմ գիտակցությամբ, «եպ»-ով է պայմանավորվում դուրսը... այնքան դուրսը մեծ ու գնահատելի է... որքան ներս բարձր է՝ այնքան դուրսը մեծ է (Հովիտ, 1910, № 3)։— Այս ընկուզի մեջը փուչ է։ Հենց տուն եմ պահում, պոպոքի միջի պես (Պ.)։

6. Մեջ, մեջտեղ, արանք, երբեմն՝ միջև. նշանակում են տարածության այն մասը, որ ընկնում է մի առարկայից մինչև մյուսը, կամ առարկայի մի մասից մինչև մյուսը։ Իբրև ետադրություն՝ ցույց են տալիս՝ ա) երկու առարկայի, երկու տեղի կամ ժամանակի միջոցում լինելը. օրինակ՝ Այդ բանը Ջլօրհնեքի և Զատկի մեջ է կատարվել. ես ձեր երկսի մեջ (մեջտեղում) նստած էի։ Մի մեծ սար կար այս երկու եղբոր մեջը (Պ.)։ բ) Շատ առարկաների շարքում, կամ բազմության մեջ խառնված լինելը, օրինակ՝ Յորենի մեջ շատ գլուլ կա։ Նա նստած էր հանդիսականների մեջ։ գ) Երկու կամ շատ առարկաների փոխադարձ հարաբերություն. օրինակ՝ Ձեր երկսի մեջ մեծ տարբերություն կա։ Նրանց մեջ վեճ ծագեց. մեջերնիս մի կոիվ ընկավ։

Առարկայական նշանակությամբ գործ է ածվում սովորաբար արանք բառը. օրինակ Սոսին ու Գարեգնին հանեն, երկսի արանքը քանդեն.— Այնքան թամաշավորների արանքը ճղեց, գնաց Գարեգնի քամակիցը.— Երկու ջրի արանքին եմ մնացել.— Սների արանքով գլուխները հանում են (Պ.)։

7. Շուրջ. նշանակում է մի առարկայի արտաքին մակերևույթը չորս բոլորից. իբրև տեղ՝ առարկայի բռնած տարածությունից դուրս՝ չորս բոլորից։ Իբրև ետադրություն ցույց է տալիս տարածական հարաբերություն՝ մի առարկայի չորս կողմի նկատմամբ. օրինակ՝ Երկիրս պտտում է արեգակի շուրջը։ Համանիշ են՝ չորս կողմ, չորս դի. չորս բոլորք, բոլորք, բոլորտիք։

Ամենքն ալ այդ կալերու շուրջն առած՝ իրենց բաժիններ կկրեն (Սրվանձտ. Հ. Հ.)։ Եկան մեր տան շուրջը բռնեցին (պատեցին)։ Ուլուխանլուն իրան շուրջի թուրք գյուղերով (Արշալույս, 1906, № 42)։— Դառնացած էին իր շուրջի որոտող ձայները.—Միսաքյան... ունեցավ մեծ անկում մը կա՛մ բնական օրենքով, կա՛մ իր շուրջի հնարագործությանց պատճառով.— Անհնար է չպլըշկիլ իր շուրջեն.— Այդ շուրջի անձինք կդատեին իր ներքինն իր փոշոտ արտաքինեն (Մրմրյան, Պուետ Միսաքյան)։— Մի քանի ուժեղ ձեռքեր բարձրացրին Կամսարյանին դեպի առաստաղը և սկսան պտտեցնել դահլիճի շուրջը (Մուր.—շուրջ այստեղ առնված է տան ներսի չորս բոլորքի նշանակությամբ)։ Պարտիզի վերջում մի մարդ, գլուխը կապույտ թաշկինակով կապած՝ փորում էր կիսաչոր դեղձենու շուրջը (Մուր.)։ Արդարև ապրել գյուղում, տեսնել շուրջդ միայն գյուղացին... (Մուր.)։

8. Վրա. նշանակում է առարկայի մակերևույթը, երևեցած մասը։ Համանիշ երես (փոխաբեր. նշանակ.)։ Երբեմն գործ է ածվում վերև բառի նշանակությամբ։

Նա գլորվեց ցեխի մեջ, վրա գլուխ ամբողջապես ցեխ դարձավ։ Որ ֆր վրան գլուխը զարդարում է (Րաֆֆի, Ոսկ. Աք.)։ Վանեն կսկսեմ վերստին, Վան՝ որո ներհևն ու վրան իրավամբ ուշադրություն գրաված է հնագիտաց և հայագիտաց.— Ասոնք ամենը լեռան կողին վրա նըստած, որոնց ոտները կհասնին ի ծով, իրենց վրան գլուխը խիստ խորոտիկ զարդարուն մացառներով, պուրակներով.— Անշուք և անշնորհք կգտնես բնակչաց տուն և վրան գլուխը.— Ես աշխարհքի տակն ու վրա պտտեր եմ. (Սրվանձտ. Հ. Հ.)։ Վրաս բաց արա։ Երեխան վրան բացել է, ծածկիր։ Եթե դրա վրան էլ ավելացնենք այն, որ... (Մուր.)։— Պինդ սեղմիր ոտքերդ ձիու կողերին, եթե ոչ վրայից կարող ես գլորվել (Մուր.)։

Վրա գործ է ածվում և իբրև ետադրություն։ Տե՛ս ետադրություններ մեջ։

9. **Մոտ.** *նշանակում է մոտիկ տարածություն, որ առնվում է որևէ կողմից, միայն ոչ հեռու։ Համանիշ՝* **կուշտ, fով**:

Ծկավ մոտս. *Վարդիթերը մոտիդ նստած է։ Ձայն է գալի մի մխի կշտից (Մոտից.— Պռոշ.)։ Բանալին միշտ* **մոտս** *եմ պահում (Մուր.)։*

Մոտ *բառն ևս գործ է ածվում իբրև ետադրություն։ Տե՛ս ետադրությունների մեջ։— Տեղի անունների մեջ կարելի է դնել և*

10. Հետ բառը, որ արդեն ետադրություն է դարձած և ցույց է տալիս միասնություն. բայց դեռ պահելով իր գոյական նշանակությունը՝ հաճախ հոդ է առնում և հոլովվում՝ հետս, հետդ, հետը, հետները, հետիս մարդը և այլն։ Տե՛ս ետադրությունների մեջ։

5. ՎԵՐԱԴԻՐ

40. *Վերադիր ասվում են խոսքի այն երկրորդական մասերը, որոնք դրվելով գոյականի վրա՝ որևէ կողմից պարզում, լրացնում են նրա նշանակությունը։*

Խոսքի մեջ եղած ամեն գոյական,— լինի ենթակա, ստորոգյալ, ստորոգեցիական վերադիր, խնդիր թե պարագա,—կարող է վերադիր ունենալ։

41. *Վերադիրները բաժանվում են երկու խմբի՝ մականուն և բացահայտիչ։*

1. **Մականուն** *ասվում են այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից և որոշում, պարզում են անվան նշանակությունը, ինչպես՝ բարձր լեռներ.— երեք մարդ.— այս տուներ.— խնձորի ծառ։*

2. **Բացահայտիչ** *ասվում են այն գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան և դերանվան վրա ետևից՝ այն հոլովով, որով դրված է բացահայտյալը, այսինքն այն անունը կամ դերանունը, որի նշանակությունը որոշում է բացահայտիչը։ Օրինակ՝ Անուշ, Բագրատունյաց մայրաքաղաքից. շատ հեռու չէ Երազդավորսը։ Խոսրովը Տրդատ թա-*

գավորի որդին՝ մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց նահապետի՝ Վաչեի ձեռքով։— Մենք, աշակերտներս, պետք է ջանանք ամեն օր առաջադիմել։ Քույր Աննան և նրա գործերը մեր, գյուղացիներիս աչքումն են մեծ բաներ երևում (Մուր.)։

Բացահայտիչը կարելի է շուռ տալ և դնել բացահայտյալից առաջ ինչպես մի մականուն վերադիր։ Այսպես վերևի օրինակները լինում են՝ Բագրատունյաց մայրաքաղաք Անուց շատ հեռու չէ Երազգավորսը։ Տրդատ թագավորի որդի Խոսրովը մի անտառ տնկել տվավ Մամիկոնյանց Վաչե նահապետի ձեռքով։

42. Բացահայտիչ լինում են միայն գոյականները. ածականը կարող է բացահայտիչ դառնալ, երբ գոյականաբար է գործածվում։ Օրինակ՝ Հետզհետե զորանում էր օտարազգի կրոնավորների տարրը, ճուճակաւոր և ասորակսեր (Բաֆ. Ասմ.)։ Բայց Գվիդոն կա, զոհվածը, անարգվածը, որ հաշիվ է պահանջում։

43. Մականուն վերադիր լինում են՝

1. Մի ածական. օրինակ՝ Շուտով հասանք մի տեղ, ուր ընդարձակ տարածության վրա, ծառերի փոխարեն, շեղջակույտ դասված էին ճսկայածն ժայռեր և խոշոր ամբարտակներ (Մուր.)։

2. Մի գոյական որևէ հոլովով, որ ինչպես մի ածական դրվում է անվան վրա առաջից. օրինակ՝ Տաճեխ ձուկը վաճառ լճում է լինում։ Նա երկու բաժակ ջուր խմեց։ Նա հագել էր կարմիր մահուդից չուխա։ Կաքնով ոչխարը հոտից չի դուրս գալ (Ա.)։ Վարդան զորավարն էր հայոց զորքերի սպարապետն Ավարայրի ճակատամարտում։

3. Մի մակբայ, որ իբրև մի ածական դրվում է անվան վրա։ Օրինակ՝ Մեր վերստին հանդիպումը.— Եվ իր սովորական հանկարծ շարժումով նետվեցավ բազկաթոռին մեջ (Շանթ. երազ. օրեր. օգոստ. 7. 27)։ Կառավարությունն անսասան կընթանա այդ դրույթյունների լիակատար վերացման և աստիճանաբար թեթևացման ճանապարհով (Մշակ, 1909. № 39)։ Հարց է ծագել դատարանների հիմնովին նորոգության (Մշակ, 1909, № 60)։ Երկրագործական մեքենաները դնում են նոցա համար բոլորովին գաղտնիք (Լույս, 1910, № 5)։ Այժմ նա փոխել է նաև մի քանի խստիվ կարգադրություններ. կատարվել է խստիվ խուզարկություն (Ժամանակ, 1907, №№ 45, 51)։ Բայց այս բոլորը հիշատակվում են շատ հազիվ անգամ, մինչդեռ... (Արարատ, 1908, դեկտ. եր. 1065)։ Նույնպես՝ երկիցս անգամ, երիցս անգամ և այլն։ Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ... (Դուրյան, Տրտունջք)։ Չգիտեմ թե ով է Բ., իսկ երբեմն վարդապետ Դ.-ին տեսել եմ (փոխ. երբեմնի վարդապետ. Հովիվ, 1910, № 8)։ Ամրան դեռ սկզբներից Մարգարիտը տառապում էր տենդով.— Այդ իսկ պատճառով երեկ, դեռ առավոտվանից, դարձյալ դպրոցումն էի (Մուր.)։

Մակբայները գործածվելով իբրև վերադիր՝ հաճախ պահում են մի տեսակ պարագայական նշանակություն, որով և տարբերվում են իսկական ածական վերադիրներից. բայց և այնպես մակբայներն այս գործածությամբ այլևս մակբայ չեն կարող համարվել, այլ ածական։

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

44. *Բառերը խոսքի մեջ իրար հետ ունեն երկու տեսակ հարաբերություն՝ ստորոդասական և համադասական։*

Խոսքի մեջ մի բառ (գոյական, ածական, մակբայ) դառնալով լրացում մի ուրիշ բառի, իր կատարած պաշտոնով ստորադասվում է այն բառին, որի լրացումն է լինում։

Քերականորեն գլխավոր կամ գերադաս նշանակություն ունի միշտ լրացյալը և ոչ թե լրացումը։ Օրինակ՝ **Մեր Տիգրանի գիրքը** *կորավ խոսքի մեջ ամենից գերադասն է* **կորավ** *բայ-ստորոգյալը, ապա* **գիրքը** *են թական. սրա նկատմամբ ստորադաս է* **Տիգրանի** *վերադիրը, իսկ վերջինիս նկատմամբ՝* **մեր** *վերադիրը։*

ԲԱՅ ԵՎ ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

45. *Բայը միշտ ամենից գերադասն է խոսքի մեջ, որովհետև նրանով է արտահայտվում ստորոգումը։ Խոսքի կենտրոնը կամ միջուկը կազմում է ուրեմն բայը, որ բուն խոսքն է կամ խոսքի էական մասը։*

Բայի նկատմամբ ստորադաս են իր լրացումները՝ ենթական, ստորոգյալ ու ստորոգելիական վերադիր, խնդիր և պարագա։

ԽՈՍՔԻ ԿՈՂՄՆԱԿԻ ՄԱՍԵՐ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

46. *Բայի լրացումների նկատմամբ ստորադաս են կողմնակի լրացումները (գոյականի, ածականի և մակբայի լրացումները), որոնք իրենց լրացյալի նկատմամբ նույն պաշտոններն են կատարում, ինչ որ բայի նկատմամբ բայի լրացումները. այսինքն լինում են՝*

1. Կողմնակի ենթակա, օրինակ՝ **Լույսը բացվելիս ճանապարհ ընկանք։**

2. Ստորոգյալ և ստորոգելիական վերադիր, օրինակ՝ **Գրագետ լինելն աղիատ և անհնշան լինել է մեր մեջ** *(Սրվանձտ.)։* **Ես այդ օրվա կիրակի լինելը մոռացել էի** *(Մուր.)։*

3. Խնդիր, օրինակ՝ **Մկնից ծնվածը պարկ կկրծի** *(Ա.)։* **Նա գովեստի արժանի մարդ է։**

4. Պարագա, օրինակ՝ **Դժոխք գնացողն ընկեր շատ կուզե** *(Ա.)։* **Նա շատ գեղեցիկ է։**

47. *Կողմնակի լրացումներն ևս իրենց կողմից կարող են լրացումներ ունենալ։ Եվ այսպես առաջանում են կողմնակի լրացումներ առաջին կարգի, երկրորդ կարգի, երրորդ կարգի և այլն։ Օրինակ՝* **«Բարձր (3) սարերից (2) իջնող (1) վտակը հոսում էր խիտ (1) անտառով»** *խոսքի մեջ բայն և իր լրացումներն են՝* **«վտակը հոսում էր անտառով».** *իջնող*

լրացում է վտակը ենթակայի,— առաջին կարգի կողմնակի լրացում. սահերից լրացում է իջնող վերադրի,— երկրորդ կարգի կողմնակի լրացում. իսկ բարձր լրացում է ճարերից պարագայի,— երրորդ կարգի կողմնակի լրացում։

2. ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ԲԱԶՄԱԿԻ ՄԱՍԵՐ

48. *Համադաս բառերն իրարուց անկախ և իրար համազոր են. այսինքն մեկը մյուսի լրացում չեն դառնում և մի ընդհանուր լրացյալի նկատմամբ միևնույն պաշտոնն են կատարում։ Օրինակ՝ «Ես տեսա Արտաշեսին և Տիգրանին» խոսքի մեջ* Արտաշեսին *և* Տիգրանին *լրացում են տեսա բայի, որի նկատմամբ նույն պաշտոնն են կատարում. երկուսն էլ կրող խնդիր են։*

Համադաս բառերը խոսքի մեջ ուրեմն համաստորադաս լրացումներ են, այսինքն իրար վերաբերմամբ համադաս են, բայց մի ընդհանուր լրացյալի նկատմամբ ստորադաս են։

Համադաս բառերը կոչվում են **խոսքի բազմակի մասեր**։

49. *Խոսքի ամեն մաս, բացի բայից, որ միշտ առանձին խոսք է կազմում, կարող է խոսքի մեջ մի հատ և շատ լինել, կամ* **միակի և բազմակի լինել**։ *Օրինակ՝* Առյուծը *կատաղի գազան է խոսքի մեջ* առյուծը *ենթական միակի է։ Իսկ* Առյուծը, վագրը *և* արջը *կատաղի գազան են խոսքի մեջ* առյուծը, վագրը *և* արջը *բազմակի ենթակա են։ Նույնպես՝* Բարի, առաքինի *և* հավատարիմ *ընկերը մարդու համար մի թանկագին գանձ է խոսքի մեջ* բարի, առաքինի *և* հավատարիմ *բազմակի վերադիր են, իսկ* թանկագին *միակի վերադիր է։*

Ծան. Պետք է ուշադրություն դարձնել, որ բազմակի մասեր լինում են միայն համանման իմաստով լրացումները։ Օրինակ՝ Գիրքն աշակերտին տվի *խոսքի մեջ երկու խնդիր կա՝* գիրքը, աշակերտին. *բայց դրանք բազմակի մասեր չեն, որովհետև* գիրքը *ցույց է տալիս, թե ինչ տվի (կրող խնդիր). իսկ* աշակերտին *ցույց է տալիս, թե ում տվի (բնության խնդիր)։ Նույնպես բազմակի մասեր չեն Մեր այս երկու գեղեցիկ ծառերը չորացան խոսքի մեջ մեր, այս, երկու, գեղեցիկ բառերը, որ ծառերը բառի վերադիրներն են, որովհետև մեր ցույց է տալիս, թե ծառերն ումն են. այս ցուցական է. երկու՝ թվական, գեղեցիկ՝ որակական։ Բայց եթե ասենք՝* Գիրքը, տետրակն *ու մատիտը տվի աշակերտին, գիրքը, տետրակն ու մատիտը բազմակի մասեր են, որովհետև երեք բառն էլ ցույց են տալիս, թե ինչ տվի (կրող խնդիր)։ Նույնպես* Մեր, ձեր *և նրանց ծառերը չորացան խոսքի մեջ մեր, ձեր, և նրանց բազմակի մասեր են, որովհետև ցույց են տալիս պատկանելություն։*

2. ԲԱՅԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՑՈՒՆԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

50. *Բառերը միասին մի խոսք կազմելու համար՝ պետք է իրար հետ որոշ հարաբերությամբ կապակցվեն։ Բառերի հարաբերությունը խոսքի*

մեջ, ինչպես տեսանք, լինում է ստորադասական և համադասական. ըստ այսմ և բառերի կապակցությունն երկու տեսակ է՝ ստորադասական և համադասական։

Բառերի ստորադասությունն իր տրամաբանական ձևով երկու տեսակ է՝ կախում և ներունակություն։

Կ ա խ մ ա ն հարաբերության մեջ լրացում գոյականն ենթարկվում է լրացյալին, որ իր նշանակությամբ իշխում է նրան՝ խնդրելով, պահանջելով, որ իր լրացումը դրվի այս կամ այն ձևով. լրացումի կապակցության եղանակն և հարաբերությունն իր լրացյալի հետ՝ կախված է լրացյալից։ Օրինակ՝ տրական հոլովն ընկերիս կախված է օգնեցի բայի բայիմաստից (ընկերիս օգնեցի). կարդացի բայն իր նշանակությամբ խնդրում է հայցական հոլով գիրք (գիրք կարդացի). իսկ Տիգրանի գոյականը սեռական է դրվում գիրքը գոյականի պահանջով (Տիգրանի գիրքը)։

Կախման հարաբերությունը քերականության մեջ կոչվում է **խնդրառություն** կամ **վարում** և արտահայտվում է՝

1. Անմիջապես **հոլովներով միայն**,— **անմիջական կապակցություն.**

2. Հոլովների հետ նաև **կապերով** (նախադրությամբ ևետադրությամբ), որոնց միջոցով խնդիրը կապակցվում է իր խնդրառուի հետ,— **միջական կապակցություն:**

51. **Ներունակության** հարաբերության մեջ լրացումի ցույց տված դաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրա հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար. կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, զուգորդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից. մինչդեռ կախման մեջ, ընդհակառակն, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան իր լրացյալը, և իր հոլովական ձևով կախված է լրացյալից։

Այսպես զուգորդվում է բացահայտիչն իր բացահայտյալին. օրինակ՝ «Անուշ՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա» խոսքի մեջ բացահայտիչը՝ «Բագրատունյաց մայրաքաղաքից» իր բացահայտյալի վերաբերմամբ մի կրկնություն է ուրիշ բառով, որի ցույց տված գաղափարն արդեն պարունակվում է «Անուշ» բացահայտյալի մեջ. բացահայտչի բացառական հոլովը կախված է իսկապես ոչ թե բացահայտյալից, այլ «հեռացա» բայի նշանակությունից։ Նույն ներունական հարաբերությունը մնում է և այն ժամանակ, երբ բացահայտիչն իբրև մի ածական մականուն դրվում է լրացյալից առաջ, ինչպես՝ «Բագրատունյաց **մայրաքաղաք Անուշ** հեռացա»։

Նմանապես ենթական ներունակ է բայի դեմքին, այսինքն բայի դեմքի լրացում լինելով հանդերձ՝ միանգամայն և զուգադրվում է նրան,

երկրորդ անգամ նույն գաղափարն արտահայտելով, ինչ որ բայի դեմքը։ Ենթական ուրեմն մի տեսակ բացահայտիչ է բայի դեմքի. նրա հոլովն ևս բայի դեմքից չէ կախված։

Նույն ձևով և ստորոգյալի գաղափարը,— ինչպես և ամեն հատկանիշ իր առարկայի նկատմամբ,— պարունակվում է արդեն իր ենթակայի մեջ, և ստորոգյալն ու ենթական,— Անին Բագրատունյաց մայրաքաղաքն է,—ինչպես խոսքի երկու հավասար եզրեր կամ մասեր, զուգորդվում են իրար։ Ամեն ենթակա, ինչպես՝ «Տիգրանը» ուղղականը նույնպես խնդրում է մի բայ-ստորոգյալ «գնաց», ինչպես և բայ-ստորոգյալն ինքը պահանջում է մի ենթակա։ Ենթակայի հոլովը բայից կախում չունի։

Ներունական հարաբերությունը խոսքի մեջ արտահայտվում է՝ 1. Հոլովներով. 2. Համաձայնությամբ, որով լրացումն և լրացյալը թվով, դեմքով կամ հոլովով միակերպ են դրվում։

Ստորադասական կապակցությունն ուրեմն առաջ է գալիս հոլովներով, կապերով և համաձայնությամբ։ Բացի դրանից՝ ստորադասությունն արտահայտվում է նաև շարադասությամբ, որ վերաբերում է նաև համադասական կապակցությանը։ Վերջինս արտահայտվում է նաև համադասական շաղկապներով։

Բառերի կապակցության եղանակներն են ուրեմն՝ հոլովներ, կապեր, համաձայնություն, շարադասություն և համադասական շաղկապներ։

Ա. ՀՈԼՈՎՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

52. *Հոլովական ձևերով արտահայտվում են այն զանազան հարաբերությունները, որոնցով գոյականը խոսքի մեջ իբրև լրացում կապակցվում է ուրիշ բառերի հետ։*

Արևելյան աշխարհաբարը ձևականորեն միայն հինգ հոլով է զանազանում՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական. բայց ըստ նշանակության առանձին հոլով պետք է համարել նաև կոչական, հայցական և սեռական հոլովները, թեպետ և կոչականը ձևով չի տարբերվում ուղղականից, սեռականը՝ տրականից, իսկ հայցականն՝ ուղղականից և տրականից։

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

53. *Ուղղականի հոլովական ձևը բացի իր բուն նշանակությունից՝ գործ է ածվում նաև կոչական և հայցական հոլովների նշանակությամբ. ուստի պետք է զանազանել՝ ա) բուն կամ անվանական ուղղական, բ) կոչական ուղղական և գ) հայցական ուղղական։ Բացի այս՝ հայցական ուղղականը գործ է ածվում նաև իբրև ներգոյական։*

Նշան. 1. Թեպետ և մեր աշխարհաբարն իսկապես չունի կոչական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն դրությամբ կամ կիրառությամբ, բայց և այնպես կոչական, հայցական և սեռական անունները իրրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով որ մեր քերականության ուսումը լինում է միշտ գուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ։ Այս պատճառով և ներքևում այդ հոլովներն առանձին առանձին են վերցված։

Նշան. 2. Ուղղականն ու կոչականն իրենց բնավորությամբ կազմում են մի կարգի հոլովներ և կոչվում են անկախ հոլով, որովհետև ցույց են տալիս կա՛մ մի առարկա առանց հարաբերության, խոսքի կապակցությունից դուրս (§ 54), կա՛մ եթե որոշ հարաբերություն են ցույց տալիս՝ դառնալով ենթական, ստորոգյալ և վերադիր, այդ հարաբերություններ լինում է ներունակությամբ և ոչ կախումով (§ 51)։ Մյուս հոլովները՝ հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական՝ կոչվում են կախման հոլով, որովհետև ցույց են տալիս մի առարկա, որ կախման հարաբերության մեջ է մի ուրիշ առարկայի նկատմամբ։ Առարկաները միմյանց հետ հարաբերություն ունին իրենց գործողությամբ կամ դրությամբ. իսկ գործողությունը կամ դրությունն արտահայտվում է բայով։ Այս պատճառով կախման հոլովները դառնում են խնդիր բայերի։ Մյուս տեսակի բառերն էլ, երբ խնդրում են մի հոլով, կամ բայահաղորդ բառեր են, ինչպես՝ դերբայները և բայական անուններն ու ածականները (մուտք, գալուստ, սիրելի, արժանի), կամ թե խնդրառու գոյականի և իր խնդրի մեջ զորությամբ հասկացվում է մի բայական գաղափար, ինչպես՝ Տիգրանի գիրքը,— Տիգրանին պատկանած գիրքը։

54. Ուղղականն *իբրև անվանական հոլով՝ ցույց է տալիս մի առարկա, որ խոսքից դուրս անվանվում է առանց որևէ կապակցության. օրինակ՝ տուն, ծառ։ Ուղղականը խոսքի մեջ լինում է՝*

1. Ենթակա դիմավոր բայի. օրինակ՝ Գարունը *եկավ. ծառերը ծաղկեցին։*

2. Ստորոգյալ և ստորոգելիական վերադիր. օրինակ՝ Դուք իմ աշակերտն եք։ Նեղն ընկած կատուն առյուծ կդառնա (Ա.)։

3. Կողմնակի ենթակա մի դերբայի կամ ածականի հետ. օրինակ՝ Սայլը *շրջվելուց հետո ճանապարհ ցույց տվող շատ կլինի (Ա.)։* Փորը *կուշտ մարդը սովածի օրից տեղեկություն չունի (Ա.)։*

4. Վերադիր մի անվան. օրինակ՝ Առանց կորստի ու առանց վշտի կանգնած էի ես այն եռազ հովտում (Հովհ. Թում.)։ Նա մայիս ամսին եկավ։

ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

55. *Ստորոգելիական վերադիր առնում են թե՛ անանցողական և թե՛ անցողական բայերը։*

1. Անանցողական *բայերի հետ ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս ենթակային վերագրված մի հատկանիշ, բայց ոչ ենթակայի իրեն բնությունից ունեցած մի հատկանիշ,— ինչպես ցույց է տալիս ստորոգյալն եմ, լինիմ բայի հետ,—այլ մի հատկանիշ՝ դրություն, պաշտոն,*

ձև, կերպարանք, կոչում և այլն, որ ենթական ունենում է նախ բայի նշանակությամբ իրեն վերագրվելուց հետո, կամ որին դառնում, անցնում, փոխվում է ենթական իրոք կամ ըստ երևույթին։ Օրինակ՝ «Ջուրը հեղուկ է» խոսքի մեջ հեղուկ ստորոգյալը ցույց է տալիս ջուր ենթակայի մնայուն հատկանիշը, որ ջուրն իր բնությամբ ունի. իսկ «Ջուրը գոլորշի դարձավ» խոսքի մեջ գոլորշի ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս մի հատկանիշ, որ ջուրն ստանում է դառնալով, փոխվելով միայն, կամ որին փոխվում է ջուրը։ Նույնպես «Տիգրանը վերակացու կարգվեց» խոսքի մեջ վերակացու ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս Տիգրանի մի այնպիսի հատկանիշը, որ նա ունի կարգվելով միայն, կամ որին նա դառնում է կարգվելով։ Նույնպես «Օրը տարի է թվում» խոսքի մեջ տարի ցույց է տալիս օր ենթակայի մի հատկանիշը, որ նա ինքն իրենից, իր բնությունից չունի, այլ վերագրվում է նրան թվալ բայիմաստով. օրն ըստ երևույթին, թվալով միայն տարի է, կամ օրը տարի է դառնում ըստ երևույթին։

2. Անցողական բայերի հետ ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս այն հատկանիշը՝ դրություն, պաշտոն, կոչում և այլն, որին իրոք կամ ըստ երևույթին դառնում, անցնում է կրող խնդիրը ենթակայի ներգործությամբ։ Օրինակ՝ «Տիգրանը ջուրը գոլորշի դարձրեց» խոսքի մեջ բայ-ստորոգյալն է գոլորշի դարձրեց (ենթակային վերագրվում է գոլորշի դարձնելը), իսկ գոլորշի մենակ ցույց է տալիս ջուր կրող խնդրի հատկանիշը, դրությունը, որ առաջանում է ենթակայի գործողությունից. մինչդեռ երբ ասվում է՝ Ջուրը գոլորշի դարձավ, բայ-ստորոգյալն է գոլորշի դարձավ (ջուր ենթակային վերագրվում է գոլորշի դառնալը), իսկ գոլորշի մենակ ցույց է տալիս ջուր ենթակայի հատկանիշը, դրությունը, որին անցնում է ենթական ինքը։

Նման. Ստորոգելիական վերադիրն անանցողական բայերի հետ, որովհետև ենթակային է վերաբերում, դնում են ուղղական հոլով, իբրև երկրորդ ուղղական, իսկ անցողական բայերի հետ, որովհետև ցույց է տալիս կրող խնդրի վիճակը, կոչումը և այլն, համաձայն են հայցական հոլով, իբրև երկրորդ հայցական։ Այս տարբերությունը սակայն աշխարհաբարի համար ավելորդ է, որովհետև ստորոգելիական վերադիրը, լինի անցողական թե անանցողական բայերի հետ, միշտ միևնույն անփոփոխ, ուղիղ ձևով է դրվում, և այս դեպքում գոյականն առնվում է ոչ թե իր հոլովական նշանակությամբ, այլ լոկ իր բառական նշանակությամբ՝ իբրև բառի բուն, սկզբնական, անփոփոխ ձև։ Ջուրը գոլորշի դարձավ և Տիգրանը ջուրը գոլորշի դարձրեց խոսքերի մեջ երկու դեպքում էլ գոլորշի լրացումը դարձավ կամ դարձրեց բայերի հետ կազմում է մի բայ-ստորոգյալ, ինչպես թե մի բայով ասվեր՝ Ջուրը գոլորշիացավ.— Տիգրանը ջուրը գոլորշիացրեց։ Գոլորշի ստորոգելիական վերադիրն երկու դեպքում էլ իր հոլովական ձևով ո՛չ ենթակայի և ո՛չ կրող խնդրի հետ առնչություն ունի, այլ կախված է միայն բայիմաստից, որ նույն է, լինի բայն անանցողական՝ դառնալ, թե անցողական՝ դարձնել։ Նվ եթե անցողական բայերի հետ ստորոգելիական վերադիրը ցույց է տալիս կրող խնդրի դրությունը և այլն, որին անցնում, դառնում է կրող խնդիրը ենթակայի ներգործությամբ, այդ միայն ստորոգելիական վերադիր առնող անցողական բայերի հատկությունը չէ, այլ բոլոր անցողական բայերի, միայն այն տարբերությամբ, որ պարզ բայերի մեջ (երեխան պատռեց գիրքը.— Տիգրանը ջուրը գոլորշիացրեց) այն դրությունը, որի մեջ մտնում է կրող խնդիրը են-

քակայի ներգործությամբ, արտահայտվում է բայիմաստով, բայի բառական նշանակությամբ, մինչդեռ բաղադրյալ բայ-ստորոգյալի մեջ (Տիգրանը չուրը գոլորշի դարձրեց) արտահայտվում է ստորոգելիական վերադրով (տե՛ս § 26. ծան.)։

56. *Ստորոգելիական վերադիր առնում են առանձնապես հետևյալ անցողական և նրանց համապատասխան անանցողական բայերը.*

1. Կոչել, անվանել, անունը դնել, ասել. օրինակ՝ Ես քեզ չեմ ասիլ (կոչիլ) տակավին մեծ մարդ (Գ.-Ք.)։ Երեխայի անունը դրին Տիգրան. *Երեխան կոչվեց* Տիգրան։

2. Համարել, ճանաչել, խոստովանել, ընդունել, գտնել (կարծել), կարծել, գիտենալ, երազել և այլն. օրինակ՝ Ես ձեզ մե՛ր մարդը կարծեցի (իմացա)։ Ղունկիանոսն իրեն արդեն իրենց գյուղում վարժապետ *էր երազում.— Ես էլ նրանց թե մոտիկ, թե հեռու* բարեկամ *կհիշվիմ (Պռ.)։ Էշերի և ձիանների ընկերության մեջ հավանական է, որ համբերությունը համարվի անարգ* ունակություն, *բայց մարդկային հասարակության մեջ ճանաչվում է այն իբր* առաքինություն *(Մուր.)։*

Ծան. *Ստորոգելիական վերադիրն երբեմն կապակցվում է իբրև, իբր բառերով, ինչպես վերևի վերջին օրինակում։*

3. Զգալ, տեսնել, գտնել, ունենալ և այլն. օրինակ՝ Պատանին շուտով իրեն երիտիսարդ է զգում։ Մեկ էլ որ եկավ, նա իր ընկերին արդեն եպիսկոպոս տեսավ (գտավ)։ Մեկին իրեն տեր ունենալ։

4. Ձևանալ, երևալ, թվալ, ցույց տալ, հանդիսանալ և այլն. օրինակ՝ Նա պատերազմի մեջ քաջ զորավար *հանդիսացավ։ Դու ազատության* սիրահար *ես ձևանում։ Նա երեսանց* ոչխար *է ձևանում, բայց սրտանց գայլ է (Պռ.)։*

5. Մնալ, կենալ, կանգնել, պահել,—ելնել, դուրս գալ, ընկնել,—ծնվել, մեռնել և այլն. օրինակ՝ Այս միայն մնաց ինձ բաժին։ *Ո՜հ, ի՜նչ սև վիճակ քեզ* բաժին *ընկավ։ Ո՞վ է* պահապան *կանգնած։ Հռոմեները Տիրանի երկրորդ որդուն իրենց մոտ* պատանդ *պահեցին (Պալ.)։*

6. Տալ, առնել, ստանալ, ընդունել, ուղարկել, տանել, բերել, գալ և այլն։ օրինակ՝ Մեկին իր մոտ աշակերտ *ընդունել, մեկին մի տեղ* դեսպան *ուղարկել.— Մի սրբի մի բան մատաղ խոստանալ։— Նա մեզ մոտ* ճյուր *է եկել.— Նա* խնամի *է եկել.— Մի սև փող* խաչնամբույր *ձգեցին.— Այս մատանին տար նրան նշան.— Մի հաց պիտի ուտեմ, մինն էլ ձեզ համար մատաղ տամ.— Մեկին սարերն է ձգել, մյուսին դաշտերն է բաժին տվել (Պռ.)։ Ես այս գիրքը նրան նվեր (ընծա) տվի (տարա, բերին)։*

7. Դարձնել (դառնալ), անել, շինել (=դարձնել), լինել (=դառնալ) և առհասարակ այն բայերը, որոնք նշանակում են մի դրության մեջ մտնել, մի վիճակից, պաշտոնից, ձևից և այլն մի ուրիշի անցնել, փոխվել, ինչպես են՝ փոխել, ընտրել, օծել, ձեռնադրել, պսակել, դնել, հաստատել, կարգել, նշանակել, հրատարակել, հայտարարել, հանել և

այլն. օրինակ՝ մեկին եպիսկոպոս ձեռնադրել, թագավոր ընտրել, օծել, պսակել, հայտարարել. մեկին պահապան դնել, կարգել։ Ներսեսն ընտրվեցավ կաթողիկոս։ Աստված մարդուս բանական էակ է ստեղծել։ Լուն ուղտ կշինեն (կդարձնեն. Ա.)։ Ուղտն ինչքան սատկի, էլի կաշին մի իշի բեռ կլինի (կդառնա. Ա.)։ Նա զորքը չորս մաս բաժանեց։ Նա խնձորը չորս կտոր (տապակ) արեց։ Քարը մեջտեղից երկու կես արեց (դարձրեց)։ Քարը մեջտեղից երկու կես եղավ (դարձավ)։ Նա ծաղիկները փունջ կապեց։ Նա մազերն երկու ծամ հյուսեց։ Հոտը խուրձ էին կապել, դեզ դրել։ Աղջիկն ուլունքները չորս տակ շարել, վիզն էր ձգել։ Ջինվորները չորս շարք (կարգ) էին կանգնել։ Ուրախությունը փոխվեց տրտմություն (Պռ.)։ Առաջ անունդ գառ հանիր, հետո գայլ դարձիր, կե՛ր Ա.)։

57. Հարադրյալ բայեր։—*Լինել և անել բայերով դառնալ և դարձնել նշանակությամբ կազմվում են բազմաթիվ հարադրյալ բայեր, որոնց հարադիր մասը ստորոգելիական վերադրի նշանակություն ունի. ինչպես՝ խաղք լինել, խաղք անել. խելքամաղ լինել, անել. ոտնակոխ լինել, անել. քար ու քանդ լինել, անել. ցիր ու ցան լինել, անել. բաց լինել, բաց անել և այլն։*

Ժողովրդական լեզվի, հաճախ և գրականի մեջ կան նույն կիրառությամբ շատ դարձվածներ ուրիշ բայերով. ինչպես՝ Նրա սիրտը վարդ կպատռի.— Ժողովուրդը սաղ ջուր կտրվեց (Պռ.)։ Նա էշ կերել է, էշ մհծացել (Ա.)։

Ծան. Առհասարակ պետք է նկատել, որ ստորոգելիական վերադիր կարող է լինել մի գոյական կամ ածական ամեն անգամ, երբ բայի հետ անմիջապես կապվելուց զատ ցույց է տալիս նաև ենթակայի կամ կրող խնդրի մի հատկություն կամ դրություն. օրինակ՝ Նա տանը ճիվանդ պառկած է.— Դու տխուր կանգնած էիր այնտեղ.— Նա թեյը տաք է խմում.— Նրա հանցանքն անպատիժ մնաց, թողեցին.— Նրան փողոցից վիրավորված տուն տարան և այլն։— Սակայն պետք է ասել, որ այսպիսի ստորոգելիական վերադիրները մենք հաճախ ըմբռնում ենք իբրև մակբայ, ձևի պարագա, և առանձին ուշադրություն դարձնելով միայն կարելի է այս երկու կարգի լրացումներն իրարուց տարբերել։ Մակբայները միայն բայի լրացում են իբրև ձևի պարագա, մինչդեռ ստորոգելիական վերադիրները ցույց են տալիս ենթակայի կամ կրող խնդրի հատկությունը կամ վիճակը Օրինակ՝ «Նա տանը հիվանդ պառկած է», նշանակում է՝ Նա տանը պառկած է և նա հիվանդ է։— «Ես ձեզ ազատ հայտարարեցի» խոսքի մեջ ազատ իբրև ստորոգելիական վերադիր նշանակում է՝ Ես հայտարարեցի, դարձրի ձեզ ազատ և դուք ազատ եք,—մինչդեռ նույնն իբրև մակբայ նշանակում է՝ Ես ձեզ ազատորեն, ազատ կերպով, առանց քաշվելու հայտարարեցի։

ԿՈՂՄՆԱԿԻ ԵՆԹԱԿԱ

58. *Կողմնակի ենթակա կոչում ենք դերբայների և ածականների այն լրացումները, որոնք բոլորովին նույն հարաբերությունն ունին դերբայի կամ ածականի ցույց տված գործողության կամ հատկության հետ, ինչ որ ենթական ստորոգյալի վերաբերությամբ, ինչպես՝ «սայլը շրջվելուց հետո» կապակցության մեջ սայլը շրջվողն է։ Այս կապակցություններ*

սակայն խոսք կամ նախադասություն չեն կազմում, որովհետև բայով ստորոգում չունին. ուստի կողմնակի ենթական դեմքի լրացում, իսկապես ենթակա չէ, այլ լոկ ենթակայական խնդիր, որ և անորոշ դերբայի հետ սովորաբար ոչ թե ուղղականով է արտահայտվում, այլ ենթակայական սեռականով. ինչպես՝ փոխանակ ասելու՝ սայլը շրջվելուց հետո... ասվում է՝ սայլի շրջվելուց հետո (տե՛ս սեռականի գործածությունը)։ Այս կապակցություններն իրենց նշանակությամբ հավասար են նախադասության, և հեշտությամբ կարելի է նախադասության վերածել՝ դերբայը բայ դարձնելով, իսկ ածականը եմ բայով ստորոգելով կողմնակի ենթակային, որ այս ձևով դառնում է ենթակա, օրինակ՝ լույսը դեռ չբացված՝ ճանապարհ ընկանք.—լույսը դեռ չէր բացված, որ ճանապարհ ընկանք։

59. Կողմնակի ենթական անանցողական, երբեմն և անցողական դերբայների հետ առնվում է իբրև մի միություն և գործ է ածվում ժամանակի և պատճառի պարագաների նշանակությամբ. օրինակ՝

1. Մինչև իրիկվա ճովն ընկնելը կերան, խմեցին.— Մինչև մութը գետինն առնելը (կոխելը) խաղացին.— Խոստացավ մինչև մզկիթի շինությունը վերջանալը փոքր առ փոքր նախապատրաստել ինձ (Պռ.)։ Նրանք մինչև անձրև գալը հեռացան։ Այսպես և՝ մինչև ծառերը ծաղկելը, մինչև գարունը բացվելը, լույսը բացվելը, արևը ծագելը, մութն ընկնելը և այլն։

2. Արևը մայր մտնելու մոտ՝ ծովակի կողմից սկսել էր փչել զով քամի (Մուր.)։ Քամին է գեղջուկի աշխատանքի պսակողը. անուշիկ ճովը փչելուն պես՝ նա առնում է յուր եղանն ու հորսելին և քամում է կալը (Պռ.)։ Արևը ծագելուն պես... դուռը բացվելուն պես։

3. Սայլը շրջվելուց հետո՝ ճանապարհ ցույց տվող շատ կլինի (Ա.)։ Արևը մայր մտնելուց առաջ՝ մեր ուղևորները տեղ հասան։ Այսպես և՝ Ծառերը ծաղկելուց հետո կամ առաջ. մութն ընկնելուց հետո և այլն։

4. Աղոթարանը նոր ծագելիս տեղից վեր կացան (Պռ.)։ Լույսը բացվելիս գնացին։

Ծան. Այս անկատար դերբայն ունի ներգոյականի նշանակություն. ծագած է ներգոյականի նշանակությամբ տրականից ա հոգով, որ կորցրել է իր իմաստը. ուստի և ժողովրդական ձևով ասվում է նաև՝ ծագելուս, բացվելուս, որ բարբառային արտասանությամբ, շփոթելով բացառականի հետ, գրում են՝ ծագելուց, բացվելուց, փոխանակ ծագելիս, բացվելիս ձևերի. օրինակ՝ Մյուս առավոտը՝ լույսն ու մութը նոր բաժանվելուս՝ ծեզը չձգած՝ Գարեգինը դարձյալ արժանացավ Հայրիկի համբույրին (Պռ.)։ Մութը կոխելուց՝ (փոխ. կոխելուս, կոխելիս) տանուտերը կամենում էր ընթրիքի պատրաստության տեսնել (Մուր.)։

5. Լույսը դեռ չբացված՝ տեղից վեր կացան.— Արշալույսը չբացված՝ ես պիտի ճանապարհ ընկնեմ.—Դեռ արևը չմտած՝ տեղ հասանք։

6. Արևը մայր մտած լինելով՝ մենք էլ չշարունակեցինք մեր ճանապարհը։ Բերդում այլևս պաշար (մնացած) չլինելով՝ բերդապահներն

ստիպված էին անձնատուր լինել։ Ծկեղեցում կանգնելու տեղ չլինելով՝ մենք չկարողացանք ներս մտնել։

Այս վերջին գործածությունն ունի պատճառական նշանակություն, և այսպես դրվում է միայն լինել բայի գործիականը մենակ, կամ մի ածականով կամ անցյալ դերբայով։

Ծան. ժողովրդական լեզվի մեջ կողմնակի ենթական իր լրացյալի հետ գործ է ածվում նաև իբրև ենթակա կամ խնդիր, ինչպես՝ Ես գիտեի՝ նա ինձ սիրում է. բայց էօքաե նրա սերը վառ լինելը մտքիցս չէր անց կենում (Պռոշ.)։

60. *Պետք է առանձին ուշադրություն դարձնել, որ ամեն դեպքում կարելի չէ կողմնակի ենթակա դնել։*

1. Անձի, սովորաբար և իրերի անուննելը, երբ որոշ են, դրվում են իբրև ենթակայական սեռական. օրինակ՝ գրական լեզվի մեջ չի ասվում՝ Մինչև Տիգրանը գալը մենք հեռացանք. Տիգրանը գալուն պես, Տիգրանը գալուց առաջ (հետո), Տիգրանը գալիս՝ մենք գնացինք.— Տիկինն ու օրիորդը հեռանալուց հետո՝ Պետրոսն զգաց, որ..., այլ միայն՝ Մինչև Տիգրանի գալը մենք հեռացանք. Տիգրանի գալուն պես, Տիգրանի գալուց առաջ (հետո), Տիգրանի գալիս (ավելի՝ գալու ժամանակ) մենք գնացինք։ Տիկնոջ ու օրիորդի հեռանալուց հետո՝ Պետրոսն զգաց որ... (Մուր.)։— Բայց երբ անունն անորոշ է, ասվում է՝ Մի մարդ գալուն պես, մարդ գալուց առաջ. փողոցով մի մարդ անցնելիս՝ դյուղացի կանայք ոտքի են կանգնում։

2. Անորոշ դերբայի գործիականի հետ, բացի լինել բայից (տե՛ս § 59. 6), չի դրվում կողմնակի ենթակայի ուղղական։ Դերբայը և խոսքի բայը միշտ միևնույն ենթական ունին։ Օրինակ՝ կարելի չէ ասել՝ Այդ իմանալով ես՝ նա շտապեց.— Նրանք մի քանի ծուռ անցքեր անցնելով՝ մենք հասանք մի բարձր տեղ. այլ միայն՝ Այդ իմանալով ես՝ շտապեցի Պետրոսից առաջ անցնել.— Նրանք մի քանի ծուռ անցքեր անցնելով՝ հասան մի բարձր տեղ (Մուր.)։ Ուռենին՝ կանաչագեղ ոստերն աջ ու ձախ տարածելով՝ հովանավորում էր մի փոքրիկ ու վճիտ լճակ (Մուր.)։— Նույն ձևով միևնույն ենթակայի տակ ասվում են՝ Մի տեղ ժայռերը միմյանց վրա կուտակված՝ փորձում էին, կարծես, վտակի հոսանքն արգելել. իսկ սա ավազով ու խճով նրանց խորշերը լցած՝ յուր փրփրուն ալիքները գահավիժում էր ժայռերի բարձունքից։ Մի ուրիշ տեղ մոշենին, վայրի վարդը, կամ նոնենին գետակի կրկին ափերը գրաված՝ իրենց ճկուն ոստերը դեպ իրար ձգելով և իրար շաղապատելով՝ կազմում էին ջրի վրա կանաչազարդ մի կամուրջ (Մուր.)։ Ջրի գագաթին հասնելիս՝ (հասնելուց, հասնելուց հետո) վանահայրը մատնացույց արավ քառակուսի մի շենքի հազիվ մի կանգուն բարձրությամբ որմերի մնացորդը.— Գրադարանից ելնելուց՝ (ելնելիս) ծերունի վանահայրը հոգնած զգալով իրեն, խնդրեց երիտասարդին մնացած տեղերը շրջել լուսարարի հետ։

3. Դերբայները գործ են ածվում առանց կողմնակի ենթակայի նաև այն ժամանակ, երբ խոսքի ենթական ուրիշ է, իսկ դերբայի գործողության տերը ուրիշ։ Օրինակ՝ Կամսարյանը հետաքրքրվեց գորգի դործով... տան սրահին մոտենալուց՝ (մոտենալիս,— մոտեցողը Կամսարյանն և իր ընկերն են) ոստայնի առաջ նստող հարսներն ու աղջիկները ոտի կանգնեցին.— Գորգի գործին նայելուց առաջ՝ Կամսարյանի ուշադրությունը գրավեցին կանանց տարօրինակ հագուստները (Մուր.)։— Ես գովում ու խրախուսում եմ աշակերտին կամ աշակերտուհուն, երբ պատահում եմ մինին՝ դասից ազատ միջոցին անտառից փայտ բերելիս, մյուսին՝ խոտ հարելիս, երրորդին՝ ջրի սափորով վերադառնալիս, չորրորդին՝ այգում քաղհան անելիս (Մուր.)։

Ծան. *Որովհետև դերբայը սովորաբար խոսքի բայի հետ է հասկացվում, այսպիսի դեպքերում, եթե խոսքի կապակցությունից ճիշտ իմաստը չի իմացվում, պետք է մի ուրիշ դարձվածով կամ բառադասությամբ երկդիմությունից խուսափել. օրինակ՝ վերևի խոսքերի մեջ կարելի է բայով ասել՝ Երբ տան սրահին էին մոտենում... Մինին, երբ սա դասից ազատ միջոցին անտառից փայտ է բերում։— Առհասարակ պետք է ուշադրություն դարձնել, որ երկդիմությունից զերծ մնալու համար՝ դերբայը եթե ենթակային է վերաբերում, նրա մոտ կամ նրանից առաջ պիտի դնել. իսկ եթե խնդրին է պատկանում, վերջից հետո պիտի գա. օրինակ՝ Ես պարապելիս տեսա նրան. Պարտեզում զբոսնելիս՝ նա տեսավ քեզ։— Ես տեսա նրան պարապելիս. Նա տեսավ քեզ պարտեզում զբոսնելիս։*

61. *Կողմնակի ենթական մի ածականի կամ իբրև ածական գործածված անցյալ դերբայի հետ՝ ունի սահմանափակման կամ վերաբերության նշանակություն, որ և սովորաբար արտահայտվում է ոչ թե ուղղականով, այլ բացառական կամ գործիական հոլովներով։ Օրինակ՝* աչքը կույր մարդ *(աչքով կույր, աչքից կույր)։* Աչքը կույր, շլիմը ծուռ, *ոտը կաղ. լավ ու վատ այս է.— Ջեմ թողնիլ իմ աղջիկս երեսը բաց պրսակեն.— Երկինքը քիչ ամպը կոխած էր.— Հեթումն աչերեն արյուններ կոխած (աչքերն արյունակոխ) դուռը ներքսև մտավ.—Փոստը դուրս եկած գտակ.—Մի արծաթե մատանիք կա՝ օղը կոտրած (Պռ.)։ Ում ուզում են՝ ծախեն, աչերը ճղրիկ (կապույտ) մարդու չծախեն (Նավ. Հեք.)։*

Ծան. *Այս գործածություններից մեջ ուղղականը կորցնում է իսկապես իր անկախ հոլովի բնավորությունը (§ 53. ծ. 2), և կարելի էր գուցե այս կողմնակի ենթակայի հոլովը ածականի հետ՝ դնել իբրև սահմանափակման կամ վերաբերության հայցական. այն է՝ դրություններ կամ հատկություններ ամբողջ առարկայի վրա են ասվում, թեպետ նրա մի մասին կամ կողմին են վերաբերում. ապա իբրև հայցական լրացում դրվում է նույն մասի կամ կողմի անունը, որի նկատմամբ ասվում է հատկանիշը. ինչպես՝ Խորենացու մեջ հունաբանությամբ. «Այս Կամսար... ճատանի յումեմնէ սակերբ զգլուխն»։ Կողմնակի ենթակայի հոլովը սակայն,— թեկուզ մասամբ այս վերաբերության հայցականից ծագած լինի,— մենք այժմ ուղղական ենք համարում, որովհետև ձևով ուղղական լինելով՝ նշանակությամբ էլ ոչ մի տարբերություն չենք դնում ենթակայի և կողմնակի ենթակայի հոլովների մեջ. երբ ասում ենք՝ «գլուխը կտրված Կամսարը», գլուխը բառի հարաբերությունը նույնն ենք ըմբռնում կտրված բառի նկատմամբ, ինչ որ «գլուխը կտրվեց» խոս-*

քի մեջ գլուխր և կտրվեց բառերի հարաբերությունը։ Նույնպես՝ «Դեռ լույսը չբացված՝ գնացինք» և «Դեռ լույսը չէր բացված՝ գնացինք» կապակցությունների մեջ լույսը բոլորովին նույն ձևն ունի և նույն հարաբերությունը չբացված, չէր բացված բառերի նկատմամբ։

62. *Կողմնակի ենթական դերբայի կամ ածականի հետ առնվում է իբրև մի միութիւն և ստանում է մի բարդ բառի նշանակութիւն. հաճախ կարող է մի բարդ բառով ևս փոխանակվել, մանավանդ երբ դրված է մի որակական ածականի հետ։ Այսպես գործ են ածվում՝*

1. Ոտքը կաղ մարդ,—մարդ, որի ոտքը կաղ է,— կաղոտն մարդ.— աչքը կույր, կուրակն.— խելքը պակաս, խելքապակաս, պակասամիտ.— սիրտը մեծ, մեծասիրտ.— ձայնը տկար, տկարաձայն.— ձեռքը դատարկ, դատարկաձեռն.— ձեռը ծանր, ծանրաձեռն.— գլուխը բաց, գլխաբաց. բացագլուխ.— գլուխը պինդ, պնդագլուխ.— սիրտը սև, սևասիրտ.— կողքը հաստ (հաստակող), ծուծը բարակ մարդ է (Ա.)։

2. Տերևը թափած ծառ,— ծառ, որի տերևը թափած է,—տերևաթափ ծառ.— ճյուղերը կոտրած, ճյուղակոտոր.— թևերը խուղած, թևվախուղիկ (ագռավ.—Ժող. հեք.).—սիրտը մեռած, սրտամեռ.—տունը քանդված, տնաքանդ.— մարդ բնակած (տեղ), մարդաբնակ. —դուռը փակած, դռնափակ.— շունչը կտրած, շնչակտուր, շնչասպառ։

3. Լույսը բացվելիս, լուսաբացին.— արևը ծագելիս, արևածագին.— աքլորը կանչելիս, աքլորականչին, հավախոսին.— Արևը մտնելիս, արևմտոցին։

ՈՒՂՂԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

63. *Ամեն անուն անփոփոխ դրվելով իբրև վերադիր մի ուրիշ անվան վրա՝ առնվում է ինչպես մի ածական։ Այսպես գործ են ածվում՝*

1. Որակական իմաստով՝

ա. Շատ անուններ իբրև ածական, ինչպես՝ **տոն** *օր,* **ոսկի** *բաժակ,* **ձմեռ** *ժամանակ,* **աւև** *ժամանակ,* **քար** *սիրտ,* **լույս** *սենյակ, իբրև տոնական օր, ոսկեղեն բաժակ, ձմեռնային ժամանակ, քարեղեն սիրտ, լուսավոր սենյակ։*

բ. Տեսակ, կերպ, պես, ձև, եղանակ, գույն, օրինակ, աստիճան և այլն բառերը մի վերադրի հետ, որոնք միասին ստանում են մի բարդ ածականի նշանակութիւն. օրինակ՝ մի տեսակ գրիչ (միատեսակ). նոր տեսակ երևույթ (նորատեսակ). ամեն տեսակ քաղաքավարություն (ամենատեսակ). հրեշտակի պես աղջիկ (հրեշտակապես, հրեշտականման). ոսկու գույն գինի (ոսկեգույն)։—Նա վարժվել է այդ ձև խոսակցությանը (Պռ.)։ Վերին աստիճան հիմարություն։

Նաե. *1. Այսպես գործ են ածվում ավելի թուրքերեն բառերը՝ թավուր, ղայգա, թարզ, ռանգ, թայ. օրինակ՝ ոսկու ռանգ գինի։— էլ չեմ սիրում ատելի, կարմիր ռանգ ալ ֆե-*

ար (Չիվ.)։— Հազար ռանգ (հազար տեսակ) չերազ ու քքու դրած բաներ։— Տասը դայդա (եղանակ) պար գիտե։— Իմ քայ աղչիկը (Պո.)։

Ծան. 2. Այս որակական ուղղականից կցական բարդությամբ կազմված են՝ այսպես, այդպես, այնպես, նույնպես, որպես, ինչպես ածականները, որոնք սովորաբար իբրև մակբայ են գործածվում. նույնպես կրկնավորները՝ քերք քերք (խմորեղեն), տեսակ տեսակ (հատկություններ), պեսպես (գույներ) և այլն, որոնք բոլորը իբրև ածականներ՝ կարող են մակբայորեն գործածվել ցույց տալով ձևի պարագա. օրինակ՝ Նա այժմ ուրիշ տեսակ (կերպ) է խոսում։— Մի կերպ աբա՛, պրծիր։— Ի՞նչ ձև խոսելու էի (Պո.)։— Նա դեռ վանկ վանկ է կարդում։ Այս մանիշակը պետք է պահեմ, մինչև չորանա, քերք քերք թափվի (Պո.)։— Մակբայորեն գործածված ժամանակ, անցողական բայերի հետ այս ուղղականը կարող է և իրրև հայցական ըմբռնվել։

2. Բացահայտող իմաստով՝ տեսակի անունը սեռի անվան վրա. հատուկ անունը տեսակի, կոչումի, պաշտոնի, պարապմունքի և այլն անվան վրա, կամ ընդհակառակն. օրինակ՝ եղևին ծառը, տառեխ ձուկը, գայլ գազանը,— Տիգրան թագավորը, Երասխ գետը, Հարություն վարդապետը,— թագավոր Տիգրանը, ամրոց Անին, մայրաքաղաք Անին, տեր Գրիգորը, հայր Աբրահամը, գրաշար Հարությունը, պարոն Սմբատը։

3. Չափ ու քանակի իմաստով՝ չափ ու քանակ ցույց տվող բառերը մի թվական վերադրով, իբրև պատասխան ո՞քան, ո՞րչափ հարցին. օրինակ՝ երկու վերստ հեռավորություն, հինգ կանգուն լայնություն, մի կաթիլ արյուն, երկու բաժակ թեյ, մի գունդ զորք, մի քանի տող գիր, մի քիզ հող, երկու ոտ տեղ, մի րոպե ժամանակ, մի շարք ծառեր, մի շար ուլունք, մի տակ մարգարիտ, մի խումբ մարդիկ, մի գլուխ շաքար, մի փունջ ծաղիկ, մի կտոր հաց, մի բեռ ցորեն, մի բուռ հող, մի բաժակ լիքը ջուր, մի շալակ ցախ, մի աման յուղ, մի հոտ ոչխար, տասը գլուխ (մի նախիր) տավար, մի տասնյակ ձու, հինգ զույգ կոշիկ։ Մի վերստի չափ ճանապարհ, մի ոտի չափ տեղ, երկու թզի չափ հող, մրջյունի չափ կենդանի։

Ծան. 1. Չափ բառն իր վերադրի հետ առանում է մի բարդ ածականի նշանակություն, որով կարող է և փոխանակվել. օրինակ՝ մի վերստաչափ ճանապարհ.— Նա մի վերստաչափ հեռացավ։ Մի ոտնաչափ տեղ, երկու թզաչափ հող։ Այսպես և՝ մի կանգնաչափ, հինգ մատնաչափ և այլն։ Նույնպես երեք տակ մարգարիտ (երեքտակյան, երեքտակեան մարգարիտ)։

Ծան. 2. Այս գործածությամբ կցական բարդություններ են՝ այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ, այսքան, այդքան և այլն ածականները, որոնք կարող են և իբրև մակբայ գործածվել. նույնպես կրկնավորները՝ խումբ խումբ (մարդիկ), փունջ փունջ (ծաղիկներ), բուռը բուռը (արտասուք), գունդ գունդ (զորքեր)։

ԿՈՉԱԿԱՆ

64. Ուղղականն իբրև կոչական (կոչական ուղղական) ցույց է տալիս այն անձը, կամ իբրև անձ մտածված ամեն ինչ, որի անունը տալով՝ ձայնում, կանչում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար. օրինակ՝ Գնա, իմ աղի. աշխարհքս անցիր (Գամ.-Քաթ.)։

1. Կոչական անունը, երբ բայն երկրորդ դեմքով է, բացահայտիչ է ենթակայի, արտահայտված լինի ենթական դերանունով, թե ոչ։ Օրինակ՝ Դու, կաթողիկո՛ս, Հորինե կոնդակ. դու, հայ զորապե՛տ, գթա՛ հայերուն (Գ.-Ք.)։ Լսիր, ուղյա՛կ, հորդ խրատին։

2. Երբ բայն առաջին կամ երրորդ դեմքով է, կոչական անունը մրնում է խոսքի կապակցությունից դուրս և ցույց է տալիս մի առարկա, որին դիմում է խոսողը։ Այս դեպքում կոչականը մենակ մի տեսակ առանձին խոսք է կազմում։ Օրինակ՝ Տի՛գրան, ո՞վ է գնացել (իբրև՝ ասա դու, Տիգրան)։

65. *Կան լեզուներ, որոնց մեջ կոչականն իր հատուկ հոլովական ձևն ունի։ Հայոց լեզվի մեջ գրաբարում արդեն կոչականի առանձին ձև չկա. ուղղականը գործ է ածվում և իբրև կոչական, միայն առանձնապես շեշտված։ Նեշտով կոչական ուղղականը տարբերվում է անվանական ուղղականից. ուստի և գրության ժամանակ ևս կոչականի վրա սովորաբար շեշտ է դրվում։ Շեշտը, որ սովորաբար դրվում է կոչական անվան առաջին վանկի վրա, նայելով թե ո՛ր վանկի վրա է դրված՝ առանձին եղանակավորություն է տալիս խոսվածքին. ինչպես՝ Կա՛րապետ, արի մեզ մոտ. Կարա՛պետ, արի մեզ մոտ. Կարապե՛տ, գաս մեզ մոտ։ Թեև կոչականն իրենից առաջ մի վերադիր ունի, շեշտը նրա վրա է դրվում. ինչպես՝ Սիրելի՛ Կարապետ, կամ սի՛րելի Կարապետ։*

Բացի շեշտից՝ կոչականը անվանական ուղղականից զանազանվում է և նրանով, որ 1. իր բնավորությամբ մոտիկ լինելով ձայնարկություններին՝ հաճախ միանում է կոչական ձայնարկություններին. օրինակ՝ Ա՛յ մարդ, այսօր շատ քնեցար։ Երանի՛ է ձեզ, ո՛վ ուրիի՛ փառաց։ Ա՛ռղա.— 2. ունենալով երկրորդ դեմքի նշանակություն՝ ա) ետևից բոստանում է նրբեմն դու դերանունը. ինչպես՝ աղջի՛կ դու, կի՛ն դու, մանո՛ւկ դու։ Աղջի՛կ դու, քեզ եմ ասում. բ) երկրորդ դեմքի դ դիմորոշ ճող է դրվում կոչականի ածականի վրա. ինչպես՝ Սիրելի՛դ իմ Արտաշես, Քա՛ջդ Վարդան։ Գոհությո՛ւն և փառք, մե՛ծդ փադիշահ, որ հայ չնչելում գտար դու քեզ շահ.—Բնավ չի մոռնալ քեզ, մե՛ծդ սուլթան, քու երջանկացրած ավեր Հայաստան (Գ.-Ք.)։

ՀԱՅԱԿԱՆ

66. *Ուղղականն իբրև հայցական (հայցական ուղղական) ցույց է տալիս՝*

1. Հանգման պարագան, այսինքն այն տեղը, ժամանակը, չափն ու քանակը և նպատակը, դեպի ուր կամ մինչև որը դիմում, ուղղվում է գործողությունը, հակառակ բացառականի, որ ցույց է տալիս ելակետը, որից սկսվում է գործողությունը. օրինակ՝

ա) Տեղի հայցական. ինչպես՝ Նա Երևանից եկավ Էջմիածին։

բ) Ժամանակի հայցական. ինչպես՝ Նա առավոտից իրիկուն աշխատում է։—Նա օրն ի բուն տանջվում է։

գ) Չափ ու քանակի հայցական. *ինչպես՝* **Նա հինգ մայլ** *հեռացավ ինձնից։*

դ) Նպատակի հայցական. *ինչպես՝* **Նա գնաց որս**։

2. **Հանգման և կրող իրը** (կրող իրի հայցական), *որի վրա ինչպես մի նպատակի անցնում է անցողական բայերի գործողությունը, և որ կրում է գործողության ազդեցությունը. օրինակ՝* **Նա այրեց բույրը**։

Ծան. *Հայցականի այս կիրառությունը ծագում է առաջինից։ Անցողական բայերի գործողությունը մտածվում է իրրև անցնող ներգործից մի առարկայի (որից և այդ բայերի անցողական կոչումը), որին իրրև մի նպատակի ուղղվում, վերաբերում է գործողությունը։*

3. **Տեղը կամ ժամանակը,** *ուր կա կամ լինում է մի բան. օրինակ՝* **Նա շաբաթ օրը կգա։ Նա այժմ Թիֆլիս է։**—*Հայցականն այս կիրառությամբ ունի ներգոյականի նշանակություն։*

Ծան. *Դրաբարում եզակի ուղղականը (անվանականը) և հայցականը միևնույն ձևն ունին, բացի անձնական դերանուններից. բայց հոգնակիում այս երկու հոլովն իրենց ուրույն ձևն ունին՝ տունք, տունս, աչք, աչս։ Միջին դարերից սակայն այս երկու հոլովի ձևական տարբերությունը վերանում է. հայցականի հոլովական ձևը լեզվից դուրս է ընկնում, և ուղղականը գործ է ածվում նաև իրրև հայցական. այնպես որ մենք այժմ հին Աչս ունին, գնաց ի Սիունիս հայցականներն արտահայտում ենք՝ ուղղականի ձևով՝ Աչք ունին, գնաց Սյունիք։ Սակավաթիվ բառերի մեջ սակայն գրաբարի հայցականն է գործածվել և իրրև ուղղական. ինչպես՝ ծախս, պաս, բարբառների մեջ նաև պաք (պահս, պահք), երկուս (երկուք), մի քանիսը, հոգս և այլն։*

Ա. ՏԵՂԻ ՀԱՅՑԱԿԱՆ

67. *Հայցականը ցույց է տալիս գործողության հանգման տեղը, այսինքն՝ դիմակետը կամ նպատակակետը, դեպի ուր ուղղվում, դիմում և հասնում է գործողությունը։ Այսպես գործ են ածվում.*

1. Իբրև տեղ առնված անունները. օրինակ՝ **Դևը դարբնոց** *(ո՞ւր) չէր գնում, գլխին տալով տարան (Ա.)։—* **Նա մտավ եկեղեցին։—** *Ես* **նախիրն** *եմ ուղարկում, նա* **ախոռն** *է մտնում (Ա.)։—* **Գետը** *(ջուրը, ջրատեղը) գնաց, ծարավ ետ եկավ (Ա.)։—Գնդակը* **ձեռից** *ընկավ գետին։—* **Նա որ** **ճար** **գնա, կկանաչի։—** **Օձը քաշվեց իր բույնը։**

Ծան. *1. Անձի անունները գործ չածվելով իրրև տեղ՝ չունին հայցականի այս գործածությունը և սովորաբար դրվում են մոտ բառով. Նա գնաց եղբոր մոտ, Հակոբի մոտ։ Ժողովրդական ձևով սակայն ասվում է՝ Երեխան գնաց Հայրը, Մայրը և այլն։*

Ծան. *2. Այս հայցականը հաճախ առանում է մեջ, վրա, մոտ, դեպի բառերի իմաստը, որոնցով և կարող է երբեմն փոխանակվել. օրինակ՝ Նա մտավ ջուրը (ջրի մեջ)։ Նրա հրամանը կատարելու համար՝ ջուրն էլ կընկնեմ, հուրն էլ։— Ամա՛ն, նա ինձ կբռակր կձգի, կհանի։ Շան հետ ընկել ենք պարկը, մնացել ենք կաղ կաղ (Ա.)։— Գիտուն աղվեսը երկու ոտքով թալաք կընկնի (Ա.)։ Նա ջուրն ածեց կուժը։ Այլյուրը տապրակն ածա՛ր։— Կաղ էշով ճարվան մի՛ մտնիլ (Ա.)։ Մոսին հողն եմ դրել։— Նա բարձրացավ ծառը (ծառի վրա)։— Սատանի ձին ելավ, վեր չեկավ (Ա.)։— Խոսքն էշ ելնելը չէ, էշից վեր գալն է (Ա.)։— Նա կառք նստած եկավ։— Ձի հեծնել, ձի նստիլ։*

2. Մարդու և կենդանիների մարմնի մասերը. օրինակ՝ էշին ուհան կտան, որ հոտ առնի, բերաևը կտանի։— Նա ձեռքը եակատը (դեպի ճակատը) տարավ։ Խուրջինը գցեց ուսը, փայտն առավ (տվավ) ձեռը ու ճանապարհ ընկավ (ձգեց)։— Նժույգ ձի նստած, ձեռս թուր առած՝ ես զաշտ կերթայի։— Նա կոշիկները ոտներն անցկացրեց։— Գայլից փախա, արջի ճանկն ընկա (Ա.)։ Դանակը խրեց կողմը (մեջքը)։—Վախեցած աչքը չուփ կընկնի (Ա.)։ Պաշարը կապեցին (տվին, առան) իրենց չալակն ու գնացին։—Աբասին դրեց նրա բուռը։— Նրա գլուխն այնպիսի քամի մտավ, որ ինքն էլ չիմացավ, թե ինչ անի։— Լեռները դրավում են բեղ իրենց ծոցը։— Երեխան ընկավ նրա գիրկը։ Նրան գցեց իր գավակը (քաւրքը) ու տարավ։— Իմ ձեռս է (ձգել եմ) քո փեշը, ազատիր ինձ այս գերությունից։— Մի կտոր հաց դրեց գոտկածալն ու գնաց դաշտը։

Ծան. *1. Այս նշանակությամբ կան բազմաթիվ հարադրյալ բայեր և դարձվածներ. ինչպես՝ պար գալ, գլուխ գալ, գլուխ հանել (մի բան), հանդես գալ, բերել, ձեռք ձգել, կարգը ձգել (մի բան). ձեռք բերել, ձեռ առնել (մեկին), մայր մտնել, նեղն ընկնել, քուն մտնել. կապ ընկնել, փախուստ դառնալ և այլն։ Մեկին մարդու տեղ դնել, մեկին խելոքի տեղ դնել և այլն (մեկին մարդ համարել, խելոք համարել)։*

Ծան. *2. Դնել, փաթաթել, fսել, fաշել, ձգել, կապել բայերի խնդիրը՝ թե հայցական և թե տրական է դրվում. օրինակ՝ Մեկի բերանը (բերանին) խոսք դնել։— Չվանը դրեց ոտները (ոտներին,— ոտները չվանով կապեց)։— Նշաևը, մատանին դնենք մատը (մատին)։— Թող ձեռնները (ձեռներին) հինա դնեն։— Ձեռը ծոցը (ծոցին) գնել, գլխարկը գլուխը (գլխին) դնել։— Թաշկինակը փաթաթեցին գլուխը (գլխին)։— Մի լավ խալաթ փաթաթեց նրա բուկը (բկին)։— Մուրն երեսները (երեսներին) քսեց։— Երեսները գետինը (գետնին) քսեցին, լալակը երեսը (երեսին) քաշեց։— Ձեռը ձգեց նրա շլինքը (շլինքին)։ Մեղքն էլ քո շլինքը (վիզը), վարձքն էլ քո շլինքը (շլինքին)։— Աղլուխը ճիտը (ճտին) զցելով գնաց։— Աչքերը գետին (գետնին) գցեց։— Մի բան կապիր շլինքդ (շլինքիդ)։— Հացները կապել էին շալակները (շալակներին)։ Այսպես և՝ նրա գլուխը (գլխին) այնպիսի բան եկավ, որ...*

3. Տեղի անունները մի սեռականով կամ հոդով։ Օրինակ՝ Սեղբոս աղան ճառը վերցրեց և տեղը մի ոսկի մեջիդիե դրեց (Պռ.)։ Նստիր տեղդ, ես այստեղ կնստեմ (Մուր.)։ Ղունկիանոսի կրթության սահմանը փոխասաց տիրացությունից այն կողմը չի անցել.— Դրեց բարձի տակը.— Արյունդ աչքիդ տակն առ (Պռ.).—Գլխի տակն առավ փոքրիկ բարձր (Մուր.)։ Ջուրդ որ ավելանա՝ դրացուդ ծառի տակը կապիր (Ա.)։ Բազումքր հասել էր Շամփուր—կշեռքի մոտը (Պռ.)։ Մոտս արի՛, տեսնեմ։ Հասավ բանվորների կուշտը։ Գետին, պատռվի՛ր, ես մեջդ մտնեմ.—Ուխտավորը լցվել էր ավերակների մեջը.— Արեգակը ծովի մեջը մրտավ.— Նրանցից մեկը բռնով ալյուրը մաղի մեջն է լցնում.— Արևը լեռների ետևն է անցել.— Լականը դրեց առաջը.— Գիրքն առաջս դրած կարդում եմ.— Հացը դրին առաջները.— Անց կացավ եկեղեցու ետևը.— Հավաքվեցին մեռելի գլխավերևը (Պռ.)։

Նաև. Տեղի անուններով այս նշանակությամբ կազմվում են բազմաթիվ հարադրյալ բայեր, որոնք մեջ տեղի անունն առանց հոդի է մնում և առնվում է իբրև մակրայ. օրինակ՝ մեջ ընկնել, մեջ մտնել, ներս ընկնել, ներս գալ, դուրս գալ, դուրս անել, վրա տալ, վրա գալ, վեր նլնել, վեր հանել և այլն։

Բ. ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՅՑԱԿԱՆ

68. *Հայցականը ցույց է տալիս՝*

1. Գործողության հանգման ժամանակը, այսինքն այն ժամանակակետը, մինչև որը (մինչև նրբ) տևում, հասնում է գործողությունը. Օրինակ՝ Բարով հասնենք այն օրը: Բարով եկող տարի հասնենք։ Նա առավոտից իրիկուն աշխատում է։— Թե այսօրից էգուց իմ գլուխը մի բան գա, դրանք կլինեն մեղավոր (Պռ.)։

Նաև. *Այս նշանակությամբ հայցականը սովորաբար գործ է ածվում ժամանակի բացառականի հետ կամ միևնույն նախադրությամբ։*

2. Գործողության տևողության ժամանակը, այսինքն ժամանակամիջոցը, որի սկզբից մինչև վերջը ձգվում է գործողությունը։ Պատասխանում է ո՞րքան ժամանակ հարցին։ Օրինակ՝ Նա ամբողջ օրը աշխատում է։— Նա այս ձմեռ գյուղում ապրեց։— Ես ժամ ու կես մնացի այնտեղ։ Այսպես և՝ տարի ու կես, ամիս ու կես։— Այդ գործը ուղիղ մի շաբաթ տևեց։— Երեք ամիս շարունակ անձրև չեկավ։— Նա այս գիշեր մինչև լույս աչքը չխփեց։ Նա պահ մի լռեց։

Գ. ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՀԱՅՑԱԿԱՆ

69. *Հայցականը ցույց է տալիս չափ, կշիռ և արժեք։ Պատասխանում է ո՞րքան, ո՞րշափ հարցերին։ Այսպես գործ են ածվում չափ ու քանակ նշանակող կամ նույն իմաստով առնված բառերը մի թվական վերադրով.*

1. Իբրև խնդիր հետևյալ տեսակի ածականների և նրանցից կազմված բայերի՝ մեծ, փոքր. լայն, նեղ. հաստ, բարակ. բարձր, ցածր. խոր, ծանծաղ. երկայն, կարճ. ծանր, թեթև. թանկ, աժան. վաղ, ուշ. ավելի, պակաս. հեռու, մոտ. առաջ, հետո և այլն։ Օրինակ՝ Երկ'որ առաջ նա այստեղ էր։— Տնտեսն որ առաջ իր պատրաստությունը կտեսնի։— Նա մի տարի հետո եկավ։— Այս պատը հինգ արշին բարձր է։— Այս կտորը հինգ ռուբլի թանկ է մյուսից։— Նա մի ֆայլ մոտեցավ ինձ։— Մենք մի մղոն հեռացել էինք ծովափից։— Երևանն էջմիածնից տասնութ վերստ հեռու է։ Այս ծառը մի տարում երկու թիզ է միայն աճել։ Նա մի ամբողջ ժամ ուշացավ։ Քահանան մեղավոր չէ, որ տգետ է այդ աստիճան (Մուր.)։ Ինչպես տան չորս պատերը, նույնպես և առաստաղն ու նրան բռնող փայտե սյուները ծուխից սևացած էին այն աստիճան (մինչև այն աստիճան), որ շատ տեղ փայլում էին լուսի առաջ (Մուր.)։

2. Իբրև խնդիր կշիռ, արժեք ու գին ցույց տվող բայերի, ինչպես՝

արժել, գնահատել, նստել, ծախել, վաճառել, տալ, գնել, առնել, կշռել, գալ, քաշել և այլն. օրինակ՝ Խնձորի ֆունտն արժեր երկու կոպեկ։— Այս տունը գնահատեցին հինգ հազար ռուբլի։— Այս հագուստն ինձ հիսուն ռուբլի նստեց։— Սանր նստիր, լիտր գաս (կշռես)։— Այս տուպրակն ու ղիղ մի լիտր կշռեց։— Ասեղի հատը մի ձու են ծախում։— Հատն երկու ձու է (արժե), կամ ձու են տալիս (վաճառում)։

Սան. Այս կիրառության մեջ գործողությունը ձգվում, հանգում, հասնում է մինչև չափի, չշռի ու արժեքի ցույց տված վերջին ծայրը, ուստի և հաճախ մինչև, մոտ բառերով է դրվում. օրինակ՝ Այս կտորի արշինը մինչև հինգ ռուբլի արժե։ Այս ծառը մի տարում մինչև երկու թիլ բարձրացավ։ Մեզնից (մոտ) մի վերստ հեռացավ (հեռանալը ձգվում է մինչև մի վերստ)։

3. Չափ ու քանակի հայցականի իմաստով գործ են ածվում և կըրկնության անգամ, ոտ, ճետ և նման նշանակությամբ բառերը. օրինակ՝ Հանը մի անգամ կասեն։— Շատ անգամներ եմ տեսել նրան։— Սրնք չորս ոտ գնացին, եկան։— Այդ բանը քանի՞ ճետ ասած կլինիմ քեզ։— Աքլորները չորս բերան կանչել էին արդեն։— Երկու գլուխ ձին քշեց դես ու դեն։— Հանցավորը fսանպատիկ պիտի տուժի։— Սա տասնապատիկ ավելի գեղեցիկ է։

Գ. ՆՊԱՏԱԿԻ ՀԱՅՑԱԿԱՆ

70. Հայցականը ցույց է տալիս նպատակ, դեպի որն ուղվում է գործողությունը, Այսպես գործ է ածվում միայն սակավաթիվ դարձվածների մեջ. օրինակ՝ Մյուս օրը Փարպի պիտի երթային ուխտ (ուխտի, ուխտ անելու)։— Նա առանց յուր քրոջ տեսության գնալու հեռացավ (տեսության, տեսնելու)։— Հավաքվել էին նրանց թամաշա (թամաշի համար, մտիկ անելու)։ Ես իմ ծառաներին ուղարկել եմ ոչխարը, նըրանք եկել են ձեր այգիքը գողության (գողության)։— Նրան կանչեցին նշանդրեճ, բայց ճարսանիճ չկանչեցին (նշանդրեքի, հարսանիքի)։— Նա գնաց պատերազմ։ Նա գնաց ոռս։ Նա գնաց ճարսանիճ։ Մեկին տես դնալ։

Սան. 1. Անորոշ դերբայի գործածությունն իբրև նպատակի հայցական՝ ազդեցություն է գրաբարի կամ օտար լեզուների. ինչպես՝ Կգամ ձեզ շնորհավորել. գնաց նրանց տեսնել, փոխանակ՝ շնորհավորելու, տեսնելու։

Սան. 2. Նպատակի հայցականի իմաստով կազմվում են որոշ թվով հարադրյալ բայեր, ինչպես՝ պահ տալ, Աո գալ, եփ գալ, կախ ընկնել, քափ տալ, ման գալ, շաղ տալ, երևան գալ։

Ե. ԿՐՈՂ ԽՆԴՐԻ ՀԱՅՑԱԿԱՆ

71. Հայցականը ցույց է տալիս այն իրը, կամ իրև իր, բան մտածված ամեն առարկա, լինի մարդ, կենդանի, թե մի ուրիշ բան, որի վրա իրև մի նպատակի անցնում է անցողական բայերի գործողությունը և

որ կրում է գործողության ազդեցությունը։ Այս կրող իրի հայցականը պատասխանում է միշտ ի՞նչ, ի՞նչը, ի՞նչ բան հարցերին, լինի մարդու, կենդանու, թե իրի անուն։ Օրինակ՝ Ամեն մարդ կռակն (ի՞նչը) իր բաղարջի տակ կքաշե (Ա.)։ Նա ընկեր (ի՞նչ) չունի։

Այսպես դրվում են.

1. Իրի վերացական անունները, լինին որոշված, թե անորոշ. օրինակ՝ Սերը (ի՞նչը) սովորը կուտե, քաոը՝ մոլորը (Ա.).— Անջուր չրազացն ալյուր (ի՞նչ) չի աղալ (Ա.)։— Շան աճումը տուր, փայտը. վեր կալ (Ա.)։— Լավություն արա, գետը ձգիր, թե որ մարդ չիմանա, ձուկը կիմանա (Ա.)։

Այս ձևով խնդիր լինում է և անորոշ դերբայն առանց հոդի. օրինակ՝ Ես մոռացա ասել ձեզ։— Հիսուս պատվիրեց իր աշակերտներին սիրել միմյանց։— Նա սկսեց քարոզել։

2. Կենդանիների անունները սովորաբար երբ անորոշ են, հաճախ և երբ որոշված են. օրինակ՝ Արի ու էշը (ի՞նչը) ցեխից հանիր (Ա.)։— Կատուն իր փորի համար մուկն (ի՞նչ) է բռնում, տերն ասում է, թե կատուս քաջ է (Ա.)։— Անտեր ոչխարը գայլը կուտի։ Աստուծու պահած գառը գայլը չի ուտիլ (Ա.)։ Ամենքն էլ իրենց ձին (էշն) են քշում (Ա.)։ Ուղտը փալանով կուլ կտան (Ա.)։ Քաղցր լեզուն օձը բնիցն է հանել (Ա.)։ Եզը, ոչխարը մորթեցին։ էշը, ձին, կովը քշել։

3. Մարդկանց անունները սովորաբար երբ անորոշ են, երբեմն և երբ որոշված են։ Օրինակ՝ Ուրեմն դու սիրտ չունիս, դու հայր, մայր, եղբայր ու քույր (ի՞նչ) չես ճանաչում (Մուր.)։— Նա մի աղջիկ (ի՞նչ) ունի միայն, էլ ուրիշ զավակ չունի։— Պարսից բոլոր մեծամեծներն ունին իրենց ծաղրածուն (իրենց ի՞նչը).— Ես չեմ ուզում աղջիկս մարդու տալ.— Ո՛վ սուրբ մեռոն, դու մեր ազգը հաստատ պահես (Պռ.)։ Մոռցել են Աստված, կրոն, սուրբ հավատ (Գամ.-Քաթ.)։ Ինչո՞ւ է քահանային արգելել յուր ուրիիճն ուսման ուղարկել (Մուր.)։ Շատ անգամ կամեցա գնալ քաղաք բժիշկ հրավիրելու, բայց ամեն անգամ էլ նա արգելեց։— Ինչո՞ւ համար ես բերում բժիշկը, ասում էր նա (Մուր.)։ Նա պատկերացրեց յուր առաջ նշանադրության հանդեսն, ապա հարսանյաց պատրաստությունները, վերջը փառահեղ պսակադրությունը, հարուստ ճյուրերը, մեծաքսի, ադամանդի և փարիզական ճոխությանց մեջ փայլող գեղեցկուհիները (Մուր.)։ Քանի Պետրոսը կարդացել էր այդ գիրքը, այնքան ավելի նա սկսել էր սիրել հայ շինականն ու գյուղացին (Մուր.)։ Այժմ արդեն պտրում եմ նախկին մարդն ու նրա անխարդախ և, թեկուզ, կիսով չափ վայրենի ընկերակցությունը (Մուր.)։ Արդարև, ապրել շարունակ գյուղում, տեսնել շուրջդ միայն գյուղացին և նրա միօրինակ կյանքը, չստանալ նրանից ոչինչ նոր... սա դժվար կացություն է (Մուր.)։ Ով Իսրայելի սարեր... ձեզ վրա պիտի շատացնեմ մարդը (ի՞նչը) և անասունը (Ս. գիրք)։

Ծան. երբ հեղինակի անունը գրվածքի անվան տեղ է գործածվում իբրև կրող խընդիր, դրվում է ուղղականի ձևով հայցական. օրինակ՝ Նղիշն (ի՞նչ) կարդալ։ Ղազար Փարպեցին կարդացե՞լ ես. թե չէ։ Սխալ է ասել՝ Նղիշեին կարդալ, Խորենացուն կարդալ։

72. *Կան անանցողական բայեր, որոնք կրող խնդրի հայցական առնելով, ստանում են անցողական բայի նշանակություն։ Օրինակ՝ Մենք գետը, կամուրջը, սարն անցանք։ Այդ գլուխը դեռ չենք անցել (սովորել)։ Առուն թռի՛ր, հետո ասեմ՝ ապրիս։ Նա ինձ տասն ռուբլի փող է պարտ։ Ես իմ հաջողությունը ձեզ եմ պարտական։ Բլբուլն իր դարդը կլա, ագռավը ղա՛ռ ղա՛ռ կանի (Ա.)։ Մեր գլուխը լալու ծիրատ ո՞ւր պտռենք (Գ.-Ք.)։ Ամբողջ երկիրը ողբաց Արտաշես թագավորի կորուստը։ Մինչև քո ասած ժամանակն ամիս ու կես ժամանակ հազիվ է մընում, այդ էլ կհամբերենք։ Նա իր մեղքը զղջաց։ Արևելքը ոչ մի ժամ արևմուտքից բան չսպասե (չհուսա)։ Ես այս օգնությունը քեզնից եմ սպասում։ Նա կրակ ու բոց է շնչում։*

73. *Մի քանի անանցողական բայերի հետ դրվում է իբրև կրող խնդրի հայցական մի գոյական, որ կազմված է բայի բնից կամ համանիշ մի բառ է, կամ մոտիկ նշանակություն ունի։ Օրինակ՝ Նա այժմ մեծ քունն է քնել։ Մի ողբ ողբացին, որ տեսնողների՛ էլ լացը եկավ։ Նա վերջին հիվանդությունը հիվանդացավ։ Նրանք կյանքի և մահվան կռիվն էին կռվում։ Ջահիլ դալար սիրտն ի՞նչ անի, երբ մրմուռ է լալիս։ —Մի խաղ խաղալ, կլոր պար պարել. ճանապարհ գնալ։ Գնալը գրնաց, բայց տեղ չհասավ։ Մեռնել ամենքս պիտի մեռնենք։*

Ծան. *Այս հայցական խնդիրը, որ բոլորովին կրող խնդրի բնավորություն ունի և երբեմն միայն ստանում է ձևի պարագայի նշանակություն, կոչվում է ներքին խնդրի կամ* բովանդակության հայցական, *որովհետև առարկան արդեն պարունակվում է բայի նշանակության մեջ (խաղ խաղալ), իսկ անցողական բայերի կրող խնդիրը կոչվում է արտաքին խնդրի հայցական, որովհետև առարկան կա՛մ գործողությունից դուրս է (փայտը կոտրեցի), կա՛մ իբրև արդյունք առաջ է գալիս գործողությունից (նամակ գրեցի)։*

74. *Կան բազմաթիվ հարադրյալ բայեր, որոնց հարադիրն ունի կրող խնդրի նշանակություն. օրինակ՝ խելք անել, սիրտ անել, ականջ անել (դնել), զրույց անել, ջանք անել, միտք անել, իմաց անել,— սիրտ տալ, ձեռ տալ (մի բանի), գլուխ տալ, իմաց տալ, ծոր տալ,— գլուխ հանել (մի բանից), ձեռ քաշել (մի բանի, մի բանից), հոտ քաշել, աչք ածել, ցույց տալ, երդում ուտել, նշան դնել և այլն։*

Ջ. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀԱՅՑԱԿԱՆ

75. *Հայցականը գործածվելով իբրև ներգոյական՝ ցույց է տալիս այն տեղը և ժամանակը, որի մեջ կա կամ լինում է մի բան։ Օրինակ՝ Կաթողիկոսը նստում է էջմիածին։ Այդ գիրքը Թիֆլիս (Թիֆլիսում) է տպված։ Այդ բանը վերջը (վերջում) կիմացվի։ Ջորեքշաբթի գիշերը լույս ավագ հինգշաբթի նա քնիցը վերկացավ։*

76. *Իբրև տեղի ներգոյական հայցական գործ են ածվում՝*

1. Հատուկ անունները, երբ տեղ (ո՞ւր, ո՞րտեղ) են ցույց տալիս. օրինակ՝ Նա Երևան է բնակվում։ Բաղդադ սխտոր կծեծեն, հոտը մեր քիթը կառնե (Ա.)։ Աշտարակ այսպես գինի՞ է լինում.— Ապարան շատ աղբյուրներ կան, Ալագյազ շատ քաղցր ջրեր կան, բայց ոչ մեկը սրա պես մարսական չէ (Պռ.)։

2. Տեղի անունները մի վերադրով կամ հոդով։ Օրինակ՝ Քարն իր տեղը ծանր կլինի (Ա.)։ Նրանք դարձյալ մնացին իրենց տեղն անշարժ, անփոփոխ.— Թթե անցնես քո և դիմացի սարի մեջտեղը գտնվող տարածությունը... (Մուր.)։ Տեղս շատ հայեր չկան։ Նա այստեղ, մեր հարեվանի մոտն է ապրում։ Ի՞նչ ես անում այդ մութը տեղը։ Ես որ տան մի կողմը լինիմ, մնացողը մեկել կողմը, էլի իմ ասածը պիտի լինի (Պռ.)։ Մեր կողմերն այս ամառ անձրև չի եկել։ Ով որ տուն չէ շինել, գիտե թե սյունը մեջն է բուսել (Ա.)։ Մեջս այսքան ույժ, ասեք՝ ի՞նչ անեմ (Գ.-Ք.). Այժմ ժամ են ասում մեջը.— Ո՞րիցս լսեցիր, թե աչքիդ վերևն ունք կա.— Ախորժակն ատամի տակն է.— Ինչպես վերն ասվեցավ.— Մի ...գետ ...վազում է ջրելու ներքևն ընկած դաշտավայր գյուղերը (Պռ.)։ Կամսարյանը պատի ետևը կանգնած՝ տեսնում ու լսում էր.— Բանալին միշտ մոտս եմ պահում (Մուր.)։ Այսպես՝ դուրսը, ներսը, առջևս, դիմացս (կանգնած) և այլն։

77. *Իբրև ժամանակի ներգոյական հայցական (պատասխ. ե՞րբ, ո՞ր ժամանակ հարցին) գործ են ածվում ժամանակի անունների մեծ մասը. օրինակ՝ Իսկ անտառն, որ արև ժամանակն արդեն ստվերաշատ էր, փոթորկի պատճառով, համարյա՛, մթնել էր.— Ես... ամեն րոպե սպասում էի մի դժբախտության (Մուր.)։ Տարին մի զատիկ, այն էլ նավակատիք (Ա.)։ Այսպիսի ձյունաշատ տարին մանիշա՞կ լինի այժմ (Պռ.)։ Այսպես և՝ այն ժամանակ. մանկության ժամանակ, մի ժամանակ, ամեն ժամանակ, ամառ ժամանակ, մութ ժամանակը, նույն ժամանակները և այլն։— Մի օր. այն օրը, տոնի օրը, այս օր, ամեն օր, մյուս օրը, հաջորդ օրը, մեկէլ օրը, կիրակի, երկուշաբթի (օրը), երեքշաբթի, չորեքշաբթի (գնաց, եկավ),— առաջին օրը, օրերս, մոտ օրերս, նույն օրերը և այլն։— Ամեն շաբաթ, այս շաբաթ, եկող (գալ) շաբաթ, տակի շաբաթը։— Ամեն ամիս, այս ամիս և այլն։— Ամեն տարի, մի տարի, հաջորդ տարին, այս տարի, մյուս տարի, հերու (անցյալ տարի), եկող տարին և այլն։ Ամեն առավոտ, մի առավոտ, առավոտը, առավոտս, այս առավոտ, էգուց առավոտ, առավոտները։— Ամեն իրիկուն (երեկո), իրիկունս, այս իրիկուն, էգուց իրիկուն, իրիկները։— Ամեն գիշեր, մի գիշեր, այս գիշեր, գիշերս, անցած գիշեր, գիշերները և այլն։ Ցերեկը, ցերեկները, գիշեր ցերեկ։ Ամառը, այս ամառ, ամառս, ամեն ամառ, մի ամառ, ամառները։ Ձմեռը, եկող ձմեռ, ամեն ձմեռ և այլն։ Վաղը, էգուց, երեկ, վերջը, վերջերս, մոտերս, նորերս, անցյալները, առաջները և այլն։ Մի անգամ, եկող անգամ, անցյալ անգամ, այս անգամ, այն անգամ, ուրիշ անգամ և այլն։*

Տես. երբ անգամ բառը գործողության կրկնության իմաստով է գործածվում, հետն եղած ժամանակի անունը դրվում է միշտ ներգոյականի նշանակությամբ հայցական. օրինակ՝ օրը մի անգամ, երկ՛օրը մի անգամ, տարին մի անգամ, ամիսն երկու անգամ, տոպեն մի անգամ (գալիս, գնում է)։—Կան նաև օրեները մի անգամ, տարեները երկու անգամ ամսենը մի անգամ, շաբթենը մի անգամ ձևերը, որոնք ծագում են յամսեանն, ի շաբաթեան ներգոյականներից։

Ս Ե Ռ Ա Կ Ա Ն

78. *Աշխարհաբարում սեռական և տրական հոլովները բոլորովին նույն ձևը և մեծ մասամբ նույն նշանակությունն ունին և միայն կիրառությամբ են զանազանվում. այն է՝ միևնույն հոլովական ձևը սեռական է, երբ լինում է խնդիր կամ վերադիր գոյականի. տրական է, երբ գտնում է խնդիր բայի կամ ածականի։ Սեռականն ուրեմն միևնույն հոլովական ձևի գործածությունն է իբրև վերադիր։*

Սեռականը *ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է մի ուրիշ առարկա. իսկ թե ինչ տեսակի է այս վերաբերությունն ամեն առանձին դեպքում, պետք է խոսքի կապակցությունից հասկացվի. օրինակ՝* Տիգրանի պատկերը *կարող է հասկացվել՝ Տիգրանին պատկանած պատկերը (որ Տիգրանն ունի իբրև սեփականություն, ստացվածք). Տիգրանին ներկայացնող պատկերը (որ պատկերահանը Տիգրանից է քաշել). Տիգրանի նկարած պատկերը (որ Տիգրանն իբրև պատկերահան ուրիշից է քաշել). Տիգրանի ձեռքին բռնած պատկերը. Տիգրանի ուղարկած պատկերը և այլն։*

Տես. *Մի առարկա մի ուրիշ առարկայի հետ հարաբերություն ունի իր գործողությամբ կամ գրությամբ. ուստի և սեռականի ու իր խնդրառու գոյականի մեջ, կապակցված առարկաների բնության նայելով, հաճախ դրվում է մի դերբայ կամ նույն իմաստով մի ածական, որով պարզվում է սեռականի և իր խնդրառուի հարաբերությունը։ Առանց այսպիսի մի դերբայի կամ ածականի՝ սեռականը սովորաբար միայն ընդհանուր անորոշ կերպով է հայտնում երկու առարկայի հարաբերությունը՝ ցույց տալով միայն, թե մի առարկա մյուսին է պատկանում, վերաբերում, հատկացվում, կամ հատուկ է, պատկան ու պատշաճ է, կամ թե մի առարկան ունի մյուս առարկան, տեր է նրան։*

Ա. ՍՏԱՑԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ

79. *Սեռականը ցույց է տալիս այն առարկան, անձն կամ իր, որ ունի մի բան, տեր է մի բանի, կամ որին պատկանում մի բան.*

1. Իբրև իրական սեփականություն, ստացվածք, ունեցվածք. օրինակ՝ Տիգրանի գիրքը. այս որսորդի շունը (Տիգրանի ունեցած գիրքը. որսորդին պատկանած շունը)։

2. Իբրև իր ունեցած մասը. օրինակ՝ Այս ծառի ճյուղերը. ձիու գլուխը. թռչունի փետուրները. քաղաքի փողոցները։

3. Իբրև իր հատկությունն և ունակությունը. օրինակ՝ Այս առյուծի ուժը. բնության գեղեցկությունը. Աստուծու բարությունը։

4. Իբրև մի ազգի, ցեղի ամբողջության անդամ. օրինակ՝ Թորոսենց Վարդանը. Խնամոնց Ստեփանը։

5. Իբրև իր ունեցածը որևէ, հաճախ փոխադարձ, հարաբերությամբ. օրինակ՝ Դարբնի աշակերտը. այս երեխաների հայրը. հորս բարեկամը. այն կնոջ մարդը. այս ծառայի տերը. այդ ձիու քամքը. (դարբինն աշակերտ ունի. այս երեխաները հայր ունին. հայրս բարեկամ ունի և այլն)։

Նաև. *1. Ստացական սեռականը ցույց է տալիս այն առարկան, որ ունի մի բան, միայն ունենալու հարաբերությունը զանազան դեպքերում զանազան նշանակությամբ կարող է լինել. ուստի և շատ հաճախ երկու կապակցված գոյականներից թե՛ մեկը և թե՛ մյուսը կարող են իբրև սեռական դրվել. օրինակ՝ այս կնոջ մարդը, այս մարդու կինը. այս ծառաների տերը (տերը, որ այս ծառաներն ունին), այս տիրոջ ծառաները (ծառաները, որ այս տերն ունի). այս վարժապետի աշակերտները, այս աշակերտների վարժապետը. այս ծառի ճյուղը, այս ճյուղի ծառը և այլն։*

Նաև. *2. Բոլոր յանց վերջացրած ազգանունները գրաբարի ստացական սեռական են՝ Թորոսեանց Վարդան, Թորոսենց Վարդան. բայց այժմ գրաբարի այդ ձևն ստացել է ստացական ածականի նշանակություն, որ և գոյականարար է գործածվում. Թորոսյանցը գնաց, իբրև Թորոսենցը, Թորոսենց այս ինչը գնաց։*

Նաև. *3. Ստացական սեռականը երբ եզակի և անորոշ է, ստանում է սովորաբար որակական ածականի նշանակություն և կարող է հաճախ ածականով ևս փոխանակվել. օրինակ՝ հավի բուն, թռչունի քիս, ծառի ճյուղ,— Աստուծու շնորհք, երեխայի խելք. թագավորի պալատ, որսորդի շուն,— աստվածային շնորհք, երեխայական խելք, թագավորական պալատ, որսորդական շուն։ Սեռականն այս դեպքում նշանակում է ոչ այնքան ունեցողը, ստացողը, որքան այն առարկան, որին հատուկ ու բնական է մի բան. երեխայի խելք,— խելք, որ հատուկ, բնական է երեխայի։*

Բ. ՃԱԳՄԱՆ ՍԵՌԱԿԱՆ

80. *Սեռականը ցույց է տալիս այն առարկան, որից առաջ է գալիս մի ուրիշը կամ սերվելով, կամ իբրև արդյունք մի գործողության. օրինակ՝ այս կնոջ երեխաները. թագավորի որդին. Աբրահամի զավակները. կատվի ձագը.— Տիգրանի նամակը (Տիգրանի գրած նամակը). արեգակի ճառագայթները (արեգակի արձակած ճառագայթները). ծառի ստվերը (ծառի ձգած ստվերը). վարժապետի դասը (վարժապետի տված դասը). Մուրացանի երկերը (Մուրացանի հորինած երկերը). Վարդանի գործերը (Վարդանի կատարած գործերը). պատերազմի չարիքները (պատերազմի պատճառած չարիքները)։*

Գ. ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ

81. *Սեռականը դրվելով դերբայների ու բայական անունների վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որին ինչպես մի ենթակայի վերագրվում է խնդրառուի գործողությունը. օրինակ՝*

1. Ամպի գոռալը անձրևի նշան է (Ա.)— Շան հաչելն էլ մի փնշակ է (Ա.)։—Մինչև հաստի բարակելը (մինչև հաստը բարակի) բարակի հոգին դուրս կգա (Ա.)։—Տիգրանի նամակ գրելու օրը։ Տիգրանի սպանվելու օրը (այն օրը, երբ Տիգրանը սպանվեց)։

2. Աստուծու պահած գառը գայլը չի ուտիլ (այն գառը, որ Աստված պահում է)։— Մեծի ասած, պստկի լսած (Ա.)։ Տիգրանի եկած օրը։

—Վարդանի տեսած բանը։ Տիգրանի բռնված օրը։ Տիգրանի ստացած նամակը։

3. Տիգրանի ասելիքը։— *Դեսպանի գնալիք (գնալու) տեղը.— Այդ քո անելիք (անելու) բանը չէ։— Ժողովրդի սիրելի գործիչը։*

4. Հիսուսի համբարձումը (համբառնալը)։— Քրիստոսի ծնունդը (ծնվելը)։— Տիգրանի փախուստը, գալուստը։— Աստուծու սերը (սիրելը)։ Մոր օրհնությունը։

Դ. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ

82. *Սեռականը դրվելով դերբայների և բայական անունների վրա ցույց է տալիս այն առարկան, որին ինչպես մի խնդրի վերաբերում է գործողությունը. օրինակ՝*

1. Ամեն բանի սպիտակացնելը լավ չէ (Ա. —ամեն բան սպիտակացնելը)։— Մինչև հացի վեր ունելը լուռ կնստեն։— Բանվորը մինչև ժամի տալը կբանի (Պռ.)։ Երանի թե մարդու պակասը փողը լինի։ Փոդի գտնելը հեշտ է (Հովհ. Թում.)։

2. Տիեզերքի ստեղծող Աստված (տիեզերքը ստեղծող)։ Ո՛վ բարի լուսի տվող սուրբ Աստվածածին։— Վարդի քաղողը բլբուլն է (Պռ.)։ Աշխարհի փրկիչը։— Սգավորների մխիթարիչը։

3. Հայրենիքի կարոտը տանջում էր նրան։— Հիվանդի խնամքը (հիվանդին խնամելը)։— Փառքի ձգտումը։— Խորհրդի հրավերը։ Այս երկերի հեղինակը։ Աստուծու պաշտամունքը։

Նշ. *1. Միևնույն բայական անվան հետ սեռականը կարող է և իբրև ենթակայական և իբրև առարկայական ըմբռնվել առանց նշանակության փոփոխության. օրինակ՝ մեռելի թաղումը, երեխաների կրթությունը, կարելի է հասկանալ ներգործական իմաստով իբրև առարկայական սեռական՝ մեռելին թաղելը, երեխաներին կրթելը, և կրավորական իմաստով իբրև ենթակայական սեռական՝ մեռելի թաղվելը, երեխաների կրթվելը։*

Նշ. *2. Միևնույն սեռականը բայական անվան հետ կարող է տարբեր նշանակությամբ ևս թե՛ իբրև ենթակայական և թե՛ իբրև առարկայական խնդիր հասկացվել. օրինակ՝ Աստուծու սերը, թշնամիների վախը կարող է հասկացվել՝ Աստուծու սիրելը, թշնամիների վախենալը, և Աստուծուն սիրելը (Աստուծու սիրվելը), թշնամիներից վախենալը։*

Նշ. *3. Միևնույն անունը չի կարող միաժամանակ ենթակայական և առարկայական սեռականներ ունենալ, ինչպես գրել է, օրինակ, Դամառ-Քաթիպան հետևյալ տողերի մեջ. «Ջի դադրիլ մարդոց Ռու գովասանքը»։ Նույնպես կարելի չէ ասել՝ Մեղների որդիների սերը։ Պետք է խոսքն այս դեպքում ուրիշ կերպ արտահայտել,— Մեղուների սերըն առ (դեպի) որդիները։*

Ե. ՄԱՍՆԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ

83. *Սեռականը ցույց է տալիս ամբողջը, որից առնվում է մի մաս։ Այս նշանակությամբ սեռական խնդրում են.*

1. Բազմություն, մաս, չափ ու կշիռ ցույց տվող գոյականները. օրինակ՝ թշնամիների մի խումբը. աշակերտների մեծ մասը. հացի կտոր (փշրանք). ի՞նչ արժե այս գինու շիշը, ցորենի բեռը, խալվարը։— Այս

խնձորի հատը հինգ կոպեկ է ծախվում։— Այս պաստառի կանգունը շատ թանկ է։

2. Գոյականաբար գործածված թվականները և թիվ ցույց տվող անորոշ ածականները. օրինակ՝ Մեր հինգը (մեկը) նրանց տասին արժեն։— Ես ուզում եմ նրանց երկուսին միայն ընծա տալ։— Մեր երկուսին իրար կշտի թաղեցեք.— Հանավանքցոց երեքը մեր մի տղայի բանը չեն անում։— Ամեն թոռ ձգելիս իրանց մինի բախտը փորձում էին։— Սրանց ոչ մինը քո հորը պարտական չեն (Պռ.)։— Տանձի հարյուրը, ձվի տասնյակն արժե... Նեղության շատը գնացել է, քիչը մնացել։ Ուխտավորնեբի որը երևելի մարդ է, առաջուց իրեն տեղ կպատրաստի (Պռ.)։ Մեր ամեն մինը, յուրաքանչյուրը։ Դասարանի առաջինը (երկրորդը, երրորդը) նա է։— Նոյեմբերի մեկին։— Դեկտեմբերի երկուսն էլ անցավ։ Հայոց քաջերը, ձեր թուլերը, նրանց մեծերը։

3. Գոյականաբար գործածված ածականները հաճախ գերադրական նշանակությամբ. օրինակ՝ Իմ եղբայրների մեծը նա է։ Իմ աշակերտների լավագույնը։— Վարդը ծաղիկների ամենից գեղեցիկն է։ Վատերի վատը կամ վատի վատը, լավի լավը, շների շունը, ծուլերի ծուլը։— Օձի լավն էլ օձ է (Ա.)։— Կյանքդ նվիրես ընկերի լավին (լավ ընկերին), քիչ է դարձյալ (Ջիվ.)։

4. Տեսակ բառը սովորաբար մի վերադրով. օրինակ՝ գինու ո՞ր տեսակն է քեզ դուր գալիս։— Դեղձի լավ տեսակը։ Խնձորի այդ տեսակը մեր կողմերում չկա։

Նշ. Հաճախ տեսակ բառը զեղչվում է, և վերադիր ածականը գոյականաբար գործածվելով՝ մնում է տեսակի հետ. օրինակ՝ Սախի քաղցրը չի լինիլ (Ա.)։— Տանձի լավերն արջերն են ուտում (Ա.)։— Դեղձի ընտիրը երևան կլինի։— Ջինվորի պարծանքն է պապղուն սուրը. նա կսիրե զենքի լավը, մաքուրը (Ջիվ.)։— Բոդկի նոսրը լավ է (Ա.)։ Խոսրի սուտը չի լինիլ, սխալը կլինի (Ա.)։

Զ. ՆՅՈՒԹԻ ՍԵՌԱԿԱՆ

84. *Սեռականը ցույց է տալիս նյութը, որից շինվում, կազմվում է մի բան. օրինակ՝ Ծաղիկների փունջ. անպտուղ ծառերի անտառ. անույշ ջրի աղբյուր. երկաթի սանդուխ. պղնձի փող. արծաթի բաժակ. մսի կերակուր. ցորենի ալյուր. գարու հաց. քար ու պողվատի սիրտ։*

Նշ. Նյութի սեռականը երբ եզակի է, ունի որակական նշանակություն, և երկաթի, արծաթի և այլն առնվում են սովորաբար իբրև որակական ածական. խոհ անույշ ջրի աղբյուր և նմանները կարող են մի բարդ ածականով փոխանակվել անուշաջուր աղբյուր։

Է. ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՌԱԿԱՆ

85. *Սեռականը ցույց է տալիս՝ ինչ որ մի տեղում կամ ժամանակում կա կամ կատարվում է։ Խնդրառու գոյականը տեղ կամ ժամանակ է նշանակում իբրև պարունակող, իսկ սեռականը սովորաբար մի դերբայ կամ բայական անուն է լինում։ Օրինակ՝*

1. Մեր զբոսնելու (զբոսանքի) տեղը (տեղը, ուր զբոսնում ենք)։— Ներկայացման սրահը լի էր բազմությամբ (սրահն, ուր ներկայացումն էր տրվում)։—Պատերազմի դաշտը։ Ցորեն ցանելու արտերը։ Քնելու (քնի) սենյակ։— Սգի տուն։— Գինու կարաս։

2. Հնձելու (հնձի) ժամանակ (ժամանակ, երբ հնձում են)։ Դատաստանի օրը։ Հրաժեշտի ժամ։ Մեր փորձության տարին անցավ։ Նրա քննելու (քնի) ժամանակն եկավ։

Նշ. Գարունակության սեռականը երբ անորոշ է, ունի հաճախ որակական նշանակություն, ինչպես՝ գինու բաժակ, թեյի տուփ, քանաքի շիշ, քնելու սենյակ, իբրև գինու, թեյի և այլն հատկացրած բաժակ, տուփ և այլն։

Ը. ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԵՌԱԿԱՆ

86. Սեռականը ցույց է տալիս այն տեղը կամ ժամանակը, ուր կա կամ լինում է մի բան։ Այսպես գործ են ածվում՝

1. Տեղի նշանակությամբ. ա) Մարդու և կենդանիների մարմնի մասեր կամ տեղեր ցույց տվող անունները. օրինակ՝ նրա մատի ոսկի մատանին (մատանին, որ նրա մատին է)։ Քո ականջների օղերը։ Ձիու գավազանը։ Արձակիր մեջքիդ գոտին։

բ) Ժողովրդական ձևով՝ հագիս, հագիդ, հագի, հագներիս, հագներիդ, հագների. օրինակ՝ Նրա հագի վերարկուն մաշված է (վերարկուն, որ նրա հագին է)։ Այդ ի՞նչ է քո հագի շորերի հալը.— Նրանց աղջկերանց հագինն էժանագին չիթ է (Պո.)։

գ) Տեղի անունները. օրինակ՝ Սեղանի վրայի գիրքը (գիրքը, որ սեղանի վրա է)։ Այս տակի շաբաթը.— Ես քո ոտի տակի հող ու մոխիրն եմ.— Ներքևի այգիները.— Նա դարմանի տակի ջուր է.— Այս տեղի ջուրը շատ անուշ է (Պո.)։ Ներսի տունը.—Տան միջի օդը տոգորված էր ծուխի անախորժ հոտով.— Տան ետևի պատը.— Առջևի պատը (Մուր.)։

դ) Հետ բառն՝ ավելի ժողովրդական ձևով. օրինակ՝ Հետիս մարդիկը։ Շան հետի կինը (Անահիտ, 1908 թ. 5—6)։ Էլի պրծանք ո՛չ, ասեց Վարդիթերի մերն իրա հետի կնանոնցը.—Տեսե՛ք, ասեց հետի կնանոնցը. ի՞նչքան անամոթ են.— Նա էլ չոկվեց հետի տղեքանցիցը, մեն մենակ հետ դարձավ.— Հենց որ սանահոր դրանը մոտեցավ, հետի եկող տղեն վազեց առաջ.— Նույն օրը գավառապետից ու նրա հետի աստիճանավորներից նվերք ստացավ (Պո.)։

ե) Ուրիշ անուններ, որոնք տեղի նշանակությամբ են առնվում. օրինակ՝ Այս փողոցի բազմությունը ցրվեց։ Այս ամանի կաթը. այն կարասի գինին. մեր դաշտերի ծաղիկները. Երևանի բնակիչները. Արևելքի ազգերը, Տեսնո՞ւմ ես այն ծառի ծիրը։

2. Ժամանակի նշանակությամբ ա) Ժամանակի անունները. օրինակ՝ Այսօրվա գործը վաղվան մի՛ ձգիլ։ Վաղվան հավեն այսօրվա հավկիթը լավ է (Ա.)։ Ո՞ւր է քո առաջվան լիքը տունը։ Կիրակվա դանդաղ

երկուշաբթի էլ պետք կգա (Ա.)։ Ամառվա շոգերը։ Հունվարի ցրտերը։— Նա վաղի առակի պես՝ ասում էր՝ ոչխարը գնաց.— Մենակ իրիկվանս թուլանալը չէ (Պռ.)։ Սկսեցին գարնան աշխատանքները։

բ) Տոնի անունները. օրինակ՝ Ինչի՞ ես հիշեցնում ինձ մեր Վարդավառի ուրախությունը։ Նոր տարվա, ջրօրհնեքի, զատկի շնորհավորանքներ։

գ) Ժամանակի անունները՝ րոպե, օր, շաբաթ, ամիս, տարի և այլն մի թվականով. օրինակ՝ մի օրվա գործ (գործ, որ մի օրում են կատարում). երեք ամսվա աշխատանք, մի շաբաթվա ճանապարհ. չորս տարվա գինի. մի տարվա երեխա։

դ) Ուրիշ անուններ, որոնք ժամանակի նշանակությամբ են գործածվում. օրինակ՝ Նա մոռացել է իր մանկության արարքները։— Հարսանիքի երգեր։

Ծան. *Տեղի և ժամանակի սեռականը երբ եզակի և անորոշ է, ունի որակական ածականի նշանակություն և կարող է մի ածականով փոխանակվել. ինչպես՝ դաշտի ծաղիկ, սարի խոտ, ծովի ջուր, հյուսիսի քամի, հարավի ազգեր, ամառվա շոգ,— դաշտային, լեռնային, ծովային, հյուսիսային, հարավային, ամառային։ Հարսանիքի երգ, հարսանեկան երգ։ Այսպես և՝ մի օրվա, երկու ամսվա, մի տարվա և այլն լինում են՝ միօրյա, երկամսյա, միամյա կամ ժողովրդական ձևով՝ մի օրեն, երկ'օրեն (գործ)։ Երկու շաբաթեն, մի ամսեն, մի տարեն (բան)։ Իսկ տարիքի համար՝ մի տարվա, մի տարեն (երեխա), երկու օրվա, երկ'օրեն՝ ասվում են սովորաբար՝ մի տարեկան, երկու օրական, երեք ամսական և այլն։— Երբեմն գրաբարի ամաց սեռականն է գործ ածվում՝ երկու ամաց, երեք ամաց։*

Բ. ԳՆԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՍԵՌԱԿԱՆ

87. *Սեռականը մի վերադրով ցույց է տալիս մի առարկայի արժեքը, իբրև պատասխան ո՞րքան, ո՞րքանի հարցերի. օրինակ՝ Այստեղ հինգ ռուբլու ապրանք կա։ Հազար դահեկանի մանյակ (հազար դահեկան արժող)։ Քանի գնի կտոր։*

Ծան. *Այս սեռականն ևս հաճախ ստանում է որակական ածականի նշանակություն և կարող է մի ածականով փոխանակվել. ինչպես՝ հարյուր մանեթի ձի,— հարյուր մանեթանոց ձի. քանի գնի ապրանք,— քանկագին ապրանք։*

Գ. ՈՐԱԿԱԿԱՆ ՍԵՌԱԿԱՆ

88. *Սեռականը՝ ինչպես մի որակական ածական՝ ցույց է տալիս առարկայի հատկությունը։ Այսպես գործ են ածվում, բացի վերևում հիշածներից (§ § 79, ծ. 3. 84, ծ. 85, ծ. 86, ծ.) նաև հետևյալները, որոնք նշանակում են.*

1. Ինչի որ ընդունակ, կարող է մի առարկա. օրինակ՝ գործի մարդ (գործի կարող, ընդունակ մարդ), կռվի մարդ, որսի շուն։ Նա գործի մարդ չէ, այլ խոսքի մարդ։

Այս կարգին պատկանում են նաև խնձորի (ծառ), դեղձի (ծառ) և նմանները, որոնք առնվում են իբրև որակական ածականներ և կարող են գոյականաբար գործածվել իբրև խնձորենի, դեղձենի և այլն։

2. Ինչի համար որ սահմանված, հատկացված կամ պիտանի, արժանի է մի առարկա, օրինակ՝ ա) ուտելու հաց (հաց, որ պետք է ուտել), խմելու ջուր, տեսնելու բաներ, վառելու փայտ, վարելու հող, կարդալու գիրք, ծախսելու փող,—ընթերցանության գիրք, ծախսի փող և այլն. բ) կաթի ման, գինու բաժակ, գինու շիշ. թեյի տուփ, թեյի գդալ, հացի սեղան և այլն։

Այսպես գործ են ածվում նաև գրաբարի հոգնակի սեռականով՝ օրիորդաց, տղայոց ուսումնարան։

3. Ինչ որ մի բանով լինում է, կատարվում է. օրինակ՝ խմելու գավաթ (գավաթ, որով խմում են), փայտ ջարդելու կացին, տանջելու գործիք, սպանելու զենք, տանջանքի գործիք, սպանության զենք, փրկության միջոց։

4. Ինչով որ մի բան լինում է. օրինակ՝ ձեռքի աշխատանք (աշխատանք, որ ձեռքով է կատարվում). քամու ջաղաց (ջաղաց, որ քամով է բանում, քամու բանեցրած ջաղաց). ձիու ճանապարհ (ճանապարհ, որ ձիով են գնում. ձիով գնալու). կառքի ճանապարհ։

5. Վիճակ, աստիճան, տարիք և այլն, որ ունի, կամ որի մեջ գտնվում է մի բան։ Այսպես գործ են ածվում՝ վիճակ, աստիճան, տարիք, հասակ, տեսակ, չափ, կերպ, եղանակ, ձև, գույն, օրինակ, մեծություն, օր, ամիս, տարի և ուրիշ բաղմաթիվ բառեր՝ մի թվական կամ ածական վերադրով։ Օրինակ՝ բարձր աստիճանի մարդ, վերին աստիճանի հիմարություն. միջին կարգի դպրոց. նոր ձևի հագուստ. առանձին տեսակի մեծություն. մի տեսակի մարդիկ. մի հասակի երեխաներ. մի գույնի ձիեր. մի բարձրության ծառեր. սև սրտի ալևոր. վատ բնավորության մարդ. մի խելքի մարդիկ և այլն։

Այս սեռականներն իրենց վերադրի հետ ստանում են մի բարդ որակական ածականի նշանակություն, որով և կարող են հաճախ փոխանակվել. ինչպես՝ բարձրաստիճան մարդ, միջնակարգ դպրոց, նորաձև հագուստ, առանձնատեսակ մեծություն, միատեսակ մարդիկ, հասակակից երեխաներ, մեծահասակ աշակերտներ, միագույն ձիեր, սևասիրտ ալևոր և այլն (տե՛ս 63. 1, բ.)։

Ծան. 1. Այս սեռականը հաճախ ունեցող, տեր բառով է արտահայտվում, ինչպես՝ սև սրտի տեր կամ սև սիրտ ունեցող մարդ. վատ բնավորության տեր կամ վատ բնավորություն ունեցող մարդ. մեծ խելքի տեր, մեծ շնորհքի տեր և այլն։

Ծան. 2. Սեռականի այս նշանակությամբ կազմված են՝ այսպիսի (այս տեսակի), այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ո՞րպիսի, ի՞նչպիսի բառերը։

ԺԱ. ԲԱՑԱՀԱՅՏՈՂ ՍԵՌԱԿԱՆ

89. Սեռականը երբեմն, ժողովրդական ձևով գործածվելով փոխանակ ուղղականի, ցույց է տալիս բացահայտող վերադիրը. օրինակ՝ Հրև-

աստանի աշխարհ (փոխանակ Հրեաստան աշխարհ), Դարալագյազի գավառ, Շարուրա դաշտ, էջմիածնի վանք, Մասիսու սարեր. այսպես և՝ Մայիսի մեկին կասեիր օգոստոսի ամիսը լիներ (Պռ.)։ Դուրս ես եկել մարտի ամսին (Գ.-Ք.)։

Այսպես գործ են ածվում սեռականով նաև ազգերի անունները՝ հայի աղջիկ, թուրքի կնիկ, տաճկի զինվոր, փոխանակ ածականների՝ հայ աղջիկ, թուրք կնիկ, տաճիկ զինվոր. նույնպես՝ հայի լեզու, թուրքի բառ։ Ավելի գործածական է դրաբարի հոգնակի սեռականը՝ հայոց ազգը, ռուսաց ազգը, պարսից կառավարությունը, հայոց լեզու, ռուսաց լեզու, փոխանակ ածականների՝ հայ ազգը, ռուս ազգը, հայ լեզու, ռուսերեն լեզու, պարսկական կառավարություն։

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

90. *Տրականը ցույց է տալիս՝*

1. **Հաղորդառարկան, այսինքն՝**

ա) Այն անձը կամ իրը, որին իբրև մի նպատակի դիմում, մոտենում, մատուցվում է մի բան, կամ որին ուղղվում, անցնում է գործողությունը (մատուցման տրական). *օրինակ՝ Ես մոտեցա* **սեղանին.** *Նա* **աղբատին** *փող տվավ։*

բ) Այն անձը կամ իրը, որի համար, որի օգտին կամ վնասին, կա կամ լինում է մի բան (չաճի տրական)։ Օրինակ՝ Երեխային **կապա** *ենք կարում։*

գ) Այն նպատակը, որին ուղղում է գործողությունը (նպատակի տրական). *օրինակ՝ Նա գնաց* **ջրի** *(ջուր բերելու)։*

2. **Հաղորդման և կրող անձը,** *որի վրա ինչպես մի նպատակի անցնում է անցողական բայի գործողությունը և որ կրում է գործողության ազդեցությունը* (կրող անձի տրական, հայցական տրական). *օրինակ՝ Դու* **ինձ** *վախեցրիր։*

3. **Տեղ ու ժամանակը.** *ուր կա կամ լինում է մի բան* (ներգոյական տրական). *օրինակ՝ Նա հունվար* **ամսին** *էր մեր* **տանը**։

Ա. ՄԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱԿԱՆ

91. *Այս նշանակությամբ տրական խնդիր առնում են շատ անցողական և անանցողական բայեր և որոշ թվով ածականներ, որոնք ցույց են տալիս.*

1. **Մատուցանել, տալ** *(մեկին մի բան),— խոստանալ, առաջարկել, ավանդել, նվիրել, ընծայել, կտակել, թողնել, ներել, թույլատրել, ծախել, վճարել, մատնել. հանձնել, հավատալ, վստահել, պարտ լինել, պարտական լինել, ցույց տալ, փոխ տալ և այլն։*

2. **Վերագրել** *(մեկին մի բան),* **վերաբերել** *(մեկին կամ մի բանի) օրինակ՝ Այս երկը վերագրվում է* **Խորենացուն**։ *Այդ բանն* **ինձ** *չի վերա-*

բերում: Նույնիսկ օգնության կամ աշխատության վերաբերյալ գործ. րում նա յուր համար ուներ որոշ չափ ու կշիռ (Մուր.):— Այսպես և՝ մեկին մի բան ընծայել (վերագրել), հարաբերել, պատկանել, հատկանալ, հատկացնել, հատուկ (լինել), սեփական (լինել) և այլն:

3. Վերածել (մի բան մի բանի), դառնալ (մի բանի), շուռ տալ, շուռ գալ, դարձնել, փոխել, շրջել, բաժանել և այլն. օրինակ՝ Տասնորդական կոտորակը հասարակ կոտորակի վերածել: Լույս հավատքդ պետք է մոռնաս, Մահամեդի կրոնին դառնաս:— Կարո՞ղ ես... այս շիկացած ժայռերը հովանավոր ծառերի փոխել (Մուր.): Մեծ ծառի հովանին փոխվեց ուսումնարանի (Պռ.): Նա զորքը չորս խմբի, մասի բաժանեց: (Տե՛ս § 56. 7):

4. Ասել, հայտնել (մեկին մի բան), հայտնի (լինել), թելադրել, խոստովանել, հաղորդել, գրել, ավետել, գուժել, ծանուցանել, զեկուցանել. հրամայել, պատվիրել, պատասխանել, պատմել, սպառնալ և այլն:

5. Ուղղել (մեկին մի բան), ձգտել, դիմել (մեկին կամ մի բանի). օրինակ՝ Նա խոսքն ուղղեց եղբորը: Ես նամակ ուղարկեցի ճորս: Որ սարին դիմեցի՝ վրան ձյուն եկավ (Ջիվ.): Հավը կտին կերթա, ճանճը ճենճին կվազի (Ա.): Աղվեսի դունչը խաղողին չհասավ, ասաց՝ խակ է (Ա.): Անեծքն անիծողին կդառնա (Ա.): Այս նշանակությամբ տրական խնդիր առնում են՝

ա) Ուղղել, ուղարկել, բերել, տանել, հետ դարձնել, մեկնել, պարզել (ձեռքը մեկին, մի բանի), քաշել (ձեռքն իրեն), փչել, ներշնչել, ձրգել, հետաձգել (մի բան վաղվան), ձեռք ձգել, ձեռք զարնել, ձեռք տալ. ձեռնարկել մի բանի, այլև՝ ձեռնարկել մի բան (սկսել), ակնարկել (մի բանի աչք ձգել), մտիկ տալ, նայել, հառել, սևեռել և այլն:

բ) Ձգտել, թեկնածել, նկրտել, հավակնել, հանդգնել, կարոտել, կարոտ (լինել), փափագել, փափագ (լինել), տենչալ, ծարավել, ծարավի (լինել) և այլն:

գ) Դիմել, գնալ, գալ, ապավինել, վազել, հասնել, վրա տալ, ընդառաջել, անցնել (մի բանից մի բանի), դառնալ (հիմա դառնանք այս խնդրին), հետևել, լսել, ականջ դնել, անսալ. հաջորդել,— երևալ, թրվալ, ներկայանալ, ներկա (լինել) և այլն,— ընկնել, ելնել, վիճակվել, հասնել:— Գերին գին լինի, տիրոջը կհասնի (Ա.):

դ) Դեմ ու դեմ գալ, պատահել, լինել (պատահել): Քեզ ի՞նչ եղավ որ չեկար: Այնպես կանեմ, որ ոդդուդ բան չլինի:— Հանդիպիր, գալ (հանդիպել): Աստուծու պատժին գամ, թե սուտ լինիմ խոսում (Պռ.):— Ընդհարվել, զարնել, զարնվել, խփել, խփվել և այլն:

ե. Դեմ անել, մոտեցնել, դիպցնել, կցել, ճարել (մի բան մի բանի, մեկին մի բան), միտել, ճանգել (մի բանի). օրինակ՝ ջրին չմոտեցած՝ մի՛ բոբկանալ (Ա.):— Սարը սարին չի դիպչիլ, մարդ մարդի կդիպչի (Ա.): Սերն աթարին է կպել (Ա.): Ալևորներն ու երիտասարդներն իրար են խառնվել.— Բարով գաս, շուտ մեր ճոտին խառնվես (Պռ.): Նույն ձե-

վով նաև՝ դեմ տալ (մի բան մի բանի), դեմ առնել, դեմ ընկնել, հենել, հենվել,— մոտենալ, մոտ (լինել), դիպչել, ձեռ տալ (մի բանի), առնել, (դիպչել)։ Ուրիշն առավ քարին։— Կպչել, հպիլ, միտել, հակվել, հանգել (հաջողության), միանալ, փարիլ, քծնիլ,— կցել, կից (լինել), հարել, հարիլ, կապել, խառնել, խառն (լինել), քսել և այլն։ Այսպես և

ա) **Մեծ և ընտանի լինել.** մոտիկ, բարեկամ, մտերիմ, հավատարիմ, ծանոթ և այլն.— բարեկամանալ, մտերմանալ, ընկերանալ, ծանոթանալ և այլն։

բ) **Դեպ և պատշաճ, անկ և պատշաճ լինել.** պարտ և պատշաճ, համապատշաճ, վայել, արժան, արժանի և այլն.— պատշաճել, վայելել։— Ունկը խաչին կվայելե, ձեթը տաճարին կվայելե, իրուտ փայտի՞ն ինչ կվայելե։— Արժանանալ, իրար ընկնել, իրար բռնել, իրար ձգել (հարմարվել, պատշաճել)։— Իմ ու քու քեֆն իրար չի ընկնում։ Այն գույնն այն գույնին չի բռնում։

գ) **Հար և հարմար, հար և նման լինել.** հարմար, նման, համանման, համեմատ, համապատասխան, համաձայն, համախոհ, համազգի և այլն,— հավասար, համահավասար, զույգ, զուգահեռական և այլն.— հարմարվել, հարմար գալ, նմանել, համեմատել, համակերպվել, համապատասխանել, համաձայնել, հավասարվել և այլն։

դ) **Կից և հաղորդ լինել.** կից, կցորդ, հաղորդ, հաղորդակից, դրացի (մեզ դրացի ցեղերը), մասնակից, գործակից, աշխատակից, հարակից, հասակակից և այլն.— մասնակցել, գործակցել, աշխատակցել, հարակցել և այլն։— Վիլլայի դահլիճն ու նրան կից Վերանդան (Մուր.)։

ե) **Մեծ և ճոխ լինել.** հոժար, հակամետ, տրամադիր, հավան, համ և հավան,— դյուր գալ, հոժարել, հակամիտել, տրամադրվել, հավանել, հավան կենալ, համոզվել (մի բանի) և այլն։

զ) **Դեմ և հակառակ լինել.** դեմ դնել, դիմադրել, հակառակել, թշնամի, թշնամանալ, ներհակ, ընդդեմ, ընդդիմանալ, դիմանալ, համբերել։— Շատին համբերել ես, քիչն էլ տար (Պո.)։— Տոկալ, ժուժալ,— հակադրել, հակասել, հակաճառել, և այլն։

7. **Անձնատուր լինել, հնազանդվել** (մեկին, մի բանի),— հպատակվել, ստրկանալ,— ստորագրել, ենթարկել, հնազանդեցնել (մեկին մի բան),— հլու, հնազանդ, հպատակ, ենթակա և այլն. օրինակ՝ Բոլոր երկիրը հնազանդվեց նրան։

8. **Ընդելանալ, վարժվել** (մեկին, մի բանի),— սովորել, հմտանալ, տեղեկանալ, ծանոթանալ (մի բանի), ընդելացնել, վարժեցնել (մեկին մի բանի),— վարժ, սովոր, ընդել, հմուտ, տեղյակ, ծանոթ, խելամուտ, գիտակ, կարող, ընդունակ, փորձ և այլն. և բացասականները՝ անվարժ, անսովոր, անընդել, անտեղյակ, անծանոթ, տգետ, անկարող, անընդունակ, անփորձ։ Օրինակ՝ կյանքի անփորձ, ուսման տգետ, ձեռնարկի մեջ անհաջող։ Նա դեռ սովոր չէ այդ բանին։

9. **Զարմանալ, զմայլել** (մի բանի),— հիանալ, բարկանալ, զայրա-

նալ, գթալ, ողորմել, ողորմած (լինել), խղճալ, խեղճ գալ, ափսոսել, ափսոս գալ, ուրախանալ, ուրախ (լինել), ծիծաղել, ցավել, տրտմել, տրտում (լինել), սիրահարվել, սիրահար (լինել), նախանձել և ուրիշ բայեր, որոնք նշանակում են կիրք ու զգացմունք՝ ուղղված դեպի մի առարկա, առարկայի վրա: Օրինակ՝ ղարմանում եմ քո խելքին (խելքի վրա):— Իմ ձախորդությանս մի՛ խնդա, ընկե՛ր (Ջիվ.):— Մի՛ ծիծաղիլ նրա տխմար գործերին (Գ.-Ք.):—Անց կացած բանին մի՛ ափսոսալ, անհավատ բանին մի՛ հավատալ (Ա.):— Նայիր մեզ, խղճա՛ քեզ: Մարդ չկար, որ զմայլեր նրա սրտառուչ ձայնին:—Երիտասարդք, ծերք և կանայք ապշած էին դրա խոսքին:

Ծան. Այս տրականը կոչվում է նաև պատճառի (հիմունքի) տրական, որին իբրև հետևանք լինում է մի բան, և որ ենթական է դառնում, երբ չեզոք բայը պատճառական բայի է փոխվում. օրինակ՝ ես զմայլեցա քո ձայնին,— Քո ձայնն զմայլեցրեց ինձ:

10. Գործողության դիմել, ուղղվելը մի առարկայի վրա, իբրև խնդիր ընկնել, գալ, դնել, ածել, թափել, թքել, ավելացնել, նստել, իջնել, ցատկել և այլն բայերի. օրինակ՝ Դուանդ կողպեք դիր, հարևանիդ գող մի բռնիլ (Ա.):— Ականջը դրեց բերանին, տեսավ շունչ կա. ձեռը դրեց սրտին, տեսավ՝ բաբախում է.—Ոտը դրել էր տան շեմին (Պռ.): Ծղրայրը որ եղբորը օգնի, սարը սարին կդնեն (Ա.):— Անզգամի երեսին բիեցին, ասաց՝ անձրև է գալի (Ա.):— Մեկի ձեռին ջուր ածել, լըցնել:— Ծփած թանին սառը ջուր չեն ածիլ (Ա.):— Արևն ընկավ մեր պատին (Ժող. ե.):— Աչքն ընկավ նրան: Աչքը ձգել էր այն տեղին, որտեղից ծուխն էր բարձրանում (Պռ.): Խոտը բարձել էր սայլին:— Երկինքը գլխներիս փուլ կգա: Բարկությունը թափեց նրա գլխին:— Վերև համեցեք, բարձին համեցեք (Պռ.):— Նա նստեց էշին (ձիուն) ու գնաց: Առավ գիրքը, որ արդեն փակել, դրել էր նստարանին.— Բանալով գիրքը, նայեց նրան նորեն և ապա դրավ ծնկներին (Մուր.):

Ծան. Այս բնության խնդիրը կարող է երբեմն և իբրև տեղի պարագա առնվել:

11. Մեկին պատճառ լինել մի բան անելու, կամ մեկին մի բան անել տալ:— Այս նշանակությամբ տրական հոլով խնդիր պահանջում են ներգործականի համապատասխան պատճառական բայերը (§ 29. 1) այն անձի անունը, որին ենթական պատճառ է լինում մի բան անելու, կամ որին մի բան անել է տրվում: Օրինակ՝ Ա՛յ տղա, անունդ Ավագ, ինձ կուտեցնեմ մեղր ու կարագ (Ժող. ե.): Ոչ ոք չէր կարող պառավին բան հասկացնել (Պռ.): Ես եղբորս հիշեցրի իր պարտքը:— Նա աշակերտներին քերականություն է սովորեցնում:— Նա մի ման կերակուր էլ մորը լցնիլ տվավ (նրա անելով մայրը լցրեց).— Տանտիկինը թափած բաները աղջկանը հավաքել տվավ:

Ծան. Հարցնել, խնդրել *բայերի անձի բնության խնդիրը երբեմն բացառականի տեղ տրական է դրվում, իբրև անձը, որին ուղղվում է հարցը, խնդիրը. օրինակ՝ Նա աշակերտներին դաս է հարցնում։— Ես ձեզ խնդրեցի մի նամակ գրել նրան։*

92. *Մատուցման տրականի նշանակությամբ կազմվում են բազմաթիվ հարադրյալ բայեր և դարձվածներ. ինչպես՝*

1. Դալ, բերել *բայերով, օրինակ՝ ուշքի գալ, ուշքի բերել, խելքի գալ, սարսափանքի գալ, իրար գալ։ Շոր տուր՝ շնորհքի գամ, հաց տուր՝ խելքի դամ (Ա.)։*

2. Ընկնել, ձգել *բայերով, օրինակ՝ գլխի ընկնել, գլխի ձգել (հասկացնել)։ Այդպես ասելով ուրիշ բան ես գլխի ձգում (Պռ.)։ Կողքի ընկնել (համառել)։ Մեկի խելքին ընկնել.— էշխի ընկնել. աչքի ընկնել (զարնել).— ճամբու ընկնել (ձգել). մեկի ջանին ընկնել (թոռն առան ու ընկան ձկների ջանին.— (Պռ.)։ Կարգի ընկնել, ամեն բանը կարգի ձգեց (Պռ.)։ Տեղը տեղին ձգել, ձայն ձայնի ձգել և այլն։*

3. Տալ (զարնել), դնել, բռնել, առնել *և այլն բայերով, օրինակ՝ սևին տալ, կանաչ ու կարմրին տալ, պսպղին տալ.— ձեռք ձեռքի տալ, թև թևի տալ, գլուխ գլխի տալ, —դունչ դնչի դրած քաղցր զրույց էին անում (Պռ.)։ Գլուխ գլխի դրած... Ձայն ձայնի տալ.— իրար տալ, բահի տալ, ցնծին տալ,—աղջիկը մեկին մարդու տալ, (մարդու գնալ), գլխին զոռ տալ։— Կուռ կուռի բռնած։ Մեկի հետ վեճի բռնվել։— Գրի առնել, հաշվի առնել, քննության առնել։— Գնդի խաղալ, աչքակապուկի խաղալ, ճժլախտի խաղալ և այլն։ Ականջը ձայնի պահել։ Փախչող փախչողի լինել. տանող տանողի լինել. ուտող ուտողի լինել։ Երես երեսի լինել, անել։ Իմը ինձ հասավ, մինչև այդ բանը գլուխ եկավ։ Քոնը քեզ հասավ։ Իրանցը իրանց է հատնում, մինչև...։ Ոտքի կանգնել, ոտքի ելնել, հանել. մեկին բանի դնել և այլն։*

Բ. ՇԱՀԻ ՏՐԱԿԱՆ

93. *Տրական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որի համար կամ նկատմամբ կա կամ լինում է մի բան։ Այս նշանակությամբ տրականը լինում է՝ օգտի և վնասի, ստացական, պատճառական, ներգործող խընդրի, առանձնության և գնի տրական։*

94. Օգտի և վնասի *տրական։ խնդիր առնում են՝*

1. Շատ *բայեր, երբ ցույց են տալիս մեկի կամ մի բանի համար, օգտին կամ վնասին սահմանված, հատկացրած լինելը։ Օրինակ՝ Կուշտր ճաղցածին մանր կբրդի (Ա.)։ Ուրիշին փոս փորողն ինքը կընկնի մեջր (Ա.)։ Ոտին տեղ արավ, գլխին էլ ուզեց (Ա.)։ Մինչև խելոքր միտք անի, գիժը տղային հարսանիք կանի (Ա.)։ Քուն իրեն կքնի, երազ ուրիշին կտեսնի (Ա.)։ Առանք (գնեցինք) Աչիկին, դուրս եկավ Խաչիկին (Ա.)։ Քարերի վրա փռած էր լոշ հացը, երկու մարդին մինը (Պռ.)։ Դարդ անողին դարդ չի պակսիլ, քեֆ անողին՝ քեֆ (Ա.)։ Ուրիշի աչքր*

քեզ (համար) լույս չի տալ (Ա.)։ Ուղտին որ փուշը պետք գա՝ կկռանա, վեր կունի (Ա.)։ Այսպես և՝ մեկին մի բան ցանկալ, մաղթել, պատրաստել,— պատրաստի լինել մի բանի։— Քեզ դեռ շատ բան է պակասում. Վատ շանը մի քարն էր պակաս (Ա.)։ Ա՛ռ, քեզ լինի։ Մի՞թե կցանկանայիր, որ մենք քո օգտին մեր հացից կտրվեինք (Պռ.)։

2. Եմ, լինել, դառնալ դնել, կարգել և այլն բայերը, երբ ունին մի ստորոգյալ կամ ստորոգելիական վերադիր։ Օրինակ՝ Գիտունին եղի՛ր գերի, ոչ՝ անգետին սիրելի (Ա.)։ Անտեր հավերին ո՞վ կլինի (կդառնա) տեր (Ա.)։ Ուրիշի որդին քեզ որդի չի լինիլ (Ա.)։ Մեր ազգի անունին խայտառակիչ մի՛ լինիլ (Պռ.)։ Այս քեզ նշան լինի, որ... Յանկացող լինել մի բանի,— օգնական, բարեխոս, վերահասու, վկա, արգելք լինել մեկին, մի բանի։ Ես իմ խոսքին տեր եմ։ Օչխարի դմակն իրեն բեռ չէ (Ա.)։ Քո խոսքդ ինձ հրաման է։ Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ։ Յավոտ աչքին ծուխն էր մահանա (Ա.)։ Քո պատվին ամոթ է,— մեզ պետք է այդ գիրքը։ Պաշտպան կանգնել մեկին, մի բանի։ Խաչը խաչապաշտին խռով կենա (Ա.)։ Իմ քեզ սրտով սիրելը ինձ թուք ու մուր է դարձել (Ժող. երգ.)։ Շուշանը շփոթ չգիտեր, վանիին խավծարար դրին (Ա.)։

Այս կարգին պատկանում է և բացագանչության տրականը՝ ավա՜ղ բախտին, վա՜յ նրան, երանի՜ քեզ, անե՜ծք չար սատանին, ամո՜թ այսպես ասողին։

3. Անել բայը մի կրող խնդրով, օրինակ՝ մեկին մի բան անել, բարիք անել, մեկին աշակերտություն, նկատողություն անել։

4. Օգնել, նպաստել, օժանդակել, աղոթել, ծառայել, վկայել, սպասել, մնալ, հավատալ,— թագավորել, իշխել, տիրել, տիրանալ, նախադահել, աշակերտել և ուրիշ չեզոք բայեր, որոնք նշանակում են՝ մեկին մի բան անել, մատուցանել, տալ. մեկին մի բան դառնալ, լինել։ Օրինակ՝ Տիգրանը թագավորեց Հայոց աշխարհին (թագավոր դարձավ, կամ թագավորություն արեց)։ Նա տիրացավ որբի կայքին (տեր դարձավ)։ Նա էր նախագահում մեր ժողովին (նախագահություն անում)։ Օգնել մեկին (օգնություն տալ, անել)։ Աղոթել Աստուծուն (աղոթք մատուցանել, անել)։ Ծառայել մեկին, մի բանի (ծառայություն անել, մատուցանել, ծառա դառնալ)։ Հավատալ մի բանի (հավատ ընծայել)։

5. Որոշ թվով ածականներ եմ, լինիմ բայով, կամ մենակ. օրինակ՝ Գլխիդ անցքին եմ հետաքրքիր (Գ.-Ք.)։ Փորը փողին շահ (օգուտ) չէ (Ա.)։ Սպիտակ շունը բամբակ ծախողին վնաս է (Ա.)։ Քո արած ցեխին մի գդալ ջուրն էլ է հերիք (Ա.)։ Ես ու դու ենք իրար հարկավոր։ Այդ բանը գզվելի է ինձ։ Այսպես և՝ շահավետ, օգտակար, վնասակար, ձեռնտու, հարկավոր, պիտանի (պետք), անձնվեր, առողջարար, բավական, հնշտ, դյուրին, դժվար և այլն.— ախորժելի, զվարճալի, հաճելի, կասկածելի, ձանձրալի, տաղտկալի, կարելի և այլն, ինչպես և բացասականները՝ անախորժ, անհաճո, անդյուր, անկարելի և այլն։

6. Որոշ թվով ածականներ, երբեմն և գոյականներ, երբ ստորոգյալ են եմ, լինիմ բայի, որի ենթական մի անորոշ դերբայ է։ Այսպես և հաջողվել, մնալ բայերը։ Օրինակ՝ Բավ է մեզ, եղբարք, ողորմելի երևել։ Ամոթ է քեզ այդպես վարվել։ Կարելի՞ է ինձ այժմ հեռանալ։ Մեզ մրնում է միայն գնալ ջուրն ընկնել։ Ինձ չհաջողվեց ժամանակին տեղ հասնել։ Այսպես և՝ ժամ է, ժամանակ է մեզ... լավ է ինձ... հեշտ է ձեզ... վայել է մեզ... արժան է մեզ... ձեզ պետք է...

Նաև. Այս տրական խնդիրն ուղղական ենթակա է դառնում, երբ անորոշ դերբայը դիմավոր բայի է փոխվում. օրինակ՝ Բավ է, որ մենք ողորմելի երևանք։ Ամոթ է, որ դու այդպես վարվես։

95. Ներգործող խնդրի տրական *դրվում է՝*

1. Ի վերջացած բայական ածականների հետ, ինչպես՝ սիրելի, ատելի, նախանձելի, ցանկալի, բաղձալի, ընդունելի, տեսանելի, լսելի, տանելի և այլն, որոնք ունին կրավորական նշանակություն, ուստի և ներգործական սեռով ասելիս՝ ներգործող տրական խնդիրը դառնում է ներգործող հնթակա։ Օրինակ՝ Արտաշեսը սիրելի էր ժողովրդին, իսկ Արտավազդն, ընդհակառակն, ատելի էր ամենքին,— Արտաշեսին սիրում էր ժողովուրդը, իսկ Արտավազդին, ընդհակառակն, ատում էին ամենքը։ Այդ ցանկալի է ինձ,— Ես այդ ցանկանում եմ։ Շուտով լսելի եղավ մեզ ջրերի խոխոջյունը,— Շուտով լսեցինք մենք ջրերի խոխոջյունը։

2. Կրավորական բայերի հետ փոխանակ բացառական հոլովի. օրինակ՝ Ի՞նչպես իզուր խաբվել ես դու սուտ խոսքերին չար աղվեսի.— Ահա պոետն էլ, պատրանքով հարբած, գերվեց մի անգամ ժպտուն աչքերի.— Թովված, կախարդված, տարված այն երգին, վերացավ թռավ իմ վրշտոտ հոգին դեպի երջանիկ մի ուրիշ աշխարհ (Հովհ. Թում.)։ Փափագելի էր, որ առանց հոսանքին մոլորվելու... (Արարատ, 1908, ապրիլ. եր. 366)։ Թացն էլ կայրվի չորի կրակին (Ա.)։

96. Ստացական տրական *դրվում է կամ. լինիմ (երբեմն և եմ) բայերի հետ և ցույց է տալիս այն անձը կամ իրը, որն ունի կամ ունենում է մի բան։ Այս կիրառությունն ավելի ժողովրդական է. գրական լեզվի մեջ սովորաբար ունիմ բայն է գործածվում. օրինակ՝ Մեծ աչքերին լույս չկա, գեր թևերին ույժ չկա (Ա.)։ Ամեն աշուղի մի դավրան կլինի (Ա.)։ Մի տան որ երկու տանտիրկին լինի, տախտն անավել կմնա (Ա.)։ Հակոբին մի որդի եղավ (Հակոբը մի որդի ունեցավ)։ Նրանց սովորություն չէ այդ բանն անել (Նրանք սովորություն չունին...)։ Մարդկանց սովորություն է, որ միշտ ժամ գնան (Պո.)։ Այս սուտ ու փուչ աշխարհումս հայ քրիստոնեին հանգստություն չկա.— Այս գյուղի մեջ ձեզ իջևան չկա (Պո.)։*

Նաև. Ժողովրդական լեզվի մեջ ունիմ բայի ենթական հաճախ դրվում է իբրև ստացական տրական խնդիր. օրինակ՝ Մեզ մի գիժ ունեինք, մինն էլ Շամբա եկավ (Ա.)։ Խեղճին հաց չունի ուտելու։ Էժան մարդու չի ունենալ (Ա.)։

97. Առանձնության տրական *խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որ ինքը մենակ, առանց ուրիշների մասնակցության, առանձնապես զբաղված կամ շահագրգռված է գործողությամբ։ Այսպես գործ են ածվում՝*

1. Անձնական դերանունները կրկնված. օրինակ՝ ինձ ու ինձ *(կամ՝ ինքս ինձ) այրվում, փոթորվում եմ։ Ինքդ քեզ (կամ քեզ ու քեզ) մի միտք արա՛, տես։ Բախտն իրան իրան կգա (Ա.)։ Ինքն իրան վեր ընկնողը լաց չի լինիլ (Ա.)։ Ոսկած շորն իրան իրան կմաշվի (Ա.)։ Նա իրան իրան միտք է անում, թե... Քնի գնալու ժամանակ աչքերն իրանց իրանց խփվեցին։ Միտք անենք, վեր ածենք, հանենք մեզ ու մեզ.— Զեզ ու ձեզ խորհուրդ արեք։*

2. Անձնական դերանունները գլխու *կամ* գլուխ *բառի հետ, երբ դժգոհության զգացմունք է արտահայտվում. օրինակ՝* Քեզ ու գլուխ (ֆեզ ու գլխու, դու քո գլխին) *բաներ ես բռնում։— Ինձ ու գլուխ (ինձ ու գլխու, ինքս իմ գլխին) շարի այդ բանը։ Նա ինքն իր գլխու (գլխին) գնում է նրան ասում, թե... Իրան ու գլխու բան բռնել։*

98. Գնի տրականը *ցույց է տալիս արժեք ու տոկոս և լինում է խընդիր՝ գնել, առնել,— ծախել, վաճառել, տալ և այլն բայերի՝ իբրև պատասխան ո՞րֆանի, ֆանիսի՞(ն) հարցերի. օրինակ՝* Հայոց մանեթի մի ձի կառնեն, կխնայեն, թե քամք առնեն *(Ա.)։— Այս գիրքը տասը կոպեկի գնեցի։— Այդ ապրանքը ֆանիսի՞ տվիր (ծախեցիր).— տասը ռուբլու։— Մի ձուն երկու կոպեկի էին տալիս։— Նա ճարյուրին հինգ տոկոս է առնում։— Նա մեկին տասն աշխատանք է վերցնում։— Այս տունը ճարյուրին տասը եկամուտ է բերում։— Ճիշտ է, ամեն գալիս՝ նա մեզ մի բան բերում է. բայց գնալիս մեկին հինգ հետը տանում է։— Կիսագնի ծախել, առնել. վնասին ծախել մի բան։ Առքի գնին ծախել մի բան։*

99. Պատճառի տրական *խնդիրը, փոխանակ բացառականի, գործ է ածվում ավելի արևմտյան աշխարհաբարի մեջ. օրինակ՝* Քո խոսքին չեմ անի այդ *(քո խոսքի համար)։ Խնձորի ճոտին (հոտի վրա, հոտից) հավաքվեցին օձերը։ Առավոտը շուտով զանգակի ձայնին (ձայնի վրա, ձայնից) տեղից վեր թռավ։— Շփոթվելուն (շփոթվելու համար, շփոթվելուց) լեզուն կապվեցավ։ Ես կմտածեի, որ դիս շատ սիրելուն քովես չի բաժնվիր։*

Ծան. Մի քանի բառեր, ավելի ժողովրդական լեզվի մեջ, ու վերջավորությամբ գործ են ածվում իբրև պատճառի տրական, որ և իբրև բացառական է ըմբռնվում։ Օրինակ՝ Ամոթու կարմրել, կսկծու մեռնել։ Կսկծու փառք ասածու (Ա.)։ Ահու չորանալ։ Գելի ահու տուն չչինե՞նք (Ա.)։ Ջվածեղի սիրու քավի կոթը կպաչեն (Ա.)։ Քո սիրուդ ինձ կսպանեմ (Ժող. երգ.)։ Ամեն շաբաթ մոմ է վառում ս. Գեորգի սիրուն. Աստուծու սիրուն, խնայեցեք կյանքս. Աստուծու խաթեր, ձեր հավատքի խաթեր, մեզ թողեք (Գռ.)։ Գաղափարի մը սիրուն է, որ մեր ժողովուրդը չարչարված ու հոշոտված է (Ա. Ջոպ.)։ Այսպես և՝ ծիծաղու քուլանալ, կոտորվել. վախու, դարդու հիվանդանալ. ծարավու կոտորվել։ Մայրը դուրս է թռչում, փաթաթվում որդուն, և երկուսն էլ վեր են բննում ուրախու քուլացած (Գռ.)։

Դ. ՆՊԱՏԱԿԻ ՏՐԱԿԱՆ

100. *Տրականը ցույց է տալիս այն նպատակը, որին ուղղվում է գործողությունը կամ որի համար կատարվում է մի բան։ Այս նշանակությամբ գործ են ածվում.*

1. Անորոշ դերբայի տրականը. օրինակ՝ Գնաց ջուր բերելու։ Նրան տարավ ճանապարհ ձգելու։ Թեք ընկավ քնելու։ Գնաց տուն հանդրստանալու։

2. Գոյական անունների տրականը. օրինակ՝ Թագավորը նստեց դատաստանի (դատաստան անելու)։— Գնացին Երևան առուտուրի (առուտուր անելու)։— Ինչ մուրազի, ինչ խորհրդի որ եկել եք, սուրբ Կարապետն ինքը կատարի (Պռ.— ինչ մուրազ, ինչ խորհուրդ անելու որ...)։ —Աղքատի մինը կգնա գողության (գողություն անելու)։— Նստեցին հացի (հաց ուտելու)։— Սկսը գնաց փայտի (փայտ բերելու), բերեց՝ բերեց. չբերեց՝ ինքը փայտ է ու փայտ (Ա.), Քեզ ջո՞ւրն եմ ուղարկել թե խաբա՞րի (խաբար բերելու)։— Հետ դարձան ուրիշ ծաղկի (Պռ.— ծաղիկ քաղելու)։— Այսպես և՝ գնալ, գալ, ելնել, դուրս գալ առուտուրի, գործի, բանի (գնա քո բանին), կռվի, օգնության, ջրի, փայտի, ցորենի, ցախի և այլն։— Կանչել, հրավիրել, խնդրել, ուղարկել ճաշի, խորհրդի, ժողովի։— Պատրաստվել մի բանի (մի բան անելու)։— Ման գալ մի բանի, կանգնել աղոթքի, հանել վաճառքի և այլն։ (Տե՛ս § 70)։

Դ. ԿՐՈՂ ԽՆԴՐԻ ՏՐԱԿԱՆ

101. *Տրականն իբրև հայցական (հայցական տրական) ցույց է տալիս կրող անձը կամ ընդհանրապես որևէ առարկա, լինի մարդ, կենդանի թե իր, որ կրում է անցողական բայերի գործողությունը և մտածվում է իբրև անձ (ո՞ւմ հարցի պատասխան) և ոչ իբրև իր, բան (ի՞նչ, ի՞նչը հարցի պատասխան)։*

Իբրև **կրող անձի խնդիր** *հայցական տրական դրվում են.*

1. Անձի անունները սովորաբար, երբ որոշված են, երբեմն և երբ անորոշ են։ Օրինակ՝ Հայր թակի Վարդանին (ո՞ւմ), թուրքը թակի Վարդանին (Ա.)։ Խեղճ մարդուն աստված չի ստեղծել (Ա.)։ Ես տեսա նրա որդուն։ Նա գնաց և խնամոնց այնտեղ չգտավ։ Դուռդ փակ պահի՛ր, դրացուդ գող մի՛ բռնիլ (Ա.)։— Մարդ մարդի դժվար կճանաչի (Ա.)։ Ամեն մարդու իր արժանավորության համեմատ կպատվեն։— Այդքան՝ մարդի ցեխը չեն կոխիլ.— Բերեց, մի պտիկ հինգ տարեկան աղջկա նստեցրեց մեջտեղը (Պռ.)։ Աստված ողջ պահի ամեն մարդի էլ։ Ի՞նչպես կարող է այդ աւոյանը դատել որևէ բահանայի, վարդապետի, երբ... Քրիստոս շաբաթ օրը բժշկում է մի ջրգողյալի, մի կաղի, մի դիվահարի։ Բայց հիմա ուզում եք ինձ սպանել, մի մարդի, որ ճշմարտություն եմ խոսել (Հովհ. Ը. 40)։ Նույնիսկ առաջնորդը հետևեց կանանց օրինակին՝ որդեդրելով երկու աղջիկների.— Քույրիկը կանչեց մեզ, այլև

անցյալ տարում ավարտողներից՝ իրենց ընդունակությամբ հայտնի մի աշակերտի ու աշակերտուհու.— Մի առաջնորդ ունենալու պատճառով նստեցրել է կողքին այնպիսի մի գռեհկի, որից... Մի՞թե ինքն այնքան անմտաբար է խոսում, որ ամաչեցնում է նույնիսկ մի հյուրընկալ գյուղացու (Մուր.)։

2. Իրի անունները, երբ անցողական բայը բարոյական իմաստ ունի, և կամ իրի անունը ոչ թե իսկական, ֆիզիկական նշանակությամբ է առնվում, այլ փոխաբերական նշանակությամբ իբրև անձնավորյալ է մտածվում։ Օրինակ՝ կարկուտը գա՝ կնձին (հողի կոշտ,—գյուղացի) թակի, արևը դիպնի՝ կնձին այրի (Ա.)։—Խաչին (սովորաբար՝ խաչը) տերը զորավոր կանի (Ա.— Պռ.)։— Սիրով էրված սրտին ո՞ր ջուրը կարա հովացնիլ.— Ուզում էր հննց անի, որ սաբերին, ձորերին էլ լացացնի (Պռ.)։ էն օրից սկսած՝ հայը ճողին է սիրել, հողը՝ հային.— Կիսամեռ դիակին պսակի չեն տանիլ.— Երնեկ կլինի այն օրը, որ բլբուլը կտեսնի վարդին բաց էլած.— Վարդն իր ոսկի կոճակի կոկոններով իմաց է տալիս, թե ես ղրկել եմ իմ քույր մանիշակին, որ ձեզ ուրախացնի (Պռ.)։ —Նզովելով խամուճ՝ ճանապարհորդը վերարկուի թևերը հագավ.— Եվ սիրով վառված քաղցրաձայն սոխակ գտել է վարդին (Ղ. Աղ.)։— Հասոն (իր սրինգով) խաբերին էր դողացնում, Սև ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, զեփյուռին ողբացնում (Վ. Փափ.)։— Եվ իմ պարտիզում—մռայլ, ամայի, խեղճ ուռիներիս չարդում է քամին.— Իմ շիրմի վրա կիջնի, կմնա տատասկը վայրի։ Եվ անապատում... հոգիս... կգգվե տատասկին դժնյա (Ավ. Իսահ.)։— Եվ նա, երբ որ գա՝ աշխարհին կհանդիմանե մեղքի համար (Հովհ. ԺԶ. 8)։— Այն ժամանակ սկսեց նախատել այն քաղաքներին, որոնցում եղան նրա հրաշքներից շատերը (Մատթ. ԺԱ. 20)։— Ագռա՛վ, ագռա՛վ, կաղնուն թող, կաղնին ինձի կաղին տա... Ագռավը թողեց կաղնուն (Ղ. Աղ.)։

3. Կենդանիների անունները, որոնք միջին տեղ են բռնում անձի և իրի անունների մեջ, ուստի ավելի հաճախ իբրև անձ են մտածվում, մանավանդ երբ դառնում են խնդիր բարոյական նշանակությամբ բայերի։ Օրինակ՝ Մի՞թե դու կարող ես իրավունքի տեսակետից մեղադրել քո եզին, եթե նա հարևանի բակում փափուկ խոտ տեսնելով՝ մոտենա և ուտե։ Այդ դեպքում հանցավորը ոչ թե եզը, այլ դու կլինիս, որ չես կապել աբրանին.— Սալբին դռրս վազեց դեպի կտուրը՝ հավերին հալածելու.— Նոյը պատուհանը բացավ և դուրս թողեց ագռավին, որպեսզի իմանա, թե ջրերը ցամաքե՞լ են թե ոչ.— Քո այդ վարմունքը, իհարկե, կզարմացներ քո շանը (Մուր.)։— Նա շանը ծեծեց։ Նա ձիուն մտրակեց (Պռ.)։

4. Գոյականաբար գործածված ածականները, երբ անձի անվան կամ իբրև անձ մտածված առարկայի անվան համար են ասվում։ Օրինակ՝ Աստված էլ լավին (լավ մարդուն) է տանում (Ա.)։ Աստված իր ստեղծածին չի կորցնիլ (Ա.)։ Նա իր ընկերներից երեքին միայն տա-

ղրավ հետը։ Հազարներ նստում են (թռչունները) մի ծառի վրա և ճկճկոցով վերն Աստծուն են ուրախացնում, վարը՝ ծառի տակն իր համար նվիրական շինած երջանիկ զույգին (Պուր.)։ Մի քանի տեսակ զգացմունքներ միասին թունդ ելան իմ սրտում և՛ ուրախություն, և՛ վարանք, և՛ երկյուղ, և՛ տխրություն... բոլորը միմյանց հակասելով, մինը մյուսին ետ կամ առաջ մղելով (Մուր.)։

5. Անձնական և փոխադարձ դերանունները՝ ինձ, քեզ, մեզ, ձեզ, իրեն, իրենց, միմյանց, իրար(ու)՝ և ոմանք անորոշի տրականը՝ ոմանց. որ առնվում են միշտ իբրև անձի կրող խնդիր։ Օրինակ՝ Այս է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի։— Ինձ տես, ինձ լաց. որտեղ որ ես՝ ամուր կաց (Ա.)։ Աշակերտներից ոմանց միայն ուղարկեցին զբոսնելու։

6. Յուցական դերանունները՝ սա, դա, նա. ո՞վ հարցականը, որ հարաբերական դերանունը և ստացականները՝ իմոնի, ինոնի, մերոնի, ձերոնի, երբ անձ են ցույց տալիս։ Օրինակ՝ Տիգրանը եկել է. ես գնում եմ նրան տեսնելու։ Դու ո՞ւմ տեսար,— Տիգրանին։ Նրա եղբայրը, որին աքսորել էին մի տարով, արդեն վերադարձած է։ Ես գնացի, բայց մերոնց չտեսա այնտեղ։

Տառ. *1. Իրի և վերացական անվան համար իրրև կրող խնդիր գործ են ածվում հայցական ուղղականները՝ այս, այդ, այն, սա, դա, սրանք, դրանք, մերոնք, ձերոնք. օրինակ՝ Այս էլ խոսեցի ձեզ հետ, որ երբ որ ժամանակը գա, սորանի հիշեք, թե ե՛ս ասեցի ձեզ (Հովհ. ԺԶ. 4)։ Այն բաժակը որ իմ հայրը տվավ ինձ, ես այն չխմե՞մ (Հովհ. ԺԸ. 11)։ Ես իմոնին (ինձ պատկանած բաները) եմ միայն բերել հետս։ Իսկույն իջնելով՝ տեղացի ձերը, որ նա կանչավ ուղղել էր ինձ.— Նա յուր ծախքով և, իհարկե, նաև մեր օգնությամբ շինեց գպրոցական տուն, որ անշուշտ կտեսնեք (Մուր.)։*

Նմանապես ո՞վ հայցականը, երբ որոշ անվան տեղ չէ դրվում, այլ առնվում է անորոշ իմաստով, իրրև ի՞նչ մարդ, իրրև կրող խնդիր դրվում է հայցական ուղղական. օրինակ՝ էլ ով ունիմ ես որ լաց չլինիմ։ էլ ո՞վ ունի (սուլթանը), որի վրա կարողանա հենվել (Մշակ, 1908, № 216)։ Զարթնի քեզ ո՞վ ունիմ աշխարքումը (Սունդ. Պեպո)։

Տառ. *2. Որ հարաբերականն և ցուցականները, մանավանդ նա, հաճախ հայցական տրական են դնում փոխանակ հայցական ուղղականի նաև այն ժամանակ, երբ իրի անվան համար են գործածվում։ Եվ այս կիրառությունը կարելի է տեսնել նույնիսկ Մուրացանի երկերի մեջ, որոնց լեզուն այս կողմից համեմատաբար ավելի հնաձև է։ Օրինակ՝ Քաղցրաշունչ զեփյուռը... զալիս շփվում էր դեմքիս այնպես մեղմ ու անո՜ւշ, որ նրան լիովին վայելելու համար՝ ցանկանում էի ձիուս ընթացքը կասեցնել.— Ահա Ուզուն-Դարան (երկար ձոր)։ Նա ձգվում է երկու կողմից... նրան ակոսում է մի փոքրիկ գետակ.— Շատ ժամանակ չէր, ինչ այս նոթությունները սկսել էին ինձ զբաղեցնել, երբ անապատ մի հանգամանք մոռացնել տվավ նրանց և իմ կյանքի ընթացքը բոլորովին փոխեց։— Պետք է այս չարիքների դեմ քամբեր հաստատել և այդ քումբերն են՝ հիմնավոր ուսումը և ճշմարիտ լուսավորությունը։ Դրանց տարածելու համար՝ մենք կարոտում ենք ձեր աջակցության.— Նրա բոլոր խոսածները կենդանի էին դեռ իմ լսողության մեջ. ես շարունակ որոճում, ջննում էի նրանց.— Ժամանակը հնացրել է արդեն և իմ վերքերը, թեպետ բոլորովին չէ բուժել նրանց.— Այս երկու բառերը... ես կամենում էի արտասանել նրանց հաճախ.— Մայրս սրբեց իմ աչքերը, համբուրեց նրանց.— Թեպետ սերը նույն ինքն առաքինությունն է, սակայն ժամանակն ու հանգամանքները հա-*

դիվ են նրան յուր սկզբնական կամ որ նույն է՝ առաքինական սահմաններում պահում։ — Ես այս խոսքերը մեծ մեծ տառերով տախտակի վրա օրինակելով՝ կախեցի իմ սենյակի ճակատին։ Այնուհետև ամեն օր կարդում էի նրանց (Մուր.)։

Նրա աչքերի առաջ բացվեցավ հանկարծ մի բաց-կապուտակ դաշտ, որին նա ըստ կրզրում հորիզոնը փակող մշուշ կարծեց.— Կան ցավեր, որոնց չպետք է մոռանալ. բայց որքա՜ն շատ են և այն վշտերը, որոնց եթե չմոռանայինք, կյանքը մեզ համար կդառնար դժոխք.— Բառեր, որոնց ես այդ ժամանակ քութակի պես արտասանեցի.— Կենդանի են հիշողությանս մեջ նրա իմաստալից խոսքերը, որոնք... գրված են իմ հիշատակարանում և որոնց ես այսօր մի անգամ էլ կարդացի.— Պարտքերը, որոնց ամեն մի օրինավոր ամուսին պարտավոր է անթերի կատարել.— Թող հիշեն նաև մեռած ցորենը, որ կյանք տվավ հասկիրին և որին այլևս հափշտակիչ թռչունները չեն կարող փորել և հողից հանել (Մուր.)։

Ո՛ր հարաբերականի այս հայցական տրականի գործածությունը սխալ է իսկապես. ուղիղ հայերենն է այդ բոլոր դեպքերում, լինին եզակի թե հոգնակի, դնել անփոփոխ որ ձևը, ինչպես... դաշտ, որ նա սկզրում հորիզոնը փակող մշուշ կարծեց.— Կան ցավեր, որ չպետք է մոռանալ. բայց որքա՜ն շատ են և այն վշտերը, որ եթե չմոռանայինք... բառեր, որ ես այդ ժամանակ քութակի պես արտասանեցի և այլն։— Իսկ երբ այս կարգի որ հարաբերականը խնդիր է մի անորոշ դերբայի, որ որոշող հոդ ունի կամ հոլովված է, այն ժամանակ եզակիի համար դրվում է հոդով՝ որը, կամ իբրև առարկայական սեռական, իսկ հոգնակիի համար՝ միայն իբրև առարկայական սեռական (§ 82. 1)։ Օրինակ՝ Մի՛ մտածիր այն ցավի մասին, որը (կամ որի) դարմանելը վեր է քո ուժից։ Մի՛ մտածիր այն ցավերի մասին, որոնց դարմանելը վեր է քո ուժից.—Այս ամենն ինձ համար առեղծվածներ էին, որոնց պարզելու համար պակասում էր միջոց (Մուր.)։

102. *Մի քանի անցողական բայեր՝ հաղթել, վնասել, երանել, ձայնել, ողջունել, ապտակել և այլն տրական հոլովավ են առնում ոչ միայն կրող անձի, այլև կրող իրի խնդիրը. ինչպես՝ հաղթել մեկին, մի մարդու, մի դժվարության. վնասել մեկին, մեկի գործին. ապտակել մեկին, մեկի երեսին (իբրև վնաս տալ, ապտակ տալ, երանի տալ և այլն)։*

Ծան. Աշխարհաբարը, ինչպես տեսանք (§ 66. 3, ծ.), կորցնելով հին հայցականի հոլովական ձևը՝ սկսել է նախ ուղղականի ձևը,— որ եզակիում նույն է հայցականի ձևի հետ,— գործածել բոլոր դեպքերի համար նաև հայցականի նշանակությամբ։ Երկու հոլովի այս ձևական նույնացումից սակայն հաճախ խոսքի երկդիմություն է առաջ գալիս, որովհետև հայերենում հաստատուն բառադասություն չկա, և հայցականի զ, ինչպես և մյուս նախդիրները դուրս են ընկել լեզվից. «Տիգրանը տեսավ Վարդանը» խոսքի մեջ չի հասկացվում ներքնական և կրող խնդիրը։ Այս երկդիմության առաջն առնելու համար արևելյան բարբառները հայցականի նշանակությամբ անձի անունների համար երբ որոշված են, սկսել են գործածել տրական հոլովը։ Այս փոխառնակությունն անշուշտ սկսվել է դերանուններից, և գրաբարում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանունների մեջ՝ (ը)մեզ, (ը)քեզ, (ը)ձեզ, որոնց նմանությամբ ասվել են նաև ինձ, սրան, դրան, նրան և այլն, և ապա անձի անունները, երբ որոշված են։ Տրական գործածությանը կրող խնդրի համար՝ անշուշտ ազդել են և այն դեպքերը, որոնց մեջ գրաբարում արդեն մի շարք ներգործական բայեր՝ հաղթել, աղաչել, պաշտպանել և այլն, տրական հոլովով են առնում իրենց կրող խնդիրը. բայց այս գործածությունն ընդհանրացել է ավելի այն պատճառով, որ տրականը ստացել է նաև հանգման հոլովի, այսինքն՝ հայցականի նշանակություն։

Տրականն իր էական նշանակությամբ է հոլով գործողության մասնակից անձի, որին ուղղվում է մի բան և որ գիտակցաբար ստանում, ընդունում է այն. օրինակ՝ «Ես տալիս եմ քեզ» խոսքով հասկացվում է՝ ես տալիս եմ և դու ստանում, ընդունում ես։ «Տերը հրամայեց ծառային» նշանակում է՝ տերը հրամայեց և ծառան լսեց, հնազանդվեց։ Այս նշանակությամբ գործ է ածվում մեծ մասամբ տրականը գրաբարում. բայց այժմ այս հոլովի նշանակությունն ավելի ընդարձակվել է, և շատ խնդիրներ, որոնք մեր հին լեզվի մեջ ի, առ, ընդ և այլ նախդիրներով հայցական են դրվում իբրև գործողության հանգման նպատակակետ,— ինչպես որ է հայցականի հիմնական նշանակությունը,— դրվում են տրական հոլովով. այնպես որ տրականն այժմ պահելով հանդերձ իր հին նշանակությունը՝ ցույց է տալիս գլխավորապես գործողության հանգումը, հայցականից այն տարբերությամբ, որ հայցականը գործողության հանգման պարագան է նշանակում, մինչ տրականը հանգման առարկան է ցույց տալիս։ Օրինակ՝ Երկինք նայել (ո՞ւր, դեպի ո՞ւր նայել), երկընքին նայել (ինչի՞ն նայել). հասանք տուն (ո՞ւր), հասանք տանը (ինչի՞)։ Շուտով հասանք մի ճեղեղատի (ինչի՞), որից պիտի անցնեինք... Նա մտրակեց ձին և աներկյուղ մտավ ճեղեղատը (ո՞ւր).— Հասանք մի հորդ աղբյուրի.— Հասնելով այդ բլրին՝ սկսա... (Մուր.)։ Գնա՛ մեր տուն (ո՞ւր), Արմավիրն (ինչի՞, ո՞ւմ) տար համբավ, որ չսպասե իր իշխանի դառնալուն (Գ.-Ք.)։ Մինչև դու ինձ կհասնես, ուղտի պոչը գետինը (ո՞ւր) կհասնի (Պռ.)։

Մտածողության եղանակի այս փոփոխության հետևանքը բնականաբար պիտի լիներ և այն, որ անցողական բայերի հանգման և կրող խնդիրն ևս, երբ գիտակցաբար ընդունող կամ կրող անձ է նշանակում, պիտի արտահայտվեր հետզհետե տրական հոլովով. ուրիշ խոսքով՝ Նա ինձ զարմացնում է. Նա հորը պատվեց. Նա Պետրոսին ծեծեց. Ես քեզ եմ մեղադրում. Նա հիվանդին խնամում է և այլն խոսքերի մեջ բայերի խնդիրներն ըմբռնվեին իբրև մի հանգման անձ, իբրև՝ Նա ինձ զարմանք է պատճառում. Նա հորը պատիվ տվավ. Նա Պետրոսին ծեծ տրվավ. Ես քեզ եմ մեղադիր լինում. Նա հիվանդին խնամք է տանում։

Մի անգամ որ տրականն անցել է հայցականի տեղ, որոշված անձի անուններից այս կիրառությունն ընդարձակվել է նաև անորոշ անձի և կենդանիների և նույնիսկ իրերի անունների վրա։ Լեզվական այս զարգացումը սակայն դեռ վերջնական կերպարանք չի ստացել։ Արևմտյան բարբառների մեջ տրականի գործածությունն իբրև կրող խնդիր դեռ նոր է սկսում տարածվել. իսկ արևելյան բարբառներում, նույնիսկ արևելյան աշխարհաբարում ևս, մանավանդ առածների և ասացավոր խոսքերի ու դարձվածների մեջ, դեռ հաճախ հայցականը տրականի հետ խառն գործ է ածվում նույնիսկ անձի անունների համար, երբ որոշված են։ Հաճախ դժվար է իմանալ, թե կրող խնդիրը տրակա՞ն պիտի դնել, թե՞ ուղղական, թե՞ երկու ձևն ևս խառն անխտիր կարող են գործածվել։ Ընդհան-

բապես կարելի է ասել միայն, որ տրականը լինելով մասնակից անձի և հանգման հոլով՝ ամենայն կրող խնդիր, լինի մարդու, կենդանու թե իրի անուն, երբ մտածվում է իբրև գիտակցաբար ընդունող, դրվում է տրական հոլովով. կամ թե՝ ամեն անցողական գործողություն, ոք պահանջում է գիտակցաբար ընդունող մի առարկա, որին վերաբերում է գործողությունը, պահանջում է, որ առարկայի անունը իբրև կրող խնդիր՝ դրվի տրական։ Իսկ, ընդհակառակն, ամեն կրող խնդիր, որ մտածվում է իբրև անգիտակից իր (ի՞նչ), դրվում է հայցական ուղղականի ձևով։ Այսպես իբրև իր (ի՞նչ) մտածվում է անձի անունը սովորաբար երբ անորոշ է, երբեմն և որոշված ժամանակ. օրինակ՝ Նա իր համար լավ **ընկեր** *(ի՞նչ) է ճարել։ Ամեն մարդ իր սիրելի* **ընկերն** *(ի՞նչը) ունի։ Կրոնը սովորեցնում է սիրել (ի՞նչը) բարին, ճշմարիտը և* **ընկերը** *և հեռանալ այն ամենից... (Մուր.)։ Մի վեղարավոր գյուղերն ու քաղաքներն ընկած՝ աշակերտներ (ի՞նչ) էր հավաքում.— Դպրոց է շինել, ծծկեր* **մանուկներն** *է մեջը ժողովել.— Ողջ Տաճկահայքի սիրտը գողացել է՝* **նրանց մանուկները** *որսալով (Պռ.)։ Տե՛ս § 71։*

Մինչ մի կողմից տրական հոլովն այսպես գործ է ածվում իբրև հայցական կրող առարկայի համար, մյուս կողմից չեզոք բայերն ևս, որոնք տրական հոլովով են առնում այն խնդիրը, անձն կամ իր, որին ուղղվում, վերաբերում է գործողությունը, այժմ ըմբռնվում են հաճախ իբրև ներգործական բայեր, և դրանց համար կազմվում են համապատասխան կրավորական բայեր, կամ թե այդ բայերն ևս երբեմն տրական հոլովով բնության խնդրի փոխանակ՝ հայցական ուղղական են առնում ինչպես մի կրող խնդիր. օրինակ՝ Յավալի է **եկատեր**, *որ մեր մեջ օգնելու և օգնվելու գործն էլ ստոր շահատակությանց առարկա դառնալ սկսած է (Մշակ, 1909, № 15)։ Մենք իրավունք ունեինք նրանից շատ բան սպասելու։ Նա տիրեց շատ* **երկիրներ** *(փոխանակ՝ երկիրների)։ Նրան սպասում են,— Նա սպասվում է այս երկ'օրը։ Առաջնորդել մեկին,— առաջնորդվել մեկից։ Նա իշխո՞ւմ է ուրիշներին, թե՞ իշխվում է ուրիշներից։ Այդ գործը դեռ չեն նայած,— այդ գործը դեռ չի նայված։ Մեր լեզվական ըմբռնումով, ուրեմն, ներգործական է ամենայն բայ, որ առնում է մի առարկայական խնդիր,— լինի տրականի թե ուղղականի ձևով,— որը դառնում է համապատասխան կրավորական բայի ենթակա (§ 30. 1)։*

ե. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՏՐԱԿԱՆ

108. *Տրականը ներգոյականի նշանակությամբ լինում է՝ տեղի, ժամանակի և ձևի ու կերպի տրական։*

Տեղի տրականը *ցույց է տալիս այն տեղը, ուր կա կամ լինում է մի բան։ Այսպես գործ են ածվում.*

1. Մարդու և կենդանիների մարմնի մասեր կամ տեղ ցույց տվող բառերը **վրա** *բառի նշանակությամբ։ Օրինակ՝ Էշն ի՞նչ գիտե, թե մեջ-*

ին ինչ կա (Ա.)։ Հազիվ լրացավ քսան և մեկ տարիս, աղվամազ բուսավ երես ու ծնոտիս (Գ.-Ք.), Ճակատին գրված է։ Ոսկի մատանին մատին, օղերն ականջներին.— Նրա աչքերն ընկան ծնկանը դրված գրքին (Մուր.)։— Այսպես և՝ ականջիս, ականջիդ, ականջներիդ, ականջներին. այտին, աչքին, բերանին, գագաթին, գավակին (թարքին), գլխին, գոգին, գրկին, երեսին, թևին, թիկունքին, թշին, լանջին ծնոտին, ծոծրակին, ծոցին, կատարին, կշտին, կողքին, կրծքին, կռանը, ձեռին, ճակատին, մատին, մեջքին, շալակին, շլնքին, շրթունքին, շրթանը (բոնրի շրթանը նստած), ոտին, ուսին, պարանոցին, պռնկին, սրտին, քթին և այլն։ Այսպես նաև իբրև մասի անուններ՝ ափին, եզերքին (եզրին), ծայրին (դռան), շեմքին և այլն։

2. Հագիս, հագիդ, հագին, հագներիս, հագներիդ, հագներին. օրինակ՝ Ջուներ շապիկ յուր հագին։ Գլխարկը գլխին, վերարկուն հագին ներս մտավ։ Բա՛, այդ ի՞նչ է հագներիդ։ Վերնաշապիկները ամենի հագին էլ կար.— Կարմիր մինթանեն կնանոնց հագներին.— Մին էլ ի՞նչ տեսնես,— մի իշի վրա նստած երեսն ալյուրոտ, ոսկորի ալանգեքը շլնքին, մի ոչխարի հին քուրք թարս հագին, մի ճղճղոտած փոստ գլխին, մի աքլորի պոչ գոտկածալին, երկու մարդ էլ... մի մի աթարոց ձեռներին՝ ծանր ծանր գալիս են (Պռ.)։

3. Տեղի անունները. օրինակ՝ լավ եզը լծի տակին կերևա (Ա.)։ Կանթեղի տակին կանգնած աղոթք է անում։ Շատ փարչեր կժի առաջին թավալ կլինին (Ա.)։ Ճրագն առաջիդ դրած է (Պռ.)։ Կուվի միջին տանձ ու խնձոր չեն ծախում (Ա.)։ Սուր գութանը ծիր գնաց, տեր-մշակը համակին (ետևին.—Ժողովրդ. երգ.)։ Չե՞ս տեսնում, մոտիդ ընկած է.— Նրա կշտին (մոտին) սրտիս խորհուրդը հայտնեցի.— Ալագյազու չորս բոլորին գետինը քար ու քանդ է անում (Պռ.)։

4. Հետ բառը միայն ժողովրդական լեզվի մեջ փոխանակ հայցականի. օրինակ՝ Գնա՛, գնա՛ հետիդ եմ. կարմիր խնձոր գոտիդ եմ (Ժող. երգ.)։

5. Ուրիշ անուններ վրա բառի նշանակությամբ. օրինակ՝ Վաթսուն տարի եմ ձեր դռանը(ը), հերդ ու պապերդ են իմ կռան ծնած, սնած իշխան դառած (Ժող. երգ.)։ Կուժը ջրի ճանապարհին կկոտրվի (Ա.)։ Ծկավ, եկավ, ճանապարհի կիսին միտք արեց, թե.. (Պռ.)։ Տաշած քարը գետնին չի մնալ (Ա.)։ Միտն է ծառին, հավն է թառին (Ժ. ե.)։ Նա դռանը, կտրանը (կտրին) կանգնած է։ Ուր ուր գնաս, ինչտեղ լինիս, հաստատ մնա՛ս լույս հավատիս (Ժ. ե.)։ Ո՛չ, ես հաստատ կմնամ իմ վճռին (Մուր.)։ Ընկերիդ խոսքին հավատա, է՛լի պինդ կաց քո բանին (Ա.)։ Երկրագործն իր ցանք ու վարին է աշխատում.—Նրանք մի խոսքի կանգնող մարդիկ չեն (Պռ.)։

104. Ժամանակի տրականը *ցույց է տալիս այն ժամանակը, ուր ինչ կամ լինում է մի բան։ Այսպես գործ են ածվում.*

1. Ժամանակի անուններից տարեթիվ, ամսաթիվ, օր, ժամ և այլն

ցույց տվողները։ Օրինակ՝ Ժամանակին (գալ, հասնել), յուր ժամանակին, լավ ժամանակին։ Տարվա որ ժամանակին (վախտին) հյուր գա, գլուխներիս վրա տեղ ունի (Պո.)։ Ատենին *(գալ), նույն միջոցին, դասամիջոցին, ուտելու միջոցին։ Այս* ռսպեխս, նույն վայրկյանին. *Հաջողության ժամին (ժամերին). Ժամի հինգին, ժամի մեկ ու կեսին, երկուս ու կեսին։— Տակի շաբթին, ո՞ր ամսին, հունվար ամսին, փետրվարին, մարտին, մարտի իննին. մարտ և ապրիլ ամիսներին։ Ամսի սկզբին, վերջին, ամսավերջին, պատարագի վերջին ամենքը հաղորդվեցան (ըսկզբում, վերջում)։ 1905* թվականին, *1905-ին։* Կեսօրին, կես գիշերին. *մեջ գիշերին, միջօրեին, գիշերվան,—* ճավախոսին, *լուսաբացին, լուսադեմին, ճաշին, իրիկնադեմին, իրիկնապահին, արևածագին, արևամըտին, արևմտոցին,* առավոտյան, *երեկոյան (իրիկվան), բարի լուսին (բարի լուսուն), մութ գիշերին, օրը ցերեկին։* Գարնանը, աշնանը, *անցյալ աշնան(ը). երբեմն և՝ ամռանը, ձմռանը. ինչպես՝ Գարնանը մի՛ պառկի հովեր, ձմռանը (սովորաբար՝ ձմեռը, ամառը) չբռնան կովեր (Ա.)։— Այս* անգամին, *եկող անգամին։— Ճիշտ հարմար ժամին, այսինքն ընդունելության տաք միջոցին, Վիլլայի առաջ կանգ առավ Մարկոսյանների կառքը (Մուր.)։ Կովի տաք միջոցին (Մուր.)։*

2. Ըղանակ ցույց տվող անունները. օրինակ՝ Այս եղանակին *մի՞թե կարելի է տնից դուրս գալ։— Առավոտյան* ճովին *ման էր գալիս այգումը։— Ճաշվա տժտժան շոգին դուրս են գալիս։ Այս* ցուրտն *ո՞ւր ես գրնում։— Տաքին, քամուն, անձրևին, կարկտին, փոթորկին, մթին (մթանը), լուսին և այլն։*

3. Տոնի անունները. օրինակ՝ Այն հույսով մնա՛, որ բարիկենդանին *փլավ պիտի ուտես (Ա.)։— Ագռավի ձայնը թե որ Աստված լսեր, Վարդեվորին ձյուն կդներ (Ա.)։— Վատ մարդը զատկին էլ վատ կլինի (Ա.)։— Համբարձման(ը) կխմի, Վարդևորին կգինովնա (Ա.)։— Այսպես և՝ Համբարձման տոնին, Ծննդին կամ Ծննդյանը, Ջրօրհնեքին, Հոգեգալստյանը կամ Հոգեգալստին, Ծաղկազարդին, Աստվածածնին. Սուրբ Սարգսին, Մեծ պահին, նախատոնակին, Նոր տարուն և այլն։*

4. Ուրիշ անուններ, որոնք որոշ ժամանակամիջոցի իմաստով են առնվում. օրինակ՝ Ամեն բան կալին հայտնի կլինի (Ա.— կալի ժամանակ, կալի միջոցին)։— Նրա հարսանիքին ես մեծ ուրախություն արի։— Երեխայքը «Փառք ի բարձումին» ճոճանակներն ածեցին.— Այս խոսքին *երկու տղան ներս մտան (Պ.— այս խոսքի վրա, այս խոսքն ասելիս)։ Նա երկրորդ դասին բացակա էր։— Այս երկի ներկայացմանը մեծ բազմություն կար։— Այդ բանն իմ* ներքին *չի պատահել։ Այսպես՝ Ննջին, սերմանացանին, մեկի վերադարձին, ծննդին, մահվանը, մկրտությանը, թաղմանը և այլն։*

Ծան. *Ժողովրդական լեզվի մեջ անորոշ ներքայի տրականը ս, դ, ն հոդերով գործ է ածվում ժամանակի նշանակությամբ, օրինակ՝ Գնալուս, գնալուդ, գնալուն (իմ գնալու, քո գնալու, նրա գնալու ժամանակ)։— Հարսանքիս որ պար չես գալ, մեռնելուս (իմ*

մեռնելու ժամանակ) որ իսկի չեռ լալ. էլ ինչի՞ ես պետք (Ա.)։ Դուրսի դռնին նեյս մտնելուդ դնմդ կելներ պատվիրին խոհանոցն ու բակը (Մրմրյան)։

105. Ձևի և կերպի տրական հոլովով դրվում են՝ վիճակ, տարիք, հասակ, տեսակ, չափ, քանակ, կերպ, պատկեր, եղանակ, ձև, ազգ, գույն, աստիճան, կարգ և ուրիշ շատ բառեր մի թվականով կամ ուրիշ վերադրով, որոնք ևմ, լինիմ բայի հետ՝ խոսքի ստորոգյալն են կազմում, ցույց տալով թե ենթական ինչ դրության մեջ է, ինչպիսի է կամ ինչ ունի։ Այս տրականը կարող է և իբրև ձևի պարագա գործածվել։ Օրինակ՝ Նա էլ նույն օրին է (նույն օրում է)։— Այս երեխաները միևնույն հասակին և միևնույն տարիքին են (միևնույն հասակում և միևնույն տարիքում են,— միևնույն հասակն ու տարիքն ունին)։— Այս մարդիկը մի խելքի են։— Սա էլ քո խելքին է։— Նա էլ սրա չափին է։— Այս երկուսը մի տեսակի և մի կերպի են։— Լուռնակն ա կայնել դարին, պատկերն ա քո պատկերին (Ժող. երգ.)։— Այս երկու ձիերը մի գույնի և մի մեծության են։— Դու ի՞նչ կարծիքի ես։— Ես այն կարծիքին եմ։— Նա վատ տրամադրության է։ Քո ամեն բանն էլ կարգը կարգին է։— Մի կողմը կարգին նստած էին մարդիկը, մյուս կողմը՝ կարգը կարգին շարված կնանիքը։ Կարգին չես խոսում, որ բան հասկանամ։— Ծկան բոլորվածի նստեցին ամենքը։— Իրանց հալին չեն կենում։— Նա վերին աստիճանի հիմարացավ այդ բանն անելով։ Այսպես և՝ Նա մեր հաշվին է ապրում։ Քո ձեռի տակին քո բնությունին կմեծացնես նրան. Քո հաշվատին ես մեծացնում նրան (Պռ.)։

Ծան. 1. Ներգոյականի նշանակությամբ կան բազմաթիվ հարադրյալ բայեր և դարձվածներ. օրինակ՝ (մի) բանի, գործի լինել, կենալ.— Ի՞նչ բանի ես, ի՞նչ գործի ես. քո բանին կաց. բանիդ կաց։ Ի՞նչ մտքի ես։ Հացի լինել, եփ ու թուխի լինել, աղքյի լինել, իր ասածի լինել (համաձայնության անել), վերջը խոսքիդ չես կենալ (խոսքդ չես պահիլ)։ Դուք թաղաքացի եք, որդ աուստուրի եք, որդ փեշակի (աուստուրով եք զբաղվում)։ Ամեն մարդ իր ցավին է։ Իր գլխու լինել։

Ծան. 2. Ներգոյական տրականը, երբ վերադիրն անորոշ է կամ անորոշ իմաստով է գործածվում, անհոդ է մնում. օրինակ՝ Մի տան շերեփ որ երկու տանտիկնոջ ձեռի լինի, տունը շուտ բաժանք կլինի (Ա.)։— Այսպիսի աջիզ օրը, որ մարդի գլխի աղան էլ աղան, չպիտի խոսի (Պռ.)։— Մարդի գլխի կրակ է վառվում (Պռ.)։ Այդ ի՞նչ օրի եք։ Տեղի անունների համար անհոդ տրականի այս կիրառությունը սակայն ժողովրդական է. գրական լեզվի մեջ այս դեպքում գործ է ածվում տեղի ներգոյական հայցականը (§ 76. 2) առանց հոդի և առնվում է իբրև եռադրություն (§ 38). օրինակ՝ փոխանակ ասելու՝ Մի հատ կորնկ մնացել էր մի մարդի կոշկի միջի, ասում է՝ մի մարդի կոշկի մեջ։ Նա ոտի տակի (տակ) կորավ։— Մարդի կշտի (մոտ) անուն ունի. Մի տեփրի միջի (մեջ) դրած էր.— Ճրագը որ կպավ, էլ մարդի առաչի (առաջ) դուռ չեն բանալ (Պռ.)։

Ծան. 3. Շատ բարբառներ և արևմտյան աշխարհաբարը առանձին ներգոյական հոլով չունին, և այս հոլովի նշանակությունն արտահայտում են կա՛մ մեջ բառով, կա՛մ հայցականով, կա՛մ տրականով, ինչպես որ գրաբարում է։ Տրականը մեջ բառի իմաստով իրրև ներգոյական գործ է ածվում ավելի արևելյան բարբառների մեջ՝ Նա փողոցին է, գեղին է, քաղաքին է, փոխանակ՝ նա փողոցում է, գեղում է, քաղաքում է։ Գրական լեզվի մեջ ևս երբեմն պատահում է այս մտքով տրականի գործածություն. բայց ընդունված է ավելի վրա բառի իմաստով գործածությունը, քան մեջ բառի։

ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

106. *Բացառականը ցույց է տալիս ելակետը կամ սկզբնակետը, այսինքն այն առարկան կամ տեղն ու ժամանակը, որից առնվում, բաժանվում, զատվում, հեռանում է, կամ սկսվում, ծագում, առաջ է գալիս մի բան, հակառակ հայցականի և տրականի, որոնք ցույց են տալիս հանգման առարկան ու պարագան, դեպի որն ուղղվում, մոտենում, հասնում, մատուցվում է մի բան։ Բացառականի այս նշանակությամբ բացատրվում են նրա բոլոր կիրառությունները։ Օրինակ՝* Երևանից եկան էջմիածին։ Վարդանից անցան Տիգրանին։— *Հեռացել եմ իմ մայրենի* աշխարհից, *սերտ բարեկամք անջատած են* ինձանից։

Ա. ՋԱՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ

107. *Բացառականը ցույց է տալիս այն առարկան, որից առնվում, հեռացվում է մի բան։ Այս նշանակությամբ բացառական խնդիր առնում են բազմաթիվ բայեր և ածականներ, որոնք ցույց են տալիս՝ առնել, բաժանվել, հեռանալ. (ինչպես՝ ստանալ (մեկից մի բան), հրաժարվել, խուսափել, կտրել, պոկել, զրկել, ազատել, լսել թաքցնել, փախչել, քաղել, օդտվել, գողանալ, ժառանգել, ուզել, խնդրել, պահանջել և այլն։ Ջափազանց մեծ են ձեր պահանջները նրանից։ Պաշտոնից հրաժարում։ Իմ խնդիրքը ձեզանից այն է։*

Բացառական խնդիրը կարող է ցույց տալ նաև մտավոր հեռացման առարկան. օրինակ՝ (մի բանից, մեկից) ամաչել, խռովել, պատկառել, քաշվել, զգուշանալ, ժուժկալել, խորթանալ, խորշել, հարցնել (Գեղ որ մտնես, երեխայից բան հարցրու։ Ա.)։— Առնվել (Գարեգնի սիրտն առնվեց նրա խոսքիցը) և այլն։

Բ. ԾԱԳՄԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ

108. *Բացառականը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, առաջանում, գոյանում է, ինչպես և այն նյութը, որից շինվում, կազմվում է մի բան։ Օրինակ՝ Բախտիկս գայլի ցեղից էր. ուր գնացի՝ հայ-հային հետս էր (Ա.)։— Այդ տերևը ո՞ր ծառից է. այն կարմիր թթենուցը հո՛ չէ՞.— Հայ քրիստոնյա ենք, լուսավորչի լույս հավատից ենք (Պռ.)։— Նրանք մի հորից են։— Ծառի որդն իրենից կգոյանա (Ա.)։— Բերդն իր միջից կկատաղի (Ա.)։ Աղջիկն իրենից շատ սիրուն էր։ Լավ ձայն ունիս, քեզնից ասել գիտես (Պռ.)։— Մի ծառից թե թի կլինի, թե հոլսելի (Ա.)։ —Մի ծաղկից օձը թույն է շինում, մեղուն՝ մեղր (Ա.)։— Գլուխդ հո՛ երկաթից չէ, որ բան չէ մտնում։ (Մի բանից մի բան) եփել, թխել, թափել, ձուլել, կարել, պատրաստել և այլն։*

Նշան. *Այս բացառականն իրրև վերադիր դրվելով մի անվան վրա՝ առնվում է իրրև մի ածական։ Օրինակ՝ Երիմի մորքուց գդակը դրել էր գլխին։ Հագել էր կանաչ մահուդից կապան։— Այս իմաստով գործ է ածվում սովորաբար ե (հին՝ է) վերջավորու-*

Քյամբ բացառականը, որ և կարող է յա (հին՝ նայ) ածանցով² կազմված ածականներից ծագած լինել՝ նկաքյա, քարյա,— երկաթե, քարե, ուստի հաճախ իրըև սոսկ ածական է ըմբռնվում և ոչ իրըև բացառական հոլով։ Քարե խաչ լինիս, երկաթե քաղարչ (Ա.)։— Ոսկե մատանիք, արծաթե բաժակ, մորթե գդակ, բրդե գուլբա, գարե ւաց, եղե մոմ, կտավե հագուստ, կավե աման, փայտե դուռ, կաշվե գոտի և այլն։

Դ. ՄԱՍՆԱԿԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ

109. *Բացառականը ցույց է տալիս ամբողջը, որից առնվում, վերցվում է մի մաս, կտոր, որոշ քիվ, չափ։ Այս նշանակությամբ բացառականը դրվում է.*

1. Մաս, կտոր, չափ ու կշիռ և այլն ցույց տվող գոյականների հետ, երբ մի թվական ածական ունին. օրինակ՝ Այս հացից մի կտոր կեր։— Այս ցորենից միայն մի բեռ գնեցի։— Նա այդ կարմիր գինուց երկու շիշ ունի։— Աստված անշուշտ մի ճար կանե, երկու դռնից մի դուռ գոնե բաց կանե։— Հազարից մի անգամ մեր տունն ես եկել։

2. Գոյականաբար գործածված թվականների ու թիվ ցույց տվող անորոշ ածականների հետ. օրինակ՝ Վարդի թերթերից մինը պոկեցի։— Այս ծաղիկներից ո՞րն է քեզ դյուր գալիս։— Ձեզնից ոմանք. մեզնից երկուսը. նրանցից շատերը չկան։

3. Շատ բայերի հետ, առանց մասնական բառի, երբ պետք է ցույց տալ, թե առարկայի մի մաս, բաժին է միայն վերցվում. օրինակ՝ Նա այս հացից չկերավ։— Անժամանակ հյուրն իր քսակից կուտի (Ա.)։— Վայելի՛ր այս քաղցրահամ պտղիցը.— Ով այս տերևիցն ունենա կրշտին, նրա գլխին փորձանք չի գալու.— Ի՞նչ կլինի, մի աղքատ գա մեր ուեղանից մասնավորվի.— Գավն այն կարմիր գինուցը լցրեց (Պռ.)։

Դ. ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴՐԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ

110. *Բացառականը ցույց է տալիս կրավորական բայերի ներգործող խնդիրը, որից իրըև սկզբնապատճառից ծագում, առաջ է գալիս գործողությունը, որ և խոսքը ներգործական բայով ասելիս՝ դառնում է ենթակա (§ 30. 1)։ Օրինակ՝ Քշնամին հաղթվեց մեզնից.— Մենք հաղթեցինք քշնամուն,*

Ծան. *1. Ներգործող խնդրի բացառական է դրվում սովորաբար զգացում, հույզ, հոգեկան որևէ վիճակ, գործունեություն ցույց տվող և մի քանի ուրիշ բայերի հետ. ինչպես են՝ զգացվել (մի բանից), վիրավորվել, վրդովվել, հուզվել, ազդվել, գրգովել, խաբվել, տխրվել, պաշտպանվել, հարգվել, փառաբանվել, հրապուրվել, գրավվել, հափշտակվել և այլն։*

Ծան. *2. Նոր բայր գոտական իմաստ ունի, ներգործող խնդրի բացառականի տեղ է գործ ածվում գործիական կամ ձեռով. միջոցով. բերանով բառերով սեռական. օրինակ՝ «Քշնամիներն առան Անին» խոսքը կարելի չէ կրավորական դարձնել՝ «Անին առնվեցավ քշնամիներից», որ կհասկացվի՝ Անին առան քշնամիներից. այլ պետք է գարձնել՝ «Անին առնվեցավ քշնամիների ձեռով»։*

111. *Բացառականը ցույց է տալիս՝*

1. **Աղտաբին պատճառը**, *որից իբրև մի շարժառիթից առաջանում է մի գործողություն, դրություն, մանավանդ մի հոգեկան վիճակ, հույզ և այլն. օրինակ՝ Տևրևները քամուց խշխշում են։— Նա ցրտից, սովածությունից մեռավ։— Դու մի հասարակ չխկոցից վեր ես թռչում։—Ձեր վարմունքից ես դնտինր մտա։— Տղայից չվնդացի, փեսայից գոնե ուրախանամ։— Իմ բախտից այսօր անձրև է։ Այսպես և (մի բանից, մեկից)՝ նեղանալ, վշտանալ, վախենալ, սարսափել, հիվանդանալ, շլանալ, կուրանալ, հոգնել, հարբել, գժվել, կարմրել և այլն։*

Ծան. *Այս նշանակությամբ գործ են ածվում ձեռիցը, երեսիցը բացառականները. օրինակ՝ Նրա փոշու ձեռիցը ոչով չի իմանում... Զորի միչիցը մինչև Ս. Վառվառիա կուսի դուռը՝ մարդ ու կնկա ձեռիցը ոտ փոխելու տեղ չկար (Պո.)։ Մի քանի տասնյակ չար և անգութ հայեր մի մեղավոր միաբանի երեսից մի ամբողջ միաբանություն պատժեցին (Եղ. Գեղ.)։*

2. **Ներքին պատճառը**, *այսինքն մի հոգեկան կամ մարմնական վիճակ, որից առաջանում է գործողությունը կամ դրությունը. օրինակ՝ Նա ամոթից գլուխը կախ գցեց։— Արջն իր ահից կգոռա (Ա.)։— Դարդիցը հալվել, ոսկորն է մնացել։— Անքնությունից աչքերը խառնել են։ Այսպես և՝ աշխատանքից, զարմանքից, ծարավից, կասկածից, կրքից, ծուլությունից, հոգնածությունից, անքնությունից, նախանձից, կսկծից, ուրախությունից, սիրուց, վախից, վշտից, տրտմությունից, փառասիրությունից և այլն (մի բան անել, մի դրության մեջ լինել)։*

3. **Աղտաբին մի հատկանիշ**, *որ ճանաչելու, դատողության, հետևության, եզրակացության համար իբրև մի նիմ է ծառայում. օրինակ՝ Ձայնից ճանաչեցի նրան։— Նրա տխուր դեմքից մենք նախազգացինք, որ մի վատ բան է պատահել։— Փեշի ծայրից, որ դուրս էր մնացել, իմացավ թե ով է (Պո.)։ Նրա նամակից տեսնում եմ, որ նա հիվանդ պիտի լինի։ Այսպես և (մի բան կամ մեկին)՝ գործից, վարմունքից, շարժմունքից, տեսքից, աչքից, անունից, ձայնից, համից, հոտից, գույնից, հագուստից և այլն ճանաչել, իմանալ, հասկանալ, դատել, եզրակացնել, հետևցնել, երևալ և այլն։*

Ծան. *1. Շատ սովորական է անորոշ դերբայի բացառականի գործածությունը իբրև պատճառի խնդիր. օրինակ՝ շատ ուտելուց, շատ խմելուց, աչքերն ուռել շատ քնելուց (Ա.)։*

Ծան. *2. Ձեզոք բայերի պատճառի բացառական խնդիրը, երբ բայը շուռ է գալիս պատճառական սեռի, դառնում է ենթական, իսկ ենթական դառնում է կրող խնդիր (§ 30. 2)։ Օրինակ՝ Աղքատը ցրտից հիվանդացավ,— Ցուրտը հիվանդացրեց աղքատին։*

Ծան. *3. Ներգործական բայերն ևս, երբ պատճառի բացառական խնդիր ունեն, կարելի է պատճառական բայի վերածել ստալ (երբեմն և ստիպել) բայով (§ 29. 1. ծ.)։ Իսկ եթե բայը բացառական՝ թույլ տալ, թողնել բայերով։ Այս ժամանակ ներգործական բայի պատճառի խնդիրը դառնում է ենթական, իսկ ենթական՝ տրական խնդիր (§ 91.*

111. օրինակ՝ Սրտի բարկությունից էր նա գետինը փորում,— Սրտի բարկությունն էր նրան գետինը փորել տալիս։ Աղմուկից մարդ մարդի խոսք չէր հասկանում,— Աղմուկը չէր թողնում՝ մարդ մարդի խոսք հասկանա։

Զ. ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ

112. *Բացառականը բաղդատական ավելի, պակաս, նվազ բառերի հետ՝ ցույց է տալիս այն առարկան, որից մի ուրիշ առարկա ջոկվում, անջատվում է իր հատկության, գործողության կամ դրության աստիճանով։ Բաղդատական բառերը կարող են և չդրվել ու զորությամբ հասկացվել։ Օրինակ՝ Վարդը մանուշակից ավելի հոտավետ է։ Արծաթը ոսկուց պակաս պիտանի չէ։ Աշխարհքում անունից լավ (փոխանակ՝ ավելի լավ) ի՞նչ կա.— Սեղբոս աղան էլ եթե յուր հարևանից վեր չէր, ստոր էլ չէր (Պռ.)։ Ահն էշին ձիուց արագ կվազեցնե (Ա.)։ Գեղեցիկներից գեղեցիկ մուսան յուր տաղանդից բաժին հանեց ամենքին (Ջիվ.)։ Կանանց աղմուկը ճոճանակի ձայնից բարձրացավ (Պռ.՝—փոխանակ՝ ավելի բարձրացավ)։*

Նշ. *Բաղդատական բացառականի տեղ կարող է կազմվել քան, քան թե շաղկապով կապված մի ղեղչական խոսք. այն ժամանակ բաղդատության խնդիրը դրվում է բայի պահանջած հոլովով. օրինակ՝ Վարդը մանուշակից ավելի գեղեցիկ է,—Վարդն ավելի գեղեցիկ է, քան մանուշակը։ Ես քեզ նրանից ավելի եմ սիրում,—Ես քեզ ավելի եմ սիրում, քան նրան։*

Է. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ

113. *Բացառականը ցույց է տալիս այն առարկան կամ առարկայի մասը, որի կողմից, նկատմամբ կամ վերաբերությամբ առնվում է որևէ մարմնական կամ հոգեկան հատկություն, կամ տեղադրություն ու ժամանակամիջոց։ Այսպես գործ է ածվում բացառականը.*

1. Որակական ածականների և նրանցից կազմված բայերի հետ. օրինակ՝ Ոտիցը չուստ (ժիր, արագ), խելքիցը թեթև (Ա.)։ Երկու ձեռից հաջողակ մարդ։ Հացից կարոտ, ձեռիցը պինդ (ժլատ)։ Ալևոր մարդ էր, բայց ոտիցը թեթև էր.— Թե սրանում սուտ լինի, իմ երկու աչքիցս դատարկ նստիմ (Պռ.)։ Նրանք հորից մեկ են (հարազատ են), մորից ջոկ (խորթ)։ Ինչի՞ցդ ես հիվանդ, Նա ո՞ր աչքից է կույր, ձա՞խ թե աջ։ Հորից որբ, որբանալ։ Դրսից քահանա, ներսից սատանա (Ա.)։ Շիշը գինով առատ, քսակը փողից փարատ, փողից դատարկ ինքը (Գ.-Ք.)։ Սևակոլոլ պտուկը միայն դրսից կարող էր կեղտոտ լինել, բայց ոչ նաև ներսից (Մուր.)։ Այսպես նաև՝ Նա հայերենից ու պատմությունից թույլ է, առաջադեմ է, շատ ետ է, առաջ է, առաջինն է, երկրորդն է, հետին աշակերտն է։ Նա գնում է իրենց «գոմի տունը», որ մոտ է այս տեղից (Մուր.)։

Նշ. *Այս բացառականն իր խնդրառուի հետ ստանում է մի բարդ բառի նշանակություն և կարող է երբեմն բարդ բառով ևս փոխանակվել. օրինակ՝ ոտքից կաղ,—*

կազոան. խելքից դատարկ,— դատարկամիտ. ձեռից հաջողակ,— հաջողաձեռն. ոտքից քնքև,— քեքևոտն (§§ 61, 62)։

2. **Առաջ, հետո, վերջը** *բառերի հետ, որոնք իբրև ետադրական բառեր ցույց են տալիս մի բանի նկատմամբ վաղ կամ ուշ լինելը։ Օրինակ՝ Նա իր հորից առաջ է մեռել։ Ես նրանից առաջ եմ եկել (ես նրանից վաղ եմ եկել)։ Մեզնից շատ առաջ կար մի թագավոր։ Ամենից առաջ պիտի ասել, որ...։ Մենք քեզնից հետո եկանք։ Ես գատկից մի շաբաթ հետո պիտի գնամ գյուղը։ Գավազյանն ամենից վերջը ետ արեց փոքրիկ քսակի կապը (Պռ.)։*

3. **Ներս, դուրս.—վեր, վար, վերև, ներքև.—առաջ, ետ, այս կողմը, այն կողմը, դեսը, դենը** *բառերի հետ, որոնք իբրև ետադրական բառեր ցույց են տալիս տարածական դրություն կամ ուղղություն՝ վերաբերությամբ ներսում կամ դրսում, վերևում կամ ներքևում և այլն գտնված մի առարկայի, որից հեռանում, անջատվում է մի բան։ Օրինակ Արծիվը սավառնում է ամպերից վեր։ Մեր ուժերից վեր է (Մուր.)։ Նա իր ուժերից վեր (խելքից վեր) գործ է հանձն առել։ Դիլիջանից դենը (այն կողմը) հայի գեղ կա (Մուր.)։ Այդ քարն այժմ գտնվում է վանքի պարսպից դուրս (ներս)։ Գյումրեցիք էլ պարսպիցը ներս (ներքսև) են նստած.— Ամենից վերևը, ամենից ներքևը նստեցին.—Երեխայքը, տաս տարեկանից վերև, մնացին (Պռ.)։ Այդ իր իրավասությունից միանգամայն բարձր է և դուրս։ Նա այժմ մեզնից ետ է։ Նա ամեն բանում քեզնից առաջ (ետ) է։ Իջավ փոքրիկ անտառակը, որ գտնվում է եկեղեցուց ներքև (Մուր.)։*

Ծան. 1. **Վեր, վար** *բառերը երբեմն պարզապես ստանում են* **բարձր, ցածր** *բառերի նշանակություն. ինչպես՝ Այդ գործը վեր է (բարձր է) մեր կարողությունից։ Ախ, սարեր ջան, ես էլ ձեզ պես հպարտ էի, վեհ ու վիր (Ա. Խահ.)։*

Ծան. 2. *Բացառականն այս ետադրական* **առաջ, հետո, վեր, դուրս** *և այլն բառերի հետ ըմբռնվում է իբրև բաղդատական բացառական և կարող է* **ևան, քան քե** *բառերով ևս ասվել. ինչպես՝ Քրիստոսից առաջ—առաջ քան Քրիստոս, նախքան Քրիստոս. Քրիստոսից հետո,— ետ քան Քրիստոս։ Ջեմ հիշում նախ, քե ետ քան պատերազմը (պատերազմից առաջ, քե հետո) հրատարակվեց մի տեղեկագիր (Պռ.)։ Այդ գործը վեր է քան մեր կարողությունը։ Դրաբարում նաև՝ արտաքոյ կամ արտաքս քան զպարիսպն.— պարսպից դուրս. ի ներքս քան զպարիսպն,— պարսպից ներս։*

Ը. ՊԱՏՃԱԿԱՆ ԲԱՑԱՌԱԿԱՆ

114. *Բացառականը ցույց է տալիս այն առարկան, որի համար, մասին, վրա մի բան ասվում, պատմվում է։ Դրվում է իբրև խնդիր ասել, պատմել, մտածել և այլն բայերի. օրինակ՝ Սկսա խոսել այնպիսի հարցերից, որոնք... (Մուր.)։ Էդ խոմ ինձանից եք խոսում (Մուր.)։ Ու ձրմռան երկար դիշերը նստած՝ խոսում են Լոռու հին հին քաջերից (Հովհ. Թ.)։ Արի՛ հիմի Սոսիցը (Սոսի մասին) հարցրո՛ւ (Պռ.)։ Եթե մեզանից հարցաննես, փառք Աստուծու, լավ ենք։— Դու դեռ աշխարհքիցս խաբար (տեղեկություն) չունիս.— Մի քիչ դեսից, մի քիչ դենից զրույց տր-*

վին (խոսեցին).— Ուզեց որսի կողմիցը (մասին) մի բան հասկանալ (Պռ.)։ Ես քեզնից երկմիտ եմ։—Կգանգատե իր սև բախտեն։ Այնքան առողջացավ, որ էլ չէր գանգատվում ոչ սրտի ցավից, ոչ թուլությունից (Մուր.)։ Այսպես նաև՝ մեկից, մի բանից՝ բամբասել, ամբաստանել, գրել, երազել, երգել, լսել, կասկածել, մտածել, հայտնել, տրտնջել, բողոքել և այլն։

Ծան. *Այս բացառականի կարգին պատկանում են նաև գոհ, գժգոհ լինել, գոհանալ, գժգոհություն հայտնել, շնորհակալ լինել, շնորհակալություն անել բայերի խնդիրները. օրինակ՝ Հազար բերան գոհ եմ քեզնից, Աստված։— Ես ձեզանից շնորհակալ եմ։— Շնորհակալություն իմ կողմից էլ, ում որ սիրում եմ՝ նրանից էլ (Պռ.)։*

Բ. ՏԵՂԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ

115. *Բացառականը ցույց է տալիս՝*

1. Այն տեղը, կամ իբրև տեղ մտածված առարկան, որից ծագում, սկսվո մ է գործողությունը իբրև մի ելակետից. օրինակ՝ Քաղցր լեզուն օձը բնիցը դուրս է հանել (Ա.)։—Քաղացից եկողի երեսն ալյուրոտ կլինի (Ա.)։ Նա ետ դարձավ օտարությունից,— նրա դարձն օտարությունից։ Ալյուրը տոպրակիցն ածեց տաշտը։ Վերարկուն հանեց հագիցը Գիրքը ձեռիցն ընկավ գետին։ Տանձը ծառի տակից հեռու չի ընկնիլ (Ա.)։ Գորգը ոստայնի վրայից հանել.— Հանկարծ նրա ետևից հնչեց մի քավ ձայն (Մուր.)։ Դուրս եկավ բազմության միջիցը.—Ձայն տվեց ներսիցը.— Ներքևից բարձրացավ (Պռ.)։

2. Այն տեղը կամ իբրև տեղ մտածված առարկան, որի ներսի մասի ուղղությամբ կամ երեսով մի ծայրից մինչև մյուսը կտրում, անցնում է գործողությունը։ Օրինակ՝ Աստված ականջ է տվել, որ մեկիցը մտնի, մյուսիցը դո՞ւրս գա (Ա.)։ Գողն որ տնից լինի, եզն եղդկից կհանի (Ա.)։ Շողն երդկից ընկավ տուն։ Պատուհանից, դռնից նայել, դուրս գալ։ Ճանապարհն անցնում էր դարերի ու քարերի, կրճերի ու ժայռերի միջից։— Այնպես տվեց, որ մեջտեղիցն երկու կտոր եղավ.— Գալիս էի նրա ետևիցը.— Ընկավ նրանց ետևից գնաց (Պռ.)։ Դերիայի վրայից կապած ունեին գոգնոց, իսկ նրա վրայից հագած թաթար կանանց բաճկոնակ.— Նա կարևոր համարեց... հանել երկու մաքուր սավան, որոնցից մինը փռեց ներքնակի վրա, իսկ մյուսը՝ վերմակի տակից (Մուր.)։

Ծան. *Մեկի ետևից գնալ, ուղարկել բացի իր իսկական նշանակությունից (հետևել մեկին) նշանակում է նաև գնալ, մարդ ուղարկել մեկին կանչելու, բերելու. օրինակ՝ Գեղչկուհին շտապեց իր հարևաններից մեկին մարդու ետևից ուղարկելու (Մուր.)։ Տե՛ս § 100. 2։*

3. Անձի կամ իրի այն տեղը, կամ մասը, որից ինչպես մի կուվանից՝ կախվում, ձգվում է մի բան։ Այս նշանակությամբ բացառական առնում են՝ բռնել (կալնել), կախել, կապել, կարել, քաշել, ձգել, կրպնել և այլն։ Ջուկը գլխից կբռնեն (Ա.)։— Այն ծայրից բռնիր, որ այս

ծայրը քո ձեռին մնա (Ա.)։—Մեկի փեշից, կռնից, ձեռից, մազերից բռնել։ Այծն իր ոտից կախ կտան, ոչխարն իր (Ա.)։— Ինչ չէր տեսել պատից կախ, հիմի տեսավ ճակատից կախ (Ա.)։ — Մաղը մաղել եմ, պատից կախել։ Ամեն այծ իր շլինքից քաշ կանեն (Ա.)։— Կախել ցցից, փայտից, ծառից։— Դրանց երկսի կուռն էլ կապեց քամակներիցը (Պռ.)։ Մուկը ծակը չէր մտնում, ցախավելը պոչիցը կապեցին (Ա.)։— Չվանը դրեց ոտներն ու կապեց հաստ ընկուզենուցը (Պռ.)։—Ջարը մարդուս ոտիցը կապած է (Ա.)։— Կարեցին երեխաների ուսերից կամ թաստակներից.— Կպավ մոր երեսիցը թե... կպավ հորն ու մոր շլինքիցը թե... կպիր պատիցը (Պռ.)։ Կպչում է մարդու օձիքից (յախից), էլ պոկ չի գալիս։ Սերն աթարից է կպել (Ա.)։— Յոթն անգամ կռնիցս քաշեցին։ Մեկի փեշիցը քաշել։ Շարը ձգեց նրա վզիցը։

Ժ. ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ

116. *Բացառականը ցույց է տալիս՝*

1. Այն ժամանակը, որից սկսած կատարվում է գործողությունը. օրինակ՝ Նրանք երեկվանից պատրաստվել են գնալու։

2. Այն ժամանակամիջոցը, որի անցնելուց հետո կատարվում է գործողությունը. օրինակ՝ Նա երեք օրից կգա։— Ես ամենաշուտը՝ երեք ժամից միայն այստեղ կլինեմ։

Տեղի և ժամանակի բացառականի հետ հաճախ դրվում է տեղի և ժամանակի հայցական, և երկուսը միասին որոշում են տեղի տարածության և ժամանակի տևողության երկու սահմանը, որի մեջ կատարվում է գործողությունը։ Օրինակ՝ Նա գյուղից տեղափոխվեց քաղաք։— Դու առավոտից իրիկուն աշխատում ես։ Ժամի երեքից հինգը սպասեցինք նրան։— Թե էսօրից էգուց իմ գլուխը մի բան գա, դրանք կլինին մեղավոր։

Ծան. *1. Երբ տեղի և ժամանակի բացառականի ետևից դրված հայցականը նույն բառն է, այն ժամանակ բացառականը դրվում է սովորաբար ե (հին՝ է) վերջավորությամբ*[3]. *օրինակ՝ Տնե տուն, տունդ քանդվի. գեղե գեղ, գեղդ քանդվի (Ա.)։ Գլուխ առնել, կորչել աշխարհե աշխարհ։ Ման գալ, թափառել երկրե երկիր, քարե քար, սարե սար, քաղաքե քաղաք։ Ժամե ժամ (սպասելի), ամսե ամիս, շաբթե շաբաթ, դարե դար։ Այսպիսի դեպքում բացառականն ու հայցականը միասին հաճախ ըմբռնվում են իբրև մի ածական կամ մակբայ և ցույց են տալիս ձևի պարագա. օրինակ՝ Գլխե գլուխ, ծայրե ծայր պտտել։ Կուզե կուզ ման գալ։ Ծկան ետևե ետևե շարվեցին։ Նա ման է գալիս գրոնե դուռ։ Կողքե կողք, մոտե մոտ նստել, պառկել։ Մեջե մեջ շարել։ Բուկն էնդուր է խազե խազ, որ խոսքը դուրս չգա վազե վազ (Ա.)։ Բևռնե բերան—կլինի գերան (Ա.)։— Մի քանի այսպիսի կազմություններ մեջ հայցականի վրա, գրաբարի ձևով, դրվում է ի կամ ց նախդրի, ինչպես՝ ծայրե ի ծայր, գլխե ի գլուխ, բացե ի բաց (մերժել),—օրե ցօր, տարե ցտարի, հոգե ցհոգի (կորցնել մեկին)։*

Ծան. *2. Ժողովրդական լեզվի մեջ անորոշ դերբայի բացառականը ե (հին՝ է) վերջավորությամբ*[3] *մենակ ևս գործ է ածվում իբրև ձևի պարագա. օրինակ՝ Անձրևն եկավ շաղալեն, Ալուճ տերև դողալեն, Հրես եկավ իմ աղբեր, Ալ ձին տակին խաղալեն։*

Նաև. 3. Գրաբարից փոխառությամբ մակբայորեն գործ են ածվում երբեմն նաև հետևյալ բացառականները՝ ի բնե, ի ծնե (կույր), հակառակ—հանվանե (ճանաչել), ի բոլոր սրտե, ի սրտե, ի վերջո, կարճ ի կարճո, վերջ ի վերջո, վայր ի վերո, վեր ի վերո և այլն։

117. *Բացառականով կապմված կան բազմաթիվ հարադրյալ բայեր և դարձվածներ. օրինակ՝ Մեկի աչքից ընկնել, ձգել. մտքից լինկնել, ձգել (Արջը խաղով եղավ, տանձը մտիցն ընկավ. Ա.)։ Մի բանի ետևից ընկնել (Անց կացած բանի ետևից չեն ընկնիլ. Ա.)։ Ոտից-ձեռից ընկնել. ձեռից գնալ. հալից ընկնել. ուժից լինկնել։ Մեկին խելքից հանել, մտքից հանել (մի բան)։ Խոսքիցը դուրս գալ. մեկի հախիցը դալ։ Ձեռից մի բան չի գալիս (ապիկար է)։ Ձեռից ինչ շնորհք առես՝ գալիս է։ Մեկի խաթրիցն անց կենալ։ Բանը բանից անց է կացել։ Ուշքից գնալ։ Մեկի ետևից հասնել։— Վազե վազ անել. չոքե չոք անել. ձեռնե ձեռ լինել և այլն։*

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

118. *Գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որով կամ որի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ կատարվում է մի բան։ Այս նշանակությամբ բացատրվում են գործիականի բոլոր գործածությունները։ Օրինակ՝ Աչքով տեսածն ավելի լավ է, քան ականջով լսածը (Ա.)։ Մատաղն իր ոտովն է հկել (Ա.)։ Մենք մեր ընկերներով դուրս եկանք դաշտ։*

Ա. ՄԻՋՈՑԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ

119. *Գործիականը ցույց է տալիս այն գործիքը,— լինի բնական գործիք ու գործարան, անութ, թե բարոյական գործիք, օգնություն, միջոց ու միջնորդություն, կամ նյութ ու իրեղեն,— որ բանեցվում է մի բան անելու համար. օրինակ՝ Գդալով կժողովե, շերեփով կցրվե (Ա.)։ —Երկաթը երկաթով կբռնեն, մարդը մարդով (Ա.)։— Սղոցով կտրել։ Նավով գնալ։ Բանալիքով բանալ։— Արյունը աբյունով չեն լվանալ, արյունը ջրով կլվանան (Ա.)։ Աշխարհքը խելքով կուտեն (Ա.)։— Նա ուրիշի հացով է ապրում։ Նրա ծախքով է տպված այդ գիրքը։ Կուժը ջրով լիքն է։— Մարդս մարդով, մարդն Աստուծով (Ա.)։ Թանաքով գրբել, ներկերով նկարել։ Ճրագի լուսով կարդալ, պատվով երդվել։*

Նաև. *Անձի անունների համար միջոցի գործիականի տեղ հաճախ դրվում է ձեռով, բերանով, միջոցով բառերից մեկը անձի անվան սեռականի հետ. օրինակ՝ Դու ինձ հրևխայի բերանով լուր ես ուղարկում։— Նա իր որդու ձեռով ուղարկեց ընծան։— Աստված մարգարեի բերանով հայտնել է։— Նրանք թարգմանով (կամ թարգմանի միջոցով, բերանով) էին խոսում։ Իմ բարեկամի միջոցով (օգնությամբ) ես հասա նպատակիս։*

120. *Գործիականը ցույց է տալիս՝*

1. Հիմունքը, իրական կամ ենթադրական պատճառ ու պայման, որին իբրև հետևանք լինում է մի բան։ Օրինակ՝ Աստուծո ողորմությամբ (օգնությամբ) մեզ վնաս չհասավ։ Հայր սուրբի հրամանով ճրագները հանգցրին։ Մենք նրա հրավերով ենք հավաքվել այստեղ։ Ես քո խոսքովն արի այդ բանը։ Թե հիմար-իմաստունի վիճակովը (վիճակահանությամբ) կամ փուշտալովը գլուխդ աղի դնես, շատ խելոք կլինես (Պռ.)։ Ես նրա կանչելովն եմ եկել։ Սառը մի խփելով (մի հարվածով) վեր չի ընկնիլ (Ա.)։ Շունը կաղալով չի սատկիլ (Ա.)։ Մենք պաշարված լինելով չկարողացանք նրանց օգնել։

2. Ճանաչելու և դատելու հիմունքը. օրինակ՝ Նոր տեղեկություններով (նրա ցուցումով) բանն այդպես չէ։ Նոր ստացված հեռագիրներով հաղթություն տանողը մեր զորքերն են (համանիշ՝ ըստ, նայելով նոր հեռագիրներին)։ Այդ քո ասելով ուրեմն նա վա՞տ մարդ է։ Քո ասելով դատարանը սո՞ւտ է խոսում (Մուր.)։

Ծան. *Հիմունքի գործիականի փոխանակ հաճախ դրվում են՝ պատճառով, շնորհիվ (գրաբարի գործ. հոլ.), նայելով, չնայելով, առթով (կամ գրաբարի ձևով՝ առթիվ), պատրվակով, հետևանոք (գրաբ. գործ.), նպատակով գործիականները մի անվան սեռականի կամ տրականի հետ։ Պատճառով նշանակում է եղելության կամ գործողության իրական կամ բարոյական պատճառը. օրինակ՝ Բոլոր մարմիններն իրենց ծանրության պատճառով ձգվում են դեպի երկրագնդի կենտրոնը։ Շնորհիվ, հետևանոք ցույց են տալիս մի հիմունք, որին իբրև հետևանք կատարվում է մի բան. օրինակ՝ Նա իր ուշիմ ու ժիր հատկությունների շնորհիվ արժանացավ որդեդրության։ Նայելով (համանիշ՝ նայած, համաձայն, ըստ) ցույց է տալիս ճանաչելու հիմունք. ինչպես՝ Հուրերին նայելով... Չնայելով (համանիշ՝ չնայած, հակառակ) ցույց է տալիս հակառակ հիմունք. օրինակ՝ Նա չնայելով տալիքին՝ ամենապարտն ընթանում էր ժրությամբ (Մուր.)։ Առթով, պատրվակով ցույց են տալիս կարծեցյալ պատճառ, պատճառանք. իսկ նպատակով՝ վախճանական պատճառը։*

Դ. ՆԵՐԳՈՐԾՈՂ ԽՆԴՐԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ

121. *Միջոցի և հիմունքի գործիականները կարող են հասկացվել և իբրև ներգործող խնդրի գործիական, որից իբրև մի սկզբնապատճառից ծագում է գործողությունը. ուստի և ներգործական բայերը կրավորական դարձնելիս՝ ենթական հաճախ դառնում է գործիական հոլովով խնդիր. օրինակ՝ Դույնզգույն ծաղիկները զարդարեցին երկիրը. Ձյունը ծածկեց գետինը. Նրան իր որդիներն են մխիթարում՝ խոսքերը կրավորական սեռով լինում են՝ Դույնզգույն ծաղիկներով զարդարվեց երկիրը. Գետինը ծածկվեց ձյունով։ Նա իր որդիներով է մխիթարվում։ Այսպես և երբ պատճառական բայերը չեզոք բայի են վերածվում, պատճառական բայի ենթական հաճախ դառնում է չեզոք բայի պատճառի գործիական. օրինակ՝ Տեսարանը զվարճացնում էր նրան. Նրան իր որդիքն են ուրախացնում. Գինին հարբեցրեց նրան խոսքերը չեզոք*

բայերով լինում են՝ Նա զվարճանում էր տեսարանով. Նա իր որդինեբրով է ուրախանում. Նա գինով հարբեց (տե՛ս §§ 30, 95)։

Ծան. Ներգործող խնդրի և միջոցի ու պատճառի գործիականները հաճախ ձևով նույնանում են (§§ 110, 111. 3, ծ. 2). Եթե կրավորական բայը ներգործականի դարձնելիս գործիական հոլովն անփոփոխ է մնում, միջոցի կամ պատճառի գործիական է, իսկ եթե գործիականն ուղղական ենթակա է դառնում, ներգործող խնդրի գործիական է։ Օրինակ՝ Մի ձեռով երկու ձմերուկ չի բռնվիլ. Անջուր չաղացով ալյուր չի աղացվիլ. Լեզվով ամեն բան հեշտ կշինվի՝ խոսքերն եթե հասկացվում են՝ Մի ձեռով երկու ձմերուկ չեն բռնիլ. Անջուր չաղացով ալյուր չեն աղալ. Լեզվով ամեն բան հեշտ կշինեն,— ձեռով, չաղացով, լեզվով միջոցի գործիական են. իսկ եթե հասկացվեն՝ Մի ձեռ երկու ձմերուկ չի բռնիլ. Անջուր չաղացն ալյուր չի աղալ. Լեզուն ամեն բան հեշտ կշինի,— դրանք ներգործող խնդրի գործիական են։

Դ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԳՈՐԾԻԱԿԱՆ

122. *Գործիականը ցույց է տալիս սահմանափակում կամ վերաբերություն (տե՛ս §§ 61, 113). օրինակ՝ Աչքով կույրը լավ է, քան մտքով կույրը։— Հորով մեկ են, մորով չէ՛։— Հոգվով դեռ արի, գլխով ալևոր (Գ.-Ք.)։ Ոտքով կաղ, թևթև, արագ, ծանր, դանդաղ. խելքով, հոգվով աղքատ. մարմնով առողջ, առույգ, հիվանդ։ Մի բանով նման, տարբեր լինել։ Լեզվով քաղցր, վարք ու բարքով սուրբ, համեստ, պարկեշտ։ Ինությամբ չար, անտանելի։ Գույնով սև։ Դիրքով առաջինը, հարստությամբ վերջինը։ Նա ազգով հայ է, ծագումով ազնվական է, արվեստով՝ դարբին։— Այսպես գործիական են դրվում՝ ազգ, ցեղ, ծագում, հայրենիք, կոչում, անուն, արվեստ, պարապմունք և այլն բառերն իրենց այն խնդրառուի հետ, որ որոշում է ազգը, ցեղը, ծագումը և այլն։*

Այս կարգին պատկանում են և **վերաբերությամբ, վերաբերմամբ. նկատմամբ** *գործիականները. օրինակ՝ Որպեսզի անքաղաքավարի չգտնվի օրիորդի հարցասիրությունը գոհացնելու նկատմամբ, կարևոր համարեց այսքանը հայտնել.— Լինում էին անփույթ վաղվա պարտքի նկատմամբ։— Սկսավ բացատրություններ տալ նկատմամբ ս. Աստվածածին եկեղեցու (Մուր.)։ Ո՛րքան կատաղեցնում էր նրան այն միտքը, որ նրա նպատակները հայոց ազգի վերաբերմամբ հենց առաջին անգամ... (Րաֆֆի)։*

Ծան. Այս գործիականներն ևս իրենց խնդրառու ածականի հետ ստանում են մի բարդ բառի նշանակություն և կարող են երբեմն մի բարդ բառով ասվել. օրինակ՝ գույնով սև,— սևագույն. լեզվով քաղցր,— քաղցրալեզու. բարքով համեստ,— համեստաբարո։

Ե. ԳԵՐԱԶԱՆՑԱԿԱՆ ԳՈՐԾԻԱԿԱՆ

123. *Գործիականը ցույց է տալիս այն առարկան, որի շուրջը, վրան կամ հետը անցնում, ընկնում, փաթաթվում է մի բան։ Օրինակ՝ Աշխարհք աշխարհքով անցնի (դիպնի), նա իր քնֆից ետ չի մնայ։— Երիտասարդ ուժեր իրարով անցան.—Մտքովը չէր անցնում, թե այս-*

պիսի օր կտեսնի։— Մտքովս մի բան անցավ։— Երեք անգամ Ս. Գևորգի (եկեղեցու) գլխովը պտույտ եկան ու մտան ժամ.— Մայրը նորապսակների գլխովը երեք անգամ պտույտ եկավ.— Ձեռքը նրա շլնքովը պտույտ տվավ։ Փաթաթվեց նրա ճտովը.— Կուռը նրա շլնքովը փաթաթած։ Փաթաթվեց դառովը։ Մեկի ոտներով փաթաթվել։ Կուռը, ձեռը մեկի վզովը ձգել։ Մեկի գլխովը մի բան քաշել, ձգել։ Ընկնել մեկի վզովը։ Դռներով ընկնել, պտտվել։ Իրայր գլխով դիպան։ Քարը դիպավ նրա գլխովը։ Գլխովդ դիպչի (անեծք)։ Դիպավ գետնովը։ Քոնն եմ, թե կուզ աշխարհս իրարով դիպնի։ Վարդի հոտն իր քթովը դիպավ։ Սևատավարը որ գիրանա, ինքն իրան՝ հողն իր գլխովը կտա (Ա.)։— Գետնովը, պատովը տվավ նրան։ Գլուխս ի՞նչ քարովը տվի։ Խոսքը մեկի երեսովը տալ, զարնել։ Մարդ, փիղ, ձի, կառք, գենք մեկմեկով էին։ Մեկզմեկով խառնված էին։

Ծաճ. Այս կարգին պատկանում են և հետևյալ գործիականները՝ Արշը խաղով եղավ, տանձը մտիցն ընկավ (Ա.), աթինքն խաղի հետ եղավ, խաղով գրաղվեց։— Վա՜յ քե քնով անցնի (լինի), ժամանակն անց կենաս Այսպես և՝ խոսքով ընկնել, լինել. քնով ընկնել, լինել, անցնել. աղոթքով լինել, կերուխումով լինել և այլն՝ նրանց կեսը հունձ ու կալով ա լցած (գրաղված. Մուր.)։ Այսպես և անորոշ դերբայի գործիականը եմ, լինիմ բայի հետ. օրինակ՝ Դուրս գալով է ժամը,—այսինքն քիչ է մնում՝ դուրս գա, դուրս գալու վրա է, մոտ է դուրս գալու։ Հաղիվ մեծ պասը պրծնելով ենք.— Քե հասնելով լինի (հասնելու վրա լինի), չեզ իմաց կտամ (Պռ.)։

Զ. ՏԵՂԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ

124. *Գործիականը ցույց է տալիս գործողության ընթացքի ճանապարհը, կամ թե այն տեղը և իբրև տեղ մտածված առարկան, որի երկայնությամբ կամ վրայով, միջով գործողությունը կատրում, անցնում է սահմանից այն կողմը (տե՛ս § 115. 2)։ Օրինակ՝ Լավություն ես անում, կամուրջովն էլ անց կացրու (Ա.)։— Ծովը մտա, ցամաքովը դուրս եկա (Ա.)։— Ջուրն իր գնացած տեղովն էլի կերթա (Ա.)։ Դողն որ տանու լինի, եզն երդկովը դուրս կքաշի (կհանի. Ա.)։—Լույսն երդկովը տուն էր ընկել։ Երդկովը մի բան ձգել, կախ անել։ Խորանի դռնովը մտան ժամ։ Դռնովը չի անց կենում։ Փողոցովն անց էի կենում, միտս ընկար։ Գնում էինք սարերով, ձորերով։ Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ։ Ճանապարհը հաճախ անցնում էր և սիզավետ բարձունքներով (Մուր.)։ Նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով (Մուր.)։ Դուրս եկավ ձորի դարիդուսովը։ Խնձոր քաղեցին ու այգիներով եկան, հասան տուն։ Տա՞ռ լինի, որ գլխովը քամի անց չկենա (Ա.)։— Դրա գլխով անց կացած բաները շատ են։ Նրան այնպես շպրտեց գլխովը, որ տասը տեղ գետին դիպավ։ Իրանց ձդեցին պատովը այգին։ Ես ո՞ր քարափով վեր ընկնեմ։— Մի հետք դեռ նոր էր գնացել նոր եկած քերքեփի (ձյան) վրայովը։ Թռչունը թռավ տան վրայովը։ Փոսի, առվի վրայով ցատկել։ Նա Երևանի վրայով եկավ էջմիածին։ Եկա, կշտո-*

վրդ անց կացա։ Կգան, գեղի միջով անց կկենան։ Նա լաչակի տակով տեսնում է։ Թաշկինակը բկի տակովը կապել էր։ Լիդիա Պավլովնան, որ աչքի տակով նայելով՝ տեսնում էր թե ինչպես... (Մուր.)։ Աչքի տակովը խեթ մտիկ է տալի։

Այսպես և մի բանի՝ երկայնությամբ, լայնությամբ, բարձրությամբ, լայնքով, երկայնքով, ուղղությամբ, կողքով, եզերքով, ծայրով և այլըն գնալ, անցնել և այլն։ Կամսարյանը գլխի տակն առավ բարձը և ձգվեց բազմոցի երկարությամբ (Մուր.)։ Խճուղին Դիլիջանի հարավ արևմտյան կողմից սկսելով՝ անցնում էր Շամլուղ գետակի ուղղությամբ՝ Մայմեխ լեռան ստորոտը ծածկող անտառների միջով (Մուր.)։

Է. ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ

125. Գործիականը ցույց է տալիս՝

1. Սովորաբար անպատեհ, չսպասած ժամանակը կամ եղանակը, օրվա վիճակը, երբ լինում է մի բան. օրինակ՝ Օր ու ցերեկով մտել են, նրա տունը կողոպտել։ Մութ գիշերով անելու փոխանակ՝ ավելի լավ է լուսով անես։— Ապահով եղի՛ր, ցերեկով այս տեղերում վտանգը մեծ չէ։— Մտիկ տվին դեպի այն աստղը, որ օրով ցերեկով նրանց համար լույս էր տալի (Պո.). —Գիշերվա գողին ցերեկով կբռնեն (Ա.).— Այս քամով ու անձրևով ո՞ւր պիտի գնաս.— Մարդիկ ուրախ, թոն ու ձյունով, ձի են խաղում, չափ տալի (Հովհ. Թում.)։ Գնաց շորերը հանեց, էն զահրըմարովը (ցրտովը, ցրտին) լողացավ.— Այս շոգովը մենք լողանում ենք (Պո.).— Արևով անձրևով կգա, մուկն ի շուկան շուռ կգա (Ա.)։— Ժամը Ջաստկին պիտի արեգակով դուրս գա, Մննդին՝ մթնով (Ա.)։ Լուսով գնաց տուն, մթնով եկավ։

2. Մոտավոր ժամանակը։ Այսպես գործ են ածվում՝ օր, ժամանակ բառերի, անորոշ դերբայների և մի քանի ուրիշ բառերի գործիականները. օրինակ՝ Ասում են՝ Արտաշեսի օրով Հայաստանում անմրշակ տեղ չի եղել։— Իմ օրովս վանքի բոլոր միաբանությունը լիութեան մեջ էին (Պո.)։ Ժամանակով այդ էլ գլուխը կգա։ Ժամանակով (կամ ժուկով ու ժամանակով,— երբեմն, մի ժամանակ) մի թագավոր կար։ Ժամանակին, երևի, բոլոր այս լանջերը ծածկված են եղել ծառերով (Մուր.)։ Ամեն ամպելով ձյուն չի գալ (Ա.)։ Նրա կենդանությամբ է կատարվել այդ։ Մեկի ծննդով, կնունքով, հարսանքով մի բան անել։ Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր որսի գնացինք (Հովհ. Թում.)։ Արդյոք հոգևոր հայրերը յուր ներկայությա՞մբ էր որ այնպես քաղցր ընդունեցին գյուղացիներին։ Յանկացավ լսել մի բան նաև օրիորդ Ադելինայի մասին, մանավանդ, յուր որդու, Պետրոսի ներկայությամբ (Մուր.)։

3. Պայմանավորված ժամանակը, պայմանաժամը, տևողությունը, որի ընթացքում լինում է մի բան։ Հոգնակի գործիականը ցույց է տալիս կրկնված գործողության ամեն անգամի տևողություն։ Օրինակ՝ Ա-

վոր կիվկիվ կերթաս տարով, չես գար բարով (Ժող. երգ.)։— Ժամով կառք վարձել (բռնել)։— Ինակարանդ ամո՞վ վարձեցիր, թե տարուչ Ջէ՞ որ մենք օրով ենք խոսացել։— Նա ամիսներով տնից չի դուրս գալիս։— Ժամերով կանգնած մնալ կարելի չէ։

Տառ. *Այս գործիականը հաճախ ըմբռնվում է իբրև ձևի պարագա։*

Ը. ՁԵՎԻ ԵՎ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻԱԿԱՆ

126. *Գործիականը ցույց է տալիս՝*

1. Գործողության **ձևն ու կերպը.** *օրինակ՝ Մարդ ինչ չունենա, սրրտով այն կուզի (Ա.)։— Մարդ պետք է խղճմտանքով խոսի (Ա.)։— Ի՞նչ երեսով գնամ նրա մոտ։ Շիտակ խոսքը հանարով կասեն (Ա.)— Ուժով բաց արած վարդը հոտ չի ունենալ (Ա.)։— Նա ոտով գլխով կորավ։ Մի տակ հագուստով ման է գալիս ցրտին ու շոգին։— Դիտմամբ անել մի բան, զգուշությամբ շարժվել, սրբությամբ ապրել, քաջությամբ կռվել։ Հարցնելով Երուսաղեմ կերթան (Ա.)։ Բանն ասելով կլինի (Ա.)։— Պարտքը տալով, մեղքը լալով (Ա.)։*

Տառ. *1. Անորոշ դերբայի գործիականը դրվելով նույն բայի վրա՝ սաստկացնում է բայի նշանակությունը. օրինակ՝ հրաժարվելով հրաժարվել մի բանից. ցանկանալով ցանկանալ մի բան։*

Տառ. *2. Ձևի գործիականը սովորաբար ստանում է որակական մակրայի նշանակություն, և հայերենում որակական ածականները, եթե անփոփոխ իբրև մակրայ չեն գործածվում,* **կերպով, ձևով, եղանակով** *գործիականների հետ առնվում են իբրև մի մակրայ, կամ թե որակական ածականներից* **ություն** *ածանցով կազմված վերացական անվան գործիականն է գործածվում իբրև մակրայ։ Օրինակ՝ Նա քաջ կռվեց. Նա քաջ կերպով կռվեց. Նա քաջությամբ կռվեց։*

Վերջին ժամանակներս որակական ածականներից **բար, պես** *և* **մանավանդ orեն** *բառերով բարդվում են նոր մակրայներ, որոնք խորթ են հայերենի համար։ Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ ամեն ածական եթե կարելի է անփոփոխ իբրև մակրայ գործածել, պետք է այդպես էլ գործածել, առանց* **կերպով** *բառի և առանց* **orեն** *բառով բարդելու. օրինակ՝ Նա քաջ կռվեց։ Թրքիների հետ մանուկներն այդպես անմիա չեն վարվում (Հովիվ, 1910, № 9)։ Կտեսնեինք զարմանալի ծանոթ պատկերը, որ անհուն կզվարճացնե մեզ բոլորիս (Մշակ, 1909, № 46). Այո՛, լևոն, հիանալի էրգեց (Շիրվ. Արտ.)։ Նա սարսափելի վախեցավ, փոխանակ՝ նա քաջ կերպով կամ քաջորեն կռվեց, նա սարսափելի կերպով կամ սարսափելիորեն վախեցավ, անմտորեն վարվել. անհունորեն զվարճացնել, հիանալի կերպով, հիանալիորեն երգեց։*

2. Մի բանի համեմատ լինելը, **չափով, համեմատ, ըստ** *բառերի նշանակությամբ. օրինակ՝ Ես ուզում եմ մեր օրենքովն երթամ (վարվեմ)։— Հայ քրիստոնեի օրենքով (սովորությամբ) պետք է դու այդ բանը չանես։— Բարեկամների կամքովը չէր այդ բանը։— Ես իմ հոժար կամքով տալիս եմ։— Ագռավի խոսքով լինի, Վարդիվորին ձյուն կգա (Ա.)։— Թշնամու սրտով եղավ (արեց նա) այդ բանը։— Թե որ Աստված սրտներովն էր անում, մի աղքատ տուն էր մտնում հացի վրա (Պռ.)։— Կարպետովդ լարե ոտքդ (Ա.)— Աստված մարդուն յուր*

պատկերով և նմանությամբ է ստեղծել։— Մատնիքը մատովս չէր, Սիրածը սրտովս չէր, Մինթանեն բոյովս չէր, Քամարը մեջքովս չէր (Ժող. երգ.)։— Երիտասարդը նստեց թախտի մի ուրիշ կողմը, որ յուր կարծիքով ազատ պիտի լիներ հողի իջվածքից։ Այսպես և՝ իմ համոզմունքով, իմ խելքով, իմ դատողությամբ, հայացքով, ուղղությամբ, կարողությամբ և այլն։

3. **Միասնություն,** *այսինքն մի ուրիշ անձի կամ իրի գործակցություն, մասնակցություն՝ հետ, միասին, հանդերձ բառերի նշանակությամբ։ Օրինակ՝ Արջն եկել է իր քոթոթներով մեր այգին ընկել.— Նա երեք ձիավորով գնաց։— Մի կողմը կարգին նստած էին մարդիկը, մյուս կողմը՝ կանայքն իրենց երեխաներով։— Վարդիթերի մայրն էլ այնտեղ էր յուր հարսներով։— Նորափեսան իրան երկու ընկերովը բարձի վրա կանգնած էր։— Տերտերներն իրենց զարդարանքներով ու տիրացուներով առաջ ընկան։— Ուղտը փալանով կուլ կտան (Ա.)։— Նրանք իրենց պատրաստություններով վեր կացան, գնացին ձորը։— Փշատու (փշատենու) ճյուղը կռացրեց, նրա ծաղիկները ճյուղով կոտրատեց։— Յոթը հացը մի ման կերակրով խփշտում էր։— Հացը պանրով կեր։— Տղայքը մի աղլուխ պաշարով, մի քոռ էլ հետները՝ եկան։*

Միասնության գործիական են և հետևյալները՝ Վեր կալան նրան, չորս մարդով (չորս մարդ միասին) տարան ու տարան։ Ամենքով (ամենքը միասին) գնացին։ Մինչև էգուց իրիկուն էին մտքներումը դրել երկու աղբերով (երկու եղբայր միասին) երկու այգին բանալ։— Ջուխտ աղբերով (ջուխտ եղբայր միասին) սպանվեցին։ Մենք չորսով (չորս միասին) գնացինք, հեռացանք։ Երկուսով (դուք երկուսդ միասին) գնացեք։ Կովի դաշտում զինվորները հազարներով ընկան։ Գարնանը Ս. Հակոբա թռչունները տասնյակ հազարներով գալիս, բունում են մեր դաշտերի ևրեսը։ Այսօր եղբայր ու քույր իրարու սիրտ տալուց հետո՝ երկուսով միասին մեր թշվառ մոր արտասուքներն ենք սրբում (Պռ.)։

Նշ. Տեղ բառի գործիականը՝ տեղովը մի ածականի հետ հաճախ ցույց է տալիս հակառակ հիմունքը (§ 34. 5, դ), հակառակ, չնայելով բառերի նշանակությամբ. օրինակ՝ Նա քահանա տեղովը այս բանը քերավ իմ գլուխը (քահանա լինելով հանդերձ)։ Ես իմ աղքատ տեղովս քեզնից շատ եմ հարկ տալիս (չնայելով իմ աղքատության)։ Պառավ տեղովս կխաղամ քո խաթեր համար։— Տեղով բառը մի ածականի հետ նշանակում է նաև կերպով, իսկ ստացականի հետ՝ ամբողջությամբ, էությամբ. օրինակ՝ Հենց որ նա միամիտ տեղով ձմեռը մեկնեց... (Պռ.— միամտաբար, միամտությամբ)։ — Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա, քեկուզ իր տեղով հենց կրակ դառնա (Հովհ. Թում.)։

127. *Միասնության գործիականն իբրև վերադիր դրվելով մի անվան վրա՝ առնվում է ինչպես մի որակական ածական։ Օրինակ՝ Խոսքն այն է՝ որ անջուր ջաղացը պտույտ տան, թե չէ՝ ջրով ջաղացն ամենքը պտույտ կտան (Ա.)։— Ես օրով եմ նրանից։— Օրենքով խոսքին ոչ ոք բան չի ասիլ (Ա.)։— Մահն ընկերով՝ հարսանիք է (Ա.)։— Կաթնով ոչ-*

խարը հոտից դուրս չի գալ (Ա.)։— Ոսկե թամքով ձին ասաց բռնած եզան... Կողքով մարդ, հացով, պատվով, ուժով մարդ. ամոթով հարս։ Համով կերակուր։ Ուսումով մարդ։ Գինով մարդ։ Կղճմտանքով խոսք, կառքով զբոսանք։ Արտասուքով մեռել է (Ա.)։ Սուտը խոմ փողով չէ՞ (Ա.)։ Մատաղի ջրով շորվա, գառնով փլավ, բրնձով արգանակ, ձուլարով սպաս, կարտոֆիլով սուպ։

Ծան. Այս վերադրի գործիականը, եթե մի բառ է, ստանում է մի ածանցական ածականի նշանակություն. իսկ եթե ինքն էլ մի վերադիր ունի, փոխանակվում է մի բարդ ածականով. օրինակ՝ հասակով մարդ, հասակավոր. տարիքով, տարիքավոր. պատվով, պատվավոր. խելքով, խելացի. շնորհքով, շնորհալի. անունով, անվանի. ուժով, ուժեղ. համով, համեղ.— կաղ ոտով եզ,— կաղոտն. դեղին մազերով (աղջիկ),— դեղնամազ, դեղնահեր. սև աչքերով,— սևաչյա, անուշ ձայնով,— անուշաձայն. քաղցր հայացքով,— քաղցրահայաց. կարմիր գլխարկով,— կարմրագլխարկ. դատարկ գրպով,— դատարկագլուխ. առյուծի սրտով,— առյուծասիրտ։

Թ. ՉԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԳՆԻ ԳՈՐԾԻԱԿԱՆ

128. *Գործիականը ցույց է տալիս չափ ու քանակ և գին, որով մի բան լինում է։ Մտածվում է հաճախ իբրև ձևի գործիական, իբրև պատասխան ի՞նչպես հարցի։ Այսպես գործ են ածվում.*

1. Առնել, տալ, ծախել, գնել և այլն բայերի հետ չափ ու գնի անունները. օրինակ՝ Մի բան կշռով, քաշով, չափով, ամանով, բաժակով, հատով, լիտրով, կանգունով ծախել, գնել, տալ և այլն։ Ողբայրն եղբորը չի տալ այս գնով։ Ամեն բան փողով են առնում, ծախում։ Մի բան աժան գնով, առքի գնով տալ։ Հատը քանիսո՞վ է տալիս (ծախում)։— Հատն երկու կոպեկով (է տալի)։— Քանիսո՞վ առար այդ։— Հինգ ռուբլով առա։— Այս կարգին պատկանում են նաև՝ փողը շահով, տոկոսով տալ. տունը վարձով տալ մեկին. մի բան կապալով տալ, առնել։

2. Բաղդատական աստիճանի նշանակություն ունեցող մի ածականի կամ մակբայի, ինչպես և առաջ, ճետո. ետ բառերի հետ. օրինակ՝ Նա տասնումեկ տարով մեծ է քեզնից։ Նա մի ամսով փոքր է ինձնից։ —Մենք մի օրով ուշ տեղ հասանք։— Նա յուր ամբողջ գլխով բարձր է ուրիշներից։— Ամիսներով առաջ են տեսել իրենց պատրաստությունը։ Նրանք մղոններով ետ էին թշնամուց։ Մի ամսով հետո (առաջ) է ածեղ հասել։

3. Իբրև վերադիր մի անվան. օրինակ՝ Նա հոտերով ոչխար ունի. բռնութեամբ ցորեն, ձեռքերով հագուստ, դաստով թուղթ։

4. Հետևյալ դարձվածների մեջ՝ Ամեն մեկն իր քաղլակով մին (իր կողովով մին, կոդովի չափով) խաղող տվավ։ Մեր ամանով մին լիքր յուղ տուր մեզ։ Այսպես և՝ բռնով մեկ, բաժակով մեկ, տնով մեկ և այլն։ Հերիք չէ՞ դու մեր անունը խայտառակել տաս, աշխարհքով մին աննս։ Կնդրկի հոտն աշխարհքով մին արեց նա։ Իր շալակով մին ցախ տարավ։

129. Գործիականով կան կազմված բազմաթիվ հարադրյալ բայեր ու դարձվածներ. օրինակ՝ Ամոթով մնալ, աչքով տալ մեկին, աչքով անել մեկին, ձեռով անել, գլխով անել,— տակով անել մի բան; Նա ուրիշի փողերը տակով արավ։ Գեղ մարդու օր-արևը սև հողի տակով արևը (Ժող. երգ.)։ Պռունկը պռնկովը տալ։ Աչքով աչք չունի նրան տեսնելու և այլն։ Գետնով տալ, զարնել, դիպչել։ Հուռը քթովը դիպավ։ Աչքովս ընկավ նա։

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

130. Ներգոյական հոլովը ցույց է տալիս մի բանի ներսը, մեջը լինելը և գործ է ածվում տեղի, ժամանակի և սահմանափակման նշանակությամբ, համապատասխան մեջ բառի կիրառության։ Ունի իբրև ետադրություն, որով և կարող է փոխանակվել այս հոլովը (տե՛ս § 39. 5)։

Ա. ՏԵՂԻ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ

131. Ներգոյականը ցույց է տալիս այն տեղը կամ իբրև տեղ մտածված առարկան, դրությունը, վիճակը և այլն, որի ներսում, միջին կա կամ լինում է մի բան։ Օրինակ՝ Նա պարտեզում է աշխատում, Մենք քաղաքում ենք ապրում։ Որդին որ բռնումը ձվածեղ անի, մոր պարտքիցն էլի չի կարող դուրս գալ (Ա.)։— Ծովից դուրս եմ եկել, մի գդալ ջրումը խեղդվում եմ (Ա.)։—Ջուկն ու միսը մի պղնձում չեն եփվիլ (Ա.)։ Անունը կա, ամանումը չկա (Ա.)։— Կանաչ ու կարմրում կացեք, մեզնից հեռու կացեք.—Թե սրանում, էս խոսքումը, ստություն կա, երկու աչքիցս դատարկ նստիմ.— Նրանցում ամոթ չկա (նրանք ամոթ չունին) (Պռ.)։— Ջուկը ծովումը կմեծանա (Ա.)։— Միտն երազում կորեկ կտեսնի (Ա.)։— Նրանք լավ վիճակում չեն։— Գոհություն և փառք, մեծդ փաթիշահ, որ հայ չնչելում գտար դու քեզ շահ (Գ.-Ք.)։—Քառասունք մեջ մեքենաբար նորընծան սկիհ բռնելում և «խաղաղություն» տալում վարժվեց՝ այնուհետև տերտեր է, որ կա (Պռ.)։

132. Այս ներգոյականի համար պետք է նկատի ունենալ.

1. Մարդու և կենդանիների մարմնի մասերի անունները, ինչպես և ևզր, ծայր և այլն, երբ ներսը, մեջը բառերի նշանակությունը պետք է արտահայտել, դրվում են ներգոյական հոլովով, որին կարող է հաճախ և տրականը փոխանակել. բայց երբ այդ անունները վրա, երեսի բառերի նշանակությամբ են գործածվում, դրվում են տրական հոլովով և ոչ ներգոյական (տե՛ս և § 105. ծ. 3)։ Օրինակ՝ անխտիր ներգոյականով ու տրականով ասվում են՝ Աչք ունի, աչքումը (աչքին,— աչքի մեջ) լույս չունի (Ա.)։— Նրա գլխումը (գլխին) խելք չկա.— Այս մանուշակը մինչև ե՞րբ ձեռումս (ձեռիս) տրորելով թոռոմացնեմ.— Ջեռը ծոցումը (ծոցին) մնաց, մուրաղը փորում (փորին).— Երեխան գրր-

կումն (գրկին) է։— Այս փայլի ու շքեղության պատկերը, կարծես, մարմին առնելով՝ շշնջաց յուր ականջին (ականջում)՝ «մի՞թե չես ցնորում» (Մուր.)։— Բերանում ատամ չի մնացել։— Լեզվումն էլ կա, կռնումն էլ (Ա.— լեզվանի և ուժեղ է)։ Սրտումս էլ դարդ չի մնացել։ Ամեն մարդու սրտում մի ցավ կա (Ա.)։— Բայց կարելի չէ ասել՝ Աչքերում ակնոց ունի. գլխումը գլխարկ կա. ականջում օղ ունի. երեխան կռնումն է։— այլ միայն տրականով՝ աչքերին ակնոց ունի. գլխին գլխարկ չունի. ականջին օղ ունի. երեխան կռանն է (տե՛ս § 103)։

Ծան. Ծայր, ափ, եզր, լանջ (լեռան լանջ նշանակությամբ), երբ ցույց են տալիս որոշ ընդարձակությամբ տարածություն, որի մեջ լինում է մի բան, դրվում են թե ներգոյական և թե տրական. օրինակ՝ Նա կանգնած էր փողոցի ծայրին (ծայրում)։ Արևը... այդ տեսարաններին տվել էր մի դյութական պայծառություն, վառելով մշուշը լեռների լանջերում, կանաչը՝ ծառերի կատարին, ոսկեը՝ դաշտերի մեջ և ցողը՝ ծաղիկների վրա (Մուր.)։— Ու թարմ, ցողապատ լեռների լանջում... Սո՜ւս... ականջ արա,— հովիվն է կանչում (Հովհ. Թ.)։ Ավելի լավ կլիներ ասել՝ լանջին. որովհետև «լանջում» կհասկացվի լանջի մեջը, ներսում, իբրև տակին և ոչ երեսին, ինչպես մի տարածության մեջ։ Այսպես նույն հեղինակը քիչ հետո ավելի ընտիր, ժողովրդի շարադրությամբ գրում է. «Նանի, քող գնամ, էն սարի լանջին չան գյուղում ասեմ»— «լանջերին խաղեր եմ ասում»։

2. Տեղի ներգոյականը միշտ կարելի է մեջ բառով արտահայտել, և երբ անձի, կամ վերացական անուն է կամ անորոշ դերբայ, սովորաբար մեջ բառով էլ արտահայտվում է նույն նշանակությունը. օրինակ՝ Դու ժուռ էս գալիս մարդկանց մեջ շքով։ Ահ ու դողի մեջ լինել։

3. Բուն տեղի անուններից ներգոյական կարող են դրվել միայն մի քանիսը՝ տեղում, կողմում, առջևում, ետևում, վերևում, ներքևում, երբեմն և միջում. մնացածների համար նույն նշանակությունն արտահայտվում է հայցականով կամ տրականով (§ § 76. 2, 103. 2)։ Օրինակ՝ Սարի անհոտ ծաղիկն էլ իր տեղում իր փառքը վարդի հետ չի փոխիլ։— Նանի, ներքևում ես մարդիկ տեսա։— Մեր կողմերում այժմ շատ շոգ է։ Այն ո՞վ է կանգնած դռան ետևում։ Առուն բռնած ներքև էր գալիս իրա միջումը դունդունալով (Պռ.)։ Ի՞նչ կանեմ ոսկե տաշտակը, որ միջումը արյուն կթափեմ (Ա.)։ Կարպետին փող չի տվել, մեջտեղումն է նստում (Ա.)։ Իմացավ իր միջումը, որ սրտինը չի լինելու (Պռ.)։ Հինավուրց ծառերը բուսած լինելով ժայռերի վերևում, այդ տեղից իրենց սաղարթախիտ ստվերը ձգում, տարածում էին ճանապարհի վրա (Մուր.)։ Այսպես և՝ սարում, հովում, շոգում և այլն, այսինքն սար տեղում, հով տեղում, շոգ տեղում։— Լավ հունձ անողը հանդումն էլ կհնձե, սարումն էլ (Ա.)։ Նստեցին հովումը։ Էս շոգումը, էն ցրտումը նստած։ Մթնումը կանգնած։

Բ. ԺԱՄԱՆԱԿԻ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ

133. *Ներգոյականը ցույց է տալիս՝*

1. Ժամանակը, որի մեջ կա կամ լինում է մի բան։ Այսպես գարո

ճն ածվում սակավաթիվ ժամանակի անուններ. օրինակ՝ Ո՞ր դարում,— 5-րդ դարում տրվեց Ավարայրի ճակատամարտը։ Հին ժամանակներում, մեր օրերում, սկզբում, վերջումը (տե՛ս §§ 77, 104)։

Ծան. 1. Մի քանի բառերի ներգոյականն ստանում է վրա, միջոցի բառերի նշանակությունը. օրինակ՝ էշը կերան, պոչումը խռովեցին (Ա.)։ այսինքն պոչի վրա, պոչ ուտելիս։ Նա յուր գլուխը չենց առաջին վիճակումը լաց եղավ, այսինքն վիճակը դուրս գալիս։ Այսպես ժողովրդական ձևով ասվում է՝ Այս վերջին պատշտումն երևում է մերը — էստումը նա եկավ.— էս փախչելումը մերը ձեն է տալիս.— Ամեն թոռ գցելումն իրանց մինի բախտը փորձում էին (Պռ.)։

Ծան. 2. Երբեմ կամ ընդմիշտ բառերի նշանակություն ունին հետևյալ ներգոյականները՝ Գայլի փորն իր օրումը չի կշտանալ (Ա.)։— Իր օրումը չի լինիլ այդպիսի բան։ — Իմ օրումն այսպես ախորժակով չուր չէի խմել.— Քող չասեն քե Սոան իր օրումը (երբևէ) կաշառք է կերել (Պռ.)։— Գող մարդն իր օրումը գող կլինի (Ա.)։— Ես իմ կյանքումը մարդի վնաս չհասցրի։— Դա, ասում են, իր կյանքումը դարդ չունի (Գ.-Ջ.)։

2. Որոշ ժամանակամիջոցի ամբողջությունը, սկզբից մինչև վերջ, որի ընթացքում, վերջանալուց առաջ, կատարվում է մի բան, իբրև պատասխան ո՞րքան ժամանակում հարցի։ Օրինակ՝ Նա մի օրում կգա, կհասնի։— Մի ամսում ամենայն բան վերջացավ։— Տասնօրեն բանը երկ՝օրումը կանի, կպրծնի.— Արտերը մի շաբաթում երկու թիզ բարձրացան (Պռ.)։— Հարուստ ու երջանիկ մարդը մի օրում թշվառ մուրացիկ է դառնում։— Մի ակնթարթում սարքվեց, զարդարվեց։— Կես ժամում ամեն բան պատրաստեց։— Այս յոթը շաբաթումը Աշտարակու լավություններն երևում է։

Ծան. Այս նշանակությամբ ներգոյականն արտահայտվում է սովորաբար մեջ, ընթացքում բառերով. օրինակ՝ Մի գիշերվա մեջ այսքան բան արի։—Մի շաբաթվա մեջ (ընթացքում) ամեն բան վերջացրեց։

134. Գ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՆԵՐԳՈՅԱԿԱՆԸ ցույց է տալիս մի առարկա, որի վերաբերմամբ մի ուրիշ առարկա ունի մի հատկանիշ. օրինակ՝ Նա ամեն բանում հմուտ է։ Նա հայերենում քեզնից առաջադեմ է։ Գրել-կարդալում ո՞վ է մեզնից առաջ։ Հորս սպասածից ավելի առաջադիմություն ցույց տվի ռուսերենում (Մուր.)։— Այս ներգոյականն ևս սովորաբար արտահայտվում է մեջ բառով (տե՛ս § 39. 5). Գրելու մեջ, մանավանդ, ետ էին մնացած բոլորը (Մուր.)։

Ծան. Ներգոյականով կան սակավաթիվ դարձվածներ. օրինակ՝ Նա քթումն է խոսում։— Նա մտքումը սիրում էր նրան։ Ես մտքումս զարմացա։ Ինքն իրան մտքումն այսպես ասաց (Մաածեց)։ Թեև մտքումը լինի, կանի։— Քանի չանումը չան կար,— քանի ուժումը ույժ կար, ամբողջ օրն աշխատում էր։

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

135. Անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլովով կախված է խնդրառու բայից. բայց երբ այս դերբայն անհոդ է, հաճախ տրական և

հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցությամբ։ Իբրև ընդհանուր կանոն պետք է իմանալ, որ անորոշ դերբայը նույն հոլովով է դրվում, ինչ հոլովով որ դրվում է ոչ-դերբայ խնդիրը. օրինակ՝ մոռանալ, իոստանալ մի բան. ուրեմն մոռացա ասել (և ոչ ասելու), խոստացա գնալ (և ոչ գնալու). բայց դատապարտել մեկին մի բանի (մահվան). ձգտել, արժանանալ մի բանի. ձեռք զարնել, կարոտ լինել, վարժված լինել մի բանի. ուրեմն և դատապարտել մեկին մեռնելու. ո՞վ պիտի արժանանա սրանից ուտելու. Հայկ ձեռք զարկեց մի գյուղ շինելու. նա կարոտ է կուշտ փորով հաց ուտելու. ես վարժված եմ ցավեր կրելու։

186. Տրական հոլովով է դրվում անորոշ դերբայը,

1. Երբ ցույց է տալիս նպատակը, որին ուղղվում է գործողությունը և որ պետք է կատարվի. օրինակ՝ Գալիս ենք ձեզ շնորհավորելու (իբրև շնորհավորելու համար, տե՛ս § 100. 1)։

2. Երբ խնդիր է դառնում մի բայի կամ ածականի, որոնք պահանջում են տրական բուն իմաստով կամ համար, նկատմամբ, վերաբերմամբ բառերի նշանակությամբ. օրինակ՝ Դու տրամադիր չես պարապելու։

3. Երբ խնդիր է դառնում այնպիսի ածականների և բայերի, որոնք տրական հոլովով խնդիր չեն առնում, այլ համար, վերաբերմամբ և այլն բառերով. օրինակ՝ Դու ազատ ես ընդունելու կամ մերժելու (այսինքն՝ ընդունելու կամ մերժելու նկատմամբ)։ Մենք պատրաստ ենք տունջվելու և մեռնելու։

4. Հետևյալ տեսակի ասություններում՝ ես բան ունիմ անելու (ես ասելու բան ունիմ). նամակ ունիմ գրելու. ես մտադրություն չունիմ գնալու. նա իրավունք չունի այդպես վարվելու. իմ տունն այս տարի միտք չունիմ նորոգելու։ Այսպես և՝ ցանկություն ունենալ, դիտավորություն ունենալ, հրաման ունենալ, սեր ունենալ, հույս ունենալ, սովորություն ունենալ և այլն մի բան անելու։— Դեռ շատ բան կա անելու։ Դատաստան կա գալու, պատասխան կա տալու։ Ինձ հրաման չկա կենալու. հույս չկա առողջանալու։— Դեռ շատ բան է մնում անելու։ Ժամանակ չի մնում պարապելու։— Հազար դևներ գիտեր խոսելու։

Նշան. Հաճախ այսպիսի ասություններում, երբ հայցական կրող խնդիրը մի բայական անուն է, ստանում են մի պարզ անցողական բայի նշանակություն, կամ թե կրող խնդիրը մտածվում է իբրև սաորոգելիական վերադիր, և այն ժամանակ գործ են ածվում անորոշ դերբայի հայցական հոլովի հետ. ինչպես՝ Նա ցանկություն չունի այդ անել, իբրև՝ Նա չի ցանկանում այդ անել։ Ես հույս ունիմ (իբրև կհուսամ) նորից քեզ տեսնել։ Նա սովորություն ուներ ամեն օր գալ այս տեղերը։ Նմանապես տրական և հայցական հոլովներն անխտիր բանում են և այն հարադրյալ բայերից հետո, որոնց հարադիրը մի գոյական է հայցական կրող խնդրի նշանակությամբ (§ 74)։ Անորոշ դերբայը հայցական է դրվում, երբ հարադրյալ բայն առնվում է իբրև մի պարզ անցողական բայ. տրական է դրվում, երբ հարադրյալ բայն առնվում է իբրև մի դարձված. օրինակ՝ Նա միտք է անում (մտածում է) այս տարի իր որդուն պսակել։ Դու խոսք

տվիր (իբրև՝ խոստացար) գալ, տեսնել մեզ։ Նա թույլ չեմ տալ ձեզ այդ բանն անել։— Թույլ չտվավ հառաչ մ՝ ու ճիկ հանելու (Պեշիկթ.)։ Դուք խոսք էիք տվել մեզ օգնելու։

Սահ. 2. *Որոշ թվով բայերից հետո գրաբարի ձևով սովորաբար դրվում է անորոշ դերբայի հայցականը փոխանակ տրականի. օրինակ՝ Հաճեցեք ասել (փոխանակ՝ ասելու)։ Նա պարտավորվեց տան վարձն ամսե ամիս վճարել (փոխ. վճարելու)։ Չհամարձակվես տեղից շարժվել։ Նա շտապեց սեղան բռնել (Մուր.)։ Այսպես և՝ համաձայնել, հանդգնել, աշխատել, ջանալ, վարանել, տատանվել, հապաղել, համառել, ուշանալ (մի բան անել կամ անելու)։*

Սահ. 3. *Մի քանի բայեր՝ արգելել, խանգարել, սպասել և այլն, նայելով թե իբրև անցողական, թե անանցողական բայ են առնվում, թե՛ հայցական և թե՛ տրական հոլովով անորոշ դերբայ են պահանջում. օրինակ՝ Նա մեզ արգելեց (ի՞նչ) տնից դուրս գալ։ Ինչո՞ւ ես դու արգելում ինձ այդ գործը ձեռնարկելու (իբրև արգելք լինում)։ Այսպես և մի քանի բայերի հետ, որոնք բացառական հոլովով խնդիր են առնում, ինչպես՝ ամաչել, դադարել, զգուշանալ, վախենալ, քաշվել, ակնածել և այլն, սովորաբար թե բացառական և թե հայցական կամ տրական հոլովով է դրվում անորոշ դերբայը. օրինակ. Սոխակ, ինչո՞ւ դադրեցար քո անույշ երգը երգելից (Գ.-Քաթ. փոխ. երգելուց)։ Մի՞թե ամաչում ես Աշտարակա սովորությունները բանացնել (Պո.)։ Չեն ամաչիլ աստված ասել հարստին (Գ.-Քաթ.)։ Վախենում էր նրա սիրտը կոտրելու.— Ամաչում էր իր սրտի գաղտնիքն ուրիշներին հայտնելու (Պո.)։— Բարբառային ձևեր են՝ Մկսեց ասելու.— Նա կարող է հեռանալու.— Կուզենք երթալու։*

Բ. ԿԱՊԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԵՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՑՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

187. *Կապերը նույն պաշտոնն են կատարում, ինչ որ հոլովները, այսինքն մի գոյական իբրև խնդիր կապելով մի ուրիշ բառի հետ՝ ցույց են տալիս որևէ կախման հարաբերություն։ Կապերն, այսպես ասած, լրացնում են հոլովների թերին, 1. ավելի ճիշտ ու պարզ որոշելով հոլովների նշանակությունը, որ հոլովներն առանց կապի էլ ունին. օրինակ՝ Երևանից մինչև էջմիածին տասնութ վերստ է, որ նույն է թե՝ Երևանից էջմիածին տասնութ վերստ է. 2. մի նոր տեսակի հարաբերություն ցույց տալով, որ հոլովները մենակ չունին. օրինակ՝ Նա առանց օգնության մնաց։*

Գոյականը, որ խոսքի մեջ կապով ստորադասվում է մի ուրիշ բառի, կոչվում է **կապի խնդիր**։ *Մի կապը կարող է ունենալ երկու և ավելի խնդիրներ ևս. օրինակ՝ Մենք աշխատում ենք մեր հայրենիքի և ազգի համար։*

Գոյականն իր կապի հետ միասին առնվում է իբրև խոսքի մի մաս. իսկ կապը մենակ ցույց է տալիս, թե իր խնդրի գոյականը ինչպիսի կախման հարաբերություն ունի իր խնդրատու բառի հետ։ Օրինակ՝ Նա **ընկերի հետ** *ուղևորվեց խոսքի մեջ* **ընկերի** *խնդիր է* **հետ** *եւտադրության. ընկերի հետ, գոյականն իր կապով, ձևի պարագայական խնդիր է* **ուղևորվեց** *բայի. իսկ* **հետ** *մենակ ցույց է տալիս միասնության, միասին լինելու, անելու հարաբերություն։*

Ծան. Կապերի այս լական նշանակությունն է պատճառը, որ կան լեզուներ, որոնք հոլով չունին և հոլովական վերջավորությունների պաշտոնը նախադրություններով են արտահայտում։ Հայոց լեզվի մեջ ևս հաճախ նույն հարաբերությունը թե հոլովներով և թե կապերով կարելի է արտահայտել. օրինակ՝ Անեծքը դնպի անիծողը կդառնա.— Անեծքն անիծողին կդառնա։ Նա իր աշակերտների հետ գնաց դրոսնելու.— Նա իր աշակերտներով գնաց դրոսնելու։ Բացի այս՝ մինչդեռ գրաբարում հաճախված է նախադրների գործածությունը, որոնցով որոշվում է հոլովների նշանակությունն, և հոլովներն առանց նախդիրների, մենակ, այս կամ այն դեպքում, չեն գործածվում, աշխարհաբարում ընդհակառակն նախադրությունները շատ սահմանափակ կիրառություն ունին, և հոլովները մենակ սովորաբար արտահայտում են այն, ինչ որ գրաբարում հոլովներով և նախդիրներով միասին է արտահայտվում։

188. Կապերն երկու տեսակ են՝ իսկական և անիսկական կապեր։ Բացի այդ կան և կապական բառեր։

1. Իսկական կապերը հարաբերություն նշանակող այն բառերը կամ խոսքի մասնիկներն են, որոնք մենակ ու հոդով չեն գործածվում իբրև լրացում, այլ միշտ մի գոյական խնդրի հետ։ Դրանք են՝

ա) **Նախադրություններ** կամ **նախդիրներ**՝ *ի, ց, առ, ըստ, դեպի, մինչև, բացի, առանց, ժողովրդական լեզվի մեջ նաև՝ թողըզ,*— որոնք դրվում են իրենց խնդրից առաջ, և եթե խնդիրը լրացումներ ունի, այդ լրացումներից էլ առաջ. օրինակ՝ Նա գնաց դեպի տունը.— Նա գնաց դեպի իր սիրելի բարեկամի տունը։

բ) **Ետադրություններ**՝ համար, հանդերձ, հետե, իվեր, որոնք դրվում են իրենց խնդրից հետո. օրինակ՝ Ինձ համար չէ գարնան գալը։

2. **Անիսկական կապերն են**՝ պես, չափ, տեղ, հետ, դեմ, մոտ, վրա բառերը, որոնք իսկապես գոյական են հայցական հոլովով, բայց կորցնելով իրենց գոյական նշանակությունը՝ գործ են ածվում իբրև ետադրություն և իրենց խնդիրը, երբ անձնական դերանուն է, առնում են տրական հոլովով, օրինակ՝ մեզ պես, ինձ չափ, ինձ հետ։ Լինելով սակայն գոյական՝ այս բառերը կարող են և մենակ գործածվել, հոդով կամ առանց հոդի, և հոլովվել. տրական խնդիրն այս դեպքում դառնում է ստացական ածական կամ սեռական, և այս բառերն այլևս ետադրություն չեն, այլ գոյական խնդիր. իսկ եթե անփոփոխ և առանց հոդի դրվում են բայի վրա, առնվում են իբրև մակբայ. օրինակ՝ քեղ վրա, բայց՝ քո վրայի, քո վրայից և այլն. վրա վազել, վրա տալ (տե՛ս և § 38)։

3. **Կապական բառերն** այն գոյականները, ածականները կամ մակբայներն են, որոնք իրենց նշանակության համեմատ մի գոյական խընդիր են առնում այս կամ այն հոլովով և խոսքի մեջ ցույց տալով որևէ կախման հարաբերություն՝ իրենց խնդիր գոյականի հետ միասին առնվում են իբրև մի խոսքի մաս։ Այսպես են՝ նկատմամբ, վերաբերմամբ, պատճառով, առթով (առթիվ), շնորհիվ, ձեռքով, երեսից, ժամանակ, փոխարեն, փոխանակ, նման, համեմատ, համաձայն, զատ, առաջ, հետո և այլն. և բոլոր տեղի անունները՝ առաջ, առջև, դիմաց,

հանդեպ, ետև, մեջ, տակ, ներքո, շուրջ, և այլն, երբ, անփոփոխ և առանց հոդի, գործ են ածվում մի սեռական խնդրով (տե՛ս § § 38, 39, 100. 3, 2. 111. 1. ծ. 113. 2, 3. 119. ծ. 120. 2, ծ.)։

Ծան. Իսկական կապերի տարբերությունն անիսկական կապերից ու կապական բառերից այն է, որ վերջին երկու տեսակի բառերը, իրև գոյական, ածական կամ մակբայ, կարող են մենակ ևս դառնալ լրացում մի ուրիշ բառի. իսկ առաջինները մենակ լրացում չեն դառնում և մենակ չեն գործածվում, այլ իրենց հետ ունին միշտ մի գոյական խնդիր, որ և դառնում է լրացում մի ուրիշ բառի։ Օրինակ՝ կարելի չէ ասել՝ համարս բերեց, համար խոսել, դեպի վազել, առանց մնալ, այլ միայն՝ ինձ համար բերեց. մեկի համար խոսել. դեպի մի բան վազել. առանց մի բանի մնալ. բայց կարելի է ասել՝ մոտ վազել և մի բանի մոտ վազել, մոտս գալ. վրա վազել և մի բանի վրա վազել. հետս եկ և ինձ հետ եկ. մեջ ընկնել և մի բանի մեջ ընկնել, մեջս այսքան ուժ։ Մյուս կողմից անիսկական կապերը կապական բառերից նրանով են տարբերվում, որ առաջինները, թեպետ և գոյական են, բայց առնում են տրական խնդիր՝ ինձ վրա, քեզ հետ, ուրեմն կորցնում են իրենց գոյական նշանակությունը. մինչդեռ երկրորդները, թեև գոյական են, գործ են ածվում մի ստացական ածականով կամ սեռականով՝ իմ առաջ, քո դիմաց, իմ փոխարեն ոչ ինձ առաջ, քեզ դիմաց, ինձ փոխարեն. իսկ եթե ածական կամ մակբայ են, գործ են ածվում իրենց իմաստի համեմատ մի հոլովով։ Անիսկական կապերն ուրեմն մի տեսակ միջին տեղ են բռնում իսկական կապերի և կապական բառերի մեջ. դրանք կապեր են միայն այն ժամանակ, երբ անփոփոխ և առանց հոդի մնալով՝ մի տրական խնդիր են առնում. բայց դեռ կատարելապես կապ չեն դարձած, որովհետև կարող են հոդ առնել, մենակ գործածվել և հոլովվել սեռական կամ ստացական խնդրով։

•

1. ԻՍԿԱԿԱՆ ԿԱՊԵՐ

189. ***Իսկական կապերից*** **ի, ց, առ, ըստ, հանդերձ, հետե** *գրաբարից են մտած աշխարհաբարի մեջ։ Գրաբարից առած մի քանի պատրաստի ձևերի մեջ գործ է ածվում և ընդ նախդիրը. ինչպես՝ մերթ ընդ մերթ, օր ընդ մեջ, մեջ ընդ մեջ, տեր ընդ քեզ, ընդ ամենը, ընդ նմին և այլն։ Փայլակն սկսավ շողալ մերթ ընդ մերթ.— Նրա տենդը օր ընդ մեջ (երկու օրը մեկ) է բռնում.— Այս զրույցի ժամանակ Լիդիա Պավլովնան լսում էր բարեկամուհուն ուշադրությամբ և ընդ նմին աշխատում, որ... (Մուր.)։ Վճռվեց... Ղունկիանոսին վաղ ընդ փույթ ճանապարհ դնել դեպի Վարագ (Պռ.)։ Թռչունները երգում էին հատ ընդ հատ (Մուր.)։*

140. ***Ի, ց, առ, դեպի, մինչև*** *նախադրությունները նշանակում են շարժման ուղղություն դեպի մի առարկա կամ տեղ և դրվում են հայցականի կամ տրականի հետ, որոնք շարժման հանգումը ցույց տվող հոլովներն են։ Այս նախդիրներն ուրեմն միայն որոշում են հոլովի նշանակությունը։*

141. ***Ի*** *նախդրով հայցականը ցույց է տալիս գործողության նպատակը, ինչի համար սահմանված լինելը, երբեմն և պատճառը։ Օրինակ՝ Ի պատասխան ձեր նամակին՝ պատիվ ունիմ հայտնելու։ Երիտասարդները, որոնք անշուշտ սիրում են իրենց գործը, չեն կամենում նույնիսկ*

ի սեր այդ գործի իրենց փառասիրության մի փոքրիկ մասը զոհել.— Մեր վարժապետները պարտավոր են ի սեր գործի հաջողության՝ զոհել իրենց ինքնասիրությունը (Մուր.)։ Ի սեր Աստուծու (Հմմտ. § 99. ծ. Աստուծու սիրուն)։ Ի պատիվ նրա՝ պետք է ասել, որ մոր նման խնամք է տանում գյուղացիների վրա (Մուր.)։ Նա ի պատիվ մեր՝ Մելիք Ներսոյի գյուղից արքունի վճարքը բարեհաճեց հեռացնել.— Ի նշան խորին երախտագիտական հավաստյաց՝ Սարգիս էֆենդին ու ղայմաղամը մոտեցան և համբուրեցին փաշայի վերնազգեստի քղանցքը.— Ի ցավ սրտանց՝ պետք է ավելացնել, որ... (Պռ.)։ Ի նշան սիրո և բարեկամության, ի հիշատակ պահել մի բան։ Ճարտարապետը կառուցելիք տան նախագիծն ու նախահաշիվը ներկայացրեց ժողովին ի վերջնական հաստատություն (Լր.)։ Վճիռը ներկայացրել են Վեհ. Կաթողիկոսին ի տրնօրինություն (ի բարեհայեցողություն), իսկ նա ետ է ուղարկել ի գործադրություն (Լր.)։ Հայտարարել ի գիտություն հասարակության. ի վաճառ հանել, ի ցույց դնել մի բան. հայտնել ի տեղեկություն. ի լուր ամենքի կարդալ։ Այցելուն գիտենալով թե յուր տվածն արձանագրվում է և այն էլ ի տես ուրիշ այցելուների, կնվիրաբերեր ավելի առատորեն (Մուր.)։

Ծան. 1. *Ի պատիվ կապակցության հետ երբեմն տրական հոլովով է դրվում այն անձի անունը, որին ուղղվում է պատիվը. օրինակ՝ Սուրճն արդեն... վերջին անգամ տաքցված էր ի պատիվ մեզի (մեզ ի պատիվ)։*

Ծան. 2. *Ի նախդիրը ձայնավորներից առաջ փոխվում է յ=h4, կամ երբեմն դրվում է գրաբարի հոգնակի հայցականի հետ, կամ թե ունի դեպի, մինչև նախադրությունների նշանակությունը։ Այս կիրառությունները սակայն գրաբարից առած պատրաստի ու մի տեսակ քարացած ձևեր են. օրինակ՝ Հանուն ճշմարտության խոսել։ Նա փոքձեցի խոսել նրա հետ հանուն գրական օրինավորության (Լեո)։ Հօգուտ մեկի աշխատել.— Ի զարմանս աշխարհի.— Ի շնորհս սահմանադրության (Պռ.— շնորհիվ, տե՛ս § 120. 2. ծ.)։— Ընկերիս հանձնարարած ծրագրի մի մասն արդեն ի կատար է ածված.— Քինվորական զորությունն ի գործ մղվի (Պռ.)։ Ի դերև հանել, ելնել։ Ի զուր խոսել.— Օրն ի գլուխ (ամբողջ օրը մինչ գլուխ, վերջ) աշխատում են.— Ձմեռն ի գլուխ.— օրն ի բուն տքնել.— Գետն ի վեր երթալ (գետը բռնած՝ դեպի վեր)։ Գետն ի վար.— երթան ի վեր, հիմն ի վեր տապալել (Պռ.)։ Ծայրե ի ծայր, գլխե ի գլուխ, բացե ի բաց արգելել (Պռ.— տե՛ս § 116. 2. ծ. 1)։*

142. Ց *նախդիրը՝ հայցականի հետ՝ ունի մինչև նախադրության նշանակություն և գործ է ածվում սակավաթիվ բառերի հետ. ինչպես են՝ ցտեսություն, մինչև ցնոր կարգադրություն. ցմահ, ցգերեզմանն, ցպահանջ, ցայսօր, ցայժմ, օրեցօր և այլն։*

143. Առ *նախդրով հայցականը ցույց է տալիս՝*

1. Այն անձը կամ իրը, որին ուղղվում է գործողությունը կամ մի հոգեկան վիճակ։ Համանիշ է դեպի նախդրին։ Օրինակ՝ առ Աստված կարդալ, աղոթել, դառնալ։ Աղոթք է անում առ ամենակալ տերը (Պռ.)։ Քո հույսն առ Աստված։ Մի՞թե փոքր բան է իմ առ Աստված ունեցած հավատքը։ Հայոց ազգի սերն առ Անահիտ տիկինը (Կ. Կոստ.)։ Նրա

աերն առ հայրենիքը։ Հող է մարդր և հող պիտի դառնա. աստված է հոգին և առ Աստված պիտի դառնա (Ե. Տեմիրճիպշ.)։ Ողորմած առ աղքատները։ Հանձնաժողովի առ իս ունեցած աշառության և առ... սրբազանն ունեցած քնքշության նշաններն են և հետևյալները...

2. Հաջորդություն համազգի բաների հետևյալ տեսակի գործածություններ մեջ. ինչպես՝ Տող առ տող արտագրել. քայլ առ քայլ առաջ ընթանալ. տառ առ տառ գրել. բառ առ բառ թարգմանել։ Ես հետևում էի Պետոյին քայլ առ քայլ (Մուր.)։ Ճակատ առ ճակատ կռվել։ Դեմ առ դեմ գալ. երես առ երես բերել։ Ժամանակ առ ժամանակ մի բան անել։ Ինքնաճանաչությունը սակավ առ սակավ մուտք էր գործում յուր սաների ոտք դրած կողմերը.— Մի առ մի պատմեցի ամեն բան.— Փոքր առ փոքր նախապատրաստել (Պռ.)։ Փոքրիկ մկանունքները տակավ առ տակավ փոխվում էին ալիքների (Մուր.)։

3. Ժամանակը, մինչև որը հարատևում է մի գործողություն կամ դրություն, որ պիտի փոխվի այդ ժամանակն անցնելուց հետո, օրինակ՝ Ես այժմ, առ մի օր, առ այսօր, առ ժամանակ այսքանը բավական է։ Անձնասեր «ես»-ի ձայն լռել էր նրա մեջ առ րոպե (Մուր.)։ Առ մեկն հունվարի եկամուտ եղել է...

Ծան. Գրաբարից առած մի քանի պատրաստի կապակցություններ մեջ առ նախդիրը գործ է ածվում և ուրիշ նշանակություններով. օրինակ՝ Առ այդ կասեմ, կպատասխանեմ։ Առ ոչինչ համարել։ Առ ոչինչ գրեր մոր թախանձանքներն ու արտասուքը (Մագ.)։

144. *Դեպի նախդրի խնդիրը, երբ առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանուն է, դրվում է տրական հոլովով. օրինակ՝ դեպի ինձ, դեպի քեզ, դեպի մեզ, դեպի ձեզ. իսկ երբ երրորդ դեմքի դերանուն կամ անուն է, դրվում է սովորաբար հայցական. օրինակ՝ դեպի ինքը, դեպի նրանք. բայց պատահում են նաև տրական հոլովի հետ գործածություններ՝ դեպի իրեն, դեպի նրանց։*

Դեպի ցույց է տալիս դիմում, ուղղություն դեպի մի անձ, իր կամ տեղ, որին կարող է հասնել և չհասնել գործողությունը։ Խնդիրը ցույց է տալիս միայն ուղղությունը որոշող կետը, կամ այն անձը կամ իրը, որին ուղղվում է մի հոգեկան վիճակ, հույզ, կիրք և այլն։ Օրինակ՝ Թողեք ձիերը և հեռացեք դեպի մի կողմ.— Ընկերը... մի քանի քայլ առաջացավ դեպի ավազակները։— Ձեռը մեկնեց դեպի իր եղբայրը։ Դեպի երկինք, դեպի այն աստղն էր նայում։ Միամիտ ոչխարները դեպի քեզ կվազեն.— Եկավ դեպի իրան.— Ետ դառնալով տանուտերը դեպի նրան՝ ձայն տվեց.— Երևում է, որ մայրը դեպի իրանց է գալի.— Ետ դարձավ դեպի կաչաղակն ու ասեց.— Ետ դառնալով դեպի ժողովրդին՝ ասեց.— Գնաց դեպի ներքև, դեպի Աշտարակ, դեպի արևելք (Պռ.)։ Ես ևս իմ կողմից առաջացա դեպի նրանց (Մուր.)։ Կաթոլիկ քարոզիչները... մոլորության և տգիտության մեջ են պահում դեպի իրանք կու-

բորևն մեծ համարմունք ունեցող խուժանին (Պռ.)։ Ամեն ղզացմունք դեպի յուր ծնողը, դեպի յուր ազգն ու հայրենիքը մեռած էր նրա սրտում (Րաֆֆի)։ Սերը դեպի հեգ ժողովուրդը (Լ. Ման.)։ Նրա այդ ժպտի մեջ այնքան ծաղր կար ուղղված դեպի ընկերս.— Ինքը մի առանձին սեր, մի թաքուն գորով է տածել դեպի այդ հեռավոր եղբայրները.— Ամեն անգամ, երբ խոսք է եղել այդ ազգակիցների մասին, յուր սիրտը թունդ է առել ու թռել դեպի նրանց (Մուր.)։ Նա ցույց է տվել յուր համակրությունը դեպի հայերը։ Հավատք և հարգանք ներշնչել դեպի մարդկությունը։ Լինում էին... անտարբեր դեպի կարգ ու կանոնը (Մուր.)։ Համմտ. առ նախդիրը § 143. 1։

Նաև. 1. Դեպի նախդրի խնդիրը, երբ տեղի պարագայի նշանակություն ունի, իրրև պատասխան դեպի ո՞ւր հարցի, դրվում է սեռական հոլովով կողմ բառի հետ. օրինակ՝ Սարսափած նայեցի դեպի ժայռի կողմը։— Նա գլուխը ետ դարձրեց դեպի կտանց կողմը (Պռ.)։

Նաև. 2. Դեպի կազմված է դեպ բառից և ի նախդրից. ուստի երբեմն, մանավանդ երբ խնդիրը ձայնավորով է սկսվում, գործ է ածվում դեպ ձևով. օրինակ՝ Որոշել չափն այն համակրության, որ երիտասարդ սրտերը տածում էին դեպ իրար (Մուր.)։

145. Մինչև *(հնացած ձևով՝ մինչ, մինչևի, մինչի) նախդիրն առնում է հայցական կամ տրական խնդիր, ճիշտ ինչպես* **դեպի** *նախդիրը։ Խնդիրը ցույց է տալիս տարածության, ժամանակի տևողության կամ թվի վերջին սահմանը, որին ուղղվում, հասնում է գործողությունը. օրինակ՝ «Նա գնաց դեպի Աշտարակ», «Նա գնաց մինչև Աշտարակ», «Նա գնաց Աշտարակ» խոսքերից առաջնի մեջ Աշտարակ ցույց է տալիս այն տեղը, որին լոկ ուղղվում է գնալու գործողությունը, առանց որոշելու, թե գնացողը հասնո՞ւմ է Աշտարակին, թե չէ. երկրորդի մեջ գնացողը հասնում է Աշտարակին, բայց չի որոշվում, թե նա արդյոք մտնո՞ւմ է ներս, թե չէ. իսկ երրորդի մեջ Աշտարակ ցույց է տալիս այն տեղը, ուր ուղղվում, հասնում և ներս է մտնում գնացողը (տե՛ս § 67. 1)։ Այսպես և «Ուսումը պիտի տևի մինչև մայիսի 25-ը» խոսքի մեջ որոշվում է «ուսման տևողության վերջին ամսաթիվը, բայց անորոշ է մնում, թե արդյոք մայիսի 25-ին էլ ուսում պիտի լինի՞, թե չէ։ Այսպես և՝ Նա մինչև տասնուհինգ մարդի համար սեղան բաց արեց։ Մինչև օրս նրա բերնից այսպիսի խոսք լսված չէ։ Մինչև այսօր տեսնված չէ, որ... Մի-րուքը մինչև գետին էր հասնում։ Մինչև Շուշանի զարդարվելը ժամ կարձակվի (Ա.)։ Այդ պահեք մինչև վաղը, մինչև գատիկ։ Այսքանն էլ բավական է, որ ընթերցողները հասկանան, թե մինչև ինչ աստիճանի է հասնում իմ հակառակորդների անբարեխղճությունը (Հեո)։ Արտաշես Ա.-ից մինչև Մեծն Տիգրանը ութսունչորս տարի է։*

146. Ըստ *նախդիրը դրվում է տրական հոլովի հետ և ցույց է տալիս մի բանի համեմատ լինելը. կամ դատելու, գործելու մի հիմունք։ Օրինակ՝ Դատել ըստ օրենքի. վարձատրել ըստ արժանավորության, ըստ մեծության, ըստ խղճի, ըստ սովորության։ Ըստ երևութին նա իրա-*

վունք ունի։ Նա պիտի աշխատե ըստ իւր կարողութեան.— Գարա-արխաչի գոտին, ըստ սովորականին, ծածկված լինելով մշուշով անտեսանելի էր դարձնում այդ կողմի ցամաքը (Մուր.)։

Համանիշներն են՝ **համեմատ, համաձայն, նայելով, պես, չափ.** *օրինակ՝ Կահավորել մի փառավոր տուն համաձայն իւր նուրբ ճաշակի պահանջներին (Մուր.)։ Ապա Օսման էֆենդու հրամանին համաձայն... գնում է իւր սովորական տեղը.— Նա իւրաքանչիւրին իւր տարիքին, դիրքին և հասկացողութեան համեմատ պատասխաններով գոհացնում էր (Պռ.)։*

Տե՛ս. 1. Գրաբարից առած պատրաստի ձևեր են՝ ըստ մեծի մասին, ըստ օրինի, ըստ ինս, ըստ իմ կարծեաց (իմ կարծիքով), ըստ այսմ, ըստ այնմ։ Նանոթանալ գյուղատնտեսական այս ու այն ճյուղին և, ըստ այնմ, հարկ եղածը սովորեցնել գյուղացիներին։ Նույնպես և՝ Օր ըստ օրէ, մի ըստ միոջէ, որոնց մեջ ըստ *նշանակում է՝ հաջորդությունը, հետևելը, եռևից լինելը։*

Տե՛ս. 2. Ըստ դրվում է իսկապես ներգոյականի նշանակությամբ տրականի (գրաբարի ներգոյականի) վրա և սկզբնապես պարզել է միայն այն նշանակությունը, որ հոլովն առանց այդ նախդրի էլ ունի. այժմ սակայն քիչ անգամ հոլովը մենակ գործ է ածվում այդ նշանակությամբ. օրինակ՝ Պռոշյանի հետևյալ խոսքերի մեջ՝ Քո ձեռի տակին քո բնությունին կմեծացնես նրան (ըստ քո բնության, քո բնության համեմատ)։ Քո ճավառին ես մեծացնում նրան (տե՛ս § 105)։ Այժմ նույն նշանակությունը սովորաբար արտահայտում է միայն գործիական հոլովը (տե՛ս § 120. 2, 126. 2)։

147. Հանդերձ *ետադրությունը դրվելով գործիականի հետ՝ միայն պարզորոշում է հոլովի նշանակությունը (§ 126. 3)։ Յույց է տալիս՝*

1. Միասնություն, օրինակ՝ Անգլիայի համար կարելի է ասել, թե հասարակապետություն է թագավորով հանդերձ (Լր.)։ Մեկին ընտանիքով հանդերձ ճաշի հրավիրել։ Անհանգիստ շարժումն աննելով հանդերձ, Կիրիլ Կարպիչը մի կողմը դրավ ծխափողը (Մուր.)։ Ապա խնդրեց, որ յուր սրտալիր բերկրանքը (աղային) մատուցանելով հանդերձ՝ հայտնե յուր բերկրալիր պատրաստականությունը... (Պռ.)։ Գրաբարից պատրաստի փոխառությամբ՝ այսու հանդերձ, այնու հանդերձ։

2. Հակառակ հիմունք, **հակառակ, չնայելով** *բառերի նշանակությամբ. օրինակ՝ իր բոլոր միամտությամբ հանդերձ՝ նա մեզ խաբեց։ Այդ ամենն անելով հանդերձ՝ չկարողացա նրան հանգստացնել։*

Տե՛ս. Հանդերձ իսկապես միասնության գործիականի հետ դրվող մակբայ է, որ կարող է և համանիշ միւսին մակբայով փոխանակվել. օրինակ՝ Արտավազդ ձիովը միասին մի անդունդի մեջ ընկավ (Պալ.)։

148. Հետե, ի վեր *ետադրությունները դրվում են բացառականի հետ և պարզորոշում են հոլովի նշանակությունը՝ ցույց տալով գործողության կամ դրության շարունակ տևողությունը ամբողջ անցյալ ժամանակամիջոցում, որ ձգվում է մինչև ներկան կամ մի ուրիշ ժամանակակետ։ Բացառականը ցույց է տալիս ժամանակի սկզբնակետը։*

Օրինակ՝ Այն օրից ի վեր նա չի հանգստանում։ (Կարիէլէ էր ասել պարզապես՝ այն օրից. ինչպես՝ Նշանադրությունը կատարված օրից Ղունկիանոսի համար պաս եղավ Արփիկենց բակին նայելը.—Պռ.)։ Նա մի տարուց ի վեր հիվանդ պառկած է։ Հայ ժողովուրդը տարիներից ի վեր սպասում է... Նա 1896 թվի ջարդերից ի վեր առանձին հետաքրքրությամբ է զբաղվում հայերի կյանքով (Լր.)։ Նա սկսավ այնուհետև տան գործերից շատերը յուր ձեռքով անել և այն օրից ի վեր այնքան առողջացավ, որ... (Մուր.)։— Ես երեկվանից՝ տիրոջս բերանից տխուր լուրն առնելեն հետե, պահքս բռնել եմ.— Այս ծառն է, որ քանի ժամանակից հետե ուսումնարան է դարձել մեր առաջադեմ աշակերտուհուն (Պռ.)։ Ընթերցանությունն առանձնապես զարգանալ բսկրսեց այն օրից հետե, երբ... (Նոր Դար. 1910, № 11)։ Վաղուց ի վեր, վաղուց հետե։

Համանիշ են՝ սկսած և *ժողովրդական՝* դեպը, դենը *բառերը. օրինակ՝ Ջրօրհնեքից դեսը հազիվ այս գիշեր ժամ պիտի գնային.— Հարսանիքից դեսը մոր երես չեն տեսած (Հարսները).— Երեկվանից դեսը հարյուր հետ կռիվ է ձգել.— Հիմիկից դենը (հիմկվանից դենը, հիմիկվանից սկսած) գերեզմանիս վրա յոթը թիզ մանուշակ դուրս կգա.— Ըստուց դենը (սրանից դենը,— այսուհետև, հայսմ հետե) դո՛ւ խաբար տուր (Պռ.)։ Համմտ. § 113. 3։*

149. Համար *ետադրությունը դրվում է տրականի հետ՝* ինձ *համար,* ես *համար. բայց ծագած լինելով գրաբարի* ի ճամար հայցականից՝ երրորդ դեմքի անձնական և ցուցական դերանունների հետ ասվում է սեռականով կամ ստացականով՝ սրա համար, դրա համար, նրա համար, իր համար կամ իրեն համար (ժողովրդ. ձևով՝ իրա համար)։ Գոյական խնդիրն առանց և հոդի է մնում՝ Տիգրանի համար, իմ աշակերտի համար։ Հնացած են արդեն առաջին և երկրորդ դեմքի դերանունների սեռականի կամ ստացականի հետ գործածությունները՝ իմ համար, մեր համար։ Քո համար ավելի ձեռնտու է.— Ձեր համար եմ ասում (Պռ.)։*

150. Համար *դրվելով տրականի հետ միայն պարզորոշում է հոլովի նշանակությունը (տե՛ս § § 94, 99, 100)։ Այսպես՝* ճամար *ետադրությամբ տրականը ցույց է տալիս՝*

1. Առարկան, որի օգտին կամ վնասին լինում է մի բան, որին հատկացվում, սահմանվում է մի բան, կամ որի վերաբերմամբ, նրկատմամբ կա մի դրություն, հատկություն, հույզ, ազդեցություն։ Օրինակ՝ Գայլն որ ամպից վախենար, իրեն համար բերդ կշիներ (Ղ.)։

---

* *Գրաբարում արդեն կա աշխարհաբարի նշանակությամբ գործածությունը, ինչպես հորինացու հետևյալ խոսքերի մեջ. «Եւ միայն զառաջին որդին, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեանն». «Յորում շինեալ եւ տուն հովանոց... ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ» (Բ, ը. դ.)։*

Գիտեր, թե նա որքան է հարմար առաջիկա ճանապարհորդության համար (Մուր.)։ Նա գիշեր ցերեկ Սոսի համար է աշխատում։ Մեկի կամ մի բանի համար մի բան անել, շինել, առնել, գնել, բերել, տանել, ուղարկել, պահել, ետ ձգել, բաժին հանել, սեզան բանալ, ցանկանալ և այլն։ Պատվաստ չեն դնում, որ էգուց (այդ ծառն) իրենց համար պտուղ տա.— Աստված ողջ պահի նրան քեզ համար։— Աստված նրան քեզ համար չի ստեղծել (Պո.)։ Նույնիսկ օգնության կամ աշխատության վերաբերյալ գործերում նա յուր համար ուներ որոշ չափ ու կշիռ (Մուր.)։ Ես էլ ինձ համար մի անունի տեր եմ.— Տեղումդ քեզ համար հանգիստ թեք ընկած ես.— Ջորս կաժ էլ պատարագի համար է պետք (Պո.)։— Ո՛վ կմեկնե այս՝ իմ տարիքի համար դժվարալուծ խնդիրները.— Ճանճերի բզզոցը մի դժոխային երաժշտություն էր ականջներիս համար (Գ.-Ք.)։ Ինչ որ ձեզ համար լավ է, անպատճառ չպիտի ինձ համար էլ լավ լինի։ Նրա համար տխուր է այն գիշերը, որ... Ինձ համար փողն ու հողը մին է.— Այդպիսի բաներն ինձ համար խաղ ու պար են.— Ուրիշների համար բարիկենդան, ուրախություն, մեզ համար սուգ ու շիվան (Պո.)։ Ձեզ համար դժվար է, հեշտ է, փառք է, ամոթ է, անպատվություն է և այլն։ Բոլոր կողմերն էլ միևնույն են ինձ համար (Մուր.)։

2. Հիմունքը,— լինի նպատակը, որին հասնելու համար լինում է մի բան, թե շարժառիթ պատճառը։ Համանիշ են՝ **նպատակով, մտքով, դիտավորությամբ** (տե՛ս և § 100), **պատճառով, սիրու, ի սեր, խաթեր** (տե՛ս և § 99)։ Օրինակ՝ Մարդիկ հաճախում են թատրոն ոչ միայն զբվարճանալու, այլև կրթվելու համար։ Հեթումն իր խոսքերը հաստատելու համար մի առակ էր վրա բերում.— Այս հացի ժամանակ չէ, թե նրա համար կանչած լինի (Պո.)։ Կողմնացո՞ւյց. ա՞յդ ինչու համար է. ծովերի վրա՞ պիտի թափառես (Մուր.)։— Զվազեղի համար թավի կոթը պաչում են.— Ինքը խիստ մեծ ու արժանավոր նպատակի համար է զրկում իրեն ամարանոցի զվարճություններից (Մուր.)։ Նա իր քրոջ համար է լալիս։ Ինձ համար անհանգիստ մի՛ լինիք։ Հայրենիքի, հավատի համար կռվել, մեռնել։ Ամեն փուշ բանի համար ի՞նչ ես բարկանում։ Ինչի՞ համար ես ուրախանում։ Նա մի թեթև հանցանքի համար պատժվեց։ Անուշ արա՛ իմ խաթեր համար (Պո.)։

3. Առարկան, որին վերաբերում է գործողությունը (մտավոր վերաբերմունք), իբրև խնդիր ասել, խոսել, դատել, մտածել, վիճել և այլն բայերի։ Համանիշ են՝ **վրա, մասին** (տե՛ս և § 114)։ Օրինակ՝ Ի՞նչ է ասում գիրն այս տարվա համար.— Ինձ էլ շատ բան են ասում քեզ համար.— Դրա համար հետո կխոսենք.— Քանի միտք եմ անում վարդիթերի համար.— Գարեգինն մի կողմ քաշեց ու հարցրեց Սոսի համար, թե... Գնաց վերի աշխարհքն իր հոգու համար խաբար իմանալու.— Երազ է եկել այդ բանի համար (Պո.)։

Ճառել մի բանի մասին.— Դրա մասին էլ ես կհոգամ.— Նրանք յուր մասին պետք է որ աննպաստ բաներ խոսած լինին.—Լավ, վատ

գաղափար ունենալ, բացատրություն տալ մի բանի մասին.— Այս ա-մենի մասին նա մտածել, երազել էր.— Նա կարող է ինձ վրա ծիծաղել, եթե ես դրա մասին խոսեմ նրա հետ.— Ցանկացավ լսել մի բան նաև օրիորդ Ագելինայի մասին.— Խոսք է եղել այդ ազգակիցների մասին (Մուր.)։ Այսպես և մի բանի համար կամ մասին՝ լուր հաղորդել, տեղեկություն տալ, զեկուցանել, գրել, հաշիվ տալ և այլն։

Նաև. Մասին բառը, որ ծագած է գրաբարի ի մասին ներգոյականից, այժմ արդեն գրեթե ետադրություն է դարձած. բայց իրրև գոյական դեռ առնում է սեռական կամ տատցական ինդիր՝ իմ մասին, քո մասին. դործ է ածվում նույնպես և այս, այդ, այն ցուցական ածականներով և նույնիսկ ս, դ տատցական հոդերով. օրինակ՝ Թերթերը գովեստով խոսեցան իմ մասիս (Անահիտ, 1909, թ. 1—2. եր. 16)։ Բայց քե ինչ խոսում ու մտածում է այդ միջոցին ինքը Կամսարյանը, այդ մասին ավելի լավ է լռել.—Սկսան ամեն կողմից հանդիսավոր խոստումներ անել այն մասին քե... (Մուր.)։ Ես այդ մասին կասկած անգամ չունիմ։— Այս մասին գոհ պետք է լինել տեղացի մի բանի կարողության տեր աղաներից (Պո.)։

151. Առանց *նախադրությունը տրական հոլովի, երբեմն ժողովրդական ձևով նաև հայցական հոլովի հետ, ցույց է տալիս հեռացած, բաժանված լինելը, կամ չլինելը, պակասություն (հականիշ են՝ հետ, հանդերձ և գործիական հոլով § 126. 3)։ Օրինակ՝ Ոչ ոք չի կարող առանց հացի ապրել (հականիշ՝ մարդ հացով կապրի)։ Նա առանց փողի ճանապարհ ընկավ։ Նա առանց ինձ, առանց մեզ գնաց։ Ես չեմ կարող առանց քեզ ապրել (հականիշ՝ քեզ հետ)։ Ի՞նչ արժե կյանքն առանց բարեկամի։ Գիշերն առանց քնելու (նույնանիշ՝ անքուն) լուսացնել։ Առանց պաշտոնի (անպաշտոն) մնաց։ Առանց արգելքի (անարգել) տեղ հասանք։ Առանց նրան իմ օրս մի օր չէ.— Առանց նրա խոսքին բան չբռնեմ.— Մեկն իր երեխայի հետ էր եկել, մյուսն՝ առանց երեխայի (Պո.)։ Արքայությունն առանց քեզ տարտարոս է ինձ համար.— Առանց գործ մեռած է մարդը (Ջիվ.)։ Առանց այն էլ նա շատ վշտացած է։ Առանց հաց ու ջուր ապրել չի լինիլ։*

152. Բացի *նախադրությունը դրվում է բացառական հոլովի հետ, հաճախ ժողովրդական ձևով՝ նաև հայցականի հետ։ Ցույց է տալիս՝*

1. Ի բաց առնել, դուրս ձգել մի բանի միջից, ուր պիտի լիներ ըստ երևութին։ Օրինակ՝ Նա ամբողջ շաբաթն աշխատում է, բացի կիրակի օրերից (այսինքն կիրակի օրերը չի աշխատում)։ Բացի քեզնից՝ ես ուրիշ տեր ու տիրական չունիմ։ Ամենքը՝ բացի քեզնից՝ հակառակ էին։ Բացի հացից՝ նա ուրիշ բան չի ուտում։ Բացի քեզնից՝ ես ո՞ւմ դիմեմ (Ջիվ.)։ Բացի տերտերից և յուր որդուց՝ գյուղումը ոչ ոք կարդալ չգիտեր (Պո.)։ Բացի Աստված՝ չէ կարող ոչ ոք լինել օգնականս.— Բացի այս չոր երգը՝ չունիմ ուրիշ բան (Ջիվ.)։ Տեսնելու արժանի ոչինչ չուներ յուր շուրջը, բացի փոքրիկ բանջարանոցը, որ գտնվում էր եկեղեցու առաջ (Մուր.)։

2. Մեկդի դնել մի բան մի բանի միջից, ուր որ է՛ իրաք. չհաշվել

ոչ թե դուրս ձգելով, այլ ըստ ինքյան մեջը համարելով։ Համանիշ՝ **չհաշված**, ժողովրդական **թողըզ**։ Օրինակ՝ Բացի այդ, նա երկրորդ ու երրորդ մասերում (էլ) հանձն առավ լուրջ մասնակցություն.— Բացի այս, դուք մեզ մոտ կտեսնեք գեղեցիկ կարգեր ու սովորություններ, որոնք... Բացի հասարակ ու շաբաթական պասերը, նրանք պահում էին նաև երեք «մեծ պասեր».— Բացի թանգարանին տված նվերը, անհրաժեշտ է նաև միաբանության օգտին նվիրաբերել մի բան (Մուր.)։ Օրով բանող մշակը բացի իր օրավարձից՝ իր սնունդն էլ ստանում է։ Թողըզ հացը՝ կերակուր էլ տվին աղքատին։ Աստվածապաշտ ժողովուրդն այնքան մատաղ ու կարասներով գինի խոստացավ, թողըզ իրանց գանձանակը, որ... (Պռ.)։

Բացի նախադրության համանիշ է **զատ** ածականը, որ գործ է ածվում իբրև ետադրություն բացառականի հետ. երբեմն նույն նշանակությամբ նաև **դուրս, ջոկ, անկախ** բառերը։ Օրինակ՝ Համալսարանը նոր զբաղմունքներից զատ, տվավ նրան նաև նոր բարեկամներ.— Սրբանցից զատ, ես գնել եմ նաև մի քանի հատ հայերեն գրքեր.— Որ հոգևորականն աղոթելուց, մկրտելուց և թաղելուց զատ ուրիշ շատ վսեմ պարտականություններ էլ ունի, այդ ես չեմ հերքում.— Օրենքն արգելում է իրենց՝ զոհի մսից զատ, ուրիշ միս ուտել (Մուր.)։ Բայց որովհետև համբերելուց անկախ՝ անհրաժեշտ էր մաքրել գլխարկը, ուստի... (Մուր.)։ Թե ինձնից ջոկ յար բռնես, դու լերդապատառ լինես (Ժող. երգ.)։

Ծան. 1. Ժողովրդական **թողըզ** բառը կազմված է **թող** հրամայականից և **ըզ** նախդրից, բայց այժմ արդեն մի ետադրություն է. ասվում է նաև **թողըզ ես, թողըզ դու, թողըզ մենք**։ **Թողըզ նրանք**, դեռ նրանց խնամիներն էլ այնտեղ էին։ Այս նախադրության նմանությամբ հայցականի հետ է սկսել գործածվել և համանիշ բացի նախադրությունը, որ կազմված է բազ (զատ, ջոկ, հեռու, ուրույն, դուրս) բառից և ի նախդրից և իր նշանակության համեմատ խնդրում է բացառական հոլով։

Ծան. 2. Սխալ է բացի նախադրությունն իբրև ետադրություն գործածելը՝ քեզնից բացի, սրանից բացի և այլն, որ առաջացել է համանիշ ջոկ, զատ և ավելի ժողովրդական լեզվի մեջ շատ գործածական թուրքերեն սավաճի բառի ազդեցության տակ, ինչպես՝ Փողոցներում քամու վզզոցիցը սավահի սատանա չի ժաժ գալի (վզզոցիցը զատ, բացի վզզոցից).— Քեզնից սավահի ոչոք չի կարող պառավին բան հասկացնել (բացի քեզնից, քեզնից զատ).— Յրտից սավահի ոչինչ խեր չտարավ.— Վարդիթերն ինձնից սավահի ուրիշի վրա միտք անի (Պռ.)։

153. Քան, ավելի **քանց** (ծագած գրաբարի **ան** ըզ ձևից), գործ է ածվում ժողովրդական լեզվի մեջ հայցական հոլովի հետ, անձնական դերանունների տրականի հետ՝ քանց ինձ, քանց քեզ։ Յույց է տալիս հավասարության բաղդատություն՝ պես, չափ, նման բառերի նշանակությամբ. երբեմն և առավելության բաղդատություն։ Օրինակ՝ Քան(ց) գետ գնաց, քան(ց) ավազ մնաց (Ա.— գետի պես գնաց, ավազի պես մնաց)։ Քան պուտը կարմիր չկա, որ ճղես սիրտը սև է (Ա.— պուտի պես, պուտի չափ կարմիր բան չկա.— կարող է հասկացվել և պուտից

ավելի կարմիր)։ Քան չաղացի քարը ծանր չկա, որ սեպի տանք՝ կթեթևանա (Ա.)։

2. Անիսկական կապեր

154. *Անիսկական կապերը՝ պես, չափ, տեղ, հետ, դեմ, մոտ, վրա՝ իրենց խնդիրը, երբ առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանուն է, առնում են տրական հոլովով՝ ինձ պես, քեզ հետ. երրորդ դեմքի անձնական ու ցուցական դերանունների հետ սակայն ասվում են դեռ սեռականով կամ ստացականով՝ սրա պես, նրա հետ, իր վրա կամ իրեն վրա։ Գոյական անուն խնդիրը սովորաբար առանց և հոդի է մնում՝ Տիգրանի պես, իր ընկերի հետ։ Պատահում են հաճախ նաև առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականի կամ ստացականի հետ գործածություններ՝ մեր, պես, ձեր վրա, քո տեղ (տե՛ս §§ 138. 2, 149)։*

Ծան. *Նման ձևով մի քանի ածականներ՝ նման, համաձայն, համեմատ, հավասար, հակառակ և այլն, որոնք առնվում են իրրև կապական բառեր, հաճախ գործ են ածվում ստացականով կամ սեռականով, որը մտածվում է սակայն իբրև տրական. օրինակ՝ Այսպիսի քաշասիրտ դյուցազները պետք է խելքի հասունությամբ էլ գերազանցեր յուր նման և ոչ յուր չափով ստեղծված արարածից.— Ձեր նման անհողդողդն.— Հողն իմ նման մոր գլխուն.— Հրավիրեց ինձ յուր հավասար նստել (Պռ.)։*

155. Պես *որակի կամ ձևի ուղղական կամ հայցական է (§ 63. 1. բ), որ մի տրական խնդրով՝ կորցնելով իր նշանակությունն՝ առնվում է իբրև ետադրություն և ցույց է տալիս՝*

1. Գործողության անմիջական հաջորդություն, մի գործողության անմիջապես մի ուրիշ գործողությունից հետո կամ նրա հետ իսկույն ևեթ լինելը։ Այս նշանակությամբ պես գործ է ածվում անորոշ դերբայի հետ, որ սովորաբար և հոդ է առնում, և իսկապես միայն պարզորոշում է տրական հոլովի նշանակությունը (տե՛ս § 104. 4. ծան.)։ Օրինակ՝ Լույսը բացվելուն պես ճանապարհ ընկանք։ Դուռը բացվելուն պես ներս խուժեցին ավերիչները։ Լուսաստղը գլուխն երևցնելուն պես՝ բարձել են բեռները։ Ոտը սրանց տան վրա չեկավ, որ գալու պես Վարդիթերը հիվանդացավ (Պռ.— Հենց որ եկավ, գալուց անմիջապես հետո)։

2. Մի բանի համեմատ լինելը. համանիշ են՝ **համեմատ, համաձայն,** *ըստ (§ 146)։ Օրինակ՝ վազի առակի պես՝ դեռ ջրի ափը չհասած՝ ոտները հանել էին (Պռ.)։ Տիրոջ օրենքումն ասվածին պես պատարագ բերին մի զույգ տատրակ (Ղուկ. Բ. 24. ըստ ասացելոյն)։ Եվ երբ որ ամենը տիրոջ օրենքին պես կատարեցին (Ղուկ. Բ. 39. ըստ օրինաց Տեառն)։ Եվ իր սովորության պես շաբաթ օրը ժողովարանը մտավ (Ղուկ. Դ. 16. ըստ սովորութեան իւրում)։*

3. Նմանության բաղդատություն. հատկության կողմից մի բանի նման լինելը մի ուրիշին։ Համանիշ է **նման,** *որով կարող է և միշտ փո-*

խանակվիլ։ Այս նշանակությամբ պես ետադրությունն իր խնդրով միասին գործ է ածվում՝

ա) Իբրև որակական ածականի բաղդատության խնդիր. օրինակ՝ Նրա խոսքը թրի պես կտրուկ է (կտրուկ է, ինչպես թուրը)։ Աշտարակիր ջրի պես մարսական ու քաղցր ջուր չկա.— Քեզ պես պատվավոր տղա.— Հայրդ ձե՞ր պես աշխատավոր էր (Պռ.)։— Քույրերիս մեջ միշտ սգապգյաց ինձ նման տխուր չկա. գժոխքումն էլ իմ ունեցած կրակի պես հուր չկա (Ջիվ.)։

բ) Իբրև վերադիր մի անվան՝ որակական ածականի նշանակությամբ. օրինակ՝ Ոչ ոք չունի քեզ պես ընկեր (այնպիսի ընկեր, ինչպես դու ես).— Ինքն էլ նրանց պես մի աղջիկ է.— Աչքին արևի շողքի պես լույս ընկավ.— Բանի միջին ձեր պես յոթը տղին հում հում կուտի.—Երեխայի պես երեխա է.— Դվալի պես սարեր (Պռ.).— Վարդն իր ոսկի կոճակի նման կոկոններովը իմաց է տալիս (Պռ.).— Դա սենյակի նման բան էր.— Պատահում է պարոնի նման մի երիտասարդի.— Ջիբուխլուի նման մի հետ ընկած անկյունում (Մուր.)։

գ) Իբրև ստորոգյալ՝ որակական ածականի նշանակությամբ. օրինակ՝ Նա մեկէլ սրբերի պես չէ.— Քեզ պես էլ ո՞ր մինը կլինի (Պռ.)։

դ) Իբրև ձևի պարագա՝ որակական մակբայի նշանակությամբ։ Բաղդատված առարկան ունի 1) ենթակայի, 2) կրող խնդրի նշանակություն, կամ թե 3) բաղդատությունը լինում է մի անցյալ ժամանակում կամ ուրիշ տեղում եղած գործողության կամ դրության հետ. օրինակ՝ 1) Շատ գիտցող աղվեսի պես երկու ոտով է ընկել ականատի մեջ (... ինչպես աղվեսը).— Ձագը կորցրած սարեկի պես գլուխը քարեքար տվավ.— Ծրնեկ ես էլ քեզ պես բախտ ունենայի.— Կուտրած գդալի պես մեջ ընկնել.— Մեզ պես հո՛ չպիտի, որ շահի կռովորի պես տանջվում ենք.— Ալմաստի պես փայլում է.— Ձեռներն ուռի պես դողում են (Պռ.)։ Մանիշակը գլուխը քաշ ձգեց ամոթով աղջկա նման.— Ինքն էլ գառան նման թռչկոտալով գալիս է.— Մենք գժի նման աշխատում ենք (Պռ.)։ Ինչո՞ւ ուրեմն չփորձեմ մի փոքր էլ ապրել նրանց հետ և նրանց նման (Մուր.)։— 2) Սրան էլ Գարեգնի պես սիրում էր նա (սրան էլ այնպես էր սիրում, ինչպես Գարեգնին).— Մրրի պես կպաշտեն փողը.— Սոսին հոգու պես սիրում էր.— Ցախը դեզի պես կուտակել են (Պռ.)։ Ջրիդը որ նետի նման չձգեց... Աչքերիցը պեծ պեծ կրակի նման թափվում է (Պռ.)։— 3) Սոսն էլ ճաշվա պես հաց չի ուտում (ինչպես ճաշին չէր ուտում).— Թե Թիֆլիզի պես լիներ, որ... (Պռ.— եթե այնպես լիներ, ինչպես Թիֆլիզում է)։

156. Պես *կարող է հոդ առնել և գոյականաբար գործածվել, ինչպես և նման ածականը. օրինակ՝ Նրա պեսները դուռը ծառա են.— Շատանա՜ն ձեր պեսները.— Հիմիկվան տղայքն անբան (անգործ) են, բայց ձեզ պեսների համար չի ասած.— Քոնն այն է, մինչև իրիկուն քեզ պեսների հետ ման գաս (Պռ.)։— Նրա նմանը չի լինել (Պռ.)։— Տունը*

մի տարօրինակ շենք էր, որի նմանը նա տեսած չէր.— ...որի նմանը չկար (Մուր.)։— Չկա քու նմանդ երկիր (Չիվ.)։ Ոչ դու մեզի պես կարող ես գանել, և ոչ մենք քեզի համանման (Չիվ.)։

157. Չափ *ետադրությունը չափ ու քանակի ուղղական կամ հայցական հոլովն է (§ § 63. 3, 69), որ գործածվելով իբրև ետադրություն՝ ցույց է տալիս՝*

1. Համաչափություն, հավասարություն երկու բաղդատելի առարկաների հատկության կամ գործողության։ Համանիշ է **հավասար:** *Ունի նույն գործածությունները, ինչ որ պես ետադրությունը։ Օրինակ՝ Նա էլ քեզ չափ հարուստ է (այնչափ, որչափ դու)։— Գլխումը մի թեթև քամու չափ խելք չկա (Պռ.)։— Այդտեղից արդեն հոսում էր գետի չափ ջուր (Մուր.)։— Մենք էլ քեզ չափ մտածել գիտե՞նք, թե ոչ (Մուր.— այնչափ, որչափ դու. այնքան, որքան դու)։ Փողու միջիցը մի ծտի չափ էր երևում. —Մեր գավառի ոչ մի գյուղը մերինի չափ հողեր չունի, ոչ մի տեղ մեր չափ բերք չեն վերցնում.— Այն հարուստների տղայքը քանի՞ քեզ չափ տանին (Պռ.)։ Թե որ կնիկը մարդու չափ [ղադար] չքրտնի, տանը կեսը կմնա սոված (Մուր.)։— Չորսն էլ կինարմատ են, բայց տղամարդի հավասար (բարեբար) գործ են անում (Մուր.)։— Ես ինքս՝ դեռ տասնյոթը տարեկան պատանի՝ ավետարանն էի թարգմանում հորս չափ աշակերտներիս (Պռ.)։*

2. Գործողության, հատկության, քանակի և այլն մինչև մի որոշ աստիճան, որոշ թիվ ու քանակ հասնելը. օրինակ՝ (Կղզու տեսքը) Կամսարյանին հետաքրքրեց հուզելու չափ.— Մորթե գդակը, որ նա ճանապարհին քաշել էր գլխին մինչև ականջները, այժմ ոչ միայն բարձր է՝ ճակատը երևալու չափ, այլև քեզ (ծուռը) դրված.— (Տետրն) այս անգամ արդեն ատելի լինելու չափ անհաճո երևաց նրան (Մուր.)։ Հինգ հարյուրի չափ (մինչև հարյուր)։ Աշխատեց պարարտ մարմինը զետեղել նրա վրա կարելվույն չափ հանգիստ (Մուր.)։

Այս նշանակությամբ չափ դրվում է կես բառի (երբեմն և ուրիշ բառերի) գործիականի հետ և նշանակում է՝ մոտավորապես մինչև կեսը օրինակ՝ Առաստաղը կիսով չափ քանդված է (Պռ.)։ Տեղ տեղ երևում էին փոքրիկ ծխնելույզներ ու ցածր երդիկներ, կիսով չափ ծածկված դեղնած խոտերի մեջ.— Տան ետևի պատն ամբողջապես, իսկ աջ ու ձախ կողմերինը՝ կիսով չափ կտրված էին հողից.— Իսկ գեղեցիկ, վանդակազարդ սնարը՝ կիսով չափ փակում են աղվամազ փետրով լի բարձ(։. —Կիսով չափ հագնվելով նա դուրս եկավ սրահը.— Ես հոգվով չափ ուրախ եմ ձեր աղջկան (Մ.)։

Ծան. *Նույն նշանակությունն ունի կիսով գործիական հոլովն և առանց չափ բառի. օրինակ՝ Մի աղքատ էր այն՝ նոթուքենեն ու ցրտեն թմրած՝ քան ի քուն, բարձ գլխուն քարն սառուցիկ, և վերմակ՝ ձյունն որ ծածկած էր զայն կիսով (Ռ. Հ. Գերպերյան)։*

158. Տեղ *ներգոյականի նշանակությամբ հայցական հոլով է, որ առանց հոդի մնալով՝ գործ է ածվում իբրև ետադրություն և ցույց է*

տալիս փոխանակություն, փոխարինություն։ Համանիշ են՝ **փոխանակ, փոխարեն** *և ժողովրդական՝* **տեղակ:** *Օրինակ՝ Ինձ տեղ դու գնա։ Երկու ձվի տեղ՝ չորս հինգն էր տալի (Պռ.)։ Ունքը շինելու տեղ՝ աչքն էլ հանեց (Ա.)։ Սարերի տեղ ձորերն են որոտում (Ա.)։ Փողի տեղ ցորեն տալ (Մուր.)։— Նա իր եղբոր փոխանակ կռիվ գնաց։ Ես փոխանակ դասերիս ընթերցումը շարունակելու, գնում, կանգնում էի պատուհանի մոտ։ — Եթե յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, այդ եղածն էլ կմատնըվեր կորստյան.— Հինավուրց մի տաճարի ավերակը նորոգելու, կամ ինչպես որ կա՝ սրբությամբ պահպանելու փոխարեն՝ դուք առնում, քանդում եք.— Պաշտոնյան չպատասախանեց և նրա փոխարեն կամսարյանն առաջանալով հարցրեց (Մուր.)։ Ուրախանալու տեղակ փուշմանեց.— Գարեգինն էլ իրա ու փեսի տեղակ շնորհակալություն արեց (Պռ.)։*

159. Տեղ, տեղակ, փոխարեն *գործ են ածվում և հոդով. այն ժամանակ առնվում են իբրև գոյական. օրինակ՝ Իմ տեղս դո՛ւ գնա։— Դու իմ մեծ եղբայրն ես, իմ հայրն ես, հորս տեղն ես։— Տե՛ս թե դրա տեղակն ի՞նչ կուղարկեմ (Պռ.)։ Հեռու հեռու քշեցին բնիկ ազգը իմ հայկյան, նրա տեղը ինձ տվին ազգ անկրոն, մոլեկան (Գամ.-Քաթ.)։ Այս երեք օրը ամբողջ տարվա փոխարենը պիտի մեր ջերմեռանդությունը ցույց տանք (Պռ.)։*

Նաև. *Տեղ բառով կազմվում են հետևյալ դարձվածները՝ Մի բան մի բանի տեղ դնել. մեկին մարդու տեղ դնել։ Ես նրան ազնիվ մարդու տեղ դրի։ Այդ տեսակ բաները ոչնչի տեղ չեցի.— Տղայքդ հո՛ մարդատեղ (մարդու տեղ) չեն գցում քեզ (Պռ.)։ Հալած յուղի տեղ ընդունեց գեղջուկի բոլոր խոսքերը (Մուր.)։*

160. Հետ *հայցական հոլովն է* **ետ, ետի** *բառի (գրաբար՝ զհետ, միջնադարյան՝ ի հետ). սկզբնապես նշանակում է՝ հետքով, ոտնատեղով, հետքը բռնած, ետևից. ինչպես՝ Սուրբ Ականատեսը Կարբու ներքևիցը, գետիցը գավազանն առել է, աղոթք անելով ընկել առաջ ու քաշ տալով գնացել դեպի ներքև. որտեղ գավազանը խաղ է արել, լայն առու է դառել, ջուրը հետև եկել, ոնց որ շողքը մարդու քամակիցը (Պռ.)**։ *Գործածվելով իբրև ետադրություն՝ ցույց է տալիս միասնություն.*

1. Կից, միասին, միատեղ լինելը. օրինակ՝ Իմ կույր բախտն ինձ հետ է.— Աստված իրանց հետ (լինի).— Սուրբ Գեորգը քեզ էլ, մեզ հետ էլ (Պռ.)։— Նրա եղբայրն իր հետ է։— Ես քեզ ինձ հետ կտանեմ։ Նա իր հետ առավ լվացման պարագաները (Մուր.)։ Մեկին կամ մի բան իր հետ տանել, բերել, առնել, բանեցնել և այլն։

2. Մասնակցություն, գործակցություն, ուղեկցություն կամ ընկերակցություն։ Հետ բառի ետևից այս դեպքում հաճախ դրվում է միասին

---

* *Գրաբարում այս նշանակությունը սովորական է՝ Ստուերի նման, որ զհետ երթայ մարդոյ.— Ոկն զհետ իմ.— Գնացին զհետ նորա։*

բառը։ Օրինակ՝ Նա իր եղբոր հետ գնաց։ Սոսը Գարեգնի հետ ման էր գալի։ Այս գիշեր նա էլ իր մոր հետ ժամումն էր (Պռ.)։ Ինչո՞ւ չեք մոտենում մեզ, զինվորներիս, և մեզ հետ միասին դիմում դեպի այն ցանկալի բարձրությունը (Մուր.)։ Մի այսպիսի ուրախություն էլ ձեզ հետ միասին այն ժամանակը կունենանք (Պռ.)։— Մեկի հետ ուտել, խմել, աշխատել, գործել և այլն։ Քեզ աշխատանքի հետ էլ Աստված ամեն շնորհք տվել է։— Աղաչանք արեց պառավին, որ իրան էլ նրանց հետ վեր կացնի.— Խելքը հացի հետ հո՛ չի կերել.— Նա ավելցուկ կտորները թաշկինակի հետ դնում էր գրպանը։ Ահա՛, ուր որ է՝ մի հորձանք կխուժե նավակի ներսը և լցնելով այն՝ ուղևորների հետ միասին կիջեցնե հատակը.— Երիտասարդը գնաց համալսարան, ուր շատերի հետ միասին մոռացավ նաև Ադելինային.— Նաննները բարձրանում ու իջնում էին և իրենց հետ միասին՝ օդի մեջ մրրկում հարդի փոշեխառն վիժակներ (Մուր.)։— Այն աղ ու հացը վկա, որ իրար հետ (միասին) կտրել ենք։ Երեխայքն իրար հետ եկան տուն։

3. Միաժամանակություն, օրինակ՝ Երեկոյան մութը գետինը կոխելու հետ միասին՝ իրանք էլ բազմավաստակ եզների սամոտեններն են քակում (Պռ.)։

4. Փոխադարձ գործողություն շատ անձերի. օրինակ՝ Մեկի հետ կամ միմյանց հետ խոսել, խաղալ, վիճել, կռվել, տեսնվել, պատերազմել, համբուրվել, ծեծկվել, ամուսնանալ, նշանվել, պսակվել, ապրել, հաշտվել, դաշն կապել, հաղորդակցություն ունենալ, կապ ունենալ, հարաբերություն ունենալ, սեր ու բարեկամություն անել, ընկերություն անել, բան ունենալ և այլն։ Տղա կասենք նրան, որ սրա հետ կոխ կրպըրծնի (կրմբշամարտի).— Նրա հետ ի՞նչ բան ունիք.— Առաջ նա քեզ հետ եղբոր պես էր.— Մենք ուզում ենք, որ իրար հետ բարեկամություն հաստատենք.— Նրանք ինձ հետ ընկած են (գժտված են).— Սրանից հետո նրանք շուն ու կատու կդառնան իրար հետ (Պռ.)։ Այնպիսի մարդկանց հետ չուներ առնչություն (Մուր.)։ Շներն իրար հետ կռվում են, գայլի դեմ միանում են (Ա.)։

Տրական խնդիր առնող բայերը՝ ընդհարվել, զարնվել, խփվել, բարեկամանալ, մտերմանալ, ընկերանալ, ծանոթանալ, հարմարվել, հավասարվել, համաձայնվել, կցել, կապել, խառնել, միանալ, միաբանել, փաթաթվել և այլն (§ 91. 5, դ. 6. 8), երբ փոխադարձ նշանակությամբ են գործածվում, տրական խնդրի փոխանակ սովորաբար հետ եռադրությամբ խնդիր են առնում. օրինակ՝ Ծանոթանալ մեկին կամ մեկի հետ, բայց ծանոթանալ մի բանի։ Լուսարարը երիտասարդին ծանոթացնելով նորեկի հետ, ցավ հայտնեց, որ... (Մուր.). Բայց՝ Ռուսերեն ձեռնարկներով ես կարող եմ լի ու լի ծանոթանալ գյուղատնտեսական այս ու այն ճյուղին (Մուր.)։ (Առաջին դեպքում ծանոթությունը փոխադարձ հարաբերությամբ է երիտասարդի և նորեկի միջև, ուստի խնդիրը դրված է հետ բառով. իսկ երկրորդ դեպքում ծանոթությունը միայն ենթակայից

ուղղվում է դեպի խնդիրը (ճյուղին), որ և դրված է տրական հոլովով)։— Այսպես և՝ ժամանակ է, որ դուք միանաք **մեզ հետ** *և ձեռք ձեռքի տված մտնենք ժողովրդի մեջ (Մուր.).— Նա (Գեղամա լիճը) ազատ փռում, տարածում էր հեռուն յուր ջրածուփ դաշտը, կարծես սպառնալով՝ այդ կողմի բացով փախչիլ, հեռանալ նախանձոտ պահանորդներից և միանալ երկնքի չինչ* **կապուտակին** *(Մուր.)։ Գույնզգույն լապտերները կախված էին պատշգամի սյունաշարերն ու մոտակա ծառերը* **միմյանց հետ** *կապող կանաչահյուս ժապավեններից (Մուր.)։* **Շան հետ** *եղբայրացիր, փայտ ձեռիդդ վայր մի՛ ձգիլ (Ա.)։* **Գարեգնի հետ** *ընկերացել ես.— Սոսը նրանց հենց շպրտեց գլխովը, որ երկու գազ հեռու* **գետնի հետ** *հավասարվեց (Պո.)։*

Նշ. *Ուշադրություն պիտի դարձնել, որ փոխադարձ նշանակությամբ կարող է դրվել թե՛ լոկ տրական խնդիրը և թե՛* **հետ** *բառով, ինչպես՝ Ալիքները դեռևս խաղում էին իրար հետ և կարծես զգուշանում միմյանց ընդհարվելուց (Մուր.),— որ կարելի էր ասել նաև՝ «միմյանց հետ». իսկ երբ փոխադարձ հարաբերություն չկա, առանձնապես երբ խնդիրն իրի կամ վերացական անուն է, պետք է դնել տրական հոլով.* **հետ** *ետադրության գործածությունն այս դեպքում օտարաբանություն է. ինչպես՝ Շատ չի տևիլ, մենք նրա անվանափոխության պատմության* **հետ** *նույնպես կծանոթանանք (Պո.),— որ ավելի հարազատ կլիներ ասել՝ «նրա պատմությանը կծանոթանանք», որովհետև «պատմության հետ» խնդիրն այնպես է դրված, որ կարծես պատմությունն էլ փոխադարձաբար մեզ հետ պիտի ծանոթանա։*

161. **Հետ** *բառը հոդ առնելով՝ գործ է ածվում և մենակ. ինձ հետ, քեզ հետ, իր կամ նրա հետ, մեզ հետ, ձեզ հետ, իրենց կամ նրանց հետ կապակցությունների փոխանակ ասվում է՝ հետս, հետդ, հետը, հետներս, հետներդ, հետները (հոլովված ձևերի համար տե՛ս §§ 86. 1. դ., 103. 4)։ Օրինակ՝ Մինչև մեռնելու դուրը հետս կգա՞ս.— Օրը կգա, Աստուծու բարին էլ հետը.— Աստված օրը կտա, բարին էլ հետը.— Տերտերները մի ժամհար հետները, տնօրհնեք են ման գալիս.— Սոսին կսպանեմ, ես էլ հետը կկորչեմ.— Ինքը մեռավ, եղած չեղածն էլ հետը տարավ։ Գեղարքունին հետները բերում, ծախում են.— Տիրացուներին էլ հետներդ բերեք.— Արշավիրն ինձ որ տեսնում էր, հետս խնդում ծիծաղում էր.— Էլ հետդ խոսել չի լինիլ.— Նա խիստ տխուր էր. հետը խոսել չէր լինում.— Նրա մայրն ու հարսները հետը կլինին.— Սոսը որ ասում չի ու մին մին էլ հետը ժմտում, ուրիշի սիրտն է վրան գնում.— Տիրացուները մի մի պստիկ զանգակ ձեռներին, «Այսօր տոն է» ասելով, ամեն տուն մտնում, փող էին առնում, ասելիս էլ զանգակը հետը քաղցրը ձայնով ածում (Պո.)։*

Նշ. *Ժողովրդական լեզվի մեջ* **հետ** *ուրիշ նշանակություններով էլ է գործածվում.*

1. Բացառական հոլովի հետ՝ ի վեր, **հետն** *ետադրության նշանակությամբ, միայն տեղի տարածության համար. օրինակ՝ Տունը դռնիցը հետ երեք չորս շարք նստած էին... (դռնից սկսած մինչև վերի կողմը).—Ծամը բերնիցը հետ լիքն ուխտավոր է լինում.— Ծաղկեվանքա ձորը բերնից հետ լիքն էին ուխտավորներով.— Տաքարը ջրքներիցը հետ յցվեց (Պո.)։*

2. Մեկի եռեից գնալ կանչելու, բերելու համար. օրինակ՝ կնիկը գնացել ա, իր տղին ղրկել պառավի հետ.—Ով գիտա կողքն էլ կոտրած ըլնի, հրես գնալ պտեմ անդչու (ոսկրաբույժ) հետ.— Պառավը տղին ղրկել էր ինձ հետ. գնացի տեսա.— Բարկեն քեզ ղրկի դերձկի հետ.— Քող մնան, ընչանք իրանց աղի հետ ենք ղրկել, դա (Պռ.)։

3. Մեկի կամ մի բանի ձեռքով, միջոցով անել. օրինակ Մի տեղ գնալիս՝ ղշի քևի հետ էլա ինձ իմաց արա.—Քլիսմի կապոցը Սոսը կազանդի օրը Փափակի հետ ղրկել ա.— Նրևկ էլ Անուշի հետ խաբարներ էր ապսպրել ժամիցը (Պռ.)։

4. Մեկի կամ մի բանի եռեից ընկնել, փոխաբերաբար՝ մի բանով զբաղվել. օրինակ՝ Ջիրիդը ձեռին պտիտ տալով՝ ընկավ իրա քշնամիների հետ.— Ունքերը կախ ա գցել. մտքի հետ ընկել.— Էս երկու շաբաթն աշտարակցիք բանի հետ էին (Պռ.)։

162. Դեմ հայցական հոլովն է դեմ (դեմք) գոյականի, որ գործ է ածվում իբրև տեղի անուն (§ § 39. 3) և ապա կորցնելով իր նշանակությունը՝ առնվում է իբրև եռադրություն։ Խնդիրը ցույց է տալիս։

1. Առարկան, որին ուղղվում է մի քշնամական, հակառակ գործողություն, զգացմունք և այլն։ Համանիշ՝ **ընդդեմ, հակառակ:** Օրինակ՝ Հոսանքի դեմ լողալ. մեկի դեմ ատելություն, քշնամություն ունենալ. մեկի կամ մի բանի դեմ բողոքել, տրտնջալ, գանգատվել, կռվել, ապստամբել, պատերազմել, խոսել, գրել, քարոզել, օրենք հրատարակել, դավադրություն սարքել և այլն։ Ի՞նչ ունիս դու սրա դեմ, Դրա դեմ էլ ոչինչ չասացի.— Օրենքի դեմ բան բռնել.— Օրենքը թույլ չի տալիս նույնիսկ մեղավոր մարդու դեմ բռնություն գործ դնել.— Իրավունք եք տալիս ինձ տրտնջալ այն երիտասարդների դեմ, որոնք... Գյուղի շները մեծ աղաղակ բարձրացրին գյուղը մտնել համարձակող կառքի և ձիերի դեմ... Տիրացու Մոսին, իբրև ծանոթ անձն, յուր սաստող հրամաններն արձակեց շների դեմ (Մուր.)։ Մենք չենք կարող այնպիսի նշանավոր անձի կամքին հակառակ գնալ (Պռ.)։ Դուցե տեղական հանգամանքներն ստիպեն իրեն, հակառակ յուր կամքին, դրժել յուր ուխտին (Մուր.)։

2. Ժամանակի անունների հետ՝ մերձավոր ժամանակամիջոց. օրինակ՝ Նա առավոտյան դեմ գնաց։ Երեկոյան դեմ խոտավետ ու ջրավետ դաշտերում իրանց գրաստն արոտի թողած... Բլբուլներն առավոտյան հովի դեմ երգում էին.— Քանի բարի լուսո դեմ՝ բերանդ բաց արած՝ ժանգ վեր ածես (Պռ.)։ Այսպես և կեսօրվա դեմ, իրիկվա դեմ։— Այս կիրառության տեղ սակայն համաչա գործ են ածվում բարդ բառով՝ իրիկնադեմին, լուսադեմին (§ 104. 1)։ Քրդի ոչխարն է առավոտադեմ դուրս գալիս աստծու տանից (Պռ.)։

Ծան. Հակառակ, իբրև եռադրական բառ, սովորաբար ճամաձայն, քսա բառերի հականիշն է, ինչպես վերևի վերջին օրինակում։ Այսպես և՝ հակառակ սովորության,— հակառակ յուր համոզման և այլն։

168. Մոտ տեղի անվան հայցականը, ներգոյականի նշանակությամբ, գործածվելով իբրև եռադրություն՝ ցույց է տալիս՝

1. Տեղի մոտիկություն ընդհանուր, անորոշ մտքով, մարդու կամ

իրի ամեն կողմից առած, առանց անմիջական շոշափման, կպչելու. միասնություն, ընկերակցություն և ընդհանրապես որևէ հարակցություն: Համանիշ՝ ժողովրդական՝ **կշտին**, արևմտյան աշխարհաբար՝ **քով**: Օրինակ՝ Նա ինձ մոտ կանգնած է: Նա նստած էր քեզ մոտ: Ինձ կանչեց, իր մոտ նստեցրեց: Տան մոտ մի ծառ կար: Մեծի մոտ խոսքս անցնում է.— Մեծի, պստկի մոտ պատիվ ունի (Պռ.): Գնում, կանգնում էի պատուհանի մոտ (Մուր.): Այդ ժամանակ նա մեզ մոտ էր ապրում: Ես ինչե՞ր էի երազել, թե պիտի սովորեմ Գարեգնի մոտ (Մուր.): Քո գիրքն ինձ մոտ է: Հացկերույթն այստեղ էլ նույն բնավորությունն ուներ, ինչ որ մեզ մոտ (Մուր.):

2. Զանազան առարկաների համեմատություն. օրինակ՝ Ի՞նչ ես դու նրա մոտ,— ինչպես մի թզուկ հսկայի մոտ: Նրանք քու մոտ հավի ճուտ են (Պռ.):

3. Ժամանակի մերձավորություն. օրինակ՝ Արևը մայր մտնելու մոտ մեր ուղևորները հասան ավանը.— Տարին լրանալու մոտ՝ ես մի տարօրինակ փոփոխություն էի նշմարում իմ մեջ.— Յուր գործը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հագնվել և ժամը 12-ի մոտ ելնել այցելության (Մուր.):

4. Հայցականի նշանակությամբ՝ շարժման ուղղություն դեպի մի առարկա, անձն կամ իր. օրինակ՝ Եկ ինձ մոտ: Գնաց նրա մոտ, Վարդանի մոտ: Ես կխնդրեմ Գարեգնին, որ վաղվանից գա մեզ մոտ (Մուր.):

Ծան. Մոտ դրվելով թվականի վրա առաջից՝ ցույց է տալիս անորոշ մերձավոր թիվ: Համանիշ միճչև, շափ, շուրջ (§§ 145, 157. 2). օրինակ՝ Նրանք մոտ հիսուն հազի կլինեին, փոխանակ՝ հիսունի մոտ, մոտավորապես հիսուն: Հովանավոր սրահում... անկարգ ու խառն ի խուռն նստած էին մոտ երկու տասնյակ տղաներ (Մուր.): Շուրջ հիսուն տարի:

164. Վրա (հնացած ձևով՝ վերա) տեղի անվան հայցականը, նաև ներգոյականի նշանակությամբ, առանց հոդի գործածվելով՝ առնվում է իբրև ետադրություն: Խնդիրը ցույց է տալիս՝

1. Առարկան, որի երեսին, ինչպես մի տեղում, դիպչելով կա մի առարկա, կամ լինում է մի բան. օրինակ՝ Գիրքը սեղանի վրա է: Նա աթոռի վրա նստած է: Թղթի վրա գրել, տպել, նկարել, նախշել: Քարի վրա փորագրել: Ծովերի վրա՞ պիտի թափառես.— Այդ ժամին տանուտերի ամբողջ տունը ոտքի վրա էր (Մուր.): Ձիու վրա նստած գալիս է.— Երբ ուզենաք՝ համեցեք, գլխներիս վրա տեղ կունենաք: Մի գործիքի վրա նվագել:

2. Առարկան, որին մոտիկ, կպած, ափին կամ եզրին կա կամ լինում է մի բան. օրինակ՝ Անին Ախուրյան գետի վրա է: Ռոստով Դոնի վրա (նույն և՝ Ռոստով Դոնի ափին,— Լույս, 1910, № 11): Այս առվի վրա (ափին, եզրին) ծառեր պետք է տնկել: Մեր տունը մեծ փողոցի վրա է: Իմ բնակարանը պարտեզի վրա է: Պատուհանը պարտեզի վրա է շինված: Խաչալվա արին առվի վրա (Պռ.):

3. Առարկան, որի վերևում, բարձրում, ինչպես մի տեղում կա կամ լինում է մի բան, որ տեղի տարածությամբ անջրպետվում է ներքևում գտնված առարկայից։ Օրինակ՝ Թռչունները սավառնում էին տանիքի վրա։ Երկինքը մեր գլխի վրա է։ Ջրի վրա ճախրում էին թռչունները։ Թուրը երդկի վրա բռնեցին (Պռ.)։

4. Ժամանակը, երբ մի գործողությամբ զբաղված, կամ մի դրության մեջ եղած միջոցին միաժամանակ կատարվում է մի բան։ Օրինակ՝ Ճաշի վրա, հացի վրա խոսք բացվեց այդ մասին։ Նա աշխատանքի վրա քնել էր։ Մեկին մի հանցանքի վրա բռնել։ Ամեն թասի վրա երկար շնորհակալություններ արին.— Տոլմի վրա բարեկամների կենացը խմեցին.— Թե որ մի աղքատ տուն էր մտնում հացի վրա, իսկույն... Այս խոսքի վրա դուռը բացվեց.— Այս գիշեր մեր տղայքը հացի վրա լուսացրին.— Հայր սուրբիս թասի վրա մի տաղ ասա (Պռ.)։ Դեռ այս մրտքի վրա էր (մտքով էր զբաղված) Կամսարյանը, երբ հանկարծ նրա ետևից հնչեց մի թավ ձայն։— Այս խոսքի վրա նրանք անցնում էին մի ուրիշ տան բակով (Մուր.)։ Մութը գետինը կոխելու վրա էր (մոտ էր, քիչ էր մնում), որ ամենքը ցրվեցին (Պռ.)։

5. Առարկան, որի վերին երեսին, ինչպես մի տեղի, ուղղվում է գործողության շարժումը (հմմտ. § 67. 1. ծան. 2. § 91. 10) Օրինակ՝ Բարձրանալ սարի վրա, ծառի վրա։ Պղինձը դրեց կրակի (օջախի) վրա։ Սոխակը վարդի վրա վեր կգա։ Նստեցին գորգի վրա։ Տանուտերի վրա լույս վեր եկավ. ո՞վ տեսավ,— գզիրը (Ա.)։ Մի բան թելի վրա շարել, պարանի վրա կախ տալ։ Գավազանի վրա հենվել։ Երեսի, մեջքի, քթի, գլխի վրա գետին ընկնել։ Ծնգի վրա գալ։ Մույգ կապոտագույն մի սփռոց նա փռեց տախտակի վրա և վրան դարսեց սպիտակ, փափուկ լոշեր (Մուր.)։

Փոխաբերական նշանակությամբ նաև՝

ա) Առարկան, որի վրա որևէ բան դրվում, կարգվում է. օրինակ՝ Հարկ դնել եկամուտի, գինու վրա։ Վերակացու, պահապան կարդել, դրնել, նշանակել մի բանի վրա. լուծ ապաշխարանք դնել մեկի վրա։ Մեղքըն իրար վրա էին ձգում, Մեր վրա աշխատանք ունին դրած։ Մի բանի վրա աշխատել, ուշադրություն դարձնել և այլն։

բ) Առարկան, որի վերաբերմամբ մեկն ունի գերազանցություն, իրավունք, հսկողություն, ներգործություն և այլն։ Օրինակ՝ Թագավորել մի ազգի վրա, իշխել մեկի կամ մի բանի վրա. իրավունք, իշխանություն բանեցնել մի բանի վրա։ Մի բանի վրա աչք ունենալ։ Հույները ճանաչում էին իրենց գերազանցությունն ուրիշ ազգերի վրա (Պալ.)։ Արաղն ու գինին ո՞ւմ վրա ասես, որ իրենց շնորհքն ու զորությունը ցույց չտան (Պռ.)։

6. Առարկան, դեպի որն ուղղվում է մի զգացում, հուզում, կիրք կամ հոգեկան գործողություն (հմմտ. § 91. 9). օրինակ՝ Մեկի կամ մի բանի վրա ուրախանալ, տրտմել, տխրել, ցավել, խղճալ, զվարճանալ,

դառնանալ, զայրանալ, բարկանալ, չարանալ, նեղանալ, զարմանալ, հիանալ, հույսը դնել, կասկածել, նախանձել, կոտրվել, ծիծաղել, հպարտանալ, ապշել, խելքամաղ լինել և այլն։ Նա շատ տխրեց այս բանի վրա։ Մարդի վրա քոնքորալ։ Նրա սիրտը տաք չի այդ բանի վրա.— Դու ինչո՞ւ էիր իրիկունս այնքան բարկացել իմ վրա (Պո.)։— Կամսարյանը հիացավ այս հաջողության վրա.— Նա կարող է ինձ վրա ծիծաղալ (Մուր.)։

7. Առարկան, որի մասին, վերաբերմամբ կամ նկատմամբ ասվում, մտածվում է մի բան (Հմմտ. § 114, 150. 3)։ Օրինակ՝ Ում վրա որ մարդ կխոսի, ինձ վրա շուն է հաշում.— Սրա, նրա վրա բամբասանք արին.— Նրանց վրա խոսք ձգեցին.— Մի բանի վրա զրույց անել (Պո.)։ Նրա միտքն այդ բանի վրա էր։ Մեր գրականությունը քանկագին տեղեկություններ է պարունակում ոչ միայն մեր՝ այլև ուրիշ ազգերի վրա (Պալ.)։ Զանազան կարծիքներ կան դրա վրա։ Մի բանի վրա վիճել, կարծիք հայտնել, դատողություն տալ, գրել, երգել, երգ հանել։ Նման արգելքներ խանգարում էին իրեն նրա (ազգի) վրա մտածել (Մուր.)։

8. Արագ հաջորդություն ըստ ժամանակի և կարգի, վրա վրա կուտակում նույն առարկաների, անընդհատ շարունակություն. օրինակ՝ Շտապեցնող շտապեցնողի վրա է գալիս (Պո.)։ Նամակ նամակի վրա դրել. հարված հարվածի վրա տալ. հանցանք հանցանքի վրա գործել։ Նրա դրությունն օր օրի վրա վատանում է։ Եկան, իրար վրա ներս թափվեցին։ Անձրևն երեք օր իրար վրա չկտրվեց.— Յոթը շաբաթ իրար վրա սրանից հետո Ս. Գևորգի ուխտն է (Պո.)։

9. Հիմունքը, որի համար կատարվում է մի բան (Հմմտ. § 99)։ Օրինակ՝ Ես նրա հրավերի վրա եկա։ Շները ոսկորի վրա կռվեցին։ Ես այդ բանը քո պատվերի, հրամանի վրա արի։

10. Վրա ժամանակի անունների հայցականից առաջ ցույց է տալիս մերձավոր ժամանակը՝ դեպի նշանակությամբ։ Օրինակ՝ Վրա հինգերորդ (հինգ) օրը կգա։ Վրա երկու ամառն էր գնում, որ մենք... (Մուր.)։ [Հմմտ. § § 162. 2, 163. 3. Նա առավոտը եկավ. Արևը մայր մտնելիս եկավ. Հինգերորդ օրը եկավ, և Նա առավոտվա դեմ եկավ. Արևը մայր մտնելու մոտ եկավ. Վրա հինգերորդ օրը եկավ]։

Ծան. 1. Երբ ձև է նպատակի նշանակությամբ գործածությունը, ինչպես՝ Սրանք հացի վրա նստեցին (փոխանակ՝ հացի նստեցին).— Ծոսը խնդրեց գործակալին, որ գա իրենց սեղանի վրա.— Համեցեք սեղանի վրա.— Մեզ մատաղի վրա հյուր էր տարել (Պո.)։ Մեկին քեյի, ճաշի վրա հրավիրել (փոխանակ՝ քեյի, ճաշի հրավիրել)։

Ծան. 2. Սովորական է վրա բառի ստացական հոդերով գործածությունը վրաս, վրադ, վրան (ժողովրդ. վրես, վրեդ, վրեն), վրանես, վրաներդ, վրաները, փոխանակ՝ ինձ վրա, քեզ վրա, նրա կամ իմ վրա, մեզ վրա, ձեզ վրա, նրանց կամ իրենց վրա կապակցությունների. օրինակ՝ Վրաները մտիկ տաս, կասես՝ վարդապետ են (Մուր.)։ Դարդիջը միսը հալվել, ոսկորն է մնացել վրան.— Դուրը վրաները չինեց.— Ոչ պատկերը կա վրան, ոչ շնորհք.— Բահդ կոթած պահի՛ր, թափճակը վրան.— Հարյուր աչք կար վրաս.— Նա երեկ վրաս բարկացավ.— Հազար մարդ վրադ կխոսա (Պո.)։

165. *Անկապակցությունը քերականական մի ձև է, որով մի բառ կամ հոլով փոխանակվում է ուրիշ բառով կամ հոլովով, և բառերն իբրև լրացում և լրացյալ չեն կապակցվում միմյանց հետ։ Օրինակ՝ «Գուբը, որ փորեց, ինքն ընկավ մեջը» ասացվածի մեջ գուբը բառը քերականորեն չի կապակցվում խոսքի շարունակության հետ՝ ոչ իբրև ենթակա և ոչ իբրև խնդիր։ Կանոնավորապես պետք է լիներ՝ Գրի մեջ, որ փորեց, ինքն ընկավ։*

Ծան. Անկապակցությունն առաջանում է սովորաբար մտածության եղանակի փոխվելուց. խոսքն սկսվում է մի ձևով, բայց դեռ չվերջացած՝ մտածության եղանակը փոխվում է, և խոսքի շարունակության կազմության մեջ ևս փոփոխություն է մտնում. մի բառ կամ հոլով փոխանակվում է մի ուրիշ բառով կամ հոլովով, կամ թե ասացվածի մեջ խոսքի շարունակությունը պակասում է, որով և սկզբի մասը մնում է առանց հոլովական կապակցության։ Այս պատճառով անկապակցությունը մեծ մասամբ համարվում է սխալ, որ առաջանում է խոսողի կամ գրողի անփութությունից, որով մոռացության է տրվում ասացվածի սկիզբը, և շարունակությունն ուրիշ ձևով է վերջանում։ Այս սխալը գործում են հաճախ աշակերտներն ու համբակները պատմելիս ու գրելիս. ուստի և նրանց լեզուն շատ անգամ անկանոն ու մութն է լինում։ Ժողովրդական լեզվի մեջ սակայն կան սակավաթիվ անկապակցական ձևեր, որոնք ընդունված են և սխալ չեն համարվում, քեպետ և ընդհանրապես խորշելի են։

166. *Անկապակցությունը թուլլատրելի է միայն այն ժամանակ, երբ լեզվի մեջ ընդունված սովորական ձևով է լինում և խոսքը չէ մթնեցընում։ Այսպես՝*

1. Ասածվածի սկզբում դրվում է իբրև գլխավոր խոսքի մաս՝ մի գոյական ուղղական հոլովով, սովորաբար մի, ամենայն, այն վերադիրներով. ետևից գալիս է մի հարաբերական խոսք, ապա գլխավոր խոսքի շարունակությունը, որի հետ սակայն քերականորեն չի կապակցվում ասացվածի սկզբում դրված ուղղականը. ուստի վերջինիս տեղ խոսքի շարունակության մեջ դրվում է ավելադրությամբ իբրև բացահայտիչ մի դերանուն խոսքի իմաստի պահանջած հոլովով, որով պիտի դրված լիներ ասացվածի սկզբի բացահայտյալ գոյականը։ Սեռական դերանունը կամ ստացականը կարող է զեղչվել. այն ժամանակ ըստացականի կամ սեռականի լրացյալն առնում է ստացական հոդ։ Օրինակ՝ Այն բանը, *որ քո ուժից վեր է, նրանից հեռու կաց։* Մի մարդ, *որ անգետ է, նրան ի՞նչ կարելի է մեղադրել։ Մեր բերքն էլ որ կա, ամեն բան նրան թշնամի է (Պռ.)։ Գուբը որ փորեց, ինքն ընկավ մեջը (նրա մեջ)։ Գիրքը, որ տվավ, վրան գրած էր...*

2. Որ հարաբերական դերանունը հաճախ անփոփոխ ուղղական է մնում, և ապա խոսքի շարունակության մեջ դրվում է ավելադրությամբ իբրև բացահայտիչ մի դերանուն խոսքի իմաստի պահանջած հոլովով։ Ստացականը կամ սեռականը նույնպես կարող է զեղչվել. այն ժամանակ իր լրացյալն առնում է ստացական հոդ։ Օրինակ՝ Դրանք այն մար-

դիկն են, որ իրանց (փոխանակ՝ որոնց) քսակներէրի մեջ գյուղացու քրտինքն է լցված.— Բա նա ո՞վ է, որ Սոսի սերը կպել է ևրա սրտին (փոխ. որի սրտին կպել է Սոսի սերը).—Ես՝ որ այդպիսի բաներն ինձ համար խաղ ու պար են, ականջ չարի.— Փառք քեզ, աստված, որ ֆռ ողորմության դռներն ամեն մարդի համար էլ բաց են: Անուշի հետ բան ունիմ, որ հենց դրա համար էլ (որի համար էլ) եկել եմ այս կես դիշերին.— Գնա այն մաթիցը բեր, որ դու ես վրաե կանգնել, եփել (փոխ. որի վրա).— Ողբայրը, որ էլի քչից շատից մարդկության նշան կար վրաե, վրա հասավ (Պռ.):— Մարդ կա, որ հետը խոսել չի լինիլ.— Աղբեր տղի կշտին սար ու ձոր հավասար պիտի լինի, ավելի այն տղի, որ ձեռիցը (փոխ. որի ձեռից) բան է գալի (Պռ.):— Ծա՞ռ լինի, որ գլխովը քամի չանցնի (Ա.):

Ծան. Որբեմն մասնական բառերից առաջ դրվում է հոգնակի ուղղական հոլովով մի անուն, որ սեռական կամ բացառական հոլովով պիտի լիներ իրրև խնդիր մասնական բառի. օրինակ՝ կնանիքը որը աղով է աղոթում, որը մի կտոր հաց ու աղով, որը քարով (փոխ. կանանց կամ կանանցից որը):

Գ. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

167. *Համաձայնությունը, որ հիմնված է բառերի ներունակության տրամաբանական հարաբերության վրա (§ 51), լինում է բառերի ձևով, այսինքն իրար հետ կապակցվող բառերը, լրացումն ու լրացյալը, դրվում են թվով, դեմքով և հոլովով միակերպ. ինչպես՝ եզակի առաջին դեմքի ենթակայի հետ եզակի առաջին դեմքի բայ է դրվում (ես գնացի), բացահայտիչը միևնույն թվով, հոլովով ու դեմքով է դրվում, ինչ որ բացահայտյալը (մենք աշակերտներս, դուք աշակերտներդ):*

Բառերի համաձայնությունը սակայն հաճախ լինում է և բակառությամբ:*

Բակառությունը *քերականական մի ձև է, որով խոսքի մեջ մի բառ համաձայնում է մի ուրիշ բառի հետ, որին վերաբերում է քերականորեն, ոչ թե ըստ ձևի, այլ ըստ բովանդակության, իմաստի. կամ նայելով ասացվածի մեջ գերիշխող գաղափարին: Այսպես՝ եզակի բառի հետ հոգնակի բայ է դրվում, կամ ընդհակառակն: Օրինակ՝ «Մեծ մասը գնացին զբոսնելու» խոսքի մեջ ենթական եզակի է, իսկ բայը՝ հոգնակի. բայը համաձայնել է ոչ թե մասը ենթակային, որին վերաբերում է քերականորեն, այլ խոսողի մտքում ունեցած մի հոգնակի գոյականի հետ, ինչպես՝ Աշակերտների մեծ մասը գնացին:*

Բակառության գործածությունը պահանջում է լեզվի խորին հմտություն և մեծ զգուշություն, թե չէ՝ հեշտությամբ կարելի է սխալների մեջ ընկնել:

---

* Բակ առնուլ նշանակում է շրջապատել, մեջն առնել, մեջն ունենալ, պարունակել, իսկ բակառություն՝ պարունակություն, բովանդակություն:

168. *Ննթական և բայը* **թվով** *ու դեմքով կանոնավորապես համաձայն են դրվում. օրինակ՝ Դու գիտես մեկն ու երկուսը, ես գիտեմ տասներկուսը (Ա.)։ Շները կուվեցին, աղքատի բանր հաչողվեց (Ա.)։*

Այս ընդհանուր կանոնը սակայն ունի մի քանի բացառություններ։

169. *Եզակի* **ենթակայի** *հետ կանոնավորապես եզակի բայ է դրվում. օրինակ՝ Նեղն ընկած կատուն առյուծ կդառնա (Ա.)։*

Բացառություն կազմում են հետևյալ դեպքերը, որոնց մեջ համաձայնությունը կարող է և բակառությամբ լինել.

1. Երբ ննթական հավաքական բառ է և եզակի է, ինչպես՝ բազմություն, խումբ, ժողովուրդ, զորք, ժամավոր, ուխտավոր, տասնյակ, շատը, քիչը, քանիսը և այլն. բայը ա) կանոնավորապես եզակի է դրվում, բայց կարող է նաև բ) հոգնակի դրվել, գլխավորապես այն ժամանակ, երբ հավաքական անունն ունի հոգնակի սեռական կամ բացառական խնդիր, կամ երբ անվան ցույց տված բազմությունը մտածվում է ոչ թե միասնական նշանակությամբ իբրև մի միություն, այլ անջատական նշանակությամբ առանձին առանձին։ Այս դեպքում հավաքական անվան տեղ դրվող դերանուններն ևս, ինչպես և ստացական հոդերը, հոգնակի են դրվում։ Օրինակ՝ ա) Շատը գնաց, քիչը մնաց.— Քանի՞սը հիմի ցամաք հաց էլ չի գտնում, քանի՞սը հիմի բքարգել ընկած՝ ցրտին մատաղ է գնացել.— Ժողովուրդը որ կա, աչքը տերտերին է ձգում. ինչ որ տեսնում է, այն է անում (Պո.)։ Ամեն կիրակի՝ ճաշից հետո հավաքվում է մեր բակը բազմաթիվ ժողովուրդ և սիրով լսում է իմ ընթերցումն ու բացատրությունները.— Նոր խումբը մնացել է նեղ դրության մեջ.— Այդ առաջարկությունները... ուրախությամբ և անտրտունջ կատարել է ժողովրդի գոնե մեծագույն մասը (Մուր.)։

բ) Այս խնդիրների մեծ մասը չլուծված մնացին։ Մեր կյանքի խնդիրներից շատը քննված չեն, շատն էլ թեպետ քննվել, բայց տակավին անլուծելի են մնացել։ Իմ օրովս վանքի բոլոր միաբանությունը լիության մեջ էին։— Տղաներից մի քանիսն ընկան ետևներիցը.— Ժամավորը դուրս եկան ու ցրվեցին իրենց տները.— Բազմությունը ձյունի նման իրար վրա թափվելով ժամ են գալիս.— Ուխտավորը արտասուքն աչքերին վանքի չորս կողմը պտույտ են գալիս.— Թամաշավորը վերև-ներքևիցը ձայն ձայնի տվին.— Օրհնյալ լինին ձեր ժողովուրդր. Աստված իրանց հավատան օրհնի.— Ջերմեռանդ ժողովուրդը, որ այնտեղ սպասում էր, գառան նման բայ ու բո՜ւյ գցած՝ գլխները բաց, արտասուքն աչքներին, թափվեցին մասունքի առաջը. Ժողովուրդը սաղ ջուր կտրեցին, աչքների մինը մի պարկ դարձավ լալուց (Պո.)։ Կպատմեր... թե որքա՜ն ժողովուրդ, թշնամու երեսից հալածական, Սյունյաց ամրություններին ապավինելու համար՝ իրար թևակոխելով՝ անցել են յուր մոտից (Մուր.)։

2. Երբ եզակի ենթական ունի մեկից ավելի թիվ ցույց տվող ածական վերադիր, բայը եզակի է դրվում, բայց կարող է բակառութեամբ նաև հոգնակի դրվել։ Գոյականաբար գործածված թվականների բայը սովորաբար հոգնակի է դրվում։ Օրինակ՝ Մենակ ես հո՛ չէ՞ի, հազար հոգի կար այնտեղ.— Տասը մարդ աչքալուսս խոսաց ինձ.— Տան չորս պատն էլ նախշած էր.— Հացի վրա երեք ողորմաթաս խմվեց (Պռ.)։ Հազար ռուբլին մտքիցը չէր գնում։ Ձառամյալ մարդկութեան առաջին երկու ճանապարհ է բացվում—վերակենդանութեուն կամ մահ։ Դեռ հինգ օր չկա։ Ինձ մնում էր միայն մի երկու ժամ.— Ուղիղ երեք տարի է անցել այն երջանիկ օրից.— Հայոց գյուղերում երկու տուն կա, ուր ճանապարհորդը վստահութեամբ... կարող է իջևանել (Մուր.)։ Վրանին առջև երկու արձակ ձի ցողաթուրմ խոտը կուտեր (Շանթ)։ Մի երկու մարդ էլ կան, հիմի կգան.— Ամեն ձիու վրա նստած են երեք հոգի.— Իհարկե, տասը հոգի են, հինգը պիտի հիմար ընկնեն, հինգը՝ իմաստուն.— Վեց տղա ունիս, երեքը քո խոսքովն են պսակվել.— Տեղ ու դադար չկա. հինգն ուխտ է անում, տասը ներքև են լցվում։— Այսպես խոսում էին մի քանի մարդ իրար հետ.— Նստած չե՞ս, թե քանիսը գլուխները վեր են դրել (Պռ.)։— Վերին երկու կարգը գրավված են նրա փրքուն բառերից (այսինքն՝ վերին երկու կարգի մարդիկը)։ Երկուսն էլ գնացին, հեռացան։ Մի հինգ, տասը հոգի էլ իրենց կողմից են սկսում ավելի՝ անմտագույն առարկութեուններ անել.— Ինձ համար այս ու այն երիտասարդը առաջարկութեուն են անում.— Ես մեծ խնամքով եմ վերաբերվում այդ գեղեցիկ հատկութեուններին՝ աշխատելով իհարկե որ նրանցից մի քանիսը ծայրահեղութեան չհասնեն (Մուր.)։

3. Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր բառերի հետ բայը դրվում է թե՛ եզակի և թե՛ հոգնակի. օրինակ՝ Ամեն (յուրաքանչյուր) մարդ գրնաց իր աշխատանքին.— Ամեն աղջիկ իր բերած ծաղիկը քաշեց.— Ամեն աչք էլ Սոսի վրա խնդաց.— Կասես՝ ամեն մինը մի խանի տղա լինի.— Ժամը որ արձակվեց, տունը մի մարդ մի մի աման ու աղլուխ ձեռներին՝ հավաքվեցին.— Ու ամեն (յուրաքանչյուր) մարդ ցրվեցին իրենց տները.— Ամեն կնիկ էլ սրտումը մի մուրազ անելով՝ ձեռները քսեցին թասին (Պռ.)։— Գնացին յուրաքանչյուրն իրենց տները։—Շեն կենա մեր խնամին, ասին ամենը (յուրաքանչյուրը) մի կողմից.— Երկուշաբթի օրը ամենը (յուրաքանչյուրը) իրենց մեռելները մտները բերին.— Ամենը (յուրաքանչյուրը) մի տեսակ բանի պետք գալն ասեցին (Պռ.)։

Ամենը միշտ հոգնակի է, ուստի և բայը դրվում է հոգնակի. նույնպես և բոլորը բառի հետ, երբ նշանակում է ամենքը։ Ժողովրդական ձևով նույն իմաստով գործ է ածվում և ամեն հոգնակի բայի հետ. օրինակ՝ Ամենքը գնացին։ Բոլորը նրան լսում են՝ ինչպես իրենց իմաստուն մորը (Մուր.)։ Ամենն էլ իրանց արժանավոր տեղը ստացան.— Ամենն էլ քաշվեցին իրենց տները.— Ամենն էլ խմեցին.— Ամենն էլ ծափ տվին, ծիծաղեցին (Պռ.)։

4. Երբ ենթական եզակի ձևով հոգնական նշանակություն ունի, բայը կարող է և հոգնակի դրվել։ Օրինակ՝ Ով որ (փոխանակ՝ ովքեր որ) այնտեղ կային, ամենի լացն էլ բերեց.— Խաղ կանչող տղաների ձայնը (փոխ. ձայները) լսողի խելքն էին տանում.— Կասես այս (փոխ. սրանք) այն տղայքը չեն, որ մինչև իրիկուն աշխատանքի մեջ են լինում (Պռ.)։ Անտառի լռության մեջ... տարօրինակ ձայներ էին հանում մեր ձիերի քայլվածքը (Մուր.— փոխ. քայլվածքները)։ Բանաստեղծության և պերճախոսության պատմությունը (փոխ. պատմություննեըը) գլխավոր տեղն են բռնում գրականության պատմության մեջ (Պալ.)։

5. Երբ եզակի ենթակայի հետ կա հետ բառով կամ միասնության գործիականով կապված մի խնդիր, և շեշտվում է այս խնդրի գործակցությունը, բայը դրվում է հոգնակի։ Օրինակ՝ Տանուտերը իր որդիների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը (Րաֆֆի)։ Մի ուրիշ ազգ, որ հունաց հետ կլասիկական աշխարհն են կազմում, հռոմայեցիք են (Պալ.)։ Ես փոքր էի, հազիվ յոթ-ութ տարեկան։ Մի հեռու տեղից հորս հետ սայլով վերադառնում էինք տուն։

170. Հոգնակի ենթակայի հետ բայը կանոնավորապես հոգնակի է դրվում, Օրինակ՝ Խորունկ ջրերը հանդարտ կլինին (Ա.)։

Ծան. 1. Պետք է ուշադրություն դարձնել, որ ձևով հոգնակի, բայց նշանակությամբ եզակի են ստացական հոդով գործածվածները. ուստի և դրանց բայը դրվում է եզակի. օրինակ՝ Բաններս (բաներս.— մեր բանը) աչ ա, ով հալում ա՝ հալա (Ա.)։ Տեղիս հայերը, թող Աստված հայ համարի, ոչ լեզուներն է հայի, ոչ հագուստը.— Քանի լուսահոգին ողչ էր, ամեն բարութիւններս էլ կար (Պռ.— մեր ամեն բարութիւնն էլ)։ Սրտերնս (մեր սիրտը) կամեցավ, ելանք, գնացինք։ Աչքներս (մեր աչքը) չուր դարձավ։ Խելքները գնում էր նրա հետ.— Արածները մի բան չէ (Պռ.)։

Ծան. 2. Հոգնակի ենթակայի հետ եզակի բայ դնելը ոամկաբանություն է և հաճախ պարզապես սխալ, որ անում են անփութությամբ մեր հեղինակները. օրինակ՝ Ինչ ահարկու տեսարաններ պիտի բացվեր քու աչքին (Գ.-Ք.)։ Ճոխ ուտեհիներու թավուտ ճյուղերեն սուր դայլայլիկներ կտրուկ, քրքռուն՝ հանկարծ աճձրեց մեր խոնջած գլխուն. մինչ գաղտնի ծայներ, որ մարգ կծաղրեն... նույնը կկրկներ թովված ականջնուս.— Կարթնար մեջս վայրի բնազդներ (Շանթ)։ Գիտեին, որ իրենց արարքները, անգամ մտածմունքները գաղտնի չէ իրենց մայրերի աչալրջությունից (Պռ.)։—Հոգնակի ենթակայի հետ բայը կարող է եզակի դրվել, առանց սխալ համարվելու, հետևյալ դեպքում՝ 1. Սպիտակ ու կարմրին տվող գլխարկներ է, որ երևում են։ Կանայքը ափոցներ է, որ բաց են անում.— Տասնավոր տարիներ է, որ Սարգիսը քաղաքի երեցփոխն էր.— Ինչ տեսակ խաղեր ասես՝ կա (Պռ.)։ 2. Աչքեր, ունքեր, ձեռներ, ոտներ և այլն բառերի հետ, որոնք միացյալ հոգնականություն են նշանակում. օրինակ՝ Անքնությունից աչքերը խառնել է.— Ձեռներս դողում է.— Ոտները գետնից կտրվեց (Պռ.)։

171. Բազմակի ենթակաների բայը կանոնավորապես հոգնակի է դրվում. օրինակ՝ Ձին ու ջորին կուվեցին, մեջտեղում էշը սատկեց (Ա.)։ Ես հետևում էի հափշտակել նրա հայացքը, որի մեջ այնքան կյանք ու կենդանություն էին ցոլանում.— Տրտմությունն ու թախիծը պաշարում էին ինձ.— Այլևս տխրությունն ու մտածմունքը թող չհուզեն ինձ.—

Միծաղ ու խնդում չքացան ինձ համար (Մուր.)։ Քուն ու երազ ինձնից փախել են (Պռ.)։

Բազմակի ենթակաների բայը սակայն բակառուցյամբ եզակի է դրվում հետևյալ դեպքերում.

1. Երբ երկու և ավելի եզակի ենթակաները իր կամ վերացական գաղափար են ցույց տալիս և համանիշ են, կամ մոտիկ նշանակություն ունին, կամ որևէ առնչությամբ մի ընդհանուր միացած, հավաքական նշանակությամբ են գործածվում իբրև մի հարադրյալ բարդ բառ։ Օրինակ՝ Կարգ ու կանոնը վերացել է։ Չափ ու սահման չկա նրա հանդգնությանը։ Մեգ-մառախուղը կիջներ Իդա լեռներեն (Գ.-Ք.)։ Ձայն ու ձունը, գոռգոռոցը երկինքը հասավ.— Ուշ ու միտքն ընկավ դրանց վրա.— Այստեղ մի ուրիշ կրակ ու պատիժ կա (Պռ.)։ Նրանց բնական խելքն և առողջ դատումնքն այնպես կարծել կուտար։ Քարը մաշվեցավ, բայց նրա եռանդը, նրա տոկունությունը մնաց անխորտակելի (Րաֆ.)։ Մրրիկ, կայծակ խառնված էր օդումը։ Թոզ ու դումանը աշխարհքը բռնել է։ Այս խոսքերն էլ որ չիմացավ, ձեռ ու ոտը թուլացավ։ Ամեն մարդի բերանից էլ փառք ու շնորհակալություն էր, որ ելնում էր Աստուծուն.— Մարդի դուռ ու տունը լիքն է.— Քի՞չ կա Աշտարակ սար ու ձոր, թուփ ու քո՞ւ.— Տեղ ու դադար չկա (Պռ.)։ Որքան մոտենում էինք գյուղին, այնքան աղմուկն ու շշուկը ավելանում էր.— Իմ մեջ կյանք ու կենդանություն կա.— Ամեն հայի տուն ու ընտանիքի ոգեվորում էր այդ դպրոցական առաքյալներին.— Մեր գյուղը որբացավ, անշքացավ, նրա զարդն ու գեղեցկությունը կորավ (Մուր.)։

2. Երբ եզակի բազմակի ենթակաները անջատական նշանակությամբ, առանձին առանձին են մտածվում, նույնիսկ երբ ենթականերից մեկը հոգնակի է։ Այս դեպքում բայը սովորաբար, իսկ երբ ենթականերից մեկը հոգնակի է՝ միշտ, ենթակայից առաջ է դրվում։ Օրինակ՝ Մի տեղ տիրում է անձրև, աղմուկ ու փոթորիկ, մյուս տեղ՝ պայծառ արև, ջինջ կապուտակ, և քաղցր հովեր.— Յանկանում եմ ապրել մի այնպիսի տեղ, ուր կյանքի պարզության հետ՝ պահպանվում է նաև բարքի մաքրությունը, սրտի անկեղծությունը.— Ամեն տեղ նրանց նույն երկինքը և նույն հանգստարանն էր սպասում.— Քանի՞ փող արժի այն դիրքը, այն հարստությունը, որ միայն իրենց անձին և գոյությանը դյուրություն տալուն է ծառայում (Մուր.)։ Այրարատում բրնակում էր թագավորը և թագաժառանգը միայն (Րաֆ.)։ Կույր է քու թշվառ կյանքը և այդ պաշտոն տվողը։ Այդ ժամին գեղեցիկ էր և՛ ծովակը, և՛ Մասիսի թիկունքից բարձրացող արևը, և՛ ծաղկազարդ լեռներն ու ձորերը իրանց վաղորդյան մշուշով։ Ետ են դառնում դեպի սեղանը, որտեղ բազմացրած է ս. Գեորգի լուսաթաթախ ոսկե աջը, մեռելհարույց ավետարանը ու մեկէլ մասունքները.— Ո՞ւր է իմ առաջվան լիքր երեսը, իմ հաստ կոները (Պռ.)։ Սիրուն օր մը ղգացինք արդեն, որ հնչուն գետն ու ձորը գողտրիկ՝ ծարավ սրտներուս ա՛լ չէր գար հե-

րիք.— Եվ թող երգիս հետ դուրս թափվի կրծքիս հոն երկար ատեն ծածկված անհուշ թրթիռը, հույզերս անուշ (Շանթ)։

Նաև. Կորթ է բայը եզակի դնել, երբ մոտիկ ենթական հոգնակի է. օրինակ՝ Բայց թունդ աղմուկին քիչ քիչ հաչորդեց առատ անձրևի զարկերն ու շառաչ (Շանթ)։ Ո՞ւր է մեր մանգաղները, խարտը, խոտհնձի շալվարը (Պռ.)։

3. Երբ բազմակի ենթակաները թվարկություն կամ կարգով դասավորված աստիճանում են ցույց տալիս։ Օրինակ՝ Ոչ մի մկնակ, ոչ մի նշույլ կենդանության չէր շարժվում նրա ցամաք դեմքի վրա (Րաֆֆ.)։ Մի հայացք, մի խոսք, մի չնչին օգնություն միայն բավական էր թշվառին ոտի կանգնեցնելու համար։ Տարին բոլոր նա ինքը, յուր կինը, յուր եղբայրը, յուր երեխան, յուր եզը, ցուրտ ու տաքի դիմանալով, հողի հետ խաղացել է, վարել է, փոցխել է.— էլ տանը մարդ, կնիկ, հարս ու աղջիկ չմնաց, որ վեր կացան... Որ ուխտավորը որ գեղումն է վեր եկած՝ նրանց մատաղների էրին էլ, մորթին էլ, դմակի կես բաժինը, մատաղի կես բաժինը, ոտ ու գլուխն էլ տան տիրոջն է.— Մի մովրով որ գալիս է, բա՛ նրան հաց չի՞ պետք. գառը, գինի, արաղ չի՞ պետք։ Է՛, նոր տարի, զատիկ է գալի, բա՛ մովրովին տեսություն գնալ չի՞ պետք.—Աշտարակցիք ձայն են տալիս՝ գնա՞ց, չմնա՞ց լավ խաղողը, լավ փշատը, լավ ալանին, լավ դեղձաչիրը, լավ գինին, լավ արաղը (Պռ.)։

Երբ թվարկություն ցույց տվող ենթականերն ամփոփվում են վերջը դրված մի բառով, ինչպես՝ ամենը, բոլորը, յուրաքանչյուրը, ամեն ինչ, ոչ մի բան և այլն, բայը համաձայնում է միշտ այս վերջինի հետ։ Օրինակ՝ Ձեր հացը, յուղը, պանիրը, բուրդը, ամեն բանն էլ իրան իրան գալիս է (Պռ.)։

4. Կրկնությամբ դրված եզակի ենթակաների հետ, որոնք անջատական նշանակությամբ են առնվում, բայը դրվում է թե՛ եզակի և թե՛ հոգնակի։ Օրինակ՝ Տեսնենք՝ որն ու որն է։ Ով և ով գնաց (կամ՝ գնացին)։ Թող մեկն ու մեկը երթա (կամ՝ երթան)։ Բայց՝ Մեկն ու մեկդ գնացե՛ք և ասացե՛ք նրան (և ոչ՝ գնա՛ և ասա՛)։ Թող ձեզնից մեկն ու մեկը դնա և ասի նրան (և ոչ՝ գնան, ասեն)։

5. Երբ բազմակի ենթակա են անորոշ դերբայները, մանավանդ երբ վերջիններս առանց հոդի են, բայը դրվում է եզակի։ Օրինակ՝ Պետք է (վայել է) գնալ և տեսնել նրան։ Մեզ մնում էր միայն թողնել և հեռանալ այնտեղից։

172. Բայի դեմքը *համաձայնում է միշտ ենթակայի դեմքին. ինչպես՝ Ես գնացի, դու գնացիր։*

Դեմքի համաձայնության համար պիտի նկատել.

1. Երբ ենթական մի դոյական անուն կամ ցուցական դերանուն է, առանձնապես այս, այդ այն, իսկ ստորոգյալը մի անձնական դերանուն է, կամ այս այդ, այն ցուցականների հետ նաև մի գոյական անուն, այն ժամանակ բայը դեմքով և թվով համաձայնում է ստորոգյալին։

Օրինակ՝ Այն մարդը, որ դուք որոնում եք, ես եմ։ Այդ դու ես։ Այդ ես եմ։ Այն մենք էինք։ Այս են իմ գրքերը (փոխանակ՝ սրանք են իմ գրքերը)։ Այն իմ եղբայրներն էին։ Այս այն տղայքը չեն (Պռ.)։ Դրանք պապական սովորություք է, կատարում ենք (Պռ.— ավելի ընտիր կլիներ՝ Այդ պապական սովորություքներ են, կատարում ենք)։

2. Բազմակի ենթակաների բայը հոգնակի առաջին դեմքով է դրվում, երբ ենթականերից մեկն առաջին դեմքի է. բայը հոգնակի երկրորդ դեմքով է դրվում, երբ բազմակի ենթակաները միայն երկրորդ ու երրորդ դեմքի են։ Օրինակ՝ Ես ու դու ենք իրար հարկավոր։ Ես, դու և քո եղբայրը պիտի գնանք։ Դու և նա միատեսակ բախտ ունիք։ Աստված որ օրը որ քեզ ժառանգ է տվել, այն օրը կմեռնենք քո կինն էլ, դու էլ (Հովհ. Թ.)։

Սան. Բազմակի ենթակայի այս կանոնը, ինչպես և § 171-ի մեջ հիշվածները վերաբերում են այն բազմակի ենթականերին, որոնք առանց շաղկապի կամ և, ու շաղկապով են կապակցվում։ Բայց երբ ենթակաները կապակցվում են մյուս համադասական շաղկապներով, ինչպես են՝ թե՛ — թե՛, ոչ միայն — այլև, ոչ թե — այլ, կա՛մ — կա՛մ և այլն, այն ժամանակ բայը թվով և դեմքով համաձայնում է միայն մոտիկ դրված ենթակային. և եթե առաջինի հետ է համաձայնում, երկրորդի համար բայը զեղչումով հասկացվում է։ Օրինակ՝ Թե՛ նա և թե՛ նրա եղբայրները գնացին.— թե՛ նա գնաց և թե՛ նրա եղբայրները (գնացին).—բայց՝ գնացին թե՛ նա և թե՛ նրա եղբայրները։ Ոչ միայն նա, այլև նրա եղբայրները գնացին (այլև ես ու դու գնացինք)։— Ոչ միայն նա գնաց, այլև նրա եղբայրները։ Կամ նա՛, կամ նրա եղբայրները պիտի գնան.— Կամ նա՛ պիտի գնա, կա՛մ նրա եղբայրները։— Կամ նա, կամ ես պիտի գնամ.—Կամ նա պիտի գնա, կամ ես.— Կամ նա՛, կամ ես ու դու պիտի գնանք։

3. Ս և Դ դիմորոշ հոդերով՝ ամենքս, ամենքդ, բոլորս, բոլորդ. ամեն մեկս, ամեն մեկդ, յուրաքանչյուրս, յուրաքանչյուրդ, երկուսս, երկուսդ, երեքս, երեքդ, չորսս, չորսդ և այլն, ինչպես և գոյական անուններն ու գոյականաբար գործածված ուրիշ ածականներ, ստանում են առաջին և երկրորդ դեմքի նշանակություն, և բայը դրվում է անորոշների ու թվականների հետ հոգնակի առաջին կամ երկրորդ դեմքով, իսկ գոյական անունների և գոյականաբար գործածված մյուս ածականների հետ, նայելով ենթակայի թվին, եզակի կամ հոգնակի առաջին կամ երկրորդ դեմքով։ Օրինակ՝ Ամենքս էլ հասանք տուն։ Ամենքդ էլ մնաք բարին։ Այսօր բոլորս էլ միասին գնացինք։ Գնացինք յուրաքանչյուրս մեր տունը։ Երկուսս միասին գնացինք։ Չորսդ էլ հեռացեք աչքիցս։ Մարդս (ամեն մեկս, յուրաքանչյուրս) մի երկու կով ենք պահում.— Մեկս աջ կողմից ենք գալիս, մյուսս՝ ձախ. մեզանից ոմանք լեռան վրայովն ենք անցնում, կարճ կտրում, ուրիշները լեռը շուրջ են բոլորում.— Էգուց երեքս էլ կերթանք.— Դուք գիտեք, որ մեր պապական, նախնուց սովորություն է, որ սրտի այսօր մինդ (ձեզնից մեկը) գաք, ժամին մի բան տաք, դուռը բանաք (Պռ.)։ Մեկն ու մեկդ եկեք ինձ հետ։ Այդ նրա համար եմ դրել, որ քո հրամանդ որը հավանես,

այն տանենք։ Այսօր հրամանքդ մեր գյուղի հյուրն ես (Պռ.)։ Հրամանքդ, Երևի, Դիլիջան եք գնում (Մուր.)։ Մեղավորս չարժանացա նրա սուրբ տեսության.— Նվաստս չգիտեմ, թե ինչ անեմ։ Ջիվանս հասկացա բանի հիմը (Ջիվ.)։— Չգիտեմ ինչ եք այս պառավներդ այդ հին ծիսնակ բաները սիրում (Պռ.)։

4. Երբեմն անուններն առաջին կամ երկրորդ դեմքի նշանակությամբ իբրև ենթակա են գործածվում նաև առանց դիմորոշ հոդերի։ Այսպես և ո՞վ հարցականը, ավելի կրկնված՝ ո՞վ ու ով։ Օրինակ՝ էլ ի՞նչ մարդ ու կնիկ թաքուն թաքուն խորհուրդներ եք անում.— Այսօր եղբայր ու քույր իրարու սիրտ տալուց հետո՝ երկուսով միասին մեր թշվառ մոր արտասուքներն ենք սրբում.— Գյուղի սյուների մինն էլ վեր ընկավ. մնացինք մի երկու, երեք ծեր մարդիկ (Պռ.)։ Ասացեք տեսնեմ, ո՞վ ու ով գնացիք նրանց կանչելու։ Ծառադ սկզբումը քեզ զգուշացրի և քրիստոնեական պարտականությունս լցուցանելով խորհուրդ տվի քո սեփական գործով պարապել (Պռ.)։

2. ԵՆԹԱԿԱ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼ ՈՒ ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ

178. Հայերենում ստորոգյալն ու ստորոգելիական վերադիրը միշտ անփոփոխ ուղղական են դրվում և թվով սովորաբար չեն համաձայնում հոգնակի ու բազմակի ենթականերին։ Օրինակ՝ Առյուծը գազան է.— Առյուծն ու վագրը գազան են։ Նա կարգվեց վերակացու։— Նրանք (Արտաշեսն ու Տիգրանը) կարգվեցին վերակացու։— Այսպես և անցողական բայերի հետ՝ Նրան վերակացու կարգեցին. Նրանց (Արտաշեսին ու Տիգրանին) վերակացու կարգեցին (տե՛ս §§ 55, 56)։

Առանձին դեպքերում սակայն հոգնակի և բազմակի ենթակաների հետ գոյական ստորոգյալն ու ստորոգելիական վերադիրը հոգնակի են դրվում՝ թվով համաձայն ենթակային, իսկ երբ բայն անցողական է, ստորոգելիական վերադիրը թվով համաձայն է լինում կրող խնդրին։

174. Հոգնակի և բազմակի ենթակաների հետ գոյական ստորոգյալն եզակի է դրվում՝

1. Երբ անորոշ է և ցույց է տալիս ենթակայի ինչ, ինչ բան լինելը, այսինքն առարկայի սեռը, ընդհանուր բնավորությունը, հատկությունը։ Օրինակ՝ Առյուծն ու վագրը գազան են (ի՞նչ են).— Մենք հայ ենք.— Տաքար, առագաստ լվանալն ու պահունի հավաքելը մի դժվար բան չի (Պռ.)։

2. Երբ գոյական անունը մի թվականի հետ եզակի ձևով է գործածվում։ Օրինակ՝ Սրանք ընդամենը հինգ հոգի են (Պռ.)։

3. Երբ ստորոգյալը, լինի որոշված թե անորոշ, մի նյութի, վերացական կամ հավաքական անուն է և մի միություն, իբրև մի հատ պարզ դաղափար է ըմբռնվում։ Օրինակ՝ Բարի զավակները ծնողների ուրա-

խութիւնն են: *Ահա՛ այս ծառերն են մեր անտառը: Դուք երկրի աղն եք (Մատթ. ե. 13): Եվ երկուսը (մարդ ու կին) կլինին մեկ մարմին (Մատթ. ԺԹ. 5): Երկու եղբայրները մի սիրտ և մի հոգի են: Ձեր այս բոլոր գործերը տեսնելուց հետո, գործեր, որոնք արդյունք են մեծ անձնազոհության (Մուր.):*

175. *Հոգնակի և բազմակի ենթակաների հետ գոյական ստորոգյալը* սովորաբար հոգնակի *է դրվում՝*

1. Երբ որոշված է և ցույց է տալիս ենթակայի ով, որը, ինչը *լինելը: Օրինակ՝ Նևրսես Շնորհալին և Իգնատիոս վարդապետը Ստեփաննոս Մանուկ եպիսկոպոսի աշակերտներն էին: Տեր Հոր երկու որդիներն էլ քույր Աննայի աշակերտներն էին.— Դրանք իմ օգնական դաստատուներն են (Մուր.): Խիզանի դաշտի բոլոր բարիքները քրդի ձեռքին են... իսկ մշակողները հայերն են.— Մենք որ կանք՝ ձեր հայրերն ենք. ձեր համար աղոթող ենք.— Սրանք Աստծու պահած գառներն են.— Հայ մարդը, հայ կինը, հայ երիտասարդը, հայ աղջիկը քրդերի անվարձ մշակներն են, քրդերի հաճույքների առարկաներն են (Պո.):*

Ո՞վ հարցականի հոգնակին՝ ո՞վքեր *քիչ է գործածվում, ուստի սովորաբար եզակի ձևով է դրվում իբրև ստորոգյալ. օրինակ՝ ո՞վ եք դուք.— ո՞վ են այն տղան ու աղջիկը, փոխանակ՝ ո՞վքեր եք դուք, ո՞վքեր են այն տղան ու աղջիկը:*

Ծան. Պետք է նկատել, որ ժողովրդական ձևով ստորոգյալը որոշված ժամանակն ևս հաճախ եզակի է դրվում, ինչպես՝ Ա՛յ տղա, բաս իշխանները քո հոր մշա՞կն են, որ... (Պո.):

2. Երբ անորոշ է և մտածվում է անջատական նշանակությամբ, առանձին առանձին, կամ թե փոխադարձ նշանակությամբ. Օրինակ՝ Այդ ծառերը մի մի բուրգեր էին (Մուր.— ամեն մեկը մի բուրգ էր): Դպրոցի սաները պետք է մի մի ջահեր դառնային (Պո.): Դրանք հայ ուսանողներ էին.— Մենք որդիք ու անդամներ ենք այնպիսի մի ազգի, որ ունի կարիքներ.— Քույր Աննան և նրա գործերը մեր, գյուղացիներիս աչքումն են մեծ բաներ երևում. ապա թե ոչ, դուք այնքա՛ն նշանավոր մարդիկ ու գործեր ունիք, որ մեր հսկաները թզուկներ կերևան ձեզ (կարելի էր գրել՝ մեծ մեծ բաներ.— մի մի թզուկներ).— Նա սկսել էր սիրել հայ շինականն ու գյուղացին, որոնց նա յուր հարազատ ազգակիցներն էր համարում (որոնք նրա հարազատ ազգակիցներն էին համարվում).— Դրանք գյուղացու համար անվայել հագուստներ են (Մուր.): Դրանք բոլորը սուտ բաներ են (սուտ սուտ բաներ են).— Նրանք մի խոսքի կանգնող մարդիկ չեն.— Ամենքն էլ հասակակից տղայք են (Պո.): Հանգստությունն ու աշխատանքը եղբայրներ են (Պո.—Հանգստությունն աշխատանքին եղբայր է, աշխատանքը՝ հանգստության).— Սիրով լծակցվածներին հանցանք է իրարից զատնիք ունենալ. ինձ ի՞նչ, թե դեռ միայն նշանածներ ենք (Պո.):

Նաև. Պետք է նկատել, որ 1) հոգսակի և բազմակի ենթակաների հետ անշատական և փոխադարձ նշանակությամբ ևս ստորոգյալը ժողովրդական ձևով կարող է եզակի դրվել. օրինակ՝ Հենց այն կորացած աչքերը մի մի գիրք են (Պո.)։ 2) Քաղաքավարական դեմ. մենք հոգնակիների հետ, երբ գործ են ածվում մի անձի համար, ստորոգյալն ամեն դեպքում եզակի է դրվում. ինչպես՝ Դուք նրա ընկերն եք։

176. *Գոյական ստորոգյալը հոգնակի է դրվում, և բայը ստորոգյալի հետ է համաձայնում (տե՛ս § 172. 1)։*

1. Երբ ենթական եզակի ձևով հոգնական նշանակություն ունի։ Օրինակ՝ Այս իմ գրքերն են.— Այս են նրա ասած խոսքերը.— Այն քո ընկերներն են (փոխանակ՝ սրանք իմ գրքերն են. նրանք քո ընկերներն են)։ Այն մենք էինք։ Այս ամենն ինձ համար առեղծվածներ էին, որոնց... պարզելու համար պակասում էր միջոց.— Արդարև այդ բոլորը երազներ չեն և գոյություն ունին (Մուր.)։ Հասարակ մահկանացուի համար սովորական տեսարաններ են այս ամենը.— Բոլորը քրդեր են.— Տեսնեմ՝ այդ ի՞նչ ձվեր են (Պո.)։ Այս ի՞նչ լավ խնձորներ են։

2. Երբ ենթական եզակի է, բայց ստորոգյալը իր նշանակությամբ պետք է հոգնակի լինի։ Օրինակ՝ Գազանի բնակարանը լեռներն ու ձորերն են (Պո.— ոչ թե մի լեռ կամ ձոր, այլ ընդհանրապես բոլոր լեռներն ու ձորերը)։ Գազանը մի տեղ բույն չի դնում. նրա որջը մի օր քարայրներն են, մյուս օրը՝ անձավներն ու խորշերը (Պո.),

3. Երբ դերանուն ենթական զեղչված է. օրինակ՝ Բայց Գարեգինը չթողից, թե՝ ավելորդ բաներ են (Պո.)։ Տեսա թե ինչպես վեր ցցվեց նախ՝ մի մարդու պատկեր, ապա՝ երկրորդ... քյուրդ ավազակներ էին. — Տեսնե՛ս ուրիշ աշխարհում էլ այսպիսի սարեր կա՞ն.— Սիրուն սարեր են։— Եվ թեպետ անձամբ չէ տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է թե՝ բարի մարդիկ են.— Եվ ձեռքը նախ ինձ՝ ապա Պետրոսին տալով ողջունեց մեզ այնպիսի մտերմությամբ, որ կարծես թե հին բարեկամներ լինեինք (Մուր.)։

177. *Ածական ստորոգյալն ու ստորոգելիական վերադրերը միշտ անփոփոխ միևնույն ձևով են դրվում, լինի ենթական եզակի, թե հոգնակի, թե բազմակի. օրինակ՝ Դու բարի ես.— Դուք բարի եք Տիգրանն ու Արտաշեսը բարի են։*

Պետք է նկատել հետևյալները.

1. Գերադրական աստիճանի նշանակություն ունեցող և դասական թվական ածականները, երբ ստորոգյալ են, ստանում են որոշող հոդ և գոյականաբար են գործածվում։ Օրինակ՝ Նա ամենից մեծն է։ Տիգրանն առաջինն է, իսկ Արտաշեսը՝ երկրորդը։

2. Մյուս ածականներն իբրև ստորոգյալ՝ առանց հոդի են մնում, երբ միայն իրենց գաղափարն են հայտնում. ինչպես՝ Ես ազատ եմ. Դուք ազատ եք. Նրանք մեծահասակ չեն. բայց երբ իրենց գաղափարի հետ միացած հայտնում են և մի զեղչված գոյականի գաղափար, այն

ժամանակ հոդ առնելով՝ գոյականաբար են գործածվում և կարող են, ինչպես ամեն գոյական ստորոգյալ, թվով համաձայնել հոգնակի կամ բազմակի ենթակային. օրինակ՝ Սրանք են լավերը։ Ի՞նչ լավն է դա։ Ինչո՞ւ այդ աղջիկները չեն խաղում, նրանք այնքան մեծահասակները չեն (Մուր.)։ Դու ես մեղավորը։

Նաև. ենթակայական դերբայն իբրև բացասական խոսքի ստորոգյալ հաճախ հոդով է գործածվում. օրինակ՝ Ինչքան էլ ասես ես տեղից շարժվողը չեմ.— որ նշանակում է՝ ես բնավ տեղից չեմ շարժվիլ։

3. ԲԱՅԱՀԱՅՏԻՉ ԵՎ ԲԱՅԱՀԱՅՏՅԱԼ

178. *Բացահայտիչը կանոնավորապես դրվում է բացահայտյալի ետևից և թվով, հոլովով ու դեմքով համաձայնում է նրա հետ (§§ 41. 2, 42)։ Դեմքով համաձայնությունը բացահայտյալի հետ լինում է ս, դ դիմորոշ հոդերով։ Օրինակ՝ Բագրատունյաց մեծագործության ամենամեծ արդյունքն եղավ* **Անին**, *հազար ու մեկ եկեղեցիների* **քաղաքը**.— *Հայկ յուր շինած դաստակերտները տալիս է յուր* **թոռանը**՝ *Կադմոսին ժառանգություն (Պալ.)։ Ինչո՞ւ չեք մոտենում մեզ, սակավաթիվ* **գինվորներիս** *(Մուր.)։*

179. *Բացահայտչի և բացահայտյալի համաձայնության համար պետք է նկատել հետևյալ մանրամասնությունները.*

1. Բազմակի բացահայտյալների բացահայտիչը, ինչպես և բազմակի բացահայտիչների բացահայտյալը, դրվում է հոգնակի։ Օրինակ՝ Հայոց երկիրը կարելի է համարել մի լեռնահանգույց երեք աշխարհների՝ Փոքր Ասիայի, Մարաստանի և Ասորեստանի մեջ.— Հռչակավոր դրամատիկական բանաստեղծները՝ Էսքիլես, Սոփոկլես, Եվրիպիդես՝ իրանց անմահ գրվածներով հույն ժողովրդին գրավում էին թատրոններում (Պալ.)։

2. Դերանունների բացահայտիչն առնում է համապատասխան դեմքի դիմորոշ հոդ։ Օրինակ՝ Ես Ջիվանս չլսեցի (Ջիվ.)։ Ասացի ես Ասքանազյանս (Պռ.)։ Ես հովիվս մեղանչեցի, դոքա այդ ոչխարնե՞րն ինչ արին։ Մենք հիշում ենք ձեզ, զարգացած ու կարող երիտասարդներիդ.— Ինչո՞ւ դուք, գյուղացիներդ չեք անում.— Սակայն մեզ, ուսանող երիտասարդներիս վրա սրբազան պարտք կա.— Այդ գիտե ինքը, մեր ժողովուրդը.— Իրենք աշակերտներն էլ... մեծ մասամբ ընդունակ և սրամիտ երևացին ինձ.— Այսպես էր կարգադրել ինքը, քույր Աննան (Մուր.)։

Երբեմն դերանունների բացահայտիչն առանց դիմորոշ հոդի է մրնում—ինչպես՝ Ես, խաբրարեր, պրծա, եկա (Ժող. երգ.)։ Բա՛ մենք ճար ու ճրագ մի տղա ունենք, էն ո՞նց վեր ունենք ղրկենք ղարիբ տեղ ու մենք, երկու ճոգի, մնանք ըստի բայղուշ (Մուր.)— կամ թե դերանուն բացահայտյալը չի դրվում, և բացահայտիչը միայն դիմորոշ հոդով է գործածվում։ Օրինակ՝ Հայտնի չէ, մելիքի խոսքե՞րը, թե օտարա-

կան հյուրիս (փոխանակ՝ իմ, օտարական հյուրիս) ներկայությունը նրա վրա ազդեցություն գործեցին. Հայրենասեր հոդ (fո, հոդ) հովանի այն և անքուն հսկողությունն է ցանկալին արդյունքն առաջացրել (Պռ.—տե՛ս և § 172. 3)։

3. Ինfս, ինքդ, ինքը, ինքներս, ինքներդ, իրենք, իբրև զորացման դերանուն, հաճախ դրվում են անուններից, ինչպես և անձնական դերանուններից հետո իբրև բացահայտիչ։ Օրինակ՝ Ես ինքս գնացի, դու ինքդ ասացիր, նա ինքն եկավ մեզ մոտ։ Բնությունն ինքը կբժշկի։ Նրա մոր՝ իր բերնի խոսքն է, որ... (Պռ.)։ Նրա մորն՝ իրեն հայտնեցին։ Հազար անգամ մենք ինքներս մեզ հարցրել ենք.— Այդ ո՞վ ասաց քեզ,— Դու ինքդ, սիրելիս, դու ինքդ (Մուր.)։

4. Յուցական դերանուններն ևս դրվում են իբրև բացահայտիչ, մանավանդ անորոշ դերբայներով ասված կապակցությունների համար, որոնք դերանունով ամփոփվում են։ Օրինակ՝ Արդարև ապրել շարունակ գյուղում, տեսնել շուրջդ միայն գյուղացին և նրա միօրինակ կյանքը, չստանալ նրանից ոչինչ նոր, ոչինչ թարմացնող և ստիպված լինել ըսպառել նրա համար ինչ որ ունիս պաշարած, սա դժվար կացություն է. — Դուրս գալ քաղաքի փառավոր տանից և ապրել գյուղի այդ տեսակ մի հյուղում, դա արդարև չափազանց զգալի էր ինձ.— Անհայտության մեջ ապրել, անհայտության մեջ մեռնել, այդ է իմ ցանկությունը (Մուր.)։ Կեցցե՛ շատ օրեր մանուկ Հայաստան, նա որ դեռ միայն մեր սրտի խորքում ունի յուր հիմքը (Գ.-Ք.)։

5. Անունների և դերանունների բացահայտիչ լինում են բոլոր ածականները, երբ գոյականաբար գործածվելով ետադաս են դրվում՝ համապատասխան դեմքի մի դիմորոշ հոդով, նույնպես և ամենը բառը (տե՛ս § 42)։ Օրինակ՝ Մենք չռուս միասին ծունկ չոքեցինք նրա առաջ. — Դուանք բոլորն էլ կարդում են ձրիաբար.— Դուք մեզ մոտ կտեսնեք գեղեցիկ կարգեր ու սովորություններ... դուանք բոլորը նույնպես քույր Աննային ենք պարտական.— Ինfս առաջինն ուղևորվեցա դեպի այն դասարանը (Մուր.)։ Մենք երկոքյանս էլ միատեսակ նպատակի ենք դիմում (Պռ.—երկոքյանս հնացած է, ինչպես և բոլորեքյանս, փոխանակ՝ երկուսս, բոլորս).— Կանայքն ամենքը հավաքվեցին (Պռ.)։ Հռոմում ավելի ճարտասանությունը ծաղկեցավ, մանավանդ պատմական և հրապարակախոսական տեսակները, որոնք երկուսն էլ պինդ կապված էին կյանքի հետ (Պալ.)։ Մենք յուրաքանչյուրս գնացինք մեր տները։ Նրանց երեքին էլ պատիվներ տվին։ Պարտեզի ծառերն ամենն էլ կտրատեցին։ Վանքի խցերն ամենը քանդված են.— Դրանց երկուսն էլ մի տեղ կապեցեք.— Մեզ երկուսիս մի տեղ թաղեցեք (Պռ.)։ Դո՛ւ, սիրելիդ իմ։

Ծան. 1. Ժողովրդական ձև է ասել՝ ես մինակս գնացի, Դու մինակդ գնացիր, փոխանակ ասելու՝ ես մենակ գնացի, դու մենակ գնացիր։

Նաև. 2. երբ բացահայտիչը թվական է, կարելի է և մասնական սեռականով ասել. օրինակ՝ Ինչ որ մենք ունինք, այն բավական կլինի ձեր երկուսին (փոխանակ՝ ձեզ երկուսիդ, տե՛ս § 83. 2)։ Այս փոխանակությունը սակայն միշտ կարելի չէ անել. ուղղական, օրինակ, «Մենք երկուսս նրանց տասին արժենք», բոլորովին տարբեր նշանակություն ունի մասնական սեռականից՝ «Մեր երկուսը նրանց տասին արժեն»։ «Մենք երկուսս» նշանակում է՝ մենք երկուսով, իսկ «մեր երկուսը»՝ մեզնից երկուսը։

6. Հասարակ անուն բացահայտիչն, երբ անորոշ նշանակություն ունի, կամ թվարկություն է ցույց տալիս, դրվում է առանց հոդի։ Օրինակ՝ Ուզում եք սպանել ինձ, մի մարդու, որ ճշմարտության խոսեցի։ Իմ ձին, մի ողորմելի վտիտ կենդանի, ասպանդակների պատճառած ցավը տանում էր, բայց ընթացքը չէր փոխում։ Աշտարակցի մի կնիկ՝ սատանի զարմ՝ իմանալով թե... Մնացորդները, մարդ ու կնիկ, հարս ու աղջիկ, լավ լավ շորերով զարդարվեցին... Ժողովորուդն էլ, մեր ու մանուկ, տերտերների ետևից գնացին (Պռ.)։ Կարծելով թե տղու մը հետ գործ ունի՝ ինձ, հասուն երիտասարդ և քիչ մը սրիկա՝ և թե... (Մերենց)։

7. Երբեմն բացահայտիչը կամ բացահայտյալը, երբ հատուկ անուն է, մանավանդ պատմական անուն, գրաբարի ձևով առանց որոշող հոդի է մնում։ Օրինակ՝ Տիգրանի ժամանակակից էր Մարաց թագավորի թոռը՝ Կյուրոս.— Հունաց պատմության հայրը՝ Ստողոտոս՝ Ողիմպիական խաղերի ժամանակ բոլոր ժողովրդի առաջ կարդաց յուր պատմությունը.— Ալանաց թագավորի աղջիկը՝ Սաթենիկ՝ գերի ընկավ։— Վաղարշի որդին՝ Խոսրով Ա. անմիջապես ժողովեց հայոց զորքերը և գնաց յուր հոր մահվան վրեժն առնելու,— Վաղարշ, Տիգրան Գ-ի որդին և հաջորդը, յուր թագավորությունը շինություններով սկսավ.— Ութերորդ դարու վերջերը Աշոտ Մսակեր, Բագրատունյաց թագավորության հիմնադրի պապը, գնեց Շիրակա գավառը Կամսարականներից (Պալ.)։

8. Բացահայտիչը բացահայտյալի հետ հաճախ կապակցվում է իբրև բառով։ Օրինակ՝ Նա, իբրև սիրող մայր, կցանկանար անշուշտ ամառն անցնել յուր որդու հետ.— Տիրացու Մոսին, իբրև ծանոթ անձն, յուր սաստող հրամանն արձակեց շների դեմ.— Նրանք հետաքրքիր աչքերով դիտում էին ինձ, որ երևի իբրև քաղաքացի մի բանով արժանանում էի նրանց հետաքրքրությանը.— Ես, իբրև հայ մարդ, իբրև իմ արյունակիցների ուրախության ու վշտերին բաժանորդ, բնական է, որ հետաքրքրվեմ ձեր անցյալով, ոչ իբրև մասնաչոր անձի, այլ իբրև հասարակական անձնվեր գործչի.— Ինձ համար, իբրև ուսուցչի, անհնար և նույնիսկ ամոթ էր... ձեր զգացմունքը քաջալերել (Մուր.)։

Երբեմն բացահայտյալը, երբ մի դերանուն է և ենթակա, չի դրվում, կամ իբրև բառով բացահայտիչը դրվում է բացահայտյալից առաջ և այն ժամանակ ստանում է հիմունքի կամ ձևի պարագայի նշանակություն։ Օրինակ՝ Տեր Մակուչն անծանոթ էր քաղաքներում ընդունված այս կարգերին. ուստի հեռվից տեսած լինելով մեզ, իբրև քահա-

նա, շտապել էր մեզ ողջունելու.— Իբրև գյուղական քահանա, նա մինչև անգամ ավելի բան գիտեր, քան սպասելի էր (Մուր.)։

Ծան. Բացահայտչի հետ չպիտի շփոթել իբրև շաղկապական բառով կապակցված զեղչական խոսքը, ինչպես՝ Գյուղացիներն ևս ընդունեցին ինձ իբրև իսկական միանձնուհու (Մուր.)։

4. ՄԱԿԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՈՒՆ

180. Մականունները, այսինքն այն ածական կամ գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան վրա առաջից (տե՛ս §§ 41. 1., §§ 43, 63, 78—89, 108. ծան., 127), թվով և հոլովով չեն համաձայնում իրենց անվան հետ, այլ միշտ անփոփոխ միևնույն ձևով են մնում. ինչպես՝ լավ մարդ, լավ մարդու, լավ մարդուց, լավ մարդիկ, լավ մարդկանց և այլն. Վարդան զորավարը, Վարդան զորավարի, Վարդան զորավարից և այլն. մի գունդ զորք, մի գունդ զորքի, մի գունդ զորքից և այլն։

Աշխարհաբարին հատուկ մի ձև է, որ հատուկ անունների ածական մակդիրը, երբեմն և սովորական ածական վերադիրը, դրվում է անվան ետևից և իբրև մի գոյական որոշող հոդ առնելով հոլովվում է, մինչդեռ հատուկ անունն ինքը ինչպես մի ածական վերադիր անփոփոխ է մնում. օրինակ՝ Ներսես Մեծը, Ներսես Մեծի, Ներսես Մեծից և այլն. Աշոտ Երկաթը, Աշոտ Երկաթի. Գրիգոր Լուսավորիչը, Հոր Երանելին. Տիգրան Առաջինը, Տիգրան Առաջինի, Տիգրան Առաջինից և այլն. Վարուժան Մամիկոնյանը, Մովսես Խորենացին։— Աստված ամենաբարին ամեն մեկին հավասար ստեղծել է աշխարհի մեջը բնակելու համար (Ջիվ.)։ Մի՞թե Մեհրուժան չարագործը խելքից հանեց նրան.— Լուկուլլոս Հռոմայեցին (Բաֆ.)։

Ծան. Երբեմն գրաբարի ձևով ասվում է՝ Սուրբ Գրիգորը, Քաջն Վարդանը, Մեծն Տիգրանը, Մեծն Տիգրանի և այլն. Արին Արամազդ, զեղեցիկն Արու։ Այս կիրառությունը սակայն, բացի մեծն բառից, հնացած է. այժմ ասվում է սովորաբար՝ սուրբ Գրիգորը, սուրբ Գրիգորի. Քաջ Վարդանը, Արի Արամազդը։ Նույն ձևով երբեմն ասվում է և ժամը վեցին, ժամը հինգից և այլն, որ ավելի ճիշտ է ասել՝ ժամի վեցին, ժամի հինգից, ինչպես ասվում է ամսի վեցին, ամսի հինգից։

181. Անվան թիվը հաճախ կախված է իր մականվան նշանակությունից, ուստի պետք է նկատել հետևյալները.

1. Անունը հոգնակի է դրվում, երբ վերադիր ունի մի բազմապատկական նշանակությամբ կրկնավոր ածական։ Օրինակ՝ լավ լավ ջրեր, ինչ ինչ գործեր, մեծ մեծ բաներ, սուր սուր փշեր, պես պես ձևեր, տեսակ տեսակ գույներ։ Այս սերը նոր չէր և ոչ էլ օրերի, կամ շաբաթների գործ. նա դարբնվել էր իմ սրտում ամբողջ տարվա ընթացքում մի մի կայծերով, որոնք... Մեր գործերն, առհասարակ, այնպես են ընթանում, որ հեռվից նայողը պիտի կարծե թե՝ այս անտեր հայոց աշխարհում

ոչ մեծ կա, ոչ փոքր. ոչ տեր կա, ոչ տիրական։ Այլ կան մի մի սարկավագներ, որոնք... (Մուր.)։

2. Բազմակի մականուններ կամ հոգնակի սեռական վերադիր ունեցող անունը եզակի է դրվում, երբ խոսքի իմաստը պարզապես մի առարկայի գաղափար է արտահայտում. իսկ ընդհակառակն հոգնակի է դրվում, երբ խոսքի իմաստից երևում է, որ անունն անհրաժեշտաբար մի քանի առարկա է ցույց տալիս։ Օրինակ՝ Այս երիտասարդները կորցրին իրենց եղբայր (նրանք եղբայր են, հայրը մեկ է. թե չէ՝ պետք էր գրել իրենց հայրերին)։ Ես ու ընկերս՝ կանխավ արած մեր որոշման համաձայն՝ դուրս եկանք քաղաքից (Մուր.—որոշումը իմ և ընկերիս մեջ ընդհանուր է)։— Մեր առաջին և երկրորդ դասարանները շատ թույլ էին կազմված։ Հարավային և հյուսիսային կողմերը. Հունվար և փետրվար ամիսները։ Վաղարշ Թագավորը մի քաղաք շինեց այնտեղ, ուր Մուրց և Երասխ գետերը խառնվում են.— Մասիսի արևմտյան-հարավային կողմն աղեղնաձև ձգվում են Բարդող, Սուկավետ և Սերմանց լեռները (Պալ.)։ Ես չգիտեմ նրանց անունները։ Մի երկու ամիս ևս, և մենք կթողնենք այն տաճարները, որոնց հարկերի տակ մեր սրտերում ցանեցին գիտության ու բարվո, ճշմարտի և գեղեցկի սերմերը.— Աշխատում եմ, որ նրանց մտքերի հետ միասին կրթվին և ազնվանան նրանց հոգիները. հաստատում և ամրապնդում եմ նրանց կրոնական զգացմունքները.— ...Բարձրություններ, որոնց մի կողմերը կպած լինելով գետնին՝ մյուսները բարձրանում էին խանձաքարերով շինված ցածուն պատերի վրա (Մուր.)։

Առանձին ուշադրություն պիտի դարձնել սակայն, որ հոգնականի փոխանակ շատ հաճախ եզակի է դրվում այսպիսի վերադիրներ ունեցող անունը, մանավանդ երբ վերացական անուն է, կամ անջատական նշանակությամբ է առնվում։ Օրինակ՝ Ամենքն իրանց մեռելների անունը տալիս ու կրծքներին բռնցում էին (Պռ.)։ Այս ու այն կողմից ձայն տրվին։ Անհրաժեշտ է, որ եղած լավ հատկությունները խնամենք և պահպանենք նույնիսկ իրենց հին կերպարանքում (իբրև ամեն մեկն իր կերպարանքում).— Կարոտել այնպիսի բարիքների, որ բնության մեջ ապրող մարդը վայելում է առատորեն, առանց սակայն նրանց արժեքը գրնահատելու (իբրև՝ նրանց յուրաքանչյուրի արժեքը).— Նախագահը ժողովականների ուշադրությունը գրավեց իր վրա.— Եթե ջուրը յուր կաթիլներով ծակում է ապառաժը, մի՞թե մեր կամքը այդ չի կարող անել. Պատմության մեջ հայտնի բազմաթիվ անձինք նշանավոր են դարձել և ազգերի ու սերունդների սերն ու սիրտը գրավել ոչ այն պատճառով, որ իրենց անձն են սիրել, կամ շահը խնամել, այլ որովհետև նվիրվել են հասարակաց բարվույն.— Այդ ծրագիրների մեջ մտնում էին... զեղծումներ կատարող և արդարադատության աչքից խուսափող պաշտոնյաների արարքը մերկացնելու կարևոր խնդիրները.— Կօգներ գյուղացուն յուր աշխատության ու արդյունքը ոչ թե կեղեքիչների ձեռքը.

այլ յուր հարկի տակ ժողովելու։—Իմ ու տանուտերի խոսքից ավելի նրա խոսքն ունի արժեք (Մուր.)։

182. *Մեկից ավելի թիվ ցույց տվող մականունների անունները դրվում են եզակի և հոգնակի։ Օրինակ՝ Հին բաժանմամբ Մեծ Հայքն ուներ տասնուհինգ* **նահանգ** *հարյուր ութսուն և ինը* **գավառներով** *(Պալ.)։*

Այս համաձայնության համար ընդհանրապես պետք է նկատել, որ անունը, երբ անորոշ է, սովորաբար եզակի է դրվում. իսկ երբ որոշված է, սովորաբար հոգնակի է դրվում։

Թվական վերադիր ունեցող անունը **եզակի** *է դրվում հատկապես՝*

1. Երբ անունն իր վերադրով միասին առնվում է իբրև խոսքի մի մաս և պատասխանում է ի՞նչպիսի, ո՞րքան, ո՞րչափ, ո՞րքան տեղ, ո՞րքան ժամանակ, ո՞րքան ժամանակվա, ո՞րքան ժամանակից և այլն. քանիսի՞, ո՞րքանի, քանիսո՞վ, քանո՞վ, ո՞րքանով, ո՞րքանը, ո՞րչափը, քանի՞ցս և այլն հարցերին, որոնք ցույց են տալիս չափ ու քանակ, դին ու արժեք, ժամանակ և կամ առարկայի հատկանիշ։ Օրինակ՝ Երկու տեսակ (ի՞նչպիսի) գրիչներ. Երկու գույնի ձիեր։ Հինգ բաժակ (ո՞րչափ) կաթ։ Խոճա Մարութից երկու հարյուր մանեթ (ո՞րքա՞ն) պարտք արի, թումանին մի (երկու, երեք և այլն) աբասի շահով ու մի (երկու, երեք, չորս և այլն) ամիս ժամանակով (Մուր.)։ Այն պատը տասը կանգուն (ո՞րչափ) բարձր է։ Այս գինու երեք շիշն (ո՞րչափը) արժե հիսուն կոպեկ (ո՞րքան)։ Նա այն ցորենից միայն տասը բեռ (ո՞րչափ) գնեց։ Հազար անգամ ասել եմ քեզ։ Այս հագուստն ինձ հիսուն ռուբլի (ո՞րքան) նստեց։ Երեք ռուբլու (ո՞րքան, ո՞րքանի) ապրանք։ Մի ձուն երեք կոպեկի (ո՞րքանի, քանիսի՞) էին ծախում։ (Այգին) ծախեցի Մոսու տղի վրեն ութհարյուր մանեթի... չաղացը ծախեցի Խոճա Մարութի վրեն չորսհարյուր մանեթի (Մուր.)։ Հատն երկու կոպեկով (քանո՞վ, քանիսո՞վ) էին տալիս։ Մի հազար կամ երկու հազար մանեթ (ո՞րքան) որ ունենամ... Հազար, երկու հազար մանեթի (ո՞րքանի) տեր.— Որտեղից որ է՝ մի երկու հարյուր մանեթ (ո՞րքան) հասցրու (Մուր.)։— Անց կացավ մի ամիս, երկու ամիս (ո՞րքան ժամանակ).— Ուղիղ երեք տարի է անցել այն երջանիկ օրից.— Ինձ մնում էր միայն մի երկու ժամ.— Մի երկու ամիս ևս, և մենք կթողնենք... (Մուր.). Ես հինգ օր (ո՞րքան ժամանակ) գյուղում մնացի։ Երկու ամիս շարունակ անկողնին ծառացել.— Այս մտքերն զբաղեցրին ինձ մի բանի վայրկյան.— Իմ ձեռնադրությունից վեց տարի հետո եկավ այստեղ (ո՞րքան կամ ո՞րքան ժամանակ հետո). Երկու շաբաթ առաջ ծանր հիվանդացավ (Մուր.)։ Հինգ օրը (ո՞րքան ժամանակը) մի անգամ։ Յոթը տարին մի անգամ։ Հինգ տարվա (ո՞րքան ժամանակվա) գինի։ Այդ բանը յոթը տարվա մեջ (յոթը տարում) գլուխ եկավ (ո՞րքան ժամանակում)։ Նա երեք օրից (ո՞րքան ժամանակից) կգա։ Մի քանի օրից հիվանդությունը մեղմացավ.— Մի քանի րոպեից, արդարև, օդային դուռը բացվեցավ.— եկավ հինգ տարուց հետո (Մուր.)։ Նա հինգ օրով հեռացավ տնից (ո՞րքան ժամանակով)։

Երեք ամսում ամեն բան կվերջանա (Համմտ. § 63. 1. բ. 3, § 68. 2, § 69. 1—3, § 77, § 86. 2. գ, §§ 87, 88. 5, 98, 116. 2, 125. 3, 128. 1. 2, 133. 2)։

Սան. Ջափ ու քանակի անունները, երբ իրենց իսկական նշանակությամբ են առնվում իբրև **իր**, *կարող են թվականի հետ նաև հոգնակի դրվել, բայց չափի ու պարունակության նշանակությամբ միայն եզակի են դրվում. օրինակ՝ Նա հինգ բաժակ գինի խմեց և իր խմած հինգ բաժակի համար էլ ինքը վճարեց։ Բայց՝ Այս հինգ կոտրած բաժակը (կամ բաժակները.— ի՞նչը) տար, դեն ձգիր։— Անգամ բառը սակայն, կրկնության հաճախությունը շեշտելիս, երբեմն դրվում է նաև հոգնակի. օրինակ՝ Մեր գրականության մեջ շատ անգամներ լույս են ընկնում անբովանդակ և միանգամայն այլանդակված թարգմանական երկեր (Լր.)։*

2. Երբ անունն առնվում է մասնական նշանակությամբ և առանց թվականի ևս եզակի ձևով կարող է ցույց տալ շատ առարկաներ. թվականը միայն պարզորոշում է հոգնակիության գաղափարը։ Օրինակ՝ «Նա **խնձոր** *գնեց» խոսքով կարող է հասկացվել և մի և շատ խնձոր։— Նա հինգ խընձոր գնեց։ Նա ամեն օր հարյուր հաց է թխում։ Ես երկու նամակ դրեցի։* **Թե** *վեց ամիս շարունակ* **հարյուր խոզ** *պահեիք այս ձորում, նրա՞նք շուտ կփչացնեին այս տեղերը, թե՞ եթե այդքան ժամանակում* **հարյուր մարդ** *ապրեր այստեղ.— Աստված մեզ չորս երեխա էր տվել.— Լավն այն չէ՞, որ մեր գեղը հիսուն վար անող տղամարդ ավելի ունենա, քան թե հարյուր Նոյի ագռավ.— Նրանք ունեին երկու որդի.— Դպրոցը մոտ հարյուր հիսուն աշակերտ և աշակերտուհի ունի.— Կամենում եմ... գրել ձեզ մի քանի բան (Մուր.)։*

3. Երբ առանձնապես ուշադրության առնվում է թվական վերադրի գաղափարը։ Օրինակ՝ Այս եկեղեցում, ինձանից առաջ, մինչև տասը, տասներկու քահանա ծառայել են.— Մինչև հիմա այս գեղարանքից մի տասը, քսան տղա գնացել են, ուսում առել.— Այժմ մեր գյուղում քիչ երիտասարդ կա, որ հայերեն գրել, կարդալ չիմանա (Մուր.)։ Տասներկու հոգի էին հրավիրված, բայց նա քսան հոգու համար էր ճաշ պատրաստել։ Մեղք չէ՞, որ չորս ածդահա տղամարդ... անուսում ես թողել.— Հարյուր քաղաքացու խելք ունի գլխումը.— Էն ա, յոթը սարի քամակին. Փող այնքան ունեի, որ մինը չէ, երկու հարկ էլ կշինեի.— Եթե հարյուր ընթերցողից գեթ մեկը ոգևորվեր... (Մուր.)։ Դրա համար յոթը պատճառ ունեմ։— Ո՞րն է յոթը պատճառը. մեկ մեկ ասա՛, հրամայում է շահը։— Առաջինն այն է, ասում է մոլլան, որ ջիբումս մի շահի փող չկա. երկրորդը...— Մնացած վեց պատճառը գլխիդ տված, ասում է շահը (Մուր.)։ Նրան էլ երկու գոմշակովս տվի, հոգիս ազատեցի (Մուր.)։

188. *Թվական վերադիր ունեցող անունը* **հոգնակի** *է դրվում սովորաբար՝*

1. Երբ անունը որոշված է և առանձնապես ուշադրության է առնվում անվան և իր հոգնակիության գաղափարը։ Այսպիսի անունն առանց թվականի ևս, խոսքի իմաստին նայելով, հոգնակի պիտի դրվի.

թվականը միայն պարզորոշում է հոգնակիության գաղափարը։ Օրինակ՝ Տեր Հոր որդիներն էլ քույր Աննայի աշակերտներն էին.— Տեր Հոր երկու որդիներն էլ քույր Աննայի աշակերտներն էին (Մուր.)։ Քսան երկար տարիները դեռ չէին մարել ուրեմն սիրո սրբազան կրակը։— Այս երկու բառերն իսկ կապում, կաշկանդում էին լեզուս.— Նրա ձեռքով գրած երկու բառերը այդպիսի մի հավատ ներշնչեցին ինձ.— Նույն դրության մեջ էին և այն յոթ-ութ հայաբնակ ավանները, որոնք... Պատեցինք գյուղացոց մի քանի պարտեզները, որոնք... Նա կանչեց յուր մոտ ինձ, տանուտերին և գյուղի մի քանի նշանավոր մարդկանց.— Երկու սենյակների պատուհանները՝ մեծ մասամբ ապակիներից զուրկ՝ ծածկված էին... Այս մարդը Տեր Մակուչին խորհուրդ է տալիս՝ անուսում թողնել յուր չորս որդիներին (Մուր.)։

2. Երբ անունն անորոշ է և առանձնապես շեշտվում է շատության գաղափարը, կամ թե անունն իր թվական վերադրից բաժանված է ուրիշ վերադիրներով. օրինակ՝ Ես շատ հայ գյուղերում եմ եղել. Արդարև շատ քաղաքների եկեղեցիներ կարող են նախանձել ձեր գյուղական եկեղեցուն.— Նրանց այսօրվա պարապմունքի առարկան նշանավոր էր շատ կողմերից.— Նա (տունը) բազկացած էր մի մեծ, բարձրաշեն օդասյից և երկու ուրիշ, նույնպես բարձրադիր սենյակներից, եկավ... կնիկն էլ բերավ, մի երեք էլ գյուրջու ճտեր հետը.— Ես գնել եմ, նաև, մի քանի հատ հայերեն գրքեր.— Ես էի մի քանի տղաներ գլխիս հավաքել և լավ, վատ կարդացնում էի.— Կույսի դպրոցը ո՜րքան գրագետներ է տվել.— Եթե քսան և մի երկար տարիներ անցած չլինեին.— Այդ օրից անցան երկու հուսալիր ամիսներ։— Անցան մի քանի ամիսներ.— Բացի ծրարը, որ պարունակում էր յուր մեջ ծայրե ի ծայր գրված մի քանի թերթիկներ.— Պատերից մեկի տակ գտնվում էին՝ երկու հողե կուժեր, մի քանի սևացած պտուկներ, մի փոքր և մի մեծ տաշտակ և երկու փայտյա խաներ.— Միաբանության անդամներից երկու աթեղաներ սիրով ընդունեցին թե երիտասարդին և թե մյուս ուխտավորներին (Մուր.)։ Արկղի մեջ կարգավ շարված էին երեք կերպասյա քսակ և բավականին շատ արծաթյա ոսկեզօծ զարդեր. կային և երկու հատ նեղծալ տետրակներ, որոնց... (Պո.)։

184. Բոլոր, ամեն, ամենայն *անորոշ թվական ածականները տարբերվում են իրենց գործածությամբ և նշանակությամբ։* **Բոլոր** *ունի հավաքական իմաստ, և հետը դրվում է հոգնակի անուն. իսկ եզակի անվան հետ նշանակում է ամբողջ, բովանդակ։* **Ամենայն, ամեն** *ունին անջատական (բաշխական) նշանակություն իբրև ամեն մի, յուրաքանչյուր, և հետները դրվում է եզակի անուն. հոգնակի անվան հետ սակայն հաճախ ստանում են* **բոլոր** *բառի հավաքական նշանակությունը։ Նույն հավաքական և անջատական նշանակությունները պահում են և դոյականաբար գործածությունները՝ բոլորը, ամենքը, ամենը։ Օրինակ՝ Ամեն մարդ իր ցավն էր պատմում, բայց ես ի՞նչպես կարող էի իմ բո-*

լոր ցավերս պատմել։ Խնդիրը մենք քննեցինք ամեն կողմից.— Դրանք բոլորն էլ կարդում են ձրիաբար.— Այդ կույսը մեր բարերարուհին է, մենք բոլորս պաշտում ենք նրան (Մուր.)։ Ամենքդ հեռացան, գնացին իրենց տները։ Ձեր ամեն բանն էլ այդպես է.— Աշտարակի որ փողոցովն անցնում ես, ամենի բերնից էլ լսում ես.— Բոլոր (ամբողջ) գյուղը տասնութ տուն է (Պռ.)։

ՀՈԴԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

185. *Վերադրի և իր անվան համաձայնությունը լինում է գլխավորապես* **ս, դ, ը (ն)** *հոդերով, որոնք գործ են ածվում դիմորոշ, ցուցական կամ ստացական նշանակությամբ. իսկ* **ը (ն)** *հոդը, որ կոչվում է որոշող հոդ և ստանում է հաճախ ստացական նշանակություն, ունի իր առանձին կիրառությունը։*

Ցուցական հոդեր։— *Հոդերը սկզբնապես ունին այս, այդ, այն ցուցականների նշանակություն, ինչպես և գործ են ածվում գրաբարում սովորաբար. բայց աշխարհաբարում, գրական լեզվի մեջ այս իմաստով կիրառությունը սահմանափակ է. ավելի գործ է ածվում* **ս** *հոդը, այն էլ միայն որոշ բառերի հետ։ Օրինակ՝ Տեղս (տեղումս) շատ հայեր չկան։ Մինչև օրս լսած չէ (մինչև՝ այսօր)։ Բայց վերջինս... տեր հոր օձիքը չթողեց (Մուր.)։ Դու որ գնացիր և բոլոր երկիրս էլ քեզ հետ տարար, ես ավերակների վրա ի՞նչպես թագավորեմ.— Գիտնականները շուտով սկսեցին ուշադրություն դարձնել աշխարհքիս հնագույն ժամանակների վրա (Պալ.)։ Աշխարհիս նեղությունը շատ է (Պռ.)։ Աշխարհքս փոխ հաց է. ինչպես կանես, այնպես կուտես (Ա.)։ Մարդս մարդով կլինի, մարդն աստուծով (Ա.)։ Մարդս որ կա, տնկի է, քանի փոքր է, կարող ես ուղղել։ Մարդիս սիրտը պիտի շիտակ լինի։ Նրա հայրը գեղիս փողատերերից մեկն է.— Ուզեք՝ ոնց որ գեղիս օրենքն է.— Ժամանակս ցուրտ է. ես իմանում եմ, որ գիշերվանս (այս գիշերվան) երազը տուտ չէր.— Մենակ իրիկվանս (այս իրիկվան) թուլանալը չէ (Պռ.)։ Այսպես և՝ գիշերս, իրիկունս, առավոտս, կյանքս (անցավոր է), վերջին օրերս, վերջերս, վերջին տարիներս, նորերս և այլն։ Ոչ գիշերս խեղճ Վարդիթերը կարաց ջուրն ինձ հասցնել երազում... ոչ էլ կաշաղակը առավոտս խաշիլը դեպի նրանց տարավ... Այդ պառավական բաներին մի՛ հավատալ. խաշի՞լս որն է, ջուր տա՞ս ինչ բան է (Պռ.)։ Որ ճաշը թեքվեց, կիրակին կոտրվեց, բանի կենալը մեղք չէ.—Կիրակին կոտրիլս ո՞րն է (Պռ.)։*

Երբ անունն ունի այս ցուցական վերադիր, երբեմն միաժամանակ և ցուցական **ս** *հոդն է առնում, բայց սովորականը որոշող հոդն է (տե՛ս § 191. 2)։ Օրինակ՝ Արտավազդի նախանձը վառվեցավ և այս նախատական խոսքերս (փոխանակ՝ խոսքերը) ասել տվավ նրան (Պալ.)։ Դու այս երկու օրս ո՞րտեղ ես.— Մեզ էլ այս քանի օրս կառավարենք.— Ով կասի՝ ձյունը քերեմ, անեմ այս բանս.— Այս աշխարհքումս նեղու-*

թյուն կքաշենք (Պռ.)։ Այս րոպեիս, այս վայրկյանիս կգամ։ Այսքանսյ. այս չափս բավ է։

186. Դիմորոշ հոդեր.— ս, դ *հոդերը դրվելով անվան վրա՝ առաջին կամ երկրորդ դեմքի նշանակություն են տալիս նրան. օրինակ՝ Հայրենասեր ճորդ հովանի աջն ու անքուն հսկողությունն է ցանկալին արդյունքն առաջացրել (Պռ.)։ Էհ, փո՛ւչ, անցավոր աշխարհ, ո՞ր մինս պիտի սաղ մնանք (Պռ.)։*

Այս հոդերով անուն ենթական և բացահայտիչն ստանում են առաջին կամ երկրորդ դեմքի նշանակություն և դեմքով համաձայնում են՝ ենթական իր բայի հետ (մեղավորս չգիտեմ), իսկ բացահայտիչն իր դերանուն բացահայտյալի հետ (մենք աշակերտներս)։ Բացի այս՝ կոչական անունը լինելով երկրորդ դեմքի՝ նրա ածական վերադիրն երբեմն համաձայնելով ստանում է դ դիմորոշ հոդը. օրինակ՝ Գոհություն և փառք, մե՛ծդ փաթիշահ (Գ.-Ք.)։ Սիրելիդ իմ, մենք այսպես ուրախության մեջ ենք (Պռ.)։ Սիրելի՛դ իմ Արտաշես։ Համմտ. § 170. 3, § 177. 2. 3. 5, § 65։

187. Ստացական հոդեր.— ս, դ, ը (ն) *հոդերն աշխարհաբարում սովորաբար ունին ստացական իմ, քո, յուր, նրա մեր, ձեր, իրենց, նրանց դերանունների նշանակություն և հաճախ մենակ դրվում են անունների վրա, ցույց տալով թե առարկան ումն է։ Օրինակ՝ Գիրքս—իմ գիրքը, գիրքդ—քո գիրքը, գիրքը—իր կամ նրա գիրքը։ Եզը սատկի՝ կաշին կմնա, տղամարդը մեռնի՝ անունը (Ա.— նրա կաշին, նրա անունը)։ Ույժն էշին չի հաղթում, դառնում, փալանն է ծեծում (Ա.— նրա փալանը)։ Ի՞նչ եմ անում ոսկե տաշտը, որ միջին (նրա մեջ) արյուն եմ լալի (Ա.)։ Նա գդակը գլխին դրավ (իր գլխին)։*

Մեր, ձեր, իրենց կամ նրանց հոգնակի դերանունների նշանակությամբ գործ են ածվում՝ 1) Միավանկ անունների համար հոգնակին՝ երս, երդ, երը ձևով կամ ներս, ներդ, ները (արտասանվում է ըներս, ըներդ, ըները). արևմտյան աշխարհաբարում՝ երնիս, երնիդ, երնին ձևով. օրինակ՝ Ինչերո՞ւս էր պետք առաքինի վարք (Գ.-Ք.— մեր ինչին)։ Արեք, ինչ որ սրտերդ (սրտներդ) կուզի։ Սրտերնիս կամեցավ, ելանք գնացինք։ Հույսերս (հույսներս, հույսերնիս) դրել ենք. 2) Բազմավանկ անունների համար հոգնակին՝ ներս, ներդ, ները ձևով, արևմտ. աշխարհաբարում՝ նիս, նիդ, նին, ինչպես՝ պարտեզներս կամ պարտեզնիս (մեր պարտեզը)։ Պարտեզներս սակայն նշանակում է նաև իմ պարտեզները։

188. *Ստացական հոդերի գործածության համար պիտի նկատել.*

1. Երբ անունը կամ դերբայն ունի իմ, ըս ստացական վերադիր, հաճախ միաժամանակ և ստացական ս կամ դ հոդն է առնում. բայց սովորականն է որոշող հոդը (տե՛ս § 191. 4)։ Օրինակ՝ Իմ սիրտս էլ բացվեց։ Իմ խնդիրքս միայն այն է։ Դու քո խոսքդ ասա։ Իմս, քոնդ։ Օ՜ն, ուրեմն, իմս Մաղաքիա, այլևս մի՛ դանդաղիր։ Մինչև իմ այնտեղ

գնալս, վարժապետացու աշակերտներս հինգ տասը հոգի հավաքված՝ սպասում էին ինձ.— Նախքան քո ենթադրություններ անելդ լավ էր՝ ինձ թույլ տայիր պատմությանս ծայրը հասնել (Պռ.)։ Իմ տեսածս, քո տեսածդ։

2. Երբ դերբայը դառնում է վերադիր մի անվան, իմ, քո ստացականների կամ ենթակայական սեռականի հետ միաժամանակ և ըստացական հոդ է առնում, որը սակայն սովորաբար դրվում է անվան վրա. ինչպես՝ «Իմ տեսած մարդը» ասելու տեղ կարելի է ասել՝ «Իմ տեսածս մարդը» կամ «Իմ տեսած մարդս»։ Հաճախ առանց իմ, քո ստացականների ևս ասվում է միայն հոդով՝ «տեսածս մարդը» կամ «տեսած մարդս»։ Օրինակ՝ Պատրաստ եմ խոստովանության մեջ դրածդ ապաշխարանքը սիրով կատարել.— Սարգիս աղա, աստված ադրածդ բարեգործությունն ի փառս յուրում ընկալցի.— Չես կարող չհիշել թափածդ արյունները (Պռ.)։ Ինչո՞ւ գոնե յուր համար արածդ պարտքը չի վճարում.— Տնկածդ ծառերը պտուղ կբերեն (Մուր.)։ Գրած դասերդ (քո գրած դասերը) երկրորդ ընթերցումից հետո ըմբռնում ենք.— — Անցյալները ոտքով Աղթամար գնացած ժամանակներս՝ քո գծած պարտեզը մեծ լույս է սփռել... մի քանի կարևոր կետերի վրա (Պռ.)։ Չնայելով քաղաքից ելածներս (մեր ելած) միջոցին ընկերս պատմում էր թե... (Մուր.)։ Էհրամչի օղլու հետ խոսեցածդ ժամանակ ինձ շուն ես անվանել (Պռ.)։ Երթալու ճամբադ նայի՛, փոս ընկնելուց պրծի՛ (Ա.)։ Իմ գնալուս օրը, իմ գնալու օրս։ Ա՛խ, թուր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ։

Ծան. *Երբեմն, ավելի արևմտյան աշխարհաբարում, ստացական հոդը ուրիշ բառերի համար ևս փոխանակ վերադրի վրա դրվելու՝ դրվում է վերադրի անվան վրա, փոխանակ ասելու՝ ձեռքիս գավազանը, մանկությանս օրերը, ասվում է ձեռքի գավազանս, մանկության օրերս։*

189. *Որոշող հոդն է ը կամ ն, որոնց գործածության համար պետք է իմանալ.*

1. Երբ բառը ձայնավորով է վերջանում, ստանում է ն հոդը՝ որդին, լեզուն։ Անձայն յ տառը[5] դուրս է ընկնում՝ փեսան, ծառան։

2. Երբ բառը բաղաձայնով է վերջանում և հաջորդ բառը բաղաձայնով է սկսվում, վրան դրվում է ը հոդը՝ աշակերտը գնաց. բայց երբ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում և արտասանության ժամանակ երկու բառի մեջ դադար չի լինում, գործ է ածվում ն հոդը, որ արտասանությամբ միանում է հաջորդ բառին. Նա իմ աշակերտն է։

190. *Որոշող հոդը անվան ընդհանուր անորոշ իմաստը սահմանափակում կամ մասնավորում է՝ ցույց տալով խոսողին ծանոթ այս ինչ կամ այն ինչ առարկան. «Նա գիրք կարդաց». «Նա գիրքը կարդաց» խոսքերից առաջնի մեջ գիրք առնված է ընդհանուր անորոշ նշանակությամբ, ինչ գիրք կուզե լինի. իսկ երկրորդ խոսքի մեջ հայտնի, ծանոթ այս ինչ, կամ այն ինչ գրքի մասին է խոսքը։*

Առանց որոշող վերադրի ըստ ինքյան որոշ են և որոշող հոդ են առնում՝

1. Հատուկ անունները. օրինակ՝ Արշակը տեսավ Հայկին։

2. Հասարակ անունները, երբ սեռի իմաստով են գործ ածվում, այսինքն ցույց են տալիս առարկաների մեջ այսինչ կամ այնինչ տեսակն ընդհանրապես. օրինակ՝ Ձին չորքոտանի է (ամեն ձի չորքոտանի է. բոլոր ձիերը չորքոտանի են)։ Մի հավն այժմ նույնիսկ գյուղերում արժե վաթսուն կոպեկից ավելի (ամեն մի հավ, հավի մեկը)։ Մի բեռ ցորենն արժե... (ցորենի բեռը, մի բեռը)։

3. Ամեն անուն, որ ցույց է տալիս խոսողին առաջուց ծանոթ մի առարկա, կամ խոսքի մեջ մի անգամ հիշված է և կրկնվում է. օրինակ՝ Երկինքն ամպեց։ Կայսրը ժամանեց։ Մի գառ գնաց մի աղբյուրի մոտ. գառը խմում է աղբյուրի ջուրը...

191. *Ամեն անուն, որ ունի մի որոշ վերադիր, միաժամանակ և որոշող հոդ է առնում։ Որոշող վերադիր են լինում՝ մի ածական կամ գոյական ուղղական կամ սեռական հոլովով, այն է՝*

1. Հատուկ անունները, հասարակ անունները սեռի իմաստով գործածված, և ամեն հասարակ անուն, որ առաջուց ծանոթ առարկա է ցույց տալիս, կամ խոսքի մեջ կրկնվում է, կամ թե որևէ ձևով որոշված է։ Օրինակ՝ Տիգրան Թագավորը. Տիգրանի գիրքը։ Հունվար ամիսը. մինչև մարտի սկիզբը։ Տառեխ ձուկը Վանա լճում է լինում։ Անձրևի ծեծածը կարկուտն էլ կծեծի (Ա.)։ Մարդիս սիրտը պիտի շիտակ լինի (Ա.)։ Կայսեր ժամանումը։ Մի գառ գնաց մի աղբյուրի մոտ. գառը խմում էր աղբյուրի ջուրը, երբ...

Նշ. երբ սեռական վերադիրը որակական սեռականի նշանակությամբ է գործածվում, անունը հոդ չի առնում, եթե միայն ուրիշ կողմից որոշված չէ. օրինակ՝ Վարդի թփեր թող բուսնին.— բայց՝ Այս վարդի թփերը տար, տնկիր քո պարտեզում։

2. Ցուցական ածականները՝ այս, այդ, այն, սույն, դույն, նույն, միևնույն. օրինակ՝ Այս գիրքը, նույն գործը։

3. Անորոշ ածականները՝ մյուս, մեկել, բոլոր, այսինչ, այնինչ և ո՞ր հարցականը. օրինակ՝ Մյուս ընկերը, բոլոր աշակերտները, այսինչ գործը. ո՞ր ամսին։

4. Ստացական ածականները կամ անձնական դերանունների սեռականները՝ իմ, քո իր, մեր, ձեր, իրենց, սրա, դրա, նրա, սրանց, դրանց, նրանց և հարցականների սեռականը՝ որի՞, որո՞նց, ո՞ւմ. օրինակ՝ Իմ գիրքը, նրա ընկերը, ո՞ւմ գիրքը։

192. *Որոշող հոդը գործ է ածվում և զեղչման ժամանակ, երբ անունը, կրկնությունն չանելու համար, խոսքի միջից դուրս է ընկնում, և ածական կամ սեռական վերադիրը ը (ե) հոդն առնելով՝ խոսքի մեջ փոխանակում են զեղչված անվանը, դրվելով այն հոլովով, որով պիտի դրված լիներ անունը, եթե զեղչված չլիներ։*

1. Երբ զեղչված անունը ունի որևէ հոդ, զեղչման ժամանակ ածականը կամ սեռականն է առնում այդ հոդը. օրինակ՝ Ուներ նա երկու մատաղհաս աղջիկ. միը (մի աղջիկը) խիստ տգեղ, մյուսը (մյուս աղջիկը) գեղեցիկ։ Մի օր տգեղը ասաց մյուսին... Անույշ երգ սոխակին է։ Ես քո գիրքը տարա, Տիգրաեիը (Տիգրանի գիրքը) բերի։ Տիգրանի գիրքը տարա, քոնը (քո գիրքը) կամ քոնդ (քո գիրքդ) և իմը (իմ գիրքը) կամ իմս (իմ գիրքս) բերի։ Այսպես և՝ մերը, ձերը, իշխանինը և այլն, որ նշանակում են՝ մեր, ձեր իշխանի այսինչ կամ այնինչ բանը (տե՛ս և § 83. 4. ծան.)։

Ծան. Երբ սեռական վերադիրը ձայնավորով է վերջանում, անվան զեղչվելու ժամանակ նը (նն) կրկին հոդն է առնում. իսկ երբ բաղաձայնով է վերջանում, միայն ը (ն) հոդն է ստանում, ինչպես՝ իմը, բայց՝ քոնը, Տիգրանինը։ Ուշադրություն պիտի դարձնել, որ այսպիսի փոխանուն սեռականները կարող են միաժամանակ և ստացական ս, դ հոդերն առնել. ինչպես Տիգրանինս, քեռունդ, որ նշանակում է՝ իմ Տիգրանի, քո քեռու այսինչ կամ այնինչ ստացվածքը։

2. Երբ կրկնություն չանելու համար զեղչվում է մի անուն, որ հոդ չունի, փոխանուն ածականն ստանում է ը (ն) հոդը։ Օրինակ՝ Մի՞թե հիմար ընկնող երեխաների միջին խելոքը (խելոք երեխա) չկա (Պռ.)։ Այս գրիչը լավ չէ, գնա՛ մի ուրիշը (մի ուրիշ գրիչ) բեր։ Տե՛ս և § 177. 1. 2։

3. Որակական և թվական ածականները, երբեմն և սեռականները, երբ զեղչված է համարվում բան անորոշ անունը, որոշող հոդով գոյականաբար գործածվելիս ստանում են վերացական ընդհանուր նշանակություն և գործ են ածվում սեռի իմաստով (§ 190. 2). օրինակ՝ Սիրիր բարին, գեղեցիկն ու ճշմարիտը (բարի, գեղեցիկ ու ճշմարիտ բանը. ամենայն ինչ որ բարի, գեղեցիկ և ճշմարիտ է)։ Երկուսը քիչ է երեքից։ Ճանաչե լավ բանի արժեքը, գինը. ներսինին չի հասնիլ գոված դրսինը.— Հայարտ մեռի՛ր, գաղտնի պահե սրտինդ. Թող թշնամին չիմանա քու ներսինդ (Ջիվ.)։ Մտքինդ ի՞նչ է, մտքինդ ասա՛։ Վաղինը չլինի, որ ասում է՝ Գայլից փախա, արջի ճանկն ընկա (Պռ.)։

4. Անորոշ ածականները, երբ զեղչված է համարվում մարդ (ոք-մին, հոգի), երբեմն և բան, անորոշ անունը, որոշող հոդով գոյականաբար գործածվելիս ստանում են անորոշ անվան կամ դերանվան նշանակություն։ Այսպես գործ են ածվում՝ շատը, շատերը, քիչը, քչերը, մի քանիսը, քանիսը, ամենքը, ամենը, բոլորը, ամեն մեկը, յուրաքանչյուրը, այս ինչը, այն ինչը, մեկը, մյուսը (մեկելը), ուրիշը, որը։ Օրինակ՝ Մեկը (մի մարդ) չունիմ, տա ինձ դարման։ Վերջապես գտնվեց մեկը, որ մեր տրտունջը լսեց (Մուր.)։ Ժողովեցին որը շատ, որը քիչ։ Դարձյալ մտնում էի գյուղը. խոսում էի, հորդորում էի՝ որին էլ պատահում էի, ուր որ էլ նստում էի (Մուր.)։ Շատերը կան, որ ուտելու հաց չունին։ Լսած չե՞ս, թե քանի՛սը (քանի՛ քանիսը) գլուխները վեր են դրել...

(Պռ.)։ Եթե քո տեղ մի ուրիշը (ուրիշ մարդ) լիներ, վաղուց հիմա թողել, հեռացել էր։ Դարեգնից բաժանվելուց հետո՝ մի՛ կարծեք թե իմ ձեռքը կհամարձակվիմ տալ մի ուրիշին, թեկուզ այդ ուրիշը իջած լինի երկնքից (Մուր.)։ Վեր ունի, քեզ տա ուրիշի (Պռ.)։

Երբ այս բառերը գործ են ածվում իբրև սեռական վերադիր, անունը սովորաբար որոշող հոդ է առնում. օրինակ՝ Ուրիշի ճրագը քեզ լույս չի տալ. Ուրիշի տունը քեզ տուն չի դառնալ (հասկանալի է՝ ամեն ուրիշի)։ Բայց՝ Նա ուրիշի ճրագ է։

5. Երբ զեղչված անվան վերադիրը, լինի ածական թե սեռական, խոսքի վերջն է ընկնում, սովորաբար հոդ չի առնում և անփոփոխ է մնում։ Օրինակ՝ Մասիսն աջ կողմից էր երևում, Արագածը՝ ձախ (կամ՝ ձախից)։ Ես իմ գիրքն եմ տվել, դու՝ fn (կամ՝ քոնը)։ Ես իմ գրքով եմ սովորում, դու fn (կամ՝ քոնով)։ Ես քո գիրքն առա, դու՝ Ստեփանի (կամ՝ Ստեփանինը)։ Ես քո գիրքն առա և ոչ Ստեփանի (կամ՝ Ստեփանինը)։ Հայրս ուրիշ տղայի է ուզում տալ նրան, մայրս՝ ուրիշ (կարելի չէ ասել՝ ուրիշի, որ կհասկացվի՝ ուրիշ մարդու, մինչդեռ միտքն է՝ ուրիշ տղայի)։— Նույն ձևով վարվում են և սեռական առնող ետադրությունները, ինչպես՝ Մենք Ստեփանի համար ենք աշխատում, դուք՝ Տիգրանի։ Բայց երբ այսպիսի ածական կամ սեռական վերադրից հետո խոսքի մեջ գալիս են ուրիշ բառեր, կամ նախորդ խոսքի մեջ ևս համապատասխան բառը նույնպես մի վերադիր է, այն ժամանակ վերադիրն առնում է իր զեղչված անվան հոդն ու հոլովը, իսկ ետադրական բառերը չեն զեղչվում։ Օրինակ՝ Ես իմն եմ տվել, դու՝ fnը (և ոչ քո)։ Ես լավն եմ տվել, դու վատը (և ոչ վատ)։ Ստեփանի համար մենք ենք աշխատում, Տիգրանի համար՝ դուք։ Աջ կողմից Մասիսն էր երեվում, ձախից՝ Արագածը։ Իմ գիրքն ես եմ տվել, fnը՝ դու։ Իմ գրքով ես եմ սովորում, fnով՝ դու։ Քո գիրքն ես առա, Ստեփանինը՝ եղբայրս։ Որի վիճակը լավ դուրս եկավ, nրինը՝ վատ (Պռ.)։

6. Փոխանուն սեռականը սովորաբար թեք հոլովներով և հոգնակի չի գործածվում։ Եզակի ձևով այսպիսի սեռականը կարող է և հոգնական նշանակություն ունենալ և երբ ենթակա է, բայը դրվում է հոգնակի։ Օրինակ՝ Տիգրանի ծնողները գնացին, իսկ Արտաշեսինը՝ մնացին։

198. Անունների անհոդ գործածությունը: *Որոշող հոդ չեն առնում, թեպետ և նշանակությամբ որոշված են.*

1. Ուղղական վերադիրը, լինի հատուկ թե հասարակ անուն, օրինակ՝ Երասխ գետը, այս տեսակ գրիչ։

2. Ուղղականն իբրև ստորոգելիական վերադիր, երբ հատուկ անուն է, օրինակ՝ Երևխան կոչվեց Տիգրան։ Բայց՝ Նա դարձավ մեր ծառան (Նա դարձավ մեզ ծառա). ես մորս մեր կուսակից եմ արել (Պռ.)։

Ծան. *Երբեմն հատուկ անունները, մանավանդ պատմականները, գրաբարի ձևով առանց հոդի են մնում և երբ ենթակա են. օրինակ՝ Աւտավազդ անհամբեր ձևով սպասում է ազատություն ստանալ և աշխարհիս վերջ տալ (Պալ.)։ Տե՛ս և § 179. 7։*

3. Կոչական անուններըլինին հատուկ թե հասարակ. օրինակ՝ Տի՛գրան, եկ մեզ մոտ։ Գնա՛, իմ որդի, աշխարհքս անցիր։

4. Տեղի հայցականը, լինի բուն հայցականի թե ներգոյականի նշանակությամբ, երբ հատուկ անուն է, օրինակ՝ Նա գնաց Երևան, դեպի Երևան, մինչև Երևան. Նա Երևան է ապրում։ Այսպես և՝ Նա գնաց արտասահման.— այստեղ, այդտեղ, այնտեղ, և ետադրական բառերը սովորաբար (Տե՛ս § 66. 1. ա, § 67. 1, 3). երբեմն նաև տուն, դյուղ, քաղաք, ժամ և այլն. ինչպես՝ Գնանք մեր տուն։ Նա ժամ է գնացել։ Հենց որ մտավ տուն, տեսավ (Պռ.)։

5. Ժամանակի հայցականը, լինի բուն հայցականի թե ներգոյականի նշանակությամբ. օրինակ՝ Նա այս ձմեռ գյուղում ապրեց։ Այս ամառ անձրև չեկավ։ Եկող կիրակի պիտի ճանապարհ ընկնենք։ Մինչև այս առավոտ։ (Տե՛ս § 68. 1, 2)։

6. Չափ ու քանակի հայցականը. օրինակ՝ Այս անգամ ես չկարողացա տեսնել նրան։ Փորձով գիտե թե ո՛ր աստիճան բարի... կին է նա (Մուր.)։

7. Սեռական վերադիրը. օրինակ՝ Տիգրանի գիրքը,— մեր պարտեզի ծառերը։

Ծան. Արևմտյան աշխարհաբարում սակայն հասարակ անուն սեռականը, երբ որոշված է, առնում է որոշող հոդ։

8. Բացառական, գործիական և ներգոյական հոլովների վրա, երբ որոշված են, որոշող հոդը սովորաբար չի դրվում։ Օրինակ՝ Նա վառվում է քո սիրով(ը).—Սիրտն առնվեց նրա խոսքից(ը)։

194. Որոշող հոդ չի առնում և ամենայն անուն, լինի եզակի թե հոգնակի, որ ընդհանուր, տարտամ նշանակությամբ ցույց է տալիս որևէ անծանոթ առարկա։ Այս դեպքում, երբ անունն անհոդ է և եզակի, թվի վրա ուշադրություն չի դարձվում. օրինակ՝ «Ես խնձոր գնեցի» խոսքով կարող է հասկացվել և մի՛ խնձոր, և շատ խնձոր։ Երբ անհոդ անունը հոգնակի է, նշանակությամբ դարձյալ անորոշ, տարտամ է մնում, միայն թվի կողմից որոշվում է իբրև շատ, ինչպես՝ Ես խնձորներ գնեցի։

Որպեսզի եզակի անհոդ անունը թվի նկատմամբ որոշվի, վրան դրվում է մի քանակական ածական. օրինակ՝ Ես մի խնձոր գնեցի. Ես երկու խնձոր գնեցի։— Անորոշ քանակական ածականներով՝ մի քանի, շատ, քիչ՝ թեպետ և որոշվում է առարկայի շատությունը, բայց թիվը դարձյալ անորոշ է մնում. ինչպես՝ Ես մի քանի խնձոր գնեցի, Ես շատ խնձոր գնեցի։

Ծան. Մի թվականը, երբ առանց շեշտվելու դրվում է անհոդ անվան վրա, աշխարհաբարի քերականները, հետևելով ուրիշ լեզուների քերականներին, դնում են հաճախ իբրև անորոշ հոդ, որ իբր թե այլևս թվական չիներ և թվի գաղափար ցույց չտար, այլ միայն անձի կամ իրի ընդհանուր, տարտամ գաղափար, ինչպես մի անորոշ ածական։

Սակայն այս սխալ է. մի բառն ամեն դեպքում ևս թվական է, լինի շեշտված, թե անշեշտ, և մասնավորում է անվան թիվը, որոշելով առարկայի մեկ լինելը: «Ես մի խընձոր գնեցի» խոսքի մեջ խնձոր անունն իր տարատամ նշանակությունն ունի ոչ թե նրա համար, որ վրան դրված է մի «անորոշ հոդը», այլ նրա համար, որ այդ բառն անհոդ է գործածված: Առանց այդ մի բառի՝ «Ես խնձոր գնեցի» խոսքի մեջ խնձոր անունը նույնչափ և ավելի ևս տարատամ գաղափար է հայտնում, քան առաջին խոսքի մեջ, ուր մի թվականով որոշվում է գոնե առարկայի մե՛կ լինելը: Մի թվականն իր այս գործածությամբ բնավ չի տարբերվում մյուս քանակական ածականներից, որոնք նույնպես կարող են և՛ շեշտված, և՛ անշեշտ գործածվել՝ «Ես մի խնձոր գնեցի», «Ես երկու խնձոր գնեցի», և «Ես մի՛ խնձոր գնեցի» (և ոչ թե երկու). «Ես ե՛րկու խնձոր գնեցի» (և ոչ թե երեք):

195. *Անունն առանց հոդի և սովորաբար եզակի է գործ ածվում՝*

1. Երբ միայն իր բառական նշանակությամբ է առնվում իբր մի որակական ածական կամ մակբայ. օրինակ՝ Դաշտի ծաղիկ: Ի՞նչ արժե կյանքն առանց բարեկամի: Թռչունի պես ապրել:

2. Որոշ դարձվածների մեջ, որոնք մի տեսակ բաղադրյալ բայ են կազմում. ինչպես՝ պատռտ տալ, սովորություն անել, վախ ազդել, ներողություն խնդրել, պահապան կարգել (տե՛ս §§ 56, 74, 92 և այլն):

3. Երբ մի շարք անուններ թվարկվում են խոսքին արագություն և ույժ տալու համար. օրինակ՝ Մարդ, կին, ծեր և երիտասարդ, ամենքը ելան նրան դիմավորելու: Մեր ու մանուկ իրար կորցրին: Ցրքայր ու քույր միմյանց չճանաչեցին: Մեր ու աղջիկ եկել էին մեզ մոտ:

4. Երբ առնվում է մասնական նշանակությամբ, ցույց տալով միայն մի մասն առարկայի (սովորաբար նյութի), կամ առարկաների, որ ծնվում են մեր մտքի մեջ. օրինակ՝ ջուր խմել, հաց ուտել, ծաղիկ քաղել, գորք ժողովել:

5. Երբ վերադիր ունի մի անորոշ ածական, ինչպես՝ յուրաքանչյուր, ամեն մի, ամեն, ամենայն, ոչ մի, շատ, քիչ, բավական, ուրիշ, մի այլ, մի քանի, ինչ որ, ինչ ինչ (տե՛ս § 184), որևէ: Օրինակ՝ Յուրաքանչյուր երկիր ոսի իր կարգերը: Ամենայն ծառ, որ պտուղ չի բերում, պիտի կտրվի և կրակը ձգվի: Ամեն ծառ իր պտղիցը կճանաչեն: Եթե այդ բանը եղած լիներ, մի որևէ պատմագիր հիշատակած կլիներ: Նա ինչ որ ծաղիկ(ներ) է քաղել: Ինչ ինչ պատճառներ ստիպեցին նրան ետ կասել: Շատ մարդ(իկ) այդ էլ չունի(ն): Եթե քո տեղը մի ուրիշ աշակերտ լիներ... Մի քանի մարդ(իկ) կան, որ...:

Ծան. Այսպիսի անորոշ վերադիրների անունը կարող է որոշող հոդ առնել, եթե բացի անորոշ ածականից՝ վերադիր ունի նաև մի որոշող բառ: Օրինակ՝ Ամեն բան լավ է. բայց՝ Մեր գեղի ամեն բանն էլ լավ է.— Ամեն օր քեզ համար մայր ու եղբայր չեն լինիլ, որ գաս տեսնես քո ամեն բանն էլ կարգը կարգին (Պո.):

6. Երբ վերադիր ունի մի անորոշ անուն կամ անորոշ դերանուն սեռական հոլովով (տե՛ս և § 105. ծան. 2), երբեմն և մի փոխադարձ դերանուն՝ իրար, միմյանց: Օրինակ՝ Մարդի բան, որ մի անգամ ծովի,

յոթը տարի էլ չարչարվես, չես կարող ուղղել (Պռ.)։ Ճանճն ինքը մի բան չէ, բայց մարդու սիրտ կպղտորի (Ա.)։ Մնացին իրար երեսի մտիկ տալով։ Սոսի պես աշխատավոր, մարդի սիրտ բաց անող տղա չկա.— Աղմուկից մարդ մարդի խոսած չի լսում.— Ոչ ոքի (ոչովի) բերան խոսք չի գալի.— Ոչ ոքի (ոչովի) սիրտ թող չնեղանա.— Ամեն մարդի տան էլ էս իրիկուն ուրախություն է լինում (Պռ.)։ Մարդ մարդի դարդ չի իմանալ, կես գիշերին ժամ կկանչի (Ա.)։

7. Անորոշ դերբայն ևս սովորաբար առանց հոդի է գործածվում իբրև ենթակա՝ հարկ է, արժե, հեշտ է, ցանկալի է, պետք է և այլն բայերի, և կամ իբրև ներգործական բայերի սեռի խնդիր. օրինակ՝ Ի՞նչ պետք է ասել ձեր գաղափարի համար.— Հա՞րկ է հիշել մեկենասն ու մեկենասները.— Ներվի ինձ ասել.— Գնահատել գրականությունը՝ դաստիարակություն մշակել և պտղաբերել կնշանակե (Սրվանձտ.)։ Բայց ուրիշ դեպքում սովորաբար հոդով է դրվում, ինչպես՝ Կամենալը՝ կարենալ է.— Այսպիսի մի քահանա տեսնելն ինձ համար մի հաճելի անակնկալ էր.— Երբ լրագիր կարդալն ու հասկանալը ինձ համար հեշտացավ, մեր կույսը խորհուրդ տվավ ինձ՝ միշտ հետաքրքրական և հասկանալի կտորները կարդալ և հասկացնել նաև իմ ժողովրդին (Մուր.)։

5. ԴԵՐԱՆՈՒՆ ԵՎ ԱՆՈՒՆ

196. *Դերանունները թվով համաձայնում են այն գոյականին (անուն և դերանուն), որի տեղը դրվում են խոսքի մեջ կրկնություն չանելու համար. այսպես՝ եզակի անվան տեղ կանոնավորապես եզակի դերանուն է դրվում, իսկ հոգնակի կամ բազմակի անունների, ինչպես և ձևով եզակի, բայց նշանակությամբ հոգնակի անունների տեղ դրվում է հոգնակի դերանուն։ Օրինակ՝* **երեխան** *հիվանդ է. պետք է* **նրան** *խնամել։* **Երեխաները** *հիվանդ են. պետք է* **նրանց** *խնամել։ Ձեր* **եղբայրն** *ու* **քույրը** *հիվանդ են. պետք է* **նրանց** *խնամել։ Նրանք* **ունեին երկու որդի, որոնցից** *մեծը մեզ ծանոթ երիտասարդն էր (Մուր.)։*

Ծան. Դերանվան համաձայնությունը այն անվանը, որի տեղ դրված է, հիմնվում է ոչ թե լրացումի և լրացյալի ներունակության հարաբերության վրա (որովհետև դերանունը լրացում չէ այն անվան, որի տեղ դրվում է), այլ բառերի մի ներքին տրամաբանական հարաբերության վրա. ուստի այս համաձայնությամբ կապակցվում են ոչ թե բառեր միմյանց հետ, այլ խոսքեր։

197. *Դերանունների համաձայնության համար պետք է նկատի ունենալ հետևյալ առանձնությունները.*

1. **Որ** *հարաբերական դերանունը եզակի* **որ** *ձևով առանց հոդի, դրվում է հոգնակի և բազմակի անունների տեղ.*

ա) Երբ **որ** *հարաբերականը ենթակայի պաշտոն է վարում և դրված է հոգնակի կամ բազմակի անունների տեղ, երկու ձևն ևս՝* **որ** *կամ*

որոնք՝ անխտիր գործ են ածվում։ Բայը դրվում է հոգնակի, քանի որ եզակի ձևով որ դրվում է հոգնակի անվան տեղ։ Օրինակ՝ Վա՜յ այն օրերին, որ նրա համար անց կացան։ Մի քանի նոր հավեր են դուրս եկել, որ ուզում են երկաթե ձու ածել։ Սոսն ու Գարեգինը, որ գնացել էին այգին, եկան։ Երգի մեջ հիշված շիկափոկ պարանն այլաբանություն է և նշանակում է մորթ, լայքա ու կաշի, որ ալանաց աչքին շատ հարդի էին, և որոնցից ընծա ուղարկեց նրանց Արտաշես Սաթենիկին առնելու ժամանակ (Պալ.)։ Նույն դրության մեջ էին և այն յոթ-ութ հայաբնակ ավանները, որոնք (կամ՝ որ) գտնվում են սրա շրջականերում (Մուր.)։

բ) Երբ որ հարաբերականը ենթակայի պաշտոն է վարում և դրված է հոգնակի կամ բազմակի դերանունների տեղ, կամ բազմակի հարաբերյալներից մեկը դերանուն է, կամ հարաբերյալը կոչական անուն է, գործ է ածվում միայն եզակի որ ձևը։ Բայը թվով և դեմքով համաձայնում է հարաբերյալին կամ հարաբերյալներին, որոնց տեղ դրված է որ հարաբերականը։ Օրինակ՝ Մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ, եկ անվախ ելնենք թշնամու առաջ (Գ.-Ք.)։ Ես ու դու, որ ունինք... Դու և նա, որ ունիք... Ես ու եղբայրս, որ ունինք... Դու և եղբայրդ, որ ունիք... Դուք, որ ձեր ցավը քաշում եք, մի ուրիշի դարդն էլ հարցնեք։ Ո՛վ մարդիկ, որ այստեղ ժողովված եք, լսեցեք ինձ... Այսպես և՝ Բայց ինձ, որ պաշտում եմ ձեր մեջ այդ մեծ առաքինությունը, թույլ տվեք... Ես, որ ամեն առավոտ նրանց տեսնելով թարմանում և զվարթանում էի, այժմ ընդհակառակն աշխատում էի հեռանալ նրանցից (Մուր.)։

գ) Երբ որ հարաբերականը խոսքի մեջ կրող խնդիր է և դրված է հոգնակի կամ բազմակի անունների տեղ, որոնք իրի կամ վերացական (երբեմն և անձի) անուն են, գործ է ածվում միայն եզակի որ ձևով։ Օրինակ՝ Քնարերգությունը բաց է անում մարդու սրտի այն գաղտնիքները, որ սառն բանականությունը չի կարող ըմբռնել (Պալ.)։ Ո՞ւր են այն գրքերը, այն թուղթն ու մատիտը, որ դու գնել ես ինձ համար։ Այժմ նա... զբաղված էր դիտելով ճանապարհի նոր հանդիպող տեղերը, կամ լեռների ու ձորերի այն տեսարանները, որ կարծում էր թե գալիս ժամանակը չէր նկատած (Մուր.)։ Այն ընկերները, որ դու ունիս, չեն կարող քեզ մի օգնություն անել։ Տե՛ս և § 101. 6, ծան. 1, 2։

դ) Երբ հարաբերյալ են այնպիսի բազմակի ենթականեր, որոնք իբրև մի միություն են ըմբռնվում և որոնց բայը եզակի է դրվում, որ հարաբերականն ևս սովորաբար եզակի է դրվում։ Օրինակ՝ Կա՞ արդյոք այդ խոսքի մեջ խելք, արդարություն կամ ազատ մտածություն, որով սիրում եք դուք ամեն տեղ պարծենալ.— Քանի՞ փող արժե այն դիրքը, այն հարստությունը, որ միայն իրենց անձին և գոյությանը դյուրություն տալուն է ծառայում (Մուր.)։

2. Որ հարաբերականի եզակի տրականը միշտ որոշող հոդով է գործածվում, իսկ մյուս հոլովներն առանց հոդի են մնում։ Եզակի ուղ-

ղականը և հայցական ուղղականը, սակայն, երբ մի եզակի անվան տեղ են դրված, կարող են որոշող հոդ առնել, թեպետ և սովորականն առանց հոդի գործածությունն է։ Օրինակ՝ Բայց Պետրոսն արդեն մի բայլ առաջացել էր դեպի քահանան, որը մոտենում էր.— Դրա հետ միասին բերավ նոր թխած գաթա, որն յուր ասելով՝ նորահարսի համար այդ օրը պատրաստած և ղրկած «պաշարից», էր.— Այժմ պետք է պատմեմ ձեզ իմ կյանքի, այսպես ասած, հոգեկան մասի պատմությունը, որն իմ վերաբերմամբ բավական տխուր էջեր է պարունակում.— Հանկարծ չունենալ այլևս նրան, որին մի օր առաջ ունեիր, որը քո մտածության, քո քաղցր երազների, քո ապագա երջանկության սնուցիչն էր, որը քեզ կյանք և ուրախություն էր բերում... Սակայն այս վշտերի հետ միասին ծանրանում էր իմ սրտի վրա և մի ուրիշ մեծ վիշտ, որն ամենից ավելի պիտի տանջեր ինձ։ Առաջիկա գարնան, ահա՛, այս ուսումնարանի հիմը դրինք, որն և գրեթե նույն տարվա մեջ ավարտվեց.— Որոշեցինք վերացնել իրենց միջից ամեն ավելորդ ծախք, որը սովորություն ունեին նրանք անելու.— Գնացեք շարունակ այն շավղով, որը ես ձեզ համար հարթեցի (Մուր.)։

Վերևում դրած բոլոր օրինակների մեջ կարելի է և առանց հոդի որ ձևը գործածել։ Պետք է ուշադրություն դարձնել, որ հոդով գործ է ածվում առանձնապես՝

ա) Երբ հարաբերականից առաջ կամ հետո ընկնում է մի համադասական շաղկապ կամ նախադրություն. օրինակ՝ Մույգ կապտագույն մի սփռոց, որ բավական մաքուր էր, բայց որն յուր գույնի ու հնության պատճառով կեղտոտ երևաց հյուրին, նա փռեց տախտակի վրա.— Նրան ակոսում է մի փոքրիկ գետակ, որը սակայն ահարկու և անանցանելի է դառնում գարնան վերջերում.— Սպասում էին տեսնել նրան բարձրացած վեհապետական այն գահին, դեպի որը ամեն հայ հառում էր յուր աչքը սիրով ու հավատով, ջերմեռանդ ակնածությամբ և որն յուր մեջ ամփոփում էր... Ես ցանկանում եմ մի քանի խոսք ասել նկատմամբ մի հանգամանքի, որին անծանոթ եք դուք և որը վերաբերում է... Մի՛թե կարող էի նրան մոռանալ. նրան, որ իմ բոլոր մտքերի, խորհուրդների հեղինակն էր, որին այնքան ուժգին, այնքան ջերմությամբ սիրեցի. բայց որն այժմ հազարավոր մղոն հեռի է ինձանից (Մուր.)։

բ) Երբ խնդիր է մի անորոշ դերբայի։ Այս դեպքում սակայն սովորաբար ենթակայական կամ առարկայական սեռական է դրվում։ Օրինակ՝ Այս ամենը կատարելու հետ միասին զգալի էր լինում միշտ մի կարիք, որը լցուցանելու համար, դժբախտաբար, ես բավական պատրաստություն չունեի։— Աշխարհում ես չգիտեմ մի գործ, որի (կամ որը) կատարելն ազատ լիներ արգելքներից (Մուր. տե՛ս և § 101. 6, ծան. 2)։

գ) Երբ որ շաղկապից տարբերություն պետք է դնել։ Օրինակ՝ Պատահե՞լ է ձեզ երբևիցե գրավվիլ այնպիսի երգով, որը ցանկանալիք

շարունակ ու անվերջ լսել և որի լռելը ցավ պատճառեր ձեր սրտին.— Եվ մի՞թե սա կայծակի հարված չի լինիլ իմ պատվասեր հոր համար, որն այնքան բարի և ազնիվ սրտով ընդունեց յուր տան մեջ օտար երիտասարդին (Մուր.)։

3. Այս, այդ, այն ցուցականները, որոնք արևելյան աշխարհաբարում չեն հոլովվում, և ո՞վ, ի՞նչ հարցականները, լինին վերջիններս հարցական թե հարաբերական նշանակությամբ գործածված, հաճախ եզակի ձևով դրվում են հոգնակի և բազմակի անունների տեղ։ Օրինակ՝ Այս են իմ խոսքերը (փոխանակ՝ սրանք են)։ Ո՞վ են քո բարեկամները (ո՞վքեր են քո բարեկամները)։ Ի՞նչ են ձեր արարքները (տե՛ս և § 169. 4)։ Սուրբ Գեորգն ամեն մարդկանց էլ, ով նրա դուռը գա, օգնության կհասնի (Պռ.)։

Դ. ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

198. *Բառերը՝ միասին մի խոսք կազմելու համար՝ պետք է որոշ շարքով դասավորված լինին։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ գնում Արաքսի քայլամոլոր ափերով եմ մայր—այստեղ բառերն այնպես են շարված, որ միայն անջատ անջատ գաղափարներ են հայտնում՝ առանց միմյանց հետ կապակցվելու և մի միտք հայտնելու. բայց նույն բառերի որոշ դասավորությամբ կազմվում է խոսք՝ Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ։*

Բառերի դասավորության փոխվելովը կամ բոլորովին խոսք չի առաջ գալիս, ինչպես վերևի օրինակում, կամ թե խոսքի իմաստը նույնն է մնում, բայց արտահայտության եղանակը փոխվում է, ինչպես՝ Մայր Արաքսի ափերով եմ քայլամոլոր գնում.—Մայր Արաքսի ափերով քայլամոլոր եմ գնում։

199. *Բառերի շարադասության հիմնական կանոնն այս է՝ ամեն լրացում իր լրացյալից առաջ է դրվում, հետևաբար և բայը, որի լրացումներն են մյուս բոլոր բառերը խոսքի մեջ, ամենից վերջն է ընկնում. օրինակ՝ Մայր Արաքսի ափերով գնում եմ։ Այս բառադասությունը սակայն, որ հիմնված է մեր մտածողության եղանակի վրա, շատ հաճախ տրամաբանական կամ ճարտասանական նպատակների համար փոփոխության է ենթարկվում. ուստի պետք է տարբերել կանոնավոր կամ սովորական շարադասություն և չրջուն շարադասություն։*

200. *Շրջումը քերականական մի ձև է, որով բառերի սովորական շարադասությունը շուռ է գալիս, և դրանով խոսքի ձևը բազմազան է դառնում և արտահայտությունն՝ ավելի կենդանի ու երաժշտական. օրինակ՝ սովորական խոսքը՝ Ես մի ծիրանի ծառ եմ՝ շրջումով դառնում է՝ Ես մի ծառ եմ ծիրանի (Ժողովրդ. երգ.), կամ թե, որ գլխավորն է, խոսքի մեջ ամենից կարևոր բառը, որի մեջ է մտքի ուժը, իր վրա կրելով խոսքի գլխավոր կամ տրամաբանական շեշտը, առանձնապես զորեղ արտասանվելով դրվում է առաջ, կամ ազդում է մյուս բառերի շա-*

բադասության վրա։ Օրինակ՝ սովորական խոսքը՝ Մենք այսօր գնում ենք, նայելով թե ո՛ր բառի վրա է գլխավոր շեշտը, կարող է դառնալ՝ Մե՛նք ենք այսօր գնում. Մե՛նք ենք գնում այսօր. Մենք այսո՛ր ենք գնում. Այսո՛ր ենք գնում մենք։

Շրջումով չի փոխվում խոսքի միտքը և բառերի քերականական հարաբերությունը։

Բացի սովորական և շրջուն շարադասությունից՝ պետք է նկատի ունենալ նաև բայի ու իր լրացումների, կողմնակի լրացումների և համադաս բառերի դասավորությունը, որոնք տարբերվում են միմյանցից։

1. ԲԱՅ ԵՎ ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

201. Սովորական շարադասության մեջ բայը, որ ամենից գերադաս բառն է, դրվում է խոսքի վերջը. մյուս բառերն՝ իրրև բայի լրացումներ՝ ընկնում են բայից առաջ։ Ուստի՝

1. Ենթական դրվում է առաջ, իսկ բայը՝ հետո. օրինակ՝ Անձրևը դադարեց։

2. Բաղադրյալ ժամանակների մեջ դերբայն ընկնում է օժանդակ բայից առաջ. օրինակ՝ Անձրևը դադարում է. Նա գնացած կլինի։ Իսկ երբ օժանդակ բայն ինքն ևս բաղադրյալ է, այն ժամանակ եմ բայից առաջ դրվում է օժանդակ բայի դերբայը, օրինակ՝ Նա գնացած եղե՛լ է. Նա եկած լինո՛ւմ է։

Նշ. Այս վերջին կանոնավոր շարադասությունը՝ գնացած լինո՛ւմ եմ, տեսած եղե՛լ է— քիչ է գործածվում, որովհետև սակավադեպ կարիք է զգացվում օժանդակ բայը շեշտելու։ Սովորաբար շեշտվում է խոնարհվող բայի դերբայը, որի հետից, շրջումի ընդհանուր կանոնով, դրվում է եմ բայը՝ գնացա՛ծ եմ լինում, տեսա՛ծ է եղել, և այս շրջումով ձևերն ավելի գործածական լինելով՝ դարձել են այժմ սովորական, այսինքն շատ գործածվող ձևեր։

3. Գոյական և ածական ստորոգյալներն ու ստորոգելիականն վերադիրները բռնում են դերբայի տեղը (ըստ 2-րդ կետի) և մտնում են ենթակայի և բայի մեջ. օրինակ՝ Երկինքը պայծառ է. Նա բարի եղե՛լ է և կլինի. Ներսեսը կաթողիկոս ընտրվեց։ Այդ խոսքը ճշմարտություն համարվե՛լ է և կհամարվի։

4. Մակբայը, մանավանդ երբ մակբայորեն գործածված ածական է, դրվում է անմիջապես բայի վրա առաջից. օրինակ՝ Աստղերը պայծառ փայլում են։

5. Բայի խնդիրները, եթե հավասարաշեշտ են, շարադասվում են սովորաբար ենթակայի ու բայ-ստորոգյալի մեջ, երբեմն և ենթակայից առաջ, բոլորովին ազատ ձևով, այն կարգով, որով գաղափարները ծնվում են խոսողի մտքի մեջ. օրինակ՝ Մենք այսօր գնում ենք։ Այսօր մենք գնում ենք։ Դրսում անձրևը շարունակվում էր։— Անձրևը դրսում շարունակվում էր։ Ես գիրքը նրան տալի՛ս եմ, բայց նա չի առնում.

Ես նրան գիրքը տալի՛ս եմ... Բայց երբ խնդիրներից մեկն ու մեկն ավելի զորեղ է շեշտվում, քան մյուսները, այն ժամանակ զորեղ շեշտվածը դրվում է սովորաբար բայի մոտ. օրինակ՝ Ես գիրքը նրա՛ն տվի. Ես նրան գի՛րքը տվի։ Այսպես և անորոշ ենթական ու կրող խնդիրը, ավելի շեշտվելով, դրվում են բայի մոտ. ինչպես՝ Ես գիրքը նրա՛ն տվի. Ես նրան մի գի՛րք տվի։ Նա նամակը հորի՛ց ստացավ։ Նա հորից նամա՛կ ստացավ։ Այսօր եկեղեցում շատ մարդ կար։— Այս վերջինը, շեշտված բառերի դասավորությունը, վերաբերում է արդեն շրջուն շարադասության։

202. Շրջուն շարադասության *համար պետք է նկատի ունենալ ընդհանրապես, որ շրջումը կախված է գլխավոր շեշտից, որով այս կամ այն բառը, առանձնապես կարևորություն ստանալով, դրվում է բայից առաջ բայի մոտ, կամ թե հաճախ դրվում է խոսքի սկզբում և, եթե ինքը շեշտված բառը խոսքի բայը չէ, պահանջում է, որ հետևից բայը դրվի։ Վերադիրների և կողմնակի լրացումների գլխավոր շեշտը համարվում է իրենց լրացյալի շեշտ և նույն ձևով ազդում է բառադասության վրա, ինչ որ բայի լրացումների շեշտը։ Օրինակ՝ սովորական խոսքը՝ Ես իմ տունը ծախում եմ՝ շրջուն ձևով դառնում է՝ Ես ի՛մ տունն եմ ծախում. Իմ տունն եմ ծախում ես. Ես եմ իմ տունը ծախում. Ես եմ ծախում իմ տունը (տե՛ս § 200)։*

Այս ընդհանուր կանոնից հետո պետք է դիտել հետևյալ մանրամասնությունները.

1. Երբ գլխավոր շեշտը բայի վրա է, այն ժամանակ կա՛մ սովորական շարադասությունն անփոփոխ է մնում, որովհետև սովորական շարադասության մեջ ևս բային է ավելի կարևորություն տրվում, օրինակ՝ Եվ մենավոր ծառը սպասո՛ւմ է.— Եվ ծառն սպասո՛ւմ է, ծառը հավատում է.—կամ թե բայն ավելի առաջ ընկնելով՝ մտնում է խոսքի մյուս մասերի մեջ, մանավանդ երբ վերջիններս թվով շատ են. օրինակ՝ սովորական շարադասություն. Այո՛, այժմ նա իր հանցանքը խոստովանո՛ւմ է. շրջուն շարադասություն. Այո՛, այժմ նա խոստովանո՛ւմ է իր հանցանքը։ Այո՛, այժմ խոստովանում է նա իր հանցանքը։ — Օտարականը վար դրեց իր պարկը, ցած բերեց իր ուսից գործիքները, մոտեցավ թոնրին, կծկվեց ու մնջեց։ Դրսում անձրևը շարունակվո՛ւմ էր, ջուրը կաթկթո՛ւմ էր միակերպ, անվերջ ճլըփոցով։

Այսպիսի շրջումը և կանոնավոր շարադասությունը մեծ մասամբ հավասարազոր են. այս պատճառով հաճախ սովորական շարադասության տեղ կամ նրա հետ անխտիր փոխեփոխ գործ է ածվում այս շրջուն ձևը, որով և խոսքն ավելի բազմազանություն է ստանում. երբեմն նույնիսկ շրջուն ձևի մեջ բայն ավելի թեթև է շեշտվում, քան կանոնավոր շարադասության մեջ, մանավանդ երբ բայից հետո ընկնում են պարագաներ, ստորոգելիական վերադիր, բնության խնդիրներ կամ մի անորոշ դերբայ, որոնք երկրորդական շեշտ են ունենում։ Համմտ. օրի-

նակ՝ սովորական շարադասություն. Ես գիրքը նրան տալի՛ս եմ. Նա տուն գնո՛ւմ է. Ջուրը գոլորշի դառնո՛ւմ է. Ես գնալ ուզո՛ւմ եմ. շրջուն շարադասություն. Ես գիրքը տալի՛ս եմ նրան. Նա գնո՛ւմ է տուն. Ջուրը դառնո՛ւմ է գոլորշի և բարձրանում է վեր. Ես ուզո՛ւմ եմ գնալ։

Իսկական ճարտասանական շրջումը լինում է այն ժամանակ, երբ բայը, առանձնապես զորեղ շեշտված լինելով, դրվում է խոսքի սկզբում և բայից հետո գալիս են ենթական և ապա մյուս լրացումները. օրինակ՝ Մտավ Ասքանազյանը խիզանու գավառն և ապշեց ու զմայլվեց. — Լալիս էին բոլոր լսողներն և դառն արտասուք էին թափում, զգացվում և հառաչում էր Հայրիկն և ճանապարհ ընկնում դեպի քրդերի վրանը (Պռ.)։ Անցնո՛ւմ էր գարունը, անցնո՛ւմ էր ամառը, էլի վրա էին հասնում աշնանային ցրտերը... Լուսացավ. անձրևը դադարե՛ց. բացվեց մի աշնանային ցուրտ ու պայծառ օր։

2. Եմ բայը շատ քիչ անգամ է ունենում իր վրա գլխավոր շեշտը և այժմյան լեզվի մեջ չի կարող ընկնել խոսքի սկզբում։ Երբ այս բայը շեշտված է, առանձին ուշադրության է առնվում ոչ այնքան բայի բովանդակությունը, որքան բայի ժամանակը, ինչպես՝ Մարդկան ազգը չարլեզու է՛ր, է՛ և կլինի՛ այդպես միշտ։ Նա գնում է՛ և ոչ թե գնում է՛ր։— Բացասական օժանդակը սակայն, որ սովորաբար շեշտված է գործածվում, դրվում է դերբայից առաջ, և շրջուն ձևերը՝ չե՛մ գնում, չե՛մ գալ, չի՛ եկել և այլն գործածական ձևերն են, մինչդեռ կանոնավոր շարահյուսական ձևերը՝ գնո՛ւմ չեմ, գա՛լ չեմ, եկե՛լ չէ, որոնց մեջ դերբայն է շեշտվում, համարվում են գավառական։ Նույնպես բարբառային են և արգելականները շեշտված դերբայով՝ գա՛լ մի, ա՛սիլ մի, փոխանակ մի՛ գալ, մի՛ ասիլ ձևերի, որոնց մեջ բացասությունն է շեշտվում։

3. Բայերը, հատկապես եմ բայը, մենակ գործածված, թե դերբայի հետ իբրև օժանդակ, ընկնում են շեշտված բառից հետո, դրված լինի այս վերջինը խոսքի սկզբում թե միջում։ Օրինակ՝ Մենա՛կ էր Սուսանն իր խրճիթում, մենակ ու մոռացված։— Քամի՛ տուր նրան այսօր, քամի՛. թող փչե՛ այդ քամին, և գյուղացին մի երկու ժամում շեղջի սրսուռ ցորենը ամբա՛րն է ժողովում, պսպղուն հարդը մարա՛գն է լցնում (Պռ.)։

4. Բաղադրյալ ժամանակների մեջ դերբայը, երբ եմ օժանդակն ընկնում է շեշտված բառից հետո, դրվում է կա՛մ անմիջապես օժանդակի ետևից, կա՛մ նրանից բաժանվում է խոսքի ուրիշ մասերով, և երբեմն նույնիսկ խոսքի վերջն է ընկնում։ Բայի հարադիրն այս դեպքում միշտ անբաժան է մնում դերբայից։ Օրինակ՝ Ես այսօ՛ր եմ գնում տուն. Ես այսօ՛ր եմ տուն գնում: Այսպիսի երևկոներն են մի ուրբր գերեզմանի դռան սպասող ծերերին ուժավորում... Այսպիսի երևկոներն են մանուկներին ֆշում դեպի ընդարձակ դաշտը (Պռ.)։ Կես գիշերային հովն է միայն իր սովորական անհոգությամբ փչում մեղմով։

Միևնույն հոգսն էր մեր երկսիս էլ միաժամանակ մեր հարկերի տակից դուրս շպրտել։— Ես նրան չեմ տեսել, չեմ էլ ճանաչում։

5. Հարադրյալ բայերի և նման դարձվածների մեջ, երբ ենթական կամ խնդիրը մի անորոշ անուն է, սովորաբար շեշտվում է հարադիրը, ուստի շրջուն ձևերը՝ դուրս եմ գալիս, ցույց է տալիս, աստուծուն փառք է տալիս, ետ է դառնում, պար է գալիս, լաց է լինում և այլն, նույնպես և՝ աղոթք է անում, ծոմ է պահում, ծափ է տալիս և այլն սովորական գործածական են. բայց երբ հարկ լինի բայը շեշտել և ոչ հարադիրը, այն ժամանակ կա՛մ կանոնավոր շարադասությամբ է ասվում, կա՛մ հարադիրը դրվում է բայից հետո։ Օրինակ՝ Որդին անցնո՛ւմ է առաջ և ասում հորը... Չգիտեմ՝ լաց լինո՞ւմ էին ուրիշներն էլ, թե ո՛չ, բայց նրա աչքերից արտասուքը բուռը բուռը թափվո՛ւմ էր ցած։

Ծան. Պետք է նկատել, որ շատ հարադրյալ բայերի հարադիրն այժմ կարելի չէ, առանց բռնազբոսության, դնել բայից հետո. օրինակ՝ կարելի չէ ասել՝ Որդին տալիս է ցույց. նա գալիս է պար, այլ միայն՝ ցույց է տալիս, կամ ցույց տալիս է. պար է գալիս կամ պար գալիս է։

6. Երբ բայը հարկադրական եղանակով է, հաճախ շեշտված բառից հետո դրվում է միայն պիտի (պետք է) եղանակիչը, իսկ բայը բաժանվելով ուրիշ բառերով՝ երբեմն նույնիսկ խոսքի վերջն է ընկնում։ Այս պիտի եղանակիչը, ինչպես և թո՛ղ. երբ բայն առանձնապես շեշտվում է, երբեմն դրվում է բայից հետո։ Օրինակ՝ Մե՛նք պիտ այսօր նրբան փառավորենք, մե՛նք պիտի այժմ նրա ոտները գնանք։ Չարիքը դրել են գնմդ. կովե՛ս պիտի. ուրիշ ճամփա չկա (Ղր.)։ Պիտի գովեմ մայր հողը, քամին, ջուրը, անձրևը, պիտի հիշեմ աստղերը, լուսնյակը, արևը. նկարագրե՛մ պիտի սարեր, ձորեր, դաշտ անկեղծ, որ իմ դատավորիս մոտ ներկայանամ բանաստեղծ (Ջիվ.)։ Ասի՛ թող, գա թող։

Ծան. Մինչ կր եղանակիչն այժմյան լեզվի մեջ ամեն անգամ կրկնվում է բայի վրա և բայից անբաժան է մնում, պիտի (պետք է) եղանակիչը կարող է միշտ ուրիշ բառերով բաժանվել բայից և մի անգամ միայն դրվել շատ բայերի համար, ինչպես՝ Մենք պիտի այսօր գնա՛նք և տեսնե՛նք նրան։ Ուշք դարձներ էֆենդին, կամ ոչ, մեր պատվելին պետք է խոնարհ երկրպագություն տար մինչև գետին, բարձր, բայց համեստ ձայնով տաճկերեն լեզվով ողջույն տար և սպասեր, մինչև դիմացինն անցնի (Պռ.)։

7. Ստորոգյալն ու ստորոգելիական վերադիրը, երբ բայն իր շեշտի կամ մի ուրիշ բառի շեշտի պատճառով ընկնում է առաջ, դրվում են կա՛մ անմիջապես բայից հետո, կա՛մ խոսքի վերջում (համմտ. դերբայի տեղը ըստ 4-րդ կետի)։ Օրինակ՝ Ներսե՛ս է ընտրվում կաթողիկոս. Ներսե՛ս է կաթողիկոս ընտրվում. Ներսեսն ընտրվո՛ւմ է կաթողիկոս։ Ես ու դո՛ւ ենք իրար հարկավոր.— Այս ցանկալի երեկոն և յուր բերած հովիկ-մովիկ քամի՛ն են հարկավոր՝ վաղ առավոտից սկսած արեգակի տակ տապակվող կալվորին.—(Աղբրակները) այդ բնակավայրերը չինե՛լ են տարվան երեք եղանակներում մի երկրավոր նոր Եդեմ.—

Տաճիկ ազգության աննշա՛ն մասն է մասնակից տեղական արտահանություններին (Պռ.)։ Նա էլ է գիտակից լռության տակ ծածկված գաղտնիքին.— Նրա լեզուն գուցե միայն աստղերին է հասկանալի։

8. Երբ գլխավոր շեշտ ունեցող բառը դրվում է խոսքի սկզբում, այն ժամանակ բայից անմիջապես հետո դրվում է ենթական, եթե կա. իսկ ենթակայից հետո շարադասվում են բայի մյուս լրացումներն ի րենց կարևորության համեմատ։ Օրինակ՝ Կաթողիկո՛ս է ընտրվում Ներսեսը։ Անո՛ւշ է օդը, քա՛ղցր է եղանակը, հոգեպարա՛ր է երեկոն.— Այսպիսի երեկոյի՛ է սպասում քաղաքացի նազիկ-մազիկ գեղեցկուհին.— Մտավ Ասքանազյանը Խիզանու գավառը (Պռ.)։ Եվ հավատում է ծառը, և սպասում է նա։— Արժանի՛ էր նա այդ քաջալերության։ Քամի՛ տուր նրան այսօր (Պռ.)։

Բայց երբ բայը շեշտվելով մտնում է խոսքի մեջ (ըստ 1-ին կետի) և կամ ընկնում է մի շեշտված բառից հետո, որ խոսքի սկզբում չի դրված, այն ժամանակ ենթական և բայի մյուս լրացումները դրվում են մասամբ շեշտված բառից առաջ, մասամբ բայից հետո. բայից հետո ընկնող ենթական դրվում է սովորաբար բայի մոտ։ Օրինակ՝ Նա նմա՛ն է իր եղբորը։ Ներսեսը կաթողիկո՛ս է ընտրվում 1884 թվին։ Նա մենա՛կ է որոճում դարերի ցավը։— Նա ողջույնի հետ միասին ցա՛ծ թռավ հաստալանջ նժույգից. Մելքիսեդեկյանը ցո՛ւյց տվեց Ռուբենին իր արտոնագրերը.— Քարոզի մեջ Հայրիկն ի՛նքն էր ավետում հետևյալ կյուրակեի քարոզելու տեղը.— Մեկ աչքը ձգո՛ւմ էր նա դեպի ընդարձակ հորիզոնը և մեկ էլ նայո՛ւմ էր սպիտակ թղթին (Պռ.)։ Ամեն շաբաթ սողալով ու չանգռելով՝ լեռն ի վե՛ր է ձգվում դժբախտ մարդկանց խղճուկ կարավանը։

203. Հարցական ու բացագանչական խոսքերի համար հայերենում չկա առանձին բառադասություն, այլ պահվում է միևնույն սովորական կամ շրջուն շարադասությունը, միայն նայելով իմաստին՝ այս կամ այն բառը հարցական եղանակով կամ երկար է արտասանվում։ Եվ օժանդակն և մյուս բայերը ընկնում են միշտ, ինչպես շրջուն շարադասության մեջ, հարցականով կամ բացագանչականով շեշտված բառերի ետևից։ Օրինակ՝ Դո՞ւ գնացիր տուն. Դու գնացի՞ր տուն. Դու տո՞ւն գնացիր. Գնացի՞ր դու տուն։ Ո՞վ է հայը. Դու ո՞վ ես։ Ո՞ւր էիր գնացել դու. Դու ո՞ւր էիր գնացել։ Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրա։ Հրաշալի՛ են աստղերը։

Ծան. Պետք է նկատել, որ հարցումը ոչ միշտ հարցական բառի վրա է լինում, այլ հաճախ նախորդ խոսքի հետ հարաբերություն ունեցող մի բառի վրա, որ ունի գլխավոր շեշտը և որի ետևից դրվում է հարցական բառն առանց շեշտի. օրինակ՝ Նրանք ա՛յս են արել, դո՞ւք ինչ եք արել։ Քո եղբա՞յրն ուր է գնացել։

204. Մի առանձին տեսակի շրջում կազմվում է ավելադրությամբ, որով արտահայտությունն ավելի է զորանում։ Գլխավոր շեշտն ունե-

ցող բառերը, ենթակա, խնդիր թե պարագա, դրվելով խոսքի սկզբում՝ իրանց ետևից առնում են եմ բայը համապատասխան դեմքով և կազմում մի ավելադրական խոսք, որի ետևից ընկնում է բուն խոսքը որ հարաբերականով կապված և սովորաբար կանոնավոր շարադասությամբ։ Օրինակ՝ փոխանակ ասելու՝ Ես եմ համբերում, ասվում է՝ Ես եմ որ համբերում եմ։—Մե՛րն է որ մեջտեղում փչանում է.—Վաղուց է որ չեմ լսել.—Անշուշտ աստծու բարկությունն է որ այս գեղի գլխին թափվել է.—Հիմի որ ոտից ձեռից ընկել եմ.— Այն ի՞նչ արտասուք է որ թափել ես.—Այդ ի՞նչ միտք է որ քու մեջը մտել է.— Այդ ի՞նչ բան է որ խոսում ես.—Այդ ի՞նչ խայտառակություն է որ անում են.—Սոսը մինչև հիմա դեռ առաջին անգամն է որ Պարետի բերնից այսպիսի քաղցր խոսքեր լսեց.— Իր փեսայից այնպիսի քաղաքավարություն առաջինն էր որ տեսնում էր.—Հինգշաբթի իրիկնապահին էր որ նրանք գնացին (Պռ.)։

Այսպիսի շրջումը, երբ սկզբում դրված շեշտված բառն անորոշ ուղղական է, խոսքին տալիս է շատության, բազմակիության նշանակություն. Օրինակ՝ Մա՛ղիկ է որ գոգները լցրած բերում են (այսինքն՝ շատ ծաղիկ են բերում ջոկ ջոկ).—Զա՛յն էր որ ականջն էր ընկնում.— Ամեն տեղից ղուրո՛ց է որ գալիս է.—Սուփրե՛ք է որ բաց են արել.— Ուրախությո՛ւն է որ լինում է.— Պաշա՛ր է որ կապում են.— Կարմրախա՛յտ է որ դուրս է գալիս։

2. ԿՈՂՄՆԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

205. Վերադիրներն ու կողմնակի լրացումները դրվում են կանոնավորապես իրենց լրացյալից առաջ և նրանից անբաժան մնալով՝ նրա հետ միասին կազմում են մի միություն։ Օրինակ՝ «Իր թշնամուց վախեցող մարդը» կապակցության մեջ «վախեցող» լրացում է «մարդ» բառի և նրանից առաջ է դրված, իսկ «իր» լրացում է «թշնամուց» բառի, որից և առաջ ընկնում է այս լրացումը (տե՛ս § 47)։

206. Սովորական շարադասության համար պետք է նկատել հետևյալ մանրամասնությունները.

1. Նախադրությունները՝ առ, դեպի, մինչև և այլն դրվում են միշտ կողմնակի լրացումներից ամենից առաջ, որով իբրև նախադրության խնդիր ըմբռնվում է ոչ թե սոսկ գոյականը, այլ գոյականն իր բոլոր լրացումներով հանդերձ. օրինակ՝ Առանց քո այդ գեղեցիկ խոսքերին էլ.. Մինչև նրանց այդ գիրքը կարդալը... (տե՛ս § 138. 1. ա)։

2. Գոյականի լրացումները դրվում են կանոնավորապես գոյականի վրա առաջից, իսկ բացահայտիչը՝ ետևից. ինչպես՝ ջանասեր աշակերտ. թագավորի պալատ. Վարդան զորավարը. մեզնից մեկը։ Հայրիկի հետ Գարեգնի երկրորդ տեսակցության հետևանքն այս նոր մտադրությունը առաջ բերեց (Պռ.)։ Այնտեղ ծանոթացա տեր Հոր կրտսեր

որդուն՝ Հակոբին (Մուր.)։ (Տե՛ս և §§ 41—43, 178 հտ., 180 հտն.)։ Պետք է նկատել և հետևյալները.

ա) Լիքը ածականը դրվում է չափի անուններից հետո. օրինակ՝ Մի բաժակ լիքը գինի, մի բուռը լիքը ալյուր, մի աման լիքը ձեթ։

բ) Բայական անունների խնդիրները, երբ բայական անուններն ուղղական կամ հայցական են, դրվում են սովորաբար անվան ետևից. օրինակ՝ Քրիստոսի համբարձումը երկինք։ Նրա հրաժարումը պաշտոնից։ Պատերազմ Դոմետիանոսի զորքերի հետ։ Խոսրովի առաջին արշավանքն Ասորեստանի վրա։ Խոսրովի հարձակումն Արտաշրի վրա։ Նրա ճանապարհորդությունը դեպի Այրարատ (տե՛ս և § 143)։

գ) Որոշ թվով ածականներ, ուղղական հոլովի հետ, կարող են և անունից հետո դրվել, ինչպես՝ վեց ժամ ամբողջ. տարին կլոր։ Տարին բոլոր նա ինքը... հողի հետ խաղացել է (Պռ.)։ Աշխարհ ամենայն։ Առավոտյան կիսախավարի մեջ գյուղն ամբողջ ասես ձգձգվում, հորանջում էր։

դ) Մի քանի իբրև ետադրություն գործածվող անուններ կարող են իրենց խնդրից և առաջ, և հետո դրվել, ինչպես՝ շնորհիվ, փոխանակ, նկատմամբ, վերաբերմամբ և այլն։ Օրինակ՝ Սկսավ բացատրություններ տալ նկատմամբ ս. Աստվածածին եկեղեցու.— Լինում էին անփույթ վաղվա պարտքի նկատմամբ.— Անտառի պահպանության վերաբերմամբ (Մուր.)։

Ծան. Կես բառը թվականների ու չափի և այլ անունների հետ գործ է ածվում երկու կերպ. ինչպես՝ մեկ ու կես ամիս,— ամիս ու կես. մեկ ու կես տարի,— տարի ու կես. երկուս ու կես ժամ,— երկու ժամ ու կես։ Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար (Ժող. երգ.)։

ե) Ետադաս են դրվում ի նախդրով գործածված անունների սեռական խնդիրները. օրինակ՝ ի սեր աստուծու, ի պատիվ նրա. ի նշան հավատարմության (տե՛ս § 141)։

3. Որակական ածականից, ինչպես և մակբայից առաջ դրվում են մակածական լրացումները, որ ցույց են տալիս աստիճանի պարագա. օրինակ՝ խիստ բարի, չափազանց գեղեցիկ։ Սա նրանից ավելի բարձր է։ Նա շատ երկար ժամանակ բացակայեց։

Ծան. Աստիճանական մակբայներն իբրև մակածական լրացում դրվելով որակական ածականների վրա, ցույց են տալիս հատկության աստիճանների. 1. Սաստկական աստիճան, երբ հատկության աստիճանը մի մակածականով բարձրացվում կամ իջեցվում է առանց բաղդատության, օրինակ՝ Նա խիստ լավ մարդ է. 2. Բաղդատական աստիճան, երբ մի առարկա յուր հատկության կողմից համեմատվում է ուրիշ նույն հատկությունն ունեցող մի կամ մի քանի առարկաների հետ. օրինակ՝ Վարդը մանուշակից ավելի ճոտավետ է։ Մանուշակը պակաս (նվազ) հոտավետ է, քան վարդը։ 3. Գերադրական աստիճան, երբ բաղդատությունը լինում է բոլոր նույն հատկությունն ունեցող առարկաների հետ, օրինակ՝ Վարդն ավելի գեղեցիկ է, քան բոլոր ծաղիկները. կամ՝ Վարդն ամենից գեղեցիկ (ամենագեղեցիկ) ծաղիկն է. 4. Դրական աստիճան, երբ առանց բաղդատության կամ սաստկականության պարզապես առարկայի հատկությունն է ասվում. օ-

բինակ՝ Վարդը գեղեցիկ է։ Նույն աստիճաններն ունին նաև մակբայորեն գործածված որակական ածականները, ինչպես և՝ տեղ ու ժամանակ ցույց տվող բառերից՝ առաջ, հետո, ետ, շուտ, վեր և այլն։

4. Ածական վերադրից, ինչպես և մակբայից առաջ, և եթե աստիճանի մակածական ունին, սրանից էլ առաջ դրվում են ածականի և մակբայի խնդիրները. օրինակ՝ Նա քարոզ է խոսում Աստուծո խոսքին կարոտ ժամավորին (Պռ.)։ Խելքից բոլորովին զուրկ, ձևով խիստ նման, խաղի մեջ բախտավոր մարդ։ Գործից ու դասերից ազատ օրերը (Պռ.)։—Բայց երբ ածականը դառնում է ստորոգյալ, նրա խնդիրը կարող է շրջումով դրվել վերջը. օրինակ՝ Նա պատվի արժանի է,— նա արժանի է պատվի։ Նա հանգստության կարոտ է,—նա կարոտ է հանգստության (տե՛ս § 202. 7)։ Նույնպես և մի քանի իբրև ետադրություն գործածվող ածականներ կարող են իրենց խնդրից և՛ առաջ, և՛ հետո դրվել, ինչպես՝ հակառակ իր կամքին.—համաձայն յուր նուրբ ճաշակի պահանջներին (Մուր.)։ Այսպես և նման, համեմատ և այլն։

5. Ամեն վերադրից առաջ դրվում են անմիջապես իր լրացումները, իսկ վերադիրներն իրենք շարադասվում են հետևյալ կարգով՝ 1) Ստացականները կամ սեռականները, որոնք որակական իմաստով չեն գործածված. 2) Ցուցական ածականները՝ այս, այդ, այն, նույն և այլն. 3) Անորոշ ածականները՝ այսինչ, այնինչ, մյուս (մեկել), ուրիշ, ինչ ինչ. 4) Թվական ածականները և անորոշները՝ մի քանի, բոլոր, ամեն, շատ, քիչ, ամեն մի, յուրաքանչյուր, ինչպես և չափ ու քանակի ուղղական վերադիրները (§ 63. 3). 5) Բայածականները. 6) Որակական ածականները, ինչպես և որակական սեռականներն ու մյուս հոլովները, երբ գործ են ածվում որակական ածականի նշանակությամբ. 7) Բացահայտող իմաստով ուղղական վերադիրը (§ 63. 2)։ Օրինակ՝ Մեր քաղաքի այս մյուս երկու նոր շինած գեղեցիկ-եկեղեցիները։ Քո այդ մի քանի գինու բաժակները։ Պարտեզի այս մի երկու ծիրանի ծառերը։ Իմ այս երկրորդ բարի ընկերը։ Դասարանի մյուս ամեն կոտրած սեղանները։ Այս արագ հոսող կարկաչուն առվակը։ Հայոց այս մեծազոր Տրդատ արքան։

Այս ընդհանուր կարգի համար պետք է նկատել.

ա) Թվականները սովորաբար դրվում են անորոշ ածականներից առաջ, բայց կարող են և հետո դրվել. օրինակ՝ մի ուրիշ մարդ, ուրիշ մի մարդ. մի ինչ որ ծաղիկ, ինչ որ մի ծաղիկ. մի որևէ, որևէ մի. մի ամբողջ, ամբողջ մի տարի։ Այսպես երբեմն մի քանի, մի քիչ դառնում են՝ քանի մի, քիչ մի (արևմտ. աշխ. քիչ մը, շատ մը), սակավ մի։ Մի ոմն, ամեն մի անփոփոխ են մնում։ Սուսանն աղոթում էր ...Սաքոյի համար, որ Ֆանի մի օր առաջ թողեց. գնաց դեպի մութ անհայտը։

Ծան. *Մի դրվելով քանակական թվականներից առաջ՝ ներձավոր անորոշ նշանակություն է տալիս նրանց. օրինակ՝ Նա հիսուն ձու տարած կինի (Պռ.)։ Մի քսան տարի հետո։*

բ) Թվականն երբ ընկնում է այնպիսի գոյական խնդրից առաջ, որին չի վերաբերում, սովորաբար տեղափոխվելով դրվում է խնդրառու բայածականներից և որակական ածականներից հետո. օրինակ՝ Մի պատժի արժանի մարդ, պատժի արժանի մի մարդ։ Ձեռին մատանի ունեցող մի մարդ,— մի՝ ձեռին մատանի ունեցող մարդ (որ կարող է հասկացվել իբրև մի՝ ձեռին ունեցող). մի սև քարից շինած գեղեցիկ տուն,— սև քարից շինած մի գեղեցիկ տուն։

Ծան. Արևմտյան աշխատաբարում մը անորոշը միշտ անբաժան դրվում է անվան ետևից, ինչպես՝ մարդու մը գիրք. մարդու մը հետ։

գ) Ցուցականներն ու ենթակայական սեռականներն ևս երբեմն կարող են դրվել խնդիր ունեցող բայածականներից հետո. օրինակ՝ Այս՝ սև քարից շինած տունը,— սև քարից շինած այս տունը։ Այս պատժի արժանի մարդը,— պատժի արժանի այս մարդը։ Կանխավ արած մեր որոշման համաձայն (Մուր.)։

Ծան. Անսովոր դասավորություն է բոլոր ածականը ցուցականներից ու սեռականից առաջ դնելը. ինչպես՝ բոլոր այս գրքերը, բոլոր մեր ընկերները, փոխանակ՝ շարադասելու՝ այս բոլոր գրքերը. մեր բոլոր ընկերները։ Նույն ձևով սովորական բառադասություն չէ ցուցականը սեռականից կամ ստացականից առաջ դնելը, ինչպես՝ Այս մեր ընկերները, այդ ձեր գրքերը, փոխանակ՝ մեր այս ընկերները, ձեր այդ գրքերը։

դ) Դասական թվականը դրվում է քանակականից առաջ կամ ընդհակառակն, նայելով թե որ ածականը գոյականի հետ իբրև մի միություն է ըմբռնվում. օրինակ՝ Պատերազմի առաջին երկու տարին.— Երկու երկրորդ դասարաններն էլ թույլ են։

6. Դերբայներից առաջ կանոնավորապես դրվում են իրենց լրացումները, որոնք շարադասվում են ինչպես բայի լրացումները. միայն կողմնակի ենթական և ենթակայական սեռականը դրվում են ամենից առաջ. բայց երբ կողմնակի ենթական անորոշ անուն է, դրվում է դերբայի մոտ։ Դերբայի մոտ են դրվում սովորաբար և ստորոգյալն ու ստորոգելիական վերադիրը, ինչպես և անորոշ կրող խնդիրը։ Օրինակ՝ Մինչև մութը գետինն առնելը. Լույսը դեռ չբացված. Մինչև Տիգրանի նրանց մոտ գնալը։ Եթե իմ ձեզ ավանդած դասը (Պռ.)։ Եկեղեցում կանգնելու տեղ չլինելով։ Դեռ եկեղեցումն ես հասկացա քահանայի ինչ լինելը.— Անշուշտ հետաքրքիր ես իմանալու անժամանակ եկած հյուրիդ ո՛վ լինելը (Պռ.)։

Անորոշ դերբայի խնդիրները սակայն հաճախ կարող են շրջումով դրվել ետադաս, ինչպես բայի խնդիրներն ըստ § 202. 1. օրինակ՝ Մի բավականին մեծ և արագավազ գետ, համբույրներ տալով յուր ափերի մշտնջենական քարափներին և տեղ տեղ դալարագեղ մարգաստանին, վազում է ջրելու ներքևն ընկած դաշտավայր գյուղերի հանդերը.— Պատվելին սկսել էր դժգոհ մնալ Ղունկիանոսից (Պռ.)։

207. Շրջուն շարադասության *համար առաջ պետք է նկատել, որ գրաբարում սովորական լեզվի մեջ ևս վերադիրները, ինչպես և կողմնակի խնդիրները, կարող են իրենց լրացյալից հետո դրվել, իսկ աշխարհաբարում այս հատկությունը մի ձևավորություն է միայն, որ գործ է ածվում ճարտասանական ազդեցություն թողնելու և ոճին վսեմություն տալու համար։ Շրջումը սակայն ասացվածը բանաստեղծական է դարձնում, խոսքին հոսանք և հաստատուն, ազնիվ ընթացք է տալիս միայն այն ժամանակ, երբ գործ է ածվում հարմար տեղին և բնականորեն, լեզվի ոգու համեմատ, թե չէ՝ անբնական շրջումները լեզուն միայն երկդիմի, մութն են դարձնում և զրկում նույնիսկ սովորական խոսքի կենդանությունից ու կորովից։ Ուստի այստեղ չեն կարող տեղ ունենալ վերադիրների այն շրջումները, որ մեր բանաստեղծները գրաբարի կամ օտար լեզուների ազդեցության տակ անում են, հաճախ ոտանավորի հանգը կամ ոտքը տեղը բերելու համար միայն։ Օրինակ՝ Սայեադյանի հետևյալ տողերի մեջ. «Մի՛ լար, բլբուլ, քեզ մի՛ տանջիր, որ փոթորիկն անիրավ վարդդ սիրուն, վարդդ կարմիր թփից պոկեց ու տարավ»,— վերադիր ածականները միայն ոտքի ու հանգի համար են հետադաս դրվել և կարող են նույնիսկ երկդիմություն առաջ բերել, վերագրվելով հաջորդ գոյականներին իբրև «անիրավ վարդդ» «կարմիր թփից»։*

208. *Վերադիրներից բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալի հետևից, և այս շարադասությունը շրջում չէ (տե՛ս § 178). մականուն վերադիրները սակայն (տե՛ս §§ 41, 43) միայն շրջումով կարող են իրենց լրացյալ անունից հետո դրվել։ Իբրև ընդհանուր կանոն կարելի է դնել, որ այս վերադիրները, լինին ածական թե գոյական որևէ հոլովով, առանց բոնազբոսության հետադաս կարող են վարվել միայն այն ժամանակ, երբ իրենց լրացյալ անունն ուղղականի հոլովով է, լինի վերջինս բուն ուղղականի նշանակությամբ, թե իբրև կոչական կամ հայցական գործածված։*

Այս ընդհանուր կանոնից հետո պետք է նկատել հետևյալ մանրամասնությունները.

1. Մականուն վերադիրների հետադասության շրջում լինում է այն ժամանակ, երբ անունն է առանձնապես շեշտվում և ոչ իր վերադիրը, և կամ թվարկվում են զանազան անուններ, որոնց վրա է առանձնապես ուշադրություն դարձվում. օրինակ՝ Ողբա՛յր սիրելի, եղբա՛յր պատվական. տե՛ր իմ։ Տարո՞ն, սրբավա՛յր կրոնի և աստվածպաշտության. Տարո՞ն, բնագավա՛ռ հայոց աստվածների... Իբրև մի ջա՛հ լուսապայծառ՝ լուսավորեց նա աստուծո տունը.— Նա, յուր անվան համեմատ, որպես մի արեգա՛կ լուսապայծառ, որ աչք է շլացնում...—Մեծ էր փա՛ռքը հայրապետի, երբ նա մի որևէ տեղ էր գնում.—Ոչ մի մկնակ, ոչ մի նշույլ կենդանության չէր շարժվում նորա ցամաք դեմքի վրա (Րաֆֆի)։ Հունաստանը թերևս մնկ հատիկ երկիրս է. ուր... գրականու-

թյունը իբրև ամենաճիշտ հայելի այդ զարգացման՝ ժողովրդի հետ միասին առաջ է գնացել (Պալ.)։ Եկեղեցի, խորան, սեղան չկար յուր առաջ, այլ երկինք ամպամած և գետին ձյունամած (Մեր.)։ Նրա վրայից քարշ էին ընկած զանազան զենքեր. կապարճ՝ լի նետերով. աղեղ՝ լայնալիճ. տապարներ՝ երկաթյա երկար կոթով. թեթև վահան՝ ուղտի թափանցիկ կաշուց պատրաստված. ծանր ասպար՝ պողովատից շինված և խոշոր՝ կոճակների նման բևեռներով գամված. սաղավարտներ՝ կամ տեգի պես սուր կատարներով և կամ մազե ցցունքներով. զրահ՝ երկաթյա մանր օղակներից գործված. վաղրներ՝ կարճ և երկար, ուղիղ և կեռ, միասայր և երկսայրի (Րաֆֆի)։

2. Մականուն վերադիրները՝ ներդաշնակություն կամ որևէ ազդեցություն առաջ բերելու համար՝ կարող են անունից հետո դրվել, երբ առնվազն երկու հատ են։ Օրինակ՝ Նրա բանը լավ էր. մի կարճ հոնի փայտ, ծանր ու կակ, ձեռքին էր։— Նրա մոտ նստած էր մի այլ կին, ավելի մանկահասակ, ավելի նազելի (Րաֆ.)։ Կրնա՞ս երկրորդ Վարդան մը լինել Հայաստանի համար, Վարդան ավելի խելոք, ավելի հանդարտ, վատնզի... Երկայն ժամանակ ամենուն աչքը և ուշադրություն կգրավեր, ուշադրություն անհաստատ և անկայուն.—Տեսնելով երիտասարդ տղա մը՝ ազնվական և անփորձ, որ... Գետնափոր սենյակ մը խավար և մահաբեր. Իր լուսալիր հայեցվածը, վսեմ և քաղցր, այդ մարդուն կրակե աչքերուն վրա ուղղեցան (Մերենց)։ Միևնույն ժամանակ պետք է մղենք երկու պատերազմներ, արտաքին և ընտանեկան (Րաֆ.)։ Շրջանակի վրա վեց փոքրիկ, լար մեղրամոմեր, վշտատեսիլ ու դեղին, պլպլալով վառվում էին։— Ինչպե՞ս է առողջությունը Աստուր աղային, Օսաննա խաթունին և օրիորդին (Գ.-Ք.)։ Խալխն ամենքն էլ, ծանոթ անծանոթ, ձայն տվին (Պռ.)։ Կանգվարի բնակիչքը, մեծ ու փոքր, ելան (Մեր.)։

*3. Ածական և բայածական վերադիրները հաճախ ետադաս են վարվում, երբ իրենք ևս ունին լրացումներ, որոնք իրենց հերթին դրվում են սովորաբար շրջումով։ Այսպիսի վերադիրներն ոմանք երբեմն մի ամբողջ խոսքի նշանակություն։ Օրինակ՝ Աստվածուհու նվիրական թըռչունները, մաքուր և անբիծ որպես սիրո անարատ ոգիներ, սավառնում էին (իբրև՝... որոնք մաքուր և անբիծ էին...).— Լեռների հսկայական շրջանակի մեջ, որպես մի սքանչելի պատկեր, երևում էր Մուշի ընդարձակ դաշտավայրը, հարթ հավասար իբրև մի լայնածավալ, նախշուն գորգ.—Ընդունարանը ներս մտավ մի ծերունի, **շոր** ու **ցամաք** որպես կմախք.—Մի զույգ եգիպտական աղավնիներ, **սպիտակ** որպես ձյուն, բույն էին դրել... Մասուրների վրա շարքով կապած էին նժույգները, մաքուր, առողջ, մինը մյուսից գեղեցիկ.—Երկու փափագները, մինը մյուսից ավելի սաստիկ, մաքառում էին նորա մեջ.—Որպես մի այլանդակ հրեշ, լի ամենայն զարհուրանքով, կանգնած էր Անուշ բերդը (Րաֆֆի)։*

Ոլոր մոլոր, ցանցատեսակ փողոցները հորինել էին մի մեծ լա-

բիրինթոս, ծածկված ծառերի ոստախիտ ստվերի ներքո.— Կանաչազարդ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով.—Ահա այդ արծաթյա մահիկը, զարդարված խոշոր ալմաստներով, որ կապել ես... Եվ նրանց առջև բացվում էին կանաչ, թավշապատ մարգեր, սփռված գույնզգույն ծաղիկներով.— Առջևից տանում էին իշխանական տան նժույգները՝ զարդարված ամենաթանկագին ասպազենքով (Րաֆ.)։ Մեր ամարանոցները ոչ այլ ինչ են, եթե ոչ մեր գավառի հովահար գյուղերը, կպած լեռների կանաչ լանջերին, կամ թառած բլուրների կատարների վրա, ուր օդը զվարթարար, ջուրը անապակ և կյանքը խաղաղ է միշտ.—Մենք տեսնում էինք հեռվում արևով ողողված հովիտներ, մարգեր ու մարմանդներ, որոնց վրա ճապաղում էին ոչխարի հոտերն ինչպես միջօրեի սպիտակ ամպեր՝ լողացող կապուտակ երկնակամարի վրա (Մուր.)։ Սպիտակ արագիլը. կարմիր ոտները հորիզոնական դիրքով մեկնած, լայն թևերով թափահարում էր.—Մի խումբ պատանիներ, շքեղ կերպով հագնված, պատրաստ էին այնտեղ սպասավորելու համար (Րաֆ.)։

Ծան. Այսպիսի վերադիրները չպիտի շփոթել պարագայի կամ ստորոգելիական վերադրի հետ, որոնք նույնպես երբեմն ունին մի խոսքի նշանակություն. օրինակ՝ Նա Ձին նստած գնում է։ Հեռվից, լեռան կրծքին կպած՝ երևում է Ղ. գյուղը (Մուր.)։ Իր գիտությամբ ու փորձառությամբ հպարտ՝ Դսպեն օրը մի քանի անգամ գալիս էր դիտելու ջրաղացի ետի ամրողջ կազմը։

4. Հաճախ ետադաս են դրվում գործիական և բացառական վերադիրները (տե՛ս § 108 ծան. և § 127), մանավանդ երբ իրենք ևս լրացումներ ունին, կամ հարաբերյալ են որ հարաբերական դերանվան։ Օրինակ՝ Երկու բարակներ, թանկագին վզկապներով, վազում էին իշխանի առաջից.—Բաց էր անում զոհաբերության մեծ հանդեսը՝ հարյուր սպիտակ ցուլ, ոսկեզօծ եղջյուրներով, զոհ մատուցանելով.—Ուռենիների թավուտներից դուրս հարձակվեցավ մի ահագին եղջերու, ծանր, բազմաճյուղ եղջյուրներով.— Սույնպիսի մի դրոշակ, արծաթի նշանով, այժմ ծածանվում է իմ վրանի գլխին.—Հայտնվեցան երեք պատկառելի ծերունիներ, հաղթանդամ, թավամազ միրուքով, ոտքից գլուխ զինված.—Տաճարի մոտ պահած էին հարյուր հատ առողջ ու անբիծ խոյեր, սպիտակ ձյունափայլ գեղմով և ոսկեզօծ եղջյուրներով.—Ձեռքում բռնած ունենալով մի վառած ջահ՝ եղևնի երկար տաշեղներից (Րաֆ.)։— Նրա աչ ու ահյակ կողմում նստած էին մի մի ճերմակազգեստ մոգեր, երկար, սրածայր գլխարկներով, որ տաշած շաքարի գլխի նման՝ յոթնանկյունի ձև ունեին.—Դռան բարձրության վրա կար մի սյունազարդ վերնահարկ, բաց երեսով, որ պատշգամբի ձև ուներ.— Շրթունքների մեջ ագուցած էր մի տափակ, ցանցատեսակ խուփ, մանր ծակտիկներով, որ զանազան նկարներ էին ներկայացնում.—Հագավ մետաքսյա ծաղկավոր պատմուճանը, կողքերից ճղած վիշերով, որ իջնում էին մինչև սրունքները։

Նան. 1. Անսովոր ձև է ետադաս դնել վերադիրը, երբ նախադրությամբ է և գործ է ածված իբրև վերադիր մի հոլովված անվան. օրինակ՝ նրա հանգած, նեղ աչքերից, որ սեղմված էին կարմիր կոպերի մեջ՝ առանց թերթեռուճների (Րաֆ.)։ Նույն հեղինակն ուրիշ տեղ նույնն արտահայտում է հետևյալ ձևով. «Ներս մտավ ներքինապետ Բաքոսը, յուր խորշոմած լերկ դեմքով, յուր առանց թերթեռուճների կարմիր կոպերով»։

Նան. 2. Այսպիսի ետադաս գործիական վերադիրները, երբ անբաժան հատկանիշ են ցույց տալիս, դրվում են իր, իրենց վերադիրներով, ինչպես վերևի վերջին օրինակում։ Այլև՝ Այդ նժույգն՝ յուր ճակատի ճերմակ աստղով հայտնի էր.— Այնտեղ լեռնային մարդը, դեռ յուր նախնական մորթեղեն հագուստով, երկար նիզակը ձեռին բողնում է... Բարձր ուղղաձիգ եղեգնաբույսերը, իրենց ճերմակ, փնջաձև կատարներով, ծածանվում էին զեփյուռի մեղմ շնչից (Րաֆ.)։

5. Սեռական վերադիրը հաճախ ետադաս է դրվում, երբ հարաբերյալ է ետևից եկող հարաբերական որ դերանվան։ Այս շրջումը լինում է սովորաբար մթնություն չառաջացնելու համար։ Օրինակ՝ Փրրկիչն իրան անվանեց որդի այն արքայազն Դավթի, որ միևնույն ժամանակ և երգիչ էր, և մարգարե (Պալ.)։ Լսում էր սրտի զեղմունքը անբախտ տիկնոջ, որ կորուսյալ թագավոր ամուսին ուներ (Րաֆ.)։ Երևակայում էի մեծությունն այն գործի, որ ես պիտի հիմնեի և որին ամբողջովին պիտի նվիրվեի։—Այդ հափշտակված դրությունից հանում էր ինձ... ձայնը իմ մոր, որ խոսում էր աղախնի կամ ծառաների հետ.—Ավելորդ չէ հաղորդել և պատմությունն իմ վերջին օրերի, որոնք թվում է թե չպիտ երկարեն (Մուր.)։

Երբեմն այս շրջումի ժամանակ բայը մտնում է ետադաս սեռականի և իր լրացյալի մեջ։ Օրինակ՝ Պետրոսը որդի է մի այնպիսի մարդու, որ շարունակ իմ ձեռնարկություններին արգելք էր լինում.—Ինչո՞վ իսկապես առաջն առնել իմ հիվանդության, որ հետզհետե սուր կերպարանք էր առնում (Մուր.)։

6. Ետադաս մականուն վերադիրներն և իրենց լրացյալը կարող են, ավելի ժողովրդական ձևով, բաժանվել եմ, կամ, ունիմ և ուրիշ բայերով։ Օրինակ՝ ծամեր ունիս ծիրանի, քամին տա՛, թել թել անի (Ժող. երգ.)։ Տե՛ս արցունքը մի՛ կողմը, կրակը մյուս կողմն են բռնել սրտիս.—Մեռա գերեզմանները լիզելով, շոր հողը գրկելով իմ շարան-շարան աբնակոլոլ մեռելների։—Սանատրուկի մանկության վրա էլ մի զրույց ունինք հնության մեջ մնացած (Պալ.)։ Առանց որի կյանքը տանջանք է մշանջենական.—Սա արձան էր մարմարոնյա (Մերենց)։ Պիտի ճամբեն կապվի խեղճ քորփիս (երեխիս).—Գլուխը կլեկեց մարդի.—Սիրտը վեր չկա՛լավ մեր Սոսի.—Ճարը կտրվեց խեղճ երեցի (Պռ.)։ Կովը հորթին, հորթը կովին, գլուխը ցավի նախրարածին (Ա.—Պռ.)։ Ջա՛նը դուրս գա աշխատողին (Մուր.)։

Նան. 1. Այս շրջման ժամանակ երբեմն սեռականը պահում է և հոդը, և հոլովը, հոդով կամ առանց հոդի, առնվում է ոչ իբրև սեռական վերադիր, այլ իբրև տրական խնդիր (տե՛ս § 94. 2). Ես ձին եմ ձիավորին, ոսկի աթոռ եմ թագավորին (Ժող. Ա.)։ Գրականական գիտությունը բանալի է ամենայն տեսակ պատմաբանական գիտության (Պալ.)։

Նաև. 2. Երբեմն նախադաս շեշտված սեռականը կամ ածականն ևս իրենց լրացյալից բաժանվում են և շաղկապով, որ սեռականին կամ ածականին է վերաբերում և ոչ իրենց լրացյալին։ Օրինակ՝ Նա շատ բարի է, բարի էլ կին ունի։ Դու փայլում ես ոսկու, արծաթի նման, ի՛մ էլ կյանքս է ժանգոտ երկաթի նման.— Այժմ երկուսի՛ս էլ մուխը մարեցին.— Քո արևդ է ամպերու տակ տառապում, իմ էլ հոգիս հոգսերու մեջ ճնշվում (Չիվ.)։

Նաև. 3. Գրաբարից մնացած պատրաստի ձևեր են՝ մասն բանի, սրբություն սրբոց և այլն, որոնք առնվում են իբրև մի բառ. ինչպես՝ Այդ երդումը նրա սրբություն սրբոցն է, Նրա կյանքի սյունն է։— Նույնպես գրաբարի նմանությամբ երբեմն վերնագիրների մեջ սեռականը հետադաս է դրվում, ինչպես՝ Պատմություն Հայոց. Քերականություն Հայոց լեզվի։

209. *Հարցականների և գոյականաբար գործածված թվականների մասնական բացառական խնդիրը (տե՛ս § 109. 2) կարող է շրջումով նաև իր խնդրառուից հետո դրվել, մանավանդ երբ առանձնապես շեշտվում է խնդրառուն, և կամ խնդիրը հարաբերյալ է ետևից եկող մի որ դերանվան։ Օրինակ՝ Ո՞րը ձեզնից կարող է գնալ։ Շատե՞րը նրանցից այլևս չեն երևում մեջտեղում։ Մեկն ու մեկը ձեզնից թող համարձակվի... Մենք կորցնում էինք մինն այն գերազանց ուժերից, որոնք ծնունդ էին առել վաթսունական թվականներին (Մուր.)։*

3. ՀԱՄԱԴԱՍ ԲԱՌԵՐ

210. *Համադաս բառերը կամ խոսքի բազմակի մասերը (տե՛ս §§ 48, 49) շարադասվում են կանոնավորապես մեկը մյուսի ետևից. նրանցից առաջ դրվում են իրենց լրացումները. օրինակ՝ Մի փոքր հեռու տատանում էին ուղղաբերձ կաղամախը, սգատերև* **նոճին** *և այլ բազմազան* **ծառեր**, *որոնք տասնյակ հազարներով ծածկում էին Սյունյաց այդ դժվարագնաց* **լեռները**, **ձորերը** *և* **լանջերը**.— *Նա ծանոթ էր ոչ միայն Ներսես* **պատրիարքի**, *Խրիմյան Հայրիկի և Մելքիսեդեք* **սրբազանի** *անուններին, այլև նրանց գործերին, անձնական* **արժանիքներին** *և կենսագրությանը.—Մեզ դիմավորեց մի* **բարձրահասակ և բարեկազմ** *երիտասարդ.—Շրջակա զառիվայրերը հետզհետե ծածկվում էին արոտից վերադարձող* **նախիրներով և ճոռեռով**.—*Կովերի* **բառաչը**, *մաքիների* **մայուքը**, *տավարածի* **ճա՛-ճո՛-ները** *և հովվական սրնգի մելամաղձիկ* **երգը**... *մի հաճելի աններդաշնակություն էին կազմում (Մուր.)։*

211. **Շրջուն** *շարադասությամբ խոսքի բազմակի մասերը միմյանցից կարող են բաժանվել հետևյալ դեպքերում.*

1. Բազմակի վերադիրներից մեկը կամ մի քանիսը կարող են նախադաս դրվել, իսկ մյուսները՝ ետադաս ըստ § 208։ Օրինակ՝ Մուրացանը մի տեղ գրում է կանոնավորապես շարադասելով՝ «Դա **բարձրահասակ, առողջակազմ, ալեխառն մոուրոով** *և* **խաղցրադեմ** *մի քահանա էր», իսկ ուրիշ տեղ շրջումով գրում է՝ «Դա մի* **բարի տղա է, առողջ կազմվածքով** *և* **ճաճելի դիմագծերով**»։—*Ա՛խ մեր լեռներդ, հեռվից նա-*

յում ես՝ կապույտ, ալիքավոր *բարձրություններ,* խորհրդավոր *ու* սիրուն, *որ կարծես թարթում ու գրավում են քեզ իրանց ծոցը (տե՛ս § 208. 1—6)։*

2. Բազմակի ստորոգյալներից մեկը կամ մի քանիսը կարող են բայից առաջ դրվել, մյուսը կամ մյուսները՝ հետո իբրև մի զեղչական խոսք. օրինակ՝ Մեկը սուրբ էր, կարող և հրաշագործ...— *Օդը* թեթև և ախորժելի էր և տոգորված *նուրբ բուրմունքով.—Օդը սակայն այստեղ* խոնավ *էր և* ցուրտ *(Մուր.)։*

Ծան. *Խոսքի բազմակի մասերից՝ բազմակի ենթակաները, խնդիրներն ու պարագաները միայն ոտանավորի մեջ կարող են միմյանցից բաժանվել և մասամբ բայից առաջ, մասամբ հետո դրվել, ինչպես՝* Սարերն են *որոտում և ձորերը:*

212. *Համադաս բառերն իրար ետևից շարվում են կա՛մ առանց շաղկապի, կա՛մ թե կապակցվում են, նայելով իմաստին՝ որևէ համադասական շաղկապով. օրինակ՝ Սա և նա գնացին։ Պատվելին պետք է... բարձր, բայց համեստ ձայնով տաճկերեն լեզվով ոչչուլն տար (Պռ.)։*

Համադասական շաղկապների գործածությունը համադաս բառերի կամ խոսքի բազմակի մասերի համար նույն է, ինչ որ համադաս խոսքերի համար. ուստի դրանց կիրառության մասին կխոսվի խոսքերի համադասական կապակցության մեջ։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԽՈՍՔԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀԱՄԱՌՈՏ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿ ԽՈՍՔԵՐ

218. *Խոսքերը կամ նախադասությունները՝ նայելով լրացումներին՝ սովորաբար բաժանում են ամենից առաջ երկու տեսակի՝ համառոտ և ընդարձակ խոսքեր։*

Համառոտ խոսքը կազմվում է միայն ենթակայից և բայ-ստորոգյալից, որոնք խոսքի գլխավոր մասերն են, օրինակ՝ Անձրևը դադարեց.—*Մարդս մահկանացու է։*

Համառոտ խոսքի մեջ են մտնում նաև՝ միայն բայ-ստորոգյալից կազմված աննենթակա խոսքերը, ինչպես՝ որոտում է (տե՛ս §§ 21, 22)։

Ընդարձակ խոսքը բացի ենթակայից և բայ-ստորոգյալից՝ ունի նաև խնդիրներ ու պարագաներ և կամ վերաբերներ. օրինակ՝ Սաստիկ անձրևն իսկույն դադարեց. Տիգրանը տեսավ իր եղբորը։

Նշ. Խոսքերի այս բաժանումն իսկապես կարևոր և հիմնական չէ, որովհետև ենթական քերականորեն նույնպես լրացում է բայի, ինչպես և խնդիրներն ու պարագաները։ Խոսքն իր ամենապարզ ձևով, թեպետ իր մեջ ունի երկու՝ ենթակայի և ստորոգյալի գաղափարներ, բայց կազմվում է մի բայից. ուստի լրացումների տեսակետից ճիշտ կլիներ խոսքերը բաժանել սոսկ և լրացած խոսքերի. սոսկ խոսք, երբ խոսքը միայն մի բայից է կազմված, լրացած խոսք, երբ բայն ունի որևէ լրացում, լրացումների մեջ հաշվելով նույնիսկ ստորոգյալը, որ մեր հին քերականներն իրավամբ դնում են իբրև բնության խնդիր։

ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

214. *Խոսքերը՝ նայելով ստորոգյալի հարաբերությանը ենթակայի հետ՝ լինում են դրական և բացասական։*

Դրական կամ ստորասական խոսքի մեջ ստորոգյալը ասվում, դրվում է ենթակայի վրա, ինչպես՝ Բարի է աստված. *իսկ բացասական կամ ժխտական խոսքի մեջ ստորոգյալը մերժվում,*

հեռացվում է ենթակայից, կամ թե հաստատվում է, որ ենթական չունի ստորոգյալի նշանակած հատկանիշը, ինչպես՝ Ջար չէ աստված։

215. Բացասական խոսքեր կազմվում են, երբ դրական բայերի վրա ավելանում են ոչ, չը, մի՛ մակբայները.

1. Մի՛ դրվում է միայն հրամայականի վրա և կազմում է բայերի արգելական ձևը. օրինակ՝ Գնա՛,—մի՛ գնար։ Գրի՛ր,—մի՛ գրիր. իսկ չը (չ) դրվում է բայերի մնացած բոլոր ձևերի վրա։ Ինչպես՝ չեմ, չտեսնեմ, չտեսա։

2. Բաղադրյալ ժամանակների մեջ չը բացասականը դրվում է եմ օժանդակի վրա՝ չեմ տեսել, չեմ տեսնելու, տեսած չեմ լինում։ Եթե օժանդակը միայն լինիմ է, բացասականը սովորաբար դրվում է այս բայի վրա. բայց կարող է դրվել նաև դերբայի վրա (բացի անկատար դերբայից), երբ առանձնապես դերբայն է շեշտվում. օրինակ՝ ասած չլինի, չասա՛ծ լինի, գնալու չլինի, չգնալո՛ւ լինի։

Ծան. Ժողովրդական ձև է հարադրյալ բայերի համար չը բացասականը, ինչպես և կը եղանակիչը, բայի վրա դնելու փոխանակ՝ դնել հարադրի վրա. օրինակ՝ չվեր ընկնի, կվեր ընկնի, չցույց տվի, փոխանակ՝ վեր չընկնի, վեր կընկնի. ցույց չտվի։ Մի՛ արգելականը սակայն այս դեպքում կարող է և՛ բայից և՛ հարադրից առաջ դրվել, ինչպես՝ մի՛ ցույց տար, ցույց մի՛ տար։

3. Երկու բացասականը մի խոսքի մեջ խոսքին դրական նշանակություն են տալիս. օրինակ՝ Չխոսել չէր լինիլ. նա չէր կարող չգնալ,—որ նշանակում են՝ պետք էր խոսել. նա ստիպված էր գնալ։

Արևելյան աշխարհաբարում սակայն ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը, ոչ ով բառերի հետ բայը սովորաբար բացասական է դրվում, և խոսքը ոչ թե դրական նշանակություն է ստանում, այլ բացասական։ Օրինակ՝ Նա ոչինչ չկերավ. Տանը ոչ ոք չկա. Ոչ մի բան չունիմ քեզ ասելու,—որ նշանակում են՝ Նա բան չկերավ.—Տանը մարդ (ոքմին, մեկը) չկա. Բան չունիմ քեզ ասելու։

4. Արևելյան աշխարհաբարին հատուկ է կազմել դրական նշանակությամբ բացասական խոսքեր, որոնք կապվում են որ շաղկապով և ցույց են տալիս ժամանակի պարագա։ Բացասությունը դրվում է միայն առաջին բայի վրա և արագացնում է երկու գործողության հաջորդությունը։ Օրինակ՝ Այս խոսքերն էլ որ չիմացավ, ձեռ ու ոտը թուլացավ.—Ձեռները որ տանում չեն, բերում ու գլխներին տալի, մարդի սիրտ կըտրատվում է.—Կնիկը որ «Արշակ ջան» չի ձայն տալի, մարդի մազեր բիզ բիզ են լինում. աղջկերքը որ դագաղը խտտում չեն և «ափու ջան» գոռում, մարդի գլխի կրակ է մաղվում.—Մի խոր հոգոց որ չքաշեց, հենց իմանաս թե Գարեգնի սրտին մի թուր տաս (Պռ.)։

5. Երբ երկու բայ մի միավորյալ նշանակությամբ իբրև մի բայ են առնվում,—ինչպես՝ գնալ գալ, ասել խոսել. գլուխ վեր առնել գնալ, վեր կենալ ասել, թողնել երթալ և այլն,—և կամ երկրորդ խոսքն առաջնի զուգահեռական բացատրությամբ մի խոսք է, այն ժամանակ բա-

ցասական մի՛, չը մակբայները դրվում են միայն առաջին բայի վրա. օրինակ՝ Չգնա՛ս, ասես նրան։ Մեկ էլ վեր չկենա՞, գնա նրա մոտ։ Սաբերը հով չեն անում, իմ դարդին դարման անում (Ծող. երգ.)։

6. Ոչ մակբայը, ժողովրդական ձևով, գործ է ածվում միայն ըղձական խոսքերի մեջ, օրինակ՝ Ո՛չ լինի քեզ պես ընկերը. իսկ կրկնված ո՛չ–ո՛չ գործ է ածվում սովորաբար համադաս բառերի և խոսքերի կապակցության համար փոխանակ քե՛–քե՛ կամ և՛–և՛ շաղկապների բացասական բայերի հետ. օրինակ՝ Ո՛չ սրբին խունկ խոստացիր, ո՛չ երեխային բլիթ (Ա.)։ Ո՛չ մտիր լողա, ո՛չ էլ ե՛լ դողա (Ա.)։ Ո՛չ փողը, ո՛չ մեծությունը չեն կարող նրան երջանկացնել։ Ճամփորդի բաժինը երկրնքից է կտրած. ո՛չ որդը կկրծի, ո՛չ թռչունը կտանի, ո՛չ կարկուտը, ո՛չ ցավն ու չորը.—որ կարելի էր ասել՝ ... քե որդը չի կրծիլ, քե թռչունը չի տանիլ, քե կարկուտը, քե ցավն ու չորը։

7. Երբ ոչ կրկնվում է համադաս բառերից առաջ, բայը՝ ա) խոսքի սկզբում եղած ժամանակ բացասական է դրվում, օրինակ՝ Նրա ձայնը... չէր ընդհատվում ոչ քամու մռնչյունով և ոչ ամպերի դոռոցով (Մուր.)։ Չկարողացա ոչ երեկ և ոչ այսօր գնալ. բ) խոսքի վերջում եղած ժամանակ կարող է և դրական և բացասական դրվել. օրինակ՝ Ոչ երեկ և ոչ այսօր (չ) կարողացա նրան տեսնել. գ) իսկ երբ ընկնում է կրկին ոչ բառերի մեջ, դրվում է դրական, և այն ժամանակ մի խոսքը վերածվում է երկու խոսքի, որոնցից երկրորդը դեղչական խոսք է. օրինակ՝ Ոչ երեկ կարողացա գալ, ոչ այսօր։

8. Ոչ, ժողովրդական ձևով չէ, դրվում է դեղչված բացասական բայի տեղ։ Օրինակ՝ Քե կուզեք քսան ու հինգ մանեթ փող կտանք ու այդ բաները չէ՛ (այսինքն՝ չենք տալ).—Որի մուրազը կատարվում էր, նրա գլխին մի կաթ ընկնում էր, որինը չէ (այսինքն՝ չէր կատարվում), կաթիլը տեղից փախչում, ուրիշ տեղ էր վեր ընկնում.—Որոնք որ լսել էին՝ ասում էին՝ Սոտն է, որոնք չէ, ասում էին... (Պռ.)։ Թող նա գնա, իսկ դու ո՛չ (այսինքն մի՛ գնար)։ Ես քո գիրքն առա և ոչ նրա։ Լույսը բացվեց քե չէ, նրանք ճանապարհ ընկան (այսինքն՝ լույսը բացվեց քե չբացվեց)։ Գնո՞ւմ ես քե ո՞չ.— կգա՞ս քե չէ՞։ Մարդ պիտի շարունակ աշխատի առաջադիմել, ապա քե ոչ՝ կհետադիմի (այսինքն՝ ապա քե չաշխատի առաջադիմել...)։ Ես պիտի ասածս անեմ, քե չէ՝ սև հագնեմ... Գարնգինը մի քիչ բարկացավ, որ գուցե ուղարկի տուն, բայց տեսավ, որ չէ՛, աղջկա գույնը դարձավ պատի ծեփ.—Զարթնում, տեսնում է, որ չէ, աչքին է երևացել. տեսածը երազ է եղել (Պռ.)։

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՐՑԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

216. Խոսքերը՝ նայելով խոսողի հարաբերությանը լսողի հետ՝ լինում են հաստատական և հարցական։

Հ ա ս տ ա տ ա կ ա ն ասվում են այն դրական կամ բացասական խոսքերը, որոնցով խոսողը մի բան ասում, հայտնում է կամ հրամա-

յում է ուրիշին. օրինակ՝ Գնա՛, իմ որդի, աշխարհքս անցի՛ր, պանծալի անուն մեծի դու ստացի՛ր։—Ու գնաց որդին։ Նա էլ ետ չեկավ։

Հարցական կոչվում են այն դրական կամ բացասական խոսքերը, որոնցով խոսողն ուրիշից իմանալ է ուզում՝ ինչ որ ինքը չգիտե կամ հավաստի չգիտե։ Այս պատճառով ամեն հարցական խոսք պահանջում է և պատասխան, որ տալիս է խոսակիցը։

Պատասխանական խոսքերը հաստատական խոսքեր են միայն, հաճախ զեղչական ձևով։ Օրինակ՝ Սաքոն կգա՞, այնպես չէ՞, տերտեր։—Հա՛, որդի, իհարկե կգա։

Հրամայական խոսքերը չեն կարող իբրև հարցական գործածվել։

217. *Հարցումները լինում են երեք տեսակ՝ հավաստիական, լրացական և ճարտասանական։*

Հավաստիական հարցը վերաբերում է խոսքի այս կամ այն մասի ստուգությանը։ Հարցնողին հայտնի է խոսքի այս կամ այն մասը (ենթական, ստորոգյալ և այլն), բայց ոչ հաստատ. ուստի նա հավաստի տեղեկություն ստանալ է ուզում. օրինակ՝ Դուք տոմսա՞կ եք ուզում գնել.—Այո՛ (Շիրվ.)։

*1. Հավաստիական հարցը կարող է դրվել խոսքի ամեն մասի վրա էս։ Պատասխանական խոսքի մեջ առանձնապես շեշտվում է խոսքի այն մասը, որի հավաստիությունն է ցանկանում իմանալ հարցնողը։ Օրինակ՝ Դո՞ւ տուն գնացիր։— Դու **տո՞ւն** գնացիր։ Դու տուն **գնացի՞ր**։ Պատասխանը նայելով հարցերին՝ լինում է՝ Այո՛, ե՛ս գնացի տուն.— Այո՛, ես **տո՛ւն** գնացի.— Այո՛, ես **գնացի՛** տուն։*

*2. Հավաստիական հարցական խոսքերի մեջ հաճախ դրվում են **մի՞թե, արդյոք** եղանակական մակբայները, կամ **թե** խոսքի վերջից ավելանում է **ևա՞**, չէ՞, **թե** չէ իբրև մի զեղչական խոսք։ Օրինակ՝ Գալիս ես, **թե** չէ՞։— Խլեցի՞ր, հա՞։—Ո՞վ է հայը. **մի՞թե** նա որ խոսում է հայ լեզվով (Գ.-Ք.)։ Արդյոք գալո՞ւ է մի օր, ժամանակ (Րաֆֆ.)։*

*3. Հավաստիական դրական հարցի պատասխանը, երբ դրական է, տրվում է սովորաբար հաստատական **այո՛** (ժողովրդ. **ևա՛**), իսկ երբ բացասական է, ո՛չ, չէ՛ մակբայներով, հաճախ նաև հետևյալ մակբայներով՝ անշուշտ, հարկավ, իհարկե, անտարակույս և այլն. կամ, երբ պատասխանը ժխտական է, բնավ, երբեք, ամենևին և այլն։ **Այո**, ո՛չ, չէ՛ բառերը մենակ, ինչպես մի դերանուն դրվելով ամբողջ խոսքի տեղ, կազմում են մի պատասխանական խոսք. բայց դրանց ետևից սովորաբար կրկնվում է նաև հաստատական պատասխանական խոսքը։ Օրինակ՝ Նավավա՛ր, ջրանցքը շա՞տ երկար է.—Այո՛, պարո՛ն. շուտով երկուսը կլինի, ուշ է, չէի՞ք կամենալ ետ դառնալ.—Ո՛չ, գնանք դեռ։—Հավանեցի՞ր ինձ.—Իհարկե (Շիրվ.)։—Հիշո՞ւմ ես հորդ, Լևոն.—Իհարկե, շատ լավ եմ հիշում (Շիրվ.)։*

Բացասական հարցի պատասխանը երբ դրական է, տրվում է ինչպե՞ս չէ բառերով, իսկ երբ բացասական է, ո՛չ, չէ՛ բառերով. օրինակ՝

Ճանապարհը չե՞նք կորցրել.—Ինչպե՞ս չէ, կորցրել ենք։—Ճանապարհը չե՞նք կորցրել.—Չէ՛, չէ՛։

218. Լրացական հարցը *վերաբերում է խոսքի այս կամ այն մասին, որ հայտնի չէ հարցնողին. ուստի և նա պատասխանով ուզում է իմանալ այն։ Օրինակ՝ Դու ո՞ւր էիր մի քիչ առաջ։— Ես տա՛նն էի։*

Լրացական հարցերը տրվում են խոսքի ամեն մի մասի համար որևէ հարցական բառով (ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, ե՞րբ, ո՞րքան, ի՞նչ անել, ի՞նչ լինել և այլն), որին պատասխանի մեջ փոխանակում է մի որոշ գաղափար հայտնող բառ։ Հարցին պատասխանող բառն առանձնապես շեշտվում է և կարող է մենակ մի ամբողջ զեղչական խոսք կազմել։ Օրինակ՝ Ո՞ւր ես շտապում.—Թատրոն (Շիրվ.)։

219. Ճարտասանական հարցական *խոսքը, լինի հավաստիական թե լրացական, միայն ձևով, ըստ երևույթին, հարցական է, իսկ նշանակությամբ հաստատական է։ Հարցնողն ինքը գիտե հարցի պատասխանը, բայց փոխանակ հաստատական խոսք կազմելու, հարց է տալիս ունկնդրին և երբեմն ինքն էլ դառնում, պատասխանում է։ Օրինակ՝ Երբ հունական գիտություններն սկսան մտնել Հռոմի մեջ, փիլիսոփայական դրույթյուններից ո՞րն էր որ ավելի գրավեց Հռոմայեցոց միտքն ու սիրտը։—Ստոյիկյան վարդապետությունը, որովհետև սա ավելի հարմար էր կյանքի հետ (Պալ.)։ Բանն ո՞վ անի,—ես ու դուն. հացն ո՞վ ուտի,—ես ու դուն (Ա.—Պռ.)։ Գողն ի՞նչ կուզի,—մութը գիշեր (Ա.)։ Հիմի՞ էլ լռենք, եղբարք, հիմի՞ էլ, երբ մեր թշնամին իր սուրն է դրել... (Գ.-Ք.)։*

1. Լրացական, ինչպես և լրացական-ճարտասանական հարցական խոսքերի սկզբում հաճախ դրվում են այս, այդ, այն ցուցականները, որոնք զորացնում են հարցումը. օրինակ՝ Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վրա։ Այդ ի՞նչպես լավ ես արել այդ բանը։ Այդ ո՞ւր ես այդպես շտապում։

2. Դրական ճարտասանական հարցերն ունին բացասական նշանակություն, իսկ բացասականները՝ դրական. օրինակ՝ երբ բանաստեղծը գրում է՝ «Հիմի՞ էլ լռենք, եղբարք», ուզում է ասել, որ «Հիմի էլ չլռենք»։ Ո՞վ մատնիչ... ե՞ս, Վասա՞կ։—Ի՞նչ ասես, ոչ նա չանի (այսինքն՝ ինչ ասես՝ նա կանի.—նա ամեն ինչ կանի)։ Ի՞նչ ասես, որ իմ տանը չգտնվի.—Ո՞ր այգումն ասես, որ այսօր ուրախություն չլինի. ո՞ր թմբերի ու ծառերի տակին ասես, որ հայի աղջիկ չլինի.—Աշտարակու գինին ո՞ւմ վրա ասես, որ շնորհքն ու զորությունը ցույց չտա.—Ո՞ւմ գլխով լինի, որ այս քամին անց չկենա (Պռ.)։ Ծառ կա՞, որ գլխովը քամի անց չկենա (Ա.)։

Ծան. *1. Հարց ու պատասխանը սովորաբար զանազան անձեր են տալիս. երբ միևնույն մարդը թե հարցն է տալիս և թե պատասխանը, հանդարտ խոսվածքը փոխվում, դառնում է երկախոսություն միևնույն անձի մեջ, որով և խոսքը կենդանություն ու շարժում է ստանում։ Ճարտասանական հարցը խոսքին եռանդ է տալիս և այն ժամանակ,*

Երբ լոկ հարց է տրվում, առանց պատասխանի. որովհետև հարցնողը փոխանակ ինքը հաստատելու մի բան, որ ստույգ գիտե, լսողին դառնալով՝ նրանից է հաստատություն ուզում։ Այս վերջին տեսակի ճարտասանական հարցերը շատ գործածական են մանավանդ հասարակ խոսակցության ժամանակ. մեր ռամկին սիրելի է առանձնապես իրեն տված հարցի պատասխանը մի ճարտասանական հարցով տալը։ Օրինակ՝ երբ մեկին հարցնում են «Դու գնացի՞ր», փոխանակ պատասխանելու «Չէ, չգնացի», ասում է՝ «Ո՞վ գնաց որ» կամ «Ե՞րբ գնացի»։— Փափագը երեխա էր, ոչ տարավ ոչ բերեց քե՝ ո՞ւր ա Սոս (Պռ.— այսինքն՝ Սոսը չկա)։

Ծան. 2. *Հաստատական կամ հարցական խոսքերը երբեմն արտահայտում են խոսողի հափշտակությունը, հիացումն ու հրճվանքը կամ զարմանքը և այն ժամանակ այդ խոսքերն ասվում են բացագանչական կամ զարմացական. օրինակ՝ Հրաշալի՜ են աստղերը... Ո՜հ, ի՜նչ անուշ և ի՜նչպես զով առավոտուց փչես, հովիկ (Պեշիկ.)։ Ա՜խ, ո՜ւր է քե՝ մի տեսնեի նրան։— Դուք չե՞ք տեսե՜լ։*

Մարդկային հոգու կրքերն ու զգացումները սակայն խիստ բազմազան են. ուստի խոսքերն այս կողմից կարելի էր բաժանել ոչ միայն բացագանչական ու զարմացական, այլև ուրիշ բազմազան տեսակների, որոնք նուրբ տարբերություններով զանազան են իրարուց։ Բայց այսպիսի բաժանումն ավելորդ է, որովհետև խոսողի կիրքն արտահայտվում է առոգանությամբ և առանձին նշանակություն չունի խոսքի կազմության տեսակետից։

Ծան. 3. *Խոսքի առոգանությունը կամ եղանակավորումը հիմնված է ձայնի ուժի կամ շեշտի, բարձրության և տևողության կամ ամանակի վրա։ Խոսքի մեջ այս կամ այն բառը՝ նայելով իր նշանակությանը խոսքի մեջ՝ ձայնի տարբեր ուժով է արտասանվում. ամենից կարևոր բառը, որի մեջ է մտքի իսկական ույժը, իր վրա կրելով խոսքի գլխավոր շեշտը, առանձնապես զորեղ է արտասանվում, քան մյուս բառերը, որոնց շեշտերն աստիճանավորվում են իրենց իմաստի կարևորության համեմատ (տե՛ս §§ 200, 202)։ Ձայնի բարձրությունն ու ամանակը կախված են խոսքի տեսակներից. հաստատական խոսքերի մեջ խոսքի ձայնը սովորաբար ընկնող է խոսքի վերջում, իսկ հարցական, մանավանդ հավաստիական հարցական խոսքերի մեջ՝ բարձրացող։ Ձայնի ամանակը, այսինքն խոսքի մեջ այս կամ այն բառի երկար կամ կարճ արտասանվելը, կախված է գլխավորապես խոսքի արտահայտած կրքերից ու հուզումներից. բացագանչական և զարմացական խոսքերի մեջ սովորաբար երկար են արտասանվում այն բառերը, որոնց մեջ է բացագանչական կամ զարմացական իմաստը։ Այս ընդհանուր կանոնից հետո պետք է նկատել, որ զանազան անհատներ միևնույն խոսքը զանազան էլ ուժով, բարձրությամբ և տևողությամբ են արտասանում։ Խոսելու եղանակի վրա մեծ ազդեցություն ունին նաև բնական հատկությունը, խոսողի սեռը, տարիքը, սովորությունը, վայրկյանի հոգեկան վիճակը և այլն։ Բարբառների մեջ ևս խոսվածքի եղանակները տարբեր տարբեր են. ուստի և ո՛րտեղացի լինելն ևս ազդում է խոսքի եղանակի վրա։*

ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԵՐՊԵՐԸ

220. *Բայի եղանակները ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ։*

Բայի եղանակները, ըստ այնմ և խոսքերը, լինում են՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, հրամայական և ըղձական։ Առաջին երեք եղանակներով կազմվում են **դատողության խոսքեր**, *որոնցով արտահայտվում է տրամաբանական դատողությունը իբրև իրական, հնարավոր ու անհրաժեշտ. իսկ վերջին երկուսով կազմվում են* **ցանկության խոսքեր**, *որոնք ցույց են տալիս ցանկություն և հրաման կամ արգելք։*

221. *Բայի ժամանակները, որոնք ցույց են տալիս, թե երբ է կատարվում եղելությունը, երեք են՝ ներկա, անցյալ և ապառնի։* **Ներկան** *այն վայրկյանն է, որի մեջ գտնվում է խոսողը.* **անցյալը** *խոսելու վայրկյանից առաջ ընկնող ժամանակամիջոցն է, իսկ* **ապառնին**՝ *խոսելու վայրկյանից հետո ընկնող ժամանակամիջոցը։*

222. *Բայի ժամանակներից անբաժան են և բայի կերպերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի կամ ապագայի նկատմամբ։ Բայի կերպերը չորս են.*

1. **Կատարվող կերպ**, *որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ շարունակվող, այսինքն սկսված և չվերջացած, հարաձիգ գործողություն՝ Նա հիմա, այս րոպեիս* **գնում է, գնալիս կլինի**: *Նա երեկ ժամի 5-ին դեռ* **գնում էր, գնալիս կլիներ**:

2. **Կատարված կերպ**, *որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ արդեն կատարված, վերջացած գործողություն. օրինակ՝ Նա հիմա* **գնացել է, գնացած կլինի**: *Նա երեկ ժամի 5-ին արդեն* **գնացել էր, գնացած կլիներ**:

3. **Կատարելի կերպ**, *որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ դեռ նոր կատարելի, սպագա գործողություն. օրինակ՝ Նա հիմա* **գնալու է, գնալու կլինի**: *Երեկ ժամի 5-ին նա դեռ նոր* **գնալու էր, գնալու կլիներ**:

4. **Պարզ կերպ**, *որ ցույց է տալիս սոսկ գործողություն մի որոշ ժամանակակետում, առանց ուշադրություն դարձնելու նախորդ երեք կերպերին—գործողության տևականն, վերջացած կամ կատարելի լինելուն. օրինակ՝* **գնացի, կգնամ**:

223. *Բայի չորս կերպերից յուրաքանչյուրը կարող է երեք ժամանակի՝ ներկայի, անցյալի և ապառնու նկատմամբ ևս առնվել, այսինքն ամեն գործողություն կարող է առնվել իբրև սոսկ գործողություն ներկայի, անցյալի և ապառնու նկատմամբ (**կգնամ, կգնայի, գնացի**), կամ կարող է կատարվող, կատարված և կատարելի լինել և՛ ներկայի նկատմամբ (**գնում է, գնացել է, գնալու է**), և՛ անցյալի նկատմամբ (**գնում էր, գնացել էր, գնալու էր**), և՛ ապառնու նկատմամբ (**գնալիս կլինի, գնացած կլինի, գնալու կլինի**)։*

*Բայի պարզ ձևերը, որ կազմված են բայի բնից (դրանց հետ նաև ենթադրականն ու հարկադրականը), ցույց են տալիս սոսկ գործողություն և բայի պարզ կերպերն են (**գնամ, գնայի, կգնամ, պիտի գնամ, գնացի, գնա՛**)։ Իսկ բաղադրյալ ժամանակները կազմում են մյուս կերպերը։ Ժամանակը, որի նկատմամբ առնվում է գործողությունը, արտահայտվում է օժանդակ բայով. իսկ կերպը, որով առնվում է գործողությունը, արտահայտվում է դերբայներով։ Անկատար դերբայով կազմվում է կատարվող կերպը (**գնում է, գնալիս կլինի**), անցյալ դերբայներով կազմվում է կատարված կերպը (**գնացել է, գնացած կլինի**). իսկ ապառնի դերբայով՝ կատարելի կերպը (**գնալու է, գնալու լինի**)։*

1. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

224. *Սահմանական եղանակը ցույց է տալիս մի եղելություն, որ իրոք գոյություն ունի։ Սահմանականն իրականության եղանակն է. ուստի և այս եղանակով ասված խոսքի բովանդակությունը միշտ համապատասխան է իրականությանը, եթե միայն, իհարկե, խոսողը չի սըխալվում կամ սուտ խոսում։*

225. *Սահմանականն ունի կատարվող, կատարելի և կատարված կերպերը միայն ներկայի և անցյալի նկատմամբ, իսկ պարզ կերպը միայն անցյալի նկատմամբ։ Առանձին խոնարհման ձևեր չկան բոլոր չորս կերպերի համար ևս ապառնի ժամանակի նկատմամբ, իսկ պարզ կերպի համար նաև ներկայի նկատմամբ։ Մյուս կողմից այս եղանակը կատարված կերպի համար ունի կրկին ձևեր՝ վաղակատար և հարակատար, որոնք նշանակությամբ տարբեր են։ Ըստ այսմ սահմանականն ունի հետևյալ ինը խոնարհման ձևերը՝*

	Ժամանակակիցը, որի նկատմամբ առնվում է գործողությունը		
Կերպերը	I *Ներկա*	II *Անցյալ*	III *Ապառնի*
I *Կատարվող*	1. Ներկա *գնում եմ*	2. Անկատար անցյալ *գնում էի*	
II *Կատարելի*	3. Ապառնի *գնալու եմ*	4. Ապառնի անցյալ *գնալու էի*	
III *Կատարված*	5. Վաղակատար *գնացել եմ*	6. Վաղակ. անցյալ *գնացել էի*	
	7. Հարակատար *գնացած եմ*	8. Հարակատ. անց. *գնացած էի*	
IV *Պարզ*		9. Անցյալ կատարյալ *գնացի*	

ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑԵՐ

1. **Ներկան** *ցույց է տալիս մի տևական եղելություն, որ ընկնում է խոսելու վայրկյանին և դեռ շարունակվում է հարաձիգ, չի վերջացած։ Դա բուն ներկա կամ անկատար ներկա է։*

2. **Անկատար անցյալը** *ցույց է տալիս մի եղելություն, որ խոսելու վայրկյանին արդեն անցած է, բայց մի անցյալ ժամանակակետում դեռ շարունակվում է, չի վերջացած։ Օրինակ՝ երբ մեկին տեսնում ենք մեր խոսելու միջոցին հարաձիգ գործողության մեջ, որ դեռ*

շարունակվում է, ասում ենք՝ Այս րոպեիս որ խոսում եմ, նա գնում է: Իսկ երբ անցյալում ենք տեսել մի նույնպիսի հարաձիգ գործողության մեջ, ասում ենք՝ Այդ ժամանակ (երեկ, ժամի 5-ին) նա գնում էր:—Նա տուն էր գնում, երբ ես հանդիպեցի նրան: Հա՛, ի՞նչ էի ասում (Շիրվ.):

3. Ապառնին ցույց է տալիս մի գործողություն, որ խոսելու վայրկյանից հետո է ընկնում, ներկայի նկատմամբ դեռ նոր կատարելի է. օրինակ՝ Այս րոպեիս, որ խոսում եմ, նա դեռ նոր գնալու է:

4. Ապառնի անցյալը ցույց է տալիս մի գործողություն. որ ներկայի նկատմամբ արդեն անցած է, բայց մի անցյալ ժամանակակետի նկատմամբ դեռ հետո կատարելի է. օրինակ՝ Երեկ, ժամի 5-ին նա դեռ նոր գնալու էր:

Ապառնին և ապառնի անցյալն իրենց բնավորությամբ ցույց են տալիս հարաձիգ, տևական վիճակ կամ մտաղրություն մի բան անելու. միայն ապառնի ժամանակի ենթական խոսողի ներկայում է հարակայում մի այդպիսի վիճակի կամ մտադրության մեջ, իսկ ապառնի անցյալինը մի անցյալ ժամանակում. ուստի առաջինն իսկապես մի ներկա ժամանակ է, կամ ապառնի ներկա, իսկ երկրորդը՝ մի անցյալ ժամանակ:

5. Վաղակատար ցույց է տալիս մի անցյալ գործողություն, որի անցած, վերջացած լինելն առնվում է ներկայի նկատմամբ. գործողությունը մտածվում է իբրև խոսելու վայրկյանից առաջ անցած, բայց նրա ազդեցությունը կամ հետևանքը հարատևում է մինչև խոսողի ներկան, որը միշտ նկատի ունի խոսողը: Այս պատճառով այս ժամանակն իր բնավորությամբ իսկապես մի ներկա ժամանակ է կամ վաղակատար ներկա: Օրինակ՝ Այժմ երբ խոսում եմ, նա գնացել է:

6. Վաղակատար անցյալը ցույց է տալիս մի գործողություն, որ մտածվում է մի անցյալ ժամանակակետից առաջ անցած, կամ որի անցած, վերջացած լինելն առնվում է մի անցյալ ժամանակակետի նկատմամբ: Օրինակ՝ Երեկ, ժամի 5-ին նա գնացել էր:

7. Հարակատար և 8. Հարակատար անցյալ ժամանակները նշանակությամբ նույնանում են վաղակատար ներկայի և անցյալի հետ, միայն անանցողական, երբեմն և անցողական բայերի այս ժամանակների մեջ առանձնապես շեշտվում է անցյալ գործողության հետևանքը, որ իբրև մնայուն դրություն հարատևում է՝ հարակատարինը մինչև խոսողի ներկան,—ուստի և այս ժամանակն իսկապես մի ներկա ժամանակ է կամ հարակատար ներկա,—իսկ անցյալինը մինչև մի անցյալ ժամանակակետ. մինչդեռ վաղակատար ժամանակները հայտնում են պարզապես ներկայի կամ անցյալի նկատմամբ կատարված եղելություն՝ առանց առանձին ուշ դարձնելու գործողության հետևանքի իբրև դրություն հարատևելու վրա: Օրինակ՝ Երեխան այսօր ճե՞լ է:—Այո՛, ճել է և այժմ էլ դեռ ճած է:

Դրության մնայուն հարատևությունը շեշտելու համար՝ երբեմն եմ

օժանդակի տեղ դրվում են ունիմ, կամ բայերը, առաջինը անցողական նշանակությամբ, երկրորդը՝ անանցողական. բայց երբեմն կամ բայով կազմված ձևերն ևս, երբ խոսքին տալիս են պատահմունքի ու հաղվադիպության նշանակություն, առնվում են անցողական նշանակությամբ։ Օրինակ՝ Նա երեխան գրկած ունի։ Նա ձեռքին բռնած ուներ մի վառած ջահ։ Դեռ շատերը գրիչ երբեք ձեռք առած չունին.—Մի քիչ լոբի ունինք ցանած.—Երեք շաբաթը մի անգամ որոշյալ տեղերում տեսակցություն ունեին նշանակած.—Օրիորդը համեստությունից և ամոթխածությունից աչքերը շարունակ գետնին ունի ձգած (Պռ.)։ Ես այդպիսի բան ասած չունիմ (Մուր.)։ Նրա վրա մի ծածկոց կար քաշած։ Մեջդ մի ամենապատվական հոգի կա թաքցրած (Պռ.)։—Այդպիսի բան լսած կո՞ս (այսինքն՝ պատահե՞լ է քեզ լսել)։ Իմ օրումն այսպիսի բան տեսած չկամ։

Դրության հարակայության նշանակությամբ գործ են ածվում.

ա) Կրավորական բայերը. օրինակ՝ Մելիքներից ոմանք ստորադրված էին պարսից խաների իշխանությանը. նրանք իրենց դիրքը չկորցնելու համար՝ ստիպված էին խոնարհել խաների բոլոր պահանջներին։ Նրա առաջին դրված էր ջրով լիքը մի կավյա պնակ։— Գետնի վրա տարածված էր մի բազմություն։ Շուրջանակի շարված էին զինվորներ։ Ամեն ինչ փոխված է այժմ։ Դրանք միմյանց հետ կապված են։ Նրա մարմինը հո երկաթից շինված չէ՞։ Այժմ պատիվս փրկված է, խեղճ աղչիկ, խոսքի իրավունքից զրկված ես։

բ) Ձեզոք բայերը. օրինակ՝ Ինքն եկած է յուր վրա դրած պարտականությունը կատարելու։ Ի՞նչ է պատահել. էլի բարկացած ես։ Քարն առաջին վեր ընկած էր և չէր տեսնում։ Նրանց ձիանքը թամքած՝ սանձը գլուխներին կանգնած են։ Ջենքի մասին գաղափարը մեռած էր նրանց մեջ։ Երեսի գույնը գնացած է։ Համեցե՛ք, ճանապարհից եկած ես, հոգնած ես։ Նրա աչքերը սևեռած են դեպի պարտիզի դռնակը։ Այսպես և՝ պառկել, նստել, հարբել, թմրել, հասնել, անցնել, կպնել, թոռոմել, պարապել, զարմանալ և այլն. բոլոր բայերը, երբ մնայուն դրության են ցույց տալիս։

գ) Անցողական բայերը, որոնք ստանում են սովորաբար անանցողական, հատկապես կրավորական իմաստ։ Աստուծո անհծքը գրած է մեր ճակատի վրա։ Վերարկուն պատից կախած է։ Դուռը ներսից փակած էր։ Կաթսան մաքուր կլայեկած է։ Արդեն գործը կարգի դրած է։ Մի անկյունում գրատախտակն է կանգնեցրած՝ կավիճն ու սպունգը վերան պատրաստ։ Դպրոցի պատերի վրա խոշոր տառերով աշակերտաց պատիժների թիվն ու չափն էր որոշած. տակերին էլ մի տող առանձին բոլորգրերով զատած էր. «կարդա՛ ու դողա՛»։ Դպրոցի ճակատին բրեբրի վրա մի դարակ էր ամրացրած... նույն տեղը փոքրիկ մահիճն էր ձրգած։ Նրա հագուստը մի հին փալասի կտոր է, որ երկու ծայրերից այծի մազից հյուսված դերձանով վրան ամրացրած է։ Մի օր հայտնեց նա,

որ երկնքից իրան և յուր սերնդին պարգևած է հավիտենական շեյխութեան արտոնութիւն և իրավունք։ Քաղաքը երեք կողմից շրջապատած է բարձրադիր լեռներով։ Լեռնային երկրի կանաչ մակերևույթը ծածկած է բարձր և դալար խոտերով։ Ինչպես ասած է՝ սուտ կուրացան։

դ) Երբեմն և անցողական բայերը՝ պահելով իրենց անցողական նշանակութիւնը։ Այս դեպքում, սակայն, եմ օժանդակ բայի տեղ սովորաբար դրվում է ունիմ բայը։ Օրինակ՝ Կարծես թե երբեք հայ աշխարհում՝ բարձր դասակարգ, տիրող իշխանութիւն գոյութիւն ունեցած չէ.—Այս տեղը մի հարյուր անգամ տեսած կլիներ. սկի միտը չէր գալի, թե մի օր այսպես տեսած է. պապերիցն էլ չէր լսած.—Ես նկատած չէի, վրանի ետևը մի մեծ տրցակ մահակներ կշտած, դրված էին.—Պստիկ հարսները հարսանիքից դեսը մոր երեսը չեն տեսած.—Ով էր լսած թե... Մի հնադարյան ջրի փարչ դրած են նրա մոտ.—Իմ օրումն այսպես ախորժակով ջուր չէի խմած (Պռ.)։

9. Անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում ընկնող սոսկ եղելութիւն, բոլորովին տարբեր մյուս անցյալ ժամանակներից։

ա) Անցյալ կատարյալը մի անցյալ ժամանակակետից առաջ ընկնող գործողութիւն չի ցույց տալիս, ինչպես վաղակատար անցյալը (երեկ, ժամի 5-ին գնացել էի), և ոչ անցյալ ժամանակակետից հետո եկող գործողութիւն, ինչպես ապառնի անցյալը (երեկ, ժամի 5-ին դեռ նոր գնալու էի). այլ, ինչպես անկատար անցյալը, հենց իրեն անցյալ ժամանակակետի մեջ ընկնող մի գործողութիւն, անկատար անցյալից այն տարբերութեամբ, որ մինչ վերջինը ցույց է տալիս հարաձիգ, տևական եղելութիւն, որի սկիզբն անցյալ ժամանակակետից առաջ է ընկնում,—անցյալ կատարյալն ընդհակառակն ցույց է տալիս առանց տևականութեան մի սոսկ գործողութիւն, որ սկսվում և մի անգամից կատարվում, վերջանում է անցյալ ժամանակակետում։ Օրինակ՝ Երեկ, ժամի 5-ին նա գնում էր—գործողութիւնն սկսված է ժամի 5-ից առաջ և ժամի 5-ին դեռ հարատևում է.—Երեկ, ժամի 5-ին նա գնաց—գործողութիւնն սկսվում և վերջանում է ժամի 5-ին առանց տևականութեան։

բ) Անցյալ կատարյալն առանձնապես տարբերվում է նաև վաղակատար ու հարակատար ներկաներից։ Անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ գործողութիւն, որի ազդեցութիւնը կամ հետևանքը չի հարատևում ոչ ներկայում և ոչ անցյալում, և որ խոսողի ներկայի հետ հարաբերութիւն չունի. խոսողը ոչ թե ներկան նկատի ունի, ինչպես վաղակատար և հարակատար ներկաների համար, այլ միշտ այն անցյալ ժամանակակետը կամ վայրկյանը, որի մեջ կատարվում, վերջանում է գործողութիւնը։ Օրինակ՝ երբ մեկն ասում է՝ Նրա ձիու պայտն ընկել է։ Քաղաքը... երեք կողմից շրջապատված է բարձրադիր լեռներով, իսկ չորրորդ կողմը բնութիւնը առաջ է բերել մի ոչ շատ լայնանիստ

հարթահատակ հովիտ.—Ես ոչ նրա ծննդյան տեղն եմ տեսել և ոչ ոտքս Տաճկաստանի հողի վրա եմ դրել (Պռ.),—խոսողը միշտ նկատի ունի ներկան, որի մեջ այս կամ այն կերպ հարատևում է գործողության հետևանքը։ Իսկ, ընդհակառակն, երբ ասվում է՝ Նրա ձիու պայտն ընկավ. Ես ոչ նրա ծննդյան տեղը տեսա և ոչ ոտքս Տաճկաստանի հողի վրա դրի,—խոսողը մտքում ունի այն անցյալ որոշ վայրկյանը, երբ մի անգամից կատարվում, վերջանում է գործողությունը. ուստի և նա չի կարող անցյալ կատարյալով ասել. «Քաղաքը երեք կողմից շրջապատվեց լեռներով, իսկ չորրորդ կողմը բնությունը առաջ բերեց մի ոչ շատ լայնանիստ հարթահատակ հովիտ»,—որովհետև նա չի կարող այդպիսի մի բնական գործողության վայրկյանը նկատի ունենալ, եթե միայն իհարկե երևակայությամբ ինքն իրեն չի դնում այն վայրկյանին, երբ բնության մեջ առաջ են եկել լեռներն ու հովիտները։

Վաղակատար ներկայի և անցյալ կատարյալի բնավորություններ վրա հիմնված են նրանց գործածությունները, այն է՝ ամեն անորոշ ժամանակում կատարված գործողություն, որի հետևանքը, կամ որից ծագած մնայուն դրությունը միայն ծանոթ է խոսողին, կամ որի մասին խոսողն ուրիշից է լսել, օտարի վկայությամբ է խոսում, կամ հետևանքից մակաբերում է գործողությունը և այլն, դրվում է վաղակատար (կամ հարակատար) ներկայով և ոչ անցյալ կատարյալով։ Օրինակ՝ երբ մեկը փողոցով անցնելիս տեսնում է մի սպանված մարդ, նա տուն մտնելիս, չի ասում՝ փողոցում մի մարդ սպանեցին.—որովհետև նա այդ ձևով ինքն իրեն դնում է գործողությունը կատարելու վայրկյանին, մտքում ունի սպանության վայրկյանը, և լսողները կկարծեն, թե նա ներկա է եղել սպանության գործին,—այլ ասում է՝ փողոցում մի մարդ են սպանել,—որով գործողությունը դրվում է մի անորոշ ժամանակում և վերցվում է ներկայի նկատմամբ անցած մի գործողություն, և լսողները չեն կարծում նա ներկա է եղել սպանությանը։ Այսպես և՝ Այս գիշեր անձրև եկավ.—Ես զարթուն էի, անձամբ տեսա և իմացա անձրև գալը.—Այս գիշեր անձրև է եկել,—ես քնած եմ եղել և առավոտը անձրև գալու հետևանքը տեսել և իմացել եմ, կամ ուրիշներն ինձ ասել են, որ անձրև է եկել։ Ինքն իրեն համար խոսողն ևս կարող է ասել՝ Ես գրնացել եմ նրա մոտ.—Ես գնացի նրա մոտ,—առաջին ձևով խոսողը միայն ներկայի նկատմամբ մի անցած գործողություն է առնում և իրեն չի դնում այլևս այն վայրկյանի մեջ, երբ ինքն այդ գործողությունը կատարել է. մինչդեռ երկրորդ ձևով խոսողն, ընդհակառակն, մրտքում ունի անցյալ վայրկյանը։

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԵՏ

226. *Ապառնի ժամանակի նկատմամբ մեր լեզուն չունի ոչ մի կերպի համար առանձին խոնարհման ձևեր. այդ հարաբերություններն*

արտահայտվում են ներկայի և անցյալ կատարյալի հարաբերության ձևերով։ Պետք է նկատել, սակայն, որ ամեն ապագայում ընկնող գործողություն ըստ ինքյան անհաստատ, անստույգ է, որով և մենք կարիք չենք զգում շատ անգամ ապագայում դնելու իրապես կատարվող, կատարված և կատարելի, կամ սոսկ անցյալ գործողություն, այլ ավելի պետք ունինք այդպիսի գործողություն ենթադրելու կամ անհրաժեշտ համարելու. ուստի ապառնի ժամանակի նկատմամբ գործողության չորս կերպերն արտահայտվում են ավելի ենթադրական ու հարկադրական եղանակներով, քան սահմանական եղանակով։ Ապագայի նկատմամբ կարող ենք միշտ միայն մի իրական մտածություն, դիտավորություն ունենալ մի բան անելու. ուստի և միայն մի սահմանական ապառնի ունինք, կատարելի կերպի ապառնին՝ գնալու եմ, որ ցույց է տալիս ներկայի նկատմամբ ապագայում ընկնող մի իրական գործողություն, որի իրականությունն առնվում է ոչ թե իսկապես ապագայի գործողության համար, այլ ներկայի մտադրության, որ ունինք ապագայում մի բան անելու։ Բայց և այնպես, երբ կարիք զգացվի երևակայությամբ ապագայում կատարվող, կատարված և կատարելի իրական գործողություն դնելու, գործ են ածվում սահմանական եղանակի ներկայի նրկատմամբ կազմված ձևերն և անցյալ կատարյալը, և այդ ժամանակ գործողության ապագայում դրվելը որոշվում է որևէ ուրիշ բառով, կամ մի այնպիսի դրությամբ, որ թյուրիմացություն չի առաջ գալիս։ Այսպես գործ են ածվում ապառնու համար իբրև՝

1. Կատարվող կերպ, օրինակ՝ Մենք այսօր գնում ենք։ Հիմա վաղը, ժամի 10-ին ինձ հետ գալի՞ս ես, թե չէ՞։ Մենք էգուց ժամի 10-ին արդեն գնում ենք։—Խոսողը գործողությունը մտածում է իբրև մի ապագա ժամանակակետում կատարվող, տևական ու իրական։

2. Կատարված կերպ, օրինակ՝ Հենց որ եկել ես, կասեմ քեզ։ Որ էգուց եկել ես, կտեսնե՛ս ինչ կանեմ։— Գործողությունը դրվում է մի ապագա ժամանակակետի նկատմամբ իբրև կատարված։

3. Կատարելի կերպ, օրինակ՝ Մենք վաղը, ժամի 5-ին ենք ճանապարհ ընկնելու։ Էգուց, ժամի 10-ին ես դեռ գնալու եմ նրա մոտ։— Գործողությունը դրվում է մի ապագա ժամանակակետի նկատմամբ իբրև դեռ նոր կատարելի։

4. Պարզ կերպ, օրինակ՝ Վաղը հենց որ բանից պրծար, կգաս ինձ մոտ։—Գործողությունը մտածվում է մի ապագա ժամանակակետում իբրև պարզապես կատարված։ Թող մնա մինչև մյուս հունձը. այն ժամանակն էլ ուներցար՝ կտաս, չուներցար՝ պահանջող չկա (Պռ.)։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

227. *Սահմանական եղանակը չունի ներկայի նկատմամբ պարզ կերպի համար առանձին ձև, և կարիք էլ չի զգացվում խոսողի ներկա-*

յում ընկնող առանց տևականության մի գործողություն արտահայտելու։ Սակայն հաճախ անկատար ներկան և անցյալը կորցնում են իրենց իսկական տևական բնավորությունը և առնվում են մի տեսակ իբրև սոսկ ներկա, կամ անցյալ։ Այսպես երկրորդական բնավորությամբ գործ են ածվում՝

1. Ներկան իբրև «մշտական ներկա», երբ այս ժամանակով արտահայտվում են այնպիսի իրական, բացարձակ ճշմարտություններ, իրերի ընդհանուր մշտական բնավորություններ, մնայուն ընդհանուր հատկություններ, որոնք միշտ, ամեն ժամանակի համար ընդունելի են, և ոչ թե մի անգամ խոսողի ներկայում կատարվում են հարաձիգ,— ինչպես որ է կատարվող կերպի ներկայի իսկական բնավորությունը։ Օրինակ՝ Գայլը գազան է.—Ձմեռը ձյուն է գալիս.—Երկիրս պտտվում է արեգակի շուրջը.—Գարնանը ծառերը ծաղկում են,—այս խոսքերի մեջ ժամանակի գաղափարի որոշությունը դուրս է ձգվում, և բայն արժեր է ստանում ամեն ժամանակի համար, որի մեջ է և խոսողի ներկան։ Այստեղ ոչ թե խոսելու վայրկյանին կատարվող մի տևական դեպքի մասին է խոսքը, այլ մի ընդհանուր ճշմարտության մասին, որ միշտ տեղի ունի. ոչ թե այն վայրկյանին, երբ խոսում եմ՝ գայլը գազան է, երկիրս պտտվում է արեգակի շուրջը, այլ միշտ էլ գայլը գազան է և այլն։—Նույնպես և երբ ասվում է՝ Նա արագ է խոսում,—կարող ենք հասկանալ մի որոշ դեպք. խոսողի ներկայում նա արագ է խոսում. բայց կարելի է հասկանալ և իբրև մի ընդհանուր հատկություն. նա իր բնածին հատկությամբ արագ է խոսում միշտ, արագ խոսող է։

2. Ներկան իբրև «առածական ներկա», երբ դրանով արտահայտվում են ընդհանուր կարծիքներ, առածներ, իմաստալից խոսքեր, որոնց ճշմարտությունն ընդհանուր ընդունված է և որոնց բովանդակությունն արժեք ունի ամեն ժամանակի համար։ Օրինակ՝ Մի բարի օրինակը ավելի է ներգործում, քան թե ամենալավ խրատները։ Զվածեղի սիրուն թավի կոթն են պաչում (Ա.)։

Այս նշանակությամբ երբեմն գործ են ածվում նաև վաղակատարն և անցյալ կատարյալը։ Այս դեպքում անցյալով արտահայտվում է մի որոշ դեպք, որ մի անգամ անցյալում կատարվել է և ապա լսողին է թողնվում դրանից մի ընդհանուր ճշմարտություն հանել, թե ինչ որ մի անգամ անցյալում կատարվել է, նման պարագաների մեջ կարող է և ամեն ժամանակ կատարվել։ Օրինակ՝ Կատուն սատկել է (սատկեց), մկները մեյդան են առել (առան)։ Արավ գողություն, առավ թողություն.—Առան աչիկին, դուրս եկավ խաչիկին.—Սատկեց այն աքլորը, որ քեզ համար ոսկե ձու էր ածում (Ա.)։

3. Ներկան և անկատար անցյալը իբրև սովորության ներկա և անցյալ, երբ այս ժամանակներով արտահայտվում են այնպիսի եղելություններ, որոնք ոչ թե մի անգամ խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակակետում կատարվում են հարաձիգ, այլ իբրև ընդհանուր դիրք, կարգ, սովորություն հաճախ կատարվում են մի ժամանակաշրջ-

ջանում, որի մեջ է և խոսողի ներկան. կամ թե կատարվել են մի անցյալ ժամանակաշրջանում։ Օրինակ՝ Հին եգիպտացիք իրենց մեռելները զըմրուսում էին, հույներն այրում էին, իսկ մենք այժմ թաղում ենք։ Հարսանիքները սովորաբար աշնանն ու ձմեռն են լինում։

4. Ներկան և անկատար անցյալն իբրև կրկնության ներկա և անցյալ, երբ պետք է պատմել մի շարք իրար հաջորդող այնպիսի եղելություններ, որոնք ոչ թե մի անգամ են հարաձիգ կատարվում կամ կատարվել խոսողի ներկայում կամ մի անցյալ ժամանակակետում, այլ իբրև սովորություն, դիրք օրեցօր, տարեցտարի կրկնվում են անցյալում կամ մի շրջանում, որի մեջ է և խոսողի ներկան։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ Նա առավոտները վաղ վեր է կենում, գնում է զբոսնելու, ապա գալիս նախաճաշում է և անմիջապես նստում է իր գործին,— մենք չենք մտածում մի հատ որոշ տևական գործողության մասին, որ հարաձիգ կատարվում է մեր խոսելու վայրկյանին. այլ դա մի սովորաբար կրկնված գործողություն է։ Նույնպես և երբ ասում ենք՝ Նա այս ամառ առավոտները վաղ վեր էր կենում, գնում էր մի ժամ զբոսնելու, ապա գալիս, նախաճաշում էր և այլն, մենք չենք մտածում անցյալ ժամանակակետում կատարված որոշ տևական գործողության մասին։ Այս գործածություններում ներկան և անկատ. անցյալը կորցնում են իրենց որոշ դեպքի տևական բնավորությունը և արտահայտում մի կրկնված գործողություն։

5. Անցյալ եղելությունները, որոնք խոսողի ներկայությամբ չեն կատարվել, պատմելու բուն ժամանակն է վաղակատարը. օրինակ՝ Առաքել Բահաթրյանցը ծնվել է Ղարաբաղի Շուշի քաղաքում. ուսումն սկսել է Ղարաբաղի հայոց հոգևոր ուսումնարանում և այլն։ Այս ժամանակը սակայն քիչ է գործածվում իբրև անխառն պատմական ժամանակ, որովհետև պատմվածքը դանդաղանում է և զրկվում կենդանությունից։ Վաղակատարի տեղ հաճախ բանում են անցյալ կատարյալն և սահմ. ներկան։

ա) Անցյալ կատարյալով պատմելիս՝ պատմողն ինքն իրեն ներկայից փոխվում է անցյալի մեջ, այն ժամանակակետը, երբ կատարվում է գործողությունը, և իբրև ականատես պատմում դեպքերը։ Անցյալ կատարյալով ասվում է ամեն եղելություն, որ պատմվածքի մեջ հաջորդական առաջխաղացություն է բերում, որով և պատմվածքը շարժում ու արագություն է ստանում. իսկ ինչ որ հարակա դադարում է ցույց տալիս, վիճակների թե բնության նկարագիր, դրվում է անկատ. անցյալով։ Օրինակ՝ Ամառվա գեղեցիկ երեկոներից մեկն էր։ Գեղեցիկ հովիտներից մեկում տարածված էր մի գյուղ. նրա ձախ կողմում գըտնված լեռան թևի վրա երևում էր մի սպիտակ ամարանոց, որի արևմըտյան դռնից դուրս գալով՝ մի պատանի սկսեց կամաց կամաց իջնել դեպի դաշտը։ Նա յուր քայլերն ուղղեց դեպի հինօրյա կաղնիների մեջ ծածկված մի ավերակ, այստեղ փոքր ինչ կանգ առավ, մի հայացք ձգեց և այլն։

բ) Ներկայով պատմելիս՝ մեր երևակայության մեջ գործողությունն անցյալից տեղափոխվում է խոսողի ներկայի մեջ, որով և անցյալ գործողություններն այնպես ենք պատկերացնում, որ իբր մեր աչքի առաջ, պատմելու վայրկյանին կենդանի կատարվելիս լինին։ Օրինակ՝ Արամն, ասում է Խորենացին, հայրենասեր մարդ է եղել։—Հայկը ժողովում է իր մարդկանց, կարգավորում է նրանց, դուրս է գալիս Բելի դեմ, կռվում է և սպանում նրան։ Այս գործածության մեջ ներկան կորցնում է իր անկատար տևական բնավորությունը և արտահայտում է մի սոսկ անցյալ գործողություն, ինչպես և անցյալ կատարյալը։ Ուստի և գրաբարում հաճախ միևնույն պատմվածքի մեջ ներկան և անցյալ կատարյալը փոխեփոխ խառն գործ են ածվում իբրև պատմական ժամանակ. բայց այժմյան լեզվի մեջ ընդունելի չէ պատմական ներկայի և անցյալ կատարյալի խառն գործածությունը մոտեմոտ։ Դրանք իրար տեղ կարող են անցնել միայն մեծ հատվածներից հետո։

228. Հավելավոր բայերի պարզ ներկան և անցյալը՝ եմ—էի, կամ —կայի, ունիմ—ունեի, գիտեմ—գիտեի, կարող եմ—կարող էի, պետք է—պետք էր և այլն. գործ են ածվում ներկայի և անկատ. անցյալի հարաձիգ նշանակությամբ. դրանք ցույց են տալիս իրական որոշ եղելություն, որ հարակայում է ներկայում կամ անցյալում, և կամ իրերի մընայուն հատկություններ, բացարձակ ճշմարտություններ կամ իբրև բացարձակ ճշմարտություն ընդունված կարծիքներ, ինչպես՝ Նա այստեղ է. Երկիրս կլոր է. Ճշմարտությունն է միայն մեր հոգու հույսը. Ուղին շատ պարտք ունի վճարելու ծնողներին։ Իսկ բաղադրյալ ներկան և անկատար անցյալը՝ լինում եմ—լինում էի, ունենում եմ—ունենում էի, գիտենում եմ—գիտենում էի, կարողանում եմ—կարողանում էի, պետք է լինում—պետք էր լինում և այլն, գործ են ածվում ներկա և անկատար անցյալ ժամանակների երկրորդական բնավորությամբ, իբրև առածական և պատմական ներկա, կամ իբրև սովորության և կրկնության ներկա և անցյալ։ Հետևյալ օրինակների մեջ կարելի է տեսնել դրանց տարբեր գործածությունները։

1. Բուն նշանակությամբ. Մի թագավոր կա, որ շատ հզոր է. Նա ունի երեք որդի,—այժմ, խոսելու վայրկյանին իրապես կա, է, ունի.—մի թագավոր կար, որ շատ հզոր էր. Նա ուներ երեք որդի,—առաջ, մի ժամանակ իրապես կար, էր, ուներ։—Նա այս րոպեիս, որ խոսում եմ, տանն է և սպասում է քեզ, որովհետև բան ունի քեզ ասելու. բայց չի կարող երկար սպասել, քանի որ գիտե, որ իր եղբայրը եկել է և ինքը նրան պետք է մի գործի համար։—Նա երեկ առավոտյան տանն էր և սպասում էր քեզ, որովհետև բան ուներ քեզ ասելու. բայց չէր կարող... քանի որ գիտեր և այլն։

2. Երկրորդական նշանակությամբ. Մի թագավոր է լինում, շատ հզոր է լինում. Նա ունենում է երեք որդի։— Սրտի ուզածը սիրուն է լինում.—Ճաշից հետո հարիսան էժան է լինում։ Այդ ժամե-

րին նա սովորաբար տանն է(ր) լինում:—Նա առավոտները վաղ վեր է(ր) կենում և իր բանի է(ր) լինում. և որովհետև եռանդով գործ կատարող է(ր), միշտ էլ բավական աշխատանք է(ր) ունենում և կարողանում է(ր) իր ընտանիքը անկարոտ պահել:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

229. *Բայի ժամանակների հարաբերականությունը հիմնված է երկու տարբեր գործողությունների միաժամանակ, մեկը մյուսից առաջ կամ հետո լինելու վրա: Այսպես օրինակ՝ անկատար, վաղակատար և ապառնի անցյալները անցյալ կատարյալի նկատմամբ ցույց են տալիս՝*

1. Միաժամանակություն,—մի գործողություն արդեն սկսված է և դեռ շարունակվում է, երբ կատարվում է մի ուրիշ գործողություն. օրինակ՝ Երբ դու եկար, ես գրում էի:—Մենք հարձակվեցինք թշնամու վրա, որ ետ էր նահանջում:

2. Նախաժամանակություն,—մի գործողություն արդեն կատարված, վերջացած է, երբ կատարվում է մի ուրիշ գործողություն. օրինակ՝ Երբ դու եկար, ես արդեն գրել էի:—Մենք հարձակվեցինք թշնամու վրա, որ արդեն ետ էր նահանջել:

3. Ետժամանակություն,—մի գործողություն դեռ նոր կատարելի է, երբ կատարվում է մի ուրիշը. օրինակ՝ Երբ դու եկար, ես դեռ նոր գրելու էի:—Մենք հարձակվեցինք թշնամու վրա, որ ետ էր նահանջելու:

Բացի այն, որ սահմ. եղանակի վերևում դրած ինը ժամանակներն իրար վերաբերմամբ կարող են այսպիսի հարաբերական գործածություններ ունենալ, մեր լեզվի մեջ կան հատուկ հարաբերական ժամանակներ ևս:

230. *Հարաբերական ժամանակներն երկրորդական բաղադրյալ ժամանակներն են որոնք, խոնարհվում են լինիմ օժանդակ բայով և գլխավոր ժամանակների հետ հարաբերական գործածություն ունին, բայց միայն իրրև սովորության, կրկնության ու պատմական ժամանակներ: Ամեն գլխավոր կամ բացարձակ ժամանակի համար, բացի հարակատարից, կան երեք համապատասխան հարաբերական ժամանակ ևս՝ կատարվող, կատարված և կատարելի կերպերի, որոնք բացարձակ ժամանակների նկատմամբ ցույց են տալիս միաժամանակություն, նախաժամանակություն և ետժամանակություն:*

1. Ներկա՝ Գնում եմ: Համապատասխան հարաբերական ներկա ժամանակներն են՝

ա) Կատարվող կերպի՝ գնալիս եմ լինում: Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ եմ գնում, նա տանը նստած՝ պարապելիս է լինում.—տրնից դուրս գալիս է լինում:—Լինում են չեն լինում մի մարդ մի կնիկ. սրանք ունենում են մի մինուճար տղա... Երբ հայրը մեռնելիս է լինում, կնկանն ասում է (Նավասարդ. Հեքիաթ.):

բ) Կատարված կերպի՝ գնացած եմ լինում։ Օրինակ՝ Ամեն անգամ, որ նրա մոտ եմ գնում, նա տնից դուրս եկած է լինում.—իր գործը վերջացրած է լինում։ Երբ Հայկը հասնում է ձորը, Բելն արդեն եկած է լինում։ Լինում է, չի լինում մի աղջիկ. այս աղջիկն օտար տեղ հարս գրնացած է լինում. Ջատկի շաբթին եղբայրը գալիս է... Ճակատի գրվածը չի ջնջվիլ. հարյուր տարվան մեռած մարդի գլուխն էլ հողի տակից որ դուրս է գալիս, ամեն բանը խարաբ եղած է լինում, համա էն գիրը մնում է (Պռ.)։

գ) Կատարելի կերպի՝ գնալու եմ լինում։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ եմ գնում, նա դեռ պարապելու է լինում,—տնից դուրս գալու է լինում. Նա որ մեզ մոտ գալու է լինում, առաջուց իմաց է տալիս։—Լինում են, չեն լինում մի մարդ մի կնիկ. սրանք ունենում են մի մինուճար տղա, երբ հայրը մեռնելու է լինում, կնկանն ասում է։

Նշ. Պատմական ներկայով (§ 227. 5) ասված պատմվածքների մեջ, կրկնված անցյալ եղելությունների համար իբրև կրկնության ժամանակ (§ 227. 4) գործ են ածվում.

1. Անկատար ներկան. օրինակ՝ ժամանակով մարդ ու կնիկ են լինում, ունենում են մի մինուճար տղա։ Իրանք էլ շատ դառն աղքատ են լինում։ Աստուծու իրան օրը մարդր կացինը վեր է ունում, երթում անտառը, փայտ կտրում, տանում, ծախում, ընտանիք պահում։ Սրանց տղան էլ որ մեծանում է, հայրը միտք է անում և այլն (Նավաս., Հեք.)։

2. Անկատար անցյալը. օրինակ՝ Հարս ու սկեսուր են լինում. դրանք բավականի սիսեռ են ունենում։ Այդ հարսը շատ սիսեռակեր է լինում։ Աստուծու իրան օրը սիսեռը գազանում էր, տանում, քաքուն եփում, ուտում։ Օրեն մին օր սկեսուրը նկատում է. տեսնում իրանց սիսեռի տոպրակը կես է ընկել և այլն (Նավ. Հեք.)։

3. Հարաբերական ներկան, որի հետ խառն գործ է ածվում նաև բացարձակ ներկան։ Օրինակ՝ լինում են, չեն լինում երկու զարգյար. մինը՝ հայ, մեկելը՝ չհուդ։ Սրանք մի քաղաքում իրար կշտի բանելիս են լինում։ Հայը մի աղքատ մարդ է լինում, բայց աստուծու ճանապարհին, ամեն առավոտ աղոթք անելիս ու ասելիս է լինում. «Աստված ողորմած է»։ Ինչ քամբախտություն էլ նրան պատահի, էլի չի մտաճաճ անում (կարող էր ասել՝ չի մտահան անելիս լինում) իր աղոթքը։ Մի օր չհուդն ուզում է և այլն (Նավ. Հեք.)։ Լինում է, չի լինում մի հարուստ քագավորի կնիկ. ունենում է մի քանի տղա։ Ամեն օր տղան գնալիս է լինում որս, երբ տուն է գալիս լինում իրիկները, հետն աստուծու անհատ բարին տուն է բերում... Մի օր քագավորի կնկա պալատում մի վիշապ է երեվում, գալիս է և այլն (Նավ. Հեք.)։ ...Այս քագավորն այնպես հարուստ է լինում, որ ոսկին ու արծաթը չորիներով ու ուղտերով է կրելիս, տուն ածելիս լինում։ (Մի օր) նա ինչքան ոսկի, արծաթ, անգին քար է ունենում, բոլորը հավաքում է և այլն (Նավ. Հեք.)։ Լինում են մի մարդ մի կնիկ։ Սրանք երեխա չեն ունենում. շատ ու շատ գթոտ են լինում։ Ով քասով է տալիս լինում, սրանք չվալով են տալիս։ Նրանք շատ հարուստ են լինում. բայց մինն էլ է նրանց աչքումը գալիս չի լինում։ Նրանք հենց միալար ասելիս են լինում. «Էհ՛հ, ինչների՞ս է պետք»։ Երբ որ նրանք պառաված են լինում, մի անգամ նրանց մոտ գալիս է մի դերվիշ և այլն (Նավ. Հեք.)։ Մի շատ հարուստ քագավոր է լինում։ Ժամանակ ժամանակ սա իր իշխաններիցը քաքուն աղքատի շորեր է ճագնելիս լինում ու քաղաքն քաղաք, գեղն գեղ ման գալիս լինում, քե տեսնի՝ ժողովուրդն իր վրա ինչ է խոսում։ Մի անգամ էլ տեսնում է և այլն (Նավ. Հեք.)։

2. Անկատար անցյալ՝ գնում էի։ Համապատասխան հարաբերական անկատար անցյալ ժամանակներ են՝

ա) Կատարվող կերպի՝ գնալիս էի լինում։ Օրինակ՝ Ամեն անգամ, որ նրա մոտ էի գնում, նա տանը նստած պարապելիս էր լինում,—տրնից դուրս գալիս էր լինում։ Ամեն տարի, աշնան ժամանակը, երբ մենք դեռ լվանալիս ու մաքրելիս էինք լինում մեր ոչխարները, նա գալիս էր մեզ մոտ։

բ) Կատարված կերպի՝ գնացած էի լինում։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ էի գնում, նա տնից դուրս եկած էր լինում.—իր գործը վերջացրած էր լինում։ Ամեն տարի, աշնան ժամանակը, երբ մենք արդեն լվացած, մաքրած էինք լինում մեր ոչխարները, նա գալիս էր մեզ մոտ։

գ) Կատարելի կերպի՝ գնալու էի լինում։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ էի գնում, նա տնից դուրս գալու էր լինում։—Նա որ մեզ մոտ գալու էր լինում, միշտ առաջուց իմաց էր տալիս։

Ծան. *Աննկատ. անցյալ հարաբերական ժամանակները նշանակությամբ նույնանում են անկատ. ներկա ժամանակների հետ. միայն մինչ վերջիններս հարաբերական են կրկնության, սովորության ու պատմական ներկային, առաջիններն նույն նշանակությամբ գործածված անկատար անցյալին են համապատասխան։*

3. Վաղակատար՝ գնացել եմ։ Համապատասխան հարաբերական վաղակատար ժամանակներն են՝

ա) Կատարվող կերպի՝ գնալիս (գնում եմ) եղել։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ եմ գնացել, նա տանը նստած պարապելիս է եղել։ Իշխանությունը աշխատել է աչքի առաջ ունենալ ընդհանուր պետական պահանջները. ա՛յլ հարց է, թե ի՛նչ կերպ են հասկացվելիս եղել և մանավանդ ի՞նչ կերպ են հասկացվում այժմ այդ պահանջները (Գործ, 1909, № 74)։

բ) Կատարված կերպի՝ գնացած եմ եղել։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նրա մոտ եմ գնացել, նա իր գործը վերջացրած է եղել։

գ) Կատարելի կերպի՝ գնալու է եղել։ Օրինակ՝ Ամեն անգամ որ նա մեզ մոտ գալու է եղել, առաջուց իմաց է տվել։

Ծան. *Այս հարաբերական վաղակատար ժամանակները գործ են ածվում՝*

1. Ինչպես հատուկ է և բացարձակ վաղակատար ներկային (տե՛ս § 225. 9), երբ մի իրողության մասին խոսվում է ուրիշի վկայությամբ, ուրիշի ասելով. կամ երբ այնպիսի իրողություններ են մեջ բերվում, որոնց բովանդակությունը կասկածելի է համարում խոսողը, և կամ որոնց հավաստիությունը թողնում է ուրիշներին, որոնցից լսել է ինքը։ Նույն նշանակությամբ գործ են ածվում և կա, ունի, գիտե բայերը՝ կա եղել, ունի եղել, գիտե եղել ձևերով, որ նշանակում են՝ ասում են թե կա, եղել է. ասում են թե ունի, ունեցել է. ուրիշների ասելով ունի, կա։ Օրինակ՝ Ինչպես պատմում են, Իլիականը նա անգիր ասելիս է եղել (Արարատ, 1908, եր. 269)։— Ոստիկանությունը կնքել է տեղական հասարակական գործիչ Բ. Մ.-ի բնակարանը։ Թերթը կարողացել է իմանալ, որ նեթադրվում է եղել խուզարկություն կատարել Բ. Մ.-ի մոտ. բայց որովհետև նա այդ ժամանակ բացակայում է եղել քաղաքից, ուստի բնակարանը կնքվել է մինչև նրա վերադարձը (Մշակ, 1909, № 69)։— Բանտարկվածներն էին Ուրմիայի փոխհյուպատոսարանի գործավարը՝ երկու ծառաների և երեք կողակների հետ, որոնք տանում են եղել պոստը Ուրմիայից Թավրիզ (Մշակ, 1909, № 80)։— Հին հույներն իրանց համարում

էին առաջացած այն քարերից, որ աստվածները շպրտում էին իրանց գոգից։ Նրանց նախնի դյուցազների մի քանիսի երակներում ճոսելիս է եղել ուղղակի Օլիմպյան Արամազդի արյունը։ Նախկին Իտալիայի թագավորական սերունդը առաջ է եկած եղել Տրոյիայի ծնեաս իշխանից, որի մայրն է եղել Վեներա դիցուհին։ Անգլիական թագավորական տունը ծագելիս է եղել Դավիթ թագավորից (Ստ. Մալխ.)։— Թեպետ և մենք տեսած չենք անդրանիկ տպագրություն, բայց չենք կարող չհավատալ 1828 թվին Վենետիկում լույս տեսած օրինակի հրատարակիչներին, որոնք հայտնում են, թե անդրանիկ տպագրության հրատարակիչն էլ հիշում է, որ ոչ մի գրչագիր օրինակի մեջ հինգերորդ եղանակի խորագիր չկա եղել, և որ հինգերորդի վրա նշանակած է եղել վեցերորդի խորագիրը, և հինգերորդ ու վեցերորդ եղանակների բնագիրն անընդհատ, առանց որևէ բաժանման նշանի շարունակվում է եղել իբրև միապաղաղ մի հատված մինչև յոթներորդ եղանակը։ Այն անդրանիկ հրատարակիչն այս էլ է հայտնած եղել, որ միայն մի գրչագիր է ունեցել Ե. յեղանակ (Կ. Կոստ.)։ Սա այն պատկերն է, ասաց աբեղան, որի առաջ Մխիթար Սեբաստացին... աղոթում է եղել, երբ կույր աչքերով գտնվում է եղել Սևանում (Մուր.)։

2. Երբ պետք է վաղակատար և հարակատար ներկային և անցյալին տալ նախաժամանակության բնավորություն (տե՛ս § 225. 5, 7 և 8)։ Օրինակ՝ Արդարև բախտը խռռված է եղել Քշվառ Փալչիկյանից. անպիտան չար աշակերտները... հոգին բերանն էին բերում (Պռ.— որ եթե ասվեր՝ խռռված է, կհասկացվեր՝ այժմ, ներկայում, իսկ խռռված էր՝ այն ժամանակ, անցյալ ժամանակակետում։ Խռռված է եղել ձևով այդ անցյալ ժամանակակետից էլ առաջ է դրվում)։ Հարցրո՛ւ ի՞նչ էր խեղճ մորս տեսածը,— ոչինչ, շատ հասարակ դեպք. պարտիզում խռռասուզված եմ եղել պարապմունքիս մեջ, երբ մայրս ձայն է տալիս, ու ես չեմ լսում.— Իհարկե՛, այսպես կլիներ, քանի որ հայակուլ բռնակալների սուր ու նիզակները սրված են եղել գլխավորապես այդ դասակարգը ոչնչացնելու.— Մենք պսակված ենք. կարծում էին թե... վերջ կլինի մեր հալածանքին, ավա՛ղ, սխալված եմ եղել.— Վեր բռավ, տեսավ, որ նստած քունը տարած է եղել.— Տան տիրոջիցս չհաջողեցրի խոսք դուրս քաշել, դու արգելած ես եղել, և նա քո հրամանդ սրբությամբ պահել է (Պռ.)։ Լիդիա Պավլովնան... հավատացրեց, որ ամեն օր սպասում է եղել նրանց (Մուր.)։

3. Վաղակատարով պատմվածքի մեջ (§ 227. 5) իբրև հարաբերական ժամանակներ. այս դեպքում կատարվող կերպի վաղակատար ներկան նաև կրկնություն ցույց տալու համար։ Օրինակ՝ Ծղել է, չի եղել մի թագավոր։ Նա իմացել է լավ քաղքենություն՝ որ իր կնոջ խորհրդով է սովորած եղել։ Այս թագավորը շատ անգամ իր մեծամեծներից քաջուն աղքատի հագուստ է ճագնելիս եղել և քաղաքէ քաղաք, գյուղէ գյուղ մտնե գալիս [կրկնության ժամանակ], որ տեսնի թե իր վրա ինչ են խոսում և այլն։ Մար-Շմոնի և Գարեգինի մեջ երկար խոսակցություն է տեղի ունեցել և համաձայնություն է կայացել մի ուղղությամբ գործելու։ Մար-Շմոնն ինքը վաղուց զգացած է եղել, որ հայոց հետ համերաշխությունն յուր ազգի ինքնուրույնության ամենակենսական միջոցն է (Պռ.)։

4. Վաղակատար անցյալ՝ գնացել էի։ Համապատասխան հարաբերական ձևերը՝ գնում էի եղել, գնացած էի եղել, գնալու էի եղել.

5. Ապառնի՝ գնալու եմ։ Համապատասխան հարաբերական ձևերը՝ գնալիս եմ լինելու, գնացած եմ լինելու.

6. Ապառնի անցյալ՝ գնալու էի։ Համապատասխան հարաբերական ձևերը՝ գնալիս էի լինելու, գնացած էի լինելու։

7. Անցյալ կատարյալ՝ գնացի։ Համապատասխան հարաբերական ձևերը՝ գնալիս եղա, գնացած եղա, գնալու եղա։

Այս վերջին չորս տեսակի հարաբերական ժամանակները սակավ գործածական են և պատահում են ավելի խոսակցական լեզվի մեջ. օրինակ՝ Չէ՞ որ այն օրը որ դու նրան տեսնելու էիր գնացել, նա արդեն ճանապարհ ընկնելիս էր եղել,—ընկած էր եղել,— ընկնելու էր եղել։— Ի՞նչ է, հենց որ օրը որ դու նրա մոտ գնաս (գնայիր), նա տնից գալի՞ս է(ր) լինելու,—տնից դուրս եկա՞ծ է(ր) լինելու։—Ամեն անգամ որ նրա մոտ գնացի, նա տնից դուրս գալիս եղավ,—դուրս եկած եղավ.— դուրս գալու եղավ։ Պատրիարքի հակառակորդները շատ խոսեցին, բայց դրանով մի վնաս տված չեղան նրան։ Ես ստիպված եղա հեռանալ։

Ծան. Ապառնի ժամանակի ձևերը նշանակությամբ երբեմն նույնանում են հարկադրական եղանակի հետ. օրինակ՝ Նա խելքը կորցրած լինելու է(ր),— նա պիտի կորցրած լինի (լիներ)։

2. ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

281. ***Ենթադրականը կարելիության*** *կամ* ***հնարավորության*** *եղանակն է, որով եղելությունը պատկերացվում է ոչ իբրև իրական, այլ իբրև մտածված, կարծված, հնարավոր, այսինքն այնպիսի, որ կարող է լինել, գուցե, կարելի է լինի։ Այս պատճառով խոսողն ենթադրական եղանակով ոչ թե ստույգ, հավաստի հաստատություն է անում, այլ անստույգ, մեղմ հաստատություն, կամ թե նա համեստությամբ, քաղաքավարությամբ իր կարծիքն է հայտնում։ Օրինակ՝* Սահմ. *Նա այժմ տանն է (ստույգ, իրոք է).— Ենթադր. Նա այժմ տանը կլինի (մենք այդպես կարծում ենք, ենթադրում ենք, կարող է տանը լինել)։*

282. *Ենթադրական եղանակն ունի ներկա և անցյալ ժամանակակետերի նկատմամբ չորս կերպերի համար ևս առանձին խոնարհման ձևեր, որոնք իրենց նշանակությամբ համապատասխան են սահմանական եղանակի ժամանակներին, միայն կարելիական իմաստով։ Ապագա ժամանակակետի նկատմամբ չկա ոչ մի կերպի ձև։*

	Ժամանակակետը, որի նկատմամբ տևում է գործողությունը	
Կերպերը	I Ներկա	II Անցյալ
1. Կատարվող	Գնալիս (գնում) կլինի՛մ	Գնալիս (գնում) կլինե՛ի
2. Կատարված	Գնացած կլինի՛մ	Գնացած կլինե՛ի
3. Կատարելի	Գնալու կլինի՛մ	Գնալու կլինե՛ի
4. Պարզ	Կգնա՛մ	Կգնա՛յի

1. Կատարվող կերպի ենթադր. ներկան և անցյալը ցույց են տալիս, առաջինը՝ խոսողի ներկայում, իսկ երկրորդը մի անցյալ ժամանակակետում հարաձիգ կատարվող, տևական գործողություն, համապատասխան սահմ. եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակներին։ Օրինակ՝ Սահմ. *Այս րոպեիս որ խոսում եմ, նա գնում է,—երեկ, ժամի 5-ին գնում էր (իրական եղելություն)։* Ենթադր. *Այս րոպեիս որ խոսում եմ, նա գնալիս կլինի (գնում կլինի). երեկ, ժամի 5-ին նա գնալիս (գնում) կլիներ (կարծված, հնարավոր եղելություն. կարող է, կարող էր գնալիս լինել)։ Գնում, կանգնում ենք... ամենքս մի ծառի տակ. ես ասում եմ՝ ա՛յ ծառ, քո անունդ Գրիգոր է. դու էլ, իհարկե, ասում կլինիս՝ Բադալ է (Պո.)։ Ընկերս պատմում էր, թե մի օր հիացմունքով էր մտածում այն ժամի ու վայրկյանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնվում կլիներ հայրենիքում (Մուր.)։*

2. Կատարված կերպի ենթադր. ներկան և անցյալը ցույց են տալիս, առաջինը՝ ներկայի նկատմամբ, իսկ երկրորդը մի անցյալ ժամանակակետի նկատմամբ անցած գործողություն, համապատասխան սահմ. եղանակի վաղակատար (հարակատար) և վաղակատար անցյալ ժամանակներին։ Օրինակ՝ Սահմ. *Նա գնացել է Երևան.—Նա գնացել էր Երևան։* Ենթադր. *Նա գնացած կլինի Երևան.—Նա գնացած կլիներ Երևան։—Անշուշտ լսած կլինիս (սահմ. լսել ես).—Ես գիտեմ, հաց էլ չես կերած լինիլ (սահմ. չես կերել)։—Քանի՞ անգամ դու ասած կլինիս այս խոսքը.—Այս տեղը մի հարյուր անգամ տեսած կլիներ (Պո.)։*

3. Կատարելի կերպի ենթադր. ներկան և անցյալը ցույց են տալիս, առաջինը՝ ներկայի նկատմամբ, իսկ երկրորդը մի անցյալ ժամանակակետի նկատմամբ դեռ կատարելի, ապառնի գործողություն, համապատասխան սահմ. եղանակի ապառնի և ապառնի անցյալ ժամանակներին։ Օրինակ՝ Սահմ. *Նա այժմ գնալու է Երևան.—Երեկ, ժամի 5-ին նա գնալու էր Երևան;* Ենթադր. *Նա այժմ Երևան գնալու կլինի.—Երեկ, ժամի 5-ին նա գնալու կլիներ Երևան։*

4. Պարզ կերպի ենթադր. ներկան և անցյալը ցույց են տալիս, առաջինը ներկայում, իսկ երկրորդը մի անցյալ ժամանակակետում ընկնող սոսկ գործողություն առանց տևականության, ինչպես անցյալ կատարյալը։ Օրինակ՝ Շուտ գնա, մայրդ հիմա տանը սպասում է քեզ (իրապես սպասում է հարաձիգ)։— Շուտ գնա՛, հիմա մայրդ տանը քեզ սպասելիս կլինի (ենթադրությամբ ասված, դարձյալ հարաձիգ. կարելի է սպասում է)։ Շուտ գնա՛, հիմա մայրդ տանը կսպասի քեզ (դարձյալ ենթադրությամբ ասված, միայն անհարաձիգ սոսկ գործողություն, իբրև կարող է սպասել)։ Երեկ այս ժամին նա տեղ էր հասնում (իրական, հարաձիգ). Երեկ այս ժամին նա տեղ հասնելիս կլիներ (ենթադրական, հարաձիգ). Երեկ այս ժամին նա տեղ կհասներ (ենթադրական, անհարաձիգ, իբրև կարելի է, կարող էր հասնել)։ Այժմ

այնտեղ շատ մարդ կա (իրական).—Այժմ այնտեղ շատ մարդ կլինի (կարող է լինել).—Մին էլ, կլիներ (կարող էր լինել) կես գիշեր, տեսավ՝ երկինքը բացվեց (սահմ. կես գիշեր էր).—Գյուղումն էլ որտեղ կորած, մոլորած երեխայք կան, այսօր ժամումը կլինի.—Որ տասը բարեկամ ունինք, մի քսան էլ թշնամի կունենանք.—Հոգեպահուստ բաներ կունենաս (սահմ. ունիս).—Ինչի՞ համար ես եկել այս կես գիշերին. ո՞վ գիտե ինչ փորացավ կունենաս. խեղճ մայրդ հիմա մեռավ. տեղդ էլ կգիտենա՞ (սահմ. ունիս... գիտե՞).—Ամեն բանում մեզ ոչով չի կարող հասնել. էջմիածնեցիք էլ մեզ չեն հասնիլ (որ կարելի է ասել՝ Ամեն բանում մեզ ոչով չի հասնիլ. էջմիածնեցիք էլ մեզ չեն կարող հասնել).—Այս ջուրը չի խմվիլ (կխմվի). Մեծ տո՜ւն, կտաներ (կտանի) երկու հարյուր հոգի (իբրև՝ կարող էր տանել, կարող է տանել).—Շատերը չէին վստահանալ (չեն վստահանալ) այդ հանդուգն քայլն անել.—Ավելի շուտ եմ եկել, քան թե դու կմտածեիր (կմտածես,—իբրև՝ կարող էիր, կարող ես մտածել).—Այսքան ավերածություններ կատարելուց հետո՝ բնական էր, որ կմեռներ ժողովրդի մեջ գիտակցության նշույլը, կջնջվեր ազգային ինքնաճանաչության պատիվը, հետզհետե կոչնչանային... Հարազատ եղբայրը սիրելի քրոջը գիր է սովորեցնում, կմտածեր ամեն օտար աչք.—Մինչ Ռուբենը գետնից կվերցներ քրդի սուրը, անօրենն արդեն մի ասպարեզ գյուղից հեռացել էր.—Կողոպտողները շատ հեռու էին, միայն կհասներ նրանց ետից հրացանի գնդակը.—Ինչպե՞ս կհանդգներ մի ստորին ոստիկան ինքնագլուխ այդքան մեծ պահանջներ անել,—ամեն գյուղում հո՛ կաշառքով չէր հաջողիլ գործին վերջ տալ. կպատահներ այնպիսի գյուղ, որ ուղղակի բառացի կկատարեր նրա պատվերը.—Կաներ անպատճառ.—Ի՞նչպես թե կաներ. երկաթն աչքս էր ցցվում (Պռ.). Այսպիսի տագնապալից հանգամանքներում ազգի «տոհմական ազնվական» ծագումը, եկեղեցու «առաքելական» լինելը անտարակույս ազգային հպարտություն կներշնչեին այդ աղդին պատկանող անհատներին. այդ պանծալի ծագման գիտությունը բարոյական ույժ կտար նրանց.—Ժամանակակից հեղինակն այսպիսի այլաբանություններ գրելուց կամաչեր (կամաչի), օտարազգի հեղինակըն այսպիսի հեքիաթների վրա կծիծաղեր (կծիծաղի), մինչ հայ ժողովուրդը, բնական ազգային պատվասիրությամբ, կարող էր տխուր իրականությունը զարդարել երևակայական փառասիրությամբ (Ստ. Մալխ.՝ Նրանք զբաղված էին ավելի արժանավոր, կամ ինչպես իրանք կասեին «ազնվական գործով».—Այժմ, ահա նա կհասներ փափագին (Մուր.).

Այս ննթադր. ներկան և անցյալն առանձնապես գործ են ածվում.

ա) Երկբայական ճարտասանական հարցումների մեջ, որոնց պատասխանը հակառակն է սպասվում. Օրինակ՝ Այդ ոտքի ամաններով վեր կելնվի՞ (Պար.). Ո՞վ կկասկածեր, որ այդպես չի լինիլ (իբրև ո՞վ կարող էր կասկածել, ոչ ոք չէր կասկածիլ, չէր կարող կասկածել). Ո՞վ չէր ուզիլ (ո՞վ չի ուզիլ), որ նա բախտավորվի.—Ե՞րբ կդիմաներ Մա-

րիամ խաթունը. կարո՞ղ էր համբերել Արփիկի մայրը (որ կարելի էր ասել՝ կարո՞ղ էր դիմանալ... կհամբերե՞ր).—Ո՞վ կհանդգնի հրապարակ գալ.—Ո՞վ կհամարձակվեր հարցնել.—Քո խոսած ժամանակ մենք ի՞նչպես կհամարձակվենք բերան բանալ.—Նա իր աշխատանքն ինչո՞ւ ձեռից կթողներ.—Այնքան աղմուկի միջին էլ ի՞նչպես կլսվեր նրա ձայնը (Պռ.)։ Ո՞վ կկարծեր, որ նա չի գալ։ Պրծիր, գնա՛ տես հացն ի՞նչ եղավ. այսքան էլ կուշացնե՞ն (Պռ.)։ Երկար չտևեց ճանապարհորդությունը, թեպետ կամսարյանը կցանկանար, որ մի քիչ երկարեր (Մուր.)։

բ) Քաղաքավարական մեղմ արտահայտության համար, կամ երբ համեստորեն մի կարծիք է հայտնվում։ Անցյալն ավելի ևս մեղմացնում է խոսքը՝ դարձնելով երկբայելի։ Օրինակ՝ Ասա, խնդրեմ, այս ի՞նչ կնշանակե.—Թե Աստված կսիրես, անուշ արա (Պռ.)։ Ասա թե քո Աստվածը կսիրես.—Էլ ի՞նչ ասել կուզե (Րաֆ.)։ Ինչպես կհիշեն ընթերցողները, որոշված էր մայիսի 10-ին կատարել... (Լր.)։ Ասա տեսնեմ, ինձնից այդ բանի համար ի՞նչ ես ուզում.—Քեզնից կուզեմ (կուզեի) ամենից առաջ... Աստուծուց կխնդրեմ (կխնդրեի) որ... Ով մեր թագավորին կսիրի, նրա ողջության համար կեցցե կանչի։ Կցանկանայի ձեզ ասել։ Նա՛ ևս վայելե այն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կցանկանայիր վայելել (Մուր.)։ Կնշանակե, որ այդպիսի պետության... վախճանը մոտ է.—Ես կավելացնեմ, որ... (Պռ.)։ Երեսը մի կողմը ծռած՝ շարժեց գլուխը, որ կնշանակեր թե տանը չէ.—Ձեր պարտքը այնքան մեծ արժեք ոնի իմ աչքում, որ ես ժամ առաջ կկամենայի գանձել այն (Մուր.)։ Այդ կարծիքի դեմ մենք կնկատենք, որ ընդհակառակն ավելի վայելուչ և բնական է... (Ստ. Մալխ.)։ Ապրի իմ Սոսը, տես է՛, կասես առյուծ է. բանը ձեռին դողում է. ի՞նչ կասեմ էդպես տղային (Պռ.)։

Ծան. *ենթադր. կասես ձևն ստացել է կարծես բառի նշանակություն, իսկ կլինի՛ ճանաչ նշանակում է կարելի է, գուցե։ Օրինակ՝ կասես ձեռները փլավ են ուտում.— Կասես գերեզմանից դուրս քաշած լինի.— Կլինի որ Վարդիքերին ուզում է Գարեգնի համար (Պռ.)։*

ԱՊԱՌՆԻ ԵՎ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԿՑՏԵՐ

238. *Ապառնի ժամանակի նկատմամբ ենթադրական եղանակն ևս, ինչպես և սահմանականը (տե՛ս § 226), չունի առանձին խոնարհման ձևեր. այդ հարաբերություններն արտահայտվում են ներկայի և պարզ կերպի անցյալի հարաբերության ձևերով, որոնք սահմ. եղանակի ձևերից շատ ավելի հաճախ իբրև ապառնի են գործածվում, քանի որ ամեն ապագայում ընկնող գործողություն ըստ ինքյան անստույգ է, ուստի և ավելի կարելիությամբ սպասելի։ Այսպես գործ են ածվում իբրև.*

1. Կատարվող կերպ, օրինակ՝ Վաղը, ժամի 5-ին նա դեռ գնալիս կլինի.

2. Կատարված կերպ, օրինակ՝ Վաղը, ժամի 5-ին արդեն գնացած կլինի.

3. Կատարելի կերպ, օրինակ՝ Վաղը, ժամի 5-ին նա դեռ նոր գընալու կլինի.

4. Պարզ կերպ, օրինակ՝ Նա վաղը, ժամի 5-ին կգնա: *Ես վաղը. ժամի 5-ին ճանապարհ կընկնեի, եթե կարողանայի:*

284. *Իբրև ապառնի առնված պարզ կերպի ներկայի և անցյալի համար առանձնապես պիտի դիտել նրանց պայմանական, իսկապես պայմանավորված գործողությունը, որով մի խոսք մի ուրիշ խոսքով պայմանի տակ դրվելով՝ դառնում է ենթադրված պայմանի հետևությունը, և երկուսը միասին կազմում են մի ենթադրական զոդված:*

1. Եթե այդ կասես, կսխալվես.—*Եթե այդ* ասես, կսխալվես:— *Պայմանն և հետևությունն այստեղ պատկերացվում են իբրև կարելի, հնարավոր, միանգամայն և սպասելի, որովհետև պայմանն այնպես է մեջ բերվում, որ նրա կատարվելն ապագայում ընկնելով, պարագանեբի հիման վրա, սպասել կարելի է: Իբրև ապառնի գործածված ներկան այս դեպքում ցույց է տալիս պայմանավորված կարելիություն. պայմանն ինքն ևս իբրև ենթադրություն կարող է ենթադրականով դրվել, բայց սովորաբար ըղձականով է ասվում: Ենթադրականով դրված պայմանն ավելի սպասելիության իմաստ է տալիս խոսքին: Օրինակ՝ Եթե* կկամենամ, *երկու ժամի մեջ բոլորիդ ինձ նման որսկաններ կշինեմ (խոսողն սպասում է, որ կկամենան).—Եթե իմ ձեզ ավանդած դասը դուք* կտաք *ձեր եղբայրներին, ոչ թե հինգը, տասն անգամ հինգն էլ չեն վստահանալ ձեր գյուղին մոտ գալ (Պռ.): Մի տան շերեփ որ երկու տանտիկնոջ ձեռի լինի, տունը շուտ բաժանք կլինի (Ա.): Գողը որ տնից լինի, եզն երդիկից կհանի (Ա.):*

2. Եթե նա երեկ ժամանակ ուներ, գիրք կկարդար: *Այստեղ պայմանն և հետևությունը պատկերացվում են իբրև անիրական, և ոչ սպասելի, լոկ ցանկացած մի ենթադրություն, քանի որ մի անցյալ ժամանակի համար այլևս կարելի չէ սպասել, որ մի չկատարված պայման իրագործվի. ուստի պայմանը դրվում է ըղձական և սովորաբար կատարված կերպի անցյալով՝ Եթե նա ժամանակ* ուներ, գիրքը կկարդար *(բայց որովհետև ժամանակ չուներ, չկարդաց): Եթե յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ եղածն էլ կմատնվեր կորստյան (Մուր.):*

3. Եթե կարողանայի, *ես վաղը, ժամի 5-ին ճանապարհ* կընկնեի: *—Այստեղ պայմանն և հետևությունը պատկերացվում են իբրև հնարավոր, բայց ոչ սպասելի: Դա լոկ ցանկացած ենթադրություն է ապագայի համար. խոսողն առաջուց գիտե, որ դժվար թե պայմանը իրագործվի ապագայում. բայց միանգամայն և նա ցանկանում է, որ իրագործվի. ո՞վ գիտե, գուցե հանկարծ իրագործվի: Այս պատճառով պայմանը դրվում է ըղձական եղանակով, բայց անցյալ ժամանակով, ինչ-*

պես մի անիրական ենթադրություն։ Նույն ձևով կազմվում են և այնպիսի ենթադրությամբ ասված խոսքերը, որոնց իրագործումն անհնարին է, և որոնք լոկ անիրական ցանկություն են ցույց տալիս ապագայի համար. օրինակ՝ Թե իմ ալևոր հերքս սևնային, ույժս ինձ հետ գար, կըտրիճ դառնայի... ես դաշտ կերթայի, դաշտ Ավարայրի (Գ.-Ք)։

4. Պայմանը կարող է արտահայտվել նաև մի բառով կամ խոսքի ընդհանուր նշանակությամբ։ Օրինակ՝ Առանց մի բանուկ զորության, որ կամքից է առաջ գալիս, կյանքը մի աննպատակ և անորոշ բան կլիներ (կլինի). Նա կնմաներ (կնմանի) կանգնած ջրի և չէր դառնալ (չի դառնալ) մի հոսանք, որ շարժում է ամբողջ գավառի մեքենաները։ Առանց նրա հրամանին քարը քարի վրա չէր դրվիլ (չի դրվիլ), տղա աղջիկ չէր նշանվիլ (չի նշանվիլ). առանց նրա կամքին ոչ նախարարած կըվարձվեր (կվարձվի), ոչ ռես ու գզիր կկարգվեին (կկարգվին).—Այդքան անեծքին ու հայհոյանքին ես եմ որ դիմանում եմ, ապառաժ բըրը կպատռվեր ու չէր տանիլ (Պռ.)։

285. Պարզ կերպի ենթադրական ներկան և անցյալը մենակ, առանց պայմանի իբրև ապառնի գործածված՝ նույն կարելիական նշանակությունն ունին, ինչ որ պայմանական գործածության մեջ։ Օրինակ՝ «Վաղը կերթանք զբոսնելու» խոսքը նույնպես ցույց է տալիս մի ապագա հնարավոր գործողություն, ինչպես և «Եթե լավ եղանակ լինի, վաղը կերթանք զբոսնելու». տարբերությունն այն է միայն, որ մինչ վերջինիս իրականացման հնարավորությունը կախված է խոսքի մեջ պարզ արտահայտված մի պայմանից, առաջինի իրականացման համար առանձին որոշ պայման չի դրված. բայց դա ևս իբրև մի ապագա գործողություն անստույգ և հնարավոր է լոկ և կախված է հանգամանքներից, որոնք կարող են արգելք լինել իրականացմանը (տե՛ս § 226)։

1. Պարզ ներկան իբրև **ապառնի** ցույց է տալիս ներկա ժամանակակետի նկատմամբ մի ապագա հնարավոր գործողություն, որ գուցե, կարելի է կամ սպասվում է, որ կատարվի. իսկ պարզ անցյալն իբրև **ապառնի անցյալ**՝ ցույց է տալիս նույնպիսի ապագա գործողություն՝ միայն անցյալ ժամանակակետի նկատմամբ։ Օրինակ՝ **Սահմ.** Այսօր մեզ մոտ հյուրեր են գալու (իրապես, մտադիր են գալու)։ **Ենթ.** Այսօր մեզ մոտ հյուրեր կգան (կարող են գալ, կարելի է գան)։ **Սահմ.** Ես վաղը գնալու եմ նրա մոտ (իրապես, մտադիր եմ գնալու)։ **Ենթ.** Ես վաղը կգնամ նրա մոտ (կարելի է գնամ)։—Ես գիտեմ, որ այսօր կպրծնենք բանից.—Տեսնեմ՝ երեսս կբռնի՞, որ ասեմ.—Այդ այն օրը կվերջանա, երբ որ գյուղերը վարժարաններով կլցվեն և գյուղացին կճանաչի իր պարտականությունը.—Այդպես անելով ամենքի աչքից էլ կընկնես։—Բռնիր, չե՞ս տեսնում, որ ուշագնաց մարում է, հիմի կընկնի.—Այդ բանը վերջը կպարզվի (Պռ.)։ Ճանապարհը վատ է, դգույշ գնա՛, կընկնես (գուցե, կարելի է ընկնես)։ Մի՛ հուսար, թե ես կհետաձրգեմ իմ գործը.—Ահա, ուր է՝ մի հրճանք կխուժե նավակի խորը և

լցնելով այն՝ ուղևորների հետ միասին կիջեցնե հատակը (Մուր.)։ Ամեն մարդ ընդհանուր խռովության մեջ սպասում էր մի վճռական րոպեի, երբ թշնամին հեղեղի նման ներս կթափվեր և սուրը ձեռքում կճաճդիպեին իրենց պատվավոր վախճանին (Րաֆ.)։ Հեռացավ, խոստանալով դարձյալ գալ «աղայի» կոչին, երբ սա կհրամայե (Մուր.)։

2. Պարզ ներկան իբրև ապառնի ցույց է տալիս ներկայի նրկատմամբ մի ապագա հնարավոր գործողություն, որ մարդ հոժարակամ է, պատրաստ է անելու. իսկ պարզ անցյալն առնվելով իբրև ապառնի անցյալ ցույց է տալիս մի նույնպիսի ապագա գործողություն մի անցյալ ժամանակակետի նկատմամբ։ Օրինակ՝ Սանճ. փողն աչքներիս վրա, տալու եմ. բայց մեկել բաները չեմ տալու (ստույգ, իրական հաստատություն); Ենթ. փողն աչքներիս վրա կրտամ, բայց մեկել բաները չեմ տալ (Պռ.—մեղմ հաստատություն, հոժարություն կամ պատրաստակամություն տալու չտալու)։ Նա ինձ մանիշակ ուղարկեց, ես էլ տես ի՞նչ կուղարկեմ.—Նրա ազիզ խաթեր համար, թեկուզ քարափիցն էլ վայր կրնկկնեմ, ջուրն էլ կրնկկնեմ, հուրն էլ. նրա հրամանը կատարելու համար վեր կառնեմ ամեն թուք ու մուր էլ.—Սա իմ հետքը պահելով եկել է քամակիցս. ես դրա կարմիրը հիմա կկապեմ.—Ես էլ կգամ, ձեր սիրած հեքիաթներն ու մեր գյուղի հին հին պատմություննները կանեմ (Պռ.)։ Կա՛մ կգտնեմ ճանապարհը և կամ ինքս բաց կանեմ (Մուր.)։ Երեկ ես կգայի ձեզ մոտ, բայց անսպասելի հանգամանքներ խանգարեցին։ Մերունի վանահայրը հոգնած զգալով իրեն՝ խնդրեց երիտասարդին մնացած տեղերը շրջել լուսարարի հետ, մինչև որ ինքը հոգնածությունն առնելով՝ կգար յուր հետ միասին ճաշելու (Մուր.)։

3. Պարզ ներկան իբրև ապառնի ցույց է տալիս մի ապագա հնարավոր, սպասելի համարված գործողություն, բայց ոչ ներկա ժամանակակետի նկատմամբ, այլ մի անցյալ ժամանակակետի։ Այս կիրառության մեջ իբրև ապառնի գործածված պարզ ներկան փոխանակում է պարզ անցյալին. խոսողը մտքում ունի ոչ թե ներկա ժամանակակետը, այլ մի անցյալ ժամանակակետ, որի նկատմամբ առնվում է մի ապառնի գործողություն, ուստի փոխանակ անցյալի սովորաբար գործ է ածում ապառնին։ Օրինակ՝ Մյուս օրը քույրն ու եղբայրն առավոտյան ժամ չեկան։ Աբրահամ աղան կարծեց, թե ճաշին կգան (փոխանակ՝ կգային). ճաշին էլ չեկան։ Կարծեց՝ երեկոյան կգան, երեկոյան էլ չեկան.—Ես կարծում էի թե մայրս կբարկանա (Պռ.—փոխանակ՝ կբարկանար)։ Ես այն պատճառով չասացի քեզ, որ կարծում էի թե կգնաս, կհայտնես նրան (փոխ. կգնայիր, կհայտնեիր)։

4. Պարզ ներկայի 2-րդ դեմքերն, առանձին շեշտով, ստանում են ապառնի հրամայականի բնավորություն, բայց ոչ այնքան հրաման են ցույց տալիս, որքան փափագ, ցանկություն, կամ թե հրամանը տրվում է իբրև սպասած, ցանկացած մի բան։ Օրինակ՝ Դու կերթա՛ս, կասե՛ս

նրան։ Ո՛չ, այդ չի՛ լինել (Մուր.)—Համապատասխան ձևով անցյալը ցույց է տալիս մի անիրական ցանկություն անցյալի համար, ինչ որ ենթադրությամբ ցանկացվում, սպասվում է, որ անցյալում լիներ՝ հակառակ կատարվածին։ Օրինակ՝ Որ չորն էր ուզում, չորը կտայիր նրան, էլի՛. ինչո՞ւ բացը տվիր։—Դուք էլ կգնայիք, ինչո՞ւ չգնացիք։ Թե մի կլսեի՛... Որ տանձի և ո՞ր աչի մասին է խոսքդ։—Ահա՛ այս սիրուն հովանոցի, որ արժանի էր գեղանի մի իշխանուհու սեփականություն լինելու, բայց որ վիճակվել է մի ապուշ գյուղացու։—Մի գեղանի իշխանուհո՞ւ... և անշուշտ այնպիսի մի իշխանուհու, որ լիներ նորատի... և տեսնեիր, որ այս սոսինների հովանիում, շքեղ գահավորակի վրա հանգստանում է... Դու, իհարկե, իսկույն հիացմունքից այլայլված, ետ կմաշվեիր այս բնի եռևը և գողունի հայացքով դիտելով գեղեցկուհուն՝ քեզ ու քեզ կասեիր... կչոմեիր և կաղոթեիր։ Քո այդ վարմունքը, իհարկե, կզարմացներ քո շանը և նա ... կսկսեր հաչել։ Այդ անսպաս ձայնից կզարթներ գեղեցկուհին և այլն (Մուր.)։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

286. *ենթադրական պարզ ներկան և անցյալը գործ են ածվում նույն երկրորդական բնավորությամբ, ինչ որ սահմ. ներկան և անկատար անցյալը (տե՛ս § 227). միայն պիտի նկատել, որ ենթադր. ներկան և անցյալը կարելի չէ գործածել իբրև «մշտակատար ներկա», երբ պետք է հայտնել բացարձակ, իրական ճշմարտություններ, որ կասկածով, ենթադրությամբ ու կարծիքով ասել չի լինիլ. օրինակ՝ «Ձին չորքոտանի է» խոսքը կարելի չէ ասել՝ Ձին չորքոտանի կլինի. իսկ իբրև «առածական ներկա», իբրև սովորության ու կրկնության ներկա և անցյալ, և նույնիսկ իբրև պատմական ներկա շատ սովորական է ենթ. ներկայի և անցյալի դործածությունը։*

1. Ենթադրականի իբրև «առածական ներկա» գործածությունը խիստ սիրված է մանավանդ առածներում և առածանման ասացվածներում, փոխանակ սահմ. ներկայի և անցյալի, այն տարբերությամբ, որ մինչև սահմ. անցյալով հայտնվում է անցյալում կատարված մի դեպք, լսողին թողնելով դրանից մի ընդհանուր ճշմարտություն հանել (տե՛ս § 227. 2), սահմ. ներկայով փորձից հանված ճշմարտությունն է հայտնվում իբրև իրական, ստույգ դատողություն. իսկ ենթադրական ներկայով նույն ճշմարտությունն է հայտնվում, միայն ոչ իրական, բացարձակ ձևով, այլ ենթադրելով, կարելի համարելով, իբրև մեղմ հաստատություն, կարծիք։ Օրինակ՝ **Սահմ.** *Շատ քիչ է պատահում աշխարհում այսպիսի բան։* **Ենթ.** *Շատ քիչ կպատահի (կարող է պատահել) աշխարհում այսպիսի բան։ Նույն նշանակությունը մնում է և անցյալի համար, ինչպես՝ Շատ քիչ կպատահեր այսպիսի բան։—Ջու-*

կը ծովումը կմեծանա (Ա.)։ Ճակատի գրածը չի ջնջվիլ (չի կարող ջնջվել).—Աշտարակ արեը մայր մտավ թե չէ, էլ դուռը չի մնալ բաց.—Կնիկ է. շուտ կխաբվի.—Ա՛խ, ազատությանը բանի չի հասնիլ (Պ.)։ Շիտակ խոսքը հանսթով կասեն։ Այդքան մարդու ցեխը չեն կոխիլ ու հանիլ (Պ.)։ Մարդ մարդի ցավ չի գիտենալ, կես գիշերին ժամ կկանչի (Ա.)։

Այսպես հաճախ երկբայական ճարտասանական հարցով. օրինակ՝ Ուղտը գդալով կշրվի՞ (կարելի՞ է շրել, կարո՞ղ է շրվել)։ Այսպիսի բան կասե՞ն, որ դու ասում ես։ Հարսն էլ կխոսի՞, որ դու խոսում ես։ Մարդ իր խոսքը գետինը կգցի՞ (Պ.)։ Բա ուսումնականն առանց գրերի ման կգա՞ (Մուր.)։ Տե՛ս և § 232. 4. ա։

2. Ենթադրականն իբրև սովորության ներկա և անցյալ մեղմ հաստատությամբ հայտնում է սովորաբար կատարված մի եղելություն, կամ մի մնայուն սովորություն, ունակություն՝ սովոր է, գիտե, կարող է բառերի նշանակությամբ։ Օրինակ՝ Իմ մայրս լավ լավ բաներ կեփի, լավ լավ դաթեք կթխի, հենց հիմի էլ տանը գաթա է թխում (իբրև՝ իմ մայրս լավ բաներ եփել, լավ գաթեք թխել գիտե, սովոր է, կարող է այդպես անել. թխող է. եփող է)։ Ես գիտեի որ նա բանը ետ չի գցիլ (ետ գցել չգիտե, սովոր չէ ետ գցելու)։ Մեր գեղի չահել տղայքը մի ևս փող ձեռներն ընկնելիս՝ հազար ջուլ ու փալաս կփաթաթեն, սրբի պես կպաշտեն.—Էշմիածնեցիք էլ մեզ չեն հասնիլ. իրանք մինչև վերջը պարապ սարապ ման կգան. փողով մշակ կբռնեն, այգիներում կբանեցնեն, չեն գնալ թե վրան կանգնեն, մտիկ տան. մի այգեպանի ապով կթողնեն, իրենց լավ լավ մլքերը խարաբա կթողնեն, էլ ափսոս չեն գալ (Պ.)։ Տեր Սիմոնը մի առաքինի, մի աստվածավախ, մի բարի մարդ էր։ Երբեք բարձր չէր խոսիլ, երբեք գյուղական գործերին չէր խառնվիլ.—Նա միշտ լուռ էր, միշտ լսում էր, շատ շատ՝ մի բառով յուր կարծիքը կհայտներ... Դրան ի՞նչ ես հարցնում, չգիտե՞ս, որ դա ուրբաթ ուրբաթ կխոսի... Այս նկատողության դեմ Սամփսոնը քթի տակին կժպտար ու կասեր, որ ուղիղ է.—Հուդոն էլ պատասխանի չսպասեց. Նա լեղապատառ վազեց ետևից՝ ինչպես տիրոջը կորցրած շուն, որ հոտը կառնի ու առանց աչ ու ձախ նայելու մին կվազի (Պ.)։

Ծան. Այս գործողությունն իր ենթադրական բնավորությունն ստանում է առանձնապես այն ժամանակ, երբ հանդիպադրվում է սահմանականին. օրինակ հետևյալ տեսակի հարց ու պատասխանների մեջ՝ Հին եգիպտացիք իրենց մեռելները զմռսում էին, իսկ հին հույներն այրում էին, հապա հին եթովպացի՞ք ինչ էին անում.— Նրանք էլ, երևի կամ կզմռսեին կամ կայրեին։

3. Ենթադրականն իբրև կրկնության ներկա և անցյալ ցույց է տալիս մեղմ հաստատությամբ, կարծիքով ասած, կրկնված եղելություն։ Օրինակ՝ Օրենը քանի՞ անգամ է նա այստեղով գնում, գալիս.—Օրենը մի հինգ անգամ կգնա, կգա։ Նա օրական մի հիսուն ուրբյու առևտուր

կանի։ Ամեն երկրում, ասում են, ամեն կիրակի մեծ ու պստիկ ժամ կերթան (մեղմ հաստատություն), նրանցում ամոթ չկա. հենց մեզ համա՞ր է, որ ջահիլ աղջիկներն ու պստիկ հարսները տարին երեք անգամ են ժամ գնում (իրական, ստույգ հաստատություն).—Նրանք քանց Գևորգենք հարուստ չլինի՞ն, որ, ասում էին, օրը հինգ խոցի կհարեին, քառասուն գոմեշ կկթեին.—Այն ժամանակ երբ ուրիշ գյուղերում օր չէր անցնում, որ գողություն, սպանություն և ավարառություն չկատարվեր... այս գյուղի մեջ ամիսներ կգլուվեին և բացի արևից, անձրևից ու ձյունից՝ ոչ ոք չէր թույլ տալ իրան չար աչքով ներս գալ (Պռ.)։ Արտեմ Սերգեյիչն յուր ընտանիքի մեջ էլ պատվական մարդ է. օրը հինգ անգամ տուն կգա... դեռ պատշգամբը չբարձրացած՝ ձայն կտա... Տարին մի քանի անգամ ծերունին երկու երեք օրով կհեռանար յուր կացարանից։ Այդ այն օրերն էին, որ մի մեծավոր երեք չորս սպասավորներով կգար, կիջներ դարվազի առաջին և ծառաներին կհրամայեր... (Պռ.)։ Վանքի վանահայր էր. շուտ շուտ կգար մեր տուն. կնստինք (կնստեինք) էս ծառերի տակ, զրից կանինք (կանեինք)։ Ողորմած հոգի քո հերն էլ շատ կսիրեր նրան (Մուր.)։ Բայց այդպես չէր հանգուցյալ հայրը։ Ամեն տարի, աշնան ժամանակը, կգար։ Մենք առաջուց կլվանայինք, կմաքրեինք ոչխարները և սպիտակ ձյունափայլ հոտերը կհանեինք նրա առաջ։ Նա կնայեր, փառք կտար աստուծուն։ Այս տաղավարի մեջ շատ անգամ կերակրել եմ նրան։ Կնստեր և մեծ բավականությամբ կուտեր հովվի աղքատիկ ճաշը... Հանգուցյալ նահապետի մահից հետո Տիկինն է կառավարում բոլոր գործերը։ Կգա, կտեսնե, կուրախանա և ամեն բանի մասին հարց ու փորձ կանե։ Նա ոչ միայն ճանաչում է յուր բոլոր հովիվներին անուններով և տեղերով, այլև գիտե թե որը որքան է մեծացել (Րաֆ.)։ Ես յոթը տարեն կնիկ էի, արևի երես չէի տեսած. դեռ լույսը բացված չէր լինիլ՝ կերթայի, կուժս կլցնեի, տներս կսրբոտեի, աղբը կտանեի, դեն կձգեի, ինչ էլ որ մնար դրսի բան՝ իրիկունը որ արևը մտներ, այն ժամանակ կանեի։ Ամառը աքլորը կկանչեր, տեղիցս վեր կկենայի, ամեն բանից կպրծնեի։ Աղոթարանը դեռ չծագած՝ ողորմածիկ սկեսուրս վեր կկենար, կգցեր քամակը, կերթար այգին. թե հանկարծ մարդ պատահեր՝—սև սրտի աղջիկ, կասեր, կպիր պատիցը. ես էլ պատի տակին կուչ կգայի։ Աստված մի՛ արասցե, որ քավորանցս ծառան էլ պատահեր, սկեսուրս կասեր՝ աշխարհքի միջին թուք եղանք... Հիմի ոչ այն կա, ոչ այն։ Հարսները շատ են քրնում (իրական, ստույգ հաստատություն), քան սկեսուրը, օրը ճաշին նոր մոխրատեն ուսում են, աղբը տանում, կուժն առնում են, գնում ջուրը։ Մինչև օրը ճաշ չդառնա, այգին չեն գնում. ճանապարհին թեկուզ քավորն էլ պատահի, բանի տեղ չեն դնում (Պռ.)։

Նաե. Երբեմն սահմ. ներկայով պատմվածքի մեջ ևս կրկնված եղելությունները (տե՛ս § 230. ծան.), ժողովրդական ձևով, պատմվում են ենթադր. պարզ անցյալով։ Օրինակ՝ Հին ժամանակին լինում է չի լինում մի չոփչի։ Էս չոփչին հենց ինքն է լինում,

մի կնիկ... Այս մեր չուխու բան ու փեշակը հենց այս կր։ Աստուծու իրան օրը, գեռ լույս ու մութր չրաժանված, վեր կկենար, պարանը վեր կուներ, կերթար հանդը՝ չոփ հավաքելու, իրիկունը կգար տուն... Օրեն մի օրը այս չուխին էլի վեր է կենում, պարանը գցում ուսը, երթում հանդր։ Ճանապարհին սրան մի օձ է պատահում (Նավ., Հեք.)։

4. Ժողովրդական լեզվի մեջ սահմանական ներկայի տեղ հեքաթների, զրույցների և այլն մեջ իբրև պատմական ներկա համաձա գործ է ածվում ենթադրական ներկան, որ այս դեպքում առնվում է իբրև սահմանական։ Ենթադր. ներկայով դրվում է միայն, ինչ որ պատմվածքի մեջ առաջխաղացություն է բերում. իսկ ինչ որ հարաձիգ կամ մշտական ներկայի իմաստ ունի, մնում է սահմանական ներկա։ Օրինակ՝ Մի օր Շամբում ամպ կլինի, կմթնի, էլ արև չի երևալ։ Շամբեցիք կասեն՝ Արևը մեղնից խռովել է, գնանք, մեն գանք, հաշտվենք։ Կգնան սար ու ձոր ման կգան, չեն գտնիլ, ետի վերջը ետ դառնալիս կտեսնեն մի ծակում մի բան պլռտում է։ Կասեն՝ այս է, արևը գտել ենք (Նավ. Հեք.)։

287. ***Ենթադրական եղանակի համար չկան առանձին հարաբերական ժամանակներ. այս նշանակությամբ գործ են ածվում բաղադրյալ ժամանակներ. օրինակ՝ Մինչև որ նա ինձ մոտ գա, ես արդեն գրնալիս կլինիմ, գնացած կլինիմ, գնալու կլինիմ։—Ո՞ր համար ավելի ձեռնտու է այս, դու ավելի շուտով պարտքդ կատարած և վերադարձած կլինիս.—Հյուրասիրությանդ պարտքը, ծերունի հայր, իսպառ կատարած կլինիս, եթե շնորհ անես ինձ քո կյանքի պատմության հետ ծանոթացնել.—Դեռ լույսը բացված չէր լինիլ՝ կերթայի կուժս կլցնեի (Պռ.)։***

Սան. Այս հարաբերությունը պահվում է և այն ժամանակ, երբ ենթադր. ներկան գործ է ածվում իրև պատմական ժամանակ։ Օրինակ՝ Կլինի չի լինի մի թագավոր։ Նա լավ բաղքադրություն կգիտենա, որ յուր կնոջ խորհրդով սովորած կլինի։ Թագավորը շատ անգամ աղքատի շորեր կհագնի, ման կգա, որ տեսնի թե իր վրա ինչ են խոսում. մի օր էլ կգնա, կընկնի շար մարդկանց ճանկ։ Այդ ժամանակ մի մեծավոր մեռ գալիս կլինի. չարագործները թագավորին կծախեն այդ մեծավորին և այլն։

3. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

288. ***Հարկադրական եղանակը ցույց է տալիս մի եղելություն, որ խոսողը մտածում է ոչ իբրև իրական և ոչ իբրև կարելի կամ հնարավոր, այլ իբրև անհրաժեշտ հարկ ու պետք, պարտք։ Դա անհրաժեշտության եղանակն է։ Օրինակ՝ Ա ռ ա ւ մ. Նա այժմ գնում է (իրական). Ե ն թ ա դ ր. Նա այժմ գնալիս կլինի (հնարավոր). Հ ա ր կ ա դ ր. Նա այժմ գնալիս պիտի լինի,— այսինքն՝ նա ստիպված է, պարտավոր է, պարտական է գնալիս լինել, կամ մենք անհրաժեշտորեն այնպես ենք դատում, որ նա գնալիս լինի։***

Հարկադրությունը կարող է լինել՝ կա՛մ մի ստիպմունք, անհրաժեշտ հարկ ու պետք աշխարհի օրենքից, դիրքից, սովորությունից, հան-

գամանքներից ու իրերի հատուկ բնությունից, կա՛մ մի պահանջ բարոյական օրենքից՝ իբրև պարտավորություն, բարոյական պարտականություն, կա՛մ մի տրամաբանական անհրաժեշտություն, որ հիմնվում է մեր մտածողության օրենքների վրա, որով իրերն այլ կերպ ըմբռնել չենք կարող, քան ինչպես որ մենք դատում, եզրակացնում ենք,— և կա՛մ, վերջապես, մի հաստատ վճիռ, անխուսափելի ճակատագիր մի բան անելու համար։ Օրինակ՝ էգուց ծառզարդար է. ուր պիտի orհնեն (Պո.)։ Գարնանը ծառերը պիտի ծաղկեն։ Ինձ մի վայրկյան այնպես թվաց, թե նա իրոք չի մեռել... և պիտի խոսի ինձ հետ (Մուր.)։ Ամեն մարդ պիտի մեռնի։—Մենք պիտի միմյանց սիրենք։ Մարդու սի՛րտը պիտի շիտակ լինի։ Մենք պիտի պատվենք մեր հորն ու մորը։ Մարդ պիտի Աստուծուն ավելի լսի, քան մարդկանց։—Այս գիշեր շատ խորը քնած պիտի լինիս, որ փոթորիկը չես իմացել։ Նա իմ նամակը ստացած չպիտի լինի, որ մինչև հիմա չի պատասխանում։ Ամպերը... տարածվում են արդեն մեր գլխ վրա.—Անձրև պիտի ուտենք, նկատեց առաջնորդս (Մուր.)։—Ինչ ուզում է լինի, ես պիտի այս խոսքն ասեմ նրան։ Ես պիտի ասածս անեմ, թե չէ՝ սև հագնեմ (Պո.)։ Այսպես է հրամայում ալլահը. ես ընտրեցի իմ տունը. Պեյթամը պետք է մշտնջենական շեյխության օջախ լինի, իմ սիրելի ժողովրդի հոգևոր պետը Պեյթամից պետք է իմ պատգամները իրանց հաղորդի (Պո.)։ Այժմ ամեն հույս կորել, անհետացել էր. Գարեգինն այլևս իմը չէր. նրան այլևս չպիտի ժառանգեի (Մուր.)։

289. Հարկադրական եղանակն ունի այն բոլոր ժամանակներն, ինչ որ ենթադրականը, այն տարբերությամբ, որ ենթադրականի կը եղանակիչի տեղ դրվում է պիտի կամ պետք է եղանակիչը։ Կիրառությամբ ես հարկադրականը համապատասխան է ենթադրականին և ունի ենթադրականի գրեթե բոլոր գործածությունները (բացի իբրև պատմական ներկա գործածությունից, տե՛ս § 236. 4), միայն անհրաժեշտական նշանակությամբ։

1. Կատարվող կերպի՝ 1) Ներկա՝ Նա այժմ տեղ հասնելիս պիտի լինի։ 2) Անցյալ՝ Նա երեկ, ժամի 5-ին տեղ հասնելիս պիտի լիներ։ Կցեց ընդհատված խոսակցությունը, որի նյութն յուր կարծիքով պետք է ներառում լիներ Կամսարյանին (Մուր.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ Նա վաղն այս ժամանակ տեղ հասնելիս պիտի լինի։

2. Կատարված կերպի՝ 1) Ներկա՝ Նա այժմ տեղ հասած պիտի լինի։ 2) Անցյալ՝ Նա երեկ, ժամի 5-ին տեղ հասած պիտ լիներ։ Սակայն հետո իմացա, որ դրանք ծերունու սիրտը խոցած պիտի լինեին (Մուր.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ Նա վաղն այս ժամանակ տեղ հասած պիտի լինի։

3. Կատարելի կերպի ժամանակները՝ գնալու պիտի լինի, գնալու պիտի լիներ՝ հազվադեպ են պատահում միայն խոսակցական լեզվի մեջ։

4. Պարզ կերպի՝ 1) Ներկա՝ Նա այժմ տանը պիտի լինի (սահմ.՝ Նա այժմ տանն է)։ 2) Անցյալ՝ Նա երեկ, ժամի 5-ին տանը պիտի լիներ, տեղ պիտի հասներ։ Նրա մոտ կար... մի ուրիշ շինություն, որ անշուշտ ուսումնարանը պիտի լիներ (Մուր.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ Նա վաղն այս ժամանակ տանը պիտի լինի,—տեղ պիտի հասնի։ Նրանցից ո՞րը ի՞նչպես պիտի գործե կյանքի ասպարեզը մտնելուց հետո (Մուր.)։

240. *Պարզ կերպի հարկադրական ներկան իր կազմությամբ՝* **պիտի գնա, պետք է գնա՝** *ցույց է տալիս մի ներկա պետք, անհրաժեշտ հարկ ապագայում մի գործողություն կատարելու, իբրև պիտի որ գնա, պետք է որ գնա, ինչպես և գործ է ածվում, երբ շեշտվում է հարկավոր, պետք լինելը, հարկ է, արժան է, անհրաժեշտ է իմաստով. օրինակ՝ Պիտի որ, ինչ հունար ունենա՝ չպանի.—Պիտի որ այս խաչը մինդ հանեք.—Պետք է, որ մի քանի բարեկամներ օգնական լինիք (Պռ.)։ Պետք է որ ուշադրություն և փույթ նվիրենք մեր ներկա և անցյալ կյանքին (Սրվանձտ.)։ Նրանք յուր մասին պետք է որ աննպաստ բաներ խոսած լինին կամսարյանի առաջ (Մուր.)։—Սակայն այս ժամանակը իր եղանակիչ* **պիտի, պետք է** *բառերի ներկա բնավորությունը պահում է միայն հավելավոր բայերի համար՝ պիտի լինի, պիտի ունենա, պիտի գիտենա, և մեկ էլ երբ գործ է ածվում երկրորդական բնավորության իբրև առածական կամ կրկնության ներկա. օրինակ՝ Ուղտապանի բարեկամը պիտի բարձր դուռ ունենա (Ա.)։ Ազնիվ մարդը պիտի իր խոսքը պահի (իբրև՝ պարտավոր է իր խոսքը պահել)։ Մարդ պիտի խրղճմըտանքով բան բռնի։—Մնացած դեպքերում հարկադրական ներկան սովորաբար առնվում է իբրև ապառնի, քանի որ ցույց է տալիս մի ներկա պետք, անհրաժեշտություն ապագայում ընկնող գործողության. իսկ անցյալը ցույց է տալիս մի անցյալում ընկնող անհրաժեշտ գործողություն։ Օրինակ՝ Մի՞թե այսքան վաղ պիտի սկսեմ ժամերգությունը, հարցրի ես։—Ո՛չ, դեռ սաղմոս պիտի ֆաղեմ, դուք կարող եք կես ժամով ուշ գալ (Մուր.)։ Սկսել էր օրը, Ներսիսյան դպրոցը պետք է ծառայեր իր հիմնադրի ծրագրած նպատակին (Պռ.),*

Ծան. Արևմտյան աշխարհաբարում մեր սահմ. ապառնին և ապառնի անցյալը՝ դնալու եմ, գնալու էի՝ սովորաբար ունին հարկադրական նշանակություն. իսկ հարկադրականը՝ պիտի գնամ, պիտի գնայի՝ երբեմն ստանում է սահմանականի բնավորություն. այս պատճառով արևելյան աշխարհարարի մեջ ևս, արևմտյանի ազդեցությամբ, երբեմն սահմ. ապառնին և ապառնի անցյալը հարկադրական նշանակությամբ են գոլչ ածվում իբրև անեղբակա խոսք (տե՛ս § 22. 2)։ Օրինակ՝ Վաղն այս գրավական արծաթեղենից շատերը վաճառ հանելու համար շուկա տանելու է.— Հապա ի՞նչ ընելու էի.— Թշնամուն զինաթափ անելու է, քանի նրա ուժը տկար է.— Այդպես ապասելու էր.— Եվ այլապես էլ ապասելու չէր.— Բայց եղածն եղած էր. պինդ նստելու էր այնտեղ, փախչիլն ավելի վտանգավոր էր (Պռ.)։

4. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

241. *Հրամայական եղանակը ցույց է տալիս մի հրամայած կամ արգելած եղելություն։ Հրամանը կամ արգելքը ծագում է միշտ խոսող անձից, բայց գործողության ենթական խոսակիցն է, ուստի և հրամայականը ունի միայն երկրորդ դեմք, եզակի և հոգնակի։ Օրինակ՝ Գնա՛, իմ որդի, աշխարհքս անցի՛ր, պանծալի անուն մեծի դու ստացի՛ր։*

Բաղադրյալ հրամայական եղանակը քիչ գործածական է և ցույց է տալիս դրության կատարվող, կատարված կամ կատարելի գործողության։ Օրինակ՝ Լա՛վ, բան չկա, որ ուզում ես գնալ, դու էլ գնա՛, այդ բանը տեսած եղի՛ր։ Ա՛յ մարդիկ, իմացած եղեք, որ այս կողմի տերն ես եմ։ Ամեն անգամ որ ներս եմ մտնում, նա է միայն պարապելիս լինում, մի անգամ էլ դու պարապելիս եղի՛ր, ի՞նչ կլինի։

5. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

242. *Բացի հրամայական եղանակից՝ ցանկության խոսքեր կազմվում են նաև ըղձական եղանակով. մինչ հրամայականն արտահայտում է բացարձակ հրաման կամ արգելք, ըղձականը ցույց է տալիս՝ փափագ ու տենչանք, հորդոր ու դրդում, խնդիր, մաղթանք կամ մեղմ պատվեր մի բան անելու։ Օրինակ՝* Հ ր ա մ. **Գիրքդ տո՛ւր ինձ։** Ը ղ ձ. **Գիրքդ տա՛ս ինձ։**

Ըղձականը հաճախ հետն ունենում է ցանկություն նշանակող մի բառ, ինչպես՝ **երանի՜**, **գո՛նե**, **գեթ**, **ո՛ւր է թե** և այլն։ *Օրինակ՝* **Ա՜խ, ես երանի կայծակ լինեի,** *որոտ-ճայթյունով մռայլ ամպերից* **թռչեի վերև, զարկեի** *ուժգին և* **պատառեի կամարն երկնքի,** *ցույց* **տայի երկրին գաղտնիքը վերին** *(Հովհ. Թում.)։*

248. *Ըղձականն ամենից առաջ ցույց է տալիս մի եղելություն, որ ցանկացվում է խոսողից կամ կախված է առաջին դեմքի կամքից։ Այսպես գործ է ածվում ըղձականը փափագ ու տենչանք ցույց տալու համար՝ օրհնությունների, անեծքների, բարեմաղթությունների, երդումների մեջ, և կամ երբ խոսողը հորդորում է կամ խնդրում խոսակցին մի բան անելու։ Օրինակ՝* **Երանի՜ գիտեեմ թե նա ի՜նչ է անում։ Գնամ, տեսնե՛մ նրան։ Տեսնես** *ուրիշ աշխարհներում էլ այսպիսի սարեր կա՞ն։ —***Քեզ համար մի այնպիսի փեսացու գտնեմ,** *որ քո հավան կացած. էնպես ընկեր ճարեմ, որ մեռած տեղս էլ հինգ նավակատիկին գաս. գերեզմանս օրհնել տաս. դու շատ ապրի՛, բալա՛ ջան, ես ծեր պապ եմ, պապերը ջահելների ցավը տանե՛ն.* **—Պատասխանիդ չենք սպասում, քո ներկայությունն է անհրաժեշտ. եթե հնար է, հետդ բերե՛ս մեր պատվական ... Գարեգինին** *(Պո.)։ Մենք էլ ուրեմն գործելու ժամանակ առաջնորդ* **ունենանք** *պատմության հերոսներին.* **հիշենք** *այն իմաստուն*

նշանաբանը... (Մուր.)։—Շատ ապրիս, զորանա՛ս։ Աստված հոգին լուսավորե՛։ Աչքդ դուրս գա... գետինը մտնես։

1. Անցյալը ցույց է տալիս մի անիրական ցանկություն անցյալում մի բան կատարած լինելու, որ չի կատարվել. օրինակ՝ Աչքս խավարեր, ոտս կոտրվեր՝ ես չերթայի նրա մոտ։ Ընկա՞ր, ես ի՞նչ անեմ. արագ չվազե՛ր, զգույշ լիներ։

Գործածվելով ապառնի ժամանակի նշանակությամբ՝ անցյալն ավելի մեղմացնում է ցանկությունը, տալով խոսքին խնդրական բնավորություն, ինչպես՝ «Գնա՛ս, նրան ասես, որ գա ինձ մոտ» խոսքը ավելի մեղմ արտահայտվում է «Գնայի՛ր, նրան ասեիր, որ գա ինձ մոտ»։ Գոնե ճանապարհը ապահով լիներ։

2. Հրամայականի և ըղձականի վրա՝ հրամանը կամ ցանկությունը մեղմացնելու համար հաճախ դրվում է մի մեղմական մակբայը, որ չպետք է շփոթել մի՛ արգելականի հետ, որ վրան միշտ շեշտ ունի. օրինակ՝ Մի գնա՛, նրան ասա՛... մի գնա՛ս, նրան ասե՛ս... մի գնայի՛ր, նրան ասեի՛ր...։

3. Բացասական ըղձականը ա) ստանում է արգելական ապառնու նշանակություն, օրինակ՝ Արյուն չթափե՛ս։ Չգնա՛ս, նրան ասես, որ ես... Չնեղանա՛ս, որդի, հանաք եմ անում (Պռ.)։ Չլինեմ, չիմանամ, որ դու իմ որդուն ուսման չտաս։ բ) Երբեմն հավաստիական հարցական ձևով, կամ լոկ շեշտով, ցույց է տալիս պարզապես ոչ ցանկություն, մի՛ գուցե, չլինի թե բառերի երկբայական նշանակությամբ։ Ըր բացասականն այս դեպքում դրվում է միայն առաջին բայի վրա (տե՛ս § 215. 5)։ Օրինակ՝ Սոսը չգժվի՞ գնա, վաչեին մի վնաս տա.—Ա՛յ տղա, նրա գլխին մի փորձանք չգա՞ (Պռ.)։

4. Հորդորական ըղձականի վրա, որ ցույց է տալիս դրդում մի բան անելու, հաճախ առաջին և երրորդ, անցյալի հետ նաև երկրորդ դեմքերի վրա դրվում է թող բառը, որով և խոսքն ստանում է հրամայական բնավորություն. օրինակ՝ Թող գրեմ և հայտնեմ նրան։ Հազար անգամ թող իրան կտրատի, յուր միսը բարկությունից ծամի... թող դարան մտնի պարտիզում... նրան բաժին մնացել են քաղցր երազները.—Թեև ավելորդ էր, բայց թող քո ցանկությունդ կատարված լինի.—Թող մեզ չտեսած՝ չհեռանա (Պռ.)։ Թող ինքն երթար։ Թող չգնայիր, ես ի՞նչ անեմ։

Սան. Թո՛ղ հրամայականի հետ, որ գործ է ածվում անեղծակա նշանակությամբ (տե՛ս § 22. 5. ծան.), ըղձականը ստանում է ստորադասական կապակցության բնավորություն. «Թող տեսնեմ, թող գա» իբրև «Թող որ տեսնեմ», «Թող որ գա»։ Թող ճակատդ, թող աչերդ սրբեմ իմ ձեռով (Գ.-Ք.)։ Բայց ինչպես որ «պիտի գնամ» խոսքը այլևս չենք ըմբռնում իբրև «պիտի որ գնամ» (տե՛ս § 240), նույնպես «Թող գա» այլևս չենք ըմբռնում իբրև «Թող որ գա»։ Թող գա կապակցությունն, ինչպես և պիտի գա, այժմ ըմբռնում ենք իբրև մի միություն։

5. Երբ հրամայականով ասված անեղծակա խոսքերը (տե՛ս § 22. 5) ենթակայական ձևով են արտահայտվում, հրամայականը փոխվում

է ըղձականի և երկրորդ դեմքի տեղ դրվում է երրորդ դեմք։ Օրինակ՝ «կե՛ր փորձած քանը, մի՛ ուտիլ անփորձ մածունը», լինում է՝ Մարդ ուտի փորձած քանը, չուտի անփորձ մածունը։

Նույն ձևով ուղղակի խոսքերի հրամայականը անուղղակի խոսքերի մեջ դառնում է ըղձական երրորդ դեմքով. օրինակ՝ Հիսուս ասաց իր աշակերտներին. «Գնացեք, քարոզեցեք հեթանոսներին»,— Հիսուս ասաց իր աշակերտներին, որ գնան, քարոզեն հեթանոսներին։

244. Ըղձական եղանակը հաճախ գործ է ածվում երկբայական հարցի համար, որով անվճռական վարանում, տատամսություն է հայտնվում և խոսողն իր խոսակցի կամքն ու ցանկությունն է ուզում իմանալ։ Այս դեպքում տատամսությունը զորացնելու համար, հավաստիական հարցերի համար, երբեմն եռևից դրվում է քե չէ (տե՛ս § 217. 2)։ Օրինակ՝ «Նա ի՞նչ է տալու ձեզ. Նա ի՞նչ պիտի տա ձեզ. Նա ի՞նչ կտա ձեզ» հարցումներով, որոնք սահմ., հարկադր. և ենթադր. եղանակներով են, պարզապես պահանջվում է իմանալ, թե նրա տալիքն ինչ է լինելու, պիտի լինի կամ կլինի. ինչ տալը կախված չէ խոսակցի, դիմացի մարդու կամքից։ Բայց երբ նույն խոսքն ըղձականով է ասվում՝ «Նա ի՞նչ տա ձեզ», նշանակում է՝ ի՞նչ եք ցանկանում, որ տա ձեզ։ Ի՞նչ ես ասում, գնա՞մ թե չէ՞։ Ասում ես՝ մի՛ գժվիլ. թե ես չգժվեմ, ո՞վ գժվի (Պռ.)։ Դու աղա, ես աղա. բա մեր աղունն ո՞վ աղա (Ա.)։ Ի՞նչ աճեմ ոսկե տաշտը, որ մեջն արյուն եմ լալի (Ա.)։ Պաս ուտեմ, պաս ուտեմ, թանե սպա՞ս ուտեմ (Ա.)։

Այս կարգին պատկանում են նաև ըղձականով ասած այն ճարտասանական հարցական խոսքերը, որոնցով խոսողը, ըստ երևույթին իր խոսակցի կարծիքը հարցնելով, իր ասած խոսքի հակառակն է ցանկանում, ընդունում։ Օրինակ՝ Հիմի՞ էլ լռեմ, եղբարք (Գ.-Ք.)։ Սա՞ռ լինի, որ գլխով քամի չանցնի (Ա.)։ Հայրիկը բան հրամայի և դու չկատարե՞ս.—Նա համարձակվի՞ իմ վրա խոսել։—Հայ աղջիկն այնքան համարձակվի, որ իրա միջին տղա՞ ջոկի, սիրի, ո՞վ է լսել (Պռ.)։ Բա մենք ճար ու ճրագ մի տղա ունենք, են ո՞նց վեր ունենք, ղրկենք ղարիբ տեղ (Մուր.)։ Ով ահա՛ Կամսարյանն ունի թե՛ խելոք գլուխ և թե՛ կարող ձեռքեր. ինչո՞ւ, ուրեմն, չերթա չորոնե այդ սիրելի ազգակիցներին, չապրե նրանց հետ, չսովորեցնե նրանց իրենց դրությունը... բարվոքելու եղանակը (Մուր.)։ Տե՛ս նաև § 219. 2, § 243. 3. բ։

Ծան. 1. Այսպիսի հարցական խոսքերը ստորադասվելով մի ուրիշ խոսքի՝ պահում են իրենց ըղձական եղանակն ու նշանակությունը. միայն ճարտասանական հարցն այդ ժամանակ անցնում է գլխավոր խոսքին։ Օրինակ՝ Ո՞վ է լսել, որ հայ աղջիկն այնքան համարձակվի, որ իրա միջին տղա ջոկի, սիրի։ Դու տեսե՞լ էիր, որ մինչև հերու մի բան խոսեի.—Մի երեխա տեսնելիս կարմրում է. ո՞ւր մնաց, որ այնքան բազմության միջին տանիքը դուրս գա.— Նա խելքը թոցրե՞լ է, որ այդ բանն անի (Պռ.)։ Ի՞նչպես կարելի է, որ մարդ աստվածը չխռնե յուր նմանի հետ, կամ թե այդ խոսելը համարե ամոթ (Մուր.)։

Ծան. 2. Այսպիսի ճարտասանական հարց ունեցող գլխավոր խոսքերը կարող են և առանց հարցի բացասական ձևով գործածվել. այն ժամանակ երկրորդական խոսքերը պահում են իրենց եղանակն ու նշանակությունը. Օրինակ՝ փոխանակ ասելու՝ «Աշտարակցի տղաներից մինը ճանապարհին մնա»,— այդ մինչև օրս լսված բան չէ», կարելի է ոչ միայն այսպիսի հարցականով ասել՝ «Ո՞վ է լսել, որ աշտարակցի տղաներից մինը ճանապարհին մնա», այլև առանց հարցի՝ «Դեռ մինչև օրս լսված չի, որ աշտարակեցի տղաներից մինը ճանապարհին մնա» (Պռ.). Ժողովուրդը նույնիսկ գոյության ամենահին ժամանակներումը ամենևին չէ հիշում, թե երբևիցե ճնարած լինի իր լեզուն, իր դիցաբանությունը (Պալ.).

245. *Ղեձականով դրվում են շատ ստորադաս կամ երկրորդական խոսքեր, ուստի և այս եղանակը սովորաբար կոչվում է* **ստորադասական եղանակ.** *բայց ինչպես իբրև անկախ խոսք գործածված ժամանակ, նույնպես և այս դեպքում այս եղանակն ընդհանրապես պահում է իր ցանկության խոսքի բնավորությունը (տե՛ս § 244. ծան. 1 և 2).*

1. Ղեձականով դրվում են ստորադաս խոսքերը, երբ կախված են մի ցանկություն կամ բացասական ցանկություն ցույց տվող բայից կամ խոսքից և ցույց են տալիս խոսողի կամ գլխավոր խոսքի ենթակայի ցանկացած, կամ ցանկացած, բայց չիրագործած նպատակը. Օրինակ՝ Ես ուզում եմ, որ դուք առաջադիմեք: Ամաչեց, որ նրա խոսքը կոտրի: Ջեն համարձակվում, որ աշկարա ասեն: Վախենում եմ, որ ժամանակին չհասնի: Վերջին երեք խոսքերի մեջ ցանկությունը բացասական է, և ղեձականը ցույց է տալիս անիրական ցանկացած նպատակ.

Այս նշանակությամբ ղեձական դրվում է՝

ա) Ցանկություն արտահայտող շատ խոսքերից հետո, օրինակ՝ Տա՜ աստված, որ այդպես լինի: Ա՜խ, ե՞րբ պիտի լինի, որ այս օրն ինձ համար էլ գա: Արդյոք կլինի՞, որ ասեմ թե ցավ չունիմ: Երանի՜ թե նա գա ինձ մոտ: Ո՜ւր է թե նա այստեղ լիներ: Ի՞նչ կլինի, ինձ կարդալ սովորեցնես.—Չի՞ լինիլ, որ նրան միջնորդ ձգենք (Պռ.).

բ) Պիտի, պետք է, հարկ է, կարեոր է, անհրաժեշտ է, պատշաճ է, վայել է, արժան է, արժե, անկ է, լավ է և այլն, ինչպես և ամոթ է, ափսոս է, մեղք է, չլինի թե, մի՛ գուցե, թող թե, վայ թե եղանակիչ հազմություններից հետո, որոնց հետ երկրորդական ղեձական խոսքը մրտածվում է խոսողի կողմից իբրև ցանկացած կամ չցանկացած մի նպատակ. Օրինակ՝ Հարկ է որ մենք մեզ քաջ ճանաչենք (խոսողը հարկավոր է տեսնում և ցանկանում է ինքն իրեն ճանաչելը).— Պետք է որ ուշադրություն և փույթ նվիրենք մեր ներկա և անցյալ կյանքին և բեղմնավորենք մեր գաղափարը (Սրվանձտ.). Պետք է որ բարեկամներն իրար օգնեն. Մնում է որ ես անձամբ գնամ. Ժամ է, ժամանակ է, որ մենք սթափվենք մեր խոր քնից. —Մեզ համար ամոթ է, որ դու այդ բանն անես.— Իմ պատվին էլ ամոթ չէ՞, որ նրան գլխահան անեմ.— Չլինի՞ թե քեզ նեղացրած լինին.—Թե ասեմ, վա՛յ թե սիրտ կոտրվի. թե չասեմ, վա՛յ թե իրականի պես վարվի.— Թե աչքը մի քիչ

կպցնի, վայ քե քնով անցնի։— Քե որ ես հիմի չգնամ, վա՛յ քե իրիկունս գնա, բանը գլուխ բերի (Պռ.)։ Տե՛ս § 243. 3. բ։

գ) Բազմաթիվ ցանկություն ցույց տվող բայերից հետո, ինչպես, ցանկանալ, կամենալ, բաղձալ, հոժարել, համաձայնել, խնդրել, աղաչել, մաղթել, թույլ տալ, պահանջել, հրամայել, ապսպարել, որոշել, սահմանել, կարգադրել, ուխտել, կտակել, համոզել, ստիպել, հորդորել, խրատել, պարտք դնել, միտքը դնել, հանձնարարել, նպաստել, հակել և այլն. այլև՝ ամաչել, քաշվել, ակնածել, պատկառել, վախենալ, ափսոսալ, խղճալ, մեղքանալ, դեմ լինել, հակառակ լինել, խանգարել, զգուշանալ, խուսափել, զլանալ, խնայել, չհանդգնել և այլն։

Ծան. 1. Վախենալ, արգելել, խանգարել և այլն բայերի պահանջած ղեկականը հաճախ օտարաբանությամբ բացասական է դրվում. ինչպես՝ «Անձրևը խանգարեց, որ գրոսանքի չգնանք»։ Իրև ընդհանուր կանոն պետք է նկատի ունենալ, որ եթե ղեկականին փոխանակող դերբայը դրական է լինում, ղեկականն ևս դրական է դրվում. ինչպես՝ «Անձրևը խանգարեց մեր գրոսանքի գնալուն», ուրեմն և Անձրևը խանգարեց, որ գրոսանքի գնանք։— Վախենալ բայից կախված ղեկականի համար առանձնապես պիտի նկատել. 1. Երբ գլխավոր խոսքի ենթական չի ցանկանում նպատակի իրագործումը, ա) ղեկականը դրական է դրվում մենակ, կամ մի՛ գուցե, չլինի թե բառերով. օրինակ՝ «ես վախենում եմ, որ նա գա» նշանակում է՝ «ես վախենում եմ, որ մի գուցե (չլինի թե) նա գա»,—ես չեմ ուզում նրա գալը. բ) ղեկականը բացասական է դրվում, երբ մի չցանկացած երկբայական հարցական խոսք է (տե՛ս § 243. 3, բ), որ այս դեպքում առնվում է իբրև ուղղակի խոսք, իբրև ենթակայի իրեն մտածմունքը՝ բառացի մեջ բերված, ուստի և, չնայելով երկրորդական խոսքի կերպարանք ունի, պահում է հարցական ձևը։ Օրինակ՝ Վախում է որ Սոսը չգժվի՞, գնա Վաչեին վնաս տա։— Վախեցավ որ չլինի՞ մայրը բան հասկանա.— Տղան վախում էր, թե աղչիկը չթուլանա՞, վեր ընկնի. աղչիկը վախում էր, թե տղի խելքը չգնա՞, գետնովը դիպչի.—վախում էր, թե գլուխին մի փորձանք չգա՞ (Պռ.)։— 2. Երբ գլխավոր խոսքի ենթական ցանկանում է նպատակի իրագործումը, ղեկականը բացասական է դրվում մենակ, կամ մի՛ գուցե, չլինի թե բառերով. օրինակ՝ ես վախենում եմ, որ նա չգնա,—ես վախենում եմ, որ մի գուցե (չլինի թե) նա չգնա։

Ծան. 2. Վախենալ բայից հետո կարող է և ենթադրական դրվել, երբ ցանկության նշանակություն չունի և հաջորդ խոսքով վախենալու պատճառն է միայն բացատրվում. օրինակ՝ Մայրը որ տեսավ, վախեցավ թե աղչիկը հանդիպակ կդիպչի.— Վախեցավ, որ կնսերը կասի (Պռ.)։

2. Ղեկականով դրվում են նպատակի ստորադաս խոսքերը, որոնք ըմբռնվում են խոսողի կամ գլխավոր խոսքի ենթակայի կողմից իբրև ցանկացած հետևանք։ Օրինակ՝ **ենթադր.** *Նա այնպես մութն է խոսում, որ դու բան չես հասկանալ,— բան չհասկանալը լոկ նրա խոսելու հետևանքն է, անկախ նրա կամքից.* **Ղեկ.** *Նա այնպես մութն է խոսում, որ դու բան չհասկանաս,—բան չհասկանալը կախված է նրա կամքից. նա ցանկանում է, որ դու բան չհասկանաս։— Եկա, որ տեսնեմ նրան։*

3. Ղեկականով դրվում են **որ** *հարաբերական դերանունով կապված երկրորդական խոսքերը, երբ ըմբռնվում են իբրև մի ցանկացած*

նպատակ։ Դերանունն այս դեպքում հաճախ որ շաղկապի բնավորություն է ստանում։ Օրինակ՝ Արժանի է այնպիսի իշխանուհու, որ լիներ նորատի, քնքուշ և գեղահասակ (Մուր.)։ Աստված պատկերք է տվել, որ (իբր՝ որպեսզի) երևա.— Բե՛ր մարդ, որ դիմանա.— Լավ աչք պիտի, որ տեսնի.— Քիչ մարդ մնաց, որ չհաղորդվի.— Քրդաբնակ Հայաստանում շատ սակավ մարդ կճարվի, որ քրդերեն չիմանա (Պռ.)։

Ծան. Այսպես գործ է ածվում ըղձականը, խոսքին տալով տարակուսական ու երկբայելի բնավորություն, առանձնապես բացասական և հարցական խոսքերից հետո։ Օրինակ՝ ես ոչ մի մարդ չեմ ճանաչում, որ երջանիկ լինի։ Բերանները խոսք չի գալիս, որ ասեն.—Էլ ծակ չի թողնիլ, որ չմտնի.—Աղչիկ չուներ տանը, որ իրեն օգնի.— Մի բարի լույս չբացվեց, որ տանը կռիվ չլինի.— Ուրիշ գյուղերում օր չէր անցնում, որ գողություն... չկատարվեր, շաբաթ չէր լինում, որ... ճնշումներ չգործեին (Պռ.)։— Ո՞վ կա ձեր մեջ, որ այս բանն իմանա։ Ի՞նչ ասես որ իմ տանը չգտնվի.— Հավկիթ հո՛ չենք, որ փխրվենք.— Ո՞վ է այն տարօրինակ ադամորդին, որի բնավորության վայրագությունը... մեղրամոմի փափկությունը չտանա Հայրիկի մշտածիծաղ հայացքի անուշ տպավորության ներքո (Պռ.)։

4. Ըղձականով դրվում են, փոխանակ ենթադրականի, երկրորդական խոսքերը, երբ ինչպես մի ցանկացած նպատակ կախված են գլխավոր խոսքի ենթակայի կամքից։ Օրինակ՝ «Ես պնդում եմ, որ նա կգա». «Ես ասացի, որ նա կգա» խոսքերի մեջ նրա գալ չգալն անկախ է իմ կամքից. ես միայն փաստն եմ ասում, հաստատում առանց իմ ցանկությունը հայտնելու։ Բայց «Ես պնդում եմ, որ նա գա», «Ես ասացի, որ նա գա» խոսքերի մեջ նրա գալը ցանկանում եմ և իմ ցանկությամբ կամ դրդմամբ է լինելու նրա գալը։— Այս նշանակությամբ ըղձական պահանջում են՝ ասել, խոստանալ, երդվել, գրել, հայտնել, հաղորդել, իմացնել, հիշեցնել, ազդարարել, հրատարակել, հայտարարել, հույս ունենալ, սպասել, ընդունել և այլն, այսպես և՝ սպասելի է, բնական է, հավանական է և այլն։

5. Ըղձականով դրվում են պայմանական խոսքերը. անցյալը ցույց է տալիս մի անիրական, լոկ ցանկացած հիմունք անցյալ կամ ապագա գործողության. իսկ ապառնին, գործածվելով ենթադրականի տեղ, ցույց է տալիս մի այնպիսի հիմունք, որ չի մտածվում իբրև խոսողի կամքից ու մտքից անկախ, ինչպես որ է ենթադրականով դրված պայմանը, այլ իբրև խոսողի մտքի մեջ միայն գոյություն ունեցող և նրանից միայն հավանական համարված մի հիմունք (տե՛ս § 234. 1—3)։ Օրինակ՝ Թե որ հարցնես, կասեն։ Մարսափելի չեն հային տառապանք, միայն չճաշակե՛ր խեղճուկի հույսը (Գ.-Ք)։

Ենթադրականի և ըղձականի վերոհիշյալ տարբերության պատճառով՝ ըղձական են դրվում՝

ա) Առանձնապես այն պայմանական խոսքերը, որոնք ոչ թե մի մասնավոր, որոշ դեպք են ցույց տալիս, այլ ընդհանուր նշանակություն ունին և խոսողի կարծիքով միայն ընդունված են, ինչպես առած-

ների մեջ. օրինակ՝ Գողն որ տնից լինի, եղն երդիկից կհանի,— որ կարելի չէ ասել՝ Գողն որ տնից կլինի...

բ) Այն պայմանական խոսքերը, որոնք սկսվում են ըղձական թե կուզ շաղկապով կամ նույն նշանակությամբ ուրիշ շաղկապներով են կապվում. օրինակ՝ Թեկուզ դրախտն էլ ինձ տան, սիրտս քեզանից չի զատվիլ,—իբրև՝ Թե կուզեն, թող դրախտն էլ ինձ տան, սիրտս դարձյալ քեզանից չի զատվիլ։— Ասեղ էլ որ կորած լիներ, կգտնվեր,—իբրև՝ Թեկուզ ասեղ էլ կորած լիներ...

Տառ. Պայմանական խոսքերն ըղձականից տարբերվում են միայն առոգանությամբ և նրանով, որ ստորադասական ար, թե շաղկապով են կապվում. առանց այս շաղկապների, մանավանդ երբ ձայնը խոսքի վերջում իջնում է, պայմանականը դառնում է լոկ մի ըղձական խոսք. օրինակ՝ Քան որ ունենամ, ճանճը բաղդադից կգա.—Թե որ հարցրնես, կասեն.—Եթե լինեին դրանք, նա կազատվեր թշվառությունից—խոսքերն ըղձական են դառնում հետևյալ ձևով՝ Թա՛ն ունենամ, ճանճը բաղդադու կգա (Ա.—իբր թա՛ն ունենամ, թե չէ ճանճը բաղդադից կգա).—Հարցնե՛ս, կասեն.—Լինեին դրանք և նա կազատվեր... թշվառությունից (Մուր.)։ Պատմե՛ր յուր գլխի անցքը, վախենում էր, որ հոր սիրտը վշտացնի. թե չպատմեր՝ գիտեր, որ բանը ծածուկ չէր մնալ (Պալ.)։

6. Ըղձական են դրվում՝ զիջական-ընդհանրացական և առհասարակ բոլոր ընդհանրացական խոսքերը,— լինին տեղի, ժամանակի թե այլ նշանակությամբ,—և առանձնապես այն խոսքերը, (որոնք ունին կամ կարող են ունենալ կուզե բառը. օրինակ՝ Ուրուրը ինչքան կուզե՝ սպաճե, հավը չի վերջանա (Ջիվ.),— որ կարելի է ասել նաև՝ Ուրուրն ինչքան սպաճե, հավը չի վերջանա։ Ո՞վ է այն տարօրինակ ադամորդին՝ ինչ ազգից ու կոչումից, ինչ հասակի ու հասկացողության կուզե թող լինի, որ... (Պո.),— որ կարելի էր գրել պարզապես՝ ինչ հասակի ու հասկացողության (էլ) լինի:— Էհ, ինչ կուզի, թող լինի, ես քոնն եմ (Պո.),— ինչ էլ լինի, ես քոնն եմ։ Դու մեր հյուրընկալն ես. ով որ գա, կպատվես ճանապարհ կդնես,—իբրև՝ ով կուզի՝ գա... Ուր (կուզի) երթա, նա բախտավոր չի լինիլ։ Երբ որ գա, կասես նրան։ Հենց որ գա, կասես նրան։ Մինչև խելոքը միամ աճի, գիժը, տղային հարսանիք կանի (Ա.)։ Ինչ աննպաստ պայմաններում էլ որ սկսեճ մեր գործը, հիշենք այն խմաստուն նշանաբանը (Մուր.)։

Տառ. Հաճախ ենթադրական և ըղձական ապառնիները, ինչպես պայմանականի մեջ, նույնպես և այստեղ իրար փոխանակ անխտիր գործ են ածվում. բայց պետք է նկատի ունենալ, որ այս երկու եղանակը տարբերվում են իրարուց. ենթադրականը ցույց է տալիս խոսողի կամքից անկախ մի մասնավոր, ապասած դեպք, իսկ ըղձականը անորոշ, ընդհանրացական նշանակությամբ է և խոսողի մտքում միայն գոյություն ունի. օրինակ՝ «Ով որ գա, կպատվե՛ս», և «Ով որ կգա, կպատվես» խոսքերից երկրորդի մեջ խոսողը ապասում է որոշ մասնավոր գործողության՝ այն որ մեկը կգա, և նա անորոշ է թողնում միայն եկողի ո՛վ լինելը. իսկ առաջին խոսքի մեջ անորոշ է մնում ոչ միայն եկողը, այլև գալու գործողությունը։

7. Ըղձական է դրվում նաև՝ հազիվ թե, դժվար թե, ասես (թե), կարծես (թե), գուցե, թերևս բառերից հետո, ինչպես և բացասական՝ չեմ կարծում, անկարելի է, անբնական է, անհնար է և այլն խոսքերից հետո։ Այս կիրառության մեջ ըղձականը ցույց է տալիս մի գործողություն, որ երկբայելի է, սակայն ոչ բուն ինքյան, այլ միայն խոսողի կարծիքով։ Օրինակ՝ Անկարելի է որ նա գա։ Կլինի որ նա մեր տանը լինի։ Այնպես մթնեց, որ կասես թե (կարծես) գիշեր լիներ։ Քիչ մնաց որ նա ընկներ։ Դժվար թե քահանան երկմտեր իմ քրդերեն հասկանալու համար (Պռ.)։ Հայոց ուսումնականությունը... սառնասրտությամբ չկամեցավ այն խնդիրների մեջ մտնել, որով թերևս կարելի լիներ եվրոպացոց տարակույսը փարատել (Պալ.)։ Ղազար Փարպեցին չէր կարող ենթադրել, որ Բյուզանդիայում ուսում առած մի մարդ... այսպիսի հիմար բաներ գրևր (Ստ. Մալխ.)։

246. Ըղձական եղանակն ունի այն բոլոր ժամանակներն, ինչ որ ենթադրականն ու հարկադրականը, որոնք կազմվում են ըղձականի վրա կը, պիտի եղանակիչների ավելանալով (տե՛ս § 232)։

1. Կատարվող կերպի՝ 1) Ներկա՝ Ի՞նչ անեմ, եթե նա հիմա գնալիս լինի։ է՛, այդպես աղջիկը որ քեզ սիրում լինի և քո պատճառով էլ Բորժոմ լինի գալիս, ի՞նչ կասես դրան (Մուր.)։ Վախենում եմ թե դրանք մեր գլխատակը բարձ լինին դնում, քնացնում (Պռ.)։ ...Խընդրեց նշանակել ուրիշ մինիստրների, որոնք վայելելիս լինին երկրի վըստահությունը (Լր.)։ 2) Անցյալ՝ Աթենքի հասարակության մեջ ամբոխ ասած բանը չկար, որ միայն իր նյութական պիտույքների վրա մտածում լիներ, որ միայն իր մարմնու պիտույքները լիներ կատարում և զուրկ լիներ ամեն տեսակ բարձր ու մաքուր զգացմունքներից (Պալ.)... Այնպիսի իշխանուհու, որ լիներ նորատի... և այդ գեղեցկուհին ապրում լիներ այստեղ (Մուր.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ եթե նա վաղն այս ժամին տեղ հասնելիս լինի, շատ լավ կլինի։

2. Կատարված կերպի՝ 1) Ներկա՝ Արտաքին փայլը, որչափ չընչին տարրերից լինի հյուսած, այնուամենայնիվ դեռ շլացնում է շատերի աչքը (Ստ. Մալխ.)։ Հարկ է որ պատմական անձը մի որևիցե բանով ժողովրդի ուշադրությունը գրաված լինի, որ երգերի նյութ դառնա (Պալ.)։ 2) Անցյալ՝ Թեկուզ իր աչքովն էլ տեսած լիներ, ասածին չէր հավատալ (Պռ.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ Կարելի է որ նա վաղն այս ժամանակ արդեն տեղ հասած լինի։

3. Կատարելի կերպի՝ 1) Ներկա՝ Մեր գյուղի վարքը դու լավ գիտես. որ տալու չլինին, հաց չեն ուտեցնիլ (Պռ.)։ 2) Անցյալ՝ Քույր Աննան պատվիրեց հանձնել ձեզ այս ծրարը, եթե երբևիցե գալու լինեիք մեր գյուղը (Մուր.)։ 3) Ներկան իբրև ապառնի՝ Էգուց որ նա ինձ մոտ գալու լինի, ինձ առաջուց իմաց արա։

4. Պարզ կերպի՝ 1) Ներկա՝ Ջեմ կարծում, որ նա այժմ տանը

լինի։ 2) Անցյալ՝ լավ կլիներ, որ երեկ նա ինձ մոտ գար։ 3) Ներկան իբրև ապառնի՝ էգուց որ գաս ինձ մոտ, լավ կանես։

247. Պարզ կերպի ըղձական ներկան սովորաբար գործ է ածվում իբրև ապառնի, երբեմն և ապառնի անցյալի նշանակությամբ (հմմտ. § 235. 3). օրինակ՝ Աչքով արեց նրան, որ հեռանա.—Հրամայեց, որ գանք.— Զգուշությամբ փաթաթեց, որ չտրորվի (Պռ.),— փոխանակ՝ հեռանար, գայինք, չտրորվեր։ Այս ժամանակն իր ներկա ժամանակի բնավորությունը պահում է միայն հավելավոր բայերի համար՝ լինիմ, ունենամ, գիտենամ, մեկ էլ երբ գործ է ածվում երկրորդական բնավորությամբ իբրև առածական կամ կրկնության ներկա, կամ թե ճարտասանական հարցով. օրինակ՝ Բայց երբ տեսնես դու նորահարս սևավորած, որ գրկի մեջ մեկ հատ տղա ունենա, որ աչքերեն թափում լինի արտասուք... իմացիր, որ նա իմ կինն է խղճալի (Գ.-Ք.)։ Գողը որ տնից լինի, եզն երդիկից կհանի։ Գերին որ գին ունենա, տիրոջը կհասնի։ Ուղտին որ փուշը պետք գա, կկռանա, կվերցնի (Ա.)։ Ես բան ասեմ և դու չլսե՞ս։

248. Ըղձական եղանակը, ինչպես և ենթադրականն ու հարկադրականը, չունի առանձին հարաբերական ժամանակներ. այս նշանակությամբ գործ են ածվում բաղադրյալ ժամանակները. օրինակ՝ Թեկուզ իր աչքովն էլ տեսած լիներ (լինի), ասածին չէր (չի) հավատալ (Պռ.)։

249. Ինչպես բայերի դիմավոր ձևերը, այնպես և անորոշ դերբայն ունի չորս կերպ. կատարվող՝ գնալիս լինել, կատարված՝ գնացած լինել, կատարելի՝ գնալու լինել և պարզ՝ գնալ, որ ցույց է տալիս սոսկ գործողություն։ Օրինակ՝ Կամենում էր երկու գործողություն մի անգամից կատարած լինել, այն է՝ նախ՝ թափանցել Գարեգնի սիրտը... (Պռ.)։ Նա կարող է այժմ տեղ հասնելիս լինել։

ՊԱՐԶ ԵՎ ԲԱՐԴ ԽՈՍՔԵՐ

250. Ամեն պարզ խոսք — մի խոսքն առանձին առած—որ մի ամբողջացած, լրացած միտք է հայտնում, կոչվում է պարզ անկախ խոսք կամ պարզ ասացված։ Օրինակ՝ Մի ծաղկով գարուն չի գալ։

Պարզ խոսքերը կապակցվելով միմյանց հետ՝ կազմում են միասին մի բարդ խոսք, որ, երբ մի ամբողջացած միտք է հայտնում, ասվում է բարդ ասացված։ Օրինակ՝ Սար ու ձոր գլուխներն էլ ետ բարձրացնում էին, որ փոքր ինչ շունչ առնեին։

ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

251. Իրար հետ կապակցված խոսքերը միմյանց վերաբերմամբ ունին երկու տեսակ հարաբերություն՝ ստորադասական և համադասական։

1. Կապակցված խոսքերից մեկը դառնալով լրացում մի ուրիշ խոսքի՝ իր կատարած պաշտոնով ստորադասվում է այն խոսքին, որի լրացումն է դառնում։ Լրացում դարձող խոսքը կոչվում է **ստորադաս կամ երկրորդական խոսք**. իսկ այն խոսքը, որի լրացումն է դառնում երկրորդական խոսքը, ասվում է **գերադաս կամ գլխավոր խոսք**։ Երկու խոսքը միասին կազմում են մի ստորադասությամբ բարդ խոսք կամ **բաղադրություն**։ Օրինակ՝ «Մի մոռանար երբեք, որ դու մարդ ես» բարդ խոսքի մեջ առաջին խոսքը՝ «մի մոռանար երբեք» գլխավորն է, իսկ երկրորդը՝ «դու մարդ ես» երկրորդական է, որ ինչպես մի խնդիր լրացնում է գլխավոր խոսքի իմաստը, թե ի՛նչ պետք է չմոռանալ։

2. Կապակցված խոսքերը լինում են միմյանց համազոր և միմյանցից անկախ, այսինքն մեկը մյուսի լրացում չեն դառնում, այնպես որ կապակցության վերանալով՝ դառնում են պարզ անկախ խոսքեր։ Դրանք միմյանց վերաբերմամբ **համադաս խոսքեր** են և միասին կազմում են մի համադասությամբ բարդ խոսք կամ պարզապես՝ **համադասություն**։ Օրինակ՝ Քամին քիչ քիչ դադարեց, փայլակն սկսավ շողալ մերթ ընդ մերթ, և որոտը լսվում էր երկնքում ավելի խուլ (Մուր.)։

Համադաս երկրորդական խոսքերը, որոնք մի գլխավոր խոսքի նկատմամբ միևնույն պաշտոնն են կատարում, ասվում են **համատարադաս խոսքեր**։ Օրինակ՝ Որովհետև ունեցել են հաստատուն կամք, որովհետև անկեղծորեն սիրել են ժողովուրդը, ուստի և հաղթել են ամեն արգելքների (Մուր.)։ Համմտ. § 48։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՈՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

252. Երկրորդական խոսքերը՝ նայելով գլխավոր խոսքի նկատմամբ ունեցած իրենց շարադասությանը՝ լինում են՝ առաջադաս, միջադաս և վերջադաս։

1. **Առաջադաս** երկրորդական խոսքերն ընկնում են գլխավորից առաջ. օրինակ՝ Ով որ փոքանա, նա շուտ չքանա։

2. **Միջադաս** երկրորդական խոսքն ընկնում է գլխավորի մեջ, որը երկրորդականով երկու մասի է բաժանվում։ Օրինակ՝ Եղբայրս, որ գնացել էր գյուղը, վերադարձավ այսօր։

3. **Վերջադաս** երկրորդական խոսքը դրվում է գլխավորից հետո։ Օրինակ՝ Թող այդ քեզ համար լինի խրատ, որ էլ չցանես մանր կտավհատ։

253. Պարզ անկախ խոսքի մասերը, բացի դիմավոր բայից, կարող են արտահայտվել երկրորդական խոսքերով։ Կնշանակե գլխավոր խոսքը իր մեջ պիտի ունենա ամենաքիչը մի բայ, որ բուն գերադաս խոսքն է և չի կարող երկրորդական խոսքով արտահայտվել. իսկ երկրորդական

խոսքերը դրվում են միշտ պարզ խոսքի լրացումների տեղ և նույն պաշտոններն են կատարում, ինչ որ լրացումները պարզ խոսքի մեջ։ Երկրորդական խոսքերն ուրեմն, նայելով թե խոսքի ո՛ր մասի պաշտոնն են կատարում, լինում են՝ ենթակա, ստորոգյալ, խնդիր, պարագա և վերադիր.

1. Ե ն թ ա կ ա խ ո ս ք, *օրինակ՝ Ամպերից երևում է, որ անձրև է գալիս։*

2. Ս տ ո ր ո գ յ ա լ խ ո ս ք, *օրինակ՝ Ինչ որ ես եղել եմ՝ դարձյալ կլինիմ։*

3. Խ ն դ ի ր խ ո ս ք, *օրինակ՝ Ես իմացա, որ նա տանը չէ։*

4. Պ ա ր ա գ ա յ ա կ ա ն խ ո ս ք ե ր.

ա) Տեղի,— *օրինակ՝ Գնա՛ ուր հրավիրում է ինձ ո՛ր պարտքը։*

բ) Ժամանակի,— *օրինակ՝ Հենց որ արեգակը ծագի, ճանապարհ կընկնենք։*

գ) Ձևի, բաղդատության, չափի ու աստիճանի և հետևանքի,— *օրինակ՝ Դու հայ զորավար, գթա՛ հայերուն, ինչպես գթաց ո՛ր նախատիպ Վարդան։ Քանի կարող ես՝ մի՛ խնայեք։ Որքան որ կուզե՝ թող փչե հյուսիս։ Նա ավելի խոսում է, քան բան անում։ Նա այնքան աշխատեց, որ ուժասպառ եղավ։*

դ) Պատճառի,— *օրինակ՝ Նա դասի չի եկել, որովհետև հիվանդ է։*

ե) Նպատակի,— *օրինակ՝ Ես գնացի տուն, որ տեսնեմ եղբաս։*

զ) Պայմանական,— *օրինակ՝ Եթե եղանակը լավ լինի, կերթանք զբոսնելու։*

է) Զիջական *(հակառակ պատճառի)*,— *օրինակ* Թեպետ և շատ աշխատեց, *բայց նպատակին չհասավ։*

5) Վ ե ր ա դ ի ր խ ո ս ք, *որով որոշվում է գլխավոր խոսքի մեջ եղած մի գոյական. օրինակ՝ Այն մարդը, որ երջանիկ է, ժամերը չի համարում։ Մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ, ել անվախ ելնենք թշնամու առաջ։*

Վերադիր խոսքերի մեջ մի առանձին տեսակն են կազմում և բացահայտող խոսքերը, որոնցով որոշվում է մի ամբողջ խոսք. օրինակ՝ Նրանք միասին գյուղի մեջ այբուբենն ընդհանրացրին, որ և եղավ եղանց մեծ պարծանքը։

254. *Երկրորդական խոսքի մասերն ևս, բացի բայից, իրենց կողմից կարող են արտահայտվել երկրորդական խոսքերով, որոնք* Ե ր կ ր ո ր դ կ ա ր գ ի Ե ր կ ր ո ր դ ա կ ա ն խ ո ս ք ե ր *են և ստորադասվում են երկրորդական խոսքերին, որ սրանց նկատմամբ գլխավոր կամ կերադաս են։ Երկրորդ կարգի երկրորդական խոսքերն ևս կարող են իրենց կողմից երրորդ կարգի երկրորդական խոսքեր ունենալ իբրև լրացում։ Առաջին կարգի երկրորդական խոսքերը փոխանակում են պարզ խոսքի լրացումներին, իսկ երկրորդ և երրորդ կարգի երկրորդական խոսքերը համապատասխան են խոսքի կողմնակի մասերին կամ կողմ-*

նակի լրացումներին (տե՛ս §§ 46, 47)։ Օրինակ՝ Աշխատող ձեռքը... կերթա այնտեղ (գլխ. խ.), **ուր** *ճողն անմշակ է և դաշտերը խոպան (երկրորդ. խ.). Նա յուր քրտինքը կթափե այդ հողում (գլխ. խ.),* **որ**-պեսզի *ապագայում մխիթարվի այն մտոք (երկրորդ. խ.),* **թե** *ինքն իրավամբ կրում է առարչի պատկերը (2-րդ կարգի երկրորդ. խ.), վասնզի կարողացավ «ինչն ստեղծել ոչնչից» (3-րդ կարգի երկրորդ. խ.)։*

255. *Երկրորդական խոսքերն ունին պարզ խոսքի լրացումների նշանակություն. այս պատճառով երկրորդական խոսքերի տեղ միշտ կարիլի է դնել լրացական բառերով (գոյական, ածական, մակբայ) արտահայտված լրացումներ. այդ ժամանակ բարդ խոսքը վերածվում է պարզ խոսքի։ Օրինակ՝* Նա գնաց, **որ** *իր հայրենակիցներին օգնի,—Նա գնաց իր հայրենակիցներին օգնելու։*

Նայելով թե ինչ տեսակի լրացական բառերի տեղ են դրված՝ երկրորդական խոսքերն ասվում են՝ գոյական, ածական և մակբայական խոսքեր։

1. **Գոյական խոսքերը** *փոխանակում են գոյականի, ուստի պարզվելու ժամանակ արտահայտվում են գոյականով կամ գոյականաբար գործածված բառով. օրինակ՝ Ով խաղա, կկաղա,—խաղացողը կկաղա։ Դու հաղորդեցիր ինձ, որ նա եկել է,— դու հաղորդեցիր ինձ նրա գալուստը (գալը)։*

2. **Ածական խոսքերը** *փոխանակում են մի ածականի, ուստի և պարզվելու ժամանակ արտահայտվում են մի ածականով կամ ածականաբար գործածված բառով. օրինակ՝ Այն մարդը, որ երջանիկ է, ժամերը չի համարում,— երջանիկ մարդը ժամերը չի համարում։*

3. **Մակբայական խոսքերը** *փոխանակում են մակբայի, ուստի և պարզվելու ժամանակ արտահայտվում են մակբայով. օրինակ՝ Ես երբ որ տուն էի գնում, հանդիպեցի նրան,— ես տուն գնալիս հանդիպեցի նրան։*

256. *Ամեն երկրորդական խոսք կարելի է լրացական բառերով արտահայտել, բայց շատ անգամ այդ հնարավոր չի լինում անել առանց իմաստի փոփոխության և լեզվական տգեղ ձևեր կազմելու։ Թեպետ այս վարժությունը, որով մի արտահայտության ձև մի ուրիշով է փոխանակվում, իսկապես քերականությանը չի վերաբերում, այլ ճարտասանությանը, բայց որովհետև կարևոր է լեզվի հմտության համար, ուստի այստեղ բերվում են դրա համար մի քանի ընդհանուր կանոններ, իսկ ներքևում կդրվին օրինակներ։*

1. Դուրս են ձգվում երկրորդական խոսքի սկզբի շաղկապները կամ շաղկապական բառերը, ինչպես և գլխավոր խոսքի մեջ եղած ցուցական դերանունները, որոնք ակնարկում են երկրորդական խոսքի իմաստին և նրանից են ստանում իրենց նշանակության որոշությունը, ինչպես՝ «Ինչ որ կցանես, այն կհնձես» խոսքի մեջ ինչ որ, այն բառերը։

2. Բայը դառնում է կամ մի գոյական՝ նայելով իմաստին՝ որևէ հոլովով, նախդրով կամ առանց նախդրի, կամ մի ածական ու մակբայ, նայելով թե երկրորդական խոսքը ինչ լրացական բառի պաշտոն է կատարում. իսկ ենթական դառնում է կողմնակի են-

թակա կամ ենթակայական սեռական, որի տեղ, եթե ստացական դերանուն է, կարող է և ս կամ դ հոդ դրվել։ Այսպես՝ «Ինչ որ կցանես, այն կհնձես» բարդ խոսքը պարզվում է «Ցանածդ կհնձես»։— Այն մարդը, որին դու տեսել ես...— Քո տեսած մարդը։ Կտուրը ցորեն փռեցի, որ չորացնեմ,— Կտուրը ցորեն փռեցի չորացնելու համար։

3. Եմ բայը, երբ հետն ունի մի ստորոգյալ, դուրս է ձգվում, և ստորոգյալն իրրև վերադիր դրվում է գոյականի վրա. օրինակ՝ Այն մարդը, որ երջանիկ է... երջանիկ մարդը։

4. Առաջին կարգի երկրորդական խոսքերը դառնում են ենթակա, խնդիր և այլն. իսկ երկրորդ կարգի երկրորդական խոսքերը դառնում են խոսքի կողմնակի մասեր կամ կողմնակի լրացումներ. օրինակ՝ Բարեկամս հայտնեց, թե այն երեխան, որ մեզ այնքան զվարճություն էր պատճառում, մեռել է,— Բարեկամս հայտնեց՝ մեզ այնքան զվարճություն պատճառող երեխայի մահը (մեռնելը)։

5. Երկրորդական խոսքերը վերածվում են ավելի թեթևությամբ դերբայներով, քան ուրիշ բառերով։ Դերբայներն իրրև բայահաղորդ բառեր՝ ունին բայական սեռ և առնում են նույն խնդիրներն, ինչ որ բայերը. բացի այդ՝ հաճախ ցույց են տալիս և ժամանակ։ Ուստի պարզելու ժամանակ երկրորդական խոսքի բայը փոխվում է, նայելով նշանակության, այս կամ այն դերբայի, որ և պահում է բայի խնդիրներն ու նույնիսկ ենթական՝ իրրև ենթակայական սեռական կամ կողմնակի ենթակա (§§ 58—62, 81)։ Մյուս կողմից, անորոշ դերբայը և նույն բնից կազմված բայական անունները հաճախ նշանակությամբ տարբերվում են իրարուց. մինչ դերբայը լոկ բայիմաստ է ցույց տալիս, բայական անունները, մանավանդ ություն վերջացածները, շատ անգամ լոկ գործողություն չեն նշանակում, այլև վերացական վիճակ, գործողության արդյունք և այլն. ինչպես՝ գիտություն նշանակում է գիտենալը,— գիտցած բանը,— գիտենալու վիճակը և այլն։ Այս պատճառով երկրորդական խոսքի բայը, պարզելու ժամանակ, հաճախ կարելի չէ բայական անվան վերածել։ Երկրորդական խոսքի բայը կարելի է բայական անվան փոխել, երբ խնդիրներ չունի, կամ եթե խնդիրներ ունի, բայական անունն ուղղական կամ հայցական հոլովով է դրվում. այս ժամանակ խնդիրները բայական անունից ետագաս են մնում (տե՛ս § 206. 2, բ)։ Օրինակ՝ Այն գիշերը, երբ Քրիստոս ծնվում է...—Քրիստոսի ծննդյան (ծնվելու) գիշերը։ Այն օրը, երբ նա մեռավ...— Նրա մահվան (մեռնելու) օրը։ Երբ որ Քրիստոս համբարձավ...,— Քրիստոսի համբարձումից (համբառնալուց) հետո։ Ինձ հայտնեցին, որ նա հրաժարվում է պաշտոնից,—ինձ հայտնեցին նրա հրաժարումը պաշտոնից։— Բայց երբ բայը խնդիրներ ունի և պարզման ժամանակ դերբայը կամ բայական անունը թեք հոլովներով (սեռական, տրական) պիտի դրվեն, այն ժամանակ բայը վերածվում է սովորաբար անորոշ դերբայի։ Օրինակ՝ Այն գիշերը, երբ Քրիստոս ծնվում է մսրում,—Քրիստոսի՝ մսրում ծնվելու գիշերը,—և ոչ՝ Քրիստոսի մսրում ծննդյան գիշերը։ Երբ որ Քրիստոս երկինք համբարձավ...,—Քրիստոսի երկինք համբառնալուց հետո,—և ոչ՝ Քրիստոսի երկինք համբարձումից հետո։— Պիտի դիտել սակայն, որ հոլովված բայական անունների կիրառությունը խնդիրներով, որ հատուկ է գրաբարին, հետզհետե ավելի գործածական է դառնում, և պետք է կարծել, որ ժամանակով մեր լեզուն կստանա այս ճկունությունը։

Յաե. *Քերականները երկրորդական խոսքերի փոխանակումը լրացական բառերով՝ կոչում են սովորաբար կրճատում, և երկրորդական խոսքերին փոխանակող արտահայտությունները դերբայներով՝ դնում են իրրև կրճատված խոսք (նախադասություն)։ Սակայն այս սխալ է. չի կարող խոսք (նախադասություն) լինել առանց դիմավոր բայի (տե՛ս §§ 6, 7)։ Ինչքան էլ երկրորդական խոսքերն ու նրանց փոխանակող դերբայներով արտահայտությունները նույն նշանակությունն ունենան, այդ երկուսը բովանդակությամբ միայն նույն են և ոչ ձևով։ Ձևով մեկը, դիմավոր բայով արտահայտված լինելով, խոսք է, իսկ մյուսն, անդեմ բայով (դերբայով) արտահայտված, խոսք չէ, այլ միայն մի պարզ խոսքի լրացում։ Ուստի «կրճատված խոսք» ասածը բոլորովին խոտելի է։ Պետք չէ գործածել նաև «երկրորդական խոսքը կրճատել» դարձվածը, որ միայն շփոթություններ*

տեղիր է տալիս. որովհետև այստեղ ոչ թե «կրճատում» է լինում, այլ միայն պարզապես փոխանակում կամ վերածում է լինում, այսինքն երկրորդական խոսքի տեղ դրվում է մի լրացական բառով արտահայտություն, կամ թե երկրորդական խոսքը վերածվում է մի լրացական բառի, որով և բարդ խոսքը, բաղադրությունը, դառնում է պարզ խոսք։ Ուստի այս ճարտասանական վարժությունն իր իսկական անունով պետք է կոչել՝ կա՛մ երկրորդական խոսքի վերածում լրացական բառերի, կա՛մ թե բարդ խոսքի, բաղադրության, պարզում։

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԵՐ

257. Ուղղակի *խոսք կոչվում է խոսողի իր կամ մի ուրիշի խոսքը, երբ բառացի, ինչպես ասվել է, մեջ է բերվում իբրև խնդիր* **ասել, գրել, պատասխանել, մտածել** *բայերի։ Ուղղակի խոսքի մեջ դերանունների, ուրեմն և բայերի, առաջին և երկրորդ դեմքերը սովորաբար ոչ թե խոսող անձին և նրա խոսակցին են վերաբերում, այլ մի ուրիշ անձի, որի խոսքերը մեջ են բերվում, և այն անձին, որին ուղղակի խոսքն ասողը դարձրել է յուր խոսքը։*

Ուրիշի խոսքն **անուղղակի** *է դառնում, երբ բառացի մեջ չի բերվում, այլ միայն շուռ տված, բովանդակությունն է ասվում։*

1. Ուղղակի խոսքն անուղղակի դարձնելիս առաջին և երկրորդ դեմքերը փոխվում են երրորդ դեմքի, հրամայականը փոխվում է ըղձականի (տե՛ս § 143. 5), իսկ կոչականը դառնում է կա՛մ ենթական անուղղակի խոսքի, կա՛մ խնդիր գլխավոր խոսքի բային, որին ստորադասվում է անուղղակի խոսքը։ Օրինակ՝ Ծղբայրս ասաց Տիգրանին. «Ես անգլերեն լավ եմ հասկանում, իսկ դու բնավ չգիտես»,— «Ծղբայրս ասաց Տիգրանին, թե ինքն անգլերեն լավ է հասկանում, իսկ նա բնավ չգիտե»։ Ծղբայրս ասաց. «Տի՛գրան, գնա՛ տուն»,— «Ծղբայրս ասաց, որ Տիգրանը գնա տուն», կամ՝ Ծղբայրս ասաց Տիգրանին, որ նա գնա տուն։

2. Թե խոսողն իր կամ խոսակցի ասած խոսքերն է ուղղակի ձևով մեջ բերում, այն ժամանակ ուղղակի խոսքն անուղղակի դարձնելիս դեմքերի փոփոխություն չի լինում, այլ միայն հրամայականն ըղձական է դառնում, իսկ կոչականը կա՛մ անփոփոխ է մնում, կա՛մ դառնում է երկրորդ դեմքի բացահայտիչ։ Օրինակ՝ Ես ասացի քեզ. «Ես անգլերեն լավ եմ հասկանում, իսկ դու բնավ չգիտես»,— Ես ասացի քեզ, որ ես անգլերեն լավ եմ հասկանում, իսկ դու բնավ չգիտես։—Դու ասացիր նրան. «Ես անգլերեն լավ եմ հասկանում, իսկ դու բնավ չգիտես»,— Դու ասացիր նրան, թե դու անգլերեն լավ ես հասկանում, իսկ նա (ինքը) բնավ չգիտե։— Ասել եմ, որ մի տեղ գնալիս ինձ իմաց արա՛ (Պո.),—Ասել եմ, որ մի տեղ գնալիս ինձ իմաց անես։ Քանի՛ անգամ եմ ասել, որ այդ պառավական բաներին մի՛ հավատալ (Պո.),— Քանի՞ անգամ եմ ասել, որ այդ պառավական բաներին չհավատաս։ Քեզ չե՞մ ասել, որ այսպիսի օրն էլ է թող հանգիստ վեր ընկնեմ (Պո.),—այսպիսի օրն էլ է թողնես հանգիստ վեր ընկնեմ։ Ես ասացի քեզ

«Տի՛գրան, գնա՛ ձեր տուն»,— ես ասացի քեզ, որ դու, Տիգրան(դ), գնաս ձեր տուն։

3. Ղեձականի վրա դրված անենթակա քող հրամայականը (§ 21. 5. ծան.) անուղղակի խոսքի մեջ դուրս է ընկնում. օրինակ՝ Նա տանն իմաց արեց, թե՝ Թո՛ղ սանամերը փախչի,—...իմաց արեց, որ սանամերը փախչի։ Ասաց, թե՝ Թո՛ղ ամեն մարդ էլ խմեն,— ասաց որ ամեն մարդ էլ խմեն։ Ես նրան գրեցի, թե՝ Թո՛ղ եղբայրս գա, իսկ դու մնա՛, —գրեցի, որ եղբայրս գա, իսկ ինքը մնա։

4. Անուղղակի խոսքի մեջ պետք է տարբերել իմքն և նա դերանունների գործածությունը։ Անուղղակի խոսքի մեջ իմքն դրվում է գլխավոր խոսքի ենթակայի անվան տեղ, իսկ նա դրվում է մի ուրիշ անձի անվան տեղ. օրինակ՝ Եղբայրս ասաց Տիգրանին, որ ինքը (եղբայրս) անգլերեն լավ է հասկանում, իսկ նա (Տիգրանը) բնավ չգիտե (տե՛ս 1-ին կետը)։—Բայց երբ անուղղակի խոսքի մեջ պահվում են խոսողի կամ խոսակցի դեմքերը, այն ժամանակ իմքն կարող է փոխանակել նա դերանվան. օրինակ՝ Ես ասացի Տիգրանին, որ ես անգլերեն լավ եմ հասկանում, իսկ իմքը (կամ՝ նա) բնավ չգիտե (տե՛ս 2-րդ կետը)։ Հաճախ սակայն, երբ գլխավոր խոսքի ենթական ևս երրորդ դեմքով է, խոսքը երկդիմի է մնում, չի իմացվում, թե արդյոք իմքն դերանվան հոլովները՝ իր, իրեն և այլն, գլխավոր խոսքի ենթակային են վերաբերում, թե՛ երկրորդական խոսքի ենթակային։ Այսպիսի դեպքերում դերանվան ետևից իբրև բացահայտիչ կրկնվում է անունը։ Օրինակ՝ Եղբայրս ասաց Տիգրանին, որ նա գնա իր, եղբոր, տունը։

Նշ. *Այս երկդիմության պատճառն այն է, որ իմքն դերանվան հոլովները՝ իր, իրեն, իրենից և այլն, գործ են ածվում ենթակայի անվան տեղ, մինչ նա ցուցականինը դրվում են մի անվան տեղ, որ ենթակա չէ. ուստի ասվում է՝ նա տեսավ իր եղբորը, նրանք տեսան իրենց եղբորը. նա տեսավ նրա (մի ուրիշի) եղբորը։ Տիգրանը տեսավ իր որդուն և իր կնոջը (որդին և կինը Տիգրանինն են)։ Տիգրանը տեսավ նրա որդուն և նրա կնոջը (որդին ու կինն ուրիշինն են)։ Տիգրանը տեսավ իր որդուն և նրա կնոջը (որդին Տիգրանինն է, իսկ կինը՝ որդունը կամ մի ուրիշինը)։— Ցուցական նա դերանվան հոլովները չեն կարող գործածվել մի անվան տեղ, որ ենթակա է. իսկ անձնական իմքն դերանունն և իր հոլովները կարող են դրվել նա դերանվան տեղ, այսինքն մի անվան տեղ, որ ենթակա չէ, բայց միայն, երբ խոսքի մեջ շփոթություն առաջ չի գալ և որոշ կհասկացվի, թե դերանունը ո՛ր անվան տեղ է դրված. օրինակ՝ Ես տեսա Տիգրանին և իր եղբորը։*

ՄԻՋԱՆԿՅԱԼ ԽՈՍՔԵՐ

258. *Միջանկյալ ասվում են այն խոսքերը, որոնք մտնում են ուրիշ խոսքերի մեջ՝ առանց քերականորեն կապակցվելու նրանց հետ։ Միջանկյալ խոսք են դառնում՝*

1. *Գլխավոր խոսքերը (ասել, պատմել, հաղորդել, մտածել և այլն բայերով), երբ շրջումով մտնում են ուղղակի կամ անուղղակի խոսքերի մեջ։ Այսպիսի շրջուն գլխավոր խոսքերի մեջ բառադասության

ևս շրջուն է լինում. առաջ դրվում է բայը, ապա ենթական և խնդիրները։ Օրինակ՝ Գնացե՛ք այսուհետև, ասաց Հիսուս իր աշակերտներին, աշակերտեցեք բոլոր հեթանոսներին։— Տիգրանը, ասում են, դեռ չի վերադարձել իր ճանապարհորդությունից։ Այն ժամանակ, չե՞ս հիշում, նա արդեն մեռել էր։ Բայց ուսանողը, հո՛ գիտե՞ք, անձնիշխան է ամեն դեպքում (Մուր.)։

Խոսքերի փոխանակության ժամանակ գլխավոր խոսքը՝ ասել, հարցնել, պատասխանել և այլ բայերով՝ շրջումով դրվում է ուղղակի խոսքից հետո, կամ մտնում է ուղղակի խոսքերի մեջ ինչպես մի միջանկյալ խոսք։

2. Գլխավոր խոսքը, երբ մտնում է երկրորդականի մեջ. օրինակ՝ Նա վաղը, մյուս օրը, կարելի է. կգա։

3. Այնպիսի խոսքեր, որ առանձին և ուրույն իմաստ ունին և շատ երկրորդաբար միայն պարզում են ասացվածի միտքը. օրինակ՝ Ուրացող Վասակը (այսպես է անվանում նրան Ղազիշեն) միայն յուր անձի և օգտի համար էր մտածում (Պալ.)։ Մի երկու ամիս ևս, և մենք կբաժանվենք իրարից, ո՛վ գիտե, գուցե հավիտյան.— Այդպիսի հարցեր, ինչպես հայտնի է, փորձված մարդիկ չեն տալիս իրար.—Պետրոս Մինարյանը (այս էր ուղեկցիս անունը), հայոց դպրոցի սան էր (Մուր.).—Տեր Մուկուչը (գյուղի քահանայի անունն էր) անծանոթ էր... այս սովորության (Մուր.)։

259. *Միջանկյալ խոսքերի մի առանձին տեսակն են կազմում և* **միջարկության խոսքերը,** *որոնք կազմվում են մեծ մասամբ մի ձայնարկությունից, կամ ձայնարկության նշանակությամբ գործածված բառերից, և ցույց են տալիս խոսողի զգացմունքը կամ կամքը։ Դրանք չեն մտնում խոսքի կազմության մեջ իբրև խոսքի մաս, այլ դրվելով խոսքի սկզբում կամ մեջը՝ եղանակավորում են խոսքը։ Օրինակ՝* **Ա՛խ,** *ինչպես կուզեմ։— Ավա՛ղ. նա վաղուց չկա այլևս։*

Տես. *Այս կարգին են պատկանում հաճախ և եղանակական մակբայները, որոնք իբրև միջանկյալ բառեր մտնելով խոսքի մեջ՝ եղանակավորում են խոսքի բովանդակությունը՝ ցույց տալով հավաստիություն, հավանականություն, երկբայություն և այլն § 34. 6). օրինակ՝ Ջափազանց պայծառ լույսը, այո՛, հաճելի չէ լինում վնասված աչքերին.— Բայց ես, իճարկե, ասել էի միամտաբար.— Նա, երևի, որոճում էր իմ ասածները (Մուր.)։*

II ԽՈՍՔԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

260. *Խոսքերի կապակցությունը՝ նայելով կապակցված խոսքերի հարաբերությանը՝ լինում է ստորադասությամբ և համադասությամբ (§ 251)։ Ստորադասությամբ կապակցվում են երկրորդական խոսքերը գլխավորի հետ։ Այս կապակցությունը լինում է՝*

1. **Շարահարությամբ**, *երբ երկրորդական խոսքերը, որոնք սկզբնապես գլխավորից անկախ խոսքեր են, առանց որևէ կապակցական բառի, նշանակությամբ միայն միանում են գլխավոր խոսքի հետ, դառնալով ենթակա, խնդիր և այլն։ Օրինակ՝ Մարդ կա՝ հազար արժե. մարդ կա՝ մին չարժե։ Այն էլ մի բան էր, Ծատուրը տան էր։ Սաղն ի՞նչ իմանա՝ կաղն ինչ է (Ա.)։*

2. **Զոդվածով**, *երբ երկրորդական խոսքերը գլխավորի հետ միանում են որևէ կապակցական բառով. ինչպես՝ Մարդ կա, որ հազար արժե. մարդ կա, որ մին չարժե։ Այն էլ մի բան էր, որ Ծատուրը տանն էր։ Սաղն ի՞նչ իմանա, թե կաղն ինչ է։*

Շարահարությունը խոսքերի կապակցության ամենապարզ, սկզբնական ձևն է և հատուկ է ժողովրդական լեզվին. գրական լեզվի մեջ պահանջվում է, որ կապակցված խոսքերի հարաբերությունն արտահայտվի որևէ կապակցական բառով։

261. *Կապակցական բառերն են հարաբերական բառերը և ստորադասական շաղկապները. ըստ այսմ և երկրորդական խոսքերը, նայելով թե ինչպիսի բառով են կապակցված, կոչվում են* **հարաբերական** *և* **շաղկապական խոսքեր**:

Հարաբերական բառերն են՝ որ, ով, ինչ, որը որ, քանի որ, որքան և այլն, բոլոր հարցական բառերը, որոնք կորցնելով իրենց հարցական նշանակությունը՝ գործ են ածվում իբրև հարաբերական կամ շաղկապական բառեր և կապում են երկրորդական խոսքը գլխավորի հետ։

1. Հարցական-հարաբերական բառերը միաժամանակ և անորոշ իմաստով բառեր են. ուստի դրանցով կապված երկրորդական խոսքերը մեծ մասամբ ոչնչի ընդհանուր անորոշ կամ ընդհանրացական նշանակություն։ Այս դեպքում հարաբերական բառերից հետո,—իսկ եթե հարաբերականն ածական վերադիր է, սրա գոյական անունից հետո,—կարող է դրվել որ թարմատար շաղկապը, որի հետ, կամ առանց նրան, կարող է դրվել նաև էլ (և) շաղկապը։ Օրինակ՝ Ինչ որ կուզես՝ արա՛։ Ինչ փորձանք որ գա՝ համբերիր։ Ընտրիր՝ որը որ կուզես։ Ով էլ որ լիներ քո տեղը, այդ բանը չէր անիլ։ Ով որ էլ լիներ... Ով էլ լիներ...։

2. Գլխավոր խոսքի մեջ դրվում է կամ կարող է դրվել մի անուն կամ դերանուն իբրև հարաբերյալ, որին ակնարկում է երկրորդական խոսքի հարաբերականը. հարաբերյալ անունը վրան կարող է ունենալ մի ցուցական կամ անորոշ մականուն։ Օրինակ՝ Ինչ որ ցանես, այն կհնձես։ Ով խաղա, նա կկաղա։

3. Երբ նա, այն ցուցականները ասացվածի սկզբում են և երկրորդական խոսքը միջադաս է, գլխավոր խոսքի մեջ ավելադրությամբ կարող է կրկնվել նա, այն, երբ շեշտվում են։ Օրինակ՝ Նա որ եկավ, նա՛ ասաց։ Ջէ՛, չէ՛, երգած չէ դեռ մայր Հայաստան կարապի երգը, երգն իր տխրագին. այն որ լսեցինք, այն երգն էր գարնան (Գ.-Ք.)։

262. *Վերադիր խոսքերը կապակցվում են* **որ, ով (որ), ինչ (որ), որը որ** *հարաբերականներով.*

1. Երբ **որ** *հարաբերականը դրվում է մի անձնական դերանվան տեղ, կամ մի այնպիսի ցուցական դերանվան տեղ, որ առաջուց ծանոթ առարկայի անվան տեղ է դրված։ Այսպիսի երկրորդական խոսքերն ունին բացահայտչի նշանակություն և վերածվելիս դառնում են բացահայտիչ։ Օրինակ՝ Մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ, եկ անվախ ելնենք թշնամու առաջ (Գ.-Ք.),— Մենք, հոգի ու քաջ սիրտ ունեցողներս, եկ... Գրեգինը աշխարհ ման եկած մարդ է. թե որ այդպես չլիներ, ես իմ տղային ինչո՞ւ կտայի նրան, որ տարին երեք մանեթով է կարդացնում (Պռ.)։ Լացով հզորների դուռը բախեցի, ինձ՝ տկարիս (=ինձ որ տկար եմ) պաշտպանություն տվող չեղավ (Ջիվ.)։ Ես որ այս բանն ասել եմ... (Ես՝ այս բանն ասողս)։ ...Դու, որ երկինքն ու երկիրը ստեղծել ես, լսիր ինձ (Դու, երկնքի և երկրի ստեղծող, լսիր ինձ)։*

2. Երբ **որ, ով (որ), ինչ (որ)** *հարաբերականները դրվում են մի անվան տեղ. օրինակ՝ Դու նմանիր այն ազատախոս թռչնակին, որ երգում է անձնասեր հույսերով (Գ.-Ք.)։*

Ով (որ), ինչ (որ) հարաբերականները տալիս են խոսքին ընդհանուր անորոշ նշանակություն, իբրև՝ որը որ լինի, ով որ լինի, ինչ որ լինի։ Օրինակ՝ Այն մարդը մարդ չէ, ով որ կեղծավորությամբ խոսի.— Սուրբ Գեորգն ամեն մարդկանց էլ, ով նրա դուռը գա, օգնության կհասնի.—Ջալալեդդինն երազ է տեսել, որ աստված կպատժի այն իրդին, ով որ յուր մաքիներից ամենալավերը հնգից մեկը չուղարկի շեյխի տունը. ում պատվական եզներից ու կովերից ամենապատվականները տասից մեկը շեյխի օջաղում չմշակեն ու կթվին.—Երևանի բազարն այն տեսակ ծախս չունի, ինչ որ այս երկու օրն այստեղ լինում է.—Նա այն կերակրներից չկերավ, ինչ որ ուրիշները կերել էին.— Այս մի քանի խոսքն էլ, ինչ որ կասեմ, նրան ասա (Պռ.)։ Եվ ոչ նա տալիս է այն պատասխանը, ինչ որ ինձ կարող էր բավականացնել (Պատկ)։ Թե լավ քննես, երջանիկ չէ այն անձը, ում որ կասեն՝ երանի քեզ.— Այն գույնով կմեռնեմ, ինչով ծնա (Ջիվ.)։ Ես չեմ ներել ինձ, եթե հեռանամ այստեղից այն ծանոթությամբ, ինչ որ ունիմ ձեր մասին.—Նա ևս վայելե այն բարիքները, ինչ որ դու վայելում ես (Մուր.)։

Նշ. Երբ հարաբերյալ անունը մասնավոր, որոշ նշանակություն ունի, այժմ այևս կարելի չէ գործածել որը որ հարաբերականը, այլ միայն որ. ինչպես՝ Սա այն ծնունդն էր անիծից, որն որ (պետք է գրել միայն որ) պես պես դիմակավ հիմնիվեր կործանելու շուտ շուտ Հայաստան եկավ (Դ.-Ք.)։ Հավատարիմ կենդանիները կրծում են իրենց տիրոջ շղթաները, որն որ անհամբեր սպասում է ազատություն ստանալ (Պալ.)։

263. *Երբ հարաբերականները դրվում են գլխավոր խոսքի մեջ եղած մի անվան տեղ, երկրորդական խոսքերը վերածվելիս դառնում են՝*

1. Բացահայտիչ (§§ 41. 2, 42, 178, 179), երբ հարաբերյալը կոչական անուն է, և երբ երկրորդական խոսքի ստորոգյալը մի անուն է եմ բայի հետ. օրինակ՝ Ո՛վ հայր, որ երկինքն ու երկիրը ստեղծել ես, լսիր մեր աղաչանքը.— Ո՛վ հայր, երկնքի և երկրի ստեղծող, լսիր մեր աղաչանքը։ Աշոտ Մսակեր, որ Բագրատունյաց թագավորության հիմնադրի պապն էր, գնեց Շիրակա գավառը,—Աշոտ Մսակեր, Բագրատունյաց թագավորության հիմնադրի պապը, գնեց...

2. Մականուն վերադիր երբեմն ետադաս (§§ 41. 1, 43, 208). օրինակ՝ Այն աշակերտը, որ ջանասեր է և իր գործով է պարապում, առաջադեմ կլինի,—ջանասեր և իր գործով պարապող աշակերտը առաջադեմ կլինի։ Լիդիա Պավլովնան զբաղված էր սուրճ ու շոկոլադ պատրաստելով այն հյուրերի համար, որ գալու էին,—Լիդիա Պավլովնան զբաղված էր գալիք հյուրերի համար սուրճ ու շոկոլադ պատրաստելով (Մուր.)։ Ես եմ եկել բա՛, ըսկի կթողա՞մ, որ իմ աղին ուրիշ մարդ տանի՞, ասաց կառապանը վստահությամբ, չնայելով իր տանելիք աղին (այն աղային, որին պիտի տաներ) առաջին անգամն էր տեսնում (Մուր.)։ Ոչ ոք չի կարող գուշակել գալիք օրերը (այն օրերը, որ գալու են)։ Մարդ կա, որ հազար արժե. մարդ կա, որ մեկ չարժե,—Մարդ կա՝ հազար արժող. մարդ կա՝ մեկ չարժող (Ա.)։ Մարդ կա՝ արի (որ արի է), մարդ կա՝ բարի. մարդ կա՝ շատ բան կկատարի (Ա.—շատ բան կատարող)։ Իրանց հովիվը, որ իրանցից խելառ էր, կոտորեց...,—Իրանց հովիվը, իրանցից խելառ, կոտորեց չափազանց մատաղահաս դառներ (Զիվ.)։ Մարդ միշտ երանի է տալիս այն օրերին, որ անցել, դնացել են,—...անցած, գնացած օրերին։—Բացի վերևում դրածներից պիտի նկատի ունենալ և հետևյալները։

3. Եմ բայը, որ սովորաբար դուրս է ընկնում, ներգոյական, բացառական հոլովների և կապական բառերի հետ դառնում է եղող, եղած դերբայ, կամ թե բայը դուրս է ընկնում, բայց հոլովներով խնդիրները դառնում են սեռական վերադիր. օրինակ՝ Այն մարդիկը, որ մեզ հետ էին, չեն վերադարձել,— Մեզ հետ եղած մարդիկը, կամ՝ Մեր հետի մարդիկը... Այն գիրքը, որ սեղանի վրա է...,—Սեղանի վրայի գիրքը... Այն մարդիկը, որ ազնվական ծագումից են... Ազնվական ծագումից եղող մարդիկը... կամ՝ Ազնվական ծագումի մարդիկը։ Այն աշակերտները, որ դասարանում են...,—Դասարանում եղող աշակերտները,—Դասարանի աշակերտները (տե՛ս § 86)։

4. Երկրորդական խոսքի ենթական դառնում է կողմնակի ենթական կամ ենթակայական սեռական. իմ, ին դերանունների տեղ ս, դ հոդերն են գործածվում։ Օրինակ՝ Այն մարդը, որի ոտքր կաղ է...,—ոտքր կաղ մարդր (տե՛ս § 62)։ Գոհ եղիր բախտովդ, որ տվել է քեզ աստված,—...աստուծու քեզ տված բախտովդ։ Այն աշակերտը, որին դու գովում էիր...,— Քո գոված աշակերտը,—գովածդ աշակերտը, գոված աշակերտդ։ Քո ւրած ցեխին մի գդալ ջուրն էլ է հերիք (Ա.— այն ցեխին, որ

դու անում ես...)։ Քննում եմ իմ անցյալը, տեսնում անկատար. իմ քո-ղած հետքս վաղանցուկ (Ջիվ.,—այն հետքը, որ ես թողել եմ)։ Օրհնվի քո եկած սարը (Սայաթ-Նովա,—Սարը, որից դու եկել ես)։ Ինձ էլ քո ընկածդ հորի մեջ ձգեց (Ջիվ.—այն հորի մեջ, որ դու ընկար)։ Ձեթը քանկ եղած տարին ջուրն աղքատին լույս տվավ (Ա.—այն տարին, որ ձեթը քանկ եղավ...)։ Մեր բնակած տունը. քո գնալու ճանապարհը։ Տե՛ս և § 188. 2, 256. 5։

264. *Հարաբերական դերանունը դրվում է սովորաբար անմիջա-պես իր հարաբերյալ անունից հետո. բայց կարող է երբեմն հարաբեր-յալից անջատվել ուրիշ բառերով։ Ուշադրություն պիտի դարձնել սա-կայն, որ այս անջատումը պետք է այնպես լինի, որ պարզ հասկացվի. թե ո՛ր անունն է հարաբերյալը. այս պատճառով հարաբերյալի ու հա-րաբերականի մեջ կարող են մտնել՝ բայ, դերբայ, թվով ու դեմքով տար-բեր գոյականներ, կամ հարաբերյալը լինում է մի ցուցականով անուն և այլն. թե չէ երկդիմությունից ազատ մնալու համար պետք է շրջում անել (տե՛ս § 208. 5)։ Օրինակ՝ Հայկ ձեռք զարկեց մի գյուղ շինելու,* **որ** *յուր անունով Հայկաշեն անվանեց (Պալ.)։* **Այն աղ ու հացը վկա, որ** *իրար հետ կերել ենք.—Կարծես* **սագերի** *քարվան լինի,* **որ** *(փոխանակ՝ որոնք) իրար ետևից գնալով* **զարդարում** *են ջրի երեսը.—Դու գիտես* **կանանց** *բնությունը,* **որ** *այդպիսի բանի են ման գալիս...—Այ տղա, բաս իշխանները քո հոր մշա՞կն են,* **որ** *ամեն մեծ մարդ գալիս՝ տա-նում են, իրենց տանը վեր բերում (Պռ.)։* **Ես** *Վարդանն եմ, հայոց զո-րավարը,* **որ** *կովեցի Պարսից դեմ։*

265. *Հարաբերական խոսքն երբեմն վերաբերում է ոչ թե գլխա-վոր խոսքի մեջ եղած մի գոյականի, այլ գլխավոր խոսքի ամբողջ բո-վանդակությանը. այս դեպքում ուշադրություն պիտի դարձնել, որ հա-րաբերականից առաջ կամ մոտիկ այնպիսի գոյական չընկնի, որ կա-րող է իբրև հարաբերյալ հասկացվել։ Օրինակ՝ Առաստաղի ավելի մութ խորշերը առատորեն բռնված էին սարդի ոստայններով,* **որ** *ապացու-ցանում էր, թե այդ տան մեջ չկար շար ձեռք... Վանահոր սենյակը ոչըն-չով չէր տարբերվում մյուս միաբանների խուցերից,* **որ** *ապացուցանում էր, թե հավասարության սկզբունքը հնուց անտի հարգված է եղել այդ-տեղ.—Նրանք ձեռքերնին մի մի գիրք առած կարդում էին, երբեմն կա-մացուկ, երբեմն մռմռալով, իսկ հաճախ բարձրաձայն, առանց մեկը մյուսին նայելու,* **որից** *և բակի ու սրահի մեջ բարձրացել էր աղմուկ ու ժխոր.—Ամպերը շարունակ բաց-խփուկ էին անում երկնքի երեսին,* **որից** *լուսինը մերթ պայծառ բացվում, լուսավորում էր աղքատիկ գյու-ղը..., մերթ լողում, սուզվում էր ամպերի ետևը (Մուր.)։*

Երբեմն այսպիսի գլխավոր խոսքի բովանդակությունն ամփոփ-վում է մի բան բառով, որին և վերաբերում է հարաբերականը. օրի-նակ՝ Բացի այդ ընդհանուր և ծանրակշիռ հարցերից՝ հայր կառավա-րիչն աշխատում է ժողովրդի անմիջական առօրյա խնդիրն ևս ըստ

կարելվույն կտրուկ և անկաշառ ձևով վճռել. մի բաճ, որ իհարկե նույնպես ուշագրավ է (Ալ.)։

266. Որ *հարաբերականի նշանակությամբ գործ են ածվում՝*

1. **Ուր, որտեղ, որտեղից, ուստի, ուսկից, երբ,**—*երեք հարաբերականը տեղի և ժամանակի նշանակությամբ է առնվում։ Օրինակ՝ Հունաստանը քերևս մի հատիկ երկիրն է, ուր մարդկությունը բնական ճանապարհով է զարգացել և ուր գրականությունը՝ իբրև ամենաճիշտ հայելի այդ զարգացման՝ ժողովրդի հետ միասին առաջ է գնացել (Պալ.)։ Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները, ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն. կանաչում թաղված այն այգիները, ուր իբրև գոհար խաղողն է հասնում (Հով. Հովհ.)։ Մենք իջանք դեպի այն ձորակը, ուր հոսում էր գյուղի լեռնային վտակը (Մուր.)։— Ցույց տվեց ինձ այն դուռը, ուստի ծառաներն էին ել ու մուտ անում (Պատկ.)։ Հասան սարի գլուխը, որտեղից երևում էր գյուղը։ Գյուղի եկեղեցին գտնվում էր... մի առանձնացած բլրակի լանջի վրա, որտեղից բացվում էր մեր առաջ... տեսարանը.—Պետք էր այժմ վերադառնալ քաղաք, ուսկից ամբողջ երեք ամիս բացակա էի.—Ճանապարհը հաճախ անցնում էր և սիզավետ բարձունքներով, ուսկից տեսարանները բացվում էին ավելի շքեղ ու ընդարձակ (Մուր.)։ Անիծյալ լինի այն գիշերը, երբ դու ծնվեցար։ Հիացմունքով էր խոսում այն ժամի ու վայրկյանի մասին, երբ մայրաքաղաքից հեռացած՝ գտնվում կլիներ հայրենիքում.—Կարոտությունը աղքատի տան մեջ յուր ներկայությունը զգալ է տալիս նույնիսկ այն վայրկյանին, երբ մայրը ողջագուրում է պանդուխտությունից վերադարձող որդուն.—Այդ գիրքը նրան սիրելի էր դարձել մանավանդ այն օրից, երբ ուսանողական ժողովում յուր հայտնի խոստումն արավ (Մուր.)։*

Ծան. *1. Ավելորդ է* ուր *և* երբ *բառերից հետո ընդհանրացական* որ *թարմատարը դնել, երբ հարաբերյալը մի որոշ առարկա է ցույց տալիս, ինչպես՝ Բաց աչքերդ այդ նախշուն, ուր որ մայրդ յուր բախտ-փառքը, կյանք ու արևն է տեսնում.—Ես ուխտատեղի դարձնենք այն վայրը, ուր որ թափեցավ նոցա սուրբ արյուն (Գ.-Ք.)։*

Ծան. *2. Երբեմն* երբ *բառի տեղ դրվում է* որ *ժամանակ, ինչպես՝ Ազգը երեխայական դրությունից կամաց կամաց և աստիճանաբար անցնում է պատանեկության տարիքին, որ ժամանակ նա ճանաչում է ինքն իրան (Պալ.)։— Օտարաբանություն է* երբ *մակբայի տեղ* ուր *դնել ժամանակի անվան համար, ինչպես՝ Մարդ ունի այնպիսի վայրկյաններ, ուր զարհուրելի կերպիվ կզգա առանձնության բեռը (Սրբ. Տյուսաբ)։— Նույնպես կարելի չէ գրել* ուր *փոխանակ* որի մեջ *գրելու. օրինակ՝ Ես դեռ ոչ մի գիրք չեմ կարդացել, ուր (պետք է գրել որի մեջ) այդպիսի բան գրած լինի։*

2. Ինչ հարաբերականը, փոխանակ որ*-ի, հետևյալ տեսակի կապակցություններուն մեջ՝ Դեռ այն անելն է, ինչ (կամ՝* որ*) անում է։ Դեռ այն գնալն է, ինչ (կամ՝ որ) գնացել է։ Հենց այն է, ինչ եկավ նստեց։ Այնքան ժամանակ ինչ եկել էին, երկու այնքան էլ ստեցին։ Վայ այն քնելուն, ինչ քնեցին։*

3. Ինչպես, երբ վերադիր խոսքով ընդհանուրի վրա իբրև բացատրություն կամ օրինակ ավելանում են մասնավորները. օրինակ՝ Ընտանի կենդանիները, ինչպես (են)՝ ձիերը, էշերը, ոչխարները և այլն, մարդուս շատ պիտանի են։—Երբ բոլոր մասնավորներն են մեջ բերվում, բացատրական խոսքը սկսվում է որ բառով. օրինակ՝ Մի քանի աշակերտներ, որ են՝ Ա., Բ. և Գ., ինձ մեծ ուրախություն են պատճառում։—Երբ առանձնապես մեջ են բերվում մի քանի մասնավորներ միայն, այսպիսի խոսքերը կապակցվում են մանավանդ, հատկապես բառերով. օրինակ՝ Մի քանի աշակերտներ, մանավանդ Ա., Բ. և Գ., ինձ մեծ ուրախություն են պատճառում։

4. Ինչպես, ինչպես որ, երբ հարաբերականը խոսքի մեջ դառնում է ստորոգելիական վերադիր։ Օրինակ՝ Դու (բախտ) աստված չես, ինչպես կոչեց քեզ հին դարը դյուցազանց (Գ.-Ք.)։ Խուռն բազմությամբ դիմում էին աթենացիք Ճեմարանի պարտեզներում բարձր իմաստության դասեր լսելու աստվածախոս Պլատոնի բերանից, ինչպես որ անվանում էին նրան հույները (Պալ.)։

5. Ինչպիսին, որպիսին, որի նմանը, երբ հարաբերյալն ունի այնպիսի ցուցականը իբրև վերադիր և կամ հատկապես առարկայի տեսակն է շեշտվում։ Օրինակ՝ Ոչ մի աշուղ այնպիսի խաղ չունի ասած, ինչպիսին սա է ասած։ Տունը... մի տարօրինակ շենք էր, որի նմանը (կամ՝ որպիսին) նա չէր տեսած ոչ մի տեղ.—Հարթ ու ողորկ խճուղին, որի նմանը չկար Կովկասի ոչ մի կողմը, ախորժելի դարձուց նաև այս ուղևորությունը (Մուր.)։ Իրավունք այնպիսի գործողության նկատմամբ, որպիսին է պարլամենտ արձակելը (Լր.)։ Միայն այդ իմաստով է հատկացված ֆրանսիական հանրապետության նախագահին պատերազմ հայտարարելու իրավունակությունը, որպիսին զլացվում է նրան պետական կյանքի առօրյա նորմալ շրջանառության պայմաններում (Լր.)։

Ծան. Օտարաբանություն է որ դերանվան տեղ որպիսին գործածելը հետևյալ տեսակի կապակցության մեջ. օրինակ՝ Հովհաննես Կարբեցի արքեպիսկոպոսն ընծայել է Պետությանը Թիֆլիսին մոտիկ Կոչոր՝ հազար դեսյատին ունեցող կալվածքը, որպիսի կալվածքը (պետք էր գրել պարզապես՝ որ) ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին իր ժամանակին գնել էր (Լր.)։

267. Անփոփոխ որ ձևն է գործածվում ներգոյականի նշանակությամբ, փոխանակ ուր, երբ բառերի, երբ հարաբերյալն ևս ժամանակ է ցույց տալիս։ Օրինակ՝ Կար ժամանակ, որ ես էլ շքեղազարդ հարսի պես հազար ու բյուր պչրանքով փախչում էի ափերես (Գ.-Ք.)։ Սև լիներ այն օրը, որ դու ծնվեցիր։ Հենց այն րոպեին տուն մտավ, որ հայրն ուզում էր ոտը դնի տան շեմքը։ Մոտեցել էր ժամը, որ երեխայից պիտի քաժանվեր։ Նրա համար տխուր է այն օրը, որ մենակ է հացի նստում։ Այն իրիկունը, որ սուրբ Գեորգի մասունքը տարան, մի պստիկ ամպ

վեր կացավ (Պռ.)։ Ամբողջ մի դար էր անցել այն ժամանակից, որ Ռուբեն Ա. Հայոց անկախության հիմը դրել էր Տավրոսի բարձրություններուվրա (Պալ.)։ Տարիներ են անցել այն օրից, որ նա իր վերջին բարևը տվավ այս աշխարհին.—Բայց այն օրից, որ իմացավ թե գործունեությունը կազդուրում է մարդուն... (Մուր.)։

Յուցական դերանվան ավելադրությամբ անփոփոխ որ հարաբերականի մասին տե՛ս § 166. 2։

268. Հարաբերական դերանունը սովորաբար դրվում է հարաբերյալից հետո. ուստի վերադիր խոսքերը լինում են միջադաս և վերջադաս. օրինակ՝ Առավոտյան զեփյուռը, որ հով էր բերում սարի լանջերից, մեղմով շարժում էր անտառի ծառերը.—Ուղիղ արևմուտքից երևում էր պատմական Յամաքաբերդը, որի սակավաթիվ տնակներն ու հյուղերը ցրված էին ջրապատ հրվանդանի վրա (Մուր.)։

Վերադիր խոսքերը շրջումով միայն կարող են և առաջադաս վարվել.

1. Բանաստեղծական լեզվի մեջ միայն երբեմն գլխավոր խոսքը, որի մեջ է հարաբերյալ անունը, դրվում է երկրորդականից հետո։ Օրինակ՝ Որի շուրջը դժնիկ փշով է պատած, մի՛ մտնիլ այն այգին (Ջիվ.)։ Ամա՜ն, ամա՜ն, տուր ինձ իմ գդակ. որ պիտի տայիր, ինձ պետք չէ այն գդակ (Ա.)։

2. Երկրորդական խոսքի մեջ, ավելի ժողովրդական ձևով, կրկնվում է հարաբերյալ անունը՝ առաջից ունենալով որ, ինչ իբրև վերադիր, իսկ ետևից որ թարմատարը. օրինակ՝ Այն գույնով կմեռնեմ, ինչ գույնով որ ծնվեցա (փոխանակ՝ Այն գույնով կմեռնեմ, ինչով ծնվեցա։ Ջիվ.)։ Այսպիսի վերադիր խոսքերը սովորաբար առաջադաս են վարվում. օրինակ՝ Որ աղջկա խաղալիս շատ նվեր հավաքվեր, այն աղջիկը ընկերների միջին պարծենում էր (փոխանակ՝ ընկերների միջին պարծենում էր այն աղջիկը, որի խաղալիս շատ...).—Աչքդ ինչ բանի որ ընկած է, այն բանը քեզ բախտ լինի (Պռ.)։

Այսպիսի շրջուն կապակցության ժամանակ վերջադաս գլխավոր խոսքի մեջ հարաբերյալի տեղ գրական լեզվի մեջ սովորաբար դրվում է մի ցուցական դերանուն. հաճախ այս ցուցականն ևս չի դրվում, և, երբ հարաբերյալը սեռական վերադիր է, նրա անունը կամ ետադրական բառըն առնում է ցուցական հոդ։ Այս խոսքերն ունին ընդհանրացական նշանակություն։ Օրինակ՝ Աչքդ ինչ բանի որ ընկած է, այն քեզ բախտ լինի.—իբրև՝ Ամեն բան, ինչի որ աչքդ ընկած է, քեզ բախտ լինի։ Որ մարդը որ կպատահի, նրան ասա (ասա ամեն մարդու, որը որ կպատահի)։ Մեր երկրի ինչ բանը որ մեզ դյուր է գալիս, հաճախ օտարներին խորթ է թվում (Մեր երկրի այս ինչ ու այն ինչ բանը, ինչ որ մեզ դյուր է գալիս, հաճախ...).—Սուրբ Կարապետը, ինչ մուրազ արիք՝ ինքը կատարի (ամեն մուրազ, ինչ որ արիք).—Ինչ մուրազի, ինչ խորհրդի որ եկել եք՝ Ս. Կարապետը կատարի.—Ինչ փորձանք էլ որ գա՝ քաշիր (ա-

մեն վուրձանք, ինչ էլ որ գա, քաշիր).—Տարվա որ ժամանակին հյուր գա՝ գլխներիս վրա պատիվ ունի (Տարվա ամեն ժամանակին, երբ էլ որ հյուր գա, գլխներիս վրա...).—Աշտարակա որ փողոցովն անց ես կենում, խնոցի հարելու ձայն է գալիս.—Որ տունը մտնում էին՝ ասում էին (Պո.)։ Որ սարին դիմեցի՝ վրան ձյուն եկավ (Ամեն սարի վրա, որին որ դիմեցի, ձյուն եկավ. ամեն դիմածս սարի վրա ձյուն եկավ). Որ ծառը բռնեցի, պրծավ արմատից (Ամեն ծառ, որը որ բռնեցի, պրծավ արմատից). Որ մեծին խնդրեցի, ինձի տեր չեղավ. Որ հարստին խեղճությունս հայտնեցի, ասաց՝ վաղուց ձանձրացել ենք աղքատից (Ջիվ.)։ Ինչ որ շնորհք ունիս՝ չպահես (Պո.—իբրև՝ ինչ շնորհք որ ունիս...).—Ինչ որ աշխարհքիս միջին քաղցրահամ կերակրեր կան՝ այնտեղ լիքն է (իբրև՝ աշխարհքիս միջին ինչ քաղցրահամ կերակրներ որ կան).— Ինչ էլ մնար դրսի բան՝ իրիկունը կանեի (Պո.)։

Նաե. *1. Որ վերադրի անունը սովորաբար և հոդն ունի. բայց երբ որ առնվում է ինչ բառի իմաստով, անհոդ է մնում. օրինակ՝ Որ կտրիճ տղայի էլ համեցեք էր անում՝ լեղին չուր էր կտրում (Պո.)։*

Նաե. *2. Այսպիսի ընդհանրացական հարաբերական խոսքերի նշանակությամբ մի, ամեն անորոշներով կազմվում են անկապակցությամբ կամ ավելադրությամբ երկրորդական խոսքեր (տե՛ս § 166)։ Օրինակ՝ Մի տեղ որ չերմեռանդություն չլինի, այնտեղից աստված էլ կհեռանա։ Մի բան (ամեն բան), որ քո ուժից վեր է, մի՛ պարծենար, քե կանես (ինչ բան որ քո ուժից վեր է...)։ Մի մարդ, որ պաշտպան է հանդիսանում տգիտության, նա չի կարող որևէ ուրիշ պատճառ ունենալ... (Մուր.)։ Մի մարդ, որ անգետ է, նրան ի՞նչ կարելի է մեղադրել։*

3. Ընդհանրացական նշանակությամբ շրջուն, այսինքն առաջադաս վերադիր խոսքեր են կազմվում նաև որտեղ, ինչ տեղ, ուր մակբայներով, կամ քանի, ինչքան, որքան, որչափ, ինչչափ ածականներով, որոնք դրվում են հարաբերյալի վրա, որ երկրորդական խոսքի մեջ է դրվում. վերջադաս գլխավոր խոսքի մեջ կարող է դրվել՝ նրանք, բոլորը, ամեն, ոչ մեկը և այլն։ Օրինակ՝ Ինչքան բարեկամ կանայք կային՝ հավաքվեցին (իբրև՝ հավաքվեցին ամեն բարեկամ կանայք, ինչքան կային).—Ինչքան տխրած մարդիկ լինին, նա նրանց սիրտը բաց կանի.—Իրանք՝ ինչքան գյուղացիք կան՝ հավաքվեցին մի տեղ.—Մեր գեղումը ինչքան հարս պսակվեր, ամենը Գեորգենց ու Թորոսենց շորերովն էր.—Ինչքան ազապ տղայք էին պատահում՝ փեսայի հետ համբուրվում էին (Ամեն պատահող ազապ տղայք...).—Ինչքան չարազ են շինել, կեսը նրանց հետ գնում է.—Որքան էլ այսօր ուխտավորներ կային, ամենի խնդիրն ինքը կատարի.—Ինչքան աշխարհումս ժժմունք կան, բոլորը ուտում են.—Կանչեցին՝ ինչքան մեծակնանիք կային՝ բաժինք տեսնելու.—Նստեցին ինչքան տղայք կային և ուրախություն արին (Պո.)։—Գեղումն էլ որտեղ կորած մոլորած երեխայք կան՝ այսօր ժամումը կլինին (իբրև՝ Ամեն կորած մոլորած երեխայք).—Որտեղ ինչ ցավոտ մարդ լինի, ես նրան կլավացնեմ (Պո.)։ Որտեղ մի լավ գյուտ

*կա՝ խելոքն է գտել.—Լիքը կարասը լուռ կմնա... դանգակի պես դո-
ղանջում է՝ ուր որ կա՝ դատարկ կարաս.—Ինչ տեղում ատելության հո-
գու ծնունդ նկատել եմ, պատճառին առանց վախի նախատել եմ
(Ջիվ.)։*

ԵՆԹԱԿԱ ԵՎ ԱՆԴԻՐ ԽՈՍՔԵՐ

269. *Ենթակա և խնդիր խոսքերը լինում են հարաբերական և շաղ-
կապական. իսկ ստորոգյալ խոսքերը, որոնք շատ քիչ են պատահում,
ձևով հարաբերական են միայն։*

Հ ա ր ա բ ե ր ա կ ա ն *ստորոգյալ խոսքերը կապակցվում են ինչ
(որ) հարաբերականով. իսկ ենթակա և խնդիր խոսքերը՝* **որ, ով** (որ),
ինչ (որ), **որը** (որ) *հարաբերականներով. գլխավոր խոսքի մեջ իբրև
հարաբերյալ կարող է դրվել՝ ամենը, բոլորը կամ մի ցուցական դերա-
նուն, որ ակնարկում է երկրորդական խոսքին և նրանից է ստանում իր
նշանակությունը։ Երկրորդական խոսքը, երբ հարաբերականն է ով որ,
ինչ որ, որը որ, կարող է առաջադաս, միջադաս կամ վերջադաս լինել.
իսկ երբ հարաբերյալն է* **որ**, *կարող է միջադաս կամ վերջադաս լինել։
Այս գործածության մեջ* **որ** *հարաբերականի տեղ կարող է դրվել* **ով, ինչ**։

*Գլխավոր խոսքի հարաբերյալի հոլովով ու խոսքի մեջ վարած
պաշտոնով միշտ որոշվում է երկրորդական խոսքի պաշտոնը գլխավորի
նկատմամբ, կամ այն հոլովը, որով դրվում է վերածման ժամանակ
երկրորդական խոսքին փոխանակող գոյականը։*

1. **Ե ն թ ա կ ա.** *Ով ույժ չունի, նա չի կարող կյանք վարել (Ջիվ.)։
Ույժ չունեցողը չի կարող...։*

2. **Ս տ ո ր ո գ յ ա լ.** *Ինչ որ դուք եք, նույնն էլ մենք ենք (Մուր.)։
Ինչ որ ես եղել եմ՝ դարձյալ կլինիմ։ Դու այն չես, ինչ որ երևում ես։*

3. **Խ ն դ ի ր ն ր.** *Ով չի եկել, նրա գիրքը վերցրու,—Չեկողի գիր-
քը վերցրու։ Աննեծք նրան, որ օձը կտեսնի և չի սպանիլ,—Աննեծք օձը
տեսնողին և չսպանողին։ Ով որ եկել է, նրանից առ,—Եկողից առ։ Ով
որ կգա, նրա հետ կերթամ,—Եկողի հետ կերթամ։ Ինչ որ ուներ, նրա-
նով գոհացավ,— Ունեցածովը գոհացավ։*

*Ինչ որ սիրտն ուզում է՝ սիրուն կլինի,— Սրտի ուզածը սիրուն
կլինի (Ա.)։ Ինչ որ քամին բերում է՝ քամին էլ կտանի,—Քամու բերածը
քամին կտանի (Ա.)։ Աչքն ինչ տեսնի, այն կանի (Պռ.),—Աչքն իր տե-
սածը կանի։ Ես նույնն եմ ասում, ինչ որ դու,—Ես նույն քո ասածն եմ
ասում։—Ով որ ընկերին խորհուրդ է տալիս՝ թողնել որդուն անուսում,
նրան կարելի է ապուշ անվանել.—Դուք չեք մտնում, և ովքեր էլ մըտ-
նում են, նրանց չեք թողնում.— Ինձ համար նշանակություն ունի այն,
ինչ որ ասացիր առանց մտածելու.—Ամեն տեղում կատարվում է այն,
ինչ որ հայկական առածն է բնորոշում... Քաղցր երանություն պիտի
զգաք մի օր, երբ ձեր աչքով տեսնեք այն ամենը, ինչ որ արել եք.—*

Ինչ որ ես ավանդ եմ տալիս ձեզ, նույնը և դուք ավանդ կթողնեք ձեր որդիներին.— Ով տարիներով ապրել է մեծ քաղաքում... Այդպիսին կարոտելով կկարոտի այն ամենին, ինչ որ անարժեք է բնության զավակի համար.—Համբերել բառն ավելի բարձր նշանակություն ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան.—Քիչ չէ պատահում, որ բախտն ավելի ժպտում է նրանց, որոնք գործում են առանց երկար մտածելու.—Այն աղջիկը, որ... յուր սերը խնամքով ծածկում, պահում է սրտի խորքում և նվիրվում միայն նրան, ով աստուծո կամքով վիճակվել է իրեն ամուսին.... (Մուր.)։ Մի նստիր նրա կշտին, որ քեզ կծիծաղեցնի. այլ նրստիր նրա կշտին, որ քեզ կլացացնի (Ա.)։ Ով տուն չէ շինել՝ գիտե սյունը մեջն է բուսել (Ա.)։ Մեր պապերն ինչ որ արել են՝ մենք էլ պիտի անենք (Պռ.)։ Ինչ որ այժմ կա, ինչ բանով որ պարծենում է մարդկությունը, բոլորը նոր կտակարանի հավիտենական անանց խոսքերի հետևանք են (Պալ.)։ Որին սուրբ կարծեցի՝ դարձավ հավատից (Ջիվ.)։ Որին քո սիրտը հավանի՝ քեզ բախտ լինի.—Հինգ մատն էլ հավասար են. որը կտրես՝ կցավի (Ա.).—Այս երկուսից որը հավանես, այն կրտանենք (Պռ.)։

Նաև. 1. Ով, ինչ *հարաբերականները ցույց են տալիս բոլորովին անորոշ անձ կամ իր, իրրև՝ ինչ մարդ որ, ինչ բան որ, իսկ որը ցույց է տալիս խոսքի մեջ հիշված կամ առաջուց ծանոթ առարկաներից որևէ մեկը կամ մի քանիսը. օրինակ՝ իմաստի խոշոր տարբերություն կա ասել՝ Ով որ խաղա, նա կկաղա և Որը որ խաղա, նա կկաղա։ Առաջին խոսքն ընդհանրացական նշանակությամբ է, իրրև ինչ մարդ, ինչ մարդ կուզի լինի. իսկ երկրորդի մեջ առնվում է ծանոթ անձերից որևէ մեկը։ Այս պատճառով որը հարաբերականն առաջից հաճախ ունենում է սովորաբար մի սեռական կամ բացառական հնդիր. ինչպես՝ Ուխտավորների որը երևելի մարդ է, առաջուց իրեն տեղ կպատրաստի. որն աղքատ է, պարսպի միջին կամ դուրսը մի տեղ վեր կգա (Պռ.),— Ուխտավորներից երևելի մարդ եղողը... աղքատ եղողը, աղքատը...*

Նաև. 2. Ով *ոչ թե հարաբերական, այլ անորոշ նշանակությամբ է գործածվում հետևյալ տեսակի կապակցությունների մեջ, ինչպես՝ Ում վրա մարդ կխոսի, ինձ վրա շուն է հաչում (Պռ.),—իրրև՝ թթե սրա կամ նրա վրա մարդ կխոսի, ինձ վրա...*

Նաև. 3. Երբեմն *հարաբերականի հոլովը կախված է ոչ թե երկրորդական խոսքի, այլ գլխավորի բայից. օրինակ՝ Ինչով ուզում ես՝ գրիր, իրրև՝ Գրիր նրանով, որ ուզում ես,— Ուզածովդ գրիր։*

ՈՐ ՇԱՂԿԱՊ

270. Շաղկապական *ենթակա և խնդիր խոսքերը կապակցվում են* որ, թե, եթե *շաղկապներով։*

Երբ երկրորդական խոսքը որ *շաղկապով է կապվում, գլխավոր խոսքի մեջ կարող է դրվել մի ցուցական, որ ակնարկում է երկրորդական խոսքին և նրանից ստանում իր նշանակությունը։ Ցուցականի հոլովից ու վարած պաշտոնից իմացվում է երկրորդական խոսքի պաշտոնն ու այն հոլովը, որով դրվում է վերածման ժամանակ երկրորդական խոսքին փոխանակող գոյականը։ Երկրորդական խոսքը կարող է առաջադաս և վերջադաս լինել։ Օրինակ՝ Ինձ հայտնի է, որ նա եկել է։*

Ինձ ա՛յն է միայն հայտնի, որ նա եկել է. Որ նա եկել է, այդ ինձ հայտնի է։ Որ հոգևորականը աղոթելուց, մկրտելուց և թաղելուց զատ ուրիշ վսեմ պարտավորություններ էլ ունի, այդ ես չեմ հերքում (Մուր.)։

271. Ենթակա խոսքերը *դրվում են անանցողական (կրավորական և չեզոք) բայերի հետ։*

1. Վերածման ժամանակ երկրորդական խոսքի ենթական դառնում է կողմնակի ենթակա կամ ենթակայական սեռական, իսկ բայը՝ անորոշ դերբայ կամ բայական անուն։ Օրինակ՝ Ամպերից երևում է, որ անձրև է գալիս.—Ամպերից երևում է անձրև գալը։ Ամենքին հայտնի է, որ երկիրս շարժվում է,—Ամենքին հայտնի է երկրիս շարժվիլը, երկրիս շարժումը։ Սրանից երևում է, որ իմ նամակը տեղ է հասել,—Սրանից երևում է իմ նամակի տեղ հասած լինելը։ Հայտնի է, որ մարդիկ ինքնասեր են,—Հայտնի է մարդկանց ինքնասեր լինելը։ Խոսքն այն չէ, որ ասնն. այլ որ աննն,—Խոսքն ասելը չէ, անելն է (Ա.)։ Այս օրենքից դուրս բան է, որ իմ լեզուն քո առաջին պտույտ եկավ. Իրանցը հենց այն է, որ առավոտը տեղից վերկենալիս քո անունը տան.—Քո բախտից է, որ բարի ընկերներ ունիս.—Ռուբենի ծննդավայրից մեզ այսքանն է հայտնի, որ այդ քաղաքը... (Պռ.)։ Երբեք չէ տեսնված, որ անհամբերին մեկը կարողանար մարդկության համար ստեղծել մի մեծ բարիք.—Այդ ի՞նչպես է, որ դուք որոշ դիտավորությամբ գնում եք մի տեղ, բայց չգիտեք, թե ո՛ւր եք գնում.—Ամեն մինի փափագը եղել է այն, որ կարողանա ուսում տալ յուր որդուն.—Ազատամտության դրլխավոր հատկանիշը այն է, որ ներողամիտ աչքով նայես ընկերոջդ թերության և սխալանքների վրա.—Լավ է, որ ոչ ոք չէ լսում մեզ.—Դրա հետևանքն եղավ այն, որ երիտասարդը... սկսեց նիրհել (Մուր.)։ Ամոթ է, որ մարդ ընկերին չօգնի.—(Ամոթ է ընկերին չօգնելը)։

2. Ենթական դառնում է տրական հոլով անորոշ դերբայի հետ (տե՛ս § 94. 6)։ Օրինակ՝ Պետք է որ մենք ուշադրություն և փույթ նվիրենք... (Սրվանձտ.),—Պետք է մեզ ուշադրություն և փույթ նվիրել... Հարկ է, որ ես հիշեմ Մեկենասն...—Հարկ է ինձ հիշել Մեկենասն... (Սրձտ.)։ Ժամանակ է որ մենք մտնենք ամեն անկյուն և տգիտության բաները ավերենք (Մուր.)։—Ժամանակ է մեզ մտնել... ավերել։ Մնում է, որ ես գնամ,—Մնում է ինձ գնալ։ Չի՞ պատահիլ, որ անտառներում պտտելիս հանկարծ մոլորվեմ (Մուր.—Ինձ մոլորվել)։ Լավ է, որ ես մեռնեմ, քան թե... Լավ է ինձ մեռնել, քան թե... Ի՞նչպես կարելի է, որ մարդ արարածը չխոսե յուր նմանի հետ.—Ժամանակ է, որ դուք միանաք մեզ հետ և ձեռք ձեռքի տված մտնենք ժողովրդի մեջ (Մուր.)։ Այսպես և՝ արժան է, բավ է, անհնար է, ժամ է, վայել է, ցանկալի է, ամոթ է, որ... և այլն։

272. Կրող խնդրի *նշանակությամբ խոսքերը դրվում են անցողական բայերի հետ։ Վերածվում են ինչպես ենթակա խոսքերը։ Օրինակ՝ Նա իմաց տվավ, որ ինքն եկել է,—Նա իմաց տվավ իր գալը, եկած լինելը, գալուստը։ Հրամայեցին, որ դու գնաս,—Հրամայեցին քեզ գնալ։*

Խնդրեցի նրան, որ գնա,—Խնդրեցի նրան դնալ։ Իսկ ես մոռացել էի, որ այդ օրը կիրակի էր,—Իսկ ես այդ օրվա կիրակի լինելը մոռացել էի (Մուր.)։ Կցանկանար անշուշտ, որ ամառն անցնեմ յուր որդու հետ,—Կցանկանար անշուշտ ամառն անցնել յուր որդու հետ (Մուր.)։ Մենք իրավունք չունինք պահանջել, որ դուք անկատար թողնեք այն... Մարդ չի՞ ուզիլ, որ իրան պատիվ տան.—Հարկ չկա ասել, որ ամենից առաջ այցելեցինք գյուղի եկեղեցին.—Կարդա պատմությունը և կտեսնես, որ աշխարհի բոլոր մեծամեծ գործերը արդյունք են դժվարատար նեղությանց.—Ինքդ էլ հո՛ դիտես, որ աշխույժ ու չսանձահարվող ձիուն մոտենում են երկյուղով.—Սրթե դրա վրան էլ ավելացնենք այն, որ այդ բոլորը տեղի էր ունենում մի հարուստ տան մեջ... Նկատում էի, որ երիտասարդի համբերությունը ենթարկվում է փորձության (Մուր.)։ Այսպես և՝ տեսնել, լսել, հայտնել, հիշել, զգալ, խոստանալ, լավ համարել և այլ բազմաթիվ բայերից հետո։

273. Բնության հանդրի *նշանակությամբ խոսքերը դրվում են զանազան տեսակի բայերի հետ և վերածվում են զանազան հոլովներով ու հետադրական բառերով։ Օրինակ՝ Վախենում եմ, որ նրան բան ասեմ,—Վախենում եմ նրան բան ասել։ Որ ես նեղություն եմ քաշում, այդ նրանից ծագեց, որ ուրիշներին նեղություն եմ տվել, որ ես չափազանց խոնարհված եմ, այդ նրանից ծագեց, որ ես հպարտ մարդ եմ եկել. հիմիկվան իմ լաց ու սուգը նրանից ծագեց, որ ես առաջ խնդացել եմ,—Նեղություն քաշելս այլոց նեղություն տալուցս ծագեց. չափազանց խոնարհվելս հպարտ մարդ գալուցս ծագեց. հիմիկվան իմ լաց ու սուգը՝ առաջվան խնդալուցս ծագեց (Զիվ.)։ Առավոտը շատ մոտ է, քիչ մրնաց, որ լույսը շողա. խավարն ընկավ գետին, քիչ մնաց, որ արևը դա... ո՛վ գիշերից ձանձրացող, քիչ մնաց որ բախտդ խաղա... դարուն է արդեն, գիտենք, քիչ մնաց որ ամպը դոռա,— Առավոտը շատ մոտ է, լույսը շողալուն քիչ մնաց. խավարը ընկավ գետին, արևը գալուն քիչ մնաց... Ո՛վ գիշերից ձանձրացող, բախտիդ խաղալուն քիչ մնաց... Գարուն է արդեն, գիտենք, ամպը գոռալուն քիչ մնաց (Զիվ.)։ Ես հավատացած եմ, որ երբ դրությունդ բարվոքվի, կաշխատես ավելին անել.—Հավատացրից, որ ամեն օր սպասում է եղել նրանց. Շատ ուրախ եմ, որ հասկանում եք (Մուր.)։ Պարոնը մտքում շատ ուրախացավ, որ աստված իրան բաժին ուղարկեց (Զիվ.)։ Քահանան մեղավոր չէ, որ տգետ է այդ աստիճան։ Բայց հո՛ մեղավոր է, որ տգետ լինելով՝ դիմել է քահանայության (Մուր.)։ Քո տղայքն ամաչում են, որ իրանց մայրը... (Պո.)։ Այդ առաջ է գալիս նրանից, որ տկարամիտը վախենում է քե... (Մուր.)։ Այդ նրանից է, որ մենք տրգետ ենք։ Ես իմ բարեկամությունս ուզում եմ նրանով հաստատել քեզ հետ, որ աղջիկդ առնեմ տղայիս (Պո.)։ Մեր ասածը նրանով է հաստատվում. որ գերմանացի ուսումնականը համարյա քե անփոփոխ կրկնում է... (Պալ.)։ Իմ սիրտը նրանով կշահես, որ հայրենիքդ սիրես։*

Քեզ ի՞նչ օգուտ այս բանից, որ ինձ էլ զրկեցին իմ օթևանից (Ջիվ.)։ Մեր եղբայրությունը վկա, որ ասածներս բոլորը ճիշտ են.—Հոժա՞ր ես, որ ես գնամ.—Կամք են տվել, որ իրիկունս նշան տանենք.—Քանի քանի օրինակներ կան, որ մինչև քեզնից օգուտ չեն ունեցել, բանդ չեն շինել (Պո.)։ Որքան բախտավոր ես, որ կարող ես այդպես աղատորեն նվիրվել հասարակաց գործին.—Սկսավ հարցնել նրա առողջությունից և ընդհմին հայտնել յուր շնորհակալությունը, որ ազան պատիվ էր արել յուր տանը հյուր լինելու։—Ուխտավորները սպասում էին, որ կրղզուց նշմարվին.—Առաջուց հպարտանում էր, որ ինքը պիտի կարենա լիուլի ցույց տալ յուր շնորհքը (Մուր.)։

274. Գոյականի խնդիր *խոսքերն առնվում են իբրև վերադիր և վերածվելիս դառնում են սեռական, որ և երբեմն կարող է փոխանակվել տրականով կամ անորոշ դերբայով (հմմտ. § 136. 4. ծան. 1)։ Այսպիսի խնդիրներ առնում են սովորաբար բայական անունները, ինչպես են՝ խորհուրդ, խոսք, կարծիք, կասկած, երկյուղ, լուր, կամք, հույս, հավատ, հրաման, միտք, ենթադրություն և այլն։ Օրինակ՝ Մի առու որ ջուր գա, հույս կա, որ մին էլ գա (Ա.),—...հույս կա մին էլ գալու.—մին էլ գալու հույս կա։ Այն հուսով մնա՛, որ բարիկենդանին փլավ պիտի ուտես (Ա.).—բարիկենդանին փլավ ուտելու հուսով մնա՛։ Հույս ունիմ, որ բանի տեղ չես դնիլ։ Որ դու տվիր, դրա պատճառն էլ ես եմ (Պո.),—Քո տալու պատճառն էլ ես եմ։ Ինձ խորհուրդ են տալիս, որ գիտությամբ պարապեմ,—Ինձ խորհուրդ են տալիս գիտությամբ պարապել։ Ջորքերը պատվեր ստացան, որ ետ դառնան,—Ջորքերը պատվեր ստացան ետ դառնալու (ետ դառնալ).—Ջորքերը ետ դառնալու պատվեր ստացան։ Այս է ահա պատճառը, որ համբերությունը համարվում է առաքինություն.—Իսկ Թոնրատան տնից հեռու գտնվիլը արդեն ապացույց էր, որ Վեդունք չեն օջախ լինելով միշտ ունեցել են հյուրեր.—Նա զարմացավ յուր անմտության վրա, որ... նստացրել էր կողքին այնպիսի մի գռեհկի.—Եկան այն համոզման, որ Դիլիջանը միայն հասարակ մահկանացուների համար կարող է ամարանոց համարվել.—Եկավ այն եզրակացության, որ ինքն սխալվել է.—Կանանց ձևով հագած էին և աղջիկները, միայն այն զանազանությամբ, որ սրանց երեսները բաց էին.—Սկսում էր զարմանալ յուր հիմարության վրա, որ մինչև իսկ մի վայրկյան թույլ էր տվել մտածել թե... Այդ նշան էր, որ փոթորիկն անցել էր հեռու կողմեր (Մուր.)։ Մի՛ խնայիլ կյանքդ անգամ, արյունդ բեր նրան զոհ, ոչ այն հույսով, որ քու ազգը քեզնից լինի իսկույն զոհ (Գ.-Ք.)։ Այսպես և՝ այն նպատակով որ, այն մտքով որ, այն պատճառով որ և այլն։*

275. Որ *շաղկապով կազմվում է ավելադրությամբ շրջում, որով արտահայտությունն ավելի զորանում է (տե՛ս § 204)։ Օրինակ՝ Կամսարյանը... բացատրեց, որ ճանապարհորդելու նպատակով է որ գրո-*

նրվում է այժմ Ջիբուխլվում.—Դեռ մի րոպե առաջ էր որ նա որոշել էր ապրել գյուղացիների հետ.—Արդյոք հոգևոր հայրերը յուր՝ զարգացած հյուրի ներկայությա՞մբ էր որ այդպես քաղցր ընդունեցին գյուղացիներին (Մուր.)։

Թե ՇԱՂԿԱՊ

276. Թե, *եթե շաղկապը ցույց է տալիս ուրիշի խոսք ու մտածմունք և կարծիք ու ենթադրություն։ Ուստի այս շաղկապով կապակցվում են՝*

1. **Ուղղակի խոսքերը,** *մանավանդ երբ ասել, մտածել բայերը զորությամբ են հասկացվում, Օրինակ՝ Քրիստոս դպիրներին ու փարիսեցիներին է ասում, Թե՝ դուք արքայություն չեք մտնում և ովքեր էլ որ կամենում են մտնել, թույլ չեք տալիս նրանց.— Երբ մտածում էի, Թե՝ ահա հասել եմ նպատակիս... Այդպիսի հարցեր փորձված մարդիկ չեն տալիս իրար, միշտ մտածելով, Թե՝ «բանը բան ցույց կտա».— Խոստանում ենք, որ ոչ ոք մեզանից պիտի եւս քաշվի վատաբար, կամ ասե, Թե՝ իմ ուժն անկարող է ազգի կարիքները լցնելու.—Հապա ինչո՞ւ չասացիր, Թե՝ լավ կլիներ, որ այս սոսինները պատկանեին մեր հյուրընկալ Մուքին.—Ես ուզում էի ասել, Թե՝ որովհետև Վեդուց Սարդիսը մի խավարամիտ... մարդ է, ուրեմն չարժե, որ այս գեղավայրը պատկանե նրան (Մուր.)։ Նա ասում է, Թե՝ ախորժակ չունիմ.—Որիցըս լսեցիր, Թե՝ աչքիդ վերևն ունք կա.—Առավոտն ասում էր, Թե՝ միաժում եմ, հենց որ իրիկունը հացի ժամանակ եկավ, Թե՝ ծոմ պիտի կենամ այս շաբաթ.—Դուռը շինեցին, Թե՝ առավոտն եկե՛ք.—Տվեց մորը, Թե՝ պահի՛ր (Պռ.)։*

Նաե. Առանձնապես ժողովրդական լեզվին հատուկ է ասել, մտածել բայը գեղչելով ուղղակի խոսքեր կապակցել Թե շաղկապով. ինչպես՝ եկել է, Թե հայրս կանչում է։ Այսպես և՝ հրամայեց Թե, վրաս բարկացավ Թե, ստիպեցին Թե, չթողեց Թե և այլն։ Կերակրըները լցրին Թագավորի առաջը, Թե՝ կեր։—Թուրքի գոտին եւս արեց, կապեց գլուխն ու ձանապարհ դրեց, Թե՝ գնա՛ հիմի քու բարեկամներին գտիր։— Աղաչանք արեց պառավին, Թե՝ ինձ էլ վեր կացրու.— Աչքով արեց, Թե՝ հեռացիր.—Հիմի Փափակս կգա, մեղ կրակը կդնի, կայրի, Թե՝ խալֆես իրա ոտովն եկել էր, հաց էլ չդրիք առաջը (Պռ.)։ Կունձը նստել, քարի գլխին լալիս է, Թե՛ քարն անձրևից կքրջվի (Ա.)։

2. **Անուղղակի խոսքերը,** *երբ առանձնապես շեշտվում է ուրիշի խոսք ու մտածմունք լինելը. օրինակ՝ Կամաարյանը Հանդիսաբար հայտնեց, Թե որոշել է քննություններից հետո վերադառնալ հայրենիք և իրեն նվիրել... օդնուիյան կարուտ դասակարդին.—Տիկին Մարկոսյանը նեղոտություն խնդրեց առարկելով, Թե չափազանց զբաղված են.—Կարևոր համարեց այսքանը հայտնել, Թե կդա մի օր, երբ ինքը կբացատրե նրան՝ կարևոր. պատճառները.—Սա հրաժարվից խմելուց՝ առարկելով, Թե օղի չէ գործածում.—Վերջինս մերժեց ընդունել որևէ վարձատրություն՝ ասելով, Թե յուր պարտքն է պատվել աստուծո հյու-*

րին.—Այժմ հանկարծ լսել, թե իրեն զրկում են յուր քաղցր հույսերից, իհարկե նա չէր կարող (Մուր.)։ Միտք է անում, թե այսօր ամենքի տանն էլ ուրախություն է, բայց ինքը տխուր տրտում նստած է (Պո.)։ Թեպետ անձամբ չէ տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է, թե բարի մարդիկ են, ազնիվ և աշխատասեր. թե սեփական շահի համար ոչ ոքի չեն վնասում, այլ ապրում են իրենց ճշակատի քրտինքով. բայց թե, որովհետև տգետ են և անուսում, ուստի մնում են անզոր՝ աշխարհի չարիքների առաջ։ ... Բայց միևնույն ժամանակ նա լսել ու կարդացել է և այն, թե յուր այդ ազգակիցները կարող են ազատվել կյանքի դառնություններից... (Մուր.)։

Անուղղակի խոսքերը հաճախ կապակցվում են որ շաղկապով. այս դեպքում առանձնապես չի շեշտվում ուրիշի խոսք լինելը, և խոսողը երկրորդական խոսքի բովանդակությունն առնում է գլխավոր խոսքի ենթակայի տեսակետից՝ իբրև իրական, կամ իրապես ցանկացած նպատակ. մինչդեռ թե շաղկապով ասված ժամանակ անուղղակի խոսքի բովանդակությունը մնում է երկբայելի։ Օրինակ՝ Նա ասում էր. «իմ եղբայրը հիվանդ է»,— նա ասում էր, որ իր եղբայրը հիվանդ է (և իրոք հիվանդ էր).—Նա ասում էր, թե իր եղբայրը հիվանդ է (նա էր այդպես ասում, կարող էր հիվանդ լինել և չլինել)։ Ինձ ասացին, որ նա հեռացել է (ինչպես որ է՛ իրոք).—Ինձ ասացին, թե նա հեռացել է (ուրիշներն են ասել. կարող է հեռացած լինել)։ Քանի՞ անգամ եմ ասել, որ այդ պառավական բաներին չհավատաս (իրական ցանկացած նպատակ)։ Տե՛ս նաև § 257 և սույն § 276. կետ 4։

3. Անուղղակի ճարտասան խոսքեր. որոնք վերածվում են սովորական ձևով, կապակցվում են միայն թե շաղկապով։ Օրինակ՝ Թե ո՛րտեղ է կենում, դեռ ինքս չգիտեմ,—Որտեղ կեցածը (կենալը) դեռ ինքս էլ չգիտեմ (Գ.-Ք.)։ Հենց բանն էլ այդ է, որ թե ինչի համար եմ գնում, գիտեմ. բայց թե ուր եմ գնում, չգիտեմ,—Հենց բանն էլ այդ է, որ ինչի՛ համար գնալսի գիտեմ, բայց ո՛ւր գնալս չգիտեմ (Մուր.)։... Կամենալով իմանալ թե ով է սա,—Կամենալով իմանալ սրա ո՛վ լինելը (Մուր.)։ Չնայելով որ չգիտեր, թե նա ո՛վ և ո՛րտեղից է, այսուամենայնիվ, սկսավ հարցնել,— Չնայելով որ նրա ո՛վ և ո՛րտեղից լինելը չգիտեր... (Մուր.)։ Դեռ եկեղեցումն ես հասկացա, թե ինչ է քահանան,—Դեռ եկեղեցումն ես հասկացա քահանայի ինչ լինելը (Պո.)։ Հայտնի չէ, թե արդյոք նա գնացե՞լ է թե՞ ոչ,—Հայտնի չէ նրա գնացած լինել չլինելը։ Ձեզ երկսիդ էլ լավ հայտնի է, թե ինչն է ինձ բերել ձեզ մոտ.—Չէր իմանում, թե եկողն ով է.—Ես գիտեմ, թե ինչ կանեմ (Պո.)։ Ինչո՞ւ չասացիր, թե ումն են պատկանում այս սոսինները.— Ես շատ եմ ցանկանում իմանալ, թե ինչո՞ւ նա յուր հարեվաններին այդպիսի ետադեմ խորհուրդներ է տալիս.—Ամենքդ գիտեք, թե պանդխտությունից վերադարձող որդուն ինչպես են ընդունում ծնողները.—Լիդիա Պավլովնան գիտե, թե ինչ զբաղմունք կարող է ու-

նեննալ տիկին Մարկոսյանը (Մուր.)։—Վայ մեր գլխին, որ պիտի երկու շաբաթ ոտս մեր տան շեմքը չդնեմ, չիմանամ, թե արդյոք մեր տանը մեռա՞ն, ապրեցի՞ն.—Վախեցար, թե կորե՛լ եմ.—Նա գիտես, թե քեզ բարեկա՞մ է (Պու.)։ Սիրով ողջունում էին իրար առանց նայելու, թե ծանո՞թ են միմյանց, թե՞ ոչ.—Այժմ կամենում եմ իմանալ, թե հասկանո՞ւմ ես դրանց նշանակությունը, թե՞ ոչ.—Իսկ դու կարծում ես, թե բնության այս գեղեցկություններն անաղարտ կմնայի՞ն, եթե մարդիկ հաստատվեին այստեղ.—Պետրոսը հառեց աչքերը վրաս, կարծես կամենալով հարցնել, թե մի՞թե ինքն այնքան անմտաբար է խոսում.—Ներունին նայեց ինձ վրա քննական հայացքով, կարծես ստուգելու համար, թե արդյոք յուր սիրտը ցավացնելու համա՞ր ասացի այս խոսքերը.—Ասում ես, թե այն կողմերն ավելի գեղեցիկ են, հա՞.—Մի՛ հարցրեք, թե ուրիշ որևէ մատյան ունի՞ մեր վանքը.—Եկան մի անգամ էլ ստուգելու, թե արդյո՞ք երիտասարդը հո չէ պնդում մերժման վրա (Մուր.)։

Ծան. 1. Երբեմն անուղղակի հարցական խոսքերը պարզվում են առանց հարցական բառը պահելու. ինչպես՝ Հանրածանոթ է, թե ով է գտել Ամերիկան,—Հանրածանոթ է Ամերիկայի գտնողը.— Չգիտենք, թե ապագան մեզ ինչ կբերե,— Չգիտենք ապագայի մեզ բերելիքը. Չգիտեմ, թե որտեղ (երբ, ինչպես, ինչու) եմ գնում.— Չգիտեմ իմ գնալուս տեղը (ժամանակը, կերպը, պատճառը, նպատակը)։

Ծան. 2. Անուղղակի հարցական խոսքերը, երբ առանց թե շաղկապի, շարահարությամբ են կապակցվում գլխավորի հետ, ձևով նույնանում են հարաբերական ընդհանրացական խոսքերի հետ. օրինակ՝ «Ասա ինձ՝ ինչ կուզես» խոսքը շաղկապական հարցական է, երբ նշանակում է՝ «Ասա ինձ, թե ինչ կուզես». հարաբերական ընդհանրացական է, երբ նշանակում է՝ «Ասա ինձ՝ ինչ որ կուզես»։

4. Թե շաղկապով կապակցվում են այն խոսքերը, որոնք կարծիքով, երկբայությամբ ու ենթադրությամբ են ասվում, և կամ որոնց բովանդակությունը համապատասխան չէ իրականությանը. մինչդեռ նույն խոսքերը, երբ որ շաղկապով են կապակցվում, կամ պարզապես իրողությունն են ցույց տալիս, առանց ուշ դարձնելու, թե խոսքի բովանդակությունը համապատասխա՞ն է իրականության, թե չէ. կամ թե հաստատ, վճռաբար արտահայտում են մի եղելություն։ Օրինակ՝ Միտքս էլ հենց այն էր, որ բերեմ, տամ ձեզ (և բերի տվի),—մի իրական ցանկացած մտադրություն։ Միտքս էլ հենց այն էր, թե բերեմ տամ ձեզ (բայց չկարողացա),—մի անիրական մտադրություն, որ ցանկացված է, բայց չի իրագործված. երկրորդական խոսքն առնվում է որպես թե, իբրև թե բառերի նշանակությամբ՝ Միտքս էլ հենց այն էր, որպես թե բերեմ, տամ ձեզ։ Կարծում եմ, որ այդ ամենը պիտի ցավեցնեն ինձ.—Կարծում եմ, որ պարոնը մի դատարկ բանի պատճառով չէր համաձայնիլ զրկել իրեն ամարանոցի հանգստությունից (Մուր.),—Հաստատ, վճռաբար ասված խոսքեր։—Տո՛, Պե՛տո, դեռ ա՞յստեղ

ես, իսկ ես կարծում էի, թե Մասիսն արդեն անցել ես (Մուր.)։ Ես կարծեցի, թե այսօր տոն է (անիրական կարծիք, լոկ ենթակայի մտածած)։—Ինձ թվում է, որ նա յուր կյանքի ճանապարհին տեսել է և ուսումնասիրել է բազմաթիվ դժբախտ հայրեր (հաստատ ասվածք. նա կարող է իսկապես այդպես արած լինել)։ Այժմ ինձ թվում է, թե այդ Ժարգիսը նախապաշարյալ ապուշին մեկն է լինելու (Մուր.—հրկբայությամբ ասված,—իսկապես այդպես չէ)։—Հավատացած եմ, որ շատ պիտի հուզվիք և վշտանաք՝ տեսնելով ձեր ազգակիցների դրությունը (Մուր.),—իրական համոզմունք։—Ասացեք, խնդրեմ, մինչև ե՞րբ պետք է դուք նման պահանջներ անեք մեզնից... և հավատաք, թե արդար պահանջ եք անում (Մուր.—իբրև թե արդար պահանջ եք անում)։ Տիրացուի այս վարմունքը դյուր եկավ Կամսարյանին և համոզեց նրան, որ յուր ուղեկիցն այնքան էլ անտաշ գռեհկին մեկը չէ (Մուր.)։ Նա աշխատեց համոզել իրեն, թե (=իբր թե) սևակոլոլ պտուկը միայն դրսից կարող էր կեղտոտ լինել, բայց ոչ նաև ներսից և հետո թե (=իբր թե) եղած կեղտն անշուշտ ջրի մեջ կմնար և ոչ թե հավի ներսը կթափանցեր (Մուր.)։ Թե մի հինգ մարդ կան անունով, մինը դու ես (Պռ.)։ Թե ունիմ ցնծություն, քեզ եմ պարտական (Ջիվ.)։ Եթե գոմի դռան մոտ կապած ուլը չլիներ, ...մենք կկարծեինք, թե այս տան մեջ կենդանի շունչ չկա.—Ջէի կարծիլ, թե այդ տրտունջը կարտահայտվի նաև այսպիսի մի ետ ընկած կայարանում.—Երիտասարդը սկսավ կասկածել, թե մի՛ գուցե սխալվել է իր ընտրության մեջ.—Կարծում ես, թե հայ գյուղացին բան ու գործ չունի, հենց միշտ որսի ետևի՞ց պիտի լինի.—Մի կարծիր, թե ազանողական ժողովի որոշումը կարող եմ երբեվիցե մոռանալ,—Նրան թվաց, թե այդ րոպեին նա լսեց Ադելինայի նախկին մանկական ձայնը.—Նրան թվում էր, թե գեղեցկուհին դեռ նայում է իրեն յուր սիրուն աչերով, թե նա հենց նոր ժպտալով ասաց իրեն՝ «կխնդրեմ որ գաք».—Երիտասարդին այնպես թվաց, թե դյուրազգաց մայրը սրտի նեղությունից չէ կարողանում այլևս խոսել (Մուր.)։ Հենց իմացիր (այնպես կարծիր, համարիր), թե տանը նստած ես (Պռ.)։ Լա՛վ, ենթադրենք, թե այդպես է...։ Իբրև թե չգիտես (Մուր.)։ Այսպես և՝ դիցուք թե, բռնենք թե, համարենք թե, ասենք թե, չլինի թե, հազիվ թե, դժվար թե, գուցե թե։—Եթե սկզբում չկարողացավ գուշակել, թե տեսածը, իրոք, Սևանն է, նա իրավունք ուներ. որովհետև հեշտ չէր հավատալ, թե լեռների այդ բարձրության վրա կարող է գտնվել այսքան ընդարձակ մի լիճ.—Եթե իմանամ, թե իմ մեջ խոսել է ստրկամտության հոգին, հուսահատությունից ինձ կսպանեմ.—Ուրեմն կարելի էր հուսալ, թե շուտով կհասնեմ նպատակիս.—Մի՛ հուսար, թե ես կհետաձգեմ իմ գործը քեզ ընկերանալու համար.—Վերջին բառի վրա տիկինը... հուպ տվավ աչքերը, հուսալով, թե նրանցից մեկն ու մեկը մի կաթիլ արտասուք կգլորե... (Մուր.)։ Ջէր անցնում մտքիցս անգամ, թե աշխարհը նեղություն կա (Ջիվ.)։ Մտքովը չէր անց կացել, թե

ինքն այսպիսի օր կտեսնի (Պռ.)։ Տկարամիտը վախենում է, թե մի՛ գուցե ազնվատոհմ գազանի տեղը բռնե իրեն հավասար մի ոչխար (Մուր.)։—Խնամին շատ տխրեց՝ վախենալով, թե իրա ոտը վրա չեկավ սրանց տան վրա.—Քիչ էր մնացել, թե խելքամաղ լինի.—Քիչ է մնում, թե իրանք էլ մեռնեն.—Նրա սիրտն ուզում է, թե պատռի (Պռ.)։ Գիտե, որ էգուց ծառզարդար է, Սոսն անպատճառ ժամումը կլինի. բայց չգիտե, թե Սոսն իրենց տանն է։ Ես ի՞նչ գիտեի, թե այդպես կլինի։

5. Թե շաղկապով կապվում են նաև՝ հարց, կարծիք, կասկած, խոսք. ենթադրություն, հույս, խորհուրդ և այլն բայական անուններին խնդիրները, իբրև մի ուրիշի խոսք կամ մտածմունք, կամ իբրև անուղղակի հարցական խոսքեր, կամ երբ խոսքի բովանդակությունը կասկածելի, երկբայելի է մնում։ Օրինակ՝ Այսօր քննվում է այն հարցը, թե նրանցից ո՛րը ի՛նչպես պիտի գործե կյանքի ասպարեզը մտնելուց հետո.—Պիտի աշխատե ըստ յուր կարողության հիշելով այն առածը, թե՝ «ուր կամք կա, այնտեղ կա և ճանապարհ».—...որպեսզի ապագայում մխիթարվի այն մտքով, թե ինքն իրավամբ կրում է արարչի պատկերը.—Նրան զբաղեցնում էր այն միտքը, թե՝ եթե, իրավ, սա է հայ գյուղացու բնակավայրը, ապա հազիվ թե հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ.—...Որը բխում էր այն նորածին մտքից, թե գուցե տեղական հանգամանքները ստիպեն իրեն, հակառակ յուր կամքին, դրժել յուր ուխտին.—Նա նրանց մեջ տեսնում էր հաստատություն յուր այն կարծիքի, թե՝ անհնար է գյուղում ապրել ու գործել.—Ժողովներում հաճախ այն միտքըն էր արծածվել, թե՝ հայ գյուղացին տգետ, հետամնաց, հետևապես և թշվառ է մնում.—Կամսարյանը նայելով նրանց վրա՝ զգաց մի խոր զզվանք և դրա հետ էլ երկյուղ, թե մի՛ գուցե նրանց մեջ պատրաստված կերակրով հյուրասիրեն իրեն.—Կամսարյանի հարցին, թե ինչպես են կարողանում այս մութ ու գիջն սենյակներում ապրել, վանահայրը պատասխանեց.—Պարտապան Սային, որ սկզբում... հույս էր տածում, թե նա մի բանով կթեթևացնե յուր ծանր դրությունը, տեսնելով այժմ, որ նա տոկոսը չափազանց շատ պակասեցրեց, եկավ այն եզրակացության, թե այդ տղան ուրեմն բան չէ հասկանում.—Նա դեռ երեկ այն կարծիքին էր, թե ոչինչ չէր կարելի անել գյուղում, թե ամեն բան այնպես սառած ու քարացած է աստեղ, որ... Երիտասարդը եկավ այն եզրակացության, թե անհրաժեշտ է աշխատել՝ հնարավոր դարձնել գյուղում ապրելն ու գործելը.—Ոչ ոք հույս չուներ, թե կարող կլինեիք թողնել ձեր գործը և գալ.—Սկսան ամեն կողմից խոստումներ անել այն մասին, թե արդարև կյանքի մեջ մտնելուց հետո՝ պիտի նվիրվին հասարակաց շահին (Մուր.)։ Սխալ է նրա խոսքը, թե ինքը տեղեկություն չունի։ Պետք է փարատել նրա կասկածը, թե եղբայրս է արել այդ բանը։

6. Եթե շաղկապով է կապակցվում առաջադաս երկրորդական խոսքը, որի բովանդակությունը խոսողի կողմից,—լինի ուրիշի թե յուր

կարծիքը,—ենթադրական է ընդունվում, բայց մեջ է բերվում ոչ իբրև ուղղակի կամ անուղղակի խոսք։ Օրինակ՝ Իզուր է աշխարհը հայհոյում հրեաներին, թե նրանք չեն պարապում ծանր աշխատանքով, թե նրանք երկչոտ են, խաբող, վաշխառու և այլն (թե-ով կապված ուրիշի խոսքեր)։ Այդ հո իրենք չեն այդպես արել իրենց, այլ աշխարհի բռնապետությունը։ Եթե աչառվա հրեան փախչում է աշխատանքից, այդ նրա համար է, որ նրա երակներում դեռ վազում է եգիպտացոց աղյուսե գործարաններում չարաչար աշխատող հրեայի արյունը.—Եթե երբեմն մարդիկ համբերությունից ելնելով սկսում են տրտնջալ, կամ ուր հարկն է՝ բողոքել, այդ ամենի արդյունքը լինում է այն, որ... (Մուր.)։

277. *Երբ որ շաղկապի փոխանակ թե շաղկապն է դրվում, նրկրորդական խոսքն սառանում է ենթադրական, անիրական կամ ուրիշի խոսքի բնավորություն. սակայն որոշ դեպքերում որ շաղկապին փոխանակում է թե շաղկապը առանց խոսքի միտքը փոփոխելու։ Այսպես առանձնապես՝*

1. Երբ նախորդ խոսքի մեջ կա մի որ շաղկապ, լինի մենակ թե երբ որ, հենց որ և այլն ձևով իբրև թարմատար, կամ այնպիսի հարաբերական բառեր, որոնք կարող են որ թարմատար շաղկապն ունենալ։ Օրինակ՝ «Սոսը տեսավ, որ Վարդիթերը գնացել է» (Պռ.). բայց՝ «Սոսը երբ որ տեսավ, թե Վարդիթերը սյունի տակին սառել է... (Պռ.)։ Երբ որ իմացավ, թե նրանք շուտ պիտի վեր կենան... Երբ որ տեսավ, թե քիչ է մնացել, որ ժամը տան... Հենց որ տեսավ, թե պառավը չի ուզում... Սոսն էլ որ տեսավ, թե իր ուրախությունը սևացավ... Վերջը որ տեսան, թե աղչիկը ձեռից գնում է... Այնքան արեց, որ կարողացավ իմանալ, թե այն օրը չեն ծեծել... Այնպիսի բաներ անեմ, որ ոչչ աշխարհքը իմանա, թե քո մոտիկ բարեկամն ես եմ... Որ ամենքն իմանան, թե ես իմ խոսքին տեր եմ (Պռ.)։ Ինչո՞ւ ուրեմն իզուր աղմուկ ես հանում։—Նրա համար որ ցույց տամ, թե անզգա արարածին մեկը չեմ, թե իմ մեջ կյանք ու կենդանություն կա, թե հեշտությունն ինձ հաճույք, իսկ նեղությունը տժգոհություն է պատճառում.—Լիդիա Պավլովնան լսում էր բարեկամուհուն ուշադրությամբ և ընդմիմին աշխատում, որ յուր լայն բացված և ուղիղ բարեկամուհու դեմքին նայող աչքերը համոզեն վերջինիս, թե ինքը չափազանց հետաքրքրական է գտնում նրա բացատրությունը.—Ո՛րքան մեծ եղավ նրա հուզմունքը, երբ տեսավ, թե գեղանի Ադելինան է յուր մոր հետ.—Եվ երևակայեցեք, թե ո՛րպիսի քաղցր երանություն պիտի զգաք մի օր..., երբ տեսնեք, թե ինչպես մի ժողովրդի մատաղ սերունդը ուսուցել ու կրթել եք.—Վերակացուն այնպես էր քաջալերել ու ոգևորել կամսարյանին, որ երբ եկավ հայտնելու, թե կառքն արդեն լծված պատրաստ է, նա վեր թռավ տեղից իսկույն... Երևակայիր, թե ի՛նչպիսի հռչակ պիտի վաստակես դու... երբ հայտնի կլինի մի օր, թե այն, ինչ որ գրողները միայն ձրագել են, դու արդեն մարմնացրել ես (Մուր.)։

2. Երբ նախորդ կամ հաջորդ խոսքի մեջ կա մի որ դերանուն։ Օրինակ՝ Բայց այն օրից որ իմացավ, թե գործունեությունը կազդուրում է մարդուն..., նա սկսավ այնուհետև տան գործերից շատերը յուր ձեռքով անել.—Առաջին տպավորությունը, որ նա արավ երիտասարդի վրա, այն էր, թե նա բանի տեղ չէր դնում միաբանության անդամներին (Մուր.)։ Յուրաքանչյուր մտածող մարդու համար հեշտ է համոզվել, թե անհիմն է այն նոր լուսաբանությունը, որ հինը քանդում ու մերժում է բոլորովին (Պալ.)։

3. Երբեմն նաև, երբ նախորդ խոսքի մեջ կա որովհետև, եթե (թե որ) շաղկապ։ Օրինակ՝ Լեռնցի գեղչուկը... անշուշտ կծիծաղեր, եթե իմանար, թե մեր զրկանքը կազմում են այդ չնչին, հազիվ երբեմն յուր կարիքը լցուցանող բաները (Մուր.—թե շաղկապի տեղ այս դեպքում կարելի էր որ դնել).—Ո՛չ, որովհետև մտածում եմ, թե բոլոր կողմերն էլ միևնույն են ինձ համար.—Ով որովհետև գիտեր, թե ամեն մարդու բան չէ պարերը կառավարել այնպես, որ ընդհանուր գոհության ու կենդանության հետ միասին՝ դահլիճում տիրե... կարգ ու ներդաշնակություն, ուստի... (Մուր.)։

4. Երբեմն համաստորադաս խոսքերից առաջինը կապակցվում է որ շաղկապով, իսկ երկրորդը թե շաղկապով։ Օրինակ՝ Ահա՛ խոստանում ենք միմյանց՝ ընկերի և ուսանողի ազնվագույն խոստումով, որ մեր սրտերում ցանված սերմերը պիտի աճեցնենք կյանքում... և այդ սերմերից ելած պտուղները վայելել տանք նախ՝ այն ազգին ու ժողովրդին, որին պատկանելու պատիվն ունինք, և ապա թե դրանից բաժին հաննենք մեզ.—Այս էին մտածում Կամսարյանի ծնողները և ցանկանում, որ Պետրոսը առժամանակ հանգստանա և մանավանդ թե կազդուրվի ղովարար ամարանոցում (Մուր.)։ Ճշմարիտ է, որ կատաղի դաղաններն անգամ կերակրում են իրենց ձագերը և թե մոր պես հոգում են նրանց պիտույքը (Պալ.)։

5. Թե շաղկապի տեղ որ շաղկապն է դրվում, երբ հաջորդ խոսքն սկսվում է մի թե շաղկապով. օրինակ՝ Բայց ասում եք, որ դեռ չեք որոշել, թե ո՛ր դյուղում պիտի հաստատվիք (Մուր.)։

Ծան. Սակավ անգամ, ավելի ժողովրդական լեզվի մեջ, ուղղակի և անուղղակի խոսքերը, առանց հաջորդ խոսքի թե շաղկապին ևս, գլխավորի հետ կապակցվում են որ շաղկապով. Օրինակ՝ Ասել եմ, որ մի տեղ գնալիս ինձ իմաց արա՛ (Պռ.)։ Հաշոզ շունը ձայն է տալիս, որ գալիս է քեզ վրա (Ջիվ.), փոխանակ՝ ձայն է տալիս, թե գալիս է քեզ վրա (տե՛ս նաև § 257. 2)։

ՊԱՐԱԴԱՅԱԿԱՆ ԽՈՍՔԵՐ

1. ՏԵՂԻ ԽՈՍՔԵՐ

278. Տեղի խոսքերը կապակցվում են որտեղ, ինչտեղ, ուր հարաբերականներով, երբ հարաբերյալն է՛ կամ կարող է լինել՝ այնտեղ,

նույնտեղ, ոչ մի տեղ, ամեն տեղ։ Այս խոսքերն իրենց կազմությամբ նույն են, ինչ որ § 268. 2 հիշված վերադիր խոսքերը, որոնց մեջ կրկնվում է հարաբերյալ անունը. ուստի և վերածվում են ինչպես մի վերադիր խոսք՝ տեղ բառով։ Օրինակ՝ Որտեղ մեղր լինի, ճանճն այնտեղ կժողովվի (Ա.),—Ճանճը մեղր եղած տեղը կժողովվի։ Որտեղ պատիվ չկա, այնտեղ հաց չկա առատ,—Պատիվ չեղած տեղը հաց չկա առատ (Ջիվ.)։ Որտեղ լինիս, ինչտեղ գնաս, լույս հավատիս հաստատ մնաս (Ժող. երգ.)։ Որտեղ օրենքն է՝ գանգատ կանեմ (Պռ.)։ Ուր կամք կա, այնտեղ կա և ճանապարհ.—Ուր որ հայ շինական կա, այնտեղ էլ կարող եմ գործել.—Գնա այնտեղ, ուր մարդիկ ապրում են իսկապես մարդո՛ւ և ոչ անասունի նման (Մուր.)։ Որտեղից որ եկել ես, այնտեղ գնա։

Սաե. Պետք է ուշադրություն դարձնել, որ ուր, ուրտեղ հարաբերականներից հետո որ թարմատարը դրվում է, երբ խոսքն ընդհանուր անորոշ նշանակությամբ է ասվում, ինչպես՝ Գնա այնտեղ, ուր որ քո պարտքը կհրավիրե քեզ (իբրև՝ ամեն տեղ, ուր որ էլ լինի). իսկ երբ որոշ, ծանոթ տեղի մասին է խոսքը, որ թարմատար կարելի չէ դնել, ինչպես՝ Գնա այնտեղ (այսինքն՝ այսինչ ծանոթ տեղը), ուր քո պարտքը հրավիրում է քեզ։

2. ԺԱՄԱՆԱԿԻ ԽՈՍՔԵՐ

279. *Ժամանակի խոսքերը կապակցվում են հարաբերական բառերով և շաղկապներով։ Նայելով թե գլխավոր խոսքերի գործողությունը երկրորդականից առաջ, հետո, թե նրա հետ միաժամանակ է կատարվում, վերածվում են՝ 1.* առաջ, մինչև *բառերով և բացասական անցյալ դերբայով* դեռ *բառի հետ (դեռ չտեսած). 2.* հետո, պես, ի վեր *բառերով և անորոշ դերբայի գործիականով, 3. ժամանակ, միջոցին բառերով և լիս վերջացած անկատար դերբայով, երբեմն և անորոշ դերբայի գործիականով։*

280. Երբ, երբ որ. *ցույց են տալիս գլխավոր խոսքի եղելության երկրորդականի հետ միաժամանակ և նրանից հետո կատարվելը։ Գլխավոր խոսքի մեջ կարող է դրվել այն ժամանակ, այն միջոցին։* Երբ որ *ունի միայն ընդհանրացական նշանակություն։ Օրինակ՝ 1. Երբ որ շատը չկա, քիչն էլ է հերիք,—Շատը չեղած ժամանակ քիչն էլ է հերիք (Ա.)։ Երբ մենք սև օրվան ունինք կարեկից, ասում են, կեսն է պակասում մեր ցավից (Գ.-Ք.),—Սև օրվան կարեկից ունեցած ժամանակներս... Երբ մենք քաղաքից ելնում էինք, ընկերս պատմում էր, թե... Քաղաքից ելածներս միջոցին ընկերս պատմում էր, թե... (Մուր.)։ Երեկ, երբ արևն այրում էր, ահա՛ այս սոսիներին էի ուզում հասնել (Մուր.),—Երեկ, արևն այրելիս (արևն այրելու ժամանակ), ահա՛... Երբ որ ամպած ես, բոց աչքերից մարգարիտ կմաղես,—Ամպած ժամանակդ բոց աչքերից մարգարիտ կմաղես (Ջիվ.)։ Է՞ր իմ թմրած աչքերես փախչում է քունը, երբ որ լսում եմ հայ ազգի անունը (Գ.-Ք.—Հայ ազգի անունը*

լսելիս, լսելու ժամանակ)։ Ամեն անգամ երբ ամպամած է, անձրեւ չի գալ.—Ամեն ամպելիս անձրեւ չի գալ (Ա.)։ Ամեն անգամ, երբ խոսք է եղել այդ ազգակիցների մասին, յուր սիրտը թունդ է առել (Մուր.),—Ամեն անգամ, այդ ազգակիցների մասին խոսք լինելիս,—ամեն խոսք եղած ժամանակ... Երբ կմտնես ժողովրդի մեջ, այն ժամանակ արդեն ինքդ կտեսնես նրա կարիքները (Մուր.),—ժողովրդի մեջ մտածդ ժամանակ... Երբ տեսնես դու նրան, ինձնից շատ բարև արա,—Նրան տեսնելիս՝ ինձնից շատ բարև արա։ Ես տեսա նրան այն ժամանակ, երբ նա պարապում էր,—Ես տեսա նրան պարապելիս։ Ծաղկունքը բարև կբռնեն, երբ կտեսնեն քեզ այն ժամանակ, երբ դու ման ես գալիս,—Ծաղկունքը բարև կբռնեն, երբ կտեսնեն քեզ ման գալով (Ջիվ.)։ Տե՛ս և § 60. 3., այլև ծան.։

2. Նա այն ժամանակ միայն հեռացավ, երբ իր եղբայրն եկավ,—Նա իր եղբոր գալուց հետո միայն հեռացավ։ Երբ Մոհմատ կատղած Հայաստան մտավ, սրբի մարմինը տեսնել ցանկացավ (Գ.-Ք.),—Մոհմատ կատղած Հայաստան մտնելով՝ սրբի մարմինը... (Համա. § 60. 2)։ Ուսանողներն ապշեցան, երբ Կամսարյանը հանդիսաբար հայտնեց, թե... Երբ այս մասին՝ իմ կարծիքս հայտնեցի Պետրոսին, նա ուսերը թոթվելով ասաց.—Երբ երիտասարդը կրկնեց յուր որոշումը, ներքնահարկի դահլիճը թնդաց կեցցեների որոտընդոստ ձայներից.—Մի քիչ հետո, երբ աչքերը վարժվեցան, սկսավ ամեն ինչ դիտել (Մուր.)։ Երբ ես իմ աշխատանքը վերջացրի, գնացի նրա մոտ,—Իմ աշխատանքը վերջացնելուց հետո գնացի։

Ծան. Վերածման ժամանակ փոխանակ «գնալու ժամանակ», «գնացած ժամանակ» կապակցության, երբեմն ժողովրդական ձևով ասվում է՝ «գնում ժամանակ», «գնալիս ժամանակ». ինչպես՝ ...Որ կարծում էր, թե գալիս ժամանակը չէր նկատած (Մուր.)։

281. Հենց, հենց որ. հենց որ... թե չէ. *ցույց է տալիս անմիջական հաջորդության, գլխավոր գործողության անմիջապես երկրորդականից հետո կամ նրա հետ իսկույն լինելը։ Վերածվում է պես բառով (§ 155. 1)։ Օրինակ՝ Հենց որ ինձ տեսավ, փախավ.—Ինձ տեսնելուն պես՝ փախավ։ Պատրաստ սպասում են, որ հենց ժամը տան թե չէ, ժամ պնան (Պռ.)։ Լույսը բացվեց թե չէ, ճանապարհ ընկան։ Լիքիա Պավլովնան միակն է, որին ցանկանալով ցանկանում են տեսնել թե ինքը, թե աղջիկը, հենց որ ազատ են լինում զբաղմունքից,—Սակայն նա լռեց, հենց որ հեռվում նշմարեց ծերուկ վանահորը (Մուր.)։*

Ծան. *Այս երկրորդական խոսքերի նշանակությունն արտահայտվում է նաև բայի կրկնությամբ բացասական ձևով, ինչպես՝ նկավ, չկավ՝ վրա բերեց թե...(Պռ.). Համ թե բայերից առաջինը դրվում է բացասական՝ որ շաղկապով, ինչպես՝ Որ չգնացի, նրան տեսա, սիրտս կտրատվեց (տե՛ս և § 215. 4)։ Նույնն արտահայտվում է և հետևյալ դարձվածով, ինչպես՝ Գալն ու վրա բերելը մին եղավ (արեց)։ Հաղի մեջ մտնելն ու քրսան ձու տանելը մին եղավ (Պռ.)։— Վերածումը լինում է երբեմն անցյալ պերբայի կրո-*

կընութեամբ բացասականով. օրինակ՝ Հայր Ռիվոլին՝ առավոտը լույսը բացված չբացված՝ աղետքը նշմարեց («Մուրճ», 1902, 10).— Լույսը բացվեց թե չէ,— լույսը բացվեց չբացվեց...

282. Քանի, քանի դեռ. *նշանակում է որեան ժամանակ որ. ցույց են տալիս գլխավոր խոսքի գործողության կատարվելը երկրորդականի հետ միաժամանակ, միայն ոչ թե մի ժամանակակետում, ինչպես երբ, եթե որ բառերն են ցույց տալիս, այլ մի ամբողջ տևական ժամանակամիջոցում։ Գլխավոր խոսքի մեջ կարող է դրվել՝ շարունակ, միշտ, երբեք։ Բացասական բայի հետ ցույց է տալիս գլխավոր խոսքի գործողության երկրորդականի կատարվելուց առաջ մի ժամանակամիջոցում ընկնելը։ Օրինակ՝ Քանի լուսահոգին կենդանի էր, ամեն բարութիւններս էլ կար (Պո.),—Լուսահոգու կենդանության ժամանակ, լուսահոգու կենդանությամբ, լուսահոգու օրով ամեն բարութիւններս էլ կար (տե՛ս § 125. 2)։ Ես, քանի շունչս բերանիս է, ձեր արած լավութիյունը չեմ մոռանալ.—Մարդս որ կա, տնկի է. քանի փոքր է, կարող ես ուղղել (Պո.),—փոքր եղած ժամանակը կարող ես ուղղել։ Քանի ողջ ես, աշխարհի մեջ պիտի ապրես աղքատիկ.—Քանի ողջ ես, դառնութիյուն է բաժինդ. երբ մահացար, կքաղցրանաս (Ջիվ.),—ողջ եղած ժամանակդ, ողջ եղածովդ... մահանալուց հետո... Քանի հով է, հունձդ արա (Գ.-Ք.)։ Քանի շարունակվում էր տեսարանների միակերպութիյունը, Կամսարյանը ներանցով չէր հետաքրքրվում (Մուր.)։—Քանի արեգակը չէ ննջած, սև ամպերից մի վախենալ,—Արեգակը չննջած՝ սև ամպերից մի վախենալ (Ջիվ.)։ Քանի դեռ չես գրել, լավ միտք արա,—Դեռ չգրած՝ (գրելուց առաջ) լավ միտք արա։ Քանի չուրը չես տեսել, մի՛ բոբիկանար,—Ջուրը չտեսած՝ մի՛ բոբիկանար (Ա.)։ Քանի դեռ արևելքը չի բոցավառվում, երկնքի վրա լողացող ամպերից՝ նրա հոսանքների վրա անդրադառնում էին սպիտակ ու մոխրագույն շերտեր.—Տարիներ առաջ, քանի դեռ «լուսավորութիյան» ճառագայթները այսքան չէին մոտեցել մեր եկեղեցու շեմքերին, հայ քահանան հայր էր համարվում ամեն մի հայ քրիստոնեի.—Հարցրեց աբեղան, կարծես շտապելով մի նոր բան ասելու, քանի դեռ ոչ ոք չէր խանգարում իրենց (Մուր.)։*

283. Քանի. *նշանակում է՝ 1.* **Ամեն անգամ, երբ. ամեն ժամանակ, երբ.** *կազմում է կրկնության ժամանակի խոսք։ Օրինակ՝ Քանի տուն եմ գնում, նրան տանը չեմ գտնում,—Ամեն տուն գնալիս... Քանի խոսք եմ բաց արել, ինձ հանդիմանել են (Պո.)։ Քանի անոթնա, բարիկենդանի փլավը միտքը կընկնի (Ա.)։*

2. **Այն ժամանակից, երբ. այն օրից ի վեր, երբ.** *երկրորդական խոսքի գործողությունը դառնում է սկզբնավետ մի ամբողջ ժամանակամիջոցի, որի մեջ ընկնում է գլխավոր գործողությունը։ Օրինակ՝ Իրիկվանից դեսը, քանի տեսել եմ (տեսնելուցս ի վեր. հմմտ. § 148), չեմ մոռանում.—Քանի Գարեգնի հետ ընկերացել է, տասն այնքան*

ավելացել է։ Քանի այդ լուրը լսել եմ, չեմ կարողանում հանգստանալ։ —Քանի նա իր նոր բնակարանն է տեղափոխվել, մեզ մոտ չի եկել։

284. Քանի որ. *Նշանակում է որևէ ժամանակ որ, այն ժամանակ երբ. միաժամանակությունը որոշելու հետ ունի նաև հիմունքի (պատճառի) երկրորդական գաղափար։ Օրինակ՝ Քանի որ կա վարդը կարմիր, պիտի երգեմ ես քաջ ու ժիր (Ջիվ.)։ Քանի որ բաներն այս ճամփով կերթան, մարդ չի գտնվիլ իմաստուն քեզ նման.—Քանի որ ոսոխն թուր ուներ ձեռին, Վարդանն էր նրա ահեղ թշնամին.—Քանի որ իմ զավակունք այսպես կմնան պանդուխտ, ինձ միշտ սգվոր կգտնեք.—Մեր հայրենին չէ չվառական, քանի որ ունի քաջ որդիք մեզ պես (Գ.-Ք.)։ Ես ինչ պիտի շահվեմ այս աշխարհից, քանի որ չէ շահվել իմ մեծ վարպետն.—Քանի որ ես ույժ ունիմ, ինչո՞ւ լամ (Ջիվ.)։*

285. Մինչ, մինչդեռ, այն ինչ. *Նշանակում են այն ժամանակ, երբ. ցույց են տալիս գլխավոր և երկրորդական խոսքերի եղելության միևնույն ժամանակամիջոցի մեջ կատարվելը։ Օրինակ՝ Մինչդեռ ես գրում էի, նա կարդում էր։ Մինչդեռ մենք ման էինք գալիս, նրանք կանգնած խոսում էին իրար հետ։ Մինչդեռ երիտասարդին պաշարել էր այն միտքը, թե ինչ անկողին պիտի բերեն իրեն, տանտիկինը դուրս հանեց գունավոր կտավի մի կապոց, որի մեջ խնամքով պահված էր մի ձեռք մաքուր անկողին.—Շրջակա ափերը փայլփլում էին ոսկու պես, մինչդեռ խոր հարավը հետզհետե ներկվում էր քրքումի գունով (Մուր.)։ Կամ կենսատու իմ ջրով ափերիս մոտ կկազած՝ իր նամա՞զը կատարն պարսիկ կամ թուրքը հոտած, մինչ իմ որդիք, ով գիտե, ծարավ, նոթի, անտերունչ, օտար աշխարհ հածում են թույլ ոտքերով, կիսաշունչ (Գ.-Ք.)։ Մինչ շուրջս աշխարհի ունայն հոգսերով վխտում է ամբոխն անմիտ ու դատարկ, ...ես աշխարհ մոռցած, հեռու աղմուկից, կանգնած եմ առջևդ, ով սուրբ Տիրամայր.—Ա՜խ, ոսկի լարեր պիտի հառաչեն, մինչ աշնան նման խամրած են սրտեր (Հովհ. Հովհ.)։*

286. Մինչև, մինչև որ. *ցույց է տալիս վերջին ժամանակակետը, որից առաջ կատարվում է գլխավոր խոսքի գործողությունը. ունի մինչև նախդրի նշանակությունը (տե՛ս § 145)։ Օրինակ՝ Մինչև հաստը բարակի, բարակի հոգին դուրս կգա,—Մինչև հաստի բարակելը բարակի հոգին դուրս կգա (Ա.)։ Մինչև աղը եկավ, մատաղը մեջտեղից վերացավ (Ա.),—Մինչև աղի գալը, աղը գալուց առաջ, աղը դեռ չեկած՝ մատաղը վերացավ։ Մինչև խելացին մտածել է, խենթը գետն անցել է (Ա.)։ Մինչև որ մեծացել եմ, ինչե՞ր եմ քաշել.—Մինչև մեծանալս ինչե՞ր եմ քաշել (Ջիվ.)։ Իմն ինձ է հասնում, մինչև նա տուն է գալիս։ Սրանք իրար հետ զրույց տվին, մինչև ժամը պրծան։ Նստիր այստեղ, մինչև ես բանից պրծնեմ, գամ։ Եվ երբ նա երևում էր, սկսում էի դիտել նրան հեռվից..., մինչև որ նա գալիս, մտնում էր բակը.—Խնդրեց, որ աղան շնորհ անե կառքից իջնելու, մինչև որ ինքը մարդ կուղարկե ամուսնու նեւից.—Ներունի վանահայրը... խնդրեց երիտասարդին մը-*

նացած տեղերը շրջել լուսարարի հետ, մինչև որ ինքը հոգնածությունն առնելով կգար.—Խորհուրդ տվի առաջնորդիս մի առ ժամանակ ըսպասել, մինչև որ հեղնղը դադարեր և ապա թե անցնեինք.—Մի ծառա սկսավ մեր ձիերը պտտեցնել, մինչև որ նրանց քրտինքը ցամաքեր.—Մինչև որ անկողինը կպատրաստեին, նա բարձրացավ տան կտուրը (Մուր.)։ Մինչև չգա ետինը, չի հիշվիլ առաջինը (Ա.)—Ետինը չեկած՝ առաջինը չի հիշվիլ։ Մինչև քեզնից մի օգուտ չեն տեսել, բանդ չեն շինել։—Ջեմ տալ, մինչև չասես թե ...երդում կերա, որ մինչև չհասցրնեմ, հաց չուտեմ (Պռ.)։ Մինչև չմեռնի, չի հայտնվի այդ բանը (Ջիվ.)։

Ծան. Օտարաբանություն է դրական գլխավոր խոսքերի հետ երկրորդական խոսքերը բացասական դնել մինչև բառով, ինչպես՝ Եվրոպ, Առիա արյան գետերը կվազեցնեի հեղեղի նման, մինչև որ թագ, գահ ու ազատ կրոն ինձնից չստանար Քվառ Հայաստան (Գ.-Ք.)։

287. Որ. *երկրորդական խոսքի սկզբում կամ մեջը.*

1. Երբ, երբ որ. *օրինակ՝ Այս որ լսեց Հայկը, ժողովեց յուր սակավազոր ցեղը և աննկյուղ թշնամու առաջ գնաց (Պալ.),—Հայկ այս լսելով... Ամեն անգամ որ Պերիկլես ամբիոնի վրա էր բարձրանում, աստվածներից խնդրում էր... (Պալ.),—Պերիկլեան ամեն ամբիոնի վրա բարձրանալիս... Այս որ ասաց, քաշեց, մտրակը, երեք ձիանց մեջքին խփեց,—Այս ասելով՝ քաշեց... Եզը որ ընկավ, դանակավորը կշատանա (Ա.)։ Քիչ էլ որ առաջ գնաց, տեսավ... Ճրագը որ կպավ, հյուրի առաջին դուռը չեն բանալ (Պռ.)։—Դանակը սրեց, գառին մոտեցավ. որ սլիտի մորթեր՝ մի խեղճ ձայն լսեց (Ջիվ.)։ Մի սքանչելի երեկո էր, որ մի բարձրահասակ հոգևորական կանաչ խոտի վրա ծունկը ծալած՝ նրստած էր (Պռ.)։*

2. Այն օրից ի վեր, երբ. այն ժամանակից, երբ: *Այս նշանակությամբ որ շաղկապի տեղ կարող է և ինչ շաղկապը դրվել։ Օրինակ՝ Քանի օր է, որ նրան չեմ տեսել։ Տասը տարի կա, որ նա գնացել է։ Կլինի չորս հինգ օր, որ նա այդ բանն արել է։ Բավական ժամեր էին անցել, ինչ ելել էինք քաղաքից.—Շատ տարի չէ, ինչ սկսել եմ լրագիր կարդալ.—Լուսարարը վաղուց էր, ինչ չէր տեսել այդպիսի նվեր.—Շատ ժամանակ չէ, ինչ դիպվածով գտել են այս (Մուր.)։*

288. *Հաճախ որ, երբ բառերով կապակցված վերջադաս երկրորդական խոսքերը թեպետ ձևով երկրորդական են, նշանակությամբ գրեթե գլխավոր են։ Առաջադաս գլխավոր խոսքի մեջ սովորաբար լինում է հաճախ, հազիվհազ, դեռ նոր, հենց նոր և այլն։ Օրինակ՝ Դեռ ժամեր չէին շինել, որ կույրերը դուռն առան,—Դեռ ժամեր չշինած, ժամերը շինելուց առաջ կույրերը դուռն առան (Ա.)։ Արևը չէր ծագել, որ ճանապարհ ընկանք,—Արևը չծագած, ծագելուց առաջ ճանապարհ ընկանք։ Աղոթարանը դեռ նոր մոտեցել էր, որ մայրը վեր կացավ։—Սուրբ խաչից հետո երկու շաբաթ չանցավ, որ աշտարակցիք բանից պրծան։ Կես գի-*

շեր էր, որ գնացքը կանգ առավ։ Դեռ բավական օր կար, որ Պետրոսը հասավ գյուղ.—Չէր անցել դեռ կես ժամ, որ նրան սկսան անհանգըստացնել լվերը.—Դեռ այս մտքի վրա էր կամասարյանը, երբ հանկարծ նրա ետևից հնչեց մի թավ ձայն.—Արևը դեռ նոր էր Մայմեխի բարձունքը վառում, երբ մեր ուղևորներն անցնում էին նրա ստորոտով (Մուր.)։ Հենց ուզում էի դուրս գալ, որ հայրս եկավ։

Նաև. Այսպիսի երկրորդական խոսքերի սկզբի որ, երբ բառերի փոխանակ դրվում են հաճախ՝ աճա, և աճա՛: Այս դեպքում կազմվում են համադաս խոսքեր։ Օրինակ՝ Հազիվ ելել էր պատշգամբ և ձեռքը տարել ծոցը, որպեսզի հուշատետրը հանե, և ահա՛ դռան մուտքի հնչակը քաշեցին.—Հազիվ տանուտերը ձեռք առավ օղիի չիշը, որպեսզի հյուրին հրամցնե, ահա՛ սրահի մեջ բուսավ Տեր-Վանին (Մուր.)։

3. ՉՆՎԻ ԵՎ ՉԱՓԻ ՈՒ ՔԱՆԱԿԻ ԽՈՍՔԵՐ

289. Չևի և չափ ու քանակի խոսքերը լինում են՝ բաղդատական, հետևանքի և բացաբարձության։ Բաղդատական խոսքերն իրենց կողմից լինում են՝ նմանության, հավասարության և տարբերության։

Նմանության բաղդատական խոսքերը ցույց են տալիս գրեթե խավոր խոսքի հատկության, որպիսության նման լինելը երկրորդականին. սկսվում են՝ ինչպես, ինչպես որ, որպես, ժողովրդական ոնց որ բառերով. գլխավոր խոսքի մեջ կարող է լինել՝ այնպես, նույնպես։ Երկրորդական խոսքի մեջ բայ-ստորոգյալը կարող է զեղչվել, երբ ստորոգյալը կամ ենթական նույն են։ Վերածվում են՝ պես, նման, համեմատ, ըստ բառերով (տե՛ս §§ 146 և ավելի 155), երբեմն և գործիական հոլովով կամ անցյալ դերբայով։ Օրինակ՝ Մի՛ լինիր անգութ, ինչպես մայրդ (այսինքն՝ ինչպես մայրդ է),—Մորդ պես մի՛ լինիր անգութ (Ջիվ.)։ Արա՝ ինչպես կուզես,—Ուզածիդ պես արա։ Սիրե՛ ազգդ ոչ լոկ խոսքով, սիրե՛ ինչպես քու անձը (Գ.-Ք.—ինչպես քու անձը սիրում ես),—սիրե՛ անձիդ պես։ Չէ՛, անհնար է ազգեն հրաժարվել, ինչպես որ միսն ոսկորեն բաժնել.—Դու, հայ զորավար, գթա՛ հայերուն, ինչպես գթաց քու նախատիպ Վարդան (Գ.-Ք.)։ Նրան էլ իրավունք տաս խոսալու կամ գործելու այնպես, ինչպես որ դու ես խոսում կամ գործում.—Ինչպես տան չորս պատերը, նույնպես և առաստաղն ու նրան բռնող փայտե չորս սյուները ծուխից սևացած էին.—Թե՛ յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ եղածն էլ կմատնվեր կորըստյան, ինչպես որ մատնվել են նրանից առաջ եղած գրական գանձերը (Մուր.)։ Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա կախված է ժայռը ջրերի վրա (Հովհ.)։ Թե՛ ինչպես որ ուտել, հագնել են ուզում, այնպես էլ աշխատեն, ո՞վ դարդ կանի.—Ոնց կանես, այնպես կուտես.—Սոսը վրա հասավ, ոնց որ մի ուրուր վեր գա... Փաթաթվեց Սոսի ճտովը, ոնց որ բազեղը ծառին (Պռ.)։ Նա նույնպես բարի է, ինչպես և գեղեցիկ։ Նա ուրախ զվարթ է, ինչպես սովորաբար (ըստ սովորականին)։ Ինչպես որ կարծում ես, դուրս չի գալ.—Կարծածիդ պես դուրս չի գալ գեղանի

(Ջիվ.)։ Լա՛վ, ինչպես պահանջում ես, կանեմ։ Այդ դեպքում էլ, ինչպես ասացի, անպայման չեմ մեղադրում քեզ.—Նրանք ավելի արժանավոր, կամ ինչպես իրենք կասեին՝ «ազնվական» գործով (Մուր.)։ Ճշաց իսկույն տիկին Կամսարյանը, կամ յուր լեզվով ասած՝ Լիդիա Պավլովնան (Մուր.,—կամ ինչպես ինքը կասեր՝ Լիդիա Պավլովնան)։ Նրանք ուսանողության ամենաընտիր մասը, կամ բանաստեղծորեն ասած՝ (ինչպես բանաստեղծորեն կարելի է ասել) ծաղիկներն էին (Մուր.)։ Գարեգինն էլ, ոնց որ իրենց սովորությունն էր, ասաց (Պռ.),—Իրենց սովորությամբ, ըստ իրենց սովորության։ Հայկ նահապետը, ինչպես ասում է (պատմում է, վկայում է և այլն) Խորենացին, եղել է...,—Խորենացու ասելով, պատմելով, վկայությամբ (տե՛ս § 126. 2)։

290. *Նմանության բաղդատական խոսքերի մի տեսակն են և* **կարծեցյալ նմանության** *խոսքերը, որոնց բովանդակությունն իրական չէ, այլ միայն հնարավոր է ենթադրվում. սկսվում են* **որ** *շաղկապով, որից հետո դրվում է՝* **ասես (թե), կարծես (թե), իբր թե, որպես թե, ինչպես թե,** *կամ միայն* **որպես թե, ինչպես թե, ոնց որ** *բառերով՝* **առանց որ** *շաղկապի։ Գլխավոր խոսքի մեջ կարող է լինել նույնպես, այնպիսի։ Օրինակ՝ Նա այնպես է ման գալիս, որպես թե կաղ լինի (որ կարծես թե կաղ լինի)։ Ի՞նչպես, մի՞թե կարելի է, բացականչեց տիկին Մարկոսյանը այնպիսի մի եղանակով, որ կարծես հայտնված նորությունը վերաբերում էր մի մեծ եղեռնագործության.—...Բացականչեց ընկերս այնպիսի մի կարոտով, որ կարծես գտնվում էր Սահարայի անապատում.—Ողջունեց մեզ սիրով և այնպիսի մտերմությամբ, որ կարծես հին բարեկամներ էինք.—Կամսարյանը վերցրեց այնպես շտապով, որ կարծես գողացած իր էր (Մուր.)։*

291. Հավասարության բաղդատական *խոսքերը ցույց են տալիս գլխավոր խոսքի չափ ու քանակի և աստիճանի հավասար լինելը երկրորդականին, և կամ գլխավոր խոսքի նշանակությունը չափ ու քանակի և աստիճանի կողմից սահմանափակում են՝ երկրորդականին հավասար կամ համեմատ դարձնելով։ Երկրորդական խոսքերն սկսվում են՝* **որքան, որչափ, ինչքան, ինչչափ, քանի,** *նայելով թե բառերով. գլխավորի մեջ կարող է լինել՝* **նույնքան, այնքան, նույնչափ, այնչափ,** *ըստ այնմ։ Երկրորդականի մեջ բայը կարող է զեղչվել։ Վերածվում են՝* **ըստ, չափ, չափով, թվով, հավասար, համեմատ,** *նայելով բառերով և գործիականով (§§ 146, 157, 126. 2)։ Օրինակ՝ Նա էլ նույնչափ հարուստ է, որչափ դու,—Նա էլ քեզ չափ հարուստ է։ Արծաթը նույնչափ օգտավետ է, որչափ՝ ոսկին։ Որքան աշխատել ես, այնքան էլ կվարձատրվես,—Կվարձատրվես քո աշխատանքի չափով, նայելով քո աշխատանքին։ Նայելով թե ով որքան է աշխատել, ըստ այնմ էլ վարձ կըստանա։ Որքան մարդ կար ընկած, այնքան էլ ձի գտանք,—ընկած մարդկանց թվով էլ ձի գտանք։ Աշխատեց պարարտ մարմինը, որքան կա-*

րելի է, հանգիստ զետեղել նրա վրա,—...զետեղել նրա վրա կարելվույն չափ հանգիստ (Մուր.)։ Ինչքան ույժ ուներ, տասն այնքան ավելացավ... Լևոն Բ. որքան քաջ ու հաջողակ զորավար էր պատերազմի դաշտում, նույնքան իմաստուն կառավարիչ և աշխարհաշեն իշխան հանդիսացավ խաղաղության ժամանակ (Պալ.)։ Ոչ մի հարուստ այնքան փող չի տվել աղքատներին, որքան սա։ Կես թագավորության տալիր իրան, այնքան չէր ուրախանալ, ինչքան այս մի քանի մանիշակի համար։ Թող մեզնից ուտեն, որքան կարող են.—Քանի կարող եք, մի՛ խնայեք (Պռ.)։ Որքան կարող եմ, կաշխատեմ (Ջիվ.),—կարողության չափով։ Նա, որքան հնարավոր է, իր պարտքը կատարում է,—ըստ հնարավորության։ Որքան գիտեմ, նա քաղաքումս չէ,—իմ իմացածով։ Որքան հասկանում եմ, այդպես չէ,—իմ հասկացածով այդպես չէ։

292. *Հավասարության բաղդատական խոսքերի մի տեսակն են* **հարաբերականության խոսքերը,** *որոնք որոշում են գլխավոր խոսքի չափ ու ժամանակի կամ աստիճանի աճումը կամ նվազումը երկրորդական խոսքի մեջ եղած մի նույնպիսի հանգամանքի հարաբերական չափով. սկսվում են՝* **ման, որման** *բառերով. գլխավոր խոսքի մեջ կարող է լինել՝* **ավելի, այնման ավելի**: *Օրինակ՝ Ես քանի մեր Սոսին խրատում եմ, ավելի վառվում է.—Քանի շատ լիներ, նրա համար լավ էր. Քանի բանի ետևից եմ ընկնում, ավելի ձախ է գնում (Պռ.)։ Շանը քանի զարնես, կհաչի (Ա.)։ Աշխարհը քանի գնում՝ չարանում է (Պռ.,—աշխարհը գնալով չարանում է)։ Քանի արևը բարձրանում էր, այնքան ավելի օդը ջերմանում և նեղացնում էր մեզ.—Որքան շատ եմ գործում, այնքան ավելի առողջ եմ զգում ինձ.—Քանի Պետրոսը կարդացել էր այդ գիրքը, այնքան ավելի նա սկսել էր սիրել հայ շինականն ու գյուղացին.—Նա որքան առաջանում՝ այնքան ավելի էր հիանում նրբանցով.—Քանի սարը հեռու է լինում, այնքան էլ նա փոքր է երևում... իսկ հետո՝ որքան մոտենում ենք, այնքան նա մեծանում է (Մուր.)։*

298. Տարբերության բաղդատական *խոսքերը ցույց են տալիս գլխավոր խոսքի մի հատկության կամ գործողության չափ ու քանակի կամ աստիճանի տարբերությունը, առավելությունը կամ նվազությունը, երկրորդական խոսքի մի հանգամանքից։ Գլխավոր խոսքի մեջ դրվում է այլ, ուրիշ, տարբեր, հակառակ, ավելի, պակաս, ճվազ, իսկ երկրորդականն սկսվում է* **քան, քան թե** *շաղկապով։ Ավելի, պակաս. ճվազ բառերով կազմվում է առավելության կամ նվազության բաղդատական աստիճան։ Երկրորդական խոսքի մեջ բայը սովորաբար զեղչվում է։ Այս խոսքերը վերածվում են բաղդատական բացառականով (տե՛ս § 112. այլև § 113. 3. ծան. 2)։ Օրինակ՝ Վարդն ավելի հոտավետ է, քան մանուշակը։ Մանուշակը պակաս հոտավետ է, քան վարդը։ Պարապությունն ավելի է վնասում առողջությանը, քան չափազանց զբաղմունքը.—Համբերել բառն ավելի բարձր նշանակություն*

ունի, քան ինչ որ դու տալիս ես նրան.—Ծառաստանն ավելի լավ է, քան թե չոր տափաստանը.—Ասել ես ավելի անկեղծորեն, քան կարող էիր ասել.—Կգործենք ավելի հաջողությամբ, քան կարող ենք երևակայել (Մուր.)։ Նա ավելի խոսում է, քան գործում.—Ես այսօր ավելի եմ պարապել, քան երեկ։ Ես չէի կարող այլ կերպ վարվել, քան վարվել եմ։ Կարո՞ղ էի ես ուրիշ բան տալ նրան, քան ինչ որ տվել եմ։

294. *Երբեմն տարբերության բաղդատական խոսքերը* **fանց, fանչ or** *շաղկապներով ստանում են փոխանակության խոսքի նշանակություն. օրինակ՝ Քանց ուտում է Տաճիկը, Թող ուտի Խաչիկը (Ա.—տաճկի ուտելու փոխանակ՝ Թող ուտի Խաչիկը)։ Չէ՛, Թող մնա իմ նախնյայց աղնիվ բամբիռն, Թող մնա հավերժ լուռ, քանց որ փարատի ձեր սին ձանձիրը (Գ.-Ք.)։*

Ծան. *Այլ կամ ուրիշ բառերն ունեցող բացասական կամ հարցական խոսքերից հետո՝* **fաև** *բառն երկրորդական խոսքի սկզբում ստանում է բացարձական նշանակություն, որ և սովորաբար արտահայտվում է բացի բառով։ Օրինակ՝ Մի մարդ որ պաշտպան է հանդիսանում տգիտության, նա չի կարող ուրիշ պատճառ ունենալ, բացի այն՝ որ կլինի ապուշ կամ խելագար (Մուր.)։*

295. Հետևանքի խոսքերը *որոշում են գլխավոր խոսքի ձևը կամ աստիճանը՝ ցույց տալով նրա հետևանքը կամ ազդեցությունը։ Դրվում են կանոնավորապես վերջադաս և սկսվում են՝* **or, or նոր,** *մինչև* **or.** *այնպես* **or** *շաղկապներով. գլխավոր խոսքի մեջ դրվում է սովորաբար՝ այնքան, այնչափ, այնպես, այն աստիճանի, շատ, քիչ և այլն։ Օրինակ՝ Նա այնպես մութն է խոսում, որ ես բան չեմ հասկանում։ Նրա կոպիտ վարմունքն ինձ այնպես վիրավորեց, որ ես Թողի, հեռացա նրանից։ Բոլոր այս ծրագիրներն այնքան ընդարձակ էին, որ նույնիսկ նրանց համառոտ կազմությունը խլեց Կամսարյանի ազատ ժամերը.—Այն օրից ի վեր այնքան առողջացավ, որ էլ չէր գանգատվում ո՛չ սրտի ցավից, ո՛չ Թուլությունից.—Տան պատերը ծուխից սևացած էին այն աստիճան, որ շատ տեղ փայլում էին լուսի առաջ (Մուր.)։ Արքայորդիքը այնչափ խռովություն հանեցին, որ երկրի անդորրություն վրդովեցին (Պալ.)։ Հետ դարձավ, դրանց մի լավ ներկեց, որ ոչ ոք չկարողացավ ականջ դնել.—Ոտը դուրս դնելիս մի խոր հոգոց քաշեց, որ պնչերքիցը ծուխը դուրս եկավ.—Վերջը տատս եկավ, մորս վրա բարկացավ, հորս էլ աղաչանք արեց, որ նոր (մինչև որ նոր) տուն է բերել ինձ.—Համազին յոթը ձիու մուննաթ ենք արել, որ (մինչև որ) եկել է (Պալ.)։ Ռուբենի հաջորդները մեծ աշխատություն ու ճարտարություն գործ դրին, մինչև որ բովանդակ Կիլիկիային տեր դարձան (Պալ.)։ Հինգ, վեց հարյուր հոգի լցվեցին պատի տակը, այնպես որ ճանապարհ չէր լինում։ Խոսում է խոսում, այնքան որ գլուխ է տանում։ Բացի այդ՝ մայրաքաղաքում շատ կային Ադելինաներ, այնպես որ Կամսարյանը ստիպված չէր լինիլ հիշել յուր նիհար դրացուհուն (Մուր.)։ Այնպես արա, որ հարևաններդ քո շվաքդ անգամ չտեսնեն.—*

Ուզում ես ողորմություն տալ՝ այնպես տուր, որ մին դու իմանաս, մին աստված (Պո.)։

296. Բացաբարձության խոսքեր *են կազմվում առանց* **որ** *շաղկապով, որ դույց է տալիս մի հարակից հետևանքի կամ հանգամանքի չինելը։ Սրինակ՝ Անհնարին է անպատիժ կերպով խախտել այդ ներդաշնակությունը. անհնարին է աղավաղել, խեղաթյուրել բնությունը, առանց որ այդ հանցավոր փորձի հակահարվածը նույն փորձի հեղինակի գլխին ընկներ (Ա. Մուրճ, 1902, 10)։ Երբ հեղինակը հեշտ միջոցներ է գտնում ստեղծել անակնկալներ, առանց որ այդ անակնկալները արդյունք լինեին հոգեբանական կացության և իրերի իսկական տրամաբանության, կարելի է ասել, որ գործն ապտանված է (Ա. Մուրճ, 1902, 11)։ Մի հինգ, տասը հոգի էլ իրենց կողմից են սկսում ավելի անմտագույն առարկություններ անել, առանց որ այդ առարկությունները կապ ունենային իրար հետ.—Նրա դեմքի վրա վառվում էր մի սուրբ, մի ազնվական կրակ, որի կայծերը թափանցում էին իմ սրտի խորքը, առանց որ ես կամենայի (Մուր.,—առանց իմ կամենալու)։*

4. ՀԻՄՈՒՆՔԻ ԽՈՍՔԵՐ

297. Պատճառի խոսքերը *ցույց են տալիս իրական հիմունքը կամ բարոյական շարժառիթը և կամ տրամաբանական հիմունքը, որից իբրև հետևանք կամ եզրակացություն ծագում է գլխավոր խոսքի գործողությունը։ Վերածվում են պատճառով, համար բառերով կամ բացառական ու գործիական հոլովներով (տե՛ս §§ 59. 6, 111, 120. 2, ծան.)։ Կապակցվում են՝*

1. Որ շաղկապով, որ ունի նրա համար որ, այն պատճառով որ կապակցությունների նշանակությունը, որոնցով և կարող է հաճախ փոխանակվել. այս դեպքում երկրորդական խոսքն առնվում է իբրև մի խնդիր խոսք (տե՛ս §§ 273 և 274)։ Օրինակ՝ Գնա՛ մի հաց կեր, մինն էլ մատաղ տուր, որ թուրքը հիմար էր, բան չհասկացավ.—Գարեգինը, ճիշտ է, ջահել էր, բայց մին՝ որ քավոր էր, մին էլ՝ որ խելոք էր, վեր կալավ, ասաց.—Նա սկսեց լաց լինել. մին՝ որ ամաչում էր, մին էլ՝ որ սովորություն էր (Պո.)։ Դա մինչև անգամ օգուտ կբերեր վանքին. նախ՝ որ այդ մատյանը կարելի կլիներ առաջարկել ամեն այցելուի. երկրորդ՝ որ վերջինս հաստատ գիտենալով... կնվիրաբերեր ավելի առատորեն (Մուր.)։ Փառք քեզի, Աստված, որ բերիր հասցրիր այս ավուր ինձի. պետք է ես աղոթեմ միշտ բազկատարած, որ չթողիր տըրտում և տխուր ինձի (Ջիվ.)։ Փառք եմ տալիս Աստուծուն, որ (որդուս) ղրկել չեմ (Մուր.)։ Փառք տվեց Աստուծուն, որ յուր աչքով յուր խնամած ծառի պտուղը տեսավ (Պո.)։ Ցավում է սրտուս ոչ նեսի խոցից, ցավում է, որ շուտ գնում եմ ձեզնից, որ չեմ կարենում ձեզ հետ միասին արձակ դաշտի մեջ փչել իմ հոգին.—Խորունկ խոցվեցավ Մասիսի հոգին, որ զավակներեն մնաց անայցել (Գ.-Ջ.)։ Նա սըտմտում էր

ոչ թե նրա համար, որ իշխանը շվայտ էր կամ անառակ, այլ նրա համար, որ անտոհմիկ գավառացին տիրում է իշխանական կայքին (Մուր.),—նա չէր սրտմտում, որ իշխանը շվայտ էր, այլ որ գավառացին տիրում է... Նա ինչո՞ւ պիտի ամաչի, եթե ես մինչև անգամ շատ հիմար բաներ խոսեմ.—Կամաչի նրա համար, որ յուր հյուրն ես.—Հայ գյուղացին տգետ, հետամնաց և թշվառ է մնում այն պատճառով, որ բոլոր յուր կյանքում զուրկ է մնում առաջնորդից (Մուր.)։

2. Որ, բանի որ շաղկապներով (տե՛ս § 284)։ Օրինակ՝ Ապաշխարեցեք, որ (=քանի որ) մոտեցել է երկնքի թագավորությունը։ Երանի հոգվով աղքատներին, որ նրանցն է երկնքի թագավորությունը։ Երանի սգավորներին, որ նրանք կմխիթարվին։ Երանի հեզերին, որ նրանք կժառանգեն երկիրը (Մատթ. Բ. 2. ե. 3—5)։ Համեցեք, եկեք, որ հինեն դնում ենք.—Թուրքերն էլ պաս չեն պահում, բայց որ (=քանի որ) աղքատ են, պաս են ու պաս.—Բայց որ ասում ես, ես ձեռ վեր կունեմ (Պռ.)։ Որ դու չես գալիս, ես էլ չեմ գնալ։ Այժմ ի՞նչ անեմ, որ (=քանի որ) գյուղն ինքն է անհնար դարձնում այնտեղ մնալն ու գործելը (Մուր.)։ Էշին ասին՝ աչքդ լույս, քեզ քուռակ եղավ։ Ասաց՝ ի՞նչ անեմ, որ իմ բեռն իմ մեչքիցը չպետք է պակսի (Ա.)։ Նհախ պտրում ես արծաթի մադանը, որ (=քանի որ) աժան է օխտը գաղ քաթանը (Գ.-Ք)։ Քանի որ այդպես է, ես ոչինչ չունեմ ասելու։ Ինձ հրաց չի հարկավոր, քանի որ չեմ պարապում։ Այսուհետև ինձ լույս չէ հարկավոր, քանի որ քեզ ունեմ (Ջիվ.)։ Ես չեմ կարող նրան հավասալ, քանի որ չեմ ճանաչում նրան։ Նա չի կարող գալ, քանի որ հիվանդ է։

3. Ուռվինետև շաղկապով. ետադաս գլխավոր խոսքի մեջ դրվում է հաճախ՝ ուստի, այս պատճառով, ուրեմն։ Օրինակ՝ Ուռվինետև ազգային կյանքն ավելի բանաստեղծության և պերճախոսության մեջ է երեվում, այս պատճառով բանաստեղծության և պերճախոսության պատմությունը գլխավոր տեղն են բռնում գրականության պատմության մեջ (Պալ.)։ Ուռվինետև ունեցել են հաստատուն կամք, ուռվինետև անկեղծորեն սիրել են ժողովուրդը, ուստի և հաղթել են ամեն արգելքներ.—Եվ ուռվինետև Պետրոսը փափագում էր Սևանը վայրկյան առաջ տեսնել, ուստի Օվանեսի եռանդը չուզեց չափավորել.—Եվ ուռվինետև երկաթուղու վրա շատ քիչ էր քնել, ուստի շուտով էլ քաղցր քուն մրտավ.—Ես ուզում էի ասել, թե՝ ուռվինետև Վեդունց Սարգիսը մի խավարամիտ մարդ է, ուրեմն չարժե, որ այս գեղավայրը պատկանե նրան (Մուր.)։—Ազդն իրավունքով սպասում է մեզ, ուռվինետև գիտե, որ մենք բարձր ուսում ու կրթություն ստանալով՝ ձեռք ենք բերում այն ույժը, որով...—Զարգացած մարդը չէր մեծագրում աշխատասիրությունն ու գործունեությունը, որովհետև այդ տեսնում էր անտոհմիկ գավառացու մեջ. չէր էլ գարշում անառակությունից ու շվայտությունից, որովհետև դա յուր աչքում մեծ համարվող իշխանի ունակությունն էր.—Պատմության մեջ բազմաթիվ անձինք նշանավոր են դար-

ձել ոչ այն պատճառով, որ իրենց անձն են սիրել, այլ ոռովհետև նըվիրվել են հասարակաց բարվույն (Մուր.,—կարելի էր գրել՝ այլ որ նվիրվել են...)։

4. Որպես թե, իբր թե շաղկապներով, որոնք ցույց են տալիս անիրական, կարծեցյալ պատճառ, ինչպես մի ուրիշի խոսք ու մտածմունք։ Օրինակ՝ Արտավազդը հոր բարկությունը շարժեց Արգամի վրա, որպես թե Արգամի միտքը թագավորական իշխանության հասնելն է. և մի անգամ, երբ Արտաշեսն Արգամից ճաշի էր հրավիրված, արքայորդիքը աղմուկ հանեցին, իբր թե Արգամն ուզում է դավով թագավորին սպանել (Պալ.)։

298. Պատճառական կապակցության մեջ մտնում են և այն զոդվածները, որոնց մեջ վերջադաս երկրորդական խոսքը ոչ թե պատճառն է ցույց տալիս, այլ հետևանքը. մինչդեռ առաջադաս գլխավոր խոսքը, որ միշտ հարցական է լինում, պատճառի խոսք է։ Այս կապակցությունը լինում է ոr շաղկապով։ Օրինակ՝ ես ի՞նչ հանցանք եմ գործել, որ ինձ պատժում եք (իբր՝ որի համար, որի հետևանոք ինձ պատժում եք)։ Արևի՞ց ես ծնվել, թե՞ լուսնյակից, որ այդքան չքնաղ ես.—Աչքերի և ունքերի սևությունը չէ՞ր բավական, որ նորից մութ քող է առել կույսը կայտառ՝ երեսին (Ջիվ.)։ Ինչո՞ւ պակսեցավ ուժը իմ սրտեն, որ սուր չառի ձեռս դուշմաններուս դեմ (Գ.-Ք.)։ Տեսնեմ՝ այդտեղ ի՞նչ կա, որ այսքան գալիս ես.—Ի՞նչ գլուխս տվի քարը, եկա այստեղ, ոr քո հացը հարամ եղավ.—Ջեմ գիտում, փոշմանե՞լ եք, թե ի՞նչ է, որ մոտ չեք գալի.—Նրանք գի՞ժ են եղել, որ այդպես են արել (Պռ.)։

299. Նպատակի խոսքերը ցույց են տալիս ցանկացած հիմունքը, որին հասնելու համար կատարվում է գլխավոր խոսքի գործողությունը։ Բայը դրվում է միշտ ըղձական։ Վերածվում են նպատակով, համար բառերով կամ տրական հոլովով (տե՛ս §§ 100, 150. 2)։ Կապակցվում են՝

1. Որ շաղկապով, որ դրվում է միայն վերջադաս։ Օրինակ՝ Ամեն օրվանից ավելի վաղ քնեցին, որ առավոտը շուտ վեր կենան։ Ջգույշ կաց, որ թակարդի մեջ չընկնես։ Ամեն օր քեզ համար մայր ու եղբայր չեն լինիլ, որ գաս, տեսնես քո ամեն բանը կարգը կարգին (Պռ.)։ Բայց ի՞նչպես աներ առաջարկությունը, որ տիրացուն չվիրավորվեր.—Այսքան ժամանակ հուսով սպասել եմ քո դարձին, որ գոնե ամառվա ամիսները միասին անցնենք (Մուր.)։ Ի՞նչ ճար մտածենք, որ չմահանանք, կամ վիշապներուն մենք կուլ չգնանք.—Մեր մեջ դժվար չլուծվելու վեճ չունենք, որ իրար հակառակ թշնամի լինենք.—Բան չբերի հետս, որ բան տանեմ (Ջիվ.)։ Ցածր նստիր, որ բարձրանաս. բարձր մի՛ նստիր, որ ցածրանաս (Ա.)։ Այսքանն արդեն բավական էր, որ Կամսարյանն յուր որոշումն իրագործեր անպատճառ (Մուր.)։

Նպատակի գաղափարն առանձնապես շեշտելու համար գլխավոր խոսքի մեջ դրվում է նրա համար, այն նպատակով. այս դեպքում երկ-

րորդական խոսքն առնվում է իբրև խնդիր։ Օրինակ՝ Ես որ քեզ ասում եմ՝ գնանք միասին ամառանոց, հո նրա համար չեմ ասում, որ միայն քաղաքի շոգերից ազատեմ (Մուր.)։ Դու աստուածուն նրա՞ համար ես պաշտում, որ քեզ ուրիշներին երևացնես (Պո.)։ Ես հենց նրա համար եմ եկել, որ քեզ հետ խոսեմ։

2. Որպեսզի շաղկապով, որ կարող է և՛ առաջադաս և՛ վերջադաս լինել։ Օրինակ՝ Եվ որպեսզի այդ անարգանք չհամարվի իրենց, ասում են, թե՝ «համբերում ենք».—Բայց որպեսզի բոլորովին անքաղաքավար չթոնվի, կարևոր համարեց այսքանը հայտնել թե... Ձեր հայրը դիտմամբ խույս տվավ Պետրոսին պատասխանելուց, որպեսզի նորևն վեճի չբռնվի նրա հետ.— Նրան այժմ հարկավոր էր ավելի զորեղ ցնցում, որպեսզի յուր մտքերը նորեն փարեին գաղափարական հայտնի նպատակին.—Եկողը պետք է հրացանով նշան տար, որպեսզի կղզուց նավակ բերեին.—Դուք հրացան չունեք, որպեսզի նշան տաք (Մուր.)։

Ծան. *Նպատակի որ շաղկապի տեղ միշտ կարելի է որպեսզի գործածել. միայն չպիտի շփոթել նպատակի խոսքերը ըղձական եղանակով դրված խնդիր խոսքերի հետ, որոնք կապակցվում են միայն որ շաղկապով. ուստի սխալ է ասել՝ Ես կցանկայի, որպեսզի մեր հոգևորականությունն ավելի կրթված լինի (Ար.).—Նրա համար, որպեսզի. այն նպատակով, որպեսզի. Հույս ունիմ, որպեսզի. այ միայն՝ կցանկայի, որ... Նրա համար, որ. այն նպատակով որ, հույս ունիմ, որ։*

3. Թե շաղկապով, որ դրվում է սովորաբար բացասական գլխավոր խոսքի հետ, միայն վերջադաս, և ցույց է տալիս անիրական նպատակ, չկատարված ու չկատարելի ցանկություն։ Դրական գլխավոր խոսքերի հետ՝ որպես թե, իբր թե: Օրինակ՝ Ազատ էլ չես, թե ասեմ աղչկերանց լինիս մտիկ տալիս.—Այս հացի ժամանակ չէ, թե դրա համար կանչած լինի.—Աստված էլ ձեռներից չառավ, թե պրծնենք.—Մի քանի տնկի են կնդել, պատրուս չեն դնում, թե էգուց իրանց համար սլտուղ տա.—Փողով մշակ կբռնեն, չեն երթալ, թե վրան կանգնեն, մտիկ անեն.—Մարդս մի երկու կով ենք պահում, թե (որպես թե) երեխաներին մածուն էլ է լինի, այն էլ չենք կարում չոլաս տանել (Պո.)։ Եկա, իբր թե տեսնեմ նրան. բայց իմացա, որ արդեն գնացել է։

Ծան. *Ժողովրդական լեզվի մեջ թե, որ շաղկապների տեղ հաճախ գործ է ածվում թե ինչ է կապակցությունը. օրինակ՝ Սրան, նրան աղաչանք արեց, թե ինչ է աղջիկն ուղեն իրեն.— Դես ու դեն է մտիկ տալի, թե ինչ է Սոսին տեսնի.— Ուրթաթարուր առավ ու դեպի Վ-ենց տուն, թե ինչ է տա նրան (Պո.)։*

300. Պայմանական խոսքերը *ցույց են տալիս ենթադրական հիմունքը, որի հետևությունն է գլխավոր խոսքի բովանդակությունը։ Կապակցվում են՝*

1. Որ շաղկապով, որ կարող է առաջադաս երկրորդական խոսքի և մնչը մտնել։ Օրինակ՝ Դուր ու դրկից որ կամենա, կաղ ու կույր կհարսնանա.— Գողը որ տնից լինի, եզն երդկից կհանի (Ա.)։ էլ ո՞ւր

փրկեցիր գայլի ճանկերից, որ պիտի տայիր ինձ զիան (Ջիվ.)։ Որ մենակ լինեի, հիմի ես բանից պրծել էի. Որ ասես, խելք կանես (Պռ.)։ Հապա ի՞նչ անեմ, որ չծիծաղեմ (Մուր.)։ Ձեր ձեռն ի՞նչ կընկնի, որ ես մի օր ձեր դռանը... մեռնեմ (Պռ.)։

Տաճ. Որ շաղկապն ունի նաև ժամանակի, պատճառի ու նպատակի նշանակություն. ուստի հաճախ միևնույն խոսքը տարբեր իմաստով կարող է ըմբռնվել. օրինակ՝ Շուշանը պար չի գալ, որ (=եթե կամ երբ որ) պար գա, էլ դուրս չի գալ (Ա.)։ Ես ի՞նչ անեմ որ (=եթե կամ երբ, և ոչ որպեսզի) սարերից հեզեզ գա, սրբի, տանի ամեն բան (Ջիվ.)։ Ուղտին որ (=եթե կամ երբ) փուշը պետք գա, կկռանա, կվերցնի (Ա.)։ Լավ կանես, որ քո սառն հպարտությունը մեղմացնես և գաս, հանգիստ ապրես իմ ընդարձակ տերության մեջ (Պալ.)։ Լավ կլիներ, որ այս սոսկները պատկանեին մեր հյուրընկալ Մուքին (Մուր.)։

2. **Եթե, թե, թե որ** *շաղկապներով. վերջադաս դլխավոր խոսքի մեջ կարող է դրվել՝ այն ժամանակ, ուրեմն, ապա: Օրինակ՝* **եթե** *մի փոքր առաջ խոստովանեիր, թե չգիտես, այն ժամանակ ինքս կթարգմանեի.—***Եթե** *այդպես է,* **ուրեմն** *ամենից առաջ այդ պարտքը պիտի կատարենք.—Եթե վեց ամիս շարունակ հարյուր խոզ պահեիք այս ձորում, նրա՞նք շատ կփչացնեին այս տեղերը, թե՞ եթե այդքան ժամանակում հարյուր մարդ ապրեր այստեղ.—Եթե մենք ևս կյանքի մեջ հետևենք այդ իմաստուն խրատին. անշուշտ կգործենք ավելի հաջողությամբ.—Որքան ուրախ կլինեի, եթե մայրս էլ այդ ձևով մտածեր.—***Եթե** *այդ մի հատ մարդը գտնված լիներ այստեղ, ապա դուք այսօր Սևանը չէիք տեսնիլ անշուք.—Կարող է ինձ վրա ծիծաղել, եթե դրա մասին խոսեմ նրա հետ (Մուր.)։—**Թե** *մտքներումը չարություն լիներ, ինչո՞ւ հաց կուտեցնեին.—**Թե** *մի ժամ ուշ տեսնեմ քեզ, հոպիս դուրս կգա.* **Թե որ** *այդ բաները ճիշտ լինեին, հիմա պառավները գանձ դիզած կլինեին.—Սիրտն ապակի է.* **Թե որ** *մին կոտրվեց, էլ չի սաղանա (Պռ.)։* **Թե** *կուզես իրար հետ մնանք բարեկամ, պատվիս ու կրոնիս մի՛ դիպչիր (Ջիվ.)։* **Թո՛ղ, թե** *ինձ սիրում եմ, Աստվածդ կսիրես։* **Թե** *դու հայ ես, հայությունդ պտի հարգես անպատճառ (Գ.-Ք.)։*

Տաճ. Երբեմն եթե, թե, թե որ շաղկապներով կազմված զոդվածի մասերը ցույց են տալիս լոկ հակադրություն կամ հանդիպադրություն։ Օրինակ՝ Եթե չէ օգնում, գեթ հանգստություն է բերում (Մուր.)։ Թե մեզնից մի հայ դուրս գնա, տեղը մի քուրդ հայ կըդառնա.— Թե դու մազեր ունիս սև սաթի նման, ես էլ օրեր ունիմ անցնելու վատ, սև.— Թե քու դուռդ փակ էր, իմ դուռս էր բաց (Ջիվ.)։ Թե չմեռավ, կուշտ վախեցավ (Ա.)։ Եթե առաջիններն իրենց տվել էին համեղ խորտիկներն ու անուշ գինին, ուշադիր ջանքով և գիտակցաբար վարելու դժվարին աշխատության, վերջիններն, ընդհակառակն, զբաղված էին քնքուշ ժպիտներիս... փոխանակությամբ (Մուր.)։

3. **Եթե միայն, միայն թե, միայն, լոկ, լոկ որ** *շաղկապներով, որոնք պայմանն ավելի զորեղ են արտահայտում և սահմանափակում են գլխավոր խոսքի իմաստը։ Օրինակ՝ Բանաստեղծության և պերճախոսության պատմությունը գլխավոր տեղն են բռնում դրականության*

պատմության մեջ. մյուս գրվածքները կարող են նույնպես տեղիք ունենալ գրականության պատմության մեջ, եթե միայն նոր հայեցվածք ու հասկացողություն են մտցրել կյանքի մեջ (Պալ.)։ Այս անգամ պիտի աշխատեմ բոլորովին չխոսել, միայն թե դու կարողանաս ինձ հետաքրքրող հարցերն առաջարկել այդ գյուղացուն (Մուր.)։—Սարսափելի չեն հայի տառապանք, միայն չհատներ խեղճուկի հույսը.—Թող քու արտասուք վազեն ջրի պես, թաք որ (լոկ որ) ցամաքի երկրես չարություն (Գ.-Ք.)։

301. *Պայմանական խոսքերը, նայելով թե ինչպես են ըմբռնվում, կարող են բայի ամեն եղանակներով ևս դրվել։ Ըղձականի և ենթադրականի համար տեսնել §§ 234, 245. 5։ Սահմանական եղանակն է գործածվում, երբ պայմանական դատողությունը մեջ է բերվում՝ նրանից մի ուրիշ դատողություն հետևցնելու համար. այս դեպքում պայմանն ու հետևությունն ընդունվում են իբրև իրական՝ առանց սակայն ուշ դարձնելու, թե արդյոք պայմանն իսկապես համապատասխա՞ն է իրականությանը, թե ոչ։ Օրինակ՝ եթե այս մեկը ճշմարիտ է (էր), ապա այն մյուսն էլ ճշմարիտ է։ եթե այդ ասել ես, սխալվել ես։ եթե Ա=Բ-ին, և եթե Բ=Գ-ին, ապա ո րեմն Ա=Գ-ին։ եթե, իրավ, սա է հայ գյուղացու բնակավայրը, ապա հազիվ թե հնար լինի իրեն ապրել այդպիսի տեղ.—եթե այս վերջին ենթադրությունը ճիշտ էր, ապա պետք էր կարծել որ... (Մուր.)։*

302. Ձիջական խոսքերը *ցույց են տալիս այնպիսի իրական կամ հնարավոր հիմունք, որից ուրիշ հետևանք առաջ պիտի գար, քան ինչ որ գլխավոր խոսքի մեջ ասվում է. երկրորդական խոսքի սպասելի հետևանքը տեղի է տալիս կամ հերքվում, սահմանափակվում է գլխավոր խոսքով, որ հակառակ է երկրորդական խոսքին։ Կապակցվում են՝*

1. Թեև, թեպետ, թեպետ և. չնայելով որ, շատ էլ բառերով. գլխավոր խոսքը հակառակ է երկրորդական խոսքի ամբողջ բովանդակությանը։ Վերջադաս գլխավոր խոսքի սկզբում դրվում է՝ բայց, սակայն, բայց և այնպես, դարձյալ, այնուամենայնիվ։ Վերածվում են՝ հակառակ, չնայելով, հանդերձ (անորոշ դերբայի գործիականի հետ) բառերով (տե՛ս § 34. 5. դ, § 126. 3. ծան., § 147. 2)։ Օրինակ՝ Թեև ույժս պակաս է, բայց անվանի ծառ եմ։—Ջէ՛, չէ՛ թեև դու գոռ դաշտին ես զարդ, բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ (Գ.-Ք.)։ Շատ էլ նա չար մարդ է, բայց քո եղբայրն է, պետք է... Յուրաքանչյուր ապր թեև միլիոնավոր անհատներից է բաղկանում, այնուամենայնիվ նա մի կենդանի անձնավորություն, մի հոգևոր կազմվածք է (Պալ.)։ Որքան շատ մարդ տեսնենք, այնքան շատ կփորձվենք, թեև վերջն անփորձ կմեռնենք (Պռ.)։ Սովական անհանգիստ էր, թեպետ ոչ անսասան հուզված.—Իսկ աչքերը, թեպետ ծածկված թավամազ հոնքերով, սա-

կայն ցոլացնում էին խելք և բարություն.—Թեպետ անձամբ չէ տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է, թե... Այս նորությունը թեպետ որոշ չափով ձգեց ուղեկցի վարկը Կամսարյանի աչքում, այսուամենայնիվ վերջինս դարձյալ հետաքրքրվեց նրանով.—Չնայելով որ խճուղին սարի լանջովն էր բարձրանում, այսուամենայնիվ ծառերը հովանավորում էին նրան.—Չնայելով որ արևը տաքացնում էր դեռ, այսուամենայնիվ ցուրտը զգալի էր սարահարթում (Մուր.)։

Ծան. Այսպիսի զիջական խոսքի նշանակություն ունին և հետևյալ արտահայտությունները, ինչպես՝ Այծը, որ այծ է, տեղը կմաքրի, հետո կպառկի (Ա.— Այծը, չնայելով որ այծ է, տեղը...)։ Հավը, որ հավ է, որ ջուր խմի, Աստված կնայի (Ա.)։ Ուտելը ատում է, բայց չի մարսում։ Ուրբենը նստելը նստեց, բայց ճաշելուց հրաժարվեց (Պռ.— Ուրբենը թեպետ նստեց, բայց...)։

2. Ով, ինչ, որհան, ուր և այլ ընդհանրացական հարաբերական բառերով, սովորաբար որ, էլ շաղկապների հետ։ Երկրորդական խոսքի մեջ կարող է դրվել կուզես կամ կուզե, կուզի բառը, և այն ժամանակ երկրորդական խոսքը դառնում է մի զոդված։ Օրինակ՝ Ուրուրը ինչքան կուզե՝ սպանե, հավը չի՛ վերջանա (Ջիվ.)։ Ինչ կուզե՝ լինի. մենք իրավունք ունեինք նրանից շատ բան սպասելու։ Ինչպես կուզես՝ գրիր, դարձյալ անհասկանալի կմնաս։ Ուր կուզի գնա, էլի բախտավոր չի լինի։ Որքան որ կուզե՝ ծող կատղի հյուսիս, հուսով եմ վաղ ուշ գարունը պիտ գա (Գ.-Ք.)։ Սարն ինչքան բարձր լինի, մի օր ճամփան վրայով կանցնի.—Ազգ իմ, որքան նկուն մնաս, սիրտս քեզանից չի զատվիլ.—Ինչքան տխուր լինի քեզ տեսնող մարդը, կուրախանա (Ջիվ.)։ Ով էլ լիներ քո տեղը, այդպես չէր վարվիլ։ Քանի հոգի էլ որ լինին, երկուսը միայն պիտի գնան։ Ինչ աննպաստ պայմաններում էլ որ սկսենք մեր գործը, հիշենք այն իմաստուն նշանաբանը... Մարդ արարածը, որքան էլ որ զարգանում է և գիտության լուսով լուսավորվում է, այնուամենայնիվ նա յուր մեջ դեռ կրում է բնազդներն այն հին մարդի... Ուր որ էլ լիներին, տուն վերադառնալու համար նրանք այդտեղից պիտի անցնեին.—Որքան էլ քաղցր էր ինձ՝ երկար լսել իմ սիրած երիտասարդին, այսուամենայնիվ նա այդ հաճույքն ինձ չպատճառեց (Մուր.)։ Տե՛ս § 245. 6։

Այս կարգին պատկանում են նաև հետևյալ կապակցությունները, ինչպես՝ Որտեղից որ է՝ մարդու դուռ ու տունը լիքն է (Պռ.),—իբրև՝ Որտեղից կուզի լինի... Կարծես գտնվում էր Սահարայի անապատում և ուր որ է՝ խորշակը շնչասպառ պիտի անե իրեն.—Թվում էր, թե ահա, ուր որ է՝ մի հորձանք կխուժե նավակը (Մուր.)։

3. Թեկուզ, մինչև անգամ եթե, նույնիսկ եթե, էլ որ, որ... էլ. եթե... էլ շաղկապներով, որոնցով կազմվում է պայմանական-զիջական խոսքերի խառնուրդ։ Երկրորդական խոսքը ցույց է տալիս մի ենթադրական հիմունք, որ եթե կատարվի էլ, դարձյալ հակառակ հետևանք

առաջ կգա։ Վերջադաս գլխավոր խոսքի մեջ կարող է դրվել՝ ղարձյալ. էլի։ Երբեմն երկրորդական խոսքը դրվում է առանց որևէ շաղկապի, միայն ըղձական եղանակով։ Օրինակ՝ Թեկուզ թագավորի տղայի էլ տաք, սիրտը վրան տաք չի լինիլ (Պռ.)։ Կռատուն չլինի, թեկուզ կրակատուն լինի, այս ավերակը դարձյալ սրբությամբ պիտի պահվի (Մուր.)։ Թեկուզ դրախտն էլ ինձի տան, սիրտս քեզանից չի զատվի (Ջիվ.)։ Տեր Կարապետը եզին տիրանա, թեկուզ ողջ գեղը թուրքանա (Ա.)։ Նույնիսկ եթե տաք էլ, ես չեմ առնիլ։ Դու մինչև իրիկուն էլ որ քարին քացի տաս, էլի հացի տեր չես դառնալ.—Ասեղ էլ որ կորած լիներ, կգտնվեր (Պռ.)։ Հազար տեսակ չարչարանք տաս, սիրտս քեզանից չի զատվի. Հնդկաստանին էլ տեր դառնամ, սիրտս քեզանից չի զատվի.—Քու հետդ դժոխքումն էլ լինիմ՝ փառք է ինձ համար (Ջիվ.)։ Եդեմա դրախտին էլ լինիս դու զարդ, ես քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ (Գ.-Ք.)։

Ծան. Երբ է այս իմաստով թեև շաղկապը գործածելը, ինչպես՝ Պարսից խաների իշխանության ատորադրված մելիքները՝ իրանց գիրքը չկորցնելու համար ստիպված էին խոնարհել խաների բոլոր պահանջներին, թեև (պետք էր գրել՝ նույնիսկ եթե, մինչև անգամ եթե, թեկուզ) այդ պահանջները լիներին վնաս հայ ժողովրդին. ստիպված էին կատարել նոցա կամքը, որքան և անարդար լիներ (Րաֆֆի)։

Բ. ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

803. Համադասությամբ կապակցվում են իրարուց անկախ խոսքերը, որոնք բովանդակությամբ միմյանց հավասար են և իրար մոտ դրվում են կա՛մ իբրև մի ամբողջության համազոր մասեր (համադաս խոսքեր), կամ իբրև մի գլխավոր խոսքի համազոր երկրորդական խոսքեր (համաստորադաս խոսքեր)։ Տե՛ս § 251. 2։ Համադաս խոսքերից մեկի, գլխավորապես երկրորդի մեջ հաճախ բայը և ուրիշ բառեր զեղչվում են. օրինակ՝ Դատավորների՞ դեմ բողոքեմ, թե՞ փաստաբանների (դեմ բողոքեմ)։

804. Համադասական կապակցությունը լինում է՝

1. **Շարահարությամբ**, երբ միմյանցից անկախ խոսքերը իրար հաջորդում են առանց որևէ կապակցական բառի և միայն բովանդակությամբ և իրենց մեջ ունեցած կարճ դադարով միանալով՝ մի ամբողջություն են կազմում։ Օրինակ՝ 1. Արևը մայր մտավ, բայց անտառում դեռևս լույս է. օդը ջինջ է և թափանցիկ. թռչունները շատախոսությամբ ծլվլում են. խոտն ուրախ փայլում է զմրուխտի փայլով։ 2. Անցնում է կարճ ժամանակ։ 3. Անտառի խորքում աստիճանաբար մթնում է. երեկոյան վերջալույսի մուգ կարմիր լույսը հանդարտությամբ անց է կենում արմատների ու բների վրայով, հետզհետե բարձրանում է, ստորին ճյուղերից անցնում է դեպի անշարժ քնած կատարները։ 4. Ահա և նույնիսկ կատարներն աղոտացան. շառագույն

երկինքը կարմրում է (Հ. Նազ. Ընտ. Հատ.)։—Այս նկարագրի առաջին ասացվածքի մեջ (մինչև առաջին վերջակետը) շարահարությամբ կապակցված համադաս խոսքերը կազմում են համազոր մասեր մի ամբողջության, որ է անառատի տեսարանն արևի մայր մտնելուց անմիջապես հետո։ Երկրորդ ասացվածքը մի խոսք է և իր համար մի առանձին միություն է կազմում։ Երրորդ ասացվածքի մեջ համադաս խոսքերը նույնպես կազմում են մի ամբողջություն, որ է առաջին տեսարանի փոփոխությունը և մթնելն անտառի ներսում և այլն։

ա) Պետք է նկատել, որ շարահարությամբ կապակցությունը շատ լույծ է լինում. միջի դադարի երկարելով՝ համադաս խոսքերը հեշտությամբ կարող են իրարուց բաժանվել և կազմել անկախ ասացվածներ։ Օրինակ՝ Ռաֆֆին վերջակետով է բաժանում այն տեղերը, ուր կարելի է և միջակետ դնել. 1. Նայում ես դեպի երկինքը. տեսնում ես նույն մանիշակագույն կապուտակությունն իր նուրբ ժպիտով, նույն լուսավոր արեգակն իր պայծառ ճառագայթներով։ (.) Ամպի մի փոքրիկ պատառ անգամ չէ երևում։ 2. Բայց ո՞րտեղից է լսվում այդ խուլ, սարսափեցնող որոտի ձայնը։ (.) Մտածում ես, անդունդի մեջ կատարվում է մի սոսկալի խռովություն. կատաղի տարրերը մարտնչում են միմյանց հետ։ (.) Ժայռերը, ապառաժները մռնչում են։ (.) Խաղաղ մթնոլորտն սկսում է երկյուղածությամբ դողդողալ (Ռաֆֆի)։

բ) Շարահարությամբ մի համադասություն են կազմում նաև ճարտասանական հարց ու պատասխանը. այսպիսի խոսքերն ավելի հեշտությամբ բաժանվում են իրարուց (տե՛ս § 219)։

գ) Շարահարությամբ կապակցության մի տեսակն է և **միավորյալ խոսք** *ասածը, որի մեջ մի քանի համադաս խոսքեր միանում են մի ընդհանուր ենթակայով։ Օրինակ՝ Մառախուղն իջավ, լիզեց կտուրները, քսվեց պատերին, հոսանուտ ծալքերով պարուրեց ամեն ինչ և խառնվեց միապաղաղ գորշ գետնի հետ։*

2. Ցուցական բառերով, որոնք դրվելով հաջորդ խոսքի մեջ՝ ակնարկում են նախորդ խոսքի մեջ եղած մի բառի, կամ ամբողջ խոսքի բովանդակությանն ընդհանրապես, որով և հաջորդ խոսքը միանում է նախորդին։ Այս դեպքում նա, այն դերանունները, կամ առաջինը բառը դրվում են ավելի առաջ հիշված անվան տեղ, իսկ սա, այս դերանունները, կամ վերջինը, վերջինս դրվում են վերջը հիշված անվան տեղ։ Օրինակ՝ Գրիգոր Նարեկացին և Քուչակ Նահապետը մեր հին նշանավոր բանաստեղծներն են. Նա (առաջինը) երգել է երկնային սերը, սա (վերջինը)՝ երկրայինը։ Ոստայնի առաջ նստող հարսներն ու աղջիկները ոտի կանգնեցին. նրանցից առաջիններն երեսները սրողեցին, մինչդեռ վերջիններն հետաքրքիր աչքերով նայում էին եկողներին.—Բացի այս, դուք մեզ մոտ կտեսնեք գեղեցիկ կարգեր ու սովորություններ, որոնք մյուս գյուղերում չկան. դրանք բոլորը նույնպես քույր Աննային ենք պարտական.—Այո, մենք նրան շատ ենք պարտական. այդ դի-

տե ինքը, մեր ժողովուրդը.—Աբեզդչիկը իրավունք չունի քեզ ապտակելու կամ քեզնից ապօրինի փող պահանջելու. այդպիսի անկարգության համար նրան ոչ թե պաշտոնից կզրկեն, այլև բանտ կնստացնեն (Մուր.)։ Դսպեն ծանոթ է ջրաղացի ետևի ամբարտակի բարդ կազմությանը. նա գիտե ի հարկին շատացնել և քչացնել ջուրը։

Նաև. Յուցականներով կապակցված համադաս խոսքերն ևս հնշտությամբ բաժանվում են իրարուց և կազմում անկախ ասացվածներ. օրինակ՝ Նա գետնից մի քար վերցրեց և նետեց սայլի տակ պառկած շան վրա։ Վերջինս վերկացավ տեղից և այս անգամ սկսավ հաչել ավելի աշխուժով.—Մինչդեռ ես ուշադրությամբ լսում էի քույր Աննային, զանգակը հնչեց և աշակերտները կարգով սկսան հավաքվել դասարաններըե Այդ ժամանակ միայն նկատեցի աշակերտների բազմությունը (Մուր.)։

3. Համադասական շաղկապներով և շաղկապական բառերով։

305. *Համադաս խոսքերի բազմազան տրամաբանական հարաբերությունները կարելի է երկու գլխավոր տեսակի վերածել՝ բաղհյուսական և ներհակական։*

Բաղհյուսական համադաս խոսքերը իմաստով իրարու համեմատ, համաձայն են, կամ միատեսակ, ոչ-հակառակ բովանդակություն ունին. իսկ ներհակական համադաս խոսքերը բովանդակությամբ իրար հակառակ կամ անհամեմատ են։

Նույն հարաբերություններն ունին և համադաս բառերը (§ 212). ուստի ինչ որ ներքևում համադաս խոսքերի համար դրվում է, պետք է և համադաս բառերի համար հասկանալ։

1. ԲԱՂՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

306. *Բաղհյուսական համադաս խոսքերից երկրորդի կապակցությունն առաջինի հետ լինում է՝ հավելական, մասնական, մեկնական, տեղի, ժամանակի, բաղդատության և մակաբերական։*

1. ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հավելական կապակցության մեջ երկրորդ խոսքը կամ խոսքերը բովանդակությամբ կա՛մ համարժեք են առաջինին և պարզաբար ավելանում են առաջինի վրա, ինչպես՝ Անցավ մի ամբողջ շաբաթ, և ես նրան տեսնել չկարողացա. կա՛մ համեմատ են առաջինին, բայց նրանից ավելի արժեք ունին, ուստի և շեշտվելով՝ ևն մեջ բերվում, ինչպես՝ Դու ոչ միայն տուն ես գնացել, այլև տեսել ես նրան։

Հավելական կապակցությունը լինում է հետևյալ շաղկապներով.

1. Եվ, ու. ամենից գործածական բաղհյուսական շաղկապներն են անորոշ նշանակությամբ. ուստի և շաղկապը հաճախ միանում է նաև

մյուս տեսակի բաղհյուսական (մասնական, մակաբերական) շաղկապների հետ՝ առաջից կամ ետևից։ Հավելական համադասության մեջ և կամ ու դրվում է երկրորդ խոսքի (կամ խոսքի բազմակի մասերից երկրորդի) սկզբում. շատ խոսքերից կազմված համադասության մեջ դրվում է սովորաբար միայն վերջին խոսքի (կամ խոսքի բազմակի մասերից վերջինի) սկզբում, իսկ մյուս խոսքերը կապակցվում են շարահարությամբ։ Օրինակ՝ Մուրը իջավ, գետինն առավ Քոշաքարա սարերում. գագաթների տեսքը կորավ ու խոր թաղվեց խավարում։—Առյուծը, վագրը և արջը կատաղի գազաններ են։

Երբ թվարկված բառերը զույգ զույգ հանդիպադրվում են միմյանց՝ մոտիկ կամ հակառակ նշանակությամբ կամ որևէ առնչությամբ, այն ժամանակ երկ'երկու կապակցվում են ու (և) շաղկապով։ Օրինակ՝ Ազատությունն ու ստրկությունը, առաքինությունն ու մոլությունը, աշխատանքն ու ծուլությունը, խաղաղությունն ու կռիվը բարձրացնում և խոնարհեցնում են ժողովրդին։ Ջովարար գեփյուռը գուրգուրում էր այդտեղ ծաղիկն ու խոտը, մացառն ու ծառը (Մուր.)։

Եվ, ու շաղկապները նույն նշանակությունն ունին. դրանց գործածությունը կախված է գրողի ճաշակից. միայն պետք է դիտել, որ ու շաղկապով են կապակցվում սովորաբար խոսքի բազմակի մասերը, մանավանդ հրբ ետևից գալիս է և-ով կապված մի համադաս խոսք. օրինակ՝ Ես ու դու գնացինք և տեսանք նրան։ Ու-ով կապվում են և այսպիսի կրկնությունները՝ խոսում է ու խոսում. կա ու կա։

2. Եվ նշանակում է երբեմն՝ էլ, ևս, այլև, նույնպես, ևմանապես և. ինչպես և: Դրանցից էլ, ևս դրվում են սովորաբար մի շեշտված բառից հետո. նաև թե՛ առաջ, թե՛ հետո. իսկ մյուսները՝ առաջ էլ, ևս. նաև, այլև հավելական նշանակության հետ ունին զորացման կամ աճման երկրորդական գաղափար. մինչդեռ նույնպես և, նմանապես և, ինչպես և ցույց են տալիս լոկ հավելում։ Օրինակ՝ Ով էլ ես երբեմն երգում էի։ Ահա այդպիսի զգուշությամբ եմ վարվում և ես իմ աշակերտների ու նրանց ծնողների հետ.—Մեր երկրում այդպիսի բույսեր չեն աճում. գուցե և նրա համար, որ սերմնանող չկա։—Այդ քաղաքում կային և ուրիշ հայ ուսանողներ (Մուր.)։ Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ, երբ մեր թշնամին իր սուրն է դրել... (Գ.-Ք.)։ Ես ևս իմ կողմից առաջացա դեպի նրանց.—Այս վերջին դեպքում ևս զգուշությամբ եմ վարվում.—Այդ տեսակ ազատ պարապմունքը կծառայե նրանց նաև իբրև մարմնամարզություն.—Հովանավոր սրահում, այլև բակի այն մասում, ուր հարևանի դեզը տարածել էր յայն ստվեր, նստոտած էին մոտ երկու տասնյակ երեխաներ.—Թեև գոմի դռան մոտ ուլը չլիներ,... այլև պառավ, ուժազուրկ շունը,... մենք կկարծեինք թե այս տան մեջ կենդանի շունչ չկա.—Տան միջի օդը տոգորված էր գարշահոտ ծուխի, այլև խոնավության հոտով.—Կանաչ ծառերի խումբը, որ երևում էր մասամբ եզերքին և մասամբ անշուք շինությունների ետևում, այլև բարդիների

չարքը, որ պատում էր կղզու հյուսիսային ջրափը, չէին մնդմում նրա կոշտացած պատկերը.—Աբեղաներից մի քանիսը, նույնպես և յուսաբարը ուղեկցեցին նրան մինչև լճափը (Մուր.)։

3. **Եվ այն, այն էլ** *արտահայտում է սահմանափակում, որով աստկանում է նախորդ խոսքի մեջ ասածը։ Օրինակ՝ Հռոմում միայն Հարուստներն ու մեծամեծներն էին պարապում գրականությամբ, այն էլ միայն պարապ ժամերին (Պալ.)։ Այս ամենի մասին նա մտածել, նրազել էր և այն՝ երկար ամիսներով.—Տան ետևի պատն ամբողջապես, իսկ աջ ու ձախ կողմերինը կիսով չափ կտրված էին հողից և այն՝ այնչափ տգեղ ձևով, որ... Բայց այժմ նա իմ առաջ կանգնած դաս էր խոսում մաքուր հայերեն լեզվով և այն՝ որքա՜ն հմտությամբ, շնորհքով, քաղցր ու գրավիչ ձայնով (Մուր.)։*

4. **Եվ, էլ** *(ետադաս) նշանակում են* **մինչև անգամ, անգամ, մինչև իսկ, նույնիսկ,** *որոնցով կապված խոսքերը կամ բառերն առանձնապես շեշտվելով են մեջ բերվում իբրև չսպասած կամ ծայրագույն աստիճան։ Օրինակ՝ Պետք է սովորել՝ երբեք և ոչ մի բանի դեմ չսրտնջալ (Մուր.)։ Ջմնաց նրանցից և ոչ մեկը (ոչ մեկն էլ չմնաց)։ Ծույլ ու անզոր մարդը ճանճի շիթելու դեմ էլ է տրտնջում (Մուր.)։ Մհերի օրով հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով (Թում.)։ Աբենքում թատրոնի դռները բաց էին ամեն աստիճանի ու կարգի մարդկանց համար. մինչև անգամ աղքատները տերության գանձարանից փող էին ստանում, որ տոն օրերը թատրոնից ետ չմնան (Պալ.)։ Խնդիրը մենք քննեցինք ամեն կողմից. մինչև անգամ մանրամասնությունների մեջ մրտանք.—Այսպիսի մարդու առաջ ժայռերն անգամ կհալվին.—Որոնց մասին նա առաջ այնքան շատ երազում էր, իսկ այժմ վախենում՝ մինչև իսկ մտածել.—Բայց Կամսարյանը թույլ չտվավ, որ վերջինս մինչև իսկ «լավություն անելու» պատրվակով գործն ավարտելու մխիթարությունն ունենա.—(Կարոտությունն) աղքատի տան մեջ յուր ներկայությունը զգալ է տալիս նույնիսկ այն վայրկյանին, երբ... Նրան կարելի է ապուշ անվանել, նույնիսկ առանց նրան տեսած կամ լսած լինելու.—Ամեն ինչ անում էր չափով ու կանոնով. նույնիսկ օգնության կամ աշխատության վերաբերյալ գործերում նա յուր համար ուներ որոշ չափ ու կշիռ (Մուր.)։*

5. **Մանավանդ, և մանավանդ, մանավանդ որ, մանավանդ թե** *կապելով երկրորդ խոսքը, ցույց են տալիս սրա առավելությունն առաջինից։ Օրինակ՝ Գրականության ճյուղերի մեջ Հռոմում ավելի ճարտասանությունը ծաղկեցավ, մանավանդ պատմական և հրապարակախոսական տեսակները.—Ծողովուրդը Հունաստանում և մանավանդ Աբենքում ոչ միայն մասնակից էր լինում... մտավոր արդյունքներին, այլև... (Պալ.)։ Տանուտերի պատմածներից Պետրոսը վրդովվեցավ, մանավանդ աբեզդչիկի գյուղացուն ապտակելն ու օրենքի անունով նրան հարստահարելը վառեցին երիտասարդի զայրույթը.—Ես հոգ-*

նել, ձանձրացել եմ սովորական կյանքից, սովորական մարդկանցից և մանավանդ թե սովորական բարեկամությունից (Մուր.)։

Սան. Մանավանդ, նույնիսկ, միևչև իսկ և այլն իսկապես նշանակական մակբայներ են, որոնք գործ են ածվում նաև շաղկապի նշանակությամբ։ Այս կարգի մեջ կարելի է դնել նաև գոնե, գեթ, որոնք երկրորդ խոսքը շեշտելով մեջ բերելով սահմանափակում են նրա նշանակությունը, իշեցնելով մինչև ետին սահմանը, որ ցանկանում կամ մտածում է խոսողը։ Օրինակ՝ եթե դուք նրա կողմը չեք, գոնե հակառակ էլ մի՛ լինեք։ եթե չէ օգնում, գեթ հանգստություն է բերում.— Ձեր գործը գովելու համար ես լեզու չունեմ. ընդունեցեք գոնե իմ չերմագին շնորհակալությունը։— Դրանցով կապված խոսքի կամ բառի հետ զորությամբ հասկացվում է մի ուրիշ խոսք կամ բառ. ինչպես՝ Սրանցից լավը ես չեմ տեսել, գոնե մեր քաղաքների դպրոցներում (Մուր.).— Սրանցից լավը ես չեմ տեսել, եթե ոչ ուրիշ տեղերում, գոնե մեր քաղաքի դպրոցներում։ Մեզանից ոչ ոք չըմբռնեց իսկույն այդ խոսքերի իմաստը, ես մինչև անգամ դժգոհ եղա... (Մուր.),—ես ոչ միայն չըմբռնեցի, այլև դժգոհ եղա։

6. Ոչ միայն—այլև, ինչպես—նույնպես և. կապում են երկու համադաս խոսքեր. առաջինը հավելական նշանակության հետ ունի և սաստկացման երկրորդական գաղափար, իսկ երկրորդը միայն հավելում է ցույց տալիս։ Օրինակ՝ Դրանով ոչ միայն վաշխառուները կհալածվեր գյուղերից, այլև կատեղծվեր բարության մի գործ.—Սա նրա մասին գովությամբ էր խոսում միշտ՝ ոչ միայն ընկերների, այլև մոր առաջ.—Ոչ միայն նախկին կյանքը չէր եռում այդ տան մեջ, այլև մի ավերիչ ձեռք ծանրացել էր նրա վրա.—Երբեմն խավարը ոչ միայն դյուրական, այլև օգտավետ է լինում.—Ատում էր ինչպես անհոգությունը, նույնպես և ամեն ծայրահեղություն (Մուր.)։

7. Ո՞ւր մնաց որ, ո՞ւր մնաց թե, թող թե. շեշտելով մեջ են բերում երկրորդ խոսքը՝ տալով նրան ժխտական նշանակություն։ Օրինակ՝ Ես նրան չտեսա էլ. ո՞ւր մնաց որ հետը խոսեի (ես նրան չտեսա. և ոչ իսկ հետը խոսեցի)։ Նա մի երեխա տեսնելիս կարմրում էր. ո՞ւր մնաց որ այնքան բազմության միջին տնիցը դուրս գա (Պո.)։ Օրենքը իրավունք չէ տալիս նրան նույնիսկ մեղավոր մարդու դեմ բռնություն գործ դնել, ո՞ւր մնաց թե (թող թե) հանգիստ ու խաղաղ գյուղացու դեմ (Մուր.)։

8. Եվ, ու, էլ, թե—և թե շաղկապները շեշտված կրկնվում են բոլոր համադաս խոսքերի կամ բառերի հետ, որով և խոսքին ու մտածությանը եռանդ է տրվում։ Համադաս խոսքերը կամ բառերը միակերպ ուժով են մեջ բերվում։ Այսպիսի կապակցությունները, եթե բացասական են, լինում են ոչ—ոչ, ոչ էլ, և ոչ բառերով (տե՛ս § 215. 6—7)։ Օրինակ՝ Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ (Հովհ. Թում.)։ Այդ իշխանուհի կոչվածները և՛ գեղեցիկ են, և՛ հարուստ, և՛ գուրգուրված.— ...Նման է հնադարյան մի սրբազան շինության, որի վրա դարերի ընթացքում նստել է և՛ փոշի, և՛ անմաքրություն (Մուր.)։ Այդ ժամին և՛ ծովակը, և՛ Մասիսի թիկունքից բարձրացող արևը, և՛ ծաղ-

կազարդ լեռներն ու ձորերը գեղեցիկ էին.—Մենք սպասում էինք մուտացած և՛ քաղցը, և՛ հոգնածությունը։ Ու հաղթվեց Սեննեքերիմը, ու հեծավ մեծ ուղտը, ու փախավ, ու հասավ Բաղդատ։ Ինչ ես ինձ էլ, մորդ էլ այրում, փոթոթում։ Կիրիլ Կարպիչը... Քո՛ ծխում և քո՛ լսում էր հիշյալ վիճաբանությունը.— ...Խույս տվին քո՛ ծրագիր առաջարկելուց և քո՛ այն քննադատելուց։—Բացվում էր մեր առաջ քո՛ գյուղի և քո՛ շրջակայքի տեսարանը.—Քո՛ դու և քո՛ նրանք... ստում եք.—Ուլը քո՛... առջևը բափած խոտը ուտում և քո՛ մեզ էր նայում.—Նրբա քո՛ արտաքինից, քո՛ խոսքերից և քո՛ շարժմունքից երևում էր, որ հասարակ կին չէ.—Չկար ոչ հովի շունչ, ոչ ծառերի շքարան.—Չնմ մեղադրո՛մ ոչ քեզ, ոչ քեզ նմաններին.— Չէր մտածում ոչ Լիդիա Պավլովնայի մայրական փառասիրությունը գոհացնելու և ոչ էլ որդու ամարային հանգստության մասին (Մուր.)։

Ծան. 1. Եվս, ևս և նշանակում է բացի այդ, էլի և գործ է ածվում ստացվածքի, եկամուտի և այլն ցուցակների ու հաշիվների մեջ. ինչպես՝ ևս մի աթոռ. ևս մի վերարկու. ևս 15 ռուբլի։

Ծան. 2. Չսիտի չփոթել էլ շաղկապը էլ, այլևս մակբայի հետ, որ բացասական բայի հետ ցույց է տալիս գագարում, չկրկնվելը մի գործողության, կամ բացակայություն մի բանի, որ կար առաջ. ինչպես՝ էլ չխոսեց Արաքսը։ Գնաց, էլ ետ չեկավ։ Ես այլևս չեմ կարող այդ տանել։—Նույն նշանակությամբ գրական բայի հետ գործ են ածվում՝ դարձյալ, ևորից, էլի, ևս, որոնք կրկնություն են ցույց տալիս, ինչպես՝ Մի երկու ամիս ևս, և մենք կբաժանվենք իրարուց։

2. ՄԱՍՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

807. *Մասնական կապակցության մեջ երկրորդ խոսքը կամ խոսքերը արտահայտում են մասերը միևնույն ընդհանուր մտքի, որ և նրբանցով ամբողջանում է։ Կապակցվում են հետևյալ բառերով.*

1. Որը—որը, մեկը—մյուսը, մեկելը. ոմանք—ոմանք. կեսը—կեսը. մասամբ—մասամբ. չատը—փիչը. կա որ— կա որ և այլն, որոնք ցույց են տալիս մի ամբողջի մասեր և դրվելով երկու կամ ավելի խոսքերի սկզբում, հաջորդ խոսքերն իմաստով իբրև մի ամբողջի մասեր կապում են նախորդի հետ։ Օրինակ՝ Ուներ նա երկու մատաղհաս աղջիկ. մինը խիստ տգեղ, մյուսը գեղեցիկ (Գ.-Ք.)։ Հավերժահարսները բերին անմահական սուրբ դինին. ով որ խմեց՝ ստացավ կյանք, փոխվեց բոլորովին. որը ոսկե քնար առավ. որը գրիչ թանկագին. որը հայոնի երգիչ եղավ. որը ճարտար վիպասան.—Ճիշտ է որ ասում են՝ աշխարհում բախտ կա. որին կհանդիպի, որին թույլ կտա (Ջիվ.)։ Տիշտոյները հազան ժամաշապիկները. որը քշոցը վեր կալավ. որը խաչվառը, որն էլ մոմերը բռնած՝ առաջ ընկավ.—Աղիկներից մինն ասեց. քե՝ ես գլխացավի դեղ եմ. մեկելը քե՝ որտեղ ինչ ցավոտ մարդ լինի, ես նրան կլավացնեմ. մեկը քե՝ ով որ իմ տերևիցը ունենա կրծին, ինչ մուրազ անի՝ կկատարվի.—Մինը փշատու ճյուղը կոտրած՝ նրա ծաղիկներն է ճյուղով կտրատում, մեկելը դեղին ու կարմիր

խնկածաղիկ է փեշը լցնում. մինը բացվենալուկի ծաղիկ է գիրկը լըցրած բերում, որն էլ բուլիբուլի ծաղիկ (Պռ.)։ Կառապանները մոտեցան վերջինիս և սկսան գովել՝ մեկն յուր «թռչկան ձիերը», մյուսն յուր «սլլող կալասկան», երրորդն յուր «դինջ օմնիբուսը».—Մի տեղ տիրում է անձրև, աղմուկ ու փոթորիկ, մյուս տեղ (մի ուրիշ տեղ) պայծառ արև, ջինջ կապուտակ և քաղցր հովեր.—Ճանապարհի մի կողմից ընկած էին հասուն արտեր... իսկ մյուս կողմից կանաչազարդ բոմբեր.—Եթե մի կողմից շրջակա լեռներն՝ իրենց լայնանիստ լանջերով՝ սինդ գրկած պահում էին գեղանի թագուհուն, մյուս կողմից էլ նրանց բարձրահասց կատարները անհանգիստ կասկածով նայում էին դեպի հարավ.—Երիտասարդներից ոմանք մինչև անգամ իրենց ապագա գործունեության ծրագիրն առաջարկեցին, ոմանք էլ այդ ծրագիրը պակասավոր գտնելով՝ ավելի ընդարձակ խոստումներ արին.—Այս քաղաքում կային և ուրիշ հայ ուսանողներ, որոնք իրենց ազատ ժամանակը տնօրինում էին այլ կերպ։ (.) Ոմանք սիրում էին չափել փողոցները... ոմանք զբաղվում էին սովորական թղթախաղով... ուրիշներն այցելում էին հարուստ ընտանիքներին... մի մասն էլ ազատ ժամերը նվիրում էր...—Գյուղի դիրքը մասամբ սարահարթ և մասամբ դառիվայր էր.—Կանաչ ծառերի խումբը... երևում էր մասամբ եզերքին և մասամբ անշուք շինությունների ետևում (Մուր.)։

2. **Երբեմն—երբեմն, մերթ—մերթ, մեկ—մեկ.** *ցույց են տալիս մի ժամանակի մեջ իրար հաջորդող կամ փոփոխակի կրկնվող գործողություններ կամ դրություններ։ Օրինակ՝ Աղստևը դարձյալ ընկերանում էր ճանապարհորդներին, երբեմն փոքրիկ ձորակներից անցնելով, երբեմն դաշտերի եզերքը քերելով.—Ջարմանալի և տարօրինակ կին է այդ միանձնուհին։ Երբեմն այնքան մեղմ, քաղցր ու հեզահամբույր է... իսկ երբեմն այնքան լուրջ, սառն և բարձրահոն, որ...—Փոքրիկ մկանունքները... մերթ ուռչում, բարձրանում էին ու խուլ վշշոցով իրար վրա փլչում, մերթ գալիս, մոտենում բլրի ստորոտին... Նա մերթ արևից շողեր կորզելով՝ նրանցով փրփրուն ալիքներն էր ոսկեզօծում. մերթ խուսափուկ ամպերից ստվեր առնելով՝ լճի կապուտակը սպիտակ կամ գորշ սավաններով էր ծածկում.—Ուներ տարօրինակ հայացքներ, որոնք յուր խոսակիցներին մերթ զայրույթ և հաճախ՝ զվարճություն էին պատճառում (Մուր.)։*

3. **Նախ, առաջ, նախ և առաջ, այժմ, հետո, ապա, հուսկ հետո, վերջը, վերջապես, ի վերջո, վերջիվերջո, առաջին—երկրորդ—երրորդ և այլն.** *մասերի բաժանման հետ ցույց են տալիս և մասերի հաջորդությունն ըստ ժամանակի կամ տեղի։ Օրինակ՝ Այդ ծրագրների մեջ մտնում էին նախ՝ գյուղական հասարակության իրավունքների պաշտպանությունը... երկրորդ՝ լուսավորության գործի հիմնադրությունը... երրորդ՝ գյուղացու տնտեսական դրության բարվոքումն.—Ազատամտության գլխավոր հատկանիշը այն է, որ նախ՝ ներողամիտ աչքով*

նայես ընկերոջդ թերության և սխալանքների վրա. երկրորդ՝ ցանկանաս, որ նա ևս վայելե այն բարիքները, ինչ որ դու վայելում ես, կամ կցանկանայիր վայելել, և երրորդ՝ որ նրան էլ իրավունք տաս խոսելու կամ գործելու.—Ասում ես՝ Նոյի ագռավը չի՞ թողել, որ տունդ շինես։ Առաջինը՝ ագռավը ո՞նց կարող էր արգելել քեզ քո տունը շինելու. երկրորդ՝ Նոյի ագռավը մինչև այսօր ապրո՞ւմ է, որ քեզ արգելի.—Քահանան, որ այսպիսի անակնկալ հարցի չէր սպասում, նախ շփոթվեց, ապա ինքն իրան գալով ժպտաց... Մի՞թե չէիք կարող նախ՝ այս ձողերի փոխարեն լայն տախտակներ շարել, երկրորդ՝ եթե ձողեր էիք շարում, ընտրեիք ուղիղ ձողեր և ոչ թե այս ծուռ ու մուռ ճաղերը. հետո նրանց տաշեիք, միմյանց մոտեցնեիք և ապա թե վրան հող լցնեիք։ Նրա առաջ բացվում էր մի լեռնադաշտ, որի վրա ցրված էին մանր ու խոշոր բլուրներ՝ իրենց գլուխ ունենալով նախ՝ կրկնաթումբ՝ Ղոշ-դարը, որը տեղ-տեղ տակավին ծածկված էր կանաչով, ապա՝ Գեղամա հարազատ լեռները... վերջն՝ Սպիտակ լեռը.—Այսօր ես այստեղ երկու խիստ ուրախացնող անակնկալների հանդիպեցա. առաջին՝ ձեր եկեղեցու հրաշալի երգեցողությանը, ...երկրորդ՝ այս գեղեցիկ դպրոցական շենքին.—Երևակայեցեք, շաբաթվա մեջ քսաննվորս դաս տղայոց կամ աղջկանց դպրոցում. այնուհետև դպրոցական մի քանի գործերի վրա անմիջական հսկողություն. հետո ուսուցչական ժողովներ. ապա արձանագրությունների կազմությունը (Մուր.)։

3. ՄԵԿՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

308. Մեկնական կապակցության մեջ երկրորդ խոսքով (կամ բառով) բացատրվում է առաջին խոսքի (կամ բառի) միտքը։ Կապակցական բառերն են՝ այսինքն, այսինքն թե, իմա՛, այս է, այն է։ Օրինակ՝ Համբերում են միայն թույլերն ու տկարները. այսինքն՝ մարդիկ, որոնք այս կամ այն չարիքը սեփական ուժով իրենցից հեռացնել չկարենալով՝ տանում են նրա պատճառած նեղությունները ստրկաբար.—(Նրանք) ներկայացնում էին իսկական ուսանողի տիպ, այսինքն՝ լինում էին անփուլթ վաղվա պարտքի նկատմամբ.—Ադելինային սա ճանաչում էր վաղուց. այսինքն՝ երբ դեռ ինքը գիմնազիոնի աշակերտ էր, իսկ նա ինստիտուտի փոքրիկ աշակերտուհի.—Բայց ես կարծում եմ, որ եթե այդպիսի մի կարգ սահմանեիք, այսինքն՝ ամեն տուրք մատյանի մեջ արձանագրվեր, վատ չէր լինիլ.—Չես կամենում զրկել քեզ նույնիսկ մի ավելորդ զվարճությունից, այսինքն որ ամառվա ամիսներում չընկերանա քեզ որդիդ.—Նրան հետաքրքրում էր ավելի լուրջ ու դրական խնդիր. այսինքն այն, որ յուր որդին... նոր ծախսեր է անում.—(Խոյակները) իրենց վրա կրում էին հյուսնի ձեռքերի ճարտարության նշանները, այն է՝ զանազան քանդակներ.—Շտապեց առաջնակարգ վարսավիրայի մոտ յուր գլխի արտաքինը կանոնավորելու, այն է՝ խուզվելու և ածիլվելու (Մուր.)։

Նաե. *Մեկնական խոսքեր կազմվում են երբեմն ոչ հարաբերականով. այն ժամանակ կապակցությունը լինում է ոչ թե համադասությամբ, այլ ստորադասությամբ։ Օրինակ՝ Ես նոր սկսա խորհել գլխավոր վտանգի մասին, որ էր՝ փոթորկի ժամանակ ամպրոպների այս հայրենիքում գտնվելը.— Իմ հոգին կհրճվի երկնքում և ոսկերս գերեզմանի մեջ, եթե դուք... հավատարիմ մնաք իմ դավանության, որ է՝ սիրել ընկերը յուր անձից ավելի (Մուր.)։ Համմտ. § 266. 3։*

4. ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

309. *Տեղի և ժամանակի կապակցության մեջ համադաս խոսքերից երկրորդը միանում է առաջնին տեղի և ժամանակի հարաբերությամբ։ Կապակցությունը լինում է տեղի ու ժամանակի մի մակբայով կամ տեղ ու ժամանակ ցույց տվող մի գոյականով, որ վրան ունի մի ցուցական։ Օրինակ՝ Ես երեկ թատրոնում էի. այնտեղ տեսա իմ բարեկամիս։ Ադելինային սա ճանաչում էր վաղուց. այսինքն՝ երբ դեռ ինքը դիմնազիոնի աշակերտ էր, իսկ նա ինստիտուտի փոքրիկ աշակերտուհի։ (.) Այդ ժամանակ նրանք դրացիներ էին (տե՛ս § 304. 2, ծան.). (Մուր.)։ Նա սկսեց կանոնավոր ու չափավոր կյանք վարել. այդ ժամանակից ի վեր նրա առողջությունը լավացավ։*

5. ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

310. *Բաղհյուսական կապակցության մեջ պետք է դնել նաև երկու համադաս խոսքերի միացումը ձևի, այսինքն՝ որակի, չափ ու քանակի կամ աստիճանի հարաբերությամբ։ Կապակցությունը լինում է մի որակ կամ չափ ու քանակ ցույց տվող ցուցականով, ինչպես են՝ այսպես, նույնպես, նույնքան, նույնչափ և այլն։ Օրինակ՝ Անձրևին փոխանակում է փայլուն արևը, ցրտին՝ տաքությունը. այսպես՝ մարդուս կյանքի մեջ իրար հաջորդում են լացն ու ծիծաղը, երկյուղն ու հույսը։*

6. ՄԱԿԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

311. *Մակաբերական կապակցության մեջ համադաս խոսքերն ունին հիմունքի և հետևանքի կամ հետևության հարաբերություն։ Կապակցությունը ցույց է տալիս՝*

ա) Պատճառ, երբ երկրորդ խոսքը լինում է առաջինի հիմունքը կամ պատճառը։ Այս խոսքերը սակայն երբեմն առնվում են իբրև երկրորդական խոսքեր։ Կապակցվում են՝

1. Վասնզի, զի, քանզի որում շաղկապներով, որոնք գործ են ածվում հնաբանական ձևով։ Օրինակ՝ Ինքն իրավամբ կրում է արարչի պատկերը. վասնզի կարողացավ «ինչն ստեղծել ոչնչից».—Այստեղից մինչև Բորժոմ պետք էր ճանապարհը շարունակել կառքով, վասնզի այդ ժամանակ դեռ չէր շինված երկաթուղու Բորժոմ տանող գիծը.— Անշուշտ արևը այրում էր դրսում, վասնզի թռչունները ձայն չէին հանում, բոլորը դարել, դադարել էին բունիկների մեջ.—Այս աշխարհում,

այս մթնոլորտում ես այլևս չեմ ապրիլ. զի ձեզանից հետո՝ նա ինձ համար պիտի դառնա կատարյալ դժոխք.—Ով կամենում է ազգի կենդանությունը զորացնել, նա պիտի գյուղը գա գործելու, զի ծառը ջրելու և ուռճացնելու համար՝ նախ նրա արմատները պետք է հագեցնել.—Նայելով դեպի արևելյան հարավ թվում էր թե ծովակը չունի այլևս պատվար. ըստ որում հեռավոր Գարաարխաչի գոտին, ըստ սովորականին, ծածկված լինելով մշուշով, անտեսանելի էր դարձնում այդ կողմի ցամաքը.—Ծովակի ավելի հուզված ժամանակն իսկ նրա վրա երթևեկում են աներկյուղ. ըստ որում մինչև այսօր դեռ ոչ ոք այդտեղ վտանգի չէ հանդիպել.—Պետրոսը... խնդրեց, որ յուր համար անկողին պատրաստեն. ըստ որում հոգնած էր և ցանկանում էր վաղ քնել.—Ջկային վարձու նավակներ, ըստ որում տեղն ամայի էր և բնակությունից հեռու (Մուր.)։ Շատերը չէին վստահանալ այդ հանդուգն քայլն անելու, ըստ որում Սարգիս աղան քաղաքի առաջին հարուստն էր (Պռ.)։

2. Ինչու որ, էնդուր որ (ընդուր որ), պատճառն որ բառերով, միայն բարբառային ձևով։ Օրինակ՝ Մկան նման ետ ետ էին գնում. ընդուր որ ձեռիս զորությունը տեսել էին (Պռ.)։ Երեխային ասին՝ ինչո՞ւ ես լալիս։ Ասաց՝ ընդուր որ խոսքս անցնում է (Ա.)։ Ինչո՞ւ աքլորը կանգնած է բակում, պինդ պինդ կանչում է իր կուկուրիկուն.—Էնդուր որ վաղուց արևն է ծագել, բայց ծուլ երեխան դեռ չէ վեր կացել (Գ.-Ք.)։ Ինչո՞ւ այդ անունն եք տալիս նրանց.—Էնդուր որ չոր, ամայի բաներ են... (Մուր.)։ Այժմ անհրաժեշտ հարկե ստիպյալ՝ ճշմարտությունը պարզել ոչ ամոթ համարիմ. ինչու որ զավակիդ վրա չանք գործ դրած եմ (Պռ.)։

3. Գրական լեզվի մեջ ստորադասական որովհետև շաղկապը, կապելով վերջադաս պատճառական խոսքերը, հաճախ առնվում է իբրև համադասական. ուստի և վերջադաս պատճառական խոսքը, իբրև անկախ համադաս խոսք, նախորդից բաժանվում է միջակետով և նույնիսկ վերջակետով։ Օրինակ՝ Երկիրը կլոր է և այդ պատճառով քանի սարը հեռու է լինում, այնքան էլ նա փոքր է երևում. որովհետև հեռվից մենք տեսնում ենք միայն նրա վերին մասը։ Իսկ հետո որքան մոտենում ենք, այնքան նա մեծանում է. որովհետև հետզհետե տեսնում ենք նաև միջի և ապա վարի մասերը.—Այսուամենայնիվ, այս բոլոր պակասությունների հետ միասին, ճանապարհի լավ ընկեր էր. որովհետև սրտոտ էր, կամարար և սակավապետ.—Բայց դու չես արել. որովհետև, ինչպես Մուքին ասում է, էշիս չունիս.—Դրանք գյուղացիների տնակներն էին, որոնք սակայն չէին նմանվում մարդկային բնակարանների։ (.) Որովհետև զուրկ էին պատուհաններից... (Մուր.)։

բ) Հետևություն. երբ երկրորդ խոսքը լինում է առաջինի հետևությունը, լինի մի եզրակացություն թե իրական հետևանք,— իսկ առաջին խոսքը պարունակում է երկրորդի հիմունքը, լինի տրամաբա-

նական, իրական կամ բարոյական հիմունք ու պատճառ, թե մի մարտադրված հիմունք կամ նպատակ։ Կապակցվում են՝

1. **Ուստի, ուստի և, ուրեմն, ապա ուրեմն, հետևաբար, հետևապես, այս պատճառով, այդ նպատակով, սրա համար** *բառերով։ Օրինակ՝ Դու քո հանցանքդ խոստովանեցիր. ուստի ես ներում եմ քեզ։ Ա-ն Բ-ից հարյուր տարի առաջ է մեռել. ուրեմն և (հետևաբար) նա չի կարող սրանից օգտված լինել։ Քանի օր է շարունակ անձրև է գալիս. այդ պատճառով փողոցներն անտանելի ցեխ են դարձած։ Այս ջուրը գնալով պիտի մեծանա. ուստի որքան շուտ անցնենք, այնքան մեր օգուտն է.—Տների ներսը չէր գրավում մարդկանց. ուստի ժողովուրդը լցված էր դուրսը.—Տոթից, ըստ երևույթին, նա շատ էր նեղանում, ուստի և հաճախ գանգատվում էր.— Ես հանցանք չեմ գործում, ուրեմն վախենալու էլ ոչինչ չունեմ.— Դժբախտաբար երիտասարդն էլ յուր կամքի տերն էր, ուրեմն և հեշտ չէր ետ կեցնել նրան յուր ընտրած ճանապարհից.— Ով Կամսարյանն ունի թե՛ խելոք և թե՛ կարող ձեռքեր. ինչո՞ւ, ուրեմն, չերթա, չորոնե այդ սիրելի ազգակիցներին.— Աշխարհում համբերում են, առհասարակ, կամքի ույժ, հոգվո արիություն և սրտի կորով ունեցողները, հետևապես մեծ գործերն էլ ստեղծում են դրանք.— Բայց ուսանողն, հո գիտե՞ք, անձնիշխան է ամեն դեպքում, հետևապես և կարող նման հարցեր քննելու.— Նա այժմ իրեն չէ պատկանում, հետևապես և չէ կարող ծառայել յուր անձին.— Նա շտապ ավարտելու գրելիք է ունեցել, այդ պատճառով չէ եկել.— Պետրոսն, ինչպես հարմարություններ սիրող մարդ, չէր կամենում փոստի սայլակով ճանապարհորդել, որպեսզի չենթարկվի կայարանների քմահաճույքին. այդ պատճառով էլ ընտրեց «սլլող կալասկան» (Մուր.)։ Հռոմի դիցաբանական պատմության և նրա գրականության մեջ ոչինչ կապակցություն չկա։ Այդ պատճառով հռոմեական գրականությունն ազգային չէ, որովհետև առասպելական ժամանակների ժողովրդի ավանդությունների վրա չի հիմնվել, ինչպես հունականը.* **սրա համար** *էլ ժողովուրդը Հռոմում երբեք մասնակից չէ եղել գրականության (Պալ.)։ — Ես ուզում էի ձեզ օգնել.* **դրա համար** *(այդ նպատակով) ձեզ մոտ եկա։*

2. **Որով և բառով, որ հարաբերական ոը դերանվան գործիական հոլովն է և վերաբերում է նախորդ ամբողջ խոսքի բովանդակությանը։ Օրինակ՝ Վահագն վիշապների հետ է կռվում և հաղթում նրանց, որով և վիշապաքաղ ասվելու արժանի եղավ (Պռ.)։ Բոլոր այս խուցերը, կացարանները, ամբարներն ու միջանցքները ծածկված էին մի ընդհանուր, միապաղաղ կտուրով, որով և բոլորը միասին կազմում էին մի ծածկված ամբողջություն.— Հավերը կտրանը քթուք էին արել, որով և փխրուկ մասը շարժվելով՝ իջել էր ներքև.— Որովհետև տգետ են և անուսում, ուստի մնում են անզոր աշխարհի չարիքների առաջ, որով և մի կողմից բնությունն է նրանց զրկում, մյուս կողմից չար մարդիկն են կեղեքում (Մուր.)։*

2. ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

312. *Ներհակական խոսքերից երկրորդի կապակցությունն առաջինի հետ լինում է՝ ժխտական, տրոհական, սահմանափակող և հակադրական։*

1. ԺԽՏԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ժխտական կապակցության մեջ երկրորդ խոսքով մերժվում, վերացվում է առաջին խոսքի բովանդակությունը, որի տեղ հաստատվում է երկրորդի բովանդակությունը։ Կապակցությունը լինում է ոչ, ոչ թե— այլ, այլ ընդհակառակն բառերով. կամ առաջին խոսքը դրվում է բացասական, իսկ երկրորդն սկսվում է այլ, այլ ընդհակառակն շաղկապով։ Օրինակ՝ Դու ոչ թե պիտի խաղաս, այլ պարապես։ Որդեսեր և հասկացող մայրը... յուր ետևից քաշ չի տալ մանուկին, այլ, ընդհակառակն, կհարմարեցնե յուր քայլերը տղայի դողդոջուն քայլիկներին.— Աշխատող ձեռքը չի պտրիլ երբեք վարդալիր պարտեզ, այլ կերթա այնտեղ, ուր հողն անմշակ է.— Թոնիրը ոչ թե ուրիշների պես սրահում, այլ բակի մի անկյունումն էին զետեղել.— Արևի շողերը ոսկեզօծում էին կանաչը ոչ թե նրանց ջերմացնելու, այլ փայլեցնելու չափով.— Նա յուր պաշտոնը կատարում է ոչ թե իբրև գործակատար, այլ իբրև վանքի տեր և իշխեցող.— Պատմության մեջ հայոնի բազմաթիվ անձինք նշանավոր են դարձել ոչ այն պատճառով, որ իրենց անձն են սիրել, այլ որովհետև նվիրվել են հասարակաց բարվույն.— Այդ հո իրենք չե՞ն այդպես արել իրենց, այլ աշխարհի բռնապետությունը.— Ջեմ չափազանցում, այլ ասում եմ ճշմարտությունը (Մուր.)։

Ժխտական կապակցությունը կարող է և շուռ տված ձևով լինել. այն ժամանակ երկրորդ խոսքն սկսվում է և ոչ թե բառերով։ Օրինակ՝ Դու պիտի պարապես և ոչ թե խաղաս։ Ջեն կարողանում ներել, որ այդ սիրուն սոսինները պատկանում լինին մի խեղճ գյուղացու և ոչ թե մի գեղանի իշխանուհու (Մուր.)։

2. ՏՐՈՀԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

313. *Տրոհական կապակցության մեջ համադաս խոսքերը փոխադարձ ժխտական են, այսինքն՝ եթե մեկն ընդունվում է, մյուսը կամ մյուսները վերացվում կամ հերքվում են։ Երկրորդ խոսքով սակայն առաջին խոսքն երբեմն էապես և ամբողջովին չի ժխտվում, այլ միայն երկու խոսքի մեջ ընտրանք է լինում, մեկը կամ մյուսը։ Կապակցությունը լինում է՝*

1. Կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ շաղկապով։ Օրինակ՝ Ինչո՞ւ չասացիր, թե՝ լավ կլիներ, որ այս սոսինները պատկանեին մեր հյուրընկալ Մուքին, կամ մի ուրիշ, քո կարծիքով ավելի ուսումնասեր գյուղացու.— Այդ դեպքում հանցավորը ոչ թե եզը, այլ դու կլինիս, որ

չես կապել անբանին, կամ թե քո հարևանը, որ չէ փակել յուր դուռը.— Կարո՞ղ ես արևի հրավառ գոմդը հեռացնել քո գլխից, կամ այս շիկացած ժայռերը հովանավոր ծառերի փոխել.— Ի՞նչպես կարելի է, որ մարդ արարածը չխոսե յուր նմանի հետ, կամ թե այդ խոսելը համարե ամոթ, պատիվ, կամ անպատվություն (Մուր.)։

Փոխադարձ ժխտումը զորեղ արտահայտելու համար՝ հաճախ առաջին խոսքի սկզբում ևս դրվում է կա՛մ շաղկապը։ Օրինակ՝ Դու կա՛մ պիտի պարապես, կամ գնաս զբոսնելու։ Կա՛մ սերն է դրա պատճառը, կամ մահը։ Շատ ման եկողը կա՛մ փորին կճարի, կամ շորին (Ա.)։ Կա՛մ կգտնեմ ճանապարհը և կամ ինքս բաց կանեմ (Մուր.)։

Ծան. Կամ շաղկապն երկու բառի, երբեմն և երկու խոսքի մեջ ունի նաև մեկնական իմաստ և նշանակում է՝ ուրիշ բառով, այլապես. օրինակ՝ Երևանը գտնվում է Զանգու կամ Հրազդան գետի վրա։

2. Թե շաղկապով, երբ տրոհական խոսքերը հարցական են, կամ ենթադրությամբ են ասվում։ Օրինակ՝ Դու դա՞սդ պիտի սովորես, թե՞ պիտի գնաս զբոսնելու։ Ստեփանը կգա, թե Թորոսը, ինձ համար միևնույն է։ Նա մեզ քիչ թե շատ տեղեկություն է տալիս այդ մասին։ Ես էլ նրանց թե մոտիկ, թե հեռու բարեկամ կհիշվեմ (Պռ.),—մոտիկ թե հեռու, մոտիկ լինի թե հեռու։— Ընկերս լուռ էր։ Չգիտեմ համաձայնվե՞ց ինձ հետ, թե՞ չկամեցավ անզոր երևալ իմ աչքում.— Համաձա՞յն ես ինձ հետ, թե՞ ոչ.— Նրանք միմյանց պատահելուց՝ սիրով ողջունում էին իրար, առանց նայելու թե ծանո՞թ են միմյանց, թե ոչ.— Չգիտեմ շրջապատիս մե՞ջ է անկեղծությունը պակասում, թե՞ իմ մեջ հավատը.— Անարգա՞նք էր այս՝ ուղղված իմ անկեղծ խոստովանության, թե՞ բարձրագույն ազնվության ապացույց (Մուր.)։

3. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

314. Սահմանափակող կապակցության մեջ երկրորդ խոսքն առաջինին հակառակ մակաբերական է, կամ առաջին խոսքին մի հակադրություն ավելացնելով՝ չափավորում կամ սահմանափակում է նրա բովանդակությունը և նրանից սպասած հետևության առաջն առնում է։ Օրինակ՝ Դու քո հանցանքդ խոստովանեցիր, բայց ես չեմ ներում քեզ։ (Տե՛ս § 311. բ. 1)։ Առաջին խոսքի մեջ կարող է դրվել մի հաստատական եղանակական մակբայ կամ նույն իմաստով մի խոսք՝ արդարև, իրավ, իսկապես, ասենք, իրավ է, ճիշտ է և այլն։ Կապակցությունը լինում է.

1. Բայց, սակայն, բայց և այնպես, բայց դարձյալ, և սակայն, այնուամենայնիվ շաղկապներով։ Օրինակ՝ Ֆաթթահ բեկը, իրավ է, մեզ կողոպտում է, բայց դարձյալ չենք կարող մերժել նրա բարեկամությունը.— Սերունի խաչոն կարդացած մարդ չէր. բայց կյանքը, փորձը, աշխարհը շատ բաներ սովորեցրել էին նրան.— Այդ իրավ է,

պրդի. բայց մի ուրիշ բան էլ կա. այն էլ պետք է իմանալ։ Դու տեսնում ես ոչխարներին. այսքան մորթում են, այսքան փչացնում են. բայց դարձյալ նրանք աճում են, բազմանում են և ահագին հոտ են կազմում (Րաֆ.)։ Ես շատ հայ գյուղերում եմ եղել և միշտ էլ զրույցներ ունեցել գյուղացիների հետ. բայց ինձ երբեք չէ պատահել հայ գեղչուկ, որ ուսման և կրթության դեմ խոսեր.— Կան գեղեր, որոնք չեն բուժում սուր ցավ պատճառող հիվանդությունը, բայց առժամանակ թմրեցնում են սրա պատճառած կսկիծը.— Նրա դեմքի արտահայտություններ խիստ էր, բայց ոչ չար.— Այս ամենը երիտասարդի վրա ծանր տպավորություն թողին. սակայն նա լուռ էր.—Երկար անձրևը ծեծում էր դուրսը, երկար օդի մեջ շառաչում քամին, և սակայն Պետրոսը քնած էր հանգիստ և չէր զգում նույնիսկ ցրտությունը.— Դրվատում ենք գութն ու բարեգործությունը և սակայն առանց ամաչելու հանում մեր եղբոր վերջին շապիկը.— Այս մտածմունքներն, արդարև, կնճռեցին իմ ճակատը. բայց ես անձնատուր չեղա նրանց (Մուր.)։ Լռել պետք է, բայց ոչ համր լինել։

2. Միայն, միայն թե. *երկրորդ խոսքով սահմանափակվում կամ չափավորվում է նախորդ խոսքի մեջ արտահայտված գաղափարը.* **Միայն թե** *շաղկապի տեղ միշտ կարելի է բայց դնել. վերջինիս տեղ ընդհակառակն միշտ կարելի չէ միայն թե դնել։ Օրինակ՝ Աջ կողմում երևում է այն ժայռը, որի տակ շինված է Բայազետ քաղաքը. բայց (կամ՝ միայն թե) քաղաքը ժայռի մյուս կողմը գտնվելով՝ չի երևում (Րաֆ.)։ Այդ տեղն, արդարև, բանաստեղծական գեղավայր էր. բայց (կամ՝ միայն թե) զուրկ չէր նաև գլուխներ թոցնելու հարմարությունից.— Ի՞նչ էին եփվում այդ սևակոլոլ ամանների մեջ, հայտնի չէր. միայն թե (կամ՝ բայց և այնպես) Կամսարյանը նայելով նրանց վրա՝ զգաց մի խոր զզվանք.— (Սենյակի) առաջին մասը փոքրիշատե մաքուր էր և պատի տակն ուներ տախտակաշեն մի թախտ. միայն թե այստեղից էլ փչում էր չափազանց սուր հոտ.— Հագուստը ոչնչով չէր դանազանվում վարդապետների հագուստից, որովհետև բաղկանում էր նույն մուշտ-կապույտ կտավե կապայից, շալե գոտուց, կոշտ բրդե փարաջայից և խայտաբղետ գուլպաներից ու քոշերից։ (.) Միայն թե վեղարի փոխարեն՝ գլխին ծածկած էր գառան մորթու տափակ գդակ.— Այժմ նա դարձյալ ոչնչի մասին չէր մտածում և զբաղված էր դիտելով ճանապարհի նոր հանդիպող տեղերը... միայն թե Աղստևի կամրջին մոտեցած ժամանակ՝ նա մի վայրկյան մտածեց այն մասին թե... (Մուր.)։*

Տես. *Փոխանակ մի պարզ խոսքի՝ լոկ, միայն բառերով, հաճախ սահմանափակող համադասություն է կազմվում ոչ այլ ինչ—բայց երե, եթե ոչ. ուրիշ չ...—բայց եթե շաղկապներով։ Օրինակ՝ Այժմ էլ ուրիշ բան չի մնում, բայց եթե թողնել և հեռանալ,— Այժմ մնում է միայն թողնել և հեռանալ։ Կյանքը ոչ այլ ինչ է, բայց եթե (կամ՝ եթե ոչ) սուգ ու լաց,— Կյանքը միայն սուգ ու լաց է։ Դրանց զարդերը ոչ այլ ինչ էին, եթե ոչ փայ-*

տե անդարդ խաչկալ, չքե վարագույր, մի քանի հասարակ մոմակալներ.—Այդ քանդարան կոչվածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մի հասարակ խուց.— Մեր ամառանոցները ոչ այլ ինչ են, եթե ոչ մեր գավառի հովահար գյուղերը.— Յուր գործը ոչ այլ ինչ է, եթե ոչ հագնվել... (Մուր.)։

4. ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

315. Հակադրական կապակցության մեջ երկրորդ խոսքը լոկ հակադրվում կամ հանդիպադրվում է առաջինին իր հակառակ կամ տարբեր նշանակությամբ՝ առանց սակայն ժխտելու կամ սահմանափակելու կամ որևէ կերպ փոփոխելու նրա նշանակությունը։ Կապակցությունը լինում է՝

1. Իսկ շաղկապով, որի հետ կամ առանց նրան, հակադրությունը որոշ շեշտելու համար, դրվում է ընդհակառակն։ Հարցական խոսքերից առաջ իսկ շաղկապի տեղ կարող է դրվել հապա՛, բա՛։ Օրինակ՝ Ես գնացի, իսկ դու եկար։ Աշխատողի համար ամեն ինչ հեշտ է. դատարկապորտի համար ընդհակառակն ամեն ինչ դժվար։ Համեստությունը սիրելի է դարձնում, իսկ հպարտությունն ընդհակառակն ատելի։ Նա տուն է գնացել, հապա դո՞ւ ինչ ես արել։ Արարատյան դաշտի հարավային կողմից սպիտակափառ Մասիսն է բարձրանում, իսկ հյուսիսային կողմից՝ քառագագաթ Արագածը։ Ընկերս վերադարձել էր Մոսկվայից, իսկ ես Թիֆլիսից.— Ոտքերին ամրացրած էին կաշու տրեխներ. իսկ մեջքը սեղմած էր կտավի մի գոտիով.— Ես դժվարությամբ էի ծիծաղս զսպում, իսկ Պետրոսն արդեն քահ քահ ծիծաղում էր.— Գոմի դուռը կրնկահան եղած՝ ընկած էր, իսկ հորթանոցը, մինչև անգամ, զուրկ էր այդ բանից.— Մի կողմից բնությունն է նրանց դրկում, իսկ մյուս կողմից չար մարդիկն են կեղեքում.— Այդ ժամանակ նրանք սրացիներ էին, իսկ ծնողները՝ միմյանց բարեկամ.— Սեմյոնովկայից ճանապարհը սկսում էր փոքր ինչ ցածրանալ, իսկ բնության շքեղությունները նվազում էին.— Քահանան ու Պետին բաժանվեցան նրանցից, իսկ տանուտերն յուր հյուրին առաջնորդեց դեպի տուն.— Ինձ երբեք չի պատահել հայ գեղջուկ, որ ուսման և կրթության դեմ խոսեր։ (.) Ընդհակառակն ամեն մինի փափագը եղել է այն, որ կարողանա ուսում տալ յուր որդուն (Մուր.)։

Ման. Իսկ շաղկապի տեղ, երբ տարբերությունը կամ հանդիպադրությունը շատ զորեղ չէ, կարող է և շաղկապն ևս դրվել։ Օրինակ՝ Անհամբերությունը վնասում է ամենքին, իսկ (կամ՝ և) քեզ առավել ևս.— Նա հագած էր կոշտ կտավե շապիկ՝ կապուտ նաշուրի օձիքով, իսկ (կամ՝ և) դրա վրայից ևս ղաղաճի մի հնամաշ արխալուղ (Մուր.)։

2. Մինչդեռ. հակադրության հետ ցույց է տալիս նաև ժամանակի դաղափար (§ 285)։ Օրինակ՝ Աշխույժ ու չսանձահարվող ձիուն մոտենում են երկյուղով ու փաղաքշանքով և հազիվ ուրեմն կարողանում են հեծնել. մինչդեռ համբերատար իշին ականջներից քաշելով՝ բարձում են միշտ որքան կամենում են.— Համբերությունը բարիք է արտադրում. մինչդեռ անհամբերությունից միայն չարիք է առաջանում.—

Առաջին դեպքում դու արտահայտել ես քո իսկական զգացմունքը, մինչդեռ երկրորդ դեպքում պիտի աշխատեիր վարագուրել այդ զգացմունքը և ասել այն, ինչ որ առհասարակ ընդունված է ասել... Նրանցից առաջինները (հարսները) երեսները սքողեցին, մինչդեռ վերջինները (աղջիկները) հետաքրքիր աչքերով նայում էին եկողներին.— Տեր Հայրը չըմբռնեց այդ ժպիտի նշանակությունը. մինչդեռ ուստա Պետին չկարողացավ լռել (Մուր.)։

3. Ապա թե ոչ, թե չէ. այս շաղկապները դրվում են մի վեղվեղ պայմանական խոսքի տեղ, որ իր գլխավոր խոսքի հետ հակադրվում է համադասության առաջին խոսքին։ Օրինակ՝ Մարդ պետք է միշտ աշխատի առաջադիմել. ապա թե ոչ (կամ՝ իսկ եթե չաշխատի առաջադիմել) հեշտությամբ կհետադիմի։ Գործի վրա մտածիր, ո՛րդի, գործի վրա. թե չէ կռոներից շահ չի լինելու քեզ.— (Խոզը) թե կաթուկից բանից գտավ՝ կուտի, թե չէ, էն ա սաղ օրը խռխռալով ման ա գալու։ Եղածն էլ յուր շնորհիվ է որ կա. ապա թե ոչ... անշուշտ այդ եղածն էլ կմատնվեր կորստյան (Մուր.)։

316. *Համադաս խոսքերի հավելական, մասնական, ժխտական, տրոհական և հակադրական հարաբերություններն արտահայտվում են միայն համադասական, բաղհյուսական կամ ներհակական կապակցությամբ. այդ հարաբերությունները կարելի չէ ստորադասությամբ արտահայտել։ Ընդհակառակն՝ տեղի, ժամանակի, բաղդատության, մակաբերական, սահմանափակող, մասամբ և մեկնական կապակցությունների մեջ համադաս խոսքերն իրար հետ նույն հարաբերությունները ունին, ինչ որ զոդվածի մեջ տեղի, ժամանակի, բաղդատության և հիմունքի ու զիջական, մասամբ և վերադիր խոսքերը գլխավոր խոսքի նկատմամբ. ուստի կարելի է ամեն այս տեսակի համադասական կապակցություն արտահայտել նաև զոդվածով, այսինքն գլխավոր և երկրորդական խոսքերով։ Համադասական կապակցությունը գերադասվում է այն ժամանակ, երբ տրամաբանորեն ստորադաս խոսքի բովանդակությունն առանձնապես շշեռվում է իբրև մի ինքնուրույն մտածություն։ Օրինակ՝ Մենք երեկ գնացինք թատրոն, որտեղ էր և մեր բարեկամը.— Մենք երեկ գնացինք թատրոն. այնտեղ էր և մեր բարեկամը։ Նա հենց նոր էր իր աշխատանքը վերջացրել. երբ ես մոտեցա նրան.—Նա հենց նոր էր իր աշխատանքը վերջացրել. այդ ժամանակ ես մոտեցա նրան։ Ինչպես անձրևին փոխանակում է փայլուն արևը, ցրտին՝ տաքությունը, նույնպես և մարդուս կյանքի մեջ իրար հաջորդում են լացն ու ծիծաղը, երկյուղն ու հույսը.— Անձրևին փոխանակում է փայլուն արևը, ցրտին՝ տաքությունը. այսպես և մարդուս կյանքի մեջ իրար հաջորդում են լացն ու ծիծաղը, երկյուղն ու հույսը։ Որովհետև դու քո հանցանքդ խոստովանեցիր, ուստի ներում եմ քեզ.— Դու քո հանցանքդ խոստովանեցիր. ուստի ներում եմ քեզ։ Ես եկա ձեզ մոտ, որպեսզի ձեզ օգնեմ։—Ես ուզում էի ձեզ օգնել. դրա համար ես եկա ձեզ մոտ։ Թեպետ և*

դու քո հանցանքդ խոստովանեցիր. բայց ես չեմ ներում քեզ.— Դու քո հանցանքդ խոստովանեցիր, բայց ես չեմ ներում քեզ։— Մեկնական խոսքերի համար տե՛ս § 308 ծան.։

ԲԱԶՄԱԲԱՐԴ ԽՈՍՔԵՐ ԵՎ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

317. *Բազմաբարդ խոսքերը կազմվում են երկուսից ավելի պարզ խոսքերից, որոնք բազմազան ձևերով կապակցվելով իրար հետ՝ մի ամբողջություն են առաջ բերում։ Կարևոր ձևերն են՝*

I. Համադասությունը *բազմաբարդ է լինում՝*

1. Երբ կազմվում է երկուսից ավելի համադաս պարզ անկախ խոսքերից։ Այսպես՝ բաղհյուսական կապակցության մեջ.

Ամպերը դանդաղ ուղտերի նման
Նոր են ջուր խմած՝ ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Ջաթինդաղ լեռան
Նոր է արևը պռունգը հանում.
Գյուղում աղմուկով իրար են անցնում
Կոեր ծայրերին կանայք հավաքված.
Տղերքը դեպի քարափն են վազում
Հրացանների կիսերից բռնած (Հովհ. Թում.)։

*2. Երբ համադաս խոսքերից մեկը կամ մի քանիսը կամ ամեն մեկը ինքը բարդ է, կազմված լինելով՝ ա) երկու կամ ավելի համադաս խոսքերից և բ) մի գլխավոր և մի կամ ավելի երկրորդական խոսքերից, որոնք իրենց կողմից նույնպես կարող են երկրորդ կարգի երկրորդական խոսքեր ունենալ (տե՛ս § 254)։ Օրինակ՝**

Աշխատող ձեռքը, պարոններ, չի պտրիլ երբեք վարդալիր պարտեզ,=այլ կերթա այնտեղ, ուր հողն անմշակ է | և դաշտերը խոպան. ||Նա յուր քրտինքը կթափե այդ հողում, որպեսզի ապագայում մխիթարվի այն մտքով, թե ինքն իրավամբ կրում է արարչի պատկերը. | վասնզի կարողացավ «ինչն ստեղծել ոչնչից»։

Շատերը սկսել են գործել ամենաանհապաղ պայմաններում, շարունակ արգելքների հանդիպելով. || բայց որովհետև ունեցել են հաստատուն կամք, | որովհետև անկեղծորեն սիրել են ժողովուրդը, ուստի և հաղթել են ամեն արգելքների = և ստեղծել աշխարհում հոյակապ գործեր (Մուր.)։

II. Ստորադասությունը *բազմաբարդ է լինում՝*

Ա. Երբ գլխավոր խոսքն ունի երկու և ավելի երկրորդական խոսքեր, որոնք կարող են վերաբերել՝

---

* *Համադասության գլխավոր մասերը նշանակված են || ձևով, երկրորդական համադաս մասերը՝ = ձևով, համաստորադաս խոսքերը | ձևով, իսկ երկրորդական (ստորադաս) խոսքերի կապակցական բառերը շղատառով են նշանակված։*

1. Գլխավոր խոսքի տարբեր մասերին. օրինակ՝ Տունն, ուր նա մտավ տան տիրոջ առաջնորդությամբ, մի տարօրինակ շենք էր, որի նմանը նա չէր տեսած ոչ մի տեղ (Մուր.)։ Երբ գյուղի վերին ծայրը հասա, արևի առաջին ճառագայթներն ընկան մոտիկ բլրի վրա, որ ծածկված էր գեղեցիկ անտառակով (Մուր.)։

2. Գլխավոր խոսքի միևնույն մասին, այն էլ՝

ա) Իրրև տարբեր տեսակի երկրորդական խոսքեր. օրինակ՝ Երբ հասա գյուղը, անմիջապես դիմեցի քահանայի տունը, որպեսզի կատարված դեպքի մասին տեղեկություն հարցնեմ։

բ) Իրրև նույն տեսակի երկրորդական խոսքեր կամ համաստորադաս խոսքեր (տե՛ս § 251. 2). օրինակ՝ Նա ինձ հայտնեց, թե միայն եղբայրը գիտե իր մտադրությունը, իսկ հայրն այդ մասին տեղեկություն չունի։— Մույդ կապտագույն մի սփոռոց, որ բավական մաքուր էր, բայց որն յուր գույնի ու հնության պատճառով կեղտոտ երևաց հյուրին, նա փռեց տախտակի վրա (Մուր.)։

Բ. Երբ երկրորդական խոսքերն ևս իրենց կողմից, ինչպես մի գլխավոր խոսք, ունին երկրորդական խոսքեր վերևում դրած ձևերով,— երկրորդ կարգի երկրորդական խոսքեր և այլն (տե՛ս § 254)։ Օրինակ՝ հետևյալ համադաս խոսքերից երկրորդի մեջ կան հինգ երկրորդական խոսքեր, որոնցից վերջինները երրորդ կարգի են. բացի այդ՝ կան նաև երկու համաստորադաս խոսքեր։

Երկար չտևեց ճանապարհորդությունը, թեպետ (1) կամաոյանը կցանկանար, որ (2) մի քիչ երկարեր։ () || Որովհետև յուր նոր թամբի և աշխույժ ձիու վրա նա այնքան էր իրեն երջանիկ զգում=և փայլուն հրացանը, որ (1) ուսից կախած էր, այնպիսի մի հարգարժան առավելություն էր տալիս իրեն, որ (1) նրան թվում էր, թե (2) այդպիսի տրամադրությամբ ու պատրաստությամբ ուղևորություն կատարած ժամանակ՝ ինքն հոգվով ու սրտով ավելի է «մեծանում», քան թե (3) էր իսկապես, | կամ ընդունակ դառնում կատարելու «մեծ գործեր», որոնց (3) մասին նա առաջ այնքան շատ երազում էր, | իսկ այժմ վախենում մինչև անգամ մտածել (Մուր.)։

Սան. Այսպիսի բազմաբարդ խոսքերով ասացվածը գանգաղանում և ծանրանում է և, եթե հաջորդական ստորադաս խոսքերի թիվը շատ է, նույնիսկ թուլանում ու մթնանում է. որովհետև երկրորդական խոսքերը հետզհետե հեռանալով գլխավորից՝ իրենց դիրքով արգեն աստիճանաբար աննշան են դառնում, և մյուս կողմից ընթերցողը դժվարանում է նրանց հարաբերությունն ու ամբողջությունն ըմբռնել։ Առանձնապես տեղեկալի է լինում ասացվածը, երբ հաջորդական ստորադաս խոսքերը լինում են որ հարաբերականով վերադիրներ։ Պետք չէ մոռանալ, որ ասացվածի էական հատկությունը պիտի լինի պարզությունը, թեթևությունն ու բացահայտությունը. ուստի գերադասելի են համեմատաբար կարճ ասացվածները, իսկ երկար բազմաբարդ ասացվածներն այնպես պետք է կազմված լինին, որ ամբողջությունը հեշտ և ճիշտ հասկացվի։ Բացի այդ՝ երկար ասացվածները պետք է որոշ չափով գեղեցիկ ու ներդաշնակ լինին, ունենան, այսպես ասած, կշիռ կամ կշռական ներդաշնակություն, որ առաջանում է մասերի մեջ որոշ համաչափություն կամ հավասարակշռություն պահելուց։

318. *Բազմաբարդ խոսքերի մի առանձին տեսակն է* **պարբերությը.** *դա խոսքերի մի ամբողջական գեղեցիկ միություն է, որի մասերը արվեստավոր կերպով այնպես են կապակցվում իրար հետ, որ մի հատ գլխավոր միտքը, որ զարգանում է ամբողջի մեջ, մինչև վերջն առկախ է մնում։*

Պարբերության էական պահանջներն են՝

1. Պարբերությը պետք է կազմված լինի երկու գլխավոր մասից, *և այս մասերն այնպես պետք է լինին կամ այնպես դասավորված, որ մեկմեկու համար անհրաժեշտ լինին և իրար լրացնելով վերջում մի՛ լիակատար միտք և խոսքի մի ամբողջություն առաջ բերեն։ Մասերի այս փոխադարձ անհրաժեշտությունն արտահայտված պիտի լինի ա-* ռաջին մասի *մեջ, որ իր ձևով և դրությամբ պիտի ակնարկի երկրորդ մասին, իբրև իր էական լրացմանը։*

2. Պարբերության այսպիսի կազմության պատճառով՝ երեք, չորս և ավելի հավելական խոսքերի շարքը, ինչպես օրինակ, § 317. I, 1 բերված հատվածը Թումանյանից, չի կարող պարբերություն համարվել, քանի որ դրա մեջ ասացվածի միտքն առկախ չի մնում, և առաջին մասը չի ակնարկում և պահանջում մյուսները։ Համադասությունից պարբերություն կարող են կազմել միայն ներհակական և մակաբերական կապակցությունները, որոնք երկու մասից են բաղկանում, ինչպես և հավելական կապակցությունից ոչ միայն—այլև շաղկապով կազմվածները։ Ստորադասությունից այն բոլոր զոդվածները, որոնց մեջ գլխավոր խոսքը երկրորդականից առաջ է դրված, ունին պարբերության պահանջած շենքը. որովհետև դրանց մեջ կա ասացվածի երկու մասերի ներքին և անհրաժեշտ հարաբերությունը, որ արտահայտվում է շաղկապներով, և երկրորդական խոսքի մեջ առկախ է մնում ամբողջի իմաստը, որ լրանում է վերջադաս գլխավոր խոսքով։

Այսպես ուրեմն կան համադասական և ստորադասական պարբերություններ։ Համադասական պարբերությները նայելով երկու գլխավոր մասերի հարաբերությանը՝ լինում են՝ մակաբերական, ժխտական և այլն։ Ստորադասական պարբերությների մեջ առաջին մասը կարող է երկրորդ *մասի նկատմամբ լինել՝ ենթակա, խնդիր կամ պարագաներ, վերջիններս էլ տեղի, ժամանակի և այլն. ուստի նայելով առաջին մասի հարաբերությանը երկրորդ մասի հետ՝ ստորադասական պարբերությները կարող են լինել՝ տեղի, ժամանակի, բաղդատության, հիմունքի և այլն։*

3. Պարբերությ, ընդարձակ մտքով, կարող է համարվել ամեն բարդ խոսք, որի մասերն ունին պահանջված արվեստավոր կազմությունը. օրինակ՝ «Այդ տեղն, արդարև, բանաստեղծական գեղավայր էր. բայց դուրկ չէր նաև գլուխներ թոցնելու հարմարությունից» (Մուր.)։ Բայց այսպիսի փոքր ծավալով ասացվածները սովորաբար պարբերություն չեն համարվում, այլ միայն այնպիսի բարդ խոսքերը, որոնց գլխավոր մասերն իրենք ևս բարդ են լինում. օրինակ սովորական ա-

մենափոքր պարբերույթ է հետևյալը. «Արդարև կան ցավեր, որ չպետք է մոռանալ. բայց ո՜րքան շատ են և ա՜յն վշտերը, որ եթե չմոռանայինք, կյանքը մեզ համար կդառնար դժոխք» (Մուր.)։

Պարբերույթի ընդարձակ ծավալը նրանից է առաջանում, որ գլխավոր մասերը մի մի կամ ավելի թվով երկրորդական խոսքերով դառնում են զոդված, կամ թե գլխավոր մասերից մեկը կամ մյուսը կամ երկուսն ևս բաղկանում են համանման կազմություն ունեցող համադաս մասերից, որոնք ասվում են անդամներ։ Այս անդամների թվին նայելով՝ պարբերույթը կոչվում է **երկանդամ**, **եռանդամ**, **քառանդամ**, **հինգանդամի** *և այլն. բայց միշտ էլ ամբողջ պարբերույթը յուր հիմնական ձևով ունի* **երկու** *գլխավոր մաս։*

Պարբերույթն ըստ այսմ երկանդամ է, երբ երկու գլխավոր մասերից յուրաքանչյուրը մի մի զոդված են. **եռանդամ** *է, երբ առաջին մասը զոդված է, իսկ երկրորդ մասը կազմված է երկու համադաս զոդվածներից, կամ ընդհակառակն առաջին մասն ունի երկու համադաս զոդված, իսկ երկրորդ մասը կազմված է մի զոդվածից կամ մի համադասությունից.* **քառանդամ** *է, երբ գլխավոր մասերից յուրաքանչյուրըն երկու անդամից է կազմված, կամ մեկն երեք անդամ ունի, մյուսը՝ միայն մեկ և այլն։*

4. Պարբերույթի մասերի և անդամների փոխադարձ հարաբերությունը հիմնված է նրանց տրամաբանական և շարահյուսական կապակցության վրա. բայց կատարյալ և գեղեցիկ պարբերույթի մեջ այդ հարաբերությունը աչքի պիտի ընկնի նաև ներդաշնակ ու կշռական չենքով, որ և հաճելի տպավորություն է թողնում։ Դրա համար պետք է անդամները որոշ համաչափություն ունենան իրենց ծավալով. իսկ գլխավոր մասերի ծավալը պետք է հարկավ համեմատ լինի իրենց բովանդակության։ Այսպիսի արվեստավորությամբ կազմված պարբերույթի մեջ, կարդալու ժամանակ, ձայնն առաջին մասի սկզբում ցածրից սկսելով՝ հետզհետե բարձրանում է և ապա դարձյալ հետզհետե իջնում, մինչև որ վերջում հանդստացնող ավարտի տպավորություն է թողնում։

319. *Պարբերույթը հատուկ է առավելապես վսեմ, հանդիսավոր խոսվածքին ու ճառերին։ Սովորական գրվածքներին, լինին գիտական թե առօրյա կյանքի վերաբերյալ հոդվածներ ու նամակներ, պարբերական ոճը խորթ է. այսպիսի գրվածքների մեջ, որոնց համար պահանջվում է ամենից առաջ պարզություն ու ճշտություն, գործ են ածվում կարճ ասացվածներ։ Գեղարվեստական երկերի մեջ սակայն գերադասելի է փոփոխակի գործածել երկար ու կարճ ասացվածներ, պարզ ու բարդ խոսքեր, լինին վերջիններս իբրև պարբերույթ կազմված, թե ոչ։*

Մեր բանաստեղծներից օրինակելի պարբերույթներ կազմում է Հ. Հովհաննիսյանը, որից և ներքևում դրվում են մի քանիսը։*

* *Պարբերույթի գլխավոր մասերը նշանակված են || ձևով, իսկ համադաս անդամները՝ = ձևով։*

1. ԳԱՅՄԱՆԱԿԱՆ

(Երկանդամ)

Թե ոգևորվել կարող ես կրկին,=
Թե կարող ես դեռ կրակվիլ վշտից,—||
Սի՛րտ իմ չարատանջ, այս սուգն ահագին
Հերիք է, որ դու պատռվիս ցավից։

2. ԱՌԱՋԱԴԱՍ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈՍՔՈՎ

(Երկանդամ)

Երբ ես տեսնում եմ, որ ունայնասեր
Աշխարհը այսօր պսակում է փառքով
Նորան, որին ինքն հետո պիտ ծաղրեր
Նախանձով վառված մի աղքատ հոգվով,—||
Ես կամենում եմ այն կեղծ երեսին
Տալ ճշմարտության սուրբ խոսքն անկաշառ,
Իբր ահեղ փողի որոտ՝ ականջին
Հասցնել մի մեծ, սոսկալի բարբառ՝
Հող էիր, ո՛վ մարդ, հող դառնաս դարձյալ։

3.

(Եռանդամ)

Մինչ շուրջս աշխարհի ունայն հոգսերով
Վխտում է ամբոխն անմիտ ու դատարկ
Ով զվարճանում է առօրյա փառքով,
Մինչ վաղը դարձյալ նա ստրուկ է անարգ.=
Մինչդեռ մրցելով եռում են կրքեր,
Մեկին ստոր անկումն, մյուսին հաղթանակ
Պատրաստել կամին անմաքուր ձեռքեր
Լոկ շահախնդիր մարտի ընդունակ,—||
Ես աշխարհ մոռցած, հեռու ազմուկից
Կանգնած եմ առջևդ, ո՛վ սուրբ Տիրամայր.=
Ականջս ազատ է մարդկանց շշուկից
Սիրտ բարբառդ լսելու համար։

Նաե. *1. Այս պարբերույթի գեղեցկությունը խանգարվում է նրանով, որ սկսված է մինչ բառով փոխանակ մինչդեռ բառով սկսվելու, ինչպես որ է երկրորդ անգամի ըսկզբում. եթե մինչդեռ բառով սկսված լիներ, այն ժամանակ իսկույն պարզ հասկանալի կլիներ, որ չորրորդ տողը մինչ շաղկապով չի հանդիպագրվում առաջին տողին իբրև ստանձին անդամ, այլ՝ մի երկրորդ կարգի երկրորդական խոսք։*

4. ԶԻՋԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱՏՎԱԿԱՆ

(Հինգանդամանի)

Թևաթափ խեղդված եմ ես դաժան վշտից
Ով սիրտս մաշված անմիտ հույսերով.=

Քեպետ մին՝ այսօր խաբված եմ կյանքից,
Կարոտ տեսնելու մի անկեղծ գորով.=
Քեպետ դառնությամբ հոգիս է լցված
Եվ գանգատվում եմ շար բախտիս վերա,
Որ այս աշխարհում ես միշտ հալածված՝
Եվ ոչ մի սփոփանք ինձ համար չկա,—
Բայց դու մի՛ հիշիր իմ դառն վիճակ,=
Խարիր ինձ դարձյալ շքեղ ցնորքով,=
Թե դեռ ինձ համար գարնան արեգակ
Կցոլա պայծառ, գոհար պսակով,
Թե արծաթափայլ ամոքխած լուսին
Գողտրիկ հայացքով դեռ ինձ կժպտի,
Թե ծով-ծով աչերն աննման կուսին
Սիրտս անուշ տենչով դեռ հուզեն պիտի...

Ծան. 2. Ավելի հաչող կլիներ, եթե վերջին խոսքը կապվեր և թե շաղկապով, որով պարբերությիը հանգստացնող ավարտ կստանար։

5. ԱՌԱՋԱԴԱՍ ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՍՔԵՐՈՎ

(Ինճանեդամանի)

Այս դատարկ կյանքի անմիտ խնջույքում,
Ուր աննպատակ անցնում են օրեր.=
Ուր ամեն վառ կիրք, ամեն սուրբ զգացում
Խեղդում են չնչին առօրյա հոգսեր.=
Ուր բաքոսական զեխություններով
Մաշվում է, թոշնում ծաղիկն հասակի.=
Ուր ունայն փառքի սին երազներով
Ջոկվում է քերկրանքն ազատ վիճակի
Երբ ոսկի հորիին տաճարներ կանգնած
Մենք վաճառում ենք և խիղճ և ամոթ,
Եվ նորա համար աստված մոռացած՝
Էլ արդարության չենք քաշում կարոտ.=
Օրը մեր անգգա կուրծքին կախ տալով
Մի ցնորական պատվո բոժոժներ՝
Սիրել ենք տալիս մեզ նենգ զգվանքով
Անարգ ըստրուկի քունոտ շղթաներ,—||
Հոգիս դառնացած, արցունքն աչքերիս,
Ես սլանում եմ մտքով այլ աշխարհ,=
Եվ ա՛յլ պատկերներ ահա առաջիս,=
Ա՛յլ երգի ձայներ ահա ինձ համար։

Ծան. 3. Ավելի հաչող կլիներ, եթե և շաղկապը փոխանակ վերջընթեր խոսքի ըստկրգրում դրվելու՝ դրված լիներ վերջին խոսքից առաջ։ Տե՛ս նախորդ ծանոթությունը։

6. ԳԱՅՄԱՆԱԿԱՆ

(Հինգանդամանի)

Եթե Հայոց աշխարհի աշխարհագրական տեղագրությունն այնպես լիներ, որ երկրի ամայիները պաշտպանված լինեին բնական պատվարներով.=եթե հայերն ունեցած չլի-

նին այնպիսի դրացիներ, որոնք շատ ավելի զորավոր և մեծ ազգ էին, քան հայերը, և շարունակ աշխատում էին Հայաստանն իրենց ձեռքի տակ առնել.=եթե մեր երկրի վրայով անցած չլիներ ամեն մի նշանավոր աշխարհակալ.=վերջապես՝ եթե չլիներ խուժադուժ ազգերի այն ահագին բազմությամբ գաղթականությունը, որ Հայաստանն ավերելով արևելքից անցնում էր դեպի արևմուտք,— || այն ժամանակ Հայոց երկիրը կծաղկեր մի իսաղաղ քաղաքակրթությամբ, որ ի բնե հատուկ է եղել հայոց ազգին։

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

320. *Կետադրության նշանները դրվում են խոսքերի կամ բառերի միջև, մասամբ և բառերի վրա, և արտահայտում են կարևոր դադարները խոսքի մեջ կամ ձայնի ելևէջն ու եղանակավորումը և կամ որևէ կերպ բացահայտում են գրվածքի միտքը։*

Կետադրության նշաններն են՝ ստորակետ (,), բութ (՝), միջակետ (.), վերջակետ (։), գիծ (—), կախման կետեր (...), հարցական նշան (՞), շեշտ (՛), երկար կամ բացագանչական նշան (՜), չակերտ («») և փակագիծ ()։

Սան. *Մի քանի դեպքերում ստորակետի, բութի ու գծի գործածությունները դեռ հաստատուն չեն. շատ անգամ այդ կետերը փոխանակում են իրար։ Ներքևում նշանակված են այս փոխանակություններից միայն էականները։*

321. Ստորակետ *դրվում է՝*

1. Համադաս բառերի կամ խոսքի բազմակի մասերի մեջ, երբ և շաղկապով չեն կապված. օրինակ՝ Առյուծը, վագրը, արջը գազան են։ Նա բարի, զեղեցիկ և հավատարիմ ընկեր է։ Աղքատ, բայց հպարտ մարդ։

Սան. *Վերադիր որակական ածականների մեջ ստորակետ չի դրվում, երբ առաջին ածականը վերաբերում է ոչ թե միայն գոյականին, այլ գոյականին իր ածականով միասին։ Օրինակ՝ Տարբեր նշանակություն ունի գրել՝ մի ահագին, սև արծիվ. մի քարե, սև տուն և մի ահագին սև արծիվ. մի քարե սև տուն. առաջին դեպքում նշանակում է՝ մի արծիվ, որ ահագին և սև է. մի տուն, որ քարե և սև է. իսկ երկրորդ դեպքում՝ մի սև արծիվ, որ ահագին է. մի սև տուն, որ քարե է։*

2. Համադաս խոսքերի մեջ, երբ կարճ ու պարզ են, լինին շաղկապով կապված, թե ոչ։ Օրինակ՝ Առուները խոխոջացին, ծառերն բողբոջ արձակեցին, օդը լի է ձայնով թռչնոց, «Քրիստոս հարյավ ի մեռելոց» (Գ.-Ք.)։ Ես վաղը պիտի գնամ, և դուք մի օրից հետո ինձ կհետևեք։

Միշտ ստորակետով բաժանվում են միավորյալ խոսքի բայերը, ինչպես նաև՝ և, ոչ միայն—այլև, ինչպես—նույնպես և. ոչ թե—այլ. կա՛մ—կամ. թե—թե, թե՞ շաղկապներով կապված համադաս խոսքերը։

ա) Համադաս խոսքերից միավորյալ խոսքի (§ 304. 1. գ.) բայերից վերջինը, ինչպես և խոսքի բազմակի մասերից վերջինը, երբ կապակցված են և (ու) շաղկապով, ստորակետով չեն բաժանվում։ Բայց երբ հաջորդ խոսքի ենթական փոխվում է, կամ և, ու կրկնվում են բոլոր

համադաս խոսքերի կամ խոսքի բազմակի մասերի սկզբում, այս շաղկապներից առաջ ևս դրվում է ստորակետ. օրինակ՝ Աշտարակներից մեկի գլխին նստած է ահագին, սև արծիվը և լուռ նայում է դեպի խորին անդունդը։ Նա նստած է անշարժ, և նրա սրատես աչքերը որոնում են ձորի խորության մեջ ցանկալի որսը (Րաֆֆի)։ Եվ գուր տեղը ես տանջվում եմ, և հուզվում եմ, և դողում, և միմիայն թղթի վրա անմիտ կերպով խազխզում. ինձ ծաղրում են, և ամոթու կարմրում են իմ այտեր (Հովհ.)։

բ) Կամ շաղկապից առաջ ոչ մի կետ չի դրվում, երբ գործ է ածվում բացատրական նշանակությամբ, ինչպես՝ Հրազդան կամ Զանգու (տե՛ս § 313. 1), կամ թե երբ կապում է երկու բառ ոչ այնքան ներհակական իմաստական նշանակությամբ, որքան ցույց տալով երկու բանի մեջ ըստ հաճույս ընտրության. օրինակ՝ Վաղը կամ մյուս օրը կգանք ձեզ մոտ։ Չպետք է ամեն բանի հավատալ, ինչ որ այս կամ այն մարդն ասում է։

3. Գլխավոր և երկրորդական խոսքերի մեջ։ Օրինակ՝ Ինչ որ ցանես, այն կհնձես։ Ես չգիտեի, որ նա եկել է։

ա) Միջադաս երկրորդական խոսքն երկու կողմից ստորակետների մեջ է առնվում. ինչպես՝ Աստված, որ երկինքն ու երկիրը ստեղծել է, խնամում է իր արարածներին։

բ) Երկրորդական խոսքերը գլխավորից սովորաբար բութով են բաժանվում, երբ գլխավոր խոսքի մեջ չկա մի ցուցական, որ ակնարկում է երկրորդական խոսքի իմաստին, և կամ երբ երկրորդական խոսքը գլխավորի հետ կապակցվում է առանց ստորադասական շաղկապի. օրինակ՝ Ով տեսավ՝ զարմացավ.— Արա՝ ինչ որ կուզես, Ասեք՝ ի՛նչ կանի ջուրն ընկածը։— Ույժ էլ չունիմ ես՝ նոցա պաշտպանեմ.— Դու մեկ դիր ականջ՝ ի՛նչպես ձայն կուտամ իմ համատարած ցրված հայերուն (Գ.-Ք.)։ Համմտ. §§ 260. 1, 269։

Նաե. *Ստորադասական որ, թե շաղկապներից առաջ ստորակետ չի դրվում իբավ որ, իսկապես որ, ճիշտ որ, չնայելով որ, կարծեմ թե, կարծես թե, նայելով թե և նման կապակցությունների մեջ։*

4. Ստադաս ածական, ինչպես և գործիական ու բացառական վերադիրներից առաջ և հետո, որոնք ունին մի երկրորդական խոսքի նշանակություն։ Օրինակ՝ Թշնամին, անգոհ մեր բերած ծանր զոհերին, իր լիրբ նզոված ձեռքը կարկառեց... (Գ.-Ք.)։ Քաղցր է շնչել լեռնային օդը, տոգորված ծաղիկների անուշահոտությամբ (Րաֆֆի)։ Օրինակներ տե՛ս § 208. 1—4։

Նաե. *Երբեմն այսպիսի ետադաս վերադիրներն իրենց լրացյալից բաժանվում են բութով կամ գծով, մանավանդ երբ ընգարձակ են. ինչպես՝ Բայց նա՝ միշտ հպարտ՝ մըննաց հաստատուն (Գ.-Ք.— Բայց նա, որ հպարտ էր, մնաց հաստատուն)։ Ուրիշ օրինակներ տե՛ս նույն § 208։—Վարդան—զորավար իր ազգեն ընտրած, արյան դաշտի մեջ քաջ հանդիսացած, սրտացավ հայոց դառը վիճակին, ոտք հանեց նոցա ընդդեմ գոռ պարսկին (Գ.-Ք.)։*

5. Միջանկյալ բառերից և միջանկյալ խոսքերից առաջ և հետո. օրինակ՝ Ձեր հայրը, հավատացած եղեք, շուտով պիտի վերադառնա։ Օրինակներ տե՛ս §§ 258 և 259։

6. Կոչական անուններից առաջ և հետո, երբ խոսքի մեջ են մրտնում. իսկ երբ խոսքի սկզբում են և կամ վերջը, միայն ետևից կամ առաջից է ստորակետ դրվում։ Օրինակ՝ Միայն, գրագետ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բախտին։ Սի՛րելիք, օգնության հասեք։

322. Բութը *ցույց է տալիս՝ զեղչում, ուղղակի խոսք ու վկայության, թվարկության, բացատրության ու բացահայտության. ուստի բութ դրվում է՝*

1. Հնամադաս խոսքերից երկրորդի միջին, երբ մի բառ, գլխավորապես բայը, զեղչվում է. օրինակ՝ Գայլն ամպ օր կուզե, գողը՝ մութ պիշեր։ Երևույթներ առաջ բերելը բնության գործն է, երևույթների քննությունը՝ իմացականության (Ա. Այտն.)։

Ծան. Երբեմն բութի փոխանակ այս դեպքում դնում են գիծ. օրինակ՝ Մենք խաղաղություն փրկչեն սովրեցանք, նեղիչին ներել—Ավետարանեն (Գ.-Ք.)։

Բութի գործածությունը գլխավոր և երկրորդական խոսքի մեջ տե՛ս § 321. 3. բ.։

2. Ուղղակի խոսքերից առաջ, մանավանդ երբ ասել, հայտնել *բայերը ղեղչված են, կապված լինին թե շաղկապով, թե առանց շաղկապի։ Ուղղակի խոսքն այս դեպքում սովորաբար չակերտների մեջ չի դրվում։ Օրինակ՝ Իմ բարեկամն ասում էր՝ Շատ ցավում եմ, որ չեմ կարող քեզ օգնել։ Առածն ասում է՝ Ծառից ծառատակը հով կերևա։ Չգիտես այն առածը, թե՝ Խորամանկ աղվեսն երկու ոտքով է ընկել թակարդը։ Եկան, թե՝ Հայրդ եկել է շուտ արա, է՛կ։ Տե՛ս օրինակներ § 276։*

Ծան. Անտեղի է թե շաղկապից հետո բութ դնել, երբ ետևից գալիս է անուղղակի խոսք. ինչպես՝ Դու կարծեցիր թե՝ ոսկին մեծ բան է (Գ.-Ք.)։— Պետք է գրել՝ Դու կարծեցիր, թե ոսկին մեծ բան է։ Բայց երբ առանց թե շաղկապի է, պետք է երկու խոսքը բութով բաժանել ըստ § 321. 3. բ. այսպես՝ Դու կարծեցիր՝ ոսկին մեծ բան է։

3. Թվարկություն ցույց տվող նախ, ապա, հետո, առաջին, երկրորդ, երրորդ *և այլ բառերից հետո, ինչպես և առհասարակ մի ընդհանուր գաղափարի մեջ մտնող մասնավոր առարկաները թվարկելիս. օրինակ՝ Նախ՝ անմիղությունը մեր խոստովանեց, ապա՝ չարերուն մեզ ի խաչ մատնեց (Գ.-Ք.)։ Աշխարհի հինգ մայր ցամաքներն են՝ Եվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Ավստրալիա։ Երասխի մեջ թափվում են հետևյալ վտակները՝ Մուրց, Ախուրյան, Մեծամոր, Հրազդան և այլն։ Ներսիսյան դարու բանաստեղծներն են՝ Շնորհալի, Հովհաննես Սարկավագ, Գրիգոր Պահլավունի, Գրիգոր Տղա (Պալ.)։ Ուրիշ օրինակներ տե՛ս § 307. 3։*

4. *Մեկնական այսլնմն, այն է, ինչպես (են), nr է, nr են, օրինակ բառերից հետո, ինչպես և առհասարակ այն խոսքերրից կամ բառերից, որոնցով բացատրվում է նախորդ խոսքը կամ նրա մեջ եղած մի բառ. օրինակ՝ Մի քանի նախդիրներ դրվում են հայցականի հետ, ինչպես՝ ի, առ, մինչև և այլն։ Ենդրի կամ առարկայի նկատմամբ բայերը բաժանվում են երկու տեսակի՝ ենթակայական և առարկայական։ Հայ պատմագրությունը չարունակում է մինչև վերջը հավատարիմ մնալ յուր գլխավոր սկզբունքներին, այն է՝ ճշմարտասիրությանն և ժամանակագրական ճշտությանը (Պալ.)։— Ուրիշ օրինակներ § 266.3, § 308։*

5. *Բազմակի բացահայտիչներից առաջ, որոնց թվարկությամբ բացատրվում է բացահայտյալը, օրինակ՝ Հայաստանի արգավանդ դաշտերը տարեցտարի առատությամբ տալիս էին բազմատեսակ բերքեր՝ ցորեն, գարի, բրինձ. հովիտներն էլ սնուցանում էին անհամար ընտանի կենդանիներ՝ ձի, ջորի, գոմեշ, այծ, եզ ու կով.— Թոմա Արծրունին պատմում է Արծրունյաց առաջին թագավոր Գադիկի բարեմասնությունները՝ քաջությունը, իմաստությունը և աշխարհաշինությունը.— Կիլիկիայի բնակիչների մեծ մասը հայ էին, իսկ մնացած մասը բաղկանում էր երկրի հին բնակիչներից՝ հույներից, ասորիներից և մահմեդականներից (Պալ.)։*

Ծան. Երբեմն այսպիսի գեպքերում, ինչպես և բացատրական խոսքերից կամ բառերից առաջ միջակետ, ստորակետ ու գիծ, կամ լոկ գիծ են դնում. օրինակ՝ Երեք ընդարձակ քերթված թողեց Շնորհալին. (՝) Ոգեսիոյ ողբ, Յիսուս որդի... Վեհեռակեցիք Կիլիկիայում իրավունք ունեին պարապելու այևայլ բերքերի արտադրությամբ,— այգեգործությամբ, բամբակի, ձիթենու ու թթենու մշակությամբ... (Պալ.)։ Հիշեց մանկության նա յուր օրերը—սիրելի ծնողք, եղբարք, ազգականք (Գ.-Ք.)։ Հայոց նախարարները երկու գլխավոր դասի էին բաժանվում. ավագ և կրտսեր նախարարներ (Պալ.)։

6. *Բացահայտչի առաջից և, եթե խոսքի մեջ է ընկած, նաև ետևից. օրինակ՝ Արտավազդը՝ Տիգրան Բ-ի որդին՝ գերի տարվեցավ Եգիպտոս։*

ա) Հաճախ խոսքի մեջ մտած բացահայտիչը, երբ մի կամ երկու բառ է, բացահայտյալից բաժանվում է բութով, իսկ ետևից ոչ մի կետ չի դրվում. օրինակ՝ Տեր Հոր մեծ որդին՝ Հակոբը տանը չէր։ Սանատրուկի որդու՝ Արտաշես մանուկի կյանքն ազատողը մի կին էր (Կ. Կոստ.)։

բ) Բութի փոխանակ բացահայտչի համար գործ է ածվում և ստորակետ. օրինակ՝ Վաղարշակը, հայոց առաջին Արշակունի թագավորը, քաղաքական կարգեր տվավ հայերին (Պալ.)։— Բացահայտչի օրինակներ տե՛ս § 41. 2, §§ 42, 178, 179. 1—8։

Ծան. Երբեմն բացահայտիչը բացահայտյալից բաժանում են գծով, իսկ ետևից ստորակետ կամ բութ են դնում. օրինակ՝ Ձեռքը բաժակ—նշան արյան Քրիստոսի.—Մեր լեզուն, մեր ծեսք—նշանք ազգության, երբեք չհիշվին ի մեջ մարդկության.— Երուսաղեմ—փառք հնության՝ լերանց վրա հանգչում էր (Գ.-Ք.)։

7. Բութով բաժանվում են դերբայ խնդիրները, երբ ունին մի քանի լրացումներ։ Օրինակ՝ Ալգն անտարբերությամբ ականատես եղավ Արշակունյաց գահի անկմանը՝ առանց յուր կողմից մի ընդդիմություն ցույց տալու.— Հայ ժողովրդին Պարսից երկրի հետ կապելու և յուր նպատակներին ծառայեցնելու համար՝ Շահաբասն ամեն տեսակ արտոնություններ տվեց հայերին (Պալ.)։— Ուրիշ օրինակներ տե՛ս §§ 59, 60։

Նաե. երբեմն այս դեպքում բութի փոխանակ դնում են ստորակետ. օրինակ՝ Բայց չնայելով այս խորամանկ վարմունքին, (՝) հայրերը չէին կարող մոռանալ իրանց հայրենիքը (Պալ.)։

8. Բութ դրվում է մի բառի վրա և լոկ բացահայտության համար, երբ պետք է ցույց տալ, որ տրոհված բառը ոչ թե հաջորդ բառին է պատկանում, այլ նրանից հետո եկող բառերին, կամ իրենից առաջ ընկնող բառերին։ Օրինակ՝ Տրդատ թագավորի՝ պարսիկների դեմ վարած պատերազմները։

823. Միջակետ դրվում է՝

1. Պարզ համադաս խոսքերի մեջ, երբ իրենց բովանդակությամբ թեև բավական մոտիկ են միմյանց, բայց երկար են և որոշ ինքնուրույնություն ունին։ Երբեմն կարճ համադաս խոսքերն ևս բաժանվում են միջակետով։ Օրինակ՝ Օրն էր տարաժամ. մարտիկք դադարած. փողը հնչեցին՝ մարտին կատարած. մութը տարածվեց. աստեղք ցոլացին. երկնից ցողն իջավ արնալից գետնին. մթնասեր թռչունք ձայներով խռպոտ գուշակում էին մարդկանց սուգ ու բոթ (Գ.-Ք.)։

Շատ անգամ պարզ համադաս խոսքերի մեջ ստորակետ, միջակետ կամ վերջակետ դնելը կախված է գրողի մտածությունից։ Ընդհանրապես միջակետ է դրվում, երբ թեև համադաս խոսքերը բավական երկար են, բայց վերջակետը խիստ շատ կլինի, իսկ ստորակետը՝ խիստ քիչ։ Վերջակետ է դրվում, երբ ցանկացվում է համադաս խոսքերին կատարյալ ինքնուրույնություն տալ (տե՛ս § 304. 1—2)։ Ստորակետ է դրվում, երբ համադաս խոսքերը կարճ կարճ են։

2. Բարդ համադաս խոսքերի մեջ, որոնք ունին երկրորդական խոսքեր. օրինակ՝ Ցածր նստի՛ր, որ բարձրանաս. բարձր մի՛ նստիր, որ ցածրանաս։

3. Համաստորադաս խոսքերի մեջ, երբ թվով շատ են և կամ ունին երկրորդական խոսքեր։ Օրինակները տե՛ս § 319. 3—6։

4. Բազմակի ենթակաների և այլն մեջ, երբ ունին երկրորդական խոսքեր։ Օրինակ՝ Թշնամիների հարձակմունքները, որ ամենայն տարի կրկնվում էին. սովը, որ մեծամեծ կոտորածներ էր անում. ամեն տեսակ արհավիրքներն ու տառապանքը, որոնց հետևանքն է ահագին խմբերով գաղթականությունը,— այս ամենը Հայաստանը զրկեցին և զրկում են բազմամարդությունից։

5. Միավորյալ խոսքի բայերի մեջ, երբ ունին երկրորդական խոսքեր, որոնք ստորակետերով են բաժանվում։ Օրինակ՝ Տրդատը վերականգնեց հայոց թագավորությունը, որ իր հոր՝ Խոսրով Մեծի սպանվելուց հետո պարսից ձեռն էր ընկել. վրեժխնդիր եղավ իր հոր մահվանը՝ ավերելով Պարսկաստանի մինչև անգամ ներքին նահանգները. հրովարտակներով մի քանի անգամ հրամայեց, որ հայ ժողովուրդը ջերմեռանդությամբ պաշտե իր աստվածներին, որոնց պաշտամունքն արգելն թուլացել էր Հայոց աշխարհում. սուրբ Գրիգորին Խոր-վիրապը ձգել տվավ, երբ իմացավ, որ նա իր հորն սպանող Անագի որդին է և քրիստոնյա է. վերջը՝ ս. Գրիգորին վիրապից հանելով՝ նրա ձեռքով մկրտվեցավ՝ դառնալով բարեպաշտ քրիստոնյա, ինչպես և բարեպաշտ կռապաշտ էր, և ապա կործաննց բոլոր մեհյաններն ու կռատները՝ նրանց տեղը Քրիստոսի սուրբ խաչը կանգնեցնելով։

6. Ուղղակի խոսքից առաջ, երբ վերջինս գալիս է ասել և այլն բայերից հետո առանց շաղկապի։ Օրինակ՝ Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց. «Իմ մեղաց համար Աստված ինձ պատժեց» (Գ.-Ք.)։

7. Վերնագիրներից հետո։

324. Վերջակետ *դրվում է ասացվածքի վերջում, երբ խոսքն ամբողջացած և վերջացած է լինում (տե՛ս § 250)։ Վերջակետով մի խոսք կատարելապես բաժանվում է մյուսից։ Շատ անգամ վերջակետով բաժանվում են իրար հաջորդող կարճ կարճ խոսքեր կամ համատառ խոսքեր։ Օրինակ՝ Երբեմն լեռնային գագաթից պոկվում է, ցած է գլորվում մի ահագին քարաժայռ։ Նա կտրում է գետի ճանապարհը։ Ջրերի ընթացքը կանգ է առնում։ Այդ միջոցին կատաղած թարթառը ուռչում է, ուռչում է և հետզհետե աճելով՝ հավաքում է իր ուժերը (Րաֆֆի)։*

325. Գիծ կամ անջատման գիծ *դրվում է՝*

1. Վերջակետից հետո, երբ մի շարք մտածություններ վերջանում և հաջորդ խոսքով մի նոր շարք է սկսում, կամ ընդհանրապես անցում է լինում մի նոր առարկայի մասին խոսելու։ Այսպիսի դեպքում սովորաբար նոր տողից են սկսում, կամ տողագլուխ են կազմում։

2. Վերջակետից հետո երկու անկախ խոսքերի մեջ, որոնք որևէ նպատակի համար (օրինակ՝ քերականության օրինակների մեջ) առանց ներքին կապակցության հաջորդում են իրար։

3. Նույն խոսքի կամ զրույցի միջին, երբ խանգարվում է խոսքի սովորական կարգը կամ շարադասությունը, նույնպես գործողության արագություն կամ անակնկալ եզրակացություն կամ սուր հակադրության ցույց տալու համար։ Օրինակ՝ Ականջ եմ դնում — մի ձայն անմեկին խոսում է ինձ հետ։ Նայում եմ առաջ— երկու ճանապարհ բաց է իմ դիմաց։— Հոգիս վկայեց — դու իմ հրնշտակն ես։ Ես — ապուշ մատնիչ, բաժինս — տանջանք (Հ. Հովհ.)։ Լեզուն — մահաբույն ուսացին մարդիկ, ճարտար խոսվածքը — չարության դործիք։— Քեզ սիրելու

աշխարհը և սիրեց — իրոք։ Երգ սիրում են — հոգևոր, խաղ սիրում են,— բայց անմեղ։ Տես այս խղճուկ իմ կտրճիս—առույգ, պարկեշտ ու գլուխն, բայց հորական փող չունենալով՝ հաճելի չէ ամենուն։ Հաղիվհազ ոտքը դրել էր շեմքին — «Ողջույն քեզ, Սահակ», ասաց դիսակին։ Իմ անունը, իմ հիշատակ — կկորչին։ Վարդ էր տեսածդ, վարդ էիր երգում — փշից, տատասկից միշտ հեռի փախչում։ Աստված, սըրտով որ բարի ես, մենք վար, դուն վեր — շատ հեռի ես (Գ.-Ք.)։ Մարդուս ամենաբարձր նպատակն է — մարդ լինել։ Ուսանող Ա.-ն երեք տարի Պետերբուրգում շատ — կերել ու խմել է և — լավ մարսել։

4. Միջանկյալ բառերի կամ խոսքերի առաջից և ետևից՝ փոխանակ ստորակետի կամ փակագծի։ Օրինակ՝ Մինչ իմ որդիք — ով գիտե — ծարավ, նոթի, անտերունչ, օտար աշխարհ հածում են (Գ.-Ք.)։

326. Ստորակետ ու գիծ *դրվում է՝*

1. Այս, այդ, այն, այս ամենը, այդ ամենը, բոլորը, ահա՛ այս, ահա՛ և այլն բառերի առաջ, երբ դրանցով ամփոփվում են առաջ թված մտքերը կամ առարկաները։ Օրինակ՝ Բառերի կուտակություն, իմաստների հորդություն, բացատրության խրթնություն,— ահա՛ այն հատկությունները, որ երևում են արաբական շրջանի հայ մատենագիրների երկասիրությունների մեջ (Պալ.)։ Նահախ չի իջնում երկնառաք ցողը, նահախ չի ծաղկում սևացած հողը,— այս են պաղատում աչքերը նորա (Գ.-Ք.)։ Տե՛ս նաև § 323. 4։

2. Գլխավոր և իր առաջադաս երկրորդական խոսքի մեջ, երբ երկրորդական խոսքը մեծ է և մանավանդ երբ բարդ լինելով իր մեջ արդեն ունի մի կամ մի քանի ստորակետ, և կամ երբ երկրորդական խոսքը մի քանի միջակետով բաժանված համադաս խոսքերից է կազմված։ Օրինակ՝ երբ որ հողից մարդ դարձա, երբ աստվածանից հարցա, թե ինչ վիճակ ես ուզում,— ասի՝ ուսանողություն (Գ.-Ք.)։ Որովհետև մեր ույժերն ամեն օր սպառում ենք աշխատանքով ու շարժումով, մանավանդ որ այդ աշխատանքն ու շարժումը սասսիկ լարված են և մեր անունդն էլ մենակ բավական չէ մեզ կազդուրելու համար,— ուստի պետք է հանգիստը լրացնի սննդի պակաս թողածը։

Ըստ այսմ ստորակետ ու գծով բաժանվում են միշտ պարբերության երկու գլխավոր մասերը։ Օրինակներ տե՛ս § 319։

Առաջադաս երկրորդական խոսքը, երբ կարճ զրված է, վերջադաս գլխավորից բաժանում են նաև բութով։ Այս դեպքում սովորաբար սակայն ստորակետն է գործածվում։ Օրինակ՝ Երբ որ գնացի նրա մոտ, որպեսզի հետը խոսեմ մեր ձեռնարկության մասին՝ (,) նա ինձ հայտնեց...

327. Գիծը *ոչ միայն ստորակետից, այլև միջակետից ու վերջակետից հետո է դրվում։*

1. Երկու խոսքի մեջ, որոնց երկրորդն առաջինի պատասխանն է, դրվում է ստորակետ ու գիծ կամ միջակետ ու գիծ և կամ վերջակետ ու գիծ։ Օրինակ՝

Ի՞նչ կարող ենք անել,— և ոչինչ։
Ի՞նչ կարող ենք անել.— և ոչինչ։
Ի՞նչ կարող ենք անել։— Եվ ոչինչ։

2. Երբ երկու անձերի խոսակցություն է մեջ բերվում՝ առանց ասաց, պատասխանեց, հարցրեց և նման բառերի, մեկի խոսքը մյուսից բաժանվում է վերջակետով ու գծով. կամ, եթե այսպիսի փոխանակված խոսքերը նոր տողերից են սկսվում, ամեն մի անձի խոսքից առաջ դրվում է գիծ, իսկ ասաց, հարցրեց և այլն բառերը դրվում են ուրիշի խոսքի ետևից. օրինակ՝

— Դուք ա՛յն ըսեք ինձի, ո՛վ սագեր,
Թե դուք երբե՞ք երբեք քաջություն։
— Հապա նախնիքն մեր Հռոմն են ազատեր։
— Շատ լավ, բայց դո՛ւք ի՞նչ եք երեր, այն ըսեք։
— Մե՞նք, մենք ոչինչ։— Ուրեմն ինչո՞ւ պարծենաք (Գ. Այվ.)։

328. Կախման կետեր *դրվում են, երբ խոսքն ընդհատվում է, և դրողի միտքը առկախ կամ թերի է մնում, և կամ երբ պետք է սաստիկ զգացմունք ցույց տալ։ Օրինակ՝ Ես կցանկայի... բայց ինչո՞ւ ցանկամ. դյուրավ չէ գալիս մահը վերահաս (Հ. Հովհ.)։ Ի՞նչ անե՞նք... Ամոթ այսպես ասողին.— Ո՛վ հրաշք... դին իր ձեռքը կարկառեց (Գ.-Ք.)։*

329. Շեշտ *դրվում է այն բառերի վրա, որոնց առանձին ուժ է տրվում. այսպես սովորաբար հրամայական եղանակի բայերի, կոչական անուններ և ձայնարկությունների վրա. օրինակ՝ Ստրկի վիճակը չէ՛ հավերժական։— Ո՛հ, լուսին, լուսին։— Ջարթի՛ր, մանո՛ւկ իմ նագելի (Գ.-Ք.)։*

330. Հարցական նշան *դրվում է այն բառերի վրա, որոնք ուղղակի հարցումն են պարունակում. օրինակ՝ Ո՛վ նազլու խաթուն, ինչո՞ւ ես տրտում, ինչի՞ ես կարոտ, ի՞նչդ է պակաս (Գ.-Ք.)։*

Երկրորդական խոսքի մեջ դրված անուղղակի հարցական բառերի վրա կամ ոչ մի նշան չի դրվում, կամ շեշտ է դրվում։ Օրինակ՝ Տե՛ս՝ ի՛նչպես որդիքս պիտ վազեն ու գան։

331. Երկար կամ բացագանչական նշան *դրվում է, երբ խոսքը բացագանչական եղանակով է արտասանվում և երբ բառը սովորականից ավելի երկարում է։ Օրինակ՝ Պանդո՜ւխտ, հալածյա՛լ, եղբա՛րք, ո՞ւր դիմենք։— Հայո՜ց աշխարհիկ, բերկրության տեղիք, Հայո՜ց բնություն, ա՜խ, հայ մանկտիք, երանի՜ է ձեզ, ո՛վ որդիք փառաց (Գ.-Ք.)։*

332. Չակերտ *դրվում է ուղղակի խոսքի սկզբից ու վերջից, երբեմն, մանավանդ ոտանավորների մեջ, բերված բնագրի ամեն տողի սկզբում։ Օրինակ՝*

Ոսկե թամքով ձին ասաց բեռնած եզան.
«Ես ձին եմ ձիավորին,
«Ոսկի աթոռ եմ թագավորինը։

Եզն պատասխանեց.
«Ես եզն եմ եզնավորին,
«Ոսկե աքառ եմ աբշպարին.
«Ես չդատեմ արտն ու գարին,
«Ագռավները պռիդ տակին կշարվին»։

333. Փակագիծ *դրվում է այնպիսի միջանկյալ խոսքերի կամ բառերի սկզբից և վերջից, որոնք առանձին և ուրույն իմաստ ունին և ամբողջին չեն վերաբերում, կամ շատ երկրորդաբար միայն պարզում են նրա իմաստը։ Օրինակ՝ Ուրացող Վասակը (այսպես է անվանում Նրերան Ծղիշեն) միայն յուր անձի և օգտի համար էր մտածում (Պալ.)։* ***Տե՛ս նաև § 258։***

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Քանի՞ հոլով ունի արևելյան աշխարհաբարը։ Պալասանյանը գրում է. «Հայերեն լեզվի հոլովները յոթն են — Ուղղական, Հայցական, Սեռական, Տրական, Բացառական, Գործիական և Ներգոյական»։ Մենք մեր «Աշխարհաբարի քերականության» մեջ հինգ հոլով ենք դրած՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական. իսկ «Տարրական քերականության» մեջ բացի վերոհիշյալներից և սեռական։ Ճիշտ համարում ենք առաջինը, այսինքն հինգ հոլովով առանց հայցականի և սեռականի։ Եթե «Տարրական քերականության» մեջ վերցրել ենք սեռականը, այդ արել ենք գլխավորապես այն պատճառով, որ մտածել ենք, թե ոչ մի ուսմունք այնպես ավանդապահ չէ, ինչպես քերականությունը,— վարժապետների համար դժվար կլիներ առանց սեռականի տեսնել մի քերականություն, որովհետև ըստ երեվույթին կան սեռականի մնացորդներ հայերենում։ Իսկ հայցականը ոչ մի դեպքում հարկ չկա հոլովների շարքի մեջ մտցնել։*

Տեսնենք այս խնդիրը, որ կարծում ենք հայոց լեզվի վարժապետ-

---

* *Մենք չենք սխալված. այդ մասին լսել ենք մի երկու վարժապետից։ Վերջերս էլ Թիֆլիսից մի հայերենի ուսուցիչ հատկապես գրել էր հետևյալը, որ ավելորդ չի լինիլ դնել այստեղ. «Ինձ թվում է թե կարիք կա Ձեր «Տարրական քերականության» մասին մի բացատրական գրույցի՝ լրագրի կամ դասախոսության միջոցով, որպեսզի ծխական ուսումնարանների ուսուցիչների համար անհասկանալի կամ տարօրինակ չլինին գրքի մեջ եղած մի քանի նորություններ։ Շատերը, որ սովորած են հին քերականություններին, ուղղակի դժվարանում են օր. հինգ հոլով ընդունելու կամ Ձեր բացատրած ստորոգյալը հասկանալու։ Լավ կլիներ, որ օր. Ծննդյան տոներին Թիֆլիսի ուսուցիչների համար այստեղ գրույցներ կազմեիք»...— Գրույցներն անշուշտ պիտանի կլինեին, բայց դրանից առաջ պետք էր իմանալ թե ուսուցիչներն ի՛նչն են դժվարանում ընդունել և ինչո՛ւ։ Դժբախտաբար մեր հրատարակած քերականությունների համար մինչև այժմ չեղան քննադատություններ։ Եղան այո՛ գրախոսություններ, բայց բնավորությամբ այնպիսիք, որ չհամացանք ուրիշների կարծիքը։ Մենք հայոց լեզվի քերականության համար ունինք մի ընդարձակ ուսումնասիրություն, որը հրատարակելուց առաջ ուզում էինք ուրիշների հայացքն իմանալ, որպեսզի թերի չլինի։ Այժմ այստեղ դնում ենք այդ աշխատությունից մեր նամակագրին հետաքրքրած մի կետի, հոլովների մասին։*

ների համար անհետաքրքիր չի լինիլ, քանի որ հայերենի քերականությունն ևս կա մեր դպրոցների ուսման ծրագրի մեջ։

Ի՞նչ է հոլով ասածը, — եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ հոլովական վերջավորություններով։ Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերությունները՝ տեղի, ժամանակի, պատճառի և այլն, որոնց իմաստով՝ անունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ։ Այդ հոլովների մասին սովորեցնել կնշանակե երկու բան սովորեցնել. նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձևերը, և երկրորդ՝ թե ամեն ձև կամ հոլով ի՛նչպիսի և քանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ. ուրիշ խոսքով որո՛նք են այս կամ այն հոլովի գործածությունները, որովհետև ամեն հոլով միայն մի տեսակ հարաբերություն չի ցույց տալիս, այլ մի քանի, երբեմն և շատ։ Հոլովների ուսմունքի այս երկրորդ մասը, կամ ինչպես սովորաբար ասում են, հոլովների կիրառությունը, մտնում է շարահյուսության (սինտաքսիս) մեջ և տեղ չէր կարող գտնել մի «Տարրական քերականության» մեջ, ինչպիսին է մերը։ Մի երկու տեղ միայն մենք այդ մասին հիշատակություն ենք արել, և ներքևում կբացատրենք թե այդ էլ ինչու համար։ Մնում է ուրեմն միայն առաջինը։

Այսպես ուրեմն մի Տարրական քերականությամբ մայրենի լեզվի հոլովը սովորեցնել կնշանակե միայն ուշադրություն դարձնել տալ այն բոլոր ձևերի, կամ ինչպես սովորաբար ասում են, փոփոխությունների վրա, որ կարող են ունենալ հոլովելի բառերը, որը աշխարհաբարում գոյական անունն ու դերանունն են. թե չէ էլ ուրիշ ոչ մի խորհուրդ ու նպատակ չունի երևխային կրկնել տալ՝ քաղաքի, քաղաքից, քաղաքով և այլն։ Մեր «Տարրական քերականության» մեջ հետևելով այս ըսկզբունքին՝ գոյական անվան ուսման մեջ «Անվան հոլովումը» վերնագրի տակ դրել ենք. «Անունները նայելով թե խոսքի մեջ ինչպիսի պաշտոն ունին՝ զանազան ձևերով փոփոխվում են։ Օրինակ՝

Ես գնացի պարտեզ։
Պարտեզի դուռը բաց էր։
Ես դուրս եկա պարտեզից։
Ես անցա պարտեզով։
Պարտեզում շատ ծառեր կային։

Մի անուն հոլովել նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփոխությունները, որ կարող է ունենալ անունը։

Հոլովները հինգ են*, այսինքն ամեն անուն կարող է փոխվել հինգ

* Ուշադրություն պիտի դարձնել, որ անվան հոլովման մասին է խնդիրը, և ոչ թե ընդհանրապես հոլովման մասին։ Այս դեպքում փոքր ինչ տարբեր ձևով կխմբագրվեր այս հատվածը, այն է «անուն» բառի կողքին պիտի ավելանային «և դերանուն» բառե-

ձևով, որ կոչվում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական (եր. 33—34)։ Անվան հոլովներն ուրեմն մենք բացատրել ենք իբրև անվան ձևեր։

Արդ որ կողմը շուռ տանք, մեր անուններն ունին միայն հինգ ձև և ոչ ավելի։ Մեր անունների առաջին ձևն է ուղղական հոլովը, որ յուր կոչումով այն չէ, ինչ որ ուրիշ լեզուների nominatif, именительный = անվանական ասածը. այլ նույն է ինչ որ casus recti, прямой падежь. որի տակ ռուսաց քերականները հասկանում են именительный և звательный (=կոչական) հոլովները. դա անվան ուղիղ, անփոփոխ ձևն է. և ամեն անուն ուղիղ ձևով՝ ուղղական հոլովով է՝ բառիս բուն նշանակությամբ։ Ապա մենք ունինք ուրիշ չորս ձևեր, որոնք թեք հոլով են (casus obliqui, косвенный падежь) և կազմվում են վերջավորություններով՝ բացառականը՝ ից, գործիականը՝ ով, ներգոյականը՝ ում, և մի հոլով, որ՝ մի կողմ թողնելով սեռական կամ տրական կոչման հարցը, ունի յոթ տեսակ կազմություն։ Էլ ուրիշ ոչ մի ձև չկա անունների համար։

Եթե մեր նպատակն է երեխային՝ հոլովելով զգալ տալ յուր խոսած լեզվի մեջ անունների և դերանունների ձևերը, ապա ուրեմն նա պիտի իմանա, որ հայոց լեզվի մեջ գոյական անունները հինգ ձև, որ է հինգ հոլով ունին։ Եվ այս պիտի շեշտվի նրան։ Երեխայի համար հոլովում ասածը մութ ու անհասկանալի է մնում, նա գլխի չի ընկնում թե հոլովել նշանակում է ձևերն ասել, երբ նրան տարբեր անունների տակ կրկնել ենք տալիս նույն ձևերը՝ **ուղղական հաց, կոչական հաց, հայցական հաց, սեռական հացի, տրական հացի,**— և այսպես բոլոր անունները։ Միշտ միայն հինգ ձև ենք ասել տալիս նրան, որովհետև ավելին չկա, բայց ութ անվան տակ։ Ինչո՞ւ։ Ձևաբանության մեջ միայն ձևի հետ պիտի գործ ունենա աշակերտը և ձևերը կրկնելիս գործ չպիտի ունենա այդ ձևերի կիրառության հետ, որ, ինչպես, ասացինք, շարահյուսության նյութն է։ Եվ ի՞նչ է ավելանում աշակերտին, երբ նա ձևերը սովորելիս կրկնում է ուղղական՝ հաց, հայցական՝ հաց։ Արդյոք սովորո՞ւմ է տարբերել հայցականն ուղղականից։ Բնա՛վ ոչ։ Եվ չի էլ կարող այդ լինել, քանի որ **հայցական** հոլով չունինք։

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Կարո՞ղ է լինել մի հոլով առանց իրեն հատուկ հոլովական ձևի։ Եթե գրաբարում ուղղական **տուիճ**, հայցական **տուն** է լինում, կա ուրեմն և հայցական հոլով։ Ռուսերենում արական և չեզոք անունների հայցականը նման է ուղղականին կամ սեռականին, բայց կա և իգա-

---

րը. և ապա թե «հոլովները վեց են, այսինքն անուններն ու դերանունները կարող են փոխվել վեց ձևով, որ կոչվում են՝ ուղղական, սեռական, տրական» և այլն։

կան անունների և ածականների ահագին շարքը, որոնք հայցականի համար առանձին ձև ունին—книга, книгу։ Նույնպես և գերմաներենում սրական անուններն ու ածականներն ո՛նին առանձին ձև հայցականի համար՝ den kleinen։ Ո՞րն է մեր աշխարհաբարում հայցականի առանձին ձևը։ Ինչքան էլ որոնեք, չեք գտնի։ Մեր հայցական ասածը միշտ նման է կամ ուղղականին, կամ տրականին։ Ապա ուրեմն էլ ի՞նչպես կարող է մեր լեզվի մեջ առանձին հայցական հոլով գոյություն ունենալ։ Այս այնպիսի պարզ բան է, որ զարմանալի է թե ինչպես մեր քերականները մինչև այսօր աշխարհաբարի համար պահել են այդ հոլովը։ Հարկավ, շատ տարօրինակ է թվում նրանց, որ գրաբարի և օտար լեզուների **քերականություններին վարժված են**, չտեսնել մեր քերականության մեջ հայցական հոլով։ Բայց այդպես է։

Նույնպես չկա մեր լեզվի մեջ և կոչական հոլով. միևնույն ուղղականը գործ է ածվում իբրև կոչական, երբ խոսքը մեկին է ուղղվում։ Բայց անշուշտ կոչական հոլովի դուրս ձգելը խորթ չի թվում մեր վարժապետներին,—որոշներն արդեն այդ հոլովը մերժել են։ Մեր հին քերականներն առհասարակ շատ առատասեր են եղել հոլովների նկատմամբ՝ հայերենում (գրաբարում) տասը, նույնիսկ տասն և մեկ հոլով դնելով, որով հայոց լեզուն աշխարհի մեջ հոլովներով ամենից հարուստ լեզուն է համարվել։ Դրանց դեմ իրավամբ գրում է Ա. Բագրատունին. «Ոմանք յօտարազգեաց ստեղծին, և ի մերոց անքննաբար առեալ ոմանց եդին այլ ևս չորս հոլովս, պատմական, պարտական, ներգոյական. կոչական։ Բայց առաջին երեքն ի դոցանէ՝ չեն զատ հոլով, ոչ ըստ նշանակութեան և ոչ ըստ կազմութեան ..... իսկ զկոչականն թէպէտ յիշատակեն նախնիք ըստ հարկի յունին ի հին քերականութեան Թրակացւոյն, բայց զհոլովսն վեց ասելով ընդ գործիականին առեալ յայտնապես զբացառականն մեր, այնու իսկ ակնարկեն իմն ապախտ զկոչականն համարել ի մեզ, զի և չունի ինչ բնաւ ի մեզ փոփոխումն կազմութեան ըստ յունին, այլ նոյն ինքն ուղղականն է՝ կոչմամբ ասացեալ։ Ապա անհիմն է ամենևին այդ ամենայն եկամուտ շինուած չորից հոլովիցդ, և աւելորդ ծանրաբեռնութիւն ուսանողաց, յայսմ հետէ մերժելի իսպառ յամենայն ուղղատես և անաչառ վարժապետաց և ի քերականաց»*։ Ուրիշ տեղ էլ Բագրատունին կոչականը համարում է ուղղական հոլովի մի գործածություն միայն։

Բագրատունու այս պարզ հասկացողությունը, որով հոլով ըստ կազմության և հոլովի գործածություն տարբերվում են, չունի Այտնյանը։ Սա գրաբարի համար** դնում է «գլխավոր և երկրորդական հոլովներ»։ Նրա գլխավոր հոլովներն յոթն են՝ ուղղական, հայցական, սե-

---

* Ա. Բագրատունի, *Քերականութիւն ի պէտս Ջարգացելոց*, եր. 7։

** Այտնյան, *Քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Վիեննա, 1867, եր. 215, հտն.։

ական, տրական, բացառական, գործիական և ներգոյական, իսկ երկրորդական հոլովներն երեք են՝ պատմական, պարառական և կոչական։ Այս երկրորդ կարգի մեջ անշուշտ պիտի մտներ և ներգոյականը, քանի որ ինչպես պետք է կարծել, նա այս բաժանումն արած է այն նպատակով, որ ցույց տրվի թե այս երկրորդական կոչած հոլովներն իսկական հոլովներ չեն։ Այտնյանն աշխարհաբարի (արևմտյան) քերականության մեջ* դնում է վեց հոլով՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական։ Բայց հետո ավելացնում է և մի չորք «աննախադիր հոլովներ», «աննախդիր տրական», «աննախդիր ներգոյական», «աննախդիր բացառական», որոնք «ուղղականի ձևով», կամ «տրականի ձևով» են, և ապա թե «կա կոչական ասված հոլով մ՝ալ, որ նույնպես ճիշտ ուղղականի կընմանի. և անուն մը կոչելով (կամ իրեն կանչելով) կանվանե .... կոչականն աննախդիր հոլով չէ, միայն թե սովորողն աղեկ միտք առնելու է, որ ուղղական չկարծե». Այտնյանն ուրեմն տատանվում է հոլովական ձևի և կիրառության մեջ, մերթ ձևն է իբրև հիմք վերցնում հոլովի, մերթ կիրառությունը։ Այս շրփոթ դրությունը նա պարզում է Վ. Ջալըխյանի (գրաբարի) քերականության իր մշակած հրատարակության մեջ մի ծանոթություն դնելով**. «Ճիշդ խոսելով՝ պատմական, պարառական, ներգոյական ու կոչական հոլովները զատ հոլովներ չեն, այլ պատմականը բացառականին վրա, պարառականը գործիականին վրա զ դնելով կրձևանա, և ներգոյականը տրականին վրա ի դնելով, իսկ ուղղականեն առաջ ո՛վ ավելցընելով (կամ նաև առանց ովի կոչելով) կըլլա կոչական»։

Կոչական հոլովին նույն տեղն է տալիս և Պալասանյանը, որ հայերենի (արևելյան աշխարհ.) հոլովները յոթն է դնում և ուղղական հոլովի մասին խոսելիս՝ մեկայն ավելացնում է. «Ուղղականի նման է կոչական ասած հոլովը, որ միևնույն հարցերին է պատասխանում (ո՞վ, ի՞նչ) և միայն նշանակությամբ է զանազանվում նորանից. այսինքն երեն ուղղականի ձևով բառը նախադասության մեջ ոչ ենթակա է և ոչ ստորոգյալ, կոչական բառ է»***։ Պալասանյանը մոռանում է ուղղականի իբրև վերադիր գործածությունը՝ Վարդան զորավարը, Վարդան զորավարին, Վարդան զորավարից և այլն, որոնց մեջ Վարդան իհարկե հայցական չէ, այլ ուղղական։

Նորագույն քերականները, ինչպես Ստ. Մալխասյան, Ջապել Հ. Ասատուր, և ուրիշներ կամ բոլորովին անտես են անում կոչական հոլովը չառնելով հոլովների մեջ, կամ պարզապես կոչականն ուղղականի

---

* Նույն տեղում, եր. 4, 13։

** Վրք. Ջալըխյան. Քերականություն հայկազնյան լեզվի, աշխատասիրյալ ի Հ. Ա. Վ. Այտնյան, Վիեննա, 1885, եր. 10։

*** Ս. Պալասանյան. Քերականություն մայրենի լեզվի, չորրորդ տիպ, Տիխիս, 1894, եր. 44, հետ.։

գործածութիւններից մեկն են համարում. «Ուղղական հոլովը կը գործածվի ... իբր կոչական»*։

Այսպես ուրեմն կոչական հոլովը հունարենի և լատիներենի ազդեցութեամբ է մտած մեր քերականութիւնների մեջ։ Որովհետև հունարենում կա առանձին ձև, առանձին հոլով կոչական, ուստի և հայերենում պիտի լիներ։ Բայց վերջապես մեր քերականները տարբերելով հոլովի կազմութիւնը նրա նշանակութիւնից կամ կիրառութիւնից, տեսնում են, որ մենք իսկապես զատ կոչական հոլով չունինք, այլ «նույն ինքն ուղղականն է՝ կոչմամբ ասացեալ»։ Այս պատճառով կոչական հոլովը կամ կողմնակի կերպով է հիշվում, կամ դուրս է ձգվում հոլովների շարքի միջից և կամ ուղղականի գործածութիւններից մեկը համարվում. Սակայն հոլովի այս ըստ ձևի կամ կազմութեան ըմբռնումը, որ Բագրատունուց սկսվում է գրաբարի կոչականի համար և գրաբարից առանց դըժվարութեան անցնում է աշխարհաբարին, չի անցնում և աշխարհաբարի մյուս հոլովների վրա, որ ձևով նույն են։ Այսպես Պալասանյանը կոչականը դուրս է ձգում, բայց հայցականը պահում է, թեպետև ավելացնում է, թե «սովորական հոլովման մեջ հայցականը ուղղականի նման է և տրականը սեռականի նման»**։ Եվ նա յուր «Մայրենի լեզվի քերականութեան» մեջ (եր. 46) այդ մասին խոսելով գրում է. «Այս նույնավերջ հոլովները միմյանցից որոշելու մի հնարք կա — քննել թե նոցանից յուրաքանչյուրը ինչ պաշտոն է վարում և ինչ մտքով է նախադասութեան մեջ»։ Ուրեմն ձևի կամ կազմութեան կատարյալ նույնացում է, տարբերութիւնը միայն շարահյուսական է։ Բայց Պալասանյանը եթե հետևողական վարվեր, պետք է այդ ասելուց հետո, ինչպես կոչականի համար է արել, հայցական հոլովը ինչպես և սեռական կամ տրական հոլովներից մեկն ու մեկը, չառներ հոլովների շարքի մեջ, քանի որ նա հոլով սահմանում է իբրև գոյական անունների վերջավորութեան փոփոխութիւն (եր. 44), իսկ այդ՝ իբրև տարբեր հոլովներ դրածները «նույնավերջ» են կամ դրանց համար «միևնույն վերջավորութիւններն են գործ ածվում»։

Այսպես ուրեմն աշխարհաբարում ինչպես կոչական հոլով չկա, նույնպես հայցական հոլով ըստ ձևի կամ կազմութեան չկա։ Բայց կոչական չլինելու հետ հաշտվում են մեր վարժապետները, իսկ հայցական չլինելը անհասկանալի է նրանց։

---

* Ջապել Հ. Ասատուր, Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, Կ. Պոլիս, 1902, եր. 107։ Այս քերականը սակայն, որի համար մեծ է «Այտնյանի հեղինակութիւնը» վերջինիս ազդեցութեամբ, մոռանալով որ մի երկու երես առաջ կոչականը իբրև ուղղականի գործածութիւններից մեկն է դրել, ինչպես ենթական, ստորոգյալը, բացահայտիչն են, եր. 110 գրում է թե «կոչականը հատուկ հոլով մըն է, որ ուղղականի և հայցականի (?) ձևը ունի»։ Իսկ եր. 88 դարձյալ կոչական չկա՝ հոլովները վեց դնելով։

** «Ընդհանուր տեսութիւն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց», Թիֆլիս, 1870, եր. 23։

Հապա «ներգործական բայերի հայցական սեռի խնդիրը, մի՞թե դա հայցական հոլովով չի դրվում», կբացագանչեն գուցե շատերը։ Այդպիսիներին այս կասենք, որ դրանք հոլով և հոլովի պաշտոն, հոլովական ձև և այդ ձևի շարահյուսական նշանակություն, շփոթում են իրար հետ,— մի բան որ որոշ կերպով պիտի տարբերել իրարուց։ «Ներգործական բայերի սեռի խնդիրը» մեր աշխարհաբարի մեջ դրվում է կամ ուղղական կամ տրական հոլովով, հենց այդ պատճառով հոլովների շարքի մեջ հայցականն իրրև առանձին հոլով դնողները ստիպված են ասել, թե այս հոլովը նման է միշտ կամ ուղղականին կամ տրականին։ Շատ խորթ է հնչում լսել՝ ներգործական բայի սեռի խնդիր և ուղղական հոլով։ Բայց այդ խորթությունը միայն անվարժությունից է առաջանում։ Մենք սովորած ենք լսել թե միայն ենթական և ստորոգյալն են դրվում ուղղական հոլովով, իսկ «սեռի խնդիրն» ու պարագայական խնդիրները դրվում են հայցական հոլովով։ Այո, սովորած ենք, որովհետև մենք վարժվել ենք գրաբարի կամ օտար լեզուների քերականություններին. թեպետև գրաբարում, պետք է ասել, որոշ պարագայական խնդիրներ երբեմն և ուղղական են դրվում։

Մի ֆրանսիացու համար, օրինակ, շատ բնական է, որ ենթական և ներգործական բայերի սեռի խնդիրը դրվում են բառի միևնույն անփոփոխ ձևով, մի ձև, որ նույնիսկ հոլով էլ չի կոչվում, le loup mange l'agneau. բայց մենք երբ ասում ենք՝ ջուր չկա — նա ջուր խմեց,— առաջին դեպքում ջուր ենթակա է, ուրեմն և ուղղական հոլով պիտի լինի (գոնե ասեինք անվանական հոլով), իսկ երկրորդ դեպքում ջուր «սեռի խնդիր» է ուրեմն և հայցական։ Ինչո՞ւ, չէ՞ որ երկու դեպքում էլ այդ բառը ուղիղ ձևով, ա֊ֆինքն ուղղական է բառի բուն իմաստով, և ջուր ձևն իբրև ուղղական և հայցական տարբերում ենք ոչ թե ձևով, այլ շարահյուսական արժեքով։ Ֆրանսերենի քերականությունների մեջ մինչև անգամ հոլով բառն էլ չեք գտնիլ,— և ֆրանսերենն իրոք չունի հոլովում.— բայց չէ՞ որ նույն հիմունքով կարելի է դնել ուղղական = nominatif, հայցական և կոչական հոլովներ և միևնույն բառը միևնույն ձևով՝ նայելով պաշտոնին ուղղական անվանել կամ հայցական ու կոչական հոլով։ Le loup mange l'agneau *խոսքի մեջ ուրեմն* le loup *կարող էր ասվել ուղղական է, որովհետև ենթակա է. իսկ* l'agneau *հայցական հոլով, որովհետև «սեռի խնդիր» է։ Բայց ֆրանսիացին այդ չէ անում**։ Նա տարբերում է բառի ձև և շարահյուսական արժեք։ Նա բր-

* Օտարների, օրինակ՝ գերմանացու համար հորինված ֆրանսերենի և անգլերենի քերականությունների մեջ դրվում են հոլովներ՝ ուղղական, սեռական, տրական և հայցական (որովհետև այս հոլովները կան գերմաներենում), ասելով թե հայցականը նման է ուղղականին և թե սեռականն ու տրականը կազմում են à և de նախդիրներով։ Բայց այս միայն գործնական նշանակություն ունի. գերմանացի աշակերտը այդ ձևով հեշտ է յուրացնում ֆրանսերեն լեզուն։ Բայց նա միանգամայն սովորում է որ ֆրանսերենում իսկապես չկա հոլովում։

նավ ուշադրություն չի դարձնում, որ յուր հին ֆրանսերենը ունեցել է երկու հոլով, ուղղական՝ ենթակայի համար և հայցական՝ «սեռի խնդրի» համար. նրա արդի լեզվի մեջ այդ երկու ձևից մեկն է մնում և այդ մի ձևը տեղին նայելով՝ և ենթակա է, և «սեռի խնդիր», և պարագայական խնդիր, և կոչական,— և այս խորթ չէ նրա համար։ Իսկ մենք, այդ առանել չենք կարող. մենք պիտի ասենք՝ ուղղական՝ աշակերտ, կոչական՝ աշակերտ, հայցական՝ աշակերտ։ Մեզ համար հարկավոր է հայցական հոլովը, որովհետև մեր հին լեզուն և ուրիշներն ունին այդպիսի հոլով։ Մենք պիտի ասենք՝ ենթական ուղղական է, սեռի խնդիրը և պարագայական խնդիրները՝ հայցական և այլն։

Անսովոր է հնչում, երբ ասենք «սեռի խնդիրն» և պարագայական խնդիրները նույնպես ուղղական (բուն իմաստով և ոչ անվանական) են դրվում։ Բայց անսովորին կարելի է վարժվել։ Մենք սովոր ենք, օրինակ, լսել, որ ստորոգյալի հարաբերությունն արտահայտվում է ուղղական հոլովով, կամ որ միևնույն է՝ ստորոգյալը դրվում է ուղղական հոլովով. ինչպես՝ նա իմ աշակերտն էր։ Շատ տարօրինակ կհնչեր, եթե ասեինք թե ստորոգյալի անունը որոշ դեպքերում դրվում է գործիական հոլովով։ Բայց ռուսի համար այդ բնավ խորթ և տարօրինակ չէ, քանի որ նա ասում է՝ он был моим учеником։ Բացի այդ, հայտնի է՝ ռուսերենի մեջ սեռի խնդիրը որոշ դեպքերում և որոշ բայերի հետ դրվում է սեռական հոլովով փոխանակ հայցականի՝ подай мне *бумаги* и *чернил*. Не стану подробно описывать вам остального *путешествия*. От тебя я *службы* требую. Եվ ռուսն այդ սեռականները հայցական չի անվանում, որվհետև սեռի խնդիր է, ոչ էլ գործիականներն՝ ուղղական, որովհետև ստորոգյալ են։ Եվ եթե այս բնական են գտնում, ինչո՞ւ նույնպես բնական չպիտի լինի այն, որ «սեռի խնդիրը» մեր արևելյան աշխարհաբարում դրվի ուղղական կամ տրական հոլովով։ Իհարկե ռուսի համար խորթ և սխալ է ասել я имею одна книга կամ я видел ему, ինչպես հայն է ասում. բայց նույնչափ և հայի համար խորթ և սխալ է ասել՝ նա իմ աշակերտով էր, փոխանակ՝ իմ աշակերտն էր. կամ տուր ինձ թղթի և թանաքի. ես ձեզ չեմ նկարագրիլ մնացած ճանապարհորդության. կամ՝ ես քեզնից ծառայության եմ պահանջում,—փոխանակ ասելու Տուր ինձ թուղթ ու թանաք. Ես ձեզ չեմ նկարագրիլ մրնացած ճանապարհորդությունը. Ես քեզնից ծառայություն եմ պահանջում։ Ամեն լեզու յուր միջոցներն ունի ստեղծած շարահյուսական կապակցություն առաջ բերելու և զանազան հարաբերություններ արտահայտելու համար. լեզուների մեջ նույն շարահյուսական հարաբերությունները կան, բայց դրանց արտահայտության եղանակները հաճախ նույն չեն. ուստի և ամեն լեզվի մեջ նույն հոլովը, դիցուք գործիականը հայերենի և ռուսերենի մեջ, կատարելապես իրար հավասար չեն իրենց պաշտոնով։ Ռուսերենի գործիականը տեսանք, որ ստորոգյալ է դառնում, մի գործածություն, որ չունի հայերենը. բայց հայերենի գործիա-

կանն էլ յուր՝ տարբեր իմաստներով գործածություններն ունի, որ չունի ռուսերենը. օրինակ՝ ինչ որ մենք ասում ենք՝ անտառով անցնել, և նմանները, ռուսն ասում է՝ итти через лес: Այսպես և գերմաներենում շատ ածականների և բայերի խնդիրներ, ինչպես և պարագայական խընդիրներ, դրվում են սեռական հոլովով, բայց հայերենում այդպիսի բան չկա: Նույնպես մեր բացառական և գործիական հոլովների իմաստը բոլորովին ուրիշ միջոցներով է արտահայտում գերմաներենը, որ չունի այդ հոլովները: Ռուսերենն ունի предложный — նախդրական հոլով, որ չունի հայերենը:

Ոչ միայն տարբեր լեզուներ այս զանազանությունն ունին, այլև միևնույն լեզվի մեջ հին և նոր լեզուն, միաժամանակ ապրող բարբառները հաճախ այս և սրա նման բաներով տարբերվում են միմյանցից: Նրանք նույն իմաստներն ու հարաբերությունները տարբեր ձևերով են արտահայտում: Գրաբարը չունի ներգոյական հոլով, մեր աշխարհաբարն ունի: Թերթեցեք արևմտյան աշխարհաբարի քերականությունները և կտեսնեք, որ այնտեղ էլ ներգոյական հոլով չկա և չկա ոչ թե նրա համար, որ մեր ներգոյականի իմաստը որևէ ձևով չի արտահայտվում գրաբարում կամ արևմտյան աշխարհաբարում, այլ նրա համար, որ այդ իմաստն արտահայտելու համար առանձին ձև չկա: Արևմտյան աշխարհաբարում, ինչպես մեզնում ևս, այդ իմաստն արտահայտվում է հաճախ մեջ բառով, բայց և հաճախ ուղղական, սովորական ձևով ասենք, հայցական հոլովով է ասվում. ինչ որ մենք ասում ենք, օրինակ, նա **fաղաfում** է բնակվում, նրանք ասում են՝ նա **fաղաfը** կը բնակի և շատ նմաններ: Եվ եթե քերականությունները դնում են հայցական հոլով գրելով՝ ուղղական քաղաք, կոչական քաղաք, հայցական քաղաք, պետք է ավելացնեին և ներգոյական քաղաք: Բայց չեն ավելացնում ինչո՞ւ,— միայն նրա համար, որ ներգոյականի ձև չկա: Այլ բավականանում են միայն շարահյուսության մեջ բացատրելով— (օրինակ Զ. Հ. Ասատուրի քերականության մեջ) թե հայցական հոլովի գործածություններից մեկն է և ներգոյականի իմաստով գործածվելը. «Երբ տեղի մը մեջ դադարում կը ցուցնե, և կը պատասխանե ո՞ւր հարցման. հս տունը կը կենամ: Ափրիկեի անտառները զարհուրելի գազաններ կան» և այլն:

Հոլովական ձև, ուրեմն, և այս կամ այն հոլովի ցույց տված հարաբերություն, բոլորովին տարբեր բան են, եթե այս վերջինը նկատի ունենայինք և միևնույն ձևը տարբեր հոլովներ դնեինք, այն ժամանակ լեզուն, և ոչ միայն մեր լեզուն, շատ ու շատ հոլովներ կունենար, և ոչ թե մի քանի: Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա առանձին ձև, չկա և առանձին հոլով: Մենք չունինք հայցականի համար առանձին ձև, չունինք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը: Դրա պաշտոնը որոշ դեպքերում ուղղականն է յուր վրա առել, որոշ դեպքերում տրականը: Իսկ այդ դեպքերը որոշելը շարահյուսության գործ է:

Միևնույն հոլովը, կրկնում ենք, կարող է գործածվել զանազան շարահյուսական (սինտաքսիսական) հարաբերություններ ցույց տալու համար. բայց այդ պատճառով մի հոլովը, մի ձևը, չի դադարում միևնույն հոլովը մնալուց և չի դառնում երկու, երեք և ավելի հոլովներ. ինչպես օրինակ հունարենում չկա մեր և լատիներենի բացառական հոլովի համապատասխան հոլով. մեր այս հոլովի պաշտոնը կատարում են այդ լեզվի մեջ սեռական կամ տրական հոլովները. բայց մի՞թե սրա համար հունարենում դնում են մի առանձին հոլով՝ բացառական և ասում թե այդ հոլովը նման է սեռականին կամ տրականին, թե՞ միայն սեռական ու տրական հոլով են դնում և ասում շարահյուսության մեջ բացատրում թե սեռականն այս ու այս իմաստներով է գործածվում, տրականն՝ այս ու այս, և թե այս երկու հոլովն ունին ի միջի այլոց և լատիներենի բացառական հոլովի պաշտոնը: Եվ ինչո՞ւ պիտի մենք ուրեմն հայցական հոլով դնենք և առնենք նման է ուղղականին կամ տրականին և ոչ թե շարահյուսության մեջ բացատրենք, թե մեր ուղղականն և տրականը գործ են ածվում նաև ուրիշ լեզուների և մեր գրաբարի հայցական հոլովի իմաստն արտահայտելու համար:

Եվ վերջապես ստուգաբանորեն ևս մեր աշխարհաբարի հայցական հոլով ասածը համապատասխան չէ գրաբարի հայցական հոլովին. տրականի նման հայցականը պարզապես տրական է, իսկ ուղղականի նման հայցականը գրաբարի ուղղական հոլովն է և ոչ թե հայցական: Այս շատ պարզ երևում է անեզական բառերի մեջ. Թագավոր ոմն արար հարսանիս *որդւոյ յիւրում=*հարսանիք *արեց: Զայն ամենայն շարիս եհան թագաւորն=*չարիք *տեսավ: Ժողովեաց* զզօրս իւր=յուր զօրք *ժողովեց: Եվ այսպես բոլորը: Կնշանակն ներգործական բայերի սեռի խնդիր ասածը, որ գրաբարում հայցական հոլովով է դրվում, աշխարհաբարում շուտ է եկել ուղղական հոլովի, որովհետև աշխարհաբարի* հարսանիք, *շարիք, զօրք ձևերը գրաբարում հայցական չեն, այլ ուղղական: Ուրեմն մեր հայցական «սեռի խնդիր» ասածը ստուգաբանորեն ուղղական հոլով է: Նույնպես ուղղական հոլով են ստուգաբանորեն, և ոչ հայցական, նաև պարագայական խնդիրներ: Պալասանյանը դրում է. «Հայցական հոլով պահանջում են շարժում ցույց տվող բառերը իբրև պատասխան ուր հարցման»: Եվ ապա ավելացնում է. «Այս հայցականը համապատասխանում է գրոց նախդրիվ տրականին. երթ ի տուն»: Գրաբարի նախդրիվ տրական ասածը ի նախդրով հայցական է. և հենց այդ է պատճառը, որ այդ խնդիրները Պալասանյանը դնում է ոչ իբրև ուղղական, այլ հայցական: Սակայն՝ «Ծկայք ի հարսանիս=հարսանիք *ձկնք»: Գնաց ի Միջագետս, ի Սյունիս=*Միջագետք, Սյունիք: *Ծմուտ ի դժոխս=դժոխք մտավ: Ծմուտ յաչս նորա=*աչքը մթտավ և շատ նմանների մեջ աշխարհաբարի հարսանիք, Միջագետք, Սյունիք, դժոխք, աչք ձևերը գրաբարում իհարկե նախդրիվ տրական=ի նախդրով հայցական չեն, այլ ուղղական: Այսպես և ժամանակի տևո-

ղության, չափի ու քանակի, որակի կամ ձևի հայցական ասածներն աշխարհաբարում շուռ են եկել ուղղականի, ինչպես՝ եղև սով զերիս ամս =երեք տարի։ Գնաց ընդ նմա զերիս մղոնս=երեք մղոն և այլն։ Այս ձևերից մի քանիսը գրաբարում արդեն երբեմն ուղղական են դրվում, և գրաբարի հայցական հոլովի տեղ ուղղականի անցնելու սկիզբը իհարկե շատ հին է։

Այս ձևերը հայցական անվանողները կաշկանդված են գրաբարի քերականությամբ։ Այտնյանը, տեսանք, ստեղծում է «աննախդիր հոլովների» մի դրություն. «Աննախդիր կը կոչենք այն հոլովներն՝ որ գրաբարի նախդիրը թողուցած են։ Ասոնց մեծ մասը, առանց նախդրի ըլլալնուն, ոմանք ճիշտ ուղղականի կը նմանին և չեն ուղղական. ոմանք ալ տրականի և տրական չեն։ Արդ՝ 1. Աննախդիր է հայցական հոլովը և ուղղականի ձևով, քանի որ զ գիրը չունի. — Սա գիրք կարդա՛» (= զգիրս)։ «Աննախդիր տրական, ուղղականի ձևով. — բռնավորի ձեռ ինկա» (=ի ձեռս)։ «Աննախդիր ներգոյական, ուղղականի ձևով.— եղբայրս Հունաստան մնաց» (=ի Յունաստան)։ «Աննախդիր ներգոյական, տրականի ձևով.— Ատենին չհասավ» (=ի ժամանակին)։ Ինչքան էլ մեծ է եղել Այտնյանի ազդեցությունը, Պալասանյանը այս աննախդիր հոլովները չի ընդունել, բայց նա էլ չի ազատվել գրաբարի ազդեցությունից։ Նա Այտնյանի «տրականի ձևով աննախդիր ներգոյականը». որովհետև գրաբարում տրական է ի նախդրով, դրել է աշխարհաբարում իբրև տրական հոլով, ինչպես որ է իսկապես. իսկ Այտընյանի «ուղղականի ձևով աննախդիր հայցական, աննախդիր տրական, աննախդիր ներգոյական» հոլովները, որովհետև գրաբարի հայցական կամ նախդրիվ տրական են, աշխարհաբարում դրել է իբրև հայցական*։ Այսպես վարվում է և Ջ. Հ. Ասատուր։ Բայց այդ հայցական ասած հոլովներն «ուղղականի ձևով» են միշտ և, ինչպես տեսանք, թեպետ գործածությամբ և իմաստով համապատասխան են (ոչ միշտ) գրաբարի հայցականին կամ նախդրիվ հայցականին (=նախդրիվ տրականին), ձևով սակայն համապատասխան են գրաբարի ուղղականին։ Անշուշտ կարելի է գրաբարի, մասամբ և օտար լեզուների քերականության ուսման դյուրության համար ուղղականի այդ գործածություններն աշխարհաբարի քերականության մեջ դնել իբրև հայցական, բայց կարծում ենք աշխարհաբարի քերականությունը մեր աշխարհաբարի համար լինի և ոչ գրաբարի կամ օտար լեզուների։ Եվ վերջապես ի՞նչ օգուտ այդ հայցական հոլովից։

Դպրոցական կանոնադրության և ծրագրի նախագիծը կազմողները ռուսաց լեզվի ծրագրի մեջ, եր. 74, անշուշտ փորձից օգտվելով ծանոթություն են դնում. «Ցանկալի է, որ երեխաները որքան կարելի է շուտ

---

* Պալասանյանն այնքան սիրահար է հայցականի, որ հայցական հոլովով խնդիրներ մեջ է դնում և այսպիսիները. «Մենք Հայկի անունով կոչվում ենք հայ». «Սագն ավելի մեծ է քան բադը». որ պարզապես սխալ են։

սովորեն հայերենի մեջ զանազանել տրականը հայցականից, որովհետև այդ հոլովների շփոթելը հայերենի մեջ մեծ խոչընդոտ է հանդիսանում ռուսերեն կանոնավոր խոսելու համար»։ Ռուսերենի վարժապետներն իհարկե շատ անգամ են լսել հայ աշակերտների բերանից այսպիսի խոսքեր՝ я видел ему: Բայց աշակերտներն ի՞նչպես «շուտ սովորեն զանազանել տրականը հայցականից». կամ ավելի ճիշտ, ի՞նչպես շուտ սովորեն իմանալ թե ո՛րն է հայերենում հայցական հոլովը,— այս չեն ասում ծրագիր կազմողները։ Եվ ինչո՞ւ չեն շուտ սովորում։ Չէ՞ որ փոքր հասակից արդեն նրանք կրկնում են ուղղական՝ մարդ, հայցական՝ մարդ. կամ տրական՝ մարդուն, հայցական մարդուն։ Արդյոք ավելորդ աշխատանք չե՞ն անում այդ կրկնություններով, եթե վերջիվերջո այդ կերպով չեն կարողանում և չեն էլ կարող զանազանել հայցականը տրականից, և ոչ էլ ուղղականից։ Ինչո՞ւ փոքրահասակ աշակերտն անգամ շատ շուտով վարժվում է զանազանել բացառական, գործիական և ներգոյական հոլովները, իսկ նույն աշակերտը ավելի մեծ հասակում անգամ, շարունակ շփոթում է հայցական և տրական, կամ հայցական և ուղղական, կամ սեռական և տրական հոլովները։ Շատ հասկանալի է թե ինչո՛ւ։ Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կան մեր լեզվի մեջ, դրանք ունեն իրենց հատուկ ձևերը՝ flexion-ը՝ ից, ով, ում, վերջավորություններով. իսկ հայցական հոլով ասածը միշտ նման է կամ ուղղականին կամ տրականին։ Իսկ սեռականն ու տրականը նման են իրար։ Որպեսզի աշակերտը սովորի հայցական հոլովը, ինչպես և սեռական ու տրական հոլովները տարբերել, նա ոչ թե հոլովել պիտի սովորի, այլ հոլովների՝ խոսքի մեջ կատարած պաշտոնը։ Դոնե այս է ասում մեր առաջին քերական Պալասանյանը։ Իսկ հոլով և հոլովի պաշտոն կամ հոլովի արտահայտած հարաբերություն, տեսանք, դրանք բոլորովին տարբեր բան են։

Փոքրահասակ աշակերտն էլ շուտ սովորում է հոլովել, բայց հոլովների շարահյուսությունը, բառերի՝ հոլովներով կապակցության հարաբերությունը, այդ ըմբռնելը փոքրների գործ չէ։ Դա պահանջում է քիչ ու շատ հասուն տարիք։ Որովհետև ուղղականը հայցականից տարբերելու համար աշակերտը պետք է իմանա նախ թե հայցական է այն ուղղականի ձևով անունը, որ ոչ ենթակա է, ոչ ստորոգյալ, ոչ վերադիր, ոչ կոչական. և ապա դարձյալ ուղղականը և «տրականը հայցականից զանազանելու» համար նա պիտի ըմբռնի բայերի սեռը. նա պիտի զանազանի անցողական (transitif) և անանցողական (intransitif) բայերը։ Իսկ դրա համար նա պիտի ջոկի բայերի առարկայական և պարագայական խնդիրները և ապա պիտի հասկանա, որ առարկայական խնդիրների մեջ կա մեկը, որ կրող առարկա է, իր վրա կրում է ենթակայի գործողությունը։ Իսկ կրող առարկան ըմբռնելու համար, պետք է կարողանա անցողական բայով ասած խոսքը անանցողական ձևի վերածել — Խեղճ մարդուն զուր տեղը տանջեցին,— Խեղճ մարդը զուր

տեղը տանջվեց,— նրան տուն վերադարձրին,— նա տուն վերադարձավ,— պատը քանդեցին,— պատը քանդվեց,— որպեսզի կարողանա տեսնել թե ինչպես այդ կրող առարկա ցույց տվող խնդիրը շուռ տված ձևով միշտ դառնում է ենթակա։ Եվ ապա նոր, այս բոլոր բարդ վարժությունները անելուց հետո, աշակերտը պիտի սովորի «զանազանել հայցականը տրականից» կամ ուղղականից։ Նա նոր պիտի գլխի ընկնի, որ հենց այդ՝ ենթակայի վոխվող խնդիրն է, որ մենք հայցական հոլով ենք ասում, որ միշտ նման է ուղղականին կամ տրականին, և թե այդ խնդիրն է, որ ռուսերենում դրվում է винительный հոլովով։ Բայց ի՞նչ աներևույթ և անտեսանելի հոլով է այդ հայցականը, որ այսպիսի դժվարություններով պիտի երևան գա։

Եվ երբ հայցական հոլովը տրականից և ուղղականից տարբերելու համար այդ ամենը սովորեցնում ենք, արդյոք հոլովե՞լ ենք սովորեցնում, թե՞ շարահյուսություն։ Կա՞ արդյոք ուրիշ միջոց «տրականը հայցականից զանազանելու» համար, բացի այսպես շարահյուսությանը դիմելուց։ Պալատանյանի հետ մենք ևս ուրիշը չգիտենք։ Ուստի այս նպատակի համար, ռուսերենի վարժապետների այդ պահանջին բավականություն տալու համար հենց, մենք մեր «Տարրական քերականության» մեջ մտցրել ենք այդ վարժությունները «Բայերի սեռը և ուղիղ խնդիր» վերնագրի տակ։ Եթե կհասկանան աշակերտները, թող այդ գրչուխը «որքան կարելի է շուտ սովորեն տրականը հայցականից զանազանելու» համար. որովհետև, կրկնում ենք, մինչև այս չհասկանա աշակերտը, մինչև նա գիտակցորեն չըմբռնի հոլովների շարահյուսական արժեքը, ինչքան էլ նա սերտի ուղղական մարդ, հայց. մարդ, կամ տրական նրան, հայց. նրան, միշտ էլ կասի՝ я видел ему, քանի որ հայերենում՝ ես տեսա նրան է ասում և ոչ թե տեսա զնա։ Ե. և նույնիսկ Զ. դասարանցիների գրաբար գրածների մեջ անգամ պատահել է մեզ կարդալ ես տեսի նմա խոսքի նման սխալ կազմություններ։

Այսպես է, չկա հայցականը։

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐ

Արդյոք աշխարհաբարում առանձին սեռական և տրական հոլովնե՞ր պիտի դնել թե՞ կարելի է և մի հոլով դնել, և եթե մի հոլով, ո՞րն արդյոք՝ սեռակա՞ն, թե տրական։— Այս խնդիրը լուծելուց առաջ պետք է իմանալ թե կա՞ն արդյոք աշխարհաբարում առանձին ձևեր այս հոլովների համար, թե չէ։

Թե բոլոր անունների մեջ սեռական և տրական հոլովները ձևով կատարելապես նույն են, այդ պարզ է։ Ոչ ոք ձևի վրա միայն հիմնվելով՝ չի կարող տարբերել անունների սեռականը տրականից. ուստի և քերականությունների մեջ հաճախ կգտնենք միանգամից ասած՝ սեռ. տր. հացի։ Որ արևելյան գրական լեզվի մեջ սեռականը և հոդը չէ առնում, այդ հոլովական ձևի flexion-ի հետ կապ չունի. արևմտյան գրական լեզվի,

ինչպես և մի քանի արևելյան բարբառների մեջ սեռականը ևս ե հոդ առնում է։ Հոդի գործածությունը շարահյուսությանն է վերաբերում, և ոչ ոք անշուշտ լրջությամբ չի պնդիլ թե ե հոդը հոլովման անհրաժեշտ մասն է։

Գրաբարում արդեն անունների սեռական և տրական հոլովները, թե եզակի և թե հոգնակի, կատարելապես նույն ձևն ունին։ Արդարև որոշ թվով ածականների, երբեմն և մի քանի անունների համար կա ոյ ձևով սեռական—տրականի հետ և մի երկրորդ ում ձև, մերոյ—մերում, ձերոյ—ձերում. բայց այդ երկու ձևն ևս գործ են ածվում թե սեռականի և թե տրականի համար, թեպետ և առաջինն ավելի իբրև սեռական, իսկ երկրորդն իբրև տրական։ Դերանունների և անորոշ անունների մեջ սակայն պարզապես դեռ կան կրկին ձևեր՝ իմ—ինձ, քո—քեզ, մեր—մեզ, սորա—սմա, սորին—սմին, ուրումն—ումեմն, ոյր—ում և այլն։ Բայց, անձնական դերանունները մի կողմ թողած, ինչպես Մառը նկատում է իր քերականության մեջ, այդ երկրորդ ձևերը, «սովորաբար տրականի նշանակությամբ են գործածվում, բայց ոչ հազվադեպ պահում են և սեռականի նշանակությունն». և ընդհանուր ընդունված տերմինոլոգիայի համար միայն այդ ձևերը նա կոչում է տրական (Մառ, Քերակ., եր. 138, 140)։ Նույնը կարելի էր ասել և անձնական դերանունների համար։ Ըստ Մառի ուրեմն սեռական և տրական հոլովները նույն ձևն ունեն գրաբարում, և այդ կրկին ձևերը (անձնական դերանունները մի կողմ թողած) նա համարում է սեռական, որ և իբրև տրական են գործածվում։ Թե ինչու սեռական են այդ երկու ձևերն էլ և ոչ թե մեկը տրական, նա մեզ այդ չի բացատրում։ Մենք ընդունում ենք, որ երկրորդ (սմա, դմա և այլն) ձևերը տրական են, հենց այդ պատճառով այդ ձևերը թե դերանունների և թե նույնիսկ ածականների մեջ,— թեպետ վերջինս պակաս չափով,— սովորաբար իբրև տրական են գործածվում, և շատ հազվադեպ (և ոչ՝ ոչ հազվադեպ) է դրանց իբրև սեռական գործածությունը։ Այս երկիմաստ գործածությունը մի բան է ցույց տալիս, այն՝ որ գրաբարում արդեն դերանունների սեռական և տրական հոլովների մեջ երկու կողմից շփոթմունք է առաջ եկել։ Երկու կողմից շփոթմունք ենք ասում, որովհետև եթե արդարև կա եմա և այլն ձևերի գործածություն իբրև սեռական, պատահում է և հակառակը, այսինքն եռա և այլն ձևերի գործածություն իբրև տրական։ Իսկ այս ցույց է տալիս, որ լեզուն գրաբարի շրջանում արդեն ձգտել է սեռա-

---

* *Մեզ հաճախ պատահել է ստորին դասարանների աշակերտական ընդունելության միջոցին լսել այսպիսի հոլովներ՝ Ուղ. ճաց, Սեռ. ճացի, Տր. ճացիւ, կամ Ուղ. շուն, Սեռ. շան, Տր. շանը։ Տգետ քերականների գործ է հոլովելիս տրականը սեռականից տարբերելու համար տրականի վրա այսպես որոշող հոդ դնելը, մինչդեռ ուղղականն ու մյուս հոլովները անհոդ և անորոշ են թողնում։ Հոլովումը միշտ առանց հոդի պիտի վերցնել։*

Ձյանի և տրականի տարբերությունը վերացնել դերանունների մեջ ևս, և տատանում է եղել նորա և նմա ձևերի մեջ։

Այս տատանումը նոր լեզվի մեջ լուծվել է հետևյալ կերպով.

1. Անորոշ անունների, նույնպես և սոյն, դոյն, նոյն բառերի սեռական և տրական հոլովների երկու ձևն ևս դուրս են եկել. այդ բառերը շուտ է եկել անվանական ի հոլովման՝ ինչ—ինչի, ոչ ոք—ոչ ոքի, նույնը—նույնի և այլն, որ մի ընդհանուր ձև է սեռականի և տրականի համար։

2. Ով հարցականի ոյր ձևը դուրս է ընկել և մնացել ում ձևը թե սեռականի և թե տրականի համար։

3. Յուցականների սմա, դմա, նմա, այսմ, այդմ, այնմ ձևերը դուրս են ընկել և պահվել են սորա, դորա, նորա=սրա, դրա, նրա, ասոր, ադոր, անոր (=այսորիկ, այդորիկ, այնորիկ. այսր, այդր, այնր) թե սեռականի և թե տրականի համար. միայն արևելյան աշխարհաբարում կա սեռականից ծագած մի ուրիշ ձև ևս՝ սրան, դրան, նրան առանձնապես տրականի համար։

4. Անձնական դերանուններից մնում են թե սեռականի իմ, քո, իր, մեր, ձեր և թե տրականի ինձ, քեզ, մեզ, ձեզ ձևերը։

Այսպես գրաբարում դեռևս շատ բառեր ունին սեռականի և տրականի համար առանձին ձևեր, թեպետ և գործածության շփոթմամբ. աշխարհաբարում այդ վույլ ձևերը բոլորովին պակասել են. արևմտյան աշխարհաբարում մնում են հինգ ձև սեռականի՝ իմ, քո, յուր (իր), մեր, ձեր. իսկ արևելյան աշխարհաբարում բացի դրանցից նաև սրա, դրա, նրա։ Ինչո՞ւ լեզուն, որ բոլոր բառերի համար սեռականը և տրականը կատարելապես նույն ձևի է վերածել, ձևերի այդ նույնացումը չի անցկացրել և այս մի քանի բառերի վրա և արդյոք այդ բացառությունը լոկ երևութական չէ՞։ Նախ քննենք իմ, քո, յուր, մեր ձևերի գործածությունը։

Իմ, քո, իւր, մեր, ձեր *գրաբարում թե անձնական դերանվան սեռական են և թե ստացական ածական են (*adjectifs possessifs*). անվան վրա դրված ժամանակ դրանք սովորաբար համաձայնում են իբրև ածական՝ հայր իմ, հօր իմոյ, ի հօրէ իմմէ, հարցն մերոց և այլն։ Այս առանձին գործածությունն ահա, որով իմ, քո, իւր, մեր, ձեր ոչ թե սեռական հոլով են եղել, այլ ածական, թույլ չի տվել, որ այդ ձևերն ազդվին այն ընդհանուր ձգտումից, որով սեռական և տրական հոլովները նույնացել են մեկը մյուսի տեղ անցնելով։ Դրանք պահպանվել են ոչ թե իբրև սեռական հոլով, այլ իբրև ստացական ածականներ, որոնք ինչպես ուրիշ ամեն ածական՝ իրենց գոյականից առաջ դրվելով աշխարհաբարում անփոփոխ են մնում, ուստի և ձևով նույնանում անձ-*

---

* *Կան բարբառներ, որոնց մեջ ում ձևն է դուրս ընկել և ոյր մնացել սեռականի և տրականի համար։*

նական դերանունների սեռականի հետ։ Մենք ներքևում կտեսնենք, որ այդ բառերի բոլոր սեռական համարված գործածություններն որ կան աշխարհաբարում, համապատասխան են գրաբարի նույն բառերի իբրև ստացական ածական գործարության. ուստի և դրանք մնացել են իբրև ստացական դերանուն, և ոչ թե իբրև անձնական դերանունների սեռականներ։ Այս վերջիններն աշխարհաբարում կամ դուրս են ընկել կամ փոխանակվել են ինձ, քեզ, և այլն տրականով։ Ուրիշ խոսքով լիզուն անձնական դերանունների սեռական և տրական հոլովների ձևերի նույնացման մեջ բացառություն չի թողել։

Տեսնենք մեկ մեկ այդ բառերի կիրառության դեպքերն աշխարհաբարում։

1. Անուններ հետ այդ բառերը համապատասխան են պարզապես գրաբարի ստացական դերանուններին և մեր աշխարհաբարի քերականներն՝ իմ տունը = տուն իմ, տան իմոյ և այլն դնում են իբրև ստացական դերանուն կամ ածական։

2. Բայերն աշխարհաբարում սեռական խնդիր չեն առնում։ «Սեռական հոլովը բայի խնդիր չէ, այլ անվան»,— գրում է Այտնյանը (եր. 101)։ Ճիշտ է, նա երկու բացառություն է դնում, բայց այդ բացառությունները երևութական են, որ հենց ինքն Այտնյանն էլ ուղղում է թե «կրավի նաև տրականով»։ Թե «ինձի ըլլա, քեզի ըլլա, անոնց ըլլա» խոսքերի մեջ քեզի, ինձի, անոնց տրականն են, էլ ինչո՞ւ պիտի «տերության եղավ, ռամկին ըլլա» և այլն խոսքերի մեջ տերության, ռամկին տրական չլինին, այլ սեռական։ Թե «Հորն ունեցածը որդվոցը կհամարվի. իմս ըլլա» և այլն խոսքերի մեջ որդվոցը, իմս միայն ղեղչական ձև են, որ դարձյալ ինքն ուղղում է ասելով թե «ատոնք ըստացական ուղղական են, կամ սեռականէ ուղղական՝ որ հաճախ տեսանք»։ «Հինգ տարվան է» և նման ձևերն էլ ինքն ուրիշ տեղ (եր. 111) դնում է իբրև ածական (տե՛ս և Զ. Հ. Ասատուր, եր. 117)։ Ոչ մի բայ չկա աշխարհաբարում, որ իմ, քո, յուր, մեր, ձեր բառերն իբրև խնդիր առնի։

3. Դերբայներից անորոշ դերբայը գոյական է՝ և նրա վրա դրված իմ, քո, և այլն, իմ գնալը, իմ գալու օրը, և այլն, պարզապես ստացական դերանուն են, ինչպես և դնում են մեր քերականներն (Պալաս., եր. 228, Ձեր նավ նստելու օրը)։ Գրաբարում իբրև ածական համաձայնում են՝ ի գնալ Ռում, ի սերմանելն իւրում։ Ապառնի դերբայներից յու վերջացածը, որով բաղադրյալ ժամանակներ են կազմվում՝ գնալու եմ, գալու եմ՝ անորոշ դերբայի հոլովական ձև է, ինչ «Ինձ ապառնին միշտ գոյական է և հոդ կառնու. ըլլալիքն առաջուց գուշակել։ Ընելիքը չէր դիտեր։ Ըսելիքս իմացան»... Միայն իբրև ծանոթություն դնում է Այտնյանը (եր. 71 հետ.) թե «Ոմանք սովորած են ինձ ապառնին իբրև ածական ալ գործածել»։ Թե այս դերբայը գոյական է, ապա դրա վրա դրված իմ, քո և այլն բառերը ստացական դերանուն են. իմ անելիքը =

առնելիք իմ, առնելեաց իմոց։ Այսպես և ող վերջացած դերբայը, որ ածական է համարվում, հաճախ իբրև գոյական է բանում. «եթե իբրև գոյական առնվի՝ խնդիրը կըլլա սեռական հատկացուցիչ, և ինքն անոր հատկացյալը կըլլա. այսպես... Տիեզերաց ստեղծողը։ Մեր փրկողը. իմ հետեղներս». (Այտն., եր. 105)։ Իմ, քո, մեր և այլն այս դերբայի վրա ևս ուրեմն ստացական ածական են, գրաբարում համաձայնում են իրենց գոյականին, ինչպես՝ Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց և հասանէ առ ցանկացողս իւր։

Ավելի կարևոր է ած վերջացած անցյալ դերբայը, որ սովորաբար ածական է և կարող է հոդ առնելով մենակ գոյականաբար ևս գործածվել։ Այսպիսի անցյալ դերբայի վրա դրված իմ, քո և այլն բառերը, ինչպես՝ իմ տեսածը, ստացական դերանուն է, և այսպես էլ դնում է Այտնյանը (եր. 139)։ Բայց կա այս դերբայի ածականաբար գործածությունը իմ, քո և այլն բառերի հետ, որ շատ սովորական է մեր լեզվի մեջ. Ո՞ գոված աշակերտները. Մեր բնակած տունը»։ Պալասանյանը (եր. 228), որից առնում ենք այս օրինակները, իմ, քո, մեր և այլն բառերն այս դեպքում ևս պարզապես ստացական դերանուն է կոչում։ Այս գործածությունը ստացական է դնում նույնպես Այտնյանը՝ իմ տեսած անտառս և այլն (եր. 141 հտն.)։ Անցյալ դերբայի այս երկու գործածությունը կա և գրաբարում, թեպետ և ոչ հաճախ. միայն «փոխանակ դերանվան սեռականի՝ ինչպես ամեն ուրիշ տեղ՝ ստացական կդրվի, որ կըհոլովվի ալ։ Զի՞ ետ ի ձեռս զիւր պատրեալսն ի չարչարել (=յուր խաբածները)։ ՁՈ՞ փրկեալ ժողովուրդն» (Ջալըխյան, Այտնյան, քեր., եր. 437 հտն.)։

Ավելորդ չի լինիլ, եթե տեսնենք, թե ի՞նչպես ենք մտածում մենք վերջին տեսակի կապակցությունները անցյալ դերբայով. մեզ թվում է, թե մեր մտածողությունը հարատտուն չէ։ Ստացական ս, դ հոդերը հաճախ կրկնվում են վերջի գոյականի վրա. կամ իմ, քո և այլն ստացականները չեն դրվում, այլ բավական է լինում նրանց փոխանակ՝ միայն գոյականի վրա ստացական հոդ դնել. Տեսած մարդս. նորոգած տունդ. գոված աշակերտներդ, այսինքն իմ տեսած մարդս, քո նորոգած տունդ, քո գոված աշակերտներդ=իմ տեսած մարդը, քո նորոգած տունը, քո գոված աշակերտները (Պալաս., եր. 228., Այտնյան, եր. 142, 144 հտն.)։ Ս, դ ստացական հոդերով այս գործածությունը ցույց է տալիս, որ սկզբի իմ, Ո՞ և այլն ստացականները ոչ թե՝ միայն դերբայի վրա ենք մտածում, այլ ամբողջ կապակցության վրա, այսինքն անվան վրա իր ածականով միասին։ Ստացական ածականների գործածությունն այս դեպքում հասկանալի է. դրանք դրվում են անվան վրա։

Պատահում են սակայն և հետևյալ տեսակի կազմության խոսքեր, այն էլ բավական հաճախ. «Ես ու ընկերս կանխավ արած մեր որոշման համաձայն դուրս եկանք քաղաքից»։ «Հովանավոր սրահը և հյուրընկա-

լի քաղցր ընդունելությունը շուտով մոռացրին մեզ ճանապարհի շոգից կրած մեր նեղությունը» (Մուրացանի Երկասիրությունները, եր. 7, 13)։ Այստեղ իմ, քո և այլն դերանունները դրվում են դերբայից հետո՝ գոյականի վրա. ուստի և այդ բառերը դարձյալ կարող են ստացական դերանուն համարվել, քանի որ քերականորեն ոչ թե դերբային են վերաբերում, այլ նրա անվանը։ Բայց կա և մի երրորդ տեսակ գործածություն ևս, որով ստացական ս, դ հոդերը ոչ թե վերջի անվան վրա են դրվում, այլ դերբայի վրա. փոխանակ ասելու՝ (իմ) գրած նամակս, (քո) գոված աշակերտներդ՝ ասում են գրածս նամակը, գրվածդ աշակերտները։ Այս վերջին ձևը օտարաբանություն է համարվում։ Սակայն վերջերս ավելի ու ավելի ընդհանրանում է գրականության մեջ, և հիմք չենք տեսնում օտարաբանություն, ուստի և խորշելի համարելու։ Այս ձևով, ինչպես ստացական հոդից երևում է, ստացական դերանունները մտածում ենք ոչ իբրև անվան լրացում, այլ իբրև անցյալ դերբայի լրացում։ Եվ իսկապես երբ գոյականաբար դործ ենք ածում իմ գրածը, իմ գրածս, կամ լոկ՝ գրածս, այս ժամանակ իմ ստացական դերանունը, կամ ս ստացական հոդը միմիայն գրած դերբային է վերաբերում և ցույց է տալիս թե գործողությունը ումնից է ծագում։ Ճիշտ այդպես իմ գրած նամակը կամ լոկ գրածս նամակը կապակցությունների մեջ ևս ստացական իմ դերանունը կամ ս հոդը գործողության ծագումն են որոշում։ Իմ գրած նամակը, (իմ) գրածս նամակը նշանակում է՝ նամակը որ իմ գրածն է, (իմ) գրածս է. մինչդեռ ինձ գրած նամակը նշանակում է՝ նամակը որ ինձ են գրած։ Իմ գրածը (ս), գրածս ձևերն իհարկե օտարաբանություն չեն։ Բայց (իմ) գրածս նամակը, ինչպես և իմ գրած նամակը ձևերը ծագում են հենց (իմ) գրածս, իմ գրածը ձևերից։ Ինչպես որ ասում ենք՝ Տիգրանը, որ իմ եղբայրն է=իմ եղբայր Տիգրանը. կամ Տիգրանը, որ (իմ) եղբայրս է=(իմ) եղբայրս Տիգրանը,— ճիշտ նույն ձևով և՝ նամակը, որ իմ գրածն է=իմ գրած նամակը. իսկ նամակը, որ (իմ) գրածս է=(իմ) գրածս նամակը։ Ուրիշ խոսքով անվան վրա դրված իմ գրած, (իմ) գրածս ձևերը ծագում են իմ գրածը, (իմ) գրածս գոյականաբար գործածությունից։ Ստացական դերանունով կամ հոդով անցյալ դերբայը ուրեմն, որ դրվում է անվան վրա, առնվում է ոչ իբրև իսկական ածական, այլ իբրև ածականաբար գործածված գոյական, որ կարող է հետևաբար ստացական դերանուն ունենալ։ Նույն ձևով են գործածվում և ոդ ենթակայական դերբայը և իմ ապառնի դերբայը։ Թեպետ և Այտնյանը (եր. 105) ոդ դերբայի համար ասում է, թե երբ իբրև ածական առնվի, սեռական խնդիր, ուստի և ըստացական դերանուն չի դրվի վրան, բայց այդ ճիշտ չէ. ժողովրդական լեզվի մեջ այս դեպքում ևս հաճախ սեռականով կամ ստացական դերանունով է մնում ոդ դերբայը, ուստի և իբրև գոյական է մտածվում. Օրինակ՝ Աոս և Վարդիթեր եր. 144 գտնում ենք. «լսում են տեսնելու սրա (=երգի) կանչողին» — Ահա, մի սրտ ասող տղին տեսնենք։

վերջին՝ սրա ասող տղին ձևը վերլուծվում է՝ տղին, որ սրա ասողն է։ Նույն ձևով հազվադեպ չէ ժողովրդական լեզվի մեջ՝ իմ կանչողին,— իմ կանչող տղին, քո բերող մայրը և այլն։ Այսպես և իմ անելիք բաները վերլուծվում է՝ բաները որ իմ անելիքն են։ Հետևաբար բոլոր դերբայները, որոնք իրենց հետ ունին իմ, քո, իր և այլն դերանունները, գոյականաբար են առնվում, թեկուզ անվան վրա դրված լինեն, այս պատճառով դրանց հետ դրված իմ, քո և այլն դերանունները ստացական են, ինչպես և դնում են մեր քերականները։ Գրաբարում այդ բոլոր դեպքերում ստացական ածականներ են բանում, որոնք համաձայնում են դերբային։

4. Ածականները սեռական խնդիր, ուստի և իմ, քո, յուր և այլն չեն առնում։ Այտնյանը ածականների խնդրառության մեջ ոչ մի սեռական խնդիր չի դնում. «քեզի նմանները» օրինակի տակ ծանոթություն է դնում, թե «կրսվի նաև ում նմանները. բայց այն ատեն նման գոյականաբար առնված կհամարվի» (եր. 106)։ Եվ արդարև գրաբարում է՝ նմանի քո, նմանեաց քոց, այսինքն նմանիմ գոյական է կամ գոյականաբար գործածված, ուստի և առնում է ստացական ածական, որ համաձայնում է։ Զ. Հ. Ասատուրը դնում է թե «սեռական հոլով խնդիր կառնեն իր վերջավորող ածականները. ցավերու ամոքիչ, աշխարհի փրկիչ» (եր. 108, 146)։ Բայց այդ բառերն այս դեպքում ածական չեն, այլ գոյական. ուստի և իմ փրկիչը, մեր փրկիչը կապակցությունների մեջ իմ, մեր և այլն ոչ թե ածականի սեռական խնդիր են, այլ գոյականի ստացական ածական, որ և գրաբարում համաձայնում են՝ փրկչին մերոյ, ի փրկչէն մերմէ։ Այսպես և ուրիշ ամեն ածական ևս, մանավանդ բայական իմաստ ունեցողները, կարող են սեռական խնդիր առնել միայն այն ժամանակ, երբ գոյականաբար են գործածվում. ուստի և գրաբարում իմ, քո և այլն ստացական դերանուններ են դրվում և համաձայնում. Կատարեա՛ զկամս երկիւղածաց ից. առնես զհատուցումն ոյոց երկրպագուաց. յայտնելոց է իւրոց արդարոց. ոչ կարէ ոք ի թշնամեաց յաղթել յուսացելոց ից և այլն (Ագաթանգեղոս, Թիֆլիս, եր. 60, 62, 64)։

Սակայն ածականների խնդրառության մեջ մեզ պետք է մի կիրառություն պարզել, որի վրա, որքան գիտենք, ուշադրություն չեն դարձրել մեր քերականները։ Կան ածականներ, որոնք սովորաբար տրական են առնում՝ ինձ, քեզ և այլն. բայց որոշ դեպքերում դրանց մոտ տրականի հետ անխտիր դրվում են և իմ, քո, յուր և այլն ձևերը։ Օրինակ Պռոշյանի «Սկիզբն երկանց»-ի մեջ սովորական ինձ նման, քեզ նման, իրեն հավասար, իրեն արժանի և այլն ձևերի հետ գտնում ենք և հետևյալները. «Այսպիսի քաջասիրտ դյուցազնը պետք է խելքի հատունությամբ էլ գերազանցեր յուր նման և ոչ յուր չափով ստեղծված արարածից» (եր. 302)։ «Տարաբախտաբար՝ ձեր նման անհողդողդն և

մեր սուրբ հավատի ջերմ նախանձախնդիրները շատ սակավներն եմ **տեսել» (եր. 346)։ «Հողն իմ նման մոր գլխուն» (եր. 34., Մուրացան, I. 49. Քոռանա ինձ նման մայրը)։** «Նրա և յուր նման մի քանիսի ձեռքին է». (եր. 9) «Բազմից վերին կողմն և հրավիրեց ինձ յուր հավասար՝ ծունգե ծունգ նստել» (եր. 305)։ «Իսլամն յուր արժանի պատիվն ունի» (եր. 39)։ «Մինարեի կիսալուսնի փայլը ... գիշերն յուր համանուն գիշերային լուսավորի լույսի հետ էր մրցում» (եր. 394)։ «էֆենդու և յուր բոլոր վարչական ստոբադրյալ անդամների հարաբերությունը հայերի հետ» (եր. 5)։ Մենք օրինակները բերում ենք պատահաբար աչքի ընկած տեղերից։ Եթե այս նպատակով մի երկու գիրք թերթելու լինեինք, դրանց թիվը խիստ կբազմապատկվեր, որովհետև խոսակցության ժամանակ հաճախ լսել ենք այսպիսի ձևեր՝ մենք մտանք իմ ծանոթ փողոցը։ Նա իր արժանի պատիժն ստացավ։

Ի՞նչ են այս գործածությունները, արդյոք ստացական դերանուն. անձնականի սեռակա՞ն, թե՞ տրական։ Մենք տրական ենք մտածում և փորձված վարժապետների հարցում ենք տվել, նրանք էլ տրական են մտածում։ Անշուշտ եթե ասում ենք՝ Նա այսօր ևս իր նմանների մեջ վերջին տեղը չի բռնում (Պռոշ., Սկ. երկ., եր. 4). կամ Ռափայելը մինչև այսօր էլ յուր հավասարը չի ունեցել,— նմանները, հավասարը գոյականաբար են գործածվում և կարելի է գուցե նրանց վրա դրած յուր բառը ստացական դերանուն համարել։ Բայց յուր նման և ոչ յուր չափով ստեղծված. յուր հավասար նստել, ձեր նման անհողդողդը և այլն ձևերի մեջ նման, հավասար բառերը մակբայ կամ ածականի խնդիր են. դրանց հետ ստացական դերանուն մտածել չենք կարող, այլ անձնական դերանուն։ Մյուս կողմից մենք մտածողության եղանակի ոչ մի տարբերություն չենք գտնում՝ հողն իմ նման մոր գլխին և հողն ինձ նման մոր գլխին, ձեր նման անհողդողդը և «ինձ նման տգետը, կամ քեզ նման անփորձը» (Պռ. Սկ. երկ., 223), յուր հավասար նստել և իրեն հավասար նստել, իր արժանի պատիժը և իրեն արժանի պատիժը և այլն ձևերի մեջ։ Եվ կարծում ենք ուրիշներն ևս, եթե կարողանան սովորած քերականության նախապաշարումից ազատվել, նրանք ևս, բացի արտաքին հնչյունական տարբերությունից, մտածողության եղանակի տարբերություն չեն տեսնիլ այդ երկու ձևերի մեջ և իմ, ձեր, յուր և այլն այս դեպքերում տրական կանվանվեն և ոչ սեռական, քանի որ դրանք սեռականի, այսինքն ստացականի իմաստ չունին։ Եվ զարմանալի չի լինիլ, եթե աշխարհաբարում այդ ձևերը տրականի վերածված լինին։ Գրաբարում արդեն իւր ձևը թե սեռական և թե տրական է. մյուսների համար ևս սեռական և տրական հոլովներն իրար տեղ են անցնում և պատահում են տրականի իմաստով գործածություններ սեռականի, թեպետ քիչ, ինչպես՝ շիջուցանել կամին զկայծակն որ մնայ իմ, արծաթն որ կորեաւ քո, պաշտպան էր ինձ կամ իմ (Զալըխ., եր. 262)։ Այսպես և Բագրատունին (եր. 310, տե՛ս և եր. 251 և այլն) դնում է.

«Ուրախակից եմ ամենեցուն ձեր, իմա՛ ձեզ» և այլն։ Սեռական գործածելը տրականի իմաստով շատ ավելի պարզ երևում է ցուցական դերանունների ասոր, ադոր, անոր և այլն ձևերի մեջ։ Այսպես ուրեմն վերևում դրած օրինակների մեջ իմ, մեր, յուր և այլն ստացել են տրականի իմաստ։ Բայց ինչո՞ւ այդ որոշ թվով ածականների հետ միայն անձնական դերանունների սեռականները ստացել են տրականի իմաստ. Դրա բացատրությունը տալիս է մեր հին լեզուն։

Մենք վերևում ասացինք, որ անձնական դերանունների բոլոր սեռական համարված գործածությունները որ կան աշխարհաբարում, համապատասխան են գրաբարում նույն բառերի գործածությանն իբրև ըստացական դերանուն։ Այստեղ ևս բացառություն չկա։ Արդ գրաբարում որոշ թվով ածականների խնդրառության առանձնահատկությունը հետևյալն է, որ ճիշտ արտահայտված գտնում ենք Զալըխյանի քերականության մեջ (եր. 202). «Վերջահոլով տրականի տեղ սեռական կամ ստացական ալ կրնա դրվիլ՝ իբրև հատկացուցիչ գոյական... Ածականի սեռական խնդրի վրա աս գիտնալու է, երբ որ երկուքը բայով մ՚իրարու կապված չեն՝ հասարակորեն սեռական կամ ստացական կը դրվի փոխանակ տրականի և այն ատեն ածականը սեռականին հատկացյալն է»։ —Ածականն ուրեմն գոյականաբար է գործածվում, որով և նրա տրական խնդիրը փոխվում է բնականորեն սեռականի, իսկ անձնական դերանունների փոխանակ՝ ինչպես ամեն դեպքում գոյականի վրա՝ դրվում են ստացական ածականներ, որ համաձայնում են իրենց գոյականին, այս դեպքում՝ գոյականաբար գործածված ածականին։ «Ամենայն երէ զնմանին իւր սիրէ (=իրեն նմանը, կարող էր ասել նաև իր նմանը)։ Ինքնին շրջի խնդրել զարժանաւորս իւր։ Զուկն զիւր համազգիսն անխտիր ուտէ։ Գերեկից իմ։ Հասակակիցք մեր։ Երանի որ ոչ ծառայեաց անարժանի իւրում (փխնկ՝ ինքեան=իրեն)։ Արժանաւորաց իւրոց։ Նմանեաց իւրոց։ Տաց զքեզ ի ձեռս վնասակարաց քոց»։ Այս բոլոր օրինակների մեջ, որ բերում է Զալըխյանը, ածականները գործ են ածված զեղչական ձևով իբրև գոյական, ուստի և հոլովելիս ստացականները միշտ համաձայնում են։ Բայց նույնպես գոյականաբար և ըստացականով գործ են ածվում ածականները և առանց իրենց գոյականի զեղչման, ինչպես՝ նմանեաց իւրոց արանց, կամ հավասար և ծանոթ ածականները Սաղմոսի հետևյալ խոսքի մեջ։ Դու մարդ հաւասար իմ և ծանօթ իմ։ Խորենացու այս խոսքերը՝ Ասէ ցհամազգին իւր ցՍուրեն Պահլաւ=Ասում է յուր համազգի Սուրեն Պահլավին, բառացի նշանակում է՝ Ասում է յուր համազգիին՝ Սուրեն Պահլավին։ Կամաւ յանձն առին զտերութիւն իմոյ նախնւոյն և համանուան Արտաշրի=Իմ նախնու և (իմ) համանունի՝ Արտաշրի տերությունը։ Գոյականաբար է գործածված համազգի բառը և Շնորհալու հետևյալ խոսքի մեջ՝ «պատերազմել սոքօք ընդ համազգեաց մերոց մարդկան=Մեր համազգի մարդկանց, բառացի՝ մեր համազգիների՝ մարդկանց հետ, կամ մարդ-

կանց՝ մեր համազգիների հետ։ Այսպես և Եգիպտոսի համախոհի իրավ կապակցության մեջ համախոհ ածականը ձևով գոյականաբար իրև բացահայտիչ է դրված Եգիպտոս անվան վրա, ուստի և իւր ըստացական դերանունն է դրվում համախոհ բառի վրա։ Բայց մենք իզուր ենք օրինակները բազմապատկում։ Եզրակացությունը պարզ է. գրաբարում ածականները սեռական խնդիր, ուստի և ստացական դերանուն, առնում են միայն այն ժամանակ, երբ գոյականաբար են գործածված, լինին մենակ, այսինքն իրենց գոյականի զեղչմամբ գործածված, թե մի ուրիշ գոյականի վրա դրված։ Վերջին դեպքում գոյականն ու յուր ածականը քերականական ձևով նույն են, ինչ որ մի բացահայտիչ և բացահայտյալ. ուստի և ածականի վրա դրված ստացականը համաձայնում է։ Այսպես գործ են ածվում այն ածականները, որոնք տրրական խնդիր են առնում։

Ինչպես ուրիշ ամեն դեպքերում գրաբարի ստացական դերանունները մնում են աշխարհաբարում, նույնպես և այս ստացական դերանունները, որ գրաբարում տրականի փոխանակ դրվում են այնպիսի ածականի վրա, որ գոյականաբար իրև բացահայտիչ կամ բացահայտյալ է գործածված։ Այս ստացականներից են ծագում ահա՛ աշխարհաբարում իմ, քո, յուր և այլն բառերը, երբ դրվում են մի ածականի վրա փոխանակ տրականի՝ «Հողն իմ նման մոր գլխին»։ Արդարև աշխարհաբարում ևս այդ բառերը կարող են երբեմն իրև ստացական դերանուն առնվել, բայց միայն այն ժամանակ, երբ ածականը մտածվում է իրև գոյական և բացահայտիչ հաջորդ գոյականին. օրինակ՝ «Ես նամակ գրեցի իմ ծանոթ տիկնոջը» (Րոբինզոն Կրուզո. Ս. Թառայանի, եր, 44) խոսքի մեջ ծանոթ բառը կարելի է կարծում ենք իրև գոյական մտածել, իրև՝ տիկնոջը, որ իմ ծանոթն է։ Մենք այս ընդունում ենք, թեպետ մի քանի ուսուցիչներ մեր հարցին պատասխանեցին, թե այս դեպքում ևս տրական են մտածում իմ ձևը։ Նույնպես կարելի է ածականն իրև գոյական մտածել, ուստի և իմ, քո և այլն իրև ստացական հետևյալ կապակցությունների մեջ. իմ ազգակից գիժ Քուրը=գիժ Քուրը, որ իմ ազգակիցն է։ Յուր համանուն լուսավորի լույսը=լուսավորի, որ յուր համանունն է։ Բայց աշխարհաբարում իմ, քո և այլն բառերը գոյծ են ածվում և այնպիսի ածականների հետ և այնպիսի դրութեամբ, որ ինչպես վերևում ասացին, իրև ստացական առնվել չեն կարող, քանի որ դրանց խնդրառու ածականն իրև գոյական առնվել չի կարող՝ Հրավիրեց ինձ յուր հավասար նստել. Ձեր նման անհոդդողդ մարդը=մարդը որ ձեր նման անհոդդողդ է և այլն։ Այս ձևերը մենք ուրիշ կերպ բացատրել չենք կարող, բայց եթե ընդունել, որ իմ, քո, յուր և այլն դերանունները այլևս ստացական իմաստ չունին և գործ են ածվում տրականի նշանակությամբ։

Բացի այդ՝ գրաբարում այս ածականները զեղչական ձևով մենակ գործածված ժամանակն ևս առնում են ստացական դերանուն, որով-

հետև իրենց գոյականի վերչված ժամանակն ևս դրանք նույն գործածութիւնն ունին. օրինակ մարդ հաւասար իմ, մարդոյ հաւասարի իմոյ, ուստի և մենակ լինում է՝ հաւասար իմ, հաւասարի իմոյ: Բայց աշխարհաբարում յուր հավասար մարդ է կապակցության մեջ յուր բառը կարելի չէ ստացական ընդունել. ուստի ինչո՞ւ պետք է յուր հավասար զեղչական ձևի մեջ յուր բառը ստացական համարվի և ոչ տրական: Նույնպես՝ Պռոշյանի հետևյալ խոսքի մեջ՝ «Այս քաղաքը այսօր ևս յուր նման (հաղամ)ների մեջ վերջին տեղը չի բռնում». յուր բառը չի կարող ստացական համարվել, քանի որ նման բառը գոյականաբար առնվել չի կարող,— մինչդեռ գրաբարում գոյականաբար է առնվում՝ ի միջի ընդմանանց իւրոց քաղաքաց,— ուստի և զեղչական գործածության ժամանակ ևս՝ յուր նմանների մեջ (Պռ., Սկ. երկ., 4) մենք պետք է յուր բառը ոչ թե ստացական համարենք, այլ տրական հոլով: Եվ վերջապես կրկնում ենք յուր բառն այս գործածություններում ստացական իմաստ չունի, և ոչնչով չի տարբերվում իրեն բառից. Միթե նույն չէ՞ ասել՝ յուր նման քաղաքներ, իրեն նման քաղաքներ, յուր նմանները, իրեն նմանները, մեր նմանները, մեզ նմանները. «Ծածուկ տեղերում յուր հավատարիմների մեջ Սեդրոս ազան սպարծենում էր, որ» ... և «Մեր բախտից յուր առաջին աշակերտների մեջ իրեն հավատարիմներ շատ ու շատ սակավ են» (Պռոշ., Սկ. երկ., 10, 80): «Ես մորս մեր կուսակից եմ արել» (Պռոշ., Սկ. երկ., եր. 102) և ես մորս մեզ կուսակից եմ արել:

Թե իրոք այդ՝ գրաբարի ստացականներից ծագած սեռականները տրականի հետ նույնացել են, դրա պարզ ապացույց է այն, որ այս ստացականներին կամ փոխանակել են տրականներ, կամ երկու ձևն ևս՝ իմ, քո և այլն և ինձ, քեզ և այլն գործ են ածվում, ինչպես գրեթե անխտիր գործ ենք ածում բացի արդեն հիշածներից նաև՝ մեր սահմանակից երկրները, մեզ սահմանակից երկրները: իմ համախոհները, ինձ համախոհները, իմ աջակից մարդը, ինձ աջակից մարդը և այլն:

5. Նախդիրներ գրաբարում, ասացինք, առնում են նաև սեռական խնդիր. բայց աշխարհաբարում այսպիսի նախդինները կամ դուրս են թնկել, կամ սեռականին փոխանակել է տրականը, ինչպես՝ առանց ինձ, առանց քեզ և այլն: Նույնիսկ անուններից ծագած նոր նախադրությունները, իսկապես ետադրությունները, առնում են անձնական դերանունների տրական հոլովը՝ ինձ համար, ինձ պես, ինձ վրա, ինձ չափ, ինձ հետ: Եվ այս հասկանալի է թե ինչո՛ւ: Այս բառերը, որ իսկապես գոյական անուն են, սկզբնապես ասվել են ստացականով՝ իմ համար, իմ պես և այլն, ինչպես ասում ենք այժմ նախադրական անուններ՝ ձեր ետևից, իմ առջև, ձեր մեջ, ձեր միջից, որ գրաբար լինում են ստացականով՝ յետոյ ձերմէ, զառաջեաւ իմով, ի միջի ձերում, ի միջոյ ձերմէ: Բայց երբ համար, պես, վրա, չափ, հետ բառերը դադարում են անուն լինելուց և ըմբռնվում են իբրև ետադրություն, այլևս չեն կա-

րող ստացական ածական առնել. ուստի իմ, քո և այլն ձևերին փոխանակում են ինձ, քեզ, և այլն։ Սակայն հենց որ այդ բառերը վերականգնում են իրենց գոյական իմաստը հոդ առնելով և ավելի՝ հոլովվելով, դարձյալ իմ, քո և այլն ձևերի հետ են գործածվում. ինձ վրա, բայց՝ իմ վրայի, իմ վրայից և այլն. քեզ հետ, բայց քո հետի։ Ուրեմն այդ բառերը այժմ էլ դեռ գոյական են, ուստի և զարմանալի չէ, որ պատահում են հին ձևով՝ իմ պես, իմ վրա, մեր չափ, քո հետ գործածություններ։

Այդ բառերից միայն համար, պես,— վերջինս անմիջական հաջորդություն (և ոչ նմանություն) ցույց տալու իմաստով,— կարելի է ասել այժմ կատարյալ ետադրություն են դարձել. բայց պես բառն այդ իմաստով միշտ տրական է առնում, այն էլ միայն անորոշ դերբայ (լույսը բացվելուն պես), իսկ համար բառը սովորաբար տրական է ինդրում՝ ինձ համար և այլն։ Արդարև այժմ էլ դեռ պատահում են հրնացած ձևով իմ համար, մեր համար և այլն, բայց այդ արդեն պատմական քերականությանն է վերաբերում՝ բացատրել թե որովհետև համար ետադրություն գոյականից է ծագում՝ «ի համար իմ, ի քո համար». ուստի և պատահում են հնացած ձևով իմ, քո և այլն ստացականներով գործածություններ։ Նույնպես երթ մասին բառը, որ մենք ետադրությունների մեջ ենք դրել, լինում է իմ մասին, ֆո մասին և այլն, այդ ցույց է տալիս, որ այդ բառը իսկական ետադրություն չէ և մենք դեռ իբրև անուն ենք ըմբռնում, ուստի և ստացական ածականով է գործածվում, ճիշտ ինչպես շատ սովորական է նույն բառի ցուցական ածականներով գործածությունը՝ այս մասին, այդ մասին, այն մասին։ Կան երկու ետադրություններ էլ՝ ներո, հանդիման, որոնք գրաբարի հոլովական ձևեր են և գրաբարից մտած են աշխարհաբարի մեջ։ Դրանք նույնանիշ են աշխարհաբարի տակ,— դիմաց, առաջ բառերին, ուստի և, թեպետ անփոփոխ են մնում, բայց նույնպիսի խնդիր են առնում, ինչ որ իրենց նույնանիշները, որ իսկապես անուն են։

Այսպես աշխարհաբարի բուն նախադրությունները և նախադրության դարձած անունները անձնական դերանունների սեռական խնդիր չեն առնում, այլ տրական։ Եվ Այտընյանն (եր. 81 հտն.) այդպես էլ դրնում է թե «Բուն նախադրությունները տրական հոլով խնդիր կառնուն». «իսկ գոյականե առնված նախադրություններն իրենցմե առաջ սեռական հոլով կուզեն»։ Նույնն ասում է և Պալասանյանը (եր. 189 հտն.)։

Հետևությունը պարզ է—այն ինչ որ վերևում դրինք։ Սեռական և տրական հոլովների նույնացման մեջ անձնական դերանունների նրկատմամբ լեզուն բացառություն չի արել։ Աշխարհաբարի իմ, քո, իր, մեր, ձեր ձևերը մնում են մեր հին լեզվից իբրև ստացական ածական և ոչ իբրև անձնական դերանվան սեռական։ Մեր քերականներն այդ բառերի բոլոր գործածություններն որ կան աշխարհաբարում, այդպես

էլ կոչում են՝ ստացական դերանուն կամ ստացական ածական։ Միայն սակավաթիվ ածականների հետ իմ, քո, յուր և այլն բառերը, թեպետ դարձյալ հին լեզվի ստացականներից են մնում, այլևս մենք—մեզ հետ և ուրիշները—ստացական, որ է սեռական, չենք մտածում, այլ տրականն։

Տեսնենք մեր քերականներն ինչպե՞ս են վարվում։ Պալասանյանը իմ, քո, յուր, մեր, ձեր, իրենց դնում է դերանունների մեջ իբրև «ստացական ածականներ», որոնք «եթե մենակ մնան, գոյականի զորություն ունին և հող առնելով հոլովվում են»։ Բացի այդ՝ միևնույն բառերը նա դնում է միանգամայն և իբրև անձնական դերանունների սեռական հոլով (իրենց բառն իհարկե նաև իբրև տրական)։ Նույնը գրտնում ենք նաև Այտնյանի քերականության մեջ, որից օգտվել է Պալասանյանը։ Այս սիստեմի մեջ մի մեծ պակասություն ենք գտնում։ Գրաբարում արդարև իմ, քո, իւր, մեր, ձեր բառերը թե անձնական դերանունների սեռական են և թե ստացական ածական կամ ստացական դերանուն ուղղական հոլով։ Իբրև ստացական դերանուն դրանք դրվում են գոյականի վրա և համաձայնում են իրենց գոյականին՝ հայր իմ, հօր իմոյ և այլն. իսկ իբրև անձնական դերանվան սեռական ունին մենակ գործածություն բայի հետ կամ նախդրով՝ են իմ անդ եղբարք հինգ, ընդ իմ, ընդ քո և այլն։ Աշխարհաբարում սակայն դրանք պետք է կամ ստացական դերանուն դրվեն, կամ անձնականի սեռական։ Եթե դրանց բոլոր գործածությունները ստացական դերանուն են դնում մեր քերականները, այլևս հարկ չկա հոլովման մեջ դնելու դարձյալ իբրև անձնականի սեռական։ Շատ շատ կարելի է և պետք է ծանոթություն դնել, թե այդ ստացականները ծագում են հին սեռական հոլովից։ Այս դեպքում հոլովման շարքերի մեջ կմնան միայն տրականները՝ ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ։

Տեսնենք այժմ ցուցականների երկին ձևերը՝ **սրա, դրա, նրա,** և **սրան, դրան, նրան**։ Արևմտյան աշխարհաբարի համար այս խնդիրը նշանակություն չունի, որովհետև սովորաբար գործ են ածվում՝ ասոր, ադոր, անոր, որոնք թե տրական են և թե սեռական. իսկ սա, դա, նա ցուցականների համար միայն սորա, դորա, նորա ձևերն են պատահում։ Ինչո՞ւ են պահված արևելյան աշխարհաբարում այս տարբեր ձևերը, մինչ բոլոր բառերի սեռականն ու տրականը ձևով նույնացել են։

Գրաբարում սորա, դորա. նորա և հոգնակի սոցա, դոցա, նոցա իբրև անվան լրացում սովորաբար անփոփոխ են մնում՝ հայր նորա, հօր նորա, ի հօրէ նորա. բայց պատահում են այդ բառերի համար և ածականաբար գործածություններ՝ Զի նոցայոցն տիրեսցէ իշխանութեանց, որից երևում է թե այդ ցուցականների սեռականներն ևս ըմբռնվել են իբրև ստացական ածական։ Սակայն քանի որ այս վերջին տեսակի գործածությունը հազվադեպ է երևում, պետք է ընդունել, որ հին ժամանակ մեր լեզվի մեջ դրանց իբրև ստացական ածական գործածու-

թյունն ընդհանուր չի եղել. մի բարբառի մեջ եթե հաճախված է եղել, ուրիշների մեջ չի եղել. այնինչ իմ, քո, իւր, մեր, ձեր ընդհանրապես ստացական ածական են եղել։ Որ արևելյան աշխարհաբարում պահվում են սրա, դրա, նրա ձևերն իբրև սեռական, կարելի է գուցե կարծել ուրեմն թե դրանք ծագում են մի այնպիսի հին բարբառից, որի մեջ սորա, դորա, նորա ձևերն անունների վրա դրված ժամանակ իբրև ստացական ածական են ըմբռնված եղել, ուստի այդ ձևերը մնացել են քայացած՝ միայն իբրև սեռական—ածական, ինչպես են իմ, քո, յուր, մեր, ձեր ձևերը։ Բայց մինչդեռ անձնական դերանունների տրականի համար պահված են հին ձևերը՝ ինձ, քեզ և այլն, ցուցականների հին սմա, դմա, նմա ձևերի դուրս ընկնելովը հարկ է եղել մի առանձին տրական հոլովի և լեզուն առաջ է բերել այս գործածության համար սրան, դրան, նրան ձևերը։

Ի՞նչպիսի կազմություն ունին այս վերջին ձևերը։ Մառն յուր քերականության մեջ (եր. 140) մի ծանոթությամբ ասում է թե սրան, դրան, նրան տրականների վերջի ն տառը հոդ է, որ ավելացել է սրա, դրա, նրա=սորա, դորա, նորա սեռականների վրա։ Այս տեսությամբ ուրեմն պետք է ընդունել, որ ինչպես անունների վերջից, երբ որոշյալ են և տրական են, ավելանում է ն հոդը,—մինչդեռ նույն ձևերն իբրև սեռական ածականաբար գործածվելով, անհոդ են մնում,—այնպես և սրա, դրա, նրա ձևերն իբրև սեռական անհոդ են մնում, բայց իբրև տրական, որովհետև որոշ են, ստանում են ն հոդը։ Ըստ ինքյան այս տեսությունը անհավանական չէ. որովհետև մեր լեզվի մեջ անսովոր երևույթ չէ դերանունների հոլովական ձևերի վրա ն հոդի ավելանալը. գրական լեզվի մեջ անգամ սա, դա, նա դերանունների ներգոյականի վրա երբեմն ն հոդ է դրվում՝ նրանումն է, սրանումն է, դրանումն է։ Իսկ բարբառների մեջ սրա—սրան ձևի նմանը գտնում ենք վիր (=ոյր) ձևի մեջ, որ իբրև տրական գործ է ածվում ն հոդով. վի՞ր լաճն է. բայց վի՞րը տվիր։

Բայց մենք այդ ձևերի վերջին ն տառը ոչ թե նոր ավելացած հոդ ենք համարում, այլ հոլովակերտի մաս, որ իբրև հոդ է ըմբռնվել։ Ինչպես նույն արևելյան աշխարհաբարի բարբառների մեջ իրա և իրան ձևերը երկուսն էլ ծագում են հին սեռական—տրական իւրեաց ձևից միայն իրա ձևի մեջ վերջի ն տառը դուրս է ընկել (համմտ. աղջկան, աղջկա, կընկան, կնկա, օրվան, օրվա և այլն),—նույնպես և սրա, դրա, նրա ձևերը ծագում են սրան, դրան, նրան ձևերից, և ոչ ընդհակառակն։ Իսկ սրան, դրան, նրան=սորան, դորան, նորան կրկին հոլովված ձևեր են. այն է՝ նախնական սեռականի վրա ավելացել է անվանական հոլովման սեռական—տրականի նոր կազմված եան=ան, ա(յ) հոլովակերտը, ճիշտ ինչպես նույն ձևով կրկին հոլովված է իւրեան=իրան, իրա։ Լեզուն ապա կործածության տարբերություն է դրել, սրա, դրա, նրա և սրան, դրան. նրան ձևերի մեջ։ Այս տարբերությանն իբրև հիմք ծառայել է այն, որ անունների նմանությամբ՝ տրականի համար վերջի ն տառը իբրև հոդ

ըմբռնվելով պահվել է, իսկ սեռականի համար հատկացվել է առանց ն-ի ձևը։ Ինչպես ասվում է իրա գիրքը, բայց իրան տվի, նույնպես և նրա գիրքը, բայց նրան տվի։ Այսպես և աղջկան=աղջկա (յ) ձևերից առաջինի մեջ ն տառն արդեն իբրև հոդ է ըմբռնվում, և ասում ենք՝ Այս աղջկա գիրքը, մի որևէ աղջկա տալ և ոչ՝ Այս աղջկան գիրքը, մի որևէ աղջկան տալ։ Բայց թե վերջի ն տառը նոր ավելացող հոդ չէ, այդ պարզ երևում է մյուս հոլովների կազմությունից, որոնց մեջ ն տառը մնում է՝ նրանից, նրանով, իրանից, իրանով, ինչպես և հոգնակին՝ նրանք, նրանց, —այսպես և աղջկանից, աղջկանով*։

Այսպես ուրեմն ցուցականների կրկին ձևերը միևնույն հոլովական ձևն են, միայն վերջում ն ունեցողները, անվանական հոլովման ազդեցության տակ, իբրև տրական են գործածվում, մինչ առանց ն-ի ձևերը սովորաբար իբրև սեռական են բանում։ Սովորաբար ենք ասում, որովհետև այս ձևերը երբեմն գործ են ածվում և տրականի իմաստով հատկապես այն ածականների հետ, որոնք գրաբարում գոյականաբար գործածվելով տրական խնդրի փոխանակ առնում են ստացական ածականներ կամ սեռական. աշխարհաբարում այս գործածությունը սակայն կա և այնպիսի ձևով, որ սրա, դրա, նրա ձևերն իբրև տրական են մտածվում. օրինակ՝ ... Նրա նման կլկլացնի (Պռոշ., Սոս և Վարդ., եր. 144)։ Միխթար Գոշը հիմնվելով քրիստոնեական կրոնի վրա՝ տալիս է նրա համեմատ բացատրություն։ Ժառանգողն իրավունք ունի... դրա համեմատ իր կամքը հայտնելու (Ազգ. հանդես, XVI, եր. 125, 129)։ Այսպես և՝ Դու էլ նրա նման մի մարդ ես։ Նրա վայել պատրաստություն էին տեսել։ Նրա նման քաջասիրտ երիտասարդը։ Դրա համաձայն և այլն։ Բարբառների**, հազվադեպ և գրական լեզվի մեջ առանց ն-ի ձևերը գործ են ածվում իբրև տրական և ուրիշ դեպքերում, ինչպես՝ «Միծծռնակ» երգի մեջ «Երբ տեսնես դու նորա, ինձնից շատ բարև արա». կամ Գամառ Քաթիպայի հետևյալ տողերի մեջ. «Տեսա Ավարայր սարսափած ահից. Անթիվ զորք նորա տիրել էր Պարսից»։

Եզրակացությունը պարզ է։ Եթե սրան, դրան, նրան ձևերի վերջի ն տառը հոդ է, ինչպես Մառը դնում է, ապա կա միայն ընդհանուր հոլովական ձև սեռականի և տրականի համար՝ սրա, դրա, նրա=սորա, դորա, նորա, որ հին սեռականն են, բայց այժմ ստացել են և տրականի իմաստ, միայն իբրև տրական գործածված ժամանակ, որովհետև միշտ

---

* Թե իւրեան ձևի հետ եղել է իւրայ=իրա, այդ երևում է իւրայոց, իւրայովք և այլն հոլովական ձևերից։

** Օրինակ՝ Տ. Նավասարդյան, Հայ. ժող. Հեքիաթներ, 7-րդ գիրք։ Երիմի բարբառով հեքիաթների մեջ գտնում ենք նարա (=նորա) ձևը թե իբրև տրական և թե իբրև սեռական։ Շինտը ես նարա փնտռելու կերթամ. Նարա առնելու էկիլ իմ, Խարթան խուշը նարա մեկ ձի տվեց, նարա շատ խրատից։ Նարա ասից,— նարա ճարը, նարա ձեռքեն և այլն. Արևմտյան գրական լեզվի մեջ ևս նորա գրողները, թեպետ հազվադեպ, այս ձևը գործ են ածում և իբրև տրական, բայց ձեռքի տակ օրինակ չունինք։

տրոշ են, հետևում են անուններին և հոդ առնում։ Հոլովման շարքի մեջ մնում են ուրեմն սրա, դրա, նրա ձևերը և շարահյուսության մեջ պետք է բացատրել, թե տրական գործածության ժամանակ սովորաբար և հոդով են բանում, ինչպես որ հարաբերականը, որի հոլովական ձևն է որի, բայց իբրև տրական լինում է սովորաբար հոդով՝ որին։— Իսկ եթե այդ զույգ ձևերը՝ նրա—նրան և այլն, ինչպես կարծում ենք, իրարուց անբաժան ձև են, ինչպես իրա—իրան, հոլովման շարքի մեջ պետք է դնել զույգ իբրև մի ընդհանուր հոլով, ինչպես դնում ենք՝ աղջկան—աղջկա, կնկան—կնկա և այլն, և ապա դարձյալ շարահյուսության մեջ բացատրել թե նրան ձևը, վերջի և տարի իբրև հոդ ըմբռնվելովը, գործ է ածվում իբրև տրական, իսկ նրա ձևն իբրև անհոդ կարծված ձև՝ սովորաբար իբրև սեռական է բանում։ Երկու դեպքում ևս սեռականի և տրականի ձևական զանազանությունը վերանում է։

Լեզուն ուրեմն ցուցականների սեռական և տրական հոլովների նույնացման մեջ ևս բացառություն չի թողել։

Այժմ հարց է՝ եթե ձևով,— ձևով ենք ասում և ոչ պաշտոնով,— այսպես բոլորովին նույնացել են մեր սեռական և տրական հոլովները, արդյոք պե՞տք է, որ մեր աշակերտները սերնդե սերունդ կրկնեն՝ սեռական՝ քաղաքի, տրական՝ քաղաքի։ Եվ ի՞նչ գործնական նշանակություն ունի այդ կրկնելը։ Արդյոք կրկնելով սովորո՞ւմ են սեռականը տրականից տարբերել՝ առանց շարահյուսության օգնությանը դիմելու։ Անշուշտ ոչ։ Այս բանին համոզված կլինեն Պալասանյանի հետ և մեր բոլոր փորձված վարժապետները։ «Այս նույնավերջ հոլովները միմյանցից որոշելու մի հնարք կա—քննել թե նրանցից յուրաքանչյուրը ինչ պաշտոն է վարում»։ Այս պատճառով գրեթե բոլոր քերականությունների մեջ կգտնենք գրած. «Սեռականը տրականեն զանազանելու դյուրին կերպն սա է.—եթե գոյականի վրա ինկած է՝ սեռական է, իսկ եթե բայի վրա՝ տրական է» (Այտն., եր. 94)։ «Սեռական և տրական հոլովներուն ձևերը նույն ըլլալով, պետք է դիտել որ սեռական հոլով հատկացուցիչը միշտ գոյականի մը կը վերաբերի... մինչ տրական հոլովը բայի մը կը վերաբերի» (Զ. Հ. Ասատուր, եր. 117)։

Ես չեմ կարող մոռանալ տարիներ առաջ տեղի ունեցած մի քննություն. ստորին դասարանի աշակերտին ստիպում էին կարդացած հոդվածի մեջ որոշել հոլովները, և նա կտրվեցավ, որովհետև չէր կարողանում սեռականը տրականից տարբերել և ոչ հայցականն ուղղականից ու տրականից։ Բայց ինչո՞վ էր մեղավոր աշակերտը. նա սովորել էր լոկ հոլովել և այն, որ սեռական—տրական իրար նման են, բայց չէր սովորել հոլովների շարահյուսությունը, նրանց կատարած պաշտոնը խոսքի մեջ, նրանց ցույց տված զանազան հարաբերությունները,— և ահա ստիպում էին նրան՝ ասել ճացի ձևը սեռակա՞ն է, թե՞ տրական։ Ո՞ր մեկը մեզանից կարող է առանց շարահյուսական արժեքը կշռադատելու, միայն ձևի վրա հիմնվելով, որոշել սեռական և տրական հո-

լովները հետևյալների մեջ. Մի վանքի պատկանած կալված,—Մի վանքի կալված: Նա տեր եղավ շատ կալվածների,—Նա շատ կալվածների տեր եղավ: Նա հայր է շատ զավակների,—Նա շատ զավակների հայր է: Նա շատ մարդկանց բարեկամ է,— նա բարեկամ է շատ մարդկանց: Այս տունը մի հարուստ մարդու է,— Այս տունը մի հարուստ մարդու է պատկանում: Գերի մի լինիր կրճերի,—Կրճերի գերի մի լինիր: Այս երեխաները մի հասակի են,— Նրանք էլ քո հասակին են,— Այս մի հասակի երեխաները: Առանց հացի, եղրորս համար, որդուդ պես և այլն:

Ես մի անգամ մի հայերեն և ռուսերեն քաջ իմացող բանասերի և լեզվի ուսուցչի ասացի այս խոսքը. «Ես այս ձին հարյուր մանեթի առա», և հարցրի թե ի՞նչ հոլով է հարյուր մանեթի: Պատասխան ստացա թե սեռական է:— Ինչու՞:— Որովհետև արժեք ցույց տվող բայերը՝ գրնել, առնել, ծախել և այլն սեռական են առնում շատ լեզուների մեջ:— Բայց մի կողմ թողնենք այդ օտար լեզուները և ենթադրենք թե այդ կանոնը չգիտենք, ի՞նչպես իմանանք, որ «հարյուր մանեթի» սեռական է և ոչ տրական: Հարկ եղավ և հոդին դիմելու, և ես ասացի. «Այս մանեթին հաց առա, իսկ այն մանեթին՝ միս»: Ուրեմն և հոդն էլ վրան եկավ: Բայց և այնպես իմ խոսակիցը մնաց այն կարծիքին թե սեռական է, իսկ ես չհամոզվեցի և մնացի այն կարծիքին թե տրական է: Պալասանյանը (եր. 214) գրում է թե «սեռական հոլով են առնում առնելու և տալու բայերը...Հայրս տասը մանեթի փայտ գնեց»: Բադրատունին նույնպես (եր. 301) գնել, վաճառել և այլն բայերի խնդիրը սեռական է դնում,— վաճառել ավելի քան երեք հարիւր դահեկանի քանո՞յ վաճառեցեր զայդ: Բայց Այտնյանը (եր. 102) և Աստուրը (եր 108) տրական հոլով են դնում ծախել, գնել, վաճառել բայերի խնդիրը,— Այս գիրքը հինգ ղրուշի գնեցի: Հինգ դահեկանի վաճառել: Քրսան դենարի կուտային:

Այսպես, վարժապետներն անգամ երբեմն դժվարանում են սեռականը տրականից տարբերել և հարկ է լինում և հոդին դիմելու կամ մի ծանոթ օտար լեզվի, բայց օտար լեզուները և նույնիսկ և հոդը, որի գործածությունը բավական մեծ ազատություններ ունի, չեն կարող անսխալ առաջնորդ լինել: Եվ վերջապես նույնիսկ մեր հայտնի քերականներն էլ շփոթում են սեռական և տրական հոլովները. մեկը սեռական է դնում այն, որ ուրիշը տրական է համարում: Ի՞նչ անի ուրեմն աշակերտը:

Պետք է, կարծում ենք, մեր քերականությունը կազմել մեր լեզվի համեմատ և ոչ թե ընդօրինակություն անել օտար լեզուների քերականությունների, որոնց բոլորի համար, ինչպես մի գերմանացի լեզվագետ գրում է, լատիներեն լեզուն Պրոկրուստեսի անկողինն է եղել, որի վրա նոր լեզուների քերականությունները չափելով ծայրատել են կամ բռնի կերպով քաշքշել երկարացրել: Եթե մեր լեզվի մեջ սեռական և

տրական հոլովները մի ընդհանուր ձև ունին, ապա և այդ երկուսը մի ընդհանուր հոլով են և ոչ թե երկու տարբեր հոլովներ։ Ինչպես որ կոչականը դուրս է ձգված հոլովների ուսմունքից, հայցականը պետք է դուրս ձգել, որովհետև չունի յուր առանձին ձևը,— այսպես և սեռական և տրական հոլովները պետք է մի ընդհանուր հոլով դնել, քանի որ այդ երկուսը ձևով մի հոլով են, ինչքան էլ այդ մի ձևը տարբեր տարբեր հարաբերություններ ցույց տալու համար գործածվի։ Այն ինչ որ ուրիշ լեզուների մեջ երկու հոլովական ձևով, երկու հոլովով է արտահայտվում, մեր աշխարհաբարի մեջ մի ձևով, մի հոլովով է ասվում և ինչո՞ւ պետք է ուրեմն հակառակ մեր լեզվի կազմությանը՝ «բռնի կերպով քաշքշելով երկարացնենք» մեր հոլովների ուսումը և աշակերտների բանը դժվարացնենք, ինչ է թե ուրիշ լեզուների մեջ առանձին առանձին սեռական տրական հոլովներ կան։ Բայց ուրիշ լեզուների մեջ կարող են ուրիշ շատ հոլովներ էլ լինել, ուրեմն պետք է ա՞յդ էլ ստեղծենք մեր քերականության մեջ։ Միթե մեր քերականությունն ուրիշ լեզուների՞ համար է շինվում, և հայոց լեզվի քերականությունը սովորում է հայ աշակերտը օտա՞ր լեզուների կազմությունը հասկանալու համար։ Օտարազգի մարդու համար, որի մայրենի լեզվի մեջ կան սեռական և տրական հոլովներ, անշուշտ հայերեն սովորելու մի հեշտ միջոց կլինի անմիջապես տեսնել սեռ., տրակ. քաղաքի, այսինքն երկու հոլովի վերածած մի հոլովը. և եթե մենք ռուսի համար կազմեինք մի հայերենի քերականություն, մեր այդ մի ձևի դիմաց ոչ միայն սեռական և տրական, այլև նախադրական=предложный կը դնեինք, քանի որ ռուսերենի այդ հոլովի պաշտոնն էլ հայերենում միևնույն ձևն է կատարում։ Բայց այդ կլիներ օտարազգու համար հարմարեցրած մի քերականություն, իսկ հայի համար հորինած հայերենի քերականության մեջ մի հոլով պիտի դնել և հատկապես տրական հոլով, իսկ սեռականը նրա գործածություններից մեկը միայն համարել։

Ինչո՞ւ այդ մի ընդհանուր հոլովը տրական պիտի կոչել և ոչ սեռական կամ մի նոր ընդհանուր անունով։ Նոր տերմինն անշուշտ այն առավելությունը կունենար, որ միակողմանի չէր հասկացվի. մինչ սեռական և տրական տերմինները միակողմանի են։ Սեռական ասելով, քանի որ հին և օտար լեզուների քերականությունների վարժված ենք, միշտ հասկանում ենք այդ ընդհանուր, ասենք, 2-րդ հոլովի մի որոշ գործածությունը միայն, երբ այդ հոլովով գոյականը դառնում է մի ուրիշ գոյականի լրացում. իսկ տրական ասելով հասկանում ենք նույն հոլովն իբրև խնդիր բայի և ածականի։ Արդ հասկանալի է՝ այսպես վարժված մարդկանց համար շատ խորթ կհնչի, օրինակ, պարտեզի դուռը կապակցության մեջ պարտեզի ձևը տրական կոչել, մինչ նոր տերմինը վերլուծության ժամանակ չէր հակասիլ մեր այս հին ըմբռնումին. մենք հոլով որոշելիս կասեինք պարտեզի 2-րդ հոլով է և ապա շարահյուսության մեջ կը բացատրվեր, որ այդ 2-րդ հոլովը գործ է

ածվում իրրև անվան լրացում (սեռական) թե՞ իրրև բայի և ածականի լրացում (տրական)։ Բայց հոլովների մեջ նոր տերմինն իրրև այդպիսին ինքն ըստ ինքյան խորթ է, և եթե պետք է մի նոր խորթության վարժվել, մենք ավելի կգերադասեինք փոխանակ նոր տերմին մտցնելու՝ եղած տերմիններից տրականի իմաստը ընդարձակել, լավ ևս ասած, եղած միակ հոլովական ձևը տրական կոչել, իսկ սեռականը համարել նրա գործածություններից մեկը։ Անշուշտ մի ժամանակ շատ խորթ էր հնչում և կոչականը համարել ուղղականի գործածություններից մեկը. բայց ժամանակն այդ խորթությունը արդեն հարթել է։— Կան քերականններ որ հոլովներն անվանում են թվերով՝ 1-ին հոլով. 2-րդ հոլով. 3-րդ հոլով և այլն։ Այսպիսի կոչումներով ինքն իրեն նույնանում են մեր սեռական և տրական հոլովները՝ իրրև մի 2-րդ հոլով, քանի որ միևնույն ձևն ունեն, և վերանում է տերմինոլոգիայի այս ճրզճիմ խնդիրը։ Բայց այդպիսի կոչումներն ընդունված և հարմար չեն։

Բայց ինչո՞ւ պետք է եղած տերմիններից տրականն առնել և ոչ սեռականը. կարող են ասել— և եղել է մեզ բերանացի ասող— թե սեռականի գործածությունն ավելի շատ է քան տրականինը, ուստի ավելի հարմար կլինի սեռականը պահել և տրականը համարել նրա շարահյուսական գործածություններից մեկը։ Այս առարկությունը հիմնավոր չէ։ Նախ տրականի իմաստով գործածությունը, հետն առած և հայցականի իմաստով տրականինը, սեռականի գործածությունից պակաս չէ. Ապա տրականը պահելու համար կան իրական հիմունքներ.

1. Դերանունների մեջ տրականից են կազմվում մյուս հոլովները և ոչ սեռական համարված ձևից. ինչպես ինձ-նից, քեզ-նից, ինձ-նով և այլն։

2. Եթե սեռական տերմինը պահենք, ինձ, քեզ, մեզ, ձեզ, սրան, դրան, նրան ձևերը չեն կարող դրվել հոլովների մեջ, քանի որ դրանք իրրև սեռական չեն գործածվում, մինչդեռ եթե տրականը պահենք, իմ, քո, յուր, մեր ձեր,— ինչպես հետո կտեսնենք նաև՝ սրա, դրա, նրա— կառնվեն ստացական դերանունների մեջ, կամ եթե ուզենանք, նույնիսկ տրականի տակ կարող են դրվել, քանի որ, ինչպես տեսանք, այդ ձևերն և իրրև տրական են գործածվում, թեպետ սակավադեպ։

3. Ինչքան էլ հայցականը դուրս ձգվի, բայց այդ հոլովի իմաստով գործածություններ պիտի բացատրվի. մենք չենք կարող ասել թե անցողական բայերի հայցական սեռի խնդիրը դրվում է ուղղական և սեռական հոլովով, այլ ուղղական և տրական հոլովով, որովհետև հայցականը տրականի նման է և ոչ սեռականի։

4. Սեռականը մի հոլով է, որ ածականի պաշտոն է վարում, այսինքն իրրև որոշող բառ կամ վերադիր (определение, die attributive Bestimmung) դրվում է մի գոյականի վրա։ Պալասանյանը (եր. 208 հտ.) պարզապես գրում է թե «սեռական հատկացուցիչը հարաբերական ածականի» և կամ «որակական ածականի միտք ունի». նույն է

*ասել՝ մոր օրհնություն և մայրական օրհնություն։ Այսպես և Բադրատունին (եր. 320)։ Այտնյանը (եր. 39) նույնպես բոլոր ստացական սեռականները դնում է իբրև ստացական ածականներ. «որ ամենն ալ սեռականէ ուղղական եղած ածականներ են. և մենակ (առանց դոյականի) մնալով հոդ կառնուն և կըլլան գոյական». ինչպես մարդու, գինվորի, Պետրոսի և այլն։ Եվ որովհետև սեռականի ոչ—ստացական իմաստով գործածությունը նույնպես ածական են դնում՝ անվանելով կամ **սոսկ ածական, կամ «սեռական—ածական»**, կամ սեռականից կազմրված ածական, «սեռականի ձևով ածական», «իբր ածական գործածված սեռական» (Պալաս., 208. Աբատուր, 108, 117, 119),— ապա սեռականը դառնում է ամբողջապես մի հոլով, որ իբրև ածական, այսինքն վերադիր է գործածվում։ Եվ այդպես էլ պետք է լիներ, քանի որ, ինչպես տեսանք, «սեռականը բայի խնդիր չէ, այլ անվան» և որ ածականներն ու բուն նախդիքները սեռական խնդիր չեն առնում, այլ տրական։ Այժմ հարց է,— եթե սեռականը մի հոլով է, որ միմիայն գոյականի վերադիր է դառնում և ձևով նման է տրականին, ինչո՞ւ պետք է մենք այդ գործածությունը մի առանձին հոլով դնենք և ոչ թե տրականի կամ, ասենք 2-րդ հոլովի գործածություններից մեկը համարենք։ Մեր լեզուն ունի մեր աշխարհաբարում հինգ հոլովական ձևեր. 1. Ուղղական, 2-րդ հոլով, 3. Բացառական, 4. Գործիական, 5. Ներգոյական։ Արդ այս հոլովական ձևերը ոչ միայն բայի և ածականի խնդիր են լինում, այլ և անվան, այսինքն իբրև ածական վերադիր դրվում են անվան վրա։ Ներգոյական հոլովը միայն բացառություն է կազմում, և մենք ներքևում կտեսնենք դրա պատճառը։*

1. ՈՒՂՂԱԿԱՆ

ա) Պարոն *Սմբատը*, զորավար *վարդանը*, Վարդան *զորավարը*, տառեխ *ձուկը* և այլն։

բ) Ոսկի *ձկնիկ*, բար *սիրտ*, ձմեռ *ժամանակ*, պաս *օր*, հրեշ *մարդ*, սար *տեղ* և այլն։

գ) *Մի* բաժակ *ջուր*, *մի* կաքիլ *արտասուք*, *մի* կոտ *ցորեն*, երկու թերթ *թուղթ*, *մի* գունդ *զորք* և այլն։

դ) Խումբ խումբ *մարդիկ*, տեսակ տեսակ *գրիչներ*, փունջ փունջ *ծաղիկներ* և այլն։

ե) Նոր տեսակ *երևույթ*, ամեն կերպ *չանք*, վերին աստիճան *հիմարություն*, ոսկու գույն *դինի* և այլն։

2. 2-ՐԴ ՀՈԼՈՎ

ա) Մոր *օրհնությունը*, եղբոր *գրատունը*, պարտեզի *դուռը*։

բ) Դաշտի *ծաղիկ*, ամառվա *փուշ*, ձմեռվա *նուշ*, քսան տարվա *հարս* և այլն։

գ) Ածաքի *բաժակ*, գինու *բաժակ*, երեխայի *խելք*, ցորենի *ալյուր* և այլն։

դ) Շաֆարի *գլուխ*, ճացի *փշրանք*, փայտի *բեռ* և այլն։

ե) *Երկրորդ* կարգի *աշակերտ*, *հետին* աստիճանի *հիմարություն*, *մի* ճասակի *երեխաներ* և այլն։

3. ԲԱՅԱՌԱԿԱՆ

ա) Փայտե *աթոռ*, կտավե *հագուստ*, *խրիմի* մորքուց *գտակ*, *կանաչ* մաճուդից *չուխա* և այլն։

բ) Երկու կողմից *թշնամություն*, չորս բոլորից *հարձակում*։

4. ԳՈՐԾԱԿԱՆ

ա) Կաքնով *ոչխար*, աղ ու ճացով *մարդ*, պոչով *սուտ*, *քաղցր* հայացքով, խարտյաշ *մազերով աղջիկ* և այլն։

բ) Հոտերով *ոչխար*, բեռներով *ցորեն*, դաստով *թուղթ* և այլն։

Մեր հոլովների գործածության մասին այս էլ պիտի դիտել, որ բոլոր հոլովներն էլ, երբ անվան վերադիր են, չեն ստանում և հոդը։ Այս ընդհանուր հատկությանը հետևում է և 2-րդ հոլովը։ Գրաբարում, հայտնի է, և հոդը դրվում է սովորաբար սեռականի վրա, տէր պարտիզին. արևմտյան աշխարհաբարում հոդը սովորաբար կրկնվում է սեռականի և յուր գոյականի վրա՝ պարտեզին տերը. իսկ արևելյան աշխարհաբարում և հոդը դրվում է միայն սեռականի անվան վրա, իսկ սեռականն ինքն անհոդ է մնում՝ պարտեզի տերը։ Ի՞նչ է ցույց տալիս այս, եթե ոչ այն, որ մեր լեզուն դիմել է միատեսակության. ինչպես մյուս հոլովները գործածվելով իբրև վերադիր ածական՝ և հոդ չեն առնում, դրանց նմանությամբ և երկրորդ հոլովը իբրև վերադիր դադարել է հոդ առնելուց։ Լեզուն ուրեմն ոչ մի տարբերություն չի դնում բոլոր հոլովների իբրև անվան վերադիր գործածության մեջ, որ և հոդի նկատմամբ բոլոր հոլովների այս գործածության մեջ միակերպություն է առաջ բերել։ Մենք սեռական հոլով վերադիրն ուրեմն մտածում ենք իբրև մեկը մյուս հոլովներով ասված վերադիրներից։

Եթե ուղղական, բացառական և գործիական հոլովները կարող են բայի, ածականի և անվան խնդիր լինել և միաժամանակ միևնույն հոլովը մնալ, ինչո՞ւ նույնը չենք կարող ասել և երկրորդ հոլովի համար. Ինչո՞ւ պիտի այդ հոլովն իբրև բայի և ածականի խնդիր տրական կոչվի, իսկ իբրև անվան խնդիր՝ սեռական, և ոչ երկու դեպքում էլ տրական։ Մենք ոչ մի հիմք չենք տեսնում, բայց եթե այն, որ օտար լեզուներում (մասամբ և գրաբարում) այդ պաշտոնները կատարելու համար կան առանձին հոլովներ առանձին ձևերով։ Բայց մեր լեզվի մեջ այդպիսի առանձին ձևեր չկան։ Եվ վերջապես սեռական հոլովն օտար լեզուների մեջ ոչ միայն գոյականի վերադիր է լինում, այլև բայի և ածականի

խնդիր. իսկ մեր սեռական առածը միայն գոյականի վերադիր է։ Սվ եթե այդ մի հոլովական ձևը գոյականի վերադիր լինելու համար երկսի պիտի բաժանվի, բայի և ածականի հետ դրվածը միայն տրական կոչվի, իսկ անվան վրա դրվածը՝ սեռական, ինչո՞ւ երկսի չպիտի բաժանվի, օրինակ և ուղղական հոլովը, որ նույնպես բազմազան կերպով իբրև վերադիր է գործածվում։ Կարելի էր հո՛ դնել դիցուք «վերադրական» հոլով և այդ հոլովի տակ մտցնել ուղղականի բոլոր կիրառությունները իբրև վերադիր, կամ «մակադրական» հոլով և դրա տակ հասկանալ գործիականի գործածությունները իբրև վերադիր։ Մենք ոչինչ չէինք ունենալ ասելու, եթե սեռական տերմինի տակ հասկացվի, ինչպես որ է իրոք, այդ 2-րդ հոլովի գործածությունն իբրև անվան վերադիր։ Բայց այս իմաստով սեռական բառը կդառնա ոչ թե հոլովի անուն, այլ մի շարահյուսական տերմին,—և այդ կլիներ այդ տերմինի բանավոր գործածությունն աշխարհաբարում։ Այսպես և հայցական անունը կարելի է գործածել անցողական բայերի հայցական սեռի խնդրի համար, քանի որ հայցական հոլովի հիմնական գործածությունը հենց այդ է։ Այս ձևով վարվելով մենք սեռական և հայցական հոլովները դուրս ձգած կլինեինք, բայց միաժամանակ իբրև շարահյուսական տերմին պահելով հայցական և սեռական բառերը՝ դյուրություն տված կլինեինք աշակերտին գրաբարի և օտար լեզուների նույն հոլովներն ըմբռնելու։

5. Սեռական տերմինն աշակերտի համար անհասկանալի է, և սեռականն իր մեջ չի ամփոփում տրականի իմաստը, այսինքն սեռականի հիմնական նշանակությունից չենք կարող հանել տրականը և վերջինս նրա գործածություններից մեկը համարել,— մինչդեռ ընդհակառակն տրական տերմինը ոչ միայն հասկանալի է, այլև այդ հոլովի հիմնական նշանակությամբ մեծ մասամբ բացատրվում է նաև սեռականն իբրև նրա գործածություններից մեկը։ Տեսնենք այս վերջին կետը, որ կարևոր է։

Որ լեզվի մեջ սեռական և տրական հոլովները ձևով նույնացել են և այդ նույնացումը այսօր մեր աշխարհաբարում կատարյալ է դարձել,—դա անպայման իր հիմքը պետք է ունենա ոչ միայն հնչափոխության, այլև մեր մտածողության եղանակի նույնացման մեջ. կամ մենք սեռականն սկսել ենք մտածել իբրև տրական, կամ ընդհակառակն տրականն ենք մտածել նաև իբրև սեռական, որ այդ երկու հոլովն իրար տեղ են անցել։ Նախ տեսնենք ուրեմն թե ինչ են ցույց տալիս իրենց հիմնական նշանակությամբ մեր լեզվի մեջ այդ երկու հոլովը, սեռականն ու տրականը։

Հոլովների անուններն արդեն, բացի ուղղականից, ցույց են տալիս իրենց հիմնական նշանակությունն ու գործածությունը։ Ուրիշ լեզուների մեջ ուղղականը բաժանվում է երկու հոլովի՝ **կոչական**, որ դործ է ածվում մեկին ձայնելու, կանչելու համար, և **անվանական**, որ

գործ է ածվում 1, մի առարկա խոսքից դուրս անվանելու համար. 2, իբրև անուն բայի (ենթակա) և 3, իբրև ստորոգյալի անուն (Prädikatsnomen), որով և հասկանալի է այս հոլովի անվանական կոչումը։ Բայց մեր ուղղականը միայն բառի ուղիղ ձևն է ցույց տալիս, առանց որոշելու հոլովի պաշտոնը, և ամեն անուն ուղիղ ձևով՝ է ուղղական։ Հայցական հոլովը «ցույց է տալիս գլխավորապես թե մեկ առարկա ուրիշ առարկայի գործողությանն է ենթարկվում» (Պալաս., եր. 45), ուրիշ խոսքով դառնում է սեռի խնդիր (հայցական=խնդրական)։ Ներգոյականը ցույց է տալիս մի բանի մեջ լինելը. գործիականը այն գործիքը կամ միջոցը, որով մի բան լինում է, փոխաբերաբար՝ նաև միասնություն, հետը լինելը։ Տրական հոլովը յուր հիմնական նշանակությամբ ցույց է տալիս մի խնդիր, որին տրվում, մատուցվում, մոտեցվում է մի բան, կամ փոխաբերաբար՝ ընծայվում, վերագրվում, վերաբերում, պատկանում, պատշաճում է մի բան,—հակառակ բացառական հոլովի, որ ցույց է տալիս «ի բաց առնուլ». առնել, հեռացնել, կամ փոխաբերաբար՝ ծագել, առաջ գալ, սերվել, սկսվել։

Ի՞նչ է նշանակում սեռական բառը և ի՞նչ է ցույց տալիս սեռական հոլովն յուր հիմնական նշանակությամբ։— «Սեռական հոլովը ցույց է տալիս թե մեկ առարկա ո՛ւմն է կամ ինչի՛ց է առաջ գալիս, սերվում է» գրում է Պալասանյանը (եր. 45)։ Բայց այս բացատրության երկրորդ մասն ավելի հարմար է բացառականին կամ այն լեզուների սեռականին, որոնց մեջ սեռականը և բացառականի իմաստ ունի։

Սեռական, genetivus, բառը բացատրում են gignere=ծնել, սերել բառից իբրև ծնող, սերող, որովհետև այդ հոլովից ծնվում, սերվում են մյուս հոլովները. բայց այս բացատրությունը մեր աշխարհաբարի համար անպետք է, քանի որ, ինչպես տեսանք, մեր դերանունների մեջ մյուս հոլովները կազմվում են տրականից՝ ինձ-նից, քեզ-նից և այլն։ Այս իմաստով ուրեմն ավելի շուտ տրականը «սեռական» պիտի կոչվի։

Կա նույն բառի և մի երկրորդ մեկնություն ևս genus=սեռ, տեսակ բառից, որովհետև սեռական հոլովը դրվելով մի անվան վրա՝ իբրև մի որակական ածական մի նոր սեռ, տեսակ է կազմում, ինչպես ծառ, ծիրանի ծառ, բաժակ, արծաթի բաժակ։ Այս բացատրությունը հարմար է հայերենի սեռականին, բայց թողնվում է մեր քերականությունների մեջ, որովհետև ընդհանրապես սեռի և տեսակի տրամաբանական բաժանման անուշադրության է մատնվում. մենք չգիտենք մի քերականություն, որի մեջ պարզված լիներ որակական ածականների սեռից նոր տեսակ կազմելու հատկությունը։ Մի երեխա որ չի հասկացել որակական ածականների այս տեսակարար պաշտոնը, նա չի ըմբռնիլ հարկավ և այն, թե սեռական հոլովն այսպես կոչվում է, որովհետև դա նույն պաշտոնն է կատարում, ինչ որ մի որակական ածական։ Մեր վարժապետներն այս բացատրությունը թողնում են, երևի աշակերտի խելքի համար անհատկանալի համարելով, թեպետ և նույն աշակերտն ամեն

օր առարկաները տեսակների է վերածում թե՛ դասերի ժամանակ և թե՛ դրսում՝ կյանքի մեջ։ Դրա հետևանքն ա՛յն է լինում, որ սեռական հոլովի անունը մինչև վերջն էլ անհասկանալի է մնում աշակերտի համար, և այս գիտեն փորձված վարժապետները։

Սեռականի վերջին բացատրությունն, ասացինք, հարմարվում է հայերենին. բայց ոչ այն իմաստով, որ գործածվի իբրև ընդհանուր անուն՝ յուր մեջ ընդունելով և տրականը։ Այս բացատրությամբ սեռականը միշտ վերադիր է,— և հայերենում սեռականը միշտ էլ անվան վրա է դրվում։ Բայց «սեռական» տերմինը ոչ թե այդ հոլովի՝ իբրև վերադիր գործածությունն է ցույց տալիս ընդհանրապես, այլ նրա բազմաթիվ նշանակություններից մեկը։ Տեսակարար իմաստ ունի ոչ ամեն սեռական, այլ միայն անորոշ սեռականը և վերջինս էլ ոչ միշտ։ Իսկ եթե դերանունների սեռականն էլ վերցնենք,— և այս դեպքում պետք է որ վերցնենք,—դերանունների համար այս բացատրությունը բնավ չի հարմարվում։ Բացի այդ՝ երեխաների համար միշտ մի հանելուկ կմնա թե ինչ հոլով է այդ հոլովը, որ «սեռական» է կոչվում, որովհետև երբ դրվում է անունների վրա, երբեմն տեսակ, սեռ է կազմում իբրև մի որակական ածական. և նույն երեխան դարձյալ կմտածի—և կգտնվեն միշտ սրամիտ երեխաներ, որ այսպես մտածեն—հապա ինչո՞ւ ուղղականը, բացառականը, գործիականը նույնպես «սեռական» չեն. չէ՞ որ այդ հոլովներն ևս դրվելով անվան վրա՝ նույնպես երբեմն տեսակ են կազմում իբրև որակական ածական. ինչո՞ւ հացի գդալ. արծաթի բաժակ, թեյի բաժակ, ծիրանի ծառ, նոր տեսակի հագուստ կապակցություններ մեջ հացի, արծաթի, թեյի, ծիրանի, նոր տեսակի «սեռական» են, իսկ ոսկի ձկնիկ, տուն օր, նոր տեսակ հագուստ, արծաթե բաժակ, պատվով մարդ, երկար պոչով գդալ և այլն կապակցությունների մեջ ոսկի, տուն, նոր տեսակ, արծաթե, պատվով, պոչով «սեռական» չեն,—չէ՞ որ սրանք էլ դրվելով անվան վրա նոր տեսակ են կազմում իբրև մի որակական ածական։ Իսկ ընդհակառակն շատ բնական, պարզ և հասկանալի կլինի, երբ նա սովորի թե ինչպես ուղղական, բացառական և գործիական հոլովները, բացի բայի և ածականի խնդիր լինելուց, իբրև խնդիր դրվում են և անվան վրա, նույնպես և տրականը. ինչպես ուղղական, բացառական և գործիական հոլովներն իբրև անվան վերադիր երբեմն որակական ածականի իմաստ ունին, երբեմն ոչ, կամ բուն բառով ասենք,— որ մեր քերականությունների մեջ ընդունված չէ,— երբեմն դառնում են որակիչ և երբեմն որոշիչ (qualificatif և déterminatif) — նույնպես և տրական հոլովը. և վերջապես, եթե կուզեք, ինչպես մյուս հոլովների (բացի ուղղականից) անուններն առնված են նրանց այն գործածությունից, որով խնդիր են դառնում բայի, նույնպես և 2-րդ հոլովի անունը։ Լեզուն ինքը ստեղծել է հոլովների գործածության մեջ այս միակերպությունը և մենք ինչո՞ւ պետք է ուղիղ ու կարճ ճանապարհը թողած, ավելորդ խորդ ու բորդ աշխատանք անենք։

Բայց մենք դեռ չիմացանք, թե ինչ է մեր սեռական հոլովի հիմնական նշանակությունը։ Ինչքան էլ տարբեր կերպով բացատրեն «սեռական» տերմինը և հարմարեցնեն այդ հոլովի բազմազան գործածությանը,— մեր քերականները հայերենի սեռականի համար իբրև գլխավոր և առաջին նշանակություն դնում են մի կիրառություն, որ բնավ հարմար չէ «սեռական» տերմինին և ավելի շուտ կարելի էր կոչել «պատկանական» կամ «վերաբերական»։ Պալասանյանը (եր. 208) գրում է. «Գոյական հատկացուցիչը (=սեռական հոլովը) ցույց է տալիս գլխավորապես թե մեկ առարկա ումն է պատկանում կամ վերաբերում... երբեմն ցույց է տալիս մեկ որևիցե առարկայի որպիսությունը»։ Իսկ Այտնյանը (եր. 93) և Աստուրը (եր. 108, 116 հտն.) գրում են «Սեռական հոլովը կը գործածվի 1. իբր հատկացուցիչ. 2. իբր ածական»։ «Հատկացուցիչը անուն մ'է, որ ուրիշ անունի մը որուն ըլլալը կը ցուցնե... Հատկացյալն այն բառն է, որ հատկացուցչին կը վերաբերի.. Սեռական հոլովը բանի մը մեկուն վերաբերիլը կը ցուցնե»։

Մեր սեռականի առաջին և գլխավոր նշանակությունն է ուրեմն լինել «հատկացուցիչ» կամ ինչպես ասում են՝ «ստացական սեռական» այսինքն ցույց տալ թե մի առարկա ո՛ւմ, ինչի՛ է հատկացվում, պատկանում, վերաբերում, կամ ուրիշ խոսքով՝ ում ստացվածքն է (possession)։ Սեռականի այս գործածությունն այնքան կարևոր է, որ Պալասանյանը ոչ միայն բոլոր սեռականներն անխտիր հատկացուցիչ է դնում, այլ այդ անունով կոչում է նաև ածականի վերադիրները. մինչդեռ մյուս քերականները հատկացուցիչ անվան տակ հասկանում են միայն պատկանելություն, վերաբերություն ցույց տվող սեռականը կամ ստացական սեռականը (genetivus possessivus)։ Բայց և մյուս քերականները, ինչպես և Պալասանյանը, այնքան երկրորդական տեղ են տալիս սեռականի ոչ ստացական իմաստով գործածությանը, որ, ինչպես տեսանք, հենց ածական էլ կոչում են, կամ «սեռական-ածական» կամ «սեռականի ձևով ածական»—ուրիշ խոսքով ոչ-ստացական իմաստով սեռականներն առնվում են իբրև սոսկ ածական (ինչպես որ են իրոք շատ անգամ)։ Մնում է ուրեմն իբրև հիմնական նշանակություն մեր սեռականի համար նրա ստացական իմաստով գործածությունը։

Սեռականի հիմնական և գլխավոր նշանակությունը մեր լեզվի մեջ՝ իբրև ստացական սեռական որոշելուց հետո՝ հասկանալի կլինի, թե ինչո՞ւ մեր սեռական և տրական հոլովները ձևով նույնացել են։ Ձևերի նույնացումը առաջ է գալիս կամ հնչական փոփոխությունից, կամ նրմանական (անալոգիական) կազմությունից, որով մի ձևի փոխանակում է մի ուրիշ ձև։ Իսկ այս վերջինը, նմանական կազմությունը, միշտ հետևանք է մտածության եղանակի նույնացման։ Որ աշխարհաբարում սեռական և տրական հոլովները նույնացել են, կարծում ենք պատճառն այն է, որ այդ երկու հոլովներն իրենց հիմնական նշանակությամբ իբրև մեկ ենք մտածել։ Եվ այս տարօրինակ բան չէ։ Հին ֆրանսերենի մեջ,

օրինակ (այժմ միայն ժողովրդական ձևով), տրականի պաշտոն կատարող à նախդիրը սեռականի պաշտոն կատարող de *նախդրի իմաստ ունի.* la maison à Pierre *միևնույն է թե* la maison de Pierre *(Պետրոսի տունը). ինչպես ասում են, մեկը ստացական տրականի պաշտոն ունի, մյուսը ստացական սեռականի* (Possessiver Dativ, Possessiver Genetiv), *բայց իմաստով երկուսն էլ նույն են: Զարմանալի չէ ուրեմն, եթե մեր լեզվի մեջ ևս տրականն ու սեռականը (=ստացական) միակերպ մտածվեն:*

Գերմաներենի նորագույն և լավագույն քերականություններից մեկի մեջ գտնում ենք բացատրած, թե ստացական սեռականը ցույց է տալիս ստացողը (*den Besitzer*), իսկ տրականը ցույց է տալիս «այն անձը, որի ստացվածքն է դառնում մի առարկա* (die Person, in deren Besitz ein Gegenstand übergeht), *օրինակ՝* **Տվեք կայսրինը կայսրին»**: *—Ի՞նչ տարբերություն կա այս երկսի մեջ, եթե ոչ այն, որ սեռականը նույն ստացական իմաստն արտահայտում է անվան վրա դրվելով, իսկ տրականը դրվելով մի բայի վրա, ցույց է տալիս, թե յուր ենթական կամ սեռի խնդիրը իբրև մի ստացվածք վերընծայվում է տրական խնդրին: Օրինակ՝* **Մի աշակերտի գիրք** *կապակցության մեջ աշակերտը գրքի ստացողն է, կամ թե գիրքը մի աշակերտի է պատկանում, մի աշակերտի ստացվածքն է. իսկ* **Գիրքը տվի մի աշակերտի** *կապակցությունը ցույց է տալիս, թե գիրքը մի աշակերտի պատկանելություն, ստացվածքն է դառնում նոր: Այլ խնդիր է իմարկել, թե ստացվածքն ինչպիսի հարաբերությամբ ենք մտածում յուր ստացողի հետ. իբրև մշտական պատկանելություն, սեփականություն, հատկացում, ունեցվա՞ծք, թե՞ իբրև ժամանակավոր, պատահական տիրապետություն, վերաբերություն, պատշաճություն և այլն: Մենք կարող ենք մեզ սեփական չեղող առարկայի համար ևս մերն ասել. բավական է, երբ առարկան որևէ վերաբերություն ունի մեզ հետ: Օրինակ՝ երբ ասում ենք* **Տիգրանի պատկերը**, *ի՞նչ պիտի հասկանալ. արդյոք ա՞յն, որ պատկերը Տիգրանի ըստացվածքը, սեփականությունն է. թե՞ պատկերը Տիգրանից է քաշած պատկերահանը. թե՞ Տիգրանը պատկերահան է և նրա հանած պատկերի մասին ենք խոսում. թե՞ ոչ այս է և ոչ այն, այլ Տիգրանն ու Վարդանը մի պատկեր ունեն իրենց ձեռին ու մտիկ են տալիս, մենք էլ նայում ենք, և ասում ենք՝ Տիգրանի պատկերը լավն է: Սեռականն այս ամենն անորոշ է թողնում. նա չի որոշում ստացվածքի, այսպես ասած, ծագման պատմությունը, պատկանելության տեսակը. մենք իմանում ենք երկու առարկայի հարաբերությունը միայն ընդհանուր հիմնական դծերով՝ թե մի առարկա մյուսին է պատկանում, հատկանում կամ վե-*

---

* Neuhochdeutsche Grammatik für höhere Schulen. Von Dr. E. Th. Michaëlis, Direktor der Ersten Städtischen Realschule Zu Berlin, Leipzig, 1898, *եր.* 37:

բաբերում, կամ թե մի առարկա ունի մյուս առարկան, տեր է,— իսկ տրականով կազմված խոսքի մեջ, ընդհակառակն, ստացվածքի և ստացողի այս հարաբերության տեսակը որոշվում է բայով, եթե միայն բայը ընդհանուր անորոշ իմաստ չունի, ինչպես են պատկանել, վերաբերել, հատկանալ և այլն։ Պարզենք այս՝ օրինակով։

Երբ մենք ասում ենք՝ **Կալվածքը պատկանում է մի վանքի,** *անշուշտ վանքը, որ տրական հոլովով է դրված, կալվածքի ստացողն է, ճիշտ ինչպես երբ ասում ենք՝* **Մի վանքի կալվածք,** *վանքը, որ սեռական հոլովով է դրված, դարձյալ կալվածքի ստացողն է։ Նույնպես երբ ասում ենք՝* **Կալվածքը տվի** *(շնորհեցի, կտակեցի, ընծայեցի և այլն)* **մի վանքի,** *դարձյալ վանքը կալվածի ստացողն է դառնում։ Ի՞նչ տարբերություն կա այս երեքի մեջ։*

Առաջին կապակցության մեջ վանք ստացողի և կալվածք ստացվածքի հարաբերությունը անորոշ է մնում. մենք միայն պատկանելություն, ստացվածք լինելն ենք հաստատում **պատկանել** *բայով, որ ընդհանուր իմաստ ունի, առանց որոշելու թե վանքի այդ ստացվածքն ինչպիսի ծագում ունի։ Նույնպես պատկանելության ընդհանուր անորոշ հարաբերություն է ցույց տալիս, առանց ստացվածքի ծագումը որոշելու, և երկրորդը, սեռականով կապակցությունը. Մի վանքի կալվածք ասելով մենք հասկանում ենք՝ կալվածք, որ պատկանում է մի վանքի. ոչ ավելի և ոչ պակաս։ Մի վանքի կալվածք և Կալվածքը պատկանում է մի վանքի կապակցություններուի էական տարբերությունն այն է, որ առաջինը խոսք չէ և արտահայտում է առաջուց կազմված մի միտք, դա մտածության արդյունքի (*Gedankenprodukt*) արտահայտություն է. մինչ երկրորդը խոսք է, հայտնում է խոսելու ժամանակ նոր կազմվող մի միտք, արտահայտություն է մտքի գործողության (*Gedankenprozess*). Ճիշտ ինչպես ասում ենք՝* **Տիգրանը բարի է** *և* **Բարի Տիգրանը,** *երկու դեպքում էլ Տիգրանի հատկությունն ենք որոշում բարի բառով։ Եվ ինչպես վերջինը, Բարի Տիգրանը, վերլուծվում է երկրորդական նախադասությամբ՝ Տիգրանը, որ բարի է, նույնպես և Մի վանքի կալվածք դառնում է Կալվածք, որ մի վանքի է (կամ մի վանքի է պատկանում)։ Տարբերությունն ուրեմն ոչ թե ստացականության գաղափարի մեջ է, այլ մտքի առաջուց կազմված և նոր կազմվող լինելու, խոսք (նախադասություն) և խոսքի մաս (նախադասության անդամ) կազմել—չկազմելու մեջ։ Բարի Տիգրանը=Տիգրանը որ բարի է՝ առաջուց կազմված դատողություն, խոսքի մաս է. նույնպես և Մի վանքի կալվածք=Կալվածք որ մի վանքի է (պատկանում)։ Իսկ Տիգրանը բարի է, Կալվածքը մի վանքի է պատկանում կատարյալ խոսք են, այն էլ նոր տեղի ունեցող դատողության արտահայտություն։ Այսպես՝ Մի վանքի կալվածք և Կալվածքը պատկանում է մի վանքի կապակցությունները երկուսն էլ ստացականության ընդհանուր անորոշ գաղափար են արտահայտում։ Այսպես չէ սակայն երրորդ կապակցությունը։*

«Կալվածքը տվի մի վանքի» կապակցության մեջ շատ պարզ ու որոշ հայտնվում է կալվածք ստացվածքի և վանք ստացողի հարաբերությունը. այն է՝ թե կալվածքը ստացվածք է դառնում մի վանքի նո՛ր. ըստացվածք է դառնում, որովհետև ես տվի. ես տվել եմ և վանքը ստացել է, և հենց իմ տալովն է, որ վանքը ստացող է կալվածքին, և թե իմ տալուց առաջ վանքն այս կալվածքի ստացողը չէր։

Մեկը մի բան ստանալ, մի բանի ստացող լինել կարող է միայն այն ժամանակ, երբ մի ուրիշն այդ բանը տալիս է նրան. մինչև տվող չլինի, ստացող էլ չի լինիլ. և ինչ որ տալիս են մեկին, այդ և նրա ըստացվածքն է դառնում։ Այլ խնդիր է, ասում ենք, թե այդ ստացվածքը մշտական սեփականություն է, ժամանակավոր տիրապետություն, թե մի այլ վերաբերություն ունի յուր ստացողի հետ։ Ստացված է, որովհետև տվել են։ Ստացվածքի, ստացող լինելու, ստացականության գաղափարն ուրեմն, ինչպես բառն ինքը ցույց է տալիս, յուր ծագումով սերտ կապված է տալու գաղափարի հետ. դա այսպես ասած «տուր և առ» է։ Ստացող է նա, որին մի բան տալիս են և ինքն առնում է (լինի փողով տալ, փողով առնել թե չէ՝ այդ միևնույն է). կամ ում որ մի բան տալիս են, նա և ստացող է։ Եվ որովհետև տրական հոլովը յուր հիմնական նշանակությամբ «ցույց է տալիս գլխավորապես թե մեկ բան ումն են ընծայում, տալիս» (Պալաս., եր. 45), այսինքն այն առարկայի անունն է տրական հոլովով դրվում, որին մի բան տալիս են և որը այդ բանը իրեն է առնում,—ապա ուրեմն և տրական հոլովով խընդիրը այն առարկայի անունն է, որը և ստացողն է։ Կնշանակե տրական հոլովը յուր հիմնական նշանակությամբ, ինչպես վերևում դրինք, ցույց է տալիս մի առարկա, որի ստացվածքն է դառնում մի բան տալով, նրվիրելով, թողնելով և այլն. ուրիշ խոսքով որոշվում է թե՛ ստացողը և թե՛ ստացվածքի ծագումը. մինչդեռ սեռական հոլովը միայն ստացող լինելն է ցույց տալիս ընդհանուր անորոշ ձևով։

Ստացականության գաղափարը մենք ընդհանուր ձևով արտահայտում ենք նաև, ինչպես վերևում ասացինք, պատկանել, վերաբերել, հատկանալ, հատկացվել *(որից հատկացուցիչ)*, հատուկ, սեփական լինել *բառերով*, այլև ունիմ, եմ, լինիմ, կամ բայերով։ Գրաբարում եմ,*

---

* Պատկանել նշանակում է պատկան, վայել, հարմար, պատշաճ, կից, հար և հարմար լինել. այս իմաստն ապա փոխվել է և այդ բառն այժմ ստացել է՝ մեկի ստացվածք լինելու նշանակություն. երևի ինչ որ մեկին վայել, պատշաճ է, հար և հարմար է այն և նրա ստացվածքն է։ Այսպես «Կարոս խաչի» մեջ, երբ Քուրդ պարոնն ուզում է տիրանալ Հայոց գանձին, ասվում է «էն վայել չէ Հայոց ազգին, էն վայել է Քուրդ պարոնին». և բնական հետևությունն այն է, որ ինչ որ Քուրդ պարոնին վայել է, այդ և նրա ստացվածքը պիտի դառնա։ Հատկանալ նշանակում է հատուկ լինել, բուն իրենը, մասնավորապես իրենը լինել։ Ինչ որ մարդ մասնավորապես իրեն հատուկ ունի, այն և իր սեփականությունն է։ Իսկ վերջին բառը պարզապես սեպուհ բառից է, որից երևում է թե միայն սեպուհները = ազատները կարող էին ստացվածքի տեր լինել, ուստի և սեփականություն բառը ստացել է այժմյան նշանակությունը։

լինիմ, կամ, գամ բայերի հետ դրվում է սեռական խնդիր իբրև ստացող, ունեցող. բայց սեռական խնդիրը միայն ավելի սովորական կիրառություն է. կա սեռականի փոխանակ և տրականի գործածություն. Ծն իմ անդ եղբարք հինգ։ Միթէ չիցէ ինձ իշխանութիւն։ Աշխարհաբարում այս երկու ձևերից մնացել է, ինչպես տպասելի էր, միայն երկրորդը, այսինքն ստացական տրականով գործածությունը (խնդիրն այստեղ զեղչական ձևերի մասին չէ, ինչպես՝ իմն է, Տիգրանինն է, իմն եղավ)։ Տրական հոլովն, օրինակ, ըստ Այտնկյանի վերաբերիլ=պատկանել է ցույց տալիս հետևյալների մեջ. ինձի կրլլա, քեզի ըլլա, անոնց եղավ, բոլոր ժառանգությունը մեզի պիտի ըլլար, Հակոբին պիտի ըլլա։ Այսպես տրականով ասվում է նաև՝ Ամեն աշուղի մի դավրան կլինի։ Հակոբին մի որդի եղավ։ Ինձ մի տուն կար։ Խոշոր աչքին լույս չկա։ Էս սուտ ու փուչ աշխարհումս հայ քրիստոնեին հանգստություն չկա։ Այս գյուղի մեջ ձեզ իջևան չկա (Պռոշ., Սկ. երկ., 309), որ միևնույն է ասենք՝ Ամեն աշուղ մի դավրան կունենա։ Հակոբը մի որդի ունեցավ։ Խոշոր աչքը լույս չունի և այլն։ Եմ, կամ, լինիմ բայերի հետ դրվող այս ստացական տրականի նմանությամբ՝ ժողովրդական լեզվի մեջ ունիմ բայի ենթական ևս շուտ է եկել ստացական տրականի, որ շատ սովորական մի ձև է արևելյան բարբառների մեջ. օրինակ՝ Մեզ մի գիժ ունեինք։ Էժան մսին խաշու չի տունենալ։ Խեղճին հաց չունի ուտելու, ինչպես ասվում է՝ Մեզ մի գիժ կար։ Էժան մսին խաշու չի լինիլ. Խեղճին հաց չկա ուտելու, փոխանակ՝ Մենք մի գիժ ունեինք. Էժան միսը խաշու չի ունենալ. Խեղճը հաց չունի ուտելու։

Այսպես տեսնում ենք՝ տրական հոլովը յուր հիմնական նշանակությամբ ստացական իմաստ ունի այն աստիճանի, որ ոչ միայն գրաբարի ստացական սեռականները եմ, լինիմ, կամ (գոմ) բայերի հետ շուտ են եկել ստացական տրականի, այլև ունիմ բայի ենթական դարձել է ստացական տրական։ Այսպիսի մտածողությամբ հասկանալի է, թե ինչու սեռական և տրական հոլովները ձևով ևս պիտի նույնանայինն և թե ինչու մենք մեր սեռականը, որ գլխավորապես ստացական սեռական է, իսկապես իբրև ստացական տրական ենք ըմբռնում։

Պալասանյանը (եր. 208), որ երևի այս երկու հոլովի նույնության մասին չի մտածել, գրում է. «Գոյական հատկացուցիչը ցույց է տալիս գլխավորապես թե մեկ առարկա ումն է պատկանում կամ վերաբերում. այսպես. Իմ եղբոր գրատան մեջ (այսինքն՝ այն գրատան մեջ, որ իմ եղբորն է պատկանում) շատ օգտակար գրքեր կան։ Հայրենյաց փուշը քաղցր է քան թե օտարի վարդը։ (Այսինքն՝ հայրենյաց վերաբերող փուշը)»։ Եվ այս կանոնը նա դնում է իբրև մի ընդհանուր կանոն ստացական սեռականի համար։ Բայց ինչ է անում Պալասանյանը. նա հատկացուցիչը կամ ստացական սեռականը վեր է ածում մի տեսակ զեղչական տրականի, իսկ զեղչված բառն է ընդհանուր իմաստով ստացվածք ցույց տվող բառերից մեկը՝ պատկանող կամ վերաբերող,—եզ-

բոլոր գրատուներ=նեղորա պատկանող գրատուներ. հայրենյաց փուշը= հայրենյաց վերաբերող փուշը։ Այսպիսով նա անգիտակցաբար ոչընչացնում է ստացական սեռականը, քանի որ բոլոր հատկացուցիչներն էլ այդ ձևով կարելի է զեղչական տրական ըմբռնել և կարելի է զեղչված բառ համարել ընդհանուր իմաստով ստացվածք ցույց տվող բառերից մեկը, որ ենք՝ պատկանել, վերաբերել, հատկանել, լինել, եմ, ունիմ և այլն, որոնք բոլորն էլ ստացական տրական են առնում, ինչպես տեսանք։ Եվ ոչ միայն ստացական սեռականները այլև մյուս սոականները մեծ մասամբ, (եթե միայն իսկապես ածական չեն դարձել, ինչպես արծաթի, երկաթի և այլն, և կամ բացառականի իմաստ չունեին, որ հետո կտեսնենք), կարելի է այսպիսի կազմությամբ զեղչական տրական հասկանալ։ Բերենք մի քանի օրինակ այս կարգի սեռականներից։

«Նոր դպրոց» ամսագրի ծրագրի մեջ կարդում ենք. «Վիճակագրական տեղեկություններ՝ դպրոցների տեսակների և թվի, ուսուցիչների և վարժուհիների տնտեսական դրության, ցենզի, աշակերտ—աշակերտուհիների թվի վերաբերյալ», և սրան անմիջապես հետևում է. «վիճակագրական տեղեկություններ դպրոցական հիվանդությունների և մահացումների»։ Այս երկու կապակցություններ կազմողն անշուշտ միևնույն բանն է ուզեցել ասել և միևնույն բանն էլ ասել է, միայն մի քերականական տարբերությամբ։ Առաջնի մեջ «տեսակների, թվի, դրության, ցենզի, թվի» խնդիր են «վերաբերյալ» բառի, ուստի և տրական հոլով են. իսկ երկրորդի մեջ չկա «վերաբերյալ» բառը և «հիվանդությունների, մահացումների» անմիջապես ընկնում են «տեղեկություններ» բառի վրա իբրև սեռական վերադիր։ Բայց այս սեռականները, որոնք հարկավ ստացականություն կամ պատկանելություն չեն ցույց տալիս, նշանակությամբ ոչնչով չեն տարբերվում առաջին կապակցության տրականներից. որովհետև երբ ասում ենք «վիճակագրական տեղեկություններ դպրոցական հիվանդությունների և մահացումների», մենք զորությամբ հասկանում ենք «վերաբերյալ» բառը, իբր թե լիներ «վիճակագրական տեղեկություններ դպրոցական հիվանդությունների և մահացումների վերաբերյալ», ինչպես առաջին կապակցության մեջ է։ Այսպես կարելի է և առաջին կապակցության մեջ չդնել «վերաբերյալ» բառը և գրել. «վիճակագրական տեղեկություններ դպրոցների տեսակների և թվի, ուսուցիչների և վարժուհիների տնտեսական դրության, ցենզի, աշակերտ—աշակերտուհիների թվի»։ Եվ վերջապես կարելի է նույնպես սովորական շարադասությամբ ասել «վերաբերյալ» բառով կամ առանց դրան. «Դպրոցների տեսակների և թվի, ուսուցիչների և վարժուհիների տնտեսական դրության, ցենզի, աշակերտ—աշակերտուհիների թվի (վերաբերյալ) վիճակագրական տեղեկություններ։ Դպրոցական հիվանդությունների և մահացումների (վերաբերյալ) վիճակագրական տեղեկություններ»։ Այս կարգի ոչ ստացական սեռականներն

ես, ուրեմն իմաստով նույնանում են տրականի հետ, իբրև թե սեռական հատկացուցչի և յուր հատկացյալի մեջ լիներ «վերաբերյալ» բառը։

Այն հագուստը որ նոր ձևի է,—Այն երեխաները որ մի հասակի, մի տարիքի են,— Այն մարդիկը որ մի խելքի են,— այս և շատ այսպիսի կապակցություններուն մեջ ձևի, հասակի, տարիքի, խելքի ձևերը սեռական չեն, այլ տրական։ Թե տրական են (մի կողմ պիտի թողնել օտար լեզուներով և օտար հոգով մտածողությունը), այդ երևում է նրանից, որ այդ բառերը, երբ որոշ իմաստ ունին, և հոդն են առնում,— Սա էլ քո խելքին է, Սա էլ քո հասակին է, Նա էլ սրա վիճակին է և այլն։ Բացի այդ՝ այս ձևերն իսկապես ունին ներգոյականի իմաստ. Նա էլ սրա վիճակին է, նշանակում է՝ Նա էլ սրա վիճակի մեջ է։ Գրաբարում այս ձևերը սովորաբար ի նախդրով տրականով (հոգնականում հայցական) են գործածվում՝ ի ձև կամ ի ձևի. ի հասակի, ի վիճակի նորա,—Եւ երեք մանկունք ի նոյն տիս հասակաց, մինչդեռ յաճել և ի ծաղկի էին։ (Ի) նոյն տիս է և Դանիէլ։ Ի նախդրով այս տրականները, որ աշխարհաբարում սոսկ տրական են դարձել, մեր քերականները (տե՛ս Պալաս., 216) ինչպես տեսանք, ուրիշ դեպքերում տրական էլ դնում են։ Նույնպես տրական են ուրեմն և ձևի, հասակի, տարիքի, խելքի և այլն. վերևում դրրած խոսքերի մեջ։ Արդ եթե մի հասակի ձևը տրական է՝ Այն երեխաները որ մի հասակի են՝ կապակցության մեջ, նույնպես տրական է անշուշտ և եթե դերբայով ասենք՝ Այն մի հասակի եղող երեխաները. ինչո՞ւ միևնույն ձևը դարձյալ տրական չպիտի լինի, երբ ասում ենք՝ Այն մի հասակի երեխաները, քանի որ վերջինս միևնույն նախորդ ձևն է, միայն եղող բառի զեղչմամբ. ճիշտ ինչպես՝ Այն մարդը որ բարի է կապակցությունը լինում է՝ Բարի եղող մարդը=Բարի մարդը։ Այսպես ուրեմն նոր ձևի հագուստ,—Մի խելքի մարդիկ և շատ նմանների մեջ սեռականները՝ ձևի, խելքի վեր են ածվում զեղչական տրականի, եղող, եղած ընդհանուր իմաստով բառի զեղչումով, իբրև Նոր ձևի եղող հագուստ=Հագուստ որ նոր ձևի է։ Մի խելքի եղած մարդիկ=Մարդիկ որ մի խելքի են։

Վերևում տեսանք, որ բոլոր հոլովները, բացի ներգոյականից, դրվում են անվան վրա իբրև վերադիր, և թե ներգոյականը միայն բացառություն է կազմում այդ գործածության մեջ։ Ի՞նչ է պատճառը ներգոյականի այդ բացառության։ Ում վերջավորությամբ ներգոյականը նոր կազմություն է և ընդհանուր տարածված չէ մեր լեզվի մեջ. շատ բառեր չունին այդ ձևը. ոչ միայն արևմտյան բարբառները. այլև կան արևելյան բարբառներ, որ չունին այդ ձևով ներգոյական։ Նույն իմաստը գրաբարում արտահայտվում է տրական հոլովով ի նախդրով. որ որոշ դեպքերում դրվում է հայցականի վրա։ Ում վերջավորությամբ ներգոյական չունեցող և նույնիսկ ունեցող բարբառների մեջ ներգոյականի իմաստն այժմ էլ արտահայտվում է տրական հոլովով, որ

սովորական է մեր արևելյան գրական լեզվի մեջ ևս, մանավանդ տեղի, մարմնի մասեր և ժամանակ ցույց տվող անուններուն համար ինչպես՝ գլխին, ձեռքին, մեջքին,—ճանապարհին, եզերքին, ափին, ծայրին, հունվարին, ամսի 5-ին և այլն (տե՛ս Պալաս., եր. 216). բարբառների մեջ նաև քաղաքին, գեղին, փողոցին և այլն, փոխանակ քաղաքում, գեղում, փողոցում ձևերի: Եթե ում վերջավորությամբ ներգոյականը նոր կազմված լինելով դեռ բոլորովին չի ընդհանրացած, հասկանալի պիտի լինի և այդ հոլովի չգործածվելն իբրև անվան վերադիր. դրա տեղն իբրև վերադիր բանում է բնականորեն հին ձևը, այսինքն ներգոյականի իմաստով տրականը, որ իբրև վերադիր և հոդը չի առնում: Բերենք մի քանի օրինակներ:

Այն մարդը որ սարի գլխին է=Սարի գլխին եղած մարդը=Սարի գլխի մարդը: Այն գավազանը որ իմ ձեռիս է=Իմ ձեռիս եղած գավազանը=Ձեռիս գավազանը: Դոտին որ մեջքիդ է=Մեջքիդ եղած դոտին=Մեջքիդ դոտին: Միտը որ ծառին է=Ծառին եղած ծիտը=Ծառի ծիտը: —Ցրտերը որ հունվար և փետրվար ամիսներին են լինում=Հունվար և փետրվար ամիսներին եղող ցրտերը=Հունվար և փետրվար ամիսների ցրտերը: Այս ձևերից մեր քերականները բայով և դերբայով ասածները ներգոյականի իմաստով տրական են դնում, իսկ **Սարի գլխի մարդը, Իմ ձեռիս գավազանը, Մեջքիդ դոտին, Ծառի ծիտը, Հունվար և փետրվար ամիսների ցրտերը** կապակցությունների մեջ ընդգծած բառերը սեռական հատկացուցիչ են դնում: Բայց մի՞թե Սարի գլխի մարդը նշանակում է Սարի գլխին պատկանած մարդը և ոչ Այն մարդը որ սարի գլխին է կամ Սարի գլխին եղող մարդը: Մի՞թե այդ երեքն էլ հոլովական ձևով և իմաստով նույն չեն: Եվ եթե մենք Այն մարդը, որ գեղեցիկ տեսքով է, և Գեղեցիկ տեսքով մարդը կապակցությունների մեջ տեսքով միևնույն հոլովն ենք համարում, որովհետև երկու դեպքում էլ նույն ձևն և իմաստն ունին,—ինչո՞ւ պետք է Գավազանը որ ձեռիս է և Ձեռիս գավազանը կապակցությունների մեջ ձեռիս նույն ձևը չհամարվի:—

—Այսպես և ում վերջավորությամբ ներգոյականը տրականի վերածվելով դառնում է վերադիր: Իմ տունը որ գեղումն է=Իմ տունը որ գեղին է=Իմ գեղին եղած տունը=Իմ գեղի տունը. Նույնպես Աթոռները որ պարտեզում են=Աթոռները որ պարտեզին են=Պարտեզին եղած աթոռները=Պարտեզի աթոռները:

Ձեղչական բառ կարող են համարվել ոչ միայն պատկանել, վերաբերել, լինել, եմ, այլև ունենալ, հատկանալ, հատուկ լինել և այլն, որոնք ինչպես վերևում բացատրեցինք, ընդհանուր ստացական իմաստ ունին: Այսպես օրինակ՝ թեյի տուփ, թանաքի շիշ, քնելու սենյակ, վառելու փայտ, երեխայի խելք և այլն. կարելի է ձեղչական ձևով բացատրել,—տուփ որ հատկացրած է թեյի=թեյի (հատկացրած) տուփ և

այլն՝ խելք որ հատուկ է երեխայի=երեխայի (հատուկ) խելք։ Նույնպես կարելի է զեղչական ձևով բացատրել ուրիշ շատ ու շատ սեռականներ։

Անշուշտ շատ խորթ կթվա, որ մենք այս և սրանց նման սեռականները տրական ենք նկատում. բայց այդ միայն նորությունից է։ Թե իրոք մենք ստացական երբեմն և ոչ ստացական սեռականները տրական, այն էլ հաճախ զեղչական ձևով տրական ենք մտածում, այդ եթե Պալասանյանը մութը կերպով անգիտակցաբար էր ասում,—Այտնյանը մի տեղ գոնե, ապատվելով օտար լեզուների և ավանդական քերականության կաշկանդումից և իր բնական զգացումին հետևելով, շատ պարզ կերպով տրական, այն էլ զեղչական տրական է դնում անորոշ դերբայի մի գործածություն, որ մենք կսպասեինք սեռական տեսնել։ Մենք կբերենք այդ կտորն ամբողջ։

«509. Աներևութին տրականը հասարակ ածականի պես կը գործածվի. և կը ցուցնէ՝ կարելի, արժանի, կամ կարող ըլլալու, ընելու. ներգործական և կրավորական.

Ուտելու հաց.—հաց զոր ուտես. կամ

Ուտվելու հաց.—Հաց որ կուտվի։

Ուտելու տեղ.—տեղ ուր ուտես (և ոչ ուտվելու)։

Տեսնելու կամ Տեսնվելու բաներ։

Գործելու մարդիկ.—մարդիկ որ գործեն, կարենան գործել։

Խմելու գավաթ.— գավաթ որով խմես (և ոչ խմվելու)։

Պարտելու կամ պարտվելու պարտեզներ.— պարտեզներ որոնց մեջ կրնաս պարտիլ։

Նույնը խնդրով մեկտեղ, կամ մակբայով և այլն.

Ձուկ բռնելու լիճ. Հաց ուտելու տեղ. գործ գործելու մարդիկ.

Ծորեն ցանելու արտեր. Փայտ ջարդելու կացին.—կացին որով փայտ ջարդես։

Հեռվանց տեսնվելու նշան։ Դուրս խրկվելու վաճառքներ։

510. Օրինակներես կըտեսնես, որ այս ածական աներևույթ տրականը՝ 1. միշտ եզակի, 2. առանց հոդի կը մնա»։

Թե Այտնյանը պատահաբար չէ անորոշ դերբայի այս ձևերը տրական կոչել, այդ երևում է նրանից, որ ոչ միայն սկզբում, այլև վերջում կրկին անգամ նա տրական է դնում։ Թե իրոք նա այդ ձևերը տրական, այն էլ զեղչական ձևով տրական է մտածում, այդ պարզ երևում է նրա վերևում դրած բացատրությունից, թե այդ «տրականը... կը ցուցնէ՝ կարելի, արժանի, կամ կարող ըլլալու, ընելու»։ Զեղչական բառերն են ուրեմն կարելի, արժանի (=պետք, պիտանի, հարմար), կարող, որոնք երեքն էլ ըստ Այտնյանի տրական հոլով խնդիր են առնում (տե՛ս նույն

---

* Այս սեռականները ֆրանսերենում ևս տրականի պաշտոն կատարող à նախդրով են կազմվում. boîte à thé, bouteille à l'encre, chambre à coucher, bois à brûler և այլն։

Քերակ., եր. 106, § 378)։ Այսպես ուրեմն Այտնյանը **Ուտելու ճաշ, Գործելու մարդիկ** *կապակցությունները մտածում է՝ Հաց որ արժանի է ուտելու. Մարդիկ որ կարող են գործելու=Ուտելու արժանի հաց. Գործելու կարող մարդիկ։ Եվ եթե վերջին ձևով* **ուտելու, գործելու** *տրական են, ապա տրական են նույն ձևերն ըստ Այտնյանի նաև Ուտելու հաց. Գործելու մարդիկ կապակցությունների մեջ, քանի որ դարձյալ հասկացվում է ուտելու արժանի, գործելու կարող։*

Բայց եթե «ուտելու հաց, տեսնելու բաներ» կապակցությունների մեջ ուտելու, տեսնելու տրական են,—և այսպես մտածում է Այտընյանը,— տրականով են անշուշտ և նման ձևով և իմաստով կապակցությունները՝ վառելու փայտ, կարդալու գիրք, ծախսելու փող, կամենալու բան և այլն. ապա ինչո՞ւ տրական չպիտի լինի և դերբային փոխանակած բայական անունների նույն հոլովը՝ **ընթերցանության** *գիրք,* **ծախսի** *փող,* **կամքի** *բան և այլն։ Եվ այս շարքը շատ երկար է։*

Եթե «ուտելու տեղ, ձուկ բռնելու լիճ, պտրտելու պարտեզներ» տրականով են, նույնպես հարկավ նաև քնելու տեղ, քնելու սենյակ, գործելու տեղ, ներակայացնելու սրահ, պատերազմելու դաշտ, փախչելու տեղ, սպանելու տեղ և այլն,—ապա տրականով են անշուշտ և բայական անունով ասածները՝ **ճնի սենյակ, ճաշի սենյակ, զբոսանքի տեղ, գործի տեղ, ներկայացման սրահ, պատերազմի դաշտ, փախստյան տեղ, սպանության տեղ** *և այլն։*

Եթե «խմելու գավաթ, փայտ չարդելու կացին» տրականով են, նույնպես հարկավ և տանջելու գործիք, սպանելու զենք, փրկելու միջոց և այլն, ապա տրականով են և **տանջանքի գործիք, սպանության զենք, փրկության միջոց** *և նմանները։ Դարձյալ եթե «գործելու մարդիկ» տրականով է, նույնն է անշուշտ և* **գործի մարդիկ** *և շատ նմանները,* **կռվի մարդ, ոսի շուն** *և այլն։*

Այտնյանը «ուտելու տեղ» կապակցության մեջ **ուտելու** *դնում է տրական գործածված ածականի պես, իսկ «Հնձելու օրերն անցան» կապակցության (եր. 136) մեջ* **հնձելու** *դնում է սեռական հատկացուցիչ և գոյական։ Մենք այդ երկուսն երբեք բաժանել չենք կարող։ «Ուտելու տեղ» և «հնձելու օր» կապակցությունների տարբերությունը ոչ թե քերականական է, այլ բառի. այն է՝ առաջին դեպքում անորոշ դերբայի տրականը դրված է տեղի անվան վրա, իսկ երկրորդ դեպքում ժամանակի անվան վրա։ Եթե առաջինը տրական է, ապա և երկրորդը տրական է. իսկ եթե «հնձելու օր» տրականով է, ապա տրականով են և հնձի օր, քնելու ժամանակ, քնի ժամանակ, հանգստանալու ժամ, հանգստի ժամ և շատ նմանները։ Եվ ավելին ևս. մի անգամ որ անվան վրա ածականաբար իբրև վերադիր դրված անորոշ դերբայի 2-րդ հոլովը տրական է կոչվում, բոլոր նման դեպքերում ևս նույն ձևը տրական պիտի լինի։ Այստեղ բացառություն չի կարող լինել։ Իսկ որովհետև անորոշ դերբային նույն իմաստով և ձևով կարող է փոխանակել որևէ բայական ա-*

Նուն, ապա և բոլոր բայական անունները, որ իբրև սեռական դրվում են մի անվան վրա, կարող են տրական համարվել։ Եվ եթե անորոշ դերբայի և բայական անունների 2-րդ հոլովը, երբ վերադիր է, տրական է, այն էլ զեղչական մտածությամբ, ինչո՞ւ նույնը կարելի չէ ասել և մյուս անունների համար։ Եթե «խմելու գավաթ» կապակցության մեջ խմելու տրական է, ինչո՞ւ նույն ձևով չպիտի լինին և կերակրի գավաթ, գինու շիշ, թեյի տուփ կապակցությունները, և վերջապես՝ եղբորս գրատունը, հայրենյաց փուշ, վանքի կալվածք և այլն։ Այսպես սեռականների մի մասը կարող են վերածվել տրականի և այս ոչ թե միայն մեր մտածողությամբ, այլ կարող ենք ասել, որ աշխարհաբարի երկու առաջին քերականները, Պալասանյանն և Այտնյանն էլ այդպես են մտածել, և այս տեսանք մենք վերևում։

Առնենք մի օրինակ ևս։ Ասում ենք զենքով դիմադրել, կառքով ըզբոսնել, չորս կողմից հարձակվել՝ և ապա զենքով դիմադրություն, կառքով զբոսանք, չորս կողմից հարձակում։ Եթե գործիական և բացառական հոլովները կարող են այսպես իբրև վերադիր դրվել բայական անունների վրա և նույն հոլովական իմաստն ու ձևը պահել, ինչ որ բայերի վրա դրված ժամանակ ունին, կարծում ենք նույնը կարելի է ասել և տրական հոլովի համար։ Փառքի ձգտել և փառքի ձգտում կապակցությունների մեջ, օրինակ, մենք երկու դեպքում ևս փառի նույն հոլովն ենք համարում և ինչպես փառքի ձգտել կապակցության մեջ փառի տրական է, նույնպես տրական է և փառքի ձգտում կապակցության մեջ։ Այսպես միևնույն տրական հոլովն է և շատ նման դեպքերում,— խորհրդի հրավիրել, խորհրդի հրավեր. գործի ձեռնարկել, գործի ձեռնարկություն. մահվան դատապարտել, մահվան դատապարտություն. աստուծու երկրպագել, աստուծու երկրպագություն, աստուծու հավատալ. աստուծու հավատք. մի բանի ափսոսալ, մի բանի ափսոսանք, թագավորի ծառայել, թագավորի ծառայություն. հայրենիքի կարոտել, հայրենիքի կարոտ. մի բանի ծարավել. մի բանի ծարավ, ջրի ծարավ և այլն և այլն։ Դրանք ձևով և իմաստով իրարից չեն տարբերվում. և ամեն անգամ բայանվան վրա դրված 2-րդ հոլովը տրական կարելի է համարել և իսկապես տրական է, երբ նույն հիմքն ունեցող բայը կամ ածականը նույն իմաստով տրական են առնում։ Պատվի արժանի, պատվի արժանանալ և պատվի արժանացում, պատվի արժանություն,—այս վերջին երկուսի մեջ պատվի ձևը նույնպես պարզապես տրական խնդիր է արժանացում, արժանություն բառերի, ինչպես առաջին երկուսի մեջ։ «Պատվի արժանացում» և նման կապակցությունների մեջ կարելի չէ հարկավ պատկանելության, վերաբերության և այլն իմաստ որոնել. դրանք տրական հոլով են տրականի հիմնական իմաստով առանց որևէ զեղչված բառ ենթադրելու։

Այսպես՝ սեռականի առաջին գլխավոր նշանակությունը, որ դնում են մեր քերականները,—թե «ցույց է տալիս գլխավորապես թե մեկ ա-

ռարկա ումն է պատկանում կամ վերաբերում... երբեմն ցույց է տալիս մեկ որևիցե առարկայի որպիսությունը». այսինքն հատկացուցիչ և «իբրև ածական գործածված» սեռականը,—բացատրվում է տրականով, լինի տրականն յուր իսկական նշանակությամբ առնված, թե ներգոյականի իմաստով գործածված։ Բայց Պալասանյանը, տեսանք, սեռականի համար մի տեղ ասում է թե «ցույց է տալիս թե մեկ առարկա ումն է, կամ ինչից է առաջ գալիս, սերվում է». Տեսնենք այժմ, թե ինչ է նշանակում այս բացատրության երկրորդ մասը և արդյոք մեր տրականն այդ նշանակությունն ևս ունի՞ յուր մեջ, թե չէ։

Առնենք մի օրինակ։ «Տիգրանի գրած նամակը» և «Տիգրանին գրած նամակը»։ Այս կապակցություններից առաջինը ցույց է տալիս, թե նամակը ծագում, առաջ է գալիս Տիգրանից. իսկ երկրորդը նշանակում է, թե նամակն ուղղվում է Տիգրանին։ Ի՞նչից է առաջ գալիս միևնույն հոլովական ձևի այս կրկին իմաստը։ Անշուշտ ո՛չ Տիգրանի-ն բուռի ն հոդ առնելուց կամ չառնելուց։ «Մի փոքրիկ աշակերտի տված դասը ի՞նչ պիտի լինի» խոսքի մեջ, օրինակ, աշակերտի բառն առանց հոդի նույնպես կրկին իմաստ ունի. աշակերտը կարող է հասկացվել և նա որ դաս է տալիս. և նա, որին դաս են տալիս։ Կնշանակե իմաստի տարբերության հիմքը պետք է տեսնել ոչ թե ն հոդի, այլ հենց իրեն 2-րդ հոլովի մեջ։ Այս տարբերությունն առաջանում է նրանից, որ մի դեպքում 2-րդ հոլովը գործ է ածվում յուր սովորական նշանակությամբ, իսկ մյուս դեպքում նույն հոլովն առնվում է իբրև բացառական։

Հայտնի է աշխարհաբարում, ինչպես և գրաբարում, կրավորական բայերի սեռի խնդիրը,— ուրեմն այն խնդիրը, որից ծագում է գործողությունը,— փոխանակ բացառական հոլովի դրվում է նաև գործիական հոլովով և ձեռով (=ի ձևն, ձեռամբ) բառով կամ թե կրավորական բայը շուռ է գալիս յի վերջավորած բայական ածականի, որ կրավորական իմաստ ունի. իսկ սեռի խնդիրը դրվում է տրական հոլովով։ Ինչպես՝ Արմավիրը շինվեցավ Արմայիսից. Դաշտերը ծածկվեցան ձյունից. Անձնասերն ատվում է ամենքից—ասելու տեղ ասվում է՝ Արմավիրը շենվեցավ Արմայիսի ձեռով. Դաշտերը ծածկվեցան ձյունով. Անձնասերն ատելի է ամենքին (Պալ. եր. 218)։ Գրաբարում սակայն կրավորական բայերի սեռի խնդիրը բացառականի փոխանակ տրական դրվում է և ուրիշ դեպքերում (Ջալըխ., եր. 446, ծան. Բագրատունի, եր. 294), ինչպես՝ Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց։ Ոչ ականջաց լսին և ոչ մտաց իմանին. Աստուածոյ ճանաչին. և մեզ լուութեամբ պատուեսցի։ Աստուած ոչ միայն ձեռին չզննի։

Տրականի այս գործածությունը բացառականի իմաստով՝ զարմանալի չպիտի լինի, որովհետև մեր հնագույն լեզվի մեջ, ինչպես երևում է, առանձին բացառական հոլով չի եղել. այլ սեռական—տրականի ձևը գործ է ածվել և բացառականի համար։ Գրաբարում դեռ հոգնակի բացառականը միշտ, իսկ եզակի բացառականը այ, ոյ, ու, հոլովում-

ների մեջ նման է սեռական—տրականին։ Բացառականի է վերջավորությունը նոր կազմություն է, առաջացած ըստ Մառի (Քերակ., եր. 63) ա բունն ունեցող բառերի սեռական—տրականի վերջից. կարգէ ձևը ծագում է կարգայ ձևից ձայնաշրջությամբ։ Ապա այս նոր կազմված է վերջավորությունն անցել է ուրիշ բուն ունեցող անուններին և դերանուններին, մինչև վերջապես աշխարհաբարում (արևմտյան) ընդհանրացել է։ Ինչպես կարգ ունի կարգէ, դրա նմանությամբ և բան ունի բանէ։ Այսպես և ր, ղ, և բունն ունեցող անունների սեռական—տրականից կազմվել է դատեր-է, աստեղ-է, սրբութե (ա) ն-է։ Դերանունների համար այս վերջավորությունն ավելանում է ոչ թե սեռականի, այլ տրականի վրա, իմում, իմմէ. նմա=*նման, նմանէ. այնմ=*այնման, այնմանէ*. ինձէն, մեզէն, ձեզէն, քեզէն և այլն։ Յուցականների տրականները սակայն՝ սմին, դմին, նմին, այսմ, այդմ, այնմ, այսմիկ, այդմիկ, այնմիկ, նույնիսկ առանց այս է վերջավորության դեռ սովորաբար գործ են ածվում և իբրև բացառական։

Աշխարհաբարում տրականի այս գործածության համար հետազոտություն չկա. բայց զարմանալի չի լինիլ, եթե բացառականի իմաստով տրական գտնենք և աշխարհաբարում։ Մենք կարող ենք մի քանի օրինակ բերել. Ես խաբվեցի նրա խոսքին (=խոսքից). «Փափազելի էր որ առանց... հոսանքին մոլորվելո...» (Արարատ, 1908, ապրիլ, եր. 366). Ահու (=ահից) լեզուն կապվեց։ Այսպես ավելի չեզոք բայերով՝ Ամոթու (=ամոթից) կարմրել, կակծու (=կակծից) մեռնել, և ժողովրդական լեզվի մեջ նաև Երևանա եմ գալիս, Թավրիզու եկավ և այլն։ Այս գործածությունների համար Պալասանյանը (եր. 219) գրում է, թե «բացառականը տրականի ձև է ստանում»**. իսկ Այտնյանը (եր. 111) կոչում է «տրականի ձև աննախադիր բացառական».—ավելի ճիշտ կլիներ ասել՝ բացառականի իմաստով տրական։

Այսպես ուրեմն մեր տրական հոլովը բացի յուր հիմնական նշանակությունից՝ ունի ոչ միայն հայցականի և ներգոյականի նշանակություն, որ տեսանք վերևում, այլև բացառականի***։ Այս իմաստով է ահա՛ դրվում և մեր 2-րդ հոլովն իբրև վերադիր անցյալ դերբայի վրա և ցույց է տալիս, թե մի բան ումնից, ինչից է ծագում,—Տիգրանի գրած նամակը=Տիգրանայ գրեալ նամակ=ի Տիգրանայ գրեալ նամակ։

---

* Այսման, *այդման, *այնման ձևեր չկան մեր հին լեզվի մեջ, բայց պատահում են այսմն այդմն, այնմն ձևերը որոնք առաջիններից են ծագում։

** Պալասանյանը սակայն Երևանա եմ գալիս ձևի համար ուրիշ տեղ (եր. 114) գրում է. «Գավառական բարբառներում բացառականը սեռականի պես է լինում հին ձեվով. Երևանա, Աշտարակա է գալիս, այսինքն Երևանից, Աշտարակից»։

*** Տրականի այս իմաստը տարօրինակ բան չէ նույնը պատահում է և ուրիշ լեզուների մեջ։ Օրինակ, երբեմն ինչ որ մենք բացառականով ենք ասում, նույնը գերմաներենն արտահայտում է տրականով։ Einem Etwas abnehmen = Մեկից մի բան առնել. Einem Etwas Stehlen, raubne = Մեկից մի բան գողանալ, խլել։

Բագրատունին այս կիրառության մեջ անցյալ դերբայը կրավորական է համարում. նա կրավորական բայերի սեռի խնդրի համար գրում է, թե «երբեմն փոխանակ բացառականի կամ գործիականի՝ դնի սեռական իբրև յատկացուցիչ, կամ տրական. մանաւանդ առ անցեալ դերբայս»։ Եվ այս կանոնի տակ անխտիր բերում է օրինակներ և անցյալ դերբայով և դիմավոր բայով, ինչպես՝ «Ոչ գիտեմ զանձին գործեալ, զանպատեհս. իմա՛ գործեալ յանձնէ». «Նոյն իսկ սրբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն. իմա՛ ի նոյն իսկ սրբոյն Մաշտոցէ». «Իմաստութիւն դիւրաւ գտանի խնդրողաց իւրոց». այսինքն ի խնդրողաց։—Այտընյանը սակայն դիմավոր բայի և անցյալ դերբայի այս խնդրառությունը բաժանում է իրարից. դիմավոր բայի հետ դրվածը նա տրական է համարում և բայը՝ կրավորական (Զալ., եր. 446 ծան.). իսկ անցյալ դերբայի հետ գործածության համար գրում է. «Երբեմն որ դերանվամբ դիմավոր բայ կամ բացառականով կրավորական դրվելու տեղ (որ գրաբարի սովորականն է) անուն բային սեռական և բայը ներգործական անցյալ կըդրվի՝ գլխավոր գոյականին ածական եղած»։ Եվ օրինակ բերում է. «Զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել (փոխանակ՝ զկտակ հաստատեալ ի մարդկանէ)»։ Բայց վերջն ավելացնում է. «Ասոր նման՝ նաև չեզոք և կրավորական անցյալներ երբեմն բացառականի տեղ սեռական առած կը գտնվի... Այսպիսի բանից՝ տխամարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի» (Զալ., 437 հտ.)։

Այտնյանն ավելի ճիշտ է ըմբռնում, որ անցյալ դերբայի հետ դրվածը որոշ կերպով սեռական է համարում. որովհետև, ինչպես կտեսնենք, այս դեպքում անցյալ դերբայը գոյական է, ուստի և նրա վրա դրվածը սեռական վերադիր է։ Բայց մեզ համար անհասկանալի է, թե ինչու նա անցյալ դերբայը երբեմն ներգործական է համարում և երբեմն՝ կրավորական։ Մարդկան հաստատեալ կտակ,—Կտակ՝ մարդկան հաստատեալ և Տխմարաց մտաց կարկատեալ բան,—Բան տխմարաց մտաց կարկատեալ,—այս երկուսը քերականորեն բոլորովին նույն կազմությունն ունին և նշանակում են՝ Կտակ հաստատեալ ի մարդկանէ. Բան կարկատեալ ի տխմարաց մտաց։ Թե երկրորդի մեջ կարկատեալ դերբայը կրավորական է դնում Այտնյանը, կրավորական է անհրաժեշտորեն և առաջինի մեջ հաստատեալ դերբայը։ Բագրատունին ուրեմն ավելի ճշիտ է ըմբռնում՝ այդպիսի ձևերի մեջ անցյալ դերբայը միշտ կրավորական դնելով։— Դառնանք այժմ աշխարհաբարին։

Աշխարհաբարի մեջ, ինչպես սպասելի էր, նույն ձևն է, միայն գրաբարի եալ վերջավորությամբ անցյալ դերբայի տեղ ած վերջավորությամբ դերբայ դրած. Մարդկան հաստատեալ կտակ. Աստուծոյ արարեալ սքանչելիքն=Մարդկանց հաստատած կտակ. Աստուծու արած սքանչելիքը։ Թե գրաբարում հաստատեալ, արարեալ կրավորական են, աշխարհաբարում ևս հաստատած, արած ոչ թե ներգործական իմաստով են, այլ կրավորական։

Հարկ չկա անշուշտ հաստատելու, որ աշխարհաբարում շատ հաճախ անցյալ դերբայը ներգործական ձևով, այսինքն ած և ոչ ված վերջավորությամբ, գործ է ածվում կրավորական իմաստով։ Երբ ասում ենք՝ Բարակ աղացած ալյուր. Կարմիր ներկած գոգնոց. Մորթած հավերը, Վառած ճրագ (Պռ., Սկ. երկ., եր. 30, 32). Պատից կախած վերարկու և այլն. —աղացած, ներկած, մորթած, կախած ներգործական իմաստ չունին, այլ կրավորական։ Նույն կրավորական իմաստը դրանք պահում են հարկավ և այն ժամանակ, երբ ասում ենք՝ Վարդանի մորթած հավերը, Տիգրանի վառած ճրագը։ Վառած ճրագը և Տիգրանի վառած ճրագը կապակցությունների տարբերությունը ոչ թե քերականական է այլ այն՝ որ առաջին դեպքում գործողության սկզբնապատճառը անհայտ է մնում, իսկ երկրորդ դեպքում որոշվում է Տիգրանի լրացումով, որ ունի բացառական սեռի խնդրի իմաստ. Տիգրանի վառած ճրագը=Տիգրանի ձեռով վառած ճրագը կամ Տիգրանից վառած ճրագը։ Այս երեք ձևերը իմաստով բոլորովին նույն են։ Վերջին երկուսը, Տիգրանի ձեռով վառած, Տիգրանից վառած, ունեն կրավորական բայերի սեռի խնդրի սովորական կազմությունը, որ տեսանք վերևում։ Առաջին ձևի մեջ ևս՝ Տիգրանի վառած ճրագը՝ վառած բառը դարձյալ կրավորական իմաստ ունի. իսկ Տիգրանի դրա սեռի խնդիրն է մի ուրիշ ձևով արտահայտած փոխանակ սովորական Տիգրանի ձեռով կամ Տիգրանից ձևերի։

Թե այդ երեք ձևերն իմաստով նույն են, այդ մասին խոսելու կարիք չկա։ Միայն այս պետք է ասել, որ այդ ձևերից առաջինը շատ սովորական գործածականն է, երկրորդ ձևը համեմատաբար պակաս է գործածվում, իսկ երրորդ ձևը, «Տիգրանից վառած ճրագը» շատ քիչ է պատահում։ Բայց թե այս վերջին ձևն էլ կա մեր լեզվի մեջ, ահա մի երկու օրինակ Պռոշյանի «Սկիզբն երկանցից»։ «Աղախինները դառը ծխից պատճառած... արտասունքը սրբելով» (եր. 31)։ «Ռուբի՛կս, աֆացիից պատճառած գլխիս բացվածքն այժմ ծածկվել է» (եր. 165)։ «Բարձրագույն իշխանությունից օրինավոր հրամանագրով տնօրինած տուրքեր» (եր. 319)։ Այսպես և, եթե կարելի է ասել՝ «Երկնքից իրան պարգևած է իրավունք» (եր. 234) և շատ նմանները, նույնպես կարելի է ասել՝ Երկնքից իրան պարգևած իրավունքը և այլն։ Այս բացառական հոլովներն ազատ կերպով կարելի է 2-րդ հոլովական ձևին վերածել առանց իմաստի փոփոխության՝ Մեի պատճառած արտասունքը։ Աքացիի պատճառած բացվածքը։ Բարձրագույն իշխանության տնօրինած տուրքեր և այլն։

Գրաբարում, ինչպես տեսանք (եր. 589), ածականները երբ գոյականաբար են գործածվում, սովորական տրական խնդրի փոխանակ առնում են սեռական կամ ստացական դերանուն և վերջինս իբրև մի ածական համաձայնում է յուր խնդրառուին։ Նույն ձևով գոյականաբար բանում է և անցյալ դերբայը, որի հետ բացառականի իմաստով գործածված տրական խնդիրն ևս դառնում է սեռական կամ ստացական ա-

ծական, որ և համաձայնում է դերբային (տե՛ս եր. 586 հետ.). ինչպես՝ Ձի՞ ետ ի ձեռս զիւր պատրեալն (=զպատրեալսն յիւրմէ=իր խաբածները). Հանցուք զնա յաչած իւրոց խաբեցելոց (=խաբեցելոց յիւրմէ=իր խաբածների). Ձքս փրկեալ ժողովուրդսն (=փրկեալ ի քէն=քս փրկած)։ Աշխարհաբարում ևս ինչպես տեսանք, այս կիրառության մեջ անցյալ դերբայը գոյականաբար է բանում, ուստի և վրան դրված 2-րդ հոլովն իբրև գոյականի վերադիր՝ և հոդը չի առնում և ցուցականների առանց ճ-ի սրա, դրա, նրա ձևերն են գործածվում։ Բացի այդ, ինչպես ուրիշ դեպքերում, նույնպես այստեղ մնում են գրաբարի ստացական ածականները՝ իմ, քո, յուր, մեր, ձեր։ Այսպես ուրեմն Տիգրանի գրած նամակը կապակցության մեջ գրած բառը նույնպես գոյական է, ինչպես Տիգրանի գրածը կապակցության մեջ։ Իսկ թե անցյալ դերբայը իսկապես գոյական է, այդ մենք տեսել ենք և պարզ կարելի է տեսնել դարձյալ նրանից, որ մինչդեռ որոշ վերադիր ունեցած ժամանակ առնում է ս, դ, և հոդերը՝ Այս իմ գրածն է, իմ գրածս է, Տիգրանի գրածն է,—անորոշ վեադիրների հետ առանց հոդի է մնում, ինչպես ամեն ուրիշ անուն, բայց դարձյալ իբրև գոյական՝ այս մի աշակերտի գրած է, անփորձ մարդու գրած է։ Բացի այդ՝ գրաբարում այս կազմության բառերը դեռ չունին դերբայական իմաստ և լոկ հասարակ անուն են, ինչպես՝ հատած, կոտորած և այլն. բայց հետզհետե այս ած ածանցն ընդհանրացել է բոլոր բայերի վրա և ստացել է անցյալ դերբայի և ածականի նշանակություն, ինչպես այժմ աշխարհաբարում է. միայն անորոշ դեպքերում դեռ պահում է յուր գոյական իմաստը։ Գրաբարի անցյալ դերբայն ևս իսկապես ծագում է հին գոյականից, որ ածականաբար է գործածվում*։

Եզրակացությունը պարզ է։ Տիգրանի գրած նամակը և Տիգրանին գրած նամակը կապակցությունների իմաստի խոշոր տարբերությունը ոչ ն հոդից է առաջանում և ոչ գրած դերբայի սեռից, որ երկու դեպքում էլ կրավորական իմաստ ունի. այլ նրանից, որ երկրորդ կապակցության մեջ 2-րդ հոլովական ձևը գործ է ածվում տրականի տվորական նշանակությամբ, իսկ առաջնի մեջ նույն այդ ձևը բացառականի նշանակություն ունի և իբրև կրավորական բայերի սեռի խնդիր ցույց է տալիս գործողության ծագումը։ Բացի այդ՝ Տիգրանի գրածը, Տիգրանի գրած նամակը կապակցությունների մեջ գրած բառը գործ է ածվում իբրև մի գոյական և Տիգրանի վրա վերադիրն է. մինչդեռ Տիգրանին գրածը, Տիգրանին գրած նամակը կապակցությունների մեջ Տիգրանին խնդիր չէ մի գոյականի, այլ գրած դերբայի բայիմաստին, իբրև՝ ինչ որ Տիգրանին է գրած, գրված։

Այսպես ուրեմն այն սահմանումը թե սեռականը ցույց է տալիս թե մեկ առարկա ինչից է առաջ գալիս, սերվում է,— հարմար է ամենից

---

* Տե՛ս Grammaire comparée de l'arménien cbassique par A. Meillet, Vienne, 1903, եր. 68, 97։

առաջ այն սեռականին, որ դրվում է անցյալ դերբայի վրա՝ Տիգրանի գրածը, նկարածը և այլն, որ առնվում է կրավորական իմաստով իբրև՝ ինչ որ Տիգրանից է գրված, նկարված։ Բայց մի անգամ որ Տիգրանի գրած նամակը կապակցության մեջ Տիգրանի լրացումը ցույց է տալիս այն անձը կամ պատճառը, սկզբնապատճառը (der Urherber, die Ursache), որից ծագում է ոչ միայն գրելու գործողությունը այլև այդ գործողության նամակը (efficertes Objekt),— նույն իմաստը պահում է անշուշտ և երբ առանց գրած բառի ասենք. Տիգրանի նամակը, որ կարող է հասկացվել՝ Տիգրանի գրած նամակը։ Այսպես և ամեն դեպքում, երբ սեռականի և իր անվան մեջ հասկացվում է մի այդպիսի անցյալ դերբայ։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ Թագավորի պատվերը. Տեսչի կարգադրությունը և այլն, մենք սեռականն ըմբռնում ենք իբրև այն անձը, որին վերաբերում է մի բան, բայց ոչ իբրև ստացվածք, այլ իբրև մի արդյունք, որ առաջ է գալիս նրա մի գործողությունից. ինչպես եթե սեռականի և իր խնդրառուի մեջ զեղչված լիներ մի անցյալ դերբայ՝ Թագավորի տված պատվերը. Տեսչի արած կարգադրությունը։ Եվ մենք միշտ էլ ավելացնում ենք մի դերբայ, երբ ուզում ենք սեռականի և իր խնդրառու անվան հարաբերությունը պարզ և որոշ հայտնել. որովհետև առանց այդպիսի մի դերբայի՝ հաճախ երկդիմի է լինում սեռականի և իր անվան հարաբերությունը. սեռականը կարող է և ստացական, վերաբերության սեռական հասկացվել և սկզբնապատճառի սեռական։ Ուրիշ խոսքով սեռականն ըստ ինքյան ցույց է տալիս միայն մի առարկա, որին վերաբերում է ընդհանուր կերպով մի ուրիշ առարկա. իսկ այդ վերաբերության տեսակը պարզվում է հաճախ միայն այն ժամանակ, երբ մի ուրիշ բառով որոշում ենք, թե սեռականն արդյոք ստացական իմաստով պիտի հասկանալ, թե՞ վերաբերության, թե՞ ներգոյականի, թե՞ սկզբնապատճառի և այլն։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ Խորենացու պատմությունը, մենք պատմությունն ընդհանուր կերպով միայն վերագրում ենք Խորենացուն. բայց Խորենացու պատմություն կարող է հասկացվել և Խորենացու վերաբերյալ պատմություն. ինչպես ասում ենք Հայոց պատմություն, նույնպես և Խորենացու գրած պատմություն։ Առաջին դեպքում տրեմն 2-րդ հոլովական ձևը պահում է տրականի սովորական իմաստը, իսկ երկրորդ դեպքում առնվում է բացառականի իմաստով. բայց այս տարբեր իմաստներով գործածելու համար Խորենացու ձևը չի դադարում իհարկե միևնույն հոլովական ձևը մնալուց, ինչպես և Խորենացու պատմություն կապակցության մեջ, ո՛ր իմաստով էլ որ առնվի, Խորենացու ձևը միշտ միևնույն հոլովական ձևն է։

Թե ինչ դերբայ զեղչված է համարվում և կարելի է ավելացնել սեռականի և իր խնդրառուի մեջ, այդ արդեն խոսքի մտքից պիտի հասկացվի։ Սկզբնապատճառի սեռականի համար միայն պիտի նկատել, որ սովորաբար այն բայի անցյալ դերբայն է ավելանում, որի հետ սեռական խնդիրն իբրև ենթակա՝ խոսք է կազմում. ինչպես օրինակ՝ ա-

ում ենք՝ Տեսուչը կարգադրություն արեց. Տեսչի արած կարգադրությունը. Տեսչի կարգադրությունը։ Տիգրանը պարգև տվավ, Տիգրանի տված պարգևը. Տիգրանի պարգևը։ Տիգրանը պարգև ստացավ. Տիգրանի ստացած պարգևը. Տիգրանի պարգևը։ Այսպես և Վարդանի արած առաջարկությունը=Վարդանի առաջարկությունը. Տիգրանի կատարած կեղծիքները=Տիգրանի կեղծիքները. Տիգրանի առաջարկած բանաձևը=Տիգրանի բանաձևը. Արբեցության տված վնասները=Արբեցության վնասները. Մուրացանի հորինած երկերը=Մուրացանի երկերը. Տիգրանի ասած երգը=Տիգրանի երգը և այլն։ Այս շարքն իհարկե շատ երկար է։

Կա նույն կազմության մի ուրիշ շարք ևս. Քամու բանեցրած ջաղաց=Քամու ջաղաց. Լրագրի հաղորդած լուր=Լրագրի լուր և այլն։ Այս կարգի սեռականներն ևս հասկացվում են իբրև սկզբնապատճառի սեռական, որից ծագում են բանեցնելու, հաղորդելու գործողությունը. բայց ջաղաց, լուր ոչ թե հետևանք, արդյունք են այդ գործողության, այլ մի առարկա, որ ազդվում, փոփոխվում է սեռականի գործողությունից (afficiertes Objekt)։

Առնենք մի քանի օրինակ ևս։ Ժողովրդի կրած նեղությունները=Ժողովրդի նեղությունները. Տիգրանի կրած պարտությունը=Տիգրանի պարտությունը և այլն։ Քերականական կազմությամբ սրանք չեն տարբերվում վերևի շարքերում դրած օրինակներից. բայց տրամաբանորեն բոլորովին տարբեր են։ Տեսչի (արած) կարգադրությունը կապակցության մեջ տեսչից ծագում է թե՛ անելու գործողությունը և թե՛ սրա հետևանք կարգադրություն. և անողը և կարգադրողը տեսուչն է. բայց ժողովրդի (կրած) նեղությունները կապակցության մեջ ժողովրդից ծագում է միայն կրելու գործողությունը, կրողը ժողովուրդն է, իսկ նեղությունները ժողովրդից չեն ծագում, այլ ժողովուրդը միայն կրում է իր վրա այդ նեղությունները, որ ուրիշից են ծագում։ Ժողովուրդը ոչ թե **նեղողն** *է, այլ* **նեղվողը**: *Իմաստի այս խոշոր տարբերությունը սակայն առաջանում է ոչ տարբեր քերականական կազմությունից, որ չկա, այլ միմիայն կրեմ բայի իմաստից, որի ենթական թեպետ կրելու գործողության սկզբնապատճառն է, բայց որովհետև կրողն է, ուստի ունի ոչ թե ներգործական, այլ կրավորական ենթակայի իմաստ։ Հաճախ իհարկե այս իմաստը երկդիմի է մնում, օրինակ. Վարդանի վնասը կապակցությունը եթե հասկանանք՝ Վարդանի տված (պատճառած) վնաս, վրնասողը Վարդանն է և վնասը ծագում է Վարդանից. իսկ եթե հասկանանք՝ Վարդանի կրած (ստացած) վնաս, այն ժամանակ Վարդանը վնասվողն է. վնասը Վարդանից չի ծագում, այլ ուրիշից։ Միևնույն ձևն ուրեմն կարող է և ներգործական և կրավորական ենթակայի իմաստ ունենալ։*

Քերականական կազմությամբ վերևի օրինակներից չեն տարբերվում և հետևյալները. Տիգրանի ունեցած դիրքը=Տիգրանի գիրքը.

Վարդանի ունեցած (ստացած) բաժինը=Վարդանի բաժինը։ Դրանք ձևվով սկզբնապատճառի սեռական են. ունենալու, ստանալու սկզբնապատճառը Տիգրանը, Վարդանն են. բայց որովհետև ունիմ (ստանամ) բայը ստացականության գաղափար է ցույց տալիս ուստի և այս սեռականներն իմաստով նույնանում են ստացական սեռականի հետ. Տիգրանի գիրքը=Տիգրանի ունեցած գիրքը=Տիգրանին պատկանած գիրքը։

Առնենք երկու կիրառություն ևս։— Հայոց լեզվի մեջ ամբողջի մաս ցույց տալու համար, ինչպես սպասելու էր, սովորաբար գործ է ածվում բացառական հոլովը, բայց նույն իմաստով բանում է և սեռականը. նրանցից մեկը, նրանց մեկը. ծառաներից տարիքավորը, ծառաների տարիքավորը. աշակերտներից ջանասերը, աշակերտների ջանասերը. ուխտավորներից որը..., ուխտավորների որը... Հանավաքցիներից երեքը, Հանավաքցոց երեքը. մարդու մեկը և այլն։ Այս կիրառության մեջ ևս ուրեմն 2-րդ հոլովը բացառականի իմաստ ունի։ Նույն իմաստով բացառականի փոխանակ սեռական է դրվում, երբ պետք է ցույց տալ այն նյութը, որից շինված կամ կազմված է մի բան. ինչպես՝ փայտի կամուրջ, փայտե կամուրջ, գարու հաց, գարե հաց. կավի աման, կավե աման. մահուդի չուխա, մահուդե չուխա։*

Մենք տեսանք սեռականի գլխավոր կիրառությունները, որոնց մեջ սեռականը ցույց է տալիս, թե մի առարկա ում է պատկանում, վերաբերում կամ ինչից է առաջ գալիս։ Մեր բացատրություններով իհարկե չեն սպառվում սեռականի նշանակությունները. բայց և մեր նպատակից դուրս էր մի առ մի ուսումնասիրել մեր այս հոլովի կիրառությունները, և կամ՝ ցույց տալ թե մեր սեռականը տրականից է ծագում։ Անշուշտ ոչ. մեր սեռականի գործածություններն ամենամեծ մասամբ ժառանգություն են հնդեվրոպական սեռականից, որով դրվում էր գոյականի լրացումը։ Մենք միայն ա՛յն էինք ուզում ցույց տալ, որ մեր սեռական և տրական հոլովները ձևով նույնացած լինելով՝ մենք այս երկու հոլովն այժմ նշանակությամբ ևս հաճախ իրարից տարբեր չենք մտածում և ըմբռնում ենք իբրև մի ընդհանուր հոլով,— և ապա ա՛յն թե փոխանակ այդ ընդհանուր հոլովը մի նոր անունով կոչելու, ավելի հարմար է տրական անվանել, քանի որ սեռականի գլխավոր նշանակություններն ունի և տրականը, կամ թե տրականի նշանակություններով կարելի է բացատրել նաև սեռականի գործածությունները։ Ինչպես որ գործիականը և մյուս հոլովները ինչ իմաստով որ գործ են ածվում բայերի հետ, նույն իմաստը, երբեմն փոխաբերական մտքով, պահում են

---

* *Այս իմաստով սովորաբար գործ է ածվում ե (հին է)[1] վերջավորությամբ բացառականը. իսկ վերջավորությունը նոր կազմություն լինելով դեռ չի ընդհանրացած այս կիրառության համար, փայտե, գարե, կավե և այլն ձևերը սակայն կարող են և սոսկ ածական համարվել. մենք բացառական ենք ըմբռնում, ինչպես և փայտի, կավի, մահուդի՝ սեռական և ոչ ածական։*

և իբրև գոյականի վերադիր գործածված ժամանակ,— այսպես և տրականի հոլովական ձևը ինչ իմաստով որ բանում է բայերի հետ նույն իմաստն ունի և գոյականի վրա իբրև սեռական վերադիր գործածված ժամանակ։ Այսպես՝

1. Տրականի հիմնական նշանակությամբ բացատրվում են ինչպես տևսանք, ա) ստացական, մասամբ և ածական սեռականները, որ ցույց են տալիս պատկանելություն, վերաբերություն, հատկացում և այլն. բ) առարկայի սեռականները իբրև խնդիր բայական անվան (փառքի ձգտում, ճաշի հրավեր)։

2. Տրականի ներգոյական նշանակությամբ բացատրվում են տեղի և ժամանակի իմաստով առնված սեռականները (ձեռիս գավազանը)։

3. Տրականի բացառական իմաստով բացատրվում են՝ ա) սկզբնապատճառի սեռականը (Տիգրանի գրած նամակը, տեսչի կարգադրությունը). բ) մասնական սեռականը, որ ցույց է տալիս ամբողջի մի մասը (ուխտավորների շատը). գ) նյութի սեռականը, որ ցույց է տալիս, թե ինչից է շինված մի բան։

Մնաց մեզ մի խնդիր ևս որոշել, թե արդյոք մեր 2-րդ հոլովը իր ստուգաբանությամբ, այսինքն ձևի (և ոչ իմաստի) ծագումով սեռակա՞ն է, թե տրական։

Հոլով որոշելու համար երկու հայեցակետ կարելի է ունենալ. մեկ՝ լեզվի մեր այժմյան հայեցակետը, մեկ էլ՝ պատմական։ Այս երկրորդը վերաբերում է պատմական քերականությանը և կարևոր է ձևերի ծագումը բացատրելու համար։ Առաջին հայեցակետով հոլովական ձևն առնվում է այնպես, ինչպես ըմբռնվում է կենդանի լեզվի մեջ։ Օրինակ՝ ո՞ւմ գիրքը կապակցության ում ձևը մեր այժմյան հայեցակետով սեռական է, բայց դա ստուգաբանորեն տրական է, որ ապա ստացել է և սեռականի նշանակություն։ Նույնպես պաս=պահս բառը ստուգաբանորեն հայցական է, բայց այժմ ունի և ուղղականի նշանակություն։ Մի ձև իր պատմական ծագումով կարող է ուրեմն համապատասխան չլինել այն գործածությանը, որ ունի կենդանի լեզվի մեջ։ Մի ոչ պատմական քերականության համար բավական է մեր այժմյան հայեցակետը սեռական—տրականը մի ընդհանուր հոլով համարելու, քանի որ դրանք մի հոլով են ձևով և մասամբ մեր արդի ըմբռնումով։ Բայց ոլով-հետև կարող են լինել, որ մեր 2-րդ հոլովական ձևի ծագումին նշանակություն տան, ուստի այժմ տեսնենք, թե արդյոք մեր սեռական—տրական հոլովը կարելի՞ է մի ընդհանուր հոլով դնել առանց այդ ձևի ծագմանը հակասելու. ուրիշ խոսքով՝ ի՞նչ է ստուգաբանորեն մեր 2-րդ հոլովը, սեռակա՞ն, տրակա՞ն, թե՞ մի ընդհանուր ձև։

Աշխարհաբարի սեռական—տրական հոլովը կազմվում է երկու կերպ, վերջավորություններով և առանց վերջավորության։

Վերջավորություններով կազմվում են հաց, հաց-ի. մարդ, մարդ-ու, դուռ, դռ-ան, օր, օր-վան, կին, կն-ոջ, մերոնք, մերոն-ց. այլ և բար-

բարբառային ձևով՝ Երևան, Երևան-այ=Երևան-ա. էջմածին, էջմիածն--այ=էջմիածն-ու։ -Ի, ու, ան, վան, ոջ, ց, ա(յ) վերջերն այժմ ըմբռնում ենք իբրև հոլովակերտ վերջավորություն սեռական—տրականի։ Ի՞նչ ծագում ունեն դրանք, նախ՝ ի, ու, ան, վան վերջավորությունները, որ ամենից կարևոր տեղն են բռնում,— որովհետև մյուս վերջավորություններով և առանց վերջավորության հոլովվող բառերը սակավաթիվ են։ —Այս հասկանալու համար պետք է տեսնել գրաբարի հոլովման կազմությունն ու դրությունը։

Գրաբարում շեշտը մեծ մասամբ բառերի վերջին վանկի վրա է. նախագրաբարյան շրջանում սակայն բառերը շեշտվել են վերջընթեր վանկի վրա։ Շեշտի այս դրության պատճառով բառերի վերջի ձայնավորները թուլլ արտասանվելով սղվել են՝ դառնալով նախ ը և ապա դուրս ընկնելով. ուստի սկզբնական քո՛ւնո, ա՛մա, բա՛նի, զա՛րդու ձևերը քո՛ւնը, ա՛մը, բա՛նը, զա՛րդը ձևերից անցնելով դարձել են քուն, ամ, բան, զարդ։ Իսկ ն, ր, ղ հնչյուններով վերջացած բառերի վերջի այս հնչյունները մնացել են, միայն դրանցից առաջ եղած ձայնավորը սղվել է. *ա՛ստեղ դարձել է աստղ, աստղ. *գե՛ղման դարձել է գե՛ղմըն, գեղմն, ապա այս կարգի բառերի վերջի ն բաղաձայնը ևս ընկել է և մնացել ը, ինչպես բարբառների մեջ եզը, գառը, մուկը, մինչև որ վերջապես այս վերջի ը ձայնավորն ևս դուրս է ընկնում և այժմ ունինք՝ գառ, մուկ, եղ և այլն։

Շեշտի այս ազդեցությամբ ուրեմն բառերի վերջի հնչյունները դուրս են ընկել. և սրանով է բացատրվում, որ եզակի ուղղական, կոչական և հայցական հոլովները, որ սկզբնապես տարբեր ձևեր են ունեցել, մի ընդհանուր ձև են ստացել գրաբարում (Մեյե, Քեր., եր. 45)։ Այդ հոլովները մնացել են առանց որևէ հոլովական վերջավորության և առանց բնի*) վերջի ձայնավորի, որոնք դուրս են ընկել. միևնույն ամ, քուն ձևը, տարբեր ծագումից առաջ եկած, գործ է ածվում և երեք հոլովի իմաստով, այդ երեք հոլովից սակայն, գրաբարում միայն «կոչականը չունի իրեն հատուկ գոյությունը». այսինքն զատ հոլով չի համարվում, որովհետև հոգնակիում ևս ձևով նույն է ուղղականի հետ. իսկ հայցականը դեռ առանձին հոլով է, որովհետև հոգնակիում պահել է յուր վերջավորությունը՝ ս հնչյունը, ամս, քունս, սիրտս, զարդս, որ ըստ Մեյեի (Քերակ., եր. 46) հնդեվրոպական ծագում ունի։

Այսպես տեսնում ենք՝ գրաբարի հոլովումը ուղղականի և հայցականի նկատմամբ չունի մի հավասարակշիռ դրություն։ Եզակին և հոգ-

---

*) Բուն (thème) ասվում է քերականության մեջ բառերի սկզբնական անփոփոխ մասը, իսկ վերջավորությունը (dèsinence)՝ բառերի վերջի փոփոխական մասն է, որ ավելանում է բնի վրա՝ թիվ, հոլով, դեմք, ժամանակ և այլն ցույց տալու համար։ Հոլովները զանազանվում են իրարից վերջավորության տարբերությամբ, ինչպես՝ հաց-ի, հաց-ից, հաց-ով. հոլովումներն ևս տարբերվում են վերջավորությամբ, ինչպես մի քառ լինում է նույն ձևը հաց-ի, մի ուրիշը՝ մարդ-ու։

նակին համեմատ չեն. եզակիում ուղղական և հայցական նման են (հայցականի զ և մյուս նախդիրները հոլովական մաս չեն), իսկ հոգնակիում տարբեր: Իսկ այսպիսի դրությունը չի կարող կայուն լինել, որովհետև հոլովական շփոթություն է առաջ բերում, ուստի և առաջ են գալիս նմանական (անալոգիական) կազմություններ: «Պաշտոնով տարբեր ձևերի՝ հնչափոխությամբ առաջացած հնչյունական զուգադիպության (zusammenfall) հետևանքներից մեկն այն է, որ մարդ այնքան վարժվում է հնչյունական նույնության, որ այդ հնչյունական նույնությունն անց է կացնում և այնպիսի դեպքերի վրա, որոնց մեջ հնչափոխությամբ դեռ նույնություն առաջ չի եկել»*: Այսպես գերմաներենի անունների ուղղականն ու հայցականը մեծ մասամբ նույնացել են, որովհետև որոշ բառերի մեջ եզակի կամ հոգնակի ուղղականն և հայցականը հնչափոխությամբ նույն ձևն են ստացել, ապա դրանց հետևել են նմանական կազմությամբ և մյուսները: Այս նույնացումը հաճախ իհարկե սկզբից որոշ ուղղությամբ չի կատարվում՝ նախ երկու ձևն էլ, ուղղականի և հայցականի ձևը, խառն, մեկը մյուսի տեղ (promiscue), գործ են ածվում մինչև մի ձևը հաստատվում է**:

Գրաբարում արդեն տեսնում ենք, որ քանի որ եզակի ուղղական և հայցական հոլովները ձևով նույնացել են, դրանց նմանությամբ հոգնակի ուղղականն և հայցականն էլ ձգտում են ձևական տարբերությունը վերացնելու: Այսպես պատահում են ք-ով գործածություններ իբրև հայցական և ընդհակառակն ս-ով գործածություններ իբրև ուղղական. զհաւատացեալքս ի Քրիստոս, ոչ գոյր ընդ նոսա աստուածս օտարս. եղև հարսանիս և շատ նմանները (տե՛ս Բագրատ., եր. 45) պատահական սխալներ չեն: Լեզուն ձգտելով հոգն. ուղղականի և հայցականի մեջ ևս ձևական նույնություն առաջ բերելու, սկզբում դեռ տատանվում է երկու ձևերի մեջ ընտրություն անելու, մինչև որ վերջապես հայցականի ձևը ետ է մղվում և լեզվից դուրս է ձգվում թողնելով միայն հետքեր, ինչպես՝ պաս, երկուս, մի քանիսը, ծախս (բարբառներում և ուրիշները՝ ինչպես խարսնիս=հարսանիս, բալնիս=բանալիս և այլն), որոնց մեջ հայցականի ձևն այլևս իբրև հայցական չի ըմբռնվում և գործ է ածվում նաև իբրև ուղղական: Ուղղականի ձևն ընդհակառակն հետզհետե գործ է ածվում և իբրև հայցական, մինչև որ վերջապես այդ ձևն իշխող է դառնում, որով հին հայցական հոլովն ըստ ձևի դուրս է ընկնում և մնում միայն ուղղական հոլովը: Հետևանքն այն է լինում, որ աշխարհաբարում հայցական հոլովն ըստ ձևի չկա, մինչդեռ գրաբարում միայն կոչականը չկար:

Հոգնակի ուղղականի և հայցականի ձևերի այս հավասարեցման մեջ սակայն լեզուն առաջ է մղում և հավաքական հոգնակի եար=եր

---

* *H. Paal*, Principien der Sprachgeschichte, Halle. zweite Auflage, եր. 190:

** Նույն տեղում, եր. 191 հետ.:

մասնիկը, որ մի ընդհանուր ձև էր ուղղականի և հայցականի համար, ուստի և ավելի հեշտությամբ ընդհանրանում է նոր լեզվի մեջ հոգնակի թիվ կազմելու համար (Համմ. Մեյե, Քեր., եր. 59 հետն.)։ Այս մասնիկի առաջ հոգնակի հին ի-ն ետ է մղվում՝ մնալով միայն դերանունների և ձայնավորով, հատկապես ի ձայնավորով վերջացած անունների համար՝ որդիք, այգիք, եկեղեցիք և այլն, որոնք արդեն գրեթե հնացած ձևեր են, մեկ էլ՝ անեզական կամ իբրև անեզական գործածված բառերի մեջ։ Այս վերջին դեպքում էլ սակայն ի-ն կորցրել է արդեն յուր բնական նշանակությունը և դարձել մի սոսկ վերջածանց մասնիկ, որ ոչ թե հոլովման է վերաբերում, այլ բառակազմության. կառք, աչք, գիրք, փառք, տանջանք և այլն աշխարհաբարում այլևս հոգնակի իմաստ չունին։

Ուղղական և հայցական հոլովների այս ձևական նույնացումը մի անհարմարություն է առաջ բերում. որովհետև հայերենում որոշ հաստատուն բառադասություն չկա, խոսքը հաճախ երկդիմի է մնում։ Տիգրանը տեսավ Վարդանը,— չի հասկացվում ենթական և սեռի խնդիրը։ Այս երկդիմության առաջն առնելու համար արևելյան բարբառները հայցականի իմաստով մարդոց անունների համար, երբ որոշ են, ըսկըսել են գործածել տրական հոլովը։ Այս փոխանակությունն անշուշտ սկսվել է դերանուններից և գրաբարում արդեն տեսնում ենք դրա ըսկիզբն անձնական դերանունների մեջ՝ զ-մեզ, զ-քեզ, զ-ձեզ. որոնց նըմանությամբ ասվել են և ինձ, սրան, դրան, նրան և այլն և ապա անձի անունները, երբ որոշ են։ Բայց մի անգամ որ տրականն անցել է հայցականի տեղ, դրա հետևանքն այն է լինում, որ նմանությամբ որոշ անձի անուններից այս կիրառությունն անցել է մասամբ և անորոշ անձի և կենդանիների անունների վրա և այժմ անցնում է նույնիսկ անշունչ առարկաների անունների վրա։ Վերջին գործածությունը, որ պատահում է ավելի խոսակցության մեջ, սխալ է համարվում. բայց դա լեզվի բնական ձգտումից է առաջանում,—այն է՝ հայցական հոլովի իմաստի գործածությունը միակերպության վերածել ըստ ձևի և ոչ թե միևնույն բառի համար մի դեպքում ուղղականը գործածել իբրև հայցական, ուրիշ դեպքում՝ տրականը։

Անցնենք մյուս հոլովներին։ Այս հոլովների թեքման հիմքը գրաբարում կազմում է այն, որ շեշտն անցնելով մի վանկ ետև՝ վերականգնում է բառի բունը, որի վրա ավելանում են վերջավորությունները։ Այսպես օրինակ՝ գործիականի ւ, վ=ւի(ն), վի (ն) վերջավորությունը, որ հնդեվրոպական ծագում ունի, ավելանալով անունների բներին՝ կազմում է՝ մարդո՛-վ, ամա՛-ւ, իժի՛-ւ*, զարդո՛ւ-ւ=զարդու (վերջի ւ-ն ու-ից հետո ընկնում է)։ Սակայն որովհետև լեզվի մեջ չկան այլևս *մա՛րդո, *ա՛մա, *ի՛ժի, *զա՛րդու բներ, ուստի գրաբարում արդեն իբրև գործիական հոլովի վերջավորություն ըմբռնվել է ոչ թե վ, ւ հնչյունը, այլ ով, աւ, իւ, ու այսինքն բնի ո, ա, ի ձայնավորները գործիականի վ, ւ վերջավորության հետ, կամ հենց բնի ու ձայնավորը։

Գրաբարի սեռական—տրական հոլովն ունի ձայնավոր հոլովումներ մեջ ի, ու, այ, ոյ վերջերը։ Դրանցից ի, ու ձայնավորները՝ սրտի՛, զարդո՛ւ, ոչ թե հոլովակերտ վերջավորություն են, այլ բնի մաս, որ ուղղականում և հայցականում շեշտից հետո լինելով՝ դուրս են ընկել, իսկ սեռական—տրականում, ինչպես և մյուս հոլովների մեջ, շեշտը վրան գալով՝ վերականգնում են։ Հին հոլովակերտ վերջավորություններն այս հոլովումների սեռականի և տրականի վերջից շեշտի ազդեցության տակ դուրս են ընկել, ուստի այս երկու սկզբնապես տարբեր ձևեր ունեցող հոլովները նույն ձևն են ստացել (Մեյե, Քեր., եր. 48)։ Եվ որովհետև այլևս *սի՛րտի, *զա՛րդու բուն չկա, ուստի սրտի՛, զարդո՛ւ սեռական—տրականի համար իբրև հոլովակերտ ըմբռնվում են գրաբարում արդեն ի, ու ձայնավորները։

Ըստ Մառի (Քեր., եր. 54. հետ.) սեռական—տրականի վերջավորությունն սկզբնապես եղել է ոի, որի մնացորդն է յ, որ երևում է այ, ոյ հոլովումների մեջ՝ Տիգրանայ, քնոյ։ Ըստ Մեյեի, սակայն, (Քեր., 48) այս յ-ն ո հոլովման մեջ հնդեվրոպական սեռականից է ծագում. *osyo ձևից առաջացել է ոյ. մինչ նույն բնի տրականի հնդեվրոպական վերջավորությունը դուրս է ընկել, ուստի և քնոյ սեռականը ուրիշ բնի ձևերի նմանությամբ գործ է ածվել և իբրև տրական։ Ինչպես էլ լինի այս յ-ի ծագումը, դա միայն գրաբարի համար նշանակություն ունի. որովհետև աշխարհաբարում այ, ոյ հոլովումները դուրս են ընկել։ Տրդատ, քուն այլևս չենք հոլովում Տրդատայ, քնոյ, այլ Տրդատի, քնի։ Եթե բարբառային կամ գրաբար ձևով այժմ էլ պատահում են Տրդատայ, Արտաշատայ, Վանայ, դրանց վերջի յ-ն այլևս չի արտասանվում, թեպետ և հին գրությունը պահում ենք։ Հոլովն այժմ կազմվում է ուրեմն միայն ա ձայնավորով՝ Տրդատա, Արտաշատա, Վանա, իսկ այս ա-ն, որ այժմ իբրև հոլովակերտ ենք ըմբռնում, իսկապես բառի բունն է։ Գրաբարում սակայն (հին արտասանությամբ և ոչ այժմյան) իբրև հոլովակերտ ըմբռնվում է այ, ոյ (=ay, oy), այսինքն բնի ա, ո ձայնավորները սեռական—տրականի յ վերջավորության հետ, ճիշտ ինչպես գործիականի համար աւ, ով, ի վերջերը։

Այսպես ուրեմն, լեզուն գրաբարի շրջանում արդեն կորցրած է եղել նախնի հոլովական դրության գիտակցությունը. երկու տարբեր հոլովներ, սեռականն ու տրականը նույն ձևն են ստացել, և ապա բնի ձայնավորները մենակ կամ յ կիսաձայնով՝ ի, ու, այ, ոյ՝ ըմբռնվել են իբրև սեռական—տրականի ընդհանուր հոլովակերտ. որով առաջացել են չորս տեսակ վերջավորություն սեռական—տրականի համար (խընդիրը ձայնավոր հոլովումների մասին է)։ Նախնի հոլովման ենթադրյալ միությունը ուրեմն ոչնչացել է շեշտի ազդեցության տակ բառերի վերջի դուրս ընկնելովը և առաջ է եկել բազմազանություն։ Մի կողմից պաշտոնով տարբեր ձևերը, ինչպես են սեռականն ու տրականը, որոնք

սկզբնապես տարբեր էլ ձև են ունեցել, ստացել են մի նոր ընդհանուր ձև. մյուս կողմից պաշտոնով նույն հոլովի, այդ միացյալ սեռական—տրականի, ինչպես և գործիականի համար առաջ են եկել տարբեր տարբեր հնչյունական ձևեր՝ բանի, զարդու, մարդոյ,—որոնց մեկը միայն բավական կլիներ։ «Ամեն լեզու սակայն շարունակ աշխատում է բոլոր անպետք աննմանությունները դուրս ձգելու, պաշտոնով նույնի համար նույն հնչյունական արտահայտությունն էլ ստեղծելու»։ Այս ձգտումը մի հակազդեցություն (Reaction) է հնչափոխության գործած փոփոխության դեմ, որով մի հոլովի համար մի քանի ձևեր են առաջ գալիս. լեզուն նոր նմանական կազմություններով աշխատում է վերացնել անպետք և անօգուտ հնչյունական տարբերությունները և վերականգնել նոր ձևական միություն, այսինքն մի քանի հոլովումները մի հոլովման վերածել։ «Այս հավասարեցման հետևանքն այն է լինում սովորաբար, որ մի խմբի բառեր անցնում են ուրիշ խմբի մեջ, այն էլ բոլորը կամ միայն մի մասը, կամ բոլոր ձևերի մեջ կամ մի քանիսի մեջ»*)։ Հոլովումների այս շփոթությունն ու փոխանցումը արդեն գրաբարում տեսնում ենք։ Այսպես կան բառեր, որոնց եզակին մի հոլովման տակ է դնում, հոգնակին ուրիշ. կան բառեր ևս, որոնք երկու և ավելի ձևերով են հոլովվում. ինչպես՝ զօր, զօրու, զօրք, զօրաց, զարդ, զարդու կամ զարդի և այլն։ Այս շփոթության հետևանքն այն է լինում, որ «հայերենի զարգացման ընթացքում տարբեր բնի ձևերը ձգտում են մի տիպի վերածվելու» (Մեյե, Քերակ., եր. 60)։

Եվ մենք այսօր տեսնում ենք, որ մեր աշխարհաբարի հոլովումը գրաբարինի դիմաց շատ ավելի հաստատուն և պարզ կերպարանք ունի։ Գործիականի նոր կազմված ով վերջավորությունը, որ բաղադրված է ո բնից և հին հոլովակերտ վ վերջավորությունից, միակերպ ավելանում է բոլոր բառերի վրա. ինչպես մարդով, քնով այսպես և սրտով, զարդով, ազգով, հորով, աստղով և այլն**։ Նույն կերպ բնի ի ձայնավորը իբրև սեռական—տրականի հոլովակերտ ըմբռնվելով՝ ընդհանրացել է և ուրիշ բուն ունեցող բառերի համար, մինչև որ աշխարհաբարում իշխող ձևն է դարձել. ինչպես սիրտ, սրտի է հոլովվում, այսպես և դրա նմանությամբ գործի, զարդի, լավության, աստղի։

Գրաբարում արդեն այս հոլովական փոխանցումը գործող կերպով երևում է. ա բունն ունեցող հասարակ անունները, որոնք բաղաձայնով են վերջանում, սեռական—տրականի մեջ շուտ են եկել ի հոլովման ինչպես աշխարհ, մար փոխանակ *աշխարհայ, *մարայ ձևերի ունին արդեն աշխարհի, մարի։ Հատուկ անունները միայն դեռ պահում են այ ձևը՝ Տրդատայ, Տիգրանայ։ Աշխարհաբարում սակայն ոչ միայն հատուկ անունները, այլև կարելի է ասել, բոլոր ուրիշ բուն ունեցող բա-

*) *H. Paul*, Princ. der Sprachgeschichte, եր. 161, 183 հաև.։

** Կան բարբառներ, որոնց մեջ գործիականի ավ վերջավորությունն է ընդհանրացած։

ռները, շուռ են եկել ի հոլովման. հոգնակի սեռական—տրականը միակերպ ի ձայնավորով է կազմվում, իսկ եզակիում, եթե սակավաթիվ բառեր ուրիշ կերպ են հոլովվում, բարբառների մեջ դրանք ունին ի հոլովման ձևեր։

Կան բարբառներ սակայն, որոնց մեջ շատ տարածված է ու հոլովումը ոչ միայն ու բունն ունեցող բառերի համար, այլև ուրիշ բուն ունեցող բառերի վրա անցել է ու վերջավորությունը։ Արևելյան աշխարհաբարի մեջ ևս որոշ բառեր հոլովվում են ու վերջավորությամբ։ Այս վերջավորությունը սակայն մեծ մասամբ բառերի բնի ու ձայնավորը չէ, որ մնում է մեր աշխարհաբարում, որովհետև այդ բունն ունեցող բառերը սակավ բացառությամբ արդեն շուռ են եկել ի հոլովման, ինչպես՝ զարդ, զգեստ, հորթ (որթ) և այլն. հոլովվում են զարդի, զգեստի, հորթի և ոչ թե զարդու, զգեստու, հորթու։ Աշխարհաբարի ու հոլովակերտը ծագում է մեծ մասամբ գրաբարի ոյ հոլովումից ձայնաշրջությամբ. ինչպես լոյս, քոյր, հավաքածոյ, շինածոյ, քոյ, խաշոյ դարձել են՝ լուս, քուր, հավաքածու, շինծու, քու, խաշու, այսպես և անորոշ դերբայների և սակավաթիվ ուրիշ բառերի սեռական—տրականը՝ գնալոյ, ասելոյ, Աստուծոյ, մարդոյ, սիրոյ, ձիոյ եղել են՝ գնալու, ասելու, Աստուծու, մարդու, սիրու, ձիու։ Նույնպես գինւոյ որդւոյ և նմանները գինոյ, որդոյ ձևերից անցնելով դարձել են գինու, որդու։ Կան բարբառներ սակայն, որոնց մեջ այս բառերն ևս վեր են ածվել ի հոլովման՝ գնալի, ասելի, մարդի (նույնպես գրական լեզվի մեջ), սերի, ձիի, գինիի և այլն։ Բայց գրական լեզվի մեջ դրանց համար պահվում է սովորաբար ու ձևը։

Այսպես ուրեմն ու հոլովակերտը կամ բառերի բունն է հոլովակերտ դարձած, կամ ձայնաշրջությամբ նոր ծագած է ոյ երկբարբառից։ Նույնպես բառերի բունն է և ա հոլովակերտը, ինչպես տեսանք, Տրդատա, Վանա=Տրդատայ, Վանայ ձևերի մեջ։ Տեսնենք ան, վան հոլովակերտները։

Ն բունն ունեցող անունները կորցնելով բունը՝ մասամբ արդեն շուռ են եկել ի հոլովման՝ մասի, ոտի, ձեռի, կաթի, ակի, արեգակի, որդի, սերմի և այլն. մասամբ ևս սեռական—տրականը կազմում են ան վերջավորությամբ. գառ, գառան. եզ, եզան. դուռ, դռան. մուկ, մկան։ Այս ան ձևը սակայն սկզբնապես ոչ թե հոլովական վերջավորություն է, այլ բուն, որ գրաբարում սեռական—տրականի մեջ վերականգնում է շեշտը վրան առնելով, ինչպես՝ շարժումն, շարժման. հոլովական վերջավորությունը դուրս է ընկել ըստ Մառի (Քեր., 76)։ Բայց աշխարհաբարում, քանի որ այս կարգի բառերի և վերջը ուղղականում դուրս է ընկել, սեռական—տրականի ան ձևն ըմբռնվում է արդեն իբրև հոլովակերտ վերջավորություն։ Այսպես և գրաբարում արդեն առանց ն-ի լինում են՝ աղջիկ, աղջկան. մանուկ, մանկան. հանգիստ, հանգստեան. ժողովուրդ, ժողովրդեան և այլն, որոնց մեջ ան, եան ըմբռնվում են իբրև հոլովակերտ։

Ի՞նչ ծագում ունի վան վերջավորությունը, որով կազմվում է ժամանակի անունների սեռական—տրականը։

Մաոր գրաբարի հոլովման որոշ դժվարություններ բացատրելու համար «դետերմինատիվ» անվան տակ դնում է մի վերջածանց մասնիկ ման, որի բնավորությունն ու նշանակությունը սակայն չի կարողանում որոշել։ Այդ մասնիկն իբր վեց ձևով է ներկայանում՝ ման, մա, մո, ան, ա, ո (Մաո, Քեր., եր. 61 հտն.)։ Սակայն բացի բառակազմությունից՝ այդ մասնիկը, ինչ որ հոլովման կազմությանն է վերաբերում, շատ երկբայելի է։ Դրա ան, ա ձևերը, որ իբրև թե երևում են աշխարհաբարի ժամանակի անունների հոլովման մեջ, ոչ թե ենթադրած ման «դետերմինատիվի» տարբեր ձևերը պետք է համարել, այլ գրաբարի եան, եայ ածանցների ձայնաշրջությամբ ձևեր։

Գրաբարում ժամանակի անուններից մի քանիսը՝ բացի սովորական ձայնավոր հոլովումներից,—ամիս, ամսոյ. ժամանակ, ժամանակի. շաբաթ, շաբաթու. վաղիւ, վաղուի. դար, դարու և այլն,— ունին նաև եան վերջավորությամբ սեռական—տրական՝ ամսեան, ամսենէ, ժամանակեան, շաբաթեան, վաղուեան, վաղուենէ, դարեան, երեկորեան կամ երեկորեայ, յերեկորեայ։—Այս բառերի համար եան բուն ընդունել կարելի չէ. դրանց եան ձևով սեռական—տրականը պարզապես նրմանական (անալոգիական) կազմությամբ առաջ եկած պետք է համարել։ Ինչպես որ ի բնի բառերի ի ձայնավորն իբրև սեռական—տրականի հոլովակերտ ըմբռնված անցել է և ուրիշ բառերի վրա, նույնպես և մի շարք անունների սեռական—տրականի մեջ եան բուն,—գեղարդն, գեղարդեան. ինքն, ինքեան. այլև հանգիստ, հանդստեան. փախուստ, փախըստեան և այլն,—իբրև հոլովակերտ ըմբռնված անցել է և ուրիշ անունների, ի միջի այլոց և ժամանակի անուններին. և այսպիսով կազմվել են ժամանակեան, շաբաթեան և այլն սեռական-տրականները։

Բառի վերջում ե հնչյունի տեղ անցնում է և յ (Մաո, եր. 29), և այս վերջավորությունը երկու ձևով՝ եան=եայ շատ գործածական է սեռական—ածականներ կազմելու համար.

1. ժամանակի անուններից, ինչպես ժամանակեան, ժամանակեայ. առաւօտեան, առաւօտեայ. չորեքամսեան, չորեքամսեայ. գիշերեան, միօրեայ, չորեքժամեան և այլն։

2. Հայրանուն, ազգանուն, ծագում, տեղացի և այլն ցույց տալու համար, ինչպես՝ հայկազնեան, հայկազնեայ. մամիկոնեան, մամիկոնեայ. արևելեան, արևելեայ, աստուածեան, Արայեան,—արամեան, արամեայ, գեղամեայ, պղատոնեայ, կեսարեայ, թորգոմեայ և այլն։ Վերջին ձևերը գործ են ածվում և իբրև սեռական—տրական։

Այս եան վերջավորությունը եա երկբարբառի սովորական ձայնաշրջությամբ՝ դառնում է ան կամ են. իսկ եայ ձևը դառնում այ, ա (վերջին յ-ն ևս չի արտասանվում), կամ էյ=է։ Օրինակ՝ վերջին ձևի համար՝ միջերկրեայ—միջերկրայ, միջօրեայ, միջօրեյ=միջօրէ, քրիստո-

նեայ, քրիստոնէ։ Ջրօրհնեայ-ք, ջրօրհնէ-ք, իսկ ջրօրհնեան-ք=ջրօրհնիքը, ինչպես Ղևոնդեան-ք, Ղևոնդեն-ք. Վարդանեանք, Վարդանենք, Վարդանան-ք։— Այսպես և ժամանակի անունների մեջ նույն եան վերջավորությունը դառնում է են՝ ամսեան, ամսեն, շաբաթեան, շաբաթեն և այլն։ Օրինակ յամսեանն մի անգամ=ամսենը մի անգամ. ի շաբաթեան մի անգամ=շաբ(ա)թենը մի անգամ. այսպես և օրենը մի անգամ, տարենը մի անգամ։ Ամսեն, շաբթեն, տարեն, օրեն այս դեպքում ներգոյականի իմաստով տրական հոլովներ են, գրաբարում ի(յ) նախդրով, որոնց փոխանակ գործ են ածվում նույն իմաստով և տարին մի անգամ, ամիսը մի անգամ,=ի տարին մի անգամ, յամիսն մի անգամ։ Նույն ձայնաշրջությունը եան վերջավորությունը պահում է և իբրև սեռական-ածական գործածված ժամանակ. չորսամսեան, հինգշաբաթեան դառնում են չորս ամսեն, հինգ շաբաթեն. այսպես և երկ՛օրեն, երեք օրեն, վեց ամսեն* (վեց ամսեն հարս=վեց ամսվան հարս. երեք օրեն գործ =երեք օրվան գործ և այլն)։

Այս եան=եայ վերջավորությունը ժամանակի անունների մեջ սակայն, անշուշտ որևէ բարբառում ծագած և տարածված, մի ուրիշ ձայնաշրջությամբ դառնում է ւան, վան=ւայ=վա։ Օրինակ չորսամսեան, դառնում է ոչ միայն չորսամսեն, այլև չորս ամսվան. իսկ չորսամսեայ լինում է չորս ամսւայ=չորս ամսվա։ Այսպես և ժամանակեան, շաբաթեան, վաղուեան, դարեան սեռական—տրականները դառնում են ժամանակվան, ժամանակվա(յ), շաբաթվան, շաբաթվա(յ). վաղվան. վաղվա(յ). տարվան, տարվա(յ)։ Նույն ձևով և մյուս սեռական—ածականները լինում են՝ առաւօտեան, առաւօտեայ=առավոտվան, առավոտվա, գիշերեան=գիշերվան, գիշերվա. երեկեան=երեկվան, երեկվա.—ժամեան=ժամվան, ժամվա.—օրեան=օրվան, օրվա և այլն։ Այս վան=վա վերջավորությունն ապա ընդհանրացել է ժամանակի անունների շատերի վրա և նույնիսկ ամառ, ձմեռ, գարուն, աշուն, մայիս և ուրիշներն ունին սեռական—տրական ամառվան, ձմեռվան, գարունքվան, մայիսվան (=մայիսյան)։

Նման ձայնաշրջություն տեսնում ենք և գրաբարի հոգնակի եան(ք) ածանցի համար, որ բարբառներում ոչ միայն ան(ք) ձևն է ստանում, այլև վան(ք). ինչպես իշխան լինում է ոչ միայն իշան, այլև իշւանք, իշվանք. նույնպես՝ կտորվանք, տեղվանք և այլն։

Այս եան=ւան, վան ձայնաշրջությունը կարելի է բացատրել ընդունելով, որ եա=ea երկբարբառն արտասանվել է նախ կիսաձայն յ-ով իբրև յա=ya, ինչպես այժմ արտասանում ենք. ապա կիսաձայն յ-ի

---

* Այժմ գրում ենք՝ օրէն, ամսէն, տարէն, շաբթէն, իսկապես պետք է գրել ե-ով, օրեն, ամսեն, շաբթեն, տարեն (մի անգամ, բան և այլն). քանի որ եա երկբարբառը մնացած դեպքերում ե է դառնում և ոչ՝ է. ինչպես Տիգրանեանք, իւրեանք, լեարդ, տեսեալ և այլն և այլն, լինում են Տիգրանենք, իրենք, լերդ, տեսել[2]։

տեղ անցել է ւ, վ[3], մի ձայնաշրջութիւն, որ բացի վերևում հիշածներից՝ երևում է և ուրիշ դեպքերում*)։

Նույն անվանական եաճ=եայ հոլովակերտով, ինչպես վերևում բացատրեցինք (եր. 33 հետ.), կազմված ենք համարում և իւրեան սեռական—տրականը, որի մի ուրիշ ձևն է *իւրեայ, որ եա=ա ձայնաշրջութեամբ՝ *իւրայ ձևով երևում է իւրայոց, իւրայովք և այլն, հոլովների մեջ։ Իսկ աշխարհաբարում սովորական ձայնաշրջութեամբ դառնում է իրեն կամ իրան, և վերջինս իրայ=իրա։ Ուստի իւրեան դերանվան ձևերը պետք է ոչ թե կես անվանական, կես դերանվանական հոլովում դնել, ինչպես Մառը (եր. 148, 151), այլ ամբողջապես անվանական հոլովման տակ։ Իւրեան և *իւրեայ (և ոչ *իւրեա) ձևերը կազմված

---

*) Գրաբարում արդեն պատահում են արւանալ, օրւորդ, բարւոք և այլն. դրութիւններ փոխանակ արիանալ, օրիորդ, բարիոք ձևերի։ Դանք պատահական սխալներ չեն. այլ արտասանության վրա հիմնված գրութիւններ։ Այսպես և մի քանի անունների վերջի ի-ն՝ հոլովակերտ ձայնավորից առաջ կիսաձայն յ արտասանվելով շրջվում է ւ, վ-ի. Անի, Անվա, Շուշի, Շուշվա, Լոռի, Լոռվա, կաշի, կաշվի, օսմանցի, օսմանցվի (տե՛ս Պռոշ., Սկ. երկ., 309, 310, 333, 350 և այլն)։ Կիսաձայն յ և ւ. հնչյունների փոխանակութիւնն երևում է ի միջի այլոց և հետևյալների մեջ՝ հայոց, հաւոց. արքայութիւն, արքաւութիւն և այլն. երկրորդները բարբառային արտասանութիւններ են. նույնպես օտարազգի անունների մեջ՝ Մենելայոս, Մենելաւոս և այլն։

Այս ձայնաշրջութիւնն ավելի պարզ կերպով երևում է գրաբարում ի վերջացած բազմավանկ բառերի հոլովման մեջ. ինչպես այլազգի. բուն *այլազգի՛ա. գործիական ունի այլազգեաւ=*այլազգի՛աւ. հոգն. սեռական-տրական՝ այլազգեաց=*այլազգի՛ց, իսկ եզակի սեռ., տր. այլազգւոյ=այլազգի՛յ։ Մի դեպքում ի ձայնավորը հաջորդ ա ձայնավորի հետ կազմում է եա=ea երկբարբառ, որ այժմ արտասանվում է իրրև յա=ya, իսկ մյուս դեպքում նույն ի ձայնավորը ո ձայնավորից առաջ յ կիսաձայնից անցնելով դառնում է ւ։ Մառն (եր. 70) այս կարգի բառերի հոլովումը բացատրելու համար ընդունում է ա «դետերմինատիվ» մասնիկ և գույգ բուն *եկեղեցեա, *եկեղեցիւ՛։ Բայց այդ երկբայելի է։ Այստեղ միայն հոլովման շեղում կա. այդ բառերի բունն է ա, և եզակի սեռական-տրականում շուտ են գալիս ո բնի հոլովման։ Ինչպես նույն ա բնի հասարակ անունները, երբ բազաձայնով են վերջանում, շուտ են եկել ի հոլովման. աշխարհի փոխանակ *աշխարհայ ձևի.—նույնպես այլազգւոյ *այլազգիոյ ձևը հոլովման շեղում է լոկ փոխանակ *այլազգեայ=այլազգի՛յ ձևի։ Այստեղ ևս հատուկ անունները դեռ պահում են ա բունը՝ Տիգրանուհեայ=Տիգրանուհի՛յ։ Թե այստեղ լոկ հոլովման շեղում և ձայնաշրջութիւն կա այդ շատ պարզ երևում է նույն տեսակի օտարազգի անունների մեջ. Նիկիա (Նիկեա), Ասիա, Սամարիա, Կեսարիա, Մակեդոնիա սեռական—տրականի մեջ կամ իբրև հատուկ անուն դեռ պահում են ա բունը ստանալով միայն հոլովակերտ վերջավորությունը՝ Նիկիայ, Ասիայ, Ասիաւ, Սամարիայ (ի-ն ե դառնալով), Սամարեայ, Կեսարիայ, Կեսարեայ, Մակեդոնիայ, Մակեդոնեայ, Մակեդոնեաւ,— կամ թե ինչպես հասարակ անունները՝ ա բունը ո բնի շուտ գալով, ունին Նիկիոյ, Ասիոյ, Կեսարիոյ, Սամարիոյ, Մակեդոնիոյ և ապա ո-ից առաջ ի=ւ ձայնաշրջութեամբ՝ Սամարւոյ, Մակեդոնւոյ և այլն։ Նույնպես և եկեղեցի, բուն միայն *եկեղեցիա՛ (= ἐκκλησία) հոգնականում և եզակի գործիականում պահում է ա բունը, որից առաջ ի-ն ե է դառնում. եկեղեցեաց, եկեղեցեաւ=*եկեղեցիա՛ց, *եկեղեցիա՛ւ, իսկ եզակի սեռական-տրականի մեջ շուտ է գալիս ո բնի հոլովման և ո-ից առաջ ի-ն ւ է դառնում. եկեղեցւոյ=*եկեղեցիո՛յ, փոխանակ եկեղեցեայ =*եկեղեցիա՛յ ձևի։

են պատրաստի իւ ձևի վրա ավելանալով եան=եայ անվանական վերջավորություններ։ Այսպես և *նոր ձևից եան, եայ=ան, այ վերջավորությամբ կազմված է նորան, նորայ իբրև կրկին հոլովված սեռական—տրական, ինչպես և ում ձևից կրկին հոլովված սեռական—տրական լինում է ումին*)։

Գրաբարում այս եան=եայ վերջավորությամբ կազմված ձևերը, իբրև սեռական ածականներ, ինչպես սպասելի էր, սովորաբար անփոփոխ են մնում. բայց կարող են իբրև սեռականից ուղղական դարձած ձևեր՝ հոլովվել ևս։ Հոլովվելիս դրանք իբրև նոր բուն կամ պետք է անմիջապես հոլովական վերջավորությունները ստանային, կամ թե որև է ձայնավոր հոլովման տակ գնային։ Այսպես էլ լինում է։ Մամիկոնեան հոլովվում է ի կամ ոյ հոլովման ձևով՝ Մամիկոնենի, Մամիկոնենոյ. բայց հոգնակին լինում է և

Մամիկոնեանք	իւրեանք
Մամիկոնեանց	իւրեանց
Մամիկոնեամբք	իւրեամբք

նույնպես՝

Վարդանանք	նորանք, իրանք
Վարդանանց	նորանց, իրանց

Իսկ եայ ձևը հոլովվում է այսպես.

Արևելեայ-ք	նորայ-ք	*իրեայ
Արևելեայ-ց	նորայ-ց	
Արևելեաւ-ք		իրեաւ

կամ թե՝

Արևելէից=		
*Արևելեայից	նորայից	*իրայից
Արևելէիւք=		
*Արևելեայիւք	նորայիւք	իրայիւք

---

*) Այն ինչ վերջավորությունը, որ նույն եան մասնիկի մի ուրիշ ձևը պետք է համարել, երևում է և իմին, մերին, ձերին. քուկին (=քոյին) ստացականների մեջ փոխանակ *իմեան, *մերեան, *ձերեան, ձևերի 3-ով ձևերը *իմայ, *մերայ, *ձերայ=*իմեայ, *մերեայ, *ձերեայ. երևում են իմայոյ, իմայով, մերայոց, ձերայոց և այլն հոլովների մեջ, ինչպես *իրայ=*իրեայ ձևը՝ իրայոց, իրայով և այլն։ Ումանից բացառականը ենթադրել է տալիս *ումանց=*ումեանց ձև, որից և ումին։ Այսպես և Աստուածանից բացառականը կազմված *Աստուածանց=*Աստուածեանց ձևից։— Ե(ն)=ի(ն) ձայնաշարչուրյունն երևում է և ուրիշ դեպքերում բարբառների մեջ. գրաբարից հիշենք միայն առաւօտեան, առաւօտին, երկորեան, երեկորին։— Ամենեքեան, երկոքեան, երեքեան և այլն և ամենեքին, երկոքին երեքին ձևերն ևս կարծում ենք, միևնույն հավաքական

Դերանուններն ազդվելով իմ, մեր, ձեր և այլն ստացականներից՝ հոլովվում են և ոյ ձևով նորայոց, նորայովք, իրայոց, իրայովք։ Սրբանց եզակին մեզ ի ձևով չի պատահած, բայց քանի որ կա հոգնակին նորայից, նորայիւք, իրայիւք պետք է ընդունել և եզակի ձևեր՝ նորայի, նորայիւ, իրայիւ ինչպես՝ Մամիկոնեայ, Մամիկոնէի, Մամիկոնէիւ, չորեքօրեայ, չորեքօրէի, չորեքօրէիւ։ Եվ ինչպես որ Մամիկոնեան ունի և Մամիկոնենի, նույնպես և իրան (իրեն) հոլովվում է աշխարհաբարում իրանի (իրենի) և այլն։

Այսպես ուրեմն եան=եայ վերջը մի անգամ իբրև հոլովակերտ ըմբռնված ավելացել է ոչ միայն անունների, այլև դերանունների վրա, որոնք իրենց կազմությամբ և հոլովներով չեն տարբերվում նույն կարգի անուններից։ Հոգնակի իւրեանք, իւրեանց, նորանք, նորանց ձևերը սկզբնապես անպայման ստացական նշանակությամբ են գործածված (գրաբարում սույն իմաստով պատահում են նորայնք, նորայնց) և ապա ստացած ինքեանք, ինքեանց, նոքա, նոցա բառերի իմաստ. իսկ եզակին՝ նորան, նորայ, իւրեան, *իւրեայ թե՛ իբրև սեռական—տրական, և թե՛ իբրև սեռական ածական, այսինքն ստացական. ինչպես նույնը գտնում ենք և նույն կազմության անունների համար՝ օրինակ ժամանակեան, ժամանակեայ,— որ իբրև սեռական ածական հոլովվում է ժամանակեանք, ժամանակէի, ժամանակէից, ժամանակէիւ, ժամանակէիւք, կամ ժամանակեայք, ժամանակեայց,—գործ է ածվում և իբրև սեռական —տրական. յետ սակաւ միոյ ժամանակեան։[1]

եան ածանցի տարբեր բարբառային ձևերն են լոկ և իրարուց բաժանել կարելի չէ, մեկը դնելով դերանվանական եա մյուսն՝ ի հոլովումների տակ, ինչպես անում է Մառը (եր. 146, 148 հտն.)։ Երկոք, երեք չորեք, հնգեք ձևերի վրա ավելանալով եան=ին կազմում են երկոքեան, երկոքին. երեքեան, երեքին. չորեքեան, չորեքին. հնգեքեան, հնգեքին։ Վերջիններիս նմանությամբ կազմված են և ամենքեան, ամենքին. բոլորեքեան, բոլորեքին և այլն։ Բալուռովին ձևն եա ոչ թե դերանվանական ի հոլովման, այլ անվանական ո հոլովման գործիական է *բոլորո բնից, ինչպես գլխովին, լիովին և շատ նմաններըւ

*) Այս սեռական—տրականի անվանական հոլովակետը գրաբարում աև, այ ձևով ավելանում է ոչ միայն սեռականի, այլև տրականի վրա. այսպես հին *նում տրականից կազմված են նմայ, *նման, որից նմանէ. այնմ տրականից այնմն=*այնման, որից=*այնմանե, իսկ *նոց, այնց ձևից նոցայ, *նոցան, *այնցան, որոնցից նոցանէ, այնցանէ։ *նով. *նովք գործիականի վրա, ինչպես սպասելի էր, ավելանում է աւ, աւմ. նով-աւ, նովք-աւք=նոքաւք։— Այս բոլորը կրկին հոլովված ձևեր են, որոնք ետ են մղել հին, նոր, նում, նով,—նոց, նովք ձևերը։ Հոգնականի նոքայ, նոսայ ձևերը պետք է կարծել սրանց նմանությամբ են կազմված *նոք, *նոս ձևերից։ Կրկին հոլովված ձև է և այսոքիւք, որ ծագում է ոչ թե այսովքի+ւք ձևից, այլ այսովք+իւք=այսովք+եւք=այսովք+եաւք ձևից. այսինքն հոգնակի գործիականի վրա ավելացել է եաւմ վերջավորությունը։ Իսկ այսորիկ, այսմիկ, այսոցիկ և այլն ձևերի վերջում պարզապես իկ ածանցն է, որ բարբառների մեջ երևում է և ուղղականում՝ էսիկ, էդիկ, ընկ=այսիկ, այդիկ, այնիկ։

Վերևում բացատրածներից տեսնում ենք, որ աշխարհաբարի սեռական—տրականի վերջավորությունները՝ ի, ու, ա (=այ), ան, վան, սկզբնապես ոչ թե հոլովական վերջավորություն են եղել սեռականի կամ տրականի, այլ բնի մաս (ու վերջավորությունը նաև ձայնաշրջությամբ առաջացած), որ ապա իբրև վերջավորություն են ըմբռնվել։ Դրանք հայերենում կազմված հոլովակերտներ են և կազմված են այն ժամանակ, երբ հին սեռական և տրական հոլովները անուններից մեջ նույնացած են եղել՝ կամ հնչափոխությամբ կամ անալոգիական կազմությամբ նույն ձևն ստացած լինելով։ Հետևաբար աշխարհաբարի այս հոլովակերտ վերջավորությունները առաջ են եկել ոչ լոկ իբրև սեռականի, կամ լոկ իբրև տրականի վերջավորություն, այլ իբրև մի ընդհանուր վերջավորություն այդ երկու հոլովի համար։ Ստուգաբանորեն ուրեմն դրանք նույնչափ տրականի վերջավորություն են, որչափ և սեռականի. իսկապես ոչ այս են, ոչ այն, այլ նոր ընդհանուր ձևեր։ Ուստի և ստուգաբանական ոչ մի արգելք չկա ի, ու, ա, ան, վան վերջավորություններով կազմված 2-րդ հոլովական ձևերը, դրանց հետ և նորան, նորա, իրան, իրա մի ընդհանուր հոլովական ձև համարելու։

Նույնը կարելի է ասել և ոջ, ց վերջավորություններով, ինչպես և առանց վերջավորության կազմված սեռական—տրականի համար. ց և ոջ վերջավորությունները, որոնց ծագումը չի բացատրված գրաբարում թե սեռականի և թե տրականի մի ընդհանուր ձև են կազմում (միոջ, կնոջ, տեղւոջ). և այդ իմաստով էլ դրանք անցել են աշխարհաբարին Այսպես հոլովվում են սակավաթիվ բառեր։

Առանց վերջավորության սեռական—տրական ունին հայր, մայր, եղբայր=հոր, մոր, եղբոր. շուն, տուն=շան, տան. այուն, ձյուն=այան, ձյան (ժողովրդական ձևով՝ սան, ձան), այլև գրաբարից փոխառությամբ արյուն, արյան. անկյուն, անկյան և -ություն ածանցով կազմվածները՝ սրբություն, սրբության։ Այս բառերը սեռական—տրականի մեջ պահում են բնի ր, ե հնչյունները և հոլովվում են առանց որևէ հոլովական վերջավորության միայն միջի ձայնավորների փոփոխությամբ։ Այս ձևերն ևս գրաբարում ինչպես սեռական, նույնպես և տրական են, իսկապես մի ընդհանուր ձև, և այս իմաստով ևս անցել են աշխարհաբարին։ Դրանք հին հոլովման մնացորդներ են, որոնք մասամբ արդեն ի հոլովման են անցել՝ արյունի, անկյունի, ձյունի, այունի, սրբությունի. իսկ մյուսները՝ շունի, տունի, գավառական են։ Ժողովրդի մարդոց բերանին պատահում են նույնիսկ՝ հայրի, մայրի ձևերը։

Մեր հետևությունը պարզ է։ Քանի որ մեր սեռական և տրական հոլովները ձևով բոլորովին նույն են և մի ընդհանուր հոլով են կազմում ըստ ձևի, և սեռականը այդ մի ընդհանուր հոլովի մի գործածությունն է իբրև անվան վերադիր, մեծ մասամբ այն իմաստներով, որ ունի տրականը, իսկ տրականը նույն հոլովական ձևի գործածությունն է իբրև խնդիր բայի, ածականի և նախադրության,— գործածություններ,

որ ունին և մյուս հոլովները,— ապա և այդ երկու հոլովը մի միակ հոլով էլ պետք է դնել ձևաբանության մեջ։ Եվ այդ մի հոլովը վերևում բացատրած հիմունքներով հարմար է անվանել տրական։

Մեր ընդհանուր հետևությունը հետևյալն է.

1. Պետք է որոշ կերպով տարբերել իրարուց հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակության կամ կիրառության միայն։

2. Մեր աշխարհաբար լեզուն ըստ ձևի (formell) միայն հինգ հոլով է զանազանում, ուստի ձևաբանության մեջ (formenlehre) միայն հինգ հոլով պիտի դնել։

3. Ինչպես կոչականը, նույնպես և հայցականն ու սեռականը միայն ըստ նշանակության կարելի է հոլով համարել. ուստի դրանց ուսումը պետք է մտնի շարահյուսության մեջ։

Սեռական հոլովը պիտի պահել 2-րդ հոլովի իբրև անվան լրացում կամ վերադիր գործածության համար, ինչպես և հայցական տերմինը ոչ թե ձևի համար պիտի գործածել, այլ ուղղականի և տրականի հոլովական ձևերի իբրև անցողական բայերի սեռի խնդիր գործածության համար։ Այսպես վարվում են արդեն մեր քերականները կոչական հոլովի համար, որ ըստ ձևի առանձին հոլով չեն դնում։

Որքան էլ դժվարանան մեր վարժապետները հոլովական ձևերը սովորեցնելու ժամանակ՝ սեռական, հայցական և կոչական հոլովները դուրս ձգած տեսնել հոլովների շարքերից, պետք է վարժվեն դրան, եթե չեն ուզում հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակության, ձև և ձևի կիրառությունն խառնել իրար. եթե չեն ուզում ձևաբանության ժամանակ ապարդյուն տանջել երեխաներին։ Ամեն լեզու ունի իր որոշ հորինվածքը և այդ հորինվածքի համեմատ պիտի լինի քերականությունը. դրա հակառակ վարվողը իր աշակերտների գլխում միայն խառնափնթորություն կծնեցնի և ոչ պայծառ հասկացողություն լեզվի կազմության մասին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

«Արարատում» զետեղած իմ «Աշխարհաբարի հոլովները» վերնագրով հոդվածը դեռ չվերջացած պ. Ստեփանոս Մալխասյանը շտապել է յուր կարծիքը հայտնել «Նոր դպրոց» ամսագրում (1908 ապրիլ, լույս տեսած մայիսի մեջերին) և այն եզրակացության է եկել, թե «ոչ ձևականորեն և ոչ տեսականորեն չէ արդարանում հայկական հոլովի վերացումն աշխարհաբարի ստուգաբանության դասագրքից, իսկ գործնականորեն ու մանկավարժական տեսակետից շատ մեծ վնասներ կպատճառե այդպիսի վերացումը»։*

Տեսնենք՝ ո՛րքան հիմնովին հերքել է պ. Մալխասյանն իմ հետևությունը և ի՛նչպես հաստատել յուր այս եզրակացությունը։

«ՁԵՎԱԿԱՆՈՐԵՆ»

Ես ասում եմ.

1. Ձևականորեն չի կարող լինել մի հոլով առանց իրեն հատուկ հոլովական ձևի (եր. 6)։

2. Որովհետև մեր աշխարհաբարում հայկականի համար առանձին ձև չկա, այլ նրա ձևը պատմականորեն ուղղականի և տրականի ձևերն են (եր. 6, 14, 69 հետ.)։

Ապա ուրեմն աշխարհաբարում, ինչպես կոչական հոլով չկա (որովհետև սա ևս չունի հատուկ ձև), նույնպես հայկական հոլով բուն ձևի կամ կազմության չկա (եր. 6, 9)։

Հետևաբար ձևաբանության մեջ չպիտի դրվի առանձին հայկական հոլով, ինչպես որ կոչական չի դրվում. և շարահյուսության մեջ պիտի բացատրվի, թե մեր ուղղականն և տրականը գործ են ածվում նաև ուրիշ լեզուների և մեր գրաբարի հայկական հոլովի իմաստն արտահայտելու համար։

---

* *Այդ հոդվածն անցած մայիսի վերջերից արդեն, դեռ «Արարատում» ամբողջապես լույս չտեսած, տպագրված է առանձին գրքույկով։ Այստեղ նշանակված երեսները գրքինն են և ոչ «Արարատինը»։*

Նույնն ուրիշ կերպ ասում եմ. 1. Հոլովը բառի ձևի վրա է հիմնված և ոչ թե բառի շարահյուսական (սինտաքսիսական) պաշտոնի վրա (եր. 9 և ուրիշներ). 2. Որովհետև հայցականի համար առանձին ձև չկա.

Ապա ուրեմն, ինչքան էլ հայցականի իմաստով կիրառություն կա, բայց ըստ ձևի կամ ձևականորեն առանձին հայցական հոլով չկա, ուստի ձևաբանության մեջ չկետք է դնել զատ հայցական հոլով։

Պ. Մալխասյանն այսպիսի մի տրամաբանական ձևով է ամփոփում իմ հոդվածը։

«1. Հայցական հոլովն աշխարհաբարի մեջ հատուկ ձև չունի. նա նման է կամ ուղղականին կամ տրականին։

2. Հոլովը՝ բառի ձևն է. քանի ձևով որ մի լեզվի մեջ բառը փոփոխվում է՝ այնքան էլ հոլով ունի այդ լեզուն» (պետք է ավելացնել՝ լսող ձևի կամ ձևականորեն)։

«Այս հիմնական ելակետներից եզրակացությունը պարզ է.—աշխարհաբարը չունի հայցական հոլով՝ իբրև ձև. ուստի ստուգաբանության մեջ որ ձևերի ուսումն է՝ պետք է դուրս ձգվի այդ հոլովը, իսկ համաձայնության մեջ ավանդվի, թե աշխարհաբարի ուղղականն ու տրականը գործ են ածվում նաև՝ ուրիշ լեզուների և մեր գրաբարի հայցական հոլովի իմաստն արտահայտելու համար»։

Հիմա անցնենք խնդրին։

* * *

Պ. Մալխասյանն՝ յուր հոդվածի սկզբում ընդունելով յուր դրած երկու նախադրյալներից առաջինը, թե հայցականը հատուկ ձև չունի, իմ եզրակացությունը ոչնչացնելու համար բնականորեն դիմում է հերքելու յուր դրած երկրորդ նախադրյալը։ Բայց ցավալի է ասել, ոչ ուղիղ ճանապարհով։ Որովհետև իսկույն հերքման մեջ նա թողնում է այդ և ինձ վերագրում է մի անհեթեթություն,— իբր թե ես ասած լինեի հոլովը «լոկ բառի ձև» է, առանց որևէ ձևական նշանակության,— և ապա ետ է դառնում ամենայն հեշտությամբ հերքելով այդ անհեթեթությունը՝ ցույց է տալիս, թե «հոլովը՝ լոկ բառի ձև չէ... հոլովը բառի այն փոփոխած ձևն է, որի հետ անբաժանելի կերպով կապված է հատուկ նշանակություն, ֆունկցիա».—

Հասկանալի է, այդպիսի եղանակով ամենայն եզրակացություն կարելի է ոչնչացնել։—Մեկին մի սխալ բան վերագրել և ապա ցույց տալ դրա սխալ լինելը,— սա խաբուսիկ մեթոդ է։ Իսկ թե որտեղ և ինչպես ես այդպիսի անհեթեթության վրա եզրակացություն եմ հիմնել, այդ մասին ոչ մի խոսք։ Այլ ընդհակառակն տեսնք, թե ես իմ հոդվածի հենց սկզբում ինչ եմ գրել. «Ի՞նչ է հոլով ասածը,—եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (Form), որ կազմվում են մեծ մասամբ վերջավորություններով։ Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ՝ տեղի, ժամանակի, պատճառի և այլն. որոնց ի-

մասսով՝ տնունն ու դերանունը խոսքի մեջ կապվում են մի ուրիշ բառի հետ։ Արդ հոլովների մասին սովորեցնել կնշանակե երկու բան սովորեցնել, նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձևերը. և երկրորդ՝ թե ամեն ձև կամ ամեն հոլով ինչպիսի և ևանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ. ուրիշ խոսքով որո՞նք են այս կամ այն հոլովի դործածություննները, որովհետև ամեն հոլով միայն մի տեսակ հարաբերություն չի ցույց տալիս. այլ մի ևանի. երեմն և շատ» (եր. 4)։

Բայց տեսեք թե շարունակության մեջ քանի քանի՛ անգամ կրկնված է հոլովական ձևի, այսինքն արտաքինի հետ և նրա նշանակությունը. «Տարբերել հոլովի կազմությունը նրա նշանակությունից կամ կիրառությունից». «Քննել թե նոցանից յուրաքանչյուրը ինչ պաշտոն է վարում և ինչ մտքով է նախադասության մեջ». «Ձևի կամ կազմության կատարյալ նույնացում է, տարբերությունը միայն շարահյուսական է». «Նույն իմաստներն ու հարաբերությունները տարբեր ձևերով են արտահայտվում». «Հոլովական ձև. և այս կամ այն հոլովի ցույց տված հարաբերություն». «Միևնույն հոլովը, կրկնում ենք, կարող է գործածվել զանազան շարահյուսական (սինտաքսիսական) հարաբերություններ ցույց տալու համար» և այլն, և այլն։ Դեռ չեմ հիշում հոդվածի շարունակությունը, որից «Արարատի» փետր. և մարտ ամիսների համարները կարդացած պիտի լիներ պ. Մալխասյանը յուր հոդվածը գրելիս։

Ես ոչ միայն հոլովը լոկ բառի ձև չեմ համարել, լոկ հնչյուն առանց պաշտոնի, այլ ընդհակառակն մի հոլովին մի քանի և շատ պաշտոն եմ տվել և հայցականի պաշտոնը նույնիսկ ուղղականին ու տրականին հատկացրել, և բավական մանրամասն խոսել եմ այդ մասին՝ օրինակներ բերելով թե հայերենից և թե ուրիշ լեզուներից։ Եվ այս կտեսնե իմ դրքույկը կարդացողը։

Եվ այս բոլորը կարդալուց հետո պ. Մալխասյանն ինձ վերագրում է, թե իբր ես հոլովը «լոկ բառի ձև» եմ համարել առանց նշանակության, և ապա ամենայն եռանդով հերքում է այդ, և երևակայում և ուրիշներին կարծել տալիս թե իմ գրածն է հերքում...

Այդպես ուրեմն խազ պիտի քաշել պ. Մալխասյանի հոդվածի երկրորդ մասի վրա, որ սկսվում է 44 երեսի տակից և հասնում 47 եր. կեսից ավելին, որի մեջ նա ցույց է տալիս, թե հոլովը լոկ բառի ձև չէ, այլ ունի և պաշտոն։ Այդ ամենը ոչինչ չի հերքում իմ հոդվածի նկատմամբ։

* * *

Բայց հետաքրքիր է, թե ի՛նչպես է եղել, որ պ. Մալխասյանը չի նկատել, թե ես հոլովը լոկ ձև չեմ համարում։ Չնկատել իհարկե ամեն մարդու կպատահի, բայց նա չէր կարող չնկատել և չտեսնել այնքան պարզ, ու որոշ ասած ու շատ անգամ կրկնած բանը. և նա շատ լավ

տեսել է այդ։ Բայց որովհետև նրան հարկավոր է եղել հերքել իմ եզրակացությունը, ուստի աշխատել է յուր ուզած ձևով հասկանալ և բացատրել այդ ամենը։ Ահա թե ինչպես։

Մի ուրիշ տեղ նրան հարկավոր է եղել, որ ես էլ հոլովը լոկ բառի ձև չհասկանամ և, որքան էլ տարօրինակ թվա, նա աշխատել է ապացուցանել, որ ես էլ իրեն պես եմ հասկանում հոլով ասածը, միայն... ոչ թե «Արարատի» հոդվածի մեջ, այլ «Աշխարհաբարի քերականության» մեջ։ Այս երկու տեղում «պ. Աբեղյանը «հոլով» բառի բացատրությունը տարբեր կերպով է տալիս»— ասում է նա, և տեսեք, տարբերությունն ինչպես է ցույց տալիս։ Նա արտագրում է «Աշխարհաբարի քերականությունից» հետևյալը. «Հոլով ասվում են գոյականի այն ձևերը, որոնք ցույց են տալիս, թե գոյականը խոսքի մեջ ինչպիսի լրացում է դառնում մի ուրիշ բառի, կամ իբրև խնդիր ինչպիսի կախում ունի յուր խնդրատու բառից։ Հոլովները կազմվում են վերջավորություններով, օրինակ՝ **ի**, **ից**, **ով** և այլն (գծածներն իրենն են)։ Ապա նա այս բացատրության ետևից անմիջապես դնում է հոդվածինը. «Ի՞նչ է հոլով ասածը — եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը, որ կազմվում են մեծ մասամբ (գծածը պ. Մ-ին է) հոլովական վերջավորություններով»։ Եվ ուրիշ ոչինչ։ Իսկ շարունակությո՞ւնը, որի մեջ հոլովների ֆունկցիայի մասին է խոսվում,— այդ դեռ թող սպասի։ Ընթերցողը հո՛ տպավորություն կստանա, որ «Առաջինում՝ հոլովը բնորոշված է իբրև ֆունկցիա արտահայտող ձև, իբրև մի ձև, որի հետ անխզելի կերպով կապված է նրա ֆունկցիան, իսկ երկրորդում՝ հոլովը լոկ ձև է՝ (մեծ մասամբ)* հոլովական վերջավորություններով կազմված»։ Ինչո՞ւ է այդպես վարվել պ. Մալխասյանը։ Ինչո՞ւ նա հոդվածից բերված այն երկու տողն էլ ճշտությամբ չի բերել։ «Ձևերը» բառի ետևում ես փակագծի մեջ դրել եմ գերմաներեն form բառը, որ պ. Մալխասյանին ձեռնտու չէ եղել և նա առանց այլևայլության այդ բառը դուրս է ձգել։ Չէ՞ որ ես ձև ասելով հասկանում եմ form. իսկ form, grammatische form, wortform (=ձև, քերականական ձև, բառաձև) հասկացողը կհասկանա, թե լոկ հնչյուն չէ, այլ է՛ մի Beziehungsform=հարաբերության ձև, այսինքն ցույց է տալիս որևէ հարաբերություն, որ խոսքի կապակցության մեջ մի բառ ունի մի ուրիշ բառի հետ։

Այսպես ուրեմն պ. Մալխասյանին հարկավոր է եղել ցույց տալ, թե երկու բացատրությունները, քերականության և հոդվածի մեջ, «տարբեր» են, ուստի նա form բառը դեն է ձգել և շարունակությունը,

---

* «Մեծ մասամբ» բառերը պ. Մալխասյանը մի անգամ գծում է, երկրորդ անգամ փակագծի մեջ առնում, երևի ակնարկելու համար, թե սխալ է։ Կարող եմ հավատացնել նրան, որ մեր աշխարհաբարի հոլովները մեծ մասամբ են վերջավորություններով կազմվում և ոչ բոլորը։ Հոր, մոր, եղբոր, շան, տան, սրբության և այլն սեռական— տրականները չունեն հոլովական վերջավորություն։ Տե՛ս այս մասին իմ «Աշխարհաբարի հոլովները», եր. 69 հետ. և եր. 83։

որքան կարելի է, ուշացրել միջանկյալ «անցողակի նկատողություններով». և նոր ասել. «իհարկե, երկրորդ դեպքում էլ [այսինքն հոդվածի մեջ] պ. Աբեղյանը, վերջակետից հետո բացատրում է, որ «այդ ձևերը ցուց են տալիս զանազան կախման հարաբերություններ» և այլն. [ուրեմն պ. Մալխասյանն իմացել է, որ ես հոդվածի մեջ էլ հոլովը լոկ բառի ձև չեմ համարում], բայց սրանով էությունը չի փոխվում. երկրորդ բացատրության մեջ պ. Աբեղյանը, անշուշտ դիտավորությամբ, բաժանում է հոլովական ձևից նրա ֆունկցիան, որպեսզի հետո, այս բաժանման վրա հիմնվելով, եզրակացնե, թե ստուգաբանության գործն է ավանդել ձևի գիտությունը, իսկ ֆունկցիայի գիտությունը պետք է ավանդվի սինտակսիսի մեջ»։

Նախ՝ ի՞նչպես թե էությունը չի փոխվում։ Շատ լավ փոխվում է. որովհետև պ. Մալխասյանն ինքն ասում է, թե իմացել է, որ ես իմ հոդվածի մեջ էլ հոլովը լոկ բառաձև չեմ համարել առանց ֆունկցիայի, բայց և այնպես նա այդ իմանալով հանդերձ՝ երկու բան է անում, որ չպիտի աներ. մեկ այն՝ որ նա յուր ընթերցողներին ասում է, թե իբր հոդվածի և քերականության մեջ հոլովը տարբեր կերպով է բացատրված, մինչդեռ տարբերություն չկա. մեկ էլ այն՝ որ նա գիտե, որ իմ հոդվածի մեջ էլ հոլովը լոկ բառաձև չէ բացատրված առանց ֆունկցիայի, բայց և այնպես նա այդպիսի մի անհեթեթություն է վերագրում ինձ և որ ցավալին է՝ ժամանակ է կորցնում՝ խնդրի համար այդ անպետք անհեթեթությունը հերքելու և ինձ էլ ստիպում նույնպես իմ ժամանակս վատնել այս բանի համար։

Ապա դարձյալ՝ պ. Մալխասյանն ինչի՞ վրա է հիմնում, թե ես հոդվածի մեջ միաժամանակ ընդունելով, թե հոլովը պաշտոն ունի՝ «անշուշտ դիտավորությամբ բաժանում եմ հոլովական ձևից նրա ֆունկցիան» այսինքն ուրիշ խոսքով՝ հոլովական ձևը լոկ ձև չհամարելով հանդերձ՝ լոկ ձև եմ համարում առանց ֆունկցիայի։ Ինչո՞ւ լոկ խոսք է թողնում այս ինձ վերագրած անհեթեթությունը. որովհետև շարունակությունը «որպեսզի հետո, այս բաժանման վրա» և այլն ամենևին չի կարող պահանջել, որ հոլովը լոկ ձև լինի, առանց ֆունկցիայի. այլ բոլորովին հակառակն է պահանջում։ Որպեսզի կարելի լինի ստուգաբանության մեջ ավանդել ձևի գիտությունը, իսկ սինտաքսիսի մեջ ֆունկցիայի գիտությունը,—միթե՞ դրա համար պետք է որ հոլովական ձևից բաժանվի նրա ֆունկցիան և հոլովը լո՞կ ձև լինի առանց ֆունկցիայի, թե՞ ընդհակառակն պետք է, որ հոլովը և ֆունկցիա ունենա։ Բայց պ. Մալխասյանն ասում է՝ Աբեղյանը հոլովը լոկ ձև է դարձնում առանց ֆունկցիայի, որպեսզի կարողանա դրա վրա հիմնվելով՝ ավանդել երկու բան՝ ձև և ձևի ֆունկցիա։ Այս ի՞նչ անհեթեթություն է։

Ես չէի ուզենա, որ պ. Մալխասյանը գիտակցաբար այսպիսի անհեթեթություն վերագրած լիներ ինձ, այլ նրան գայթակղեցրած լիներ մի որևէ անճիշտ արտահայտություն իմ գրածի մեջ. և որոնում եմ, գրե-

նում, որ այդ գայթակղեցողն է մի վերջակետ (տե՛ս նրա «վերջակետից հետո» բառերը). և հատկապես վերջակետն այս խոսքերի մեջ. «Ի՞նչ է հոլով ասածը,— եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (form), որ կազմվում են մեծ մասամբ վերջավորություններով։ Այդ ձևերը ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ» և այլն։ Ահա՛ այս վերջակետն է մոլորեցրել պ. Մալխասյանին։ Եթե ես այս վերջակետի տեղ միջակետ դրած լինեի, կամ ստորակետ դրած լինեի և որ հարաբերական դերանունը կրկնած լինեի փոխանակ «այդ ձևերը» բառերի,— «ինչ է հոլով ասածը,— եթե ոչ հոլովելի բառերի զանազան ձևերը (form), որ կազմվում են մեծ մասամբ վերջավորություններով, և որ ցույց են տալիս զանազան կախման հարաբերություններ» և այլն, —այն ժամանակ թերևս պ. Մալխասյանն ինձ վերագրած չլիներ վերևի անհեթեթությունը։ Բայց այդ ընդունելը դժվարանում եմ, որովհետև դա մանրակրկիտ պեդանտություն է։ Նրան մոլորեցրել է գուցե և իմ այս խոսքը թե «հոլովների ուսմունքի այս երկրորդ մասը կամ, ինչպես սովորաբար ասում են, հոլովների կիրառությունը (=ըստ պ. Մալխասյանի՝ հոլովների ֆունկցիան) մտնում է շարահյուսության (սինտաքսիս) մեջ և տեղ չէր կարող գտնել մի «Տարրական քերականության» մեջ, ինչպիսին է մերը»։ Գուցե, ասում եմ, նրան մոլորեցրած լինի և այս, բայց դժվարանում եմ դարձյալ հավատալ, որ այսպես եղած լինի. որովհետև այդ խոսքից անհնարին է հետևցնել թե հոլովական ձևից նրա ֆունկցիան բաժանվում է և հոլովը դառնում է լոկ բառի ձև առանց ֆունկցիայի։ Դժվարանում եմ հավատալ, որովհետև այդտեղ շատ պարզ, որոշ ասած է, թե հոլովի մեջ երկու բան կա, մեկ՝ բառաձև, մեկ էլ՝ ֆունկցիա։ Շատ պարզ, որոշ ասած է և այն, թե «հոլովների մասին սովորեցնել. կնշանակե երկու բան սովորեցնել, նախ՝ թե տրված բառը քանի տեսակ ձև կամ հոլով կարող է ունենալ և որոնք են այդ ձևերը. և երկրորդ՝ թե ամեն ձև կամ հոլով ինչպիսի և քանի տեսակ կախման հարաբերություն կարող է ցույց տալ խոսքի կապակցության մեջ»։ Ուրեմն հոլովը լոկ բառաձև չէ առանց ֆունկցիայի։ Ես շատ պարզ, որոշ և այն եմ ասել, թե «հոլովների ուսմունքի այս երկրորդ մասը» այսինքն ֆունկցիայի ուսումը, մտնում է շարահյուսության մեջ։ —Ես ոչ թե հոլովից բաժանել եմ նրա ֆունկցիան և հոլովը շինել լոկ հնչյուն առանց նշանակության, այլ շատ պարզ, որոշ կերպով հոլովի ուսումն եմ բաժանել երկու մասի. ձևաբանության մեջ դրել եմ ձևերի ուսումը, այսինքն հոլովելը. իսկ շարահյուսության մեջ դրել հոլովների ֆունկցիայի, կիրառության ուսումը։ Ես չեմ կարծում պ. Մալխասյանն այդ չհասկանար և դրանով գայթակղվեր. որովհետև ես «ուսմունք» բառն էլ գործ եմ ածել և մի նոր բան չեմ ասել և արել, այլ վարվել եմ այնպես, ինչպես ուրիշները, ինչպես և ինքը պ. Մալխասյանը, որ գրաբարի հոլովումը նույնիսկ առանձին է հրատարակել. իսկ հոլովների ֆունկ-

ցիայի ուսումը, դրել յուր «Համաձայնության»* մեջ։ Ահա ձեռիս է Heyse-ի գերմաներենի մեծահատոր քերականությունը, 25-րդ տպագրություն, որի մեջ հոլովների կիրառության ուսումը Casuslehre վերնագրի տակ մտնում է շարահյուսության մեջ։ Ահա և Преображенский-ի ստուգաբանությունը ռուսերենի, 17-րդ տպագրություն. ամբողջ 32 երես նվիրված հոլովման և ոչ մի տեղ չեք գտնիլ բացատրած թե ո՛ր հոլովն ի՞նչ է ցույց տալիս և ի՛նչ կիրառություններ ունի,— բացի կոչականից։ Ի՞նչ է կարծում պ. Մալխասյանը, արդյոք Heyse, Преображенский և ուրիշները, նրանց հետ և ինքը, հոլովների ուսմունքն այսպես երկսի բաժանելով՝ հոլովից բաժանո՞ւմ են նրա ֆունկցիան և ասում, թե «հոլովը լոկ բառի ձև» է, առանց որևէ նշանակության, թե՞ միայն ձևաբանության մեջ հոլովական ձևերի ուսումն են դնում, իսկ ձևերի նշանակությունների ուսումը նյութ են դարձնում շարահյուսության։

Եվ ի՞նչ հիման վրա են այս բաժանումն անում։ Ամեն հոլովի մեջ երկու բան կա. նախ՝ արտաքինը՝ ձևը, հնչյունը, և ապա՝ ներքինը, այդ ձևի ցույց տված նշանակությունները, կատարած պաշտոնները. ճիշտ ինչպես ամեն բառի մեջ երկու կողմ կա, նախ՝ նրա արտաքինը, բաղադրիչ հնչյուններն ու վանկերը և ապա՝ նրա նշանակությունը կամ նշանակությունները։ Եվ երբ մենք բառի արտաքինի ուսումը առանձին տեղ ենք դնում, ներքինի ուսումն առանձին տեղ, մի՞թե այդ կնշանակե, թե բառի մեջ լոկ հնչյուն ենք տեսնում առանց նշանակության։ Ես ուրեմն եթե ասում եմ, ըստ պ. Մալխասյանի՝ թե «ստուգաբանության գործն է ավանդել ձևի գիտությունը, իսկ ֆունկցիայի գիտությունը պետք է ավանդվի սինտաքսիսի մեջ»— մի՞թե այդ նշանակում է թե հոլովը ֆունկցիա չունի. եթե չունի, հապա ի՞նչը պիտի ավանդվի սինտաքսիսի մեջ, և մի՞թե այդ հիմնվում է նրա վրա, որ ես հոլովը լոկ ձև եմ համարում, թե՞ ընդհակառակն նրա վրա, որ հոլովի մեջ երկու տարբեր բան եմ տեսնում, ձև և ձևի ֆունկցիա։—Եվ ես այս բանը շատ պարզ ասել եմ, և այն էլ ոչ թե մի, այլ մի քանի տեղ ասել և կրկնել եմ, թե «հոլով և հոլովի պաշտոն, հոլովական ձև և այդ ձևի շարահյուսական նշանակություն» չպիտի շփոթել իրար հետ, այլ «որոշ կերպով պիտի տարբերել» և այլն։ —«Հոլովական ձև և այս կամ այն հոլովի ցույց տված հարաբերություն բոլորովին տարբեր բան են. եթե այս վերջինը նկատի ունենայինք և միևնույն ձևը տարբեր հոլովներ դնեինք, այն ժամանակ լեզուն, և ոչ միայն մեր լեզուն, շատ ու շատ հոլովներ կունենար, և ոչ թե մի քանի։ Հոլովը ձևի վրա է հիմնված. չկա

---

* Պետք է նկատել, որ պ. Մ.-ը սինտաքսիս բառը հայերեն «համաձայնություն» գրելով՝ մեծ սխալ է անում. նա սինտաքսիսի մի մասի՝ համաձայնության (=accord, согласование, kongruenz Einstimmung) կոչումը դարձնում է ամբողջ սինտաքսիսի կոչում։ Դրա հայերեն բառն է բաղհյուսություն կամ շարահյուսություն։

առանձին ձև, չկա և առանձին հոլով: *Մենք չունինք հայցականի համար առանձին ձև, չունինք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը: Դրա պաշտոնը (պ. Ս.-ի բառով՝ ֆունկցիան) որոշ դեպքերում ուղղականն է յուր վրա առել, որոշ դեպքերում տրականը: Իսկ այդ դեպքերը որոշելը շարահյուսության գործ է: Միևնույն հոլովը, կրկնում ենք, կարող է գործածվել զանազան շարահյուսական (սինտաքսիսական) հարաբերություններ ցույց տալու համար. բայց այդ պատճառով մի հոլովը, մի ձևը, չի դադարում միևնույն հոլովը մնալուց և չի դառնում երկու, երեք և ավելի հոլովներ» (եր. 13): Ով ապա օրինակներ եմ բերում, թե ինչպես զանազան լեզուների մեջ, մեր գրաբարում, արևմտյան աշխարհաբարում այս կամ այն հոլովի տարբեր պաշտոնը կա, բայց առանձին հոլով չեն դնում. որովհետև առանձին հոլովական ձև չկա այդ պաշտոնն արտահայտելու համար:*

Ես ասում եմ՝ չի կարող ձևականորեն առանձին հոլով լինել առանց իրեն հատուկ ձևի, որովհետև հոլովը բառի ձևի վրա է հիմնված և ոչ թե բառի շարահյուսական պաշտոնի վրա: Ամեն հոլովական ձև, որից իհարկե անբաժան է իր ձևական գաղափարը, ավելի ճիշտ՝ գաղափարները (ըստ պ. Մալխասյանի՝ ֆունկցիան), ձևականորեն առանձին հոլով է կազմում. իսկ ամեն մի գաղափար, ֆունկցիա, եթե առանձին, հատուկ բառաձևով չի արտահայտվում, այլ եղած բառաձևերից մեկով կամ մյուսով՝ ձևականորեն առանձին հոլով չի կարող կազմել, այլ միայն հոլով ըստ նշանակության կամ կիրառության:

Ահա՛ թե ինչը պիտի հերքեր պ. Մալխասյանը: Նա փոխանակ այս հերքելու և հակառակը հաստատելու՝ թե կարող է ձևականորեն գոյություն ունենալ մի զուտ հոլով՝ առանց հատուկ ձևի, միայն ֆունկցիայով, տրամաբանորեն սխալ ճանապարհ բռնելով՝ երկար ու բարակ բացատրում է, թե հոլովը լոկ բառի ձև չէ, այլ ունի և նշանակություն,— մի տարրական բան, որ, ինչպես ինքն էլ գրում է, «որչափ ստուգաբանության ուսուցիչը... չկամենա բացատրել՝... աշակերտն այնուամենայնիվ կըմբռնե»:

Եզրակացություն.

1. Պ. Մալխասյանն ինձ վերագրում է մի անհեթեթություն, իբր թե ես ասած լինեի, թե հոլովը «լոկ բառի ձև» է, և թողնելով իմ նախագրյալը՝ այդ է հերքում:

2. Իմ հոդվածի և «Աշխարհաբարի քերականության» մեջ հոլով բառի բացատրությունը բնավ տարբեր կերպով չէ տրված, —և այս գիտե պ. Մալխասյանն,— բայց նա ընթերցողներին կարծել է տալիս, թե իբր կա տարբերություն երկսի մեջ, իբր թե հոդվածի մեջ հոլովը սխալ է սահմանված՝ «լոկ բառի ձև» առանց ֆունկցիայի, և իբր ի՛նչ ես այդ սխալ բացատրության վրա եմ հիմնել իմ եզրակացությունը:

* * *

Այսպես ուրեմն նկանք այն ընդհանուր եզրակացությանը, որ ես էլ եմ ընդունում, պ. Մալխասյանն էլ,— այն թե հոլովն ունի ֆունկցիա, կամ թե «հոլովն է ֆունկցիա արտահայտող ձև». և ոչ «լոկ ձև»։ Բայց ինչի՞ է պետք այս եզրակացությունը։

Պ. Մ.-ը գտնելով, որ ես էլ եթե ոչ հոդվածիս, գոնե իմ «Աշխարհաբարի քերականության» մեջ հոլովը լոկ բառաձև չեմ համարում, այլ ընդունում եմ, որ հոլովն ունի ֆունկցիա, գրում է. «Բայց այս դեպքում, հետևողական լինելով՝ անշուշտ պ. Աբեղյանը պետք է ընդուներ և հայցական հոլով, որովհետև հայցական հոլովը, որքան էլ ձևով (գծածն իրենն է) նման լինի ուղղականին կամ տրականին՝ (=որքան էլ «չունենա հատուկ ձև, ինչպես ասում է ուրիշ տեղ) բայց ունի բոլորովին տարբեր ֆունկցիա, և ոչ միայն բոլորովին տարբեր, այլ ուղղակի հակադիր ֆունկցիա»։— Այո, ճիշտ է որ ես ընդունում եմ, թե հոլովն ունի ֆունկցիա, ընդունում եմ, որ հայցականը ունի տարբեր, թեկուզ հակադիր ֆունկցիա, բայց մի՞թե այդ երկու խոսքից կարելի է հետևցնել, թե ես պետք է «հետևողական լինելով» ընդունեմ ձևականորեն զատ հայցական հոլով։

Ասում են թե Արիստոտելը տրամաբանությունը նրա համար է ըստեղծել, որ դատողությունները «գաղափարների խառաղ աշխարհի» մեջ դնելով՝ յուր ժամանակակիցների սխալ եզրակացությունները ցույց տա, ուստի վերլուծենք պ. Մալխասյանի այս եզրակացությունը՝ տրամաբանական սառը ձև տալով նրան և տեսնենք, թե ինչ է դուրս գալիս։

1. Հոլովն ունի ֆունկցիա, որ տրամաբանական ձևով լինում է՝ հոլովն է ֆունկցիա ունեցող, կամ թե a-ն է b.

2. Հայցականն ունի տարբեր ֆունկցիա=Հայցականն է տարբեր ֆունկցիա ունեցող, կամ թե c-ն է d.

Հետևաբար՝ Հայցականն է հոլով, կամ թե՝ c-ն է a.

Այս միևնույն է թե ասենք՝ Մարդն (=հոլովն) է կենդանի (=ֆունկցիա ունեցող)։ Կապիկն (=հայցական) է տարբեր կենդանի (=տարբեր ֆունկցիա ունեցող)։ Հետևաբար՝ Կապիկն է մարդ։

Կամ թե՝ 1. Հոլովն է ֆունկցիա ունեցող (=արտահայտող) ձև.

2. Հայցականն է տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող՝ առանց հատուկ ձևի.

Հետևաբար՝ Հայցականն է հոլով։—

Այս միևնույն է թե ասենք. Քարն է հատկություն ունեցող մարմին։ Ոգին է տարբեր ու հակադիր հատկություն ունեցող՝ առանց հատուկ մարմնի։ Հետևաբար՝ Ոգին է քար։

Աստված պահե ինձ այսպիսի հետևողականությունից։ Արժե՞ր սրա համար ապացուցել, թե հոլովը լոկ ձև չէ, այլ ունի և ֆունկցիա։

Որպեսզի «հայցականն ունի տարբեր ու հակադիր ֆունկցիա»=«հայցականն է տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող» խոսքից կա-

չողանայինք հանել վերևում դրած եզրակացությունը՝ թե հայցականն է առանձին հոլով,— դրա համար պետք էր իբրև առաջին նախադրյալ ունենալ ոչ թե «հոլովն է ֆունկցիա ունեցող (կամ թե արտահայտող ձև)».—այլ մի ուրիշ բան։ Այն է մենք պիտի ասեինք.

1. Ամեն տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող (կամ թե արտահայտող ձև) է առանձին հոլով.

2. Հայցականն է տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող (կամ թե՝ արտահայտող ձև).

Հետևաբար՝ Հայցականն է առանձին հոլով։

Կամ թե, որպեսզի մեր հայցականի բնորոշ կողմն էլ բաց թողած չինենք, իբրև առաջին նախադրյալ պետք էր ունենալ՝

1. Ամեն տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող առանց հատուկ ձևի՝ է առանձին հոլով։

2. Հայցականն է տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող առանց հատուկ ձևի.

Հետևաբար՝ Հայցականն է առանձին հոլով։

Ահա ինչպիսի նախադրյալով իրավունք կունենար պ. Մալխասյանն ասելու թե հայցականն է հոլով և ինձնից պահանջելու, որ ես էլ «հետևողական լինելով» ընդունեմ հայցական հոլով։

Ընդունո՞ւմ եմ ես այնպիսի բան, ինչպիսին վերևում դրած առաջին նախադրյալներն են։

Եզրակացություն

1. Պ. Մալխասյանը գիտե, որ ես չեմ ընդունում թե ամեն տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող (կամ թե՝ արտահայտող ձև) է առանձին հոլով, կամ թե ամեն տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող առանց հատուկ ձևի՝ է առանձին հոլով, բայց և այնպես նա ինձ վերագրում է այդ, որ յուր կարծիքն է։ Թե նա ինձ այդ չվերագրեր, էլ ոչ մի կերպով ինձնից «հետևողական լինել» չէր կարող պահանջել։

2. Պ. Մալխասյանը իմ հիմունքը, թե հոլովը ձևի վրա է հիմնված և ոչ թե ձևի ցույց տված զանազան հարաբերությունների վրա՝ նախ շուռ է տալիս այն մտքով, թե իբր ես հոլովը «լոկ ձև» եմ համարում առանց ֆունկցիայի. և ապացուցանելով, թե հոլովը ֆունկցիա ունի և ցույց տալով, թե ես էլ ընդունում եմ այդ, ապա փոխանակ եզրակացությունը դրա վրա հիմնելու, նա այդ թողնում է՝ դրա տեղ լրուկ անց է կացնում մի ուրիշ բան, այն է, թե ամեն տարբեր ու հակադիր ֆունկցիա ունեցող առանց հատուկ ձևի՝ առանձին հոլով է կազմում և եզրակացնում է՝ հայցականը հոլով է (որ և պ. Աբեղյանը հետևողական լինելով պիտի ընդուներ) որովհետև հայցականը տարբեր ու հակադիր ֆունկիցա ունի, թեպետ հատուկ ձև չունի։—

Այսպես է հերքում և ապացուցանում նա։

* * *

Հետաքրքիր կլիներ իմանալ նաև, թե ինչպես պ. Մալխասյանը մեծ եռանդով և ի՛նչպիսի իսկատիպ առարկություններով հաստատում է այս տարրական բանը, թե հոլովը լոկ բառի ձև չէ. բայց հա ոչ էականը գծի տակ դնելով՝ վերևում կառնեմ դրանից ինչ որ քիչ ու շատ արժեք ունի։*

«Եթե հոլովները լոկ բառի ձևեր նշանակեին,— գրում է նա,— առանց նրանց հետ անբաժանելի կերպով միացած ֆունկցիաների՝ այս դեպքում գոյություն չէր ունենա ուղղական կամ անվանական կոչված հոլով, որովհետև այս հոլովով դրված բառը՝ բառի ձև չէ, այլ հենց նույն ինքն բառն է՝ չփոփոխված, սկզբնական ձևով։ Եվ եթե բոլոր լեզուների բերականություններն ունին անվանական հոլով և այս հոլովով կոչում են բառի սկզբնական ձևը՝ սա նշան է, որ հենց այդ ըսկզբնական ձևի ֆունկցիան ունին աչքի առաջ և ոչ ձևի փոփոխությունը, որ գոյություն չունի նրա մեջ»։

Ինչպես ընթերցողը կտեսնի, պ. Մալխասյանը դեռ ապացուցանում է, թե հոլովը լոկ ձև չէ։ Ինձ հետաքրքրողն այստեղ սակայն ուրիշ բան է. այն որ նա կողմնակի կերպով ասում է, թե կարող է ձևականորեն գոյություն ունենալ մի հոլով առանց հատուկ ձևի, միայն ֆունկցիայով և դրա համար իբրև օրինակ առնում է ուղղական հոլովը։

Նախ՝ չէ՞ որ նա մի քանի տող վերևում հոլովը սահմանում է, թե «հոլովը բառի այն փոփոխված ձևն է»... իսկ ներքևում ուղղականը «բոլոր» քերականություններով և իրեն պ. Մալխասյանի քերականությամբ դառնում է հոլով, չնայելով որ դա «բառի ձև չէ. այլ հենց նույն ինքն բառն է՝ չփոփոխված ձևով»։ Այս ի՞նչ շփոթություն է. հոլովը «բառի փոփոխված ձևն է». ուղղականը հոլով է, բայց «բառի չփոփոխված ձև

---

* *Իրավ իսկատիպ մտածություն է հոլովի նշանակություն ունենալը ցույց տալու համար՝ ցույց տալ թե միևնույն հոլովական ձևը զանազան բարբառներում, հին և նոր լեզվի մեջ տարբեր կերպով է կազմվում. ինչպես՝ երեխայք դառնում է երեխեք, կամ հոգնակի շինող ֆ-ի տեղ դրվում է ներ՝ երեխաներ և այդպես մի շարք բառեր։ Ավելի կատարյալ կլիներ, եթե պ. Մալխասյանը մեջ բերեր և այսպիսի ձևերը՝ հաց, հոց, խաց, հարսանիք, հարսնիք, հարսինք, հրսանիք, խարսնիս և այլն և դրանցով էլ ապացուցաներ թե հոլովը լոկ բառի ձև չէ։ Բայց մենք այդ թողնենք։ Պ. Մալխասյանը յուր այս ապացույցի մեջ այսպիսի մի բան էլ է գրում. «Այսքան էլ՝ նույն բառաձևերի որոշված ձևերը, որոնք նոր փոփոխություններ են նույն ուղղական հոլովի, ուրեմն և նոր հոլովներ»։ Գիտե՞ք ինչ է ասում. ծառ ուղղական է, ծառը, ծառս, ծառդ երեք ուրիշ նոր փոփոխություններ, նոր հոլովներ. ծառով մի հոլով, ծառովը մի նոր հոլով և այլն։ Պ. Մալխասյանը յուր ապացուցանելու եռանդից այնքան տարվում է, որ մոռանում է թե ծառ, մի բառ է, ծառս, ծառդ, ծառը նոր փոփոխություններ, հոլով չեն նույն բառի, այլ նույն բառի վրա ը, դդ, ը հոդերն են ավելանում, որ մենք ավանդական սովորությամբ միայն կպած ենք գրում և կարող էինք անջատ ևս գրել՝ ծառ ը, ծառ դդ, իբրև երկու բառ, ինչպես գրում ենք ֆրանսերենում կամ գերմաներենում։*

է» և միաժամանակ նույն ուղղականը «բառի ձև չէ»։— Թողնելով որ պ. Մալխասյանն ինքը դուրս գա այս հակասությունից՝ ես շարունակեմ։

Ապա՝ պ. Մ.-ը սիրում է բոլոր բառը գործ ածել*։ Կարող եմ նրան հավատացնել, որ սխալվում է գրելով թե «բոլոր լեզուների քերականություններն ունին անվանական (=ուղղական) հոլով»։ Ահա ձեռիս *Ֆրանսերենի մի քերականություն 400 երեսանոց*, Larive et Fleury, Paris, *1895, որի մեջ ոչ միայն անվանական=ուղղական հոլով չեք գտնիլ, այլև ընդհանրապես հոլով, հոլովել բառը։* Նույնպես և Brachet et Dissouchet-ի *հայոնի քերականության մեջ, 1889, հոլով բառը միայն մի փոքրիկ ծանոթության մեջ կգտնեք, որ վերաբերում է պատմական քերականությանը։ «Բոլոր լեզուների քերականություններն» ուրեմն մի կողմ պիտի թողնել։ Դա զուր խոսք է։ Կան լեզուներ, որ նույնիսկ հոլով չունին։*

Ապա դարձյալ՝ պիտի իմանալ, որ հնդեվրոպական լեզուների մեջ, որոնց պատկանում է մեր լեզուն, անվանական հոլովը միշտ բառի բուկրզբնական, անփոփոխ ձևը չէ, ինչպես դնում է պ. Մալխասյանը, հնդեվրոպական լեզուները սկզբնապես ունեցել են անվանական հոլովի համար ևս հատուկ վերջավորություն և հին լեզուներն ունին դեռ, ինչպես հունարեն, լատիներեն, գոթերեն և այլն։ Այսպես օրինակ նախագերմաներենում (urgermanisch) *գերմաներեն* Tag=*օր բառն եղել է* Dago-z, *որի մեջ վերջի* z *հնչյունն ուղղական=անվանական հոլովի վերջավորությունն է. գոթերենում նույն բառն է* Dag-s, *որի մեջ վերջի* s *տառն ուղղականի վերջավորությունն է, իսկ գերմաներենում* s=z *վերջավորությունը դուրս է ընկել։ Այսպես և հայերենն եթե ուղղականում չունի վերջավորություն, այդ միայն նրանից է, որ շեշտի ազդեցության տակ ուղղականի վերջավորությունը դուրս է ընկել։ «Հիմք կա մտածելու, որ եզակի ուղղական հոլովն ունեցել է հագագային* h (s *հնչյունի վերջում) վերջավորությունը» (Մառ, Հայ. քեր., եր. 54)։ Այսպես և Մեյեն (Քեր., եր. 44) գրում է. «Եզակի ուղղականի և հայցականի իրար հետ նույնանալը ձևով* (confusion) *և այս երկու հոլովի ընդհանուր ձևի համար բացակայությունը որևէ վերջավորության՝ բացատրվում է վերջերի հնչական անկումով»... այսինքն միևնույն* **ոուն** *ձևն առաջացել է ուղղականի և հայցականի տարբեր վերջավորությունների դուրս ընկնելով։ Բայց հայերենում* **ոուն** *բառի, ինչպես և ուրիշ բառերի մեջ, ոչ միայն ուղղականի վերջավորությունն է դուրս ընկել, այլև բնի*

---

* *Այսպես մի տեղ էլ նա գրում է թե հայերենի «մյուս* **բոլոր** *քերականություններ» յոթը հոլով են դնում։ Երևի նա թերթել է* **բոլորը** *և Այտնյանը մոռացել է։ Իմ հոդվածից գոնե պիտի հիշեր նա, որ Այտնյանն արևմտյան աշխարհաբարում* **վեց** *հոլով է դնում, ներգոյականը չառնելով հոլովների մեջ, քեպետև այդ ներգոյականի ֆունկցիան կա և արտահայտվում է կամ հայցականով, կամ տրականով։ Ինչո՞ւ է լռում այս մասին պ. Մալխասյանը։*

(Stamm) ո ձայնավորը. և հին վերջավորությամբ ձևից առաջ է եկել մի նոր տեսակի ձև առանց վերջավորության և առանց բնի ձայնավորի, և այս նոր ձևը՝ fուն, որ կոչվում է հիմնական ձև (Crundform), բոնել է հին վերջավորությամբ ուղղականի տեղ։

Ասպա և այն պիտի իմանալ, որ առանց վերջավորության ուղղականի՝ մյուսներին նման հոլով լինելու թե չլինելու խնդիրը նոր չէ. հին ժամանակներից արդեն վիճել են այդ մասին. հենց այդ պատճառով հոլովական ձևերն երկու խմբի են բաժանել՝ ուղիղ և թեք. և այդ ուղիղ ձևի անունը, թեքված ձևերից (Biegungsformen) տարբերելու համար, դրել են ուղղական, որ մեր պապերը չեն ստեղծել, այլ թարգմանել են հունարենից, և շատ լավ են արել, որովհետև մեր առաջին հոլովը միշտ բառի ուղիղ, հիմնական ձևն (Crundform) է։ Մյուս կողմից՝ արդարև մեր ուղղականը բառի չթեքված ձևն է, բայց և այնպես ձև է, ինչպես և ինքը սլ. Մալխասյանը գրում է «բառի սկզբնական ձևը», եվ մենք երբ ասում ենք՝ fաղամ, fաղամի, fաղամից, fաղամով, fաղամում և համարում ենք, տեսնում ենք՝ նույն բառը հինգ ձևով։ Ուրեմն ուղղականն էլ բառի ձև է, ինչպես և մյուս հոլովները։ Բայց երբ ասում ենք, թե ուղղականն էլ բառի ձև է, չպիտի հասկանանք անպատճառ, որ մեր ուղղականը մյուսներին բոլորովին նման ձև է. ուղղականը մեր լեզվի մեջ կորցրել է հոլովական վերջավորությունը, մինչ մյուսները ունեն հոլովական վերջավորություն. հենց այդ պատճառով ուղղականը հիմնական ձև է (Crundform), իսկ մյուսները թեքման ձևեր են (Biegungsformen)։ Բայց այս տարբերությունը չի խանգարում, որ մեր ուղղականը բառի սոսկական ձև լինի, ճիշտ ինչպես,—ներելի լինի օրինակը,—եթե մենք հինգ ծառ ունեննանք, մեկի գլուխը խուզած լինի, մյուսները ոչ, այդ չի նշանակում, թե մենք հինգ ծառ չունինք և գլուխը խուզած ծառը ծառ չէ։

Այսպես ուրեմն, եթե ուղղականը հոլով են համարում, ոչ թե այն պատճառով է, որ իբր թե, ինչպես կարծում է սլ. Մալխասյանը, միայն դրա «ֆունկցիան ունին աչքի առաջ» առանց ձևի, այլ որովհետև ուղղականն ինքն էլ մի ձև է, (որ ունի հարկավ և յուր ֆունկցիան, իսկապես ֆունկցիաները), հնդեվրոպական լեզուների մի մասի մեջ՝ բոլորովին նման մյուս հոլովական ձևերին՝ իրեն հատուկ վերջավորությամբ. իսկ ուրիշների մեջ յուր վերջավորությունը կորցրած մի ձև, դարձած մի հիմնական ձև, կամ ինչպես սլ. Մալխասյանն ասում է, «սկզբնական ձև»։

* * *

Պ. Մալխասյանը, որպեսզի ապացուցանի թե հոլովները լոկ ձև չեն, վկայության է կանչում և նրանց անուններըը, որոնք, բացի ուղղականից «համապատասխան (են) յուրաքանչյուրի էական ֆունկցիային. սեռա-

կան՝ երբ բառաձևը սերողի ֆունկցիա է ստանում (հոր որդի)»*, ես վերջը դարձյալ հոգ տանելով իմ հետևողական լինելու մասին՝ ավելացնում է. «Եթե բառաձևի հետ անբաժան կապված չլիներ նրա ֆունկցիան՝ այս բնորոշ անունները չէին լինի, այլ անտարբեր կոչումներ— առաջին, երկրորդ, և այլն հոլով. և պ. Աբեղյանն էլ հետևողաբար վարվելով՝ պետք է հոլովները դներ—«ուղղական ձև» «թեքվածք (=հոլով) առաջին», «թեքվածք երկրորդ»», «թեքվածք երրորդ» և այլն:— Կխնդրեի պ. Մալխասյանին, որ մի անգամ էլ կարդա իմ «Աշխարհաբարի քերականությունը» նույն 135—136 երեսը, և կտեսնե, որ ես հոլով սահմանել եմ ոչ թե «բառի փոփոխված ձև» ինչպես ինքը,— որով և, ինչպես վերևում տեսանք, հակասության մեջ է ընկել,—այլ «գոյականի ձևեր» և ապա այդ ձևերը հենց այդպես, յուր ուզածի պես երկու խմբի էլ բաժանել եմ. «ուղղական կոչվում է առաջին հոլովը, որովհետև գոյականի ուղիղ, անփոփոխ ձևն է... Մյուս բոլոր հոլովներն ուղղականի նկատմամբ ասվում են թեք հոլով, որովհետև թեքված, այսինքն փոփոխված ձևով են լինում»: Ուրեմն մի ուղիղ, ուղղական ձև կամ հոլով, և չորս թեք, թեքված ձևեր կամ հոլովներ: Էլ ո՞ւր մնաց ուրեմն անհետևողականությունը:

Բայց եթե ես հոլովների անուններն «անտարբեր կոչումներով» թվերով դնեի, չէի ասիլ՝ «ուղղական ձև» «թեքված (=հոլով) առաջին» «թեքված երկրորդ» և այլն. այլ կասեի առաջին ձև (կամ հոլով), երկրորդ ձև (կամ հոլով) և այլն: Եվ գիտեք ինչո՞ւ այսպես.— եթե մի դեղին խնձոր ունենանք և չորս կարմիր խնձոր, ընդամենը կունենանք հինգ խնձոր. և թվելիս չենք ասում ստորաբաժանումներով՝ մի դեղին խնձոր. առաջին կարմիր խնձոր, երկրորդ կարմիր խնձոր և այլն. այլ ասում ենք՝ առաջին խնձոր, երկրորդ խնձոր, երրորդ խնձոր և այլն: Այսպես և մենք ունինք հինգ ձև, որոնցից մեկն ուղիղ, հիմնական ձև է, իսկ մյուսները թեքված ձևեր են, և ընդհանուր թվարկության ժամանակ բնականորեն պետք է ասենք՝ առաջին ձև, երկրորդ ձև, երրորդ ձև և այլն. կամ առաջին հոլով, երկրորդ հոլով և այլն. ինչպես դնում է բուկզբում հենց ինքը պ. Մալխասյանը:

Ապա պ. Մալխասյանն իմ հոդվածի շարունակությունից (եր. 38) և այն պետք է իմանա, որ եթե ես մեր հոլովներն այդպիսի անտարբեր կոչումներով չեմ անվանել, ոչ թե նրա համար, որ սխալ կլիներ այդպես կոչելը, այլ միայն այն պատճառով, որ «այդպիսի կոչումներն ընդհանուր ընդունված և հարմար չեն»: Բայց հակառակ յուր սպասածի կարող է և այն իմանալ, որ հոլովները հենց այդպես անտարբեր ա-

---

* Իսկ եթե ասենք «որդու հայր» այստե՞ղ էլ սեռականը սերողի ֆունկցիա ունի, և հայրը որդո՞ւց է սերվում: Եվ ինչո՞ւ «հոր որդի» կապակցության մեջ հոր սեռականն էական ֆունկցիա է արտահայտում. իսկ «որդու հայր» կապակցության մեջ որդու սեռականն էական ֆունկցիա չի արտահայտում: Ինչպես է որոշում պ. Մալխասյանը մի հոլովի էական և ոչ էական ֆունկցիաները:

նուններով կոչոզներ էլ կան աշխարհումս և այդպես կոչողները գերմանացիք են, որոնք հոլովից ու լեզվագիտությունից քիչ ու շատ բան հասկանում են. և այդպես կոչում են նրանք հոլովները ժողովրդական դպրոցների մեջ. այլև բարձրագույն դպրոցների քերականությունների մեջ կգտնեք այդ կոչումները*։ Բայց այդտեղից իհարկե չպիտի եզրակացնել, թե որովհետև գերմանացիք այդպես անտարբեր կոչումներ են դնում հոլովներին, հոլովը լոկ բառի ձև են հասկանում առանց ֆունկցիայի։ Այդպես կոչում են նրանք, որովհետև հոլովների թիվը որոշվում է ձևվով. քանի հոլովական ձև կա մի լեզվի մեջ, այնքան էլ ձևականորեն առանձին հոլով գոյություն ունի նույն լեզվի մեջ։ Ուրիշ խոսքով հոլովների ձևական գոյությունը ձևից է կախված և ոչ ձևական գաղափարից, այսինքն ֆունկցիայից։ Այսպես օրինակ՝ նոր բարձր գերմաներենում չորս բառաձև կա, չորս էլ հոլով են դնում ձևականորեն՝ ուղղական (=անվանական), սեռական, տրական և հայցական։ Ձևականորեն գոյություն չունի կոչական հոլովը, որը ըստ նշանակության միայն հոլով կարելի է համարել, և քերականությունների մեջ կոչական հոլով վերցնողները շատ լավ դնում են այս տարբերությունը, այսինքն տարբերում են հոլով ըստ ձևի (ձևականորեն) և հոլով ըստ նշանակության**։ Հին բարձր գերմաներենում կա մի հինգերորդ հոլով ևս՝ գործիական, որովհետև որոշ տիպի բառեր գործիականի համար ունին հատուկ բառաձև։ Հին ֆրանսերենում միայն երկու հոլովական ձև կա, երկու էլ հոլով են դնում՝ ուղղական և հայցական. իսկ նոր ֆրանսերենում ոչ մի հոլով էլ չեն դնում ձևականորեն, որովհետև կա միայն բառի մի ընդհանուր ձև, որ գործ է ածվում իբրև ուղղական, հայցական և կոչական։ Թեպետև այս լեզվի մեջ դերանունները մասամբ դեռ ունին ուղղական, հայցական և տրական հոլովների համար առանձին ձևեր, բայց ֆրանսիացին այդ մի քանի հոլովական մնացորդների համար յուր քերականությունը չի ծանրաբեռնում հոլովների ուսումով։

Այսպես ուրեմն, առանց հատուկ ձևի չկա ձևականորեն առանձին հոլով։

---

* *Օրինակ,* Dr. E. Th. Michaelis, Neuhochdeutsche Gramm. für höhere Schulen, *երկրորդ տիպ, եր. 36, նույնը* Heyse-*ի քեր. մեջ, եր. 116։ Գերմանացիք հոլովները* Wer=ո՞վ *բառի ձևերով էլ են կոչում.* — Werfall, Wessenfall, Wemfall, Wenfall. *ինչպես քն հայերենի հոլովները կոչեինք՝ ով-հոլով, ում-հոլով, ումնից-հոլով, ումնով-հոլով, ումնում-հոլով։ Հոլովների կոչումներն իսկապես պայմանական են, հոլովների էական համարված նշանակությունից առած։ Մենք կարող էինք մեր հոլովները այսպես ևս կոչել ըստ կազմության. 1. ուղղական հոլով, 2. ի հոլով, 3. ից հոլով, 4. ով հոլով, 5. ում հոլով։ Եվ այս կոչումները հարմար կլիներին՝ կոչական, հայցական և սեռական—տրական տերմինների հարուցած դժվարությունից ազատվելու համար, մանավանդ որ հոլովների ավանդական անուններն իսկապես շատ քիչ բան են ասում նրանց բազմազան նշանակությունների մասին։*

** *Տե՛ս* Heyse, *Քերականություն, եր. 116 հտն., 400 հտն.։*

Ընդհանուր եզրակացություն.

1. Պ. Մալխասյանը առանց հերքելու է թողնում իմ առաջին նախադրյալը, թե առանց հատուկ բառաձևի ձևականորեն գոյություն չունի առանձին հոլով, կամ թե՝ ամեն ձևականորեն առանձին հոլով պետք է ունենա յուր հատուկ ձևը։— Նա իմ այս նախադրյալը հերքելու տեղ՝ հերքում է այն թե հոլովը լոկ բառի ձև չէ առանց ֆունկցիայի։

2. Պ. Մալխասյանն առանց ապացուցանելու է թողնում իմ առաջին նախադրյալի հակառակը, թե կարող է ձևականորեն գոյություն ունենալ առանձին հոլով առանց հատուկ ձևի՝ միայն ֆունկցիայով. և միայն կողմնակի կերպով՝ ապացուցանելով թե հոլովը լոկ բառի ձև չէ, այլ ունի և ֆունկցիա, ասում է թե իբր բոլոր լեզուների քերականությունները ունին անվանական=ուղղական հոլով միայն ֆունկցիայով՝ առանց բառաձևի։ Բայց մենք տեսանք, թե ինչ արժեք ունի նրա այդ կարծիքը։

Այսպես ուրեմն մնում է իմ առաջին նախադրյալը։ Տեսնենք այժմ, թե ինչ է ասում մյուս նախադրյալի համար։

* * *

Առաջին հարցը, որ պ. Մալխասյանն իմ հոդվածի դեմ գրելիս տալիս է ինքն իրեն, բնականորեն այն է, թե արդյոք հայցականի համար մեր աշխարհաբարում հատուկ բառաձև կա՞, թե ոչ։ Հին հայցականի մի երկու քարացած օրինակներ բերելուց հետո՝ նա հեշտությամբ համաձայնելով՝ ընդունում է, որ չկա այդպիսի բառաձև. «արևելահայոց դրական լեզուն չունի հատուկ ձև հայցականի համար».

Գրաբարի հոգնակի հայցական կազմող ս վերջավորությունը, կամ ինչպես պ. Մալխասյանը մի բառով ասում է, «հայցականացուցիչ տարր» եթե կա՝ «քարացած ձև» է, «այլևս չի զգացվում իբրև կենդանի օրգանական տարր»։ Հայցական կազմող միակ տարրը ուրեմն, որով մեր հայցական հոլովը ձևականորեն (formell) զանազանվել է մյուս հոլովներից, մեռել է. մեռել է հետևաբար նրա հետ և հայցականի հոլովական ձևը (Falliform), որովհետև նոր «հայցականացուցիչ տարր» չի ստեղծվել հայցականի համար։ լեզուն կարիք չի զգացել դրա համար. այլ բավականացել է նրանով, որ «ուղղականացուցիչ» տարր f-ն գործ է ածել և հայցականի իմաստով. Արար հարսանիս=հարսանիք արեց։ Ուրիշ խոսքով մեր լեզուն յուր պատմական զարգացման ընթացքում դուրս ձգելով հայցականը՝ ընդարձակել է ուղղականի պաշտոնը։ Հին լեզվի մեջ ուղղականը սահմանափակ պաշտոնների տեր էր,— դրանով արտահայտվում էին գլխավորապես ենթական, կոչականը և ստորոգյալը,—բայց պատմությունը թույլ է տվել նրան և կրող առարկա և պարագաներ արտահայտել.—Ծղև սով զերիս ամս=երեք տարի սով եղավ։ Նույն կերպով մեր լեզվի պատմությունն ընդարձակել է և «տրականացուցիչ» տարրի, տրականի վերջավորության պաշտոնը, թույլ տալով նրան ևս

յուր բաժինն ստանալ հին հայցականի պաշտոնից. տրականն, որ հին լեզվի մեջ որոշ բայերի հետ միայն կրող առարկայի կամ անցողական բայերի սեռի խնդրի պաշտոն ուներ, նոր լեզվի մեջ ավելի ընդարձակ չափով սկսել է նույնն արտահայտել.—Տեսի զորդիս նորա=Տեսա նրա որդիներին փոխանակ համեմատաբար ավելի հին ձևին՝ Նրա որդիք տեսա, ինչպես ասվում է դեռ արևմտյան աշխարհաբարում և մեր բարբառներում, երբեմն և գրական լեզվի մեջ։ Թե ինչու և ինչպես է առաջ եկել այս ձևական կերպարանափոխությունը, այդ մասին խոսված է իմ «Աշխարհաբարի հոլովների» մեջ (տե՛ս եր. 14, 69—72)։

Այսպես ուրեմն պատմականորեն արդարանում է հայցականի հոլովական ձևի մահը. իսկ պատմական հայեցակետն ամենից կարևորն է քերականական խնդիրներին լուծում տալու համար։

Պ. Մալխասյանը պատմական հայեցակետը, նկատի չունի. նա լռում է այս մասին. բայց լեզվի պատմական զարգացման հետևանքը նա ևս ընդունում է,— այն որ մեռել է «հայցականացուցիչ տարրը». այսինքն հայցականի հոլովական ձևը։ Բնական հետևությունն այն պիտի լիներ, որ նա, որովհետև առանց հերքելու է թողնում իմ առաջին նախադրյալը և ընդունում է երկրորդ նախադրյալը, ընդուներ և եզրակացությունը, թե հայցականը ձևականորեն գոյություն չունի։ Բայց նա այդ չի անում, թեպետև զգալ է տալիս, կամ զգում է, որ ձևականորեն զատ հոլովի գոյության համար պահանջվում է առանձին ձև։ Հենց այդ պատճառով, չկարողանալով ուղղակի ասել թե հայցականը հատուկ ձև ունի. նա յուր հոդվածի վերջում աշխատում է դրա համար անուղղակի կերպով մի նոր տեսակի ձև հաստատել։ Բայց ինչպես ուրիշ դեպքերում, այստեղ էլ նա միանգամից մի քանի բան է ասում, և հերքում և հաստատում է, ուստի և ես մի քիչ հեռվից կսկսեմ։

* * *

Ես «Աշխարհաբարի հոլովները» հոդվածիս մեջ գրել եմ. «Միևնույն հոլովը, կրկնում ենք, կարող է գործածվել զանազան շարահյուսական (սինտաքսիսական) հարաբերություններ ցույց տալու համար. բայց այդ պատճառով մի հոլովը, մի ձևը, չի դադարում միևնույն հոլովը մնալուց և չի դառնում երկու, երեք և ավելի հոլովներ. ինչպես օրինակ հունարենում չկա մեր և լատիներենի բացառական հոլովի համապատասխան հոլով. մեր այս հոլովի պաշտոնը կատարում են այդ լեզվի մեջ սեռական կամ տրական հոլովները. բայց մի՞թե սրա համար հունարենում դնում են մի առանձին հոլով՝ բացառական և ասում թե այդ հոլովը նման է սեռականին կամ տրականին, թե՞ միայն սեռական ու տրական հոլով են դնում և ապա շարահյուսության մեջ բացատրում թե սեռականն այս ու այս իմաստներով է գործածվում, տրականն՝ այս ու այս, և թե այս երկու հոլովն ունին ի միջի այլոց և լա-

տիներենի բացառական հոլովի պաշտոնը»։ Պ. Մալխասյանը սրա դեմ դրում է. «ս. Աբեղյանի հոդվածում ամենից ծանրակշիռ փաստը հոգուտ յուր նորամուծության այն է, որ հունարենը (ինչպես և ռուսերենը) չունի հատուկ ձև բացառականի համար, իսկ այս հոլովի արտահայտող ֆունկցիան հունարենում կատարում է սեռական հոլովը (պիտք է ավելացներ և տրականը). այս պատճառով էլ հունարենի քերականությունները չունին բացառական հոլով։ Բայց այս երևույթը չէ արդարացնում հայցականի վերացումը մեր աշխարհաբարի քերականություններից. նախ՝ որովհետև հայցական հոլովը, ինչպես վերը բացատրեցինք, հակադիր, հակասական ֆունկցիա ունի ուղղականի (=անվանականի) նկատմամբ... և երկրորդ՝ որ հայցականը թեպետ աշխարհաբարում չունի սնփական ձև, բայց ունի հատուկ կիրառության ձև, որով զանազանվում է թե ուղղականից և թե տրականից. այսպես.

	անորոշ	որոշյալ
Ուղղական	*մարդ*	*մարդը*
Տրական	*մարդու*	*մարդուն*
Հայցական	*մարդ*	*մարդուն*

այսինքն՝ հայցականը ձևով ոչ ուղղական է և ոչ տրական, այլ մի առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի, ուստի և հենց այս առանձնահատկության շնորհիվ պետք է առանձնապես հիշվի քերականության մեջ»։

Նախ նկատեմ երկու բան։ Պ. Մալխասյանն այստեղ ևս՝ գրելով իմ հոդվածի դեմ՝ փոփոխում է իմ ասածը. ընթերցողը պարզապես կըտեսնի, որ ես գրել եմ, թե լատիներենի բացառական, ablativus, *հոլովի պաշտոնը հունարենում կատարում են սեռական կամ տրական հոլովները, կամ «Այս երկու հոլովն ունին ի միջի այլոց և լատիներենի բացառական հոլովի պաշտոնը». իսկ պ. Մալխասյանը լռության է մատնել տրականը և հիշել է միայն սեռականը։ Թե ինչու է այդպես վարվել, այդ հասկանալի է։ Որովհետև ճիշտ ինչպես հունարենում լատիներենի մի հոլով* ablativus*-ի պաշտոնը վարում են երկու հոլով՝ սեռական և տրական,— որոնք իրենց նշանակությամբ իհարկե նույն չեն, ինչ որ բացառականը,— նույնպես և աշխարհաբարում գրաբարի մի հայցական հոլովի պաշտոնը վարում են երկու հոլով՝ ուղղական և տրական։ Հիմա՝ եթե պ. Մալխասյանը իմ գրածը ճշտությամբ հիշեր, այն ժամանակ չէր կարող յուր հերքման երկրորդ հիմունքը բերել. քանի որ նույն «կիրառության ձևը» կարելի էր և հունարենի համար ասել և սեռականից ու տրականից մի* ablativus *հանել իբրև «մի առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի»։*

Ապա պ. Մալխասյանը ասում է. Հայցականը «մի առանձին տե-

սակ խառնուրդ է երկու ձևերի և հենց այս առանձնահատկության շնորհիվ պետք է առանձնապես հիշվի քերականության մեջ»։— Քերականության մեջ որքան կուզեք՝ առանձնապես հիշեցնեք հայցականը, ինդիրն այստեղ քերականության մեջ հիշել—չհիշելու մասին չէ, այլ թե ձևականորեն գոյություն ունի՞ աշխարհաբարում հայցական հոլով՝ թե չէ՛, և արդյոք ձևաբանության մեջ հոլովների շարքում պիտի դնե՞լ այդ հոլովը՝ թե չէ։ Պ. Մալխասյանն իհարկե քերականություն բառի տեղ «ստուգաբանություն» պիտի դներ։

Այս նկատողություններից հետո անցնենք նրա բերած հիմունքներին։ Ես կսկսեմ երկրորդից, որովհետև առաջինը նրա տեսության վերաբերում, որի մասին առանձին։

1. Նա ասում է. Հայցականը հատուկ ձև չունի, բայց ունի «հատուկ կիրառության ձև, որով զանազանվում է թե՝ ուղղականից և թե տրականից», այսինքն՝ հայցականը թեպետ ձևականորեն գոյություն չունի, բայց և այնպես զատ առանձին հոլով է և ունի յուր հատուկ գոյությունը իբրև «խառնուրդ երկու ձևերի»։ Ինձ թվում է, թե այստեղ բառախաղություն կա և «խառնուրդ» տեղին չէ գործածված. որովհետև ինչքան էլ նա «խառնուրդ» բառը գործածի, տրականի և ուղղականի ձևերը չեն խառնվում այնպես, որ մի նոր հոլովական ձև (Falliform) կազմեն, մի հայցական որի համար կարելի լինի ասել, թե ձևով ուղղական է կամ տրական։ Պարզենք մի օրինակով։

Գրաբարի հոգնակի ներգոյականը ձևով նման է հոգնակի հայցականին, եզակի ներգոյականը՝ եզակի տրականին, իսկ ո բունն ունեցող բառերինը՝ եզակի հայցականին, ուրեմն ներգոյականը նման է երբեմն տրականին, երբեմն հայցականին։ Բայց այսպես լինելով հանդերձ՝ երբեմն ներգոյականի համար այնպիսի ձևեր են կազմվում, որ մենք չենք կարող ոչ տրական անվանել և ոչ էլ հայցական, այլ պետք է, ինչպես պ. Մ.-ը դնում է աշխարհաբարի հայցականի համար, ասենք, թե «ներգոյականը ձևով ոչ հայցական է և ոչ տրական, այլ մի առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի», մի առանձին ներգոյական։ Օրինակ՝ (ի) կեանսն fում, (ի) փառսն իւրում, (յ) աթոռ իւրում, (ի) սերմանելն իւրում ներգոյականների համար ի՞նչ պիտի ասել, հայցականի՞ նման են արդյոք, թե՞ տրականի։ Գոյականը հայցականի նման է, իսկ իր ածականը տրականի նման, երկուսը միասին ուրեմն իբրև մի ներգոյական մի առանձին կազմություն են ներկայացնում ներգոյականի, որ ոչ հայցականի նման է և ոչ էլ տրականի, որովհետև միևնույն հոլովը միաժամանակ չի կարող երկու, ձևով տարբեր, հոլովի նրման լինել։

Ինչի՞ց է առաջանում այս ըստ երևույթին «առանձին տեսակ խառնուրդը»։ Գրաբարի հոգնակի ներգոյականի ձևը, այսինքն ս վերջավորությունը, ըստ Մեյեի (Քեր., եր. 46) ոչ թե հոգնակի հայցականի ս վերջավորությունն է անպայման, այլ հոգն. հայցականի և ներգոյա-

*կանի այս ընդհանուր համարված ձևը երկու հոլովի համար տարբեր ծագում ունի. այն է՝ հոգն. հայցական և ներգոյական տարբեր հոլովները սկզբնապես տարբեր էլ ձևեր են ունեցել և հնչափոխությամբ միայն առաջ է եկել նույն հնչյունական զուգադիպությունը և երկու տարբեր հոլովները ձևով նույնացել են, գոնե որոշ տիպի բառերի մեջ, և ապա, պետք է կարծել, դրանց հետևել են նմանական կազմությամբ և մյուսները։ Մյուս կողմից՝ ո բնի բառերի եզակի ներգոյականի նման լինելը հայցականին՝ ոչ թե այն պատճառով է, որ եզ. հայցականը գործ է ածվել և ներգոյականի իմաստով, այլ բոլորովին տարբեր վերջավորությամբ երկու տարբեր հոլովները՝ հայցական և ներգոյական, կորցնելով իրենց վերջավորությունները՝ ստացել են միևնույն ձևը՝ **fուն** (Մեյե, Քեր., եր. 44 հետն)։— Գրաբարի՝ հայցականի նման ներգոյականների համար ուրեմն՝ (ի) **fուն**, (ի) **գնալ**, (յ) **աստեղս**, (յ) **անձինս** կարելի չէ ասել, թե հայցականը գործ է ածվել և ներգոյականի նշանակությամբ, որովհետև այդ հայցականաձև ներգոյականը ստուգաբանորեն հայցական չէ, այլ ներգոյական և պատահաբար միայն ձևով նույնացած է հայցականի հետ։ (ի) **fուն իւրում**, (յ) **աքոռ իւրում** և նման կազմություններում ուրեմն՝ **fուն**, **աքոռ** ստուգաբանորեն ոչ թե հայցական են, այլ ներգոյական. ուստի և **իւրում** ածականը ոչ թե հայցականի ձևով է դրվում, ինչպես պետք էր սպասել ըստ երևույթին, այլ տրականի ձևով, որ և ներգոյականի ձև է։*

Դառնալով մեր աշխարհաբարի հայցականին՝ տեսնում ենք, որ այդ հայցականը ձևով նման լինելով ուղղականին և տրականին՝ ստուգաբանորեն ևս նույն ուղղականն ու տրականն է և ոչ թե տարբեր ծագում ունի և պատահաբար նույնացած ուղղականի և տրականի հետ։ Մյուս կողմից՝ աշխարհաբարի հայցականի համար չկա, ինչպես գրաբարի ներգոյականի համար է, ոչ մի այնպիսի կազմություն, «առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի» որ չկարողանանք ուղղական կամ տրական կոչել։ Նա տեսավ յուր գիրքը. նա տեսավ յուր աշակերտին խոսքերի մեջ **գիրքը** *հայցականը ուղղականի ձևով է, իսկ* **աշակերտին** *հայցականը տրականի ձևով է։ Եվ այսպես բոլոր հայցականները, կամ միայն ուղղականի ձևով, կամ միայն տրականի ձևով են, առանց «մի առանձին տեսակ խառնուրդի» որովհետև* **յուր** *և մյուս ածականները միշտ միևնույն ընդհանուր ձևով են դրվում ինչպես մյուս բոլոր հոլովների, նույնպես և ուղղականի և տրականի վրա,— յուր գիրքը, յուր գրքում, յուր գրքից և այլն։ Գրաբարի ներգոյականի համար, ըստ Մեյեի ստուգաբանության, կարող ենք ասել, թե նման է տրականին, բայց հոգնականում և ո բնի բառերի եզականում ունի առաձին ձև. որովհետև նախ՝ պատահաբար է զուգադիպել հայցականին և ապա՝ սրա հետ կատարելապես չի շփոթվում՝ քանի որ կան դեռ ի փառս իւրում, յաքոռ իւրում և այլն ըստ երևույթին «խառնուրդ» ձևերը։ Աշխարհաբարի հայցականի համար, սակայն, այսպիսի բան չկա. մեր հայցականը, ինչպես և*

սպասելի էր յուր ստուգաբանության պատճառով, մի դեպքում ուղղականից չի զանազանվում, մի ուրիշ դեպքում տրականից։ Ուղղականի ձև հայցականը՝ մարդ մնում է պարզ և որոշ կերպով ուղղականի ձև և պատմականորեն դա ուղղական է. իսկ տրականի ձև հայցականը՝ մարդուն մնում է տրականի ձև և պատմականորեն դա տրական է։ Ուստի ինչ որ պ. Մալխասյանն ասում է, թե «հայցականը ձևով ոչ ուղղական է և ոչ տրական» նա պետք է ասեր, ինչպես և ասում է ուրիշ տեղեր նույն հոդվածի մեջ, թե հայցականի ձևը, կամ հայցականը ձևով, «նրման է կամ ուղղականի կամ տրականի» կամ թե՝ պատմական ծագումը ի նկատի ունենալով, թե՝ հայցականը ձևով կամ ուղղական է կամ տրական. ուրիշ խոսքով՝ ուղղականի և տրականի հոլովական ձևերը գործ են ածվում և իբրև հայցական. ինչպես որ Մառը յուր քերականության մեջ (եր. 140) մեր աշխարհաբարի տրականի համար գրում է, թե «գործ է ածվում և հայցականի նշանակությամբ»։ Այսպիսով պ. Մալխասյանի կիրառության ձև ասածը մի բառախաղ լինելով՝ կորցնում է յուր արժեքը. որովհետև այստեղ ոչ թե մի «հատուկ կիրառության ձև», Form, կա իբրև ձևերի «խառնուրդ»— քանի որ ձևը նույն ուղղականի կամ տրականի ձևն է,— այլ միայն մի հատուկ կիրառության եղանակ կամ կիրառություն ուղղականի և տրականի ձևերի իբրև հայցական։ Ես կարծում եմ, թե պ. Մալխասյանն էլ վերևի տողերը գրելիս, թեպետ շփոթ կերպով, այդպես մտածել է, այսինքն «կիրառության ձևն» իբրև կիրառության եղանակ. բայց չի կարողացել ամբողջապես պարզել իրեն համար։ Որովհետև ի՞նչ է ցույց տալիս նրա գործածած «կիրառություն» բառը, եթե ոչ այն, որ հայցական հոլովը, որ «չունի սեփական ձև» այսինքն ձևականորեն զատ գոյություն չունի, գոյություն ունի միայն կիրառությամբ և կիրառությամբ հարկավ ուղղականի և տրականի ձևերի իբրև հայցական։

Բայց մի անգամ որ հայցականը ոչ թե հատուկ ձևով, այլ միայն կիրառությամբ, գործածությամբ գոյություն ունի, հետևաբար կարելի չէ ասել թե մեր հայցականը ձևականորեն զատ հոլով է. այլ հոլով է միայն կիրառությամբ, ըստ նշանակության։ Պ. Մալխասյանի «հատուկ կիրառության ձև» ասածից, կամ երկու ձևերի առանձին տեսակ «խառնուրդից» մնում է միայն այն, որ հայցականի նշանակությամբ երբեմն ուղղականն է գործածվում, երբեմն տրականը, կամ հայցականը ձևով երբեմն ուղղականի նման է, երբեմն տրականի։ Տեսնենք այս մնացորդն ևս։

2. Պ. Մալխասյանը զատ հայցական հոլով դնել է ուզում ձևաբանության մեջ միայն նրա համար, որ այդ հոլովը ձևով երբեմն ուղղականի նման՝ է, երբեմն տրականի։ Իսկ եթե հայցականը ձևով միայն ուղղականի կամ միայն տրականի նման լիներ, այն ժամանա՞կ ևս պիտի հիշվեր իբրև առանձին հոլով։— Թվում է թե ոչ. որովհետև կոչականը, որ ձևով միշտ ուղղականի նման է, չի դրվում իբրև առանձին հոլով։ Բայց

ի՞նչ կապ պ. Մ.-ը գրաբարի և արևմտյան աշխարհաբարի ներգոյականի համար. չէ՞ որ այդ հոլովն էլ երբեմն հայցականի նման է, երբեմն տրականի,— հապա ինչո՞ւ գրաբարում և արևմտյան աշխարհաբարում առանձին ներգոյական հոլով չեն դնում, գրաբարում ուրիշների հետ և ինքը պ. Մալխասյանը։ Ի՞նչ հիմունքով են որոշում ուրեմն ձևականորեն զատ հոլովը։ Դրա պատասխանը շատ լավ տալիս է Մեյեն (Քեր., եր. 66), որ ահա թե ինչ է գրում գրաբարի հոլովների համար։

«Բացի կոչականից, որ այլևս առանձին (propre) գոյություն չունի, հնդեվրոպական բոլոր հոլովները հայերենում (գրաբարում) մնացել են մեկը մյուսից զատ (distinct)։ Հաճախ երկու հոլով որոշ թեքվածների մեջ մի ընդհանուր ձև ունին, բայց նրանք ուրիշ տեղ (ուզում է ասել ուրիշ բառերի մեջ) տարբեր ձևեր ունին. և այդ բավական է զանազանությունը պահելու համար։ Այսպես ներգոյականը, թեպետև գրեթե միշտ նման է մի ուրիշ հոլովի ձևի, մի առանձին հոլով է, նախ՝ որովհետև յուր հատուկ ձևն ունի տեղաջ տիպի մեջ (և առանձին բառերի մեջ, մանավանդ յամսեան ձևի, ամսոյ սեռական-տրականի նկատմամբ), և ապա՝ որովհետև միշտ միևնույն հոլովի հետ չի նույնանում, այլ երբեմն նման է հայցականին և երբեմն տրականին»։—

Մեյեի դրած հիմունքներից էականն առաջինն է, հատուկ հոլովական ձև լինելը. երկրորդը, այսինքն երբեմն մեկ, երբեմն մի ուրիշ հոլովի նման լինելը, միայն գալիս է զորացնելու առաջինը՝ կազմելով մեր գրաբարի ներգոյականի համար, ինչպես տեսանք, այնպիսի ձևեր, որոնց համար ոչ հայցական կարելի է ասել և ոչ տրական, այլ միայն ներգոյական։ Եթե չլիներ էլ այս երկրորդը, առաջինը միայն բավական է մեր լեզվի մեջ առանձին, զատ հոլով դնելու։ Այսպես օրինակ՝ գրաբարում կա իհարկե առանձին բացառական հոլով և կա միայն առաջին հիմունքով առանց երկրորդի. քանի որ որոշ տիպի բառեր եզակի բացառականի համար ունին հատուկ ձև՝ բանէ, աշխարհէ, դրսէ. մինչ բոլոր բառերի հոգնակի բացառականի համար, և այ, ոյ, մասամբ և ու հոլովման բառերի եզակի բացառականի համար հատուկ ձև չկա, և այդ դեպքերում բացառականը նման է ոչ թե երբեմն մի հոլովի, երբեմն մի ուրիշ հոլովի, այլ միշտ միևնույն հոլովին՝ սեռական—տրականին։— Իսկ ընդհակառակն, եթե չլինի առաջին հիմունքը, այսինքն գոյություն չունենա հատուկ հոլովական ձև գոնե որոշ տիպի բառերի համար, երկրորդ հիմունքը միայն, երբեմն այս հոլովին, երբեմն այն հոլովին նման լինելը, բավական չէ դեռ ձևականորեն առանձին հոլով դնելու համար։ Այսպես օրինակ՝ մեր գրաբարում Մառը և ուրիշ շատ քերականներ, դրանց հետ և ինքը պ. Մալխասյանը, որովհետև չեն ընդունում, թե կա հատուկ ձև ներգոյականի համար, ուստի և առանձին ներգոյական հոլով չեն դնում, թեպետև կա երկրորդ հիմունքը, այսինքն գրաբարում ներգոյականը երբեմն հայցականի նման է երբեմն տրականի։ Այսպես մտածողները պարզապես ասում են, թե գրաբարում (ինչպես և աշխարհաբարում) հայցական և տրական հոլովները գործ

են ածվում նաև ներգոյականի իմաստով. իսկ յաքոռ իւրում և նման ձևերը շարահյուսական առանձին համաձայնությամբ են բացատրում*, Սրա՞նք են ճիշտ մտածում, թե՞ Մեյեն գրաբարի ներգոյականի նկատմամբ, խնդիրն այստեղ այդ չէ. այլ այն թե ինչպես են որոշում մի հոլովի գոյությունը ձևականորեն։

Մեյեից բերած այս հատվածի մեջ պ. Մալխասյանը կգտնի պատասխանը և այն ամենի, ինչ որ նա իմ հոդվածի դեմ գրում է ռուսերենի հայցականի համար։ Ռուսերենում հայցական հոլովը ձևականորեն կա ոչ թե նրա համար, «որովհետև այդ հոլովի ֆունկցիան գոյություն ունի լեզվի մեջ». ինչպես կարծում է պ. Մալխասյանը, այլ նախ՝ որովհետև մի ահագին շարք բառեր կան, որ հայցականի համար հատուկ ձև ունին,—старшую сестру, և այդ շատ է այդ հոլովի զանազանությունը պահելու համար, ինչպես գրում է Մեյեն,— և ապա՝ որովհետև մյուս բառերի հայցականը հաստատուն կերպով կամ ուղղականի նման է կամ սեռականի։ Ահա թե ինչու ռուսերենում հայցական հոլով կա։ Թե չէ՝ ֆունկցիան միայն, առանց հատուկ ձևի, բավական չէ ձևականորեն առանձին հոլով դնելու. ֆունկցիայով դրած հոլովը կլինի միայն նշանակությամբ հոլով և ոչ ձևականորեն հոլով։ Ֆունկցիան գոյություն է ունեցել լեզուների մեջ և այն ժամանակ, երբ դեռ հոլովական ձևերը գոյություն չեն ունեցել. ֆունկցիան գոյություն ունի այժմ և այն լեզուների մեջ, ինչպես անգլերեն և ռոմանական լեզուները, որոնք հոլով, հոլովական ձևեր չունին, այլ միայն մի ընդհանուր ձև, նոր առաջացած «մաքուր բնի ձևեր, ինչպիսի ձևեր հոլովական կազմությունից առաջ գոյություն են ունեցել, որ և անհիմն կերպով անվանական կամ հայցական են անվանում»**։

---

* Մառը (Քեր., եր., 72) ներգոյականի չ վերջավորությունը համարում է ոչ, ինչպես Մեյեն, հատուկ ներգոյականի վերջավորություն, այլ սեռական—տրականի վերջավորություն, ինչպես որ է իրոք կնոջ, միոջ, գեղջ բառերի մեջ։ Խոսելով մեր հին քերականների ընդունած նախդրիվ հոլովների մասին, որոնց մեջ է և ներգոյականը կամ նախդրիվ տրականը գրում է. «նախդրիվ հոլովները ստուգաբանորեն ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ մեկը մյուս հոլովներից, իսկ նախդրիվ տրականը հայցականի միացումն է (ց, առ, ի) նախդիրների հետ։ Այս հոլովները նախդրի հետ՝ ստանում են նոր հոլովների ֆունկցիա,—այսպես հայցականը նախդրով ստանում է տրականի ֆունկցիա,— և պահանջում են համապատասխան համաձայնություն, բայց այս առանձնահատկությունների բացատրությունը շարահյուսությանն է վերաբերում» (եր. 56)։ Եվ ապա ավելացնում է միայն մի ծանոթություն, թե «փորձ է եղել նախդրիվ տրականի մեջ տեսնել ներգոյական հոլովի մի ձև, որ պատահաբար զուգադիպել է ուղղականին և հայցականին»։ —Դժբախտաբար Մառի շարահյուսությունը մինչև այժմ չէ հրատարակված, որի մեջ պիտի բացատրվի ներգոյականի իմաստով գործածված այսպիսի ձևերի. ի գնալ իւրում, յաքոռ, իւրում, ի կանս իւրում և այլն առանձնահատուկ համաձայնությունը։ Այս առանձին տեսակ համաձայնությունն ընդունելուց հետո բնականաբար կարելի է լինում տրականի և հայցականի նման ներգոյականները դնել պարզապես իբրև հայցական և տրական հոլովներ, ինչպես Մառը դնում է և ուրիշ տեղ, նախդիրների մասին խոսելիս (եր. 279)։

** *H. Paul*, Princ. der Sprachgeschichte, եր. 192։

Որպեսզի հայցական հոլովը իբրև ձևականորեն զատ հոլով մըտներ մեր աշխարհաբարի հոլովների շարքի մեջ, պ. Մալխասյանը ոչ թե պիտի ասեր թե հայցականի ֆունկցիան կա, այլ այն պիտի կարողանար ասել մեր հայցականի համար, ինչ որ Մեյլեն գրաբարի ներգոյականի համար է ասում և ինչ որ ռուսերենի հայցականի և կամ մեր գրաբարի բացառականի համար կարելի է ասել։ Դրա համար պետք է, որ դոնե որոշ տիպի բառեր հատուկ ձև ունենային հայցականի, բնկուզ մնացած բոլոր բառերի համար հայցականը ձևով նման լիներ կամ մի հոլովի, կամ երբեմն մի հոլովի, երբեմն մի ուրիշի։ Բայց մեր հայցականը ոչ մի բառի համար առանձին ձև չունի, որպեսզի ձևականորեն պահվի նրա զանազանությունն ուրիշ հոլովներից։

Այս դեպքում եթե լինի էլ—լինի եմ ասում, որովհետև իսկապես չկա—երկրորդ հիմունքը, երբեմն մեկ, երբեմն մի ուրիշ հոլովի նման լինելը, արդարև ճնարավոր կլինի ձևաբանության մեջ հայցական հոլով դնելը, բայց այդ հիմունքը միակ, առանց առաջինի, այսինքն հատուկ հոլովական ձևի, տեսանք, դեռ բավական չէ զատ հոլով դնելու համար։ Եթե այդպես լիներ, այն ժամանակ գրաբարում և արևմտյան աշխարհաբարում պետք է զատ ներգոյական հոլով դներ պ. Մալխասյանը։ Բայց ենթադրենք թե այդ հիմունքը մենակ նշանակություն ունի։ Այդ ժամանակ խնդրի մյուս կողմը պետք է նայել։

3. Մեր աշխարհաբարի հայցականի համար իսկապես չենք կարող ասել, թե երբեմն ուղղականին նման է, երբեմն տրականին՝ այն մտքով, ինչ մտքով որ գրաբարի ներգոյականի համար կարելի է ասել, թե երբեմն հայցականին նման է, երբեմն տրականին։ Որովհետև գրաբարի ներգոյականի համար կա ձևերի հաստատ ու որոշ դրություն. այսինքն ներգոյականը հաստատ ու որոշ կերպով կամ հայցականի նման է կամ տրականի, միշտ հաստատ ու որոշ կերպով կարելի է ասել, թե ինչպես է այս կամ այն բառի ներգոյականը, հայցականի՞, թե՞ տրականի նման. բոլոր բառերի հոգնակի ներգոյականը նման է հայցականին. բոլոր բառերի եզակի ներգոյականը նման է տրականին, բացի ոչ, և այ տիպի բառերից, որոնց ներգոյականը նման է հայցականին։ Եվ եթե կան բառեր, որոնք կրկին ձևով եզակի ներգոյական ունին, թե հայցականի և թե տրականի նման,—ի թուղթ, ի թղթի, ի մարմին, ի մարմնի,— դրանք լոկ բարբառային կրկին ձևեր են, որոնք իմաստով ու գործածությամբ չեն տարբերվում իրարուց, ինչպես որ աշխարհաբարում մարդու և մարդի ձևերն ենք գործածում և նմանները։ Այսպես և ռուսերենում, օրինակ, արական և չեզոք անունների հայցականը, որ չունի առանձին ձև, եթե նման է սեռականին, միշտ էլ որոշ և հաստատ կերպով սեռականին նման է և սեռականին նման են շնչավորների անունները. իսկ եթե նման է ուղղականին, միշտ էլ ուղղականին նման է և ուղղականին նման են անշունչների անունները, брат միշտ брата ձևն ունի, իսկ дом միշտ էլ дом։ Միևնույն բառը իբրև հայցական չի

կարող մեկ ուղղականին նման լինել, մեկ սեռականին. брат մեկ брата ձևն ունենալ, մեկ էլ брат ձևը։

Դառնալով աշխարհաբարի հայցականին՝ մենք տեսնում ենք, որ այստեղ այսպիսի բան չկա։ Աշխարհաբարի հայցականի համար չկա ձևերի այդպիսի հաստատ ու որոշ դրություն։ Մեր հայցականն այնպես չի կազմվում, որ բառերի մի մասի համար հայցականը միշտ որոշ ու հաստատ կերպով նման լիներ ուղղականին, իսկ մյուս մասի համար տրականին, կամ եզակին մի հոլովի նմանի, հոգնակին՝ մի ուրիշ հոլովի։ Մեր բառերի բոլորի համար էս ուղղականի նման հայցական կա, բացի ես, դու դերանուններից, որոնց հայցականը միայն տրականի նման է,— և այս ունի յուր պատմական պատճառը*։ Ուստի երբ ասում ենք, թե աշխարհաբարի հայցականը նման է կամ ուղղականին կամ տրականին, կամ թե՝ աշխարհաբարի հայցականը երբեմն ուղղականին նման է, երբեմն տրականին, այդ կարելի չէ վերևում բացատրած մրտքով հասկանալ։ Մեր հայցականը կիրառությամբ միայն նման է ուղղականին և կիրառությամբ միայն դարձյալ կարող է նման լինել տրականին, և այս միևնույն բառերի համար։ Օրինակ՝ նա դարձավ դեպի Տիգրանը, դեպի յուր աշակերտը, դեպի յուր աշակերտները. և նա տեսավ Տիգրանին, յուր աշակերտին, յուր աշակերտներին խոսքերի մեջ միևնույն Տիգրանը, աշակերտը անունների հայցականը նայելով կիրառության՝ մի անգամ ուղղականի ձևով է լինում, մյուս անգամ տրականի ձևով և այսպես թե եզակի և թե հոգնակի։ Շատ պարզ է ուրեմն, որ կարելի չէ ասել, թե մեր աշխարհաբարում բառերի մի մասի հայցականը նման է ուղղականին, մյուս մասինը՝ տրականին, կամ եզակին՝ մի հոլովի, հոգնակին՝ մի ուրիշ հոլովի։ Շատ պարզ է և եզրակացությունը։

Եթե մենք ունինք պատմականորեն միայն ուղղականի և տրականի ձևեր և չկա հայցականի համար հնուտուկ ձև. և եթե մեր հայցականը միևնույն բառերի համար թե եզակին և թե հոգնակին կիրառությա՛մբ միայն նման է ուղղականին և կիրառությա՛մբ միայն դարձյալ կարող է նման լինել նաև տրականին,—ապա ուրեմն մենք ոչ թե ձևականորեն զատ հայցական հոլով ունինք, այլ ուղղական և տրական հոլովներ և այս հոլովների կիրառություն հին հայցականի իմաստով։

Խնդիրը սակայն այսքանով դեռ չի սպառվում։

4. Եթե մենք ուզենանք էլ ձևաբանության մեջ հոլովների շարքում առանձին հայցական հոլով դնել, այդ անհնարին է ճշտությամբ անել։ Այդ հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ բառերի մի մասի համար հայցականը հաստատ ու որոշ կերպով ուղղականի հետ նույնա-

---

* Ժողովրդական լեզվի մեջ ես, դու նույնպես՝ նաև իբրև հայցական են գործածվում բաղրզ (=չհաշված) նախդրությունից հետո, որ ծագում է բո՛ղ հրամայականից և զ նախդրից՝ բո՛ղրզ դու, բողրզ ես։

նար, մյուս մասի համար՝ տրականի հետ. կամ եզակին մի հոլովի հետ նույնանար, հոգնակին՝ մի ուրիշի հետ. կամ թե գոնե, ինչպես պ. Մալխասյանն է կարծում, հայցականն սմեն դեպքում ուղղականի նման լիներ, միայն անձի անունները, երբ որոշյալ են, միշտ տրականի ձևով հայցական ունենային։ Այդ ժամանակ մեր հոլովումը կարելի էր գուցե երկու տեսակի բաժանել, անորոշ և որոշյալ. անորոշի մեջ հայցականն ուղղականի նման դնել, իսկ որոշյալի մեջ անձի անունների հայցականը տրականի նման դնել։ Այսպես վարվում է Պալասանյանը, մեր աշխարհաբարի առաջին քերականության հորինողը՝ առանձին հոլովում դնելով իբրև «որոշյալ հոդով հոլովում» և գրելով թե «Անձի անունները որոշյալ հոդով հոլովելիս՝ հայցականը տրականի հետ նույնանում է» (Պալ., Քեր., մայր. լեզ., 1884, Բ, եր. 37 հետ.)։ Եվ ուրիշներն այնուհետև հետևում են Պալասանյանին։ Բայց մի կողմ թողնելով այն, որ այսպես վարվելը վերևում բացատրած հիմունքներով սխալ է և մանկավարժական տեսակետից էլ ավելորդ ծանրաբեռնություն է՝ մենք այսպես վարվել չենք կարող, որովհետև այսպես վարվելու հիմքն էլ չկա մեր լեզվի մեջ։ Եվ այս բանին հեշտությամբ կհամոզվեր պ. Մալխասյանը, եթե միայն մի փոքրիկ ուսումնասիրություն աներ։ Ահա թե ինչպես։

Նրա դրած շարքը, որ վերևում բերեցի, բոլորովին անճիշտ է։ Նա մարդ անորոշի համար հայցական դնում է ուղղականի ձևով՝ մարդ. իսկ մարդը որոշյալի համար, հետևելով Պալասանյանին, հայցականը դնում է տրականի ձևով՝ մարդուն. ուստի և եզրակացնում է թե «հայցականը ձևով ոչ ուղղական է և ոչ տրական, այլ մի առանձին տեսակ խառնուրդ երկու ձևերի»։ Բայց մարդ անորոշի համար հայցականը ոչ միայն մարդ է լինում, այլ և տրականի ձևով մարդու,—Որսորդը վիրավորից մի մարդու։ Եվ որքան կուզեք, ուրիշ օրինակներ ևս։ Իսկ մարդը որոշյալի հայցականը ոչ միայն տրականի ձևով մարդուն է լինում, այլ և ուղղականի ձևով մարդը,—Ես նրան ձեր մարդը կարծեցի։ Եվ որքան կուզեք, ուրիշ օրինակներ ևս։

Շատ պարզ է ուրեմն, որ պ. Մալխասյանի վերևում դրած շարքն ստանում է հետևյալ պատկերը.

	Անորոշ	Որոշյալ
Ուղ.	մարդ	մարդը
Տր.	մարդու	մարդուն
Հայց.	մարդ, մարդու	մարդը, մարդուն

այսինքն միևնույն բառի համար հայցականը ձևով թե ուղղական է և թե տրական և ոչ թե, ինչպես գրում է պ. Մ.-ը «ոչ ուղղական է և ոչ տրական»։ Ուրիշ խոսքով, հայցականի պաշտոնը միևնույն բառի համար, լինի որոշյալ թե անորոշ, եզակի թե հոգնակի, թե ուղղականն է կատարում և թե տրականը, և այս՝ նայելով տեղին։

Այս է պատճառը, որ աշակերտը հոլովել սովորելիս բոլոր հոլովներն էլ հեշտությամբ ասում է, բայց հենց որ հասնում է հայցականին, կանգ է առնում, չի իմանում, թե ինչ ասի։ Վարժապետն էլ աշակերտից ավելի լավ դրության մեջ չի լինում և չի կարողանում որոշ բան ասել, որովհետև հայցականի ձևը խոսքից դուրս իմանալ կարելի չէ, թե որին նման է, ուղղականի՞ն, թե՞ տրականին։ Օրինակ կարո՞ղ եք ասել մարդ, աղջիկ, նա, ինքը, ով և այլն բառերի հայցականը։ Եթե ասեք մարդ, աղջիկ, նա, ինքը, ով, ես կասեմ մարդու, աղջկա, նրան, իրեն, ում,—Տիգրանը վիրավորեց մի մարդու, Բերեց մի պստիկ հինգ տարեկան աղջկա նստեցրեց մեջ տեղը (Պռոշ.)։ Ես տեսա նրան, իրեն։ Դու ո՞ւմ տեսար։— Իսկ եթե ասեք մարդու, աղջկա, նրան, իրեն, ում, ես կասեմ մարդ, աղջիկ, նա, ինքը, ով,— այս կինը մարդ չունի, մի աղջիկ ունի միայն, դեպի նա, դեպի ինքը։ Էլ ո՞վ ունի (Սուլթանը), որի վրա կարողանա հենվել (Մշակ, 1908, № 216)։ Եթե դուք ծաղրածու, առաջնորդ բառերի որոշյալ հայցականն ասեք ծաղրածուին, առաջնորդին, ես կասեմ նաև ծաղրածուն, առաջնորդը,—Պարսից բոլոր մեծամեծներն ունեն իրենց ծաղրածուն (Պռոշյան, Կովածաղիկ)։ Մեր բոլոր թեմերն ունեն իրենց առաջնորդը։ Այսպես և որոշյալ ֆամին բառի հայցականն եթե ասեք ֆամին, ես կասեմ նաև ֆամուն.—Նզովելով քամուն՝ ճանապարհորդը վերարկուի թևերը հագավ։—Դարձյալ որոշյալ վարդ բառի հայցականն եթե ասեք վարդը, ես կասեմ և վարդին.— Եվ սիրով վառված քաղցրաձայն սոխակ գտել է վարդին (Աղայան, Մայր. լեզու, Գ. գիրք, 1907, եր. 14, 103)։ Այսպես և

Որսորդն աստված աղաչեց։
Որսորդն աստուծուն աղաչեց։
Որսորդն իր աղջիկը մարդու տվավ։
Որսորդն իր աղջկան մարդու տվավ։
Որսորդը մորթեց աղվեսը։
Որսորդը տեսավ աղվեսին։
Երեխան դնաց (դեպի) հայրը։
Երեխան տեսավ հորը։
Երեխային կոչեցին Տիգրան։
Երեխան տեսավ Տիգրանին։
Քեզ իրենց ծառան կարծեցին։
Նրանք իրենց ծառային կանչեցին։
Ես դարձա դեպի նա։
Ես տեսա նրան,—և այլն, և այլն։

Ի՞նչ տարօրինակ հոլով է այդ հայցականը, որ ոչ միայն առանձին բառաձև չունի, այլև ձևերի հաստատուն, որոշ կիրառություն չունի։ Միևնույն բառը, նույնիսկ անձի անունը երբ որոշյալ է, տեղին նայելով երկու ձևով էլ լինում է, և հայրը և հորը և Տիգրանը և Տիգրանին.

և ծաղրածուն և ծաղրածուին, և նա և նրան, և ով և ում և այլն։ Ուղղականի նման է լինում և որոշյալ և անորոշ դեպքում. տրականի նման է դարձյալ թե որոշյալ և թե անորոշ դեպքում. և այդպես թե եզակի և թե հոգնակի, թե անձի, թե կենդանու և թե իրի անունները։

Կարո՞ղ է ձևաբանությունը մեզ բան ասել մի հայցականի համար, որ այսպիսի կիրառությամբ է կազմվում։ Դե գլուխ հանեք այս հայցականից, երեխային հոլովել տալով մարդ, աղջիկ, վարդը, քամին և այլ բառերը։ Ի՞նչ պիտի ասի նա դրանց հայցականի դիմաց, աղջի՞կ թե աղջկա. մարդ թե՞ մարդու. վա՞րդ թե՞ վարդին. քամի՞ն թե՞ քամուն, ո՞վ թե ո՞ւմ. թե՞ երկուսն ևս մի անգամից։

Այսպես ուրեմն, չլինելով հայցականի համար ձևերի հաստատուն և որոշ կիրառություն ևս, ձևաբանության մեջ գործնականորեն նույնիսկ անհնարին է ասել թե հայցականը որին նման է, ուղղականի՞ն, տրականի՞ն, թե՞ երկսին ևս։ Իրողությունն ուրեմն այն է, որ մեր լեզուն կորցնելով հայցականը՝ այս հոլովի ֆունկցիաներն արտահայտելու նկատմամբ դեռ որոշ, հաստատուն կերպարանք չի ստացել, այլ տատանման, անցման շրջանի մեջ է։ «Մի անգամ որ տրականն անցել է հայցականի տեղ, դրա հետևանքն այն է լինում, որ նմանությամբ որոշ անձի անուններից այս կիրառությունն անցել է մասամբ և անորոշ անձի և կենդանիների անունների վրա և այժմ անցնում է նույնիսկ անշունչ առարկաների անունների վրա» (Աշխարհ. հոլ., եր. 72)։

Այսպիսի մի անցման շրջանի բնական է, որ երկու ձևն ևս, այսինքն նորը՝ տրականի նման հայցականը և հին՝ ուղղականի նմա հայցականը, նույն բառի համար հաճախ խառն, անխտիր իրար տեղ բանեն,— Նա յուր աղջիկը մարդու տվավ։ Նա յուր աղջկանը մարդու տվավ, Նա աստված աղաչեց. Նա աստուծուն աղաչեց և այլն։ Բայց դրությունը միայն սրանով չի վերջանում։ Եթե այսպես լիներ, կարելի կլիներ ուղղականի և տրականի նման հայցականները,—ինչպես վերևի աղջիկը և աղջկաը, աստված և աստուծուն,— միևնույն հոլովի կրկին ձևեր, հին և նոր, կամ տարբեր բարբառային ձևեր համարել։ Դրությունը սակայն բոլորովին ուրիշ կերպարանք ունի։

5. Մենք չունինք մի միություն կազմող հայցական ևս։ Երբ ասում ենք, թե հայցականը նման է տրականին՝ այդ միշտ արտահայտություն չէ, որովհետև ոչ թե ընդհանրապես հայցականն է նման տրականին, այլ հայցականը կարող է նման լինել տրականին այն ժամանակ, երբ անցողական բայերի սեռի խնդիր է։ Օրինակ՝ Նրանք իրենց ծառային կանչեցին. բայց Նրանք գնացին դեպի իրենց ծառան։ Առաջին խոսքի մեջ «ծառային» սեռի խնդիր է, ուստի և նման է տրականին. իսկ երկրորդ խոսքի մեջ նույն բառը, որ դարձյալ հայցական է, տրականին նման չէ։

Ուրեմն ի՞նչ է հետևությունը։ Միևնույն բառերի համար կա երկու տեսակ հայցական, իսկապես երկու հոլով, որ նշանակությամբ և ձևով

տարբերվում են իրարուց. մի հայցական, որ նման է ուղղականին և կատարում է հին հայցականի բոլոր ֆունկցիաները. մի հայցական ևս, որ նման է տրականին և կատարում է հին հայցականի սեռի խնդրի պաշտոնը, այն էլ ոչ միշտ։ Կամ թե այսպես

1. Ոչ սեռի խնդրի հայցական ուղղականի ձևով՝

Մարդ, մարդը

2. Սեռի խնդրի հայցական թե ուղղականի և թե տրականի ձևով՝

Մարդ, մարդը
Մարդու, մարդուն

Կնշանակե՝ հայցականի ձևը, թե արդյոք ուղղականին թե տրականին նման է, ուրոշվում է ոչ թե ձին հայցականի ֆունկցիաներով ընդհանրապես առած, այլ հին հայցականի ֆունկցիաներից սեռի խնդիրը նկատի ունենալով, ուրիշ խոսքով տրականի նման հայցականը որոշվում է սեռի խնդրով։ Այդ նույն է թե հայցականը ինչպես ձևով երկու տեսակ է՝ ուղղական և տրական, նույնպես և նշանակությամբ բաժանվել է երկու տարբեր տեսակի, երկու հոլովի։ Դրան ավելանում է սակայն և այն, որ երկրորդ տեսակի, սեռի խնդրի հայցականի ձևը դեռ անցման մեջ է. դրա համար ճիշտ ու հաստատ չենք կարող ասել, թե երբ նման է ուղղականին, երբ տրականին։

Ա) Իրի անունները, որոշյալ թե անորոշ, գրեթե միշտ նման են ուղղականին. բայց կարող են և տրականին նման լինել, մանավանդ երբ բայը բարոյական իմաստ ունի և կամ իրի անունը ոչ թե յուր իսկական, ֆիզիկական նշանակությամբ է առնվում, այլ փոխաբերական։

Բ) Կենդանիների անունները, որոշյալ և անորոշ, սովորաբար նման են ուղղականին, բայց կարող են, այն էլ բավական հաճախ, նման լինել և տրականին։

Գ) Անձի անուններն անորոշ ժամանակ սովորաբար նման են ուղղականին, բայց կարող են և տրականին նման լինել, իսկ որոշյալ ժամանակ սովորաբար նման են տրականին, բայց պատահում է ոչ սակավադեպ, որ նման են նաև ուղղականին, և կան դեպքեր երբ միայն ուղղականին նման են։

Ահա թե ինչ վիճակի մեջ է մեր սեռի խնդրի հայցականն ևս։ Դրա ձևը, ուղղական թե տրական, հաճախ կախված է բայից, դարձվածից, խոսքի շրջումից, խոսելու եղանակից, բարբառների ազդեցությունից, և նույնիսկ երբեմն սեռի խնդիր եղող բառից։ Մի օտարազգի մարդ մեր բոլոր հոլովների բոլոր կիրառությունները էլ հեշտությամբ կսովորի, բայց սեռի խնդրի հայցականը նրան ամենամեծ դժվարությունը կպատճառի, որովհետև մի ընդհանուր և հաստատուն կանոն ասել անհնարին է, գոնե ես չեմ գտնում այդ կանոնը։ Ասում ենք՝ նա ոչխարը մորթեց, էշը քշեց, ձին քշեց, բայց՝ նա էշին, շանը ծեծեց. նա ձիուն մտրակեց։

Ամեն թեմ ունի յուր առաջնորդը, բայց՝ ես այս թեմի առաջնորդին չըտեսա։

Այսպիսի հայցականի համար, որ ուղղականի նման է, բայց կարող է միևնույն բառերի համար և տրականի նման լինել, երբ սեռի խնդիր են. մյուս կողմից, երբ որ սեռի խնդրի հայցականի համար ևս ոչ մի կանոն չկա, թե երբ տրականի նման պիտի լինի, երբ ուղղականի նման,—այսպիսի մի հայցականի համար ըստ ինքյան հասկանալի է, որ ձևաբանությունը մեզ ոչինչ ասել չի կարող։ Շարահյուսության մեջ միայն կարելի է,— այն էլ երբ քերականությունը շատ ընդարձակ է,— մեկ մեկ բացատրել, թե ե՛րբ սեռի խնդրի հայցականն ուղղականի ձևով է դրվում, ե՛րբ տրականի և ո՛ր դեպքում երկու ձևով ևս։ Բայց ճիշտըն ասած՝ նույնիսկ քերականությունն էլ, որքան և ընդարձակ լինի, չի կարող յուր մեջ ամփոփել այս բոլոր կիրառությունները. դա իսկապես մի ընդարձակ բառարանի գործ է։

Այժմ խնդիրը մի ուրիշ կողմից էլ նայենք։

6. Հայցականի այսպիսի դրությամբ,— երբ չկա հատուկ ձև հայցականի և հին հայցականներն երկու որոշ խմբի են բաժանվել՝ սեռի խնդրի և ոչ սեռի խնդրի հայցականներ, արդյոք մեր լեզվի մեջ կարո՞ղ է լինել զգացում մի ընդհանուր հայցական հոլովի, մի զգացում, որով հին լեզվի բոլոր հայցականներն, իբրև մի առանձին լեզվական ամբողջություն, մի ձևական միություն, խումբ ըմբռնվեին։ Մենք մեր այժմյան լեզվական զգացումով միևնույն բառի համար եղած երկու, ձևով և կիրառությամբ տարբեր հայցականներն արդյոք երկու տարբեր հոլով էլ չե՞նք զգում՝ նույնացած մասամբ ուղղականի և մասամբ տրականի հետ։ Երբ հին հայն ասել է՝ Վիրաւորեցին առս երիս. Գնացի ընդ նմա մղոնս երիս. Ծղև սով ամս երիս. Կոչեմ զմաճկուս ձեր սիրելիս և այլն,—բոլոր հայցականներն էլ, որոնք նշանակությամբ տարբեր պաշտոն ունին, իբրև մի լեզվական, ձևական միություն են զգացվել, ըմբռնվել են իբրև մի խմբի լեզվական արտահայտություններ բոլորովին տարբեր ուղղականից՝ արք երեք, մղոնք երեք, ամք երեք, մանկունք, սիրելիք, և կամ տրականներից՝ արանց, մղոնաց, երից, մանկանց և այլն։ Արդյոք մենք այժմ դնո՞ւմ ենք այդ տարբերությունը ուղղականից և տրականից և զգո՞ւմ ենք հայցականի այդ ամբողջության միությունը։— Իմ զգացումով ամենևին ոչ։ Մենք այժմ ուղղականի նման հայցականներն ուղղական ենք մտածում, այսինքն ուղղականի ձևական միության մեջ ենք դնում, իսկ տրականի նման հայցականները՝ տրական, այսինքն տրականի ձևական միության մեջ։ Եվ այդ հասկանալի է, թե ինչո՛ւ։ «Վիրաւորեցին առս երիս» և «Ծղև սով ամս երիս» խոսքերի մեջ առս երիս, ամս երիս հոլովներն իբրև մի լեզվական ձևական միություն զգացվել են միայն նրա համար, որ ձևով նույն են. թե չէ՝ իմաստով դրանք իրար հետ առնչություն չունեին՝ մեկը կրող առարկա է, մյուսը ժամանակի տևողության պարագա։ Արդ մի անգամ որ

չինի դրանց ձևական նույնությունը,— երեք մարդու վիրավորեցին, երեք տարի սով եղավ,— էլ ինչո՞ւ պետք է այդ պաշտոնով և ձևով բոլորովին տարբեր բառերն իբրև մի ձևական միություն զգացվեն։

Մյուս կողմից՝ երբ հայն ասել է՝ հարաք զքշնամիս մեր, և յաղթեցանք թշնամեաց մերոց—այս երկու խոսքի զքշնամիս և թշնամեաց բառերի մեջ ձևական մեծ տարբերություն է տեսել. մեկը հայցական, մյուսը տրական, թեպետ և երկուսն ևս անցողական բայերի սեռի խընդիր են, այսինքն նույն պաշտոնն են կատարում։ Կարո՞ղ ենք այժմ նույն ձևական տարբերությունը տեսնել, երբ ասում ենք՝ ջարդեցինք մեր թշնամիներին, և հաղթեցինք մեր թշնամիներին, թե՞ թշնամիներին միևնույն ձևն է երկու դեպքում ևս։ Դարձյալ երբ հին հայն ասել է՝ Յայսմ գիշերի եղև. Յայսմ դարու եղև. Յայսմ վայրկենի եղև,— երեք դեպքում ևս նույն ձևն է տեսել նույն տեսակի ֆունկցիայի հետ. բայց երբ մենք այժմ ասում ենք՝ Այս գիշեր եղավ. Այս դարում եղավ. Այս վայրկյանիս եղավ,— մի՞թե նույն ձևն ենք տեսնում երեք դեպքում ևս, որովհետև նույն ֆունկցիան ունին։

Ի՞նչ է ուրեմն եզրակացությունը։

1. Երբ բոլորովին տարբեր տարբեր ֆունկցիաներ նույն հոլովական ձևով են արտահայտվում, դրանք զգացվում են իբրև մի ձևական միություն։ Այսպես գրաբարի հայցականով արտահայտվել են և սեռի խընդիր և ստորոգելիական խնդիր (երկրորդ հայցական ասածը) և զանազան պարագայական խնդիրներ և այլն. բայց ձևով նույն լինելով մի ձևական միություն են զգացվել։

2. Երբ բոլորովին նույն տեսակի խնդիրները, որ նույն ֆունկցիան ունին, տարբեր տարբեր հոլովական ձևերով են արտահայտվում, զգացվում են և տարբեր ձևական խմբերի մեջ։

Արդ մի անգամ որ լուծվել է գրաբարի հայցականի ձևը, քանի որ հայցականի ձևական զանազանությունը ոչ մի տիպի բառերի մեջ էլ չկա՝ ի՞նչ պիտի լիներ հետևանքը, եթե ոչ այն, որ բնականորեն պիտի լուծվեր, ոչնչանար և հին հայցականի ձևով իրար կապված բազմազան ֆունկցիաների մի ձևական ամբողջության զգացումը։ Հին հայցականով արտահայտված զանազան ֆունկցիաներ իհարկե մնում են բայց դրանք այլևս չեն կարող նույն ձևական խումբը կազմել և նույն ձևական միության մեջ մտնել, որովհետև չկա այդ ձևը. այլ, քանի որ միայն ուղղականի և տրականի ձևերը կան, մի մասն ուղղականի ձևական խմբի մեջ են մտնում, մյուս մասը տրականի ձևական խմբի մեջ։ Եվ այս տարօրինակ պիտի չթվի, քանի որ, ինչպես տեսանք, բոլորովին նույն ֆունկցիան ևս թե գրաբարում և թե աշխարհաբարում և թե ուրիշ լեզուների մեջ կարող է տարբեր ձևական խմբերի մեջ մտնել (Հարաք զքշնամիս. Յաղթեցաք թշնամեաց.—Այս գիշեր եղավ. Այս դարում եղավ. Այս վայրկյանիս եղավ)։

Թե իրոք հին հայցականի մի ձևական միության, մի առանձին ձևական խմբի զգացումն այլ ևս չունինք մենք (չպիտի չփոթել ձևը ֆուկ-

ցիայի հետ. Ֆունկցիայի զգացումը, կրկնում եմ, իմարկե մնում է,— դրան կը համոզվի ամեն մեկը, միայն եթե կարողանա սովորած քերականության նախապաշարումից ազատվել և դիտել յուր և ուրիշների մտածողությունը։ Եթե կարողանա, ասում եմ, որովհետև, ինչպես մի գերմանացի լեզվաբան գրում է, «շատ հեշտությամբ պղտորվում է լեզվի վիճակի որոշ պատկերը, երբ դիտողին ծանոթ է մի մոտիկ ցեղակից լեզվի կամ նույն լեզվի հնագույն կամ ավելի նոր զարգացման աստիճան. այդ ժամանակ մեծ հոգացողություն է հարկավոր, որ օտար բան չխառնվի»։

Առնենք մի օրինակ. «Սիրելիս և բարեկամս կոչեցին զնոսա» և «Սիրելիք և բարեկամք կոչեցան նոքա»։ Հին հայն այս երկու խոսքի մեջ սիրելիս *և* բարեկամս *բառերը նույն ձևական խմբի մեջ է զգացել, ինչ որ* զնոսա *հայցականը. իսկ* սիրելիք *և* բարեկամք *բառերը նույն ձևական միության մեջ, ինչ որ* նոքա *ուղղականը։ Այս խոսքերն այժմ ասում ենք. «Սիրելի և բարեկամ կոչեցին նրանց». «Սիրելի և բարեկամ կոչվեցին նրանք»։ Զո՞ւմ ենք այժմ այն ձևական տարբերությունը* սիրելի *և* բարեկամ *բառերի համար այս երկու դեպքում, ինչ որ հին հայն զգացել է։ Արդյոք առաջին դեպքում* սիրելի *և* բարեկամ *բառերի համար նո՞ւյն ձևն ենք զգում, ինչ որ* նրանց *բառի համար, իսկ երկրորդ դեպքում նո՞ւյն ձևը, ինչ որ* նրանք *բառի համար։ Ես կարող եմ ազատ ասել, որ այս երկու խոսքի մեջ* սիրելի *և* բարեկամ *բառերի համար միևնույն ձևն եմ տեսնում։ Այսպես և երբ ասում ենք՝ Օտարներին բարբարոս են համարում. Օտարները բարբարոս են համարվում. Երեխային անվանեցին Տիգրան. Երեխան անվանվեց Տիգրան և այլն, և այլն. ես ոչ մի հոլովական տարբերություն չեմ զգում երկու դեպքի* բարբարոս *և* Տիգրան *բառերի համար. և առաջին դեպքում* բարբարոս, Տիգրան *բառերն իրենց ձևով չեմ կապում* օտարներին, երեխային *բառերի ձևի հետ, իսկ երկրորդ դեպքում* օտարները, երեխան *բառերի։ Բարբարոս և Տիգրան խնդիրների հոլովական ձևն իմ զգացումով բան չունի* օտարներին, երեխային *և* օտարները, երեխան *բառերի հոլովական ձևերի հետ. այլ կախված է միայն համարել, անվանել բայերի բայիմաստից, որ նույն է՝ լինեն այդ բայերն անցողական թե անանցողական՝ համարել, անվանել թե համարվել, անվանվել։ Երկու դեպքում էլ այժմ այդ միևնույն բայիմաստն ունեցող բայերն առնում են նույն ֆունկցիան կատարող խնդիրը բառի հիմնական ուղղական ձևով և ոչ թե մի դեպքում ուղղական, մյուս դեպքում հայցական։ Ուրիշ խոսքով մեր մտածողության նպանակը լեզվի բնական զարգացումով փոխվել է, հնից շուռ է եկել, դարձել ճիշտ այնպես, ինչպես ռուսն է մտածում, որ այդ խնդիրները նույն ձևական խմբի մեջ գործիական է դնում, լինի բայը կրավորական թե ներգործական.* Иностранцев считают варварами. Ребенка назвали Тиграном.— Иностранцы считаются варварами. Ребенок был назван Тиграном.

Շատ հասկանալի է ուրեմն, որ ինչպես ռուսերենի համար այդ խնդիրների հոլովը կախված չէ սեռի խնդրի կամ ենթակայի հոլովից, նույնպես և այժմյան հայերենի համար այդ խնդիրների հոլովը կարող է լինել և անկախ է ենթակայի կամ սեռի խնդրի հոլովից. երկու դեպքում էլ ուղղական է և մենք ուղղական էլ կարող ենք կոչել և պիտի կոչենք։ Մի փոքր ավելի, սակայն կանգ առնենք այս վերջին կետի մասին։

Մենք սովոր ենք գրաբարի քերականությունից, թե մի շարք ներգործական բայեր՝ անվանել, կոչել, համարել և այլն առնում են երկու հայցական խնդիր, մեկը սեռի խնդիր, մյուսը՝ երկրորդ հայցական, որոնք թվով և հոլովով համաձայն են դրվում կամ կարող են համաձայն դրվել. ուստի երբ ներգործական բայը կրավորական է դառնում, հայցական սեռի խնդիրը փոխվում է ուղղական ենթակայի, իսկ երկրորդ հայցական խնդիրն էլ յուր կողմից, համաձայնելով ենթակային, շուռ է գալիս ուղղականի. ինչպես՝ սիքելիս և բարեկամս կոչեցին զնոսա,—սիրելիք և բարեկամք կոչեցան նոքա։ Ով այս համաձայնությունը հոլովով՝ մենք գտնում ենք շատ բնական և նույնիսկ մի տրամաբանական պահանջ մեր մտածողության. ուստի և աշխարհաբարում ևս՝ «երեխային անվանեցին Տիգրան» խոսքի մեջ պահանջում ենք, որ **Տիգրան** և **երեխային** նույն հոլովը լինին, այսինքն այդ երկուսը հոլովով համաձայն լինին և մի հոլով՝ հայցական կոչվեն, թեպետ և հոլովական ձևով բնավ համաձայն չեն, ինչպես և ռուսերենում։ Տեսնենք թե ինչ է ասում մի գերմանացի նշանավոր լեզվաբան քերականական համաձայնության մասին ընդհանրապես և այս համաձայնության մասին մասնավորապես*։

«Համաձայնությունը կարելի չէ բնավ ընդհանրապես մի բան համարել, որը ըստ ինքյան հասկանալի կերպով հետևի տրամաբանական հարաբերության բնավորությունից։ Օրինակ՝ ոչ մի տրամաբանական հիմք չկա, որի համար ածականը սեռով, թվով և հոլովով անհրաժեշտորեն համաձայնի գոյականին»։ Ուստի և շատ լեզուների մեջ չկա ածականի և գոյականի այս համաձայնությունը, այլ ածականը միշտ ուղիղ, անփոփոխ, ուղղական է դրվում։ Այսպես ի միջի այլոց և մեր աշխարհաբարում։ «Համաձայնության ծագման համար ելակետ կազմել են այնպիսի դեպքերը, որոնց մեջ մի բառի ձևական համաձայնությունը մի ուրիշ բառի հետ ոչ թե այս վերջին բառն ի նկատի ունենալուց է առաջ եկել, այլ պայմանավորված է միայն երկոի հարաբերության նույնությամբ։ Բայց համաձայնությունն իբրև այդպիսին զգացվելուց հետո՝ նմանական փոխանցմամբ սահմանն ընդարձակվել է և ուրիշ դեպքերի վրա»։— Այսպես՝ «հոլովով համաձայնությունն ամենից առաջ բացահայտչի համար է ծագել», որովհետև բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ մի երկրորդ անգամ դրված կրկնության կարող

* *H. Paul*, Principien d. Sprachgeschichte, եր. 255—262, Kongruenz.

է ըմբռնվել որ խոսքի մեջ նույն պաշտոնն է կատարում, ինչ որ բացահայտյալը. ինչպես՝ «Անին՝ Բագրատունյաց մայրաքաղաք տեսա». խոսքի մեջ «Բագրատունյաց մայրաքաղաքը» բացահայտիչը մի պարզաբանող կրկնություն է միայն նույն «Անին» սեռի խնդրի, և «տեսա» բայի նկատմամբ նույն պաշտոնն է կատարում, ինչ որ ունի «Անին»։ Այսպես և «Անուց՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա», կամ՝ «Վարդանի որդուն՝ Տիգրանին սպանեցին» խոսքերի մեջ «մայրաքաղաքից», «Տիգրանին» բացահայտիչները եթե հոլովով համաձայնում են «Անուց», «որդուց» բացահայտիչներին, այդ ոչ թե նրա համար է, որ այս վերջինները պահանջում են, որ առաջիններն իրենց հետ հոլովով համաձայն դրվեն, այլ որովհետև «մայրաքաղաքից», «Տիգրանին» երկրորդ անգամ ուրիշ բառով կրկնված նույն պաշտոնը վարող, նույն հարաբերությունն ունեցող խնդիրներ են, ինչ որ «Անուց», «որդուն» բառերը։ Այստեղ է համարվում ահա հոլովով համաձայնության սկիզբը։ Եվ մեր աշխարհաբար լեզուն բոլոր հոլովական համաձայնություններից՝ ունի միայն այս երկրորդ անգամ կրկնված, նույն հարաբերությունը ցույց տվող խնդրի, կամ ետադաս բացահայտչի համաձայնությունը, որ մի տրամաբանական հարաբերության հետևանք է, մինչդեռ ածականի համաձայնությունը հոլովով յուր գոյականի հետ, որ տրամաբանական պահանջի վրա չի հիմնված, այլ համարվում է այս բացահայտչի համաձայնության նմանությամբ առաջացած (թե ինչպես՝ այդ մի կողմն եմ թողնում), այդ չունի մեր լեզուն։ Եվ ոչ միայն այդ, նույնիսկ ետադաս բացահայտիչը, երբ դրվում է բացահայտյալից առաջ, առնվում է իբրև մի ածական և անփոփոխ ուղղական է մնում,— «Բագրատունյաց մայրաքաղաք Անուց հեռացա», «Վարդանի Տիգրան որդուն տեսա»—այնպես որ հայերենում, աշխարհաբարում, իսկապես իբրև բացահայտիչ (apposition) մնում է միայն ետադաս դրվող, հոլովով համաձայնող կրկնությունը նույն պաշտոնը վարող մի բառի։

Հոլովով համաձայնությունը լեզուների մեջ, բացի ածականից և բացահայտչից, կա և երկրորդ հայցական խնդիրների համար՝ անվանել, կոչել և այլն բայերի հետ, որ մասնավորապես հետաքրքրում է մեզ այստեղ։ Արդյոք՝ «երեխային կոչեցին Տիգրան» խոսքի մեջ՝ «Տիգրան» անպատճառ պե՞տք է հոլովով համաձայն լինի սեռի խնդրի հետ, ուստի և եթե «հրեխային» հայցական ենք կոչում, «Տիգրան» բառն ևս հայցական կոչվի, քա՞ղ կարող է «Տիգրան» բառի հոլովը կապ չունենալ «երեխային» բառի հոլովի հետ և կարող է ուղղական կոչվել։ Տրամաբանական պահանջ համարել այդ երկուսի հոլովական համաձայնությունը՝ կարելի չէ, քանի որ դրանք միևնույն հարաբերությունը չեն ցույց տալիս։ Ուստի և ռուսերենում և աշխարհաբարում, տեսանք, չկա այդ հոլովական համաձայնությունը։ Բայց տեսնենք ինչ է ասում նույն դերմանացի լեզվաբանը այդ մասին։

«Այսպիսի մի խոսքի մեջ օրինակ՝ նրան կոչում են (անվանում են)

Ֆրիդրիխ [man nennt (heisst) ihn Friedrich] *իսկապես ոչ մի հոլով չի պաուշաճում Ֆրիդրիխ բառին. այդտեղ պետք է սոսկ բունը* (der blosse Stamm) *դրվեր։ Կարելի է հենց Ֆրիդրիխ և ուրիշ հատուկ անունները, որոնք (գերմաներենում) ոչ մի հոլովական նշան չունին [հայերենում բոլոր ուղղականներն այդպես են] համարել բուն, բացարձակ հոլով։ Ապա, քանի որ անվանելու մեջ կոչման հարաբերություն տեղի ունի, կարելի էր սպասել, որ կոչական հոլով լինի, և այդ հոլովն իսկապես հունարենում (բերում է մի օրինակ՝ Ավետարանից, Ղուկ., 6. 46. Ձի՞ կոչէք զիս տէր), որ Վուլգատայում թարգմանված է կոչական (բերում է նույնը լատիներեն)։ Ապա մաքուր բուն չլինելով՝ պետք է բնի տեղը բունի* **ուղղականը** *[=անվանականը], որը սակայն մեծ մասամբ չի զանազանվում կոչականից։ Գոթերենում վերոհիշյալ կտորը թարգմանված է ուղղականով. համապատասխան կերպով լութերն ուղղականով թարգմանում է գերմաներեն.* Was heisst mich aber herr, herr? *Ուրիշ տեղեր էլ միջին բարձր և նոր բարձր գերմաներենում [վերջինս այժմյան գրական գերմաներենն է] գործ են ածվում ուղղական (կոչական) հոլովները, ինչպես* ich hiess ihn mein Montan; den ich herr Stolle nennen hörte *և այլն։ Բայց սովորականն է* **հայցականը**: *Եվ այս հայցականը միայն այն համաձայնության սովորությունից է առաջ եկել» և այլն։*

Եվ այսպես միևնույն խնդիրը, որ պետք է իսկապես բառի բունը դրվեր, դրվում է կոչական, ուղղական=անվանական, գործիական (ռուսերենում) և հայցական։ Վերջին հոլովով դրվում է և գրաբարում, ինչպես և արդի գերմաներենում։ Եվ երբ հայցական հոլովով է դրվում, հոլովով համաձայն են լինում առդի խնդրին, և այնուհետև այդ հոլովական համաձայնության մատածողությունն այնքան յուրացրել ենք գրաբարից, որ մեզ թվում է թե դա, այդ համաձայնությունը, մի տրամաբանական պահանջ է և իբր ուրիշ ձևով էլ կարելի չե. մինչդեռ լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ ուրիշ հոլովներով էլ է դրվում նույն խընդիրը, նույնիսկ միևնույն լեզվի մեջ, և որ հայցական հոլովը այդ դեպքում, ինչպես գերմաներենում, ուրիշ դեպքերի նմանությամբ է առաջ եկել։ Մի գերմանացի լեզվաբան,—չնայելով որ գերմաներենում կա հատուկ հայցական հոլով տարբեր ուղղականից և այդ խնդիրը դրվում է այժմ հայցական, բայց որովհետև հատուկ անուններր այդ դեպքում ոչ մի հոլովական նշան չունին,—չի խորշում հատուկ անուններին այդ գործածության մեջ հայցական չհամարել, այլ իբրև բառի ուղիղ ձև, բուն, բացարձակ հոլով ըմբռնել։ Իսկ մենք, ինչպես մեր աշխարհաբարի մեջ բոլոր անուններն այդ դեպքում ուղիղ ձևով, ուղղական են դրվում, բառի հիմնական ձևով, ինչպես որ պետք էր սպասել, մենք դժվարանում ենք այդ գործածությունն ուղղական կոչել և պահանջում ենք, որ հայցական կոչվի։ Բայց դժվարանում ենք ոչ թե մեր լեզվական կենդանի զգացումի պատճառով, այլ միմիայն գրաբարի քերականության ազդեցությամբ։

Հետևությունը պարզ է. «Երեխային անվանեցին Տիգրան» խոսքի մեջ Տիգրան բառի ձևը երբեք անհրաժեշտ չէ, որ կախված լինի երեխային բառի ձևից, ուստի այդ ձևն ուղղական կոչելու ոչ մի արգելք չկա, և քանի որ հայերենում ուղղական է դրվում, ուրեմն և ուղղական էլ պետք է ասել։ Ապա և հասկանալի է, թե ինչու գրաբարի երկրորդ հայցական խնդիրների հոլովն այժմ մենք այլևս չենք կապում սեռի խնդրի հոլովական ձևի հետ. և վերևի խոսքի մեջ երեխային և Տիգրան բառերը նույն ձևական միության մեջ չենք զգում, այլ Տիգրան ձևը ուղղականի ձևական միության մեջ ենք զգում, ինչպես որ է՛ իրոք։

Նույն կերպ նույն խոսքի մեջ երեխային սեռի խնդիրը մենք մտածում ենք ոչ թե իբրև առանձին հոլով, այլ տրականի ձևական միության մեջ, ինչպես և իսկապես տրական է պատմականորեն։ Թե մենք այդ հոլովը կարող ենք տրական մտածել, այդ ապացուցանելն ևս դժվար չէր լինիլ, բայց ես կթողնեմ այդ։ Այս ասեմ միայն, որ լեզվաբանորեն ոչ մի արգելք չկա տրականի այդ գործածությունը հենց տրական էլ կոչելու։ Ուստի ամեն լեզվաբանորեն կրթված մարդ հեշտությամբ այդ գործածությունը տրական էլ կկոչի։ Մառը, տեսանք, մեր աշխարհաբարի տրականի համար գրում է թե գործ է ածվում և իբրև հայցական. իսկ Ֆինկը, թեպետև մի գերմանացու համար հորինած քերականության մեջ հարմար կլիներ հայցական կոչել այդ տրականը, բայց և այնպես նա յուր քերականության մեջ մեր արևելյան աշխարհաբարի տրականի այդ գործածությունը ներգործական բայերի հետ՝ պարզապես տրական էլ կոչում է և «պատվիր քո հորը» խոսքի մեջ հորը ձևը տրական է դնում և ոչ հայցական*։ Ֆինկն ուրեմն յուր պատրաստությամբ շատ ավելի լավ է ըմբռնել մեր լեզվի հոգին՝ չընդունելով տրականի նման հայցական, քան Պալաեանյանը, որ սկզբնապատճառն է եղել այդ տրականձև հայցականի գոյությանը մեր քերականությունների մեջ։

---

* F. N. Finck, Lehrbuch der Neuostarmen. Litteratursprache. § 61, *1*, § *81, 1*. Ֆինկն յուր այս դասագրքի մեջ, որ գերմանացիների համար է հորինած, ինչպես սպասելի էր, պահում է հայցական հոլովը, բայց յուր պատրաստությամբ, ինչպես մի քանի ուրիշ բաների մեջ, նույնպես և հոլովների նկատմամբ ճիշտ ըմբռնում է մեր լեզվի կազմությունը։ Այսպես անունների համար նա միայն ուղղականի ձևով հայցականն է պահում, այսինքն հայցականը միշտ նման է դնում ուղղականին, իսկ տրականի ձևով հայցականն ուղղակի տրական է կոչում։ Դերանունների մեջ, թեպետև հոլովների շարքում հայցականը տրականի հետ նույն է դնում, բայց այդ, երևում է, միայն գերմանացիների դյուրության համար է. որովհետև խոսքի ուման մեջ դերանունների համար ևս տրականի նման հայցական հոլով չի դնում իբրև կրող առարկայի հոլով, այլ միայն տրական հոլով, որ կարող է և սեռի խնդրի և բնության խնդրի պաշտոն վարել։ Նա ուրեմն իրապես տրականի նման հայցականը թե անունների և թե դերանունների համար գուրս է ձգում. նրա հայցականը նման է միայն ուղղականին, ինչպես կոչականն է։

Վերջացնելով կրկնում եմ՝ հին հայցականի ձևական մահի հետ մնում է և այդ հոլովով արտահայտված տարբեր պաշտոնների զգացումն իբր մի առանձին ձևական ամբողջություն։ Հին հայցականի կատարած պաշտոնները մենք այժմ մասամբ ուղղականի ձևով ենք արտահայտում, մասամբ տրականի. և քանի որ ուղղականն և տրականը բոլորովին տարբեր ձևեր ունին, ուստի և այդ տարբեր ձևերը մենք չենք կարող իբրև մի ձևական միություն։ Ուղղականի ձևով հայցականը մենք զգում ենք ուղղականի ձևական միության մեջ, իսկ տրականի ձևով հայցականը տրականի ձևական միության մեջ։ Ուրիշ խոսքով հայցականի ձևական զգացումը չկա մեզանում, այլ միայն ուղղականի և տրականի։ Այդ է պատճառը որ մեր աշակերտները գրաբար գրելիս հաճախ հայցական սեռի խնդիրը տրական են դնում, և նույնիսկ ենթակայի համար ը-ով հայցական են գործածում. իսկ հայ գյուղացին երբ ռուսերեն է խոսում և դեռ լավ չգիտե այդ լեզուն, ասում է. он (իրանակ՝ она) любит мне. Ты видел Еленовка? Мы теперь идем Еленовка. Вот это селение называют Еленовка. Его место теперь мой брат пристав. (Նրա տեղն այժմ իմ եղբայրն է պրիստավ) և ուրիշ շատ նմանները։*

Ամփոփեմ եզրակացությունը։

Մի կողմ թողնելով այն, որ մենք այժմ չունինք հին հայցականի կատարած պաշտոնների համար մի ձևական ամբողջության զգացումը. որ մենք չունինք մի միություն կազմող, մի ընդհանուր հայցական հոլով, քանի որ այդ հոլովը երկու տարբեր տեսակի է բաժանված. որ մեր հայցականը միևնույն բառերի համար, թե եզակի և թե հոգնակի. թե որոշյալ թե անորոշ, կիրառությամբ միայն նման է ուղղականին և կիրառությամբ միայն դարձյալ կարող է նման լինել տրականին, և վերջին կիրառությունը շատ տատանվող է. որ եթե ուզենանք էլ՝ ձևաբանության մեջ հոլովների շարքում հայցական հոլով դնել, գործնականորեն այդ ճշտությամբ անել հնարավոր չէ,—մի կողմ թողնելով այս ամենը՝ մենք տեսանք,

1. Պ. Մալխասյանն առանց հերքելու է թողնում այն, որ առանց հատուկ բառաձևի ձևականորեն գոյություն չունի առանձին հոլով. և որ նա առանց ապացուցանելու է թողնում հակառակը, թե առանց հատուկ բառաձևի ձևականորեն գոյություն կարող է ունենալ առանձին հոլով միմիայն նշանակությամբ։

2. Պ. Մալխասյանն ընդունում է, որ մեր աշխարհաբարում հայցականի համար հատուկ բառաձև չկա, այլ կան միայն ուղղականի և տրականի բառաձևերը։

---

* *Այս օրինակները բոլորը կենդանի խոսակցությունից եմ առած։ Մեր աշակերտները սակայն շարունակ այսպիսի սխալներ անում են։ Հետաքրքիր կլիներ այս մասին ռուսերենի վարժապետների դիտողություններն իմանալ և մի վիճակագրություն կազմել։*

Եթե այդպես է, ապա ուրեմն ոչ մի բանի վրա հիմնված չէ նրա եզրակացությունը, թե «ձևականորեն չէ արդարանում հայցական հոլովի վերացումն աշխարհաբարի ստուգաբանության (=ձևաբանության, ձևերի ուսման) դասագրքից»։ Այլ ընդհակառակն՝ նա պիտի ընդունի, որ աշխարհաբարում հայցական հոլովը ձևականորեն գոյություն չունի, այլ միայն կիրառությամբ ուղղականի և տրականի իբրև հայցական. ուստի և կարելի է աշխարհաբարի ձևաբանությունից դուրս ձգել այս հոլովը և պետք է դուրս ձգել, քանի որ՝ չլինելով հայցականի համար ձևերի հաստատուն և որոշ կիրառություն՝ գործնականորեն հնարավոր չէ հոլովների շարքում ճիշտ հայցական հոլով դնել։

Եվ ի՞նչ եք կարծում, պ. Մալխասյանն այս եզրակացությունն արդեն ընդունում է. ինչպես տեսանք, հայցականի համար «կիրառություն» բառը գործածելով. և իսկապես լիովին ընդունում է յուր հոդվածի վերջում, թեպետ դարձյալ կողմնակի կերպով. «Եթե հասուն, քերականական գիտակցություն ունեցողի համար կարելի է դուրս ձգել քերականությունից հայցական հոլովը, եթե (=որովհետև) նա հատուկ ձև չունի՝ տարրական քերականության մեջ, որտեղ աշակերտը առաջին անգամ գաղափար պիտի կազմե հոլովների ու նրանց ֆունկցիաների մասին՝ հայցականի վտարումը միայն վնաս կպատճառէ»։ Ահա թե ինչպես է վերջացնում նա յուր հոդվածը։ Նախ մի կողմնակի նկատողություն. ինչո՞ւ «որովհետև» բառի փոխանակ «եթե» է գրած. չէ՞ որ ինքն ընդունում է, որ հայցականը հատուկ ձև չունի։ Ապա՝ եթե հայցական հոլովը ձևականորեն գոյություն ունենար հայերենում, մի՞թե կարելի էր թեկուզ «հասուն, քերականական գիտակցություն ունեցողի համար» դուրս ձգել այդ հոլովը քերականությունից։ Եթե կարելի է, այդ միայն այն պատճառով, որ այդ հոլովը ձևականորեն առանձին գոյություն չունի։

Եվ այսպես ուրեմն պ. Մ.-ն ինքն՝ յուր հոդվածի վերջում իսկապես ընդունում է, որ հայցական հոլովը ձևականորեն գոյություն չունի հայերենում և որ կարելի է այդ հոլովը դուրս ձգել ձևաբանությունից, թեպետ «հասուն, քերականական գիտակցություն ունեցողի համար»։ Եթե այդպես է, մի անհասկանալի մեծ թյուրիմացություն պիտի համարել ուրեմն նրա եզրակացությունը, թե «ձևականորեն չի արդարանում հայցական հոլովի վերացումն»։

Անշուշտ շատ լուրջ առարկություններ կարելի է անել և նրա վերջին մանկավարժական հայացքի դեմ։ Ինչ որ հասուն, քերականական գիտակցություն ունեցողի համար կարելի է դուրս ձգել քերականությունից, տհաս երեխաների համար հորինած տարրական քերականությունից հենց պե՛տք է դուրս ձգել, որովհետև խակ մտքի գործ չէ մի առանձին գոյություն չունեցող, մի ոչ բառաձև և ոչ ձևերի հաստատուն, որոշ կիրառություն ունեցող հոլով որոշելը և սովորելը միայն ֆունկցիաներով։ Հենց այդ պատճառով մեր և ձեր աշակերտները, երկար ժա-

մանակ, մինչև չեն հասունանում և հոլովների ֆունկցիաներն ըմբռնում, չեն կարողանում հայցականն ուղղականից և տրականից զանազանել և ապարդյուն ժամանակ են կորցնում ու գլուխ տրաքացնում. «Գործնականորեն ու մանկավարժական տեսակետից» ոչ միայն «շատ մեծ վնասներ» չի պատճառիլ հայցականի այդպիսի վերացումը, ինչպես ասում է պ. Մալխասյանը լոկ խոսքով, այլ ընդհակառակն շատ օգուտ կտա. քերականական ուսումը կդյուրանա և որ գլխավորն է՝ ճիշտ կլինի, մեր լեզվի կազմության և պատմության համեմատ։

Ի՞նչ «շատ մեծ վնասներ» է պատճառել արդյոք կոչականի վերացումը հայերինի ստուգաբանությունից, և կամ ներգոյականի վտարումը գրաբարի և արևմտյան աշխարհաբարի քերականությունից, որի մասին չի խոսում պ. Մալխասյանը, որովհետև ինքն էլ չի ընդունել այդ հոլովները։ Եվ ինչո՞ւ ուրեմն հայցականի վերացումը միայն «շատ մեծ վնասներ» պիտի պատճառէ։ Հետաքրքիր կլիներ այդ վնասներից մի երկուսը թված տեսնել։ Բայց մենք հետո էլ կդառնանք նրա այս մանկավարժական հայեցակետին։

Այժմ տեսնենք նրա տեսությունը, թե ինչպես «տեսականորեն չէ արդարանում հայցական հոլովի վերացումը»։

«ՏԵՍԱԿԱՆՈՐԵՆ»

1. «Անկարելի, աններելի է միևնույն հոլովով կոչել իրար հակասող ֆունկցիաները, ինչպես են սկսողի և հանգման, ներգործողի և կրողի, ստացողի և ստացվածի ֆունկցիաները»։

2. Եվ «որովհետև հայցական հոլովը, որքան էլ ձևով նման լինի ուղղականին կամ տրականին՝ բայց ունի բոլորովին տարբեր ֆունկցիա, և ոչ միայն բոլորովին տարբեր, այլ ուղղակի հակադիր ֆունկցիա»,— այն է «հայցական հոլովը... հակադիր, հակասական ֆունկցիա ունի ուղղականի (=անվանականի) նկատմամբ, և այս երկու հոլովները կազմում են գործողության երկու հակառակ ծայրերը» ուղղականը «սկսողի և ներգործողի ֆունկցիաներ ունի, տրականը՝ «ստացողի» իսկ հայցականը «հանգման և կրողի» այլև «ստացվածի»։

Ապա ուրեմն՝ պետք է ձևաբանության (ստուգաբանության) մեջ ընդունել ձևականորեն զատ հայցական հոլով։

Եվ պ. Մալխասյանը մեծ սիրով, նույնիսկ սլաքի տակ դնելով խոսքեր, բացատրում է յուր այս տեսությունը, թե ինչպես ուղղականն ու հայցականը մի կողմից՝ և տրականն ու հայցականը մյուս կողմից՝ «տարբեր» «հակադիր» և «հակասական» ֆունկցիաներ ունին։

Խնդիրն ավելի պարզ դնենք. կարելի՞ է և ներելի՞ է արդյոք «հանգման և կրողի» ֆունկցիաներ ցույց տվող բառերն ուղղական և տրական հոլովով կոչել։ Պ. Մալխասյանն ասում է «աններելի և անկարելի» է։

Նա սլաքի տակ դնում է հետևյալ խոսքը. «Մի որսորդ սպանեց մի աղվես»,— և բացատրում է թե որսորդը սկսողի և ներգործողի ֆունկցիա ունի, ուստի և «որսորդ» ձևը ուղղական կարող է կոչվել և ուղղական է. իսկ աղվեսը հանգման և կրողի ֆունկցիա ունի, ուստի և «աղվես» ձևը չի կարող ուղղական կոչվել, այլ միայն հայցական, «որովհետև անկարելի, աններելի է միևնույն հոլովով կոչել իրար հակասող ֆունկցիաներ»։ Բայց եթե ասենք. «Մի որսորդից սպանվեց մի աղվես»,— անշուշտ սլաքի ուղղությունը դարձյալ որսորդից դեպի աղվեսն է ուղղված. որսորդը դարձյալ սկսողի ու ներգործողի, իսկ աղվեսը դարձյալ հանգման և կրողի ֆունկցիա ունի, և այս չի կարող մերժել պ. Մալխասյանը։ Բայց տեսեք՝ ինչ եղավ. առաջին դեպքում «աղվես», հանգման և կրողի ֆունկցիա ունեցողը հայցական է, իսկ երկրորդ դեպքում նույն «աղվես» ձևը, որ նույն հանգման և կրողի ֆունկցիան ունի, այլևս հայցական չէ, այլ ուղղական։

Ուրեմն՝ ուղղական հոլովը հենց կարող է «ոչ միայն բոլորովին տարբեր, այլ ուղղակի հակադիր ֆունկցիաներ» արտահայտել։ Պարզ է, որ հանգման և կրողի ֆունկցիան միայն հայցականին չէ վերապահված, այլ ուղղական հոլովն էլ կարող է նույնն արտահայտել։ Պարզ է և որ սկսողի ու ներգործողի ֆունկցիան միայն ուղղականին չէ հատուկ, այլև բացառական հոլովն էլ կարող է նույնն ունենալ։

Բայց պ. Մալխասյանն այսքանը դեռ քիչ կհամարի, ուստի շարունակեմ մի քանի օրինակներ էլ բերել։

«Գետինը ծածկվեց ձյունով» (=Գետինը ծածկեց ձյունը)։—Գետինը ուղղական, բայց հանգման և կրողի ֆունկցիա ունի, իսկ ձյունով գործիական, բայց սկսողի և ներգործողի ֆունկցիայով։—Ուրեմն՝ սկսողի և ներգործողի ֆունկցիա ունի և գործիական հոլովը։

«Իմ տեսեալ է զնա» անշուշտ պ. Մալխասյանը սկսողի և ներգործողի ֆունկցիա կտա իմ սեռականին։

«Աստուած ձեռին չզննի» (=զԱստուած ձեռն չզննէ)։ «Աղաչեցաք չելանել նմա յերուսաղէմ»։— Ձեռին և նմա տրականներն ունին չզննի և չելանել բայերի նկատմամբ սկսողի և ներգործողի ֆունկցիա։ Այսպես և բոլոր «ներգործող անձի տրական» ասածները կրավորական բայերի հետ (Der Dativ der thätigen Person beim Passi um), որ գործածական է հունարենում, լատիներենում և մեր գրաբարում, հազվադեպ և աշխարհաբարում։

Առ սովաւ ասեն կեցեալ զնաբուգոդոնոսոր։— Տեսին զՀոգին սուրբ իջանել։ ԶԱրտաշես ասեն առնել գործս մեծամեծս։ Զհայկակ ասեն լինել առ Բելոքոսիւ և ամբոխս իմն արարեալ անխորհուրդս և մեռանել ի նմին։—Անշուշտ պ. Մալխասյանը չի կարող չընդունել, որ դնաբուգոդոնոսոր, զհոգին սուրբ, զԱրտաշես, զհայկակ հայցականները կեցեալ, իջանել, առնել, լինել, արարեալ, մեռանել բայերի նկատմամբ

ներգործողի կամ սկսողի ֆունկցիա ունին, բայց միաժամանակ և ա-սեն, տեսին բայերի նկատմամբ կրողի ֆունկցիա։ Մյուս կողմից զԱրտաշես, զՀայկակ հայցականները առնել, արարեալ բայերի նկատմամբ ներգործողի, սկսողի ֆունկցիա ունին, իսկ գործս, ամբոխս հայցականները նույն բայերի նկատմամբ կրողի ֆունկցիա ունին։ Երկու հայցական ուրեմն մի բայի հետ՝ մեկը կրողի, մյուսը ներգործողի ֆունկցիայով։ Այսպես և բոլոր «անորոշ դերբայի հետ հայցական» ասածները (accusativus cum infinitivo), *որոնք իբրև ենթակա դրվում են անորոշ դերբայի հետ և իբրև սեռի խնդիր՝ ասեմ, լսեմ, պատմեմ, տեսանեմ և այլն բայերի հետ,— մի գործածութիւն, որ շատ սովորական է ի միջի այլոց և հայերենում և որ իզուր տեղը հունաբանութիւն են համարում։ Բայց կա «անորոշ դերբայի հետ հայցականի» մի գործածութիւն ևս, որ ենթակա է լինում, և որ իսկապես օտարաբանութիւն է հայերենում. դրա մի օրինակը միայն կա Խորենացու մեջ «Սիրելի էր ինձ...առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել»։* Constat Ciceronem oratorem fuisse maximum = *Յայտնի է զԿիկերոն լինել հռետոր մեծագոյն։*

Այսպես ուրեմն սկսողի և ներգործողի ֆունկցիա կարող են ունենալ ոչ միայն ուղղականը, այլ և սեռական, տրական, բացառական, գործիական և նույնիսկ հայցական հոլովները. իսկ հանգման և կրողի ֆունկցիա կարող են ունենալ և ուղղական և հայցական հոլովները։ Բայց մենք դեռ շարունակենք։

Պ. Մալխասյանը բերում է սլաքի տակ և այսպիսի օրինակ, «Երեխան գնաց պարտեզ»։ Անշուշտ նա սխալ է բացատրում, քե **պարտեզ** *հանգման և կրողի ֆունկցիա ունի։* **Պարտեզ** *երբեք կրող չէ, այլ ցույց է տալիս միայն գործողության նպատակակետը* (Endpunkt), *որին ուղղվում է գործողությունը. ուրեմն միայն, պ. Մալխասյանի գործածած բառով ասենք, հանգման ֆունկցիա ունի։ Ես էլ մի օրինակ բերեմ. «Երեխան մոտեցավ պարտեզին»։ «Երեխան օգնեց ընկերին»։ Անշուշտ սլաքի ուղղությունը ցույց է տալիս, որ «պարտեզին», «ընկերին» հանգման ֆունկցիա ունին, բայց դրանք իհարկե հայցական չի անվանիլ պ. Մալխասյանը։ Հանգման ֆունկցիա ունի ուրեմն և տրականը։*

«Տիգրանը հաղթեց Ստեփանին»։
«Տիգրանը վնասեց Հայկին»։
«Տիգրանը վնասեց Հայկի գործին»։

Սլաքի ուղղությունն իհարկե ցույց է տալիս, որ **Ստեփանին, Հայկին, գործին** *բառերը, հանգման և կրողի ֆունկցիա ունին, այն էլ իբրև սեռի խնդիր, ուստի կրավորական ձևով լինում են՝*

«Ստեփանը հաղթվեց Տիգրանից»։
«Հայկը վնասվեց Տիգրանից»։
«Հայկի գործը վնասվեց Տիգրանից»։

Բայց ի՞նչ կասե արդյոք պ. Մալխասյանը. Ստեփանին, Հայկին, գործին սեռի խնդիրները, որ կրողի ֆունկցիա ունին, հայցակա՞ն են, թե՞ տրական։ Բայց անենք պ. Մալխասյանի «Համաձայնությունը» եր. 42. և կգտնենք գրած. «կան մի քանի բայեր, որոնք այժմ ներգործականի նշանակություն ունին, բայց խոսքի մեջ այն առարկան, որի վրա ընկնում է նոցա գործողությունը, դրվում է ոչ թե հայցական հոլով, ինչպես սպասելու էր. այլ տրական հոլովով։ Այս բայերն են յաղթել, տիրել, պաշտպանել։ ... Իսկ ստուգաբանել բայը սեռի խնդիր առնում է թե հայցական և թե տրական հոլովներով»։ Կարող եմ ասել, որ սեռի խնդիրը տրական առնող բայերը գրաբարում միայն այդ չորսը չեն, այլ թվով բավական շատ են, ինչպես՝ եպերել, անիծանել, հովուել, ազդել, աղաչել, իշխել, օգնել և այլն, որոնք բոլորը հենց գրաբարում (և ոչ թե այժմ) ներգործական բայ են և ունին կրավորական. ինչպես՝ բարկությունն իշխի ի բանէ և իշխէ ցանկութեանն։ Յոմանց խաբեցայ իբրև զյիմար և յոմանց տիրեցայ իբրև զտկար և այլն։ Եվ այդ բայերը միայն տրական չեն առնում սեռի խնդիրը, այլ երբեմն հայցական։ Աղաչեցուք զԱստված։— Միայնոյ քեզ մարդասիրի աղաչեմ և այլն։

Ուրեմն պ. Մալխասյանն ընդունում է, որ գրաբարում ներգործական բայերի սեռի խնդիրը, որ ճանգման և կրողի ֆունկցիա ունի, դրվում է տրական։ Այս իհարկե «անկարելի» «աններելի» չէ. բայց երբ ես ասում եմ, թե աշխարհաբարում սեռի խնդիրը, երբ անձի անուն է, դրվում է նաև տրական, այդ «աններելի, անկարելի» է, որովհետև սեռի խնդիրը կրողի ֆունկցիա ունի, իսկ կրողի ֆունկցիան հայցական հոլովով պիտի լինի և ոչ տրական, որ ստացողն է։ Բայց բանանք Այտընյանի քերականությունը և կտեսնենք գրած. «քանի մը ներգործական բայեր հայցականի տեղ տրական հոլով խնդիր սեռի կառնուն. և են՝ հաղթել, աղաչել, օգնել, սպասել, տիրել, խնայել, հետևիլ, զարնել, նայել և այլն։ Այսպես Աղեքսանդր պարսից հաղթեց։ Ճպուռը կաղաչեր մրջնոյն որ ցորեն փոխ տա։ Կուզե՞ք որ ձեզի օգնեմ։ Հինգ ամիս իրեն սպասեցինք։ Բաղաամ կը զարներ իշուն թե ինչո՞ւ չես քալեր»։— Նույնը կգտնենք և Պալասանյանի քերականության մեջ։ Ուրեմն ի՞նչ պիտի ասել. կարելի՞ և ներելի՞ է արդյոք հայերենում սեռի խնդիրը, որ կրողի ֆունկցիա ունի, տրական հոլովով դնել՝ թե չէ՞։

«Եւ նորա ընդ հանել ոգւոցն աղաղակեաց և ասէ. իմա՛ ընդ հանել նորա զոգիսն» (Բագրատ., Քեր., եր. 292 հտն.)։ Ահա մի խոսքի մեջ մի բայի հետ երկու սեռական, առաջին՝ նորա ներգործողի ֆունկցիա ունի, իսկ երկրորդը՝ ոգւոցն կրողի ֆունկցիա, այլն էլ սեռի խնդրի իմաստով։ Նույն կերպ և Գամառ-Քաթիպայի հետևյալ տողի մեջ «Չի դադրիլ մարդոց քու գովասանքը» երկու սեռական կա «գովասանք» բայական անվան հետ. մարդոց սեռականը ներգործողի ֆունկցիայով, իսկ ֆու սեռականը կրողի ֆունկցիայով։

Այսպես ուրեմն հանգման և կրողի ֆունկցիա ցույց են տալիս ոչ միայն հայցականը, այլև ուղղականը, սեռականն ու տրականը։ Տրականը նույնիսկ իբրև ներգործական բայերի սեռի խնդիր։ Բայց մենք շարունակենք։

Պ. Մալխասյանը բերում է հետևյալ օրինակները. «Քեզ կտամ մի գիրք». «Քեզ կտամ քո սիրած տղին» և բացատրում՝ «Առաջին օրինակում «քեզ»-ը ստացող է, երկրորդ օրինակում՝ ստացված, երկու դեպքում էլ կրողի դերում»։— Նախ նկատեմ, որ առաջին օրինակում «քեզ»-ը երբեք կրողի դերում չէ, այլ միայն ստացողի դերում. կրողի դերում գիրն է։ Բերեմ մի օրինակ էլ ես. «Ստեփանի գիրքը կորավ». «Տիգրանի տնից հեռացանք»։— Ստեփանի, Տիգրանի բառերի համար իհարկե տրական չի ասիլ պ. Մալխասյանը, այլ սեռական. բայց այդ սեռականները ստացողի դերում են. իսկ գիրը, տնից բառերը, որ տրական չեն, այդ սեռականների նկատմամբ՝ ստացվածի դերում են։

Այսպես ուրեմն ստացողի ֆունկցիան միայն տրականին չէ հատուկ, այլև սեռականին, իսկ ստացվածի ֆունկցիան միայն հայցականին չէ տրված, այլև բոլոր հոլովներին։

Ես էլ չեմ ուզում շարունակել։ Պ. Մալխասյանի տեսության խախուտ ու անպետք լինելն արդեն լի ու լի պարզվեց բերած օրինակներից։ Ինքը պ. Մալխասյանը կրողի ֆունկցիա տալիս է թե ուղղականին և թե տրականին։

Բայց տեսնենք ուրիշ բաներ։

* * *

Երբ պ. Մալխասյանը բերում է հետևյալ օրինակները. «Մի որսորդ սպանեց մի աղվես». «Քեզ կտամ քո սիրած տղին». և ասում թե որսորդը ներգործողն է, իսկ աղվեսը կրողը, և թե ձեզ կրողն է, իսկ տղին ստացողը,—ինչո՞վ է ապացուցանում այդ։ Ես հակառակը կպնդեմ և կասեմ, թե այդ խոսքերն այնպես պետք է հասկանալ, թե սպանողը, ուրեմն ներգործողը, աղվեսն է իսկ սպանվողը, ուրեմն կրողը, որսորդն է, կամ ձեզ ստացողն է, իսկ տղին ստացվածը, կրողը։ Կարելի՞ է հերքել այս։ Քերականությունը, լեզուն մեզ որոշ բան ասո՞ւմ է այդ մասին, թե՞ խոսքը երկդիմի է, և այս կարելի է հասկանալ և այն։ Ով մենք այդ երկու խոսքի բուն իմաստը հասկանում ենք ոչ թե քերականությունից, հոլովներից, այլ մի ուրիշ բանից, հայացքից, դրությունից և այլն, որ քերականության հետ գործ չունի։ Միևնույն խոսքի մեջ անգամ միևնույն բառը միևնույն ձևով կարող է և ներգործող և կրող հասկացվել. Գա՛ր կերավ գայլը, Ձյունը ծածկեց գետինը, Ծառը շարժեց քամին և այլն խոսքերի մեջ եթե մենք ներգործողի դերը տալիս ենք գայլին, ձյանը, քամուն, իսկ կրողի դերը՝ գառանը, գետնին, ծառին, այդ ոչ թե քերականությունից ենք իմանում, այլ մի ուրիշ բանից. այն որ գիտենք

թե գառը գայլ ուտել չի կարող, գետինը ձյուն ծածկել չի կարող և ոչ ծառը քամի շարժել։ Բայց եթե ասենք՝ Փայտը կոտրեց քարը. Հողը ծածկեց ձյունը,— կարո՞ղ եք իմանալ, ո՛րն է կոտրողը և որը կոտրվածը, որը ծածկողը և որը ծածկվածը։

Գերմանացին երբ բերանը բանում է և ասում einen Fuchs, dich, *կամ ռուսը՝* лисицу, тебя, *լսողն առանց ուրիշ բառի էլ իսկույն հասկանում է որ կրողի ֆունկցիա ունեն այդ բառերը, իսկ հայերենում մի աղվես ձևը մենակ դեռ ոչինչ որոշ չի ասում. կարող է և կրող և ներգործող լինել։ Նույնպես և երբ միայն ես ենք ասում, նույնիսկ բայի հետ՝ «քեզ տվի», լսողը դեռ որոշ ոչինչ չի հասկանում, կարող է և կրող խնդիր և ստացող լինել։ Ինչի՞ց է առաջանում այս, եթե ոչ նրանից, որ մեր լեզուն տրականի և հայցականի, ուղղականի և հայցականի համար առանձին հոլովական ձևեր չունի և մենք տրական և ուղղական, ուղղական և հայցական տարբերում ենք ոչ թե ձևով, այլ խոսքի մեջ կատարած պաշտոնով, կիրառությամբ։*

Կոչական հոլովը նույնիսկ յուր ֆունկցիան արտահայտում է գոնե շեշտով, իսկ հայցականը և ոչ մի արտաքին ձևով. և ավելի շուտ կոչականը կարելի էր շեշտի պատճառով իբրև առանձին հոլով դնել քան հայցականը։ Եվ պ. Մալխասյանը հետևողական լինելու համար պիտի պնդեր այդ մասին, թե կոչականը ձևականորեն առանձին հոլով է, որովհետև կա դրա ֆունկցիան, «բոլորովին տարբեր ֆունկցիան». բայց նա խոհեմություն է համարել կոչական բառն էլ չի հիշել յուր հոդվածի մեջ, որովհետև ինքն էլ վերացրել է այդ հոլովը և ամենևին երկյուղ չի կրել, թե «կը կորցնենք այն բոլորը, ինչ որ քերականությունը պիտի տա—գիտակցությունը այդ բառերի տարբեր ֆունկցիաների, նրանց տարբեր դերերի ճանաչողությունը»։

Բայց մենք տեսանք թե միևնույն հոլովն ինչպես տարբեր և նույնիսկ հակադիր ֆունկցիաներ է արտահայտում։ Հանգիստ թողնենք ուրեմն հոլովների թիվը ձևականորեն որոշելու ժամանակ այդ «ֆունկցիաները», այդ ձևական գաղափարների, հարաբերությունների արտահայտությունը հոլովներով։ Աշխարհի մեջ հարաբերությունները շատ են, իսկ հոլովները թվով սակավ են, որովհետև հոլովական ձևերը սակավ են։ Բայց սակավաթիվ հոլովական ձևերով հնար է լինում բազմաթիվ հարաբերություններ արտահայտել, որովհետև մի հոլովը ոչ միայն շատ համանման, այլ և բոլորովին տարբեր, և նույնիսկ «հակադիր» ֆունկցիաների արտահայտիչ կարող է լինել՝ նայելով թե խոսքի մեջ ինչ դրությամբ է, ինչ բառի հետ։ Օրինակ՝ «Հարցից զձեզ բան մի», «Ջմահ աղուիսու սպանից զքեզ» խոսքերի մեջ հարկավ տարբեր ֆունկցիա ունին զձեզ և բան, զմահ և զքեզ հայցականները, որոնք միևնույն բայի խնդիրներն են։ Եվ ոչ միայն այդ. միևնույն բառը միևնույն ձևով, ինչպես տեսանք, միաժամանակ կարող է կրկին, ոչ միայն տարբեր, այլ և հակադիր ֆունկցիաներ արտահայտել, օրինակ՝ «Պառա-

վի հավը կորավ» խոսքի մեջ հավը բառը պատավի նկատմամբ ստացվածքի ֆունկցիա ունի, իսկ կորավ բառի նկատմամբ ենթակայի ֆունկցիա. «Տեսին զՀոգին տուրը իջանել» խոսքի մեջ զհոգին հայցականը տեսին բայի նկատմամբ հանգման և կրողի ֆունկցիա ունի, իսկ իջանել բայի նկատմամբ սկսողի և ներգործողի, կամ, ինչպես Այտնյան և շատ քերականներ դնում են, ենթակայի։

Ֆունկցիան ուրեմն ինքը դեռ մենակ ոչինչ չի ասում մի հոլովի ձևականորեն առանձին գոյության մասին, եթե ֆունկցիան առանձին բառաձևով չի արտահայտված։ Եթե տարբեր և հակադիր ֆունկցիաների պատճառով միևնույն հոլովական ձևը նորանոր հոլովների վերածեինք, այն ժամանակ ոչ թե մի քանի, այլ շատ շատ հոլովներ պիտի ունենայինք։ Ներգործող ենթակայի, կրող ենթակայի և ստորոգյալի ֆունկցիաներն, օրինակ, բոլորովին տարբեր են և առաջին երկուսը նույնիսկ «հակադիր». ուրեմն պե՞տք է մի ուղղական=անվանական հոլովը բաժանեինք երեքի՝ կրող ենթակայական, ներգործող ենթակայական և ստորոգելիական հոլովներ։ Բայց այդպես չենք վարվում, որովհետև ընդունում ենք, որ բազմազան և նույնիսկ հակադիր ֆունկցիաներ կարող են մի հոլովով արտահայտվել, կարող են նույնիսկ ոչ թե հոլովով արտահայտվել, այլ որևէ ձևական բառով (Formwort). ինչպես են նախդիրները և այլն։

Պ. Մալխասյանի տեսությունն ուրեմն, նրա առաջին նախադրյալը, թե անկարելի, աններելի է միևնույն հոլովով կոչել տարբեր և հակադիր ֆունկցիաները, բոլորովին անպե՛տք է մեր քերականության համար։

Ապա դարձյալ բոլորովին ճիշտ չէ նաև երկրորդ նախադրյալը թե «Հայցական հոլովը... հակադիր, հակասական ֆունկցիա ունի ուղղականի (=անվանականի) նկատմամբ, և այս երկու հոլովները կազմում են գործողության երկու հակառակ ծայրերը»։—Ոչ թե ուղղական և հայցական հոլովներն ընդհանրապես հակադիր են իրար, այլ ներգործողի և կրողի ֆունկցիաներն են իրար հակադիր, ներգործող ենթական և կրող առարկան։ Ուղղական ու հայցական հոլովները իրրև հոլով հակադիր կլինեին միայն այն ժամանակ, երբ այդ երկու հոլովները միայն մի մի ֆունկցիայի արտահայտիչ լինեին, մեկը միայն ներգործող ենթակայի, մյուսը միայն կրող առարկայի։ Բայց ուղղականը=անվանականը ոչ միայն ներգործող ենթակայի հոլով է, այլ և կրող ենթակայի, այլ և ստորոգյալի. իսկ հայցականը բացի կրող առարկայի հոլով լինելուց, այլ և ուրիշ հարաբերություններ է ցույց տալիս, ինչպես ներգործող, տեղի, ժամանակի, չափի ու քանակի պարագաներ և այլն։ Արդ եթե որոշ ֆունկցիաներն են հակադիր և ոչ թե հոլովները, երբ մենք ուղղական=անվանական հոլով ենք ասում, չենք հասկանում անպատճառ միայն ներգործողի ֆունկցիա, և ոչ էլ հայցական հոլովով անպատճառ միայն կրողի ֆունկցիա չենք հասկանում,—էլ

ինչո՞ւ պիտի «անկարելի և աններելի լինի միևնույն ճոլովով կոչել իրար հակադիր ֆունկցիաները», այսինքն ուղղականին վերագրել կրողի ֆունկցիա։ Այո, աններելի է միևնույն անունով կոչել երկու հակադիր ֆունկցիաներ. աններելի է շփոթել ներգործող և կրող, ներգործող ենթակա և կրող առարկա, այսինքն ներգործողին կրող ասել կամ ընդհակառակն։ Բայց բնավ աններելի չէ ասել, որ ուղղականը թե ներգործողի և թե կրողի ֆունկցիայի արտահայտիչ կարող է լինել,—ինչպես և լինում է իրոք, և այս ընդունում է ինքը պ. Մալխասյանը,— և կամ տրականը կարող է թե ստացողի՝ թե կրողի ֆունկցիա արտահայտել,— ինչպես լինում է իրոք, և այս ևս ընդունում է պ. Մալխասյանը։

Եվ իսկապես, եթե ուղղականը կարող է մի դեպքում իբրև կրող ենթակա՝ կրողի ֆունկցիա արտահայտել, ինչո՞ւ նույն ուղղականը չպիտի կարողանա մի ուրիշ դեպքում դարձյալ նույն կրողի ֆունկցիան արտահայտել իբրև կրող առարկա։ Եվ այդ ոչ միայն աններելի և անկարելի չէ, այլ հենց մեր մտածողությունը շատ բնական է գտնում այդ. որովհետև կրող ենթական և կրող առարկան ի՝ անց իրական նշանակությամբ կատարելապես միևնույնն են։ «Մի աղվես (կրող առարկա) սպանեցին», և «Մի աղվես (կրող ենթակա) սպանվեցավ» խոսքերը իմաստով բնավ չեն տարբերվում իրարուց. երկու դեպքում էլ աղվեսն իրականության մեջ բոլորովին նույն վիճակն ունի և նույն կրողն է։ Եթե «Մի աղվես սպանվեցավ» խոսքի մեջ՝ «աղվես» ձևն, որ կրողն է ցույց տալիս, ուղղական ենք կոչում,— ուստի և ես բնավ անտրամաբան չեմ գտնում, որ «Մի աղվես սպանեցին» խոսքի մեջ ևս նույն կրող աղվեսը, որ միևնույն ձևով է դրված, դարձյալ ուղղական կոչվի։

* * *

Ինչի՞ց է առաջանում պ. Մալխասյանի տեսության անպետք լինելը, որ, մենք տեսանք, գործնականի մեջ չի արդարանում։ Ահա թե ինչից։ Նա մեր հոլովների նշանակությունը հիմնում է յուր տրամաբանական դատողության վրա և ոչ թե տեսնում այնպես, ինչպես որ կան իրոք։ Ահա թե ինչ է գրած Heyse*-ի քերականության 25-րդ տպագրության մեջ (եր. 117) հոլովների մասին եղած մի ծանոթության մեջ.* «հոլովների թիվն ու նրանց կիրառությունն *ի մասնավորի՝ բոլոր լեզուների մեջ միակերպ հաստատուն չէ, որովհետև նրանց* զանազանություն և նրանց նշանակության ու կիրառության ծավալը հիմնված է ոչ թե մտածողության որոշ կերպով տարբերվող հարաբերությունների տրամաբանական անհրաժեշտության վրա, այլ արդյունք է լեզվի բնական զարգացման, *որը սկզբնապես զգայարանական հայեցողության տարբերությունները* (Sinnliche Anschauungsverhältnisse) *տարբերել է այդպիսի բառաձևերով և ապա այդ բառաձևերը շնորհիվ փոխաբերական, հենց այդ պատճառով հաճախ տատանվող կիրառության՝ դարձրել է արտահայտություն տրամաբանական հարաբերությունների։*

Ուստի համաձայն միևնույն հարաբերությունը զանազան լեզուների մեջ զանազան ձոլովներով է արտահայտվում, *որովհետև այդ* հարաբերության ձևերը զանազան հայեցողության ձևերի (Anschauungsformen) տակ են ըմբռնվում: *Ուստի դարձյալ մի քանի լեզու պակաս, ուրիշներն ավելի հոլովներ են առաջ բերել, նայելով թե այդ լեզուները մի՛ թեման ձևը միևնույն հայեցողության տակ ըմբռնած շա՛տ հարաբերության ձևերի արտահայտություն են դարձրել, թե՛ այդ հարաբերության ձևերը արտահուստ ևս տարբեր թեման ձևերով զանազանում են»:—*

Ահա թե ինչպես է ըմբռնում մի գերմանացի քերական հոլովները, բոլորովին հակառակ պ. Մալխասյանի տեսության, որ ուզում է հոլովների թիվը ու նրանց կիրառությունը հիմնել յուր անձնական տրամաբանական դատողության վրա, գրելով թե աննկարելի, աններելի է միևնույն հոլովով կոչել տարբեր ու հակադիր ֆունկցիաները: Պ. Մալխասյանին միայն կկրկնեմ, թե ինչ որ մի լեզվի մեջ աններելի և անկարելի է, հաճախ մյուսի մեջ կարելի և ներելի է, որովհետև «հոլովների զանազանությունը, նրանց նշանակության և կիրառության ծավալը հիմնված չէ տրամաբանական անհրաժեշտության վրա, այլ արդյունք է լեզվի բնական զարգացման»: Օրինակ՝ մեր աշխարհաբարում աններելի է բացառական, գործիական և ներգոյական հոլովները շփոթել միմյանց հետ և այդ երեք բոլորովին տարբեր հոլովներից շինել մի ընդհանուր հոլով՝ բացառական: Մեր լեզուն՝ տեղից (շարժվել), եղջյուրներով (պաշտպանվել), ամբողջ Հռոմում և այլն բոլորովին տարբեր հարաբերությունները տարբեր էլ բառաձևերով է արտահայտում և աններելի կլինի, եթե մեկը մեր գործիական և ներգոյական հոլովները մի կողմ թողնի և նրանց տեղը գործածի բացառական հոլովը. բայց գրեթե այն ամենը, որ մենք այս երեք հոլովներով ենք արտահայտում, լատիներենում մի բացառական, ablativus *հոլովով է ասվում: Իսկ հունարենում այս հոլովն էլ չկա և գրեթե ամենը ինչ որ լատիներենում բացառականով է ասվում, հունարենում արտահայտվում է երկու ուրիշ հոլովներով՝ սեռականով և տրականով: Ինչո՞ւ է այսպես: Որովհետև լատիներենի զարգացումը այնպես է առաջ ընթացել, որ այս լեզվի մեջ գործիական և ներգոյական հոլովները դուրս են ընկել և սրանց ֆունկցիան կատարում է բացառական հոլով, իսկ հունարենում այս լատիներենի բացառականի պաշտոնը սեռականն ու տրականն են կատարում. բայց դրա համար լատիներենի մի բացառական հոլովը, մի ձևը չեն դարձնում երեք հոլով. և ոչ հունարենի երկու հոլովից, սեռականից ու տրականից մի նոր հոլով շինում, այլ շատ շատ՝ պատմական քերականության վերաբերյալ մի ծանոթություն են դնում: Վերցրեք թեկուզ Նիկիֆորովի քերականությունը և շարահյուսության մեջ կգտնեք հետևյալը. «Բացառականի նշանակությունները շատ ընդարձակ են, որովհետև այս հոլովը բացի իր սկզբնական նշանակությունից*

գործ է, ածվում նաև երկու կորած հոլովների (գործիականի և ներգոյականի) նշանակությամբ։ Ուստի զանազանում են 1. բուն բացառական. 2. բացառական, որ փոխանակել է կորած գործիականին (ablativus instrumentalis) և 3. բացառական, որ փոխանակել է կորած ներգոյականին (ablativus locativus)*»։

Լատիներենի դուստր հին ֆրանսերենում պահվել է միայն երկու հոլով՝ ուղղական և հայցական։ Ուղղականը նաև կոչականի պաշտոն է կատարում, իսկ հայցականը մյուս հոլովների տեղ է բռնում, սովորաբար նախդրով. անձի անունների համար սակայն հայցականը առանց նախդրի ևս գործ է ածվում նաև կորած սեռականի և տրականի պաշտոնով. ինչպես՝ li rei gonfanoniers=թագավորի դրոշակակիրը, բառացի զթագաւորն դրօշակիր. L'ienseigne Charle=մարտագոչ գկարոլոս փխ. Կարոլոսի. Dieu porofrit lo guant=նա Աստուծուն է մեկնում ձեռնոցը, բառացի՝ զԱստուած կառկառէ զձեռնոցն. ne placet Dieu=հաճելի չէ զԱստուած փխ. Աստուծոյ**։ Անշուշտ պ. Մալխասյանը սիտի ասեր «անկարելի և աններելի» է շփոթել հայցականը, «հանգման և կրողի» հոլովը, սեռականի հետ, որ ստացողն է ցույց տալիս և սեռականի տեղ հայցական դնել. աններելի է շփոթել հայցականը տրականի հետ և տրականի փոխանակ, որ ստացողն է, դնել հայցական որ ստացվածն է. բայց հին ֆրանսերենն այդ աններելին կարելի է համարել և հայցականին թույլ է տվել սեռի խնդրի հետ միաժամանակ և սեռականի և տրականի պաշտոն կատարել. և ֆրանսիացի լեզվաբանները, իրենց լեզվի պատմությունն ի նկատի ունենալով՝ այդ մի հայցական հոլովը երեք հոլով չեն շինում, այլ այն են միայն ասում, թե հայցականը գործ է ածվում նաև սեռականի ու տրականի ֆունկցիայով։

Այս միևնույն զարգացման երևույթը տեսնում ենք և մեր հայցականի նկատմամբ, ուստի և միևնույն կերպ պիտի վարվենք մեր այս հոլովի համար։ Իսկ ի՞նչ է այդպես վարվելու հիմքը։ Ահա թե ինչ է գրած մի ուրիշ տեղում (եր. 363) վերը հիշված Հայզեի քերականության մեջ. «Ամեն քերականական խնդիրներ միայն պատմական տեսակետից դիտելով՝ բավարար լուծում կստանան, և լոկ տրամաբանական դատողություններ (Erörterung) լեզվի կյանքի վրա միայն բռնություն գործ կդնեն»։ Այս հայեցակետը պիտի ունենալ ահա մեր հայցականի խնդիրը լուծելու համար։

Պ. Մալխասյանն, ինչպես մի անգամ դիտեցի, այս պատմական տեսակետը բնավ չունի նկատի և լռությամբ է մատնում իմ գրածն այդ մասին. նա մեր աշխարհաբարի հայցական հոլովն ուզում է հիմնել միայն իր տրամաբանական պահանջի վրա։ Մեր լեզվի պատմությունը

---

* *В. Никифоров*, Латинская грамматика по Штегману, Москва, 1890. եր. 156 հան.։

** Extraits de la Chansen de Roland, par Gaston, Paris. 1896, եր. 45 հան.։

ական ասում է, որ «հայցականացուցիչ տարրը» մեռել է, իր հետ թաղելով և հայցականի ձևական հոլովը. «հայցականացուցիչ տարրի», հայցական հոլովի տեղն անցել է նախ «ուղղականացուցիչ» տարրը, ուղղական հոլովը, որի նշանակությունն այսպիսով ընդարձակվել է, «որովհետև այս հոլովը բացի իր սկզբնական նշանակությունից գործ է ածվել նաև երկու կորած հոլովների», կոչականի և հայցականի նշանակությամբ, ճիշտ ինչպես լատիներենում բացառականը կորած գործիականի և ներգոյականի նշանակությամբ, և հին ֆրանսերենում հայցականը կորած սեռականի և տրականի պաշտոնով։ Ուստի և ինչպես լատիներենում մի բացառական հոլով են դնում, հին ֆրանսերենում մի հայցական, և շարահյուսության մեջ միայն բացատրում բացառականի նշանակությունները և թե նա գործ է ածվում նաև կորած գործիականի և ներգոյականի իմաստով, այսպես և մենք մի ուղղական հոլով պիտի դնենք և շարահյուսության մեջ իբրև մի պատմական ծանոթություն ասենք, թե ուղղականը ընդարձակ նշանակություններ ունի. որովհետև գործ է ածվում 1. իբրև անվանական. 2. իբրև կոչական. 3. իբրև հայցական։

Ապա դարձյալ մեր լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ հայցականի դուրս ընկնելուց և ուղղականի նրա տեղը բռնելուց զատ՝ արեվելահայ աշխարհաբարում տրականն էլ է սկսել փոխանակել հին հայցականին, հատկապես կրող առարկայի համար,— մի զարգացում որ դեռ վերջնական կերպարանք չի ստացել և դեռ օրեցօր ընդարձակվում է,— ապա ուրեմն մեր աշխարհաբարի քերականության մեջ պիտի ասենք, թե տրականն ևս գործ է ածվում նաև հին հայցականի նշանակությամբ։

Ահա թե ինչ է ասում մեր լեզվի պատմությունը։ Մեր լեզուն ուրեմն իր բնական զարգացման ընթացքում կորցնելով հայցական հոլովը՝ ուղղականի, երբեմն նաև տրականի ձևերը դարձրել է արտահայտություն և հին հայցականի ցույց տված հարաբերությունների, և կարիք չի զգացել հին հայցականի «այդ հարաբերության ձևերը արտաքուստ ևս տարբեր թեքման ձևերով զանազանելու»։ Նա բավականացել է նախ ուղղականով, ապա ուղղականով և տրականով։ Իսկ պ. Մալխասյանը բոլորովին անտես անելով այս՝ ասում է. ձևականորեն հայցական հոլով պիտի ընդունենք, որովհետև անկարելի, աններելի է միևնույն հոլովով կոչել բոլորովին տարբեր, հակադիր, իրար հակասող ֆունկցիաները, ինչպես են ներգործողի և կրողի ֆունկցիաները։ Ուրիշ խոսքով նա ուզում է յուր «լոկ տրամաբանական դատողություններով բռնություն գործ դնել մեր լեզվի կյանքի վրա»։ Բայց բարեբախտաբար լեզուն այդ լոկ դատողություններին մտիկ չի տալիս, նա յուր պատմական ճանապարհով է առաջ գնում։ Թե որքան լեզուն ուշադրություն չի դարձնում այդ դատողությանը, այդ մենք տեսանք. բայց նույնիսկ պ. Մալխասյանն ինքն էլ ուշադրություն չի դարձնում յուր ասածին։ Ահա

թե ինչպես։ «Որսորդին սպանեց մի աղվես» և «Որսորդից սպանվեց մի աղվես» խոսքերից առաջինի մեջ աղվես ներգործող է, իսկ երկրորդի մեջ նույն բառը նույն ձևով կրող է, և պ. Մալխասյանը գոնե ինքը յուր տեսությանը հետևելու համար չէր կարող այդ տարբեր և իրար «հակասող», կրողի և ներգործողի ֆունկցիաները «միևնույն հոլովով կոչել». բայց հավատացած եմ, որ նա այդ «աններելի և անկարելի» բանն անում է և այս երկու դեպքում էլ կրող և ներգործող «աղվեսն» ուղղական է կոչում։ Ահա թե որտեղ է հակասությունը, և ի՞նչ վիճակ կստանար քերականությունը, եթե աշխատեինք այդ «կրողի» և «ներգործողի» տեսությունը պահել։— Բայց այդ թողնենք. անցնենք պ. Մալխասյանի գործնական և մանկավարժական տեսակետներին։

«ԳՈՐԾՆԱԿԱՆՈՐԵՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՐԵՆ»

Պ. Մալխասյանը գրում է. «Եթե «մի որսորդ սպանեց մի աղվես». «կնիկը շունր տարավ» խոսքերում, որսորդ, աղվես, կնիկը, շունը, ըստ պ. Աբեղյանի կոչենք ուղղական հոլով, իսկ «քեզ կտամ մի գիրք», «քեզ կտամ քո սիրած տղին» խոսքերում «քեզ»-ը կոչենք տրական հոլով, ի՞նչ կշահենք.— այն նշանավոր գիտակցությունը, թե «որսորդ և աղվես», «կնիկը և շունը» ձևով իրար նման են, «քեզ=քեզ», այսինքն մի բան, որ առանց քերականության և առանց ուսուցչի էլ երեխան գիտե, և գիտե շնորհիվ այն բանի, որ քերականություն չգիտե։ Բայց ի՞նչ կկորցնենք — կկորցնենք այն բոլորը՝ ինչ որ քերականությունը պետք է տա—գիտակցությունը այդ բառերի տարբեր ֆունկցիաների, նրանց տարբեր դերերի ճանաչողությունը»։

Բայց ի՞նչ է կարծում պ. Մալխասյանը, արդյոք երբ ասում ենք՝ «Պառավի հավը ձու ածեց». «Քեզ կտամ մի գիրք»,— մի՞թե երեխան առանց քերականության և առանց վարժապետի չգիտե, թե ձու ածողը հավն է և ոչ թե պառավը. թե հավը պառավինն է և ոչ պառավը հավինը. թե ածածը հավը չէ, այլ ձուն է.— թե **ես** ստացողն է ցույց տալիս և ոչ թե ստացվածը. թե **գիրք** ստացվածն է և ոչ թե ստացողը։ Մի՞թե երեխան առանց քերականության չի հասկանում «այդ բառերի տարբեր ֆունկցիաները» չի ճանաչում նրանց տարբեր դերերը։ Եթե այդպես լիներ, մարդիկ առանց քերականություն սովորելու իրար չէին հասկանալ։— Ապա եթե երեխան առանց վարժապետի հասկանում է, որ «որսորդ և աղվես», «կնիկը և շունը» ձևով իրար նման են (թեպետ և ես կասկածում եմ, թե երեխան ինքն իրեն հաշիվ տա այդ ձևերի մասին և ինքն իրեն հասկանա թե դրանք ձևով նման են), և որ «քեզ=քեզ» է (այս կհասկանա երեխան),— ուստի այդ չպիտի սովորեցնենք ըստ պ. Մալխասյանի. մյուս կողմից՝ նա առանց վարժապետի հասկանում է նաև բառերի տարբեր դերերը խոսքի մեջ, ուրեմն ա՞յդ ինչու պիտի սովորեցնենք։ Բայց այսպիսով քերականությունը, գոնե հոլովների նը-

կատմամբ, դառնում է մի ավելորդ բան, և իզուր չէ, որ մեզանում կան մարդիկ, որ այդպես էլ մտածում են։ Պ. Մալխասյանը սակայն, կարծում եմ, այդ մարդկանց թվին չի պատկանում, թեպետ և նա քերականության ուսման մասին նույնպես սխալ հայացք ունի, այսինքն կարծում է թե «այն բոլորը ինչ որ քերականությունը պետք է տա՝ է՛ գիտակցությունը բառերի ֆունկցիաների, նրանց տարբեր դերերի ճանաչողությունը»։ Եթե այդպես լիներ, միայն ֆունկցիաներ, էլ պ. Մալխասյանը նեղություն չպիտի կրեր քերականության մեջ գոյականի ձեվերը, հոլով և հոլովում դնելու։

«Լեզվի հրեույթների գիտակցական ուսումը» հոլովների նկատմամբ այն չէ, որ երեխան տեսնի, թե քեզ=քեզ է և ոչ էլ որ նա բառերի տարբեր ֆունկցիաները հասկանա,— մի բան, որ երեխան և ամեն մարդ էլ առանց քերականության հասկանում է.— այլ այն, որ նա ուշադրության առնի, որոշ հաշիվ տա իրեն, թե ի՛նչպես ձևը մեկ է —քեզ, բայց նույն և մի «քեզ» ձևով մի անգամ ստացողն է արտահայտվում, «քեզ կտամ մի գիրք». մի երկրորդ անգամ «հանգման» առարկան է արտահայտվում, «քեզ մոտեցա». մի երրորդ դեպքում կրող առարկան, «քեզ հաղթեցի». մի չորրորդ դեպքում նույն «քեզ» ձևը ցույց է տալիս այն անձը, որի համար մի բան է լինում, «քեզ փոս փորեցին». մի հինգերորդ դեպքում էլ լեզուն անճարակ է մնում, ինչպես «քեզ կտամ քո սիրած տղին». որի մեջ ſեզ կարելի է և ստացող հասկանալ և ստացված, ինչպես և տղին կարելի է և ստացող հասկանալ և ստացված և այլն։ Աշակերտը պետք է ուրեմն նույն և մի «քեզ=քեզ» ձևը դիտի և հասկանա, որ այդ միակ ձևի հետ կապված են բազմաթիվ ֆունկցիաներ, և իմանա, թե ո՛ր դեպքում ո՛ր ֆունկցիան է կապվում։—

Ասյա՝ արդարև աշակերտն յուր մայրենի լեզվի ձևերն էլ և այդ ձևերի նշանակությունն էլ հասկանում է առանց քերականության, բայց հասկանում է մի տեսակ բնազդաբար, խառն, անջատ-անջատ։ «Կնիկը», «շունը», «հացը», «աղվեսը» նա չի համախմբում իբրև մի տեսակի ձևեր։ Նա չգիտե, չի գիտակցում, որոշ հաշիվ չի տվել իրեն, թե քանի՛ և ի՛նչպիսի ձևեր կան. և ամեն մի ձևի հետ քանի և ինչպիսի ֆունկցիա է կապվում։ Եվ երբ մենք հոլովել ենք սովորեցնում, ուրիշ բան չենք անում, բայց եթե աշակերտին զգալ և գիտակցել ենք տալիս, թե յուր խոսած և հասկացած լեզվի մեջ գոյականի ձևերը քանիսն են, քանի տեսակ են, և ինչպիսի կազմություն ունին ամեն մեկը։ Ուրիշ խոսքով, մենք իրար նման ձևերը որոշ խմբերի վերածելով՝ տեսակավորում ենք հոլովական ձևերը, որ նրա մտքում ներկայանում են անջատ անջատ, և ուսումնասիրում ենք ամեն տեսակի կազմությունը։ Իսկ երբ հոլովների կիրառությունն ենք սովորեցնում, մենք դարձյալ տեսակավորում ենք բառերի ֆունկցիաները խոսքի մեջ՝ վերածելով որոշ խմբերի,— ներգործող ենթակա, կրող ենթակա, սեռի խնդիր, տեղի պարագա և այլն։ Մի կողմից ուրեմն բառաձևերի տեսակավորումն

է լինում, մյուս կողմից այդ բառաձևերի արտահայտած ֆունկցիաների տեսակավորումը. և ապա նոր սովորեցնում ենք, թե ամեն ձև ինչ ֆունկցիա է արտահայտում, կամ թե ամեն ֆունկցիա ինչ ձևով է արտահայտվում, նայելով թե որ քերականը որն է ընտրում յուր համար իբրև ուղեցույց, ձևը թե ֆունկցիան։

Այսպես ուրեմն հոլովների դիտակցական ուսումը մի կողմից տեսակավորում, տեսակների բաժանումն է հոլովական ձևերի, մյուս կողմից տեսակավորումն է այդ ձևերի արտահայտած ֆունկցիաների, և ապա թե ո՛ր տեսակի ձևը ո՛ր և քանի՛ ֆունկցիայի համար է գործածվում և կամ ո՛ր ֆունկցիան ո՛ր և քանի՛ ձև է յուր համար պահանջում։ Ահա թե ինչը չգիտե աշակերտը և ինչ պիտի տա նրան լեզվի կազմության դիտակցական ուսումը։ Դա նույն տեսակների բաժանումն է, ինչ որ բնական պատմության մեջ*։

Աններելին քերականության մեջ ոչ թե այն է, որ կրողի ֆունկցիա ունեցող ձևը տրական կամ ուղղական կոչվի,— ինչպես կոչում է Հաճախ և հենց ինքը պ. Մալխասյանը,— այլ այն, որ ձևը և ձևի ցույց տված դաղափարները, արտաքինը և ներքինը չփոթվին իրար հետ. աններելին այն մեծ տրամաբանական սխալն է, որ անում են հոլովական ձևերը տեսակների բաժանելու ժամանակ, որով հոլովների մի մասի համար իբրև բաժանման հիմք ընդունում են **բառաձևը**, որի հետ անբաժան է իհարկե և իր նշանակությունը, այսինքն **արտաքին ներքինով հանդերձ**. իսկ մյուս մասի համար, ինչպես է մեր հայցականը, իբրև բաժանման հիմք առնում են միայն **ֆունկցիան առանց բառաձևի**, այսինքն **միայն ներքինը**,— մի բաժանման համար ուրեմն երկու հիմք բաժանման։ Եվ այս է պատճառը, որ մեր քերականությունն աշակերտը չի ըմբռնում և համարում է մի ծանր բեռ, և նա հինգ վեց տարի սովորելուց հետո չի հասկանում հոլովների խորհուրդը և չի կարողանում հայցական և ուղղական, հայցական և տրական (ինչպես և սեռական ու տրական) անսխալ որոշել։ Աշակերտի միտքը տրամաբանորեն ճիշտ բաժանումն է պահանջում, նա իրար նման ձևերը մի տեսակի մեջ է պահանջում դնել, իսկ մենք տալիս ենք նրան անճիշտ բաժանում։ Եվ այս է որ խառնաշփոթություն է մտցնում աշակերտի գլուխը և չի թողնում պայծառ հասկացողություն կազմել այն մասին, թե ինչպիսի մի զարմանալի գործիք է լեզուն, որ մի քանի հոլովական ձևերով, մի «քեզ=քեզ» ձևով հնարավոր է լինում այնքան բազմազան հարաբերություններ արտահայտել։

Ահա թե ինչո՛ւ համար աշակերտին պիտի ասվի, թե «քեզ=քեզ»

---

* Ես գուցե առիթ կունենամ ուրիշ տեղ մանրամասն բացատրելու այս միտքը, թե ինչ պետք է սովորեցնի աշակերտին քերականությունը, և թե պե՞տք է արդյոք մեր դպրոցներում քերականություն սովորեցնել և եթե պետք է, ինչո՞ւ է պետք, և ի՞նչ, ո՞ր չափով և ի՞նչպես պետք է սովորեցնել։

է։ Եթե «քեզ=քեզ» չասվի, երբեք չի վերանալ հոլովների տեսակավորումից, տեսակների բաժանումից այդ խոշոր տրամաբանական սրբալը։ Ահա թե «ինչ կշահենք» «քեզ=քեզ» ասելով։

Ապա պ. Մալխասյանը կամ ինքը շատ միամիտ է մտածում կամ շատ միամիտ է կարծում ընթերցողներին, երբ գրում է, թե իրար նման ձևերը մի տեսակի մեջ դնելով «քեզ=քեզ» ասելով ոչինչ չշահելով հանդերձ՝ «կկորցնենք գիտակցությունը բառերի տարբեր ֆունկցիաների»։ Իսկ թե ինչպե՞ս և ինչո՞ւ կկորցնենք, այդ մասին դարձյալ ոչինչ։— Երևի նա կարծում է, թե բառերի «տարբեր դերերի ճանաչողությունը» հիմնված է ուղղական, հայցական, տրական հոլովների և նրանց անունների, տերմինների վրա. եթե «Ստեփանը հաղթեց Տիգրանին» խոսքի մեջ Տիգրանին ձևը՝ տրական կամ երկրորդ հոլով կոչենք, այլևս դա կրող չի լինիլ, այլ գուցե ներգործող. և կրող կլինի միայն այն ժամանակ, երբ անպատճառ առանձին հոլով՝ հայցական կոչենք, և ոչ տրական։ Կամ երբ «Երեխան գնաց պարտեզ». «Երեխան երկու ժամ քնեց», «Երեխան գիրքը պատռեց» խոսքերի մեջ պարտեզ, ժամ, գիրքը առաջին հոլով կամ ուղղական կոչվեն, և ոչ մի առանձին հոլով՝ հայցական, է՛լ աշակերտը, մենք էլ հետը, չենք իմանա, թե պարտեզ այն տեղն է ցույց տալիս, ուր գնացել է երեխան,—տեղի նպատակակետը. թե ժամ ցույց է տալիս գործողության տևողության ժամանակամիջոցը, այսինքն թե որքան ժամանակ է քնել, և թե գիրքը ցույց է տալիս կրող առարկան. այլ այդ ամենը մենք կիմանանք միայն այն ժամանակ, երբ այդ բառերը հայցական կոչենք։

Պ. Մալխասյանը բառերի դերերը խոսքի մեջ ճանաչելու համար, երևի, մեծ հույսեր է դնում ուղղական, տրական, հայցական և այլ հոլովների և նրանց անունների վրա. բայց նա իհարկե շատ լավ գիտե, որ բառերի դերերը խոսքի մեջ՝ վարժապետներն աշակերտներին սովորեցնում են, իսկապես գիտակցել են տալիս համախմբում, տեսակավորում են դեռ հոլովել չսովորեցրած. և որ աշակերտը ենթական, ստորոգյալ, կրող առարկա, տեղի պարագա և այլն որոշում է դեռ ոչ ուղղական=անվանական, ոչ հայցական և ոչ տրական և այլն հոլովները սովորած։ Եվ ի՞նչպես հնարավոր է լինում այս։— Բառաձև և ֆունկցիա տարբեր բան են. մեկը չիմացած, աշակերտը կարող է մյուսը սովորել։ Եթե ֆունկցիայի, բառերի «տարբեր դերերի ճանաչողության» համար անհրաժեշտ լիներ բառաձևերը, հոլովները և նրանց անուններն իմանալը, այն ժամանակ՝ ֆրանսերենի քերականությունների մեջ որ հոլով բառն էլ չկա, ուրեմն ֆրանսիացի աշակերտը չպիտի կարողանար սովորել բառերի տարբեր ֆունկցիաները։ Երբ ֆրանսիացին le loup mange l'agneau խոսքի le loup ուղղական հոլով չի անվանում և l'agneau հայցական չի կոչում, այլ երկուսն ևս միևնույն ձևն է համարում,— կորցնո՞ւմ է ուրեմն նա այդ բառերի տարբեր ֆունկցիաների գիտակցությունը և չի՞ կարողանում որոշել, որ մեկը՝ գայլը՝ ներ-

գործող ենթակա է, մյուսը՝ գառը՝ կրող առարկա։ Եվ ինչո՞ւ ուրեմն երբ մենք «Գայլը կերավ գառը» խոսքի մեջ **գայլը** *և* **գառը** *նույն ձևը համարենք, ինչպես են իրոք, և նույն անունով կոչենք իբրև ձև, դիցուք առաջին հոլով, պիտի կորցնենք անպատճառ «այն բոլորը՝ ինչ որ քերականությունը պետք է տա—գիտակցությունը այդ բառերի տարբեր ֆունկցիաների»*

Եթե բառերի տարբեր պաշտոնները խոսքի մեջ՝ որոշելու համար հոլովական ձևերի գոյությունն անգամ կարևոր չէ, ո՞րչափ ևս առավել այդ ձևերի համախմբումն և խմբերի անունները։ «Ստեփանը ծեծեց Տիգրանին» խոսքի մեջ **Տիգրանին** *ձևը տրական հոլով կկոչենք, թե հայցական, թե երկրորդ հոլով, թե նույնիսկ* **Տիգրանին** *ձևի հոլով լինելն էլ չենք ասի, այդ անտարբեր է այդ բառի ֆունկցիան իմանալու և սովորեցնելու նկատմամբ։*

* * *

Պ. Մալխասյանը գրում է. «Բայց զարմանալի է և այն **հակասությունը**, *որի մեջ* **անգիտակցաբար** *ընկնում է պ. Աբեղյանը։ Վերի օրինակում (այդ օրինակն է՝ «Մի որսորդ տեսավ մի աղվես») նա «աղվես» ձևը կոչում է ուղղական այս «բառի բուն իմաստով»։ Եթե նա ուղղական բառը հասկանում է տառացի, ստուգաբանական նշանակությամբ՝ նա* **հետևողական** *լինելու* **համար** *նույնպիսի բուն՝ ստուգաբանական իմաստով պետք է հասկանար և «տրական» բառը (տալու հոլով), և այս դեպքում վերի օրինակում (այդ օրինակն է՝ «Որսորդը տեսավ աղվեսին») բերած «աղվեսին» ձևը չպիտի կոչեր տրական, որովհետև «Որսորդը տեսավ աղվեսին» խոսքում՝ «աղվեսին» ոչինչ չէ տրվում, ուրեմն և նա տրական չպիտի լինի՝ այս բառի բուն իմաստով»։— Ընթերցողն այս կարդալով գուցե կարծում է, թե պ. Մալխասյանն իմ գրության մեջ մի հակասություն է բռնել, որով և իմ եզրակացության սխալ լինելը ապացուցել։ Ուստի տեսնենք նա ինչ է ասում կետ առ կետ։*

Պ. Մալխասյանը գրելով, թե Աբեղյանը «Աղվես ձևը կոչում է ուղղական այս բառի բուն իմաստով»՝ ուզում է ասել, որ իբր թե «աղվես» ձևն ուղղական կոչելուն ինձ համար իբրև հիմք ծառայել է ուղղական տերմինի ստուգաբանությունը։ Թե իրոք այս է ասում նա, այդ երևում է ներքևում ուրիշ տեղ գրածից. «Եթե «ուղղական» բառի տառացի, ըստ ստուգաբանական նշանակությունն է պ. Աբեղյանին գայթակղեցնողը՝ լավ է հենց այդ գայթակղեցնող բառը վերցնել մեջտեղից և ուղղականը կոչել անվանական»։— Թե ինձ գայթակղեցնողն «ուղղական» տերմինը չէ, այդ ասելն անգամ ավելորդ է։ Թե մեր առաջին հոլովի անունը ուղղական կկոչվի, թե անվանական, թե առաջին հոլով,—այդ անտարբեր է հայցական հոլովի առանձին ձևական գոյության և ոչ գոյության նկատմամբ։ Որովհետև անունը փոխելով իրը չի փոխվում.

և այդ ժամանակ ես կասեմ, մեր հայցական հոլովը ձևով նույն է ինչ որ անվանականը, կամ թե անվանական հոլովը գործ է ածվում և գրաբարի հայցականի իմաստով։

Մեր առաջին հոլովի անվանական թե ուղղական կոչումը ոչ թե հայցականի ձևական գոյության տեսակետից նշանակություն ունի, այլ տերմինոլոգիայի ճշտության տեսակետից։ Ես ուղղական տերմինը շատ հարմար և ճիշտ կոչում եմ գտնում մեր բոլոր հոլովների անունների մեջ, և շատ հարմար հենց իր նորամուծության համար։ Ուրիշ լեզուների անվանական տերմինը առնված է նրանց առաջին հոլովի ֆունկցիաներից, որ է ենթակա (անուն բայի) և ստորոգյալի անուն. իսկ մեր առաջին հոլովի անունը՝ ուղղական առնված է միայն բառի ձևից և բնավ չի ակնարկում նույն հոլովի որևէ պաշտոնին։ Այս պատճառով և այդ տերմինն իր ստուգաբանական նշանակությամբ կատարելապես հարմարվում է բառի ուղիղ ձևերին, լինին իմաստով անվանական (ենթակայի և ստորոգյալի), կոչական թե հայցական, և մենք կարող ենք ասել թե «ամեն անուն ուղիղ ձևով՝ ուղղական է բառիս բուն նշանակությամբ»։ Ուստի՝ Ա՛յ մարդ, ջուր չկա, ջուր բեր. սառույցը ջուր դարձավ. մտնենք ջուրը և այլն խոսքերի մեջ, առանց ուշ դարձնելու թե մարդ կոչական է. սառույցը, ջուր առաջին դեպքում ենթակա են, ջուր երկրորդ դեպքում կրող խնդիր է, ջուր երրորդ դեպքում ստորոգյալ է. ջուրը տեղի պարագա,— մենք կարող ենք ասել, որ դրանք բոլորը ուղղական են, ուղիղ ձևով են բառիս բուն իմաստով։ Ուրիշ խոսքով մեր ուղղական տերմինը իր ստուգաբանական բուն իմաստով և ոչ անվանական (=ենթակայի և ստորոգյալի հոլով) հարմար է ոչ միայն ուղղականին=անվանականին, այլև կոչականին և ուղիղ ձևով հայցականին, և մենք առանց տերմինի ստուգաբանության խորթության կարող ենք ասել թե «սեռի խնդիրն և պարագայական խնդիրները նույնպես ուղղական (բուն իմաստով և ոչ անվանական) են դրվում»։ Ահա թե ինչպես եմ հասկանում ես այդ ուղղական բառի ստուգաբանական իմաստի նշանակությունը հայցականի նկատմամբ (տե՛ս Աշխարհաբարի հոլովները, եր. 5, 10, 11, 43)։

Այսպիսի ճշտություն չունին ոչ անվանական տերմինը մեր լեզվի համար և ոչ մեր մյուս հոլովների անունները, որոնք ոչ թե հոլովական ձևերից են առնված, այլ նրանց կատարած ֆունկցիաներից։ Դրանք հոլովական ձև բնավ չեն ցույց տալիս, մինչդեռ ուղղականը միայն հոլովական ձև է ցույց տալիս։ Ուղղականի համապատասխան՝ ձևից առնված կոչումները պետք է լինեին ըստ կազմության կամ վերջավորության այսպես 1. ուղղական հոլով, 2. ի կամ ու հոլով, 3. ից կամ ուց հոլով, 4. ով հոլով, 5. ում հոլով. և այդ ժամանակ դրանք ևս կլինեին նույնպես ճիշտ տերմին, ինչպես ուղղական է. մինչդեռ հայցական, տրական և այլն տերմինները առնված լինելով հոլովական ձևերի ֆունկցիաներից՝ անճիշտ են, որովհետև չեն ամփոփում նույն ա-

նունը կրող հոլովական ձևի բոլոր ֆունկցիաները։ Օրինակ՝ մեր 2-րդ հոլովական ձևն ըստ յուրաքանչյուր էական համարված ֆունկցիայի կոչվում է տրական և բացատրվում է, ըստ պ. Մալխասյանի, իբրև «տալու հոլով», այսինքն ցույց է տալիս մի խնդիր, որին մի բան տրվում է, բայց հարկավ այս հոլովը միայն «տալու» նշանակություն չունի, այլ և շատ ուրիշ նշանակություններ ինչպես՝

Աղվեսը մոտեցավ որսորդին։
Աղվեսը հաճելի է որսորդին։
Աղվեսը երևաց որսորդին։
Աղվեսը հնազանդեց որսորդին։
Աղվեսը հաղթեց որսորդին։
Աղվեսը եկավ կես գիշերին։
Աղվեսը նստեց ճանապարհին։

Այս և ուրիշ շատ օրինակների մեջ աղվեսը **որսորդին**, կես գիշերին, ճանապարհին ոչինչ չի տալիս, բառիս իսկական նշանակությամբ, բայց և այնպես այդ բառերն այդ դեպքերում տրական են կոչվում, որովհետև դրանք նույն հոլովական ձևն են, ինչ որ «Աղվեսը կաշին տվավ որսորդին» խոսքի մեջ **որսորդին** ձևը։

Շատ պարզ է, որ **տրական** տերմինը իբրև այնպիսին՝ շատ քիչ նշանակություն ունի 2-րդ հոլովական ձևի ֆունկցիաները որոշելու համար, դա մի անճիշտ տերմին է։ Նույնպիսի դրեթե բան չասող տերմին է և **հայցական=խնդրական** բառը, որ յուր ստուգաբանությամբ ցույց է տալիս, թե այդ հոլովով դրված բառը խնդիր է լինում. բայց մյուս հոլովներն էլ խնդիր են լինում, ուստի և հայցական=խնդրական տերմինն յուր ստուգաբանությամբ այնքան ընդհանուր նշանակություն ունի, որ մյուս հոլովներին էլ կհարմարվի։

Եթե այսքան քիչ բան են ասում տերմինները և հատկապես տրական տերմինը այդ անունով կոչվող հոլովական ձևի բազմազան ֆունկցիաների նկատմամբ, էլ ի՞նչու չպիտի կարողանանք, տրական տերմինի ստուգաբանության պատճառով «Որսորդը տեսավ աղվեսին» խոսքի մեջ **աղվեսին** ձևը տրական կոչել, ինչպես որ «Որսորդը հաղթեց **աղվեսին**» խոսքի մեջ նույն **աղվեսին** ձևը, որ միևնույն կրողի ֆունկցիան ունի, տրական ենք կոչում։— Այս բացատրություններից հետո գանք պ. Մալխասյանի բռնած «հակասությանը»։

Անշուշտ, եթե ես տրական բառը միշտ յուր բուն ստուգաբանական իմաստով հասկանայի, վերի «Որսորդը տեսավ աղվեսին» խոսքի մեջ «աղվեսին» ձևը չպիտի կոչեի տրական, և պ. Մալխասյանը կարող էր եղրակացնել «ուրեմն և նա տրական չպիտի լինի այս բառի բուն իմաստով», և նա կարող էր ասել նաև, որ քանի որ Աբեղյանն այդ «աղվեսին» ձևը տրական է կոչում, ուրեմն և «անգիտակցաբար» «հակասություն» է անում։ Բայց այդպիսի եղրակացության և հակասության

համար պետք է որ ես տրական հոլովը միշտ իր անվան, տրական բառի ստուգաբանական, «տալու» իմաստով ընդունեի։ Ընդունո՞ւմ եմ ես այդ և ասե՞լ եմ մի տեղ այդպիսի բան։— Դու չես ասել այդպիսի բան, ասում է պ. Մալխասյանը,— բայց դու այդ ասել ես ուղղականի համար և հետևողական լինելու համար դու պետք է այդ ընդունես և տրականի համար. և որովհետև դու չես կարող այդ ընդունել առանց անհեթեթության մեջ ընկնելու, ուրեմն և հակասության մեջ ես ընկնում։ «Եթե Աբեղյանը ուղղական բառը հասկանում է տառացի, ստուգաբանական նշանակությամբ՝ նա հետևողական լինելու համար նույնպիսի բուն՝ ստուգաբանական իմաստով պետք է հասկանար և «տրական» բառը (տալու հոլով)»։ Ահա թե ինչ է գրում։— Ընդունենք, որ ես «ուղղական» բառը «տառացի ստուգաբանական նշանակությամբ եմ հասկանում» բայց մի՞թե այդ բանից կարելի է հետևցնել տրամաբանական անհրաժեշտությամբ, թե ես «տրական» տերմինն էլ այդպես պիտի հասկանամ։ Վերլուծենք պ. Մալխասյանի այդ եզրակացությունն ևս տրամաբանական սառը ձև տալով նրան և տեսնենք՝ ինչ է դուրս գալիս։ Նա ասում է.

Ուղղական տերմինն է Աբեղյանի կողմից, տառացի ստուգաբանական նշանակությամբ հասկացվող,— կամ a-ն է b. Հետևաբար՝ տրական տերմինն է Աբեղյանի կողմից տառացի ստուգաբանական նշանակությամբ հասկացվող,— կամ c-ն է b։

Այս չէ՞ ասում պ. Մալխասյանը՝ a-ն է b, հետևաբար c-ն է b։ Կամ տառերի տեղ անուններ դնելով՝ Տիգրանն է վարժապետ, հետևաբար՝ Վարդանն էլ է վարժապետ. կամ Տիգրանի ձիու գույնը կարմիր է, հետևաբար՝ Տիգրանի կովի գույնն էլ կարմիր պիտի լինի։

Անշուշտ ընթերցողը հասկանում է, որ առաջին խոսքից դեռ կարելի չէ անհրաժեշտորեն հետևցնել երկրորդ խոսքն իբրև եզրակացություն։ Այդտեղ մի պակաս բան կա և պակասը երկրորդ նախադրյալն է, որ չի դնում պ. Մալխասյանը և չի կարող դնել, բայց չդնելով հանդերձ ենթադրել է տալիս, թե իբր կա այդ նախադրյալը. որովհետև պ. Մալխասյանն էլ և ամենքն էլ գիտեն, որ մի նախադրյալից միայն դեռ կարելի չէ եզրակացություն հանել։ Որպեսզի կարողանանք հետևցնել թե Տիգրանի կովի գույնն էլ կարմիր է, բավական չէ միայն որ իմանանք, թե Տիգրանի ձիու գույնը կարմիր է. այլ հարկավոր է, որ մի ուրիշ բան էլ իմանանք, այն՝ որ Տիգրանի կովի գույնը նույն է ինչ որ Տիգրանի ձիու գույնը։ Արդարև մենք սովորական գրության և խոսակցության ժամանակ հաճախ մի նախադրյալով էլ եզրակացություն ենք անում. ինչպես՝ Մարդը մահկանացու է. հետևաբար՝ Տիգրանը մահկանացու է. a-ն է b. հետևաբար c-ն է b.—բայց այստեղ զորությամբ հասկանում ենք երկրորդ նախադրյալը թե Տիգրանը մարդ է, c-ն է a. և տրամաբանորեն կազմվում է՝ a-ն է b, c-ն է a, հետևաբար՝ c-ն է b։ Բայց երբ պ. Մալխասյանն ասում է, թե ուղղականն է b. հետևաբար՝ տրականն է b,— կարո՞ղ ենք այստեղ երկրորդ նախադրյալը զորու-

թյամբ հասկանալ, թե տրականն է ուղղական: Ահա՛ թե ինչ միամիտ բանի վրա է հիմնում պ. Մալխասյանը յուր հետևությունը և ինչպես անգիտակցաբար մոլորվում և մոլորեցնում է յուր ընթերցողներին, որոնք նրա գրածը կարդալով գուցե կկարծեն, թե իրոք ես այդպիսի անմտություն եմ ասել, թե տրականն է ուղղական, այսինքն թե տրականն իբրև տեսակ մտնում է ուղղական սեռի մեջ, կամ թե տրականը նույն է ինչ որ ուղղականը: Որովհետև մինչև չինի տրականի նույնացումը ուղղականի հետ, կամ տրականը չինի ուղղական սեռի մի տեսակ, ոչ մի կերպ կարելի չէ անհրաժեշտորեն հետևցնել, որ ուղղականի վրա ասածը, ուղղականի ստորոգյալը ստորոգվի նաև տրականի վրա: Ահա թե ինչ ևղանակով է պահանջում պ. Մալխասյանը, որ ես «հետևողական լինելու համար» նույնպիսի ստուգաբանական իմաստով հասկանամ տրական տերմինը, ինչպես հասկանում եմ ուղղական տերմինը,— և ինչպիսի ձևով հակասություն է բռնում:

Բայց տեսնենք մի ավելի ղարմանալի բան:

* * *

Պ. Մալխասյանը բերում է հետևյալ խոսքերը. «Մի որսորդ տեսավ մի աղվես». «Որսորդը տեսավ աղվեսին», և ապա մտնելով «աշակերտի հոգեկան դրության մեջ» բացականչում է. «Այդ ի՞նչ տարօրինակ ուղղական (գծածն իրենն է) է, որ երբեմն, որոշված լինի թե անորոշ՝ միշտ միևնույն ձևն ունի («որսորդ», «որսորդը»), իսկ երբեմն անորոշ ձևում դարձյալ ուղղական (գծածն իրենն է) է մնում («աղվես»). իսկ որոշված ձևում փոխվում է տրականի («աղվեսին»): Երեխան, շընորհիվ պ. Աբեղյանի նորամուծության, ոչ միայն չի ստանա ֆունկցիաների (գծածն իմն է) գիտակցությունը, այլ և խառնաշփոթության մեջ կընկնի. քերականությունը ոչ թե կծառայի նրան պարզելու լեզվի երևույթները, այլ խառնելու, խճճելու»:

Այստեղ պ. Մալխասյանը դարձյալ ինձ վերագրում է մի բան, որ ես չեմ ասել, այլ ինքն է ասում, այն էլ առանց որևէ հիմունքի: Աբեղյանի նորամուծությունն երբեք և ոչ մի դեպքում չի ասում, թե ուղղականն երբեմն ուղղական է մնում և երբեմն տրականի փոխվում. այլ բոլորովին հակառակն է ասում,— և հենց այս է իմ նորամուծությունը, և այս իհարկե շատ լավ գիտե պ. Մալխասյանը: Այդ նորամուծությամբ ուղղականը, առաջին հոլովական ձևը, բառի հիմնական ձևը, լինի որոշյալ թե անորոշ և ինչպիսի ֆունկցիա էլ կուզի կատարի՝ միշտ ուղղական է մնում և տրականը՝ միշտ տրական: Աշակերտը ուղղականին («որսորդ», «որսորդը», «աղվես») միշտ ուղղական է ասում. իսկ տրականին («աղվեսին») միշտ տրական. և ոչ թե ուղղականը «որոշված ձևում փոխվում է տրականի», ինչպես գրում է պ. Մալխասյանը: Եվ անպայման շատ «տարօրինակ», լավ լսեցեք, «տարօրինակ ուղղական», տարօրինակ հոլով կլիներ այդ հոլովը, «որ երբեմն որոշված լինի թե

անորոշ՝ միշտ միևնույն ձևն ունենա» և երբեմն «որոշված ձևում փոխվի տրականի»։ Եվ մի՞թե պ. Մալխասյանն իմ քերականության ուղղականն է բնորոշում այսպես, թե՞ Պալասանյանի և իր պաշտպանած քերականության հայցական հոլովը, միայն հայցական բառի տեղ ուղղական դնելով։ Թե ինչու է նա այսպես վարվում, այդ ես չեմ հասկանում. բայց ուղղական բառի տեղ հայցական դնելով ստանում ենք. «Ի՞նչ տարօրինակ հայցական է, որ երբեմն որոշված լինի թե անորոշ՝ միշտ միևնույն ձևն ունի» (Որսորդը սպանեց մի ոչխար. Որսորդը մորթեց ոչխարը։ Որսորդը մի օր այնտեղ մնաց։ Որսորդն այն օրն այնտեղ մնաց։ Որսորդը մի ծառա ունի։ Որսորդը քեզ իր ծառան կարծեց։ Որսորդը գնաց մի գյուղ։ Որսորդը գնաց իր գյուղը). իսկ երբեմն «որոշված ձևում փոխվում է տրականի» (Որսորդը ոչխարին ծեծեց։ Որսորդը տեսավ աղվեսին։ Որսորդը կանչեց իր ծառային։ Որսորդն իր աղջկանը մարդու տվավ)։— Ահա թե իմ նորամուծությունն ինչ «տարօրինակ» հոլովի դեմ է ուղղված։ Այդ «տարօրինակ» հոլովը ոչ թե իմ քերականության ուղղականն է, այլ հենց հին քերականության հայցական հոլովն է, որ չունենալով յուր հատուկ ձևը, լինի որոշյալ թե անորոշ, երբեմն ուղղականի ձևն է հագնում, երբեմն տրականի. մի անգամ ուղղականի ձևը ուղղական է կոչվում, մյուս անգամ հայցական. մի անգամ տրականի ձևը տրական է կոչվում, մյուս անգամ հայցական։ Ահա թե որտեղ է «տարօրինակությունն» և «խառնաշփոթությունը։ Եվ իմ նորամուծությունը հենց այս տարօրինակության և խառնաշփոթության դեմն է առնում,— այն է՝ պետք է տարբերել բառերի ձևերն իրենց ֆունկցիայից և ուղղականը, բառի ուղիղ ձևը միշտ և անփոփոխ կերպով ուղղական կոչել, իսկ տրականը՝ տրական. որսորդ(ը), աղվես(ը), քաղաք(ը) և այլն, ինչ ֆունկցիա կուզե արտահայտեն՝ միշտ ուղղական են, միշտ միևնույն առաջին հոլովական ձևն են, իսկ որսորդի(ն), աղվեսի(ն), քաղաքի(ն) ինչ ֆունկցիա կուզե արտահայտին՝ միշտ միևնույն հոլովն են, երկրորդ հոլովական ձևը կամ տրական։ Պա՞րզ է, որ իմ նորամուծությամբ ուղղականը չի փոխվում տրականի, և միթե այս չգիտե՞ր պ. Մալխասյանը։ Պա՞րզ է, որ իմ նորամուծությամբ հենց այդ «տարօրինակ» հոլովն է վերանում, ուստի և մեր հոլովների խառնաշփոթությունը, անտրամաբան բաժանումը, որ այնքան անտեղի և անօգուտ գլխացավանք է պատճառում աշակերտներին,— և միթե այս չգիտե՞ր պ. Մալխասյանը։

Բայց «երեխան շնորհիվ պ. Աբեղյանի նորամուծության... չի ըստանա ֆունկցիաների գիտակցությունը»,— դարձյալ նույնը կրկնում է պ. Մալխասյանը։ Թե «ֆունկցիաների գիտակցությունն» աշակերտն առանց հոլովներ սովորելու էլ կստանա և ստանում է, այդ մենք տեսանք։ Եվ ինչի՞ չպիտի ստանա, այդ դարձյալ չի ասում։ Մի՞թե նա կարծում է, թե աշակերտը ֆունկցիայի գիտակցություն չի ստանում, երբ իմ քերականությամբ սովորում է, թե ենթակա և կրող առարկա կան և թե

1. Ենթական դրվում է ուղղական հոլովով. ուստի «Մի որսորդ տեսավ մի աղվես». «Որսորդը տեսավ աղվեսին» խոսքերի մեջ «որսորդ», «որսորդը» բառերը ուղղական հոլով և ենթակա են։

2. Կրող առարկան դրվում է՝ ա) երբեմն ուղղական հոլովով. ուստի «Մի որսորդ տեսավ մի աղվես» խոսքի մեջ աղվես ուղղական հոլով և կրող առարկա է. բ) երբեմն էլ դրվում է տրական հոլովով. ուստի «Որսորդը տեսավ աղվեսին» խոսքի մեջ աղվեսին տրական հոլով և կրող առարկա է։

Կա՞ այստեղ խառն ու մութ բան, որ երեխան չհասկանա. աշակերտը չի՞ ստանում ֆունկցիաների գիտակցությունը։ Թե՞ ընդհակառակն նա շատ լավ, որոշ կերպով տարբերում է բառերի ձևերն իրենց ֆունկցիաներից. շատ հեշտությամբ, պարզ ու պայծառ կերպով որոշում է թե հոլովները և թե այդ հոլովների ֆունկցիաները առանց «տարօրինակ» հայցական հոլովի օգնությանը դիմելու,— մի հոլով, որ միայն «խառնաշփոթություն» է մտցնում առանց մի չնչին օգուտ տալու ֆունկցիաների նկատմամբ։ Ո՞րն է ավելի հեշտ և ճիշտ. աշակերտը սովորի՞ ոչինչ չասող «տարօրինակ» հայցական հոլովի «ձևը», որ և սովորել անհնարին է, որովհետև այդ հոլովը հատուկ ձև չունի, կիրառությամբ էլ հաստատուն չէ,— թե՞ սովորի ուղղականի և տրականի հոլովական ձևերը, որոնք շատ պարզ աչքի են խփում իրենց արտաքինով, և ապա այդ հոլովների կատարած ֆունկցիաները, նրանց բազմազան կիրառությունները, որոնց մեջ մտնում են հին հայցականի ֆունկցիաները։ Քերականությունը նրա համար է, որ աշակերտը պայծառ հասկացողություն ունենա լեզվի հորինվածքի մասին. իմանա ձևերը և այդ ձևերի կիրառությունները. իմանա, այսպես ասած, ո՛ր մարմնի հետ ո՛ր հոդին է կապված, և ոչ թե նրա համար, որ գլուխ տրաքացնելով մի հոգու վրա, որ յուր սեփական մարմինը չունի, բոնի կերպով, հակառակ մեր լեզվի կազմության ու պատմության այդ հոգու համար առանձին մարմին ստեղծել աշխատի։

Բայց այժմ պ. Մալխասյանը գուցե կառարկե, և ներքևում կտեսնենք, որ առարկում է, թե այդ ինչ տարօրինակ կրող առարկա, սեռի խնդիր է, որ մերթ ուղղական և մերթ տրական է դրվում, մերթ մի հոլովով, մերթ մի ուրիշ հոլովով։ Կրող առարկան մի ֆունկցիա է և մի հոլովով էլ պիտի արտահայտվի։— Դրա պատասխանն արդեն տվել եմ (Աշխ. հոլ., եր. 10 հետ.). բայց այստեղ էլ տեսնենք։

* * *

Պ. Մալխասյանը մի վերջին օրինակ էլ է բերում. «Նա սիրում է յուր տունը և յուր երեխաներին» և ապա նկատում. «Ըստ պ. Աբեղյանի քերականության՝ «տունը» ուղղական է, «երեխաներին» տրական, երկուսն էլ խնդիր։ Աշակերտը անշուշտ պիտի շվարած մնա, տեսնելով, որ միևնույն նշանակությունն արտահայտելու համար տարբեր հոլով-

ներ են գործածվում լեզվի մեջ, և որ ուղղական ու տրական խնդիրները միևնույն դերն են կատարում։ Բայց մի ուրիշ խոսքի մեջ,—«նա տուներ կտակեց յուր երեխաներին»— տեսնում է, որ «երեխաներին» տրական խնդիրը արդեն ուրիշ դեր է կատարում։ Եվ աշակերտին շվարմունքից չէ կարող հանել հայերենի ուսուցիչը, որ ղեկավարվելով պ. Աբեղյանի քերականությամբ, հայցական չէ ճանաչում, այլ ռուսերենի ուսուցիչը»։

Շվարողը ոչ թե աշակերտն է, այլ ինքը պ. Մալխասյանը։ Նա չի կարողանում կտրվել յուր սովորածից,— խոստովանում եմ, որ հեշտ չէ այդ հին վարժապետի համար, որ վարժվել է կրողի ֆունկցիայի համար հայցական լսել,— և կարծում է, թե Աբեղյանի քերականությամբ ղեկավարվող վարժապետն առանց հայցական հոլովի չի կարող բացատրել այդ «տուներ և երեխաներին» և կարող է միայն ռուսերենի ուսուցիչը, որ հայցական հոլով ունի։ Բայց տեսեք, թե ամեն ուսուցիչ որքան հեշտությամբ առանց հայցականի կբացատրի այդ «Տուներ և երեխաներին», երկուսն էլ կրող առարկա, սեռի խնդիր են. առաջինը դրված է ուղղական, որովհետև անշունչ առարկա է, իր է. երկրորդը՝ տրական, որովհետև անձի անուն է։ Եվ աշակերտն էլ բնավ չի շվարի, ինչպես որ չի շվարում, երբ դուք «տուներ և երեխաներին» հայցական եք անվանում և բացատրում թե հայցականը երբ անշունչ առարկա է ցույց տալիս՝ նման է ուղղականին, իսկ երբ անձի անուն է և որոշյալ է, նման է տրականին։ Այս չե՞ք ասում դուք, երբ հայցական հոլով եք սովորեցնում, և երբ երկու խոսքերի մեջ եղած հայցականները,— «նա սիրում է տուն և երեխա». «նա սիրում է յուր տուներ և երեխային»,— հանդիպադրում եք և մեկնում «երեխա» և «երեխային» հայցականների տարբեր ձևերը, հապա ինչո՞ւ չէ շիվարում աշակերտը, երբ լսում է հայցականի այդպիսի կերպարանափոխության բացատրություններ։ Եվ ի՞նչ տարբերություն կա ձեր և իմ բացատրության մեջ, եթե ոչ այն, որ ես միայն կրող առարկայով եմ բավականանում, իսկ դուք անտեղի կերպով մտցնում եք կրող առարկայի փոխանակ հայցական հոլով և ինչ որ կրող առարկայի համար պիտի ասվի՝ հայցականի համար եք ասում. շփոթելով ձև և ձևի ֆունկցիա և ամբողջ հայցականին վերագրելով այն կանոնը, որ կրող առարկային է վերաբերում. որովհետև, ինչպես տեսանք, ոչ թե հայցականն ընդհանրապես կարող է նման լինել տրականին, այլ հայցականն իբրև կրող առարկա։

Բայց «աշակերտը անշուշտ պիտի շվարած մնա, տեսնելով, որ միևնույն նշանակությունն (=միևնույն կրող առարկան) արտահայտելու համար տարբեր հոլովներ են գործածվում լեզվի մեջ», ասում է պ. Մալխասյանը։— Անշուշտ ռուս աշակերտը և ռուսերեն սովորող հայ աշակերտն էլ է հարկավ շվարած մնում, երբ կարդում է հետևյալ խոսքերը. Дай бог вам всякого богатства и дочку маленькую. Подай мне бумаги, чернил и мою ручку,—այսինքն միևնույն նշանակության.

սեռի խնդրի համար երկու հոլով են գործածվում, մեկ սեռական, մեկ էլ հայցական։ Բայց չէ, ռուս աշակերտն ամենևին իրավունք չունի շիվարելու, և լուռ պիտի նստի, չնայելով որ նրա լեզվի մեջ առանձին հայցական հոլով կա սեռի խնդրի ֆունկցիայի համար և այդ հոլովի կողքին մի ուրիշ սեռի խնդիր կարող է և ուրիշ հոլովով դրվել. և այս շատ բնական է գտնում պ. Մալխասյանը։ Անբնականը միայն հայերենում է, ուստի և հայ աշակերտը, որի լեզվի մեջ առանձին բառաձև էլ չկա հայցականի համար, պարտավոր է անպատճառ ապուշ կտրել, տեսնելով որ մի սեռի խնդիրը մի հոլովով է դրված, մյուսը՝ մի ուրիշ հոլովով։

Ռուսերենի վարժապետը կարող է հանգիստ սրտով, առանց վախենալու թե աշակերտները շվարած կմնան, բացատրել. «Գոյականը սեռական հոլովով հաճախ դործ է ածվում փոխանակ հայցականի՝ իբրև սեռի խնդիր ներգործական բայերի, երբ գլխավոր առարկայի գործողությունն անցնում է մի ուրիշ առարկայի ոչ թե որոշ ամբողջության վրա, այսինքն ոչ թե ամբողջ առարկայի վրա, այլ նրա մի մասի վրա»։ Ապա՝ նույնպես և մեր գրաբարի վարժապետը, ինքը պ. Մալխասյանն էլ կարող է ասել աշակերտին, թե սեռի խնդիրը, երբ որոշյալ է, առնում է զ նախդիրը, և աշակերտը երբեք չի շիվարի կարդալով այս խոսքը. «Տեսի անդ զեղբարս իմ և արս բազումս»։ Այդ աշակերտը չի շիվարի և այն ժամանակ, երբ կարդում է հետևյալը. «Տեսի զնա և յաղթեցի նմա». չի շիվարիլ, թեպետև վարժապետն ասում է, թե, երկու սեռի խնդրից մեկը հայցական է դրվում, մյուսը՝ տրական։ Աշխարհաբարի վարժապետն էլ կարող է ասել, որ նույն ֆունկցիաները կարող են արտահայտվել տարբեր հոլովներով. «Այս գիշեր եղավ. Այս դարում եղավ։ Այս վայրկյանիս եղավ»։— Այս այսպես կարող են ասել ռուսերենի, գրաբարի և աշխարհաբարի վարժապետները. գրաբարի և աշխարհաբարի վարժապետներն ուրեմն կարող են ասել թե սեռի խնդիրն այս ու այն դեպքերում հայցականի տեղ տրական է դրվում,— իսկ նույն աշխարհաբարի վարժապետը ուրիշ դեպքում չի կարող ասել, թե սեռի խնդիրը որ ուղղական է դրվում, այս ու այս դեպքում դրվում է ուղղականի տեղ սովորաբար տրական։ Եվ ինչո՞ւ չի կարող այս ասել աշխարհաբարի վարժապետը, որովհետև «աշակերտն անշուշտ պիտի շվարած մնա» տեսնելով, որ կողքե կողք տարբեր հոլովներ են գործածվում միևնույն նշանակությունն արտահայտելու համար, այսինքն ուղղական և տրական հոլովները նույն դերն են կատարում, թեպետ տարբեր տեսակի առարկաների համար։ Արդյոք հավատա՞նք այս առարկությանը։

Արդյոք հավատա՞նք և շարունակությանը, թե աշակերտը պիտի շիվարած մնա և այն պատճառով, որ «Նա սիրում է յուր տունը և յուր երեխաներին» խոսքը կարդալուց հետո՝ կարդում է և մի ուրիշ խոսք «Նա տունը կտակեց յուր երեխաներին», և «տեսնում է, որ երեխանե-

րին տրական խնդիրն արդեն ուրիշ դեր է կատարում» այստեղ։— Անշուշտ պ. Մալխասյանն յուր աշակերտներին չի սովորեցնում, թե տրական հոլովը միայն մի դեր է կատարում, այլ թե կարող է զանազան նշանակության դերեր կատարել։ Ուրեմն և ի՞նչ զարմանալու և ապշելու բան կա, որ տրական հոլովը մի խոսքի մեջ, մի բայի հետ մի դեր կատարի. մի ուրիշ խոսքի մեջ, մի ուրիշ բայի հետ մի ուրիշ տեսակ դեր կատարի։ Անսովո՞ր բան է այս։ Կա՞ լեզու, որի մեջ միևնույն հոլովը՝ նայելով խոսքերի մեջ ունեցած տարբեր դրության՝ տարբեր նշանակություններով չօգտագործվի։ Միթե շիվարո՞ւմ է ռուս աշակերտը, երբ կարդում է Подай мне бумаги և цвет бумаги,— միթե бумаги սեռականներն այս երկու դեպքում էլ նո՞ւյն դերն են կատարում։ Արդյոք չկա՞ն հոլովներ, որ ոչ միայն տարբեր, այլև «հակադիր» ֆունկցիաներ արտահայտեն։ Կարծեմ բավականաչափ տեսանք այդպիսի բաներ վերևում։ Բայց եթե հայցական հոլով ընդունենք, արդյոք հայցականը միշտ մի՞ հատիկ ֆունկցիա կարտահայտի։

Որսորդը սպանեց աղվեսին։
Որսորդը գնաց պարտեզ։
Որսորդին կոչեցին Տիգրան։
Որսորդը գնաց Փարպի ուխտ։
Որսորդը ծնվել է Թիֆլիս։
Որսորդը մեռավ անցյալ տարի։
Որսորդը քնել է մեծ ֆուռը։
Որսորդը հեռացավ հինգ վերստ։

Ահա ինը հայցական, որոնք բոլորովին տարբեր նշանակություններ ունին և ձևով էլ առաջինը տարբերվում է մյուսներից,— բայց աշակերտն այդտեղ իհարկե ամենևին իրավունք չունի շիվարելու, որովհետև վարժապետն ընդունում է հայցական հոլով և ասում է, թե դրանք բոլորը հայցական են, թեպետ տարբեր տարբեր նշանակություններով։ Աշակերտը միայն այն ժամանակ պիտի շիվարի, երբ կարդա. «Նա սիրում է... յուր եղեխաներին» և ապա «Նա տունը կտակեց յուր եղեխաներին» և լսի, որ եղեխաներին ձևը երկրորդ դեպքում տարբեր դեր է կատարում, քան ինչ որ առաջինի մեջ։

Ահա թե ինչպիսի գործնական և մանկավարժական առարկություններ է անում պ. Մալխասյանը։ Բայց մենք շարունակենք։

* * *

«Եթե աշակերտներին շփոթություն պետք է պատճառե այն հանգամանքը, որ միևնույն ձևին երկու անուն ենք տալիս— (ուղղական և հայցական «այգի»), այդ շփոթությունը հեշտությամբ կարելի է փարատել՝ երկու հոլովների տարբեր նշանակությունը բացատրելով... «Այգի» բառի մեջ ուղղականի և հայցականի նշանակությունը նրան կբա-

ցատրվի, և շփոթության տեղիք այլևս չի մնա: Եթե, օրինակի համար, ուսուցիչը աշակերտին բացատրե «այգին հասցրեց» նախադասության հինք նշանակությունները (իբրև ենթական, սեռի խնդիր և տեղական խնդիր) և ցույց տա ահագին տարբերությունը ուղղականի և հայցականի մեջ՝ աշակերտը էլ ընավ չի շփոթի այդ երկու հոլովները»:— Շատ հնչտ, աշակերտը գրաբար գրելիս «էլ բնավ» չի գրի, տեսի նմա, կամ ենթակայի վրա գ չի դնիլ, էլ ռուսերեն գրելիս «բնավ» չի գրիլ он видел мне. էլ իսկույն կիմանա որն է ենթական, որը խնդիրը, որը տեղական խնդիրը, և այդ երեքը ջոկելով կջոկի և հայցական հոլովը:

Պ. Մալխասյանի աշակերտներն իհարկե թութակի պես չեն սովորում հոլովներն առանց նրանց նշանակության, և ոչ թե մի անդամ, այլ հաճախ բացատրվում է նրանց այդ, բայց և այնպես, հավատացած եմ, նրանք շարունակ շփոթում են հայցական և ուղղական, հայցական և տրական, ենթակա և սեռի խնդիր: Եթի չի հավատում, թող մի վերստուգություն անի: Ես արել եմ այդ իմ աշակերտների նկատմամբ և գիտեմ, թե որքան շփոթում են: Ես ռուսերենի տետրակներ էլ եմ նայել և գիտեմ, թե որքան հաճախ հայցականի տեղ տրական են գործածում: Եվ այս հասկանալի է թե ինչո՞ւ: Հեշտ չէ երեխաներին կտրել իրենց մայրենի լեզվով մտածելուց, իսկ մեր մայրենի լեզուն հին հայցականի արտահայտած հարաբերությունները մտցրել է ուղղականի և տրականի արտահայտած հարաբերությունների շարքի մեջ. հայցականի արտահայտած հարաբերությունները համարում են ուղղականի և տրականի արտահայտած հարաբերությունների մի մասը, հենց այդ պատճառով մեր լեզուն «արտաքուստ տարբեր թեքման ձևով չի զանազանել» հայցականն այս հոլովներից:

Ապա պ. Մալխասյանը կարծում է, որ եթե միայն ենթակա, սեռի խնդիր և տեղական խնդիր բացատրվի, աշակերտը կիմանա, որն է հայցականը, որը ուղղականը, որը տրականը: Այդ դեռ շատ քիչ է: Դրա համար նրան պիտի բացատրվի և բնության խնդիր, որպեսզի սեռի խնդրի հետ չշփոթի,— Տիգրանը սպանեց Վարդանին. Տիգրանը օգնեց Վարդանին: Իսկ սրա համար բայերի սեռը պիտի բացատրվի, և նա պիտի կարողանա ներգործական սեռով ասված խոսքը կրավորականի վերածել և ընդհակառակն. (տե՛ս Աշխ. հոլով., եր. 16 հետ.): Բայց այդ էլ դեռ քիչ է. որովհետև դրանով նա սեռի խնդիրը=հայցականը դեռ մասամբ միայն կջոկի տրականից=բնության խնդրից. պետք է նա սովորի և այն, որ կան որոշ թվով բայեր, որոնց սեռի խնդիրը տրական է դրվում. այսինքն «Տիգրանը սպանեց Վարդանին» [=Վարդանը սպանվեց Տիգրանից] խոսքի մեջ Վարդանին սեռի խնդիրը հայցական կոչել պիտի սովորի. իսկ «Տիգրանը հաղթեց Վարդանին» [=Վարդանը հաղթվեց Տիգրանից] խոսքի մեջ Վարդանին սեռի խնդիրը տրական կոչել պիտի սովորի: Բայց այս ևս դեռ բավական չէ: Նա պետք է և այս ձևերը սովորի. «Մայրը երեխային հագցրեց և տարավ», «Մայրը

երեխային հագցրեց վերնազգեստը և տարավ», այսինքն առաջին խոսքի մեջ երեխային հայցական է, իսկ երկրորդի մեջ տրական։ Բայց այս էլ դեռ բավական չէ։ Այսքանով նա դեռ միայն տրականը կշռկի հայցականից։ Աշակերտը դեռ պետք է ջոկի ստորոգյալն ու ստորոգյալի անուն կամ երկրորդ հայցական ասածը, որպեսզի ուղղական և հայցական ջոկի։ Ուրիշ խոսքով նա «Ծղբայրս Տիգրան կոչվեց» խոսքի մեջ պետք է իմանա, որ «Տիգրան» ուղղական է. իսկ «Ծղբորս Տիգրան կոչեցին» խոսքի մեջ «Տիգրան» հայցական է։ Բայց այդ էլ դեռ բավական չէ, «Երեխան հինգ ժամ քնեց», «Որսորդը հինգ վերստ հեռացավ» խոսքերի մեջ ժամ, վերստ բառերին հայցական ասել պիտի սովորի, իսկ «Նա յուր ժամանակին հասավ» խոսքի մեջ ժամանակին ձևին՝ տրական. ուրիշ խոսքով պարագայական խնդիրները, լինեն հայցական, թե տրական հոլովով, և ոչ թե միայն տեղական խնդիրը, ինչպես գրում է պ. Մալխասյանը։ Բացի այդ՝ նա պիտի սովորի և կոչական անուն, և մականվանական խնդիրը՝ «Վարդան զորավարից», որպեսզի իմանա, թե այստեղ «Վարդան» հայցական չէ, այլ ուղղական։ Նա պիտի սովորի և նախդիրների խնդրառությունը, որպեսզի իմանա, որ «դեպի նա», «դեպի Տիգրանը», «առանց հաց» և այլն ձևերի մեջ «նա, Տիգրանը, հաց» հայցական են և ոչ ուղղական և այլն, և այլն։

Ի՞նչ է դուրս գալիս. այնպես հեշտ չի եղել հայցականն ուղղականից և տրականից զանազանելը. դրա համար գրեթե ամբողջ սինտաքսիս պիտի սովորեցնել։ Իսկ պ. Մալխասյանն ասում է, թե բավական է, որ բացատրվի աշակերտին, և «աշակերտն էլ բնավ չի շփոթիլ»։ Ըրանի՞ այն վարժապետին, որի աշակերտներն էլ բնավ չեն շփոթում, երբ նա բացատրում է նրանց ենթական, սեռի խնդիր և տեղական խնդիր, ոչ թե մի անգամ, այլ տասն անգամ, հարյուր անգամ։

Բայց մենք այս խնդրի մյուս կողմը տեսնենք։ Եթե հայցականը որոշելու համար այդպես գրեթե ամբողջ շարահյուսությունը պիտի սովորեցնել, գոնե հոլովների բոլոր կիրառությունը՝ բացի բացառական, գործիական և ներգոյական հոլովներից,— ինչի՞ ապացույց է այդ. արդյոք նրա՞, որ հայցական հոլովը ձևականորեն գոյություն ունի, թե՞ գոյություն չունի։ Եվ մենք ճոլովե՞լ ենք սովորեցնում թե՞ ճոլովների կիրառություն, ձևաբանություն, թե՞ շարահյուսություն,— երկու բան, որ պ. Մալխասյանն իհարկե չի շփոթում իրար հետ։

* * *

Պ. Մալխասյանը մի վերջին մանկավարժական և գործնական բան էլ է ասում. «Երբ աշակերտը վաղ թե ուշ, կամ աշխարհաբարի ճամաձայնության մեջ, կամ գրաբար սովորելիս, կամ ռուսերենի միջոցով պետք է ճանաչի հայցական հոլովի գոյությունն ու ֆունկցիան և պետք է հասկանա, որ այդ ֆունկցիան գոյություն ունի և աշխարհաբարի մեջ՝ էլ ի՞նչ կարիք կա հենց ստուգաբանության մեջ այդ հոլովը չդնել ու

չբացատրել թե՛ նրա ձևը (թե նման է կամ ուղղականի կամ տրականի) և թե ֆունկցիան (թե նշանակում է հանգման և շարժողության նպատակակետ)»։

Ահա թե ինչու կարիք չկա։

1. Աշխարհաբարի ստուգաբանությունն աշխարհաբարի ստուգաբանություն է, գրաբարինը՝ գրաբարի, ռուսերենինը՝ ռուսերենի։ Աշխարհաբարի ստուգաբանությունը գրաբարի լեզվի համար չեն հարկնում և ոչ էլ ռուսերենի համար։

2. Աշխարհաբարի մեջ հայցականի ֆունկցիան գոյություն ունի, ինչպես ընդունում է և պ. Մալխասյանը, և ոչ ձևը, ուստի և ստուգաբանության=ձևաբանության մեջ, որ ձևերի ուսումն է, մենք չենք կարող գոյություն չունեցող մի ձևի համար ուսում դնել և աշակերտներին շփոթել տալ ձև և ձևի կիրառություն։

3. Եթե ուզենք էլ, գրաբարի և ռուսերենի ուսման դյուրության տեսակետից, այդ անել, մենք միայն մի թերի, անճիշտ բան կանենք, որովհետև մեր աշխարհաբարում հայցականի համար ձևերի հաստատուն կիրառություն չկա։ Հայցականի ձևը որոշել չի կարելի խոսքից դուրս։

4. Գոյություն չունեցող ձևի համար մի ֆունկցիա բացատրել ստուգաբանության=ձևաբանության մեջ, այդ ինձ անհասկանալի է (մանավանդ որ ոչ թե մի ֆունկցիա, այլ բազմաթիվ ֆունկցիաներ, որովհետև հայցականը միայն հանգման և շարժողության նպատակակետ» չէ նշանակում, այլ և շատ ուրիշ բան)։ Ես միայն այն գիտեմ, որ աշխարհի մանկավարժները, պ. Մալխասյանն էլ հետները, անգամ գոյություն ունեցող ձևերի ուսումը չոկում են այդ ձևերի ֆունկցիաների, նշանակության ուսումից, և ստուգաբանության մեջ ձևերի կազմության ուսումն են տալիս, իսկ շարահյուսության մեջ այդ ձևերի նշանակությունների ուսումը։

Ես միայն այն էլ գիտեմ, որ եթե պ. Մալխասյանի այս մանկավարժական հայացքը մի նշանակություն ունենար, ֆրանսիացիք, գերմանացիք և ուրիշ ազգեր էլ կհետևեին նրան։ Բայց նրանք այդ չեն անում։ Ֆրանսիացի աշակերտն էլ վաղ թե ուշ հին ֆրանսերենի, լատիներենի և կամ գերմաներենի միջոցով իմանում է, որ աշխարհում գոյություն ունի և հայցական հոլով. նա այն էլ է իմանում յուր լեզվի շարահյուսությունը սովորելիս, որ կրողի և այլն ֆունկցիան գոյություն ունի և յուր լեզվի մեջ. բայց և այնպես ֆրանսիացին ոչ միայն յուր լեզվի տարրական, այլ և ուրիշ դպրոցների համար հորինած քերականության մեջ, էլ չեմ ասում ստուգաբանության մեջ, չի դնում հայցական հոլով, չնայելով որ նույնիսկ մի քանի դերանունների համար հայցականի առանձին ձև էլ կա։ Ով այս հասկանալի է թե ինչո՛ւ Ֆրանսիացին յուր կենդանի լեզվի քերականությունը չի շփոթում հին ֆրանսերենի քերականության հետ, և ոչ էլ լատիներենի կամ գերմաներենի քերականության հետ։

Այսպես էլ պ. Մալխասյանն իհարկե չի հերքիլ, որ գերմաներենում կա գործնական հոլովի ֆունկցիա, և հին գերմաներենը նույնիսկ ունի առանձին գործնական հոլով, որ նորի մեջ դուրս է ընկել։ Նա չի հերքիլ իհարկե և այն, որ գերմանացի աշակերտը վաղ թե ուշ ճանաչում է և այն, որ այդ ֆունկցիան կա և յուր լեզվի մեջ, որ դրա համար հոլով էլ կա հին գերմաներենում և ուրիշ լեզուների մեջ,— բայց գերմաներենի քերականությունները չեն հետևում պ. Մալխասյանի մանկավարժական խորհրդին և ձևաբանության մեջ չեն մտցնում գործնական հոլով, և ոչ էլ ֆրանսիացիք՝ հայցական հոլով և մյուս հոլովները,— և ոչ էլ լատիներենի քերականության մեջ գործնական ու ներգոյական հոլով են դնում, թեպետ դրանց ֆունկցիան կա։

Եվ տեսնք այժմ, թե ինչպես պ. Մալխասյանը հանդիմանում է ֆրանսիացիներին*. «Գերմաներենն ունի հայցական հոլով, և ֆրանսիացի աշակերտը փոխանակ յուր մայրենի լեզվի միջոցով քերականության հիմնական գաղափարներն ստանալու և ապա օտար լեզվի քերականությունը նրա միջոցով ըմբռնելու, ինչպես ծրագրված է (հայոց) դպրոցական նախագծով, ինչպես և մանկավարժության պահանջն է՝ պետք է առաջին անգամ գերմաներենի միջոցով դաղափար ստանա հայցական հոլովի մասին և տարակույսներից ու հարց ու փորձերից հետո իմանա, թե ֆրանսերեն ևս կա հայցական հոլով, որ ինչպես գերմաներենում Er liebt sein Haus und seine Kinder նախադասության մեջ «Haus». «Kinder» հայցական են, այնպես էլ Il aime sa maison et ses enfants խոսքի մեջ՝ maison և enfants հայցական են, և ոչ թե առաջինն ուղղական (խնդիր) (=ուղիղ խնդիր, complément direct) և երկրորդը (նույնպես) ուղղական (խնդիր**)»։ «Ո՛րքան ցանկալի է, որ աշակերտը սխալ ըմբռնողության մեջ մնա քերականական մի կարևոր ֆունկցիայի վերաբերմամբ, և միայն օտար լեզվի միջնորդությամբ ճիշտ գաղափար ստանա այդ ֆունկցիայի մասին և յուր սխալն ուղղե»։ Այսպես բացականչում է պ. Մալխասյանը, մոռանալով որ խընդիրը հոլովի, հոլովական ձևի մասին է և ոչ թե ֆունկցիայի, մոռանալով, որ այդ ֆունկցիան աշակերտը սովորում է complément direct, ուղիղ խնդիր, կրող առարկա, սեռի խնդիր անունների տակ։

Բայց ֆրանսիացին իհարկե ականջ չէ դնում պ. Մալխասյանի այս մանկավարժությանը և կարիք չի զգում յուր կենդանի լեզվի քերականություն սովորեցնելիս ուշ դարձնել, թե գերմաներենում կամ հին ֆրյոանսերենում complément direct-ի=սեռի խնդրի, կրող առարկայի ֆունկցիան մի առանձին հոլովով է արտահայտվում, ուստի և նա յուր լեզվի մեջ, լեզվի վրա բռնություն գործ դնելով՝ չի մտցնում ուղղական և

---

* Ամբողջը պ. Մ.-ի խոսքերն են՝ միայն ռուսերենի տեղ դրած է գերմաներեն. հայ և հայերենի տեղ՝ ֆրանսիացի, ֆրանսերեն։

** Հայերենում, իհարկե, երկրորդը սրական խնդիր։

հայցական հոլով և ընդհանրապես հոլով, և իզուր տեղն աշակերտին չի ծանրաբեռնում ասելով, թե հայցական հոլովը նման է ուղղականին։ Նա յուր լեզվի քերականությունը սովորեցնելիս կարիք չի զգում հենց ըսկզբից մատնանիշ անելու այս երևույթի վրա, կարծեցյալ «բազմաթիվ խառնաշփոթություններից խույս տալու համար»։ Ընդհակառակն նա շատ լավ հասկանում է, որ եթե սկզբից այդպիսի բաներ ասե յուր աշակերտին, աշակերտի գլուխն իսկապես որ մի խառնաշփոթություն կդառնա, որովհետև սկզբից հենց աշակերտը չի կարող ըմբռնել հին և նոր, մայրենի և օտար լեզուների այս տարբերությունները։

Եվ վերջապես ֆրանսիացի և գերմանացի քերականն ու մանկավարժը գիտեն, որ հին և նոր, մայրենի և օտար լեզուների քերականությունները հոլովների նկատմամբ հաճախ տարբերվում են իրարուց, որ այդ տարբերությունները ծնունդ են ամեն լեզվի յուր պատմական զարգացման, և որ հոլովների նկատմամբ բոլոր լեզուների մեջ միակերպ «հիմնական գաղափարներ» չկան, որովհետև հոլովները տրամաբանական անհրաժեշտության վրա չեն հիմնված։ Ուստի և ոչ ֆրանսիացի և ոչ գերմանացի մանկավարժը չեն կարող իրենց դպրոցական նախագծով ծրագրել, որ երեխան յուր մայրենի քերականության մեջ սովորի այնպիսի բան, որ յուր լեզվի մեջ չկա, այլ օտար լեզուների մեջ. ինչպես օրինակ հայ երեխան հայոց լեզվի քերականության մեջ սովորի անունների, դերանունների և բայերի քերականական սեռերը՝ արական, իգական և չեզոք, որ կան ռուսերենում։ Այլ նրանք դպրոցական նախագծի մեջ կծրագրեն, որ երեխան յուր մայրենի լեզվի քերականությամբ միայն յուր մայրենի լեզվի քերականության հիմնական գաղափարները ստանա և ապա նոր այդ գաղափարների միջոցով ըմբռնի օտար լեզուների քերականությունը։ Ուրիշ խոսքով՝ մայրենի լեզվի քերականությունն այն բանով պիտի օգնի օտար լեզվի քերականությունն ըմբռնելուն, ինչ որ ընդհանուր է մայրենի և օտար լեզվին, այսինքն երկսի մեջ էլ կա, և ոչ թե այն բանով, որ օտար լեզվի մեջ կա, իսկ մայրենի լեզվի մեջ չկա,— ինչպես պահանջում է պ. Մալխասյանի մանկավարժությունը։

Եվ այսպես պ. Մալխասյանի բոլոր առարկությունները մի առ մի տեսանք և իմացանք նրանց արժեքը։

1. Զևականորեն,— ինչպես Մալխասյանն էլ յուր հոդվածի վերջում կողմնակի ընդունում է,— հայցական հոլով չկա մեր աշխարհաբարում. որովհետև դրա համար հատուկ ձև չկա։

2. Պատմականորեն՝ մեռել է մեր հայցական հոլովը, նրա տեղ անցել են ուղղականն ու տրականը։

3. Տեսականորեն ոչ մի արգելք չկա աշխարհաբարում հայցական հոլով չլինելուն, որովհետև հոլովների քիվն ու նրանց նշանակություն-

ները հիմնված չեն տրամաբանական անհրաժեշտության վրա, այլ արդյունք են լեզվի պատմական զարգացման։ Հին լեզվի մեջ մի հոլով կարող է սահմանափակ թվով ֆունկցիաներ ունենալ, նորի մեջ ավելի, կամ ընդհակառակն։ Այսպես և մի լեզվի մեջ այս ինչ ֆունկցիաները, այս դեպքում կրող առարկայի ֆունկցիան, կարող է մի հոլով կատարել, մի ուրիշ լեզվի մեջ նույն ֆունկցիան կարող է մի ուրիշ հոլով կատարել ուստի և տեսականորեն մենք ազատ կերպով կարող ենք ասել թե սեռի խնդիրը աշխարհաբարում դրվում է ուղղական և տրական հոլովներով։ Եվ ինքը պ. Մալխասյանն էլ հո՛ ընդունում է, որ սեռի խնդիրը կարող է տրական դրվել և որ կրողի ֆունկցիան կարող է ուղղականն արտահայտել։

4. Գործնականորեն անհնարին է մեր աշխարհաբարի ձևաբանության մեջ հոլովների շարքում դնել հայցական առանց անճիշտ, քերի բան անելու, որովհետև մեր լեզվի մեջ հայցականի համար չկա ձևերի հաստատուն կիրառություն և հայցականի դիմաց հաճախ չենք կարող ասել թե որ ձևը պիտի դնենք, ուղղականի՞, թե՞ տրականի, թե՞ երկուսն էլ։

5. Մանկավարժորեն՝ կարծեցյալ է պ. Մալխասյանի խոսքը «շատ մեծ վնասներ» պատճառելու նկատմամբ։ Ընդհակառակն, բառերի ֆունկցիայից ոչինչ չկորցնելով, քերականական ուսումը շատ հեշտանում է այդ վերացումով։

Եվ վերջապես հայկաբանորեն՝ մեր լեզվի քերականության մեջ գոնե չպիտի պղտորենք մեր առանց այն էլ օտար լեզուներից պղտորված լեզվական զգացմունքը։ Մեր լեզուն հին հայցականի արտահայտած հարաբերությունները մտցրել է ուղղականի հարաբերությունների ձևական խմբի մեջ, մասամբ և տրականի, հետևենք ուրեմն մեր լեզվին, մեր բնական լեզվական զգացմունքին։

«Այսօր իսկապես մի աներկբայելի իրողություն է, որ մեր լեզվի օրենքների պայծառ հասկացողությո՛ւնը միայն՝ առաջնորդում է մեզ լեզվին ազատ և կատարելապես իշխելու, այն ժամանակ, երբ մեր լեզվական զգացումը մանկությունից արդեն ամենահեշտ կերպով պղտորվում է օտար լեզուներ սովորելով»։ Եվ այս ասում է գերմանացի քերական գերմաներենի համար. իսկ թե ո՛րքան մեր այժմյան հայի լեզվական զգացումն է պղտորվում մանկությունից օտար լեզուներով՝ թուրքերենով, ռուսերենով ու վրացերենով, և նույնիսկ մինչ այժմ մեր գրաբարով,— այդ երևակայել միայն պետք է։ Եվ այսքան պղտորումը բավական չէ, պ. Մալխասյանն յուր մանկավարժությամբ ուզում է, որ մեր հայերենի քերականությունն ևս մեր կենդանի հայերենի օրենքները պայծառ հասկանալու համար չհորինվի, այլ ռուսերենի ու գրաբարի։

ԳՐԱԲԱՐԻ
ՓԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այս «Գրաբարի քերականության» առաջին տպագրությունը 1907 թ. պատրաստված էր մեր միջնակարգ դպրոցների վերին դասարանների համար։ Այժմ նույնը վերամշակված և մի փոքր ընդարձակված լույս է ընծայվում մեր բարձրագույն դպրոցների ուսանողների և առհասարակ նրանց համար, որոնք ցանկանում են մեր հին լեզուն ուսումնասիրել։

Քերականության մեջ կարևոր է համարված մեջ բերել համեմատաբար շատ օրինակներ և դժվար կտորները թարգմանված են աշխարհաբար։ Օրինակների հեղինակների անունները չեն հիշված՝ գրքի ծավալը չմեծացնելու համար. դրանք առնված են մեր հին հայտնի մատենագիրներից՝ Եզնիկ, Ագաթանգեղոս, Բուզանդ, Եղիշե, Մովսես Խորենացի, ինչպես և Ավետարանից և այլն։

1936 թ. հունիսի 25.
Երևան

Մ. Ա.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԲԱՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

1. *Հայոց գրերի գյուտը եղել է 5-րդ դարի սկիզբներին Մեսրոպ Մաշտոցի ձեռով։ Այդ ժամանակներից սկսած՝ թարգմանություններ են անում ասորերենից ու հունարենից, ապա գրում են նաև ինքնուրույն գրքեր։*

Իբրև գրական լեզու բանեցնում են քաղաքական ու կրոնական կենտրոնների—Վաղարշապատ և Արտաշատ մայրաքաղաքների բարբառը, որով հորինում էին և երգիչները։ Մեր այդ հին գրական լեզուն, որ սովորաբար կոչվում է **գրաբար** *(գրոց լեզու), այլև* **ճիշ ճայերեն**, *գործ են ածում և հետո, նույնիսկ մինչև 19-րդ դարի կեսերը։*

Օրինակելի դասական լեզու, որին նմանում էին հետագայում, համարվում էր ամենից առաջ Մ. Գրքի թարգմանության լեզուն, ապա՝ ուրիշ գրքերի—Սղնիկ Կողբացու «Ծղծ աղանդոց», Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց», Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց», Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց», այլև Ղևոնդի «Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին» (Պատմութիւն Վարդանանց»), Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» և ուրիշները։

Միջին դարերում, երբ գրաբարն ու սովորական խոսակցական լեզուն բավական տարբերվում էին միմյանցից, առաջ է գալիս միջին գրական լեզուն կամ միջին ճայերենը, որ բանեցնում էին բանաստեղծական, բժշկական և աշխարհիկ բնավորություն ունեցող այլ գրվածքների համար։

Եվ վերջապես 19-րդ դարի առաջին քառորդից սկսած, արարատյան բարբառի հիման վրա, զարգանում է նոր **գրական լեզուն կամ աշխարհաբարը**: *Դա Խ. Հայաստանի և ԽՍՀՄ-ի այլ կողմերի հայության գրական լեզուն է։ Ունենք նաև արևմտյան գրական լեզուն, որ գործածում են Կ. Պոլսի, Արևմտյան Եվրոպայի և այլ երկրների հայերը (բացի Իրանից)։*

2. *Գրաբարի և աշխարհաբարի* **ԲԱՌԵՐԸ** *մեծ մասամբ նույնն են. սակավաթիվ բառեր կան գրաբարում, որոնք աշխարհաբարում չեն գործածվում։*

Պետք է նկատի ունենալ, որ գրաբարում բառերը երբեմն ուրիշ իմաստով են առնվում, քան ինչ որ աշխարհաբարում. օրինակ՝ մորթել գրաբարում նշանակում է մորթազերծ անել, բերթել և ապա երկրորդաբար՝ փողոտել, վիզը կտրել. իսկ աշխարհաբարում նույն բառը գործ է ածվում միայն երկրորդ իմաստով։

Կան բառեր էլ, որ գրաբար և աշխարհաբար նույն նշանակությունն ունեն, բայց միմյանցից զանազանվում են որոշ հնչափոխությամբ. օրինակ՝ գրաբարի լեառն, մտանել, փախուցանել, լոյս, յաւրմար բառերն աշխարհաբար լինում են՝ լեռ, մտնել, փախցնել, լույս, ճարմար։

3. Բառակազմության նկատմամբ գրաբարն և աշխարհաբարն իրարուց առանձին տարբերություն չունին, ուստի այդ մասին չի դրված այս քերականության մեջ[1]։

Դրաբարի էական տարբերությունն աշխարհաբարից՝ ձևաբանության և շարահյուսության մեջ է։

4. Ձևաբանության համար պիտի իմանալ.

ա) Կան ձևեր, որ գրաբար և աշխարհաբար բոլորովին նույնն են, օրինակ՝ գնացի, գնա՛, քաղաքի, գործով։

բ) Կան ձևեր, որ գրաբար և աշխարհաբար նույնն են՝ միայն իմաստի շրջումով, օրինակ՝ գնամ, գնաս, գնայ գրաբարում նշանակում են ավելի՝ գնում եմ, գնում ես, գնում է, և երկրորդաբար՝ կը գնամ, կը գնաս, կը գնա կամ գնամ, գնաս, գնա։

գ) Կան ձևեր, որ գրաբար և աշխարհաբար նույնն են՝ միայն որոշ հնչափոխությամբ, օրինակ՝ փախեայ, փախեար, փախեաւ ևլն աշխարհաբարում լինում են՝ փախա, փախար, փախավ։

դ) Կան ձևեր ևս, որ աշխարհաբարում նոր կազմված են ուրիշ ձևերի նմանությամբ, կամ գրաբարի մի սովորական ձևի փոխանակել է մի ուրիշ սովորական կամ քիչ պատահող ձև, օրինակ՝ անցյալ կատարյալի՝ ճասի, ճասեր, ճաս, ճասամ, ճասեք, ճասին ձևերի տեղ անցել են ուրիշ բայերի համար սովորական ա ձայնավորով վերջավորությունները՝ հասա, հասար, հասավ, հասանք, հասաք, հասան։ Այսպես և հրամայականի հոգն. 2-րդ դեմքի համար գրաբարի էք, այք, աւրուք, իք վերջավորություններից աշխարհաբարում մնում է բոլոր բայերի համար միայն էք վերջավորությունը։ Իսկ անունների հոգնակի թվի համար ընդհանրացել է եար, ևեար=եր, ևեր մասնիկը, որ գրաբարում քիչ է պատահում։

5. Շարահյուսությունը գրաբարում և աշխարհաբարում մեծ մասամբ նույնն է. երկուսի հիմնական տարբերությունը հետևյալն է.

ա) Կողմնակի խնդիրները գրաբարում սովորաբար իրենց խնդրառուից հետո են դրվում, մինչդեռ աշխարհաբարում առաջ են ընկնում. օրինակ՝ բարձումն ազգին Արշակունեաց=Արշակունյաց ազգի բարձումը[2]։

բ) Վերադիր ածականները գրաբարում կարող են իրենց գոյականից հետո էլ դրվել և ետադաս ժամանակ սովորաբար, երբեմն և նախադաս ժամանակ, թվով և հոլովով համաձայնում են իրենց գոյականին, մինչդեռ աշխարհաբարում ածականներն անփոփոխ են մնում, օրինակ՝ մեծ զօրութիւն, մեծի զօրութեան, մեծաւ զօրութեամբ ևլն, կամ ետադաս՝ զօրավարն քաջ, զօրավարին քաջի, ի զօրավարէն քաջէ ևլն, աշխարհաբար լինում է՝ մեծ զորություն, մեծ զորության, մեծ զորությամբ,—քաջ զորավարը, քաջ զորավարին, քաջ զորավարից ևլն։

գ) Գրաբարում շատ գործածական են՝ զ, ի (յ) ց, ւտ, րեղ, ըստ նախդիրները՝ զանազան իմաստներով. դրանց փոխանակում են աշխարհաբարում զանազան հոլովներ կամ ուրիշ կապեր ու կապական բառեր. օրինակ՝ ընդ ծառով=ծառի տակ։ Զքաղաքաւն=քաղաքի շուրջը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

ՀԻՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. *Մեսրոպյան այբբենարանով ամեն հնչյուն ունեցել է մի նշանագիր, և ամեն տառ հատկացված է եղել մի որոշ հնչյունի։ Գրությունն, ուրեմն, ճշտությամբ արտահայտել է արտասանությունը. Ըրինակ՝* **որդի, մարդոյ, պատուել, յատակ** *արտասանվել են այնպես, ինչպես գրվել են՝ իբրև* ordi, mardoy, patuel, yatak *(ռուսերեն՝* орди, мардой, патуэл, йатак)։

7. *Ձայնավորներն են՝* **ա, ե, է, ը, ի, ո, ու**: *Վերջին ձայնավորն ու երկտառով է նշանագրված ըստ հունարենի* **ου** *ձայնավորի։*

Կարճ ու երկար ձայնավորներ չեն եղել։ Նույնահնչյուն **ե** *և* **է** *ձայնավորներից* **ե**-*ն եղել է հավանորեն բաց, իսկ* **է**-*ն՝ փակ, թերևս մի փոքր երկար, քանի որ դա փոխանակում է* **ե**+**յ** *կապակցությանը։*

8. Յ *տառի հնչյունը եղել է միշտ անվանկային կամ բաղաձայնական* **ի** (i), *ինչպես և այժմ.* **յարմար, յեղուկ, յիմար, յուզել, յղի** (յըղի). **յոգնակի** *և նմաններն արտասանվել են սկզբի* **յ**=y (i, *ռուսերեն* й) *հնչյունով։*

ի *տառի հնչյունը եղել է անվանկային կամ բաղաձայնական (*ի ,ա w)։ *Այս հնչյունով ոչ մի բառ չի սկսվում։*

յ *և* **ի** *հնչյուններով կազմվել են երկբարբառներ։*

Նշ.— Միջնադարում **ի** *տառի անունը՝ «իւն» արտասանում էին «հիւն», բանաստեղծները, այդ տառի անվան արտասանության ազդեցությամբ,* **ե**-*ով սկսվող մի քանի բառեր գրել են* **ւ**-*ով—իւթ, իւծեալ, իւսել, իւր—հատկապես այն դեպքերում, երբ տողի առաջին բառը պետք է* **ւ**-*ով սկսվեր։*

9. Երկբարբառներն *են՝*

Այ (ai, ay),—*երկայն, ծառայ.*
Ոյ (oi, oy),—*լոյս, ներքոյ.*
Աւ (aփ, aw,)—*ամաւթ, աւր.*

Եւ (eu, ew),—*արեւն, մեծութեւն.*
Իւ (iu, iw),—*իւր, դիւթ.*
Եա (ea),—*սենեակ, մատեան.*
Իո (uo, wo),—*հոգւոց, որդւով, աստրւոց, հոտմայեցւոց։*

կան նաև **եռաբարբառներ**

Եաւ (eau, eaw),—*այգեաւ, արդեաք.*
Եայ (eaյ, eay),—*քրիստոնեայ, պաշտաունեայ.*
Իոյ (uoյ, woy),—*հոգւոյ, խորենացւոյ։*

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10. *Հին հայերենը կրել է հնչափոխություն, ինչպես և ամեն լեզու։ 19-րդ դարի սկիզբներից ի վեր գրաբար գրվածքները կարդում են մեզնում սովորաբար փոխված ավանդական արտասանությամբ, որի սկիզբը շատ վաղ է եղել։ Եվրոպացի հայագետները, սակայն, պահում են հին արտասանությունը. մարդոյ բառն, օրինակ, նրանք արտասանում են ըստ գրության* mardoy, *իսկ մենք կարդում ենք* **մարքո**։

11. *Ձայնավորների փոփոխությունները հետևյալներն են ըստ գրաբարի ավանդական արտասանության.*

է ձայնավորը նույնացել է ե ձայնավորի հետ, օրինակ՝ պարտէզ= պարտեզ։

Ու ձայնավորը բառամիջում հաջորդ ձայնավորից առաջ դարձել է վ. օրինակ՝ նուաստ, պաւուէր=նվաստ, պատվեր։

ե ձայնավորը բառասկզբում արտասանվում է յե (ye, ye), օրինակ՝ եղէգն, եկ=յեղեգն, յեկ։

Ո ձայնավորը բառասկզբում արտասանվում է վո, օրինակ՝ որ, ոդի=վոր, վոգի։

12. *Յ տառը բառասկզբում արտասանվում է ճ, օրինակ՝ յաճախ, յուզել=հաճախ, հուզել։*

13. *Ի տառը ԻՈ երկբարբառի մեջ, ինչպես և բառամիջում երկու ձայնավորների միջև և բառավերջում արտասանվում է վ, օրինակ՝ հաւասար, համբաւ, երեւելի, տերեւ, հիւանդ, հովիւ=հավասար, համբավ, երեվելի, տերեվ, հիվանդ, հովիվ։ Այսպես և հոգւոց, հոտմայեցւոց=հոգվոց, հոտմայեցվոց, բայց հաճախ նաև՝ հոգոց, հոտմայեցոց։*

14. *Երկբարբառները կրել են հետևյալ փոփոխությունները.*

Այ, Ոյ երկբարբառները բառավերջում արտասանվում են ա, ո օրինակ՝ ծառայ, երեկոյ=ծառա, երեկո, բայց՝ ծառային, երեկոյին։

Մի քանի միավանկ բառերի վերջում պահվում է յ-ն հայ, նայ, խոյ։

Ոյ երկբարբառը բառամիջում բաղաձայնից առաջ արտասանվում է ույ, օրինակ՝ լոյս, քոյր=լույս, քույր։

ԵՒի երկբարբառը բաղաձայնից առաջ դարձել է օ, որ հավանորեն եղել է փակ և ավելի երկար, քան ո տառի հնչյունը. ուստի միջնադա-

րում մեր այբբենարանի մեջ մտցրել են օ տառը։ Տպագրությունների մեջ հին աւ երկբարբառի փոխանակ ընդհանրապես դնում են օ, այսպես՝ ամաւթ, աւր, արաւր=ամօթ, օր, արօր։

Հետագայում այս հնչյունը նույնացել է ո տառի հնչյունի հետ և այդ բառերն արտասանվում են՝ ամոթ, օր, արոր։

Իւ (իվ) երկբարբառը բաղաձայնից առաջ արտասանվում է յու (իվ)։

Եւ երկբարբառը բաղաձայնից առաջ դարձել է իւ, օրինակ՝ առեւծ, արեւն=առիւծ, արիւն, որոնք և արտասանվում են՝ առյուծ, արյուն։

Տպագրությունների մեջ ընդունված է առիւծ, արիւն գրությունը։

Եա երկբարբառն արտասանվում է յա օրինակ՝ սենեակ=սենյակ։

Եաւ բաղաձայնից առաջ դարձել է եօ, որ և արտասանվում է յո, օրինակ՝ արդեաւք=արդեօք=արդյոք։

Եայ արտասանվում է յա, օրինակ՝ քրիստոնեայ=քրիստոնյա։ Իսկ քրիստոնեայք, քրիստոնեայն, արտասանվում են՝ քրիստոնյայք, քրիստոնյայն։

15. Ե տառի փոխանակ թե, եթե բառերի վերջում հետագայում գրվել է՝ թէ, եթէ։

Այսպես և բայերի անցյալ անկատարը, որ հնագույն գրությամբ եղել է՝ եի, եիր, եաք, եիք, եին. գրեի, գրեիր, գրեաք, գրեիք, գրեին, հետագայում դարձել է՝ էի, էիր, էաք և այլն։

16. Բաղաձայնների ավանդական արտասանությունը գրաբարում նույնն է, ինչ որ աշխարհաբարում։ Եթե աշխարհաբարում Բ, Գ, Դ, Ձ, Ջ հնչյուններին փոխանակել են Փ, Ք, Թ, Ց, Չ, իսկ Պ, Կ, Տ, Ծ, Ճ հնչյուններին՝ Բ, Գ, Դ, Ձ, Ջ, նույնը լինում է գրաբարում։ Այսպես՝ հին երգ, որբ, մարդ, դարձ արտասանվում են՝ երք, որփ, մարթ, դարց։

17. Ղ տառի հնչյունն սկզբնապես եղել է Լ հնչյունին մոտիկ մի հնչյուն, կատակային լ, որ արտասանվել է լեզվի ետևի մասի և կատկի միջև։ Հետագայում այդ հնչյունին փոխանակել է այժմյան ղ հնչյունը, ինչպես լսում ենք «աղաղակել» բառի մեջ։ Դա անձայն խ հնչյունի համապատասխան ձայնեղ հնչյուն է, որ բաղաձայններից առաջ սովորաբար դարձել է խ, ինչպես՝ աղջիկ, աղբ բառերի մեջ։

Մի քանի բառի մեջ ղ հնչյունը դարձել է լ, ինչպես՝ մառախուղ, աղ, բայց՝ մառախլապատ, մառախլուտ, անալի (անլի, ալանի=անաղի)։

Ձեռագիրների մեջ Ղ տառը գրվում էր հաճախ փշիկով ղ՛, օրինակ՝ «այղ», որ դարձել է և գրվում է այժմ «այլ»։

18. Հին հայերենում չի եղել երկար Ո ձայնավոր. Թարգմանիչները հունարենի ω տառը հատուկ անունների մեջ նշանագրել են ով ձևով, որ հնում հավանորեն արտասանվել է իբրև ո ձայնավոր, բայց ավանդաբար արտասանվում է, ինչպես գրվում է, օրինակ՝ Սիմովն։

Հին հայերենում չի եղել Ֆ հնչյունը. այլազգի անունների ու բառերի մեջ այդ հնչյունին փոխարինում է հայերենի Փ հնչյունը։

Ֆ տառը հետագայում է մտել մեր այբբենարանի մեջ։

ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

19. Դրաբարի շեշտադրությունը նույնպիսի է, ինչ որ նոր գրական լեզվինը։ Շեշտվում են բառերի վերջին վանկերը, օրինակ՝ բարեկա՛մ. բարեկամի՛, բարեկամանա՛լ։

Ը ձայնավորը միշտ անշեշտ է մնում. ուստի երբ վերջին վանկի ձայնավորն է Ը, որ չի գրվում, շեշտվում է վերջընթեր վանկը, օրինակ՝ ա՛ստղ—ա՛ստղը, բա՛րձր—բա՛րձրը, ուսո՛ւմն—ուսո՛ւմըն, դո՛ւռն—դո՛ւռըն։

Կցական բարդությամբ կազմված մի քանի բառեր շեշտ ունին սովորաբար սկզբի վանկի վրա, օրինակ՝ ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, նո՛յնպէս, ա՛յսպիսի, ո՛րպէս, ո՛չինչ, ահա՛ւասիկ, ահա՛ւադիկ, ահա՛ւանիկ=ահա՛ աւասիկ, ահա՛ աւադիկ, ահա՛ աւանիկ,—նույնպես շեշտվում են ա՛յսորիկ, ա՛յդորիկ, ա՛յնորիկ, յա՛յնմանէ և այլն։

ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

20. Վերջին փակ վանկերի ի, ու, է ձայնավորները ոչ, եա երկբարբառները և բառավերջի եայ եռաբարբառը փոփոխություն են կրում, երբ բառավերջից հետո նոր վանկ է ավելանում և շեշտն անցնում է դրա վրա։ Ձայնափոխությունն այսպես է լինում.

Ի, ու ձայնավորները դառնում են Ը կամ դուրս են ընկնում, օրինակ՝ սիրտ, սրտի—սըրտի. երկին, երկնի. ջուր, ջրոյ—ջըրոյ. անուր. անրի։

է ձայնավորը դառնում է Ի, օրինակ՝ պատուէր, պատուիրել. էջ, իջի, իջանել։

ՈՅ երկբարբառը դառնում է ՈՒ, օրինակ՝ լոյս, լուսոյ. ողջոյն, ողջունել։

ԵԱ երկբարբառը դառնում է ե, օրինակ՝ սենեակ, սենեկի. մատեան, մատենագիր։

ԵԱՅ եռաբարբառը դառնում է է, օրինակ՝ քրիստոնեայ, քրիստոնէի, քրիստոնէութիւն. պաշտօնեայ, պաշտօնէի։

Ծան.—Այս եռաբարբառի միջի ա ձայնավորը դուրս է ընկնում, ինչպես և նախորդ եա երկբարբառի վերաբերմամբ լինում է ձայնափոխությունը frիստոնեայ դառնում է քրիստոնէի, որ գրվում է frիստոնէի, որովհետև ե+յ կապակցությանը փոխանակում է միշտ է։

Բառավերջի ԻՒ որ արտասանվում է իվ, դառնում է ՈՒ, օրինակ՝ թիւ, թուոյ, թուել, պատիւ, պատուոյ, պատուել։

ԵՒ երկբարբառը, որ հետագայում դարձել է ԻՒ, երևան է գալիս միայն վերջին վանկերի մեջ, այնպես որ պետք է ընդունել, որ դա ևս հին ժամանակներում ձայնափոխությամբ դառնում էր ԻՒ, օրինակ՝ առեւտ, առիւծու. հարեւր, հարիւրոյ. եւղ. իւղոյ. թիւր, թիւրել. հեւս, հիւսի, հիւսել։

Ի+Ա կապակցությունը դառնում է ԵԱ, օրինակ՝ *բարի-աւ դառնում է, բարեաւ, *բարի-ա-կամ, դառնում է *բարեակամ, ապա՝ բարեկամ։

Ծան.— Կան բառեր, որոնց վերջին վանկերի ձայնավորները տարբեր փոփոխություն են կրում, կամ անփոփոխ են մնում, օրինակ՝ եղէգն, եղեգան, եղեգնիկ. իժ, իժի և այլն։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բ Ա Ց

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

21. *Անորոշ դերբայը վերջանում է* –ալ, –ել, –իլ, –ուլ *ձևերով, օրինակ՝* խաղալ, գրել, ուսանիլ, հեղուլ:

Վերջավորությունից առաջ եղած ձայնավորները՝ ա, ե, ի, ու՝ *կոչվում են լծորդ ձայնավորներ: Մեկ բայ միայն՝* գոլ՝ *ունի* ո *ձայնավորը:*

Լծորդն անորոշ դերբայի մեջ սովորաբար փոխվում է ե *լծորդի. օրինակ՝* խօսիլ, ուսանիլ, փախչիլ *ձևերի փոխանակ գործ են ածվում՝ խօսել, ուսանել, փախչել: Այս պատճառով՝ բայերն անվանելու համար առնվում են Սահմանական ներկայի եզակի 1-ին դեմքերը, օրինակ՝* խաղամ, գրեմ, ուսանիմ, հեղում:

Նաև.—Ուլ լծորդն աշխարհաբարում փոխվել է –ել *ձևի, օրինակ՝ արգելուլ—արգելել, կիզուլ—կիզել:*

ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԲՆԵՐ

22. *Բայերը մեծ մասամբ նույն կազմությունն ունեն, ինչ որ աշխարհաբարում:*

Ներկայի բունը *վերջանում է՝*

1) Սուսկ –ամ, եմ, –իմ, –ում *ձևերով, որոնք դրվում են բայերի ներկայի բնի կամ հիմքի վրա, օրինակ՝* գն-ամ, բեր-եմ, խօս-իմ, հեղ-ում:

Նաև.—Հիմքը կամ ներկայի բունը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ, լինի պարզ, բարդ թե ածանցական: Օրինակ՝ կարդ-ամ, խաղ-ամ, կառավար-եմ, լուսավոր-իմ *բայերի հիմքերն են՝* կարդ *(բայարմատ),* խաղ *(պարզ բառ),* կառավար *(բարդ բառ),* լուսաւոր *(ածանցական բառ):*

2) Ածանցավոր –աճ–ամ, –են–ամ, –ան–եմ, –ան–իմ, –չ–իմ, –ն–ում, –ուց–ան–եմ *ձևերով, օրինակ՝ գոհ-անամ, մերձ-ենամ, տես-անեմ, ուս-անիմ, փախ-չիմ, զարթ-նում, փախ-ուց-անեմ։*

Վերջին ձևով կազմվում են պատճառական բայերը՝ փախուցանեմ, հեռացուցանեմ, մերձեցուցանեմ և այլն։

Վեց բայ –չ– *ածանցի փոխանակ ունեն՝* –նչ–, –անչ–, –աչ– *ձևերը՝ կոր-նչ-իմ, երկ-նչ-իմ, մարտ-նչ-իմ, յար-նչ-իմ, մեղ-անչ-եմ, ճան-աչ-եմ։*

Նշ.—Բազմապատկական բայերը կազմվում են՝ –ատ–, –ստ–, –տ– *ածանցներով՝ խած-ատ-եմ, յօշ-ոտ-եմ, կրճ-տ-եմ։ Այս կազմության բայերը խոնարհվում են ինչպես սոսկ* –եմ *վերջացածները։*

23. Կատարյալի բունը *մեծ մասամբ նույն կազմությունն ունի, ինչ որ աշխարհաբարում։*

1) Պատճառական բայերի բնի ածանցն է ոյց, *օրինակ՝ մատոյց, ուսոյց։*

2) Աց *ածանցն ունեն* –ամ, –անամ *վերջացած բայերը, օրինակ՝ խաղ-ամ, զարմ-անամ ունեն՝ խաղաց, զարմաց, որոնցից կազմվում են պատճառական բայեր՝ խաղաց-ուց-անեմ, զարմաց-ուց-անեմ։*

3) Եաց *ածանցն ունեն* –եմ, –իմ, –ենամ *վերջացած բայերը, օրինակ՝ յիշ-եմ, խօս-իմ, մերձ-ենամ ունեն՝ յիշեաց, խօսեաց, մերձեաց, որոնցից կազմվում են պատճառական բայեր, յիշեց-ուց-անեմ, խօսեց-ուց-անեմ, մերձեց-ուց-անեմ։*

4) Արմատն իբրև բուն *բանում է* –անեմ, –անիմ, –չիմ, –նում, –ում *վերջացած բայերի համար, օրինակ՝ հաս-անեմ, ուս-անիմ, թռ-չիմ, զարթ-նում պատճառական ունին՝ հաս-ուց-անեմ, ուս-ուց-անեմ, թռ-ուց-անեմ, զարթ-ուց-անեմ։*

Մարտնչիմ *ունի՝ մարտ-ուցանեմ,* երկնչիմ՝ *եր-կուցանեմ կամ եր-կեցուցանեմ,* յարնչիմ *կամ* յառնեմ՝ *յարուցանեմ,* մեղանչեմ՝ *մեղուցանեմ.* ճանաչեմ, *ծանուցանեմ։*

24. *Գրաբարում պատճառական իմաստ են ստանում բայերը, երբ անորոշ դերբայի հետ դրվում են առնեմ, տամ բայերը. օրինակ՝ առնեմ, մատանել=մուծանեմ, մատուցանեմ. առնեմ, աշխատել=աշխատեցուցանեմ, առնեմ տալ ևլն։ Նույնպես՝ տամ ածել=բերել տամ. տամ տանել=տանել տամ. տամ գրել=գրել տամ ևլն։* Տամ *բայի այս գործածությունը շատ սովորական է ինչպես և աշխարհաբարում. իսկ առնեմ բայն այս կիրառությամբ քիչ է պատահում։ Օրինակ՝ Արա՛ այսր մատանել։ Առնիցես զմեզ աշխատել։ Արա՛ վախճան դադարման առնուլ։ Արասցես զօրանալ։*

Երբեմն առնեմ բայից հետո անորոշ դերբայի տեղ դրվում է երկրորդական խոսք զի շաղկապով. օրինակ՝ Արարից, զի յարդարութիւնս իմ գնայցէք (=գնացուցից)։ Արարից զնոսա, զի եկեսցեն և երկիր պագցեն առաջի ոտքից քոց։ Ես արարից, զի լացցես։

Նան.—Աշխարհաբարի պատճառական բայերը ծագում են գրաբարի պատճառական ձևերից հնչափոխությամբ, այն է՝ պատճառականի ու և ա ձայնավորները սղվում են. օրինակ՝ բռուցանել, ճասուցանել դառնում են բռնցնել, հասցնել։ Աց, եաց բների և այց ածանցի երկու ց բաղաձայնները՝ ձայնավորների սղվելով՝ իրար մոտ են գալիս և դրանցից երկրորդ ց տառը դուրս է ընկնում. օրինակ՝ զարմացուցանել, բնակեցուցանել դառնում են՝ զարմացցնել, բնակեցցնել և ապա զարմացնել, բնակեցնել։ Նույն ձևով անցուցանել, լցուցանել, կացուցանել, կեցուցանել, դարձուցանել դառնում են՝ անցնել, լցնել, կացնել, կեցնել, դարձնել։ Աշխարհաբարի առանց սղվելու պատճառական բայերը՝ մատուցանել, ուսուցանել, զեկուցանել ևն. առնված են գրաբարից։—Այսպես և տեսանել, ելանել, մտանել, ևն. դառնում են՝ տեսնել, ելնել, մտնել։

25. Բայերի ձևերի մեջ, հավանորեն բարբառների ազդեցությամբ և մեծ մասամբ հետագա դարերում, հաճախ փոխանցում է լինում, այնպես որ միևնույն բայը երբեմն մի քանի ձևով է կազմվում։

Առանձին ուշադրություն պիտի դարձնել հետևյալ փոխանցումների վրա.

1. Եմ, իմ, օրինակ՝ բնակեմ, բնակիմ. ապստամբեմ, ապստամբիմ. ծաղկեմ, ծաղկիմ. պատահեմ, պատահիմ. փայլեմ, փայլիմ. պակասեմ, պակասիմ. պարապեմ, պարապիմ ևն։

2. Եմ, եամ, ամ, իմ, օրինակ՝ ատեմ, ատեամ. խնայեմ, խնայեամ. անխայեմ, անխայեամ. փրփրեմ, փրփրիմ, փրփրամ, փրփրեամ. լողամ, լողիմ. ծփիմ, ծփամ. որոճեմ, որոճամ. տեղեմ, տեղամ. տեղեամ. Նույնպես՝ քարոզեալ, արձակեալ, խզեալ, ասեալ, ծնանեալ փոխանակ՝ քարոզել, արձակել, խզել, ասել, ծնանել ձևերի։

3. Ում, եմ, օրինակ՝ կասում, կասեմ. առաւելում, առաւելեմ. յաւելում, յաւելեմ. կիզում, կիզեմ. յեռում, յեռեմ. քերծում, քերծեմ. յառում, յառեմ (յառիմ). կարկառում, կարկառեմ. հինում (հենում), հինեմ. արձակեմ, արձակում. կրծեմ, կրծում ևլն։ (Տե՛ս ներքևում՝ 8)։ Նույն ձևով՝ արգելուլ, զենուլ, հեղուլ, զեղուլ, ցելուլ, լիզուլ, լեսուլ, թողուլ ևլն, ինչպես և զարթնուլ, թռնուլ, զբօսնուլ, փախնուլ և այլն, աշխարհաբար ունին՝ արգելել, զենել, հեղել, զեղել, ցելել, լիզել, լեսել. թողել (ավելի՝ թողնել), զարթնել, թռնել, զբոսնել, փախնել ևլն։

4. Ամ, աճամ, օրինակ՝ անձկամ, անձկանամ. ցանկամ, ցանկանամ, զղջամ, զղջանամ. մուրամ, մուրանամ. խրոխտամ, խրոխտանամ. ծուլամ, ծուլանամ. յոխորտամ, յոխորտանամ. սողամ, սողանամ, այլ և սողիմ. սոսկամ, սոսկանամ. տենչամ, տենչանամ. փութամ, փութանամ. քինամ, քինանամ. երթամ, երթանամ։ Այսպես և մերկեմ, մերկանամ. մարթեմ, մարթանամ։

5. Իմ, եճամ,—եմ, եճամ, օրինակ՝ արբիմ, արբենամ. մերձիմ. մերձենամ. մօտիմ, մօտենամ. թշնամիմ, թշնամենամ, այլև թշնամանամ. պարծիմ, պարծենամ. յագիմ, յագենամ,—յամեմ, յամենամ։

6. Եմ, աճեմ,—իմ, անիմ, օրինակ՝ տարածեմ, տարածանեմ. ներկեմ, ներկանեմ. զանգեմ, զանգանեմ. մերկեմ, մերկանեմ. զատեմ, զատանեմ. լքեմ, լքանեմ. բեկեմ, բեկանեմ,—ծիւրիմ, ծիւրանիմ, ևլն։

նույն ձևով՝ ստեղծանեմ, լուծանեմ, սպանանեմ, ծնանիմ, սկսանիմ ևլն, աշխարհաբար ունին, ստեղծել, լուծել, սպանել, ծնել, սկսել։

7. Ում, անեմ,—ում, անիմ, օրինակ՝ հանում, հանանեմ. հեղձում, հեղձանեմ (այլև հեղձուցանեմ). զերծում, զերծանեմ,—գելում, գելանիմ. զեղում, զեղանիմ. հեղում, հեղանիմ։

8. եմ, ում, անեմ. օրինակ՝ գերծեմ, գերծում, գերծանեմ. հերձեմ, հերձում, հերձանեմ. դիզեմ, դիզում, դիզանեմ, կիզեմ, կիզում, կիզանեմ. հարեմ, հարում, հարկանեմ. հիւսեմ, հիւսում, կրավորական՝ հիւսանիմ. ստեղծեմ, ստեղծում, ստեղծանեմ։

9. եմ, նում, անեմ,—իմ, նում, անիմ, օրինակ թքեմ, թքնում, թքանեմ. եղծեմ, եղծնում, եղծանեմ,—հեղձիմ, հեղձնում, հեղձանիմ. զերծիմ, զերծնում, զերծանիմ։

10. նում, անեմ,—նում, անիմ, օրինակ՝ կլնում, կլանեմ,—զբօսնում, զբօսանիմ (այլև՝ զբօսանամ). հեծնում, հեծանիմ. ջեռնում, ջեռանիմ. սկսնում, սկսանիմ. սփածնում, սփածանիմ։

11. իմ, նում,—ում, նում, օրինակ՝ զբաղիմ, զբաղնում. զգածիմ. զգածնում.—կալում, կալնում։

12. Ջիմ, նում, օրինակ՝ փախչիմ, փախնում. զարթչիմ, զարթնում. զատչիմ, զատնում. ուռչիմ, ուռնում (ուռենամ). թռչիմ, թռնում. հարթչիմ, հարթնում (=աշխ. խրտչել, խրտնել). ցասչիմ, ցասնում, ոստչիմ, ոստնում. այտչիմ, այտնում. մատչիմ, մատնում. խափչիմ, խափնում. թագչիմ, թագնում. հանգչիմ, հանգնում. պակչիմ, պակնում. սառչիմ, սառնչիմ, սառնում։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

26. Ապառնի դերբայի վերջավորութիւնն է -ոց, որ ավելանում է անորոշ դերբայի վրա. ի լծորդն այս դեպքում դառնում է ե, իսկ ու լծորդը ձայնափոխութիւնամբ դուրս է ընկնում. օրինակ՝ գրել, գրելոց. խօսիլ, խօսել, խօսելոց. հեղուլ, հեղլոց. զենուլ, զենլոց=աշխ. գրելու, խոսելու, հեղելու, զենելու։

Գրաբարում ապառնի դերբայը սակավ անգամ իբրև ածական է գործածվում. սովորաբար դրվում է եմ բայի վրա և կազմում բաղադրեալ ժամանակներ, օրինակ՝ գրելոց եմ=գրելու եմ։ Երբեմն անանցողական բայերի ապառնի դերբայը իբրև գոյական էլ է բանում, ինչպես՝ լեալք և լինելոցք=եղածները և լինելիքները։ Զգալոսցն պատմեսցէ=գալիքները կը պատմի։

ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

27. Անցյալ դերբայի վերջավորութիւնն է -եալ որ դրվում է.

ա) Սոսկ -եմ, -իմ վերջացած բայերի համար բայի հիմքի վրա. օրինակ՝ գրեմ, մերձիմ, լուսավորեմ ունին՝ գրեալ, մերձեալ, լուսաւորեալ։

Նշան. 1. Կան սոսկ -եմ, -իմ վերջացած բայեր, որոնք ունին և կատարյալի բնից կազմված անցյալ դերբայ -եցեալ ձևով, որ ավելի կրավորական իմաստով է գործածվում. օրինակ՝ գրեմ՝ գրեալ, գրեցեալ (=գրած, գրված). կոչեմ՝ կոչեալ, կոչեցեալ. սիրեմ՝ սիրեալ, սիրեցեալ. կարծեմ՝ կարծեալ, կարծեցեալ. խօսիմ՝ խօսեալ (նշանած աղջիկ իմաստով), խօսեցեալ. նույնպես՝ ատեցեալ, այրեցեալ, գործեցեալ, ննջեցեալ, ամաչեցեալ, աճեցեալ, հայեցեալ, նայեցեալ ևլն։ Կամիմ ունի միայն կամեցեալ ձևը։

բ) Սոսկ -ամ և ածանցավոր -անամ, -ենամ վերջացած բայերի համար կատարյալի բնի վրա, օրինակ՝ գնամ, գնաց-եալ, զարմանամ, զարմաց-եալ. մերձենամ, մերձեց-եալ։

գ) Պատճառական բայերի համար պատճառական բնի վրա, այսինքն ույց ածանցից հետո. օրինակ՝ զարմացուցանեմ, զարմացուց-եալ. թուցանեմ, թուց-եալ։

դ) Արմատն իբրև կատարյալի բուն ունեցող -ում, -անեմ, -անիմ վերջացած բայերի համար արմատի վրա, օրինակ՝ հեղ-ում, հեղ-եալ. տես-անեմ, տես-եալ. ուս-անիմ, ուս-եալ։

ե) Չիմ, նում վերջացած բայերը չունին առանձին անցյալ դերբայ։ Սրա իմաստով գործ է ածվում կամ կրկին ձևերից մեկի անցյալ դերբայը, օրինակ՝ թքեալ, եղծեալ, զերծեալ, զբաղեալ (§ 25. 9—11), կամ եթե ուրիշ կրկին ձև չունին (§ 25. 12), գործ է ածվում նույն բայերի հիմքից կազմված պատճառական բայերի անցյալ դերբայը (§ 27. գ). օրինակ՝ թուցեալ, ուռուցեալ, փախուցեալ (թուցանեմ, ուռուցանեմ, փախուցանեմ բայերից) նշանակում են թե՛ թռցրած, ուռցրած, փախցրած և թե՛ թռած, ուռած, փախած, այսինքն՝ թռչիմ—թռնում, ուռչիմ—ուռնում, փախչիմ—փախնում բայերի իմաստով։

Նշան. 2. Գրաբարի անցյալ դերբայը նայելով տեղին աշխարհաբար թարգմանվում է կամ վաղակատար (եղ վերջավորությամբ) կամ հարակատար (ած վերջ.) դերբայով. օրինակ՝ Իմ առեալ հրամանն կատարեցաւ=իմ ված հրամանը կատարվեց։ Յաւուրս սորա փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ (=անվանված) բլրոյ. քանզի էր ճեռացեալ (=ճեռացել էր) գետն Երասխ։ Ահաւասիկ քաղաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ=ահա (հրես) քո թագավորը գալիս է իշի վրա նստած։ Նոքա առեալ տանէին զնա=նրանք առել տանում էին նրան։ Նստեալ բարբառին=նստել խոսում են։

28. Առանձին ուշադրություն պիտի դարձնել անցյալ դերբայի հետևյալ կիրառությանը։

Նույն ենթական ու ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը սովորաբար դրվում է անցյալ դերբայով, և ենթական, մանավանդ, երբ անցյալ դերբայից հետո է գալիս, դրվում է հաճախ իբրև սեռական խնդիր։ Այսպիսի անցյալ դերբայն աշխարհաբար թարգմանվում է կամ դիմավոր բայով կամ անորոշ դերբայի գործիական հոլովով։ Օրինակ՝ Եւ յանձն առեալ (=հանձն առնելով) արքային արքայից՝ տայ ի ձեռս Սմբատայ մասն ինչ ի զօրացն Ասորեստանի... զի տարեալ զԱրտաշես հաստատեսցեն (=որ տանեն, հաստատեն) ի գահն Հայրենի։ Եւ քաջին Սմբատայ զհետ մտեալ՝ (=հետապնդելով) սաստկա-

գոյնս վարէր գնաւ։ Դու յաւուցեալ գնասցես=Դու պիտի վեր կենաս. գնաս։ Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս և եկն ի քաղաք իւր=Եվ նավ մտավ (կամ մտնելով) անցավ այն կողմը և եկավ իր քաղաքը։ Նկեալ բնակեցաւ ի քաղաքին=Եկավ, բնակվեց քաղաքում։ Ահա երթեալ ասեցեմ ցնոսա=Ահա կերթամ... կասեմ։ Մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնաւ։ Մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա։ Նորա առեալ զնա՝ տարաւ։ Նոքա առեալ տանէին զնաւ։ Եւ հրամանն առեալ (=առնելով, առած լինելով) չդառնալ անդրէն՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

Երբեմն տարբեր ենթականեր ունեցող բայերից ևս առաջինը դրվում է անցյալ դերբայով, որ և աշխարհ. կատարված կերպի անորոշ դերբայի գործիական հոլովով է ասվում. օրինակ՝ օգնութիւն հասեալ՝ մինչև ցայսօր կացի=օգնություն հասած լինելով՝ մինչև այսօր մնացի...

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

29. Ենթակայական դերբայը, որի վերջավորությունն է -ող (հին աւղ=օղ, ող), նույն կազմությունն ունի, ինչ որ աշխարհաբարում. օրինակ՝ բամբասող, լսող, ասող (այլև ասացող), զրկող, պատերազմող, գիտող, հնձող,—խնդացող, որսացող, բարկացող, մոռացող, լացող,—տեսանող, սպանանող, հարկանող,—ղևնող, արգելող, փախչող։

Նաև. Անեմ, անիմ և մի քանի սոսկ -եմ, -իմ վերջացած բայերի համար ենթակ. դերբայ կազմվում է և կատարյալի բնից. օրինակ՝ տեսանող, տեսող. հատանող, հատող. հարկանող, հարող. ուսանող, ուսող. սպանանող, սպանող. ծնանող, ծնող. գտանող, գտող. ստեղծող, օծող. զգեցուցանող, զգեցուցող. դարձուցանող, դարձուցող.—կամեցող, պահեցող, իշխեցող, երգեցող, ատեցող։ Իսկ որսալ, յուսալ, մուրալ, հոգալ ունին և որսող, մուրող, հոգող, որոնք սովորաբար իբրև գոյական են գործ ածվում։

30. Ենթակայական դերբայի իմաստն արտահայտվում է նաև՝

1. Իչ ածանցով կազմված բայական ածականներով. օրինակ՝ տուիչ, առաքիչ, փառաւորիչ։

2. Անորոշ դերբայից ի, հոգնակի իք ածանցով կազմված բայական ածականներով. օրինակ՝ սիրելի, առնելի, լսելի, առեղծանելի, գործելի, կրելի, երևելի, ծորելի, ծնանելի, բերելի ևլն. նշանակում են թե՛ ինչ որ արժանի է սիրելու, սիրվելու, կամ՝ ինչ որ պետք է սիրել ևլն, և թե՛ սիրող, անող, լսող, առեղծանող, գործող, կրող, երևացող, ծորող, ծնող, բերող։

3. Որ հարաբերականով երկրորդական խոսք կազմելով։ Այս դեպքում բայի վրա վերջից հաճախ դրվում է և հոդը։ Օրինակ՝ փոխանակ ասելու՝ զքեզ տեսանողն, ասողն, պատմողն՝ ասվում է՝ Որ տեսանէ զքեզ, որ ասէն, որ պատմէն։ (Տե՛ս § 194)։

Ա Ո Ն Ա Ր Հ Ո Ի Մ

ՊԱՐԶ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

31. *Բայերն ունին երեք եղանակ.*

Սահմանական, *որ ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ։*

Ստորադասական, *որ ունի երկու ժամանակ՝ առաջին ապառնի և երկրորդ ապառնի։*

Հրամայական, *որ ունի միայն եզակի և հոգնակի երկրորդ դեմքեր և երեք ժամանակ՝ ներկա, առաջին ապառնի և երկրորդ ապառնի։*

32. Բացասական ձևերը *կազմվում են սովորաբար* **ոչ,** *երբեմն* **չ** *մակբայով։ Բացասական Հրամայական ներկան կամ Արգելականն առանձին կազմություն ունի և ստանում է մի՛ մակբայը, որը արգելական իմաստով դրվում է նաև ապառնի ժամանակների և նույնիսկ անորոշ դերբայի վրա։ Օրինակ՝* **Մի՛ լինիցիս** (=չլինիս) *որպէս կեղծաւորքն։ Այլ ես ասեմ ձեզ.* **մի՛ կալ** *հակառակ չարին։*

Ոչ, մի՛ *բացասականները կարող են հաճախ բայից բաժանվել ուրիշ բառերով և նույնիսկ բայից հետո դրվել, օրինակ՝* **Մի՛** *այսուհետև ճոգայցէք վասն վաղուի։ Որ ոչն գործիցէ և կերիցէ մի՛։ Եւ ամաչէին իսկ* **ոչ** *(§ 185)։*

33. Ներկայի բնի *կամ* **լծորդի ձևերն** *են՝ Սահմանական ներկա և անցյալ անկատար, Ստորադասական առաջին ապառնի, Հրամայական առաջին ապառնի, Արգելական ներկա և անորոշ դերբայ։*

Ներքևում դրված են այս ժամանակների վերջավորությունները լծորդ ձայնավորների հետ։

34. Կատարյալի բնի ձևերն *են՝ Սահմ. անցյալ կատարյալ, Ստոր. երկրորդ ապառնի, Հրամ. ներկա և երկրորդ ապառնի և Անցյալ դերբայ, որոնք կազմվում են երեք տեսակ վերջավորություններով, ուստի և կա երեք խոնարհում՝* **ներգործածձև, կրավորածձև** *և* **խառն:** *Վերջավորություններն ավելանում են՝* **աՁեմ, աՁիմ, ում, չիմ–ճում** *վերջացած բայերի արմատի վրա, իսկ* **ամ, աՁամ, եմ, իմ, եՁամ, ուցանեմ** *վերջացած բայերի* **աց, եաց, ոյց** *բների վրա, որոնց* **ց** *տառը հաջորդ* **ց, ՞** *տառերից առաջ դառնում է* **ս:**

Ներքևում դրված են երեք ձևերի խոնարհման վերջավորությունները կատարյալի բնի ածանցների հետ, եթե ունեն։ Դրանց հետ առնված են սկզբից և Սահմ. ներկայի ձևերը, որոնցից կիմացվի թե ո՛ր բայը ո՛ր խոնարհման տակ է գնում և ի՛նչպիսի ձևով։ Վերջից կրկնված են այն ձևերը, որոնց վրա առանձին ուշադրություն պիտի դարձնել։

85. Ա. Ներկայի բնի կամ լծորդի ձևեր

Անուռոշ դերբայ

ալ	*էլ*	*իլ*	*ուլ*

Սահմանական

Ներկա

ամ	*եմ*	*իմ*	*ում*
աս	*ես*	*իս*	*ուս*
ալ	*է*	*ի*	*ու*
ամք	*ենք*	*իմք*	*ումք*
ալք	*էք*	*իք*	*ուք*
ան	*են*	*ին*	*ուն*

Անցյալ անկատար

ալի	*էի*	*էի*	*ուի*
ալիր	*էիր*	*էիր*	*ուիր*
ալր	*էր*	*էր (իւր)*	*ոյր*
ալաք	*էաք*	*էաք*	*ուաք*
ալիք	*էիք*	*էիք*	*ուիք*
ալին	*էին*	*էին*	*ուին*

Սառագասական ապառնի Ա

ալցեմ	*իցեմ*	*իցիմ*	*ուցում*
ալցես	*իցես*	*իցիս*	*ուցուս*
ալցէ	*իցէ*	*իցի*	*ուցու*
ալցեմք	*իցեմք*	*իցիմք*	*ուցումք*
ալցէք, ալչիք	*իցէք, իչիք*	*իցիք, իչիք*	*ուցուք*
ալցեն	*իցեն*	*իցին*	*ուցուն*

Հրամայական

Ապառնի Ա

այչի՛ր	*իչի՛ր*	*իչի՛ր*	*(չունի)*
այչի՛ք	*իչի՛ք*	*իչի՛ք*	*(չունի)*

Արգելական ներկա

ար	*եր*	*իր*	*ուր*
այք	*էք*	*իք*	*ուք*

1. ՆԵՐԳՈՐԾԱԶԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Սահման.

Ներկա	ամ	եմ	ուցանեմ	ում անեմ
Անց. կատ.	ացի	եցի	ուցի	ի
	ացեր	եցեր	ուցեր	եր
	աց	եաց	ոյց	(արմատը)
	ացաք	եցաք	ուցաք	աք
	ացիք ացէք	եցիք եցէք	ուցիք ուցէք	իք, էք
	ացին	եցին	ուցին	իճ
Ստորադ.				
Ապառնի Բ.	ացից	եցից	ուցից	իցք
	ասցես	եսցես	ուսցես	ցես
	ասցէ	եսցէ	ուսցէ	ցէ
	ասցուք	եսցուք	ուսցուք	ցուք
	ասջիք	եսջիք	ուսջիք	ջիք
	ասցեն	եսցեն	ուսցեն	ցեճ
Հրամ.				
Ներկա	ա՛	եա՛	ո՛	(արմատը)
	ացէք	եցէք	ուցէք	էք
Ապառնի Բ.	ասջի՛ր	եսջի՛ր	ուսջի՛ր	ջի՛ր
	ասջի՛ք	եսջի՛ք	ուսջի՛ք	ջիք
Անց. դերբայ	ացեալ	(եց)եալ	ուցեալ	եալ
Սհմ. ներկ.	*ամ*	*եմ*	*ուցանեմ*	*ում, անեմ*
Անց. կատ.	*ացի*	*եցի*	*ուցի*	*ի*
Հրամ. ներկ.	*ա՛*	*եա՛*	*ո՛*	(արմատը)

ԳԻՏԵԼԻՔ

37. Ներկայի բնի կամ լծորդի ձևերի համար.

ա) Եամ *լծորդի (§ 25. 2)* եա երկբարբառը, երբ շեշտը հաջորդ վանկին է անցնում, դառնում է է, ի. *օրինակ՝ ատեամ, ատեաս, ատեայ, ատեամք, ատեայք, ատեան։ Ատէի, ատէիր, ատեայր. ատէաք, ատէիք, ատէին։ Ատիցեմ, ատիցես, ատիցէ ևլն։ Մի՛ ատեար, մի՛ ատեայք։*

բ) Եմ, իմ *լծորդների Ստոր. առաջին ապառնու հոգն. 1-ին դեմքի համար պատահում է և իցուք ձևը, օրինակ՝ խօսիցուք։*

2. ԿՐԱՎՈՐԱԶԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ				3. ԽԱՌՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ
ացամ	եցամ	իմ	ացիմ	չիմ (ցուամ)
ացայ	եցայ	եցայ	այ	եայ
ացար	եցար	եցար	ար	եար
ացաւ	եցաւ	եցաւ	աւ	եաւ
ացաք	եցաք	եցաք	աք	եաք
ացալք, ացարուք	եցալք, եցարուք	եցալք, եցարուք	այք, արուք	եայք, երուք
ացան	եցան	եցան	ացՆ	եացՆ
ացայց	եցայց	եցայց	այց	եայց
ասցիս	եսցիս	եսցիս	ցիս	իցես
ասցի	եսցի	եսցի	ցի	իցէ
ասցուք	եսցուք	եսցուք	ցուք	իցուք
ասջիք	եսջիք	եսջիք	ջիք	իջիք
ասցին	եսցին	եսցին	ցիՆ	իցեՆ
ացի՛ր	եցի՛ր	եա՛ց	ի՛ր	ի՛ր
ացա՛լք, ացարո՛ւք	եցա՛լք, եցարո՛ւք	եցա՛լք, եցարո՛ւք	ա՛յք, արո՛ւք	եա՛յք, երո՛ւք
ասջի՛ր	եսջի՛ր	եսջի՛ր	ջի՛ր	իջի՛ր
ասջի՛ք	եսջի՛ք	եսջի՛ք	ջի՛ք	իջի՛ք
ացեալ	եցեալ	(եց)եալ	եալ	(ուցեալ)
անամ	ենամ	իմ	անիմ	չիմ(նում)
ացալ	եցալ	եցալ	ալ	եալ
ացի՛ր	եցի՛ր	եա՛ց	ի՛ր	ի՛ր

գ) Իմ լծորդի Անց. անկ. եզ. 3-րդ դեմքի իւր ձևը՝ խօսիւր, ագանիւր՝ քիչ է գործածվում։

դ) Ում լծորդի այ ձևը՝ բացի Անց. անկատարի եզ. 3-րդ դեմքից՝ պատահում է և ուրիշ դեմքերի մեջ՝ հեղոյի, հեղոյիր, հեղոյր ևլն։

88. Կատարյալի բնի ձևերի համար.

ա) Անցյալ կատարյալի եզ. 3-րդ դեմքը, երբ միավանկ բառ է մընում, սկզբից կարող է ստանալ ձայնավորներից առաջ է ձայնավորը, իսկ բաղաձայններից առաջ՝ ե. օրինակ՝ օծանեմ՝ օծի, օծեր, օծ կամ

էօծ: *Տեսանեմ՝ տեսի, տեսեր, տես կամ* ետես: *Երբ բայը է կամ ե ձայնավորով է սկսվում, է-ն չի գրվում, օրինակ՝ ելանեմ՝ ելի, ելեր, ել: Իջանեմ, իջի, իջեր, էջ:*

բ) Անցյալ կատարյալի *եզ. 3-րդ դեմքի վերջին վանկի մեջ վերականգնվում են* ա, *որ երկբարբառները և է, ու, ի ձայնավորները, որ մյուս դեմքերի մեջ ձայնափոխությամբ դառնում են՝ ե, ու, ի, ը (որ չի գրվում): Նույնը լինում է և հրամայականի մեջ. օրինակ՝ սիրեցի, սիրեցեր, սիրևց. մատուցի, մատուցեր, մատոյց: Լուծանեմ՝ լուծի, լուծեր, լոյծ: Հրամ. լո՛յծ: Իջի, իջեր, էջ. Հրամ. է ջ: Անիծանեմ՝ անիծի, անիծեր, անէծ. Հրամ. անէ ծ: Մտանեմ՝ մտի, մտեր, մուտ կամ* եմուտ. *Հրամ. մո ւտ: Թքանեմ՝ թքի, թքեր,* թուֆ *կամ* եթուֆ: *Գտանեմ՝ գտի, գտեր,* գիտ *կամ* եգիտ:

գ) Ստոր. երկրորդ ապառնի *ժամանակի եզ. և հոգն. 1-ին դեմքերի և հոգն. 2-րդ դեմքի համար պատահում են նաև* ցեմ, ցիմ, իցեմ,—ցեմֆ, ցիմֆ, իցեմֆ,—ցէֆ, ցիֆ, իցէֆ *վերջավորությունները:*

դ) Հրամ. ներկա *ժամանակի հոգն. 2-րդ դեմքի համար մի քանի բայ ունին իֆ վերջավորությունը, օրինակ՝ մատչիմ՝ մատի՛ֆ, զարթչիմ՝* զարթի՛ֆ: *Իւկ սոսկ իմ վերջացած բայերի Հրամ. ներկայի եզ. 2-րդ դեմքը լինում է երբեմն նաև պարզ եմ վերջացած ներգործաձև խոնարհվող բայերի ձևով, կամ թե կատարյալի բնի կամ հիմքի վրա ավելանում է ի՛ր վերջավորությունը. օրինակ՝ ողորմիմ՝ ողորմեա՛ց, ողորմեա՛. համարիմ՝ համարեա՛ց, համարեա՛, համարի՛ր. աշխատիմ՝ աշխատեա՛ց, աշխատեա՛. ճնպիմ՝ ճնպեա՛. շահիմ՝ շահեա՛. երևիմ՝ երեվեա՛ց, երևեցի՛ր. հետևիմ՝ հետևեա՛ց, հետևեցի՛ր:*

ե) Ներգործաձև խոնարհման *տակ գնում եմ՝* ամ, եմ, ուցանեմ. անեմ, ում *և կրկնաձև նում* –անեմ *(§ 25. 9, 10) վերջացած բայերը: Վերջինը խոնարհվում է ինչպես* անեմ *վերջացած բայ՝ թքնում, թքանեմ՝ թքի, թքեր ևլն:*

զ) Կրավորաձև խոնարհման *տակ գնում են՝* անամ, նեմ, իմ. անիմ *և կրկնաձև նում–*անիմ, իմ–նում *(§ 25. 9, 10) վերջացած բայերը: Վերջինները խոնարհվում են ինչպես* անիմ *վերջացած բայ՝ չեռնում-չեռանիմ՝ չեռայ ևլն:*

է) Խառն խոնարհման *տակ գնում են՝* չիմ, նշիմ, չիմ –նում *(§ 25. 12) վերջացած բայերը՝ կառչիմ, փախչիմ—փախնում, մարտնչիմ: Բացի դրանցից նաև մի քանի ուրիշ բայեր՝ պշնում, ցածնում, քաղցնում (անցյալ դերբայ՝* ֆաղցեալ՝ ֆաղցեմ *բայից), շրտնում:*

39. Ներկայի բնի կամ լծորդի ժամանակներ

Սահմանական

Ներկա

աղամ	*սիրևմ*	*խօսիմ*	*հեղում*
աղաս	*սիրևս*	*խօսիս*	*հեղուս*
աղայ	*սիրէ*	*խօսի*	*հեղու*
աղամք	*սիրևմք*	*խօսիմք*	*հեղումք*
աղայք	*սիրէք*	*խօսիք*	*հեղուք*
աղան	*սիրեն*	*խօսին*	*հեղուն*

Անցյալ անկատար

աղայի	*սիրէի*	*խօսէի*	*հեղուի*
աղայիր	*սիրէիր*	*խօսէիր*	*հեղուիր*
աղայր	*սիրէր*	*խօսէր, խօսիր*	*հեղույր*
աղայաք	*սիրէաք*	*խօսէաք*	*հեղուաք*
աղայիք	*սիրէիք*	*խօսէիք*	*հեղուիք*
աղային	*սիրէին*	*խօսէին*	*հեղուին*

Ստորադասական

Ապառնի Ա

աղայցևմ	*սիրիցևմ*	*խօսիցիմ*	*հեղուցում*
աղայցես	*սիրիցես*	*խօսիցիս*	*հեղուցուս*
աղայցէ	*սիրիցէ*	*խօսիցի*	*հեղուցու*
աղայցևմք	*սիրիցևմք*	*խօսիցիմք*	*հեղուցումք*
աղայցէք	*սիրիցէք*	*խօսիցիք*	*հեղուցուք*
աղայցեն	*սիրիցեն*	*խօսիցին*	*հեղուցուն*

Հրամայական

Արգելական ներկա

մի՛ աղար	*մի՛ սիրեր*	*մի՛ խօսիր*	*մի՛ հեղուր*
մի՛ աղայք	*մի՛ սիրէք*	*մի՛ խօսիք*	*մի՛ հեղուք*

Ապառնի Ա

աղայջի՛ր	*սիրիջի՛ր*	*խօսիջի՛ր*	—
աղայջի՛ք	*սիրիջի՛ք*	*խօսիջի՛ք*	—

Անորոշ դերբայ

աղալ	*սիրևլ*	*խօսիլ(խօսևլ)*	*հեղուլ*

Ապառնի դերբայ

աղալոց	*սիրևլոց*	*խօսևլոց*	*հեղլոց*

1. ՆԵՐԳՈՐԾԱԶԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Սահմանական

աղամ	*սիրեմ*	*մատուցանեմ*	*օժանեմ*	*հեղում*

Անցյալ կատարյալ

աղացի	*սիրեցի*	*մատուցի*	*օժի*	*հեղի*
աղացեր	*սիրեցեր*	*մատուցեր*	*օժեր*	*հեղեր*
աղաց	*սիրեաց*	*մատոյց*	*օժ, էօժ*	*հեղ, ևհեղ*
աղացաք	*սիրեցաք*	*մատուցաք*	*օժաք*	*հեղաք*
աղացիք,~էք	*սիրեցիք,~էք*	*մատուցիք,~էք*	*օժիք,~էք*	*հեղիք,~էք*
աղացին	*սիրեցին*	*մատուցին*	*օժին*	*հեղին*

Ստորադասական

Ապառնի Բ

աղացից	*սիրեցից*	*մատուցից*	*օժից*	*հեղից*
աղասցես	*սիրեսցես*	*մատուսցես*	*օժցես*	*հեղցես*
աղասցէ	*սիրեսցէ*	*մատուսցէ*	*օժցէ*	*հեղցէ*
աղասցուք	*սիրեսցուք*	*մատուսցուք*	*օժցուք*	*հեղցուք*
աղասջիք	*սիրեսջիք*	*մատուսջիք*	*օժջիք*	*հեղջիք*
աղասցեն	*սիրեսցեն*	*մատուսցեն*	*օժցեն*	*հեղցեն*

Հրամայական

Ներկա

աղա՛	*սիրեա՛*	*մատո՛*	*օ՛ժ*	*հե՛ղ*
աղացէ՛ք	*սիրեցէ՛ք*	*մատուցէ՛ք*	*օժէ՛ք*	*հեղէ՛ք*

Ապառնի Բ

աղասջի՛ր	*սիրեսջի՛ր*	*մատուսջի՛ր*	*օժջի՛ր*	*հեղջի՛ր*
աղասջի՛ք	*սիրեսջի՛ք*	*մատուսջի՛ք*	*օժջի՛ք*	*հեղջի՛ք*

Անցյալ դերբայ

աղացեալ	*սիրեցեալ (սիրեալ)*	*մատուցեալ*	*օժեալ*	*հեղեալ*

2. ԿՐԱՎՈՐԱԶԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ				3. ՖԱՌՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ
Սահմանական				
գոհանամ	*մերձենամ*	*խօսիմ*	*ուսանիմ*	*փախչիմ*
Անցյալ կատարյալ				
գոհացայ	*մերձեցայ*	*խօսեցայ*	*ուսայ*	*փախեայ*
գոհացար	*մերձեցար*	*խօսեցար*	*ուսար*	*փախեար*
գոհացաւ	*մերձեցաւ*	*խօսեցաւ*	*ուսաւ*	*փախեաւ*
գոհացաք	*մերձեցաք*	*խօսեցաք*	*ուսաք*	*փախեաք*
գոհացայք, -արուք	*մերձեցայք, -արուք*	*խօսեցայք, -արուք*	*ուսայք, -արուք*	*փախեայք, -երուք*
գոհացան	*մերձեցան*	*խօսեցան*	*ուսան*	*փախեան*
Ստորադասական				
Ապառնի Ը				
գոհացայց	*մերձեցայց*	*խօսեցայց*	*ուսայց*	*փախեայց*
գոհացիս	*մերձեցիս*	*խօսեցիս*	*ուսցիս*	*փախիցես*
գոհացի	*մերձեցի*	*խօսեցի*	*ուսցի*	*փախիցէ*
գոհացուք	*մերձեցուք*	*խօսեցուք*	*ուսցուք*	*փախիցուք*
գոհացիք	*մերձեցիք*	*խօսեցիք*	*ուսցիք*	*փախիցիք*
գոհացին	*մերձեցին*	*խօսեցին*	*ուսցին*	*փախիցեն*
Հրամայական				
Ներկա				
գոհացի՛ր	*մերձեցի՛ր*	*խօսեա՛ց*	*ուսի՛ր*	*փախի՛ր*
գոհացա՛յք, -արո՛ւք	*մերձեցա՛յք, -արո՛ւք*	*խօսեցա՛յք, -արո՛ւք*	*ուսա՛յք, -արո՛ւք*	*փախեա՛յք, -երո՛ւք*
Ապառնի Ը				
գոհացի՛ր	*մերձեցի՛ր*	*խօսեցի՛ր*	*ուսցի՛ր*	*փախիցի՛ր*
գոհացի՛ք	*մերձեցի՛ք*	*խօսեցի՛ք*	*ուսցի՛ք*	*փախիցի՛ք*
Անցյալ դերբայ				
գոհացեալ	*մերձեցեալ*	*խօսեցեալ (խօսեալ)*	*ուսեալ*	*փախուցեալ*

41. Ընդհանուր պատկեր խոնարհման

Սահմանական

Ներկա

խաղամ
խաղաս
խաղալ
խաղամք
խաղայք
խաղան

Անցյալ անկատար	Անցյալ կատարյալ
խաղայի	*խաղացի*
խաղայիր	*խաղացեր*
խաղայր	*խաղաց*
խաղայաք	*խաղացաք*
խաղայիք	*խաղացիք, խաղացէք*
խաղային	*խաղացին*

Ստորադասական

Ապառնի Ա	Ապառնի Բ
խաղայցեմ	*խաղացից*
խաղայցես	*խաղասցես*
խաղայցէ	*խաղասցէ*
խաղայցեմք	*խաղասցուք*
խաղայցէք, խաղայջիք	*խաղասջիք*
խաղայցեն	*խաղասցեն*

Հրամայական

Արգել. ներկա	Ներկա
մի՛ խաղար	*խաղա՛*
մի՛ խաղայք	*խաղացէ՛ք*

Ապառնի Ա	Ապառնի Բ
խաղայջի՛ր	*խաղասջի՛ր*
խաղայջի՛ք	*խաղասջի՛ք*

Դերբայներ

Անորոշ	Անցյալ
խաղալ	*խաղացեալ*

Ապառնի

խաղալոց

42. *Դրաբարում առանձին կրավորական բայեր չկան ինչպես աշխարհաբարում, այլ կա միայն կրավորական խոնարհում, որ կազմվում է լծորդի կամ կատարյալի բնի ձևերի շրջումով։*

ա) *Ներկայի բնի ժամանակներում՝ ե լծորդն ունեցող ներգործական բայերի այս ե լծորդը, (ե, է ձայնավորը վերջին վանկերի մեջ), փոխվում է ի լծորդի և բայն ստանում է կրավորական իմաստ. օրինակ՝ աղայցեմ, մերկանայցեմ, սիրեմ, սիրիցեմ, մի՛ սիրեր, մի՛ սիրէք, սիրել՝ կրավորական իմաստով լինում են՝ աղայցիմ, մերկանայցիմ, սիրիմ, սիրիցիմ, մի՛ սիրիր, մի՛ սիրիք, սիրիլ, (այլ և սիրել=սիրվել),—նմանապես և մյուս դեմքերը (անց. անկատ. եզ. 3-րդ դեմքի մասին տե՛ս ներքևը՝ § 43. բ)։*

բ) *Կատարյալի բնի ժամանակներում ներգործաձև խոնարհվող անցողական բայերը խոնարհվելով կրավորաձև՝ ստանում են կրավորական իմաստ, այսպես՝ սոսկ ամ վերջացածները խոնարհվում են ինչպես աճամ վերջացածները, սոսկ եմ՝ ինչպես իմ վերջացածները, իսկ աճեմ և սոսկ ում՝ ինչպես աճիմ վերջացածները։ Օրինակ՝ աղացի, սիրեցի, մատուցի, օծի, հեղի կրավորական իմաստով լինում են՝ աղացայ, սիրեցայ, մատուցայ, օծայ, հեղայ,—նմանապես և մյուս դեմքերն ու ժամանակները։*

գ) *Կան ներգործական բայեր և ժամանակներ, որոնք խոնարհման այս շրջումը չեն կրում, այլ անփոփոխ միևնույն ձևով մնալով՝ գործ են ածվում հասարակ իմաստով (=ընդհանուր իմաստով), այսինքն Թե՛ իբրև ներգործական և Թե՛ իբրև կրավորական. մտքից և կիրառությունից միայն պիտի հասկացվի դրանց ներգործական կամ կրավորական լինելը։ Օրինակ՝* սկսանիմ, գողանամ, ճեղում *կարող են նշանակել Թե՛* սկսել, գողանալ, բակվել *և Թե՛* սկսվել, գողացվել, բակվել։

Իմ լծորդն ունեցող անցողական բայերը, օրինակ՝ խօսիմ, սկսանիմ, որովհետև Թե՛ ներկայի և Թե՛ անցյալի բների բոլոր ժամանակները հասարակ իմաստ ունեն, կոչվում են հասարակ բայ։

43. *Ներկայի բնի ժամանակների համար պետք է իմանալ.*

ա) *Ամ լծորդի ժամանակները հասարակ են, բացի ստոր. առաջին ապառնուց, որի* այցեմ, այցես, այցէ *ևլն ձևերը դառնում են՝* այցիմ, այցիս, այցի։

բ) *Եմ լծորդի ժամանակները փոխվում են իմ լծորդի, օրինակ՝ ճանաչեմ, ճանաչես, ևլն. դառնում են՝ ճանաչիմ, ճանաչիս, ճանաչի ևլն։ Միայն սահմ. անց. անկատարը հասարակ ձևով է մնում՝ ճանաչէի, ճանաչէիր, ճանաչէր ևլն,=ճանաչում էի, ճանաչում էիր, ճանաչում էր, կամ ճանաչվում էի, ճանաչվում էիր, ճանաչվում էր։ Այս ժամանակի եզակի 3-րդ դեմքը կարող է իր վերջավորությամբ ևս կրավորական ունենալ՝ ճանաչիւր, ճառիւր, ասիւր, կոչիւր, գործիւր, հատանիւր, տեսանիւր=ճանաչվում էր, ճառվում էր, ասվում էր և այլն։*

գ) Իմ, ում լծորդների ժամանակները հասարակ իմաստ ունին։ Միայն տոկ իմ վերջացած բայերից մի քանիսը, ինչպես՝ համարիմ, խոստովանիմ, դատիմ՝ ունին նաև և լծորդով ձևեր՝ համարեմ, խոստովանեմ, դատեմ։ Սրանց եմ լծորդով ձևերը միայն ներգործական իմաստով են գործածվում, իսկ իմ լծորդով ձևերը թե՛ ներգործական և թե՛ կրավորական իմաստով։ Անց. անկ. իւր ձևը միայն կրավորական է։

44. Կատարյալի բնի ժամանակների համար պետք է իմանալ.

ա) Անամ, իմ, անիմ վերջացած ներգործական բայերի բնի ժամանակները հասարակ իմաստ ունին. օրինակ՝ դողացաւ, խօսեցաւ, ծնաւ=գողացավ, խոսեց, ծնեց կամ գողացվեց, խոսվեց, ծնվեց։

բ) Ներգործաձև խոնարհվող ներգործական բայերի հրամ. երկրորդ ապառնին, սահմ. անց. կատարյալի հոգն. 1-ին դեմքը, Ստոր. երկրորդ ապառնու հոգն. 1-ին և 2-րդ դեմքերը (ցուք, ջիք վերջավորութեամբ) հասարակ իմաստ ունին. բայց այս վերջին դեմքերը ներգործականի մեջ ունին նաև ցեմք, ցէք վերջավորութիւնները, որոնք ցիմք, ցիք ձևով կրավորականի են վերածվում։

գ) Ներգործական բայերի կրավորական ձևը երբեմն, գործածվելով անդրադարձ կամ փոխադարձ նշանակութեամբ, պահում է իր ներգործական իմաստը, օրինակ՝ գօտի ընդ մէջ իւր ածաւ (փոխ. էած). Բաժանեցան (փոխ. բաժանեցին) զհանդերձս իմ յինքեանս։

դ) Պատճառական բայերի կրավորականն ընդհանրապես քիչ է գործածվում. նույն իմաստով բանում են, ինչպես և աշխարհաբարում, սովորաբար համապատասխան չեզոք բայերը. օրինակ՝ Մատեաւ (փոխանակ մատուցաւ) ի վերայ նորա պատարագ։

ե) Երբեմն կրավորաձև խոնարհվող հասարակ բայերը ներգործական իմաստով խոնարհվում են ներգործաձև, օրինակ՝ ծնանի=ծնում է, ծնվում է. ստոր. երկրորդ ապառնին ունի սովորաբար ծնայց, ծնցիս, ծնցի, ծնցուք, ծնջիք, ծնցին, բայց կա ներգործական իմաստով նաև՝ ծնցես, ծնցէ, ծնցեն։

զ) Դերբայները նույն ձևով կարող են և ներգործական և կրավորական իմաստ ունենալ. տեսանել=տեսնել, տեսնվել. տեսեալ=տեսած, տեսել և տեսնված. տեսանելոց=տեսնելու, տեսնվելու։

45. Գրաբարում կա կրավորականի համար նաև բաղադրյալ խոնարհում, որ գործ է ածվում ավելի հասարակ բայերի և հասարակ ժամանակների համար։ Բաղադրյալ կրավորականը կազմվում է անցյալ դերբայով, որ անփոփոխ է մնում, և լինիմ բայով, որ խոնարհվում է։ Օրինակ՝ մոռացեալ լինիմ, մոռացեալ լինիս, մոռացեալ լինի ևլն. մոռացեալ լինէի, մոռացեալ եղէ ևլն. որ նշանակում են՝ մոռացվում եմ, մոռացվում ես, մոռացվում է ևլն. մոռացվում էի, մոռացվեցի ևլն։

Գիտեմ բայը՝ միայն բաղադրյալ ձևով կրավորական ունի՝ գիտացեալ լինել։

46. *Բաղադրյալ կրավորական խոնարհումը, որ հատուկ է և ուրիշ լեզուների, միջին դարերում հետզհետե վերացվում է, որովհետև լինիմ բայով բաղադրյալ ձևը՝ մոռացեալ լինել՝ միայն կրավորական իմաստ չունի, այլ նույնիսկ հին գրաբարում գործ է ածվում նաև ներգործական իմաստով իբրև մոռացած լինել. ուստի* **մոռացեալ լինիմ** *նշանակում է թե՛ մոռացվում եմ և թե մոռացած եմ լինում, մոռացած լինիմ, մոռացած կլինիմ։ Այս երկդիմության պատճառով հասարակ ժամանակների համար, հավանորեն բալբառներից օգտվելով, գործածության մեջ են մտցնում կրավորական խոնարհումներ, որ հատուկ չեն դասական գրաբարին։ Օրինակ՝ բանամ, բանիմ. թանամ, թանիմ. բառնամ, բառնիմ. լուանամ, լուանիմ. մոռանամ, մոռանիմ. ստանամ, ստացանիմ. տամ, տուիմ. լնում, լնանիմ, լնիմ. ընթեռնում, ընթերցանիմ. արգելում, արգելանիմ ևլն։*

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

47. *Բոլոր անկանոն բայերի ներկայի բնի ժամանակները կանոնավորապես այս կամ այն լծորդի ձևով են խոնարհվում. անկանոն են միայն կատարյալի բնի ժամանակները։ Անկանոն բայերը բաժանվում են մի քանի խմբի։ Ներքևում դրված են այդ բայերի ժամանակների համար մեծ մասամբ մեկ կամ մի քանի դեմքեր միայն. մյուս ձևերը դրանցով գտնելը հեշտ է։*

48. Առաջին խումբ։ *Խոնարհվում են ինչպես չիմ–նում վերջացած բայերը։*

Մեղանչեմ, *մեղայ, մեղայց (մեղիցես, մեղիցէ ևլն.). մեղի՛ր, մեղիջի՛ր, մեղուցեալ։—Խոնարհվում է երբեմն և մեղանչեցի, մեղանչեցից ևլն. ձևով։*

Ճանաչեմ, *ծանեայ, ծանեայց (ծանիցես, ծանիցէ ևլն), ծանի՛ր, ծանիջի՛ր, ծանուցեալ։*

Անկանոնությունը միայն ն-ի ծ փոխվելու մեջ է։ Պատճառականն է **ծանուցանեմ,** *որի կրավորական սահմ. անց. կատարյալն ու ստոր. երկրորդ ապառնին՝ ծանուցայ, ծանուցար ևլն., ծանուցայց ևլն., գործ են ածվում նաև կրավորական ճանաչիմ բայի իմաստով։ Բայց կան նաև ծանեայց, ծանիցիս, ծանիցի, ծանիցուք, ծանիջիք, ծանիցին ձևերը կրավորական իմաստով։*

Սփածանիմ, պրծանիմ, զառածիմ–զառածանիմ, ծիւրիմ–ծիւրանիմ *կանոնավոր՝ սփածայ, պրծայ, զառածայ, ծիւրեցայ ձևերի հետ ունին նաև՝ սփածեայ, պրծեայ, զառածեայ, ծիւրեայ։*

Անկանիմ *կանոնավոր ձևի հետ ունի ստոր. ապառնի Բ նաև՝ անկեայց. իսկ հոգն. հրամ. միայն՝ անկերո՛ւք։*

Ագանիմ *կանոնավոր ձևի հետ ունի հոգն. հրամ. նաև՝ ագերո՛ւք։* **Անց. դերբ.,** *ագեալ ձևի հետ և ագուցեալ։*

Յանցանեմ խոնարհվում է ամբողջապես խառն եայ խոնարհման ձևով՝ յանցեայ, յանցեայց (յանցիցես ևլն.), յանցի՛ր, յանցերո՛ւք, յանցիջի՛ր, յանցո ցեալ։

Ջանցանեմ, զառանցանեմ. ներկանեմ կանոնավոր զանցի, զառանցի, ևլն. ձևերի հետ ունին նաև զանցեայ, զանցեար ևլն, զառանցեայ ևլն., ներկեաւ։

Յառնեմ (յարնչիմ) խոնարհվում է ամբողջապես խառն եայ խոնարհման ձևով՝ յարեայ, յարեայց (յարիցէ ևլն.), յարիջի՛ր, յարուցեալ։ Հրամ. կանոնավոր յարի՛ր, յարեա՛յք, յարերո՛ւք ձևերի հետ ունի և արի՛, արի՛ք։

Յառում խոնարհվում է կրավորաձև՝ յառայ, յառայց, յառի՛ր, ունի նաև՝ յառեայ, յառեայց կամ յառիցեմ, յառուցեալ ձևերը։ Կան և յառեմ. կրավոր. յառիմ բայերը, որ կանոնավոր են։

Երդնում, երդուայ, երդուար ևլն. երդուայց կամ երդուիցեմ (երդուիցիմ), երդուիցես, երդուիցէ ևլն։ Երդուի՛ր, երդուարո՛ւք. երդուիջի՛ր, երդուեալ։ Կա և երդմնեմ բայր, որից պատճառական՝ երդմնեցուցանեմ։

Քաղցնում, անց. դերբայ՝ քաղցեալ։

49. Երկրորդ խումբ: *Խոնարհվում են ինչպես՝* աևեմ, աճիմ *կամ* սոսկ ում *վերջացած բայերը։*

Հաևեմ, հանի, հա՛ն։— Կա կրավորական հաճանիմ *բայը։* Իսկ հաճում (հեճում, հինում=հինել) *ունի հասարակ իմաստով* անց. կատ. հանայ, հինայ ևլն. Հրամ. հանի՛ր։

Ածեմ, *ածի, ա՛ծ։— Այս բայի* ածանեմ *ձևից կազմվում են՝* տարածանեմ—տարածեմ. անց. կատ. տարածեցի ևլն. զառածանեմ, զառածեմ. անց. կատ. զառածի, ստոր. ապառնի ՚ի զառածից. հրամ. զառածե՛։

Բերեմ, *բերի, բե՛ր։—Այսպես խոնարհվում է և* համբերեմ, համբերի, համբերեր, համբեր ևլն,—որ սակայն ունի կանոնավոր ձևեր ևս՝ համբերեցի, համբերեցեր ևլն. համբերեսցէ, համբերեա՛ ևլն։

Հեղուսեմ, *հեղուսի, հեղոյս։*

Նստիմ, *նստայ, նստար, նստաւ ևլն, նստայց, նստցիս, նստցի ևլն. նի՛ստ, նստարո՛ւք, նստեալ։ Այս բայից կազմված է՝* զնստանիմ--զնստիմ *բայր. անց. կատ. զնստայ։*

Ջգածիմ—զգածնում, հագածիմ *ունին՝ զգածայ, զգածի՛ր. զգածեալ. հագածայ ևլն։*

Պիպիմ, *կանոնավոր ձևերի հետ անց. կատ. ունի և դիպայ ձևը.*

Առնում, *առի, ա՛ռ։ ենթ. դերբ. առող։*

Կալում, կալնում, *կանոնավոր կալի, կալեր, կալ կամ եկալ ևլն. ձևերի հետ ունի և հետևյալ ձևերը, որ ավելի գործածական են՝ կալայ, կալար, կալաւ. կալաք, կալայք կամ կալարուք, կալան։ Կալայց, կալցիս, կալցի. կալցուք, կալչիք, կալցին (այլ և կալցես, կալցեն)։ Հրամ.*

կա՛լ կամ կա՛, կալի՛ք կամ կալա՛յք, կալարո՛ւք։ Անց. դերբ. կալեալ։— Այսպես խոնարհվում են և ընկալում, ընկալնում բայերը. անց. կատ. ընկալայ ևլն։ Ստոր. ապ. Բ ընկալայց ևլն. հրամ. ընկա՛լ, ընկալա՛յք կամ ընկալարո՛ւք։

Հեղձնում, հեղձայ։

Ջեռնում. ջեռայ։

Կլանեմ–կլնում. կանոնավոր անց. կատ. կլի, կլեր, կուլ կամ եկուլ ևլն. ձևերի հետ ունի և կլայ, կլար, կլաւ ևլն։ Ստոր. ապ. Բ կլայց, կլցիս, կլցի ևլն. ձևերը, որ սակայն ավելի կրավորական իմաստով են գործածվում։— Այսպես խոնարհվում է և ընկլնում.—ընկլի, ընկլից, ընկլցես, ընկլցէ կամ ընկլայ, ընկլայց ևլն։ Այս բայի ձևերի տեղ գործ են ածվում ավելի պատճառական ընկլուզանեմ բայի ձևերը՝ ընկլուզի, ընկլուզից, ընկլո՛ ևլն։

Հարկանեմ, ճարում ունի միայն առանց կ բաղաձայնի՝ հարի, հարեր, հար կամ եհար ևլն. հարից, հարցես ևլն. հա՛ր, հարէ՛ք, հարեալ։

50. Երրորդ խումբ։ *Խոնարհվում են ինչպես սոսկ ամ վերջացած բայերը։*

Ասեմ, ասացի, ասա՛. ասացից, ասասցես ևլն։

Գիտեմ, գիտացի, հրամ. գիտեա՛։

Կարեմ (=կարողանալ), կարացի, կարացեալ։

Մարթեմ, մարթացի, մարթացեալ։ Մարթեմ բայն ունի և մարթանամ ձևը, որից անց. կատ. մարթացայ ևլն։

Մերկեմ, մերկացի, մերկացեր, մերկաց կամ մերկեաց ևլն։ Հրամ. մերկեա՛ (կրավորական մերկեա՛ց)։ Մերկեմ բայն ունի և մերկանամ ձևը, որ ունի՝ մերկացայ, մերկացայց, մերկացի՛ր, մերկացարո՛ւք։

51. Չորրորդ խումբ։ *Վերջանում են սոսկ ամ ձևով, բայց կատարյալի բնի ժամանակներից մի քանիսը խոնարհվում են կրավորաձև, իբրև թե վերջնային ածամ ձևով։ Ներքևում առնված են միայն անկանոն կազմության ժամանակները. չհիշվածները կանոնավոր են։*

Յուսամ, յուսացայ, յուսացար, յուսացաւ ևլն. յուսացայց, յուսացիս ևլն։ Հրամ. հոգն. յուսացարո՛ւք։

Լողամ, լողացայ։

Ջանամ, գթամ, սահմ. անց. կատ. կանոնավոր ջանացի, գթացի. ևլն. ձևերի հետ ունին և ջանացայ, գթացայ ևլն. ապ. Բ ջանացայց, գթացայց ևլն։ Հրմ. կանոնավոր ջանա՛, գթա՛ ձևի հետ և ջանացի՛ր, գթացի՛ր. հոգն. ջանացարո՛ւք, գթացարո՛ւք։ Ստոր. ապառնի Ա նաև գթայցիս։

Դողամ, դողացի ևլն. կանոնավոր ձևի հետ և դողացայ ևլն։ Հրամ. հոգն. դողացարո՛ւք։

Սփսում, դլամ, գոռամ, խանդամ, սգամ, սուրամ, ջանամ, ոռնամ.

Նոամ, զեռամ, սպառնամ, ցնծամ, զգամ *անց. կատ. ունին և ներկոծաձև և կրավորաձև։*

Ուսամ, ողրամ, ճոգամ, խոկամ *ներգործական իմաստով խոնարհվում են թե՛ ներգործաձև և թե կրավորաձև։*

Ամ, անամ *վերջացած կրկնաձև բայերի (§ 25. 4) կատարյալի բնի ժամանակները երբեմն թե՛ ներգործաձև և թե՛ կրավորաձև են լինում, երբեմն էլ ժամանակներից մեկը կամ մյուսը միայն այս կամ այն ձևով են լինում. օրինակ՝* ցանկամ, ցանկանամ *ունի անց. կատ. ցանկացայ, ստոր. ապ. Բ ցանկացայց, հրամ. ցանկա՛ կամ ցանկացի՛ր։ Նույն ձևով՝* փութամ, փութանամ, *փութացայ, փութացայց, փութա՛ կամ փութացի՛ր. սոսկամ, սոսկանամ, սոսկացայ, սոսկա՛ կամ սոսկացի՛ր. տենչամ, տենչանամ, տենչացայ, տենչա՛ կամ տենչացի՛ր։ Իսկ զղջամ լինում է՝ զղջացի, զղջա՛, զղջանամ՝ զղջացայ, զղջացի՛ր և՛ն։*

52. Հինգերորդ խումբ: *Խոնարհվում են ինչպես սոսկ ամ, եմ վերջացած բայերը։*

Լուանամ, *լուացայ, լուացար և՛ն. լուացայց, լուասցիս և՛ն. ձևերի հետ ունին նաև լուացի, լուացեր, լուաց և՛ն. լուացից, լուասցես և՛ն։ Հրամ. լուա՛, լուացէ՛ք։*

Մոռանամ, ընթանամ, իմանամ *հրամ. ունի կանոնավոր մոռացի՛ր, ընթացի՛ր, իմացի՛ր ձևերի հետ և մոռա՛ ընթա՛ կամ ընթա՛ց, իմա՛ կամ իմա՛ց։*

Ընկենում, *ընկեցի, ընկեցեր, ընկեաց կամ ընկէց (ընկեց), ընկեցաք, ընկեցիք, ընկեցին. ընկեցից. ընկեսցես, ընկեսցէ և՛ն։ Հրամ. ընկեա՛ կամ ընկեա՛ց, ընկեցէ՛ք, ընկեսջի՛ր։ Անց. դերբ. ընկեցեալ։*

53. Վեցերորդ խումբ: *Կատարյալի բնի մեջ ունին ց կամ ձ բաղաձայնը, որ պահվում է ապառնի ժամանակների մեջ ց, ջ տառերից առաջ և հրամայականի մեջ։*

Ուանամ, թանամ, *բացի, բացեր, բաց կամ եբաց, բացաք, բացիք, բացին։ Ստոր. բացից, բացցես, բացցէ, բացցուք, բացջիք, բացցեն։ Հրամ. բա՛ց. բացէ՛ք, բացջի՛ր. բացեալ։ Նույնպես՝ թացի. թացից, թացցես, թացցէ և՛ն. թա՛ց, թացէ՛ք, թացեալ։*

Կամ, *կացի, կացեր, կաց կամ եկաց, կացաք, կացիք, կացին։ Կացից, կացցես, կացցէ, կացցուք, կացջիք, կացցեն։ Կա՛ց, կացէ՛ք, կացջի՛ր, կացեալ։*

Կեամ, *կեցի, կեցեր, կեաց, կեցաք, կեցիք, կեցին։։ Կեցից, կեցցես, կեցցէ, կեցցէք, կեցցուք, կեցջիք, կեցցեն։ Կե՛ց, կեցէ՛ք, կեցջի՛ր, կեցեալ։ Ստոր. ապառնի Ա կեայցեմ կամ կեցեմ, կեայցես, կեայցէ և՛ն։*

Լամ, *լացի, լացեր, լաց և՛ն։ լացից, լացցես, լացցէ և՛ն։ լա՛ց, լացէ՛ք, լացջի՛ր, լացեալ։*

Ընթեռնում, *ընթերցայ, ընթերցար, ընթերցաւ և՛ն։ Ընթերցայց,*

ընթերցցիս (այլև ընթերցցես), ընթերցցի ևլն։ Ընթերցի՛ր, ընթերցեալ, ընթերցող։

Յեննում, յեցայ, յեցար, յեցաւ ևլն. յեցայց, յեցցիս, յեցցի ևլն. յեցի՛ր, յեցեալ։

Ղգենում, զգեցայ, զգեցար, զգեցաւ ևլն. զգեցայց, զգեցցիս, զգեցցի ևլն. զգեցի՛ր, զգեցեալ։

Լինում, լցի, լցեր, լից կամ ելից. լցաք, լցիք, լցին։ Լցից, լցցես, լցցէ ևլն. Հրամ. լի՛ց, լցէ՛ք, լցի՛ր. լցող։

Խնում, խցի, խցեր, խից կամ եխից ելն. խցից, խցցես, խցցէ ևլն։ Խի՛ց, խցէ՛ք. խցեալ։

Բառնամ, բարձի, բարձեր, բարձ կամ եբարձ. բարձաք, բարձէք, բարձին։ Բարձից, բարձցես, բարձցէ ևլն։ Բա՛րձ, բարձէ՛ք, բարձջի՛ր. բարձեալ, բարձող։ Այսպես խոնարհվում է համբառնամ (բարձրացընել), համբարձի, համբարձից, համբա՛րձ ևլն։ Կրավորականը՝ համբարձայ, համբարձայց ևլն. նշանակում է բարձրանալ։

Դառնամ, դարձայ, դարձար, դարձաւ ևլն։ Դարձայց, դարձցիս դարձցի ևլն։ Դարձի՛ր կամ դա՛րձ, դարձեալ։

54. Յոթներորդ խումբ: *Կատարյալի բնի մեջ ունին* r *բաղաձայնը։*

Առնեմ, բուն՝ առար: Անց. կատ. արարի, արարեր, արար, արարաք, արարիք, արարին։ Ստոր. ապ. Բ արարից, արասցես, արասցէ. ապառասցուք, արասջիք, արասցեն։ Հրամ. արա՛, արարէ՛ք, արասջի՛ր։ Անց. դերբ. արարեալ։ Ենթ. դերբ. արարող։ Կրավորականը կանոնավոր կազմութիւն ունի՝ արարայ, արարար ևլն. արարայց, արասցիս, արասցի ևլն։ Հրամ. չունի։

Դնեմ, բուն՝ դիր: Անց. կատ. եդի, եդիր (եդեր), եդ. եդաք, եդիք (եդէք), եդին։ Ստոր. ապ. Բ եդից (դիցեմ), դիցես, դիցէ. դիցուք (դիցեմք), դիջիք (դիցէք), դիցեն։ Հրամ. դի՛ր, դի՛ք, դիջի՛ր։ Անց. դերբ. եդեալ։ Ենթ. դերբ. դնող, եդող։ Կրավորականը՝ եդայ, եդար, եդաւ, եդաք, եդայք, եդան։ Եդայց, դիցիս, դիցի, դիցուք, դիջիք, դիցին։ Հրամ. եզ. չունի. հոգն. եդարո՛ւք։

Տանիմ, բուն՝ տար: Անց. կատ. տարայ, տարար, տարաւ. տարաք, տարայք, տարան։ Ստոր. ապ. Բ տարայց, տարցիս (տարցես), տարցի (տարցէ). տարցուք, տարջիք, տարցին (տարցեն)։ Հրամ. տա՛ր, տարո՛ւք։ Անց. դերբ. տարեալ։

Լսեմ, բուն՝ լու, լուր: Անց. կատ. լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան։ Ստոր. ապ. Բ լուայց, լուիցես, լուիցէ. լուիցուք, լուիջիք, լուիցեն. Հրամ. լո՛ւր, լուարո՛ւք, լուիջի՛ր։ Անց. դերբ. լուեալ։ Կրավորական ունի միայն՝ լուիցիս, լուիցի, լուիցին ձևերը. մյուս ձևերի համար գործ է ածվում լսելի լինիմ։—Լսեմ բայի կանոնավոր ձևերը՝ լսեցի, լսեցեր ևլն. լսեցից, լսեսցես ևլն. լսեա՛, լսեցէք, և պատճառական՝ լսեցուցանեմ՝ քիչ գործածական են։

Տամ բուն՝ տու, տուր: Անց. կատ. ետու, ետուր, ետ. տուաք, ետուր,

Ետուն։ Ստոր. ապ. Բ տաց, տացես, տացէ. տացուք, տացիք, տացեն։ Հրամ. տո՛ւր, տո՛ւք, տացի՛ր։ Անց. դերբ. տուեալ։ Ենթ. դերբ. տուող։ Կրավոր. տուայ, տուար, տուաւ. տուաք, տուայք, տուան։ Տուայց կամ տացիմ, տացիս, տացի. տացուք, տացիք, տացին։ Մյուս ձևերի համար գործ է ածվում տուեալ լինիմ։

55. Ութերորդ խումբ։ *Կատարյալի բունն ուրիշ արմատից է առնվում. իսկապես երկու պակասավոր բայեր իրար լրացնում են։*

Ուտեմ, *բուն՝* **կեր։** *Անց. կատ. կերայ, կերար, կերաւ. կերաք, կերայք, կերան։ Կա և քիչ գործածական՝* **կերի, կերեր, եկեր.** *կերաք, կերիք, կերին։ Ստոր. ապ. Բ կերայց (կերիցեմ), կերիցես, կերիցէ. կերիցուք, կերիչիք, կերիցեն։ Հրամ. կե՛ր, կերա՛յք (կերէ՛ք), կերիչի՛ր. Անց. դերբ. կերեալ։ Կրավորականը գործ է ածվում բաղադրյալ ձևով՝* **կերեալ լինել։** *Պատճառական իմաստով գործ է ածվում* **կերակրեմ**= *ուտեցնել, կերցնել։*

Գամ, *բուն՝* **եկ։** *Անց. կատ. եկի, եկիր, եկն. եկաք, եկիք (եկէք), եկին։ Ստոր. ապ. Բ եկից. եկեսցես, եկեսցէ. եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն։ Հրամ. ե՛կ, եկա՛յք, եկեսջի՛ր։ Անց. դերբ. եկեալ։ Անորոշ դերբ. գալ, երբեմն՝* **գոլ։**

Երթամ, *բուն՝* **երթ, չոգ** *(չոք)։ Անց. կատ. չոգայ, չոգար, չոգաւ. չոգաք, չոգայք, չոգան։ Ստոր. ապ. Բ երթայց (երթիցեմ), երթիցես, երթիցէ. երթիցուք, երթիչիք, երթիցեն։ Հրամ. ե՛րթ (կամ չո՛գ), երթա՛յք, երթիչի՛ր։ Անց. դերբ. երթեալ։*

Ըմպեմ, *բուն՝* **առբ։** *Անց. կատ. արբի, արբեր, արբ կամ էարբ. արբաք, արբիք (արբէք), արբին։ Ստոր. ապ. Բ արբից, արբցես, արբցէ. արբցուք, արբջիք, արբցեն։ Հրամ. ա՛րբ, արբէ՛ք, արբջի՛ր։ Անց. դերբ. արբեալ, կրավորականը կանոնավոր՝ արբայ ևլն. արբայց, արբցիս ևլն։ Հրամ. հոգն. արբարո՛ւք, եզ. չունի. գործ է ածվում բաղադրյալ ձևը՝ արբեալ լե՛ր։—* **Առբ** *արմատից կազմված է* **առբիմ** *կամ* **առբենամ** *կանոնավոր բայը, որ նշանակում է հարբել, արբենալ։— Ըմպեմ բայի կատարյալի բնի ձևերն ևս կան՝ ըմպեցի, ըմցեցից ևլն. ըմպեա՛, ըմպեցէ՛ք, ըմպեալ, որոնք սակայն գործածական չեն։*

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

56. *Ունիմ ունի միայն ներկայի բնի ժամանակները։ Պակասը լրանում է սովորաբար կալնում ամբողջական բայով (§ 49) և ապա նայելով իմաստին՝ ըմբռնեմ, առնում, տիրեմ, իշխեմ, բռնեմ, բուռն հարկանեմ, պահեմ, արգելում, ինչպես և ստանամ, ժառանգեմ, բարձեալ բերեմ, կրեմ ևլն. բայերով։ Նույն ձևով խոնարհվում է ընդունիմ բայը, որի պակասը լրանում է ընկալնում ամբողջական բայով (§ 49)։*

Պարտիմ, *Սահմ. ներկ. պարտիմ, պարտիս, պարտի. պարտիմք, պարտիք, պարտին։ Անց. անկ. պարտէի, պարտէիր, պարտէր. պար-*

տէաք, պարտէիք, պարտէին։ Ստոր. ապ. Ա պարտիցիմ, պարտիցիս, պարտիցի. պարտիցիմք, պարտիցիք, պարտիցին։ Անց. կատ. պարտեցայ, պարտեցաւ։ Ստոր. ապ. Բ պարտեցայց, պարտեսցի։ Անորոշ դերբ. պարտիլ։ Անց. դերբ. պարտեցեալ։—Կատարյալի բնի ժամանակները քիչ են պատահում։ Պակասը լրանում է՝ **պարտ լինիմ, պարտական լինիմ, պարտաւոր լինիմ, պարտաւորիմ** *բայերով։ Չպիտի շըփոթել* **պարտեմ**=յաղթեմ *բայի հետ։*

Պիտի, *պիտէր, պիտիցի, պիտեցաւ, պիտեսցի, պիտեցեալ։ Պակասը լրանում է՝* **պարտիմ, պիտոյ լինիմ** *բայերով։*

Մարթի, *մարթէր, մարթիցի։ Պակասը լրանում է՝* **մարթէ, մարթանամ, մարթեմ** *բայերով։*

Գոզցես, *գոզցէ, գոզցուք, գոզջիք, գոզցեն։ Հրամ. գո՛զ, գոզէ՛ք։ Անորոշ դերբ. գոզել։ Պակասը լրանում է ասեմ բայով, որի հետ երբեմն և կրկնված գործ է ածվում. օրինակ՝ Ասացէք ցարքայ, գոզէ՛ք։ Ասիցեն և գոզցեն։*

ԵՄ, ԳՈՄ

57. Եմ, *Սահմ. ներկ.* **եմ, ես, է, եմք, էք, են**։ *Անց. անկ.* **էի, էիր, էր, էաք, էիք, էին**։ *Հրամ.* **է՛ր, է՛ք** *կամ* **երո՛ւք**։ *Ապառնի* **իցեմ, իցես, իցէ, իցեմք, իցէք, իցեն**։ *Անորոշ դերբ.* **եւ**։ *Ապ. դերբ.* **եւոց**։ *Անց. դերբ.* **եալ**։ *Պակասը լրանում է* **լինիմ, եղանիմ, կամ, գոմ** *բայերի ձևերով (§§ 53, 60)։ Հրամայականը գործ է ածվում միայն* **ողջ** *բառի հետ՝* **ողջ է՛ր, ողջ է՛ք, ողջ երո՛ւք**=**ողջ լե՛ր, ողջ լերո՛ւք**։ *Դերբայներն անդորոշականն են։*

Ջիմ=*ոչ գոյ. ունի միայն այս ձևը, ինչպես և սրա դրականը՝* **իմ** *(*=*գոյ, կայ, է), որ քիչ է պատահում։*

Գոմ, *սահմ. ներկ.* **գոմ, գոս, գոյ. գոմք, գոյք, գոն**։ *Անց. անկ.* **գոյի, գոյիր, գոյր. գոյաք, գոյիք, գոյին**։ *Ստոր. ապ. Ա (*գուցեմ, գուցես*),* **գուցէ**, *(*գուցեմք, գուցէք*),* **գուցեն**։ *Անորոշ դերբ.* **գոլ**։ *Պակասը լրանում է* **եղանիմ, լինիմ**, *բայերով, որոնք նույնպես պակասավոր են, և* **եմ**, *կամ բայերով (§§ 60. 53)։*

58. Եմ *բայը, սովորաբար շեշտված, նշանակում է նաև* **գոմ**, *կամ. ուստի և սահմ. ներկան և անց. անկատարն այս դեպքում աշխարհաբար* **թարգմանվում են** *կամ բայով (մյուս ժամանակները* **լինիմ** *բայով)։ Օրինակ՝* **Եւ է՛ր անդ երամակ մի։ Եւ է՛ր ի տեղւոջն յայնմիկ պարտէզ։ Եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է՛ և վաղիւն ի հնոց արկանի... Այր մի է՛ր** (=*կար*) *յԵրուսաղէմ, որոյ անուն էր* (=*էր*) *Սիմէովն։ Ոչ ոք է՛ յազգի քում* (=*ոչ ոք չկա*)։ *Բազում այրիք էին* (=*կային*) *յաւուրս նղիայի։*

Այս իմաստով գործ են ածվում՝ **է որ, են որ**=*ոմն, ոմանք*=*աշխ. կա որ, կան որ, որը... որը. նույնպես՝* **է զի, էր զի**.=**է երբեմն, էր երբեմն, է ուրեմն, էր ուրէմն**=*աշխ. կա որ, կա ժամանակ որ, կա տեղ որ,*

կամ՝ երբեմն, մերթ։ Օրինակ՝ Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՛ որ իբրև լսէ զբանն և ի միտ առնու, և տայ զպտուղ, է որ վաթսուն, և է որ երեսուն (=կա որ... կա որ... կամ որը... որը...)։ Կրակ... է զի (=երբեմն, մերթ) շիջանի, և է զի (=երբեմն, մերթ) աճեալ բորբոքի։ Է ուրեք (=տեղ կա, երբեմն), զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է զի (=կա որ, երբեմն) նոքա մեզ յաղթեցին։ Պտղոց անբերութիւն եղեալ բազում ժամանակս, էր երբեմն վասն բազում անչափ թօնից անձրևաց, և էր երբեմն վասն խորշակի և խռովութեան։

59. Եմ, գոմ, կամ բայերի 3-րդ դեմքերը մի սեռական, երբեմն և տրական խնդրով նշանակում են ունենալ։ Օրինակ՝ Ես իմ անդ եղբարք հինգ (=Իմ հինգ եղբայր կա այնտեղ=ինձ հինգ եղբայր կա այնտեղ=Ես այնտեղ հինգ եղբայր ունիմ)։ Ոչ գոյր նոցա որդեակ (=Նրանց որդի չկար=Նրանք որդի չունեին)։ Ջիւ իմ այր։ Ոչ գոյ մեր աւելի քան զհինգ նկանակ։ Այր եցեն երկու հանդերձք, տացէ զմին այնմ, այր ոչն գուցէ և այր կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ։ Այր գուցէ՝ տացի նմա և յաւելցի, և այր ոչն գուցէ՝ և զոր ունիցին, բարձցի ի նմանէ։ Ամենեքեան որոց էին հիւանդք ի պէս պէս ցաւս, բերէին զնոսա առ նա։ Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի։ Աղուսուց որչք գոն և թռչնոց երկնից բոյնք։ Թէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ և կամիմ։ Չի՞ կա մեր և քո, զի եկիր տանջել զմեզ (=ի՞նչ ունինք մենք ու դու, որ... կամ՝ ի՞նչ ունիս մեզ հետ, ի՞նչ կա մեր և քո մեջ)։

Երբ սեռական (կամ տրական) խնդիրն է շեշտվում և դրվում է. Ես, էր, էին բայից առաջ, եմ բայն ստանում է հաճախ պատկանել, վերաբերել. բայերի իմաստը և համապատասխան է աշխարհաբարի նույն դարձվածին, միայն աշխարհաբարում սեռականը (ն) ը հոդն է ընդունում, իսկ գրաբարում անհոդ է մնում։ Օրինակ՝ Որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է՝ այն իմ է (=Ամեն ինչ որ իմն է՝ քոնն է. և ինչ որ քոնն է, այն իմն է)։ Ել նա ի մի նաւուցն որ էր Սիմովնի (=որ Սիմոնինն էր)։

ԼԻՆԻՄ, ԵՂԱՆԻՄ

60. Լինիմ, լինիս, լինի ևլն. լինէի, լինէիր, լինէր ելն. լինիցիմ, լինիցիս ևլն. անց. կատ. չունի։ Ստոր. ապառնի Բ լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք կամ լիցիմք, լիջիք կամ լիցիք լիցին։ Հրամ. լե՛ր, լերո՛ւք, լինիջի՛ր, լիջի՛ր, լիջի՛ք։ Անց. դերբ. լեալ կամ լիեալ։

Եղանիմ, եղանիս ևլն. եղանէի ևլն. եղանիցի ևլն։ Անց. կատ. եղէ կամ եղեայ, եղեր, եղև. եղաք կամ եղեաք, եղէք կամ եղեայք, եղեն։ Ստոր. ապ. Բ եղէց կամ եղիցիմ, եղիցուք կամ եղիցիմք, եղիջիք, եղիցին կամ եղիցեն։ Հրամ. ներկա եզ. չունի. հոգն. եղերո՛ւք։ Ապառնի Բ եղիջի՛ք։ Անց. դերբ. եղեալ։

Նղանիմ, լինիմ *բայերի նշանակությամբ գործ են ածվում նաև առնի, գործի կրավորականները։*

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

61. *Օժանդակ բայերն են՝* 1. եմ, *որի սահմ. ներկա, անց. անկատար և ապառնի ժամանակների վրա դրվում են անցյալ և ապառնի դերբայները.* 2. լինիմ, *որի դիմավոր ձևերի վրա դրվում է միայն անցյալ դերբայը։ Անց. կատարյալի համար առնվում է* եղանիմ *բայը։*

62. *Անցողական բայերի դերբայները թե ներգործական և թե կրավորական իմաստ ունին, ուստի* եմ, լինիմ *բայերով բաղադրված ժամանակներն ևս կարող են երկու իմաստով էլ առնվել. օրինակ՝* տեսեալ է նշանակում է *թե* տեսել է *և թե* տեսնվել է։ *Թողեալ լիցին (=ներվի) մեղք քո։ Ի բարւոյ արարչէ արարեալ է (=ստեղծված է)։ Զաշխարհն յինքեանս գրաւեալ էին (=գրավել էին)։*

եմ *բայի ներկա և անցյալ ժամանակների փոխանակ անցյալ դերբայի հետ՝ չեզոք և կրավորական իմաստով գործածված ժամանակ՝ կարող են դրվել կամ բայի ձևերը, օրինակ՝ հասեալ կամ, դրեալ կայ, պատրաստեալ կայ, եկեալ կայ, եղեալ կայք, ծածկեալ կան, հաստատեալ կան, դիզեալ կայ։*

63. *Անցյալի դերբայի հետ* եմ *և* լինիմ *բայերի բոլոր դեմքերի փոխանակ կարող է գործածվել այդ բայերի եզակի երրորդ դեմքը. այդ ժամանակ ուղղական հոլովով ենթական փոխվում է սեռական խնդրի, և կազմվում են քերականորեն անենթակա խոսքեր. օրինակ՝* տեսեալ եմ, տեսեալ ես, տեսեալ է, տեսեալ եմք, տեսեալ էք, տեսեալ են, տեսեալ է արեայ, *ձևերի տեղ կարող է ասվել՝* տեսեալ է իմ, տեսեալ է ես, տեսեալ է նորա *(կամ* իւր*)*, տեսեալ է մեր, տեսեալ է ձեր, տեսեալ է նոցա, տեսեալ է արեայի։ *Զպայն իսկ իմ՝ աչօք տեսեալ է։ Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր։ Զոր չինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի։*

Նույնպես ածեալ լինէի, ածեալ լինէիր, ածեալ լինէր *ևլն. ձևերի փոխանակ կարող է ասվել,* ածեալ լինէր իմ, ածեալ լինէր ես, ածեալ լինէր նորա։

Անցողական բայերի այս կազմության բաղադրյալ ժամանակները կրավորական իմաստ չեն կարող ունենալ. օրինակ՝ տեսեալ էր ես, ածեալ լինէր ես *կը նշանակե միայն՝* դու տեսել էիր, դու բերած կըլինեիր *կամ* դու բերած լինեիր։

Ծան.—*Այս բաղադրյալ ժամանակների կազմությունը ծագում է* եմ *բայի 3-րդ դեմքի սեռական խնդրով գործածությունից ուղեղալ բայի իմաստով. տեսեալ է իմ, տեսեալ է ես ևլն. բառացի նշանակում է իմ տեսած կա, ես տեսած կա=ես տեսած ունիմ, դու տեսած ունիս, ինչպես և երբեմն գործ է ածվում աշխարհաբարում փոխանակ* ես տեսել եմ, դու տեսել ես *ևլն. ձևերի (տե՛ս § 59)։*

64. Եմ *բայով բաղադրված ժամանակներն են.*

Անցյալ դերբայով

Ներկա

գրնալ եմ	*գրնալ է իմ*
գրնալ ես	*գրնալ է քո*
գրնալ է	*գրնալ է նորա (իւր)*
գրնալ եմք	*գրնալ է մեր*
գրնալ էք	*գրնալ է ձեր*
գրնալ են	*գրնալ է նոցա (իւրեանց)*

Անցյալ անկատար

գրնալ էի	*գրնալ էր իմ*
գրնալ էիր	*գրնալ էր քո*
գրնալ էր	*գրնալ էր նորա*
գրնալ էաք	*գրնալ էր մեր*
գրնալ էիք	*գրնալ էր ձեր*
գրնալ էին	*գրնալ էր նոցա*

Ապառնի

գրնալ իցեմ	*գրնալ իցէ իմ*
գրնալ իցես	*գրնալ իցէ քո*
գրնալ իցէ	*գրնալ իցէ նորա*
գրնալ իցեմք	*գրնալ իցէ մեր*
գրնալ իցէք	*գրնալ իցէ ձեր*
գրնալ իցեն	*գրնալ իցէ նոցա*

Ապառնի դերբայով

Ներկա	Անցյալ անկատար	Ապառնի
գրելոց եմ	*գրելոց էի*	*գրելոց իցեմ*
գրելոց ես	*գրելոց էիր*	*գրելոց իցես*
գրելոց է	*գրելոց էր*	*գրելոց իցէ*
գրելոց եմք	*գրելոց էաք*	*գրելոց իցեմք*
գրելոց էք	*գրելոց էիք*	*գրելոց իցէք*
գրելոց են	*գրելոց էին*	*գրելոց իցեն*

65. Լինիմ *բայով բաղադրյալ ձևերն ունին մի քանի տեսակ իմաստ.* գրեալ լինիմ *նշանակում է գրվում եմ, և ապա՝ գրած եմ լինում,* գրված եմ լինում, *գրած լինիմ, գրված լինիմ և այլն։ Սեռական խնդրով* գրեալ լինի իմ *նշանակում է միայն գրած եմ լինում (§ 63)։*

Սահմանական

Ներկա

գրեալ լինիմ	գրեալ լինի իմ
գրեալ լինիս	գրեալ լինի քո
գրեալ լինի	գրեալ լինի նորա (իւր)
գրեալ լինիմք	գրեալ լինի մեր
գրեալ լինիք	գրեալ լինի ձեր
գրեալ լինին	գրեալ լինի նոցա (իւրեանց)

Անցյալ անկատար

գրեալ լինէի	գրեալ լինէր իմ
գրեալ լինէիր	գրեալ լինէր քո
գրեալ լինէր	գրեալ լինէր նորա (իւր)
գրեալ լինէաք	գրեալ լինէր մեր
գրեալ լինէիք	գրեալ լինէր ձեր
գրեալ լինէին	գրեալ լինէր նոցա (իւրեանց)

Սուռ. ապառնի

գրեալ լինիցիմ, լիցիմ	գրեալ լիցի իմ
գրեալ լինիցիս, լիցիս	գրեալ լիցի քո
գրեալ լինիցի, լիցի	գրեալ լիցի նորա (իւր)
գրեալ լինիցիմք, լիցուք	գրեալ լիցի մեր
գրեալ լինիցիք, լիջիք	գրեալ լիցի ձեր
գրեալ լինիցին, լիցին	գրեալ լիցի նոցա (իւրեանց)

Անց. կատարյալ	Հրամայական
գրեալ եղէ	գրեալ լե՛ր
գրեալ եղեր	գրեալ լինիջի՛ր
գրեալ եղև	գրեալ լիջի՛ր
գրեալ եղաք	գրեալ լերո՛ւք (եղերո՛ւք)
գրեալ եղէք	գրեալ լինիջի՛ք
գրեալ եղեն	գրեալ լիջի՛ք

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

66. *Սահմ. անց. կատարյալ, հրամ. ներկա և արգելական ներկա ժամանակները նույն նշանակությունն ու գործածությունն ունին, ինչ որ նույն ժամանակներն ախարհաբարում. օրինակ՝ գնացի, գնա՛, մի՛ գնար = գնացի, գնա՛, մի՛ գնար։*

67. *Սահմ. ներկան և անց. անկատարը նշանակությամբ համապատասխան են աշխարհաբարի*

1. Սահմ. ներկային և անկատար անցյալին. գնամ=գնում եմ, գնայի=գնում էի:

2. Ըղձական ապառնուն (որ տեղին նայելով և ներկա է) և անցյալին. գնամ=գնամ. գնայի=գնայի:

3. Ենթադրական ապառնուն (որ տեղին նայելով և ներկա է) և անցյալին. գնամ=կը գնամ. գնայի=կը գնայի:

եմ, գոմ, կամ (=կամ *իմաստով և ոչ կանգնել*), ունիմ, գիտեմ *բայերի սահմ. ներկան նշանակում է միայն* եմ, կամ, ունիմ, գիտեմ, *իսկ անցյալը՝* էի, գոյի, կայի, ունէի, գիտէի=*էի, կայի, ունեի, գիտեի,—լինեի, ունենայի, գիտենայի,— կլինեի, կունենայի, կգիտենայի: Օրինակներ՝*

Մտէ՛ք ընդ նեղ դուռն. քանի՛ ընդարձակ է դուռնն և համարձակ ճանապարհն, որ տանի (=*տանում է*) *ի կորուստ, և բազումք* են (=*են. կան*), *որ* մտանեն (=*մտնում են*) *ընդ նա: Ջի՞* տեսանես (=*տեսնում ես*) *զչիւղ յականն եղբօր քոյ և ի քում ականն զգերանդ* ոչ նշմարես (=*չես նշմարում*). *կամ զիա՞րդ* ասես (=*ասում ես*) *ցեղբայր քո՝ Թո՛ղ հանից զչիւղդ յականէ քումմէ, և ահա՛ւադիկ ի քում ականդ գերան կայ* (=*կա*):

Ասէր (=*ասում էր*) *ի մտի իւրում, թէ միայն* մերձենամ (=*մոտենամ*) *ի հանդերձս նորա,* փրկիմ (=*կփրկվիմ*): *Յորժամ* արգելուս *և փակես* (=*արգելես և փակես*) *զամենեսեան ի հեռաւոր օտարութեան,* կատարին (=*կկատարվի*) *խորհուրդք կամաց քոց: Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝* աւերի (=*կ'ավերվի*) *և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ* կացցէ: Ոչ արկանեն (=*չեն ածիլ*) *գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն* պատռին (=*կպատռվին*) *և գինին* հեղու (=*կթափվի*). *այլ* արկանեն (=*կ'ածեն*) *գինի նոր ի տիկս նորս, և երկոքին* պահին (=*կպահվին*): *Եթէ* կամիս (=*կամենաս*), *կարող ես դիս սրբել: Եթէ* թողումք (=*թողնենք*) *զնա այնպէս, ամենեքին* հաւատան (=*կհավատան*) *ի նա, և գայցեն հռոմք և բառնայցեն զազգս մեր և զտեղի:* Գոյ (=*կա*) *աստ այր մի ի դրան քում, զի իրքդ այդ նովաւ* վճարին (=*գլուխ կգա*): *Վաղվաղակի յղեմ* (=*կ'ուղարկեմ*) *զքեզ ուր* կամիսն (=*կամենում ես*) *գնալ:*

Եթէ զիս գիտէիք (=*գիտենայիք, ճանաչեիք*), *և զհայր իմ թերևս* գիտէիք (=*կգիտենայիք, կճանաչեիք*): *Եթէ* գիտէիք (=*գիտենայիք*) *զինչ է՝* (=*է*) *զողորմութիւն կամիմ* (=*կամենում եմ*) *և ոչ զզոհ, ապա ոչ* դատապարտէիք (=*չէիք դատապարտիլ*) *զանպարտսն: Եթէ* գիտէիր *դու ով է որ* ասէդ (=*ասում է*) *ցքեզ, թէ տո՛ւր ինձ ըմպել, դու արդեօք* խնդրէիր (=*կը խնդրեիր*) *ի նմանէ, և* տայր (=*կտար*) *ոհզ ջուր կենդանի: Թէ էր* (=*լիներ*) *հաւատացեալ թագաւորի առաջի, փութայի և ոչ յապաղէի* (=*կշտապեի և չէի հապաղիլ*): *Եթէ աստ լեալ էիր* (=*եղած լիներիր*), *եղբայրն իմ չէր մեռեալ* (=*մեռած չէր լինիլ*): *Եթէ ի Սոդոմ եղեալ էին* (=*եղած լինեին*) *զօրութիւնքն, որ ի քեզ եղեն,*

ապաքէն կայիւն (=կլինեին, մնացած կլինեին)։ Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և ես եկեալ տոկոսեօք պահանջէի (=կպահանջեի)։

68. *Սահմ. անց. անկատարը հաճախ գործ է ածվում և իբրև պատմական ժամանակ, որի տեղ աշխարհաբարում բանում է սահմ. ներկան կամ անց. կատարյալը. օրինակ՝ Իբրև զայն լսէր (=լսեց կամ լսում է) Պարթևն, զերդումն ուխտին յիշէր (=հիշեց կամ հիշում է), որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր։ Նաև զխոստմունսն յիշէր զպարգևացն, և ի բուն աշխարհն փափագէր որ Պալհաւն կոչէր, և վատ խորհուրդ ի միտ առնէր, առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրու ի պատճառս ինչ զբօսանաց, իբրու խորհուրդ ինչ խորհելոյ ընդ նմա. և զսուսերն թևրաքամեալս ունէին. յանկարծ յեղակարծումն ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն դիաթաւալ կացուցեալ՝ յերկիր կործանէին (Ագաթանգեղոս)։ Եւ իբրև հանդէպ ճակատուն Երուանդայ ելին նշանք Արտաշիսի՝ Արգամայ առեալ զբազմութիւն հետևակացն՝ ի կողմն ելանէր, եւ Սմբատ ճրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել. և յառաջեալ զճակատն իւր՝ իբրև զարծուի յերամս կաքաւուց խոյանայր։ Իսկ նախարարքն Հայոց, որ յաջ և յահեակ թևսն էին, ի նա խառնեալ միանային։ Եւ զօրքն վրաց... թէպէտ և յանդուգն յարձակմամբ յառաջեալ բախէին, արագապէս դառնային ի միւս կողմն փախուցեալ։ Եւ անդ էր տեսանել կոտորած անհնարին զգնդին Երուանդայ (Մ. Խորեն.)։*

69. *Ստոր. ապառնի Ա և ապառնի Բ ժամանակներից առաջինն անկատար, տևական բնավորություն ունի (աշխարհաբարի կատարվող կերպին, սահմ. ներկային համապատասխան), իսկ երկրորդը՝ կատարյալ, ոչ-տևական (աշխարհաբարի պարզ կերպին՝ անցյալ կատարյալին, ըղձական ներկային համապատասխան)։ Օրինակ՝ Յորժամ քաղաքք և գեղք աւերեսցին (=ավերվեն), և անդ դեւք բնակիցեն (=բնակվելիս լինին)... Բայց ապառնի ժամանակների այս տարբեր նշանակությունները հնագույն մատենագիրների մեջ անգամ արդեն շփոթված են, և դրանք հաճախ նույն նշանակությունն ու գործածությունն ունին։*

Այդ ժամանակները տեղին նայելով՝ համապատասխան են աշխարհաբարի 1. Սահմ. ապառնի, 2. Ըղձական ապառնի, 3. Ենթադրական ապառնի և 4. Հարկադրական ապառնի ժամանակներին. գնայցեմ, գնացից=գնալու եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ։ Սահմ. ապառնի ժամանակով է թարգմանվում և գրաբարի ապառնի դերբայով բաղադրված ներկա ձևը՝ գալոց է=գալու է, որ նույն իմաստն ունի, ինչ որ ստոր. ապառնին, ինչպես կարելի է տեսնել հետևյալ օրինակից՝ Որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք (=դատվելու եք), և որով՝ չափով չափէք՝ չափեսցի (=չափվելու է) ձեզ։

Ուրիշ օրինակներ.

Չէ՛ ինչ ի ծածուկ, որ թէ ոչ յայտնեսցի (=չհայտնվի), և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ ոչ ի յայտ գայցէ (=երևան չգա, հայտնի չլինի)։ Յոր քաղաք մտանիցէք (=մտնեք) կամ գեօղ, հարցանիցէք (=կհարցընեք), թե ո՞ է ի նմա արժանի, և անդ լինիջիք (=կլինիք, կմնաք), մինչև ելանիցէք (=ելնեք) անտի։ Եւ իբրև մտանիցէք (=մտնեք) ի տունն, ողջոյն տաջիք (=կտաք) նմա և ասասջիք (=կ'ասեք)՝ ողջոյն տանս այսմիկ։ Եթէ իցէ (=լինի) տունն արժանի, եկեսցէ (=կգա) ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ (=չլինի) արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի (=կդառնա)։ Երանի է ձեզ, յորժամ նախատիցեն (=նախատեն, կնախատեն) զձեզ և հալածեսցեն (=հալածեն, կհալածեն) և ասիցեն (=ասեն, կ'ասեն) զամենայն բան չար զձէնջ սուտ։

Սիրեսցես (=սիրես, կսիրես, պիտի սիրես) զընկեր քո իբրև զանձն քո։ Որ սպանանիցէ (=սպանի), պարտական լիցի (=կլինի, պիտի լինի) դատաստանի։ Ոչ թողցի (=չպիտի թողնվի, չպիտի մնա) այդր քար ի քարի վերայ, որ ոչ ֆակտեսցի (=չքակտվի)։ Ասա՛ մեզ, ե՞րբ լինիցի (=ե՞րբ է լինելու, պիտի լինի) այդ և զի՞նչ նշան է, յորժամ կատարելոց իցէ այդ ամենայն։ Յարիցէ (=պիտի վեր կենա) ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին (=պիտի լինին) շարժմունք ի տեղիս տեղիս, սովք և սրածութիւնք։

70. Բուն ըղձական իմաստով, երբ բայը դրական է, գործածվում է միայն ստոր. ապառնի Բ օրինակ՝ Անցեալ տեսից (=անցնե՛մ, տեսնե՛մ). զտեսիլն զայն մեծ։ Եկայք երթիցուք (=եկեք երթանք)։ Հարցից ինչ զձեզ (=ձեզ մի բան հարցնեմ)։ Կերիցուք և ուրախ լիցուք (=ուտենք և ուրախանանք)։ Թող եկեսցէ դմա ուրախութիւն։

Բայց երբ բայը բացասական է, շատ սովորական է այս իմաստով, իբրև արգելական ապառնի, նաև առաջին ապառնին, հատկապես երբ խոսքը վերաբերում է ոչ թե մի անգամ, այլ հաճախ, սովորաբար կատարված գործողության, օրինակ՝ Մի՛ լինիցիս (=մի՛ լիցիս=չլինի՛ս) որպէս կեղծաւորքն։ Մի՛ այսուհետև հոգայցէք (=հոգասջիք=չհոգա՛ք) վասն վաղուի։ Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք (=չերթա՛ք) և ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք (=չմտնե՛ք)։

71. Ստոր. առաջին ապառնին բացի վերևում դրածներից՝ համապատասխան է նաև աշխարհաբարի սահմ. ներկային.

1. Երբ խոսքը հարցական է, օրինակ՝ Գիտիցե՞ս կամ զգայցե՞ս ինչ արդեօք ցաւս։ Ո՞ւր իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն։

2. Երբ խոսքը նմանությամբ, ենթադրությամբ, երկբայությամբ է ասվում, կամ կարծեցյալ իմաստ ունի. օրինակ՝ Հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի։ Զի՞նչ է զոր դու գիտիցես, մեք ոչ գիտիցեմք։ Ոչ յուցանեն ձրաց և դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի և լոյս տայ ամենեցուն,

որք ի տանն իցեն: Նմանեցաւ առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում:

Այս կիրառութիւնների փոխանակ գրաբարում կարող է նաև սահմ. ներկա գործածվել, իսկ աշխարհաբարում՝ սահմ. ներկայի տեղ ենթադրական կամ ըղձական ներկա: Ո՞ իցէ ի ձէնջ մարդ, զոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա: Միթէ քաղիցե՞ն (=կքաղե՞ն) ի փշոց խաղող, կամ ի տատասկէ թուզ: Եւ ասէր. այսպէս է, որպէս զի այր մի արկանիցէ զսերմանիս իւր յերկիր, և ննջիցէ և յառնիցէ զցայգ և զցերեկ, և սերմանիքն բուսանիցին և աճիցին, և նա ոչ գիտէ, թէ... Այլ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքի մանգաղ՝ ղի հասեալ են հունձք:= Ինչպես որ մի մարդ սերմ է ձգում... ննջում է և վեր կենում... բուսնում են և աճում... չի իմանում... տալիս է... ուղարկվում է... Բայց կարելի է թարգմանել նաև՝ Ինչպես որ մի մարդ սերմ ձգի (ձգելու լինի), ննջի և վեր կենա... բուսնեն և աճեն, և նա չիմանա, թե... տա... ուղարկվի...

72. Հրամայական ապառնի ժամանակները միևնույն իմաստն ու գործածութիւնն ունին, միայն առաջին ապառնին քիչ է պատահում և սովորաբար գործ է ածվում կրավորական նշանակութեամբ: Հոգն. 2-րդ դեմքերը նույնն են, ինչ որ ստոր. ապառնի ժամանակների հոգն. երկրորդ դեմքերը: Եզ. 2-րդ դեմքերի փոխանակ երբեմն գործ են ածվում ստոր. ապառնի ժամանակների եզ. 2-րդ դեմքերը: Իմաստով համապատասխան են աշխարհաբարի՝

ա) Հրամայական ներկային. օրինակ՝ գնայջի՛ր, գնասջի՛ր=գնա՛: Ե՛րթ նախ հաշտեա՛ց ընդ եղբօր քում և ապա եկեալ մատուսջի՛ր զպատարագն քո=Գնա՛ նախ հաշտվիր... և ապա ե՛կ զոհդ արա՛:

բ) Ենթադր., հարկադր. և ըղձական ապառնի ժամանակներին. օրինակ՝ գնայջի՛ր, գնասջի՛ր=կգնա՛ս, պիտի գնա՛ս: Ի նմին տան ագանիջիք, ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ (=Նույն տանը վեր կը գաք, կ'ուտեք և կը խմե՛ք):

78. Գրաբարի և աշխարհաբարի ժամանակների համապատասխանութիւնը կարելի է տեսնել հետևյալ ցուցակից, որի մեջ առանց ժամանակներն անվանելու՝ ամեն ժամանակի համար իբրև օրինակ դրված են առաջին դեմքերը միայն, նախ եմ, լինիմ օժանդակները, ապա գրեմ բայը:

1. եմ	եմ.
էի	էի. կը լինեի. լինեի
իցեմ	եմ. կը լինիմ. լինիմ
2. լինիմ	լինում եմ, կը լինիմ. լինիմ
լինէի	լինում էի. կը լինեի. լինեի
	այլ և պատմական՝ լինում է. եղավ
լինիցիմ	պիտի լինիմ. կը լինիմ. լինիմ,—լինում եմ
լիցիմ	պիտի լինիմ. կը լինիմ. լինիմ

լինիջի՛ր, լիջի՛ր	պիտի լինիս. կը լինիս, լինիս,—եղի՛ր
եղէ	եղա
լե՛ր	եղի՛ր
3. Գրեմ	գրում եմ. կը գրեմ. գրեմ
գրէի	գրում էի. կը գրեի. գրեի
	Այլ և պատմական՝ գրում եմ, գրեցի
գրիցեմ	պիտ գրեմ. կը գրեմ, գրեմ,—գրում եմ, գրելու լինիմ
գրեցից	պիտի գրեմ. կը գրեմ. գրեմ
գրիջի՛ր, գրեսջի՛ր	պիտի գրես. կը գրես. գրես, գրի՛ր
գրեցի	գրեցի
գրեա՛	գրի՛ր
Գրեալ եմ	գրել եմ, գրած եմ,—գրվել եմ, գրված եմ
գրեալ էի	գրել էի, գրած էի,—գրվել էի, գրված էի
	գրած կը լինեի,—գրված կը լինեի
	գրած լինեի,—գրված լինեի
գրեալ իցեմ	գրել եմ, գրած եմ,—գրվել եմ, գրված եմ
	գրած կը լինիմ,—գրված կը լինիմ
	գրած լինիմ,—գրված լինիմ
Գրելոց եմ	գրելու եմ,—գրվելու եմ
	պիտի գրեմ,—պիտի գրվեմ
գրելոց էի	գրելու էի,—գրվելու էի
	պիտի գրեի,—պիտի գրվեի
	գրելու լինեի,—գրվելու լինեի
գրելոց իցեմ	գրելու եմ,—գրվելու եմ (գրելու կը լինիմ,—գրվելու կը լինիմ)
	գրելու լինիմ,—գրվելու լինիմ
Գրեալ լինիմ	գրվում եմ
	գրած եմ լինում,—գրված եմ լինում
	գրած կը լինիմ,—գրված կը լինիմ. գրած լինիմ,—գրված լինիմ
գրեալ լինէի	գրվում էի
	գրած էի լինում,—գրված էի լինում
	գրած կը լինեի,—գրված կը լինեի. գրած լինեի,—գրված լինեի
գրեալ լիցիմ,	պիտի գրվեմ, կը գրվեմ, գրվեմ
լինիցիմ,	գրած, գրված պիտի լինիմ
	գրած, գրված կը լինիմ
	գրած, գրված լինիմ
գրեալ եղև	գրվեց,—գրած եղավ, գրված եղավ
Գրեալ է իմ՝	ես գրել եմ, գրած եմ
գրեալ էր իմ՝	ես գրել էի, գրած էի
	ես գրած կը լինեի, ես գրած լինեի

գրեալ իցէ իմ՝	ես գրել եմ, գրած եմ
	ես գրած կը լինիմ, ես գրած լինիմ, ես գրած եմ լինում
գրեալ լինի իմ՝	ես գրած եմ լինում գրած լինիմ. գրած կը լինիմ.
գրեալ լինէր իմ՝	ես գրած էի լինում, գրած կը լինեի, գրած լինեի

74. *Թե գրաբարի այս կամ այն ժամանակն աշխարհաբարի ո՛ր ձեվով պետք է թարգմանվի, այդ մեծ մասամբ խոսքի իմաստից պիտի հասկացվի։ Վերջին կարգի գրեալ է իմ, գրեալ էր իմ ևլն. ձևերի համար միայն՝ առանձնապես պիտի նկատել.*

1. Դրանց հետ հաճախ ենթակայական սեռական լրացումը չի դրվում. մտքից միայն պիտի հատկացվի, թե որ թիվն ու դեմքն է, այսինքն թե՝ իմ, քո, իւր, մեր, ձեր ևլն, բառերից որը պիտի դրվի. օրինակ՝ ԹՂէ կացեալ էաք (=կացած, մնացած լինեինք) ի պատուիրանիդ քում, տէ՛ր, և պահեալ էր (=պահեալ էր մեր=պահած լինեինք) զպատուիրանս զոր եդիր..., շնորհեալ լիներ ինձ (=դու շնորհած կլինեիր) մեզ զկեանս անցաւս... և զմեզ յետ ի դրախտին վայելից և յետ երկրաւոր կարգացս՝ յանմահութիւն փոխեալ լիներ (=փոխեալ լինէր քո=փոխած կը լինեիր) և միահաղոյն ածեալ լիներ (=ածեալ լինէր քո=բերած կը լինեիր) զարքայութիւն քո (Ագաթ.)։ ԹՂէ ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին (=եղած լինեին) զօրութիւնքն՝ որ ի քեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր (=ապաշխարած կլինեին)։ Զի՞նչ ունիս, զոր ոչ իցէ առեալ (=առեալ քո=որ առած չլինիս, կամ որ չես առել)։ Զքաղաք պտղոմայեցւոց տուեալ լիցի պարգև (=տուեալ լիցի մեր=տված լինինք)։ Զոր ինչ խնդրեցեր, երթ, տուեալ լիցի քեզ։

2. Երբեմն զորությամբ պիտի հասկացվի մի անորոշ անուն (ոք, ոմն,—ուրուք, ուրումն) իբրև ենթակայական սեռական։ Այս դեպքում աշխարհաբար թարգմանվում է հոգն. 3-րդ դեմքով իբրև քերականորեն աննենթակա խոսք։ Օրինակ՝ Ուր չէր բնաւ զոք եղեալ (=չէր զոր եղեալ ուրուք=ուր ոչ ոքի չէին դրել)։ Զայս գրեալ է (=գրեալ է ուրուք=գրել են) ի գիրս, զայս և մեր ընթերցեալ է։ Դէպ եղև նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի՝ յառաւմէջս այգեստանւոյն, ի փողոցամէջս համբարոցացն՝ առ դրունս քաղաքին, քանզի զդրունս քաղաքին աղխեալ էր (=փակել էին). զի ժամ էր հասարակ գիշերոյ։ Վասն չարչարանաց էր շինեալ զայն տեղի (=չարչարանքի համար էին շինել այն տեղը)։

3. Երբեմն ենթակայական սեռականն և օժանդակ բայը միասին զեղչվում են։ Օրինակ՝ Ասէ Սարա ցԱբրահամ. տուեալ (=տուևալ է իմ) քեզ զՀագար։

4. Պատմելիս անցյալ անկատար ժամանակի փոխանակ գործած-

վում է երբեմն լինիմ բայով բաղադրված ձևը, օրինակ՝ Արդ գտեալ լինէին նոքա ի հնձանս շինուածոցն։ Համբաւն հռչակեալ... լինէր։

Այս օժանդակ բայը, ավելի լինէր ձևով, չի դրվում հաճախ, և այդ դեպքում անցյալ դերբայով միայն կազմվում են խոսքեր, օրինակ՝ Իբրև իբրն հռչակեցան զնոցանէն, ապա աւուրս երկուս ասպարաւիակ արարեալ, տուեալ (=տուեալ լինէր) պահել զնոսա։ Եւ եղեալ որոտումն յերկնից սաստիկ անհնարին, զի սահաբեկեալ զամենայն ամբոխն։ Եւ այնպես յերկար ոռոտացեալ, մինչև թմրեալ լինէին մարդիկն յահէ անտի։ Առեալ զսուրբն Հռիփսիմէ սպասաւորացն բռնաբար, մերթ վերամբարձ, մերթ ի քարշ. և նա աղաղակէր։ Եւ բացեալ գդուրս տանն բռնաբար՝ ի դուրս Լլանէր, հերձեալ զամբոխ մարդկանն. և ոչ ուր ութ կարացեալ յաղթահարել դնա (Ագ.)։ Բայց Երուանդայ չինեալ զքաղաքն իւր և փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կռոցն, զոր ոչ օգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն (Մ. Խոր.)։

ԵՂԱՆԱԿԻՋ ԲԱՅԵՐ

75. Կան բայեր, որոնք առանձին գործածությամբ դրվելով անորոշ դերբայի հետ՝ տալիս են նրան որևէ եղանակի, երբեմն աշխարհաբարի որևէ բաղադրյալ ժամանակի իմաստ։ Բոլոր պակասավոր բայերը եղանակիչ բայ են. բացի դրանցից կան և ուրիշները։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել ներքևում դրվածների վրա։

76. Ունիմ անորոշ դերբայի հետ նշանակում է՝

ա) Կարեմ, մարքեմ, գիտեմ=կարողանալ, կարող լինել, գիտենալ, ունենալ. օրինակ՝ Նաև ոչ շնչական ունիմ անուանիլ=Շնչավոր էլ չեմ կարող կոչվել։ Ասել ոչ ունիմ=Ասել չեմ կարող։ Ոչ ունիս չարանալ, իսկութեամբ բարիդ=Չարանալ չունիս կամ չարանալ չգիտես, կամ չարանալ չես կարող...

բ) Առաջի կայ լինձ. առաջի կայ քեզ, նմա ևն, որ բային տալիս է ապառնի ժամանակի նշանակություն։ Աշխարհաբար թարգմանվում է կամ ապառնի ժամանակով, կամ թե ապառնի դերբայով ունիմ բայի հետ։ Օրինակ՝ Ընդ մօտոյ ունիմք տեսանել (=առաջի կայ մեզ տեսանել=շուտով տեսնելու ենք, կամ՝ պիտի տեսնենք)։ Ունիմ ինչ ասել քեզ (=Քեզ բան ունիմ ասելու)։

Նաև. Ունիմ բայն անցյալ դերբայի հետ երբեմն, ինչպես աշխարհաբարում, բանում է եմ, լինիմ բայի փոխանակ։ Օրինակ՝ Զայս միայն եգեալ ունիջի՛ր ի մտի=...մտքերդ դրած եղէք, կամ՝ դրած լինիք։ Զաշխարհն հնազանդեալ ունէր ընդ իւրեաւ=...հնազանդեցրել էր, կամ հնազանդեցրած ուներ... Առեալ ունիմք=առած ունինք, առել ենք։ Բարձեալ ունի (կամ բարձեալ բերէ)=բարձրացրել է, կամ վրան ունի, վրան կրում է։

77. Պարտիմ անորոշ դերբայի հետ նշանակում է՝ պարտավոր լինել, պարտական լինել, պարտավորվել մի բան անելու. բայց աշխարհաբար թարգմանվում է ավելի հարկադրական եղանակով պիտի (պետք

է) եղանակիչով։ Օրինակ՝ Ջոր պարտէաքն առնել՝ աթալաք (=Ինչ որ պարտական էինք կամ պարտավոր էինք անելու՝ արինք. կամ թե՝ Ինչ որ պիտի (պետք է) անեինք՝ արինք)։ Պարտիմք զմիմեանս սիրել (=Պետք է միմյանց սիրենք)։ Ըստ օրինաց մերոց պարտի մեռանիլ (=Մեր օրենքով՝ պիտի մեռնի)։ Եւ դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ (=Դուք էլ պիտի միմյանց ոտներ լվանաք)։ Վասն եղբարց մերոց պարտիմք դնել զանձինս։

Սույն իմաստն արտահայտվում է նաև արժան է, պարտ է ինձ, քեզ, նմա ևլն. ձևով։ Օրինակ՝ Ի տան հոր իմոյ պարտ ինձ լինել (=Ես պիտի իմ հոր տանը լինիմ, կամ՝ Ես պարտավոր եմ իմ հոր տանը լինել)։ Ո՞չ էր պարտ ողորմել և քեզ ծառայակցին քում (=Դու էլ չպիտի՞ քո ծառայակցին ողորմեիր)։ Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր (=Տղամարդը գլուխը չպիտի ծածկի)։ Ոչ է պարտ, եղբարք իմ, այսմ այսպէս լինել (=Այս այսպես չպիտի լինի, ե՛ղբայրներս)։ Ի տան քում արժան է ինձ ագանել։ Բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խընդրել=Դու պիտի քո օգուտն ուզեիր (§176, 1.)։

Նաև. Պարտիմ իբրև անցողական բայ նշանակում է՝ պարտ լինել (պարտ ունենալ), պարտական լինել (մեկին մի բան)։ Օրինակ՝ Հատո՛ ինձ զոր պարտիսդ=Վճարի՛ր ինձ՝ ինչ որ պարտ ես, այսինքն պարտք ունիս։ Պարտէր նման հարիւր դահեկան (=Նրան պարտ էր հարյուր դահեկան)։ Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում (=Դու ի՞նչքան բան ես պարտ իմ տիրոջը)։ Դու զանձն քո ինձ պարտիս (=Դու քո կյանքն ինձ ես պարտական)։

78. Պիտի բայն անորոշ դերբայի հետ մի տրական խնդրով՝ պիտի ինձ, քեզ, նմա ևլն, պիտէր ինձ, քեզ, նմա ևլն. նշանակում է՝ պետք է, հարկավոր է ինձ, քեզ ևլն. մի բան անել. բայց աշխարհաբար թարգմանվում է ավելի հարկադրական եղանակով՝ պիտի (պետք է) եղանակիչով։ Օրինակ՝ Ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի=Ես պիտի նորից դառնամ այս տեղին։ Ոչ պիտի մեզ այր սպանանել (=Մենք չպիտի մարդ սպանենք կամ՝ Մեզ պետք չէ մարդ սպանել)։ Արեաց տէր որ լինի, արդար աշօք պիտի նայել (=պիտի նայի) յամենայն մարդ։

Սույն իմաստն արտահայտվում է նաև պիտոյ է կամ հարկ է ինձ, քեզ, նմա ևլն. ձևով. օրինակ՝ Ինձ պիտոյ է գնալ=Ես պիտի (պետք է) գնամ։ Հարկ է գալ (=պիտի գա) գայթակղութեան։ Հարկ է և նմա ունել ինչ (=Նա էլ պիտի մի բան ունենա)։

Նաև. Պիտի մենակ՝ առանց տրական խնդրի՝ նշանակում է՝ պետք է, պիտի, հարկավոր է. օրինակ՝ Պիտի պատուել (=պիտի պատվել) զնոսա, որչափ ի քէն է հրամայեալ։ Թէ պիտի և այլ ևս ինչ՝ ասա՛=Թե ուրիշ բան էլ է պետք (հարկավոր), կամ՝ Թե ուրիշ բան էլ պիտի՝ ասա։

Այս իմաստն արտահայտվում է պէտ են ձևով, որ դրվում է մի սեռական հնդրի հետ. օրինակ՝ Հաւատոց պէտք են=Հավատք է պետք. հավատք պիտի, հավատք է հարկավոր (բառացի՝ հավատքի պետք կա)։

Բազում զգուշութեան են պետք=Մեծ զգուշություն է պետք կամ՝ պիտի։

79. Մարթի *բայը, նույն իմաստով և մարք է, անորոշ դերբայի հետ մի տրական խնդրով, ցույց է տալիս կարելիություն, հնարավորություն, աշխարհաբար թարգմանվում է կարելի է, կարող եմ, կարող ես և այլն. ձևերով։ Օրինակ՝ Ձիա՞րդ մարթի այդմ լինել=Այդ ի՞նչպես կարող է լինել։ Չէ մարթ այդմ լինել=Այդ չի կարող լինել։ Մարդ չըմարթի զքեզ կոչել=Մարդ չի կարելի քեզ կոչել։ Թէ նմա չմարթի գալ, յզեա ղդա առ նա=Թէ նա չի կարող գալ... Վնասակարացն ընդ անվնասակարսն չմարթի բնակել=Վնասակարներն անվնասների հետ չեն կարող բնակվել։ Միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ ունել=Միթե կարելի՞ բան է, որ առագաստի մանուկները սուգ պահեն։*

80. Լինիմ *(եղանիմ, եմ բայերի եզ. 3-րդ դեմքը, անորոշ դերբայի հետ տրական խնդրով, ստանում է դէպ լինի=պատահել, հաջողել բայի իմաստը. բայց հաճախ այս կիրառությունը լոկ դարձված է, որ գործ է ածվում փոխանակ բայը խոնարհելու։ Օրինակ՝ Ծզև նմա հիւանդանալ (=հիվանդացավ նա)։ Ծզև մեռանել աղքատին (=մեռավ աղքատն)։ Ծզև նմա դառնալ (=դարձավ նա)։ Այսպէս եղև ամենեցուն փրծանել յերկիր և ապրել (=այսպես հաջողվեց ամենքին պրծնել...)։ Էր ինձ... լինել (=էի ես) այսօր յերկրի անծանօթում։ Ի սաստկութենէ ծփանաց խորհրդոցն լինէր նմա ի տեսլեան երազոցն երևութանալ (=երևութանայր նմա)։— Ապառնին՝ լիցի՝ տալիս է բային հարկադրական եղանակի իմաստ. օրինակ՝ Ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ պաշտել (=ես պաշտեցից=ես պիտի ծառայեմ)։ Ինձ լիցի պահել (=ես պահեցից=ես պիտի պահեմ) զուխտ։ Իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն (և մի՛ այլ ձգել լիցի)—... չպիտի՛ էլ ձգեմ)։ Մի՛ լիցի քեզ զայդ ասել (=մի՛ ասասցես=չասե՛ս, չլինի՛ թե ասես)։*

Արգելական մի՛ լիցի ձևի փոխանակ գործ է ածվում և fաւ լիցի. օրինակ՝ Քաւ լիցի ինձ ասել զայն։ Քաւ լիցի քեզ առնել զայն բան (=չլինի թե դու այդ բանն անես)։

81. Եմ *բայի կիրառության համար պիտի իմանալ.*

1. Եզ. 3-րդ դեմքը՝ անորոշ դերբայի հետ տրական խնդրով, գործ է ածվում պարտիմ. պարտ է, մարք է եղանակիչ բայերի նշանակությամբ։ Օրինակ՝ Էր նմա անցանել (=նա պիտի անցներ) ընդ Սամարիա։ Ոչ է ձեզ գիտել զժամն (=դուք չպիտի իմանաք...)։ Էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին (...գունդը պետք է գար), լերինք ինչ։ Ոչ ևս է լինել նմա հանգիստ։ Ոչ այժմ թագաւորել է նմա։ Այլ մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է, ոչ առնել (=բայց մենք դրանից ավելի բան ոչ պիտի իմանանք, ոչ անենք)։

2. է, էր, իցէ, բացասական՝ չիմ, չկայ, չգոյ, անորոշ դերբայի հետ առանց տրական խնդրի, պարտ է, մարք է, (=կարելի է) նշանակությունն են ստանում, միայն ընդհանուր իմաստով։ Օրինակ՝ Զիա՞րդ

իցէ մեկնել զայս (=ի՞նչպես պետք է, կամ՝ ինչպես կարելի է մեկնել այս, կամ՝ ի՞նչպես մեկնելու է այս)։ Անդ էր լսել զձայն լալոյ։ Տեսանել է յամենեցուն ընթրիս։ եթէ էր տանել առ բժիշկ (=եթե կարելի լիներ տանել, եթե բժշկի մոտ տանելու լիներ)։ Ոչինչ է ընդ այն զարմանալ։ Ի Յոբայ փորձանացն է տեսանել։ Զոր իմանալ է (=իմանալի է=պետք է իմանալ) առ փարաւոն և առ սատանայ։ Զի՞նչ ինչ առնել էր (=հարկավոր էր անել, անելու էր) այգւոյ իմում, և ես ոչ արարի նմա։ է և այլ ազգ ևս իմանալ (=ուրիշ տեսակ էլ կարելի է հասկանալ)։ Այլ ինչ չկայ տեսանել։

3. Երբեմն է բայը տրական խնդրով՝ տանում է անկ է (=արևմտ. աշխ. կ՝իյնա, կը վայլե. վայել է, պատշաճ է), **գործ է, պաշտօն է, իրք են** *(աշխարհ. բանն է) ձևերի իմաստը. ենթական կարող է լինել մի առնորոշ դերբայ կամ ուրիշ բառ։ Օրինակ՝ Դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել։ Ճշմարիտ վարդապետի է երբեմն սաստել։ Քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղւոջ կռուել, և կանանց գործ է արտելուլ, փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռիւսն։ Մեծի զօրութեան է առնել զայդ։ Յետին ամբարշտութեան է... Վերջին յիմարութեան է զայդ ասել։*

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

82. *Գրաբարում հոլովվում են ոչ միայն գոյականները (անուն և դերանուն), այլև ածականները, երբ դրվելով անվան վրա՝ թվով և հոլովով համաձայնում են դրա հետ, օրինակ՝ մեծ զօրութիւն, մեծի զօրութեան, մեծաւ զօրութեամբ։ Ածականները հոլովվում են անունների պես։*

83. *Հոլովները յոթն են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։*

Հայցական հոլովն առանձնապես կրող առարկայի հոլովն է, գործածվում է իբրև կրող խնդիր (հայցական = խնդրական) ներգործական բայերի։ Այս հայցական խնդիրը երբ որոշ է,—այսինքն հատուկ անուն է, դերանուն է, կամ աշխարհաբարում վրան ունի որևէ հոդ և կամ ամենայն, իւրաքանչիւր, ամենիւր բառերից մեկը,— սկզբից առնում է զ նախդիրը և կոչվում է որոշյալ հայցական։ Այս հոլովին աշխարհաբարում փոխանակել են ուղղական և տրական հոլովները (ուղղական-հայցական և տրական-հայցական)։ Օրինակ՝ Ու բացեալ զբերան (= բերանը) իւր ուսուցանէր զնոսա (= նրանց)։ Աղաչեցէք զտէր (= տիրոջը) հնձոցն, զի հանցէ մշակս (= մշակներ) ի հունձս իւր։ Մի՛ արկանէք զմարգարիտս (= մարգարիտները) ձեր առաջի խոզաց։

84. Հոգնակի թիվը *կազմվում է* **f, u, g** *բաղաձայններով. f ունին հոգնակի ուղղականն և գործիականը (հացք, հացիւք). u ունի հոգն. հայցականը (հացս). իսկ g ունին հոգն. սեռական-տրականն ու բացառականը (հացից, ի հացից)։*

85. Անեզական *ասվում են այն անունները, որոնք ունին միշտ հոգնականի* **f**-*ն և հոլովվում են միայն հոգնակի ձևով. օրինակ՝* աչք. **փառք, կեանք, կառք, դիք, տանջանք, զրկանք, ճարսանիք, կոչումք, իրաւունք** *և այլն։*

Այս բառերը նշանակությամբ՝ նայելով տեղին՝ լինում են և՛ եզակի և՛ հոգնակի, ուստի կարող են մի թվականն առնել, ինչպես և եզա-

կի ձևով վերադիր ածական ունենալ, օրինակ՝ Մեծաւ չարչարանօք և պէսպէս տանջանօք վատթարէր։ Մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Բացաւ աչօք տեսանէին։ Բացաւ երեսօք։ Նովին կապանօք։ Ընդ նովին օրինօք։ Որ նստէր ի մեծ գահոյս յայսմ։ Կուռք մի, կառք մի, մի երկանք, վասն միոյ յանցանաց, դից իրիք, ի կեանսն իւրում, ի փառս իւրում (§§ 186. 3, 188. 207, գ.)։

86. Մի քանի բառեր՝ բացի հոգնականի սովորական կազմութիւնից՝ ունին նաև հետևյալ ածանցներով հոգնակի ձևերը հավաքական իմաստով.

1. **Ան**, եան օրինակ՝ ձիան, իշան կամ իշեան, խոզեան, խորդեան, նախարարեան, զօրագլխեան, աբեղեան (=աբեղայք), թղթեան, գեւղեան, բերդեան։ Երբեմն հոգնականի **f**-ի հավելմամբ, օրինակ՝ նու, նուանք, գրեան, գրեանք։

2. **Անի**, օրինակ՝ ազատանի, աւագանի, կանանի, նամականի։

3. **Ար**, նեար, երբեմն և **արf**, օրինակ՝ որեար (որեարք=մարդիկ), վանեար, իշեար, բանեար, բերդեար (բերդեարք), բարձկնեար, նաւկնեար։

4. **Որեայ** (=աւրեայ), երբեմն **որայ**, **որայf**, **արէf** ձևերով, օրինակ՝ արտորեայ, վանորեայ, վանորայ, գեղարէք։

5. **Տի**, **ոտի**, երբեմն կրկին հոգնական **տիf**, **ոտիf** ձևերով, օրինակ՝ մանկտի, ծակտի, ոսկրոտի, փորոտի(ք)։

87. Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականի վրա **f** ավելանալով. օրինակ՝ բան, բանք. ծառ, ծառք. այգի, այգիք. ակն, ակունք. կողմն, կողմանք. գառն, գառինք. եզր, եզերք։

88. Եզակի հայցական հոլովը նման է եզ. ուղղականին. հոգնակի հայցականը կազմվում է հոգնակի ուղղականի **f**-ն **u**-ի փոխելով, օրինակ՝ բանք, բանս. ծառք, ծառս. այգիք, այգիս. ակունք, ակունս. կողմանք, կողմանս. գառինք, գառինս. եզերք, եզերս։

Նաև. երբ հոգն. հայցականի վրա դրվում է **u** հոդը, հոգնականի **u**-ի փոխանակ դրվում է երբեմն **f**. օրինակ՝ Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչեցին։

88 Անունների և ածականների սեռական և տրական հոլովներն ընդհանրապես նման են միմյանց։

Եզակի սեռական-տրականն ունի **ի**, **ու**, **ոյ**, **այ** վերջավորությունները, որոնք կազմում են չորս ձայնավոր հոլովում անփոփոխ բներով, և **ան**, **եր**, **եղ** վերջերը, որոնք կազմում են երկու բաղաձայն հոլովում փոփոխվող բներով։

Հոգնակի սեռական-տրականը կազմվում է եզակի սեռական-տրականի վրա **ց** ավելանալով. եզակի տրականի **յ**-ն այս դեպքում դուրս է ընկնում. օրինակ՝ բան, բանի, բանից. հաւ, հաւու, հաւուց. ծառ, ծառոյ, ծառոց. տիտան, տիտանայ, տիտանաց. կողմն, կողման, կողմանց. համր, համեր, համերց։

Բացի այս՝ կան երեք շեղումներ, այն է՝ այ հոլովումն ունի եզ. սեռական-տրականի համար այ վերջավորության փոխանակ ի կամ ոյ, բայց հոգնակին՝ աց, օրինակ՝ ախարհ, աշխարհի, աշխարհաց. այգի, այգւոյ, այգեաց։ Իսկ աև հոլովումն ունի եզ. սեռական-տրականի համար աև վերջի փոխանակ իև, բայց հոգնակին անց. օրինակ՝ գառն, գառին, գառանց։

89. Բացառական *հոլովն ունի սկզբից մի նախդիր, սովորաբար ի (երբեմն զ, ընդ, ըստ, առ), որ, երբ բառը ձայնավորով է սկսվում, դառնում է յ և անվանը կից է գրվում։ Եզակի բացառականը, եթե տրականն ունի այ, ոյ վերջավորությունը, կազմվում է տրականի վրա ի (յ) նախդիրն ավելանալով. մնացած դեպքերում ունի է վերջավորությունը։ Հոգնակի բացառականը կազմվում է հոգն. տրականի վրա միայն ի (յ) նախդիրն ավելանալով։ Օրինակ՝ ծառ, ծառոյ, ի ծառոյ, ի ծառոց. տիտան, տիտանայ, ի տիտանայ, ի տիտանաց։—Բան, բանի, ի բանէ, ի բանից. խրատ, խրատու, ի խրատէ, ի խրատուց. ակն, ական, յականէ, յականց. աստղ, աստեղ, յաստեղէ, յաստեղց—շեղումները՝ աշխարհ, աշխարհի, յաշխարհէ, յաշխարհաց.— այգի, այգւոյ, յայգւոյ, յայգեաց. գառն, գառին, ի գառանէ (ի գառնէ), ի գառանց։*

Նշան. Բացառականի համար պատահում է երբեմն ուստ վերջավորությունը, օրինակ՝ յաստուածուստ (յաստուծուստ) կամ աստուածուստ, յարքունուստ կամ արքունուստ, յերկնուստ, յարտաքուստ կամ արտաքուստ ի ներքուստ կամ ներքուստ (=ներքևից, տակից կամ ներսից, ներքսևից), ի բացուստ կամ բացուստ, յառաջուստ (=առջևից), ի վերուստ կամ վերուստ. ի հեռուստ կամ հեռուստ. յետուստ յանկարծուստ— Սրանք մեծ մասամբ մակբայական կազմություններ են։

90. Եզակի գործիականը *կազմվում է բ. վ. ւ տառերով, որոնք դրվում են եզակի տրականի վրա։ Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականի վրա ֆ ավելանալով։*

Բ դրվում է, երբ տրականը բաղաձայնով է վերջանում. բ-ից առաջ ն-ն փոխվում է մ-ի, օրինակ՝ ակն, ական, ականբ, ականբք. աստղ, աստղ, աստեղբ, աստեղբք։

Ի դրվում է, երբ տրականն ի, այ է վերջանում։ Այ-ի վերջի յ-ն դուրս է ընկնում. օրինակ՝ տիտան, տիտանայ, տիտանաւ, տիտանաւք. բան, բանի, բանիւ, բանիւք։

Վ դրվում է, երբ տրականը վերջանում է ոյ, որի վերջի յ-ն դուրս է ընկնում. օրինակ՝ ծառ, ծառոյ, ծառով, ծառովք։

Բացի այս՝ պիտի նկատի ունենալ, որ՝

1. Ի, ոյ, իև շեղումները վերացվում են, այսինքն գործիականն այնպես է կազմվում, որպես թե տրականը ունենար այ, աև. օրինակ՝ աշխարհ, աշխարհի, աշխարհաւ, աշխարհաւք. այգի, այգւոյ, այգեաւ, այգեաւք. գառն, գառին, գառամբ, գառամբք։

2. Երբ տրականն ունի ու, գործիականն անփոփոխ միևնույն տր-

րականն է, միայն հոգնականում f է առնում, օրինակ՝ զարդ, զարդու, գործիականի՝ վարդու, զարդուք։

Ծան. 1. Գործիականի աւ վերջավորությունը հոգնականի մեջ իբրև երկբարբառ դարձել է օ, աշխարհաւք, աշխարհօք, ինչպես գրում և տպում են այժմ սովորաբար։ Իսկ իւ վերջավորությունը եզակիում արտասանվում է իբրև իվ, հոգնակիում իբրև իւ երկբարբառ, օրինակ՝ բանիւ=բանիվ, իսկ բանիւք=բանյուք։

Ծան. 2. Գործիականի համար պատահում են երբեմն հնացած ափ, ափե (ափմբ), ավիե վերջավորությունները, ինչպես՝ գլխովին, երամովին, ձիովին, ազգափմբ, մերովի, ձերովին, իւրովի, իւրովին ևլն, որոնք իբրև մակբայ են գործ ածվում։

91. Ներգոյական հոլովն *սկզբից ստանում է ի, ձայնավորներից առաջ յ նախդիրը, երբեմն նաև ուրիշ նախդիրներ, և սակավաթիվ բառերի համար միայն ունի առանձին կազմություն։*

Հոգնակի ներգոյականը միշտ նման է հոգնակի հայցականին, օրինակ՝ ի քաղաքս=քաղաքներում։ Բայց այս ձևը կարող է նշանակել նաև **f**ա**ղաքներ**ը, *երբ գործողությունը ուղղված է դեպի քաղաքները, օրինակ՝ գնաց ի քաղաքս։*

Եզակի ներգոյականը *նման է մասամբ եզակի հայցականին, մասամբ եզակի տրականին, երբեմն նույն բառը երկուսին էլ, մասամբ էլ առանձին կազմություն ունի, օրինակ՝ ի ջուր, ի քաղաքի, յագուջ=ջրում, քաղաքում, այգում։ Թուղթ, ի թուղթ, ի թղթի։*

Այսպիսի տարբեր կազմությունների պատճառով ներգոյական հոլովն առանձին է բացատրված։ Տե՛ս §§ 102. 106. 158, 2. 207. 208. 211։

92. *Հոլովման ժամանակ՝ շեշտի տեղափոխությամբ առաջացած ձայնափոխությունը, սակավ բացառությամբ, պահվում է, այսինքն՝ է=ի, ու. ի=ր (կամ սղվում են). ոյ=ու. եա=ե. եայ=է։ Օրինակ՝ սէր, սիրոյ. ջուր, ջրոյ. միտք, մտաց. լոյս, լուսոյ. սենեակ, սենեկի. քրիստոնեայ, քրիստոնէի։ Բացի այս՝ երբեմն ե ձայնավորն ևս սղվում է, օրինակ՝ ասեղն. ասղան. պճեղն, պճղան. թիթեղն, թիթղան. ծիծեռն, ծիծռան. իսկ է ձայնավորն երբեմն դառնում է ե, օրինակ՝ եղէգն, եղեգան. աղուէս, աղուիսու կամ աղուեսու։*

ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Անփոփոխ բեռով

1. Ի ՀՈԼՈՎՈՒՄ

98. *Այս հոլովման սեռական-տրականը կազմվում է ի վերջավորությամբ, բացառականը՝ է։ Վերջավորությունները դրվում են եզակի ուղղականի վրա։ Օրինակ՝*

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*բան*	*բանք*
Հայց.	*բան*	*բանս*
Սեռ. Տր.	*բանի*	*բանից*
Բաց.	*ի բանէ*	*ի բանից*
Գործ.	*բանիւ*	*բանիւք*

94. *Այսպես հոլովվում են.*

1. Այ, եայ, է վերջացած բառերը, օրինակ՝ ծառայ, մարգարէ, պաշտօնեայ (պաշտօնէի, պաշտօնէից). տասնամեայ (տասնամէի, տասնամէից)։

2. Շատ հասարակ անուններ, օրինակ՝ բանտ, գան, հաց, նետ, տօն, սիրտ, արուեստ, օգուտ, հանդէս, ողջոյն, ատեան, վայրկեան,— անեզական՝ կրօնք, աղօթք, անէծք, ինչք, խօսք ևլն։

3. Շատ հատուկ անուններ, ավելի ոս, էս վերջավորութեամբ, օրինակ՝ Մովսէս, Ներսէս, Մարկոս, Եգիպտոս, Սարգիս ևլն։

Էս վերջացած հատուկ անունների մեջ է ձայնավորը դառնում է ի կամ ե, երբեմն և անփոփոխ է է մնում, օրինակ՝ Մովսէս, Մովսիսի, Մովսեսի, այլ և Մովսէսի։

Հունական էս, ոս վերջավորութիւնները երբեմն դուրս են ընկնում, օրինակ՝ Մատթէոս, Մատթէի կամ Մատթէոսի. Հերովդէս, Հերովդի։

4. Թվական անունների մեծ մասը, որ են՝

Երեք, *երիս, երից, երիւք։*
Չորք, *(չորեք), չորս, չորից, չորիւք։*
Հինգ, *հնգի, հնգիւ, հինգք, հնգից, հնգիւք. այլև հնգօք։*
Վեց, *վեցի, վեցիւ, վեցից, վեցիւք։*
Եօթն, *եօթնի, եօթնիւ, եօթնից (տե՛ս § 112. 2)։*
Ութ, *ութի, ութիւ, ութից, ութիւք։*
Ինն, *իննի, իննիւ, իննից, իննիւք (տե՛ս § 129)։*
Տասն, *տասնից (տե՛ս § 112. 2)։*
Մեռասան, *մեռասանի, մեռասանից։ Այսպես և՝ երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան։*
Քսան, *քսանի, քսանից։*
Երեսուն, *երեսնի, երեսնից։ Այսպես և՝ քառասուն, յիսուն, վաթսուն, եօթանասուն, ութսուն, իննսուն։*
Ամենայն, *ամենայնի, ամենայնիւ։*

2. ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

95. *Այս հոլովման սեռական-տրականը կազմվում է ու ձայնավորով, որ դրվում է ուղղականի վրա. բացառականը՝ է ձայնավորով, որ*

ավելանում է կամ ուղղականի կամ տրականի վրա, երբեմն երկուսի վրա ևս։ Օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	խրատ	խրատ
Հայց.	խրատ	խրատս
Սեռ. Տր.	խրատու	խրատուց
Բաց.	ի խրատէ, ի խրատուէ	ի խրատուց
Գործ.	խրատու	խրատուք

96. Այսպես հոլովվող բառերը մեծ մասամբ և մյուս հոլովումների տակ են գնում։ Օրինակ՝

1. Բառեր, որոնց բացառականն ուղղականից է կազմվում՝ առաւօտ, արև, կով, հաւ, ուղտ, սակաւ, համբաւ, աղուէս, գէն, ինձ (ընձու). ցուլ, ծով, ժամ ևլն,—անեղական՝ պարտք, վարք, բարք,—Յորդանան, Յովհաննէս (Յովհաննու), Սոկրատէս (Սոկրատու)։

2. Բառեր, որոնց բացառականը տրականից է կազմվում՝ զարդ, սպաս, նախանձ, այգ ևլն։

3. Աղբ, աստ. մեղբ ոմնին՝ ծաղու, աստու, մեղու, ի ծաղուէ, յաստուէ, ի մեղուէ։ Հոգն. ասք, ասս, աստուց աստուք (տե՛ս § 128)։—Աղբ ունի տրական նաև՝ ծաղբեր կամ ծաղբու. աստ՝ աստոյ կամ աստու, աստոց. գործ. աստով կամ աստբք. իսկ մեղբ՝ մեղբեր, մեղբբք (տե՛ս § 113)։

4. Թվականներից՝ երկու կամ երկուք, երկուս, երկուց, յերկուց. գործ. երկուք։ Գործիականի համար սովորաբար գործածվում է երկոքումբք, որ երկոքին բառի գործիականն է։

Բիւր. բիւրու, բիւրք, բիւրուց, բիւրուք։ Այլ և՝ բիւրի, բիւրեաւ կամ՝ բիւրոյ, բիւրով, բիւրոց, բիւրովք։

3. ՈՅ ՀՈԼՈՎՈՒՄ

97. Այս հոլովման սեռական-տրականը կազմվում է ոյ վերջավորությամբ։ Բացառականը նույն տրականն է ի (յ) նախդրով։ Օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	ծառ	ծառք
Հայց.	ծառ	ծառս
Սեռ. Տր.	ծառոյ	ծառոց
Բաց.	ի ծառոյ	ի ծառոց
Գործ.	ծառով	ծառովք

98. Այսպես հոլովվում են.

1. Շատ հասարակ և մի քանի հատուկ անուններ, օրինակ՝ գործ,

փող, դեղ, ձի, էշ, սէր, ցօղ, սմօք, ծեր, խունկ, ծուխ, սուրբ, իմաստուն, թռչուն, ծծումբ, յոյս, գոյն, թիւ (թուոյ), անիւ, պատիւ, գին, միսմարմին, բերան, երկաթ, տղայ, տերև,—ոսկի, հոգի, որդի, ասորի, (տե՛ս ներքևը 5 կետ),—անեզական՝ տիք (տիոց), դժոխք, կուռք, Հայք, Հոռոմք.—Աստուածաստուր, Կարին ևլն,—և բոլոր ած, ին, այիճ, ուճ ածանցներով կազմվածները՝ վերին, երկնային, գիտուն, արարած ևլն։

2. Աստուած բառը, որ քրիստոնեական իմաստով ունի՝ աստուծոյ, աստուծով, իսկ հեթանոսական աստուծու իմաստով լինում է՝ աստուածոյ, աստուածով, աստուածք, աստուածոց, աստուածովք։

3. Անորոշ դերբայները, որ հոգնակի չունին, օրինակ՝ բառնալ, բառնալոյ, բառնալով. հեղուլ, հեղլոյ, հեղլով։

1. Անցյալ դերբայները՝ առաքեալ, առաքելոյ, առաքելով, առաքեալք, առաքելոց, առաքելովք։

5. Յի ածանցով կազմվածները, որոնք մի տեղացի լինելը, կամ մի ազգի վերաբերելն են ցույց տալիս, օրինակ՝ Փարպեցի, Խորենացի, Հռոմայեցի, կարնեցի, քաղաքացի ևլն։

Այս բառերի, ինչպես և մի քանի ի վերջացած բազմավանկների՝ հոգի, որդի, ոսկի, ասորի՝ վերջի ի ձայնավորը վերջավորության ո ձայնավորից առաջ դառնում է ւ. օրինակ՝ փարպեցի, փարպեցւոյ, փարպեցւով, փարպեցւոց, փարպեցւովք. հոգի՝ հոգւոյ, հոգւով, հոգւոց, հոգւովք։

6. Եար, ևեար, երբեմն և եան ածանցներով կազմված հոգնակիները. վանեար, վաներոյ. որեար, որերոյ. բարձկնեար, բարձկներոյ. գրեան, դրեննոյ։

7. Իա վերջացած աշխարհագրական անունները, որոնց վերջի ա ձայնավորը դուրս է ընկնում, օրինակ՝ Գալիլիա, Գալիլիոյ. Արաբիա, Արաբիոյ. Նիկիա, Նիկիոյ. Եգեսիա, Եգեսիոյ. Սամարիա, Սամարիոյ. Զմիւռնիա, Զմիւռնիոյ (տե՛ս § 105. 3)։

8. Թվականներից՝ հարիւր (հարեւր), հարիւրոյ, հարիւրով (երբեմն հարիւրիւ), հարիւրոց, հարիւրովք։ Նույնպես՝ երկերիւր, երեքհարիւր, չորեքհարիւր, հինգհարիւր, վեցհարիւր, եօթնհարիւր, ութհարիւր, իննհարիւր։

99. *Այս հոլովման տակ գնացող մի քանի բառերի համար պիտի նկատի ունենալ, որ սեռական-տրականն ունին երբեմն նաև ոչ վերջավորությամբ, որի վրա ավելանում է բացառականի է վերջավորությունը, օրինակ՝ մարդ, մարդոյ, ի մարդոյ,—բայց երբեմն և մարդոջ, ի մարդոջէ. նույնպես ձի, ձիոյ, այլ և ձիոջ, ի ձիոջէ. ջերմ, ջերմոյ, ջերմոջ. միւմիոյ կամ միոջ, ի միոջէ։ Հնացած մի ձև է ոյր վերջավորությամբ սեռականը՝ մարդոյր, ձիոյր ևլն։*

100. *Կան որոշ թվով բառեր, որոնք տրական ունին ում. իսկ բացառականը կազմվում է սովորաբար է ավելանալով ում վերջացած*

տրականի վրա, որի ու-ն սղվում է. հոգնակի ուղղականը և հայցականը երբեմն նման են եզ. ուղղականին և հայցականին. օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	մեր	միրմ
Հայց. (զ)մեր		(զ) միրս
Սեռ.	մերոյ	մերոց
Տր.	մերոյ, մերում	մերոց
Բաց.	ի մերոյ, ի մերմէ	ի մերոց
Գործ.	մերով	մերովք

101. Այսպես հոլովվում են.

1. Մի թվականը՝ միոյ կամ միում, ի միոյ կամ ի միոջէ (տե՛ս § 99)։

Նաև. 1. Նույն ձևով հոլովվում է կրկնված՝ մի մի, (զ)մի մի, միոյ միոյ, միում միում, ի միոջէ միոջէ, որ նշանակում է՝ մեծ մի, իւրաքանչիւր=ամեն մի, ամեն մեկը։ Օրինակ՝ Տանէին մի մի ի նոցանէ (նրանցից ամեն մեկը) մարս երկուս կամ երիս։ Զմի մի ի նոցանէ ի ծածուկ քաշալերէր։ Առ մի փիղ հազար սպառազէնք։ Ըստ միոյ միոյ առաքինութեան պակքն փառաց յօրինեցան։ Միում միում ի նոցանէ շնորհէր։ Միում միում կաշառ գաղտ խրէր։ Ի միոջէ միոջէ լուիցես։

Մի մի մակբայորեն գործածված նշանակում է և մի առ մի, մի ըստ միոջէ=մեկ մեկ. մեկիկ մեկիկ, ջոկ ջոկ, օրինակ՝ Ու զի՛ մի մի ասիցեմ, միանգամայն ասացից։ Մի մի եկին։

2. Միւս (մեւս), միւսոյ, միւսում, ի միւսմէ, միւսք, միւսոց։

Նաև. 2. Երբեմն գործ է ածվում միւս եւս ձևով, օրինակ՝ ի միւս ևս ի գլուխ տարէոյն (=մյուս տարեգլխին ևս, կամ մյուս տարեգլխին էլ)։ Միւս ևս այլ կորիւն։ Ասէ ցմիւս ևս (=մյուսին էլ, մեկելին էլ)։ Զառաջին պարիսպն և զմիւսն ևս։—Մի... և միւս,—մի ... և միւս ևս, մի...միւս ևս -մի ... մի, -մի ... և մի ձևերը գործ են ածվում նաև թվարկության համար իբրև մեկ (մին)...մեկ էլ (մին էլ), կամ նախ ...ապա, նախ... և երկրորդ, մի ... և երկրորդ. օրինակ՝ Մի՝ (=մեկ՝) քողուլն չար (է), և միւս՝ (=մեկ էլ՝) երդնուլ։— Միւս եւս մակբայորեն նշանակում է նաև՝ մեկ էլ, մի անգամ էլ, դարձյալ.

3. Այլ, այլոյ, այլում, յայլմէ կամ յայլմանէ, այլք, այլոց։

4. Իւրաքանչիւր, -րոյ, -րում, -րով. իւրաքանչիւրք կամ իւրաքանչիւր, -րոց կամ -րից, կամ իւրաքանչիւրց, -րովք։

Նաև. Իւրաքանչիւր, ինչպես և մէն մի, անցնիւր կամ անձնիւր (անցնիւրոյ, անցնիւրք, անցնիւրոց կամ անձնիւրից, անցնիւրց=յուրաքանչյուր), երբեմն նաև երկաքանչիւր (երկաքանչիւրոյ, երկաքանչիւրոց կամ երկաքանչիւրից=երկուսն էլ, երկուից ամեն մեկը) հոդ չեն առնում և կարող են անփոփոխ ձևով գործածվել նաև թեք հոլովների իմաստով։ Աշխ. Թարգմանվում են՝ յուրաքանչյուրն իր, ամենքն իրենց, ամեն մեկս մեր, ամեն մեկդ ձեր ևլն. ձևերով։ Օրինակ՝ մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ (=ամեն մեկն իր եղբորից)։ Ժողովեցէք իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում (=ամեն մեկդ ձեր կարողության կամ պիտոյքի չափ)։ Դնել զարծաթն իւրաքանչիւր (փոխ. իւրաքանչիւրոց

=ամեն մեկին իր) ի քրձի իւրում։ Հատուսցէ իրաքանչիւր (փոխ. իւրաքանչիւրում=ամեն մեկին) ըստ գործս իւր։

5. Որ, *որոյ, որում, յորմէ (կա և յորմանէ), որով, որք, որոց, որովք։*

Որ *բառն իբրև հարաբերական և հարցական՝ հոդ չի առնում։* Որ *հարաբերականի հոգնակի ուղղական և հայցական* որք, (զ)որս *ձևերի փոխանակ գործ է ածվում և եզակի* որ, (զ)որ։

6. Ստացական ածականները՝ իմ, ով, մեր, ձեր, իւր *հոլովվում են ինչպես* մեր։ *Կարող են և իբրև գոյական գործածվել անհոդ կամ* ս, դ, ն, *հոդերով՝ իմս, քոյդ, մերս, ձերդ, իւրն=իմը (իմս), քոնը (քոնդ), մերը, ձերը, իրենը նշանակությամբ։*

Անվան հետ գործածված ժամանակ հոգնակի ուղղականը և հայցականը անփոփոխ են մնում։ Օրինակ՝ ճարճ մեր, բանք իւր, բանք իմ, գրաճս իմ. *բայց մենակ՝* իմխս *(=իմոնքս),* յիմսս, մերճ, ի մերս *(=մերոնք),* իւրճ, յիւրսճ. զքոյսն *(=քոնոնք)։*

7. Քո բառը երկու ձևով է հոլովվում՝ քո, քոյոյ, քոյում, ի քոյոյ, քոյով. քոյք, (զ)քոյս, քոյոց, քոյովք.—*կամ՝* քո, քոյ, քում, ի քումէ *(ի քումմէ),* քով, քոց, քովք։

8. Ցուցական սեռականները՝ սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա. *օրինակ՝ նորա, նորայոյ, նորայում, նորայով. նորայք, զնորայս, նորայոց, նորայովք։* Նոցա *ունի և* նոցայցն, նոցայիւք *ձևերը։*

Ծան. *Այս բառերը սովորաբար հոդ ստանալով՝* սորայս, դորայդ, նորայն, նոցայն *=սրանը, դրանը, նրանը, նրանցը (նոցանը), իբրև գոյական են գործածվում, բայց երբեմն իբրև ածական էլ են բանում. օրինակ՝ Զի նոցայցն տիրեսցէ իշխանութեանց։ Ծանօթութիւն նոցայցն առաջի արկելոց գործոց։*

9. Մի քանի ուրիշ բառեր, ինչպես՝ վերին. *վերնոյ, վերնում. յետին, յետնոյ, յետնում. առաջին, առաջնոյ, առաջնում, յառաջնմէ, յառաջմէ. վերջին, վերջնոյ, վերջնում. հին, հնոյ, հնում, ի հնմէ. նոր, նորոյ, նորում. ձախ, ձախոյ, ձախում, ի ձախմէ. աջ, աջոյ, յաջմէ* և այլն։

102. Ներգոյական հոլով.— Ում *և* ոյ *վերջավորություններից* ոյ *ձևը գործ է ածվում սովորաբար իբրև սեռական, իսկ* ում *ձևը՝ իբրև տրական և հաճախ ի նախդրով ստանում է ներգոյական հոլովի իմաստը իբրև պատասխան ե՞րբ, ո՞ւր հարցերի. օրինակ՝ ի միւսում շաբաթուն. ի միւսում աւուրն. ի միւսում վայրի, ի նորումս, ի վերջնում, ի յետնում, յառաջնումն, ի հնումն։ Ներգոյականի իմաստով ում վերջավորությունն ունին նաև դասական թվականները, անցյալ դերբայներն և ուրիշները. օրինակ՝ յառաջնում, յերկրորդում ամի, այլ և յերկրորդի, ի հանդերձելումն, յանցելումն ամի, ի գլխացելում, ի սրբումն. յերկրի անծանօթում. ի բարձրաւանդակումն կուռ կալով ի տեղւոջ.* և այլն։

Այս Ոյ հոլովման պատկանող ոչխիշ բառերի ներգոյականը կամ նըման է հայցականին, կամ կազմվում է ի վերջավորությամբ. օրինակ՝ գետին, գետնոյ, ի գետնի. գիշեր, գիշերոյ, ի գիշերի. գուբ, գբոյ, ի գբի. ջրհոր, ջրհորոյ, ի ջրհորի. փոր, փորոյ, ի փորի. մարմին, մարմրնոյ, ի մարմնի. թուղթ, թղթոյ, ի թղթի. պատիւ, պատուոյ, ի պատուի. երազ, երազոյ, յերազի. պատիժ, պատժոյ, ի պատժի, ևլն. բերան, բերանոյ, ի բերան. գնալ, գնալոյ, ի գնալ և այլն։

Կան բառեր, որոնց ներգոյականը երկու ձևով էլ լինում է, թե հայցականի և թե տրականի, օրինակ՝ մէջ, միջոյ, ի միջի, այև՝ ի մէջ։

4. ԱՑ ՀՈԼՈՎՈՒՄ

108. Այս հոլովման տրականը կազմվում է այ վերջավորությամբ. բացառականը նույն տրականն է ի նախդրով։ Ունի երկու շեղում։ Առաջին շեղման տրականը կազմվում է ի վերջավորությամբ, բացառականը՝ է. իսկ երկրորդ շեղման տրականը կազմվում է ոյ վերջավորությամբ, բացառականը նույն տրականն է։ Գործիականն ու հոգնակին բոլորն էլ ա ձայնավորով են հոլովվում։ Օրինակ՝

Եզակի

		Ի շեղում	Ո շեղում
Ուղ.	Տիտան	աշխարհ	եկեղեցի
Հայց.	Տիտան	աշխարհ	եկեղեցի
Ս. Տ.	Տիտանայ	աշխարհի	եկեղեցւոյ
Բաց.	ի Տիտանայ	յաշխարհէ	յեկեղեցւոյ
Գործ.	Տիտանաւ	աշխարհաւ	եկեղեցեաւ

Հոգնակի

Ուղ.	Տիտանք	աշխարհք	եկեղեցիք
Հայց.	Տիտանս	աշխարհս	եկեղեցիս
Ս. Տ.	Տիտանաց	աշխարհաց	եկեղեցեաց
Բաց.	ի Տիտանաց	յաշխարհաց	յեկեղեցեաց
Գործ,	Տիտանաւք(-օք)	աշխարհաւք(-օք)	եկեղեցեաւք(-օք)

104. Այս հոլովման համար պիտի իմանալ՝

1. Անխառն ա ձայնավորով հոլովվում են հատուկ անունների մեծ մասը, որոնք սովորաբար եզակի են հոլովվում, բայց իբրև հասարակ անուն առնված ժամանակ կարող են և հոգնակի ունենալ. օրինակ՝ Հայկ, Արամ, Տիգրան, Տրդատ, Սահակ, Մեսրոպ ևլն.—և մի քանի ուճի (ուրհի) ածանցով կազմվածները՝ Տիգրանուհի (-ուհեայ), աստվածուհի, քրմուհի, վկայուհի, իսկուհի ևլն։

2. Ի շեղման ձևով հոլովվում են շատ հասարակ անուններ և ա-ծականներ, օրինակ՝ աշակերտ, բարեկամ, ընկեր, զինուոր, հովիւ, աւազան, մնդու, մրրիկ, պարտէզ, բաղուկ, որդեակ, պատանեակ, սե-նեակ, նաւակ, աչեակ, ոզեղէն, ոսկեղէն, հնդիկ, պարսիկ, ևլն. ան-ղական, աչք, միտք, կամք, կառք, փառք, կեանք, տանջանք, զրկանք ևլն.— և թվականներից՝ հազար, հազարի, ի հազարէ, հազարաւ, հա-զարաց, և բոլոր դասականները՝ բացի առաջին բառից, օրինակ՝ երկ-րորդ, երկրորդի, երկրորդէ, երկրորդաւ, երկրրոդաց, նույնպես՝ երրորդ, չորրորդ, հինգերորդ ևլն (տե՛ս § 102)։

Ո շեղման ձևով հոլովվում են ի վերջացած բազմավանկ բառերը սակավ բացառութ յամբ (§ 98. 5). օրինակ՝ այգի, կղզի, պատասխա-նի, մատանի, ծերունի, բարի, նմանի (=նման), սիրելի ևլն. նույն-պես տի, անի ածանցներով կազմված հոգնականները՝ մանկտի, նամա-կանի ևլն. և անեզականները՝ կարծիք, ընթրիք, հարսանիք ևլն։

Ծան. Կան ի վերջացած բազմավանկ բառեր, որոնք սովորաբար ո ձայնավորով են հոլովվում (§ 98. 1, 5), բայց երբեմն դրանց համար ևս պատահում են ա հոլովման ձե-վեր. օրինակ՝ քաղաքացի, քաղաքացւոց և քաղաքացեաց. հոգի, հոգւոց և հոգեաց. գո-տի, գօտւոց և գօտեաց (գործիական նաև՝ գոտեամբ). եղբօրորդի, եղբօրորդւոց և եղ-բօրորդեաց. գործի, գործւով, գործւոց, գործւովք և գործեաւ, գործեաց, գործեօք։

105. Այս հոլովման համար ընդհանրապես պիտի նկատի ունենալ։

1. Բառավերջի է. ի ձայնավորները հոլովական ա ձայնավորից ա-ռաջ դառնում են ե, որ հաջորդ ա-ի հետ կազմում է եա, եաւ(f)=եօ(f) երկբարբառ. օրինակ՝ Գայիանէ, Գայիանեայ, Գայիանեաւ. Հռիփսիմէ, Հռիփսիմեայ. Հէղինէ, Հեղինեայ. Կրետէ, Կրետեայ. Տիգրանուհի, Տիգ-րանուհեայ. քրմուհի, քրմուհեայ. աստուածուհի, աստուածուհեայ. Օսա-յի, Օսայեայ,—նույնպես անեզականները՝ կարծիք, կարծեաց, կարծեաւք =կարծեօք. Հարսանիք, Հարսանեաց, Հարսանեօք. ջրօրհնէք, ջրօրհ-նեաց։

2. Հատուկ անունների հունական իոս, էոս, էս վերջերի ոս, ս մա-սերը թեք հոլովների մեջ դուրս են ընկնում, իսկ ի, է ձայնավորները հոլովական ա-ի հետ կազմում են երկբարբառ. օրինակ՝ Տիբերիոս, Տի-բերեայ. Տիմոթէոս, Տիմոթեայ. Հերակլէս, Հերակլեայ. Հողուիեռնէս, Հողուփեռնեայ. Ռստակէս, Ռստակեայ։ Երբեմն այս ձևով սեռ.-տր. ու-նին և պարզ ոս վերջացածները, օրինակ՝ Կադմոս, Կադմեայ. Դամաս-կոս, Դամասկեայ. Փիլիպպոս, Փիլիպպեայ։ Հաճախ այս անունների վերջավորութ յունը դուրս է ընկնում. օրինակ՝ Հերակլ, Տիբեր, ավելի թեք հոլովների մեջ, օրինակ՝ Արիստակէս, Արիստակեայ. Վրթանէս, Վրթանեայ. Հիւպողիտէս, Հիւպողիտեայ. Կեկրոփս, Կեկրոպեայ. Ղուկաս, Ղուկայ։

Ծան. Այս կարգի անուններից մի քանիսի համար գործ է ածվում առանձին կոչա-կան ձև՝ հունարենի ազդեցութ յամբ, օրինակ՝ Ո՛վ Պետրէ (Պետրոս). Պաւղէ՛, (Պօղոս). Փիլիպպէ՛, Տիմոթէէ՛, Իգնատիէ՛ ևլն։

3. Իա, ա(յ) վերջացած հատուկ անունների սեռական-տրականը կազմվում է յ ավելանալով, իսկ գործիականը ւ ավելանալով։ Այս դեպքում իա դառնում է եա. օրինակ՝ Գալիլիա, Գալիլեայ, Գալիլեաւ. Յովսիա, Յովսեայ. Եզեսիա, Եզեսեայ. Յուդա, Յուդայ. Աննա, Աննայ։

Ծան. Այս անունները գնում են և ի հոլովման տակ։ Իա վերջն իբրև եայ երկբարբառ դառնում է է. օրինակ՝ Յուդայ, Յուդայի, Աննա, Աննայի. Գալիլիա, ի Գալիլէէ։

4. Ո շեղման բառերի (§ 104. 3) վերջի ի ձայնավորը ո-ից առաջ դառնում է ւ, իսկ ա-ից առաջ ե. օրինակ՝ այգի, այգւոյ, այգեաւ, այգեաց, այգեաւք, այգեօք (տե՛ս և § 98. 5)։— Մարաւի, ծաւի, կտաւի. արծուի, ասուի և նման բառերի մեջ վերջի ի-ն դուրս է ընկնում՝ ծառաւոյ, արծուոյ ևլն։

106. Ներգոյական հոլով։ *Ո շեղման բառերը երբեմն սեռական-տրականի համար ունին և ոջ կամ ում ձևը որ ի նախդրով սովորաբար գործ է ածվում իբրև ներգոյական. օրինակ՝ ի կղզւոջ, ի ջրւոջ, ի տեղւոջ, ի տարւոջ, յայգւոջ, յեկեղեցւոջ. ի վայրի դալարւոջ.— այսպիսում, այնպիսում։ Նոյնպիսում շնորհի արժանաւորեալ (տե՛ս և §§ 99, 102)։ Զօրավարն Հայոց Մհծաց... հարեալ անդէն ի տեղւոյն զախտաւպեսն արքային պարսից գլխատէր... յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի։*

Երբեմն սրանց բացառականը կազմվում է ոջ վերջավորության վրա է ավելանալով, ի տեղւոյ կամ ի տեղւոջէ, ի տարւոյ կամ ի տարւոջէ։ Ոջ վերջավորությամբ կազմվում է երբեմն և ուրիշ բառերի ներգոյական՝ դիպահ, ի դիպահոջ. դիւր, ի դիւրի կամ ի դիւրոջ։

ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Փոփոխվող ըձերով

5. ԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

107. *Այս հոլովման սեռական-տրականը, որ ունի աե կամ եաե վերջը, կազմվում է երկու ձևով. կամ ուղղականի վերջի ե հնչյունից առաջ մտնում է ա, իսկ շեղման մեջ ի, կամ ուղղականի վրա ավելանում է աե կամ եաե վերջը։ Բացառականի է և գործիական բ վերջավորությունները դրվում են տրականի վրա։ Բ-ից առաջ վերջի ե դառնում է մ։ Հոգնակի ք-ն ավելանում է եզակի ուղղականի վրա, միայն վերջի ե-ից առաջ մտնում է ու, ա, շեղման մեջ և ի։ Օրինակ.*

	Եզակի	
Ուղ.	*դուռն*	*անձն*
Հայց.	*դուռն*	*անձն*
Սեռ. Տր.	*դրան*	*անձին*
Բաց.	*ի դրանէ*	*յանձնէ*
Գործ.	*դրամբ*	*անձամբ*

Հոգնակի

Ուղ.	դրունք	անձինք
Հայց.	դրունս	անձինս
Սեռ. Տր.	դրանց	անձանց
Բաց.	ի դրանց	յանձանց
Գործ.	դրամբ	անձամբ

108. Ան ձևով *հոլովվում են.*

1. Ը(ն) *վերջացած շատ բառեր, որոնց վերջի* ն *հնչյունն աշխարհաբարում դուրս է ընկել, օրինակ՝* ակն, արեգակն, փայլակն, կայծակն, հիմն (հիման), չերմն, որդն, շուրթն, պոչտն, հիւսն, դիակն, երկն, բիւրտն, սկիզբն, ձուկն, մուկն, խուռն (խռան), գագաթն, արմուկն, կըրուկն, թէկն (թիկան), այծեամն, եղեամն, աղեղն, եղէգն (եղեգան), ծիծառն (ծիծառան, ծիծեռն, ծիծռան), նուռն (նռան). ասեղն (ասղան, ասեղան). փայծաղն (փայծղան կամ փայծաղան), խլուրդն (այլ և՝ խլուրդ) *ևլն։ Գեղարդն, գեղարդան, գեղարդանց ձևերի հետ ունի և գիղարդեան, գեղարդեանց։

Այսպես և բոլոր ումն *ածանցով կազմվածները՝ շարժումն, շարժման, ի շարժմանէ, շարժմունք ևլն։*

Ռուռն, ամառն, ձմեռն, լեառն *բառերի մեջ* ռ *բաղաձայնը* ն-*ից հեռանալով դառնում է* ր. *օրինակ՝* դրան, ամարան, ձմերան, ձմերունք, լերին։—*Ամառն, ձմեռն երբեմն պահում էլ են իրենց* ռ *հնչյունը։*

Դուռն *հոգնակին ունի և* դուրք, դրաց, դրօք *ձևերը։*

Ունկն *բառի համար՝ մարդու ականջի իմաստով՝ իբրև հոգնակի գործ է ածվում* ականջք *բառը, իսկ* ունկունք *նշանակում է կանթ կժի, կաթսայի ևլն։*

Ակն *իբրև աղբյուրի ակ և թանկագին քար՝ հոգնակին ունի* ակունք *և* ականք. *իսկ իբրև աչք՝ միայն* ակունք, *որի փոխանակ, սակայն, սովորաբար* աչք *բառն է գործածվում։*

Սերմն, կողմն *հոգնակի ունին* սերմունք, կողմունք *կամ* սերմանք, կողմանք: *Կա և* սերմանիք *(*սերմանեաց*) ևլն։*

2. **Ուրիւն** *ածանցով կազմված բառերը՝* սրբութիւն *ևլն. նաև* արիւն, անկիւն, կորիւն, հերիւն, արդիւն, քրթմնջիւն, ձիւն, սիւն, որքին *(*որքիւն*), ստին, որ ունին* սեռ.-տր. սրբութեան, առեան, անկեան, կոբեան, արդեան, հերեան *(այլ և* հերիւնոյ *կամ* հերնոյ, հերիւնի*). քրթմնջեան, ձեան, սեան, որքեան, ստեան։ Բացառականի մեջ* եա-ն *դառնում է* ե,—ի սրբութենէ, յարենէ *ևլն։ Հոգն. ուղղականը կազմվում է* f *ավելանալով՝* սրբութիւնք, արիւնք, սիւնք։—*Քրթմնջիւն բացառական ի քրթմնջենէ ձևի հետ ունի և ի քրթմնջանէ։ Ձիւն, սիւն ունին՝ ի ձեանէ (կամ ի ձիւնէ), ի սեանէ (կամ ի սիւնէ)։*

3. Ստին, *ստևան, ի ստևնէ, ստինք, ստևանց։*

4. Տուն, շուն բառերը, հոլովվում են՝ տան, տամբ, ի տանէ. տունք, տանց, տամբք. շուն, շան, ի շանէ ևլն։

5. Անուն, ձեղուն հոլովվում են՝ անուան, յանուանէ, անուամբ, անուանք, անուանց. ձեղուն, ձեղուան ևլն։ Հոգն. ուղղ. ձեղունք։

6. Պաշտօն (պաշտաւն) հոլովվում է՝ պաշտամանի, ի պաշտամանէ, պաշտամամբ, պաշտամունք, պաշտամանց. պաշտամամբք։

109. Ան վերջավորությունն ավելանում է հետևյալ բառերին.

1. Գարուն, աշուն—գարնան, ի գարնանէ, գարնամբ, գարունք, գարնանց, գարնամբք,—աշնան, յաշնանէ, աշունք ևլն։

Նա. Գարուն, աշուն, ամառն, ձմեռն բառերի փոխանակ գործ են ածվում և ածականները՝ աշնային, աշնայնի, աշնանի. գարնային, գարնայնի, գարնանի. ամարայնի, ամարանի. ձմերայնի, ձմերայնի, ձմերանի, որոնք հոլովվում են աշնայնոյ կամ աշնանոյ, ձմերայնոյ, գարնայնոյ, ամարայնոյ ևլն։

Ամարանի, ամարային, ձմերանի, ձմերայնի, գարնայնի կամ գարնանի, աշնանի ձևերը նաև ներգոյականի իմաստ ունին՝ իբրև ամառ, ձմեռը, աշնանը, գարնանը։ Յամարայինսն=ամառները (ներգոյական իմաստով)։

2. Խուրձ, աղջիկ, մանուկ, ծաղիկ, կոռնակ և շատ՝ նվազական իկ ածանցով կազմվածներ՝ Յուսիկ, Աստղիկ, Սաթենիկ, Զուիկ (Զուկան=Զուկան), շնիկ, խցիկ, ընչիկ, փոքրիկ, կարճիկ ևլն. որոնք ունին՝ խրձան, խրձունք. աղջկան, աղջկունք. մանկան, մանկունք ևլն։ Ծաղիկ՝ ծաղկան, ծաղկամբ, ծաղկունք, ծաղկանց ձևերի հետ ունի և՝ ծաղկի, ծաղկաւ, ծաղիկք, ծաղկաց կամ ծաղկոյ, ծաղկոց ձևերը։ Իսկ կոռնակ ունի և կոռնկոյ ձևը։

3. Մարդիկ, մարդկան, ի մարդկանէ, մարդկամբ կամ մարդկաւ,—եզակի ձևով հոգնական իմաստ ունի։ Մարդ եզակին հոլովվում է՝ մարդոյ, մարդով, որ ունի և կանոնավոր հոգնակի՝ մարդք, մարդոց, մարդովք։

110. Եան վերջավորությունն ավելանում է հետևյալ բառերին.—տեսիլ, տեսլեան, ի տեսլենէ, տեսլեամբ, տեսիլք, տեսլեանց, տեսլեամբք։—Հանգիստ, հանգստեան,—այլև հանգստի, հանգստիւ. հոգն. հանգիստք. հանգստից։—Գովեստ, գովեստեամբ, այլև, գովեստի, գովեստք, գովեստից։—Փախուստ, փախստեան, ի փախստենէ, փախըստեամբ,—այլև փախստի, փախստիւ,—հոգն. փախուստք։—Կորուստ, կորստեան, ի կորստենէ, կորստեամբ, կորուստք։—Գալուստ գալըստեան, գալստեանց։—Թաքուստ, թաքստեան, թաքստեամբ, այլև թաքըստի։—Պահուստ, պահստեամբ։—Սնունդ, ծննդեան, ի ծննդենէ, ծնընդեամբ, ծնունդք, ծննդեանց, ծննդեամբք, սովորաբար՝ ծննդոց, ծնընդովք։—Սնունդ, սննդեան, սննդեանց, այլև սննդի, սննդոց։—Խորհուրդ, խորհրդեան, խորհրդեամբ, այլև խորհրդոյ, խորհրդոց, խորհրդի, խորհրդիւ. հոգն. խորհուրդք։—Ժողովուրդ, ժողովրդեան, ի ժողովրդենէ,

ժողովրդեամբ. ժողովուրդք, ժողովրդեանց. այլև ժողովրդի, ի ժողովրդէ, ժողովրդոյ, ժողովրդովք։—Ամիս, *ամսեան, յամսենէ, ներդոյական՝ յամսեան, այլև ամսոյ, ամսով, հոգն. ամիսք, ամսոց, ամսովք։*— Շաբաթ, *շաբաթեան, սովորականն է շաբաթու։*—Ժամանակ, *ժամանակեան սովորաբար՝ ժամանակի, ժամանակաւ. ժամանակք, ժամանակաց։*—Սերկ *(այսօր), սերկեան։*—Վաղիւ. *վաղուեան, վաղուենէ, այլև վաղուի, ի վաղուէ կամ ի վաղնջենէ։ Այսպես նչ հավելմամբ նաև՝*

Տիւ, *տունջեան, ի տունջենէ, տունջեամբ (արտասանվում է՝ տուրնջեան), տուով. ներգոյական՝ ի տուէ, ի տունջեան, հոգն. տիւք, տիւս։ Այսպես և միշտ, մշտնջեան (=մշտական)։*

111. Մահ *հոլովվում է* ուան *վերջավորությամբ. մահուան, ի մահուանէ, մահուամբ, մահուանք կամ մահունք, մահուանց, այլև* ու *հոլովման ձևով մահու, մահք, մահուց, մահուք։*

112. Իւ շեղման *ձևով հոլովվում են՝*

1. Որոշ թվով երկավանկ (ը)ւ *վերջացած բառեր, որ են* Ողն, *ողին, ողունք։*—Մասն, *մասին, մասունք։*—Մատն, *մատին, ի մատանէ, մատունք։*— Կամն, *կամին, կամունք։*— Ափն, *ափին կամ ափան, ափունք։* — Բուռն, *բռին կամ բռան, բռունք։*—Թոռն, *թոռին, ի թոռանէ, թոռունք կամ թոռանք։*— Անձն, *անձին, անձինք կամ անձունք։ Բարդ բառերը՝ միանձն, դատարկանձն, վեհանձն, մեծանձն ունին հոգն. միանձունք, դատարկանձունք, վեհանձունք, մեծանձունք։*— Ազն, *ազին, ազինք կամ ազունք (վերջինս ազնիվ, այսինքն ազնվական մարդիկ իմաստով)։ Բարդ բառերը՝ դիւցազն (դիցազն), դիւցազին կամ դիւցազան, դիւցազունք. վեհազն, վհհազին, վեհազունք կամ վեհազինք. հայկազն, հայկազին, հայկազունք։*— Հարսն, *հարսին, ի հարսանէ, կամ ի հարսնէ, հարսինք կամ հարսունք։ Յաւերժահարսն, յաւերժահարսունք։*— Գառն, *գառին, ի գառանէ կամ ի գառնէ, գառինք։*— Բեռն, *բեռին, ի բեռանէ կամ ի բեռնէ, բեռինք։ Մեծաբեռն, մեծաբեռունք. ծանրաբեռն, ծանրաբեռինք։*— Եզն, *եզին, յեզանէ, եզինք։*— Եղն, *եղին, յեղանէ, եղինք։*— Դաշն, *դաշին, դաշինք։*— Խաշն, *խաշին, ի խաշանէ կամ ի խաշնէ, խաշինք։*— Նեռն, *նեռին, ի նեռանէ, նեռինք։*— Դառն, *դառին, դառինք, այլ և դառնի, դառինց։*— Սառն, *սառին, սառանց։*— Կաթն, *կաթին, կաթամբ, կաթանց։*— Դոխն, *դոխին, դոխամբ։*— Լեառն, *լերին, ի լեռնէ, լերամբ, լերինք, լերանց, լերամբք (տե՛ս § 103. 1)։*

2. Թվականներից՝ Եօթն, *եօթին կամ եօթան, եօթամբ, եօթանց, եօթամբք, այլ և եօթեան, եօթեանք, եօթեամբք. նույնպես՝ եօթնի, եօթնիւ, եօթնից։*— Տասն, *տասին, տասունք, տասանց, այլ և տասնից։ Այսպես՝ և* Եօթնեւտասն, ութեւտասն, իննեւտասն *ունին՝ եօթնևտասին, եօթնևտասամբ, եօթնևտասանք, եօթնևտասանց և լն։*

3. Ձեռն, *ձեռին, ձեռամբ, ի ձեռանէ։ Հոգնակին հազվադեպ՝ ձեռինք, ձեռանց. սովորաբար՝* ձեռք, *ձեռաց, ձեռօք։ Առատաձեռն լինում*

է՝ առատաձեռնի, առատաձեռնից։ Ոտն, ոտին (երբեմն՝ ոտան), ոտամբ, յոտանէ։ Հոգն. ոտք, ոտից, ոտիւք, երբեմն՝ ոտաց։

6. ԵՐ, ԵՂ ՀՈԼՈՎՈՒՄ

118. Այս հոլովման սեռական-տրականը կազմվում է ուղղականի (բնի) վերջի ր, ղ բաղաձայններից առաջ և մտնելով։ Բացառականի է. գործիականի բ վերջավորութիւնները, ինչպես և հոգնականի ք-ն ավելանում են տրականի վրա։ Օրինակ՝

	Եզակի		Հոգնակի	
Ուղ.	տարր	աստղ	տարերք	աստեղք
Հայց.	տարր	աստղ	տարերս	աստեղս
Սեռ. Տր.	տարեր	աստեղ	տարերց	աստեղց
Բաց.	ի տարերէ	յաստեղէ	ի տարերց	յաստեղց
Գործ.	տարերբ	աստեղբ	տարերբք	աստեղբք

114. Այսպես հոլովվում են սակավաթիվ ր, ղ վերջացած բառեր, որոնք մեծ մասամբ ուրիշ հոլովումների տակն են գնում, կամ թե՝ հոգն. սեռ.-տր. ունին աց, գործիականն՝ աւք (-օք) ձևը։ Օրինակ՝

Տաւր ունի նաև տարրոյ, տարրի, տարրից. հոգն. տարերաց, տարերօք ձևերը։—Աստղ ունի հոգն. նաև աստեղունք, աստեղաց, աստեղօք։—Կայսր, կայսեր, կայսերբ, կայսերք,—կայսերաց, կայսերօք։—Ոսկր, ոսկեր, ոսկերբ, ոսկերաց, ոսկերօք։— Դուստր, դստեր, ի դստերէ, դստերբ, դստերք, դստերց,—այլ և դստերաւ, դստերաց, դրստերօք։—Ուստր, ուստեր, ուստերաց։—Տայգր, տայգեր, տայգերաց։—Համր, համեր, համերբ, համերց։—Եզր, եզեր, եզերբ, եզերք, եզերբք, —եզերաց, եզերօք, եզերովք։—Ծովեզր, նաև ծովեզերի, ծովեզերաւ։—Ազգր, ազգեր, ազգերբ, ազգերաց։—Լիտր, լտեր, լտերբ, լտերց։—Կողր, կողեր, կողերբ, կողերց, կողերաց։—Ծաղ, ետեղ։—Կապր, կապեր, կապերբ կամ կապրոյ, կապրով։—Անգղ, անգեղ, անգեղբ, անգեղց,—անգեղաց։—Կոճղ, կոճեղ, կոճեղք։—Արկղ, արկեղ, արկեղաց։—Սկուտեղ կամ սկտեղ, սեռ.-տր. նույնպես՝ սկուտեղ կամ սկտեղ, գործ. սկտեղբ, սկտեղբք, այլ և սկուտեղի (սկտեղի), սկուտեղաց, սկուտեղօք։

Աղբիւր (աղբեւր), աղբեր, յաղբերէ, աղբերբ. աղբերբ, աղբերց, աղբերբք, այլ և աղբերաւ, աղբիւրք, (աղբեւրք), աղբիւրաց կամ աղբերաց, աղբերօք։—Եղջիւր, (եղջեւր), եղջեր, եղջերբ, եղջերք, եղջերց, եղջերբք, այլև և եղջիւրիւ կամ եղջերիւ, եղջիւրք, եղջերաց, եղջերօք կամ եղջերովք։—Ալիւր (ալեւր), ալեր, այլ և ալիւրոյ. հոգն. ալիւրք։—Բլուր, բլեր, բլերբ. սովորական՝ բլրոյ կամ բլրի, բլրով. բլուրք, բլրոց։ Աղաւիւ կամ եղեւիւր (աղտեւր, եղաեւր), եղտեր։

Փոփոխվող բնեռով

115. Այր, տէր:

	Եզակի		Հոգնակի	
Ուղ.	*այր*	*տէր(*տի-այր)*	*արք*	*տիտրք*
Հայց.	*այր*	*տէր*	*սրս*	*տիտրս*
Սեռ. Տր.	*առն.*	*տեառն*	*արանց*	*տիրանց, տիտրց*
Բաց.	*յառնէ*	*ի տեառնե*	*յարանց*	*ի տիրանց, ի տիտրց*
Գործ.	*արամբ*	*տիրամբ*	*արամբք*	*տիրամբք*

116. Այր *բառի պես հոլովվում են և* **ճեռայր, սկեսայր** *(այլև սկեսրայրի, ի սկեսրայրէ)։* **Տէր** *բառի պես՝* **տանուտէր** *(նաև տանուտերաց, տանուտերօք), պարտատէր (նաև պարտատիրի, պարտատիրաց)։*

117. Հայր, մայր, եղբայր:

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*մայր*	*մարք*
Հայց.	*մայր*	*մարս*
Սեռ. Տր.	*մօր*	*մարց*
Բաց.	*ի մօրէ*	*ի մարց*
Գործ.	*մարբ*	*մարբք*

118. *Այսպես հոլովվում են՝* **հայր, եղբայր,** *այլ և բարդ բառերը՝* **նախամայր, նախահայր, վանահայր** *և ևն.* **Հայր** *հոգն. սեռական-տրական և բացառ. ունի նաև՝* **հարանց, ի հարանց,** *իսկ գործ. նաև* **հարամբ, հարամբք։**

119. Քոյր *(հօրաքոյր, մօրաքոյր և ևն.)։*

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*քոյր*	*քորք (քոյրք, քուերք)*
Հայց	*քոյր*	*քորս (քեռս)*
Սեռ. Տր.	*քեռ(քոր, քուեր)*	*քերց*
Բաց.	*ի քեռէ*	*ի քերց*
Գործ.	*քերբ*	*քոյրբք*

120. Որ (աւր)

	եզակի	հոգնակի
Ուղ.	*աւր (օր)*	*աւուրք*
Հայց.	*աւր (օր)*	*աւուրս*
Սեռ. Տր.	*աւուր*	*աւուրց*
Բաց.	*յաւրէ (յօրէ)*	*յաւուրց*
Գործ.	*աւուրբ*	*աւուրբք*

121. *Այսպես և հասարակօր: Որ ունի և ի հոլովման պես որի ձևը՝ առ օրին, նոյն օրին, սոյն օրին:*

122. *Մի քանի r վերջացած բառեր ևս կանոնավոր ձևերի հետ ունին նաև մայր, հոյր, որ բառերի պես կազմված անկանոն ձևեր, այն է՝ գործիականի բ և հոգն. տրականի ց վերջավորություններն ավելանում են անմիջապես ուղղականի վրա. այսպես հուր ունի գործ. հրով և հուրբ, հոգն. հուրբ. ջուր, հանուր, ընդհանուր ունին ջուրբ, ջուրբ, ջուրց. հանուրբ, հանուրբ, հանուրց. ընդհանուրբ, ընդհանուրբ, ընդհանուրց,— սովորական՝ ջրով, ջրոց. ընդհանրով, ընդհանրոց կամ ընդհանրից: Նույնպես՝ իւրաքանչիւրից. անձնիւրց (§ 101. 4. ծան.): Ձեռն բառի ձեռ բնից գործ. ձերբ կամ ձեռբ (=ձեռամբ), որից ձերբակալ, ձերբազատ, ձեռբասուն ևլն:*

Այսպես և ներքևում (§§ 123, 124) դրվածների հոգն. սեռական-տրականը կազմվում է միայն ց տառով, որ ավելանում է ան, եան, այ. եայ, ոյ ածանցների վրա:

128. Կին, տիկին:

	եզակի	հոգնակի
Ուղ.	*կին*	*կանայք*
Հայց.	*կին*	*կանայս*
Սեռ. Տր.	*կնոջ*	*կանանց, կանայց*
Բաց.	*ի կնոջէ*	*ի կանանց, ի կանայց*
Գործ.	*կանամբ, կնաւ*	*կանամբք*

	եզակի	հոգնակի
Ուղ.	*տիկին*	*տիկնայք*
Հայց.	*տիկին*	*տիկնայս*
Սեռ. Տր.	*տիկնոջ*	*տիկնանց, տիկնայց տիկնաց*
Բաց.	*ի տիկնոջէ*	*ի տիկնանց, ի տիկնայց, ի տիկնաց*
Գործ.	*տիկնամբ, տիկնաւ*	*տիկնամբք, տիկնաւք (-օք)*

124. Կին, տիկին *բառերի հոգնականի պես հոլովվում են.*

1. **Այր, եայր, աներ** *հոգնական ածանցով կազմվածները՝* **աղախին** *(եզ. սեռ. տր. աղախնոյ), հոգն. ուղղ.* **աղախնայր, աղախնեայր**: *Հայց. աղախնայս, աղախնեայս. սեռ. տր.* **աղախնանց, աղախնայց, աղախնեայց, աղախնաց**: **Պարոն**, *միայն հոգն. ուղղ.* **պարոնայր**:—**Նու**, *նուոյ, նուով կամ նուաւ. նուք, նուոց, այլ և* **նուանք, նուանց**:

2. **Եայր, այր** *ածանցներով կազմվածները, որ ցույց են տալիս մի անձի հետևողներ կամ մի երկրի ազգեր, բնակիչներ, տեղացիներ, համապատասխան ցի ածանցին, օրինակ՝* **հայաստանեայք** *(հայաստանցիք), ասորեստանեայք, արևելեայք, միջերկրեայք կամ միջերկրայք, ծովեզերայք, հայկազնեայք, բահաղիմայք, որ ունին սեռ.-տր.* **հայաստանեայց** *կամ* **հայաստանեաց**, *գործ.* **հայաստանեօք**: **Ապագա, ակամա, դուզնաքեայ** *բառերն ևս այս կարգի ածանցվածների նման հոգն. սեռ.-տրականն ունեն՝ սովորական ապագայից, ակամայից, դուզնաքէից ձևի հետ նաև ապագայց, ակամայց, դուզնաքեայց, դուզնաքեօք (եզ. դուզնաքէի, դուզնաքէիւ)*:

3. **Եանք, անք** *ածանցներով կազմվածները, որ հոգնակի հավաքական իմաստով ցույց են տալիս մի տոհմի կամ անձի վերաբերյալ մարդիկ կամ հետևողներ. օրինակ՝* **Ղևոնդեանք, Ղևոնդեանց. Ատոմեանք, Ատոմեանց. Վարդանանք, Վարդանանց. Մարեմանք, Մարեմանց. Եպիկուրեանք, Եպիկուրեանց**: **Ամենայն** *բառի հոգն. սեռ.-տրականը սովորական ամենայնից ձևի հետ լինում է նաև՝* **ամենայնց**:

4. **Գահոյք, բարոյք, պարտոյք** *(եզակի՝* **պարտոյ**), **սարոյք** *(եզակի՝* **սարոյ**) *սովորական գահոյից, բարոյից, պարտոյից, սարոյից ձևերի հետ ունին երբեմն և գահոյց, բարոյց, պարտոյց, սարոյց*:

125. Եան և եայ (այ) *ածանցները հաճախ փոխանակում են իրար, իսկապես նույն ածանցն են տարբեր ձևերով. օրինակ՝* **արևելեայ, արևելեան. հայկազնեայ, հայկազնեան. գունեայ, գունեան. տասնամեայ, տասնամեան** *ևն*:

Եան=**եայ** *նույն հոլովական ածանցն է, որ տեսնում ենք* **եան** *հոլովական ձևի մեջ (§ 110). ուստի և դրանցով կազմված բառերը եզակիում սովորաբար անփոփոխ են մնում. մի քանի բառեր միայն հոլովվում են ի կամ ոյ հոլովման ձևով (§ 94. 1) օրինակ՝* **մամիկոնեան, մամիկոնեենի** *կամ* **մամիկոնեենոյ, մամիկոնեենիւ**. *հոգն.* **մամիկոնեանք, մամիկոնեանց** *կամ* **մամիկոնենից. բայց և մամիկոնէի, մամիկոնէիւ, մամիկոնէից** *(***մամիկոնեայ** *ուղղականից. ինչպես՝* **միջօրեայ, միջօրէի. պաշտօնեայ, պաշտօնէի, քրիստոնեայ, քրիստոնէի** *բառերը)*: **Տասնամեան, տասնամենի, տասնամենից** *կամ* **տասնամեայ, տասնամէի. տասնամէից,—տասնամսեայ, տասնամսէի, տասնամսէից**: *Նույնպես՝* **Երկամեան** *(***երկամեայ**), **երեքամեան** *(***եռամեայ**), **եօթնամեան** *(***եօթնամեայ**), **քսանամեան, հարիւրամեան** *ևն*:

Այսպես հոլովվում են նաև ոռեայ, ոռայ հոգնական ածանցով կազմվածները (§ 86. 4). վանորայ կամ վանորեայ (=վանքեր, վանքցիներ), վանորայոյ, վանորայով, վանորայք կամ վանորեայք, վանորայց, վանորեայց, վանորեաց կամ վանորէից։ Արտորայ, արտորայի կամ արտորայոյ, արտորայք, արտորայից, արտորայոց,—այլև արտորեայ, արտորէի, արտորեայք, արտորէից։

126. **Դիք** (անեզական=աստված, աստուածներ), հոլովվում է՝ դիք, զդիս, դից, դիօք։

127. **Գիւղ** (գեաւղ, գեօղ, գեւղ, գեղ), սեռ.-տրական՝ գեղջ, (գեաւղջ, գեւղջ), բացառ. ի գեղջէ։ Գործիականն և հոգնակին ի հոլովման ձևով՝ գիւղիւ, գիւղք (գեաւղք, գեւղք), գիւղից (գեաւղից), գիւղիւք։

128. Առանձին ձևով հոգնակի ունին և ներքևում դրած մի քանի (ը)ր, (ը)ն վերջացած բառեր, որոնց եզակիանի մեջ ր տառը դուրս է ընկնում, ինչպես ծաղր, աւր, մեղր բառերի մեջ (§ 96. 3), իսկ հոգնականի մեջ առնում են ունք. օրինակ՝

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	փոքր	փոքունք
Հայց.	փոքր	փոքունս
Սեռ. Տր.	փոքու	փոքունց
Բաց.	ի փոքուէ	ի փոքունց
Գործ.	փոքու	փոքումբք

129. Այսպես հոլովվում են նաև՝

Մանր, մանու, մանունք, մանունց, մանումբք։— **Քաղցր**, քաղցու (կա և քաղցուի, քաղցրի), քաղցունք, քաղցունց, գործ. քաղցուք։—**Մանր**, մանու, մանունք, մանունց։—**Թանձր**, թանձու (կա և թանձրու, թանձրոյ), թանձունք (կա և թանձրունք, թանձրոյք)։—**Նօսր**, անօսր, անօսրի, անօսրից, բայց և նօսուք, անօսունք (նաև անօսրունք)։

Յոգն, յոգնակի՝ յոգունք, յոգունց, յոգումբք։

Ինն, ընձի, ընձիւ, ընձից, ընձիւք. բայց և իննուք, իննունց, իննումբք (§ 94. 4)։

ՓՈԽԱՆՑՈՒՄ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

130. Կան բառեր, որոնց եզակին մի հոլովման տակ է գնում, իսկ հոգնակին՝ մի ուրիշ. կամ մի հոլովը մի ձևով է կազմվում, մյուսները՝ ուրիշ։ Կան բառեր ևս, որոնք հոլովվում են երկու, երբեմն և երեք հոլովման ձևով, կամ թե այս ու այն հոլովները միայն ունին մի քանի տեսակ ձևեր։ Այսպիսի փոխանցումները հոլովումների խմբերի մեջ՝ մեծ մասամբ հետագա ժամանակներում են եղևան գալիս և տարբեր բարբառների ազդեցության արդյունք են։ Այդպիսի մի քանի բառեր դրված են վերևում. կարևոր է նկատի ունենալ և հետևյալները.

181. Զայնավոր և բաղաձայն հոլովումների փոխանցում.— Սունգն *կամ* ծունգ, *ծնգան, ծնգամբ,— ծունգք, ծնգաց, ծնգօք:* Բարձր, *բարձու, ի բարձուէ, բարձունք, բարձանց, բարձամբք:* Երէց, *երիցու կամ երիցոյ, յերիցուէ. գործ. երիցու կամ երիցամբ,— երիցունք, երիցանց, երիցամբք:*— Պառաւ, *պառաւոյ,— պառաւունք, պառաւանց:* Քար, *քարի. քարիւ կամ քարամբ,—քարինք, քարանց, քարամբք:* Արտեւան, *արտևանի, արտևանաց,—արտևանունք, արտևանանց (եզակին նշանակում է և սարի գլուխ):*— Սրուն, *սրունք, սրունից, այլ և սրանց, սրուանց, կամ սրունկ(ն), սրնկունք, սրնկանց:* Ճիրան, *ճիրանի, ճիրանաց, —ճիրանունք, ճիրանանց, ճիրանամբք:* Խոնջան, *խոնջանի կամ խոնջանոյ,—խոնջանունք, խոնջանանց:*— Կանթեղ, *կանթեղի, կանթեղաց,— այլև կանթեղամբ, կանթեղամբք:*—Ողջ, *ողջոյ, ողջոց կամ ողջի, ողջաց, այլ և ողջամբ:*—Անդրանիկ, *անդրանկան, յանդրանկանէ—այլ և անդրանկի, յանդրանկէ, անդրանկաւ, անդրանկաց:*—Հողմ, *հողմն, հողմոյ, հողմով,—հողմունք, հողմոց:* Որմ, *որմն, որմոյ, որմք կամ որմունք, որմոց:*—Գորտ, *գորտոյ, գորտի, գորտու,—գորտունք, գորտոց, գորտից, գորտուց:*—Աղուէս, *աղուեսու (աղուիսու), կամ աղուեսոյ, աղուէսք կամ աղուեսունք:*—Առիւծ, *առիւծու կամ առիւծոյ, առիւծք կամ առիւծունք:* Նույնպես՝ եպիսկոպոս, սարկաւագ, իւրմ, ընրագ, պարիսպ, ձագ, անոյշ, նուագ, նապաստակ, *ունին եպիսկոպոսք, սարկաւագք, քուրմք, ընրագք, պարիսպք, ձագք, անոյշք, նուագք, նապաստակք, այլ և եպիսկոպոսունք, սարկաւագունք, քրմունք, ընրագունք, պարսպունք, ձագունք, անուշունք, նապաստակունք. իսկ* պատերազմ, սան, երագ *ունին պատերազմունք, սանունք, երագունք:*

182. Զայնավոր հոլովումների փոխանցում.

1. Զգեստ, *զգեստու,—զգեստի, զգեստիւ, այլև գործ. զգեստով:*——Զարդ, *զարդու, զարդուք,—այլև գործ. զարդիւք:*—Դրօշ, *դրօշու, դրօշուց,—դրօշի, դրօշից:*—Ջօր, *զօրու, ի զօրուէ, ի զօրէ. գործ. զօրու, զօրաւ, զօրով. զօրք, զօրաց, զօրօք:*—Գանձ, *գանձու,—գանձի, գանձից, գանձիւք:*— Դաս, *դասու, ի դասուէ,—դասի, ի դասէ, դասիւ, այլև դասով:*—Ջէնի, *զինուց,—զինից:*—Ցուլ, *ցլու, ցլուց,—ցլի:*—Բարի, *բարուց, բարուք,—բարիւք:*—Վարի, *վարուց, վարուք,—վարիւք, վարովք:*—Նաւ, *նաւու,—նաւի, նաւաւ:*—Հաւ, *հաւու, հաւուց,—հաւաց:* Արեւ, *արեւու,—յարևի:*—Ժամ, *ժամու,—ժամաւ, ժամօք:*—Ծակ, *ծակու, ծակուց,—ծակի, ծակաց:*—Համբաւ, *համբաւու, համբաւուց, համբաւուք,—համբաւի, համբաւաւ, համբաւաց. համբաւօք, կամ համբաւոյ, համբաւով, համբաւոց, համբաւովք:*—Խրատ, *խրատու,—խրատոյ, խրատով, խրատոց, խրատովք,—գործ. նաև խրատիւք, խրատօք:*—Պարտ, *պարտոյ,—պարտք, պարտուց (կա և պարտիք, պարտեաց):*

2. Կացին, *կացնոյ, կացնով,—կացնի, կացնաւ, այլև կացնեաւ:*—Պատիւ, *պատուոյ,—պատուի:*—Լուսին, *լուսնոյ—լուսնի:*—Գոյն, *գունոյ, գունոց,—գունի, գունից, այլ և գունաց:* Շփոթ, *շփոթոյ, շփոթոց,—*

շփոթի, շփոթից։—Լեզու, *լեզուոյ, լեզուով, լեզուց, լեզուովք,*—*լեզուի, լեզուաւ, լեզուաց, լեզուօք։*—Ամուր, *ամրոյ, ամրոց.* ներգոյական՝ *յամրոջ,*—*ամրից կամ ամրաց։*—Գիշեր, *գիշերոյ,*—*գիշերի։* Մարմին, *մարմնոյ,*—*մարմնի։*— Երազ, *երազոյ,*—*երազի։*— Քիստա, *քստոյ, քստի։*—Կսկիծ, *կսկծոյ,*—*կսկծի, կսկծից։*— Քաղց, *քաղցոյ,*—*քաղցի։*— Սով, *սովոյ,*—*սովի։*—Պատիժ, *պատժոյ,*—*պատժի։*—Գիր, *գրոյ,*—*գրի։*—Թեւ, *թեւոյ,*—*թևի։*—Թուղթ, *թղթոյ,*—*թղթի։*—Հանդերձ, *հանդերձով, հանդերձիւ։*—Մէգ, *միգի, միգով։*

3. Երկրորդ, *երկրորդի, երկրորդաւ, երկրորդաց, երկրորդօք,*—*երկրորդիւ, երկրորդից, երկրորդիւք։* Նոյնպես երրորդ։ Հայկ, *Հայկայ,*—*Հայկի,*—Դաւիթ, *Դաւթայ,*—*Դաւթի։*— Հռոմ, *ի Հռոմայ,*— *ի Հռոմէ։* Ղուկաս, *Ղուկայ, Ղուկասու։* Յակոբ, *Յակոբայ,*—*Յակոբու։*—Յովսէփ, *Յովսէփայ, Յովսէփու* եւն։—Շնորհ, *շնորհի, շնորհիւ,*—*շնորհք, շնորհաց, շնորհօք։*

133. *Բաղադրեալ բառերի հոլովման ժամանակ երկրորդ բաղադրիչի սովորական ձևի փոխանակ հաճախ վերցվում է ուրիշ ձև։ Օրինակ՝* գիր, սէր, *աստուած սովորաբար հոլովվում են* գրոյ, գրով. սիրոյ, սիրով. աստուծոյ, աստուծով. *բայց* մատենագիր, մարդասէր, անաստուած *հոլովվում են՝ մատենագրի, մատենագրաւ, մատենագրաց. մարդասիրի, մարդասիրաւ, մարդասիրաց. անաստուածի, անաստուածից։*

134. *Համանուն բառերը՝ մեծ մասամբ տարբեր արմատներից ծագած լինելով՝ տարբեր ձևով էլ հոլովվում են. օրինակ՝* Այր, *այրի, այրիւ (=քարայր). —այր, առն, արամբ (=տղամարդ)։*—Մայր, *մայրի, մայրիւ (=մայր ծառ),*—մայր, *մօր, մարբ (=ծնող մայր)։*—Հայր, *հայրի (=մարդպետ),*—հայր, *հօր (=ծնող հայր)։*—Կոյս, *կուսի, կուսից (=աղջիկ),*—կոյս, *կուսի, կուսաց (=կողմ)։ Կա նաև՝ կուսան, կուսանի, կուսանք, կուսանաց (=կուսակրոն կին)։*—Որբ, *որբոյ (=խաղողի որթ),* —որբ, *որբու (=հորթ)։*—Փող, *փողոյ (=խողովակ, զուռնա. դրամ),*—փող, *փողի, փողից (=փողոց. վիզ)։*—Խաղ, *խաղոյ կամ խաղու (=խաղալ),* խաղ, *խաղի, խաղիւ (=գետի խաղ).*—Դի, *դիոյ,* դիմ, *դիոց (=դիակ),*—դիմ, *դից, դիօք (=աստվածներ)։*—Սան, *սանի, սանից (=կաթսա),*—սան, *սանու, սանունք, սանուց (=սանիկ)։*—Գեղ, *գեղոյ (=գեղեցկություն),*—գեղ, *գեղջ (=գիւղ)* եւն։

ՉՀՈԼՈՎՎՈՂ ԲԱՌԵՐ

135. *Կան որոշ թվով անուններ և ածականներ, որոնք չեն հոլովվում։ Այսպես են՝*

1. Իւն *ածանցով կազմված անունները, որոնք ցույց են տալիս ձայն, հնչյուն. օրինակ՝ հնչիւն, գոչիւն, շառաչիւն, սօսափիւն, թնդիւն, դանգիւն, դղրդիւն, լալիւն, կանչիւն* եւն։ *Սրանց թիք հոլովների, ինչպես և հոդնականի համար վերցվում են կամ ումն ածանցով կազմված ձև-*

վերը՝ հնչումն, հնչման, հնչմունք ևլն. գոչումն, շառաչումն ևլն, կամ թե անորոշ դերբայը՝ լալ, դղրդել ևլն։

Ծան. Մրջիւն, մրջիմն, մրջման, մրջմունք, այլ և՝ մրջեան, մրջեանց, մրջիւնք։

2. Կրկին նվազական ածանցներով կազմվածները, օրինակ՝ պատանեկիկ, նաւակիկ, ևլն. նույնպես մանկիկ, որոնց համար գործ են ածվում պատանեակ, նաւակ, մանուկ բառերի ձևերը։

3. Բազմաթիվ ուրիշ բառեր, ինչպես՝ ծունր, արտօսր, պէտք, պիտոյ, հաճոյ, կազմ, նախ, դոյզն, գոհ, հաշտ ևլն, որոնց փոխանակ՝ թեք հոլովներով գործ են ածվում կամ նույնանիշ բառեր, օրինակ՝ ծունդ =ծունր, կամ նույն բառերի հոգնակին. ինչպես՝ արտօսր, հոգն. արտասուք, արտասուաց, արտասուօք, կամ համանիշ և կամ նույն արմատից կազմված ուրիշ բառեր, օրինակ՝ պիտոյք (պէտք), պիտոյական (պիտոյ), հաճոյական (հաճոյ), պատրաստ (կազմ), առաջին (նախ), դուզնաքեայ (դոյզն) և այլն։

186. Մի քանի տեղի անունների հոլովների փոխանակ վերցվում և հոլովվում են տեղացիների, ժողովրդի անունները՝ **fաղաf, աշխարհ** բառերով կամ առանց այդ բառերի. օրինակ՝ Աթէնք (Աթէնս), կամ Աթենացիք, Աթենացւոց քաղաք. Գալիլիա կամ Գալիլիացիք. Կեսարիա կամ Կեսարացւոց քաղաք։ Այսպես և Հայք կամ Հայոց աշխարհ, Հնդիկք կամ Հնդկաց աշխարհ. Պարսք կամ Պարսից աշխարհ. Վիրք կամ Վրաց աշխարհ ևլն. նշանակում են՝ Հայաստան, Հնդկաստան, Պարսկաստան, Վրաստան։

ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

187. Դերանվանական հոլովման տակ գնում են դերանունների մեծ մասը։ Այս տեսակի հոլովման համար ընդհանրապես պիտի նկատի ունենալ.

1. Հայցական հոլովը միշտ որևէ նախդրով է գործածվում, իբրև կրող առարկա՝ զ նախդրով, բացի իմն, ինչ անորոշներից։ Իսկ ոմն անորոշը, եթե մի որոշ խնդիր ունի, զ է ստանում, թե չէ՝ առանց զ-ի է մնում։ Օրինակ՝ Տեսին արս ոմանս։ Տեսին զոմանս ի նոցանէ։

2. Սեռական և տրական հոլովները տարբեր կազմություն ունին։ Սեռականի համար իբրև հոլովակերտ երևում են ր(ա), իսկ տրականի համար՝ մ(ա) բաղաձայնները կամ վանկերը։

3. Բացառականը կազմվում է սովորաբար տրականից՝ է(ն) վերջավորությամբ։

4. Գործիականի ք(ւ) հոլովակերտը երբեմն կրկնվում է։

188. Հարցական և անորոշ դերանուններ

	Եզակի		Հոգնակի
Ուղ.	ո, ով	—	ոյք

Հայց.	*զո, զով*	*յո, յով*		*զոյս*
Սեռ.	*ոյր*	*ուր*		*ոյց*
Տր.	*ում*	—		*ոյց*
Բաց.	*յումէ*	*ուստի*		*յոյց*
Գործ.	—	—		—
Ուղ.	*ոք*	—	*ոմն*	*ոմանք*
Հայց.	*զոք*	—	*զոմն*	*զոմանս*
Սեռ.	*ուրուք*	*ուրեք*	*ուրումն*	*ոմանց*
Տր.	*ումեք*	—	*ումեմն*	*ոմանց*
Բաց.	*յումեքէ*	*ուստեք*	*յումեմնէ*	*յոմանց*
Գործ.	—	—	*ոմամբ*	*ոմամբք*

Եզակի

Ուղ.	*զի, զինչ*	*ինչ*	*իմն*
Հայց.	*զի, զինչ*	*ինչ*	*իմն*
Սեռ.	*էր*	*իրիք*	*իրեմն*
Տր.	*իմ, հիմ, էրում*	*իմիք*	*իմեմն*
Բաց.	*առիմէ, զմէ*	*յիմեքէ*	*յիմեմնէ*
Գործ.	*ի*	*իւիք*	—

189. Ո՞, ո՞վ=*ո՞վ հարցականի համար պետք է իմանալ.*

1. Պակասած գործիականի, եքբեմն և մյուս հոլովների համար գործ՝ են ածվում ո՞ր հարցականի հոլովները. որո՞վ, որո՞վք,—ո՞րք, որո՞ց (=ո՞լք, ո՞յց):

2. Գործ են ածվում և nf անորոշի հետ՝ ո՞վ nf կամ ո՞ nf=ի՞նչ մարդ, ո՞ր մարդը, որ հոլովվում է՝ զո՞ ոք, ո՞յր ուրուք, ո՞ւմ ումեք, յումէ՞ (յումմէ) ումեքէ:

3. Հոգնակին՝ ոյf գործածվում է իբրև հարաբերական, օրինակ՝ Ընդման նոցա եղիցին՝ ոյf (=ովքեր որ) արարին զնոսա, և ամենևքեան՝ ոյf (=ովքեր) յուսացեալ են ի նոսա:

140. Զի՞, զի՞նչ=*ի՞նչ հարցականի համար պետք է իմանալ.*

1. Ուղղականի սկզբի զ-ն նախդիր է, ուստի և հայցականը մյուս նախդիրներով լինում է՝ յի՞նչ, առ ի՞նչ: Զի՞ ձևն ուրիշ նախդրով չի բանում:

2. Տրականի իմ ձևը գործ է ածվում սովորաբար նախդրով՝ յի՞մ, առի՞մ:

3. Բացառականը յ(ի) նախդրով ձև չունի:

4. Զի՞, զի՞նչ, է՞ր, ի՞մ, էրո՞ւմ, առի՞մէ, զմէ՞, առի՞նչ նշանակում են նաև ընդէ՞ր, վասն է՞ր, է՞ր աղագաւ, զիա՞րդ=ի՞նչ, ինչո՞ւ, ինչո՞ւ համար, ինչի՞ց, է՞ր (գաւառական՝ հե՞ր, խի՞), ի՞նչպես:

5. Զի՞նչ գործ է ածվում և ինչ անորոշի հետ՝ զի՞նչ ինչ=ի՞նչ բան, որ հոլովվում է՝ է՞ր իրիք, ի՞մ իմիք, ի՞ւ իւիք:

Գործ է ածվում և ուրիշ անունների հետ իբրև վերադիր ածական՝ ար, որպիսի բառերի իմաստով. օրինակ՝ Ջի՞նչ օգուտ է մարդոյ։ Ջի՞նչ շահ եղև։ Ջի՞նչ գործ գործեալ է քո։ Ա՛ւ քո ի՞նչ տյուտդամ յղեն։ Վասն զի՞նչ պատճառի։ Յի՞նչ օրէնս, յի՞նչ կամս, յի՞նչ խորհուրդս։ Ջի՞նչ ոք (=ի՞նչ մարդ, ի՞նչ ոքմին=ո՞րպիսի ոք)։

141. Յո՞, ո՞ւր, ուստի՞ հարցականների համար պետք է իմանալ.

1. **Յո՞**, յո՞վ ձևերը, որ ո՞, ո՞վ հարցականի հայցական հոլովն են յ նախդրով, գործ են ածվում սովորաբար իբրև մակբայ, երբ գործողության դեպի մի կողմ ուղղված լինելն է հարցվում, իբրև յո՞ր կողմ, յո՞ր տեղի, յո՞ր վայր, ընդ ո՞ր կամ ընդ ո՞ր կողմ=դեպի ո՞ւր։ Օրինակ՝ Յո՞ երթաս։ Յերեսաց քոց ես յո՞վ փախեայց։ Ոչ գիտեմք՝ յո՞վ երթաս։ Յո՞ թափեցից զդառնութիւն բիւնից։ Արդ յո՞ դէմ նզեալ փախիցուք։ Գնասցեն յով և կամեսցին։ Ջմեր վատթարութիւնս յո՞ տարայց։

2. **Ո՞ւր** (նույն իմաստով և **ուրաւնօր**) ձևը, որ ո՞, ո՞վ բառի սեռական հոլովն է, գործ է ածվում իբրև մակբայ, երբ մի տեղ լինելը կամ գործողության մի տեղում կատարվելն է հարցվում՝ իբրև ներգոյական յոր՞ւմ տեղւոջ, յոր՞ւմ վայրի=ո՞ւր, ո՞ր տեղ, ո՞ր տեղում։ Օրինակ՝ Ո՞ւր են օթևանք քո։ Ո՞ւր կամիս, զի պատրաստեցուք։ Ո՞ւր եդիք զնա։

Ուստի՞=ո՞րտեղից. ումնի՞ց, ինչի՞ց բացառականի համար կա և **ո՞ւստ** ձևը։

4. Գործ են ածվում և իբրև հարաբերական, օրինակ՝ Վազվազակի յղեմ զքեզ՝ ուր կամիսն երթալ։

142. Ոմն, ոք անորոշների, համար պետք է իմանալ.

1. Իբրև գոյական նշանակում են՝ մարդ, մի մարդ, մեկը (ոմմին), որը... որը. հոգնակին՝ ոմանք, մի քանիսը, մի քանի հոգի։ Օրինակ՝ Ասէ ոմն ցնա։ Ոմն պահէ օր ըստ օրէ, և ոմն պահէ զօրհասպանազ։ Ունեմն ետ հինգ քանքար, և ունեմն երկուս, և ունեմն մի։ Ոմանք ի դպրացն։ Մեծ ոմն։ Ոմն մեծատուն։ Ո՞րպիսի ոք։ Այս ոք, այն ոք, իւրաքանչիւր ոք, ամենայն ոք։ Պարզամիտ ոք էին։

Մի ոմն, մի ոք հոլովվում են՝ միոյ ուրումն, միում ումեմն ևլն. միոյ ուրուք, միում ումեք ևլն։ Մի ոմն ի ձէնջ։ Ընթանալ ամենեքին ընթանան յասպարիզին, այլ մի ոք առնու զյաղթութեանն։ Ըստ տօնի արձակէր նոցա դատաւորն զմի ոք կապեալ։

2. Իբրև ածական նշանակում են՝ մի (մը), հոգնակի անվան հետ՝ մի քանի, և սովորաբար համաձայնում են իրենց անվանը։ Օրինակ՝ այր ոմն։ Առն ուրումն մեծատան։ Կանայք ոմանք (=մի քանի կանայք)։ Ի կնոջէ ումեմնէ։

3. Բացասական, հարցական, թեական, ենթադրական խոսքերի մեջ գործ է ածվում ոք բառը, ուստի և ասվում է՝ ոչ ոք, որ հոլովվում.

է՝ ոչ վոք, ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ յումեքէ. արգելական խոսքերի մեջ՝ մի՛ nf. մի՛ ուրուք, մի՛ ումեք ևլն։ Հաճախ ոչ և մի՛ բացասականները բաժանվում են nf բառից։ Օրինակ՝ եթէ ուրուք եղբայր մեռանիցի։ Ոչ դուղնաբնակ ոք էին նորա։ Ոչ ոք ծառայ (=ոչ մի ծառա) կարէ երկուց տերանց ծառայել։ Իցէ՞ ոք աստ։ եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Թերևս ոք գտցի, որ...

4. Nf եզակի ձևով երբեմն հոգնակի իմաստ ունի. օրինակ՝ Ուր երկու ոք (=երկու հոգի) ի միասին իցեն։ եթէ այնպիսիք ոչ ոք գտանիցին։

148. Իմն, ինչ անորոշների համար պետք է իմանալ.

1. Իբրև գոյական նշանակում են՝ բան, մի բան։ Օրինակ՝ Միթէ կարօտացա՞յք իմիք,—և ոչ իմիք։ Լեալ յումեքէ և յիմեքէ։ Ունիմ ինչ ասել քեզ։ Ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ։ Մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել (=կարելի՞ բան է, որ լավ բան լինի)։ Բարւոյ իրիք լինին պատճառ։ Չար ինչ։ Սակաւ ինչ։ Այլք այլ իմն աղաղակէին։ Այլ ինչ, ամենայն ինչ, քանի՞ ինչ, ո՞ր ինչ։ Մի ինչ (մի իրիք կամ միոյ իրիք, միով իւիք ևլն.), ինչ մի։ Այս ինչ, այն ինչ։

2. Իբրև ածական նշանակում են՝ մի, nrեւէ, մի nrեւէ ինչ nr, (մը). Հոգնակի անվան հետ՝ մի քանի։ կարող են անունից և՛ առաջ և՛ հետո դրվել և հաճախ ուրիշ բառերով բաժանվել նրանից։ Հոգնակի անվան հետ անհամաձայն են մնում, իսկ եզակի անվան հետ սովորաբար համաձայնում են։ Օրինակ՝ Բան ինչ է ինձ ընդ քեզ։ Բանք ինչ գոյին նոցա ընդ ասորիս։ Ունի՞ք ինչ կերակուր։ Ակն ի ջուր ինչ, ի տեղի ինչ։ Անցին աւուրք ինչ։ Յետ աւուրց ինչ։ Սակայն են և այլ ինչ պատճառք (=ուրիշ մի քանի պատճառներ էլ կան)։ Շնորհս ինչ հոգևորս։ Գործ ինչ ոչ գործեն։ Վասն խռովութեան իրիք եղելոյ։ Առանց իրիք յանցանաց (=առանց մի որևէ հանցանքի։ Տե՛ս § 85)։ Ջուրն՝ ցօղ իմն է զովական։ Իբր ի պարարտութենէ իմեքէ։ Իբր խթանաւ իմն ընդոստուցեալ բանիւ։ Ընդ պատեհիք իմն։ Ի նիւթոյ ինչ։ Ի սահմանելոյ ինչ հրամանէ։ Օտարոտի իմն դից թուի պատմիչ լինել։ Յանմահից իմն կարգի դնէր զինքն։

3. Բացասական, հարցական, թեական, ենթադրական խոսքերի մեջ սովորաբար գործ է ածվում ինչ անորոշը. ուստի և ասվում է ոչ ինչ (=ոչինչ, ոչ մի), որ հոլովվում է՝ ոչ իրիք, ոչ իմիք ևլն։ Արգելական խոսքերի մեջ՝ մի՛ ինչ։—Ոչ, մի՛ բառերը միշտ կարող են ինչ բառից բաժանվել, լինի վերջինս իբրև գոյական թե ածական գործածված։ Ոչ երբեմն կրկնվում է և բայի վրա։ Աշխարհաբարում ոչ nf, ոչինչ, ոչ մի բառերի հետ բայը բացասական է դրվում։ Օրինակ՝ եթէ իցէ ինչ ուրուք։ Ակն թէ գտանիցէ ինչ և ոչինչ եգիտ։ Ոչ բերաք ինչ յաշխարհ և ոչ տանել կարասցուք։ Է՞ ինչ այդր։ Մի՛ ինչ ասիցէք։ Ծղև նմա չար և ոչինչ։ Ոչինչ վնաս է։ Ոչինչ է խտիր։ եթէ հնար ինչ էր (=եթե մի

որևէ հնար լինէր)։ Եւ ոչ միով իւիք հանգիստ գտաւ ի մորենւոյ և ոչ յայլ իմեքէ։ Եւ ոչ նշմարանս ինչ զոր լսէինն՝ ոչ կարէին ունել ի մտի։ Եթէ իցէ ինչ յառնն վնաս (=վնաս ինչ)։ Եթէ ունիցին ինչ ընդ ումեք բանս՝ (Բանս ինչ) յատեան երթայցեն։

4. Իմն, ինչ հոգնակի չունին. եզակի ձևով նաև հոգնակի իմաստով են բանում։ Օրինակ՝ Երկու ինչ են, որ բազում առնեն զմեղս։ Երիս ինչ (=երեք բան) ատեայ անձն իմ։

5. Այս անորոշները երբեմն կրկնված՝ իմն իմն, ինչ ինչ՝ գործ են ածվում թե գոյականաբար և թե ածականաբար՝ ստանալով բաներ, մի քանի բաներ, զանազան բաներ, կամ թե զանազան, մի քանի բառերի իմաստը։ Հոլովվում են՝ իրիք իրիք, իմիք իմիք, յիմեքէ իմեքէ, իւիք իւիք։ Օրինակ՝ Այլոց իմն իմն (=բաներ) խոստանան տալ որ չիցէ ի ձեռս։ Ոչ գարշի զայնպիսի անուանս առնուլ զինքեամբ վասն իրիք իրիք (=մի քանի, զանազան) տեսչութեանց։ Ինչ ինչ և յասորւոց ընկալան տեղեկութիւնս կարգաց։

6. Ինչ անորոշը հաճախ գործ է ածվում իբրև թարմատար, ավելի հարցական, թեական և բացասական խոսքերի մեջ, և խոսքին տալիս է տարտամություն, կամ թե չէ՝ սաստկացնում կամ մեղմում է խոսքի իմաստը՝ ստանալով իւիք գործիականի նշանակությունը։ Աշխարհաբար երբեմն թարգմանվում է բնավ, երբեք, սկի, ինչ որ բառերով։ Օրինակ՝ Ջարիքն որ լինին անձի՞նք ինչ իցեն (=ինչ որ անձե՞ր են, թե՞...)։ Քէ՞ արդասիք անձանց։ Եւ ոչ ի կայսր ինչ վնասակար եմ։ Տես դու, ոչ ի տանջանաց երկեայ ինչ (=իւիք=բնաւ) եա։ Ոչինչ (=բնավ չը...) զանգիտեաց։ Այրն նորա չէ ինչ (=սկի) ծեր։ Ոչ եթէ յանձնէ ինչ եկի։ Ոչ եթէ զհողմս ինչ կոծելով։ Ինքեանք յոգիս ինչ (=բնավ, սկի) ոչ վնասին։

7. Իմն անորոշը հաճախ մի մակբայի կամ գործիական հոլովի հետ, երբեմն և մենակ, բայի վրա դրվելով՝ անորոշ տարտամություն է ցույց տալիս՝ ստանալով մի տեսակ, մի կերպ, կարծես, արևմտյան աշխ. մր բառերի իմաստը. օրինակ՝ Բարկութեամբ իմն (=բարկությամբ մր) հասեալ ի տեղի անդր։ Ճոխութեամբ իմն հրաման տայր Նաբուգոդոնոսոր։ Մտադիւր իմն անսայիք անմտաց։ Գեղեցիկ իմն (=գեղեցիկ մը) պատմէ և Արիստոն Փեղոյացի յաղագս մահուանն Արտաշիսի։ Լոիկ իմն ծածկեցաւ յամբոխին։ Փոքու իմն, այսու իմն, այնու իմն։ Ահեղ իմն է տեղիս այս։ Յայտ իմն այսպէս առնէր։ Կամէին իմն, թէ փոխեսցուք զնա ի գործոց անտի։ Շփոթի իմն թագաւորութիւնն։ Եւ մեծամեծս իմն խօսէին։

144. Իմն, ինչ անորոշների իմաստով գործ է ածվում և իր, սովորաբար հոգն. իրք (իրի, իրաց, իրօք.=մի բան, բան), երբեմն և մի, ինչ բառերի հետ՝ իր մի, ինչ իրք, ինչ իրաց, շատ ինչ իրք. այլ և կրկնված՝ իրք իրք, իրս իրս, յիրս յիրս, իրաց իրաց (=բաներ, մի քանի կամ այլ և այլ բաներ)։

Ծան. Ջպիտի չփոթել ինչ և ոչ ինչ անորոշ դերանունները ինչ, ոչինչ հասարակ անունների հետ, որ հոլովվում են՝ ընչի, ընչիս, ինչք, ընչից, ընչիւք (=քան. ինչք, ստացվածք). ոչինչ, ոչնչի ևլն. (=ոչնչութիւն, անգո, ոչինչ բան). Օրինակ՝ Ընչի խիթք յոչընչի չէ հնար գնալ: Ծցոյց յոչնչէ յինչ զչէսն: Զարարածս յորժամ կամեցաւ՝ սկիզբն արար լինել՝ ոչ յընչէ, այլ յոչնչէ, զի ինչ նա միայն է (Ծզնիկ):

Ոչինչ երբեմն իբրև ածական է գործածվում և նշանակում է ոչինչ, չնչին:

145. Ուրեք,—ուստեք անորոշների համար պիտի իմանալ.

1. Մենակ գործածված ժամանակ նշանակում են իբրև մակբայ՝ մի տեղ, որևէ տեղ.—մի որևէ տեղից: Օրինակ՝ Վկայեաց ոք ուրեք: Ոչ ուրեք: Ոչ ուրեք առաքեցայ: Ոչ ուրեք գտանեմք ասացեալ նորա ի նորումս: Է որեք (=կա տեղ, երբեմն), զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք, զի նոքա մեզ յաղթեցին:—Միթէ կասկա՞ծ ինչ ուստեք էր նմա: Յորժամ հայր սիրելի ուստեք գայցէ, արժանի որդիքն կառօք ընդ առաջ ելանեն:

2. Կրկնված ուրեք ուրեք, ուստեք ուստեք նշանակում են ի կողմանս կողմանս, ի կողմանց կողմանց=տեղ տեղ, զանազան տեղեր,—զանազան տեղերից, կողմերից, դեսից-դենից: Օրինակ՝ Ջմեծամեծս և զզարմանալոյ արժանաւորս յարուեստից ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ՝ հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու: Ոմանք ոստեք ուստեք նկեալ ժողովեալ: Եւ որ ոստեք ուստեք եկեալ էին ի թիկունս օգնականութեան:

3. Երբեմն վերադիր ածականներով էլ են գործածվում. օրինակ՝ ամենայն ուրեք (=ամեն տեղ), ի մօտ ուրեք (=մոտ տեղ), հեռի ուրեք, հեռագոյն ևս ուրեք (=հեռու տեղ), յո՞ ուրեք, ո՞ւր ուրեք (=ո՞ւր տեղ, ո՞ր տեղ), դուն ուրեք (=քիչ տեղ, քիչ անգամ). այլ ուրեք կամ այլ ուր (=ուրիշ տեղ), այլ ուստեք կամ այլուստ, յայլուստ, կամ յայլուստ ուստեք (=ուրիշ տեղից), բազում և այլ ոստեք (=ուրիշ շատ տեղից էլ), արտաքուստ ուստեք (=դրսից մի տեղից), ամենայն ուստեք կամ ամենուստ, յամենուստ (=ամեն տեղից, ամեն կողմից). բազում ոստեք, յոլով ուստեք (=շատ տեղից), ոչ ուստեք (=ոչ մի տեղից). այլև կրկնված՝ ո՞ստ ուստեք (=ո՞ւր տեղից, ո՞ր տեղից):

4. Ուստեք ձևի իմաստով կա և ուստեմն, որ շատ քիչ է գործածվում, իսկ ուրեք ձևի իմաստով՝ ուրեմն, որ հաճախ միանում է տեղ կամ ժամանակ ցույց տվող ուրիշ բառերի հետ՝ տարտամացնելով նրանց իմաստը, օրինակ՝ Որպէս անդ ուրեմն (=երբեմն, ժամանակով) ի հինսն: Զոր ասա ուրեմն (=վերջերս) յետոյ ոմանք բարձին: Իսկ աստ ուրեմն յարուցեալ գոնդս: Յետոյ ուրեմն արժանաւորեցան առնուլ: Այսպես և՝ անդր ուրեմն, ուր ուրեմն (=վերջապես), վաղ ուրեմն, առաջագան ուրեմն, երբեմն ուրեմն. այլ ուստեմն (=որևէ ուրիշ տեղից):

5. Իբրև ածական ուրեմն, ուրեք, ուստեք նշանակում են մի, մի որևէ և դրվում են սովորաբար տեղի անվան վրա: Օրինակ՝ Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն: Ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենավորու-

Թեամբ ի բերդն մտանէին։ Ի կողմն մի ուրեք։ Յանկեան ուրեք։ Կարծէր ի տեղիան ուրեք անյայտս գետառուին թագչել։ Ի տեղւոջ ուրեք։ Ի տեղւոջէ ուստեք (=մի որևէ տեղից)։

146. Անձնական դերանուններ

Եզակի

Ուղ.	*ես*	*դու*	*ինքն*	—
Հայց.	*զիս*	*զքեզ*	*զինքն*	—
Սեռ.	*իմ*	*քո*	*ինքեան*	*իւր*
Տր.	*ինձ*	*քեզ*	*ինքեան*	*իւր (իւրեան)*
Բաց.	*լինէն*	*ի քէն*	*լինքենէ*	*յիւրմէ*
Գործ.	*ինձ*	*քեզ*	*ինքեամբ*	*իւրեաւ, իւրև, իւրեամբ*

Հոգնակի

Ուղ.	*մեք*	*դուք*	*ինքեանք*	*իւրեանք*
Հայց.	*զմեզ*	*զձեզ*	*զինքեանս*	*զիւրեանս*
Սեռ.	*մեր*	*ձեր*	*ինքեանց*	*իւրեանց*
Տր.	*մեզ*	*ձեզ*	*ինքեանց*	*իւրեանց*
Բաց.	*ի մէնջ*	*ի ձէնջ*	*յինքեանց*	*յիւրեանց*
Գործ.	*մեւք, մեօք*	*ձեւք, ձեօք*	*ինքեամբք*	*իւրեամբք*

Նշան. *Դու դերանունը դրվում է անուններից հետո իբրև վերջածար բառ և անվանք տալիս է կոչականի նշանակություն, օրինակ՝ Ա՛յր դու, կի՛ն դու, աղջի՛կ դու։*

147. Ինքն *դերանվան համար պիտի իմանալ.*

1. Իբրև զորացման դերանուն դրվում է մյուս դերանունների և անունների հետ՝ իբրև բացահայտիչ թվով և հոլովով համաձայնելով նրանց, երբեմն և համապատասխան դեմքի հոդ ստանալով, օրինակ՝ ես ինքն, դու ինքն, նա ինքն. ինքն տէրն,—զիս ինքն, զիս ինքն, զքեզ ինքն, քեզ ինքեան, ի մէնջ յինքեանց ևլն։ Զքեզ ինքնդ։

2. Մենակ՝ առանց դիմորոշ հոդի և ուրիշ դերանվան ևս կարող է առաջին և երկրորդ դեմքերի իմաստով գործածվել. օրինակ՝ ինքեանք (=մեք ինքեանք=ինքներս) ի նմին կաւոյ եմք։ Մի՛, աղաչեմ, մի՛ այսպէս չարաչար յաղագս ինքեանց (=մեր ինքեանց) խորհեսցուք և մի՛ ի մեզ ինքեանս մխեսցուք սուր։

148. Ինքն *բառի փոխանակ զորացման իմաստով գործ են ածվում նաև՝* ինճինի, ինճինին իսկ, ինճն գլխովին, ինճինին գլխովին, *կամ լոկ՝* գլխովին. *օրինակ՝ Մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր։ Թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր։ Զինքնին թագաւորն զխոսրով։ Զթագաւորն Տիրան ինքնին գլխովին։ Դու ինքնին, նա ինքնին, դա ինք-*

նին։— Իմ ինքին նշանակում է նաև՝ անձամբ անձին, իմ ես իւրեւ, իմ-
ֆեամբ, իւրովի=ինքն իրէն, իրան իրան։ Օրինակ՝ Իբրև զհատ ինքնին
անկեալ ի ցօղնոյ։ Դուռնն ինքնին բացաւ։

149. Ինքն բառի իմաստով 1-ին և 2-րդ դեմքերի համար, մենակ կամ նույն դեմքերի դերանունների հետ, գործ են ածվում՝ ինձէն (=ինքս), մեզէն (երբեմն մեզոյն=ինքներս), ֆեզէն (երբեմն՝ ֆեզոյն=ինքդ), ձեզէն (երբեմն ձեզոյն=ինքներդ), որոնք բացառական հոլովներ են և նշանակում են՝ ես իմ ինձնից, յինէն, ինեւ անձամբ ևլն։ Օրինակ՝ Ողջ լիջիք, և ես ինձէն իսկ (=ես ինքս հենց) անձամբ տղջ եմ ամենայն իրօք։ Ես ինձէն աչօք տեսի։ Ինձէն (=ինքս) զիս քեզ մատուցի։ Ջիա՞րդ անձամբ ինձէն զտուբիւն իմ ծանակեցից։ Մեք մեզէն իսկ (=մենք ինքներս հենց) շինեսցուք։ Մեզէն իսկ լուաք ի դմանէ։ Մեզէն իսկ ընթեռնուլ արժանաւորեցաք։ Մեզէն իսկ ականատես եղաք այն դիւանին։ Մեք մեզոյն լինիմք քակիչ օրինացս մերոց։ Արի՛ և քեզէն թօթափեա՛ զանկողինս քո։ Արի՛ և դու քեզէն պատահեա՛ մեզ։ Քեզէն վարես զքեզ յանդարձ օտարութիւն։ Դու քեզէն իսկ (=դու ինքդ հենց) վկայ ես ինձ։ Դու քեզէն զպատիժն յանձն առեր, և ես թողում զպատուհասն։ Դուք ձեզէն երթայք ժողովեցէք ձեզ յարդ։ Դուք ձեզէն իսկ գիտէք։ Որպէս և դուք իսկ ձեզէն (=դուք ինքներդ հենց) վկայեցէք։

150. Իւր դերանունը, որ եզ. ուղղական և հայցական չունի, գործ է ածվում, ինչպես աշխարհաբարում, սովորաբար անդրադարձ իմաստով, այսինքն դրվում է ենթակայի անվան տեղ։ Հաճախ սակայն իւր դերանվան փոխանակ գործ են ածվում իմ և նույնիսկ ցուցական նա դերանունների ձևերը, կամ ընդհակառակն. օրինակ՝ Սկսաւ խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս, զոր իւր (=ինքեան) չէր գործեալ (=որ իմը չէր գործել)։

151. Անձնական դերանունների բոլոր դեմքերի փոխանակ հաճախ գործ են ածվում **անձն** բառի եզակի և հոգնակի հոլովները մենակ կամ **իմ, ֆո, իւր, մեր, ձեր, իւրեանց** բառերի հետ։ Օրինակ՝ Յանձն իմ (=յիս, յիս ինքն) երդուայ։ Եւ ոչ զանձն (=զիս, զիս ինքն) արժանի համարեցայ առ քեզ գալոյ։ Փրկեա զանձն քո և զմեզ։ Դու վասն անձին քո վկայես։ Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ (=յինքն=ինքն իր մեջ) կործանի։ Լացէք ի վերայ անձանց ձերոց (=դուք ձեր վրա...)։—Ոչ կարեմ ես յանձնէ առնել և ոչինչ (=ես ինքս ինձնից...)։—Անձամբ անձին (=ինքն իրեն) առնէ վնաս։ Անձամբ զանձն իւր (=ինքն իրեն, ինքն զինքն) խայտառակեաց։—Նոքա անձին (փոխանակ՝ անձանց=իրենց, իրենք իրենց) ինչ օգնել ոչ կարեն։ Անձամբ անձին (=իրենք իրենց) փակեցին զդրունս։

Տես. **Անձն** բառը բարդությունների մեջ նշանակում է **ինքն**, օրինակ՝ **անձնասպանութիւն=ինքնասպանություն, անձնասէր=ինքնասեր։**

152. Նա, սա, դա.

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	*նա*	*նոքա*
Հայց.	*զնա*	*զնոսա*
Սեռ.	*նորա*	*նոցա*
Տր.	*նմա*	*նոցա*
Բաց.	*ի նմանէ*	*ի նոցանէ*
Գործ.	*նովաւ*	*նոքօք*

153. Նա *դերանվան պես հոլովվում են՝* սա, զսա, սորա, սմա, ի սմանէ, սովաւ. սոքա, զսոսա, սոցա, ի սոցանէ, սոքօք.—դա, զդա, դորա, դմա *ևլն։ Այս ցուցականների բացառական հոլովը երբեմն լինում է՝ ի նմանէն, ի սմանէն, ի դմանէն, ի սոցանէն ևլն։*

154. Այս, այդ, այն.

	Եզակի		Հոգնակի
Ուղ.	*այս*	—	*այսոքիկ*
Հայց.	*զայս*	—	*զայսոսիկ*
Սեռ.	*այսր, այսորիկ,*	*այսր*	*այսց, այսոցիկ*
Տր.	*այսմ, այսմիկ,*	*աստ*	*այսց, այսոցիկ*
Բաց.	*յայսմ, յայսմանէ,*	*աստի*	*յայսց, յայսցանէ*
Գործ.	*այսու, այսուիկ*	—	*այսոքիւք, այսոքիմբք*

155. Այս *դերանվան պես հոլովվում են՝* այդ, զայդ, այդր, այդորիկ. այդմ, այդմիկ. յայդմ, յայդմանէ. այդու, այդուիկ *ևլն.* այն, զայն, այնր, այնորիկ *ևլն։ Այն հոգն. ուղղականի և հայցականի համար ունի նաև* այնի, զայնս *ձևերը։ Հոգն. բացառականի և գործիականի համար կան նաև՝ յայսոցիկ, յայդոցիկ, յայնոցիկ,—այսուք, այդուք, այնուք ձևերը։*

Այսր, աստ, աստի *ձևերին համապատասխան կան՝* այդր, այդի, անդր, անդ, անտի։

156. Այս, այդ, այն *ցուցականների համար պիտի իմանալ.*

1. Գոյական են, երբ մենակ են գործածվում և նույն նշանակությունն ունեն, ինչ որ սա, դա, նա։ *Երբ ցուցականն իր իմաստն ստանում է մի հարաբերական խոսքից, ավելի* այս, այդ, այն *են գործածվում, քան* սա, դա, նա։ *Օրինակ՝ Երանի այնոցիկ, որ սուրբ են սըրտիւք։*

2. Ածական են, երբ իբրև վերադիր դրվում են մի անվան վրա, որի հետ թվով և հոլովով տվորաբար համաձայնում են։

Երբ ցուցականն իր անունից նախադաս է, սովորաբար կարճ ձևն է գործածվում և անունը ոչ մի հոդ չի առնում։ Իսկ երբ ետադաս է, սովորաբար երկար ձևն է բանում, նախդիրը կրկնվում է ցուցականի վրա և անունն առնում է համապատասխան ս, դ, ն ցուցական հոդերից մեկը. օրինակ՝ այս տուն, այդ տուն, այն տուն. զայս տուն, այսր տան, այսմ տան, յայսմ տանէ, այսու տամբ, այս տունք, այսց տանց, յայնմ աւուր ևն. բայց՝ տունս այս, տունդ այդ, տունն այն, զտունս զայս, տանս այսորիկ, տանս այսմիկ, տունքս այսոքիկ, տանցս այսոցիկ, յաւուրն յայնմիկ ևն. բայց և՝ գործքս այս։ Զինչ հատուսցուք փոխարէնս այս (փոխ. այսր) մեծի յաղթութեան։ Զբանս (փոխ. զբանսս) զայսոսիկ կատարեա՛։ Տարերքս այս։

3. Բացառական յայսմ, յայդմ, յայնմ ձևերը միայն իբրև վերադիր ածական են բանում՝ յայսմ հետէ, յայդմ վայրէ, զայնմ ամենայնէ ևն. իսկ այնք, զայնս միայն իբրև գոյական միշտ մենակ են գործածվում։

4. Այս, այդ, այն, զայս, զայդ, զայն եզակի ձևերը երբեմն և հոգնակի իմաստ ունին. օրինակ՝ Զկունս սակաւ ունէին, և զայն ևս (=այն էլ) օրհնեաց։

157. Այսր, այդր, անդր նշանակում են.

1. Այստեղ, այդտեղ, այնտեղ, երբ մենակ են գործածվում իբրև մակբայ և գործողության դեպի 1-ին, 2-րդ կամ 3-րդ դեմքն ուղղված լինելն է ցույց տրվում. օրինակ՝ Մի՛ մերձենայր այսր։ Ե՛կ այսր։ Այսր անդր (դես ու դեն, այս ու այն կողմ) վառեալք ընթանային։ Ի քէմ և յայլոց սկսեալ անդր ի վեր հանիցեմ ի սկիզբնն։ Յղէին անդր նախարար զոմն։

2. Այս, այդ, այն, երբ իբրև ածական դրվում են ի նախդիրն ունեցող հայցական հոլովով մի անվան վրա. օրինակ՝ Եւ ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա գնացաք։ Եթէ ո՞չ գայցէ ի տօն այսր։ Ի դաշտ անդր։ Ելանէ ի ջուր անդր։

158. Աստ, այդր, անդ նշանակում են.

1. Այստեղ, այդտեղ, այնտեղ, երբ մենակ են գործածվում իբրև մակբայ և գործողության մի տեղում կատարվելն է ցույց տրվում. օրինակ՝ Գոյ աստ այր մի։ Զնոսա եթող անդ։ Է՞ ոք այդր այր։ Նստարո՛ք դուք այդր։ Եւ անդ էր մինչև ցվախճան նորա։—

Այս իմաստով կան և աստուանօր, այդանօր, անդանօր բառերը։

2. Այս, այդ, այն, երբ իբրև ածական դրվում են ի նախդիրն ունեցող տրական հոլովով մի անվան վրա (ներգոյականի իմաստով), օրինակ՝ Ի դրախտի աստ։ Ի տօնի աստ։ Ի ժամանակի աստ յայսմիկ։ Գրեցի ձեզ ի թղթի այդր։ Ահաւասիկ ի խորանի անդ է։ Ի պարտիզի անդ։ Յանապատի անդ։ Եւ խնդրէին զնա ի տօնի անդ։

159. Աստի, այդի, **(այտի), անտի** նշանակում են.

1. Այստեղից, այդտեղից, այնտեղից կամ սրանից, դրանից, նրանից, երբ միևնույն են գործածվում. օրինակ՝ Գնացին նոքա անտի։ Արի՛ք երթիցուք աստի։— Եւ ոչ վրիպեցի այտի (=դրանից) բան, մինչև կատարեցի ամենայն։ Յորմէ պատուիրեցի քեզ անտի ևեթ չուտել։ Անտի իսկ (=նրանից=յայնմ իւղոյ) օծանէին։ Չչարեաց սկիզբն անտի (=նրանից=ի նիւթոյ) կարծեցին։—Այս իմաստով կան և աստուստ (աստստին), անդուստ (անդստին) ձևերը։

2. Այս, այդ, այն. երբ իբրև ածական դրվում են մի բացառական հոլովով անվան վրա. օրինակ՝ Ել ի տապանէ այտի։ Բազումք ի մանկտւոյ այտի։ Ի յունականաց այտի։ Ի տեղւոջէ անտի։ Ի հեթանոսական ուսմանց անտի։ Ձիշխանութենէ աստի։ Ի նեղութենէ անտի։ Անդստին յօրինացն (=հենց այն օրենքից)։

160. Կան և այսրէն, **այդրէն**, անդրէն. աստէն, անդէն մակբայները, որ նշանակում են՝ վերստին այսր, վերստին այդր, վերստին անդր, **յետս այսր, յետս այդր, յետս անդր**=նորից, եւս, կրկին այստեղ կամ **հենց այստեղ, հենց այդտեղ, հենց այնտեղ**։ Օրինակ՝ Եւ ինքն ողջանդամ այսրէն դառնայր։ Այդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո։ Ել և անդրէն ոչ դարձաւ։ Դարձ անդրէն յերկիր։ Այսրէն (=այստեղ, այս աշխարհում) այլք վաստակին և այլք հանգչին։ Անդէն (=այնտեղ, այն աշխարհում)։ Այդրէն յաշխարհիդ ձերում գտանին գիրք դորա։—Ես աստէն պահեցի։ Աստէն (=այստեղ ,այս աշխարհում) բնակելով զհատուցումն մեզաց իւրոց։ էին անդէն ի կարաւանին։

Անդէն, անդէն իսկ, անդէն և անդ. անդէն վաղվաղակի նշանակում են նաև՝ իսկույն, տեղն ու տեղը։ Օրինակ՝ Անդէն և անդ ծանեան։ Եւ ահա անդէն երեք արք եկին։

161. Նոյն, սոյն, դոյն։—**Ամենեքին։**

	Եզակի	Հոգնակի
Ուղ.	նոյն	նոքին
Հայց.	զնոյն	զնոսին
Սեռ.	**նորին, նորուն**	նոցին, նոցուն, նոցունց
Տր.	նմին	նոցին, նոցուն, նոցունց
Բաց.	**ի նմին**	**ի նոցունց**
Գործ.	նովին, նովիմբ	նոքիմբք, նովիմբք, նոքումբք

Ուղ.	ամենեքին, ամենեքեան
Հայց.	զամենեսին, զամենեսեան
Սեռ.	ամենեցուն, ամենեցունց
Տր.	ամենեցուն, ամենեցունց
Բաց.	յամենեցունց
Գործ.	ամենեքումբք

162. Նոյն *դերանվան պես հոլովվում են՝* սոյն, դսոյն, սորին, սմին *և այլն.* դոյն, զդոյն, դորին, դմին *և այլն։ Սոյն, դոյն՝ չունին* նոքումբք *ձևի համապատասխան հոգն. գործիական։*

Նոյն նշանակում է նաև մի եւ նոյն։ *Այս իմաստով սովորաբար անփոփոխ է մնում և հոգնակին լինում է՝* նոյնք, *ընդոյնս օրինակ՝* Ի նոյն *(=միևնույն, և ոչ թե՝ այն) ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունսն սրանային։ Եւ նոքա զնոյնս (=միևնույն բաները) բարբանչեն։*

163. Սոյն, դոյն, նոյն *ցուցականների համար պիտի իմանալ.*

1. Գոյական են, երբ մենակ են բանում, և հաճախ նույն իմաստ ունին, ինչ որ սա, դա, նա կամ այս, այդ, այն, որոնց հետ և փոխեփոխ գործածվում են կրկնությունն չանելու համար, կամ իբրև ավելադրություն կրկնվում են՝ իմաստի զորեղ արտահայտության համար։ Օրինակ՝ Ես յայդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ։ Նորա իշխանութեամբ և նորին հրամանաւ։ Նորին (=նորա) մեծութիւն։ Սոյն այս, սորին այսորիկ, սմին այսմիկ, սոքին այսոքիկ, դոյն այդ (այսպես և՝ սա այս, դա այդ և այլն)։

2. Ածական են, երբ իբրև վերադիր դրվում են մի անվան վրա, որի հետ թվով և հոլովով սովորաբար համաձայնում են. օրինակ՝ նոյն բան, նորին բանի, նմին բանի, ի նմին բանէ, նովին բանիւ և այլն։—Բացառականները՝ ի սմին, ի դմին, ի նմին միայն իբրև վերադիր ածական են գործածվում, օրինակ՝ ի նմին քաղաքէ=նոյն քաղաքից։

164. Ամենեքին *կամ* **ամենեքեան** *բառի պես միայն հոգնակի հոլովվում են նաև* բոլորեքին *կամ* բոլորեքեան, երկոքին *կամ* երկոքեան, երեքին *կամ* երեքեան, չորեքին *կամ* չորեքեան, հնգեքին, վեցեքին *կամ* վեցեքեան, եօթանեքին *կամ* եօթանեքեան, տասնեքին *կամ* տասնեքեան, երկոտասանեքին *կամ* երկոտասանեքեան, *որ նշանակում են՝* ամենքը, ամենքն էլ, երկուսն էլ, երեքն էլ, չորսն էլ *և այլն։*

Այս բառերն ևս թե մենակ իբրև գոյական են գործածվում և թե իբրև ածական վերադիր դրվում են մի հոգնակի անվան վրա, որի հետ հոլովով միշտ համաձայնում են։ Օրինակ՝ ամենեցուն *(=ամեն, բոլոր) արարածոց ցուցանէր։ Բացան աչք երկոցունց (=երկսի աչքերն էլ բացվեցին)։ Յերկոցունց կողմանցն (=երկու կողմից էլ)։ Ի վերայ ձեր երկոցուն (=ձեր երկսի վրա)։ Աշակերտքն ամենեքին։*

Նշ. Ամէն *բառի եզ. գործիականը երբեմն լինում է* ամենեւիմբ *(ամենևիմբ)=ամենայնիւ, բոլ ամենայնի, բոլորովին, իսկ բոլոր ունի* բոլորով, բոլորիւ *ձևերի հետ և* բոլորովիւն *(բոլորովիմբ), որոնք հաճախ իբրև մակբայ են գործածվում։*

165. Փոխադարձ դերանուններ

Ուղ.	—	—
Հայց.	զմիմեանս	զիրեարս
Սեռ. Տր.	միմեանց	իրերաց

Բաց.	*ի միմեանց*	*յիրերաց*
Գործ.	*միմեամբք*	*իրերօք*

166. *Փոխադարձ դերանունների իմաստով գործ են ածվում նաև՝* **Մի զմի** *(մի առ մի, մի ցմի, մի միոյ, մի միոջ ևլն=մեկմեկու, մեկմեկուց).* **Այր զընկեր իւր** *(այր ցընկեր իւր, այր ընդ ընկերի ևլն)։— Քանզի շփոթ իմն ամբոխից լեալ՝* **այր զաւրամբ** *(=զմիմեամբք) եվանէին տիրել աշխարհիս։*

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

167. *Խոսքի կամ նախադասության կազմությունը գրաբարում ընդհանրապես նույնն է, ինչ որ աշխարհաբարում։ Նախադասության միջուկն է բայը, որի դեմքը, ինչպես աշխարհաբարում, միշտ որոշ է։ Նախադասությունը կարող է կազմված լինել մեկ բայից, օրինակ՝ գա՛մ = գալիս եմ, մի բայական նախադասություն է։ Բայց դա կարող է ունենալ ամեն տեսակի լրացումներ և լրացման լրացումներ՝ ենթական, ստորոգյալ ու ստորոգելիական վերադիր, խնդիրներ ու պարագաներ. օրինակ՝ Յայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն։*

168. *Բայի դեմքի լրացումը, ենթական, մեր հին քերականները կոչում են «անուն բայի» կամ «տէր բայի», իսկ բայիմաստի լրացումները՝ խնդիր։*

Խնդիրները լինում են՝ 1. Ներգործական *բայերի* սեռի խնդիր *կամ հայցական սեռի խնդիր, որ է կրող խնդիրը (ուղիղ խնդիրը) կամ կրոլ առարկան, որ ազդվում կամ առաջ է գալիս ենթակայի գործողությունից (§ 171)։*

2. Կրավորական *բայերի* սեռի խնդիր, *կամ* բացառական սեռի խնդիր,— *կրավորական բայերի ներգործող խնդիրը, որից ծագում է գործողությունը, որ և խոսքը ներգործական բայով ասելիս՝ դառնում է ենթակա (տե՛ս ներքևում § 171)։*

3. Բնության խնդիր,— *մնացած բոլոր խնդիրները որևէ հոլովով միայնակ կամ հոլովների հետ նաև նախդիրներով (կապերով)։*

169. *Գրաբարի հոլովները, սակավ բացառութ֊յամբ, նույն գործածութ֊յունն ունեն, ինչ որ նույն հոլովներն աշխարհաբարում։ Կարևոր են հետևյալ կիրառութ֊յունները։*

170. Ուղղական հոլովով *դրվում են.*

1. **Ենթական** *(անուն-բային), օրինակ՝ գնաց Արշակ։ Ասացին աշակերտքն։*

2. **Կոչական անունը.** *օրինակ՝ Ընդե՞ր, արհա՛յ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ։*

3. **Ստորոգյալը,** *ըստ հին քերականների՝ եմ, լինիմ «էական բայի բնութ֊յան խնդիրը», որ կարող է և մի ածական լինել. օրինակ՝ Աշխարհս նիւթեղէն է և նիւթքս՝ որիշ որիշ և ընդ միմեանս հակառակ։*

171. Հայցական հոլովով *դրվում է կրող առարկան կամ ներդործական բայերի սեռի խնդիրը, որ, երբ բայը կրավորականի է վերածվում, դառնում է կրող ենթակա, իսկ ներգործական բայի ենթական այդ դեպքում դառնում է կրավորական բայի սեռի խնդիր, սովորաբար բացառական հոլովով (§ 168)։ Օրինակ՝ Բացին զդուռնն=բացաւ դուռնն։ Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա և եդ ի բանտի=ի Հերովդեայ կալաւ Յովհաննէս, կապեցաւ նա և եդաւ ի բանտի։*

172. *Հայցական հոլովով դրվում են և այն բոլոր պարագայական խնդիրները, որոնք աշխարհաբարում դրվում են ուղղական հոլովով իբրև հայցական (հայցական-ուղղական)։*

ա) **ժամանակի տևողութ֊յան հայցական՝** *իբրև պատասխան ո՞րքան ժամանակ հարցի. օրինակ՝ Եղև անձրև զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։ Ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ։ Ձտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհս Հայոց։ Վառեցան կազմեցան զգիշերն ամենայն։ Ջերկեամ մի կուեալ՝ ոչինչ կարաց ազդել նոցա։ Թող զդա այս ամ ևս։ Այսօր, վաղիւ և յերիր աւուր։*

բ) **Քանակի հայցական,** *իբրև պատասխան ո՞րքան հարցի. օրինակ՝ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս։ Բարձին զնշխարս կոտորոցն եօթն զամբիւղ լի։ Բաժակ մի ջուր ցուրտ (§ 176. 5)։*

գ) **Որակի հայցական,** *իբրև պատասխան ի՞նչպես հարցի։ Այս իրնդիրն անանցողական (կրավորական և չեզոք) բայերի հետ կարող է դրվել և ուղղական հոլովով։ Օրինակ՝ Եւ ամս տասն ստէպ ստէպ զայս օրինակ առաք առեալ աւերէին զամենայն երիվր սահմանացն։ Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս ի վերայ դալար խոտոյ. և բազմեցան դասք դասք։ Արչք օրհասականք ընդ վախճանել չնչոյն երզօրագոյնս կուին։ Ծտես այլս, զի կայիւ դատարկ։*

173. Հայցական հոլովով *է դրվում փոխանակ գործիականի և այն որակական խնդիրը, որ կազմված է խնդրառու բայի հիմքից (բնից) կամ նրա համանիշն է, կամ թե նրա հետ որևէ մերձավոր առնչություն ունի։ Այս խնդրի փոխանակ դրվող դերանունն ևս կարող է հայցական հոլովով դրվել։ Օրինակ՝* Շինէին... և զնոյն զարդ զարդարէին։ Առ հասարակ զմի զինուորութիւն *զինուորեցան։* Զնոյն նահատակութիւն նահատակեցան։ Զմահ *աղուիսու սպանից զքեզ։ Երկեան երկիւղ մեծ։ Կոծնեցեն ի վերայ նորա կոծ։ Զմահ մեռանել։ Ախտանալ զախտ հպարտութեան։ Զմարտ մարտնչել։ Որոց ոչ էին օրէնք երթալ* զնոյն նահապարհ։ *Առաջնորդէր նոցա* զերկայնութիւն *ճանապարհին յերկիրն Հայոց։ Եսաւ պահէր ոխս Յակոբայ վասն օրհնութեանցն, զոր օրհնեաց զնա Իսահակ հայր իւր։ Մշակքն գան հարին զնա։*

174. Ստորոգելիական վերադիր։— *Մի շարք ներգործական բայեր՝ անուանել, կոչել, ասել, առնել, դնել, կարծել, յարդարել, խոստովանել, կարդալ, պահել, կացուցանել, կարգել, ընտրել և այլն. առնում են մի երկրորդ հայցական խնդիր իբրև ստորոգելիական վերադիր։ Այս կրկին հայցական խնդիրը կարող է հոլովով և թվով համաձայնել կրող առարկային կամ հայցական սեռի խնդրին։ Անանցողական (կրավորական և չեզոք) բայերի համար այս խնդիրը դրվում է* ուղղական *հոլովով և կարող է համաձայնել ենթակային, քանի որ կրող առարկան ևս, երբ ներգործական բայը կրավորականի է վերածվում, դառնում է ենթակա։ Օրինակ՝ Երևեցան ամենեքեան* զինեալ *եւ սաղաւարտեալ։ Սիրելիս և բարեկամս կարդայր* զնոսա։ *Արարից* զձեզ որս *մարդկան։ Դոքա յետինքդ մի ժամ գործեցին և հաւասարակորդս մեզ արարեր* զդոսա։ *Արձակեմ զդոսա նօթիս։— Այսու մեծարոյ երեվին առաջնորդք քեշին։ Ջմեծ ոմն իշխան մոգպետ կացուցանէր։ Մեծ ոմն զինքն կարծէր։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն իւր աթոռակից։ Դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէր։ Ստոյիկեանքն... զամենայն ինչ մարմին կարծեցին։*

Այս երկրորդ հայցական խնդիրն առանց զ նախդրի է դրվում. դերանունները միայն՝ զ-ով են գործածվում, օրինակ՝ Թագաւոր զոմն ասեն զնա։ Դու զո՞ առնես զքեզ։

Ստորոգելիական վերադրի կարգին են պատկանում և այսպիսի խնդիրները, օրինակ՝ Ես աւասիկ ախոյեան ելանեմ քեզ։

175. *Առանձնապես պետք է նկատի ունենալ հետևյալ կրկին հայցական խնդիրները։*

1. Հարցանել, ուսուցանել, ազուցանել *բայերն առնում են երբեմն երկու հայցական խնդիր, որոնցից մեկը (անձի անուն) հայցական է դրվում փոխանակ սովորական ձևով տրական կամ բացառական դրվելու. իսկ մյուսը (իրի անուն) կրող առարկան է. օրինակ՝ Ուսուցանէր* զնոսա *(փոխանակ՝ նոցա) առակօք բազում ինչ։ Հարցից* զձեզ *(փոխանակ՝ ձեզ, ի ձէնջ) բան մի։ Ազուցի զքեզ (փոխանակ՝ քեզ) հիր և կարմիր։*

2. Լսեմ, տեսանեմ, թողում, կամիմ, ճշանակեմ, ասեմ, հաճարիմ առնում են երկու հայցական խնդիր, մեկը մի անորոշ կամ անցյալ դերբայ, իսկ մյուսը մի անձի կամ իրի անուն։ Բայը կրավորական սեռի փոխած ժամանակ՝ անձի կամ իրի անունը դառնում է ուղղական ենթակա։ Օրինակ՝ Եւ ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան և զԲզնունեաց և Որդունին անուանեալ, որ աստ ուրեմն յետ սրբոյն Տրդատայ բարձեալ ասին ի միմեանց։ Ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս և զԳնունիս։ Յորոյ անուն և զգաւառն ասեն անուանեալ Շիրակ։

Այս կիրառության փոխանակ սովորաբար գործածվում է երկրորդական նախադասություն դիմավոր բայով։ Այսպես լինում է գլխեն միշտ աշխարհաբարում։ Օրինակ՝ Առ սովաւ ասեն կեցեալ զնաբուգոդոնոսոր (=Ասեն, եթէ առ սովաւ կեցեալ է Նաբուգոդոնոսոր=Ասում են, թե սրա օրով է ապրել Նաբուգոդոնոսորը)։ Աւէին որոտումն լինել (=Ասէին, եթէ որոտումն է=Ասում էին, թե որոտումն է)։ Ասացեր մի՛ ևս լինել բնակիչ ի տեղւոջս յայսմիկ (=Ասացեր, զի մի՛ ևս լիցի բնակիչ=Ասացիր, որ այլևս բնակիչ չլինի այս տեղում)։ Տեսին զնա յարձակեալ ի վերայ նոցա (=Տեսան, որ նա հարձակվել է)։ Տեսի իջանել անօթ ինչ (=Տեսա, որ մի անոթ էր իջնում)։ Զբշնամիսն իմ զայնոսիկ, որք ոչն կամէին զիս թագաւորել (=որոնք չէին կամենում, որ ես թագավորեմ), ածէք այսր և սպանէք։ Ասէին գոգցես յերկրին Հայկազանց զայս լինել (=Ասում էին, թե կարծես Հայկազանց երկրում լինէր այս)։ Ոչ եթող զնա հանապազ խաւն ի խուռն վարել (=Չթողեց, որ նա միշտ խաւն ի խուռն վարվի)։ Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց (=Թող, որ մեռելները թաղեն իրենց մեռելները)։ Ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոխոռունեաց (=Ասվում է, թե նրանից է առաջ եկել...)։ Ասէին զնա այր ընտիր լինել։ Ոմանք ասեն և ի ծնանելն զսա դիպեալ պատահարաց իմն, զոր համարեցան կախարդել զսա կանանց զարմից Աժդահակայ (=Ոմանք ասում են, թե սա ծնվելու ժամանակ էլ հանդիպել է ինչ որ պատահարքի, որ համարեցին, թե Աժդահակի զարմերի կանայք կախարդել են սրան)։ Ասի ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհին Հայոց (=Ասի, եթէ... ոչ գտանէր)։ Կամիմ զձեզ իմաստունս լինել (=Կամիմ, զի դուք իմաստուն լիջիք)։

176. Սեռական և տրական հոլովներն ընդհանրապես նույն գործածությունն ունեն, ինչ որ աշխարհաբարում։ Պետք է նկատել հետևյալ առանձնությունները։

1. Տրամաբանական ենթական անորոշ դերբայի հետ՝ դրվում է տրական հոլովով. ըստ այսմ, ուրեմն, նախորդ պրակում (§ 175. 2) բացատրված խնդիրները դրվում են սովորաբար տրական. օրինակ՝ Զկնի այսորիկ դառնալ ասէ Հայկին (=ասէ, եթէ դառնայ Հայկ)։ Ոչ

կամիմք թագաւորել դմա (=ոչ կամիմք, զի թագաւորեսցէ դա)։ Աղաչեցաք չելանել նմա յերուսաղէմ (=աղաչեցաք, զի չելցէ նա յերուսաղէմ)։ Եկեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ (=...աւուրք, զի ցանկասջիք դուք)։ Չկայր յոյս այլում զաւակի ելանելոյ (...յոյս, զի այլ զաւակ ելցէ)։ Ակն ունէին նմա այտնելոյ կամ մեռանելոյ։ Գրեցեր դուս աւ իս գալ ինձ առ քեզ։ Վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի։— Յանցանել ես ընդ անապատն (=յանցանել քում...)։

Տրականն անորոշ դերբայի հետ՝ կարելի է որոշ դեպքերում նաև գլխավոր նախադասության մեջ մի բառից կախված համարել իբրև խնդիր. օրինակ՝ Պատ է ինձ գնալ։ Եղև անցանել նմա ընդ արտորայն։ Ջիա՞րդ մարթ է այդմ լինել։ Լաւ է առն միում մեռանել ի վերայ ժողովրդեանն (§ 77. 80)։

2. Շիջուցանել կամին զկայծակն որ մնայ իմ (փոխ. ինձ)։ Արծաթն որ կորեաւ ես։ Մանուկ ծնաւ մեր։ Դոքա զի՞նչ են ես (փոխ. քեզ Ընկեր հաւասար նորին։

3. Ցաւիմ բայի եզակի 3-րդ դեմքի հետ՝ ցաւի կամ ցաւէ, ցաւէր, ցաւիցէ կամ ցաւիցի, ցաւեաց, ցաւեսցէ կամ ցաւեսցի ինձ, ես, նմա, մեզ, ձեզ, նոցա ևլն=ցավում եմ, ցավում ես, ցաւում է ևլն. կամ սիրտս (դ, ը), մի տեղս (դ, ը) ցավում է։ Օրինակ՝ Հարկանէին զիս և ինձ ոչ ցաւէր (=և ոչ մի տեղս չէր ցավում)։ Տանջեցեր զնոսա և նոցա ոչ ցաւեաց։ Ցաւեաց ձեզ վասն իմ (=ցավեցիք, ձեր սիրտը ցավեց...)։ Ջիք ոք ի ձէնջ, որում ցաւէր վասն իմ (=որ ցավեր, որի սիրտը ցավեր...)։ Ցաւեաց նմա վասն անկելոցն ի հուր։

4. Բացառականի կամ գործիականի փոխանակ տրական։ Օրինակ՝ Վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն։ Նա խուլ է և կոյր և դիւաց Հարամանոյ խաբեալ (=աշխարհաբար՝ դևերի խաբած է)։

5. Քանակի կամ մասնական սեռական։ Օրինակ՝ Բեռն մի փայտի =Բեռն մի փայտ (տե՛ս § 172. բ. Բաժակ մի ջուր)։ Հինգ նկանակ հացի։ Հարիւր մար ձիթոյ։ Գրիւք երեք ալեր։ Լիտր մի իւղոյ։ Տիկ մի գինւոյ։ Ափ մի գարւոյ։ Հինգ հազար սիկղ պղնձոյ և երկաթոյ։ Կաթ մի ջրոյ։

Այս կապակցությունները հոլովվում են՝ ափոյ միոյ գարւոյ (=աշխ. մի ափ գարու). տկաւ միով գինւոյ (=աշխ. մի տիկ գինով). բայց երբեմն սեռականն ևս՝ առնվելով իբրև ածական՝ հոլովվում է անվան հետ միասին. օրինակ՝ Պատառով միով հացիւ. բեռամբ միով փայտիւ։ Այսպես նաև՝ յօրէ ծննդենէ. ի ծագաց երկրէ. յորդւոց ի մարդկանէ. յամբոխէն բազմութենէ. միամտութեամբ սրտիւ. ընկալցուք խնդութեամբ սրտիւ. հեղմամբ արեամբ արդարացաւ ի մարդկանէ հրնարողութենէ։ Փոխանակ՝ պատառով միով հացի. բեռամբ միով փայտի. յօրէ ծննդեան. ի ծագաց երկրի. յորդւոց մարդկան։ Յամբոխին բազմութենէ կամ յամբոխէն բազմութեան. միամտութեամբ սրտի կամ

սրտիւ միամտութեան. խնդութեամբ սրտի. հեղմամբ արեանն: ի մարդկան հնարողութենէ (§ 189. ծան. 2):

Այս կարգին պատկանում են նաև՝ բիւրս ամաց, հազար մի հնծեւոց, բազումս ամաց ևն. փոխանակ՝ բիւր ամս, հազար մի հնծեալք, բազում ամս: Նոյնպես՝ զվնասակարս խոտոց, զմնծամնծս հրամանացըն, զընտիրս շիրմաց, յետինքն ոչխարացն, ո՛վ մեծդ դիւցազանց, յայլս արարածոց ևն. փոխանակ՝ զվնասակար խոտս, զմնծամնծ հրամանս, զընտիր շիրիմս, յետին ոչխարքն. կամ թե՝ զվնասակարս ի խոտոց, զմնծամնծս ի հրամանաց, զընտիրս ի շիրմաց, յետինքն յոչխարացն, մեծդ ի դիւցազանց (=աշխ. խոտերի վնասակարները, խոտերից վնասակարները, խոտերի մեջ վնասակարները): Նոյնպես՝ ի վերայ միոյ լերանց (=լեռներից մեկի վրա): Երկուս մանկունս ոմն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն (=ուրումն ի դայեկաց=դայակների կամ դայակներից մեկի ձեռքով): Անգամ իւրեանց ումեք ոչ խնայէին (=իրենց մեկին, իրենցից մեկին անգամ չէին խնայում): Ի միում աւուրց (=օրին մեկը):

177. Բացառական և գործիական հոլովներն ընդհանրապես նոյն կիրառութիւնն ունին, ինչ որ աշխարհաբարում: Նկատելի է հետևյալը՝ **ճանապի իմաստով** (§ 172 բ.). օրինակ՝ Արար Նոյ յերեքհարիւր կանգնոյ զերկայնութիւն տապանին և ի յիսուն կանգնոյ զլայնութիւնն (=երեք հարյուր կանգուն... հիսուն կանգուն): Բարձրութիւն Գողիաթու (էր) վեց կանգուն և թզաւ եմմաւոն հեռի էր յերուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ (=հարյուր վաթսուն ասպարես): Նստաւ արտաքոյ բանակին հեռի երկոտասան հրասախաւ (=տասներկու հրասախ հեռու):— Այսպես և Հռոմայեցի յազգէ կամ ազգաւ (=ազգի կողմից կամ ազգով հռոմայեցի): Ժամէ ի ժամ, տանէ ի տուն, ամ յամէ=ժամեժամ, տնետուն, տարեցտարի:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

178. Անորոշ դերբայը գոյական է և նույն նշանակությունն ունի, ինչ որ նույն բնից կազմված բայական անունը. օրինակ՝ յապաղել=յապաղանք, զարմանալ=զարմացումն, երթալ=երթ: Յաղագս երթալոյն Աբգարու յարևելս: Երթ մեծին Սահակայ ի Տիսբոն:

Դա իբրև դերբայ առնում է նույն խնդիրները, ինչ որ համապատասխան բայը (դիմավոր բայը), օրինակ՝ Յաղագս թագաւորելոյ Վաղարշայ և շինելոյ զաւանն Բասենոյ, և պատել պարսպաւ զնոր քաղաքն:

179. Պետք է նկատի ունենալ՝

1. Անորոշ դերբայն իբրև բայանուն՝ կարող է և հոդն առնել, բայց հաճախ անհոդ է գործածվում այն դեպքերում, երբ աշխարհաբարում

այդ դերբայը հոդ ունի, օրինակ՝ թագաւորել Արշակայ և որդւոցն=Արշակի և իր որդիների թագավորելը։ Թագաւորեցուցանել զվաղարշակ Հայոց աշխարհիս=Վաղարշակին մեր Հայոց աշխարհի վրա թագավորեցնելը։ Խաղալն Արտաշիսի յարևմուտս և ձերբակալ առնել զԿրիւսոս և աւարել ընձեռել Հայոց զպատկերս կռոցն։

2. Անորոշ դերբայը գործածվում է բոլոր հոլովներով ու նախդիրներով՝ նայելով իր խնդրառու բառի պահանջին, օրինակ՝

Ուղղական ենթական՝ կաւ է ոչ ուտել միս։ Անդ էր տեսանել կոտորած անհնարին։

Սեռական՝ Վասն տնկելոյ զանտառն, որ կոչի ծննդոց։

Տրական՝ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Ներգոյական և գործիական՝ Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց։

Հայցական՝ Սմբատ հրամայէր զփողսն պղնձիս հնչեցուցանել։

Բացառական՝ Զայն առ ի լսելոյ գիտեմք։

3. Անորոշ դերբայը հաճախ անփոփոխ ձևով դառնում է խնդիր այնպիսի բայերի, որոնք սովորաբար ուրիշ հոլովով են պահանջում իրենց խնդիրը, օրինակ՝ երկնչել յիմեքէ=վախենալ մի բանից, բայց՝ երկեաւ երթալ անդր=վախեցավ գնալ այնտեղ։ Ես կերակուր ունիմ ուտել=կերակուր ունիմ ուտելու։ Մեք զցաւոց և զմահուան բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել։ Իշխանութիւն ունիմ արձակել զքեզ։ Եկն տեսանել (=եկն ի տեսանել=եկավ տեսնելու)։ Աճապարէր հասանել=աճապարում էր հասնելու։ Եկեալ նստաւ զՇրէշ բլրով... կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի։

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

180. Բառերի շարադասությունը նախադասության մեջ՝ ընդհանրապես ազատ է, ինչպես և աշխարհաբարում։ Պետք է դիտել հին և նոր լեզուների հետևյալ տարբերությունները։

181. Գրաբարում, մանավանդ պատմելիս, բայը հաճախ դրվում է ենթակայից առաջ, շատ անգամ նույնիսկ խոսքի սկզբում, մինչդեռ աշխարհաբարում սովորաբար ենթական բայից առաջ է բնկնում և բայը հաճախ նույն խոսքի վերջն է դրվում։ Օրինակ՝ Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից։ Ապա կոչեաց թագաւորն Պարսից զդիւթն և զաստեղագէտսն։ Պատասխանի ետ Պարթևն։ Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից։ Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս լուաւ զայս ամենայն թագաւորն։

182. Վերադիր ածականները դրվում են անունից և առաջ և հետո, օրինակ՝ բաջ այր, այր քաջ։

183. Սեռական *խնդիրը կամ* **հատկացուցիչը** *սովորաբար իր խընդրառու անունից հետո է դրվում, բայց կարող է և առաջ դրվել. օրինակ՝ Յաշխարհս Հայոց. ի Հայոց աշխարհս։ Սկիզբն չարեաց. չարեաց սկիզբն։*

184. *Սովորաբար իրենց խնդրառուից հետո են դրվում և մյուս բոլոր կողմնակի խնդիրները, ինչպես են՝ դերբայների, բայական անունների, թվականների և թիվ ու քանակ ցույց տվող այլ բառերի լրացումները. օրինակ՝ Յաղագս յարձակելոյ Տիգրանայ ի վերայ զօրացն Հռոմայեցւոց։ Դիմումն ի մեզ Պոմպէի։ Խաղալն Արտաշեսի յարևմուտս և ձերբակալ առնել զԿրասոս։ Մի ոմն ի ձէնջ։ Զայնու ժամանակաւ ապըստամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա։*

Աշխարհաբարում խնդրառուն է հետո դրվում, ինչպես Հռոմայեցոց զորքի վրա Տիգրանի հարձակվելու մասին։ Զեզնից մեկը։

185. *Բացասական խոսքերի մեջ* **ոչ, մի՛** *մակբայները կարող են բայից բաժանվել. օրինակ՝* **ոչ** *ընդ նովին օրինօքն* **մտանէին։ Մի՛** *այսուհետև հոգայցէք վասն վաղուի։ Մի՛ դու ընդ իս բազմապատիկ տանջիր և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն (§ 32)։*

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

186. Ենթակայի *և բայի համաձայնությունը նույն կերպ է լինում, ինչպես և աշխարհաբարում։ Պետք է դիտել հետևյալ տեսակի համաձայնությունները, որ կան և մեր նոր լեզվի մեջ։*

1. Երբ բազմակի ենթակաները ցույց են տալիս մի ընդհանուր գաղափար, բայը դրվում է եզակի, օրինակ՝ Դողումն և սոսկումն ունի զարարածս (աշխարհաբար՝ ահ ու դողը բռնեց)։

2. Երբ եզակի ենթական հավաքական նշանակություն ունի, բայը կարող է դրվել նաև հոգնակի, օրինակ՝ Առհասարակ ատեանն աղաղակէին։ Ի բառնալ ազգին Արշակունեաց՝ **տիրեցին** *աշխարհիս Հայոց* **ազգըն** *Սասանայ պարսկի։ Դիզեալ կային ամբոխն։*

3. Երբ անեզական անունները ենթակա են, լինին եզակի թե հոգնակի նշանակությամբ առնված, բայը սովորաբար դրվում է հոգնակի. երբեմն միայն եզակի է դրվում, երբ անունը եզակի իմաստով է առնվում. օրինակ՝ Եղիցին կամք քո։ Տեսին աչք իմ։ Հոգւոյ և մարմնոյ միտք են կառավար։ Բարք մարդկան հակառակասէր է։ Ձի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս (§ 85)։

187. Ստորոգյալն *ու* **ստորոգելիական վերադիրը** *սովորաբար եզակի են դրվում. բայց կարող են նաև թվով համաձայնել հոգնակի ենթակայի հետ. օրինակ՝ Դուք ամենեքեան եղբարք էք։ Վարդապետք էիք, արդ աշակե՞րտք լինիցիք։ Դուք եղերուք պատրաստք։ Հինգ ի նոցանէ յիմարք էին և հինգն՝ իմաստունք։*

Ստորոգելիական վերադրի համաձայնության մասին տե՛ս § 174։

188. *Եթե ստորոգյալն անեզական անուն է և բայից անմիջապես առաջ է դրված, եզակի ենթակայի բայը հոգնակի է դրվում. օրինակ՝ Միս ուտել, ասեն, մեղք են=Միս ուտելն, ասում են, մեղք է։ Պատուէրն այն կեանք են։ (§ 85)։*

189. *Նախադաս ածականները թվով և հոլովով սովորաբար չեն համաձայնում իրենց դոյական անունին, իսկետադասները սովորաբար համաձայնում են։ Օրինակ՝*

ա. Նախադաս անհամաձայն,—Ճառագրեմք զբազում Հարուածոն։ Առաքեաց առ նա բազում գանձիւք։ էր զոր չարաչար մահուամբ վախճանէր։ Ոչինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութեան։ Յետ երկոտասան աւուր։ Տասն կուսանաց։ Երկո՝ աւուրբք Այս ամենայն չարիք։ Զայս նախարարքս։ Յարքունի տանէ։ Գեղեցիկ վիմօք։

բ. Նախադաս համաձայն.—Վասն մեծի յուսոյն։ Վիճակս արկանէին, թէ ո՛ր լեզու որո՛ւմ դասու հասցէ յաշակերտութիւն։ Այսպիսեաց իրաց։ Ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք։ Մերոյ ազգիս։ Այսու բարեմտութեամբ։ Ընդ նովին օրինօք։ Չորս զինուորսն. չորից զինուորացն։ Հինգ այր. հնգի առն. հնգից արանց։ Չերկուս աւուրս, երկուց աւուրց։ Նորոյ ուխտի ։

գ. Ետադաս համաձայն,—Արք պարսիկք։ Արջք օրհասականք։ Տերանց ձերոց մարմնաւորաց։ Բանիւք սպառնալեօք։ Յլուք սպիտակօք։ Ընդ օրինօք քովք։ Հայր իմ, հօր իմոյ, հօր իմում, ի հօրէ իմմէ։ Արք երկու, արանց երկուց։ Առն իմաստնոյ։ Ժամանակս բազումս։ Բազում գործս բարիս։ Հոգովք աշխարհականօք։ Բոլորով սրտիւ իմով։ Յիւղոյդ ձերմէ։ Ամացն քառասնից։ Ջմայրեաւքն տնկելովք էր։ Կոտորած զօրացն հարելոց։

դ. Ետադաս անհամաձայն,—Հրամանաւ արքունի։ Արք հինգ, զարս հինգ. արք վեց, արս վեց ևլն։ Հարքն մեր։ Լապտերքս մեր։— Այսպես միշտ ետադաս քանակական և ստացական ածականները հոգնակի ուղղական և հայցական հոլովների հետ։

Ծան. 1. *Որեար, մանկտի, մարդիկ ևլն. ձևով եզակի են, իսկ իմաստով հոգնակի. դրանց ածականները համաձայնում են ըստ իմաստի՝ Յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցուռեղոցն դադարեալ բնակէին։ Մարդկանն մոլորելոց։ Բայց և՝ մարդկանդ այդմիկ. մանկտոյ իմում։*

Ծան. 2. *Հին մատենագիրների սիրած Ճարտասանական ձևերն են՝ ածականի փոխանակ գործածել նրանից կազմված վերացական անունը՝ 1) Իբրև սեռական խնդիր. 2) Խոսքի իմաստի պահանջած հոլովով, իսկ բուն անունն՝ իբրև վերացական անվան սեռականը։ Օրինակ՝ Ծառայք ամբարշտութեան (փոխանակ՝ ծառայք ամբարիշտք)։ Պաշտօն պղծութեան։ Յերգս և ի կաքաւս լկտութեան։ Խնդութեամբ սրտիւ (այս համաձայնության մասին տե՛ս § 176. 5)։ Յո՞ թափեցից զդառնութիւն քիւնից, կամ ո՞ւր բացատրեցից զբազմութիւն նետից։ Յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոցն (տե՛ս § 176. 5 վենասակարս խոտոց)։*

190. *Բացահայտիչն իբրև գոյականի վերադիր, լինի բացահայտյալից առաջ թե հետո դրված, սովորաբար թվով և հոլովով համաձայնում է իր բացահայտյալին։ Տեղերի հատուկ անունները միայն, եթե նախադաս են (երբեմն և ետադաս ժամանակ) սովորաբար անփոփոխ են մնում։ Օրինակ՝ Արշակ արքայ, Արշակայ արքայի, յԱրշակայ արքայէ, Արշակաւ արքային։ Սպարապետն Վարդան, սպարապետին Վարդանայ ևլն։ Ապար աշխարհ, Ապար աշխարհի, յԱպար աշխարհէ ևլն։ Տիսպոնի քաղաքի։*

ՀՈԴԵՐ

191. *Գրաբարի հոդերն են՝* ս, դ, ն, *որոնք գործ են ածվում՝*

1. Յուցական *իմաստով՝ իբրև* այս, այդ, այն. *օրինակ՝ տեղիս=այս տեղի, տեղիս այս. տեղիդ=այդ տեղի, տեղիդ այդ. տեղին=այն տեղի, տեղին այն։*

2. Դիմորոշ *իմաստով, ինչպես և աշխարհաբարում,* ես, դու, մեք, դուք, *բառերի նշանակությամբ. օրինակ՝ Մի՛ հեղգասցուք մեղաւորքս (=Մենք մեղավորներս)։ Օգնեա՛ ինձ միայնումս։—Այլ և կոչականների հետ՝ Լուարո՛ւք ինձ, զօ՛րքդ ամենեքեան։ Սիրեցեա՛յդ իմ։*

3. Ստացական *իմաստով, ինչպես և աշխարհաբարում՝* իմ, ըո, իւր, մեր, ձեր, իւրեանց, նորա, նոցա *բառերի նշանակությամբ, որոնց հետ և սովորաբար գործ են ածվում։ Օրինակ՝ եթէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի։ Յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն։ Կենդանի ես և շունչդ ի քեզ է։ Ի քում ականդ գերան կայ։ Ձմեր վատթարութիւնս յո՞ տարայց։ Մերոյ ազգիս։ Աշխարհս Հայոց։ Ձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճշմարտութիւն երևելի մերոց դիւցազնական օրինացս։ Հաւասար իմոց սիրելի նախարարացս։*

192. *Գոյականաբար գործածված ածականներն ու սեռականները, որոնց անունը զեղչվում է, ստանում են, ինչպես աշխարհաբարում, սովորաբար ն, երբեմն ս, դ հոդերը և անվան նախդիրը։ Այսպիսի ածականները դրվում են իրենց գոյականի հոլովով, իսկ սեռականները միայն ուղղական և հայցական հոլովներով են գործածվում, երբեմն միայն՝ հոգնակի թվով։ Օրինակ՝ եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն (=ընդ փայտ չոր) զի՞նչ լինիցի։ Հոգայ զաշխարհիս (=աշխարհիս բանները)։ Ջքոյսն ի քոյոց քեզ մատուցանեմք։ Ջնոցայն լաւ վարկո ցեալ, քան զիւրն փրկութիւն։ Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան։*

193. *Առանձնապես դիտելու է, որ դերանունների սեռականները (որոնցից իմ, քո, մեր, ձեր, իւր ստացական ածական են. § 101. 6. 7) լինում են՝*

Իմ, իմն, իմս, իմք, իմոյք, յիմսս=իմոյական, իմայինն, իմոյին=իմը, իմս, իմինը, իմոնք։

Քո, քոյն, քոյդ, քոյքն, զքոյսն=քոյական, քոյին=քոնը, քոնդ, քուկդ, քոնոնք։

Իւր, իւրն, իւրքն, յիւրսն=իւրական, իւրային (իւրայոցն, յիւրայոց, իւրայովք)=իրը, իրենը, իրականը, իրայիններըը։

Մեր, մերս=մերային (մերայնոց), մերոյին, մերոյն=մերը, մերոնք։

Ձեր, ձերդ=ձերային (ձերայնոց), ձերոյին=ձերը, ձերոնք։

Իւրեանց, իւրեանցն, զիւրեանցն, իւրեանցքն, յիւրեանցն=իւրեանցային=իրենցը։

Սուրայս, դորայդ, նորայն. սոցայն, դոցայն, նոցայն (Հոլովումը տե՛ս § 101. 7)=սրանը, դրանը, նրանը ևլն։

Նաև. երբ ա և ո վերջացած բառերի վրա հոդ է դրվում, հոդից առաջ մտնում է յ. քոյդ, նորայն։ Եղիցի ձեր բան՝ այոյն այո և ոչն ոչ։

194. Որ, որ ինչ, որ ոք, որպէս, որպիսի, որչափ, յորժամ, յորմէ հետէ, ուր, մինչ, զի *(նախադաս)* բառերով սկսված երկրորդական հարաբերական խոսքերի մեջ առաջին շեշտված բառի, գլխավորապես բայի վրա դրվում է ս, դ, և հոդերից մեկը։ Ս հոդը նշանակում է այս դեպքում՝ ես, մեք. սա, սոքա, այս, այսոքիկ. աստ, այսր. այժմ, այսօր.— դ, հոդը նշանակում է՝ դու, դուք. դա դոքա, այդ, այդոքիկ. այդր, յայդմ ժամու. և յոդը՝ նա, նոքա, այն, այնոքիկ. անդ, անդր. յայնժամ։ Երբեմն էլ ստանում են աւասիկ, աւաղիկ, աւանիկ ցուցականների իմաստը։

Հոդերն այսպես գործ են ածվում ավելի այն ժամանակ, երբ հարաբերյալը հարաբերականից հետո է գալիս (§ 232. 2), կամ երբ հարաբերյալն անձնական կամ ցուցական դերանուն է և զեղչված է։ Բայց երբեմն հարաբերյալի չզեղչված ժամանակն ևս ավելադրությամբ գործածվում են այս հոդերը՝ խոսքին ուժ տալու համար։ Աշխարհաբարում այս դեպքում երբեմն կրկնվում է հարաբերյալը։ Օրինակ՝ ես որ կոչեցայս անմահ, ահաւասիկ... (=ես, ես որ անմահ կոչվեցի, ահա՛...)։ Ես եմ որ խօսիմս ընդ քեզ։ Զի ասէքդ՝ բարիոք ասէք (=Այդ որ ասում եք, լավ եք ասում)։ Ոչ ոք կարէ զայդ նշանս առնել, զոր դուդ առնես։ Բանիցդ առասպելաց... զոր ոչդ վայել է քեզ խօսել։ Ոչ գիտեմ՝ զինչ խօսիսդ։ Գիտէ՞ք՝ զինչ արարիդ ձեզ։ Արարին՝ որպէս ո՛սանն։ Ապաքէն արարեր զվատտական, զոր ինձն վաստակեցեր։ Եւ որ սպառնասդ ինձ մահու, ահա՛ խառնես զիս ի փունդն։ Այլ զոր դուդ կոչես մեծ Անահիտ տիկին... Որ ասացերդ թէ... Զոր ասացերն թէ... Եւ մինչդեռ կայրն կախեալ այսպես, խօսեցաւ զայս ամենայն։ Դու աստէն իսկ աշխատեա՛ց ի մշակութիւն տանջանացդ, յորում կասդ։ Երանի երկրին, ընդ որ նա՛յն անցանիցէ, և տեղւոյն, ուր նա՛յն վախճանեսցի։ Պետրոս և որ ընդ նմայն էին։ Ուր եսն իցեմ, և դուք անդ իցէք։ (Տե՛ս § 30. 3)։

195. *Հարցական խոսքերի մեջ ևս երբեմն բայի կամ ուրիշ բառի*

վրա դրվում է ս, դ, և հոդերից մեկը, որ և աշխարհաբար թարգմանվում է այս, այդ, այն ցուցականներով. օրինակ՝ Զի՞նչ խօսիդ=Այդ ի՞նչ ես խօսում։ Զիա՞րդ երկնչիդ ի սատանայէ=Այդ ի՞նչպէս վախենում ես սատանայից։

196. Որոշող և հոդի գործածությունն աշխարհաբարում և գրաբարում մեծ մասամբ նույնն է։ Ուշադրության պիտի դարձնել հետևյալ տարբերությունների վրա.

1. Սովորաբար որոշող հոդ չեն առնում ընդհանուր իմաստով, իբրև սեռի անուն, գործածված անունները, մանավանդ երբ հոդնակի են. բայց երբ հայցական են, զ նախդիրն առնում են։ Անհոդ են մընում նույնպես և բնության մեջ մի հատ առարկաների անունները՝ լուսին, արեգակն, երկիր, երկին, աշխարհ, հիւսիս, հարաւ ևլն. նոյնպես և դժոխք, սատանայ, Դիր (=սուրբ Դիրք). ազգերի անունները, երբ հոգնակի են. հատուկ անունները, այլև՝ ծով, ցամաք, տէր, աստուած (քրիստոնեական իմաստով), հաճախ և արեայ բառը ևլն։ Օրինակ՝ Գինի (=գինին) ուրախ առնէ զմարդ և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։ Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստութիւն։ Զայնր զփորձ ոչ միայն բրիստոնեայք, այլ և հեթանոսք և մոգք գիտեն։ Հրեայք ի ղուր ակնկալութիւն կապեալ են։ Մի դանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն և ուր գողք ական հատանեն։ Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք և յորժամ կամիք կարող էք առնել նոցա բարիս։ Օդ ընդ ջուր և ընդ երկիր խառն է։

2. Եթե հատուկ անունն ունի առաջից մի ածական վերադիր կամ հասարակ անուն բացահայտիչ, այդ ածականն ու հասարակ անունն առնում են ն, կոչականում դ հոդը։ Իսկ եթե ածականը կամ հասարակ անունը հատուկ անունից ետադաս են, երկուսն ևս, խնդիրն և խընդրառուն, սովորաբար անհոդ են մնում. օրինակ՝ Մեծն Ներսէս, սէգն Տրդատ, թագաւորն Տրդատ, գետն Տիգրիս, քաղաքն Տիզբոն, քա՛ջդ Թէոփիլէ,— Ներսէս Մեծ, Տրդատ թագաւոր, Երասխ գետ։ Նույն ձևով՝ արեգ ամիս, շուշան ծաղիկ, եղևին ծառ. բայց՝ ամիսն արեգ, ծաղիկն շուշան, ծառն եղևին։

3. Եթե անունն ունի որոշող սեռական վերադիր, սովորաբար միայն սեռականն է հոդ առնում. երբեմն սակայն երկուսն ևս՝ սեռականն ու իր անունը՝ հոդ են առնում։ Բայց երբ սեռականը հատուկ անուն է, հոդը սովորաբար դրվում է միայն խնդրառու անվան վրա։ Երբ վերադիր է իմ, քո, մեր, ձեր, իւր, իւրեանց, նորա, նոցա բառերից մեկը, կամ մի ազգի անուն, դրանց խնդրառու անունն կարող է և հոդ առնել կամ բնավ անհոդ մնալ։ Օրինակ՝ Եղև պատճառ մահուան մարդոյն։ Կինն Գնելայ հասեալ առ սուրբն Ներսէս՝ գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարտ կորուստն։ Մի՛ գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո, որպէսզի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ։ Ի նախարարսն Հա-

յոց անկանէր թագաւորութիւնն։ Այրուձին Հայոց։ Թագաւորն Հոնաց։ Ի բառնալ ազգին Արշակունեաց։ Ազգն Սասանայ պարսկի։

ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

197. Գրաբարի կապերը դրվում են իրենց գոյականից առաջ, ուստի կոչվում են նախդիր կամ նախադրություն. նախդիրներն են՝ զ, ի(յ), ց, առ, ընդ, ըստ, իբրև զ, քան զ, մինչև, բաց կամ բայց, հանդերձ, վասն։

198. Նախդիրների կիրառության համար ընդհանրապես պետք է իմանալ.

1. Կողմնակի խնդիրներն իրենց խնդրառուի հետ առնվում են իբրև մի միություն. ուստի նախդիրը դրվում է նախադաս կողմնակի խնդիրներից ամենից առաջ. նույնիսկ եթե կողմնակի խնդիրը մի նախդրով չ սկսվում, նրանից առաջ ընկնում է խնդրառուի նախդիրը։ Օրինակ՝ Այս արդարացուցանէ զանգիր հին առացեալ զոյցս։ եւ զընդ լծով կացեալսս (=զկացեալսս ընդ լծով) լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց։

2. Նախդիրը կարող է կրկնվել նախադաս ու ետադաս ածականի և իր գոյականի, ինչպես և կողմնակի խնդրի և իր խնդրառուի վրա, մանավանդ երբ կողմնակի խնդիրը որևէ բառով բաժանված է իր խընդրառուից։ Օրինակ՝ Ի լերինս յայսմիկ։ Լսել... զիւրոյ թագաւորին զանարգանս։ Զամենեցունց զկարգեալ թոշակն նուազեցուցանէին։ Զչէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց։ Յափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածս։ Չունաց աշխարհն և զՀոռոմոց քաջ գիտեմ։ Յամենեսին ի ձեզ։ Ընդ ձեզ ընդ ամենեսեան։ Ընդ գետն մեծ ընդ Կուր։ Չողջոյն բերեալ զմեծ թագաւորին։ Զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականին։ Աբէլ ի հարազատէն սպանանի յեղբօրէն։ Ի պատուիրանաց յայսցանէ ի փոքունց։ Ոչ զիջանելն ոք տեսանէ զնորա, և ոչ զամբառնալ։ Ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ զմի (§ 156. 2)։

3. Նախդիրները մեծ մասամբ ունեն մի քանի նշանակություն և գործ են ածվում մի քանի հոլովների հետ՝ ձևափոխելով նրանց հոլովական իմաստը։ Երբեմն, սակայն, միայն ավելի որոշում են հոլովների իմաստը որ հոլովներն առանց նախդրի էլ ունեն։

Զ

199. Զ նախդիրը բառին կպած է գրվում։ Բաղաձայնից առաջ արտասանվում է ըզ. ձեռագրների մեջ գրվում է նաև զը, ինչպես արտասանում էին հին վարդապետները,—զմարդ=ըզմարդ, զըմարդ։

200. Զ հայցականի հետ դրվում է, երբ հայցականը որոշյալ է և սեռի անուն է, հաճախ և երբ տեսողության հայցական է (տե՛ս § 83. 137, 1. 171—173. 196. 1)։

201. Զ տրականի հետ *խնդրում են մի քանի բայեր՝ հարկանել, զարկանել, զարկուցանել, անկանել։ Աշխարհաբար թարգմանվում է տրական կամ գործիական հոլովներով. օրինակ՝ Հարկանեմ զքարի, զվիմի, զգետնի (=քարի զարնել, քարովը տալ)։ Յետս յետս չոգան և զարկան զգետնի (=գետնին զարնվեցան, գետնովը դիպան)։ Մափ գծափի հարկանեմ (=ծափ ծափի տալ)։*

Նկատել հետևյալ դարձվածները՝ զահի, զերկիւղի, զամօթի, զդողման հարկանիմ։ Զագահութեան, զսխտի հարկանիմ (ինչպես աշխ. մեկի սիրուն ղարնվել)։ Զդիմի հարկանիմ ումեք։

202. Զ բացառականի հետ, *որ կոչվում է պատմական հոլով, նշանակում է՝ մասին, վրա, համար (=վաեն, յաղագս, ի մասին), կամ թարգմանվում է լոկ բացառական հոլովով։ Խնդրում են՝*

1. Այն բայերը, որոնք նշանակում են՝ ասել, պատմել, մտածել. ինչպես՝ խորհիմ, զրպարտեմ, ամբաստանեմ, վկայեմ, ճառեմ, գրեմ, հարցանեմ, հոգամ, փոյթ ունիմ, անփոյթ առնեմ, տրտնջեմ, քրթմնջեմ, խէթ ունիմ,—այլ և գոհանամ, կարօտիմ։ Օրինակ՝ Հարցանելով եհարց զմէնջ (=մեզնից, մեր մասին)։ Ոչ է փոյթ քեզ զումեքէ։ Խորհուրդ արարին զնմանէ։ Եղբայր քո ունի խէթ ինչ զքէն։ Դու ուստի՞ դիտես զայդպիսի բանս խօսել զտեառնէ։ Գոհանամ զքէն։ Քանի՞ ամբաստանեն զքէն։ Ասիցեն զամենայն բան չար սուտ զձէնջ։

2. Ունիմ, կալնում, ձգեմ, առնում, բուռն հարկանեմ,—կապեմ, կախեմ, կախեալ կամ և այլ բայերր։ Աշխ. բացառական հոլով. օրինակ՝ Կալաւ զձեռանէ նորա (=ձեռիցը բռնեց)։ Բուռն եհար զնոցանէ։ Գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն (=ավետարանից կապեց)։ Չնա կախեցին զփայտէ։ Կախել զմիոյ ոտանէն։ Թուր զգօտւոյ (=գոտուցը կախ)։

3. Առաքեմ, յղեմ, արձակեմ (=մարդ ուղարկել), գնամ, երթամ, դեսպան առնեմ ևլն. գումեքէ, զիմեքէ=մեկի ետևից գնալ, ուղարկել (կանչելու. բերելու համար. կամ գնալ, ուղարկել մի բանի (բերելու համար)։ Օրինակ՝ Առաքեաց Շապուհ ի Հայս արս զիռոյ եւ զջրոյ (=հողի ու ջրի) և ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն (=ինչի որ ուղարկել էր)։

203. Զ գործիականի հետ, *որ կոչվում է պարառական հոլով, նշանակում է.*

1. Տեղի իմաստով՝ շուրջը, շուրս կողմը, շուրս բոլորը. կամ՝ կողմը. վրա. մոտերը։ Օրինակ՝ Մի ումն ի նոցանէ, որ զնովաւն կային։ Խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք։ Ամենայն ժողովուրդն զծովեզերբն ղցամաքն ունէին։ Եղեն դիակունք նոցա իբրև աղբ զճանապարհաւ։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմակռնօքն։

Երբեմն ավելանում է շուրջ մակբայը. օրինակ՝ Ժողովուրդն շուրջ զնովաւ նստէր։ Հայեցաւ շուրջ զիւրև (=նայեց իր շուրջը) Յամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

2. Ժամանակի իմաստով՝ մոտերը (շուրջ), ժամանակները: Օրինակ՝ Զինն ժամու (=ժամը իննի մոտերը,—շուրջ ինը ժամին)։ Եւ ելեալ վերստին ժամու՝ ետես այլս, զի կային դատարկք ի հրապարակս։ Ձմէջ գիշերաւ։ Զայնու ժամանակաւ։

3 Հետևյալ բայերն առնում են զ-ով գործիական խնդիրներ, որ աշխարհաբար թարգմանվում են կա՛մ գործիական, երբեմն և ուրիշ հոլովով, կա՛մ վրա, վրայով բառերով,—եմ, լինիմ, գամ, առնեմ զիւիք =մի բանով լինել (անել), մի բանի հետ լինել, զբաղված լինել. օրինակ՝ Մինչ նոքա զաղմկաւն էին, զայնու լինէին, գային։ Զրանիւք առնել զոք (=մեկին խոսքի բռնել, խոսքով անել)։ Ամենայն պակասութիւնքդ զինև (=իմ վրա, իմ վզիս)։ Զբաղիմ զիւիք։ Ձմիմեամբք (=իրար վրա) ելանել, դիզանել, արկանել։ Այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս։ Ձոմամբ ծիծաղել, կատակել, արհամարհել, այպանել։ Ձմաւ ածել (=միտը բերել, մտքով անցնել, մտածել)։ Ածել զիւրև (յանկուցանել=իրեն քաշել)։ Ածել զձեռամբ, զձեռօք, զբռամբ (=բմբռնել, ունել)։ Ածել զնովիմբ (=ավելացնել, վրա բերել)։ Ածել զբոցով (=բոցով անց կացնել, վրան դնել)։ Ածին զնոքօք ձորձս (=վրաները ձորձ քաշեցին)։ Ունել, առնուլ զզէն իւր զինքեամբ (=վրան ունենալ, առնել)։ Արկանել ինչ զիւրեաւ, զգլխով (=վրան դցել)։ Ձամենայն վնասուն պատճառսն արկանէր զկապելովքն, եւ զաջ թևն բեկեալ՝ զձախոյ կողմամբն արկեալ։ Անկանել զպարանոցաւ (=վզովն ընկնել)։ Երթալ, վազել, անցանել զիւիք, զգեստով, զցամաքաւն (=մի բանի վրայով)։ Երթալ զսրով (=սրի վրա ընկնել)։ Ցանել ինչ զերեսօք։ Հեղուլ արտասուս զերեսօք (=երեսովը, երեսի վրայով)։ Անցանել, զանցանել, զանց առնել, ելանել զպատուիրանաւ, զուխտիւ, զխրատով, զաւանդութեամբ, զնովաւ (=զանց անել, անտես անել, չկատարել, չպահել)։ Անցանել, անցուցանել, զանցանել զոմամբ, զիւիք (=գերազանցել, առաւելուլ)։ Անցուցանէր պայծառութեամբ զքաղաւորաբնակ արքունեօքն (=գերազանցում էր)։ Անցանել, զանցանել զոմամբ (=առաջ անցնել, առաջ ընկնել մեկից)։

Ի, 3

204. Ի նախդիրը ձայնավորով սկսվող բառերի վրա դառնում է յ, երբեմն ի յ, որ բառին կպած է գրվում։

205. Ի հայցականի հետ, որ կոչվում է «նախդիր տրական», գործ է ածվում.

1. Երբ խնդիրը ցույց է տալիս այն տեղը, երբեմն և իրը կամ անձր, դեպի ուր, կամ դեպի որը, որի մոտ, վրա, մեջ ուղղվում է գործողութիւնը իբրև պատասխան յո՞ հարցի (§ 141. 1)։ Աշխարհաբար՝ հայցական-ուղղական, տրական հոլովներով և դեպի, մեջ, վրա, մոտ բառերով։ Օրինակ՝ եւ թագաւորն Հայոց դառնայր ի կողմանսն Հայոց,

յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք։ Ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս։ Երթայք ի վաճառականս և գնեսջիք։ Դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս։ Ընդունել ինչ ի գանձ արքունի։ Իբրև եկն ի նա (ի թզենին)։ Զբոլոր բարկութիւնն եհեղ յայրն երանելի։ Որ յարեալս առ մեզ գայցէ՝ թողցեն. իսկ յարևելից յարևմուտս անանց լիցի ճանապարհ։ Ամբարձ զաչս իւր յաշակերտս։ Ընդէ՞ր ոչ եատուր զարծաթն իմ ի սեղանատերս։ Դուք երթայք ի տօնն, ես ոչ երթամ յայն։

2. Երբ խնդիրը, սովորաբար բայական անուն կամ անորոշ դերբայ, ցույց է տալիս նպատակը, որին հասնելու համար կատարվում է գործողությունը։ Աշխարհաբար թարգմանվում է տրական, երբեմն և հայցական-ուղղական հոլովներով և ճամար բառով. բայական անունը սովորաբար անորոշ դերբայ է դառնում. երբեմն պահվում է գրաբարի ի նախդիրը։ Օրինակ՝ երթալ յորս, հասանել յօգնութիւն, գումարել ի մարտ պատերազմի, ի խորհուրդ կոչել։ Ի գործ առաքել։ Որ լեզու որում դասու հասցէ յաշակերտութիւն։ Սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի։ Աշխարհագիր առնել զամենայն երկիրն Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն այրուձիոյն։ Նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դուք պարարէք զմարմինս ձեր նմա ի կերակուր։ Ոչ ինչ կարի յօգուտ էր։

Սույն իմաստով գործ են ածվում և առ, առ ի, առ յ. առ ի յ. օրինակ՝ Պատրաստք եմք առ ամենայն մեքենայս,.. ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել։ Վառեալք և ջեռեալք առ այրել։ Աշակերտք հեզգք առ ի յուտումն և փոյթք առ ի վարդապետել։ Առաքեցին դառաճանս... զի ըմբռնեսցեն զնա բանիւք առ ի մատնել զնա պետութեան և իշխանութեան դատաւորին։ Առ ի հանգիստ ձմերոցի։ Հանդերձ առ ի զարդս մեծարանաց։

3. Երբ բայը ցույց է տալիս մի բանից մի ուրիշ բանի, մի վիճակից մի ուրիշի, մի պաշտոնից մի ուրիշի ևլն. փոխվել, դառնալ։ Աշխարհաբար թարգմանվում է ուղղական կամ տրական հոլովներով։ Օրինակ՝ Սղիցին դժուարինքն ի դիւրինս և առատարքն ի հարթ ճանապարհս։ Հող էիր և ի հող դարձցիս։ Զուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս և զսուինս իւրեանց ի մանգաղս։

4. Գործիական հոլովի իմաստով, որի տեղ և դրվում է համաձայն Աշխ. գործիական հոլով։ Օրինակ՝ Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայք։ Դոչեաց... ի ձայն մեծ։ Առնել, ասել, առաքել ի ձեռն ուրուք, յանուն իմ։ Նիւթոյ անուն ի նոցա լեզու (=նրանց լեզվով) ի մուր մերձ է։ Աղաղակել ի մի բերան։ Կոտորել ի սուր սուսերի։ Վառել ի զէն և ի զարդ։ Եհար զնոսա ի հաւուրածս անհնարինս։ Ննջել ի քուն թանձրութեան։ Յայլ և այլ լեզուս խօսել։ Շինել զպարիսպն կանգունս հինգհարիւր յերկայնութիւն։

206. Մեր քերականները ի նախդրով հայցական հոլովը դնում են

իբրև առանձին հոլով «նախդիրս տրականաւ», որովհետև շատ բայեր և ածականներ այդ ձևով են առնում իրենց առարկայական խնդիրը, որ աշխարհաբարում սովորաբար (երբեմն և գրաբարում) տրական հոլովով է դրվում։ Այսպես են բացի վերևում հիշվածներից նաև՝ ածել, հատանել, հատուցանել (ի փառս, ի պատիւ), ձգել, արկանել (զձեռն յինչ=ձեռքը մեկնել մի բանի). մերձենալ յոք, յինչ (=կպչել, դիպչել մեկին. մի բանի). ձայն առնել (=ձայնել մեկին). արկանել (յինքն). գալ (ի միտս=ուշքի գալ). յաւելուլ, փչել, ածել (ապտակ ի ծնօտ ուրուք). դարձուցանել ինչ յոք. սաստել յոք. յարել, հաւատալ, հայել, յնդուլ, յուսալ, ձեռն մխել, խնայել, դիմել. մատնել, տալ. մատուցանել, խոստովանել, պահել (յօրն=...օրվան պահել)։ Նախանձաւոր լինել, պարտաւոր լինել, վնասակար լինել, մէտ և յօժար, պիտանի, պիտանացու, վստահ, ապաստան լինել (յոք, յինչ=մեկին, մի բանի) ևլն։ Մօտ էր ի քաղաք անդր տեղի։

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

207. Ի հայցականի և եզակի տրականի հետ կազմում է ներգոյական ճոլո՝:

ա) Այս իմաստով հոգնակիում ի նախդիրը դրվում է միշտ հայցականի վրա. իսկ եզակիում տրականի վրա։ Բայց եթե եզակի տրականն այ, ոյ վերջավորութիւնն ունի, վերցվում են կամ ում, ոջ վերջավորութիւնները, եթե կան (§§ 102. 106). կա՛մ, եթե ի հոլովման ձև ունին (§ 132. 2), այս ձևն է վերցվում (օրինակ՝ գիշեր, գիշերոյ,—ի գիշերի. մարմին, մարմնոյ,— ի մարմնի), թէ չէ՝ հայցական հոլովի վրա է դրվում ի նախդիրը։

բ) Հատուկ, երբեմն և հասարակ անունների ու դերանունների համար, վերցվում է եզակի հայցականը. օրինակ՝ ի Հռոմ, յԱրտաշատ, ի Բաբելոն, յԵգիպտոս, բայց նաև ի Բաբելոնի, յԵգիպտոսի. նոյնպես և յաշխարհի յորովայնի բայց երբեմն նաև՝ յաշխարհ յորովայնի։ Այսպես և ի մեզ, ի ձեզ, ի քեզ, բայց յիս (=ինձնում)։

գ) Եզակի հայցականի և անեզական բառերի հայցականի հետ, երբ եզակի իմաստով են առնված (§ 85), դրվում է ստացական և ցուցական ածականների տրականը. օրինակ՝ ի փառս իւրում, ի կհանան քում, յաթոռ իւրում, ի դնալ իմում։ Որ նստէր ի մեծ գահոյս յայում։ Յայնմ գործ։

208. Ներգոյական դրվում են.

1. Այն խնդիրները, որոնք եղելութեան մի տեղում, մի բանի մեջ լինելն են ցույց տալիս, իբրև պատասխան ո՞ւր հարցի (§ 141. 2)։ Աշխարհաբար թարգմանվում է ներգոյական, տրական և հայցական-ուղղական հոլովներով, կամ մեջ, վրա, երեսին բառերով։ Օրինակ՝ Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած

խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի, յորս ամենևին չծագէ նշուլ սուրբ լուսոյն։ Երևեցան նոքա սուր բնդ մէջ և վահան ի ձեռին։ Գրէր մատամբ յերկրի։ Որ կայցէ ի տանիս՝ և կարասին իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ։ Ընկալար զբարիս քո ի կեանսըն քում։ Եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ։ Օրհնեալ ես դու ի կանայս։ Որ ի փոքուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է։— Հեծել ի ձի, յէշ և յաւանակի իշոյ։ Հեծեալ էր ի ջորւոջ իւրում։ Երիվար, յորում արքայ հեծուանէր։ Նստել յաթոռ իւրում։ Դնել ի բանտի, ի դիպահոջ, ի գբի ներքնում, ի գերեզմանի։ Սերմանել յագարակի։ Կայր յեզր ծովուն։ Ի ձեր կողմն է։ Բնակէր երկրին, ի կողմն հարաւոյ։ Որ կայր յայն կոյս ծովուն։

2. Ժամանակի պարագայական խնդիրները, իբրև ե՞րբ հարցի պատասխան։ Աշխ. տրական, հայցական-ուղղական և ներգոյական հոլովներով, այլ և ժամանակ բառով։ Օրինակ՝ Յամսեանի չորեքդի եկին, *հասին յաշխարհն Հայոց։ Հասին ի Դուռն ի մեծի շաբաթու զատկին։ Յեօթներորդում ժամու եթող զնա ջերմն։ Ի հնգետասաներորդի ամի տէրութեանն Տիբերեայ կայսեր։ Ի ծերութեան, ի մանկութեան, ի խաղաղութեան։ Ի ժամու, յամենայն ժամու։ Յամենայն ժամ։ Ի նմին ժամու, ի նմին ժամանակի, յայնմ ժամանակի։ Յաւուրն ութներորդի եկին. յաւուրս Շապհոյ. ի սկզբան. ի միաշաբաթուն, ի միաշաբաթուջն։ Երկից ի շաբաթու։ Ի տարւոջ մի անգամ։ Ի տարւոջ և կիսում՝ (=տարի ու կէսում). յերեսուն ամի, ի վեց աւուրս (=երեսուն տարում, վեց օրում)։ Ի գիշերի և ի տուրնջեան. ի տուէ և ի գիշերի (=գիշեր ցերեկ)։ Յայսմ գիշերի (=այս գիշեր)։ Յայն բան եկին աշակերտքն (=այն խոսքի վրա, ժամանակ)։ Ի հնգետասան օր հասանէր ի հրամայեալ տեղին։*

3. Անորոշ դերբայը ժամանակի պարագայի իմաստով։ Աշխարհաբար թարգմանվում է իս վերջավորութեամբ անկատար դերբայով (գնալիս, խոսելիս). ժամանակ, հետո *բառերով (գնալու ժամանակ, գնալուց հետո), կամ թե հաճախ հրկրորդական խոսքով (երբ այս ինչ բանը լինում է, լինում էր, եղավ)։* Իմ, fn, մեր, ձեր, իւր *տոհգականներն անորոշ դերբայի հետ դրվում են ում վերջավորութեամբ տրական։ Օրինակ՝ Ի բառնալ ազգին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի։ Ի ծնանելն ։ Բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին։ Ահա՛ և սերմանահան սերմանել, և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ։ Ի ծագել արևո տապացաւ։ Ի գնալ fում։*

8

209. 3 *նախդիրը, որ միշտ անվան հետ կապած է գրվում, դրվում է հայցականի հետ և գործ է ածվում՝*

1. Սինչև բառի իմաստով, որի հետ երբեմն և բանում է։ Օրինակ՝ Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր (=մինչև այդտեղ) միայն ետուր ընթեռնուլ։ Յայժմ (=մինչև այժմ)։ Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ։

2. Իբրև խնդիր մի քանի բայերի և ածականների՝ փոխանակ տրականի։ Օրինակ՝ Ասէ ցնա, ցիս, ցմեզ, ցոք, ցեղբայր իւր։ Ինքն ցինքն ասել։ Ասել ցմիտս իւր։ Ո՞ իցէ ի ձէնջ մարդ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա։ Եհարց ցնա, ցնոսա, ցաշակերտսն։ Ետ զնա ցմշակս իւր, ցաղջիկն։ Յմեզ ապաստան։ Քոյդ ցքեզ (=քոնդ քեզ)։

Առ

210. Առ հայցականի հետ *նշանակում է.*

1. Դեպի, մոտ, երբ *խնդիրը ցույց է տալիս այն տնձը, կամ իրը, դեպի որը ուղղվում է գործողությունը։ Աշխարհաբար թարգմանվում է նաև տրական, սակավ անգամ և հայցական-ուղղական հոլովով։ Օրինակ՝ Երթ ի տուն առ ընտանիս քո։ Դու առ ի՞ս գաս։ Զդոյն պատուէր առ ամենեսեան։ արկանէր։ Գրել իբր առ առաքիս և առ անսլիտանս։ Ասաց առակ մի առ նոսա։ Անկաւ առ ծունկս նորա։ Զդառնալ անդրէն առ ոք։ Ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք։*

2. Համեմատությամբ, վերաբերությամբ, նկատմամբ, համար, դեպի։ *Օրինակ՝ Եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգևորն։ Որպէս առ մի մարդ, այսպէս և առ բոլոր աշխարհս։ Զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին։ Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի։ Այլ զի՞նչ է այն առ այդչափ մարդիկ։ Փոքր է մարմնոյ մեծութիւն առ հոգևոր փարթամութիւն։ Սէգ, պճնող առ հանդերձս։ Գթած, ողորմած առ աղքատս։*

3. Համար, որ անորոշ դերբայի հետ կարող է զևղչվել։ Տե՛ս § 205. 2։

211. Առ եզակի և հոգնակի հայցականի և եզակի տրականի հետ *նշանակում է իբրև ներգոյական.*

1. Մոտ, մոտին, կշտին (ներգոյականի նշանակությամբ). *թարգմանվում է երբեմն և տրական հոլովով։ Օրինակ՝ Աւասիկ տապար առ արմին ծառոց դնի։ Քորք սորա առ մեզ են։ Գտին զյաւանական կապեալ առ դուրս։ Ճարակեսցէ գայլ ընդ գառին և ինձ առ ո լու մակաղեսցի։ Կային առ նմա։ Դուք էիք մեր պարծանք առ Քրնամիան ճշմարտութեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն Քրնամիս։ Չհեռաւորս ևս առ միմեանս համարէին։ Կէսքն առ նմա իսկ էին ի կարաւանին։*

2 Համար, պատճառով, *երբեմն* նպատակով։ *Աշխարհաբար ասվում է նաև բացառական հոլովով։ Անորոշ դերբայը հայցական է դրվում, բայց հետի ստացական իմ, ի՛ս, մեր, ձեր, իր ածականների՝ տրական։ Օրինակ՝ Ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ ի հասակ*

իր կանգուն մի։ Առ ահին (=ահից, ահու) աղաղակեցին։ Առ նախանձու մատնեցին զնա։ Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ։ Եւ առ յոյժ խնդութեան ոչ երբեք յագէին երկայնութեամբ ճանապարհին։ Առ յոյժ աղքատութեանն ակամայ դիմեսցեն յօրէնս մոգաց։ Առ սէրն։ Առ հետ և առ նախանձ ծնկեալ՝ նենգաւ դնայր ընդ Դաւթի։ Առ հոգս, առ ցաւս իւր ճչալ։ Առ ամօթոյ ձերոյ ասեմ։

3. Դարձվածներ՝ Ունել, դնել, համարել, դրել զոմն առ իմաստուն, առ յիմարս, առ մարդիկ (այլ և համարել ի մարդիկ), առ տուտս, առ լաւս ևլն=մեկին իմաստուն, հիմար, մարդու տեղ դնել, մեկին մի բան համարել։ Տալ երկուս գառինս առ օր (=օրենը, օրը, օրական)։ Առ այր (=մարդը, յուրաքանչյուր մարդ, մարդագլուխ) հարիւր դրամ տուգանեսցին։ Եւ ոչ առ սակաւ մի համբեր։ Առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն։ Ոչ սակաւ զանձս առ ժամայն ծախէին։ Առ այն օր պահել հրամայեաց։ Առ աչս, առ երևոյթս, առ երեսս (=երեսանց, դրսից)։ Առ այս ետ պատասխանի (=սրան, այս բանին պատասխանեց)։

212. Առ բացառականի հետ՝ առ ի ձևով կամ միայն առ՝ նշանակում է

1. *Մեկի* մոտից, կողմից, բերանից, *այլև* պատճառով, համար, *կամ լոկ բացառականի իմաստ ունի։ Օրինակ՝* Առ ի մարդկանէ այդ անկար է։ Առ ի ծնողաց ինձ խորէն անուն։ Քոյր քո առ ի հօրէ՞, եթէ առ ի մօրէ։ Խօսեսցի առ ի քէն ընդ ժողովրդեանդ։ Առ յինքենէ խօսել։ Ջի մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ։ Ոչինչ զանգիտէին առ ի յոյժ բազմութենէն։ Առ ի մեղաց (=մեղքից), առ ի չգոյէ։ Առ երկիւղէ, առ հարկէ, առ պատճառէ, առ իւրեանց բնութենէ (=յերկիւղէ, ի հարկէ ևլն)։

2. Նպատակով, համար։ *Անորոշ դերբայն աշխարհաբար թարգմանվում է նաև երկրորդական խոսքով* որպես զի *շաղկապով սկսված։ Օրինակ՝* Տացեն նշանս առ ի մոլորեցուցանելոյ։ Նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա։ Եթէ յիրաւանց իմոց տաղտկանայցեն անձինք ձեր առ ի չառնելոյ ձեզ (§ 176. 1) զամենայն պատուիրանս իմ, և ցրելոյ զոխտն իմ, արարից նոյնպէս և ես ձեզ։ Ծանրացուցանէ զականջս առ ի չլսելոյ զդատաստան արեան. խնու զականջս, զի մի՛ տեսցէ զանիրաւութիւն։—Հանցէ ի զոհէն զառ ի յիշատակէն նորա։ Անդ եդին առ ի յիշատակէ զսուրսն քարեղէնս։ Առ առակէ շրջեցուցանէին։

Առ ի, առ յ. *տե՛ս և § 205. 2։*

212 Առ գործիականի հետ *նշանակում է՝*

1. Տեղի իմաստով՝ *մի բանի* մոտը, մոտերը, մոտովը.—կշտին, մոտին *(համեմատությամբ)։ Օրինակ՝* Ժողովուրդն կայր առ ծովեզերբն։ Էր որ անկաւ առ ճանապարհաւ։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ

ընդ նոյն առ նովաւ։ Անդ էր առ լերամբ երամակ մի խոզոց։ Անցանէին առ Գալիլիացւովք։ Ոչ առ այլովք վատթարովքն վեհ երևի։ Զի՞նչ է յարդ առ ցորենաւ։ Փոքր է այս առ այնո։

2. Ժամանակի իմաստով՝ օրերը, ժամանակները, օրով։ Օրինակ՝ Եւ որ այլ ևս հարկ աշխարհին՝ բազմագոյն քան առ հարքն նորա երթայր յարքունիս։ Կարգեալ իսկ էին նոքա առ նախնեօքն մերովք։ Առ այնու ժամանակաւ։ Առ կենդանութեամբ առն իւրոյ։ Առ մեօք (=մեր օրով)։

ԸՆԴ

218. Ընդ հայցականի հետ *գործ է ածվում՝*

1. Ի նախայրի փոխանակ, հաճախ երբ խնդիրն ընդարձակ տարածության է ցույց տալիս։ Աշխարհաբար վրա, երեսին,—մեջ,—դեպի բառերով, երբեմն և հայցական-ուղղական, տրական ու ներդոյական հոլովներով է ասվում։ Օրինակ՝ Ել համբաւ նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Բժշկէին ընդ ամենայն տեղիս։ Ընդ ամենայն տեղիս է տէրութիւն նորա։ Աշխարհագիր առնել ընդ ամենայն տիեզերս։ Աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ (բայց՝ ոչ **բոլոր** իմաստով՝ Աւետիս խնդալիս առաքէր յատրուշանս բազումս)։ Յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին։ Ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի (օրէնքն մեր), այլ համատարած **ընդ ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք, և ընդ կղզիս.** ոչ միայն ընդ արևմուտս, այլ և ընդ արևելս, այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ։ Հող հանէր ընդ չորս կողմանս երկրի։ Յածիք ընդ ծով և ընդ ցամաք։ Մտեալ շրջէր ընդ երիքով։ Շրջէր ընդ ամենայն քաղաքս և ընդ գեօղս։ —Հայել ընդ երկինս, ընդ ագռաւս, ընդ շուշանն վայրի, ընդ նոսա, ընդ նա։ Գնաց ընդ արևմուտս Գնել ընդ սնարս իւր։ Թքին ընդ երեսս նորա։ Ասել ընդ միտս. զարմանալ ընդ միտս (=մտքում)։ Արկ զմատունս իւր ընդ ականջս նորա։ Մտանել ընդ գետինն։

2. Երբ գործողությունը մի բանի միջից, միջով, վրայից, վրայով կամ ուղղությամբ անցնել է ցույց տալիս։ Աշխարհաբար նաև գործիական կամ բացառական հոլովներով։ Օրինակ՝ Ընդ այլ ճանապարհ դրնացին յաշխարհն իրեանց։ Մտէք ընդ նեղ դուռն։ Բազումք են, որ մտանեն ընդ նա։ Անցեալ ընդ այն։ Գնաց ընդ արտորայս նոցա։ Որ ինչ մտանէ ընդ բերան՝ ոչ պղծէ զմարդ։ Եւ ընդ քո անձն իսկ անցցէ սուր։ Ջգնայր ընդ եզր ծովուն։ Հերձաւ վարագոյրն ընդ մէջ։ Եւ ընդ րիթան և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն ելանէր։ Անդանել ընդ գետն։

3. Երբ խնդիրը ցույց է տալիս մերձավոր ժամանակներ։ Աշխարհաբար ժամանակները, դեպի, դեմ, վրա, մեջ, հետո, բառերով, կամ հայցական-ուղղական, բացառական, ներգոյական հոլովներով։ Օրինակ՝ Թերևս գիտիցես և ընդ այն ժամանակս ծնեալ իցես։ Ընդ այգն,

ընդ առաւօտն (=առավոտյան դեմ)։ Ընդ երեկս։ Ընդ աւուրսն ընդ այնոսիկ (=այն օրերում, այն օրերը)։ Ընդ սակաւ աւուրս եկին բերին։ Ընդ աւուրս տասն եկեսցէ (=տասն օրից, տասն օրում, վրա տասն օրը կը գա)։

4. Երբ խնդիրն անորոշ դերբայ, երբեմն և բայական անուն է և նշանակում է մի բան լինելուն պես, լինելուց հետո, երբեմն և ի նախդրի իմաստով (§ 207. 3) լինելիս, լինելու ժամանակ։ Օրինակ՝ Ընդ բուսանելն չորացաւ։ Ընդ ելանելն նորա ի նաւէ անտի...։ Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին։ Եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երևումն սքանչելւոյն (արեգական) ընդ իս զիւրաքանչիւր ծուներ նմա ոչ կրկնեսջիք...։

5. Իբրև խնդիր զգացմունք ցույց տվող և մի քանի ուրիշ բայերի, վրա, գլխին բառերի իմաստով։ Երբեմն հայցականի հետ և տրական հոլովով է դրվում այս խնդիրը։ Օրինակ՝ Զարմանային... ընդ վարդապետութիւն նորա։ Խոժոռել, խռովել ընդ բանն (այլև՝ խռովել ընդ բանին)։ Խնդալ ընդ բարիս։ Հաճել, նախանձել ընդ ոք, ընդ ինչ (այլև՝ նախանձել, զարմանալ, գութ ունել, ուրախանալ ընդ ումեք, ընդ իմիք)։ Էր ցասմամբ մեծաւ ընդ Տիւրացիս։ Անցք անցին ընդ նա։ Արարին ընդ նա զոր կամեցան։ Որ ինչ արարին ընդ նմա։ Զասեն ինչ ընդ դմա։ Առնել ողորմութիւն ընդ տանն նորա։ Հայեցեալ ընդ նա։ Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։

6. **Ընդ**... *ընդ կրկնված ձևով նշանակում է երկու բանի մեջ, միջև, մեջտեղում, առաճում։ Օրինակ՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ։ Մի՛ լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, և ընդ հովիւս իմ և ընդ հովիւս քո։ Կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր։*

Այս գործածությունը նշանակում է և **ընդ ամենայն, ընդ բնաւ**= *միանգամայն, բոլորը միասին։ Օրինակ՝ Եւ լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ։ Ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան չորեք հարիւր բիւր։*

214. Ընդ հայցականի և եզակի, *երբեմն և հոգնակի տրականի հետ նշանակում է* **հետ, հետը** *միասին։ Օրինակ՝ Հաշտեա՛ց ընդ եղբօր քում։ Եղև խնդիր ընդ հրէից վասն սրբութեան։ Զայս խօսէր ընդ նոսա։ Զէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Ուտել և ըմպել ընդ արբեցողս։ Ոչ խառնեալ վատութիւն ընդ արուիւն քաջութեան։ Կարել ընդ մորթ։ Տուն ընդ տուն կցել։ Ընդ իս, ընդ նմա։*

215. Ընդ սեռականի հետ *նշանակում է՝* **փոխանակ, փոխանակ ընդ=տեղը, փոխանակ,** *երբեմն և* **համար**։ *Օրինակ՝ Զայն առնել տացես ընդ իմ և ընդ քո։ Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման։ Զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։ Առ զմի ի կողից նորա և ելից ընդ այնր մարմին։ Թագաւորեաց եղբայր նորա ընդ նորա։ Ընդ ամե-*

նայն դատարկ բանի, զոր խօսիցին մարդիկ, տացեն համարս։ Բերէր ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր։ Տալ ինչ ընդ իրիք։

216. Ընդ բացառականի հետ, *առանց ի նախդրի, նշանակում է՝* կողմից, կողմը, *կամ լոկ բացառականի իմաստ ունի։ Օրինակ՝ Ասա՛, զի նստցին սոքա մի ընդ աջմէ քումմէ և մի յահեկէ։ Ելին ընդ կողմանէ դրանցն։ Բանակն էր նոցա ընդ հիւսիսոյ. ընդ հարաւոյ. ընդ արևելից կողմանէ։ Անկցին ընդ կողմանէ քումմէ հազարք։ Ընդ ցուցն կախեալ իջուցին։ Որ ինչ կայ ընդ երեսաց լուսոյն, նա է պատճառ խաւարին։*

217. Ընդ գործիականի հետ, *նշանակում է* տակը, տակին, ներքո։ *Օրինակ՝ Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ։ Թէ ընդ յարկաւ քմով մտցես։ Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ։ Մտէ՛ք ընդ վիմօք և թագերուք։ Ընդ գթով, ընդ ծառայութեամբ, ընդ աշխարհագրով արկանել։ Ընդ հարկաւ դնել։ Ոչ ընդ նովին օրինօք մտանէին։*

ԸՍՏ

218. Ըստ հայցականի և տրականի հետ, *նշանակում է՝*

1. Համեմատ, պես, համաձայն, ձայելով, թվով, չափով։ *Օրինակ՝ Մի՛ ըստ աչս դատիք։ Ըստ նոցա կարծիս (կարծեաց)։ Ըստ կամս, ըստ միտս, ըստ օրէնս=ըստ կամաց ևլն։ Կատարել դատաստան ըստ գրելոյն։ Հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս։ Ըստ առաջին կարգի օրինացն արքունի (=պալատի առաջվա կարգով, սովորութեամբ)։ Ըստ ամենայնի (=ամեն բանով, բոլորովին)։ Ըստ նմին և (=նմանապես և)։ Ըստ իս (=իմ կարծիքով)։ Ըստ արժանւոյն։ Ըստ տունս, ըստ վրանս, ըստ երդ, ըստ գլուխ (=տների ևլն. թվով)։ Ըստ աճել մանկանն։ Իւրաքանչիւր ըստ կարի իւրում։ Մի՛ ըստ գործոց նոցա առնէք։*

2. Ըստ միայն հայցականի հետ *գործածվում է դուրս, դենը բառերի իմաստով իբրև խնդիր անցանել, ելանել, անկանել, լինել ևլն. բայերի։ Աշխ. նաև բացառական և հայցական-ուղղական հոլովներով։ Օրինակ՝ Անցանել ըստ չափ, ըստ սահման, ըստ օրէնս, ըստ երդումն, ըստ բանս, ըստ ջուր։ Ելանել ըստ հրամանի, ըստ չափ, ըստ ձեռն (ուրուք). անկանել ըստ կողմն, ըստ ակն։ Ըստ ակն էաք ի տեառնէ։ Ըստ այն մի գիշերն (=այն մի գիշերից ւյետ)։ Ի ձէնջ ըստ կողմն ելեալ։ Ջամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս։ Որ և ըստ հեթանոսական օրէնս անցանէր արիւնհեղութեամբ։ Կայսր չելանէ ըստ քո հրամանի։ Որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին։ Ամենայն արարածք ոչ երբեք անցանեն ըստ եդեալ սահմանն իւրեանց։ Ըստ երկիր անդր ոչինչ է (=երկրից դենը ոչինչ չկա)։*

219. Ըստ բացառականի ներ, *առանց ի նախդրի, ցույց է տալիս հաջորդություն, ետևից, կամ լոկ բացառականի իմաստ ունի։ Օրինակ՝ Օր ըստ օրէ։ Ասել, ելանել մի ըստ միոջէ։ Ամ ըստ ամէ (=օրեցօր, տարեցտարի)։ Այր ըստ առնէ (=իրար ետևից)։ Եւ որ ըստ այսմանէ։ Ըստ հիւսիսոյ կուսէ։*

220. Իբրև զ, որպես զ *հայցականի հետ, նշանակում են՝* պես, նըման, ինչպես։ *Գործ են ածվում հավասարության կամ նմանության բաղդատություն ցույց տալու համար։ Օրինակ՝ Իբրև զհողմ սաստիկ զի բախիցէ զծով մեծ, այնպէս...(=ինչպես սաստիկ քամին, որ...)։ Մի՛ շատախօս լինիք իբրև զհեթանոսս։ Եղերուք խորագէտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս։ Լերինք ցնծասցեն որպէս զխոյս և բլուրք՝ որպէս զգառինս մաքեաց։ Մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք։*

Իբրև *թվականի հետ նշանակում է* մոտ, մոտավորապես, *օրինակ՝ Էին արք իբրև հինգ հազարք։ Մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի։ Իբրև բեռինս երկու։*

221. Քան զ, առաւել քան զ, *հայցականի հետ, նշանակում է.*

1. Քան, քան թե։ *Գործ է ածվում առավելության կամ նվազության բաղդատական աստիճան ցույց տալու համար։ Ածականը հաճախ դրվում է եւս (=է՛լ, է՛լ ավելի),* առաւել, ավելի, եւս առաւել, առաւել եւս *բառերով, կամ —զոյն ածանցով բաղադրված ձևով։ Օրինակ՝ Ոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան զհանդերձ։ Լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Էջ սա արդարացեալ քան զնա։ Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի։ Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր։ Լաւագոյն զչինուածս մարդկեղէնս քան զհողնղէնսն հաշուէին։ Ջմահ քան զկեանս ընտրէին։ Քան զսուտ ստագո՞յնք լինիցիք։ Եւս քան զևս (=ավելի ու ավելի) աճեցին։ Աւարն օր քան զօր (=օր օրի վրա) աճեցեալ բազմացաւ։ Սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս։ Այլ մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է, ոչ առնել (=բայց մենք դրանից ավելի բան ոչ պիտի իմանանք, ոչ առնենք)։*

2. Մի բանի չափ, պես։ *Ժողովրդական ձևով՝* բանց։ *Օրինակ՝ Եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ (=... հատի չափ)։ Խոստանայ ի վեր քան զմարդ և քան զմժիղ (=մժեղի չափ, բանց մժեղ) ապրդել ոչ կարէ։*

Նշ. *1. Գերադրական աստիճանի իմաստն ստացվում է, ինչպես աշխարհաբարում, նույն բաղդատական ձևով, միայն* քան զ *նախդրի խնդիրը դրվում է ամենայն, ամենեքեան բառերով. օրինակ՝ Որ մեծն է քան զամենայն։ Առաւել քան զամենեսեան զնոսա դատէր։ Որ յետին չար է քան զամենայն չարիս։*

Նույն իմաստն ստացվում է, երբ բաղդատության խնդիրը դրվում է, ինչպես աշխարհաբարում, սեռական, բացառական և ի նախդրով հայցական (ներգոյական)։ Օրինակ՝ Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոնհմագոյն, և արանցն այ-

նոցիկ և ամենեցուն քաջ։ Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն։ Ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն։ Ծնաւ կինն հանկարծ երիս կատարեալս ի դիւցազանց։

Ծան. 2. Քան զ նախդրով գործ են ածվում և՝ առաջոյ քան զ, առաջոյ քան զ= մի բանից դուրս։ Յառաջ քան զ, նախ քան զ=մի բանից առաջ։ Վեց աւուրբ յառաջ քան զզատիկն (=զատկից վեց օր առաջ)։ Ի ներքս քան զ=մի բանից ներս։ Ի վեր քան զ, ի վերոյ քան զ, գեր քան զ=մի բանից վեր, օրինակ՝ Ի վեր քան զմարդկային բնութիւն =մարդկային բնությունից վեր։ Սուրբ իմաստն արտահայտվում է և գեր զ ձևով՝ Գեր զմարդիկ, գեր զբնաւն։ Յետու երթայր առաջի քան զնոսա=...նրանցից առաջ։ Ջիշխեն այլ ինչ քան զայն գործել=...նրանից զատ ուրիշ բան։ Այլազգ քան զայս։ Անգր քան զ=մի բանից դենը։

222. Մինչեւ ի (յ), մինչեւ ց հայցական հոլովի հետ=մինչև։ Օրինակ՝ Ուտէին և ըմպէին... մինչև յօրն, յորում եմուտ Նոյ ի տապան Տրտում է ոգի իմ մինչև ի մահ (=մահու չափ)։ Մինչև ի կատարած աշխարհի (=մինչև աշխարհի վերջը)։ Մինչև ի քաղաքն։ Մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ։ Տաց քեզ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ։ Քանի՞ցս անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցեօ՞թն անգամ։ Մինչև ցեօթանասնեկին եօթն անգամ (=յոթանասուն անգամ յոթն անգամ)։ Ի վեց ժամէ աւուրն մինչև ցինն ժամ։ Մինչև ցայժմ, մինչև ցայսօր։

228. Բաց կամ **բայց** բացառականի հետ=բացի, զատ։ Օրինակ՝ Բայց յինէն (=բացի ինձնից)։

224. Հանդերձ (նախադաս և ետադաս) գործիականի հետ=հետը միասին (հանդերձ)։ Ինքն (Մեքսատ) հանդերձ միով կնաւ իւրով և սակաւ արամբք գայ։ Անդ նստէր աշակերտօքն հանդերձ։

225. Առանց սեռականի հետ=առանց։ Օրինակ՝ Առանց զձեզ ինչ աշխատ առնելով խաղացաք գնացաք յերկիրն Յունաց և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։

226. Վասն (նախադաս, երբեմն և ետադաս) սեռականի հետ= համար։ Օրինակ՝ Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի։

ՆԱԽԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ

227. Կան բազմաթիվ ածականներ, որոնք քերականությունների մեջ սովորաբար դրվում են իբրև նախադրություն։ Այսպես են՝ տրական խնդրով՝ Նման, հանդոյն, հանգէտ (=նման, պես), համեմատ, հաւասար, զոյգ կամ զոյգ ընդ (=հետ մի տեղ, միասին), հակառակ, հակառակ ընդ. հայցական խնդրով՝ կից ի, մերձ ի, մօտ ի. հայցական և

գործիական խնդրով՝ *մերձ առ, մօտ առ.* բացառական խնդրով՝ *ուրույն (=ջոկ, հեռու, զատ, բացի), մեկոսի, հեռի։*

228. *Ավելի կարևոր են այն անունները, որոնց հոլովական ձևերից մի քանիսը, հաճախ նախդիրներով, գործ են ածվում նախադրության իմաստով, կամ մենակ գործածվում են իբրև մակբայ։ Ստացական ածականները* իմ, ſո, մեր, ձեր, իւր *հոլովով համաձայնում են այդ անուններին. նախդիրները՝ զ, ընդ, առ դրվում են նախադաս սեռականի վրա։*

1. Ետ *(=ետ, ետք, ետև) բառից՝*

Ետ ընդ ետ=նույն հետայն=իսկույն, ետևից։ Թող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի։ Ետ ընդ ետ իսկ ընդէ՞ր ոչ յղեաց։

Յետ=ետ, դեպի ետ։ Զամօթն ի յետ ընկճեալ։

Յետ=հետո։ Յետ այսր ամենայնի այլ բանիւք զմեզ մի՛ հարցաներ։ Յետ վեց աւուր։

Յետս=ետ, դեպի ետ։ Ի հայրենի օրինացն յետս կալ։ Գնացին յետս յետս *(=ետ ետ)։*

Յետոյ, յետուստ=ետևից, ետևով, ետևում, ետևի. հետո, ապա։ Յետոյ ձերմէ *(=ձեր ետևից)։* Ունկն դնէր առ դրան խորանին, քանզի յետոյ նորա կայր։ Թագեաւ յետոյ դրանն։ Յետոյ կողմն *(=ետևի կողմըն)։* Յետո ատ խորանի կամ որմոյն մերոյ։ Յետուստ կողմանէ։ Ծակել զորմն յետուստ։ Լի էին աչօք առաջոյ և յետոյ *(=առջևից և ետևից)։* Յետոյ *(=հետո)* զղջացաւ։

Ետ զետէ=ետևե ետև, հետզհետե։

2 Հետ=հետ, հետք *բառից՝*

Ջհետ=ետևից։ Երթային զհետ նորա։ Աղաղակէ զհետ մեր։ Այր զեղբօր զհետ երթիցէ։ Մի զմիոյ հետ=հետզհետե, միմյանց ետևից։

Ի... հետէ=ի վեր, սկսած։ Յայնմ հետէ, յայսմ հետէ, յորմէ հետէ։ Ի սկզբանէ հետէ, ի հնոց ժամանակաց հետէ, յայգուէ իսկ հետէ, յայնմ ժամանակէ հետէ, ի վաղուց հետէ։

Երբեմն գործ է ածվում և հետ, ի հետ=հետը, ետևը, ետևից։

3. Զկնի, զ... կնի=զհետ=ետևից. հետո։ Սկայք զկնի իմ։ Գնացին զկնի նորա։ Ամեր կնի ոչ շրջէր։ Զերիս ամս՝ ամ զամի զկնի։ Մի զմիոյ կնի կցեաց։ Զմիմեանց կնի կարգեալ տողեսցին։ Զկնի Աբգարու մինչև ցերուանդ։ Զկնի ոչ բազում աւուրց։ Որ առաջի և զկնի *(=առաջից և ետևից)* երթային։

Ծան. Կիճ նշանակում է՝ ոտքի տակը, հետք։ Այս բառով բարդված են՝ կրկին=երկկին *(որից երկկնակի)*, երեքկին, չորեքկին *ևլն.=բառացի երկու հետ (անգամ)*, երեք հետ, չորս հետ, կամ երկու ոտք, երեք ոտք, չորս ոտք։ Եօթանասնեկին=յոթանասուն անգամ։

4. Առաջ *բառից՝*

Յառաջ=դեպի առաջ, առա՛ջ։

Ընդ առաջ=առաջը։ Ելին ընդ առաջ նորա։

Առաջի *կամ* առաջոյ=*առաջի, առջևի. առաջից, առջևից, առաջ(ը), առաջին։ Առաջի նորա=նրա առաջ(ին)։* Առաջի *ձևից՝* զառաջեաւ, զառաջեօ*ք=առջևը։ Զառաջեաւ իմով։ Առաջք, զառաջս ունել =առաջն առնել, առաջը բռնել։*

5. Մէջ *բառից՝*

Ի մէջ, ընդ մէջ=*մեջ, միջով, միջից։* Ի միջի=*մեջը, միջին։ Ի միջի ձերոյմ։* Ի միջոյ=*միջից։ Ի միջոյ ձերմէ։*

6. Վեր *բառից՝*

Ի վեր=*վեր, դեպի վեր.* վերոյ=*վերի, վերևի, վերևը.* ի վերոյ =*վերը, վերևը, վերևում. վերից։ Ի վերոյ նորա։* Ի վերուստ=*վերից. վերևից։*

7. Ներս, ներ*ս բառից՝*

Ի ներս=*ներս, ներսը.* ներոյ=*ներքևի, տակի.* ի ներոյ, ներոյ=*ներքևից, տակից. ներքևը, տակը.* ի ներո*ւստ=ներսից, ներքևից. տակից, ներքևից։*

8. Ստոր=*ցած բառից՝ ի ստոր, ի ստորև, զստորև, ի ստորէ, ի ստորից, ի ստորուստ=ստորև, ցածում, ցածից։*

9. Հանդէպ *բառից՝ ի հանդէպ, հանդիպի կամ հանդիպոյ, ի հանդիպէ կամ ի հանդիպոյ, ի հանդիպոջ=հանդեպ, հանդեպի, հանդեպից, հանդեպը։*

10. Աղագ=*միջոց, եղանակ, պատճառ բառից՝* յաղագս, աղագաւ=*համար, պատճառով։*

11. Սակ=*թիվ, համար, չափ, բառից՝* սակս, ի սակս=*վասն, համար։ Սակս է՞ր, յո՞ր սակս=ինչո՞ւ համար։ Յայս սակս, յայն սակս։*

12. Համար *բառից՝* ի ճամար=*համար։ Շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ։*

13. Վերայ *բառից՝* ի վերայ=*վրայ։ Ի վերայ նորա։ Քար ի քարի վերայ։*

14. Դէմ *բառից՝* ընդ դէմ=*դեմը, ընդդեմ, հակառակ,* ի դէմս, ի դիմաց=*դիմացը, կողմից։*

15. Առտա*ւս=դուրս, դեպի դուրս.* առտաւոյ=*դուրսը, դրսում, դրսից.* առտաւո*ւստ=դրսից։*

16. Ի ձեռն, ընդ ձեռն=ձեռամբ=*ձեռքով։*

17. Ի պատճառս=*պատճառով։*

18. Ի...կողմն, ի...կոյս=*դեպի...կողմը։* Ի...կողմանէ, ի...կուսէ=*կողմից։ Դարձաւ ի կինն կողմն, ի թիկունս կոյս, յարևելս կոյս։ Ի տանէ կողմանէ, յինէն կողմանէ, ի քէն կուսէ (տե՛ս § 176. 5)։*

19. Ընթեր, առընթեր, առ... ընթեր=*մոտին, կշտին։*

20. Պէս, գունակ, օրինակ, զօրէն=*պես, տեսակ, նման։*

21. Փոխանակ, փոխարէն, փոխան=*փոխանակ։*

22. Յանդիման = դիմաց։

23. Ջափ.—մանու չափ, կիսով չափ։

24. Շուրջ զ..., Շուրջ զնովաւ = նրա շուրջ։

ՇԱՂԿԱՊ

229. Համադասական շաղկապներ.

Եւ = և, ու։

Ե, նաեւ = և, նաև, էլ, նույնպես. օրինակ՝ Եկից և ես (= ես էլ) զկնի քո։ Եւ դու ի նոցանէ ես։

Եւ եւս... **եւս** = ևս, էլ։ Զոր ունէին և զայն ևս (= այն էլ) կորոյս։

Արդ եւս = դեռ նո՛ր, նո՛ր, հենց նո՛ր, հենց այժմ։

Արդ = արդ, հի՛մա։

Եւ...եւ, եթէ... եթէ..., թէ...թէ = և՛... և՛... թե...թե։ Համարս պահանջէ ի մէնջ և վասն արտաքնոց, և վասն ներքնոց։ Եթէ մեք, և եթէ նոքա այսպես քարոզեցաք։

Եթէ, թէ = թե (հարցական խոսքերի մեջ, որոնք իմաստով ժխտում են իրար). օրինակ՝ Տացո՞ւք, եթէ ոչ տացուք։

Հարցական խոսքերի սկզբում **եթէ** = արդյոք, թերևս, գուցե. իսկ մի՛ **եթէ** կամ լոկ մի՛ = մի՛թե, մի՛ գուցե, չինի՛ թե. օրինակ՝ եթէ գիտիցե՞ս (= գիտե՞ս արդյոք), զի այսօր առնու տէր զտէրդ։

Եթէ...եւ եթէ, թէ...թէ, եւ թէպէտ, թէպէտ = թեկուզ...թեկուզ. կամ լոկ՝ թե (միայն երկրորդ խոսքի սկզբում. այսպես լինի թե այնպես իմաստով). օրինակ՝ Թէպէտ ի չար վարէր, և թէպէտ ի բարի, ոչ պարսաւանք ինչ էին նմա և ոչ գովութիւնք (= թեկուզ ի չարը վարեր, թեկուզ ի բարին, կամ՝ ի չարը վարեր, թե ի բարին)։ Թափեմք զձեզ ի գործակալացն յունաց, թէպէտ պատերազմաւ ընդ կայսեր, թէպէտ խաղաղութեամբ (= պատերազմով լինի թե խաղաղությամբ)։

Թէեւ, թէպէտ, թէպէտ եւ = թեև, թեպետ, թեպետ և, թեկուզ։

Թէ բիւր = թեպետ և շատ, շատ էլ, ինչքան էլ. օրինակ՝ Զի թէ բիւր չար իցէ (= շատ էլ չար է), սակայն...

Կամ, եւ կամ = կամ, և կամ, կամ թե։

Կամ...կամ, կամ թէ...կամ թէ = կամ...կամ։

Այլ, այլ եւ, այլ եւս = այլ, այլ և, էլ, այլևս։

Ոչ եթէ, ոչ թէ...այլ = ոչ թե...այլ։

Այլ = բայց, իսկ. օրինակ՝ Լուարուք, զի ասացաւ՝ ակն ընդ ական և ատամն ընդ ատաման։ Այլ ասեմ ձեզ՝ մի՛ կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա և զմիւսն։ Թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, այլ ներքին մարդս մեր նորոգի օր ըստ օրէ։

Այլ եթէ = բայց եթե։

Բայց=բացի, բայց եթե, օրինակ՝ Ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան (=բայց եթե, կամ բացի կորստեան որդին)։

Բայց, սակայն,—բայց սակայն, այլ սակայն=բայց, սակայն։

Համայն, եւ համայն, համայն եւ այնպէս=դարձեալ, բայց և այնպես, այնուամենայնիվ։

Իսկ=իսկ։

Իսկ=իսկ, հապա, բա՛ (հարցական խոսքերի սկզբում). օրինակ՝ Հարցանէին զնա ժողովուրդքն և ասէին. իսկ արդ (=հապա՛ այժմ) դի՞նչ գործեացուք։

Այլ արդ=բայց արդ։

Ապա եթէ, ապա թէ=իսկ եթե, իսկ թե։

Նա՛, նա՛մանաւանդ, նա՛ թէ=մա՛նավանդ թե։

280. Ստորադասական շաղկապներ.

Զի=որ (ամեն տեսակ երկրորդական խոսքերի սկզբում)։

Զի=որ, հարաբերական դերանունը, տե՛ս § 232. 1։

Զի, որպէս, որպէս զի=որ, որպեսզի (միայն ապառնի ժամանակների հետ՝ իբրև նպատակի խոսք). օրինակ՝ Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որպէս (=որ, որպեսզի) ոչայց զարդարութիւնս քո։

Զի, քանզի, վասն զի, փոխանակ զի,—որով, որովհետեւ=որ, զի, քանի որ, որովհետև (սովորաբար ներկա և անցյալ ժամանակների հետ իբրև պատճառական խոսք)։

Փոխանակ զի=նրա համար որ, օրինակ՝ Օրհնեացին ի զաւակի քում ամենայն ազգք, փոխանակ զի լուար ձայնի իմում։

Իբր զի, իբրու զի, որպէս զի=որ, այնպես որ, այնքան որ. օրինակ՝ Տէրն ինքնին օգնեաց մեզ, որպէս զի (=անպես որ) զանուն քոջութեան ժառանգեցաք։

Մա՛նաւանդ զի, այն զի=մա՛նավանդ որ։

Քան, քան՝ զի, քան եթէ, քան թէ=քանց, քանց որ, քան թե (առաջադաս բաղդատական խոսքերի սկզբում). օրինակ՝ Քան զնոսա արկանէր ի գեհեն՝ զնա որ պատրեացն զնոսա ընդէ՞ր ոչ արկանէր=Քանց նրանց էր գեհեն ձգում..., կամ՝ նրանց գեհեն ձգելու տեղ։

Եթէ, թէ=եթե, թե, թե որ (պայմանական խոսքերի սկզբում)։

Եթէ...ապա, ապա եւ, ապաքէն, ապա ուրեմն=եթե...ապա, օրինակ՝ Եթէ զիս գիտէիք, ապա և զՀայրն իմ գիտէիք։ Եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լինալ էր ձեր։ Կախարդն եթէ հանէր, ապաքէն դիւօք հանէր։

Եթէ, թէ=թե որ. օրինակ՝ Հաւատա՞յք, եթէ կարող եմ առնել=Հավատո՞ւմ եք, թե կարող եմ անել։ Ոչ եմք անձանց տեսութք, եթէ ըստ կամս գնասցուք=Մենք մեր գլխի տերը չենք, թե մեր կամքով շարժվենք։

Եթէ ոչ=եթե ոչ, բայց եթե։

Մինչ, մինչեւ, մինչդեռ = *մինչ, մինչդեռ, քանի, քանի դեռ, երբ, երբ դեռ. օրինակ՝ Յովսէփ եօթնուտասնամեայ էր, մինչ (= երբ) արածէր եղբարբքն հանդերձ խաշինս։ Մինչև (= մինչդեռ) մեք զայս կամէաք հնազանդել, մեր՝ որ վարդապետք օրինացդ էին, զկնի նոցա մոլորուիլանն խոտորեցան։*

Մինչեւ, յորմէ հետէ = *այն օրից երբ, այն օրից ի վեր. օրինակ՝ Մինչև գնաց Մեսրոպ յարքունական դրանէն, ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի դպրաց։ Երեք ամք են, յորմէ հետէ գամ։*

Մինչ, մինչեւ = *մինչև, մինչև որ։*

Մինչ, մինչեւ, մինչ զի = *այնպես որ, այնքան որ, մինչև որ. օրինակ՝ Շրջշրջէին զնա անդէն, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ։ Եղև պատանեկան իբրև զմեռեալ, մինչև բազմաց ինչ ասել թէ մեռաւ։ Շարժումն մեծ եղև ի ծովուն, մինչ նաւին ծածկել յալեաց անտի (= ...այնպես որ նավը ծածկվեց...)։ Ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն։*

Գրաբարում այս իմաստով մինչ, մինչեւ *դրվում են նաև անորոշ դերբայի հետ, իսկ աշխարհաբարում միշտ դիմավոր բայով է ասվում։*

Մինչչեւ = *քանի դեռ չ..., դեռ չ. օրինակ՝ Մինչչեւ հաւու խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս = Հաւը դեռ խոսած չի լինիլ, (որ երեք անգամ) կ'ուրանաս ինձ։*

Աշխարհաբար այս երկրորդական խոսքը սովորաբար անցյալ դերբայով կամ առաջ բառով է ասվում։— Աքլորը դեռ չկանչած՝ դու...։ Աքլորը կանչելուց առաջ...։

Չեւ, չեւ եւս = *դեռ չ... Օրինակ՝ Չև էր ուրուք ձեռնարկեալ (= Դեռ ոչ ոք չէր դիպել)։ Ի ճշմարտութեան վերայ չև է հասեալ։ Չև էր հասեալ ժամ նորա։*

Իբրեւ, յորժամ = *երբ, երբ որ։*

Ցորժամ = *մինչև (այն ժամանակ) որ. օրինակ՝ Անդ լինիջիր, ցորժամ առացից քեզ։*

Ուստի = *ուստի։*

Ապա թէ ոչ = *ապա թե ոչ։*

Թող թէ = *թող թէ։*

Այսինքն է, այս է = *այսինքն։*

231. *Իբրև ստորադասական շաղկապ բանում են, ինչպես աշխարհաբարում, և հարցական բառերը, երբ առանց հարցման իբրև հարաբերական բառ են գործածվում։ Դրանց եռևից կարող է իբրև թարմատար շաղկապ դրվել եւ = էլ, էլ որ, երբեմն նաև թէ = որ։ Օրինակ՝ Երբ և է՝ յայտնելոց են (= երբ էլ լինի...)։ Ջինչ և խնդրեսցես՝ տաց քեզ = Ինչ էլ որ խնդրես՝ կտամ քեզ։*

282. *Հարաբերական կամ շաղկապական* **or** *դերանվան (հոլովումը տե՛ս § 101. 5) և նրանով կազմված խոսքերի համար պետք է իմանալ.*

1. **Or** *հարաբերականի հոլովների փոխանակ գործ են ածվում՝* **ur, ուստի, զի, յորժամ, որպէս, իբրեւ.** *օրինակ՝* **ելն ի քաղաքն, ուր** *(յորում) սնեալն էր։ Դարձայց ի տուն իմ, ուստի (=յորմէ) ելի։ Մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն, զի (=որ, որք) սիրեն... Եգիտ անդ զօրս բազումս պարսից, զի զաշխարհն չինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն։ Ի ժամանակի, որպէս (=յորում, յորժամ) ապստամբեցին հրեայք Ադրիանոսէ։ Ի ժամանակի, որպէս բորբոքեսցի բարկութիւն նորա։**

2. Երկրորդական հարաբերական խոսքը կարող է և գլխավոր խոսքից առաջ ընկնել. հարաբերյալն այս դեպքում դրվում է երկրորդական խոսքի վերջում, երբեմն և գլխավոր խոսքի մեջ, և հաճախ մնում է ուղղական հոլովով։ Օրինակ՝ **Or** *բասիլիսկոսն կոչի* **ազգ օձից՝** *հայելով միայն սատակէ։ Եւ* **or** *ի վերայ բագնին և սեանն կային* **պատկերճ՝** *ծածկեալ պատեցին եղեգամբ (=եւ զպատկերսն որ ի վերայ բագնին և սեանն կային, ծածկեալ պատեցին)։*

3. **Or** *հարաբերականն առանց հարաբերյալի, եթե որոշ իմաստ ունի՝ թարգմանվում է նա* **or, այն or.** *իսկ եթե ընդհանուր անորոշ իմաստ ունի, ստանում է հարաբերական անորոշ դերանվան նշանակութիւն իբրև՝* **ո, ոք, or, որ,—զինչ, or զինչ, or ինչ**=*ով որ, ինչ որ, որը որ, որ մեկը որ, այն որ, այն ինչ որ, նա որ։ Օրինակ՝ Զոգաւ վաղվաղակի որ (=նա որ) առ զհինգն (զհինգ քանքարն), գործեաց նոքօք և շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյնպես և որ (=նա որ) զերկուսն, շահեցաւ այլ ևս երկուս։ Եւ որ (=նա որ) զմին առ, գնաց փորեաց զերկիր և թագոյց զարծաթ տեառն իւրոյ։—Եւ մատուցեալ որ (=նա որ) զհինգ քանքարն ա՛ռ... Մատուցեալ և որոյ (=նա որ) զերկուս քանքարն առեալ էր... Հնձես զոր (=այն որ) ոչ սերմանեցեր։ Ամենայնի, որ (=ով որ) ունիցի՝ տացի և յաւելցի. և որ (=ով որ) ոչն ունիցի, և զոր (=ինչ որ) ունիցին՝ բարձցի ի նմանէ։ Բառնամ զոր (=այն ինչ որ) ոչ եդի։ Երանի որում (=նրան որին, ում որ) թողութիւն եղեւ։ Արկ զիւրև յորոյ վերայ (=ինչի վրա որ, այն որի վրա) անկեալ դնէր։ Որոց (=ովքեր որ) պէտք էին բժշկութեան՝ բժշկէր։ Անիրաւ թագաւոր ոչ տացէ զվարձս վաստակոցն՝ որ (=նրանց որ) մտադիրս պատրաստին մեռանել ի վերայ նորա։ Դուք ոչ մտանէք և որ (=ովքեր որ) մտանելոց են՝ արգելուք։ Որ (=ով որ) կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս։ (Տե՛ս § 30. 3)։*

Or nf *(=որ մեկը որ, որը որ) ի նոցանէ վաղ առ իս եկեսցէ, զնա արարիցէ թագաւոր։ Եւ* **or** *կամիցի* **nf** *(=ով որ) դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նա և զբաճկոն քո։ Առաքեա յոյր ձեռն (=ում ձեռքով*

որ) առաքելոց ես։ Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք։ Ծագեա զողորմութիւն քո՝ ոյք (=նրանց որ) ճանաչեն զքեզ։ Ո nf և (=ով որ էլ) երթայր առ նոսա՝ ուսուցանէին կամակար։ Արարին ընդ նա զոր ինչ (=ինչ որ) կամեցան։ Ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ (=ամեն ինչ որ) պատուիրեցի ձեզ։ Զոր ինչ (=ինչ որ) ծախիցես ի դա, հատուցից քեզ։ Որ զինչ և (=ինչ էլ որ) ասիցէ ձեզ, արասջիք։ Զինչ (=ինչ որ) և անուանեաց Ադամ, այն է անուն նոցա։ Դարձուցից ուստի (=այնտեղ, որտեղից որ) ելինն։

4. Երբեմն որ հարաբերականը դրվում է ոչ այն հոլովով, որ պահանջում է երկրորդական խոսքի իմաստը, այլ այն հոլովով, որ պահանջում է գլխավոր խոսքի իմաստը և որ պիտի ունենար իբրև հարաբերյալ դրված ցուցականը, եթե լիներ։ Օրինակ՝ Որում խնդրէ ի քէն՝ տուր=Այնմ որ խնդրէ ի քէն՝ տուր։ Որոց (=այնոցիկ, որք) մտանեն՝ չտայք թոյլ մտանել։ Գտին ժողովեալ զմեռասանսն և զորս (=զայնոսիկ, որք) ընդ նոսայն էին։ Կարդային առ որ (=առ այն, որ) յամենայն ժամանակի պաշտպան լինէր ազգին իւրեանց։ Որ բամբասէն՝ կորուսանէ գանձն իւր և զորոց (=զայնոցիկ, որք=զանձինս այնոցիկ, որք) լսենն։ Հնձեմ ուստի (=անտի, որ) ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի (=անտի, ուր) ոչ սփռեցի։ Երկիր պագանեմք որում գիտեմքն։ Վասն որոյ (=վասն այնորիկ, որ) կախեցեր ինձ աղ... յուսամ...

Ծան. Որ հարաբերականը հաճախ աշխարհաբար քարգմանվում է ցուցական դերանունով. մանավանդ վասն որոյ, ոյր վասն, յոյր սակս=վասն այսորիկ, վասն այդորիկ, վասն այնորիկ. կամ՝ յայս սակս, յայն սակս, կամ՝ սմին իրի, գմին իրի, նմին իրի=սրա համար, դրա համար, նրա համար. կամ՝ այս պատճառով, այդ պատճառով, այն պատճառով։

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

288. *Գրաբարում ձայնարկութիւնները հաճախ առնում են տրական խնդիր։ Ինչպես աշխարհաբարում երանի՜ նրան, վա՜յ քեզ, այսպես և գրաբարում ասվում են՝ աւա՜ղ (աղետիցս), բաբէ՜ (թշուառութեանս), ո՜հ (անմտութեանն), ո՜վ (սքանչելեացն), վա՜շ (ինձ)։*

Շատ գործածական ձայնարկութիւններից են նաև՝ աղէ՜, օ՜ն, հա՜պա, օ՜շ թէ, իցի՜ւ, իցի՜ւ թէ (=երանի՜ թե)։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ց Ա Ն Կ Ե Ր

Մանուկ Աբեղյանի երկերի այս 6-րդ հատորում հրատարակվող հինգ աշխատություններից չորսը մինչև այժմ ունեցել են երկուական հրատարակություն։ «Գրաբարի քերականությունը» առաջին անգամ հրատարակվել է 1907 թ., իսկ 2-րդ անգամ (վերամշակված) 1936 թ.։ «Աշխարհաբարի հոլովները» առաջին անգամ տպագրվել է «Արարատ» ամսագրում 1908 թ., որից և արտատպությամբ հրատարակվել է առանձին գրքույկով նույն թվականին։ «Աշխարհաբարի շարահյուսությունը» առաջին անգամ տպագրվել է 1912 թ., «Հայոց լեզվի տեսությունը»՝ 1931 թ.։ Վերջին երկուսը միասին երկրորդ անգամ հրատարակվել են 1965 թ.։ «Հայկական հոլովը» հրատարակվել է միայն մեկ անգամ 1909 թ. առանձին գրքով։

Հատորի մեջ ամփոփված աշխատությունները հրատարակվում են այնպես, ինչպես հրատարակվել են հեղինակի կենդանության ժամանակ, միայն նոր, այժմ գործող ուղղագրությամբ, որը որոշ չափով տարբերվում է հեղինակի կենդանության ժամանակ քե մինչև 1922 թ. և քե նրանից հետո մինչև 1941 թ. գործող ուղղագրությունից։ Ուստի այն դեպքերում, երբ տարբերություն կա որևէ, հատկապես հնչյունական երևույթների բացատրության համար բերված օրինակների այժմյան գրության և հեղինակի կենդանության ժամանակ հրատարակվածի միջև, դրանց վերաբերյալ տրված են ծանոթագրություններ։ Այստեղ պետք է նկատի ունենալ միայն հետեվյալը։ 1931 թ. հրատարակված «Հայոց լեզվի տեսության» մեջ ձայնավորների նկարագրության և դրանց դասակարգումը ներկայացնող ցուցակի մեջ դրված են ի, ե, ը, ու, ո, ա տառերը, որոնք այդ ժամանակ արտահայտում էին մեր բոլոր ձայնավոր հնչյունները։ Բայց այժմ մեր այբուբենի մեջ բացի այս վեցից կան նաև մինչև 1922 թ. ուղղագրության ռեֆորմը հայերենի այբուբենում եղած է և օ տառերը։ 1931 թ. հրատարակության մեջ եղած ձայնավորների ցուցակը և նկարագրությունը նույնությամբ դնել՝ դուրս թողնելով այս վերջին երկու տառը, ճիշտ չի լինի, քանի որ բառասկզբի է-ն ներկայացնում է նույն հնչյունը, ինչ որ բառամիջի և բառավերջի ե-ն, իսկ բառասկզբի օ տառի հնչյունը նույնն է, ինչ որ բառամիջի և բառավերջի ո տառինը, այսինքն՝ լատիներենի այբուբենով արտահայտած e և o տառերի հնչյունները մեր լեզվում այժմ արտահայտվում են երկուական տառերով՝ e-ն արտահայտվում է ե և է, իսկ o-ն՝ ո և օ տառերով։ Ուրեմն այս երկու (e, o) հնչյուններից յուրաքանչյուրի համար ունենք երկուական տառ, որոնք պետք է արտահայտվեն ձայնավորների դասակարգման և նկարագրության մեջ։ 1965 թ. հրատարակության մեջ ե և ո տառերի փոխարեն դրված է է և օ, որ ճիշտ չէ, քանի որ e և o հնչյունների հիմնական տառերը մեր լեզվում այժմ ե և ո տառերն են և դրանք չի կարելի ձայնավորների ցուցակից դուրս թողնել։ Թեպետ այս վերջին երկու տառերը բառի սկզբում երկու հնչյուն են ներկայացնում՝ ե=յե, իսկ ո=վո, սակայն հազարավոր բառերի մեջ ե-ն ներկայացնում է լատիներենի e, իսկ ո-ն օ տառի հնչյունը, մինչդեռ է և օ տառերը նույն հնչյունների համար գրվում են միայն սակավաթիվ բառերում։ Այդ պատճառով էլ ճիշտ այն կլինի, որ միևնույն հընչյունն արտահայտող երկու տառերն էլ դրվեն, ինչպես վարվել է Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականության» մեջ. «Հայոց լեզվի ձայնավորները վեց են՝ ա, է(ե), ը, ի, օ(ո), ու» (Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 16)։ Այսպես է դրված նաև այս հրատարակության մեջ. «Հայոց լեզվի տեսության» մեջ ձայնավորների

ցուցակում ե և ո տառերի տեղ համապատասխանաբար դրված է է(ե) և օ(ո), և բոլոր այն դեպքերում, երբ հեղինակը խոսում է ե ձայնավորի մասին և դնում է ե, սույն հրատարակության մեջ դրված է է(ե), իսկ երբ խոսում է օ ձայնավորի մասին և դնում է ո, այս հրատարակության մեջ դրված է օ(ո):

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. էջ 74։ Այս բառը նախորդ հրատարակություններում տպված է «երկայնությունից». այստեղ ուղղված է համաձայն հեղինակի մի աշխատության հետևյալ ծանոթագրության. «Ահրիից օգտվելով՝ ուզում եմ ուղղել մի կոպիտ վրիպակ, որ սպրդած է իմ այս աշխատության հենց այս 88-րդ էջում. տպված է «խոսքի հնչյունները տարբերվում են իրենց ավելի կամ պակաս ուժով, որ կախված է տատանումների երկայնությունից»։ Պետք է լիներ «լայնությունից»։ Հիշյալ աշխատությունը տպված է Մ. Աբեղյանի երկերի Ե հատորում, էջ 453—500, ծանոթագրությունը՝ 496 էջի տողատակում։

2. էջ 98։ 1931 թ. հրատարակության մեջ այս բառերը տրված են այդ տարիներին գործող առավել հնչյունական գրությամբ՝ սկզբի յ և վ տառերով, որոնք այժմ չեն գրվում, ուստի և այդ տառերը տրվում են ընդգծված։

3. էջ 100։ Այս հատվածում 1965 թ. հրատարակության մեջ բաց է թողնված անճշտություն. բերված բայերի անցյալ անկատարի ե-ով գրությունը փոխված է է-ի, որով անհասկանալի է մնում հեղինակի բացատրությունը՝ «ե տառին փոխանակել է է=եյ տառը» և «հին գրաբարում» և «միջնադարում» բառերը։ Նույն սխալը կրկնված է նաև § 252-ում, որտեղ գրել բայի անցյալի ձևերը, որ հեղինակը տվել է հին գրությամբ՝ գրեի, գրեիր, գրեաք, գրեիք, գրեին, 1965 թ. հրատարակության մեջ փոխված են միջնադարյան գրության՝ գրէի, գրէիր և այլն։ (Այս ձևերի մասին տե՛ս նաև «Հայոց լեզվի տեսություն» § 262 և «Գրաբարի քերականություն» § 15)։

4. էջ 100։ Բերված օրինակների մեջ՝ ձայնավորով վերջացող բառերի և հաջորդ եմ բայի միջև ձայնավորների հանդիպումը, այսինքն հորանջը վերացել է այդ ձայնավորների մեջ մտնող յ հնչյունի արտասանությամբ։ Գրության մեջ էլ 1922—1940 թթ. ուղղագրությամբ նույն հնչյունն արտահայտվում էր եմ բառի սկզբում գրվող յ տառով։ Այժմ եմ բայի բոլոր ձևերը գրվում են առանց սկզբի յ տառի, ուստի և այդ տառը բերված օրինակներում տրվում է ընդգծված։

5. էջ 134։ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» վեց հատորով հրատարակվել է 1926—1932 թթ. ապակեհիպ, իսկ յոթերորդ հատորը, որ հավելվածն է, տպագրվել է 1935 թ. պետհրատի տպարանում։

6. էջ 162։ Բերված օրինակներում բառամիջի երկու ձայնավորների միջև արտասանվում է յ հնչյունը, որը սույն աշխատության 1931 թ. հրատարակության մեջ գրությամբ էլ արտահայտված է այդ ժամանակ ընդունված ձևով՝ յ տառով։ Այժմ բերված բառերի մեջ յ տառը չի գրվում, ուստի և այն տրվում է ընդգծված։

7. էջ 173։ 117-րդ և 118-րդ պարագրաֆներում ենք և ետ առաջադիրները «Հայոց լեզվի տեսության» առաջին հրատարակության մեջ տրված են այն ժամանակ գործող ուղղագրությամբ՝ յենք, յետ, իսկ սույն հրատարակության մեջ տրվում են այժմ գործող ուղղագրությամբ՝ առանց սկզբի յ տառի։ Այս պատճառով առաջադիրների շարքի այբբենական կարգը ներկա հրատարակության մեջ խախտված է այդ երկու բառերով։

8. էջ 252։ 1931 թ. հրատարակության մեջ այս § 254-ից հետո գալիս է § 256, բաց է թողնված § 255-ը, դա վրիպակ է։ Որպեսզի այդ բացթողումը չլինի, այստեղ այդ պրակը տրվում է այսպես՝ 254—255։ Այդպես է արված նաև 1965 թ. հրատարակության մեջ։

9. էջ 272։ Չակերտների մեջ բերվածը քաղվածք է գերմանացի նշանավոր լեզվաբան Հերման Պաուլի (1846—1921) «Լեզվի պատմության սկզբունքները» գրքից։ Տե՛ս սույն հրատարակության մեջ 627 էջի տողատակի ծանոթությունը։

10. էջ 279։ Չակերտների մեջ բերվածները քաղվածք են Հերման Պաուլի «Լեզվի պատմության սկզբունքները» գրքից։ Տե՛ս սույն հրատարակության մեջ 630 էջի տողատակի ծանոթությունը։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. էջ 307։ «Աշխարհաբարի շարահյուսության» 1912 թ. հրատարակության մեջ կրավորական ածանցը և բայը տրված են այդ ժամանակ գործող ավանդական—ստուգաբանական դրությամբ՝ ու. կարդացուել։ Այստեղ այդ ածանցը դրվում է «վ» (ու), ինչպես դրել է հեղինակը «Հայոց լեզվի տեսության» մեջ 1931 թ.՝ § 241, 3-ում. «կրավորական բայերը կազմվում են «վ (ու) մասնիկով»։ Այդ ձևով ճշգրտորեն ներկայացվել է այդ ածանցի և ստուգաբանական և այժմյան գրության ձևը։

2. էջ 308։ 1912 թ. հրատարակության մեջ այս վերջավորությունն ու ածանցը տրված են այդ ժամանակ գործող գրաբարյան ուղղագրությամբ՝ է, եայ։ Այժմ այդ վերջավորությունն ու ածանցը գրվում են՝ ե, յա։ Այստեղ դրանք տրվում են այնպես, ինչպես դրված են «Հայոց լեզվի տեսության» § 160, և § 189-ում՝ ե (հին է), յա (հին եայ)։

3. էջ 373։ Տե՛ս 2-րդ ծանոթագրությունը։

4. էջ 389։ 1912 թ. հրատարակության մեջ չկա «=հ», այն ավելացված է սույն հրատարակության մեջ, այն նկատառումով, որ բերված օրինակներից երկուսը՝ յանուն և յօգուտ բառերը, արդի ուղղագրությամբ գրվում են ն տառով՝ հանուն, հօգուտ։

5. էջ 428։ «Անձայն յ տառ» ասելով հեղինակը նկատի ունի մինչև 1922 թվականը գործող ուղղագրությամբ բառի վերջում ա-ից և ո-ից հետո գրվող յ-ն, որը չէր արտասանվում՝ փեսայ, երեկոյ=փեսա, երեկո։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

1. էջ 624։ 1908 թ. հրատարակության մեջ տպված է «է վերջավորությամբ». այստեղ դարձված է «ե (հին է) վերջավորությամբ»։ Տե՛ս «Աշխարհաբարի շարահյուսության» 2-րդ ծանոթագրությունը։

2. էջ 633։ Այս տողատակի բացատրությունը վերաբերում է բերված բառերի գրության այն ձևին, որ ընդունված էր մինչև 1922 թվականը։

3. էջ 634։ Այս և նախորդ երկու պարբերությունների բացատրության մեջ քննարկված վերջավորությունները 1908 թ. հրատարակության մեջ տրված են այդ ժամանակ գործող ուղղագրությամբ, ըստ որի բերված անունների հոլովական վերջավորության մեջ վ հնչյունը գրվում էր ւ տառով՝ գիշերուան, գիշերւայ, երեկուան, երեկւայ և այլն. նմանապես՝ «կիսաձայն յ-ի տեղ անցել է ւ»։ Այստեղ տրվում է համաձայն «Հայոց լեզվի տեսության» 1931 թ. հրատարակության § 272. 3-ի, որտեղ կա նույն երևույթի բացատրությունը։

ԳՐԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տպագրվում է ըստ 1936 թ. երկրորդ վերամշակված հրատարակության։

1. էջ 712։ «Ուստի այդ մասին չի գրված այս քերականության մեջ» նախադասությունը Մանուկ Աբեղյանի ձեռքով ավելացված է «Գրաբարի քերականության» 1936 թ. հրատարակության այն օրինակում, որ պահվում է հեղինակի որդու՝ ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանի մոտ։

2. էջ 712։ 1936 (ինչպես նաև 1907) թ. հրատարակության մեջ որպես օրինակ դրված է նաև «կին մի=մի կին», որը հեղինակի ձեռքով չնչված է 1936 թ. հրատարակության այն օրինակում, որը պահվում է Մանուկ Աբեղյանի որդու՝ ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանի մոտ։

ՀԱՄԱՌՈՏ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ*

ԱԴԱԿԱՆ *25, 28, 106—109, 116, 132, 133, 148, 158, 165, 166, 174, 179, 180, 184, 193—200, 205, 206, 209—211, 213, 216, 217, 219, 220, 224—226, 228, 229, 274, 278, 282, 296, 297, 311, 333, 348, 350, 355, 356, 367, 368, 381, 385, 419, 444, 588—591, 596, 601, 620, 764, 780, 783, 787, 799*

ա. լրացում 300

անուն ա. կամ ա. անուն 297

բարդ ա. 333

դասական ա. 207

դերանուն ա. 297

դերբայ ա. 107, 297

թվական ա. 107, 297

սեռական ա. 595, 632—636

որակական ա. 108, 155, 348, 349, 370, 379, 380, 430, 605

ստացական ա. 275, 276, 282, 387, 429, 586, 594—596, 601, 621, 693, 695

ցուցական ա. 110, 429

քանակական ա. 109

ԱԴԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ *588—591*

ԱԴԱՆՑ *(ածանցական մասնիկ) 10, 11, 15, 132, 133, 141, 157, 182—188, 190—200, 202—239, 272, 280—282, 626—637, 654, 661, 719, 722, 723, 757—759, 762, 764—770, 773—778*

ԱԴԱՆՑԻԿ *184—193*

ԱԴԱՆՑՈՒՄ *180—193, 208, 240*

ԱԴԱՆՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ *9, 10, 135, 136, 185, 193*

ԱՄԱՆԱԿ *81*

ԱՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ *34—36, 39—44*

ԱՆԿԱԽԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ *407*

ԱՆՋԱՏՄԱՆ ԳԻԾ *566*

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԶԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ *164*

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԴԱՆՑՆԵՐ*—տե՛ս* ՎԵՐՋԱԴԱՆՑՆԵՐ

ԱՆՈՒՆ *106, 107, 173, 207, 235, 237, 274, 297, 305, 421—426, 428, 434, 435, 437, 571, 572, 585*

անձական ա. 756, 798, 799

անձի հասարակ ա. 194, 200, 219

անձի հատուկ ա. 194, 200, 219

անորոշ ա. 275, 277, 583—584, 751

անշատական ա. 109

անուն ածական—տե՛ս ԱԴԱԿԱՆ

անուն գոյական—տե՛ս ԳՈՅԱԿԱՆ

բայածանց ա. 234

բայական ա. 514

բնաձայնության և գործողության ա. 215

գործող անձի ա. 123, 166, 202

գործողության ա. 122, 166, 200, 211, 227

ժամանակի ա. 280, 281, 312—314, 403, 406

հասարակ ա. 108, 109, 117, 118, 766

հավաքական ա. 109

հատկության վերացական ա. 122

հատուկ ա. 110, 111, 118, 630, 673, 765—766

հարաբերյալ ա. 502, 503, 505, 508

որոշված ա. 275

պատճառի ա. 123

սեռի ա. 117, 118

վերացական ա. 27, 166

տեղի ա. 200, 228, 314—320, 403, 404

ԱՌԱՋԱԴԻՐՆԵՐ*—տե՛ս* ՄԱՍՆԻԿՆԵՐ

ԱՌՈՒՄՆԵՐ *113—116*

ԱՍԱՑՎԱԾ *494, 557*

ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ *252, 255, 302, 442, 443, 514*

---

* *Ցանկը կազմել է Ժ. Մ. Ադոնցը:*

ԱՐՄԱՏՆԵՐ 11—13, 135, 136, 148, 174
բնաձայնության կամ նմանաձայնության ա. 13
ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ՝ 11, 12

ԲԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ 408, 409, 412
ԲԱՂԱԴՐԻՉ 164—166, 169, 181, 182
ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ 135—138, 145, 154,—159, 165—169, 176, 181, 183, 185, 187, 194, 211, 220—222, 225, 495
անվանական բ. 164
իսկական բ. 168
կցական բ. 168
նախդրավոր բ. 168
նախնական բ. 155
ստացական բ. 165
ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ 64, 68—81, 90, 91, 95, 100, 102, 147, 148, 157, 163, 716
անձայն բ. 69
անձայն աղմկավոր բ. 65
առաջաքմային բ. 71
ատամնաշրթնային բ. 70
ատամնային բ. 69, 70
ատամնային կրկնակ բ. 73
ատամնա-քմային կրկնակ բ. 73
բարդ բ. 72
բերանային բ. 69
երկշրթնային բ. 69
թույլ կամ փափուկ բ. 69
լեզվային բ. 70
կատկային բ. 70, 71
կրկնակ կամ կես-պայթական-(կես-շփական) բ. 73
ձայնեղ բ. 69
ձայնեղ աղմկավոր բ. 64, 65
ձայնորդ—տե՛ս ձայնորդ կամ նայ (քաց) հնչյուն
նեղուածքի (շփական կամ տևական) բ. 68—70, 81
շրթնային բ. 69
շփական բ. 70
ռնգային բ. 69, 70
ուժեղ կամ կոշտ բ. 69
փակվածքի (պայթական կամ վայրկենական) բ. 68, 70
քմային բ. 69, 71
ԲԱՂԴԱՏՈՒԹՅՈՒՆ 119, 120
նմանության բ. 397
ԲԱՂՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 142, 143, 163
ԲԱՅ 25, 28, 100, 106, 112, 139, 201, 203, 215, 216, 231—237, 240—285, 294—303, 309. 322, 355, 367, 371, 372, 385—387, 401—417, 438—443, 515, 529, 585, 718—755, 798
ածական բ. 300, 301
անանցողական բ. 306, 307, 326—328, 341, 753
անկանոն բ. 269, 735—740
անցողական բ. 306—308, 327, 328, 341, 415, 446, 463, 733, 743
անվանածանց բ. 234
առարկայական բ. 304, 305
բաղմապատկական բ. 237—239, 719
բայածանց բ. 237
դիմավոր բ. 295
դրական բ. 253
ենթակայական բ. 304, 306, 307
էական բ. 300, 301
կրավորական բ. 42, 209, 223, 226, 232, 237—239, 306—309, 356, 462, 617, 733
կրկին պատճառական բ. 307
համանիշ բ. 252
հասարակ բ. 733, 734
հավելավոր բ. 250, 251, 468
հարադրական բ. 137—142, 148, 150, 152, 168, 169, 171, 299, 329, 341
նախդրավոր բ. 149—153
ներգործական բ. 140, 208, 235, 306—308. 733, 734
չեզոք բ. 235, 236, 306—308, 355, 462
պակասավոր բ. 740—743
պատճառական բ. 42, 231, 237, 238. 268, 306—308, 353, 719—722, 734
ստորոգելիական բ. 300, 301
վերացական բ. 139, 301
օժանդակ բ. 743, 751, 752
ԲԱՅԱԲՈՒՆ 165, 174, 193—195, 200, 210, 229, 236, 241
ԲԱՅԱՄԱԿԱՆ 164, 208, 297, 301
ԲԱՅԱՆՈՒՆ 107, 200, 297, 305
ԲԱՅԱՐՄԱՍ 158, 165, 168, 195, 200, 209, 210, 215, 221, 222, 224, 229—231
ԲԱՅԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ 720, 721
ԲԱՅԻՄԱՍՏ 294—297, 299—302, 305, 309
ԲԱՅԻ ԴԵՄՔ 27, 240—242, 294, 295, 301—304, 413
ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 243—271, 458—494
ենթադրական եղ. 243—245, 264, 265, 473—484, 491—494

բացասական—330
Հարկադրական եղ. *243—245, 265, 483—485, 493, 494, 749*
Ղծական եղ. *241, 243—250, 264—266, 486—494, 748*
արգելական—266
բացասական—487
կարելիական—245, 247, 250, 264—266
հորդորական—487
պատվիրական—246, 247, 264
ցանկության—245, 246, 250, 264
Սահմանական եղ. *243—245, 247—257, 263—267, 460—473, 724, 725, 729—732*
Հրամայական եղ. *241, 243, 245, 247, 248, 266, 268, 270, 486, 487, 724*
դրական—267
Ստորադասական (կանյուկտիվ) եղ. *245—248, 250—252, 264, 489, 724*
անկատար—248
խորհրդակցական (դելիբերատիվ)—246, 250
կամական (վոլիտիվ)—246, 247, 250
կատարյալ—248
նախատեսական (պրոսպեկտիվ)—246, 250
ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ *242, 243, 459, 745—752*
անցյալ—242, 266, 459
ապառնի—242, 459, 738
բաղադրյալ—243, 270, 743—752
հարաբերական—469—473
ներկա—242, 266, 459
նախատեսական ապառնի—263—265
պատմական—747
պարզ—270
տևական ներկա—263
Ենթադրական եղանակի
անցյալ—473—481
ապառնի—476—479, 492, 746, 747, 749
ապառնի անցյալ—478, 479
առածական ներկա—468, 480
ներկա—473—481
պատմական ներկա—480, 483
պարզ ներկա—478—480
Ղծական եղանակի
անցյալ—266, 267, 270, 487
ապառնի—492, 746, 749
ներկա—266, 270
արգելական—266
Հրամայական եղանակի
ապառնի—725, 726, 729, 749
արգելական ներկա—725, 729, 745
ներկա—726, 745, 749
Սահմանական եղանակի
անկատար անցյալ—248—252, 254, 255, 257, 263—267, 460, 463, 466—470, 725, 729, 746, 747
անցյալ—247, 249, 253, 265, 267
անցյալ կատարյալ—268—270, 463—468, 472, 726, 737—740, 745, 751, 745
ապառնի—258, 261, 262, 464, 465, 472, 473
ապառնի անցյալ—461, 463, 472
առածական ներկա—480
բացարձակ ներկա—470
կրկնության ներկա—468
հարաբերական ներկա—470
հարակատար, հարակատար ներկա—461, 472
ներկա—247—255, 257—266, 460, 465—468, 725, 726, 729, 745—747
պատմական ներկա—468, 470
սովորության ներկա—468
վաղակատար անցյալ 461, 472
վաղակատար, վաղակատար ներկա—461, 464, 466, 467, 471, 472
Ստորադասական եղանակի
ապառնի—725—729, 738—740, 747, 748
ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ (գրաբարի) *724—755*
խառն խ. 724, 727, 728
կրավորաձև խ. 724, 727, 728, 738
ներգործաձև խ. 724, 726—728, 730, 733, 734, 738
բաղադրյալ խ. 734
բաղադրյալ կրավորական խ. 735
ԲԱՅԻ ԿԵՐՊԵՐԸ *242, 243, 248, 459*
կատարելի—242, 243, 271, 459, 460, 465, 470, 471, 473, 474, 477, 484, 493
կատարված—242, 243, 271, 384, 459, 460, 465, 470, 471, 473, 474, 477, 493
կատարվող—242, 243, 270, 459, 460, 465, 466, 469, 471—474, 476, 484, 493
պարզ—242, 243, 270, 459, 460, 465, 473, 474, 476—478, 485, 493, 494
ԲԱՅԻ ՍԵՌԸ—*տե՛ս* ԲԱՑ, ԽՆԴԻՐ
ԲԱՅ-ՍՏՈՐՈԳՅԱԼ *298—301, 527*
ԲԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԼԵԿՍԻԿՈԼՈԳԻԱ) *56*
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ *14, 135, 161, 712*
ԲԱՌԱՇԵՇՏԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ *89—93*
ԲԱՌԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ *11, 13, 14, 240*
ԲԱՌԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿԱՆ ՄԱՍ—*տե՛ս* ՄԱՍՆԻԿՆԵՐ
ԲԱՌԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՎԵՐԱՑԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ *22, 23, 108*

ԲԱՌԻ ԹԱՆԶՐԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 22, 23, 108
ԲԱՌԻ ՄԱՍՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 119
ԲԱՌԻ ՁԵՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 9, 10, 30, 39
ԲԱՌԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 9—11, 26, 30, 39
ԲԱՌԻ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 114
ԲԱՌԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ 119
ԲԱՐԲԱՌ 47—57
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԴԻԱԼԵԿՏՈԼՈԳԻԱ) 57
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ 135, 136, 138, 146, 153, 154, 161—169, 181—184, 187, 189, 210, 273
իսկական բարդություններ 137, 148, 153, 154, 163, 168
կշռական բարդություններ 137, 141—149, 161, 169, 717
հարադրական բառեր 160
ԲԱՑԱԳԱՆՉԱԿԱՆ ՆՇԱՆ 568
ԲԱՑԱՀԱՅՏԻՉ 320, 321, 325, 408, 418—421, 443, 447, 499—500, 503, 504, 671, 672, 800
ԲԱՑԱՀԱՅՏԱԿԱՆ 320, 321, 408, 418—420, 447, 671, 672, 800
ԲՆԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ 22
ԲՈՒՔ 562—564, 567
ԲՆԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
կատարյալ—266, 268, 727, 730
ներկայի—266, 718
ներկայի բնի (լծորդի) ժամանակներ 266, 729, 733, 735, 740
ԲՈՒՆ 10—12 154, 159, 247, 251, 277, 279, 280, 618, 626, 628—631, 724—726
ածանցական—11 12, 268
անկատարի կամ ներկայի—247, 248, 460
արմատական—11, 12, 268—270
կատարյալի—247, 248, 266, 268, 719, 724, 726, 727, 737—740
հրամայականի—269

ԳԻՒ ԿԱՄ ԱՆՋԱՏՄԱՆ ԳԻՒ 562, 564, 566—568
ԴՈՒԿ 146, 147
ԳՈՅԱԿԱՆ 25, 28, 29, 32, 33, 106—108, 116, 144, 145, 147, 149, 158, 165, 194—199, 205—210, 213, 214, 216, 219, 223, 225, 229 271—283, 296, 297, 302, 305, 311, 314, 345, 346, 386, 387, 400, 571, 572, 575, 585, 592, 593, 642
դերանուն գ. 107, 297
դերբայ գ. 297
թվական գ. 297
ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ 146

ԴԱՐՁՎԱԾՆԵՐ 124, 125
ԴԵՄՔ—*տե՛ս* ԲԱՅԻ ԴԵՄՔ
ԴԵՐԱՆՈՒՆ 106, 107, 111, 207, 210, 275, 277, 282, 297, 305, 418, 434—437, 571, 583, 584, 587, 600, 605, 618, 636, 663, 664, 778, 784
ածական դ. 107, 297
անձնական դ. 111, 275, 584, 585, 590, 593, 594, 628, 784, 785
անորոշ դ. 111, 778, 781—783
գոյական դ. 107, 297
հարաբերական կամ շաղկապական դ. 111, 434—437, 503—508, 821, 822
հարցական դ. 584, 778—780
ստացական դ. 585—587, 591, 593, 600,
ցուցական դ. 111, 275, 419, 584, 590, 594, 596, 618, 764, 786—789
փոխադարձ դ. 789, 790
ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 146
ԴԵՐԲԱՅ 106, 107, 193, 210, 295, 297, 332, 428, 438, 585, 586
անկատար դ. 238, 239, 254, 255
անորոշ դ. 166, 208, 209, 231, 232, 239, 244, 252—255, 280, 297, 384—386, 413, 494, 585, 614, 616, 718—721, 723, 752, 753, 796, 797
ապառնի դ. 239, 587, 721
անցյալ դ. 166, 219, 239, 586, 587, 620—622, 721—723, 734, 752
գոյական դ. 107
ենթակայական դ. 166, 238, 418, 587, 723

ԵՂԱՆԱԿԻՉ ԲԱՌԵՐ 244, 245, 265, 266, 752—755
ԵՂԱՆԱԿՆԵՐ—*տե՛ս* ԲԱՑԻ ԵՂԱՆԱԿՆԵՐ
ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ 49
ԵՆԹԱԿԱ 14, 23, 253, 285—287, 293—296, 298, 300—304, 308, 309, 312, 325, 326, 356, 368, 375, 398, 409—417, 435, 438, 441, 512, 576, 582, 698, 722, 723, 798
բազմակի բ. 411—418, 435, 798
դեմք-բ. 286
դերանուն բ. 302, 417
եզակի բ. 409, 798
կրող բ. 308
կողմնակի բ. 329—333

Համադասական բ. 303
Հոգեբանական բ. 23—25, 28, 284—286
Հողնակի բ. 411
Ներգործող բ. 308
քերականական բ. 285
ԲՌԱԲԱՐԲԱՌ *97, 715, 717*
ԲՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ *139, 165—167, 169, 298, 314, 315, 318—320, 386, 387, 392—404, 444—447, 592, 593*
ԲԱՐԲԱՐԲԱՌՆԵՐ *74—76, 93—101, 161—163, 282, 632, 714—717, 726, 728*
անիսկական բ. 98
բարձրացող բ. 75
ընկնող բ. 75
ԲԱՐԲԱՐԲԱՌՈՒՄ *98*

ՁԵՂՁԱԿԱՆ ԲԱՌԵՐ *613, 614*
ՁՈԴՎԱԾ *502*
ՁՈՒԳՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ *19, 20, 30, 34, 35, 37, 123, 125*
բառերի զ. 25, 29—31, 33
գաղափարների զ. 18
գոյականների զ. 29
լեզվական զ. 21, 34, 36, 41
պատկերացումների զ. 16, 18, 19, 23, 24

ԸՄԲՌՆՈՒՄ *16—18*

ԹՆՔՈՒՄ *11, 240*
ԹՎԱԿԱՆ *93, 106, 107, 109, 143, 146, 194, 196, 207, 213, 215, 217, 297*
գոյական թ. 107
դասական թ. 110
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԿՆՈՒԹՅՈՒՆ *147*

ԺԱՄԱՆԱԿ—*տե՛ս* ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՍԵՄԱՍԻՈԼՈԳԻԱ կամ ՍԵՄԱՆՏԻԿԱ) *56, 104, 133*

ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՄ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐ —*տե՛ս* ԱՐՄԱՏՆԵՐ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ *56—60*
լեզվաբանության նյութը և ուսումնասիրության եղանակները 56—58
լեզվաբանության կիրարկական նշանակությունը 58
լեզվաբանության պատմություն 59
ընդհանուր լեզվաբանություն 57
ԼԵԶՈՒՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ *55, 57*
ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ *9, 14—16, 37, 40, 54—57, 82, 102*
ԼԵԶՎԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ *55, 57*
ԼԵԶՈՒ *9—59*
անհատի լ. 36, 37, 39, 41, 43, 44, 47
ցեղակից լեզուներ 54, 55, 58
ԼՄՈՐԴ *718, 724—727, 729, 733, 734*
ԼՄՈՐԴ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ *718*
ԼՐԱՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ *294, 296, 297*
ԼՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ *240*
ԼՐԱՑՈՒՄ *137, 166, 294, 296, 298, 311, 322, 437, 438, 451*
ածական լ. 300
բայի լ. 166, 296, 298, 309, 438—443
գոյականի լ. 300, 443
դերբայների լ. 276, 798
թվականի լ. 798
կողմնակի լ. 298, 438, 443
համաստորադաս լ. 323

ԽՆԴԻՐ *14, 298, 304, 306, 311, 312, 313, 353—356, 371, 391, 447, 514, 519, 791*
ածականի խ. 589, 602
անվան խ. 602
անցողական բայի սեռի խ. 638
առարկայական խ. 305, 306, 311, 314, 345
բաղդատության խ. 398
բայական անվան խ. 519
բայի խ. 602
բնության խ. 305—311, 513, 791
գոյականի խ. 514
կապի խ. 58
կողմնակի խ. 798
կրավորական բայի սեռի խ. 305, 620, 621, 791
կրող խ. 14, 305, 306, 308, 311, 398, 512
հայցական սեռի խ. 667, 668, 671
ներգործական բայի սեռի խ. 305, 791
ներգործող խ. 305, 308, 309, 311
սյատճառական խ. 308
պատճառի խ. 369
պարագայական խ. 305, 311, 312, 314, 316, 576, 577, 579, 669
սեռական խ. 592, 610, 622, 798
սեռի խ. 576, 577, 579, 604, 617, 669, 671, 672, 679, 680, 700, 702
ստորոգելիական խ. 669
տրական խ. 125, 351, 387, 401, 402, 596
ԽՆԴՐԱՌՈՒ ԳՈՅԱԿԱՆ *346*
ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎԱՐՈՒՄ *324*

ԽՈՆԱՐՀՈՒՄ—տե՛ս ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ
ԽՈՍՔ ԿԱՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 22—25, 28, 284—286, 292—294, 437, 453, 571
ածական խ. 497
անենթակա խ. 302, 303, 308, 453
անուղղակի խ. 499, 500, 515—517, 519, 563
առաջադաս երկրորդական խ. 495, 519
առաջադաս վերադիր խ. 509
առաջին կարգի երկրորդական խ. 496, 498
բազմաբարդ խ. 555—557
բաղդատական խ. 527
բաղհյուսական համադաս խ. 540
բարդ խ. 287, 292, 494—497
բացաբարձության խ. 527, 531
բացառական կամ ժխտական խ. 453, 454
գերադաս կամ գլխավոր խ. 495, 500—502, 505, 522, 524—526, 530—535, 538, 556
գոյական խ. 497
դատողության խ. 243, 458
դրական կամ ստորադասական խ. 453
ենթակա խ. 496, 510—512
երկրորդական խ. 495—508, 516, 520, 523—531, 534, 537, 538, 554, 556—558
երկրորդ կարգի երկրորդական խ. 496, 498
զեղչական խ. 295
զիջական խ. 536—538
զիջական-ընդհանրացական խ. 492
ընդարձակ խ. 453
ընդհանրացական խ. 492
ժամանակի խ. 522—527
լրացական-հարցական խ. 457
խնդիր խ. 496, 510, 531
կարծեցյալ նմանության խ. 528
կրկնության ժամանակի խ. 524
կրճատված խ. 498
համադաս խ. 495, 538—540, 554—556
համադաս երկրորդական խ.—տե՛ս համաստորադաս խ.
համառոտ խ. 453
համաստորադաս խ. 495, 538
հաստատական խ. 455, 458
հավասարության բաղդատական խ. 528, 529
հավաստիական հարցական խ. 456, 458
հարաբերական ստորոգյալ խ. 510
հարաբերական (ուիյան) խ. 502, 505, 529
հարցական խ. 455, 456, 553, 748
հետևանքի խ. 527, 530
հիմունքի խ. 531
հրամայական խ. 456
ձևի և չափի ու քանակի խ. 527
ճարտասանական հարցական խ. 457
մակբայական խ. 497
մեկնական խ. 547
միավորյալ խ. 539
միջադաս երկրորդական խ. 495
միջանկյալ խ. 500, 501
միջարկության խ. 501
ներհակական համադաս խ. 540
նմանության բաղդատական խ. 527, 528
նպատակի խ. 533
շաղկապական խ. 502
շաղկապական ենթակա խ. 511
պայմանական խ. 249, 534—536
պայմանական-զիջական խ. 537
պատասխանական խ. 456
պատճառի խ. 531—533
պարագայական խ. 496, 521—538
պարզ խ. 287, 292, 494, 497
ստորադաս խոսք—տե՛ս երկրորդական խ.
ստորոգյալ խ. 496, 510
վերջադաս երկրորդական խ. 495
վերադիր խ. 503—510
տարբերության բաղդատական խ. 529, 530
տեղի խ. 521, 522
ցանկության խ. 458
ուղղակի խ. 499—501, 515, 563
փոխանակության խ. 530
ԽՈՍՔԻ ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆ 458
ԽՈՍՔԻ ԲԱԶՄԱԿԻ ՄԱՍԵՐ—տե՛ս ՀԱՄԱՌԱՕ ԲԱՌԵՐ
ԽՈՍՔԻ ԿՈՂՄՆԱԿԻ ՄԱՍԵՐ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 322
ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ 105, 106, 297, 298, 322, 323
ԽՈՍՔԻ ՄԱՍՆԻԿՆԵՐ 106, 107, 298
ԽՈՍՔԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՄԱՍԵՐ 298

ԿԱԽՄԱՆ ԿԵՏԵՐ 568
ԿԱԽՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 324, 386, 640, 641
ԿԱԽՈՒՄ 324, 472, 473
ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ 107, 294, 298, 387, 388
ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ 13, 14, 33, 43, 45, 46, 253, 292, 323
բաղդատության կ. 547
բաղհյուսական կ. 540—549, 554, 555
ժխտական կ. 550
հակադրական կ. 553
համադասական կ. 538—540, 554

հավելական կ. 540, 557
մակարերական կ. 547—549, 557
մասնական կ. 544—546
մեկնական կ. 546, 547
միջական կ. 324
ներածական կ. 550—554, 557
շարահյուսական կ. 21, 34, 35, 136—140, 144, 155, 163—168
շրջաբանական կ. 140
սահմանափակող կ. 551
տեղի և ժամանակի կ. 547
տրոհական կ. 550
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐ *13, 14, 33, 37, 40, 41, 43, 45, 46, 284—287*
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ *323*
ԿԱՊԵՐ *107, 298, 386—388, 803*
անիսկական կ. 387, 388, 397—407
իսկական կ. 387—396
ԿԵՏԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ *142, 143, 320, 561—569*
ԿԵՐՊ—*տե՛ս* **ԲԱՅԻ ԿԵՐՊԵՐԸ**
ԿԻՍԱԶԱՅՆ *75, 99*
ԿՈՉԱԿԱՆ *273, 334, 335*
ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐ *146—149, 163*
ԿՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ *21*

ՀԱԳԱԳ *100*
ՀԱՄԱԴԱՍ ԲԱՌԵՐ *323, 451, 452*
ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ *163*
ՀԱՄԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ *323*
ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ *13, 408, 798*
ՀԱՄԱՆԻՇՆԵՐ *130, 164, 170—177, 204*
ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐ *126—127*
ՀԱՆԴ *25*
ՀԱՆԳՈՒՅՑ *300, 301*
ՀԱՏԿԱՆԻՇԻ ՀԱՏԿԱՆԻՇ *296, 297*
ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ *606, 611, 612, 798*
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՌԵՐ *502*
ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ *137—140*
ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ *137, 138, 142, 143*
ՀԱՐԱՇԵՇՏ ԲԱՌԵՐ *93*
ՀԱՐՑԱԿԱՆ ՆՇԱՆ *568*
ՀԵԳՈՒՄ *76, 77, 80, 81*
ՀԻՄՔ *718*
ՀՆՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՖՈՆԵՏԻԿԱ) *56, 61*
ՀՆՉԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ *82, 715*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐ *14, 37, 38, 61—100, 714—717*
աներաժշտական հ. 61, 62
անձայն (խուլ, աղմկավոր) հ. 63, 65, 86
անձայն պայթական հ. 86—88
անվանկային հ. 74
բաղաձայն հ.—տե՛ս **ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ**
բարբառային հ. 65
երաժշտական հ. 61, 62
կրկնակ հ. 101
հագագային հ. 72, 87, 100
ձայնավոր հ.—տե՛ս **ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ**
ձայնեղ հ. 63, 86—88
ձայնեղ աղմկավոր հ.—տե՛ս ձայնեղ բաղաձայններ
ձայնորդ կամ նայ (թաց) հ. 64, 65, 88
մրմնչաձայն հ. 90
ձայնեղ պայթական հ. 87
պայթական հ. 78, 101
վանկային հ. 74
տևական հ. 78
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՄԱՆՈՒՄ (ԱՍԻՄԻԼԱՑԻԱ) *87, 88*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ *85*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԵՏԵՎԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ *82, 83*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՈՒՍ *85, 89*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՏՈՒԹՅՈՒՆ *25*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋՈՒՄ *82—85, 88, 89, 101, 102*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԼՍՈՂԱԿԱՆ ՁԱՏԿԵՐԱՑՈՒՄ *20*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՏԿԵՐԱՑՈՒՄ *20*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄ *89*
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՆՄԱՆՈՒՄ (ԴԻՍԻՄԻԼԱՑԻԱ) *89*
ՀՈԴԵԲԱՆԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ *23, 284—286*
ՀՈԴ *89, 110, 140, 255, 276, 314, 397, 398, 426—434, 436, 598, 602, 613, 621, 800*
անորոշ հ. 427
դիմորոշ հ. 418, 427, 800
որոշող հ. 428—431
ստացական հ. 427, 428, 586, 587, 800
ցուցական հ. 426, 800
ՀՈՂԱԿԱՁ *154—158, 170*
ՀՈԼՈՎ *271—283, 325—384*
Աննախդիր հոլով *574, 580*
Անվանական հոլով *603*
Բացառական հոլով *167, 277—280, 355, 367—374, 396, 572, 574, 581, 602, 604, 605, 616—622, 624, 758, 796*
Երկրորդ հոլով *601—603, 605, 616, 618, 620—625, 637, 638*
Կոչական հոլով *573—576, 603, 626, 638, 653, 659, 680*
Հայցական հոլով *161, 167, 273, 274, 278, 335, 336, 338—341, 367, 396, 397, 399, 570—*

582, 599, 600, 603, 604, 626—628, 638—707, 756, 778, 779, 792, 793
երգոյական հոլով 167, 278—281, 342, 382—384, 572, 574, 578, 581, 602, 604, 612, 613, 657, 660, 661, 759, 807
Պատմական հոլով 574
Պարառական հոլով 574
Սեռական հոլով 167, 275—277, 343—350, 514, 570, 572—575, 581—611, 613, 614, 616—638, 681, 794
Սեռական-տրական հոլով 31, 274—282, 625, 629—634, 636, 637, 660, 661, 757
Տրական հոլով 167, 274—278, 282, 350—363, 366, 367, 385, 391—393, 397, 572—576, 581—638, 654—659, 665—668, 681, 687, 694—703, 794, 795
Ուղղական հոլով 167, 273—277, 282, 283, 325, 326, 397, 399, 407, 572—577, 581—582, 601—605, 625—628, 649—659, 664—668, 681, 687, 695—699, 702, 703, 757, 792
ՀՈԼՈՎԱԿԱՆ ԹԵՔ ԶԵՎԵՐ 651, 652
ՀՈԼՈՎԱԿԱՆ ՈՒՂԻՂ ԶԵՎ 651
ՀՈԼՈՎԻ ԶԵՎԻ ՖՈՒՆԿՑԻԱ 645
ՀՈԼՈՎԻ ՖՈՒՆԿՑԻԱ 641—657, 663—707
ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ 276—279
ՀՈԼՈՎՈՒՄ (գրաբարի) 631, 637, 756—775, 777—790
ՀՈՐԱՆՋ (ՀԻԱՏՈՒՍ) 99

«ԶԱՅՆԱԿԱՊԻ» 3 99
ԶԱՅՆԱՇԱՐՔՈՒԹՅՈՒՆ 280, 281, 633—635, 637
ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ 64—68, 74, 75, 94, 97—100, 102, 156, 161—163, 714, 715, 728
անվանկային կամ բաղաձայնական (կիսաձայն) ձ. 75
առաջաքմային ձ. 94
շշնջական ձ. 72
պարզ ձ. 93
ռնգային կամ ռնգայնացված ձ. 65
վերջաքմային ձ. 94
ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 74, 75, 104, 105, 294, 822
բացագանչական ձ. 105
բնաձայնության ձ. 22, 105, 149
կոչական ձ. 105
ԶԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ 157, 161—163, 260, 282, 283, 717
ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 56, 240, 644, 645, 659, 663, 666, 668, 712, 718—790

ՄԱԿԱԴՐԱԿԱՆ ԲԱՌԵՐ 106, 297
ՄԱԿԱԾԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄ 444
ՄԱԿԱՆՈՒՆ 320, 421—423
ՄԱԿԲԱՅ 106, 107, 111, 139, 146, 149, 166, 168, 169, 188, 216, 217, 225, 226, 229, 296, 297, 311, 312, 314, 316, 321, 379, 381, 387, 392, 421—423, 438, 454, 455, 589
անորոշ մ. 111
անվանական մ. 107, 297
բայական մ. 297
դերանվանական մ. 107, 297
դերբայական մ. 297
թվական մ. 297
որակական մ. 189
ցուցական մ. 111
ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ 147
ՄԱՍՆԻԿՆԵՐ 9, 10, 11, 107, 168, 169, 182—184, 187, 190, 191, 196, 199, 210, 215, 220—222, 230, 238, 244, 245, 253—256, 261, 263, 264, 266, 271, 273, 281
Առաջադիր մ. 168—180, 190
ան—179
անդր—170
ապ—179
առաջ—170
արտ—170
բաղ—171
բաց—171
գեր—171
դեմ—171
դեր—171
դժ, տժ—180
ենթ—173
ետ, հետ—173
թեր, թերա—172
հակ—172
համ—172
համ, համայն—172
հար—172
հեղ—172
մակ—172
մեջ—173
նախ—174
ներ—175
շար, շաղ—175
շուրջ—175
չ—180
պար—175

ստոր — 175
վայր — 176
վեր — 176
տ — 180
տար — 176
տրամ — 177
փոխ — 178
ածանցական մ. *182—188, 190—193, 239, 231*
բացասական մ. *107, 177, 179, 196*
նախածանց մ. *185*
նվազական մ. *190, 191*
վերջածանց մ. *186, 628, 632*
ՄԻՋԱԿԵՏ *564, 565, 567*
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԲԱՌԵՐ *501*
ՄԻՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ *104, 294*
ՄՏԱԳԱՏԿԵՐՆԵՐ *16—22, 24, 27*

ՆԱԽԱԲԱՅ *151—153, 171*
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ *297*
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ — *տե՛ս* ԽՈՍՔ ԿԱՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒ *55*
ՆԱԽԱԾԱՆՑ — *տե՛ս* ՄԱՍՆԻԿՆԵՐ՝ առաջադիր մ.
ՆԱԽԱՄԱՍՆԻԿ — *տե՛ս* ՄԱՍՆԻԿՆԵՐ՝ առաջադիր մ.
ՆԱԽԴԻՐՆԵՐ *145, 148—153, 165—167, 171, 253, 255, 298, 386—396, 443, 444, 592, 713, 803—815*
ՆԵՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ՆԵՐՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ) *324, 325*
ՆՄԱՆԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ *105*
ՆՈՒՅՆԱՆԻՇ ԲԱՌԵՐ *127—131*

ՇԱՂԿԱՊՆԵՐ *142, 143, 146, 147, 255, 298, 522, 531—554, 562, 719, 818—820*
բաղհյուսական շ. 259, 540—544
համադասական շ. 107, 818
ստորադասական շ. 107, 819
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ *13, 437, 797*
շրջուն շ. 437—442
սովորական շ. 437—443
ՇԱՐԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ *502, 538*
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ *56, 287, 291, 571, 668, 712, 791—822*
ՇԵՇՏ *13, 161, 180, 568, 626*
գլխավոր կամ տրամաբանական շ. 13, 437—442
բառի շ. 81, 82
խոսքի շ. 81
ՇԵՇՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ *717*
ՇՐՋԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՈՒԹՅՈՒՆ *139*
ՇՐՋՈՒՄ *500, 501, 508, 514*

ՋԱԿԵՐՏ *568*

ՓԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ — *տե՛ս* ՄՏԱՓԱՏԿԵՐՆԵՐ
ՓԱՐԱԴԱ *295, 296, 309—320, 367*
աստիճանի պ. 310
բուն պ. 311, 312, 314
եղանակի պ. 310, 311
զիջման կամ հակառակ հիմունքի պ. 311
ժամանակի պ. 310
հանգման պ. 335
հիմունքի պ. 310, 420
ձևի պ. 373, 379, 398, 420
ձևի և միասնության պ. 310
նպատակի պ. 310
որակի, որպիսության կամ կերպի պ. 310
չափ ու քանակի պ. 310, 311
պայմանի պ. 311
պատճառի պ. 310
տեղի պ. 310, 314
ՓԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ *557—559, 567*
բաղդատության պ. 557
եռանդամ պ. 558, 559
երկանդամ պ. 558, 559
ժամանակի պ. 557
համադասական պ. 557
հիմունքի պ. 557
հինգանդամանի պ. 558—560
ստորադասական պ. 557
տեղի պ. 557
քառանդամ պ. 558
ՓԱՏԱՍԽԱՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ *107*
ՓԱՐՁ ԲԱՌԵՐ *12, 180, 181*

ՍՂՈՒՄ *90—93*
ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ *164*
ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ *322, 555*
ՍՏՈՐԱԿԵՏ *561, 562, 564—567*
ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ *240*
ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ *298—300, 326—329, 385, 415, 417, 431, 438, 441, 507, 793, 798*
ՍՏՈՐՈԳՅԱԼ *23, 287, 293—301, 325, 326, 398, 415, 417, 441, 453, 454, 576, 798, 799*
ածական ս. 417, 438
բազմակի ս. 452
բայիմաստ ս. 286
գոյական ս. 416—418, 438

հոգեբանական ս. 23—25, 28, 284—286
քերականական ս. 285
ՍՏՈՐՈԳՈՒՄ *23, 28, 293—295, 298, 299*
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ԷՏԻՄՈԼՈԳԻԱ) *56*

ՎԱՆԿ *9, 74—82, 89—93, 98, 161, 717*
ՎԵՐԱԴԻՐ *28, 144, 298, 320—321, 380, 381, 398, 422, 426, 429, 443, 445, 447, 449, 514*
ածական վ. 145, 165, 421, 445, 448, 602, 606, 713, 780, 783, 789, 797
անվանական վ. 602, 603
բազմակի վ. 451
բայածական վ. 448
բացահայտող վ. 349
բացառական վ. 449
գոյական վ. 421, 601, 603
գոյականի վ. 275, 276, 281
գործիական վ. 449, 450
թվական վ. 424, 425
մականուն վ. 320, 321, 447, 448, 504
որոշող վ. 429
սեռական վ. 165, 276, 429, 432, 504, 508, 611, 619
ստացական վ. 427
ցուցական վ. 426
ուղղական վ. 333
ՎԵՐՋԱԿԵՏ *565, 566, 568*
ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ *160, 182, 183, 190—193, 196, 204, 233, 241—243, 270*
Անվանակաճ վ. *193—229*
ած—193
ածո, ածու, ծու, հին՝ ածոյ—193
ակ—194
ական—194, 196—198
ակի—196
ային—196—199
այն—200
ան, անք—200, 202
անակ—202
անակ, նակ (անկ)—202
անի—202, 203
անուտ—203
անց, ենց—203
աշ—203
ավետ—203
ավոր—203
ավուր—203
ատ—203
ար, արք—203
արդ—204
արենք, որայք—204
ացի—204
ացու—204
բար—204
գար—205
գին—205
գույն—205
ե—205
եղ—205
եղեն—206
եղի—206
են—206
ենի, ենիք—206
ենց—206
ենք, անք, ոնք, ունք—207
եստ, իստ, ուստ—207
երեն, արեն—207
երյակ, րյակ—207
երորդ, րորդ—207
եք, ենք—207
թափ—207
ժետ, ժեռ—207
ի, իք—208
իկ—209, 210
ին—210
ինք—211
իչ—211
իցս—211
ծու—211
կակ, կեկ, կիկ, կուկ—211
կեն—211
կին—211
կից—212
կոտ—212
կուկ—212
հան, հանց, հանա—212
ման, մանց—212
մունք—212
յա, հին՝ եայ—212
յալ, հին՝ եալ—213
յակ, հին՝ եակ—213
յան, հին՝ եան—213
յուն, հին՝ իւն—214
նակ—214
նի—214
նոց, անոց, ոց—214, 215
ո (հին՝ ոյ), ու—215
ող—215
ոն, ոնք, ուճ—215

ովի—216
ովին, ովի—216
ոտ—216
ոտի, տի, տիք—216
որայք—216
որդ—216
որեն—217
ոց—217
ու—217
ուբ—218
ուբյուն—218
ուկ—219
ուհի—219
ույթ, ուբ(ք)—222
ույք, հին՝ ուք—222
ուն—223
ունդ—223
ունի, ունիք—223
ունք—223
ուչ, ունչ—223
ուստ—223
ուտ—223
ուրդ—224
ուց—224
ուք, ուկ, ուցք, ունչ, անք, անք—224
չյա, չեք—225
պան—225
պատիկ—225
պես—225
ստան—226
ված, վածք—226
վածո—226
վար, վարի—227
վետ, ավետ—227
վոր, ավոր—227
վուն, ավուն—228
րան, արան—228
րյակ—228
րորդ—228
ցի, ացի, եցի—228
ցու—229
ք—229

Բայական վ. *242*
Դերբայական վ. *230—239*
ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ *11, 15, 626, 628—633, 635, 637, 650, 651, 654, 661, 724, 758, 759, 764, 765, 769, 770, 773*

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ *101—103*

ՓԱԿԱԴԻՄ *567, 569*
ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ *119, 120*
ՓՈԽԱՆՑՈՒՄ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ *775—777*
ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ (ՄԵՏՈՆՈՄԻԱ) *121*

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *56—59*
համեմատական ք. 57
նկարագրական ք. 57
պատմական ք. 56, 57

ՕՏԱՐԱԲԱՆ ԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ *170—179*

Ց Ա Ն Կ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 7

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Լեզվական իրակություններ

1. Բառերի հնչյուններն ու նշանակությունները 9
2. Բառերի նյութական ու ձևական նշանակություններ։ Բուն և ձևական մասեր։ Բառակազմության ձևական մասեր և ածանցական բառեր . . . 9
3. Բառափոխության ձևական մասեր և բառաձևեր 10
4. Ածանցական և արմատական բներ։ Արմատական բառեր և բառերի արմատներ 11
5. Բառերի կապակցության ձևեր 13
6. Լեզվական իրակությունների փոփոխությունը 14
7. Ինչից է առաջանում լեզվի փոփոխությունը 15

Բ. Խոսվածքի գործունեություն

8. Պատկերացումներ և իրենց զուգորդությունը 16
9. Լեզվական պատկերացումների զուգորդությունները 19
10. Ընդհանուր պատկերացում։ Բառերի ընդհանուր և հատուկ նշանակությունները 22
11. Հոգեբանական դատողություն և խոսք 23
12. Բառերի զուգորդություններ 25
13. Նյութական կամ իրական նշանակություն ունեցող բառերի երեք մեծ խմբեր—գոյական, ածական և բայ 25
14. Գոյականների նյութական և ձևական խմբերը 28
15. Բայերի նյութական և ձևական խմբեր 32
16. Բառերի կապակցության ձևերի խմբեր 33
17. Անալոգիական կազմություններ 34

Գ. Լեզվի փոփոխությունը

18. Անհատական լեզուներ 36
19. Անհատական լեզվի փոփոխությունը 39
20. Անալոգիական նոր կազմություններ 39
21. Լեզվի փոփոխությունը անհատական լեզուների փոփոխության ազդեցությամբ 41
22. Լեզվի փոփոխությունն ուրիշ լեզուների ազդեցությամբ 45
23. Բարբառներ 47
24. Ընդհանուր և գրական լեզու 49
25. Ցեղակից լեզուներ 54

Դ. Լեզվաբանության մասին

26. Լեզվաբանության նյութը և ուսումնասիրության եղանակը 56
27. Լեզվաբանության կիրարկական նշանակությունը 58
28. Լեզվաբանության պատմություն 59

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԵՐԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ
(Հնչարանություն)

Ա. Հնչյունների արտաբերությունը ու տեսակները

29. Խոսքի գործարանները 61
30. Հնչյունների տեսակներն ըստ ձայնի և աղմուկի հարաբերության . . 63
31. Հայոց լեզվի ձայնավորները և նրանց արտաբերությունը 65
32. Բաղաձայնների տեսակներն ըստ արտաբերության եղանակի և տեղի . 68
33. Հայոց լեզվի բաղաձայններն ու նրանց արտաբերությունը 69
34. Բարդ բաղաձայններ 72
35. Հայոց լեզվի բաղաձայնները 73
36. Վանկային և անվանկային հնչյուններ և երկբարբառներ 74
37. Հայերենի երկբարբառները. կիսաձայն ȣ (ի) և բաղաձայն j (յոտ) հնչյունները 75
38. Բառերի արտաբերությունն և հեգում ու վանկեր 76
39. Բառի և խոսքի շեշտեր և ամանակ 81

Բ. Հնչյունների փոփոխությունը

40. Հնչափոխություն 82
41. Հնչյունների հետևառաջությունը 82
42. Հնչյունների շրջում 83
43. Հնչյունների կորուստ որոշ բառերի մեջ 85
44. Հնչյունների ավելացում որոշ բառերի մեջ 85
45. Ձայնեղ հնչյունների անձայն դառնալը և ընդհակառակն 86
46. Կից կամ մոտիկ հնչյունների առնմանում, Տարնմանում 87
47. Նայ Ր հնչյունի լ դառնալը, և ընդհակառակն 88
48. Հնչյունների կորուստ և նոր հնչյունների ծագում լեզվի մեջ . . . 89
49. Բառաշեշտի տեղափոխություն 89
50. Սղումներ շեշտի ազդեցությամբ 90
51. Երկբարբառների պարզումը 93
52. «Ի» հնչյունի և «Ու» ձայնավորի փոխվելը «վ» հնչյունի 97
53. Պարզ ե, Ո ձայնավորների երկբարբառում 98
54. է և ե ձայնավորների նույնացումն և փոխվելն Թ ձայնավորի . . . 99
55. Անվանկային Ȣ ձայնավորի ավելացում երկու ձայնավորների մեջ . . 99
56. Ȣ հնչյունի փոխվելը Հ հագագի 100
57. Ուղղագրություն 101

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(Խմաստաբանություն)

Ա. Բառերի տեսակներն ըստ նշանակության

58. Բառերի երկու խումբ 104
59. Միջարկություններ 104

60. Գաղափար ցույց տվող բառեր 105
61. Խոսքի մասեր 106
62. Խոսքի մասնիկներ 107
63. Բառերի ընդհանուր և հատուկ նշանակությունները 108

Բ. Բառերի նշանակության փոփոխությունը

64. Բառերի նշանակության փոփոխությունը 112
65. Բառերի առումները կամ զանազան նշանակություններ 113
66. Բառերի նշանակության փոփոխությունն իբրև հետևանք մշակույթի փոփոխության 116
67. Սեռի անվան գործածությունն իբրև տեսակի ու անհատի անուն, և ընդհակառակն 117
68. Բառերի փոխաբերական նշանակությունը նմանական զուգորդությամբ . 119
69. Բառերի նշանակության փոփոխությունը կցորդական զուգորդությամբ . 121
70. Դարձվածներ 124
71. Համանուն բառեր 126
72. Նույնանիշ բառեր 127
73. Բառերի կորուստ 129
74. Նույնանիշ բառերի տարբերակումը 130
75. Նույն բառի կրկնակներ և նրանց տարբերակումը 132
76. Իմաստաբանություն 133

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Բառերի տեսակներն ըստ կազմության

77. Բաղադրություն 135
78. Հին և նոր բաղադրություններ 135
79. Բարդության տեսակները 136

Բ. Հարադրական և կցական բարդություններ

80. Հարադրական բայեր 137
81. Կցական բարդություն հարադրական բայերից 141
82. Բաղհյուսական հարադրություններ 142
83. Կցական բարդություններ բաղհյուսական հարադրություններից . . . 143
84. Կցական բարդություններ վերադրի և իր գոյականի, այլև ուրիշ շարահյուսական կապակցությունների 144
85. Կրկնավորներ 146
86. Հնչյունների փոփոխությամբ կրկնավորներ 147
87. Կցական բարդություններ կրկնավորներից 148
88. Կրկնավոր կամ կրկնական բայեր 148
89. Նախդրավոր կազմություններ 149
90. Նախդրավոր բայեր 149

Գ. Իսկական բարդություն

91. Ընդհանուր կանոն 153
92. Հոդակապ 154
93. Բարդություններ առանց հոդակապի 157
94. Բարդության առաջին անդամը 158

95. Ձայնափոխություն 161
96. Բաղաձայնների փոփոխություն 163
97. Բաղադրիչ անդամների շարահյուսական հարաբերությունը 163
98. Ա. Գոյականների, ածականների ու բայարմատների բարդություն գոյականների հետ 165
99. Բ. Գոյականների ու ածականների բաղադրություն ածականների հետ . 165
100. Գ. Գոյականների և ածականների բաղադրությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ 165

Դ. Առաջադիրներով բաղադրություններ

101. Առաջադիրներ 168
102—129. Առանձին առաջադիրներով կազմություններ . . . 170
130. Բացասական մասնիկներ 179

Ե. Ածանցում

131. Բարդության միջնացումը և պարզ բառեր 180
132. Ածանցական մասնիկների ծագումը հնչափոխությամբ 182
133. Ածանցիկների ծագումն առանց հնչափոխության 184
134. Ածանցական մասնիկների ծագումը երկու մասնիկների միացումից . . 190
135. Հնացած հոլովական և բայական ձևեր 191
136. Վերջածանցների բազմազան ձևական նշանակությունները 192

Զ. Անվանական վերջածանցներ

137—237. Առանձին վերջածանցներով կազմություններ . . . 193

Է. Դերբայական վերջածանցներ

238. Բայաբնի ածանցներ 230
239. Անորոշ դերբայի կազմությունը. Քարացած կամ մեռած կազմություններ . 231
240. Անվանածանց բայեր և բայածանց անուններ 234
241. Բայածանց բայեր 237
242. Ենթակայական դերբայ 238
243. Անկատար դերբայ 238
244. Անցյալ դերբայ 239
245. Ապառնի դերբայ 239

ՀԻՆԴԵՐՈՐԴ ՄԱՍ

ԲԱՌԱՁԵՎՍ
(Ձևաբանություն)

Ա. Բայերի ձևերը

246. Թեքում 240
247. Բայերի դմքերը 240
248. Բայերի ժամանակները 242
249. Բայի կերպերը 242
250. Բայի եղանակները 243
251. Ըղձական եղանակը 245
252. Ըղձական եղանակի ծագումը 247
253. Հավելավոր բայերի Սահմ. ներկա և անկատար անցյալ ժամանակները և ստորադասականը 250

254—255. «Կամ»—«Կենամ» բայով բաղադրված Սահմ. ներկա և անկ. անցյալ և Սոորադասական 252
256. Անորոշ դերբայով և «Ե՛մ» բայով Սահմ. ներկա և անկ. անցյալ . . 252
257. «Ում», «Իս» անկատար դերբայներով և «Ե՛մ» բայով Սահմ. ներկա և անկատար անցյալ 254
258. «Կու» մասնիկով Սահմ. ներկա և անկ. անցյալ 255
259. «Ահա», «Նայ», «Կոյ» բառերով Սահմ. ներկա և անկ. անցյալ . . 257
260. Յանկության և կարելիական ըղձականներ կամ ըղձական ու ենթադրական եղանակներ արևելյան աշխարհաբարում 264
261. Հարկադրական եղանակի «Պիտիս եղանակիչը 265
262. Ներկայի բնի ժամանակներ 266
263. Կատարյալի բնի ժամանակներ 268
264. Բաղադրյալ ժամանակներ 270

Բ. Գոյականների ձևերը

265. Հոլով և թիվ 271
266. Հոլովական ձևերի փոփոխումը 271
267. Ուղղականն իբրև կոչական և հայցական 272
268. Հոգնակի թվի «եր», «ներ» մասնիկներ 273
269. Տրականն իբրև հայցական 274
270. Սեռական-տրական 274
271. Հոլովների կազմությունը 276
272. Շեղումներ 280
273. Ձայնափոխություն 282

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐ
(Շարահյուսություն)

274. Խոսքի կազմությունը և շարահյուսության խնդիրը 284
Ցուցակ գործածած գրքերի 288

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 291
Շարահյուսություն 292

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ

ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I. Բառերի պաշտոնը խոսքի մեջ

Խոսքի մասին ընդհանրապես 293
Բառերի տեսակները 294
1. Բայ 294
2. Լրացական բառեր—
Գոյական, ածական, մակբայ 296
Խոսքի մասեր 297
3. Կապակցական բառեր կամ խոսքի մասնիկներ 298
Խոսքի մասերն առանձնապես
1. Բայ-ատորոգյալ

Բայ, ստորոգյալ և ստորոգելիական վերադիր . . 299
ա. Ստորոգյալ 299
բ. Ստորոգելիական վերադիր . . 300
2. Ենթակա 301
Անենթակա խոսքեր 302
3. Խնդիր (բայերի սեռը) 304
4. Պարագա 309
5. Վերադիր 320

Խոսքի մասերի հարաբերությունը

1. Ստորադասություն 322
Բայ և բայի լրացումներ 322
Խոսքի կողմնակի մասեր և կողմնակի լրացումներ . . 322
2. Համադասություն
Խոսքի բազմակի մասեր . 323

II. Բառերի կապակցությունը խոսքի մեջ

Կապակցության տեսակները 323
Ա. Հոլովների նշանակությունն և կիրառությունը 325
Ուղղական հոլով 325
Ստորոգելիական վերադիր 326
Կողմնակի ենթակա 329
Ուղղական վերադիր 333
Կոչական 334
Հայցական 335
Ա. Տեղի հայցական 336
Բ. Ժամանակի հայցական 338
Գ. Չափ ու քանակի հայցական 339
Դ. Նպատակի հայցական 339
Ե. Կրող խնդրի հայցական 339
Զ. Ներգոյական հայցական 341
Սեռական 343
Ա. Ստացական սեռական 343
Բ. Ծագման սեռական 344
Գ. Ենթակայական սեռական 344
Դ. Առարկայական սեռական 345
Ե. Մասնական սեռական 345
Զ. Նյութի սեռական 346
Է. Պարունակության սեռական 346
Ը. Տեղի և ժամանակի սեռական 347
Թ. Գնի և արժեքի սեռական 348
Ժ. Որակական սեռական 348
ԺԱ. Բացահայտող սեռական 349
Տրական հոլով 350
Ա. Մատուցման տրական 350
Բ. Շահի տրական 354
Գ. Նպատակի տրական 358
Դ. Կրող խնդրի տրական 358
Ե. Ներգոյական տրական 363

Բացառական հոլով 367
Ա. Ճատական բացառական 367
Բ. Մագման և նյութի բացառական 367
Գ. Մասնական բացառական 368
Դ. Ներգործող խնդրի բացառական 368
Ե. Պատճառի բացառական 369
Զ. Բաղդատական բացառական 370
Է. Սահմանափակման բացառական 370
Ը. Պատմական բացառական 371
Թ. Տեղի բացառական 372
Ժ. Ժամանակի բացառական 373
Գործիական հոլով 374
Ա. Միջոցի գործիական 374
Բ. Հիմունքի գործիական 375
Գ. Ներգործող խնդրի գործիական 375
Դ. Սահմանափակման գործիական 376
Ե. Պարառական գործիական 376
Զ. Տեղի գործիական 377
Է. Ժամանակի գործիական 378
Ը. Զևի և միասնության գործիական 379
Թ. Չափ ու քանակի և գնի գործիական 381
Ներգոյական հոլով 382
Ա. Տեղի ներգոյական 382
Բ. Ժամանակի ներգոյական 383
Գ. Սահմանափակման ներգոյական 384
Անորոշ դերբայ 384
Բ. Կապերի եղծանկությունն և կիրառությունը
Նախադրություն և ետադրություն 396
1. Իսկական կապեր 388
2. Անիսկական կապեր 397
Անկապակցություն 407
Գ. Համաձայնություն 408
1. Ենթակա և բայ 409
2. Ենթակա և ստորոգյալ ու ստորոգելիական վերադիր 415
3. Բացահայտիչ ու բացահայտյալ 418
4. Մականուն ու անուն 421
Հոդերի գործածությունը 426
5. Դերանուն և անուն 434
Դ. Շարադասություն 437
1. Բայ և բայի լրացումներ 438
2. Կողմնակի լրացումներ 443
3. Համադաս բառեր 451

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ԽՈՍՔԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

I. Խոսքերի տեսակները

Համառոտ և ընդարձակ խոսքեր 453
Դրական և բացասական խոսքեր 453
Հաստատական և հարցական խոսքեր 455

Խոսքերի տեսակներն ըստ բայի եղանակների 458
Բայի եղանակները, ժամանակներն և կեբպերը 459
1. Սահմանական եղանակ 460
Ներկա և անցյալ ժամանակակետեր 460
Ապառնի ժամանակակետ 464
Երկրորդական բնավորություններ 465
Հարաբերական ժամանակներ 469
2. Ենթադրական եղանակ 473
Ներկա և անցյալ ժամանակակետեր 474
Ապառնի և անցյալ ժամանակակետեր 476
Երկրորդական բնավորություններ 480
3. Հարկադրական եղանակ 483
4. Հրամայական եղանակ 486
5. Ղեձական եղանակ 486
Պարզ և բարդ խոսքեր 494
Ստորադասություն և համադասություն 494
Երկրորդական խոսքերի տեսակները 495
Ուղղակի և անուղղակի խոսքեր 499
Միջանկյալ խոսքեր 500

II. Խոսքերի կապակցությունը

Ա. Ստորադասություն 501
Վերադիր խոսքեր 503
Ենթակա և խնդիր խոսքեր 510
Ո՞ր շաղկապ 511
Թե շաղկապ 515
Պարագայական խոսքեր 521
1. Տեղի խոսքեր 521
2. Ժամանակի խոսքեր 522
3. Չևի և չափ ու քանակի խոսքեր 527
4. Հիմունքի խոսքեր 531
Բ. Համադասություն 538
1. Բաղկյուսական կապակցություն 540
1. Հավելական կապակցություն 540
2. Մասնական կապակցություն 544
3. Մեկնական կապակցություն 546
4. Տեղի և ժամանակի կապակցություն 547
5. Բաղդատության կապակցություն 547
6. Մակաբերական կապակցություն 547
2. Ներհակական կապակցություն 550
1. Ժխտական կապակցություն 550
2. Տրոհական կապակցություն 550
3. Սահմանափակող կապակցություն 551
4. Հակադրական կապակցություն 553
Բազմաբարդ խոսքեր և պարբերություն 555
Կետադրություն 561

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Հայցական հոլով 572
Սեռական և տրական հոլովներ 582

ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐՈՒՄ

Հայցական հոլովը 639
«Ձևականորեն» 639
«Տեսականորեն» 677
«Գործնականորեն և մանկավարժորեն» 688

ԳՐԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 710
Ներածություն, գրաբար և աշխարհաբար . . . 711

Առաջին մաս, հնչյունները

Հին արտասանությունը 714
Ավանդական արտասանությունը 715
Շեշտադրություն 717
Ձայնափոխություն 717

Երկրորդ մաս, ձևաբանություն

Առաջին գլուխ, բայ 718
Անորոշ դերբայ 718
Ապառնի դերբայ 721
Անցյալ դերբայ 721
Ենթակայական դերբայ 723
Խոնարհում 724
Պարզ ժամանակներ 724
Ներկայի բնի կամ լծորդի ձևեր 724
Կատարյալի բնի ձևեր 724
Դիտելիք 726
Ներկայի բնի կամ լծորդի ժամանակներ 729
Կատարյալի բնի ժամանակներ 730
Ընդհանուր պատկեր խոնարհման 732
Կրավորականի կազմությունը 733
Անկանոն բայեր 735
Պակասավոր բայեր 740
Բաղադրյալ ժամանակներ 743
Ժամանակների գործածությունը 745
Եղանակիչ բայեր 752

Երկրորդ գլուխ, գոյական և ածական
Անվանական հոլովում 756
Կանոնավոր հոլովումներ 759
Անկանոն հոլովումներ 772
Փոխանցումներ հոլովումների մեջ 775
Չհոլովվող բառեր 777
Դերանվանական հոլովում 778

Երրորդ մաս. շարահյուսություն

Խոսքի կազմությունը 791
Հոլովների գործածությունը 792
Անորոշ դերբայ 796

Շարադասություն 797
Համաձայնություն 798
Հոդեր 800
Նախադրություն 803
Նախադրական և մակբայական բառեր 815
Շաղկապ 818
Հարաբերական դերանուն 821
Ձայնարկություն 822
Մանոթագրություններ, ցանկեր 823
Համառոտ առարկայական ցանկ 828
Ցանկ 839

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲԵՂՅԱՆ
МАНУК ХАЧАТУРОВИЧ АБЕГЯН

ԵՐԿԵՐ
Հ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Մաշտոց Աբեղյանի
անվան Գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչ. խմբագիր Ժ. Մ. ԱԴՈՆՑ
Նկարչ. ձևավ. Կ. Թ. ՏԻՐԱՑՈՒՐՑԱՆԻ
Տեխն. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՑԱՆ
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈԲՑԱՆ

Հրատ. № 3486 ԽՀԽ 1312 Պատվեր № 885 Տպաքանակ 7000
Ձուլձնված է արտադրության 13/XII 1972 թ., ստորագրված է տպագրության 20/IX 1974 թ.,
տպագր. 53 մամ.+1 ներդիր, հրատ. 54,4 մամ., պայմ. 74,2 մամ., թուղթ № 1,
$70\times108\ 1/16$։ Գինը՝ 3 ռ. 90 կ.։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ. տպարան, Երևան, Բարեկամության 24

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ
Զ

1974 թվականի հրատարակության վերատպություն՝
սքանավորման եղանակով:

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Շապիկի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի, Կ. Չալաբյանի

Չափսը՝ 70x100 $^{1}/_{16}$: Ծավալը՝ 53,25 տպ. մամուլ:
Թուղթը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
Հեռ.՝ (+374-10) 55-55-70, էլ. փոստ՝ publishing@ysu.am,
www.publishing.ysu.am

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6